ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

VII


ՀԱՄԱՀ
ԱԿԱԴԵՄԻԱ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

ИСТОРИЯ АРМЯНСКОГО НАРОДА

ГЛАВНАЯ РЕДАКЦИЯ

Иоаннисян А. Г. (главный редактор),
Агаян Ц. П., Аракелян Б. Н., Асратян М. С., Бархударян В. Б., Галоян Г. А., Еремян С. Т., Иоаннисян А. Р., Нерсисян М. Г., Саркисян Г. Х., Хачикян Л. С.

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН · 1967

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Ա III 3334

ԴԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հովհաննիսյան Ա. Գ. (գլխավոր խմբագիր),
Ալդայան Ծ. Պ., Առաքելյան Բ. Ն., Բարխուդարյան Վ. Բ.,
Դալոյան Գ. Ա., Երեմյան Ս. Ց., Խաչիկյան Լ. Ս.,
Հասրաթյան Մ. Ս., Հովհաննիսյան Ա. Ռ.,
Ներսիսյան Մ. Գ., Սարգսյան Գ. Լ.

ՀԱՅԿ. ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ԳՈՒՆԴԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ · 1967

ТОМ VII

ПОБЕДА СОВЕТСКОЙ ВЛАСТИ В АРМЕНИИ

АРМЯНСКАЯ СОВЕТСКАЯ СОЦИАЛИСТИЧЕСКАЯ РЕСПУБЛИКА В ЭПОХУ СОЦИАЛИСТИЧЕСКОГО СТРОИТЕЛЬСТВА

1917 - 1941

2324
D

РЕДАКЦИЯ ТОМА

Агаян Ц. П. (ответственный редактор), *Акопян А. М.*, *Галоян Г. А.*, *Худавердян К. С.*, *Хуршудян Л. А.*

ՀԱՏՈՐ VII

ՍՈՎԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՆԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ

1917 - 1941

ՀԱՏՈՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ազայան Ծ. Պ. (պատասխանատու խմբագիր), Դալոյան Գ. Ա., Խուդավերդյան Կ. Ս., Խուրշուդյան Լ. Ա., Հակոբյան Ա. Մ.

Ս. Ի Ս. Ջ Ս. Բ Ա. Ն

«Հայ ժողովրդի պատմության» յոթերորդ հատորը ընդգրկում է 1917 թվականի Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակից մինչև 1941—1945 թվականների Հայրենական մեծ պատերազմի սկիզբը ընկած ժամանակաշրջանը, որը, ինչպես սովետական բոլոր ժողովուրդների, այնպես էլ հայ ժողովրդի կյանքում կատարված պատմական մեծ վերափոխությունների, տնտեսական ու կուլտուրական վերածննդի շրջանն էր։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակը նոր դարագլուխ բացեց մարդկության պատմության մեջ, Անդրկովկասի ժողովուրդներին, այդ թվում նաև Հայաստանի աշխատավորությանը ոգեշնչեց սովետական իշխանության հաստատման համար մղվող պայքարում։

Սովետական Ռուսաստանի կառավարությունը 1917 թվականի դեկտեմբերի 31-ին (1918 թվականի հունվարի 13-ին) հրապարակեց «Թուրքահայաստանի մասին» դեկրետը, որը նշանավորեց Սովետական Ռուսաստանի դիրքը հայ ժողովրդի ազատագրական պայքարի նկատմամբ։ Սակայն երկրամասում ստեղծված ներքին և արտաքին պայմանները հնարավորություն չընձեռնեցին պատմական այդ դեկրետի կենսագործման համար։ Ավելին, Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակը մի շարք պատճառներով ձգձգվեց Անդրկովկասում, այդ թվում և Հայաստանում։

1917 թվականի նոյեմբերի 15-ին օտարերկրյա իմպերիալիստների օգնությամբ կազմակերպվեց հակահեղափոխական կառավարություն՝ անդրկովկասյան կոմիսարիատը, որը և մարմնավորեց Անդրկովկասի բուրժուա-նացիոնալիստական կուսակցությունների՝ մենշևիկների, դաշնակցականների, մուսավաթականների և այլ էսեռների հակասովետական բլոկը։ Անդրկովկասյան կոմիսարիատը ղեկավարեց պայքարը ուղղված Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի հեղափոխական բանվորների և գյուղացիների դեմ։

1918 թվականի փետրվարի 10 (23)-ին Թիֆլիսում ստեղծվեց անդրկովկասյան սեյմը, որը ապրիլի 22-ին Անդրկովկասը հայտարարեց «անկախ»։ Երկրամասը անջատելով հեղափոխական Ռուսաստանից, բուրժուա-նացիոնալիստական կուսակցությունները ըստ էության հնարավորություններ ստեղծեցին գերմանա-թուրքական զավթիչներին ներխուժելու Անդրկովկաս և գրավելու նրա զգալի մասը։

1918 թվականի ապրիլին զավթելով Կարսը, իսկ մայիսի 15-ին՝ Ալեքսանդրապոլը, թուրքական զորքերը շարժվեցին դեպի Սարդարապատ նպատակ ունենալով գրավել Արարատյան դաշտավայրը, ապահովել իրենց թիկունքը

և առաջ խաղալ դեպի Բաքու՝ իրենց հայրենիքը պաշտպանելու համար ոտքի ելան ժողովրդական աշխարհազորայինները։ Թուրքական զավթիչներին Դարբանդիխանայի և Սարդարապատի տակ ցույց տրված դիմադրությունը խոշոր նշանակություն ունեցավ պատերազմից քայքայված և հուսալքված հայ մասսաների դիմադրական ոգին բարձրացնելու գործում, և ըստ էության խոշոր հարված հասցրեց Բաքուն զավթելու թուրքական պլաններին։

Ռազմա-քաղաքական և տնտեսական ճգնաժամն արագացրեց անդրկովկասյան կոմիսարիատի քայքայումն ու անկումը։ 1918 թվականի մայիսի 26-ին սեյմը ցրվեց։ Վրաստանը, Ադրբեջանը և Հայաստանը հայտարարվեցին անկախ հանրապետություններ։

Հայաստանում իշխանության գլուխ անցավ դաշնակցությունը, որն իր տիրապետության շրջանում երկիրը կանգնեցրեց քաղաքական և տնտեսական ճգնաժամի առաջ։ Հայաստանի բանվորներն ու գյուղացիները, բոլշևիկյան կազմակերպությունների ղեկավարությամբ, պայքար էին մղում դաշնակցական կառավարության և օտարերկրյա գաղութարարների դեմ՝ հանուն սովետական իշխանության։ Այդ պայքարում ծնվեց Հայաստանի կոմունիստական կուսակցությունը, որը նոր թափ հաղորդեց սովետական իշխանության համար երկրի աշխատավոր զանգվածների մղած պայքարին։

1920 թվականի ապրիլի 28-ին Ադրբեջանում հաղթանակեց սովետական իշխանությունը։ Հեղափոխական ալիքը վինված պայքարի հանեց նաև Հայաստանի աշխատավորներին։

1920 թվականի մայիսին վինված ապստամբություն բռնկվեց դաշնակցության տիրապետության դեմ։ Չնայած Մայիսյան ապստամբության համաժողովրդական բնույթին և նրա մասնակիցների մարտական բարձր ոգուն, մի շարք պատճառներով այն պարտվեց։ Երկրում մոլեգնեց տեռորը։ 1920 թվականի աշնանը հայ ժողովրդի վրա կախվեց նոր ահավոր վտանգ. սեպտեմբերի վերջերին թուրքական զավթիչները նորից ներխուժեցին Հայաստան։

Սովետական Ռուսաստանի կառավարության բոլոր ջանքերը՝ կանխել այդ պատերազմը, դիմադրության հանդիպեցին Թուրքիայի ու Հայաստանի կառավարող շրջանների կողմից։ Հայ ժողովրդի ֆիզիկական գոյությունը սպառնալիքի տակ դրվեց։ Նրա միակ փրկությունը սովետական իշխանության հաստատումն էր։

1920 թվականի նոյեմբերի 29-ին Հայաստանում հաստատվեց սովետական իշխանություն, որը շրջադարձային կետ հանդիսացավ հայ ժողովրդի բազմադարյան պատմության մեջ։

Կոմունիստական կուսակցությունը և սովետական իշխանությունը, կենսագործելով լենինյան ազգային քաղաքականությունը, փրկեցին հայ ժողովրդին, ապահովեցին նրա ազգային վերածնունդը և սոցիալիստական շինարարության լայն ճանապարհ բացեցին նրա առջև։

Հայաստանում սոցիալիստական շինարարությունը կապված էր մեծ դժվարությունների հետ։ Ռուս մեծ ժողովրդի և սովետական մյուս ժողովուրդների եղբայրական օգնությունը հնարավորություն տվեց հայ ժողովրդին անհամեմատ ավելի կարճ ժամանակում հաղթահարել այդ դժվարությունները։ «Մենք գիտենք, ընկերներ, թե որքան դժվար է սովետական իշխանություն

կառուցելը»,— ասել է Գ. Կ. Օրջոնիկիձեն Բաքվի սովետի 1920 թվականի դեկտեմբերի 1-ի նիստում։— Է՛լ ավելի դժվար, միլիոն անգամ դժվար է այդ իշխանությունը կառուցել այնտեղ՝ տանջահար, խոշտանգված Հայաստանում, որը գրեթե դարձել է գաղթականների հանրապետություն։ Մենք գիտենք, որ մեր երիտասարդ ընկերները պետք է հաղթահարեն բազմաթիվ դժվարություններ։ Բայց թող նրանք պատվով ընթանան դեպի հիասքանչ սոցիալիստական հասարակարգը տանող ուղիով, որի վրա ոչ թե վարդեր են սփռված, այլ տատասկներ, և թող նրանք իմանան, որ մեր ամբողջ հառանդը, մեր բոլոր ուժերը կնվիրվեն նրանց օգնության ցույց տալու գործին»։

Սովետական իշխանության տարիներին Հայաստանը խոշոր հաջողությունների հասավ ժողովրդական տնտեսության և կուլտուրայի զարգացման բնագավառում։ Պատմական կարճ ժամանակահատվածում երբեմնի հետամնաց ագրարային Հայաստանը դարձավ սոցիալիստական ինդուստրիայի ու գյուղատնտեսության հանրապետություն։

Սոցիալիստական արտադրական հարաբերությունների ստեղծման հիման վրա մեր երկրում վերացան շահագործող դասակարգերը և նրանց ծնող պատճառները։ Ստեղծվեց սոցիալիզմի նյութա-տեխնիկական բազան, բարձրացավ աշխատավորների նյութական բարեկեցությունը, հաղթանակեց կուլտուրական հեղափոխությունը, ամրապնդվեց ժողովրդի բարոյա-քաղաքական միասնությունը, բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը։

Սովետական Հայաստանի հսկայական վերափոխությունները արդյունք էին ինքնուրույն քաղաքական կյանքի համար արթնացած աշխատավորական լայն զանգվածների ինքնագործունեության բուռն ծավալման։

Սոցիալիզմի հաղթանակի գործում կարևոր դեր խաղաց կուլտուրական հեղափոխությունը, որի շնորհիվ արագ թափով աճեցին բանվոր դասակարգի և գյուղացիության շարքերից դուրս եկած մասնագիտական կադրերը։

Սոցիալիզմի կառուցմանը զուգընթաց ձևավորվեց սոցիալիստական հայ ազգը։ Սոցիալիստական ազգերի ձևավորումը ՍՍՀՄ-ում սովետական կարգերի հաղթանակի, բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի ամրապնդման արդյունք էր։ Սոցիալիստական ազգերի կազմավորմանն ու զարգացմանը նպաստեցին այնպիսի գործոններ, ինչպիսիք էին արդյունաբերության բուռն վերելքը, արդյունաբերական խոշոր կենտրոնների ստեղծումը և բանվոր դասակարգի քանակական ու որակական աճը, գյուղի սոցիալիստական վերակառուցումը, արդյունաբերության և գյուղատնտեսության տնտեսական կապերի ամրապնդումը, տրանսպորտի, կապի միջոցների արագ զարգացումն ու առևտրի ծավալումը, գյուղի և քաղաքի, հանրապետության բոլոր շրջանների, ինչպես նաև առանձին ազգային հանրապետությունների միջև տնտեսական և կուլտուրական սերտ հարաբերությունների արմատավորումը։ Ահա այսպիսի պայմաններում էլ ստեղծվեց սոցիալիստական ազգերի տնտեսական ընդհանրությունը։

Սոցիալիզմի հաղթանակը տնտեսության բնագավառում հիմնովին վերափոխեց նաև Հայկական ՍՍՀ բնակչության դասակարգային կառուցվածքը։ Շահագործող դասակարգերի վերացումից հետո մնացին միայն երկու բարեկամ դասակարգեր՝ բանվորներն ու գյուղացիները և նրանց ծոցից ելած սովետա-

կան ինտելիգենցիան, որոնք սոցիալիզմի հաղթանակի հետևանքով ամբողջովին փոխվեցին, նոր որակ ստացան, կազմելով սոցիալիստական հայ ազգը։ Վերջինիս ձևավորման ու զարգացման գործում կարևոր ու վճռական դերը պատկանում էր Հայաստանի բանվոր դասակարգին, որը սոցիալիստական ինդուստրիայի շնորհիվ զգալի չափով աճել էր, դարձել հասարակության առաջատար ուժ։

Որակական փոփոխության ենթարկվեց գյուղացիությունը։ Մանր արտադրողների դասակարգից այն վերափոխվեց կոլտնտեսայինի և իր սոցիալական էությամբ մերձեցավ բանվոր դասակարգին։ Համաժողովրդական պետական և կոլտնտեսային-կոոպերատիվ սեփականությունների մերձեցումը սոցիալ-տնտեսական ամուր հիմք ստեղծեց այդ դասակարգերի շահերի ընդհանրության համար։

Սոցիալիստական հայ ազգի ձևավորման գործում կարևոր դեր կատարեց հայկական սովետական պետականության ստեղծումը, որը, հանդես գալով որպես սովետական կարգերի հաղթանակի արդյունք, խթանեց Հայաստանի տնտեսական և կուլտուրական կյանքի կազմակերպմանն ու առաջընթացին, հայ ժողովրդի ուժերի միավորմանն ու կոնսոլիդացմանը։ 1922—1936 թվականներին գտնվելով Անդրֆեդերացիայի կազմում և նրա միջոցով մտնելով ՍՍՀՄ մեջ, Սովետական Հայաստանը շրջապատված էր բարեկամական ջերմ մթնոլորտով, նյութական ու բարոյական հսկայական օգնություն էր ստանում ՍՍՀՄ բոլոր ժողովուրդներից և իր լուման ներդնում երկրում սոցիալիզմի կառուցման գործում։

Սոցիալիստական արտադրաեղանակի պայմաններում, հանդես գալով որպես մի միասնություն, Սովետական Հայաստանը զարգանում էր ավելի բարձր տեմպերով։

ՍՍՀՄ մյուս բոլոր ժողովուրդների հետ միասին հայ ժողովրդի ազգային զարգացումն ընթանում էր սոցիալիստական ինտերնացիոնալիզմի գաղափարների հիման վրա։ Ժողովուրդների բարեկամությունը լիակատար հաղթանակ տարավ մեր երկրում, սոցիալիզմի հաղթանակի պայմաններում ավելի լայնորեն ծավալվեցին ազգերի զարգացման երկու առաջադիմական տենդենցները՝ բարգավաճումն ու մերձեցումը։ Տեղի ունեցավ յուրաքանչյուր ազգի բուռն ու համակողմանի զարգացում, միութենական ու ինքնավար հանրապետությունների իրավունքների ընդլայնում և դրա հետ մեկտեղ սոցիալիստական ազգերի ավելի սերտ մերձեցում, նրանց փոխազդեցության կապերի ու փոխադարձ հարստացման ուժեղացում։ ՍՍՀՄ բազմազգ ժողովուրդների եղբայրական ընտանիքում աճեց ու ամրապնդվեց հայ և մյուս ժողովուրդների քաղաքական ու գաղափարական միասնությունը։

Սոցիալիստական շինարարության պրոցեսում հասակ առավ նաև սովետական դարաշրջանի նոր մարդը, որն օժտված է ջերմ հայրենասիրությամբ, ժողովրդի ընդհանուր գործի նկատմամբ անսահման նվիրվածությամբ։

Սոցիալիզմի երկրի պատմական մեծ հաջողություններն ակնառու կերպով ցույց տվին ամբողջ աշխարհի աշխատավորներին, որ բանվորներն ու գյուղացիները, իշխանությունը վերցնելով իրենց ձեռքը, կարող են ստեղծել տնտեսապես ու քաղաքականապես հզոր պետություն։ Պաշտպանելով ժողովրդի

շահերը, այդ պետությունը նրա համար ստեղծում է խաղաղ ու երջանիկ կյանքի պայմաններ։

Ինչպես ամբողջ Սովետական Միությունում, այնպես էլ Հայաստանում սոցիալիզմի կառուցմանը լուրջ վնաս հասցրեց Ստալինի անձի պաշտամունքը։ Խախտվեցին սովետական դեմոկրատիայի լենինյան սկզբունքները, անօրինականության ոճ դարձան լավագույն շատ կադրեր։ Սակայն անհատի պաշտամունքը չկասեցրեց մեր հասարակության առաջընթացը։

1936 թվականին ընդունվեց ՍՍՀՄ նոր սահմանադրությունը, որը նոր փուլ հանդիսացավ սովետական դեմոկրատիայի զարգացման մեջ։ Նոր սահմանադրությունը սոցիալիզմի հաղթանակի հետևանքով ձեռք բերած հաջողությունների օրենսդրական ամրապնդումն էր։

Իր առաջին իսկ հոդվածում սահմանադրությունը ազդարարեց, որ ՍՍՀՄ-ը բանվորների և գյուղացիների սոցիալիստական պետություն է, որի տնտեսական հիմքը ժողովրդական տնտեսության սոցիալիստական սիստեմն է, արտադրության միջոցների սոցիալիստական սեփականությունը։ ՍՍՀՄ-ի քաղաքական հիմքը աշխատավորների դեպուտատների սովետներն են, որոնց և պատկանում է ամբողջ իշխանությունը։

Նոր սահմանադրությունը, որը հիմնված է պրոլետարական ինտերնացիոնալիզմի վրա, ընդգծում է ՍՍՀՄ բոլոր ժողովուրդների կամավոր միավորումը և բոլոր քաղաքացիների իրավահավասարությունը՝ անկախ ազգային ու ռասայական տարբերությունից։

Սահմանադրությունը բոլոր քաղաքացիներին տալիս է աշխատանքի, հանգստի, կրթության, բուժսպասարկումից օգտվելու և թոշակավորվելու իրավունք։

Սահմանադրությունն արգելում է մարդու կողմից մարդու շահագործումը։ Նա հիմնված է «յուրաքանչյուրից ըստ ընդունակությունների, յուրաքանչյուրին ըստ աշխատանքի» սկզբունքի վրա, որը հաշվի առնելով սովետական մարդկանց անձնական ու հասարակական շահերը, խթանում է աշխատողների շահագրգռվածությունը աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու գործում։

Մեր երկրում ստեղծվեց աշխարհում ամենադեմոկրատական ընտրական սիստեմը, որը սոցիալական ծագման կամ դիրքի, սեռի, ազգային և ռասայական, զբաղմունքի և այլ հատկանիշների ոչ մի սահմանափակում չի ընդունում։ Պետական իշխանության օրգանները վարից վեր ընտրվում են ընդհանուր, ուղղակի ընտրությամբ և գաղտնի քվեարկությամբ։

Սոցիալիզմի հաղթանակը ՍՍՀՄ-ում և նրա անբաժանելի մասը կազմող Սովետական Հայաստանում վճռական նշանակություն ունեցավ ինչպես Հայրենական մեծ պատերազմում պատմական խոշոր հաղթանակ ձեռք բերելու, այնպես էլ մեր երկրում հետպատերազմյան տարիներին կոմունիստական շինարարության ծավալման գործում։

Սովետական իշխանության հաստատումը և սոցիալիզմի կառուցումը մեր երկրում հայրենասիրական վերելք առաջացրին աշխարհով մեկ սփռված սփյուռքահայության մեջ։ Այդ բանի լավագույն ապացույց կարող է ծառայել

նրանց նվիրական ցանկությունը վերադառնալ մայր հայրենիք՝ Սովետական Հայաստան։

Հատորում համառոտ շարադրված է նաև 1920—1940 թվականների սփյուռքահայ կյանքի պատմությունը։

* * *

Հատորը պատրաստել է հեղինակային կոլեկտիվը հետևյալ կազմով.

Աղաբաբյան Ս. Բ., Աղայան Ծ. Պ., Բաբայան Լ. Մ., Գալոյան Գ. Ա., Գյոդակյան Գ. Շ., Դալլաքյան Ղ. Մ., Ենգոյան Փ. Ի., Էլչիբեկյան Հ. Մ., Խալաթյան Լ. Ա., Խուդավերդյան Կ. Ս., Կարապետյան Հ. Ս., Հակոբյան Ա. Մ., Հարությունյան Վ. Մ., Ղազախեցյան Վ. Ն., Մելիքսեթյան Հ. Ու., Սարգսյան Մ. Ս., Ստեփանյան Գ. Խ.։

Կարևոր իրադարձությունների ժամանակագրությունը կազմել է Հարությունյան Շ. Ռ.։

Քարտեզները կազմել են Գրգեսարյան Հ. Ղ., Երեմյան Ս. Տ., Վալեսյան Լ. Հ.։

ԲԱԺԻՆ Ա

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄԵԾ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՆԱԿՆ ՈՒ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1917 - 1921



Վ. Ի. Լենին

ՀՀ ԵՄ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳՈՒՆԴԱՄԱՍՆԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄԵԾ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ: ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1. ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄԵԾ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ: ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՀԱՄԱՐ

1917 թվականի հոկտեմբերի 25-ին[1] *Պետրոգրադի ապստամբ բանվորները, զինվորները և նավաստիները կոմունիստական կուսակցության գլխավորությամբ տապալեցին բուրժուական ժամանակավոր կառավարությունը։ Հաղթանակեց Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը։ Ստեղծվեց աշխարհում առաջին սոցիալիստական պետությունը։*

Մարդկության պատմության մեջ Ռուսաստանի աշխատավորները առաջինը փշրեցին կապիտալիզմի շղթաները և հաստատեցին պրոլետարիատի դիկտատուրա։ «Մենք իրավունք ունենք հպարտանալու և մեզ երջանիկ համարելու նրանով, որ մեզ երկրագնդի մի անկյունում վիճակվեց առաջինը խորտակելու այն ամենի գազանին՝ կապիտալիզմին,— գրել է Վ. Ի. Լենինը,— որն արյամբ հեղեղել է երկիրը, սովի ու վայրենացման հասցրել մարդկությունը, և որը կխորտակվի անխուսափելիորեն և շուտ, որքան էլ հրեշավոր գազանային լինեն նրա հոգեվարքային վայրագությունների արտահայտությունները»[2]*։*

Հոկտեմբերի 25-ին, երեկոյան ժամը 10 անց 45 րոպե Պետրոգրադում բացվում է Սովետների համառուսաստանյան երկրորդ համագումարը, որը աշխատավոր ժողովրդի անունից իր ձեռքն է վերցնում իշխանությունը։ Համագումարը որոշում է տեղերում ամբողջ իշխանությունը հանձնել բանվորների, զինվորների և գյուղացիների դեպուտատների սովետներին։ Վ. Ի. Լենինի առաջարկով համագումարն ընդունում է դեկրետներ հաշտության և հողի մասին։ Հաշտության մասին դեկրետով սովետական իշխանությունը հրաժարվեց ցարական ու ժամանակավոր կառավարությունների կնքած զավթողական պայմանագրերից և բոլոր պատերազմող կողմերին առաջարկեց անմիջապես բանակցություններ սկսել ընդհանուր, արդարացի, դեմոկրատական հաշտության

---

1 *Ցոթերորդ հատորում բոլոր ամսաթվերը մինչև 1918 թվականի փետրվարի 1-ը ցույց են տրված հին տոմարով։*

2 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 27, էջ 627։

կնքելու համար։ Հողի մասին դեկրետով վերացվում էր հողի մասնավոր սեփականությունը։ Կալվածատիրական ամբողջ հողը բռնագրավվում էր և առանց նոճման տրվում ժողովրդին։ Այդ դեկրետը կոչված էր ամրապնդելու բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության դաշինքը։

Համագումարն ընտրեց համառուսաստանյան Կենտրոնական գործադիր կոմիտե և ստեղծեց սովետական առաջին կառավարությունը՝ ժողովրդական կոմիսարների սովետը՝ Վ. Ի. Լենինի գլխավորությամբ։

Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակն ամրապնդելու, նախկինում ճնշված բոլոր ժողովուրդների իրավահավասարությունը ապահովելու ուղղությամբ սովետական կառավարությունը ձեռնարկեց մի շարք կարևոր միջոցառումներ։

Նոյեմբերի 2-ին սովետական կառավարությունը հրապարակեց «Ռուսաստանի ժողովուրդների իրավունքների դեկլարացիան», որով հռչակվեց Ռուսաստանում ապրող բոլոր ժողովուրդների հավասարությունը և սուվերենությունը, նրանց ազատ ինքնորոշման իրավունքը՝ ընդհուպ մինչև անջատվելը և ինքնուրույն պետություն ստեղծելը, բոլոր տեսակի ազգային և ազգային-կրոնական արտոնությունների ու սահմանափակումների վերացումը, ազգային փոքրամասնությունների ազատ զարգացումը։

Հոկտեմբերյան հեղափոխությունը արմատական հեղաշրջում կատարեց Ռուսաստանի ժողովուրդների կյանքում։ Տապալելով շահագործողների տիրապետությունը, բանվոր դասակարգը, դաշնակցած չքավոր գյուղացիության հետ, հաստատեց իր դիկտատուրան, ոչնչացրեց կառավարման հին պետական ապարատը, ազգայնացրեց գործարանները, բանկերը, երկաթուղին, բռնագրավեց խոշոր հողային սեփականությունը, ստեղծեց պետական իշխանության սովետական մարմինները և ձեռնամուխ եղավ սոցիալիստական հասարակարգի ստեղծման գործին։

Սովետական պետությունը չեղյալ հայտարարեց բոլոր այն պայմանագրերը, որոնք երկիրը տնտեսական ու քաղաքական կախման մեջ էին պահում իմպերիալիստական պետություններից։ Այսպիսով, Հոկտեմբերյան հեղափոխությունն ապահովեց սովետական երկրի քաղաքական և տնտեսական անկախությունը։

Մեծ Հոկտեմբերը նոր էջ բացեց մարդկության պատմության մեջ։ «Կապիտալիզմի և նրա հետքերի ոչնչացումը, կոմունիստական հասարակարգի հիմքերի հաստատումը,— գրել է Վ. Ի. Լենինը,— կազմում է համաշխարհային պատմության այժմ սկսված նոր դարաշրջանի բովանդակությունը»[1]։

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը հզոր թափ հաղորդեց համաշխարհային հեղափոխական շարժմանը։ 1918 թվականի նոյեմբերին հեղափոխություններ տեղի ունեցան Գերմանիայում և Ավստրո-Հունգարիայում։ Գերմանիայում առաջացան բանվորների և զինվորների դեպուտատների սովետներ։ 1918 թվականին սովետական իշխանության հաստատման համար ոտքի ելան Ֆինլանդիայի բանվորները։ 1919 թվականի մարտին սովետական հանրապետություն հաստատվեց Հունգարիայում, նույն թվականի ապ-

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 31, էջ 491։

րիլին՝ Բնավարիայում։ 1920 թվականի աշնանը Իտալիայի բանվորներն սկսում են գրավել գործարանները և կազմակերպել դինված հեղափոխական ջոկատներ։ Հեղափոխական շարժումն ընդգրկում է Անգլիայի և Ֆրանսիայի բանվոր դասակարգին։ Եվրոպայի շատ երկրներում, ինչպես և ԱՄՆ-ում տեղի են ունենում բանվորների գործադուլներ, մասսայական ցույցեր և միտինգներ, Բուլղարիայում և Ռումինիայում հեղափոխական պրոլետարիատի մարտեր՝ ընդդեմ բուրժուազիայի։

Հոկտեմբերյան հեղափոխությունը օժանդակեց բանվորական և գյուղացիական շարժման զարգացմանը Լատինական Ամերիկայի երկրներում։ Գործադուլային շարժումներ են ծավալվում Բրազիլիայում, Արգենտինայում, Մեքսիկայում, Չիլիում, Կուբայում և հարավ-ամերիկյան այլ երկրներում։ Գաղութային ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարը նոր թափ է ստանում Չինաստանում, Հնդկաստանում, Իրանում և այլուր։

Հոկտեմբերյան հեղափոխությունը ցնցեց համաշխարհային կապիտալիզմի հիմքերը, առաջացրեց հսկայական սոցիալական տեղաշարժեր և փոփոխություններ։

Սոցիալիզմի հաղթանակը Սովետական Միությունում, համաշխարհային սոցիալիստական լագերի ստեղծումը, աշխարհի գրեթե բոլոր երկրներում կոմունիստական և բանվորական կուսակցությունների կազմակերպումը ու նրանց շարքերի աճը, իմպերիալիզմի գաղութային սիստեմը խորտակող ազգային-ազատագրական հեղափոխությունների հուժկու ալիքը,— ահա մեծ Հոկտեմբերի ազդեցության անմիջական դրսևորումները համաշխարհային պատմության ընթացքի վրա։

* * *

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակի լուրը Անդրկովկասում ստացվելուց հետո, երկրամասի բազմաթիվ քաղաքներում ու գյուղական վայրերում տեղի են ունենում բազմամարդ միտինգներ ու ժողովներ, որոնց մասնակիցները ողջունում են պրոլետարական հեղափոխության հաղթանակը։

Հոկտեմբերի 26-ին Կովկասյան երկրամասի և ռազմաճակատի ՌՍԴԲ(բ)Կ զինվորական կազմակերպությունների կոնֆերանսը ողջույնի հեռագիր է ուղարկում Վ. Ի. Լենինին, Բալթիական նավատորմի անձնակազմին ու Պետրոգրադի սովետին։ Կոնֆերանսը կովկասյան բանակի զինվորներին կոչ է անում պաշտպանել սովետական իշխանությունը[1]։

Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակը հատկապես բարձր հեղափոխական վերելք առաջացրեց Անդրկովկասի պրոլետարական կենտրոնում՝ Բաքվում։ Բաքվի սովետում հոկտեմբերի 27-ին քննվում է իշխանությունը սովետին հանձնելու հարցը։ Հոկտեմբերի 31-ին Բաքվի սովետը իրեն հայտարարում է սովետական կառավարության կողմնակից, իսկ նոյեմբերի 2-ին սո-

1 Տե՛ս «Борьба за победу Советской власти в Грузии», документы и материалы (հետագայում՝ «Борьба за победу Советской власти в Грузии»), Թբիլիսի, 1958, էջ 124—125։

ՀՍՍՌ ԳԱ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԱՏՈՐԱՆ

A III 3334

վետն ընտրում է նոր գործադիր կոմիտե՝ Ստ. Շահումյանի նախագահությամբ և Բաքվում հռչակում սովետական իշխանություն։

Հոկտեմբերի 27-ին Թիֆլիսում կայանում է Արսենալի շրջանի աշխատավորների ժողովը, որին մասնակցում են մոտ 2000 մարդ։ Ողջունելով սոցիալիստական հեղափոխության հաղթանակը, ժողովը որոշում է կանգնել նրա պաշտպանության դիրքերում, անմիջապես վերընտրել համաձայնողական կուսակցությունների հետևից գնացող Թիֆլիսի բանվորական դեպուտատների սովետը, հրավիրել Կովկասյան ռազմաճակատի զինվորական դեպուտատների նոր համագումար և դադարեցնել հեղափոխությանը հավատարիմ զորամասերի զինաթափումը։

Ալեքսանդրապոլի սովետի բոլշևիկ-դեպուտատները սովետի գործադիր կոմիտեի 1917 թվականի հոկտեմբերի 30-ի նիստում առաջարկ մտցրին, որ սովետը միանա Սովետների համառուսաստանյան II համագումարի որոշմանը՝ իշխանությունը Ռուսաստանում սովետների ձեռքը անցնելու մասին։ Սակայն գործադիր կոմիտեում մեծամասնություն կազմող էսեռների, մենշևիկների և դաշնակցականների կողմից մերժվում է այդ առաջարկը։

Նոյեմբերի 3-ին կայացած անդրկովկասյան երկաթուղիների գլխավոր արհեստանոցների բանվորների ընդհանուր ժողովը, որին մասնակցում էին 500 հոգի, իր ողջույնն է հղում Պետրոգրադի բանվորներին և կայազորի զինվորներին ու հայտարարում, որ արհեստանոցի բանվորները Ռուսաստանի բոլոր բանվորների հետ ոտքի կկանգնեն ի պաշտպանություն բանվորա-գյուղացիական կառավարության՝ ժողովրդական կոմիսարների սովետի։

Գյուղացիական դեպուտատների Կովկասյան երկրային կենտրոնի հոկտեմբերի 29-ի նիստում բոլշևիկները պահանջում են, որ երկրային կենտրոնը հանդես գա ի պաշտպանություն հեղափոխական Պետրոգրադի բանվորների և զինվորների։

Սովետական իշխանության համար մղվող պայքարն աշխուժանում է նաև Հայաստանում։

ՌՍԴԲ(բ)Կ Ալեքսանդրապոլի կոմիտեն 1917 թվականի նոյեմբերի սկզբին կոչ է անում աշխատավորներին ու զինվորներին պաշտպանել Ռուսաստանի նորաստեղծ սովետական իշխանությունը և Սահմանադիր ժողովի պատգամավորների ընտրության ժամանակ ձայն տալ իրենց շահերի պաշտպան՝ բոլշևիկյան կուսակցության թեկնածուներին[1]։

Նոյեմբերին Կարսում, Երևանում տեղի են ունենում զորամասերի և աշխատավորների միտինգներ, որոնք պահանջում են իշխանությունը հանձնել սովետներին։ Սարիղամիշում տեղի ունեցած միտինգներից մեկում ընդունվում է բոլշևիկ Կիսասուի առաջարկած բանաձևը, որը պահանջում էր ճանաչել Վ. Ի. Լենինի գլխավորած ժողովրդական կոմիսարների սովետի իշխանությունը և ամեն կերպ աջակցել նրան։ Ջալալօղլիի (Ստեփանավան) քաղաքացիների և կայազորի զինվորների միացյալ ժողովն իր ընդունած որոշման մեջ գրում էր. «Ամբողջ իշխանությունը պետք է անցնի բանվորների, գյուղացիների և զինվորների սովետների ձեռքը, որպես ժողովրդական շահերի իսկական պաշտ-

1 Տե՛ս «Ռևոլյուցիոն կոլեր և Թուցիկներ», Երևան, 1960, էջ 426։

պանի։ Ոչ մի վստահություն հակահեղափոխական բուրժուազիայի և համաձայնողականների նկատմամբ։ Մենք մեր ողջույնն ենք հղում Պետրոգրադի կայազորին և պրոլետարիատին, որոնք կանգնած են ազատության, հեղափոխության պաշտպանության դիրքերում»[1]։

Ղարաքիլիսայի (Կիրովական) բոլշևիկները բնակչության մեջ ագիտացիոն աշխատանք էին տանում հաշտություն կնքելու, հողը բռնագրավելու և իշխանությունը սովետներին հանձնելու ուղղությամբ։ 1918 թվականի հունվարի 9-ին Հաղպատում տեղի ունեցած կոմունիստների և անկուսակցականների ժողովը որոշում է՝ պահանջել Անդրկովկասում հաստատել սովետական իշխանություն։ «Մենք խոսք ենք տալիս այս պայքարում սովետներին ցույց տալ վճռական օգնություն»[2],— ասվում էր ժողովի բանաձևում։

1917 թվականի նոյեմբեր-դեկտեմբեր և 1918 թվականի հունվար ամիսներին կովկասյան բանակի զինվորների մեծ մասն արդեն գնում էր բոլշևիկների հետևից և պահանջում սովետական իշխանության հաստատումը Անդրկովկասում։

2. ՀԱԿԱՍՈՎԵՏԱԿԱՆ ԲԼՈԿԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ ԵՎ ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Բոլշևիկյան ազդեցության ուժեղացման հետ միաժամանակ Անդրկովկասում տեղի էր ունենում հակահեղափոխական ուժերի համախմբում։

Անդրկովկասում սովետական իշխանության հաղթանակի համար մղվող պայքարը ճնշելու նպատակով, հոկտեմբերից անմիջապես հետո, վրացական մենշևիկները, էսեռները, դաշնակցականները, մուսավաթականները և մյուս հակահեղափոխական կուսակցությունները ստեղծում են հակասովետական բլոկ։ Այդ բլոկում ղեկավար դեր են խաղում վրաց մենշևիկները։

Անդրկովկասում Հոկտեմբերյան հեղափոխության վրա հարձակման առաջին կոչը արվեց հոկտեմբերի 25-ին, հեղափոխության հաղթանակի օրը։ Կովկասյան բանակի զինվորական դեպուտատների երկրային սովետը, որտեղ մենշևիկները ու էսեռները մեծամասնություն էին կազմում, դիմում է բանակին և բացահայտում իր խիստ թշնամական վերաբերմունքը դեպի սովետական իշխանությունը[3]։ Մենշևիկների և էսեռների թելադրությամբ հոկտեմբերի 26-ին նման որոշում է ընդունում բանվորական, զինվորական և գյուղացիական դեպուտատների Անդրկովկասյան երկրային կենտրոնն ու Թիֆլիսի բանվորական դեպուտատների սովետի գործադիր կոմիտեի միացյալ նիստը[4]։

Հետևելով երկրային կենտրոնին և Թիֆլիսի սովետին, չնայած բոլշևիկ դեպուտատների դիմադրությանը, մենշևիկների, էսեռների և դաշնակցականների ճնշման տակ նույնպիսի որոշում են ընդունում Ալեքսանդրապոլի, Կարսի, Երևանի սովետները։

---

1 «Кавказский рабочий», 17 նոյեմբերի 1917 թ.։

2 Նույն տեղում։

3 Տե՛ս «Документы и материалы внешней политики Закавказья и Грузии» (հետագայում՝ «Документы и материалы...»), Թիֆլիս, 1919, էջ 1։

4 Տե՛ս նույն տեղում, էջ 2։

Թշնամական դիրք բռնելով Ռուսաստանում հաղթանակած սոցիալիստական հեղափոխության և սովետական իշխանության հանդեպ, անդրկովկասյան հակասովետական բլոկը ձեռնամուխ է լինում երկրամասը կառավարելու անդրկովկասյան նոր օրգանի ստեղծմանը, որին ակտիվորեն միջամտում են Թիֆլիսում գտնվող ԱՄՆ-ի և Անգլիայի հյուպատոսները։ Այդ ուղղությամբ հատկապես ակտիվ գործունեություն է ծավալում ամերիկյան հյուպատոս Սմիտը։ 1917 թվականի նոյեմբերի սկզբներին պետական դեպարտամենտին ուղղած իր հաղորդագրություններից մեկում Սմիտը հայտնում էր, որ սերտ կապեր է հաստատել անդրկովկասյան հակասովետական բլոկի ղեկավարների և կովկասյան բանակի զինվորական գործիչների հետ։ Մի քանի օր հետո նա հեռագրում է, որ ինքը ներկա է լինելու այն խորհրդակցությանը, ուր քննվելու է անդրկովկասյան կոմիսարիատ կազմակերպելու հարցը։ Մի այլ հեռագրում Սմիտը խորհուրդ է տալիս պետական դեպարտամենտին ֆինանսական օգնություն ցույց տալ անդրկովկասյան հակահեղափոխական ուժերին, որպեսզի վերջիններս կարողանան իշխանությունը պահել իրենց ձեռքում և զինաթափել Կովկասյան ռազմաճակատից տուն վերադարձող զինվորներին։ Համաձայն Սմիտի մի այլ հաղորդագրության Կովկասյան ռազմաճակատի անգլիական զինվորական միսիայի պետ գեներալ Շորը հրահանգներ է ստանում Լոնդոնից՝ կազմակերպել Հարավային Ռուսաստանի և Հյուսիսային Կովկասի հակահեղափոխական ուժերին Սովետական Ռուսաստանի դեմ հանելու համար։

Թիֆլիսում 1917 թվականի նոյեմբերի 11-ին հակասովետական բլոկի նախաձեռնությամբ խորհրդակցություն է տեղի ունենում, որտեղ քննվում է անդրկովկասյան նոր իշխանության կազմակերպման հարցը։ Խորհրդակցությանը մասնակցում են բանվորական և գյուղացիական դեպուտատների սովետների երկրային կենտրոնի, Կովկասյան ռազմաճակատի զինվորական դեպուտատների երկրային սովետի, Թիֆլիսի սովետի, քաղաքային Դումայի, ՕԶԱԿՈՄ-ի (Անդրկովկասյան հատուկ կոմիտե), քաղաքական կուսակցությունների, Թիֆլիսի արհմիութենական կազմակերպությունների խորհրդի և ուրիշ կազմակերպությունների ներկայացուցիչներ։ Խորհրդակցությանը ներկա էին նաև կովկասյան բանակի հրամանատար գեներալ Պրժևալսկին, բանակի շտաբի պետ գեներալ Լևանդովսկին, Կովկասյան ռազմաճակատի անգլիական և ֆրանսիական զինվորական միսիաների պետերը, ամերիկյան, անգլիական հյուպատոսները և ուրիշները[1]։

Խորհրդակցության հրավիրման կապակցությամբ բոլշևիկյան Կովկասյան երկրային կոմիտեն հանդես է գալիս դեկլարացիայով, ուր պաշտպանվում էր Սովետների համառուսաստանյան II համագումարի՝ իշխանությունն ամբողջ երկրում սովետների ձեռքը անցնելու որոշումը։ Դեկլարացիայում նաև ասվում էր, որ համագումարում ընտրված Ժողովրդական կոմիսարների սովետի իշխանությունը պետք է ճանաչվի ինչպես ամբողջ Ռուսաստանում, այնպես էլ Անդրկովկասում։ Բոլշևիկները հայտարարում էին, որ իրենք չեն մասնակցի Հոկտեմբերյան հեղափոխության և սովետական իշխանության դեմ ուղղված

---

1 Տե՛ս «Документы и материалы...», էջ 4։

խորհրդակցությանը[1]։ Բոլշևիկների դեկլարացիան հրապարակում է Մ. Յախկայան, որից հետո բոլշևիկները հեռանում են խորհրդակցությունից։

Խորհրդակցությունից հետո, նոյեմբերի 15-ին կազմակերպվում է անդրկովկասյան կոմիսարիատ, որը բուրժուա-նացիոնալիստական կուսակցությունների հակահեղափոխական կոալիցիա էր և գործիք իմպերիալիստական պետությունների ձեռքին՝ Անդրկովկասը Սովետական Ռուսաստանից անջատելու և ճնշելու երկրամասի աշխատավորության պայքարը սովետական իշխանության համար։ Կոմիսարիատի կազմի մեջ մտնում են մենշևիկների, էսեռների, դաշնակցականների, մուսավաթականների ներկայացուցիչները։ ՕԶԱԿՈՄ-ը, որը ժամանակավոր կառավարության օրգանն էր Անդրկովկասում, դադարում է գոյություն ունենալուց։ Կոմիսարիատում ղեկավար պաշտոնները մենշևիկները և էսեռները վերցնում են իրենց ձեռքը։ Նրա նախագահ, արտաքին հարաբերությունների և աշխատանքի կոմիսար է նշանակվում մենշևիկ Ե. Գեգեչկորին, ներքին գործերի կոմիսար՝ մենշևիկ Ա. Չխենկելին, ռազմական և ռազմա-ծովային կոմիսար՝ էսեռ Դ. Դոնսկոյը, հողագործության կոմիսար՝ էսեռ Ա. Նեբուլուն, առևտրի և արդյունաբերության կոմիսար՝ մուսավաթական Մ. Ջաֆարովը։ Դաշնակցականները ստանում են երկու տեղ՝ ֆինանսների կոմիսար է նշանակվում Խ. Կարճիկյանը, իսկ հանրային խնամատարության կոմիսար՝ Հ. Օհանջանյանը։

Անդրկովկասյան կոմիսարիատը երկրամասի ժողովուրդներին ուղղված իր դեկլարացիայում հայտարարում է, որ կոմիսարիատը ժամանակավոր մարմին է և գոյություն է ունենալու մինչև Սահմանադիր ժողովի գումարումը։ Կոմիսարիատի կազմակերպմամբ հակասովետական բլոկը փաստորեն Անդրկովկասը անջատեց Սովետական Ռուսաստանից և երկրամասը վերածեց հակասովետական ռազմական պլացդարմի։

1917 թվականի դեկտեմբերի կեսին ԱՄՆ-ի պետական քարտուղարին ուղարկած իր մի հեռագրում Սմիտը հաղորդում է, որ անդրկովկասյան կառավարության պրեմիեր-մինիստրն իրեն հայտարարել է, որ եթե իր կառավարությունն անհապաղ կերպով չստանա 60 միլիոն ռուբլի, ապա իշխանությունը կարող են զավթել բոլշևիկները[2]։ Նման ելքը համարելով «դժբախտություն», Սմիտը խնդրում է պետական դեպարտամենտից՝ լիազորել իրեն այդ գումարը անդրկովկասյան կոմիսարիատին տրամադրելու համար։

Անտանտի և ԱՄՆ-ի իմպերիալիստները անդրկովկասյան կոմիսարիատն օգտագործում են նաև Գերմանիայի դեմ Սովետական Ռուսաստանին պատերազմի մեջ ներգրավելու նպատակով։ Դեռևս նոյեմբերյան խորհրդակցությունից մի քանի օր առաջ ԱՄՆ-ի հյուպատոսը Թիֆլիսից հեռագրով պետական քարտուղարին հաղորդում է. «Շաբաթ օրը ներկա կգտնվեմ այն նիստին, որտեղ կկազմվի անդրկովկասյան կառավարությունը, որը կմիավորվի հարավարևելյան ֆեդերացիայի հետ... (նկատի է առնվում Հյուսիսային Կովկասի հակահեղափոխական ուժերը — խմբ.) և կհրաժարվի զինադադարից կամ սեպարատ հաշտությունից»[3]։

---

1 Տե՛ս «Борьба за победу Советской власти в Грузии», էջ 143—144։

2 Տե՛ս „Foreign Relations..., 1918, Russia", հատ. II, էջ 589—590։

3 Նույն տեղում, էջ 592։

Իմպերիալիստական պետությունների ամբողջ քաղաքականության նպատակն էր ամրապնդել հակահեղափոխական ուժերն Անդրկովկասում և զինված պայքար կազմակերպել Սովետական Ռուսաստանի դեմ։ Անդրկովկասյան կոմիսարիատը՝ ԱՄՆ-ի հյուպատոս Սմիտի ակտիվ աջակցությամբ, նախապատրաստում է Կովկասյան ռազմաճակատից վերադարձող զինվորների զինաթափումը։ 1917 թվականի դեկտեմբերի 13-ին ԱՄՆ-ի ներկայացուցիչ Սմիտը պետական դեպարտամենտին է ներկայացնում այդ կապակցությամբ մշակած իր պլանը և պնդում, որ եթե իր կառավարությունը համապատասխան գումար տրամադրի, ապա այդ պլանի կենսագործումը հնարավորություն կտա իրեն «ապահովել թուրքական ռազմաճակատից վերադարձող բոլշևիկյան բոլոր զորքերի զինաթափումը»[1]։

Անդրկովկասյան կոմիսարիատը, գործելով Թիֆլիսում գտնվող ԱՄՆ-ի, Անգլիայի և Ֆրանսիայի ներկայացուցիչների ցուցումներով, համաձայնության է գալիս Հյուսիսային Կովկասում գտնվող հակահեղափոխական ուժերի ղեկավար՝ Խռլամովի, գեներալներ Կորնիլովի, Կալեդինի, Կարաուլովի հետ։ Անդրկովկասյան հակահեղափոխականները կովկասյան բանակի պահեստներից հիշյալ գեներալներին ուղարկում էին ռազմամթերք։ Խոսելով այդ օգնության մասին Ստ. Շահումյանը գրում է. «Բաքվի սովետը կալանք դրեց 32 վագոն փամփուշտի վրա, որն այստեղից ուղարկում էին Կարաուլովին։ Օրերս, դեկտեմբերի 7—8-ին, մենք մերկացրինք դարձյալ 7 վագոն փամփուշտի առաքումը նույն Կարաուլովին և ստիպեցինք երկրային բանակային կենտրոնին հետադարձել Բաքու, որ այդ վագոնները չթողնեն ուղարկել»[2]։

Սովետական իշխանության դեմ պայքարի կազմակերպման գործում Անդրկովկասում ակտիվ մասնակցում են նաև անգլիական գաղութարարները։ 1917 թվականի դեկտեմբերի սկզբներին անգլիական կառավարությունը հանձնարարում է իր գործակալներին անհրաժեշտ ֆինանսական օգնություն ցույց տալ հակահեղափոխական առանձին խմբերին, այդ թվում մենշևիկներին ու դաշնակցականներին։ Լոնդոնում ԱՄՆ-ի դեսպան Փեյջը դեկտեմբերի 21-ին ծածկագրով հաղորդում է իր կառավարությանը, որ անգլիական գործակալներն իրենց կառավարությունից հրահանգ են ստացել նման օգնություն կազմակերպելու մասին, եթե այդ օգնությունը կարող է իրեն արդարացնել[3]։ Ինչպես խոստովանել է Ա. Խատիսյանը, անգլիական գնդապետ Բարքի միջոցով Թիֆլիսի հայկական ազգային խորհուրդը այդ նպատակով ստացել է 4 միլիոն ռուբլի։

Վախենալով անգլիական իմպերիալիստների դիրքերի ուժեղացումից Անդրկովկասում, ԱՄՆ-ի իմպերիալիստները լարված հետևում էին անգլիական գործակալների յուրաքանչյուր քայլին։ Հանդես գալով Անգլիայի հետ միասնական ճակատով նորաստեղծ Սովետական Ռուսաստանի դեմ, ԱՄՆ-ը միաժամանակ մտահոգվում է Անդրկովկասում, ինչպես նաև Մերձավոր ու Միջին Արևելքում իր դիրքերն ուժեղացնելու համար։

ԱՄՆ-ի պետական քարտուղար Լանսինգը, իմանալով անգլիական գործակալներին տրված հրահանգների մասին, հանձնարարում է ամերիկյան գործա-

---

1 „Foreign Relations..., 1918, Russia", հատ. II, էջ 589։

2 Ստ. Շահումյան, Երկեր, հատ. 3, Երևան, 1958, էջ 30։

3 Տե՛ս „Foreign Relations..., 1918, Russia", հատ. II, էջ 589։

կալներին «խրախուսել բոլշևիկների դեմ ուղղված բոլոր շարժումները, եթե նույնիսկ նրանց հաջողությունը մեծ կասկածի տակ է»։ Սմիտի խորհրդով Լանսինգը 1917 թվականի դեկտեմբերին առաջարկում է իր կառավարությանը՝ ազգային զորամասերի ստեղծման համար դաշնակցականներին բաց թողնել մեկ միլիոն դոլլար[1]։

Դեռևս 1917 թվականի դեկտեմբերին, հեղափոխության հաղթանակից հետո, անգլիական իմպերիալիստները պլանավորում են Պարսկաստանից զինված ինտերվենցիա կազմակերպել Անդրկովկաս։ Սակայն բավարար ռազմական ուժ չունենալու պատճառով այն հետաձգվում է։ Անդրկովկաս ներխուժելու համար հող նախապատրաստելու նպատակով, անգլիական իմպերիալիստներն իրենց գործակալների միջոցով գժտություններ էին հրահրում Անդրկովկասի ժողովուրդների միջև։ «Նրանք պետք է շարունակեն սպանել միմյանց,— գրում է անգլիական գեներալ Դենստերվիլը իր հիշողություններում,— մինչև որ ուժասպառ լինեն, իսկ այն ժամանակ միգուցե մենք կարողանանք կարգ սահմանել այնտեղ»[2]։

Այսպիսով, Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունից հետո Անդրկովկասում, այդ թվում նաև Հայաստանում, ստեղծվեցին ծանր պայմաններ։ Անտանտի ու ԱՄՆ-ի իմպերիալիստները պաշտպանելով Անդրկովկասի հակահեղափոխական ուժերին, ձգտում էին ճնշել բանվորների ու գյուղացիների սովետական իշխանության համար մղվող պայքարը և երկրամասը վերածել հակահեղափոխական պլացդարմի։

Ի տարբերություն գերմանա-թուրքական զավթիչների բացահայտ զինված ներխուժման, անգլո-ամերիկյան իմպերիալիստների ինտերվենցիան Անդրկովկաս 1917 թվականի վերջին կատարվեց անդրկովկասյան հակահեղափոխական ուժերին ֆինանսական ու տնտեսական օգնություն կազմակերպելու, երկրում քաղաքացիական պատերազմ հրահրելու և այլ միջոցներով։

Քանի դեռ շարունակվում էր համաշխարհային պատերազմը, ԱՄՆ-ի և Անտանտի իմպերիալիստները հնարավորություն չունեին զինված ինտերվենցիա կազմակերպել Սովետական Ռուսաստանի դեմ։ Արևմտյան ռազմաճակատից Սովետական Ռուսաստանի դեմ զորքեր տեղափոխելը կարող էր վտանգավոր դրություն ստեղծել դաշնակիցների համար գերմանական ռազմաճակատում։ Ահա թե ինչու նրանք ստիպված էին այդ ժամանակաշրջանում սահմանափակվել վերը նշված միջոցառումներով։ Անգլո-ամերիկյան իմպերիալիստների միջամտությունը Անդրկովկասի ներքին գործերին վնաս էր հասցնում հեղափոխության շահերին, նպաստում տեղական հակահեղափոխական ուժերին՝ զավթելու իշխանությունը։

Թիֆլիսում գտնվող արևմտյան պետությունների ներկայացուցիչների՝ առաջին հերթին ԱՄՆ-ի հյուպատոս Սմիտի համաձայնությամբ և անդրկովկաս-

---

1 Տե՛ս „Foreign Relations..., 1918, Russia", հատ. II. էջ 592—593։

2 Денстервиль, Британский империализм в Баку и Персии (1917—1918), Թիֆլիս, 1925, էջ 65։

յան հակասովետական բլոկի ղեկավարների՝ Ն. Ժորդանիայի, Ն. Ռամիշվիլու և ուրիշների ցուցումով 1918 թվականի հունվարի 7-ին Թիֆլիս — Բաքու երկաթգծի Դալար ու Շամխոր կայարանների միջև տեղի է ունենում հրեշավոր ոճրագործություն. Կովկասյան ռազմաճակատից երկաթուղով տուն վերադարձող հոգնաբեկ զինվորների վրա դավաճանորեն հարձակվում են անդրկովկասյան կոմիսարիատի զրահագնացքը և Ելիզավետպոլի մուսուլմանական ազգային խորհրդի կողմից կազմակերպված բանդաները։ Նրանց նպատակն էր զինաթափել ռուսական զորքերը և այդ ձևնքով դինել կապմավորվող ազգային զորամասերը։ Հանկարծակի հարձակման ենթարկված զինվորները, կատաղի կռիվներից հետո, որոնք տևում են մինչև հունվարի 20-ը, ճանապարհ են բացում դեպի Բաքու, տալով մոտ երկու հազար սպանվածներ ու վիրավորներ։

Այս ոճրագործությունը բուռն զայրույթ առաջացրեց Անդրկովկասի աշխատավորության և կովկասյան բանակի զինվորների մեջ։ Որպես Կովկասի ժամանակավոր արտակարգ կոմիսար Ստ. Շահումյանը Սովետական Ռուսաստանի կառավարության անունից վճռական բողոք է հայտնում այդ չարագործության դեմ և դիմելով զինվորներին՝ կոչ անում չհանձնել իրենց զենքերը, որով նրանք պետք է պաշտպանեն Հոկտեմբերյան հեղափոխությունը։

3. ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՎԵՐԵԼՔԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ։ ՌՍՖՍՀ-Ի ԺՈՂԿՈՄՍՈՎԵՏԻ ԴԵԿՐԵՏԸ «ԹՈՒՐՔԱՀԱՅԱՍՏԱՆԻ» ՄԱՍԻՆ

Երկրամասում ստեղծված ներքին ու արտաքին բարդ իրադրության պայմաններում Անդրկովկասի բանվորները և գյուղացիները բոլշևիկյան կազմակերպությունների գլխավորությամբ ուժեղացնում են պայքարը Անդրկովկասյան կոմիսարիատի և օտարերկրյա իմպերիալիստների հակահեղափոխական քաղաքականության դեմ։ Հեղափոխական շարժումների վերելքը ստիպում է երկրամասի հակահեղափոխական ուժերին դիմել պայքարի ավելի ակտիվ միջոցների։

Աշխատավորներին մոլորեցնելու համար կոմիսարիատը խոստանում է բարելավել բանվորների դրությունը, լուծել ագրարային հարցը, դեմոկրատացնել կառավարման ապարատը և այլն։

Սակայն իրականում կոմիսարիատի վարած սոցիալ-տնտեսական քաղաքականությունը ծառայում էր երկրամասի շահագործող դասակարգերի շահերին։ Կոմիսարիատը 1917 թվականի դեկտեմբերին հրապարակեց «Կանոնադրություն» հողի մասին, որտեղ պաշտպանվում էին կալվածատերերի շահերը։ Համաձայն «Կանոնադրության» հողը գյուղացիներին չէր տրվում, այլ անցնում էր հողային կոմիտեների ձեռքը։ «Կանոնադրությունում» ոչինչ չէր ասված, թե ում կողմից են ընտրվելու հողային կոմիտեները, ինչ նորմայով պետք է բաժանվի հողը և այլն։ Այդ հարցերը պետք է որոշվեին հետագայում, բայց թե երբ՝ հայտնի չէր։

Բանվորների դրությունը օր-օրի վրա վատթարանալու հետևանքով Անդրկովկասում բարձրանում էր գործադուլային ալիքը։



Ստ. Շահումյան

Դեկավարելով սովետական իշխանության հաստատման համար Անդրկովկասի աշխատավորության պայքարը, բոլշևիկները մերկացնում էին հակասովետական կուսակցությունների քաղաքականությունը։ Նրանք բացատրում էին մասսաներին, որ անդրկովկասյան հակահեղափոխականները չեն ուզում ճանաչել Սովետական Ռուսաստանի կառավարության կողմից ընդունված օրենքները, որոնք պաշտպանում էին աշխատավորների «իրավունքները և շահերը կապիտալիստների ու կալվածատերերի ոտնձգություններից»[1]։

Սովետական իշխանության համար մղվող պայքարում կարևոր նշանակություն ուներ նաև կովկասյան բանակի դիրքը։ Բոլշևիկացող զինվորական մասսաների պայքարին կազմակերպված բնույթ տալու նպատակով ՌՍԴԲ(բ)Կ Կովկասյան երկրային կոմիտեն ձեռնամուխ է լինում կովկասյան բանակի II համագումարի հրավիրմանը։ Համաձայնողական կուսակցությունները հույս չունենալով մեծամասնություն կազմելու համագումարում, ամեն կերպ խոչընդոտում են նրա հրավիրումը։ Սակայն կովկասյան բանակի զինվորների ճընշման տակ այդ կուսակցությունները ստիպված են լինում տեղի տալ։

Մինչև համագումարը բոլշևիկների երկրային և Թիֆլիսի կոմիտեների նախաձեռնությամբ Թիֆլիսում կազմակերպվում է զորամասերի պատգամավորների ժողով, որը գործելու էր որպես մշտական օրգան մինչև Թիֆլիսի բանվորների ու զինվորների սովետի գործադիր կոմիտեի վերընտրությունները։ Այդ ժողովը մեծ համակրանք է վայելում Թիֆլիսի կայազորի զինվորների մեջ և իր հսկողությունն է սահմանում Թիֆլիսի արսենալի և հրետանային պահեստի վրա։

ՌՍԴ(բ)Կ Կովկասյան երկրային կոմիտեն նոյեմբերի 24-ին դիմելով կովկասյան բանակի զինվորներին՝ կոչ է անում պայքարել ժողովրդական կոմիսարների սովետի իշխանության ճանաչման համար[2], իսկ նոյեմբերի 30-ին դիմում է զինվորներին, որպես պատգամավորներ համագումար ուղարկել բոլշևիկներին։

Համագումարը տեղի ունեցավ դեկտեմբերին Թիֆլիսում, որի բոլշևիկյան ֆրակցիան բաղկացած էր 160 պատգամավորներից։ Նրանց պաշտպանում էին բոլշևիկորեն տրամադրված անկուսակցական զինվորները և ձախ էսեռները։ Այսպիսով, բոլշևիկները մեծամասնություն էին կազմում։ Համագումարի աշխատանքները ղեկավարում էին Ստ. Շահումյանը, Մ. Ցխակայան, Գ. Կորգանովը և ուրիշներ։

Բոլշևիկների պայքարը համագումարում հաղթանակով է պսակվում։ Զայների մեծամասնությամբ համագումարը որոշեց ճանաչել ժողովրդական կոմիսարների սովետի իշխանությունը և նրա հրապարակած բոլոր դեկրետները։ Նորընտիր զինվորական դեպուտատների երկրային սովետում բոլշևիկները և նրանց կողմնակիցները մեծամասնություն կազմեցին։ Երկրային սովետի նախագահ է ընտրվում բոլշևիկ Գ. Կորգանովը։ Սակայն համագումարից անմիջապես հետո սովետի փոքրամասնությունը՝ մենշևիկները, էսեռները, դաշնակ-

---

1 «Кавказский рабочий», 16 նոյեմբերի 1917 թ.։

2 Տե՛ս նույն տեղում, 24 նոյեմբերի 1917 թ.։

ցականները և այլն, հայտարարում են, որ նրանք չեն ճանաչելու բոլշևիկների կողմից ղեկավարվող սովետը և օգտվելով անդրկովկասյան կոմիսարիատի օժանդակությունից, զավթում են սովետի ղեկավարությունը։ Դրանից հետո սովետի բոլշևիկ անդամները Գ. Կորգանովի գլխավորությամբ իրենց հռչակում են գինվորների երկրային սովետ և տեղափոխվում Բաքու, ուր մասնակցում են Անդրկովկասում սովետական իշխանության հաստատման համար մղվող պայքարին։ Մյուս փոքրաթիվ մասը վերադառնալով Սարիղամիշ, 1918 թվականի հունվարի սկզբներին կազմակերպում է ռազմա-հեղափոխական կոմիտե։ Սարիղամիշում գտնվող բանակը ճանաչում է ռազմա-հեղափոխական կոմիտեի իշխանությունը և քաղաքում հայտարարվում է սովետական իշխանություն։

1917 թվականի դեկտեմբերի 19-ին Թիֆլիսում բացվում է բանվորական դեպուտատների սովետների երկրային երկրորդ համագումարը, որ հրավիրվում է Բաքվի սովետի առաջարկով։

Սովետների երկրային կենտրոնը, չնայած Բաքվի սովետի բողոքին, սահմանեց համագումար պատգամավորներ ուղարկելու հետևյալ կարգը՝ 500 մարդուց մեկ պատգամավոր, լավ իմանալով, որ որոշ դժվարությունների պատճառով ոչ Բաքվի սովետը և ոչ էլ Հյուսիսային Կովկասի սովետները չեն կարող նման նորմայով նախատեսված քանակությամբ պատգամավորներ ուղարկել։ Ըստ սահմանված կարգի Բաքվի սովետը պետք է ուղարկեր 160 պատգամավոր, Գրոզնին՝ 60, Եկատերինոդարը՝ (Կրասնոդար)՝ 40 և այլն, այնինչ Բաքվի սովետն ուղարկում է 37, Գրոզնին՝ 2, Եկատերինոդարը՝ 10 և այլն[1]։ Թիֆլիսի և Քութաիսի նահանգների սովետներից պատգամավորները ներկայացել էին նախատեսված նորմայով՝ 121 մարդ։

Համագումարում բոլշևիկներն արդարացիորեն առաջարկեցին բոլոր պատգամավորների համար սահմանել ներկայացուցչության հավասար նորմա՝ Թիֆլիսի և Քութաիսի նահանգների պատգամավորների ընտրողների թիվը 500-ից դարձնել 2000։ Այդ դեպքում Թիֆլիսի և Քութաիսի սովետների պատգամավորների թիվը կկրճատվեր չորս անգամ և համապատասխան կերպով կավելանար Բաքվի և Հյուսիսային Կովկասի սովետների պատգամավորների թիվը։ Մենշևիկները և էսեռները մերժում են բոլշևիկների առաջարկը։ Բոլշևիկները ստիպված թողնում են համագումարը։

1918 թվականի սկզբներին երկրամասում ուժեղանում են ագրարային շարժումները։ Գնալով երկրամասի աշխատավոր գյուղացիությունը համոզվում է, որ անդրկովկասյան կոմիսարիատի խոստումները դատարկ խոսքեր են։ Գյուղացիական մի շարք ելույթներ են տեղի ունենում Ելիզավետպոլի նահանգում։ Գյուղացիները խլում են կալվածատերերի հողերը, անասունները, այրում տները։ 1918 թվականի գարնանը գյուղացիական հուզումներ են տեղի ունենում Լոռում և Հայաստանի այլ վայրերում։ Վրաստանում այդ շարժումը սուր բնույթ է ստանում հատկապես Թիֆլիսի նահանգի Գորիի գավառում։

Անդրկովկասում ստեղծված բարդ իրադրությունը մտահոգում է Սովետական Ռուսաստանի կառավարությանն ու կոմունիստական կուսակցության կենտրոնական կոմիտեին։ Սովետական Ռուսաստանի կառավարությունը

---

1 Տե՛ս Ստ. Շահումյան, երկեր, հատ. 3, էջ 49—52։

1917 թվականի դեկտեմբերի 16-ի նիստում քննարկում է Կովկասում ստեղծված դրությունը և որոշում՝ կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի անդամ, Բաքվի սովետի նախագահ Ստ. Շահումյանին նշանակել Կովկասի գործերի ժամանակավոր արտակարգ կոմիսար, մինչև Կովկասում սովետական իշխանության հաստատումը։ 1918 թվականի հունվարի 22-ին Ստ. Շահումյանը գալիս է Թիֆլիս և անցնում իր պարտականությունների կատարմանը։ Հունվարի 31-ին լույս է տեսնում «Кавказский вестник Совета Народных Комиссаров» թերթի առաջին համարը։ Իր դիմումում, ուղղված Կովկասի բոլոր սովետներին, բոլոր բանվորներին, զինվորներին և գյուղացիներին Ստ. Շահումյանը գրում է. «Սովետական իշխանությունը Կովկասում պետք է ստեղծել անհապաղ։ Ռուսաստանում ոչ մի տեղ հեղափոխության գործն այնպիսի վտանգի մեջ չի գտնվում, ներկայումս, ինչպես մեզ մոտ՝ Կովկասում։ Հյուսիսային Կովկասում ծայր առած հակահեղափոխությունից անմիջապես հետո բացահայտորեն գլուխ է բարձրացրել հակահեղափոխությունը Անդրկովկասում...

Կովկասը կանգնած է անդունդի եզրին։ Փրկեցեք նրան։ Ստեղծեք այստեղ ինտերնացիոնալ բանվորա-գյուղացիական կառավարություն, որը Ռուսաստանի սովետական կենտրոնների ու ժողովրդական կոմիսարների սովետի հետ սերտ միասնություն ստեղծելով՝ վերջ կդնի Կովկասի հակահեղափոխությանը և երկրի բանվոր ու գյուղացի բնակչության կառաջնորդի դեպի լուսավոր ապագան, դեպի սոցիալիզմի թագավորությունը»[1]։

1918 թվականի հունվարի 25-ին անդրկովկասյան երկաթուղիների գլխավոր արհեստանոցների բանվորների ժողովում «Հակահեղափոխության և հեղափոխության մասին Անդրկովկասում» զեկուցումով հանդես է գալիս Ստ. Շահումյանը։ Ժողովի կողմից ընդունված բանաձևում վճռականորեն դատապարտվում է անդրկովկասյան կոմիսարիատի հակահեղափոխական քաղաքականությունը և պահանջվում սովետական իշխանության հաստատումը Անդրկովկասում։

Հակահեղափոխական ուժերը անցնում են հարձակման։ Անդրկովկասյան կոմիսարիատը որոշում է ձերբակալել Ստ. Շահումյանին։

1918 թվականի փետրվարի 21-ին անդրկովկասյան կոմիսարիատը փակում է Թիֆլիսում լույս տեսնող բոլշևիկյան «Кавказский рабочий», «Բրձոլա» և «Բանվորի կռիվ» թերթերն ու բանտարկում բոլշևիկյան երկրային կոմիտեի մի քանի անդամների։ Այդ կապակցությամբ երկրային կոմիտեն դիմում է Անդրկովկասի աշխատավորներին և զինվորներին՝ բացատրելով նրանց հակասովետական բլոկի կողմից բոլշևիկներին դաժանորեն հալածելու նպատակը և կոչ անում բողոքի ձայն բարձրացնել անդրկովկասյան կոմիսարիատի այդ չարագործությունների դեմ։

Նույն թվականի փետրվարի 23-ին Թիֆլիսում բացվեց անդրկովկասյան սեյմը, որի մեջ մտան Սահմանադիր ժողովի՝ Անդրկովկասից ընտրված պատգամավորները։ Սեյմը կազմված էր մենշևիկներից, մուսավաթականներից, դաշնակցականներից, էսեռներից և այլ հակահեղափոխական կուսակցությունների

1 Ստ. Շահումյան, Երկեր, հատ. 3, էջ 66—70։

ներկայացուցիչներից։ Սեյմի նախագահ է ընտրվում Մենշևիկ Չխեիձեն։ Սեյմի բացման կապակցությամբ բոլշևիկների երկրային կոմիտեն դիմում է Անդրկովկասի աշխատավորներին՝ բացատրելով նրանց հակասովետական բլոկի կողմից նոր հակահեղափոխական օրգանի ստեղծման պատճառները։ Ճնշել Անդրկովկասի աշխատավորների պայքարը սովետական իշխանության հաստատման համար՝ ահա թե որն էր սեյմի նպատակը։ «Սեյմն իրենից ներկայացնում է նոր կեղծիք,— ասվում էր կոչում,— ժողովրդի նոր խաբեություն, հեղափոխությունը Անդրկովկասում խեղդելու նոր միջոց՝ ի հաճույս մուսավաթական բեկերի և խանների, ի հաճույս վրացական իշխանների և հայկական բուրժուազիայի»[1]։ Երկրային կոմիտեն կոչ է անում բանվորներին, գյուղացիներին և զինվորներին Անդրկովկասում հաստատել սովետների իշխանություն։

Սեյմի բացման օրը անդրկովկասյան հակահեղափոխական ուժերը նշեցին նոր ոճրագործությամբ։ Այդ օրը բոլշևիկների երկրային և Թիֆլիսի կոմիտեները բողոքի միտինգ էին հրավիրել Թիֆլիսի Ալեքսանդրյան այգում՝ ուղղված անդրկովկասյան կոմիսարիատի հակաժողովրդական քաղաքականության դեմ։ Միտինգին մասնակցում էին բազմաթիվ բանվորներ և զինվորներ։ Մենշևիկյան կուսակցության կենտրոնական կոմիտեի և անդրկովկասյան կոմիսարիատի հրահանգներով մենշևիկյան ջոկատը մտնում է այգի և կրակ բացում միտինգի մասնակիցների վրա, որի հետևանքով լինում են սպանվածներ և վիրավորներ։ Ի պատասխան միտինգի գնդակոծության, բոլշևիկների կոչով Թիֆլիսում հայտարարվում է ընդհանուր քաղաքական գործադուլ։

Նման պայմաններում Ստ. Շահումյանը չէր կարող շարունակել իր գործունեությունը Թիֆլիսում և ստիպված վերադառնում է Բաքու։ Այստեղ նա Ա. Ջափարիձեի, Մ. Ազիզբեկովի, Ի. Ֆիոլետովի, Ն. Նարիմանովի և ուրիշների հետ միասին գլխավորում է պայքարը սովետական իշխանության հաղթանակը ամբողջ Անդրկովկասում ապահովելու համար։

Երկրամասում սոցիալիստական հեղափոխության հաղթանակի համար մղվող պայքարի առաջամարտիկը Բաքվի հերոսական պրոլետարիատն էր, որը բոլշևիկների ղեկավարությամբ 1918 թվականի մարտի վերջերին ջախջախեց մուսավաթական հակահեղափոխական ուժերը և ամրապնդեց սովետական իշխանությունը Բաքվում։ Շուտով սովետական իշխանություն է հաստատվում Բաքվի նահանգում ու Դաղստանում։

Բաքվի բանվորների, զինվորների և նավաստիների դեպուտատների սովետը 1918 թվականի ապրիլի 25-ի նիստում ընտրում է Բաքվի նահանգի ժողովրդական կոմիսարների սովետ։ Ժողկոմսովետի նախագահ և արտաքին գործերի կոմիսար է ընտրվում Ստ. Շահումյանը, ներքին գործերի կոմիսար՝ Ա. Ջափարիձեն, ժողովրդական տնտեսության՝ Ի. Ֆիոլետովը, ռազմա-ծովային՝ Գ. Կորգանովը, քաղաքային տնտեսության՝ Ն. Նարիմանովը, արդարադատության՝ Ա. Կարինյանը, լուսավորության՝ Ն. Կոլեսնիկովան, հաղորդակցության ճանապարհների, փոստի և հեռագրի՝ Ի. Սուխարցևը։ Որոշ ժամանակ անց հողագործության կոմիսար է նշանակվում Մ. Վեզիրովը, իսկ աշխատանքի կոմիսար՝ Յա. Զևինը։

---

1 «Борьба за победу Советской власти в Грузии», էջ 214։

Բաքվի Ժողկոմսովետը ձեռնամուխ է լինում պետական ապարատի, կարմիր բանակի, նահանգում գյուղացիական դեպուտատների սովետների ստեղծման գործին և սոցիալիստական վերափոխումների աշխատանքին։ Օգտագործելով Սովետական Ռուսաստանի փորձը, հաղթահարելով դասակարգային թշնամու դիմադրությունը, Ժողկոմսովետը հունիսի 2-ի դեկրետով ազգայնացրեց նավթարդյունաբերությունը։ Ժողկոմսովետը ազգայնացրեց նաև ձկնարդյունաբերությունը, կասպյան առևտրական նավատորմը, բանկերը։

Սովետական իշխանության շուրջը աշխատավոր գյուղացիության համախմբման գործում խոշոր դեր է կատարում Ժողկոմսովետի նույն թվականի հունիսին հրապարակած հողի ազգայնացման մասին դեկրետը, որի համաձայն հողը խլվում էր կալվածատերերից և տրվում գյուղացիությանը։

Ամրապնդվելով Բաքվում, սովետական իշխանությունը բարձր պահեց սոցիալիստական հեղափոխության հաղթանակի համար մղվող պայքարի դրոշը ամբողջ Անդրկովկասում։ «...Բաքվի սովետը կոչված է,— ասվում էր Ժողովրդական կոմիսարների դեկլարացիայում,— պայքարելու և արդեն փաստորեն պայքարում ու կռվում է ամբողջ Անդրկովկասում ու Դաղստանի մարզում սովետական իշխանություն հաստատելու համար»[1]։

Անդրկովկասում սոցիալիստական հեղափոխության հետագա ծավալման համար բացառիկ կարևոր նշանակություն ուներ ազգային հարցի լուծումը։ Հայտնի է, որ ժամանակավոր կառավարությունը չլուծեց և չէր էլ կարող լուծել ազգային հարցը։ Ժամանակավոր կառավարության քաղաքականությունն արտահայտում էր միայն բուրժուազիայի շահերը և չէր վերացնում ազգային անհավասարությունը, սոցիալական ու ազգային ճնշումը։

Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակը բախտորոշ նշանակություն ունեցավ նախկինում ճնշված բոլոր ազգերի համար։ Նա ցարիզմի և ժամանակավոր կառավարության ազգային գաղութային ճնշմանը հակադրեց բոլոր ազգերի ազատ ինքնորոշման, սոցիալական և ազգային զարգացման սկզբունքը։ 1917 թվականի մայիսին Վ. Ի. Լենինն իր «Պրոլետարիատի խնդիրները մեր հեղափոխությունում» աշխատության մեջ կրկին անդրադառնալով ազգային հարցին, նշել է. «Ազգային հարցում պրոլետարական կուսակցությունը պետք է պաշտպանի նախ և առաջ այն բոլոր ազգերի և ժողովուրդների՝ Ռուսաստանից անջատվելու լիակատար ազատության հռչակումն ու անմիջական իրականացումը, որոնք ճնշված են ցարիզմի կողմից, բռնի կերպով միացվել են կամ բռնի կերպով պահվում են պետության սահմաններում, այսինքն՝ ենթարկված են անեքսիաների»[2]։

Անդրկովկասի բուրժուա-նացիոնալիստական կուսակցությունները ազգերի ազատ անջատման իրավունքի հարցը նենգափոխելով պարտադիր անջատման սկզբունքով, փորձում էին արդարացնել աշխատավորության շահերին հակադիր իրենց այսպես կոչված անկախ բուրժուական ազգային հանրապետությունների ստեղծումը։

---

1 Ստ. Շահումյան, Երկեր, հատ. 3, էջ 242։

2 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 24, էջ 69։

Բոլշևիկները ղեկավարվելով ազգային հարցի լենինյան դրույթներով, բացատրում էին մասսաներին, որ անջատման հարցը պետք է լուծել պատմական կոնկրետ պահանջների համեմատ, ելնելով ամենից առաջ տվյալ ազգի աշխատավորության շահերից։ Այդ պատճառով էլ բոլշևիկները գտնում էին, որ Ռուսաստանի ճնշված ժողովուրդների իսկական ազատությունն անհնար է առանց «սեփականաց» ազգային բուրժուազիայի տապալման, առանց սովետական իշխանության հաստատման և ազատագրված ժողովուրդների կողմից կամավոր հիմունքներով ամուր պետական միություն ստեղծելուն։ «Մեզ,— գրել է Վ. Ի. Լենինը,— մենք անջատման ապատության ենք պահանջում... բոլոր ճնշված ու ոչ-լիիրավ ազգերի համար, ապա բնավ ոչ այն պատճառով, որ մեզ կողմնակից եմք նրանց անջատումը, այլ միայն այն պատճառով, որ մենք կողմնակից ենք ո՛չ թե բռնի, այլ ազատ, կամավոր մերձեցմանն ու միաձուլմանը։ Միա՞յն այդ պատճառով»[1]։



Վ. Ավանեսով

Ղեկավարվելով Հոկտեմբերյան հեղափոխության կողմից ազգային հարցի վերաբերյալ հռչակված սկզբունքներով, Սովետական Ռուսաստանի կառավարությունը 1917 թվականի դեկտեմբերի 29-ին ընդունեց դեկրետ «Թուրքահայաստանի» ազատ ինքնորոշման մասին։ Սովետների համառուսաստանյան երրորդ համագումարը հաստատեց այն։

Դեկրետը ազդարարում էր. «Ժողովրդական կոմիսարների սովետը հայտարարում է հայ ժողովրդին, որ Ռուսաստանի բանվորական և գյուղացիական կառավարությունը պաշտպանում է Ռուսաստանի կողմից օկուպացված «Թուրքահայաստանի» հայերի ազատ ինքնորոշման իրավունքը՝ ընդհուպ մինչև լիակատար անկախություն։

Ժողովրդական կոմիսարների սովետը գտնում է, որ այդ իրավունքի կենսագործումը հնարավոր է միայն մի շարք նախնական երաշխիքների պայմաններում, որոնք բացարձակապես անհրաժեշտ են հայ ժողովրդի ազատ հանրաքվեի համար։

Ժողովրդական կոմիսարների սովետը այդպիսի երաշխիքներ է համարում՝

1. Զորքերի դուրս բերումը «Թուրքահայաստանից» և հայկական ժողովըր-

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 23, էջ 73։

դական միլիցիայի անհապաղ կազմակերպումը՝ «Թուրքահայաստանի» բնակիչների անձնական և գույքային անվտանգությունն ապահովելու նպատակով։

2. Տարբեր երկրներում ցրված գաղթական-հայերի, ինչպես նաև վտարանդի հայերի անարգել վերադարձը «Թուրքահայաստանի» սահմաններըւ

3. Պատերազմի ժամանակ թուրքական իշխանությունների կողմից բռնի կերպով Թուրքիայի խորքերն արտաքսված հայերի անարգել վերադարձը «Թուրքահայաստանի» սահմանները, որի վրա ժողովրդական կոմիսարների սովետը պետք է պնդի թուրքական իշխանությունների հետ ունենալիք հաշտության բանակցությունների ժամանակ։



Վ. Տերյան

4. «Թուրքահայաստանի» ժամանակավոր ժողովրդական կառավարչության կազմակերպումը՝ դեմոկրատական հիմունքներով ընտրված հայ ժողովրդի դեպուտատների սովետի ձևով։

Կովկասի գործերի արտակարգ ժամանակավոր կոմիսար՝ Ստեփան Շահումյանին հանձնարարվում է ամեն տեսակ օգնություն ցույց տալ «Թուրքահայաստանի» բնակչությանը 2-րդ և 3-րդ կետերի իրականացման գործում, ինչպես նաև ձեռնամուխ լինել խառը հանձնաժողով ստեղծելու «Թուրքահայաստանի» սահմաններից զորքերը հանելու ժամկետն ու եղանակները սահմանելու համար (կետ 1-ին)։

Սանձրություն — «Թուրքահայաստանի» աշխարհագրական սահմանները որոշվում են հայ ժողովրդի՝ դեմոկրատորեն ընտրված ներկայացուցիչների կողմից, խառը և վիճելի (մուսուլմանական և այլն) օկրուգների դեմոկրատականորեն ընտրված ներկայացուցիչների համաձայնությամբ՝ Կովկասի գործերի արտակարգ ժամանակավոր կոմիսարի հետ միասին»[1]։

Հայ ժողովուրդը մեծ գոհունակությամբ ընդունեց արևմտահայության ազատագրման ուղին կանխագծող այդ դեկրետը։ Բայց դեկրետի հրապարակումից քիչ հետո տեղի ունեցած դեպքերը՝ գերմանական բլոկի ավազակային հարձակումը Սովետական Ռուսաստանի վրա, որի հետևանքով վերջինս ստիպված եղավ կնքել Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը, ինչպես և Անդրկովկասի ներքին և արտաքին վիճակը թույլ չտվեցին կենսագործելու այն։

«Թուրքահայաստանի» ինքնորոշման վերաբերյալ դեկրետի հրապարա-

1 «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում», փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Երևան, 1960, էջ 156—157։

կումից հետո, մի խումբ բոլշևիկներ 1918 թվականին ստեղծեցին «Հայաստանի կոմունիստական կուսակցությունը», որի հիմնական նպատակը Արևմտյան Հայաստանի ինքնորոշման մասին դեկրետի կենսագործման ուղղությամբ գաղթականության մեջ տարվելիք աշխատանքն էր։

1918 թվականի գարնանը այդ կազմակերպությունը Թիֆլիսում հրապարակում է «Կարմիր օրեր» ապա «Կարմիր դրոշակ» թերթերը, որոնք դրական աշխատանք կատարեցին սովետական իշխանության համար մղվող պայքարում։

«Հայաստանի կոմունիստական կուսակցությունը» հանդիսացավ կոմունիստական ինտերնացիոնալի հիմնադիր կուսակցություններից մեկը։

1919—1920 թվականների ընթացքում ՌԿ(բ)Կ Կենտկոմը բազմիցս անդրադառնում է այդ կազմակերպության հարցին։ Կովկասի երկրային կոմիտեին 1919 թվականի սեպտեմբերի 3-ին գրած նամակում ՌԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար Ե. Ստասովան նշում էր, որ Կենտկոմը ճանաչել է այդ կազմակերպությունը և օգնում է նրան՝ դաշնակցության դեմ աշխատավոր հայ մասսաների մեջ պրոպագանդա մղելու համար։

1919 թվականի դեկտեմբերի 20-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոն նպատակահարմար գտավ այդ կազմակերպության գոյությունը Հայաստանի հանրապետության տերիտորիայում։

Կովկասյան երկրային կոմիտեն դեմ էր ինչպես ՀԿԿ-ի և «Հումմեթի» գոյությանը, այնպես էլ առանձին Վրաստանի կոմկուսակցության ստեղծմանը։ ՀԿԿ-ն աջակցություն չստացավ նաև Հայաստանի տերիտորիայի վրա գործող բոլշևիկյան կազմակերպություններից, որոնք երկրային կոմիտեի գլխավորությամբ մեծ աշխատանք էին ծավալել տեղի բոլշևիկյան կազմակերպությունների միավորման համար։ 1920 թվականի ամռանը, երբ ստեղծվեց Հայաստանի կոմունիստական (բոլշևիկների) կուսակցությունը, ՀԿԿ-ի մեջ գրտնվող անդամները մեխանիկորեն մտան նորաստեղծ ՀԿ(բ) կուսակցության մեջ և ՀԿԿ-ն դադարեց գոյություն ունենալուց։

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին մոտ 300 հազար արևմտահայեր ազատվելով երիտասարդ թուրքերի կառավարության կողմից կազմակերպված կոտորածներից, ստիպված փախչում են Անդրկովկաս։ Այդ գաղթականների մի մասը պատերազմի տարիներին Անդրկովկասում ծագած պարենավորման դժվարությունների պատճառով անցնում է Հյուսիսային Կովկաս, Աստրախանի նահանգը և Հարավային Ռուսաստանի մյուս շրջանները։

Ռուսաստանում ապրող առանձին ազգությունների աշխատավորական մասսաների մեջ աշխատանք տանելու, սովետական իշխանության շուրջը համախմբելու համար Սովետական Ռուսաստանի ազգությունների ժողովրդական կոմիսարիատում կազմակերպվում են լեհական, լիտվական, բելոռուսական, հայկական և ուրիշ կոմիսարիատներ ու բաժիններ։ Հայկական կոմիսարիատը իր գործունեությունն սկսում է 1918 թվականի հունվարին։ Կոմիսարիատը գլխավորում էր սովետական ականավոր պետական գործիչ Վ. Ավանեսովը, իսկ տեղակալն էր հայ մեծանուն բանաստեղծ Վ. Տերյանը։

Փետրվարյան բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունից հետո Ռուսաստանի այն վայրերում, ուր ապրում էին արևմտահայ գաղթականներ և ընդհանրապես հայեր, դաշնակցականները կազմակերպում էին այսպես կոչ-

ված ազգային խորհուրդներ, Հայաստանի պաշտպանության խորհուրդներ և նման օրգաններ, որոնք փաստորեն Թիֆլիսի հայկական ազգային խորհրդի ֆիլիալներն էին հանդիսանում։ Նրանք Հոկտեմբերյան հեղափոխության հետո խանգարում էին Ռուսաստանում ապրող հայ աշխատավորներին համախմբվելու սովետական իշխանության շուրջը։ Հայկական գործերի կոմիսարիատի պահանջով 1918 թվականի հուլիսին Սովետական Ռուսաստանի կառավարությունն արգելում է այդ կազմակերպությունների գործունեությունը Ռուսաստանի տերիտորիայում։

Հայկական գործերի կոմիսարիատը մեծ աշխատանք ծավալեց հայ աշխատավորներին սովետական իշխանության շուրջը համախմբելու համար։ 1918 թվականի հունիսից Մոսկվայում հայերեն լեզվով սկսում է լույս տեսնել կոմիսարիատի օրգան «Կոմունիստ» շաբաթաթերթը։ Թերթում տպագրվում են Լենինի հոդվածները, ճառերը, զեկուցումները, սովետական պետության փաստաթղթերը, լուսաբանվում են Անդրկովկասում և Հայաստանում տեղի ունեցող դեպքերը։ Կոմիսարիատը ծավալեց նաև հրատարակչական գործունեություն։ Նա Մարքսի, Էնգելսի և Լենինի մի շարք աշխատություններ հրատարակեց հայերեն։

Սովետական Ռուսաստանի կառավարությունը մեծ ուշադրություն է դարձնում հայ գաղթականների կարիքներին։ Միայն 1918 թվականի հունիսին նա հայ գաղթականների կարիքների համար բաց է թողնում 6 մլն. ռուբլի[1]։ Գաղթականությանը մեծ օգնություն է տրվում նաև հագուստով, մանուֆակտուրայով և այլն, որոնց արժեքը հավասար էր 10 միլ. ռուբլու[2]։

4. ԳԵՐՄԱՆՆ–ԹՈՒՐՔԱԿԱՆ ԻՆՏՐՎԵՆՑԻԱՆ

Դեռևս 1917 թվականի դեկտեմբերի 5-ին Կովկասյան ռազմաճակատում (Երզնկայում) զինադադար կնքվեց թուրքական զորքերի հրամանատարության և անդրկովկասյան կոմիսարիատի միջև։ Անդրկովկասյան հակահեղափոխական ուժերը կնքելով զինադադար հույս ունեին ամրացնել իրենց դիրքերը երկրամասում և ամբողջ ուշադրությունը բևեռել հեղափոխական շարժման ճընշման վրա։ Մյուս կողմից Թուրքիան, որը զգալիորեն թուլացել էր Ռուսաստանի դեմ մղած պատերազմում, մտադիր էր զինադադարն օգտագործել իր ռազմական ուժերի վերախմբավորման և համալրման համար։ Պայմանագրի առաջին հոդվածում նշված էր, որ զինադադարի կասեցում կարող է կատարվել միայն նախնական զգուշացումից հետո։ Սակայն թուրքական կողմը չկատարեց այդ պայմանը։

Պատրվակ բռնելով կովկասյան բանակի կողմից գրավված տերիտորիայում ապրող մահմեդական և հայ բնակչության միջև տեղի ունեցած միջազգապերը, որոնք ծագել էին թուրքական անկանոն զորքի զինվորների կողմից խաղաղ բնակչության և զորամասերի վրա կատարված հարձակման հետևանքով, թուրքական հրամանատարությունը 1918 թվականի հունվարին հրամայում է

1 Տե՛ս «Коммунист» (Մոսկվա), 30 հունիսի 1918 թ.։

2 Տե՛ս «Жизнь национальностей», 1919, № 34։

իր զորքերին ներխուժել Անդրկովկաս։ Անկաշկանդ առաջ շարժվելով թուրքական զորքերը փետրվարին վերցնում են Մամախաթունը, Երզնկան և սկսում մոտենալ Էրզրումին։

1918 թվականի մայիսի 29-ին հանդես գալով Բաքվի սովետի նիստում Ստ. Շահումյանը հայտարարում է, թե Անդրկովկասում պայմանները օբյեկտիվորեն այնպես էին դասավորվել, որ կարելի էր կասեցնել թուրքական արշավանքը։ Կովկասյան բանակում գտնվող հայ զինվորների քանակը Ստ. Շահումյանը հաշվում էր 30 հազար։ Եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ թուրքական բանակը արդեն բավականաչափ կորցրել էր իր մարտունակությունը և իրենից լուրջ ռազմական ուժ չէր ներկայացնում, թեև քանակով ավելի էր, ապա Անդրկովկասի պաշտպանությունը միանգամայն հնարավոր էր։ Ստ. Շահումյանը կոչ էր անում ազգային զորամասերի փոխարեն կազմակերպել ինտերնացիոնալ բանակ և դիմադրել թշնամուն։

Ինչպես հայտնի է, գերմանական բանակի հարձակումը Սովետական Ռուսաստանի վրա, ծանր կացություն էր ստեղծել, որի հետևանքով 1918 թվականի մարտի 3-ին Սովետական Ռուսաստանը ստիպված ստորագրում է գերմանական իմպերիալիզմի կողմից իր վզին փաթաթած Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագիրը։ Սովետական իշխանությունը փրկելու նպատակով Ռուսաստանին անհրաժեշտ էր դուրս գալ պատերազմից, դադար առնել՝ իր ուժերը հավաքելու և թշնամուն հակահարված տալու համար։ Վ. Ի. Լենինը «Դժբախտ հաշտություն» հոդվածում խոսելով Բրեստ-Լիտովսկի պայմանագրի մասին գրում է. «Անհավատալի, չլսված չափով ծանր է ստորագրել դժբախտ, անշափ ծանր, անսահմանորեն ստորացուցիչ հաշտությունը, երբ ուժերը ծունկը դնում է թուլլի կրծքին։ Սակայն թուլլատրելի չէ հուսահատության գիրկն ընկնել, թուլլատրելի չէ մոռանալ, որ պատմությունը գիտե ավելի մեծ ստորացումների օրինակներ, հաշտության ավելի դժբախտ, ավելի ծանր պայմաններ»։ Վերլուծելով ստեղծված իրադրությունը, Վ. Ի. Լենինը նույն հոդվածում գրում էր, որ «Այնուամենայնիվ, պատմությունն իրենը կանի, մեզ օգնության կհասնի...»[1] և որ չնայած բոլոր փորձություններին ապագան Սովետական Ռուսաստանինն է։

Այդ պայմանագրի չորրորդ հոդվածի համաձայն, ռուսական զորքերը պիտի դուրս գային Արդահանի, Կարսի և Բաթումի օկրուգներից։ Տեղական բնակչությունն ինքը պետք է որոշեր օկրուգների իրավակարգը՝ այն համաձայնեցնելով հարևան պետությունների, մասնավորապես Թուրքիայի հետ։ Ստեղծված պայմաններում, երբ անդրկովկասյան հակասովետական բլոկը չէր ճանաչում Սովետական Ռուսաստանը, Թուրքիայի համար հնարավորություն էր ստեղծվում հեշտությամբ զավթելու վերոհիշյալ շրջանները։

Բրեստ-Լիտովսկի պայմանագրի ստորագրման կապակցությամբ անդրկովկասյան հակասովետական բլոկը զրպարտանքի արշավ ձեռնարկեց Սովետական Ռուսաստանի դեմ։ Անդրկովկասյան կոմիսարիատը չընդունեց Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը և անջատ բանակցություններ սկսեց Թուր-

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 27, էջ 41—43։

2 Տե՛ս «Документы внешней политики СССР», հատ. I, Մ., 1957, էջ 121։

քիայի հետ՝ Բրեստ-Լիտովսկի պայմանագրի չճանաչելը ծանր հետևանքներ ունեցավ երկրամասի ժողովուրդների համար։

Անդրկովկասյան կոմիսարիատի ու սեյմի, Անդրկովկասը Սովետական Ռուսաստանից անջատելու երկրամասի ժողովուրդների համար կործանիչ քաղաքականությունն ամեն կերպ խրախուսվում է գերմանա-թուրքական իմպերիալիստների կողմից։ Այդ տեսակետից բնորոշ է առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Թուրքիայում իշխանության գլուխ կանգնած երիտասարդ թուրքերից կազմված «տրիումվիրատի» անդամներից մեկի՝ Էնվեր փաշայի առաջարկը Կովկասյան ռազմաճակատի թուրքական զորքերի հրամանատար Վեհիբ փաշային։ Վերջինս 1918 թվականի հունվարի 1-ին դիմեց անդրկովկասյան կոմիսարիատին և հայտնեց, որ Էնվեր փաշան ցանկանում է իմանալ, թե ինչպես կարելի է կապեր հաստատել անկախ կովկասյան կառավարության հետ, ինչպիսի մտադրություններ ունի այդ կառավարությունը երկու կողմերի միջև խաղաղ հարաբերություններ ստեղծելու գործում և որ այդ հարցերը պարզելու համար Էնվեր փաշան ցանկանում է հանձնաժողով ուղարկել Թիֆլիս[1]։ Մի երկու օրից հետո Վեհիբ փաշան անդրկովկասյան կոմիսարիատին նոր առաջարկ է ուղղում և այս անգամ գերմանական կոալիցիայի բոլոր պետությունների անունից՝ Բրեստ-Լիտովսկ ուղարկել կոմիսարիատի ներկայացուցիչներին՝ անջատ հաշտություն կնքելու համար, այնպես ինչպես այդ արել էր բուրժուական հակահեղափոխական Ուկրաինական ռադան։ Այդ բոլորը դիվանագիտական խաղ էր միայն, որով թուրքական զավթիչները նպատակ ունեին ժամանակ շահել իրենց պանթուրքիստական պլաններն իրագործելու համար։

Ինչպես ասվեց, չընդունելով Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը, հակասովետական բլոկը ենթադրում էր ավելի նպաստավոր պայմաններով անջատ հաշտություն կնքել Թուրքիայի հետ։ Սեյմը հանձնարարեց իր պատվիրակությանը բանակցություններին ժամանակ պահանջել Անդրկովկասի և Թուրքիայի միջև հաստատել այն սահմանները, որոնք գոյություն ունեին մինչև համաշխարհային առաջին պատերազմը և ինքնավարություն Արևմտյան Հայաստանի համար թուրքական պետության ներքո[2]։

Սակայն պարզ էր, որ Գերմանիայի հետ միասին հենց նոր Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը ստորագրած Թուրքիան պիտի մերժեր հակասովետական բլոկի առաջարկած հաշտության պայմանները և պահանջեր Բրեստ-Լիտովսկի պայմանագրի այն հոդվածի կիրառումը, որը վերաբերում էր Անդրկովկասին։ Թուրքիան կարող էր զիջել միայն այն դեպքում, երբ համոզված լիներ, որ հակասովետական բլոկը՝ վճռակի է անհրաժեշտության դեպքում ուժի միջոցով ստիպել իրեն ընդունելու այդ պայմանները։ Ներքին հակասություններով լի հակասովետական բլոկը չուներ այդ ուժը։

Բանակցությունները սկսվեցին Տրապիզոնում 1918 թվականի մարտի 14-ին։ Թուրքիան վճռականորեն մերժեց սեյմի առաջարկած հաշտության պայմանները։ Նա պահանջեց, որ սեյմը նախ և առաջ հայտարարի իր անկա-

1 Տե՛ս «Документы и материалы...», էջ 52։

2 Տե՛ս Հայկական ՍՍՀ պետական կենտրոնական պատմական արխիվ (հետագայում՝ ՀՍՍՀ ՊԿՊԱ), ֆ. 200, ց. 1, գ. 9, թ. 171։

խությունը և ճանաչի Բրեստ-Լիտովսկի պայմանագրի այն հոդվածը, որը վերաբերում էր Անդրկովկասին, որից հետո միայն կարելի է կնքել հաշտության պայմանագիր Թուրքիայի և նրա դաշնակիցների ու «անկախ» անդրկովկասյան պետության միջև։ Ինչ վերաբերում է Արևմտյան Հայաստանի ինքնավարության հարցին, ապա թուրքական պատվիրակության ղեկավար Ռաուֆ բեյը հայտարարեց, որ այդ հարցադրումը Թուրքիայի ներքին գործերին միջամտել է նշանակում։ Թուրքական պատվիրակները հայտարարեցին, որ արևմտահայերի ազգային-աղատագրական պայքարը իբր թե ոչ այլ ինչ է, եթե ոչ դավաճանություն Թուրքիային և վերջինս ոչ միայն ինքնավարություն, այլ որպես անհուսալի տարրի, անգամ թույլ չի տա, որպեսզի Անդրկովկասում գտնվող արևմտահայերը վերադառնան իրենց բնակավայրերը[1]։

Բանակցությունների ընթացքում սեյմը համաձայնվեց Թուրքիային զիջել ամբողջ Օլթիի օկրուգը, Կարսի հարավ-արևմտյան, Կաղզվանի արևմտյան և Արդահանի հարավային մասերը։ Արևմտյան Հայաստանի ինքնավարության հարցը հանվեց օրակարգից և փոխարենը սեյմի պատվիրակությունն առաջարկեց թույլ տալ Անդրկովկաս փախած արևմտահայերին վերադառնալ իրենց հայրենիքը։

Թուրքիան մերժեց այդ բոլոր առաջարկները և ապրիլի 6-ին ուլտիմատիվ կերպով պահանջեց ճանաչել Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը։ Տրապիզոնում գտնվող սեյմի պատվիրակությունը սեյմի առջև հարց դրեց ընդունել այն։ Նույնն են պնդում նաև պատվիրակության հայ ներկայացուցիչները՝ դաշնակցականներ Ա. Խատիսյանը և Հ. Քաջազնունին[2]։ Սակայն սեյմը Տրապիզոնից հետ է կանչում իր պատվիրակությանը, լսում նրա զեկույցը և որոշում տերիտորիալ հարցում բավարարվել պատվիրակության կողմից արված զիջումներով, որոնք, սակայն Թուրքիան մերժում է։ Այսպիսով սեյմը պատերազմական գործողություններ մեջ է մտնում Թուրքիայի հետ։

1918 թվականի ապրիլին Ալեքսանդրապոլում կայանում է հայկական ազգային խորհրդի նիստը, մասնակցությամբ սեյմի հայ անդամների։ Նիստը հրավիրվում է ռազմաճակատին մոտ գտնվող Ալեքսանդրապոլում այն նպատակով, որպեսզի ազգային խորհրդի և սեյմի անդամները ավելի մոտիկից ծանոթանան ռազմաճակատի թիկունքի դրությանը և ըստ այնմ պարզեն իրենց դիրքը Բրեստ-Լիտովսկի պայմանագրի նկատմամբ։ Ազգային խորհուրդը պաշտպանում է սեյմի որոշումը Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը չընդունելու մասին։

Երկրամասի դրությունը գնալով ծանրանում էր։

Այն հակասությունները, որոնք գոյություն ունեին բլոկի ներսում, նրա կազմակերպման հենց առաջին օրից, ավելի են սրվում ռազմական գործողությունների ընթացքում։ Ադրբեջանական կապիտալիստները և կալվածատերերը ցանկանում էին թուրքական սվինների օգնությամբ պաշտպանել իրենց գործարաններն ու կալվածքները «սեփական» աշխատավորներից։ Մուսավաթականները, որոնք արտահայտում էին այդ շահագործող դասակարգերի շահերը,

---

1 Տե՛ս ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 8, թ. 103—104։

2 Տե՛ս «Документы и материалы...», էջ 160։

հրապարակորեն հայտարարում են, որ չեն կռվի իրենց հավատակիցների՝ թուրքերի դեմ: Մենշևիկները ձևականորեն խոսելով Անդրկովկասի պաշտպանության մասին, գործարքի մեջ են մտնում կայզերական Գերմանիայի հետ՝ վերջինի միջոցով պաշտպանելու Վրաստանի իշխող դասակարգերի շահերը: Դաշնակցականները նույնպես ձգտում էին օտար ուժի օգնությամբ պաշտպանել հայ. բուրժուազիայի շահերը Անդրկովկասում: Այդպիսի ուժ նրանց համար ցանկալի էր, որ լիներ Անտանտը: Սակայն ստեղծված պայմաններում Անդրկովկասում Գերմանիայի դիրքերն ավելի ուժեղ էին, ուստի և դաշնակցականները որպես «ղորավոր փաստաբանի» ապավինում են կայզերական Գերմանիայի օժանդակությանը: Հակասովետական բլոկի մասնակիցները չէին վստահում իրար, կասկածով էին վերաբերվում հարևանի ամեն մի քայլին, թեև սեյմում մենշևիկները և դաշնակցականները խոսում էին Անդրկովկասը միասնական ուժերով պաշտպանելու մասին: Անդրկովկասյան հակահեղափոխական կուսակցությունների ազգայնական քաղաքականության շնորհիվ Անդրկովկասում ծայր են առնում ուժեղ ազգամիջյան ընդհարումներ, մանավանդ Երևանի, Ելիզավետպոլի նահանգներում և Կարսի մարզում, որոնք չէին կարող բացասաբար չանդրադառնալ երկրամասի պաշտպանության գործի վրա: Ահա թե ինչու ժողովրդական մասսաները չէին հավատում, որ անդրկովկասյան սեյմը և ազգային խորհուրդները ի վիճակի են պաշտպանել երկրամասը թշնամուց:

Հակասովետական բլոկի ներսում գոյություն ունեցող հակասությունների հետևանքով ամբողջ Կովկասյան ռազմաճակատը, սկսած Սև ծովից մինչև թուրքա-իրանական սահմանը, բաժանվում է երկու մասի: Ռազմաճակատի փոքր մասը, գլխավորապես Սև ծովի ափերը, պետք է պաշտպաններին վրացական ազգային զորամասերը, իսկ մնացածը՝ հայկական զորամասերը: Ջկար մի ընդհանուր ռազմաճակատ, չկար միասնություն պաշտպանության գործում: Թեև ձևականորեն գոյություն ուներ ընդհանուր հրամանատարություն, բայց փաստորեն նա չէր գործում: Աշխատավորական մասսաները և զինվորները համոզվում են, որ Անդրկովկասը կարող է պաշտպանել միայն երկրամասում հաղթանակած սովետական իշխանությունը, որի հաստատման համար նրանք շարունակում էին պայքարել:

1918 թվականի մարտին ՌՍԴԲ(բ)Կ երկրային կոմիտեն դիմեց Անդրկովկասի աշխատավորներին կոչ անելով կազմակերպել կարմիր սոցիալիստական ջոկատներ՝ կռվելու համար պրոլետարական հեղափոխության թե արտաքին և թե ներքին թշնամիների դեմ[1]: ՌԿ(բ)Կ Ալեքսանդրապոլի կոմիտեն իր հերթին կոչ արեց աշխատավորությանը՝ կազմակերպել կարմիր գվարդիա թուրքերին դիմադրություն ցույց տալու համար: «Ռուսական սոցիալական բռնկումներից ահաբեկված,— ասված է կոչում,— իմպերիալիստների ոհմակը վճռել է ինչ գնով էլ լինի խեղդել ռուսական հեղափոխությունը, որի նշանաբանն է՝ հավասարություն, եղբայրություն և բոլոր ազգերի ազատ ինքնորոշում:

...Ալեքսանդրապոլի կոմունիստների (բոլշևիկների) կոմիտեն կոչ է անում բոլոր ընկերներին և համակրողներին անհապաղ մտնել նոր կազմվող հեղա-

1 Տե՛ս «Ռևոլյուցիոն կոչեր և թռուցիկներ», էջ 461:

փոխական «Կարմիր գվարդիայի» շարքերը՝ կռվելու իմպերիալիզմի և բռնակալության դեմ, հանուն վտանգված հեղափոխության»[1]:

Ալեքսանդրապոլի բոլշևիկները սկսում են կազմակերպել կարմիր գվարդիա, որի շարքերն են մտնում ավելի քան 500 մարդ[2]:

Թուրքական զորքերը, չհանդիպելով էական դիմադրության, 1918 թվականի մարտի 13-ին գրավեցին Էրզրումը: Հայկական ազգային զորամասերում նկատելի էր կարգապահության անկում և դասալքություն: Այդ մասին է վկայում գեներալ Անդրանիկի հաղորդումը ռազմաճակատում տիրող վիճակի մասին: Նա հայտնում էր, որ թուրքերի ձեռքն է ընկել մեծ քանակությամբ ռազմամթերք ու պարեն և իր փորձերը՝ կասեցնել հայկական զորամասերի նահանջը և պաշտպանել Հասան-Ղալան, հաջողություն չեն ունենում: Հայկական զորամասերը նահանջեցին մինչև Սարիղամիշ[3]:

Սարիղամիշի տակ թուրքական զորքերը հանդիպեցին կազմակերպված դիմադրության, և միայն ապրիլի 5-ին նրանց հաջողվեց գրավել քաղաքը: Սարիղամիշի անկումը հեշտացրեց թուրքերի առաջխաղացումը. ապրիլի 15-ին ընկավ Բաթումը, իսկ 25-ին՝ Կարսը:

Թուրքական զորքերի առաջխաղացումը ուղեկցվում է հայ բնակչության ոչնչացմամբ: Սովետական Ռուսաստանի կառավարությունը 1918 թվականի ապրիլի 12-ին վճռական բողոք հայտնեց գերմանական կառավարությանը՝ թուրքական զորքերի կողմից կատարվող վայրագությունների կապակցությամբ:

Սովետական Ռուսաստանի կառավարությունը թուրքական կառավարության կողմից վարվող ջարդարար քաղաքականության համար պատասխանատու է համարում նաև գերմանական կառավարությանը, որը Թուրքիայի դաշնակիցն էր և որի ճնշման տակ Սովետական Ռուսաստանը Կարսի, Արդահանի և Բաթումի օկրուգներից հանել էր իր զորքերը: Նոտայի վերջում Սովետական Ռուսաստանի կառավարությունը Գերմանիային առաջարկում էր ձեռք առնել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ դադարեցնելու թուրքական զորքերի կողմից կատարվող վայրագությունները[4]:

Ապրիլի 13-ին Սովետական Ռուսաստանի արտաքին գործերի ժողկոմատը առաջարկեց նաև Թուրքիայի հետ անջատ հաշտություն կնքելու նպատակով նրա հետ բանակցությունների մեջ մտած անդրկովկասյան սեյմին իր հերթին իրենից կախված միջոցառումների դիմել՝ պաշտպանելու համար Կարսի, Արդահանի, Բաթումի շրջանների հայ բնակչությանը[5]:

Անդրկովկասյան սեյմը կատարելով երկրամասի իշխող դասակարգերի և օտարերկրյա ինտերվենտների պահանջը, 1918 թվականի ապրիլի 22-ին Անդրկովկասը հայտարարեց «անկախ» հանրապետություն: Ե. Գեգեչկորու կողմից գլխավորած կառավարությունը հրաժարական տվեց: Սեյմը կազմակեր-

---

1 «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում», էջ 210:

2 Տե՛ս «Հայաստանի կոմունիստական պարտիայի պատմության ուրվագծեր», Երևան, 1963, էջ 263:

3 Տե՛ս «Հորիզոն», 3 մարտի 1918 թ.:

4 Տե՛ս «Документы внешней политики СССР», հատ. I, էջ 240—241:

5 Տե՛ս «Документы и материалы...», էջ 192:

պում է նոր՝ Անդրկովկասյան հանրապետության կառավարությունը, ուր զեկավար դիրքերը զարձյալ գրավում են մենշևիկները։ Կառավարության նախագահ և արտաքին գործերի մինիստր է նշանակվում մենշևիկ Ա. Չխենկելին, ներքին գործերի մինիստր՝ մենշևիկ Ն. Ռամիշվիլին, զինվորական մինիստր՝ մենշևիկ Գ. Գեորգաձեն, հողագործության մինիստր՝ մենշևիկ Ն. Խոմերիկին, արդարադատության մինիստր՝ մուսավաթական Ֆ. Խան-Խոյսկին, առևտրի և արդյունաբերության մինիստր՝ մուսավաթական Մ. Հաջինսկին, ֆինանսների մինիստր՝ դաշնակցական Ա. Խատիսյանը, խնամատարության մինիստր՝ դաշնակցական Հ. Քաջազնունին։

Անդրկովկասի տարբեր քաղաքներում ու շրջաններում տեղի են ունենում մասսայական բողոքի միտինգներ, ուղղված երկրամասը Սովետական Ռուսաստանից անջատման դեմ։

Բաքվի սովետի և Բաքվի գավառի գյուղացիների համագումարի 1918 թվականի մայիսի 29-ի միացյալ նիստը, լսելով Ստ. Շահումյանի զեկուցումը Անդրկովկասի դրության մասին, վճռականապես հանդես է գալիս Անդրկովկասը հեղափոխական Ռուսաստանից անջատելու դեմ և կոչ անում երկրամասի բանվորներին ու գյուղացիներին զենքը ձեռքերին պայքարել օտարերկրյա նվաճողների և անդրկովկասյան հակահեղափոխական ուժերի դեմ։

1918 թվականի ապրիլի 28-ին թուրքական հրամանատարությունը հայտնում է սեյմին, որ իր կառավարությունը ճանաչել է Անդրկովկասի անկախությունը և այդ մասին հայտնել իր դաշնակիցներին։ Անդրկովկասը իրեն «անկախ» հռչակելով, գերմանա-թուրքական իմպերիալիստների համար արդեն հնարավորություն էր ստեղծվում ազատորեն խախտել Բրեստ-Լիտովսկի պայմանագրի այն հոդվածը, որը վերաբերում էր Անդրկովկասին, այն պատճառաբանությամբ, որ վերջինս անջատվել է Սովետական Ռուսաստանից։ Այսպիսով, Անդրկովկասը հեշտ ավար էր դառնում օտարերկրյա նվաճողների համար։

Մայիսի 11-ին Բաթումում վերսկսվեցին հաշտության բանակցությունները Թուրքիայի և այս անգամ արդեն «անկախ» Անդրկովկասի միջև, որոնք ընդհատվել էին Տրապիզոնում։ Բանակցություններին մասնակցում է նաև Գերմանիայի ներկայացուցիչը՝ գեներալ Լոսովը։ Գերմանիան դեռ մինչև առաջին համաշխարհային պատերազմը աչք էր դրել Անդրկովկասի բնական հարստությունների՝ նավթի, մարգանեցի, պղնձի, բամբակի վրա և մտադիր չէր Անդրկովկասի տնօրինությունը վերապահել միայն Թուրքիային։

Իրենց հերթին Բաթումի բանակցությունների ժամանակ թուրքերը այլևս չբավարարվելով Բրեստ-Լիտովսկի պայմանագրով, նոր պահանջներ են ներկայացնում, որոնք շատ ավելի ծանր էին, քան Բրեստ-Լիտովսկի պայմանագրով նախատեսված դիջումները։ «Մահմանների ուղղման» պատրվակի տակ թուրքական զավթիչները նոր տերիտորիաներ պահանջեցին Թիֆլիսի և Երևանի նահանգներից, ինչպես և իրավունք՝ ազատորեն փոխադրելու իրենց զորքերը անդրկովկասյան երկաթուղիների բոլոր ուղղություններով։ Գերմանա-թուրքական ինտերվենտներին այդ անհրաժեշտ էր առաջին հերթին հարձակվելու համար Բաքվի սովետական իշխանության վրա։ Թուրքերն իրենց պատրաստակամությունն էին հայտնում «կարգ ու կանոն» հաստատել Անդրկովկասում և ապահովել նրա «անվտանգությունը», այսինքն ճնշել երկրամասի աշխատա-

վորների պայքարը սովետական իշխանության հաստատման համար և Անդրկովկասը վերածել Սովետական Ռուսաստանի դեմ ուղղված պայքարի պլացդարմի։ Բաթումում սկսված բանակցությունների կապակցությամբ Սովետական Ռուսաստանի կառավարությունը հայտարարում է, որ նա չի ճանաչում այսպես կոչված անդրկովկասյան կառավարությունը։

Բաթումի բանակցությունների ընթացքում ավելի բացահայտ դարձան Անդրկովկասի հակասովետական բլոկի ներքին հակասությունները։ Բանակցությունները թուրքերի հետ ձևականորեն վարում էր սեյմի պատվիրակությունը, իսկ փաստորեն թուրքերի և գերմանացիների հետ անջատ բանակցություններ էին վարում սեյմի պատվիրակության մեջ մտած ազգային պատվիրակները։ Վրացական մենշևիկները գաղտնի բանակցությունների մեջ էին մտել գերմանացիների հետ՝ Վրաստանը «անկախ» հայտարարելու և Գերմանիայի հովանավորության տակ դնելու համար։ Մուսավաթականները բանակցելով թուրքերի հետ, նրանց առաջարկում էին, որքան կարելի է շուտ արշավել Բաքվի վրա և իրենց հովանավորության տակ առնել Ադրբեջանը։ Դաշնակցականները, իրենց հերթին, անջատ բանակցություններ էին վարում գերմանացիների հետ և փորձում նրանց հովանավորությունը տարածել նաև հայերի վրա։ Սակայն այդ փորձը հաջողություն չունեցավ։ Ելնելով իրենց շահերից, գերմանական իմպերիալիստները չէին ցանկանում հայերի պատճառով լարել հարաբերությունները Թուրքիայի հետ։ Ահա թե ինչ են գրում այդ բանակցությունների մասին պատվիրակության խորհրդականներ Հ. Օհանջանյանը և Մ. Պապաջանյանը. «Մենք եղանք Լոսովի մոտ, նրա օգնությունը խնդրեցինք հայերի պաշտպանության գործում։ Նա խոստացավ այդ մասին հեռագրել կայսեր Վիլհելմին և խոստացավ խնդիր հարուցել զինվորներ ստանալու համար և ասաց, որ եթե հայերը որոշեն պատվիրակություն ուղարկել Գերմանիա, ապա ինքը նրան կվերցնի իր հետ։ Առանձին հույսեր նա չտվեց... Մենք 23-ի գիշերը ուղարկեցինք գրավոր դիմում՝ խնդրելով օկուպացնել Կովկասի հայկական շրջանները»[1]։

Մինչև Բաթումի բանակցությունների սկսումը դաշնակցական կուսակցության Կենտրոնական կոմիտեն և հայկական ազգային խորհուրդը 1918 թվականի ապրիլին Մոսկվա են ուղարկում դաշնակցական Հ. Ջավրիևին՝ բանակցությունների մեջ մտնելու Մոսկվայի գերմանական դեսպանության հետ՝ Գերմանիայի օգնությունը խնդրելու նպատակով։ Այդ բանակցությունների, ինչպես և Լոսովի առաջարկի հիման վրա ազգային խորհուրդը Բեռլին է ուղարկում մի պատվիրակություն, որի կազմում էին դաշնակցական Հ. Օհանջանյանը և մենշևիկ ինտերնացիոնալիստ Ար. Ջուրաբյանը։

Բաթումի բանակցությունների ժամանակ թուրքերը անդրկովկասյան պատվիրակությունից պահանջեցին, որ թուրքական հրամանատարությանը թույլատրվի իր զորքերն Իրան փոխադրել Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթգծով։ Իր այդ պահանջը թուրքական պատվիրակությունը պատճառաբանում է իբր թե անգլիացիների դեմ Իրանում և Միջագետքում ռազմական գործողությունների զարգացման «հրամայական» պահանջով։ Թուրքերը, իրենց հայտարարության

---

1 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 23, էջ 112։

համաձայն, ցանկանում էին կանխել անգլիական ուժերի առաջխաղացումը Հարավային Իրանից դեպի Անդրկովկասի սահմանները և օգնել իրենց վեցերորդ բանակին, որ Միջագետքում կռվում էր անգլիացիների դեմ։

Թուրքական հրամանատարության այդ պլանին տեղյակ էին Բաքումում գտնվող անդրկովկասյան պատվիրակությունը և նրա դաշնակցական անդամները։ Վերջիններիս հետ այդ հարցի շուրջը հատուկ զրույց էին ունեցել թուրքական պատվիրակության նախագահ Խալիլ բեյը և Կովկասյան ռազմաճակատի թուրքական զորքերի հրամանատար Վեհիբ փաշան։ Տեսակցությունը անդրկովկասյան պատվիրակության հայ անդամների հետ տեղի է ունեցել մայիսի 13-ին, գիշերալ Լոսովի խորհրդով։ Այդ տեսակցության մասին սեյմի պատվիրակության հայ անդամների օրագրում կարդում ենք. «...ներկա մոմենտում կա մի հարց, որը անհապաղորեն լուծում է պահանջում։ Դա հետևյալն է. ելնելով ռազմական բնույթի նկատառումներից, թուրքերին անհրաժեշտ է փոխադրել իրենց զորքերը և որքան կարելի է շուտ գրավել Թավրիզը, իսկ դրա համար անհրաժեշտ է, որպեսզի մենք հնարավորություն տանք նրանց օգտագործել մեր երկաթուղին։ Այդ դործը խիստ շտապ է և պիտի լուծվի անմիջապես»[1]։ Թուրքական բանակի հրամանատար Վեհիբ փաշան հայտարարում է, որ չի վախենում հայերի դիմադրությունից և անհրաժեշտության դեպքում կարող է անգամ հանդիսավոր երթով անցնել իր ուզած ճանապարհով[2]։ Ինչպես արդեն ասվեց, թուրքերը Բաքումում պահանջեցին նոր տերիտորիաներ, որոնք չէին նախատեսված Բրեստ-Լիտովսկի պայմանագրով։ Սեյմի պատվիրակության հայ անդամները փորձեցին թուրքերի պահանջի կատարումը պայմանավորել Բրեստ-Լիտովսկի պայմանագրի ճշգրիտ կիրառմամբ։ Նրանք թուրքերի հետ իրենց տեսակցության արդյունքների մասին գրում են. «Մենք հեռացանք գիշերվա ժամը 2 անց կեսին այն կարծիքով, որ մենք կարող ենք զորքերի փոխադրման թույլտվություն տալ միայն այն պայմանով, որ նրանք (թուրքերը — խմբ.) ետ վերցնեն իրենց տերիտորիալ պահանջները»[3]։

Մայիսի 14-ին թուրքական պատվիրակությունը նույն հարցով նոտա է ներկայացնում անդրկովկասյան պատվիրակությանը։ Նոտայում թուրքական պատվիրակությունը պատճառաբանում էր Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթգծով թուրքական զորքերի փոխադրման անհրաժեշտությունը և հայտնում, որ զորքերի շարժումը կսկսվի մայիսի 15-ի վաղ առավոտից[4]։ Նոտան ուղարկվում է դիշերվա ժամը մեկկեսին, որն Անդրկովկասի պատվիրակությանն է հասնում մայիսի 15-ին, առավոտյան ժամը 5-ին, այսինքն Ալեքսանդրապոլի վրա թուրքերի հարձակումից երկու ժամ առաջ։ Խատիսյանը լինում է Լոսովի մոտ և բողոքում թուրքերի առաջացման դեմ։ Լոսովը հայտարարում է, որ ինքը դեմ է թուրքերի այդ քայլին և բողոքելու է, բայց խորհուրդ է տալիս չսկսել թշնամական գործողություններ, այլ թույլ տալ նրանց օգտվելու Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթգծով։

---

1 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, դ. 23, թ. 10—11։

2 Տե՛ս նույն տեղում։

3 Նույն տեղում, դ. 8, թ. 111։

4 Տե՛ս «Документы и материалы...», էջ 270։

վորների պայքարը սովետական իշխանության հաստատման համար և Անդրկովկասը վերածել Սովետական Ռուսաստանի դեմ ուղղված պայքարի պլացդարմի։ Բաթումում սկսված բանակցությունների կապակցությամբ Սովետական Ռուսաստանի կառավարությունը հայտարարում է, որ նա չի ճանաչում այսպես կոչված անդրկովկասյան կառավարությունը։

Բաթումի բանակցությունների ընթացքում ավելի բացահայտ դարձան Անդրկովկասի հակասովետական բլոկի ներքին հակասությունները։ Բանակցությունները թուրքերի հետ ձևականորեն վարում էր սեյմի պատվիրակությունը, իսկ փաստորեն թուրքերի և գերմանացիների հետ անջատ բանակցություններ էին վարում սեյմի պատվիրակության մեջ մտած ազգային պատվիրակները։ Վրացական մենշևիկները գաղտնի բանակցություններ էին մտել գերմանացիների հետ՝ Վրաստանը «անկախ» հայտարարելու և Գերմանիայի հովանավորության տակ դնելու համար։ Մուսավաթականները բանակցելով թուրքերի հետ, նրանց առաջարկում էին, որքան կարելի է շուտ արշավել Բաքվի վրա և իրենց հովանավորության տակ առնել Ադրբեջանը։ Դաշնակցականները, իրենց հերթին, անջատ բանակցություններ էին վարում գերմանացիների հետ և փորձում նրանց հովանավորությունը տարածել նաև հայերի վրա։ Սակայն այդ փորձը հաջողություն չունեցավ։ Ելնելով իրենց շահերից, գերմանական իմպերիալիստները չէին ցանկանում հայերի պատճառով լարել հարաբերությունները Թուրքիայի հետ։ Ահա թե ինչ են գրում այդ բանակցությունների մասին պատվիրակության խորհրդականներ Հ. Օհանջանյանը և Մ. Պապաջանյանը. «Մենք եղանք Լոսովի մոտ, նրա օգնությունը խնդրեցինք հայերի պաշտպանության գործում։ Նա խոստացավ այդ մասին հեռագրել կայսեր Վիլհելմին և խոստացավ խնդիր հարուցել զինվորներ ստանալու համար և ասաց, որ եթե հայերը որոշեն պատվիրակություն ուղարկել Գերմանիա, ապա ինքը նրան կվերցնի իր հետ։ Առանձին հույսեր նա չտվեց... Մենք 23-ի գիշերը ուղարկեցինք գրավոր դիմում՝ խնդրելով օկուպացնել Կովկասի հայկական շրջանները»[1]։

Մինչև Բաթումի բանակցությունների սկսումը դաշնակցական կուսակցության կենտրոնական կոմիտեն և հայկական ազգային խորհուրդը 1918 թվականի ապրիլին Մոսկվա են ուղարկում դաշնակցական Հ. Ջավրիևին՝ բանակցությունների մեջ մտնելու Մոսկվայի գերմանական դեսպանության հետ՝ Գերմանիայի օգնությունը խնդրելու նպատակով։ Այդ բանակցությունների, ինչպես և Լոսովի առաջարկի հիման վրա ազգային խորհուրդը Բեռլին է ուղարկում մի պատվիրակություն, որի կազմում էին դաշնակցական Հ. Օհանջանյանը և մենշևիկ ինտերնացիոնալիստ Ար. Զուրաբյանը։

Բաթումի բանակցությունների ժամանակ թուրքերը անդրկովկասյան պատվիրակությունից պահանջեցին, որ թուրքական հրամանատարությանը թույլատրվի իր զորքերն Իրան փոխադրել Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթգծով։ Իր այդ պահանջը թուրքական պատվիրակությունը պատճառաբանում է իբր թե անգլիացիների դեմ Իրանում և Միջագետքում ռազմական գործողությունների զարգացման «հրամայական» պահանջով։ Թուրքերը, իրենց հայտարարության

---

1 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 23, էջ 112։

համաձայն, ցանկանում էին կանխել անգլիական ուժերի առաջխաղացումը Հարավային Իրանից դեպի Անդրկովկասի սահմանները և օգնել իրենց վեցերորդ բանակին, որ Միջագետքում կռվում էր անգլիացիների դեմ։

Թուրքական հրամանատարության այդ պլանին տեղյակ էին Բաթումում գտնվող անդրկովկասյան պատվիրակությունը և նրա դաշնակցական անդամները։ Վերջիններիս հետ այդ հարցի շուրջը հատուկ զրույց էին ունեցել թուրքական պատվիրակության նախագահ Խալիլ բեյը և Կովկասյան ռազմաճակատի թուրքական զորքերի հրամանատար Վեհիբ փաշան։ Տեսակցությունը անդրկովկասյան պատվիրակության հայ անդամների հետ տեղի է ունեցել մայիսի 13-ին, գեներալ Լոսովի խորհրդով։ Այդ տեսակցության մասին սեյմի պատվիրակության հայ անդամների օրագրում կարդում ենք. «...ներկա մոմենտում կա մի հարց, որը անհապաղորեն լուծում է պահանջում։ Դա հետևյալն է. ելնելով ռազմական բնույթի նկատառումներից, թուրքերին անհրաժեշտ է փոխադրել իրենց զորքերը և որքան կարելի է շուտ գրավել Թավրիզը, իսկ դրա համար անհրաժեշտ է, որպեսզի մենք հնարավորություն տանք նրանց օգտագործել մեր երկաթուղին։ Այդ դործը խիստ շտապ է և պիտի լուծվի անմիջապես»[1]։ Թուրքական բանակի հրամանատար Վեհիբ փաշան հայտարարում է, որ չի վախենում հայերի դիմադրությունից և անհրաժեշտության դեպքում կարող է անգամ հանդիսավոր երթով անցնել իր ուզած ճանապարհով[2]։ Ինչպես արդեն ասվեց, թուրքերը Բաթումում պահանջեցին նոր տերիտորիաներ, որոնք չէին նախատեսված Բրեստ-Լիտովսկի պայմանագրով։ Սեյմի պատվիրակության հայ անդամները փորձեցին թուրքերի պահանջի կատարումը պայմանավորել Բրեստ-Լիտովսկի պայմանագրի ճշգրիտ կիրառմամբ։ Նրանք թուրքերի հետ իրենց տեսակցության արդյունքների մասին գրում են. «Մենք հեռացանք գիշերվա ժամը 2 անց կեսին այն կարծիքով, որ մենք կարող ենք զորքերի փոխադրման թույլտվություն տալ միայն այն պայմանով, որ նրանք (թուրքերը — խմբ.) ետ վերցնեն իրենց տերիտորիալ պահանջները»[3]։

Մայիսի 14-ին թուրքական պատվիրակությունը նույն հարցով նոտա է ներկայացնում անդրկովկասյան պատվիրակությանը։ Նոտայում թուրքական պատվիրակությունը պատճառաբանում էր Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթգծով թուրքական զորքերի փոխադրման անհրաժեշտությունը և հայտնում, որ զորքերի շարժումը կսկսվի մայիսի 15-ի վաղ առավոտից[4]։ Նոտան ուղարկվում է դիշերվա ժամը մեկկեսին, որն Անդրկովկասի պատվիրակությանն է հասնում մայիսի 15-ին, առավոտյան ժամը 5-ին, այսինքն Ալեքսանդրապոլի վրա թուրքերի հարձակումից երկու ժամ առաջ։ Խատիսյանը լինում է Լոսովի մոտ և բողոքում թուրքերի առաջացման դեմ։ Լոսովը հայտարարում է, որ ինքը դեմ է թուրքերի այդ քայլին և բողոքելու է, բայց խորհուրդ է տալիս չսկսել թշնամական գործողություններ, այլ թույլ տալ նրանց օգտվելու Ալեքսանդրապոլ-Ջուլֆա երկաթգծով։

---

1 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 23, թ. 10—11։

2 Տե՛ս նույն տեղում։

3 Նույն տեղում, գ. 8, թ. 111։

4 Տե՛ս «Документы и материалы...», էջ 270։

Մայիսի 15-ին, վաղ առավոտյան, Ալեքսանդրապոլի դեմ կանգնած թուրքական զորքերը խախտեցին զինադադարը և անցան հարձակման։ Թուրքերը գրավում են Օրթաքիլիսան և կտրելով երկաթուղին, շարունակում են առաջխաղացումը դեպի Ջաջուռ։ Ապա վերցնում են Փոքր Ղարաքիլիսան և սկսում անցնել Ալեքսանդրապոլի Բիկունքը։ Քաղաքը ենթարկվում է ռմբակոծման։ Քաղաքում և շրջակա գյուղերում խուճապ է առաջանում, բնակչությունը սկսում է փախչել։ Հանկարծակի եկած հայկական ազգային զորամասերը թույլ դիմադրություն են ցույց տալիս։

Գրավելով Ալեքսանդրապոլը և այն հենակետ դարձնելով, թուրքերը մի կողմից շարժվում են դեպի Երևան, մյուս կողմից՝ Ղարաքիլիսա։ Թուրքական զորքերի շարժումն այդ երկու ուղղությամբ կտրում էր Երևանի նահանգը արտաքին աշխարհից և, այդպիսով, բացառիկ ծանր դրության մեջ դնում նրան։ Ղարաքիլիսան և Լոռին գրավելու դեպքում թուրքական բանակը Ղազախի վրայով ճանապարհ էր բացում դեպի Ադրբեջան՝ սովետական Բաքվի վրա արշավելու համար։

Ալեքսանդրապոլն ընկնելուց հետո հայկական զորքերի հրամանատար, գեներալ Նազարբեկյանը իր շտաբը տեղափոխում է Ղարաքիլիսա, իսկ Համամլու գյուղը մայիսի 21-ին թուրքերի ձեռքն անցնելուց հետո՝ Դիլիջան։

Սակայն դրությունը շուտով փոխվում է։ Բոլոր տվյալները գալիս էին ասելու, որ արևելահայերի համար 1918 թվականի ամառը նույնքան սարսափելի պիտի լիներ, որքան 1915 թվականի ամառը՝ արևմտահայերի համար։ Այս ծանր օրերին բախտի քմահաճույքին թողնված հայ գյուղացիությունը տեսնելով իր վրա կախված ահռելի վտանգը, ոտքի է ելնում պաշտպանելու իր ֆիզիկական գոյությունը։ Սեյմի քաղաքականության և Անդրկովկասի դրության մասին Բաքվի սովետում 1918 թվականի մայիսի 29-ին տրված զեկուցման մեջ Ստ. Շահումյանը հայտարարեց, որ հայ գյուղացիական մասսաները, հակառակ դաշնակցականների դավաճանական քաղաքականության, «...պարզ հասկանում են, որ իրենց սպառնում է կամ իսպառ ոչնչացում, կամ նրանք պետք է երես դարձնեն իրենց առաջնորդներից ու զենքը ձեռքին դուրս գան վերահաս վտանգի դեմ»[1]։ Գյուղացիության օրինակը վարակում է նաև ազգային զորամասերի զինվորներին, որոնք վերադառնում են իրենց զորամասերը և միանում գյուղացիությանը։

Թուրքական զորքերը շարժվեցին դեպի Երևան ու Լոռի։ Համամլու հասած թուրքական բանակը բաժանվեց երկու մասի։ Մի մասը Բզովդաղով բարձրացավ Ջալալօղլու սարահարթը, իսկ մյուս մասը Ախուրյանի հյուսիսային լանջերով ետ դարձավ և շարժվեց Երևանի վրա։ Ալեքսանդրապոլի անկումը Թիֆլիսից կտրված Երևանի համար տագնապալի կացություն էր ստեղծում։ Գեներալ Նազարբեկյանը Դիլիջանից հուսահատական հեռագիր է հղում Թիֆլիսի հայոց ազգային խորհրդին՝ հայտնելով, որ ինքը ոչ մի զինվոր չունի, ուստի և պետք է ընդունել հաշտության ամեն մի պայմանագիր։ Բաթումից հայ պատվիրակների խորհրդով Հ. Օհանջանյանը Երևանի ազգային խորհրդին հեռագրում է՝ առանց դիմադրության քաղաքը հանձնել թուրքերի ողորմածու-

1 Ստ. Շահումյան, *Երկեր*, հատ. 3, էջ 225։

թյանը։ Երևանի քաղաքային Դումայի նախագահ դաշնակցական Թոշյանի առաջարկությամբ Դուման ընդունում է Հ. Օհանջանյանի կապիտուլանտական առաջարկը։ Այս որոշման դեմ քաղաքում համաժողովրդական ցույց է կազմակերպվում, որի մասնակիցները որոշում են կռվել և պաշտպանել քաղաքը։ Ոտքի է ելնում նաև քաղաքի շրջակա գյուղերի բնակչությունը։ Ինքնամուն դիմադրելու համար գյուղացիները խմբերով գալիս են Քանաքեռից, Առինջից, Ավանից և այլ գյուղերից։

Երևանի քաղաքային Դումայի որոշումից հետո Սուրմալուն դատարկելու և հայ զորքը Կոտայքի բարձրավանդակը ետ քաշվելու հրաման է տրվում։ Սակայն դեռ Սուրմալվի հայ զորքը երկաթգծից հյուսիս չանցած, թուրքական զորքերը մտնում են Արարատյան դաշտը և մայիսի 21-ին գրավում Սարդարապատ գյուղն ու կայարանը։ Հայկական զորամասերը և աշխարհազորականները թեթև ընդհարումից հետո նահանջում են և բռնում նախօրոք պատրաստված դիրքերը։

Մայիսի 22-ին հայերը գրոհով ետ են վերցնում Սարդարաբադը։ Հաջորդ օրը, մայիսի 23-ին, թուրքական զորքերը դիմում են հարձակման և սկսում առաջանալ էջմիածնի ճանուղիով։ Թուրքական զորքերը գրավում են Գեչրլու գյուղն ու հասնում Ղամիշլու կիսակայարանը։ Երկաթգծից դեռևս հարավ մնացած հայ զորքի և գյուղացիության համար Երևանից կտրվելու սպառնալիք է ստեղծվում։ Պայքարը վեր է ածվում հաղթական հարձակման, երբ երկաթգծից հյուսիս անցած զորքը ետ է դառնում և մասնակցում ժողովրդական հերոսամարտի բնույթ ստացած կռվին։ Տեղի է ունենում ուժեղ ճակատամարտ։ Թուրքերը փորձում են թևանցել հայկական զորամասերը, բայց դա նրանց չի հաջողվում։ Հայերը հարվածում են ճակատից և թևանցում հակառակորդին, որը սկսում է անկանոն կերպով նահանջել, տալով խոշոր կորուստ։ Արարատյան դաշտի գյուղացիները խանդավառությամբ համալրում են կռվի բռնված հայ զորախմբերի շարքերը։ Կռիվն ընդունում է համաժողովրդական մարտի բնույթ։ Հայկական զորամասերը և աշխարհազորականները թուրքերին հետապնդում են մինչև Սոգութլու գյուղը։ Բաշապարանի կողմից թուրքերին օգնության եկող հակառակորդի երկու գնդերին սկզբում հաջողվում է ետ մղել հայկական սակավաթիվ առաջավոր հեծյալ ջոկատը, բայց երկու օրվա համառ մարտերից հետո թուրքերը ետ են շպրտվում[1]։

Սարդարաբադի հերոսամարտը ոգի ու կորով ներշնչեց հայ ժողովրդին, իսկ Ղարաքիլիսայի տակ չորս օր տևած կռիվը կանգնեցրեց թուրքական զորքերի առաջխաղացումը։ Ականատեսներից մեկը պատմում է. «Ղարաքիլիսայի և նրա շրջակա գյուղացիներն իմանալով, որ օսմանցիները Համամլուից կամենում են գրոհ տալ դեպի Ղարաքիլիսա, բոլորը մի մարդու նման ոտքի են կանգնում և որոշում են մեռնել, բայց անձնատուր չլինել։

Փոքրաթիվ հայ զինվորները միացած տեղացիների հետ, ամեն ինչ անում են թշնամու առաջխաղացումը կասեցնելու համար։ Զորամասերի մեջ են մըտնում նույնիսկ ծեր, հասակավոր մարդիկ և պատանիներ... Արջուտ կիսակա-

1 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 21, թ. 99—102։

յարանի մոտ սկսվում է կողմերի ընդհարումը։ Մեր զորամասերը, մեր գյուղացիները կռվի մեջ են նետվում անվախ, համարձակ»[1]։

Առաջացող թշնամուն կանգնեցնելու համար ուրբի է ելնում նաև Փամբակի ու Դիլիջանի գյուղացիությունը։

Դիլիջանում կուտակված հայ զորքը օգնության է գալիս և աշխարհազորականների հետ միասին մայիսի 25—28-ին հերոսական կռիվ մղում թուրքական զորքերի դեմ։

Ղազախի գյուղերից աշխարհազորականները հավաքվում են Դիլիջան, որտեղ տեղի է ունենում զորահանդես։ Հայրենասեր սպաների ղեկավարությամբ աշխարհազորականները և զինվորները շարժվում են դեպի Ղարաքիլիսա՝ համալրելով իրենց շարքերը ճանապարհին ընկած գյուղերի բնակիչներով։

Ղարաքիլիսայի տակ դիրք էր բռնել հակառակորդի մի դիվիզիա, բաղկացած 10 հազար զինվորից, ունենալով 70 թնդանոթ, 40 գնդացիր։ Հայերը ունեին մոտ 6 հազար կռվող, 10 թնդանոթ, 20 գնդացիր։ Քառօրյա (մայիսի 24—28) հերոսամարտից հետ հայերը ստիպված են լինում թողնել Ղարաքիլիսան՝ ռազմամթերքի սպառման պատճառով։

Փամբակի գյուղերը ենթարկվում են կոտորածի և ավարի։ Ղարաքիլիսայում թուրքերը հարյուրավոր մարդկանցից բաղկացած խմբեր են կազմում և գյուղից դուրս հանելով՝ գնդակահարում։ Այսպիսի կոտորածներ տեղի են ունենում նաև Համամլուում, Հաջիղարայում, Ղշլաղում և ուրիշ գյուղերում։

Սարդարաբադի և Ղարաքիլիսայի հերոսական մարտերը գրավումից և կոտորածից փրկեցին Երևանի, Արարատյան դաշտի, Սևանի ավազանի բնակչությանը։ Հայ ժողովրդի այդ հերոսական գոյամարտերը օբյեկտիվորեն նպաստեցին Բաքվի կոմունային՝ ինտերվենտների դեմ մղվող պայքարում։

Մայիսի 26-ին թուրքերը Բաթումում սեյմի պատվիրակությանը վերջնագիր ներկայացրին պահանջելով երեք օրվա ընթացքում պատասխանել՝ ընդունում է նա արդյոք նրանց պահանջները թե ոչ։ Հենց այդ օրն էլ անդրկովկասյան սեյմը վրացական մենշևիկների առաջարկով իրեն հայտարարեց ցրված։ Այդ մասին սեյմի ընդունած որոշման մեջ ասված է. «Նկատի ունենալով, որ պատերազմի և հաշտության հարցերում արմատական տարաձայնություններ դրսևորվեցին այն ժողովուրդների միջև, որոնք կազմել էին Անդրկովկասյան անկախ հանրապետությունը, և այդ պատճառով անհնարին էր դարձել Անդրկովկասի անունից խոսող մեկ հեղինակավոր իշխանության հանդես գալը, սեյմը արձանագրում է Անդրկովկասի տրոհման փաստը և վար է դնում իր լիազորությունները»[2]։

Սեյմի ինքնացրման օրը՝ 1918 թվականի մայիսի 26-ին, վրացական ազգային խորհուրդը Վրաստանը հայտարարում է «անկախ»։ Գերմանացիների խորհրդով մենշևիկներն ընդունում են թուրքական վերջնագիրը և հունիսի 4-ին Բաթումում Վրաստանը հաշտություն է կնքում Թուրքիայի հետ։ Մայիսի 27-ին Ադրբեջանական ազգային խորհուրդը Ադրբեջանը նույնպես հայտարարում է «անկախ»։

---

1 «Մշակ», 5 հունիսի 1918 թ.։

2 «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում», էջ 222։

Թիֆլիսում գտնվող և դաշնակցականների կողմից ղեկավարվող հայկական ազգային խորհուրդը լսում է Բաթումից վերադարձած իր պատվիրակության զեկուցումը և որոշում է՝ «համակերպվելով ստեղծված նոր քաղաքական և ռազմական ծանր պայմաններին» հանձնարարել պատվիրակությանը շարունակել բանակցությունները հաշտության կնքելու համար[1]: Ստեղծված դրությունը թելադրեց հայկական ազգային խորհուրդին 1918 թվականի մայիսի 28-ին որոշում ընդունել Հայաստանը ևս «անկախ» հայտարարելու մասին:

«Ոմից է անկախ Գեգեչկորիի կառավարությունը,— գրել է Վ. Ի. Լենինը:— Սովետական հանրապետությունից նա անկախ է, բայց գերմանական իմպերիալիզմից նա մի քիչ կախյալ է, և դա բնական է»[2]: Նույնը պիտի ասել և Հայաստանի ու Ադրբեջանի «անկախության» մասին: Սրանք ևս անկախ էին միայն Սովետական Ռուսաստանից, սակայն կախյալ էին Թուրքիայից մինչև վերջինի պարտությունը առաջին համաշխարհային պատերազմում, իսկ այնուհետև Անտանտից:

Անդրկովկասյան հակահեղափոխական բլոկի քաղաքականությունը շատ բանկ նստեց Անդրկովկասի ժողովուրդներին, բայց բոլորից թանկ՝ հայ ժողովրդին:

Բաթումում կնքված ստրկացուցիչ հաշտության պայմանագրի համաձայն Երևանի նահանգից Թուրքիային էին անցնում Սուրմալուի գավառը ամբողջապես, Ալեքսանդրապոլի և Էջմիածնի գավառների մեծ մասը և Երևանի ու Շարուր-Դարալագյազի գավառների մի մասը: Այսպիսով, Հայաստանի տերիտորիան կազմելու էր ընդամենը մոտ 10 հազար քառակուսի կիլոմետր տարածություն: Հայաստանը պետք է զինաթափվեր և դիվանագիտական հարաբերությունների մեջ չմտներ Թուրքիայի հետ պատերազմական վիճակի մեջ գտնվող պետությունների հետ: Թուրքիան իրավունք ստացավ իր զորքերը փոխադրել Հայաստանի երկաթգծով, որի համար բոլոր երկաթուղային կայարանները պիտի գտնվեին Թուրքերի հսկողության տակ[3]: Այսպես, Բաթումում անդրկովկասյան հակահեղափոխական կուսակցությունները Թուրքիայի հետ հաշտություն կնքեցին շատ ավելի ծանր պայմաններով, քան Բրեստ-Լիտովսկի պայմանագիրն էր:

Ձուր էր դաշնակցական կառավարության պատվիրակությունը 1918 թվականի ամռանը Բեռլինում և հետո Վիեննայում բախում գերմանական ու ավստրո-հունգարական կառավարությունների դռները և օգնություն խնդրում: Նա խնդրում էր վերանայել Բաթումում կնքված հաշտության պայմանագիրը այն հաշվով, որ Հայաստանը հետ ստանար Բրեստ-Լիտովսկի պայմանագրով նախատեսված այն տերիտորիան, որը զավթել էին Թուրքերը: Վիեննայում պատվիրակությունը հարց հարուցեց նաև ավստրո-հունգարական զորքեր ուղարկել Հայաստան: Դաշնակցական կառավարության ներկայացուցիչներին լսում էին,

---

1 Տե՛ս «Հորիզոն», 31 մայիսի 1918 թ.:

2 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 27, էջ 462:

3 Բաթումի հաշտության պայմանագիրը տե՛ս ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 23, թ. 96—98:

հայտնում իրենց ցավակցությունը, բայց գործնականում գերմանական և ավստրո-հունգարական կառավարությունները ոչինչ չէին անում։

1918 թվականի ամռանը թուրքական զավթիչները հարձակում են սկսում Բաքվի սովետական իշխանության վրա։ Միաժամանակ Բաքուն գրավելու իրենց պլանների իրագործմանը ձեռնամուխ են լինում Իրանում գտնվող անգլիական իմպերիալիստները։ Բաքվի սովետական իշխանության դեմ հանդես են գալիս երկրամասի հակահեղափոխական ուժերը։

Բաքվի ժողովրդական կոմիսարների սովետը 1918 թվականի մայիսի վերջին դիմեց Անդրկովկասի աշխատավորներին՝ կոչելով նրանց պաշտպանել սովետական իշխանությունը Բաքվում, էլ ավելի ուժեղացնել պայքարը սովետական իշխանության հաստատման համար ամբողջ Անդրկովկասում։

«Բաքվի պրոլետարիատը,— ասվում է կոչում,— առաջինն էր, որ հռչակեց իր համերաշխությունը Ռուսաստանի Հոկտեմբերյան սոցիալիստական հեղափոխության հետ և դեմ գնաց անդրկովկասյան կոմիսարիատին ու սեյմին։ Բաքվի պրոլետարիատն այժմ ևս բարձր է պահում սովետական իշխանության դրոշը և պատրաստ է պայքարելու ամբողջ Անդրկովկասի բանվորների ու գյուղացիության ազատության և երջանկության համար»։ Կոչը Բաքվի սովետի դրոշի տակ էր հրավիրում Անդրկովկասի բոլոր աշխատավորներին։ «Բաքվի պրոլետարիատը ձգտում է Անդրկովկասում ստեղծել նոր կառավարություն, առանց բեգերի ու իշխանների և առանց հայ նացիոնալիստների,— բանվորների ու գյուղացիների կառավարություն, սովետների կառավարություն։ Այդ կառավարությունը դաշնակցած ամբողջ ռուսաստանյան պրոլետարիատի ու գյուղացիության հետ՝ կպաշտպանի Անդրկովկասի միասնությունը Ռուսաստանի հետ, կխորտակի բոլոր ազգությունների կալվածատերերի ու կապիտալիստների իշխանությունը և կհաստատի ամբողջ Անդրկովկասի բանվորների և գյուղացիների եղբայրություն...

Բոլոր մութ ուժերը ոտքի են ելել Բաքվի սովետի դեմ, Անդրկովկասի միակ ազատ անկյունի դեմ։ Բաքվի սովետի դրոշակը ազատության դրոշակ է ու աշխատավորների եղբայրության դրոշակ։ Բոլորդ մտեք մեր դրոշի տակ»[1]։

Կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ Բաքվի պրոլետարիատը և Ադրբեջանի աշխատավոր գյուղացիությունը հերոսական պայքար ծավալեցին Բաքվի վրա արշավող թուրքական զորքերի դեմ։ Այդ պայքարում նրանց օգնություն էր ցույց տալիս Սովետական Ռուսաստանը՝ ուղարկելով զենք, ռազմամթերք, փող, պարեն և օժանդակ ուժ։

Թուրքական առաջխաղացող զորքերի դեմ պայքարելու պատրաստակամություն հայտնեց նաև գեներալ Անդրանիկը։ Ազգային-ազատագրական մարտերում աչքի ընկած այդ զորավարը Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակից հետո հայ ժողովրդի ֆիզիկական գոյության պաշտպանման հարցը կապում էր Սովետական Ռուսաստանի հետ։

1918 թվականի հուլիսին, երբ նա գտնվում էր Նախիջևանում, հաղորդեց Բաքու՝ Ստ. Շահումյանին, որ Նախիջևանի գավառը հայտարարված է Սովետական Ռուսաստանի անբաժանելի մաս և, որ ինքը ենթարկվում է Սովետա-

1 Ստ. Շահումյան, Երկեր, հատ. 3, էջ 241—245։

կան Ռուսաստանի կառավարությանը՝ իր ջոկատը դնելով նրա տրամադրության տակ։ Անդրանիկը միաժամանակ հայտնում էր, որ իր ջոկատը պայքարում է թուրքական զորքերին նախիջևան գավառը չթողնելու համար։

Ստ. Շահումյանը պատասխան հեռագրում հայտնում էր. «Ձեր հեռագիրը ստացա։ Կրիվ տեքստը հաղորդում եմ Մոսկվա, կենտրոնական կառավարությանը։ Իմ կողմից հանձին Ձեզ ողջունում եմ իսկական ժողովրդական հերոսին։ Եթե պարոնայք քաջալերությունները և մյուսները Ձեզ նման լինեին հայ գյուղացիությունը չէր ապրի ներկայիս ողբերգությունը։ Ողջույն հաղորդեցեք Ձեր դրոշի տակ մարտնչող բոլոր խիզախ մարտիկներին և ամբողջ աշխատավոր ազգաբնակչությանը...»։

Օտարերկրյա ինտերվենտների ճնշման տակ, ինչպես և հակահեղափոխական կուսակցությունների քայքայիչ աշխատանքի հետևանքով սովետական իշխանությունը Բաքվում 1918 թվականի հուլիսի 31-ին ժամանակավորապես ընկավ։ Իշխանությունն իրենց ձեռքը վերցրին էսեռները, դաշնակցականները, մենշևիկները, որոնց հրավերով օգոստոսի 4-ին Բաքու մտան անգլիական զորքերը։ Բայց անգլիացիները մտադիր էլ չէին պաշտպանել Բաքուն։ Նվ երբ թուրքական գերակշռող ուժերը մոտեցան Բաքվին, անգլիացիները այն թողին առանց դիմադրության։ Սեպտեմբերի 15-ին թուրքական զորքերը գրավեցին Բաքուն։

1918 թվականի սեպտեմբերի 20-ին անգլիական իմպերիալիստները և Աշխատաժի հակահեղափոխական իշխանությունները անդրկասպյան ավազուտներում գազանաբար սպանեցին Բաքվի բանվորների սիրելի 26 կոմիսարներին՝ Ստ. Շահումյանին, Պ. Ջապարիձեին, Մ. Ազիզբեկովին, Ի. Ֆիոլետովին, Գ. Կորգանովին, Յա. Ջևինին, Մ. Վեզիրովին, Ի. Մալիգինին, Ա. Ամիրյանին, Ս. Հովսեփյանին, Վ. Պոլուխինին, Գ. Պետրովին, Մ. Բասինին, Ա. Կոստանդյանին, Ի. Գաբիշևին, Բ. Ավագյանին, Ա. Բերգին, Թ. Ամիրյանին, Ա. Բորյանին, Ֆ. Սոլնցևին, Մ. Կոզանովին, Ա. Բոգդանովին, Ս. Բոգդանովին, Ի. Միշնեին, Ի. Մետակսին և Վ. Նիկոլայշվիլուն։ Բաքվի հերոսական կոմունան պատմության մեջ մտավ որպես Անդրկովկասի աշխատավորների՝ սովետական իշխանության համար մղված պայքարի ամենապայծառ էջերից մեկը։

Սակայն, բացի Բաքվից ու նրա նահանգից, Անդրկովկասի մյուս մասերում, այդ թվում և Հայաստանում, ձգձգվեց սովետական իշխանության հաղթանակը։

Անդրկովկասի համաձայնողական և բուրժուա-նացիոնալիստական կուսակցությունների սոցիալական և նացիոնալիստական քաղաքականության հետևանքով երկրամասի աշխատավորության, մասնավորապես գյուղացիության մի ղգալի մասը դեռևս չէր ազատագրվել այդ կուսակցությունների ազդեցությունից և հավատ էր ընծայում նրանց կեղծ խոստումներին։ Այդ մասին են վկայում նաև Սահմանադիր ժողովի ընտրությունները Անդրկովկասում, որոնք տեղի ունեցան 1917 թվականի հոկտեմբերին։

Թեև երկրամասի առանձին կենտրոններում և մանավանդ հովկասյան բանակի զինվորների մեջ բոլշևիկները լուրջ հաջողության հասան, բայց և այնպես ընդհանուր առմամբ ձայների մեծ մասը շահեցին համաձայնողական և բուր-

ժուա-նացիոնալիստական կուսակցությունները։ Զգձման մյուս պատճառներն էին օտարերկրյա իմպերիալիստների ինտերվենցիան Անդրկովկաս, երկրամասի հակահեղափոխական կուսակցությունների դավաճանական քաղաքականությունը, Հյուսիսային Կովկասում հակահեղափոխական ուժերի ապըստամբության պատճառով Անդրկովկասի տերիտորիալ կտրվածությունը Սովետական Ռուսաստանից և այլն։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆՆԵՐԻ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. ԵՐԿՐԻ ՆԵՐՔԻՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Սեյմի ցրումից հետո Անդրկովկասում ստեղծվեցին Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի բուրժուական հանրապետությունները։ Թիֆլիսի հայկական ազգային խորհուրդը 1918 թվականի մայիսի 28-ին իրեն հայտարարեց «հայկական գավառների գերագույն և միակ իշխանություն»[1]։

Հայաստանում կառավարություն ստեղծելու շուրջը երկար պայքար տեղի ունեցավ դաշնակցության, հայ ժողովրդական կուսակցության և մյուս խմբավորումների միջև։ Երբ Թիֆլիսում ստեղծվում էր դաշնակցական կառավարությունը, հայ ժողովրդական կուսակցությունը գումարեց մի ժողով, որտեղ ընդունվեց որոշում՝ չվստահել կառավարության ստեղծումը դաշնակցությանը, որովհետև «տարիների ընթացքում նրա վարած քաղաքականության ու նրա գործելակերպի հետևանքը եղավ հայ ժողովրդի ներկա օրհասական վիճակը»[2]։ Հայ ժողովրդական կուսակցությունը իրեն էր վերապահում Հայաստանի հանրապետության կառավարություն ստեղծելու իրավունքը։

Իսկ այդ օրերին Երևանի հայոց ազգային խորհուրդը ընտրել էր մի վարչություն, որին տվել էր կառավարական ֆունկցիա՝ մինչև Թիֆլիսից կառավարության ժամանումը։

Դաշնակցականներին հաջողվեց առաջին կառավարության կազմում մըտցընել բացառապես իրենց ներկայացուցիչներին։ Միակ անկուսակցականը ընդհանուր նախարար Հ. Հախվերդյանն էր։ Վարչապետ նշանակվեց Հ. Քաջազնունին, արտաքին գործերի նախարար՝ Ա. Խատիսյանը, ներքին գործերի՝ Արամ Մանուկյանը։

Երկար վիճաբանություններ են տեղի ունենում կառավարությունը և ազգային խորհուրդը Երևան տեղափոխելու շուրջը։ Հուլիսի 13-ին վերոհիշյալ կուսակցությունների և ազգային խորհրդի միացյալ նիստում որոշվում է տեղա-

---

1 ՍՄԿԿ կենտկոմին կից Մ.Լ. հայկական ֆիլիալի արխիվ (հետագայում՝ Մ.Լ. հայկական ֆիլիալի արխիվ), ֆ. 222, ց. 1, գ. 1ա, թ. 345։

2 Նույն տեղում, գ. 120, թ. 12։

փոխվել Երևան։ Հուլիսի 20-ին դաշնակցական կառավարությունը և Թիֆլիսի ազգային խորհրդի անդամները հասնում են Երևան։ Այստեղ Թիֆլիսի և Երևանի ազգային խորհուրդների ու կառավարության որոշմամբ ստեղծվեց Հայաստանի խորհրդարանը։ Խորհրդարանում տեղերի մեծ մասը (18 տեղ) գրավում են դաշնակցականները, իսկ էսեռները և հայ ժողովրդական կուսակցությունը՝ վեցական տեղ, անկուսակցականներին տրվում է 2 տեղ՝ նախատեսված 3-ի փոխարեն։ Հայաստանի խորհրդարանում 6 տեղ ստանում են նաև սոցիալ-դեմոկրատները (բոլշևիկները և մենշևիկները միասին, որովհետև Երևանում մինչև 1918 թվականի նոյեմբերը բոլշևիկները և մենշևիկները դեռևս կազմակերպչորեն անջատված չէին)։

1918 թվականի գարնանը, երբ բուրժուա-նացիոնալիստական կուսակցությունները ձեռնամուխ էին եղել անկախ հանրապետությունների ստեղծմանը, Ս. Գ. Շահումյանը և մի շարք այլ գործիչներ առաջարկում էին, ի հակակշիռ ստեղծվող բուրժուական հանրապետությունների, առաջ քաշել Անդրկովկասի սովետական անկախ հանրապետություններ ստեղծելու լոզունգը։

Կոմունիստական կուսակցության լենինյան ազգային քաղաքականությունից բխող այդ լոզունգի ընդունումը կարևոր նշանակություն կունենար սովետական իշխանության համար մղվող Անդրկովկասի աշխատավորների պայքարի կազմակերպման գործում, այն խոշոր հարված կհասցներ բուրժուա-նացիոնալիստական կուսակցություններին, որոնք բուրժուական հանրապետություններ ստեղծելու իրենց քաղաքականության մեջ ճարպկորեն խաղում էին Երկրամասի ժողովուրդների ազգային զգացմունքների հետ։

Դժբախտաբար այդ առաջարկությունը պաշտպանություն չի գտնում կուսակցության երկրային կոմիտեում, որի անդամներից շատերը կարծում էին, թե սովետական անկախ հանրապետություններ ստեղծելու լոզունգը կարող էր տուրք տալ նացիոնալիզմին։ Այդ սխալն ուղղվեց միայն 1919 թվականի կեսերին Ռ(բ)Կ Կենտկոմի միջամտությամբ։ Բայց ժամանակին այդ սխալ դիրքորոշումը արդեն կատարել էր իր բացասական դերը Անդրկովկասում սովետական իշխանության համար մղվող պայքարի կազմակերպման գործում։

1918 թվականի օգոստոսի 1-ին բացվեց Հայաստանի խորհրդարանի առաջին նիստը։ Դաշնակցության հակահեղափոխական և ազգադավ քաղաքականությունը մերկացնելու համար Պառլամենտի ամբիոնն օգտագործելու նպատակով բոլշևիկները անհրաժեշտ համարեցին մասնակցել Հայաստանի Պառլամենտին։ Օգոստոսի 3-ին, երբ դաշնակցականները ներկայացնում են իրենց դեկլարացիան, բոլշևիկների անունից նիստում դեկլարացիայով հանդես է գալիս Ա. Մելիքյանը, որը մերկացնում է դաշնակցականների ռեակցիոն ու վնասաբեր քաղաքականությունը և նշում Հայաստանը Սովետական Ռուսաստանից անջատելու կործանիչ նշանակությունը հայ ժողովրդի համար։ Բոլշևիկյան դեկլարացիայում ընդգծվում էր, որ հայ ժողովրդի գոյության և փրկության միակ հենարանը կարող է լինել Սովետական Ռուսաստանը[1]։

Դաշնակցականները, անցնելով իշխանության գլուխ, ձեռնամուխ են լինում անդրկովկասյան կոմիսարիատի և սեյմի ընդունած հակաժողովրդական

1 Տե՛ս «Խոսք», 28 դեկտեմբերի 1918 թ.։

օրենքների կենսագործմանը։ Նրանք աստիճանաբար վերացնում են այն տարբական նվաճումները, որ ձեռք էին բերել աշխատավորները փետրվարյան բուրժուա-դեմոկրատական հեղափոխության հաղթանակի հետևանքով։ Արդյունաբերական ձեռնարկությունները մնում են նախկին տերերի ձեռքին։ Բանվորական 8-ժամյա աշխատանքային օրվա մասին օրենքը մնում է անիրագործելի։ Դաշնակցության պետական գործունեության հենց առաջին քայլերը դրսևորում են նրա քաղաքականության հակաժողովրդական էությունը։

Անդրկովկասի անջատումը Սովետական Ռուսաստանից և անկախ հանրապետությունների ստեղծումը բխում էր բուրժուա-նացիոնալիստական կուսակցությունների և օտարերկրյա իմպերիալիստների շահերից։ Այն խիստ ծանր հետևանքներ ունեցավ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի ժողովուրդների համար՝ ինչպես քաղաքական, այնպես էլ տնտեսական ասպարեզում։ Հակահեղափոխական կուսակցությունները արհնստականորեն մեկուսացնում էին հարևան եղբայրական ժողովուրդների բանվորա-գյուղացիական մասսաներին, որոնց դարավոր սերտ դաշինքը, բացի տերիտորիալ միաձուլությունից, թելադրվում էր նաև այդ ժողովուրդների պատմական անխզելի ճակատագրով, ինչպես նաև կյանքի պայմանների ընդհանրությունից և տարբեր ազգերի բնակչության շերտընդմեջ ապրելուց։

Բուրժուա-նացիոնալիստական կուսակցություններն ամեն կերպ ձգտում էին ապացուցել, որ իրենք իշխանության գլուխ են անցել Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի ժողովուրդների «ազատ կամքի» հիման վրա։ Մերկացնելով դաշնակցականների, վրացական մենշևիկների և մուսավաթականների այդ կեղծիքը, Ռ Կ(բ)Կ Կովկասյան երկրային կոմիտեն Կովկասի աշխատավորությանն ուղղած իր կոչում 1919 թվականի գարնանը նշել է. «Որքան խարդախություն, որքան խաբեություն, կեղծիք և փարիսեցիական երկերեսանիություն կա այդ բոլոր հայտարարություններում։ Այդ ժողովուրդների «կամքի ազատ արտահայտության», «ինքնորոշման», ինչպես նաև Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի հանրապետությունների «անկախության» մասին ավելի լավ է թող չխոսեն այդ պարոնները։ Այդ հանրապետությունների «անկախությունը»— դա ամբողջ Անդրկովկասի օկուպացիան է Անգլիայի, Ֆրանսիայի, Ամերիկայի զորքերի կողմից։ Ինչպիսի հեգնանք, ինչպիսի ծաղրանք աշխատավոր մասսաների նկատմամբ»[1]։

Դաշնակցականները, ինչպես նաև մուսավաթականներն ու մենշևիկները, նախքան իշխանության գլուխ անցնելը մասսաներին հավաստիացնում էին, որ իրենց «անկախ» ազգային հանրապետությունների ստեղծումը երջանիկ կյանքի սկիզբը կհանդիսանա։ Բայց «ազգին փրկելու», «ազգին ծառայելու» համար դաշնակցականների սին խոստումներն ունեին միայն ու միայն մեկ նպատակ՝ խաղալ հայ ժողովրդի ազգային զգացմունքների հետ և ազգային «անկախության» դրոշը դարձնել միջոց՝ աշխատավորական մասսաներին մոլորեցնելու ու իրենց հետևից տանելու համար։ Եվ այդ նրանց ժամանակավորապես հաջողվում էր։

---

1 «Борьба за победу Советской власти в Грузии», էջ 462։

Պետական ապարատը կենտրոնացված էր դաշնակցականների ձեռքում, չնայած կառավարության մեջ երբեմն մտնում էին էսեռներ, ռամկավարներ և այլ կուսակցությունների մի քանի ներկայացուցիչներ։ Կառավարությունը գտնվում էր դաշնակցության խիստ վերահսկողության տակ, կատարում էր նրա բյուրոյի ցուցումները։

1919 թվականի մայիսի 28-ին Հայաստանի Պառլամենտը որոշում ընդունեց գոյություն ունեցող դաշնակցական կառավարությունը հայտարարել միացյալ Հայաստանի կառավարություն։ Այդ ակտին համահայկական բնույթ տալու նպատակով որոշվեց 12 արևմտահայերի (բոլորն էլ դաշնակցական) մտցնել Հայաստանի խորհրդարանի կազմում։

Իր մեկ տարվա գոյության ընթացքում դաշնակցության ստեղծած կառավարությունը անընդունակ գտնվեց երկրի շատ թե քիչ կարևոր սոցիալ-տնտեսական հարցերը լուծելու ասպարեզում։

Հետաքրքրական է, այս առումով, Ալեքսանդրապոլի սոցիալ-դեմոկրատական կազմակերպության, հայ ժողովրդական կուսակցության, Շիրակի գյուղացիական միության և այլ կազմակերպությունների միացյալ «Բողոքը Հայաստանի հանրապետության կառավարության դեմ»։

Այդտեղ մասնավորապես նշվում է, որ կառավարության «վարչական կազմը լցված է միմիայն դաշնակցականներով... որոնք գործում են կամայականորեն», որ «դատարանը ազատ չէ։ Դատավորները նշանակովի են և գտնվում են կուսակցության ճնշման տակ», «ֆինանսական դրությունը հանձնված է կուսակցամոլների ձեռքը և ֆինանսական պաշտոնյաները վատնում են ժողովրդի կոպեկները...»։ Բողոքում այնուհետև զայրույթով նշվում է. «Անկարելի է լսել այն անմիտ ակտի մասին, որով ներկա կառավարությունը ինքնակոչ կերպով մը հայտարարեց Հայաստանը Միացյալ և Անկախ և ինքըզինքը նշանակեց այդ մեծ Հայաստանի կառավարությունը...»։

Բողոքի տակ ստորագրողները պահանջում էին «ցրել ապօրինի միջոցներով ընտրված Պառլամենտը, նշանակել նոր ընտրություններ», «հրաժարում ներկա կառավարության» և «ընտրել նոր կառավարություն օպոզիցիայից»[1]։

1919 թվականի հունիսի 17-ին դաշնակցության Արևելյան բյուրոն ստիպված եղավ ընդունել, որ «արևմտահայ մասսաները դժգոհ են այս կառավարությունից և չեն կարող հաշտվել այն մտքի հետ, թե այս կառավարությունը միացյալ Հայաստանի կառավարություն է։ Նրանք տեսնում են, որ այս կառավարությունը հավասար աչքով չի նայում ռուսահայ և տաճկահայ գաղթականության վրա», որ «արևմտահայը կառավարության մեջ՝ ոչ մի մասնակցություն չունի»[2]։

Դաշնակցության պետական սիստեմը բռնության ու կամայականության վրա հիմնված սիստեմ էր։ Դաշնակցական կառավարությունն ուներ բազմաթիվ նախարարություններ, 40 հազարանոց բանակ, 5000-ից ավելի միլիցիա։ Սակայն երկրում անիշխանություն էր։ «...Այն խոսքը, թե ով առավոտյան քնից շուտ վեր կենա, նա է իշխանության տերն ու տնօրենը, այս պարագայում կարելի է հանգիստ խղճով թուլատրել, որ այդ վարկաբեկիչ խոսքը վերագրվի

1 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 201, ց. 1, գ. 278, թ. 62—63։

2 Մշի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4047, ց. 5, գ. 253, թ. 22—23։

Հայաստանի հանրապետական կառավարությանը»,— գրել է «Աշխատանք» թերթը «Անիշխանություն» վերտառությամբ հոդվածում[1]։

Ավազակությունը, թալանն ու կողոպուտը սիստեմի էր վերածվել։ Շատ բնորոշ է այդ առումով Ալեքսանդրապոլի հասարակության ներկայացուցիչների բողոքը կառավարության ղեկավարին՝ գրված 1920 թվականի փետրվարին։ Նրանք բողոքում են դաշնակցական պատժիչ ջոկատի անօրինակությունների դեմ։ «Այն կաշառքները, սոսկալի ծեծ ու ճնշումը, մարդկանց վախեցնելը չենք մոռանա՝ մենք երբեք. մենք այս դրության չենք եղած, այսքան կաշառք չենք տված»,— գրում են նրանք[2]։ Այդ մասին են վկայում նաև հենց իրենց՝ դաշնակցական գործիչների, մի շարք զեկուցագրեր և այլ փաստաթղթեր։ Ներքին գործերի նախարարի օգնական Ս. Թորոսյանի 1920 թվականի հուլիսի 2-ին զեկուցագրում ասված է. «Հանրապետության կազմակերպության առաջին օրերից ներքին կյանքը գտնվում էր վերին աստիճանի խառնակ վիճակում... Շիրակի գյուղերում սարսափելի բռնություններ են կատարվում ամեն օր։ Կարսի նահանգը ենթակա է մի սարսափելի ահաբեկման... Շիրակի նահանգապետն իր անզորությունն է հայտնում իր նահանգի ավելի քան 6000 զինված անձանց դեմ։ Սակայն ինչո՞ւ հեռու գնանք։ Մեր քթի տակ էջմիածին գավառում օրը ցերեկով նուխեցիները քանի անգամ են հարձակվել գնացքի վրա։ Վերջին հարձակման ժամանակ սպանեցին 41 մարդ, վիրավորեցին 82-ը։ Ի՞նչ է Զանգիբասարը։ Ավերիչ ուժերի մի կատաղի մրցում... Երևանից Աշտարակ տանող խճուղու մոտ Միկինի ձորը, մի սպանդանոց է անցորդների համար, այնտեղ երկու տարվա ընթացքում մոտ հարյուր մարդ է սպանվել... երկիրը լիքն է քանդող, քայքայող տարրերով»։ Նա խոստովանում է, որ «Ձմեռվա ընթացքում Երևան քաղաքում կատարված սպանություններին ու հափշտակություններին մասնակից են եղել և միլիցիոներները, մինչև իսկ նրանց պետերը»։ Թորոսյանը այնուհետև նշում է, որ «երկրի անիշխանական դրությանը բավականաչափ նպաստում են և պետության զանազան մասերում տեղավորված զինվորական մասերը», որոնք անասունների և գույքի անօրինական բռնագրավումներով են զբաղված[3]։

Կողոպուտի, սպանությունների և ամեն կարգի չարագործությունների կազմակերպիչները դաշնակցական կառավարության հովանավորությունը վայելող մաուզերիստներն էին։ Նրանք զենք ու դրամ էին ստանում կառավարությունից և կոչված էին «բոլշևիկների դեմ» պայքարելու։ Ներքին գործերի նախարարության վերատեսչի վկայությամբ միայն 1920 թվականի առաջին կեսին այդ նախարարության մատյաններում գրանցվել է 12 միլիոն ռուբլի գումար, որը տրվել է «բոլշևիկների դեմ գործելու» համար։ Բայց իր տիրապետության տարիներին քանի-քանի տասնյակ միլիոններ է դաշնակցությունը ծախսել այդպիսի նպատակների համար և փակել պետական դրամարկղի դռները, երբ խնդիրը վերաբերել է ժողովրդի վիճակի բարելավմանը, կամ լուսավորության գործի կարգավորմանը։

1 «Աշխատանք», 25 փետրվարի 1919 թ.։

2 Տե՛ս «Առաջին մասսայական հեղափոխական շարժումները Հայաստանում» (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), Երևան, 1932, էջ 201։

3 Տե՛ս նույն տեղում, էջ 184—185։

Ահա թե ինչ է գրել Հայաստանի հանրային կրթության և արվեստի մինիստրին տարրական դպրոցների բաժնի վարիչը 1919 թվականի նոյեմբերի 8-ին. «Դպրոցները չեն վերաբացվում, որովհետև փող չկա, ուսուցիչներն իրենց դպրոցները թուլնում են... որովհետև փող չկա... բայց սխալվում են ասելով փող չկա, փող կա, բայց փող չկա միայն մեր տարրական դպրոցի, փող չկա միայն լուսավորության գործի համար»[1]։

«Մեր պաշտոնեության 90 տոկոսը,— լրացնում է նրան «Հայաստանի աշխատավորը»,— ղեղծարար է։ Ջեղծում ու կեղծում են ամենքը, ալան թալան են անում բոլորը, ովքեր «ծուլլ չեն», որովհետև որքան շատ են ղեղծում ու հափըշտակում՝ այնքան բարձրանում է նոցա աստիճանն ու պատիվը»[2]։

Անցնելով իշխանության գլուխ, դաշնակցականները գյուղացիությանը խոստացան հող։ Գյուղացիությունը, սակայն, հող չստացավ։ Դաշնակցականների վարած ագրարային քաղաքականությունն էլ ավելի ուժեղացրեց կուլակային հողատիրությունը երկրում։ Դաշնակցական կառավարությունը գյուղացիությանը ոչ միայն հող չտվեց, այլև բռնագրավեց այն հողերը, որ գյուղացիները խլել էին կուլակներից և խոշոր հողատերերից Հոկտեմբերյան հեղափոխության ազդեցության տակ կամ ձեռք էին բերել 1912 թվականին՝ ցարական հողային օրենքի համաձայն։ Այսպես, օրինակ, 1912 թվականին Իջևանի շրջանի Աչաջուր գյուղի գյուղացիները ստացել էին Իջևանի անտառապետին պատկանող «դանաղռան» կոչված հողամասը։ 1919 թվականին վերջինս դիմում է կառավարությանը խնդրելով՝ «վերականգնելու իր իրավունքները»։ Դաշնակցական կառավարությունը ղրկելով գյուղացիությանը մի կտոր հողից բավարարում է անտառապետի խնդրանքը։

Էջմիածնի 32 խոշոր հողատերերը լիովին պաշտպանում են իրենց «իրավունքները»։ Լոռում ևս նույն դրությունն էր, որտեղ Խանաղով կոչված կալվածատերերը դաշնակցական կառավարության օգնությամբ 1919 թվականի գարնանը նորից զավթել էր կալվածքները՝ դուրս քշելով այնտեղից գյուղացիներին։ «Լոռվա գյուղացու ձայն» թերթի վկայությամբ կալվածատերերը շարունակել են տիրանալ մեծ կալվածքների[3]։

Գյուղի ղոռբաններն ու կուլակները կառավարության օգնությամբ նոր հողամասեր, արոտավայրեր ու հարստանալու այլ միջոցներ են ձեռք բերում։ 1918 թվականի նոյեմբերին Նոր Բայազետի գավառի Նորադուզ գյուղի բնակիչները, օրինակ, բողոք են բարձրացնում Սևանա լճից ու գետից աշնան ձկնորսության կապալը իրենցից խլելու և մասնավոր մարդկանց հանձնելու կապակցությամբ։ «...Նովից ու գետից այս աշնանը ձկնորսության կապալը մեր գյուղից խլվեց և տրվեց մասնավոր մարդկանց՝ չափազանց ցածր վարձով, միայն 35.000-ով։ Մեր գյուղը պատրաստ էր դրանից էլ ավել տալու, բայց Նոր Բայազետի կուլակները և ղոռբանները խլեցին մեզանից դեռ հնուց մեր և հարևան չորս գյուղերի ապրուստի գլխավոր միջոցը և հանձնեցին իրանց մարդուն՝ Մկրտիչ Աֆրիկյանին, որն իր մեջքի հետևը ունենալով քաղաքագլխին՝ իր եղ-

1 «Առաջին մասսայական հեղափոխական շարժումները Հայաստանում», էջ 199—200։

2 «Հայաստանի աշխատավոր», 1919, № 81։

3 Տե՛ս «Լոռվա գյուղացու ձայն», 1 փետրվարի 1920 թ.։

բորը, այժմ էլ 12 ղինվոր է ուղարկել հսկելու, որ ծովից գողություն չլինի։ Այս նոր տնտեսական ճնշումը նպաստեց մեր գյուղացիների արտագաղթին, թեև հանապարհները դեռ ամբողջապես չեն բացվել, բայց մեր գյուղից ամեն օր մի քանի ընտանիք և առանձին մարդիկ են գնում Թիֆլիս և Ռուսաստան աշխատանք գտնելու։ «Սովից կմեռնինք» ասում են բոլորը և հուսահատական դրության մեջ դրսից մի լույս ծագելուն են սպասում»[1]։

Ահա դաշնակցական կառավարության ներքին քաղաքականությունը բնորոշող մի այլ փաստ ևս. Եղվարդի մի խումբ գյուղացիներ 1918 թվականի սեպտեմբերի 19-ին բողոքում են, որ դաշնակցական կառավարությունը ղենքի ուժով թալանում ու կողոպտում է գյուղացիությանը։ «Հացահատիկների ստիպողական գրավման համար,— ասվում է բողոքագրում,— մեր գյուղն է եկել լիազոր Կարապետ Այվազյանի տրամադրության տակ մի զորախումբ պուլեմյոտներով, որոնք և ղեկավարում են գյուղացիների տների խուզարկելը։ Խուզարկությունները կատարվում են առանց գյուղական ներկայացուցչի մասնակցության. գրավվածի համար ստացականներ չեն տալիս, գրավում են ինչ իրենց դուր է գալիս՝ յուղ, թխած հաց... գրավում են աչք տեսած ցորենի ամբողջ պաշարը։ Երեկ Արամ Մուրադխանյանի տնից տարան ունեցած բոլոր ցորենը. Մուրադխանյանի ընտանիքը բաղկացած է 18 հոգուց, նրանք ամբողջ այդ օրն ու այսօր սոսկալի հեծկլտանք են բարձրացրել... երկուսը դանակով ինքնասպանության փորձ են անում...»[2]։

Զարմանալի չէ այդ առումով, որ նույնիսկ կովկասահայ բուրժուազիայի ներկայացուցիչները չէին կամենում կապիտալ ներդնել Հայաստանի ժողովրդական տնտեսության մեջ, որովհետև, ինչպես այդ հարցին նվիրված 1919 թվականի սեպտեմբերի 28-ին Թիֆլիսում գումարված հայ արդյունաբերողների և բանկերի ներկայացուցիչների ժողովում հայտարարեց արդյունաբերող Մայիլյանը՝ «ժամանակակից Հայաստանում բացակայում է գույքի և անձի ապահովությունը»։

Իսկ խորհրդակցության մի այլ մասնակից՝ Մ. Բունիաթյանը, հայտարարեց, թե «Հայաստանից հայ արդյունաբերողներն ու մասնագետներն իրենք չեն, որ փախչում են, այլ նրանց մեր կառավարությունն է փախցնում իր նեղ կուսակցական գործելակերպով»[3]։

Բայց դաշնակցականները չէին բավարարվում միայն պարենամթերքի թալանով։ Այսպես, 1918 թվականի սեպտեմբերին Քարվանսարայի գավառի Կոթ գյուղը պատժիչ զորամաս է ուղարկվում՝ կառավարության դեմ ուղղված «անկարգություններին» վերջ տալու համար։ Դաշնակցական մասուլերիստները մտնելով տները, ինչպես այդ մասին վկայում է 4-րդ գավառամասի կառավարիչը, խլում են նրանցից այն ամենը ինչ տեսնում են. «խլում էին կոշիկներ, հագուստներ, շինելներ, թամբեր, սանձեր, փող և այլն։ Մի խոսքով դա ոչ թե մի օրինավոր զորամաս էր, այլ թող թույլ տրվի ինձ ասելու, որ դա կազմակերպ-

1 «Առաջին համաշխարհային հեղափոխական շարժումները Հայաստանում», էջ 98։

2 «Մշակ», 3 հոկտեմբերի 1918 թ.։

3 Մի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4047, դ. 447, ց. 9, թ. 1—4։

ված մի ավազակային խումբ էր»[1]։ Այս վայրագություններից հուզված Կոթի գյուղացիները մոտ 200 հոգուց բաղկացած զինված ջոկատ են կազմում և վրեժ-ռում զինաթափել զորամասը։

Բազմաթիվ են դեպքերը, երբ գյուղացիները կառավարությանն ուղղված անպատասխան դիմումների հարցերը լուծում էին «ինքնագլուխ»՝ խոշոր կալվածքներից քշելով կալսալառումներին և կալվածատերերին, զավթում էին հողերը և բաժանում իրար մեջ։ Այդպես են վարվել Ալեքսանդրապոլի գավառի Ղազանչի, Պարնի, Թափադոլակ, Ղարաքիլիսայի գավառի Թափանլի, Արջուտ, Դարպաս, Դիլիջանի գավառի Աչառու, Լոռվա Քյորփալու, Այրում, Լճկաձոր և բազմաթիվ այլ գյուղերի գյուղացիներ։

Գնալով գյուղացիության դրությունը վատթարանում էր ոչ միայն հողազրկության, այլև անընդհատ աճող տուրքերի պատճառով։ Լոռվա «չեզոք գոտում» գյուղացիներից գանձվող հարկերի քանակը հասնում էր 14-ի։ Գյուղային հարկեր էր տալիս անասունների, վարելահողի, խոտհարքերի համար։ Գյուղացուց էր գանձվում գավառի և գյուղի բոլոր փոքր ու մեծ պաշտոնյաների աշխատավարձը[2]։

Ամբողջ երկրում փոքրիկ հողակտոր ունեցող գյուղացիների մեծ մասը լծկան ու սերմացու չունենալու պատճառով զրկված էր այն մշակելու հնարավորությունից։ Նրանք ստիպված էին լինում կուլակներից սերմացու վերցնել և բերքի կեսը տալ նրանց։ Իսկ երբ բացառված էր նաև այդ հնարավորությունը, հողակտորը կամ մնում էր անմշակ կամ վաճառվում չնչին գնով։ Գյուղացիները ստիպված չնչին վարձատրությամբ աշխատում էին կուլակների մոտ։ Բատրակների թիվը գնալով աճում էր։ Դաշնակցական կառավարությունը ոչ միայն չէր հոգում չքավոր գյուղացիությանն այս վիճակից դուրս բերելու մասին, այլև նպաստում էր կուլակների ու մյուս շահագործողների հարստացմանը։

«Հողային խնդիրը Լոռում,— գրում է «Լոռվա գյուղացիության ձայնը»,— էն կետի վրա է կանգնած, ինչ հին բռնապետական ռեժիմում... մեզ մոտ գործում է «անգլիական» չարաբաստիկ օրենքը, թե հողային սեփականությունը սրբություն է...»։

Դիմելով գյուղացիությանը, թերթը գրում է. «Հողային էս անօրինության, էս անարխիային պետք է վերջ դնել և վերջ դնողը ինքը ժողովուրդը պիտի լինի, աշխատավոր գյուղացիության ներկայացուցիչները, որոնք գիտակցելով Ռուսաստանի մեծ հեղափոխության նվաճումները, էդքան հեշտությամբ ձեռքից չպիտի բաց թողնեն բանվոր-գյուղացու արյունով գնված իրավունքները»[3]։

Պահպանվել են դաշնակցական կառավարության այն որոշումները, որոնցով սերմացու է «բաժանվել» գյուղացիությանը։ Սակայն ինչպե՞ս է բաժանվել։ Էջմիածնի գավառի Գեղուլու գյուղի գյուղացիները, օրինակ դիմում են Պառլամենտին՝ գյուղացիությանը սերմացուով ապահովելու համար։ Դիմումում նշվում է, որ սովից և հիվանդություններից մահացել է գյուղի բնակչության

1 «Առաջին մասսայական հեղափոխական շարժումները Հայաստանում», էջ 159։

2 Տե՛ս «Լոռվա գյուղացու ձայնը», 1 փետրվարի 1920 թ.։

3 Նույն տեղում։

70 տոկոսը, որ մնացածներն էլ կկոտորվեն սովից, եթե կառավարությունը նրանց սերմացու չտա։ Գյուղին պատկանող 850 դեսյատին հողից, ասված է այնուհետև այդ դիմումում, ցանվել է միայն 45 դեսյատինը։ Պառլամենտական հանձնաժողովը որոշում է ընդունում «բավարարել գյուղացիների խնդրանքը» և ապա դուրս է գրվում սերմացու, որը բաժանվում է... հանձնաժողովի տեղամասերի միջև[1]։

Դաշնակցական Պառլամենտը 1920 թվականի ամռանը որոշում ընդունեց «հողային հատուկ մարմիններ» մասին[2], որով նախատեսվում էր պետականացնել մասնատիրական, վանքապատկան, վակուֆային, եկեղեցական, լքյալ հողերը և «կարգավորել հողային հարաբերությունները»։ Այդ օրենքի 4-րդ կետում նշվում էր, թե իրենց գործունեության ընթացքում հողային հատուկ մարմինները ղեկավարվելու են... Անդրկովկասյան կոմիսարիատի և սեյմի հրատարակած օրենքներով։ Մինչդեռ այդ օրենքները բխում էին ցարական կառավարության ընդունած օրենքներից։

Գյուղատնտեսության և արդյունաբերության անկումը դաշնակցականների և անգլո-ամերիկյան իմպերիալիստների տիրապետության շրջանում կատաստրոֆիկ չափերի հասավ։ Բավական է նշել, որ ցանքատարածությունները 1913 թվականի 345700 հեկտարից 1919 թվականին իջնում է 82700 հեկտարի։ Գյուղատնտեսության համախառն արտադրանքը կրճատվեց մոտավորապես 6 անգամ[3]։

Օրըստօրե բարձրանում էին գյուղատնտեսական մթերքների գները։ Գյուղացու չնչին ունեցվածքը թալանվում էր դաշնակցական խմբապետների, զինվորների և պաշտոնյաների կողմից։ Ահա թե ինչ է նշվում Դարալագյազի գավառի առաջին մասի կոմիսարի 1920 թվականի օգոստոսի 17-ին գավառապետին ներկայացված զեկուցագրում. զինվորները «ազատորեն ինքնիշխան և անխնա կերպով մտնում են այգիներն ու բոստանները, քաղում չհասած մրգերն ու ոտի տակ տալիս բանջարեղենները, բավական չէ, որ իրենց ձեռքով փեթակներից մեղր են հանում, վերցնում գյուղացիներից ցախն ու զանազան իրեր և չեն վճարում ոչ մի կոպեկ... մի խոսքով միանգամայն սանձարձակ զինվորությունը, խլում ու հափշտակում է գյուղացուց նրա ամեն ինչը՝ կանգ չառնելով ոչ մի միջոցի առջև...»[4]։

Դաշնակցական Հայաստանի ֆինանսական վիճակը ևս վկայում էր երկրի քաոսային դրության մասին։

Երկրում ստեղծվեց ինֆլյացիա։ Դաշնակցական կառավարությունը հսկայական թվի հասցրեց չերաշխավորված թղթե դրամի արտադրությունը։

1919 թվականի օգոստոսի 1-ից մինչև տարվա վերջը շրջանառության մեջ կար 362 մլն. ռուբլու չեկ։ 1920 թվականի հունվարի 1-ից ապրիլի 1-ը բաց

---

1 Տե՛ս «Առաջին մասսայական հեղափոխական շարժումները Հայաստանում», էջ 110, 155։

2 Տե՛ս նույն տեղում, էջ 109։

3 Տե՛ս «Социалистическое строительство Армянской ССР. 1920—1940», статистический сборник, Ереван, 1940, էջ 47։

4 «Առաջին մասսայական հեղափոխական շարժումները Հայաստանում», էջ 149—150։

Թողնվեց 832 մլն. ռուբլի, իսկ ապրիլի 1-ից մինչև նոյեմբերի 1-ը՝ 7 մլրդ. 32 մլն. ռուբլի: Խիստ չափով արժեքազրկվեց թղթե դրամը:

Այսպես, եթե 1920 թվականի մարտին տաճկական մեկ ոսկե լիրը արժեր 3000 ռ. դաշնակցական կառավարության չեկերով, ապա նա բարձրացավ՝

ապրիլին	*—4100*
մայիսին	*—6700*
հունիսին	*—6200*
հուլիսին	*—10000*
օգոստոսին	*—13000*
սեպտեմբերին	*—23000*
հոկտեմբերին	*—30000*
նոյեմբերի սկզբին	*—90000*
նոյեմբերի վերջին	*—150000*[1]:

Երկրում տիրող ծանր դրության մասին աշխատավորների հազարավոր դիմումներն ու բողոքները, դաշնակցական կառավարության դեմ կազմակերպված ելույթներն ու ընդվզումները ստիպեցին կառավարությանը զգաստանալ:

Դարալագյազի և Նոր Բայազետի գավառների վիճակն ուսումնասիրելու համար 1919 թվականի նոյեմբերին Պառլամենտը մի հանձնաժողով է կազմում:

Հանձնաժողովի առջև խնդիր է դրվում՝ Պառլամենտին ներկայացնել զեկուցագիր այդ գավառներում ստեղծված դրության մասին և միջոցներ մշակել հասունացող գյուղացիական ապստամբությունը կանխելու համար: Հանձնաժողովը Նոր Բայազետում ուսումնասիրում է հողային հարցը, պարենավորման, բժշկասանիտարական և կուլտուրական վիճակը, իշխանության տեղական մարմինների ու զորքերի գործունեությունը և 1920 թվականի հունվարին Պառլամենտին ներկայացնում իր զեկուցագիրը:

Անդրադառնալով պարենավորման վիճակին, զեկուցագրի հեղինակները գրում են, որ այն «ընդհանուր առումով ավելի քան հուսահատական է»: Նոր Բայազետի գավառի 72033 բնակիչներից 29918-ը բացարձակ չքավորներ են համարված, իսկ 25791-ը, որոնք զեկուցագրում ներկայացվում են որպես միջակներ — նրանք են, որոնք «մի քանի շաբաթվա հաց ունեն»[2]:

Ժամանակի դաշնակցական թերթերում հանդիպում են հաղորդագրություններ գյուղացիությանը կառավարության կողմից ցույց տրվող պարենային «օգնության» մասին: Վերոհիշյալ զեկուցագիրը լույս է սփռում այդ «օգնության» վրա: «Մի աղաղակող երևույթ էլ պիտի մատնանշել պարենավորման գործի մեջ,— ասված է զեկուցագրում,— դա ընդհանրապես, բոլոր գյուղական վեքիլների կամ պարենավորման կոմիտեների հանցավոր գործունեությունն է: Նախ պիտի ընդգծել, որ վեքիլները բոլոր գյուղերում անխտիր ընտրվում են բռունցքներից և ունևորներից, որ և ամենաչարաչար կերպով շահագործում են իրենց պաշտոնը: Նրանք են կազմում չքավորների ցուցակը և դա շահատակու-

---

1 *Տե՛ս Մ.Ի. Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 4033, ց. 6, գ. 293, կ. 6, թ. 29:*

2 *«Առաջին մասսայական հեղափոխական շարժումները Հայաստանում», էջ 127—148:*

բյունների մի՝ ահագին աղբյուր է նրանց համար»[1]: Այնուհետև նշվում է, որ աղքատների համար ստացված հացը գյուղի վճռիչները, պարենավորման կոմիտեների անդամներն ու զորքանները բաժանում են իրենց մեջ: «Մի ավելի աղաղակող դեպքում պարենավորման պահեստները և նրանց կառավարիչներն են անտեսվում, սկսած գուցե Բաթումից մինչև Դիլիջան, Նոր Բայազետ, Ղարանլուղ, Դարալագյազ: Վերցնում են առպրակներից մաքուր ալյուրը և տեղը դնում ավազ, հողակամ քար, այն էլ ոչ թե տասնյակ փթերով, այլ հարյուրավոր»[2]:

Տեղական ադմինիստրացրայի և զորքերի ապօրինությունները ամբողջ Հայաստանում սիստեմի էր վերածված: «Ժողովուրդը,— ասված է այդ առիթով դեկուցագրում,— ուղղակի հեծում է «աբոզի» ծանրությունից, մանավանդ աղքատ ժողովուրդը, որովհետև գլխավորապես նրա կենդանիներն ու սայլերն են արող հանվում: Դուք չեք կարող երևակայել, թե ինչ դժվարությամբ է ժողովուրդն արող տալիս... եթե դրա հետ միասին ի նկատի ունենանք, որ հաճախ պինվորականներն իրենք են գյուղերն ընկնում և արոզ հանում, այն էլ շատ անչում 5-ի տեղ 15-ը պահանջելով և 10-ից կաշառք առնելով ու միայն 5-ը վերցնելով, այն ժամանակ դուք կհամոզվեք, թե ինչպիսի զգացմունքով պիտի լցված լինի մեր ժողովուրդը դեպի զորքը... Ավելացրեք և այն, որ զորքն ու պինվորականները գյուղ մանելով հափշտակում են ժողովրդից ինչ ուզում են՝ ձի, ցորեն, դարի, թամբ, ոչխար, խոտ և այլն, ապա պատկերը միանգամայն հասկանալի կլինի: Նոր Բայազետի գավառում ժողովուրդը սոսկումով ու անհծքով է հիշում մի շարք պինվորականների անունները, որոնք միայն նախատինք են բերում մեր բանակին և ուրիշ ոչինչ»[3]:

Ժողովուրդը քաղցած էր ու մերկ: «Այս բոլորից հետո,— կարդում ենք զեկուցագրում,— հասկանալի է, թե ինչ ծանր վիճակ պիտի ապրի Նոր Բայազետի գավառի ժողովուրդը... Համաձայն գավառական կոմիսարիատի վիճակագրության, գավառի 41 գյուղերում ծնվածների ընդհանուր թիվն է 2029, իսկ մեռածներինը՝ 3608: Նշանակում է՝ մեռածները ծնվածներից ավելի են 1579-ով... Նույն 41 գյուղում 1919 թվի սեպտեմբեր-հոկտեմբեր և նոյեմբեր ամիսների ընթացքում սովից մեռել են 624 հոգի»:

Դաշնակցական պատասխանատուների զեկուցագիրը անառարկելի է դարձնում այն փաստը, որ ժողովուրդը այս վիճակում երկար ապրել չէր կարող և որ աշխատավոր գյուղացիների հեղափոխական ելույթները «դրսից» հրահրվող ելույթներ չէին:

Երկրի վիճակի նույն նկարագրությանն ենք հանդիպում նաև դաշնակցական կառավարության նախագահին ուղղված Կարսի նահանգապետ Ս. Ղորղանյանի զեկուցագրում: Խոսելով պաշտոնյա անձանց կողմից կատարվող թալանի ու կամայականությունների մասին նա գրում է. «մարդիկ վարակված են թալանելու, ապահովվելու և ապա հեռանալու տենչով... մարդկանց մեջ բթացել է երկյուղը դեպի քրեական պատիժը... ոճիրը պարփակում է իր մեջ քաղաքական, տնտեսական և իրավական բացատրություններ և այդ բարդ ու խը-

1 «Առաջին մասսայական հեղափոխական շարժումները Հայաստանում», էջ 127—145:

2 Նույն տեղում:

3 Նույն տեղում:

ճրճված պայմաններումն է մեր օրերի քրևական տրամադրությունների գաղտնիքը...

Բացի այդ,— ավելացնում է նա,— գաղտնիք չէ այն, որ պետական հայացք, պետական աշխարհայեցողություն մենք չունենք։ Մեզանում կարծում են, որ Հայաստանը միայն հայերի համար է և ոչ թե հավասար բոլոր հայաստանցիների համար»։ Ընդգծելով տիրող ողորմելի դրությունը նա եզրակացնում է. «Չգիտեմ ինչ է մտածում այդ մասին կենտրոնական կառավարությունը. ես երկրի դրությունը կատաստրոֆիկ եմ համարում»[1]։

Դաշնակցական Հայաստանում ավելի լավ վիճակում չէր արդյունաբերությունը, որի համախառն արտադրանքը 1919 թվականին 1913 թվականի համեմատությամբ 20,7 միլիոն ռուբլուց իջնում է 1,7 միլիոն ռուբլու (1926—1927 թվականների անփոփոխ գներով հաշված), այսինքն կրճատվում է ավելի քան 12 անգամ։

Առաջին համաշխարհային պատերազմի շրջանում աշխատավոր ձեռքերի մեծ մասը զորակոչվում է ցարական բանակ։ Հիմնականում դրանով պետք է բացատրել այն փաստը, որ արդեն 1915 թվականին Երևանի նահանգի բանվորների թիվը կրճատվում է ավելի քան կեսով, իսկ 1919 թվականին այն խիստ նվազում է։ Փակվել էին արդյունաբերական համարյա բոլոր ձեռնարկությունները, հանքերը։ Միայն Ջանգեզուրում հանքերը փակվելու պատճառով այստեղ աշխատող հարյուրավոր բանվորներ ցրվում են գյուղերը, կամ աշխատանք դտնելու համար դիմում արտագաղթի։

Բանվորության վիճակը դաշնակցական Հայաստանում չափազանց ծանր էր։ Չնայած 8-ժամյա բանվորական օրվա մասին օրենքի, մարդիկ աշխատում էին մինչև 15 ժամ, սակայն ստանում չնչին վարձատրություն, ինչպես խոստովանում է դաշնակցական խնամատարության և աշխատանքի մինիստրն իր 1919 թվականի օգոստոսի 28-ի «Ազդ»-ում։ Համաշխարհային պատերազմն ավարտվել էր, սակայն հայ աշխատավորը փաստորեն շարունակում էր մնալ պատերազմական վիճակի մեջ՝ արյուն թափելով մերթ թուրքական զավթիչների դեմ մղվող պայքարում, մերթ Անդրկովկասի բուրժուա-նացիոնալիստական կուսակցությունների հրահրած անընդմեջ ազգամիջյան պատերազմներում։ Աշխատասեր ժողովուրդը մասսայական գործազրկության դառնությունն էր ճաշակում։

Դրան պետք է ավելացնել նաև այն, որ 1919 թվականին Հայաստանում գաղթականությունը մեծ թիվ էր կազմում, որոնք ոչ միայն գործազուրկ էին, այլև անօթևան, մերկ ու քաղցած։

Պաշտոնական ոչ լրիվ տվյալների համաձայն գաղթականության թիվը 1919 թվականի փետրվարին ըստ շրջանների կազմում էր.

Ախտայում	—23.750 հոգի
Էջմիածնում	—42.600
Աշտարակում	—12.880
Նոր Բայազետում	—27.923

1 «Առաջին մասսայական հեղափոխական շարժումները Հայաստանում», էջ 129, 131, 134։

Սիսիանում	—22.890
Ալեքսանդրապոլում	—10.000
Երևանում	—31.700
Դիլիջանում	—12.000
Ղարաքիլիսայում	—9.000

Մեծ թվով գաղթականներ կային նաև Հայաստանի մյուս շրջաններում։ Գաղթականության ընդհանուր թիվը կազմում էր 263 հազ. 393 մարդ[1]։

Դաշնակցական կառավարության կողմից քաղաքներում ստեղծված աշխատանքի կոմիսարիատները զբաղված էին ոչ թե գործազուրկներին տեղավորելու կամ քայքայված ձեռնարկությունները վերականգնելու գործով, այլ ձեռնարկատերերի և բանվորների վեճերի քննարկմամբ, որոնք մեծ մասամբ լուծվում էին, իհարկե, հօգուտ ձեռնարկատերերի։

1918—1920 թվականներին Հայաստանում արհեստակցական միությունների ղեկավարությունը գտնվում էր մեծ մասամբ դաշնակցականների ձեռքում, որոնք ամեն ջանք գործ էին դնում արհեստակցական միությունները վերածել կառավարության, միևնույնն է, թե դաշնակցական բյուրոյի կցորդի։ Եվ երբ այդ չէր հաջողվում, դաշնակցականները ցրում էին անհնազանդ արհմիությունները։ Այդպիսի փորձ է կատարում, օրինակ, երկաթուղու ծառայողների «Հայ հեղափոխական դաշնակցության Կենտրոնական կոմիտեն», երբ վերջինս համոզվում է, որ երկաթղուղու արհեստակցական միությունները դադարում են իրենց ենթարկվել։

1920 թվականի ամռանը կառավարությանը ներկայացրած մի ընդարձակ զեկուցման մեջ[2] դաշնակցության վերոհիշյալ Կենտրոնական կոմիտեն «բուժիչ» միջոցներ է առաջարկում՝ երկաթուղում ստեղծված վիճակը բարելավելու համար։ Ահա այդ միջոցներից մի քանիսը. «Հեռացնել բաժինների ու սպասավորությունների պետերից նրանց, որոնց ցույց կտա կոմիտեն», «հեռացնել երկաթուղուց բոլոր կասկածելի, անբարեհույս... բանվորներին ու ծառայողներին», «հիմնել ուժեղ վերահսկողություն բոլոր մասերում»։

Սանր էր նաև մյուս ձեռնարկություններում աշխատող բանվորների վիճակը։ 1919 թվականի հոկտեմբերին գործադուլ են հայտարարում Ալեքսանդրապոլի տպարանների բանվորները, որոնք պահանջում էին ավելացնել աշխատավարձը՝ միջին հաշվով 150 տոկոսով։ Տպարանատերերը հրաժարվում են բավարարել բանվորների պահանջները՝ հայտարարելով, թե մտադիր են փակել տպարանները։ Տպարանատերերի համառությունը չի կոտրում բանվորների կամքը։ Գործադուլը տևում է երեք շաբաթ և արձագանք գտնում այլ ձեռնարկություններում աշխատող բանվորների մեջ։ Կառավարությունն, զգալով ամբողջ վտանգը, դիմեց խորամանկ քայլի. տպարանատերերից գնեց տպարանները, հայտարարելով, թե դրանք ռեկվիզիցիայի են ենթարկվել։ Իրերի վիճակը փոխվում է. տպագրիչների արհեստակցական միությունը փոխհամաձայնության մեջ է մտնում կառավարության հետ և որոշ չափով բարձրացվում է տպարանների բանվորների աշխատավարձը։

1 Տե՛ս «Առաջին մասսայական հեղափոխական շարժումները Հայաստանում», էջ 78։

2 Տե՛ս նույն տեղում։

Ոգևորված տպարանային բանվորների չնայած չնչին, բայց ձեռք բերված նվաճումներով, դեկտեմբերի կեսերին գործադուլ են հայտարարում փոստ-հեռագրական բանվորներն ու ծառայողները: Պահանջը նույնն էր՝ բարձրացնել բանվորների ու ծառայողների աշխատավարձը, կրճատել աշխատանքային օրվա տևողությունը: Բանվորներն ընտրում են գործադուլային հանձնաժողով, որը որոշում է ընդունում գործադուլն սկսել դեկտեմբերի 14-ին: Սակայն պետական ծառայողների արհեստակցական միության կենտրոնական վարչությունը դավաճանական դիրք է բռնում: Սկզբում նա խորհուրդ է տալիս գործադուլավորներին այն հետաձգել մինչև դեկտեմբերի 16-ը, «որպեսզի կառավարությունն ու Պառլամենտը հնարավորություն և ժամանակ ունենան պահանջները բավարարելու», ապա առաջարկում է պահանջները կրճատել 50 տոկոսով: Գործադուլը, այնուհանդերձ, տեղի է ունենում, բայց վարչության բռնած դավաճանական դիրքը օգնում է կառավարությանը գործադուլավորներին «բավարարել» ընդհանուր խոստումներով: Իսկ վարչությունը, որտեղ դաշնակցականներն էին նստած, շտապում է հայտնել կառավարությանը, որ նա «ամենևին չի բաժանում հիշյալ ծառայողների արած քայլը գործադուլի վերաբերմամբ և ցավ է հայտնում կատարված գործադուլի նկատմամբ, որը արվել է անկախ վարչության կամքի, հավանության և գիտության»:

1919—1920 թվականներին մի շարք գործադուլներ են տեղի ունենում Ալեքսանդրապոլի դեպոյում, Երևանի գարաժում, տպարաններում և պետական այլ հիմնարկներում:

Դաշնակցականների հակաժողովրդական ռեակցիոն քաղաքականությունը խոր զայրույթ է առաջ բերում և՛ գյուղացիական լայն մասսաների, և՛ բանվորների ու ինտելիգենցիայի և՛ բնակչության այլ խավերի մեջ: Գնալով ավելի է խորանում այն անդունդը, որ գոյություն ուներ կառավարության և աշխատավոր մասսաների միջև:

Բոլշևիկյան կազմակերպությունների ղեկավարությամբ բանվորներն ու չքավոր գյուղացիները հանդես էին գալիս դաշնակցականների ռեակցիոն քաղաքականության դեմ, պայքարում երկրի ազատագրման համար:

2. ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Առաջին համաշխարհային պատերազմում գերմանական բլոկի կրած պարտությունից հետո Անդրկովկասում փաստորեն տիրապետում են Անտանտի պետությունները: Դեռևս 1918 թվականի ամռանը անգլիական իմպերիալիստները ձեռնարկեցին իրենց առաջին զինված ինտերվենցիան Անդրկովկաս: Չնայած նրանց հաջողվեց Անդրկովկասի հակահեղափոխական ուժերի օգնությամբ պարտության մատնել Բաքվի հերոսական կոմունան, բայց իմպերիալիստների վինված բանդաները մինչև վերջ չկարողացան ճնշել Անդրկովկասի ժողովուրդների դիմադրությունը:

1918 թվականի նոյեմբերին անգլիական զորքերը, այս անգամ արդեն դաշնակիցների դրոշով, ներխուժեցին Անդրկովկաս: Ե՛վ ԱՄՆ-ը, և՛ Անգլիան ու

Նրանսիան ձգտում էին իրենց տիրապետությունը հաստատել Անդրկովկասում՝ այն ոչ միայն Սովետական Ռուսաստանի դեմ օգտագործելու, այլև Մերձավոր ու Միջին արևելքում իրենց դիրքերն ամրապնդելու համար։

Այդ ժամանակ օտարերկրյա իմպերիալիստները հակասովետական ուժերը համախմբելու ճկուն քաղաքականություն էին վարում։ Նրանք հենվում էին առաջին հերթին ռուսական սպիտակ-գվարդիականության վրա։ Մի կողմից սիրաշահելով Անդրկովկասի բուրժուական կառավարություններին, մյուս կողմից ամեն կերպ ձգձգում էին այդ կառավարությունների ճանաչումը, որպեսզի չհակադրվեին Դենիկինի մեծապետական ձգտումներին։ Արևմտյան իմպերիալիստներն ամեն ջանք գործ էին դնում ստիպելու Անդրկովկասի կառավարություններին ակտիվ կերպով օգնելու Դենիկինին Սովետական Ռուսաստանի դեմ նրա մղած պայքարում։ Ահա թե ինչու ձգտելով ապահովել Անդրկովկասի կառավարությունների արևմտյան օրիենտացիան, դաշնակիցները միաժամանակ հակասովետական բլոկն ամրապնդելու համար ժամանակավորապես հետին պլան էին մղում այն հակասությունները, որ գոյություն ունեին Դենիկինի և դաշնակցականների, մենշևիկների ու մուսավաթականների միջև։

Դենիկինը ևս հասկանում էր տվյալ էտապում Անդրկովկասի բուրժուական կառավարությունների հետ հարաբերությունների բարելավման անհրաժեշտությունը։ 1918 թվականի դեկտեմբերին Դենիկինը նամակով դիմում է դաշնակցական կառավարությանը՝ կոչ անելով հավատարիմ մնալ «միասնական ու անբաժան» Ռուսաստանի շահերին։ Դեկտեմբերի 13-ին դաշնակցական Պառլամենտը քննարկում է այդ նամակը և հանձնարարում կառավարությանը «պատասխան ողջույն ուղարկել Դենիկինին»[1]։

Այսպես, բացահայտ է դառնում դաշնակցականների կապը Դենիկինի հետ, որի հաղթանակը կնշանակեր նախ և առաջ «անկախ» Հայաստանի հանրապետության ոչնչացում։ Բայց դաշնակցականներն այնքան էին կուրացած հակասովետական մոլուցքով, որ պատրաստ էին գործարքի մեջ մտնել ցանկացած ուժի հետ, եթե այն պայքարում էր Սովետական Ռուսաստանի և երկրամասի հեղափոխական շարժումների դեմ։

Անդրկովկասը նվաճելու համար հատկապես լուրջ պայքար էր մղվում ԱՄՆ-ի ու Անգլիայի իմպերիալիստների միջև։ Անդրկովկասում իրենց անբաժան տիրապետությունը հաստատելու նպատակով անգլիական իշխանությունները ԱՄՆ-ից գաղտնի բանակցություններ են մտնում Անդրկովկասի հանրապետությունների հետ, խոստանալով Փարիզի կոնֆերանսում ճանաչել նրանց անկախությունը, եթե վերջիններս ընդունեն անգլիական գերիշխանություն։

Իրենց իշխանությունն ամրապնդելու և Անդրկովկասում հակախմպերիալիստական շարժումը ճնշելու նպատակով անգլիական իմպերիալիստները ոչ միայն խորացնում էին անդրկովկասյան ժողովուրդների հակասությունները, այլև բոլոր միջոցներով նպաստում արդեն մանրատված երկրամասը էլ ավելի փոքր միավորների վերածմանը։ Դա անգլիական իմպերիալիստների «բաժանիր որ տիրես» տրադիցիոն քաղաքականության կիրառումն էր։ Երկրամասը բաժանելով մանր մասերի, անգլիական իմպերիալիստներն այդ վայրերում

1 «Խոսք», 20 դեկտեմբերի 1918 թ.։

հիմնում էին իրենց ժամանակավոր գեներալ-նահանգապետությունները (Կարսում, Բաթումում և այլ վայրերում) կամ ստեղծում «չեզոք գոտիներ»։

Բորչալուի գավառի համար 1918 թվականի դեկտեմբերին եղբայրասպան պատերազմ է ծագում Հայաստանի և Վրաստանի միջև։ Միջամտելով այդ պատերազմին անգլիական իմպերիալիստներն առաջարկում են վիճելի շրջանը հայտարարել «չեզոք գոտի», որը կառավարվելու էր անգլիական «նահանգապետի» կողմից։ «Չեզոք գոտի» մտցվեցին անգլիական զորքեր։

Ավելին, հրահրելով ազգամիջյան կոտորածներ, անգլիական իմպերիալիստները դաշնակից երկրների անունից հանդես էին գալիս միջնորդի դերում, չմոռանալով սաստել Անդրկովկասի հանրապետությունների կառավարություններին, որ իրենց՝ անգլիացիների որոշումները վերջնական են և այդ մասին դաշնակից տերությունների կառավարությունները չպետք է իմանան։ Հատկանշական է այդ տեսակետից անգլիական օկուպացիոն զորքերի հրամանատարության դիրքը հայ-ադրբեջանական սահմանային վեճերում։ 1919 թվականի փետրվարին անգլիական գեներալ Ուոկերը ժամանում է Երևան։ Դաշնակցական կառավարության վարչապետ Քաջազնունու հետ ունեցած հանդիպման ժամանակ նա առաջարկում է իր միջնորդությունը՝ հայ-ադրբեջանական սահմանային վեճերը լուծելու համար, զգուշացնելով, որ իր որոշումը պետք է ընդունվի անառարկելիորեն և Փարիզի կոնֆերանսում ոչ ոք չպետք է իմանա այդ մասին[1]։

Չնայած ձեռնարկած միջոցներին, անգլիական իմպերիալիստների անջատ գործողությունները դաշնակիցների համար չմնացին և չէին էլ կարող մնալ գաղտնի։ ԱՄՆ-ը և Ֆրանսիան իրենց դիրքերը Անդրկովկասում ամրապնդելու համար դիմեցին անջատ գործողություններին։ Այդ նպատակով Վրաստանում ֆրանսիական միսիայի ղեկավար գնդապետ Շարդինեն իր կառավարության հանձնարարությամբ բանակցություններ սկսեց Անդրկովկասի հանրապետությունների կառավարությունների հետ, առաջարկելով «գաղտնի նախագիծ Անդրկովկասը Շվեյցարիայի նման մանր նահանգների վերածելու մասին, որի մայրաքաղաքը պետք է լինի ազատ քաղաք Թիֆլիսը»։ Այդ նահանգները պետք է դրվեին Ֆրանսիայի հովանավորության տակ։ Ձգտելով ստանալ դաշնակցականների համաձայնությունը, ֆրանսիական միսիան լայն խոստումներ տվեց նրանց՝ հայկական հարցը Փարիզի կոնֆերանսում դաշնակցականների պահանջների ոգով պաշտպանելու մասին[2]։

1919 թվականի հունվարի սկզբներին Տրապիզոնում բնակվող Ֆրանսիայի փոխ-հյուպատոս լ. Լեպիսյերը Բաթումում գաղտնի տեսակցություն է ունենում հայկական կառավարության ներկայացուցիչների հետ։ Նախապես Լեպիսյերը բացատրում է, թե ինքը ստիպված է այս տեսակցությանը տալ գաղտնի բնույթ, որովհետև Բաթումը գտնվում է անգլիական հրամանատարության հրամայողության տակ։ Ֆրանսիական փոխ-հյուպատոսը համոզում է դաշնակցական կառավարության ներկայացուցիչներին, որ «եթե հայկական կառավարությունը դիմի ֆրանսիական կառավարությանը օգնության խնդրով և ցանկանա

---

1 Տե՛ս ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 99, գ. 112, թ. 48—49։

2 Տե՛ս ЦГАОР и СС СССР, ф. 446, э. 2, д. 35, л. 51։

Ֆրանսիական ազդեցությունը Հայաստանի վրա, ապա Ֆրանսիան կանի ամեն ինչ Հայաստանի համար»։

1919 թվականի մարտին Փարիզում նման առաջարկ է արվում նաև Ահարոնյանին։ Հայկական հարցում խոշոր տարաձայնություններ են առաջ գալիս Անգլիայի և ԱՄՆ-ի միջև։ Ամերիկյան իմպերիալիստների գործողությունները Անդրկովկասում, որոնք ուղղված էին անգլիական տիրապետության դեմ, զգալիորեն գրգռում են անգլիացիներին։ Դենիկինի գլխավոր շտաբի հետախուզական մարմինների տվյալներով այդ ժամանակաշրջանում անգլիացիներին մեծ անհանգստություն էր պատճառում Անդրկովկաս ժամանած «ամերիկյան օգնության միսիայի» գործունեությունը, որը ղեկավարում էր բժիշկ Մեյնը։ Այդ միսիայի անդամներն իրականում ԱՄՆ-ի գլխավոր շտաբի հետախուզական բաժնի սպաներ էին։ Դենիկինյան հետախուզության տվյալներով, ամերիկյան այդ միսիան Անդրկովկասում վարում էր ինչպես զուտ ռազմական, այնպես էլ քաղաքական և տնտեսական բնույթի «չափազանց եռանդուն» և գաղտնի հետախուզական աշխատանք[1]։

Այդ պատճառով Անգլիան բոլոր միջոցները ձեռք է առնում՝ Անդրկովկասից անգլիական զորքերը դուրս բերելուց հետո՝ այն իտալական զորքերով փոխարինելու համար։ Եվ որովհետև ԱՄՆ-ը այդ ժամանակ հնարավորություն չուներ իր սեփական զորքերն ուղարկել Անդրկովկաս և «վտանգ» կար, որ դաշնակից զորքերի դուրս բերումը երկրամասից կարող է ուժեղացնել բոլշևիկների ազդեցությունը, նա ևս համաձայնվում է այդ առաջարկին։ Դաշնակիցներն առաջարկում են և իտալական կառավարությունը տալիս է իր համաձայնությունը՝ 40 հազարանոց զորք ուղարկել Անդրկովկասը օկուպացնելու համար։ Սակայն իտալական կառավարությունը չի կարողանում իր խոստումը կատարել՝ երկրում ծագած բանվորական շարժման և ներքին ծանր դրության հետևանքով։

Անգլիական իմպերիալիստները չկարողացան այնուամենայնիվ երկար ժամանակ իրենց ձեռքում պահել Անդրկովկասը։ Անտանտի առաջին արշավանքի ձախողումը, Անդրկովկասի ժողովուրդների պայքարը գաղութարարների դեմ, անգլիական օկուպացիոն զորքերում առաջ եկած խլրտումները և անգլիական բանվոր դասակարգի պայքարը հակասովետական ինտերվենցիայի դեմ, ազգային-ազատագրական շարժումները Մերձավոր ու Միջին արևելքի երկրներում, հակասություններն իմպերիալիստական տերությունների միջև և մի շարք այլ պատճառներ ստիպեցին անգլիական իմպերիալիստներին՝ իրենց զորքերը հետ կանչել Անդրկովկասից։

Անգլիական զինված ինտերվենցիայի ձախողումը Անդրկովկասում չէր նշանակում, որ անգլիական իմպերիալիստները հրաժարվեցին Հայաստանի և Անդրկովկասի նկատմամբ իրենց ունեցած զավթողական նկրտումներից։ Նրանք փորձում էին դիվանագիտական ճանապարհով ապահովել իրենց գերիշխանությունը Անդրկովկասում։ Սակայն ճանապարհին կանգնած էին ավելի հզոր դիշատիչներ՝ ամերիկյան իմպերիալիստները, որոնք օգտագործելով ստեղծված իրադրությունը, ակտիվացրել էին իրենց գործունեությունը Հայաստանում։

---

1 *Տե՛ս* ЦГАОР и СС СССР, *ф. 446, д. 2, л. 25, р. 133։*

ԱՄՆ-ի իմպերիալիստները նույնպես ցանկանում էին իրենց տիրապետությունը հաստատել Անդրկովկասում և Մերձավոր արևելքում, որն իրականացնելու մղումով նրանք պլանավորում էին Հայաստանը հենարան դարձնել ոչ միայն Անդրկովկասը, այլև Թուրքիան, սևծովյան նեղուցների հետ միասին գավթելու համար։ Այս նպատակով դեռևս 1918 թվականի դեկտեմբերի 10-ին ԱՄՆ-ի Սենատը առաջարկեց Հայաստանը վերցնելով ԱՄՆ-ի հովանավորության տակ՝ պաշտպանել դաշնակիների պահանջները։ Այդ որոշման մեջ մասնավորապես ասվում էր, թե Սենատի կարծիքով Հայաստանը պետք է անկախ լինի և հույս է հայտնում, որ խաղաղության կոնֆերանսը համապատասխան միջոցներ կձեռնարկի Հայաստանին օգնություն ցույց տալու և անկախ հանրապետություն ստեղծելու ուղղությամբ[1]։ Նման որոշում Սենատն ընդունում է նաև 1919 թվականի փետրվարի 15-ին[2]։

Իհարկե, ամերիկյան իմպերիալիստներն իրենց գավթողական նկատառումները քողարկում էին փոքր ազգերի շահերը պաշտպանելու պատրվակով։ Ահա թե ինչու նրանց ընդունած որոշումները ուղեկցվում էին հայ ժողովրդի հասցեին գովասանական խոսքերի շռայլմամբ։ Իրականում ամերիկյան իմպերիալիստների նպատակն էր պատմական Հայաստանի տերիտորիայի վրա հաստատել իրենց տիրապետությունը, հեգեմոն դերը գրավել ամբողջ Մերձավոր արևելքում։ Այդ նպատակին հասնելու համար ԱՄՆ-ի իմպերիալիստները ձգտում էին Փարիզի կոնֆերանսում ստանալ «հայկական մանդատը»։

Հայաստանում իրենց դիրքերն ամրապնդելու նպատակով ԱՄՆ-ի իմպերիալիստները ձեռնարկեցին տնտեսական էքսպանսիա։ 1919 թվականի ապրիլին «Մերձավոր արևելքում ամերիկյան օգնության կոմիտեն» պայմանագիր կնքեց դաշնակցական կառավարության հետ, որով ԱՄՆ-ը ստացավ «առավել շահավետ կողմի» իրավունքը։ Ըստ այդ պայմանագրի դաշնակցական կառավարությունը պարտավորվում էր վճարումները կատարել միայն դոլլարներով և առանց հետաձգման։ Սակայն որտեղից պետք է դաշնակցականները հայթայթեին դոլլարներ։ Պարզ է՝ նույն Ամերիկայից։ Այսպիսով, Հայաստանի արտաքին առևտուրը կախման մեջ էր դրվում ամերիկյան իմպերիալիստներից։

Այդ պայմանագիրը կնքելուց հետո, հաջորդ քայլը լինում է Հայաստանի երկաթուղիների վրա ամերիկյան վերահսկողություն սահմանելը։ ԱՄՆ-ը ձգտում էր Մերձավոր ու Միջին արևելքում ընկած երկրների զարկերակը իր ձեռքը գցել, որի մի ճյուղն էր նաև Հայաստանի երկաթուղին։

Նախապատրաստելով ռազմական ինտերվենցիա, ԱՄՆ-ի իմպերիալիստներն իրենց գաղութարարական քաղաքականությունը ծածկում էին «մարդասիրական» քողով։ Նրանք ԱՄՆ-ում կազմակերպեցին և Հայաստան ուղարկեցին զանազան «քաղաքացիական» և ռազմական միսիաներ՝ տեղում ամերիկյան մանդատը հաստատելու պայմաններ ստեղծելու համար։ Բազմաթիվ բարեգործական կոմիտեներից կարելի է հիշատակել «Մերձավոր արևելքում ամերիկայն օգնության կոմիտեն», «Կարմիր խաչի հայ-ամերիկյան կոմիտեն», «Հայաստանի անկախության ամերիկյան կոմիտեն» և այլն։

---

1 Տե՛ս „Congressional Record", հատ. 57, մասն 1, էջ 237։

2 Տե՛ս նույն տեղում, էջ 3414։

Անգլիական զինված ինտերվենցիայի ձախողումը Անդրկովկասում, կարմիր բանակի հաջողությունները ինտերվենտների դեմ մղվող պայքարում, Գերմանիայի հետ հաշտության պայմանագրի կնքման ձգձգումը, որը որոշ առումով Անգլիային ու Ֆրանսիային կախման մեջ էր պահում ԱՄՆ-ից, ազգային-ազատագրական պայքարի ուժեղացումը Մերձավոր ու Միջին արևելքում Անգլիայի ու Ֆրանսիային ստիպեցին 1919 թվականի մայիսի 14-ին, Փարիզի խաղաղության կոնֆերանսում, համաձայնվել Հայաստանի մանդատը ԱՄՆ-ին հանձնելու հետ։ Օգտվելով այս ամենից, ԱՄՆ-ը աշխուժացրեց իր գործունեությունը Հայաստանում։

Ամերիկյան կառավարող շրջանները հատկապես մեծ դեր էին հատկացնում «Հայաստանի անկախության ամերիկյան կոմիտեին» (ՀԱԱԿ), որն անմիջապես ենթարկվում էր պրեզիդենտ Վիլսոնին։

Այդ կոմիտեի նախագահ նշանակվեց Ջեյմս Ջերարդը՝ Բեռլինում ԱՄՆ-ի նախկին դեսպանը։ Կոմիտեի կազմում մտնում էին ԱՄՆ-ի նախկին պրեզիդենտ Տաֆտը, սենատոր Լոջը և ուրիշներ։ Կոմիտեի քարտուղարն էր Վ. Գարդաշյանը։ ՀԱԱԿ-ն ուներ իր «հայկական պրեսբյուրոն», որի նպատակն էր դառնալ Հայաստանում ԱՄՆ-ի գաղափարական էքսպանսիայի կենտրոնը։ Այդ բյուրոն հրատարակեց բազմաթիվ գրքույկներ, ուներ իր սեփական օրգանը։ Հրատարակված գրականության և թերթի միջոցով բյուրոն սերմանում էր այն միտքը, թե ԱՄՆ-ը վերցնելով մանդատը, ելնում է միայն ու միայն «հայ ժողովրդի շահերից»։

Սակայն այդ «անշահախնդրությունը» ՀԱԱԿ-ի գաղտնի գրագրություններում դրսևորվում է հետևյալ կերպ։ 1919 թվականի հունիսի 22-ին ՀԱԱԿ-ը նամակով դիմում է Փարիզում գտնվող ԱՄՆ-ի պրեզիդենտ Վիլսոնին՝ առաջարկելով 50-հազարանոց բանակի համար Հայաստան ուղարկել զինամթերք և հանդերձանք։ Այդ բանակը պետք է գրավեր այն տերիտորիաները, որոնք նախատեսվում էին մանդատով ԱՄՆ-ին հանձնել։ Նույն առաջարկն արվում է պետական քարտուղար Լանսինգին հասցեագրված հուլիսի 28-ի նամակում։ Իսկ օգոստոսի 14-ի նամակում առաջարկվում է Կիլիկիայից, Ամերիկայից, Կոստանդնուպոլսից և այլ վայրերից, որտեղ հայեր էին ապրում, հավաքագրել 20 հազարանոց բանակ, հանդերձավորել և որպես ամերիկյան վարձկան զինվորներ ուղարկել Հայաստան։

Որն էր նպատակը։ Ամերիկյան իմպերիալիստները ձգտում էին, հնարավորության դեպքում, տիրել Հայաստանը հայերի միջոցով։ Ինչպես դաշնակցական բանակը, այնպես էլ 20-հազարանոց վարձկանները պետք է գործեին ամերիկյան հրամանատարության ներքո։ ԱՄՆ-ի կառավարությունը ոգևորությամբ ընդունեց այդ առաջարկները և ինչպես 1919 թվականի օգոստոսի 25-ի իր ելույթում Փարիզի խաղաղության կոնֆերանսում հայտարարում է ամերիկյան ներկայացուցիչ Պոլկը՝ «հավաքագրումը կամավոր բանակի համար սկսվել էր»[1]։

Այս հարցը օգոստոսի վերջերին ԱՄՆ-ի կառավարությունը, ռազմական էքսպերտների ներկայությամբ, հատուկ քննարկման առարկա է դարձնում։

[1] „Documents on British Foreign Policy", հատ. I, 1919, էջ 506։

էքսպերտները գալիս են այն եզրակացության, որ առանց ամերիկյան կանոնավոր զորքերի Հայաստանի մանդատի հարցը հնարավոր չէ լուծել և որոշվում է առաջին հերթին Հայաստան մտցնել ամերիկյան զինված ուժեր։ Պետական դեպարտամենտի խորհրդով ԱՄՆ-ի կոնգրեսի ներկայացուցիչների պալատը 1919 թվականի սեպտեմբերի 8-ին որոշում է ընդունում, որով պրեզիդենտին իրավունք էր վերապահվում ըստ իր հայեցողության ցանկացած ժամանակ և ցանկացած քանակով ռազմական ուժեր ուղարկել Հայաստան։

Ղեկավարված այդ որոշմամբ «Հայաստանի անկախության ամերիկյան կոմիտեն» սեպտեմբերի 11-ին ԱՄՆ-ի Սենատի քննարկմանը ներկայացրեց «Մերձավոր արևելքի վերակառուցման» պլանը, որով առաջարկվում էր՝ Թուրքիան խոշոր տերությունների մեջ բաժանելով «վերջ տալ նրանց մեջ կոնկուրենցիային և անհամաձայնողականության էլեմենտներին»։ Կոմիտեի նախագահ Ջերարդը գրում էր, որ եթե «Ամերիկան Թույլ տա Անգլիային ու Ֆրանսիային զավթել Հայաստանը, ապա դաշնակիցների միջև բուռն պայքարը անխուսափելիորեն կհանգեցնի պատերազմի»։ «Մեր խնդիրը պետք է լինի,— շարունակում է նա,— բաժանել և ոչ թե նորից վերականդնել Թուրքիան»։

1919 թվականի հուլիսի 5-ին Փարիզի կոնֆերանսի տասի խորհուրդը Լանսինգի առաջարկով ամերիկյան գնդապետ Հասկելին նշանակում է դաշնակիցների գերագույն կոմիսար Հայաստանում։ Որոշ ժամանակ անց, Հասկելի լիազորությունները տարածվում են նաև Ադրբեջանի և Վրաստանի վրա։

ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի և Իտալիայի անունից գերագույն կոմիսարը լայն լիազորություններ է ստանում։ Դաշնակից տերությունների բոլոր ներկայացուցիչները, ինչպես նաև զինվորական հրամանատարները պարտավոր էին ամեն տեսակի աջակցություն ցույց տալ Հասկելին։ Փարիզի կոնֆերանսի կողմից Հասկելին գերագույն կոմիսար նշանակելը դարձյալ վկայում էր Հայաստանում և ամբողջ Անդրկովկասում ԱՄՆ-ի դիրքերի ուժեղացման մասին։

1919 թվականի օգոստոսին պրեզիդենտ Վիլսոնը Մերձավոր արևելք ուղարկեց ռազմական մի նոր միսիա՝ գեներալ Հարբորդի գլխավորությամբ։ Միսիան, որ բաղկացած էր 50 հոգուց, հրահանգ էր ստացել հետազոտել և կոնգրեսին ներկայացնել զեկուցագիր Հայաստանի, ամբողջ Անդրկովկասի, Թուրքիայի և Մերձավոր ու Միջին արևելքի մի շարք այլ շրջանների քաղաքական, ռազմական, աշխարհագրական, վարչական, տնտեսական և այլ պայմանների մասին, որոնք կարող էին հետաքրքրություն ներկայացնել ԱՄՆ-ի համար։

Միսիան գալով Կոստանդնուպոլիս, այնտեղից ժամանում է Ադանա (Կիլիկիա), ապա Հալեպ, Դիարբեքիր, Խարպուտ, Մալաթիա, Սիվաս, Էրզնջան, Էրզրում, Կարս, Բայազետ, Երևան, Էջմիածին, Նախիջևան, Թիֆլիս, Բաքու, Բաթում և այլ վայրեր։ Շրջագայությունը տևում է 30 օր։ Միսիան հանդիպում է ունենում այդ վայրերի քաղաքական կազմակերպությունների ու պետական գործիչների հետ։

Հարբորդի միսիան դաշնակցական կառավարությանը ներկայացրեց մի հարցաթերթիկ՝ 1043 հարցով, որոնց պատասխանելու համար 40 մասնագետներ աշխատեցին երկու ամիս։ Ամերիկյան իմպերիալիստներին հատկապես հետաքրքրում էր այն հարցը, թե Հայաստանի մանդատը վերցնելով ԱՄՆ-ը

որքանով հնարավորություն կունենա այն օգտագործել Սովետական Ռուսաստանի դեմ Անդրկովկասից զինված պայքար սկսելու, ինչպես նաև Մերձավոր ու Միջին արևելք թափանցելու համար։ Հարբորդի առջև խնդիր էր դրված նաև պարզելու, թե որքան ամերիկյան զորք է անհրաժեշտ Հայաստանն օկուպացնելու համար։

1919 թվականի հոկտեմբերին Հարբորդի միսիան ԱՄՆ-ի կառավարությանը ներկայացրեց «Դրությունը Մերձավոր արևելքում» զեկուցագիրը, որտեղ հիմնավորվում էր ամբողջ Անդրկովկասի, Հայաստանի, Թուրքիայի ու սևծովյան նեղուցների վրա ամերիկյան «միասնական մանդատ» հաստատելու անհրաժեշտությունը։ Առանց այդ տերիտորիաների, ինչպես ասված էր զեկուցագրում «մանդատի ընդունումը չափազանց դժվար կլիներ, որովհետև ծախսերը համարյա անընդունելի կլիններ»[1]։ Զեկուցագրում նախատեսվում էր, որ միասնական մանդատն իրագործելու համար անհրաժեշտ կլիներ մինչև 200 հազար զինվոր, այդ թվում՝ 1919 թվականին առաջարկվում էր Հայաստան ուղարկել 2 դիվիզիա (59 հազար զինվոր)։ Այս նպատակով նախատեսվող ծախսերը միայն առաջին տարին կազմելու էին 275 միլիոն դոլար։ Ինչպես նշվում է զեկուցագրում, ծախսերի մի զգալի մասը պետք է ծածկվեր օկուպացված տերիտորիայի բնակչությունից գանձվող հարկերով[2]։ Օկուպացիոն զորքերի անմիջական պարտականությունը, ըստ Հարբորդի միսիայի կարծիքի, պետք է լիներ «ամեն տիպի անկարգությունների ճնշումը» և մինչև տեղական ժանդարմերիայի ստեղծումը՝ «կարգի պահպանումը»[3]։ Ընդ որում նախատեսվում է ստեղծել տեղական ոստիկանություն, որի հրամանատարական կազմը «անպայման պետք է կոմպլեկտավորվեր ամերիկացիների կողմից»։ Ռազմական խոշոր միավորումները պետք է պահվեին մայրաքաղաքի և խոշոր քաղաքների մոտակայքում ու պատրաստ լինեին «արագ էքսպեդիցիոն արշավանքի համար»։ Զեկուցագրում հատուկ տեղ էր տրվում Թուրքիայի նկատմամբ ԱՄՆ-ի գերիշխանության ապահովմանը։ «Եթե կենտրոնացված վերահսկողություն չհաստատվի Կոստանդնուպոլսում,— ասվում է ԱՄՆ-ի կոնգրեսի պաշտոնական լրաբերում՝ «Կոնգրեշնլ Ռեկորդում» տպագրված Հարբորդի միսիայի զեկուցագրում,— ապա Հայաստանի մանդատն ստացած պետությունը զրկված կլինի կոնցեսիոներների ձեռքը կենտրոնացված առևտրի կառավարման ու զարգացման հնարավորությունից, նա կախված կլինի Թուրքիայի անբարեհույս դիվանագիտությունից... և բացառիկ դեպքերում կկտրվի Արևելքի հետ ունենալիք շփումից»։

1919 թվականի գարնանը անգլիական կառավարությունը գեներալ Ուորդրոպին նշանակեց Անդրկովկասում Անգլիայի գլխավոր կոմիսար, որին հանձնարարվեց «հնարավոր ամեն ինչ անել արգելելու կամավորական բանակի և անդրկովկասյան հանրապետությունների միջև հակասությունների առաջ գալուն»[4]։

---

1 „Congressional Record", հատ. 59, մասն 8, էջ 7881։

2 Տե՛ս նույն տեղում, էջ 7885։

3 Նույն տեղում։

4 ЦГАОР и СС СССР, ф. 3663, д. 4, л. 33.

1919 թվականի վերջերին կարմիր բանակը, ջախջախելով սպիտակգվարդիական բանդաները, հաղթականորեն շարժվում էր հարավ։ Դենիկինի ջախջախումը և Հյուսիսային Կովկասի ազատագրումը ստիպեցին իմպերիալիստական տերություններին վերանայել իրենց քաղաքականությունը Անդրկովկասի նկատմամբ։

Քանի դեռ Դենիկինը և սպիտակգվարդիական մյուս ուժերը սովետական իշխանությունը տապալելու հույս էին ներշնչում, Անտանտի իմպերիալիստներն Անդրկովկասի հանրապետությունների նկատմամբ դիվանագիտություն էին խաղում. նրանց օգտագործելով իրենց իմպերիալիստական հակասովետական պլանների կենսագործման համար, միաժամանակ չէին ճանաչում այդ կառավարությունները, որոնց գոյությունը հակասում էր սպիտակգվարդիական գեներալների մեծապետական ձգտումներին, և որոնց ճանաչումը կարող էր տարել հակասությունները սպիտակգվարդիականության հետ։

Այսպիսին էր իմպերիալիստների քաղաքականությունը անդրկովկասյան բուրժուական կառավարությունների նկատմամբ մինչև 1920 թվականի սկիզբը։

Կարմիր բանակի կողմից Դենիկինի ջախջախումից հետո իմպերիալիստներն իրենց հակասովետական քաղաքականության մեջ սկսում են բացահայտ կերպով տեղ տալ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի կառավարություններին։ Վերջիններս էլ իրենց հերթին ձգտում էին ապավինել արևմտյան իմպերիալիստների օգնությանը։

Այս հողի վրա իմպերիալիստների և բուրժուական կառավարությունների միջև հակասովետական գործարք կնքվեց։

1920 թվականի հունվարի 10-ին դաշնակիցները Փարիզում քննարկեցին Անդրկովկասում ստեղծված դրությունը։ Լլոյդ Ջորջը տագնապով նշեց, որ Դենիկինյան զորքերը ջախջախված են և կարմիր բանակը հաղթականորեն շարժվում է դեպի հարավ և որ անդրկովկասյան կառավարությունները «հուսահատ դրության» մեջ են։ Դաշնակիցները լսելով անգլիական պատվիրակության զեկույցը, որոշեցին գե ֆակտո ճանաչել Ադրբեջանի ու Վրաստանի կառավարությունները և լրացուցիչ ռազմական ու ֆինանսական օգնություն կազմակերպել։ Դաշնակցական կառավարության ճանաչումը հետաձգեցին՝ կապելով այն «քուրդական պրոբլեմի» լուծման հետ։ Մակայն 9 օր հետո նորից է քննարկվում Անդրկովկասում տիրող դրությունը։ Քննարկմանը մասնակցող Լլոյդ Ջորջը, Չերչիլը, Կլեմանսոն, մարշալ Ֆոշը, ֆելդմարշալ Հենրի Վիլսոնը և մյուսներն իրենց ելույթներում խիստ անհանգստացած կարմիր բանակի հաջողություններով առաջարկեցին ճանաչել նաև դաշնակցական կառավարությունը, որը, Կլեմանսոյի վկայությամբ, պաշտոնապես հայտարարել էր իր պատրաստակամությունը բոլշևիկների դեմ կռվելու համար։

Հենրի Վիլսոնն առաջարկեց ուժեղացնել Կասպից ծովում անգլիական ռազմական նավատորմիղը, որը հնարավորություն կտար Սև և Կասպից ծովերը կապող Բաքու-Բաթում գիծը պահել դաշնակիցների ձեռքում։ Չերչիլը պաշտպանեց այդ առաջարկը։ Կլեմանսոն և Լլոյդ Ջորջը երկյուղ հայտնեցին, թե անգլիական նավատորմը Կասպից ծովում կարող է ընկնել բոլշևիկների ձեռքը[1]։

[1] Տե՛ս „P. R... Paris Reace Conferanse", 1919, էջ 889—891, 892։

Այդ խորհրդակցության ժամանակ որոշվեց, որ երկրամասը «բոլշևիկյան վտանգից» ազատելու համար մարդկային ուժերը պետք է տան Անդրկովկասի կառավարությունները, իսկ դաշնակիցները կմատակարարեն նրանց ռազմական հանդերձանք։ Մուսավաթական կառավարության ներկայացուցիչը հայտարարեց, որ իր կառավարությունը զենքի կկոչի 100 հազար մարդ, մենշևիկները խոստացան՝ 50 հազար[1]։ Անդրկովկասյան կառավարություններին ռազմական օգնություն ցույց տալու հարցը տարաձայնություններ առաջացրեց, բայց երբ Ներելին հայտարարեց, որ այդ օգնությունը չստանալու դեպքում իրենց կառավարությունները ստիպված կլինեն «դիմել համաձայնության բոլշևիկների հետ»,— տարաձայնությունները դադարեցվեցին։ «Կարմիրները,— հայտարարում է Լլոյդ Ջորջը,— արդեն այնքան հրացաններ ունեն, որ ևս 25 կամ 50 հազարի զավթելը այնքան էլ դրությունը չի փոխի. կարմիրները Դենիկինից զավթել են 600 հրանոթ, որոնց մեծ մասը պատրաստվել են Անգլիայում։ Նրանք զավթել են նաև մի քանի հիանալի տանկեր։ Այդպիսի պայմաններում կովկասյան պետություններին որոշ թվով հրանոթներ ու հրացաններ ուղարկելու վտանգը այնքան էլ մեծ չէ»[2]։

Այսպիսով, մինչև Վաշինգտոնում նախապատրաստվում էին քննարկել Հարբորդի զեկուցագիրը, Փարիզի կոնֆերանսում դաշնակիցները, հաշվի առնելով նոր իրադրությունը և ձգտելով փրկել Դենիկինի զորքերի մնացուկները վերջնական ջախջախումից, խանգարել կարմիր բանակի առաջխաղացմանը, դեպի Անդրկովկասի սահմանները, որոշում են դե ֆակտո ճանաչել Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի «անկախ» հանրապետությունները։ Անտանտի իմպերիալիստների կարծիքով անդրկովկասյան կառավարություններին դե ֆակտո ճանաչելը պետք է քողարկեր Անդրկովկասից կատարվող նրանց բացահայտ զինված ինտերվենցիան Սովետական Ռուսաստանի դեմ։ Այդ հարցի կապակցությամբ 1920 թվականի հունվարին Փարիզում Լլոյդ Ջորջը իր ունեցած ելույթներից մեկում բառացիորեն ասում է, որ «դե ֆակտո ճանաչված անդրկովկասյան կառավարություններին ռազմական օգնություն կազմակերպելը և նրանց զինված ուժերի միջոցով Սովետական Ռուսաստանի դեմ պայքարելը այլևս չի դիտվի որպես միջամտություն ռուսական գործերին»[3]։

1920 թվականի հունվարի 19-ին Չերչիլը և ֆրանսիական մարշալ Ֆոշը հենց այդ նպատակով առաջարկեցին ստեղծել «Անդրկովկասյան երկրների լիգա» և Լեհաստանի, Ռումինիայի, Լատվիայի ու Էստոնիայի հետ կազմել «Անտանտա» Սովետական Ռուսաստանի դեմ պայքարելու համար։ Ընդ որում նրանք հաշվի էին առնում այն փաստը, որ Անդրկովկասի բուրժուական կառավարությունները մերժել էին սովետական կառավարության առաջարկը՝ Դենիկինի դեմ համատեղ հանդես գալու վերաբերյալ։ Գնահատելով իմպերիալիստական տերությունների այդ քայլը Ռ(բ)Կ Հայաստանի կոմիտեն (Արմենկոմը) այդ օրերին Հայաստանի բանվորներին ու գյուղացիներին ուղղված կոչում գրել է. «կարմիր բանակի այդ հաղթական առաջխաղացի դեմ պատնեշ

---

[1] Տե՛ս „Documents on British Foreign Policy", հատ. II, էջ 896։

[2] „P. R... Paris Peace Conferanse", էջ 900։

[3] „Documents on British Foreign Policy", հատ. II, էջ 924։

կառուցելու, դասակարգային ազատագրական գաղափարը կղզիացնելու համար ահա ստրկատերերի Դերագույն խորհուրդը հապճեպորեն անկախություն պարգևեց Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի մանր ստրկատերերին»[1]։

ԱՄՆ-ը ձգձգում էր Անդրկովկասի կառավարությունների ճանաչումը։ Դա բացատրվում էր նրանով, որ ԱՄՆ-ը դեռևս իր հույսերը չէր կտրել ռուսական սպիտակգվարդիական ուժերից և, որ գլխավորն է, դեռևս չհաստատելով իր փաստական գերիշխանությունը Անդրկովկասում, վախենում էր անգլիական դիրքերի ուժեղացումից։ Այդ պատճառով ԱՄՆ-ը մի շարք միջոցների է դիմում Անդրկովկասում ամրապնդելու մի կողմից՝ հակասովետական ճակատը և մյուս կողմից՝ իր դիրքերը։ 1920 թվականի սկզբներին ԱՄՆ-ը ռազմական ու ֆինանսական խոշոր օգնություն կազմակերպեց դաշնակցականներին և Անդրկովկասում ապաստան գտած դենիկինյան չախչախված զորքերի մնացորդներին։ Այդ ուժերը նորից ոտքի կանգնեցնելու և Սովետական Ռուսաստանի դեմ հանելու նպատակով, լլոյդ Ջորջի վկայությամբ, նախատեսվում էր հատկացնել 25 միլիոն դոլլար[2]։ 1920 թվականի ապրիլի 21-ին Փարիզում մշակվեց համաձայնագիր ԱՄՆ-ի և դաշնակցական կառավարության ներկայացուցիչների միջև, որը ուժի մեջ պետք է մտներ մանդատը հաստատվելուց հետո և լրիվ կերպով ապահովեր ամերիկյան իմպերիալիստների տիրապետությունը Հայաստանում։ Բավական է նշել, որ ըստ այդ համաձայնագրի ԱՄՆ-ի կառավարությունն իր ներկայացուցիչները պետք է ունենար հայկական կառավարության յուրաքանչյուր մինիստրի մոտ, որին իրավունք էր վերապահվելու օրենքների օրինագծեր առաջարկել կառավարությանը, բողոք հայտնելու մինիստրների ընդունած որոշումների դեմ և այլն։

Իմանալով այդ մասին անգլիական կառավարությունն էլ իր հերթին, ինչպես հայտարարեց լլոյդ Ջորջը, պատրաստակամություն հայտնեց 40 հազարանոց բանակի համար դաշնակցական Հայաստանին տրամադրել զենք և ռազմական հանդերձանք[3], նպատակ ունենալով ոչ միայն օգնելու դաշնակցական կառավարությանը Սովետական Ռուսաստանի դեմ պայքարելու համար, այլև ի հակակշիռ ԱՄՆ-ի՝ ամրապնդելու իր սեփական դիրքերը Հայաստանում։ ԱՄՆ-ի կառավարությունն ապրիլի 27-ին դե ֆակտո ճանաչեց դաշնակցական կառավարությունը։ ԱՄՆ-ի կառավարությունը մայիսի 24-ին կոնգրեսի քննարկմանը ներկայացրեց Հարբորդի միսիայի զեկուցագիրը, ինչպես նաև «Հայաստանի անկախության» ամերիկյան կոմիտեի պլանը։

Կոնգրեսում այդ հարցի քննարկումը տևեց մեկ շաբաթից ավելի։ Քննարկումը ցույց տվեց, որ ամերիկյան կառավարող շրջաններում Հայաստանը գաղութացնելու իմպերիալիստական նպատակների շուրջը տարակարծություն չկար։ Վիճում էին միայն այն մասին, թե արդյոք ստեղծված իրադրության մեջ ԱՄՆ-ը կարող է իրագործել իր պլանները, թե ոչ։ Սենատոր Մակկորմիկը, օրինակ, հարց է առաջ քաշում, թե Մերձավոր արևելքում ԱՄՆ-ի և գաղութարա-

---

1 «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում», էջ 309։

2. Տե՛ս „Documents on British Foreign Policy", հատ. II, էջ 923։

3. Տե՛ս ЦГАОР и СС СССР, ֆ. 3569, գ. 1, թ. 1։

րական տերություններից միջև հակասությունները սրվելու դեպքում, ԱՄՆ-ը կարող է արդյոք իր դիրքերը պաշտպանել Հայաստանում։ «Յուրաքանչյուրը,— ասում է նա,— ով նայում է քարտեզին և տեսնում Անգլիայի ու Ֆրանսիայի հաղորդակցական կետերը, նա կասի, որ ԱՄՆ-ը չի կարող դիմադրություն ցույց տալ Ֆրանսիային և Անգլիային։ Ավելին, բալկանյան տերությունները, եթե նրանք միավորվեն, կարող են կտրել հաղորդակցության ամբողջ գիծը ԱՄՆ-ի և Հայաստանում նրա զինված ուժերի միջև։ Մեր զորքերը կդառնան պատանդներ»։ Այնուհետև Մակկորմիկը ընդգծում է ԱՄՆ-ի և Անգլիայի հակասությունները Մերձավոր արևելքում և Եվրոպայում[1]։

ԱՄՆ-ի կոնգրեսմեննները հաշվի են առնում նաև այն փոփոխությունները, որոնք տեղի էին ունեցել Մերձավոր արևելքում և Անդրկովկասում 1919 թվականի հոկտեմբերից, այսինքն Հարբորդի զեկուցագիրը ներկայացնելուց հետո։ «Ես կարծում էի,— ասում է սենատոր Սմիտը,— որ 10 հազար զինվոր բավական էր (Հայաստանն օկուպացնելու համար — խմբ.)։ Այժմ ես գտնում եմ, որ ևս 100 հազար զինվորն էլ քիչ կլինի Հայաստանում մեր անվտանգությունն ապահովելու համար», որովհետև «մենք բոլշևիկներ կլինենք Սովետական Ռուսաստանի դեմ»[2]։ Սենատոր Թոմսոնը ավելի պարզ է արտահայտում իր կասկածը։ Նա ընդգծում է, որ «Մերձավոր արևելքից ստացված վերջին տեղեկությունների համաձայն կարելի է եզրակացնել, որ բոլշևիկներն արդեն Հայաստանում են...», և որ «ամերիկյան բանակի այնտեղ լինելը... այսպիսի հանգամանքներում զինված ընդհարում կառաջացնի սովետների հետ»[3]։

Կոնգրեսի որոշմամբ Սենատի արտաքին գործերի հանձնաժողովը բազմակողմանի քննարկման է ենթարկում թեր և դեմ առաջարկները և 11 ձայնով ընդդեմ 3-ի որոշում մերժել պրեզիդենտ Վիլսոնի առաջարկը հայկական մանդատը վերցնելու մասին։ Հանձնաժողովի որոշումը ամրապնդեց մանդատի հակառակորդների դիրքերը։ Բանավեճերը ցույց են տալիս, որ ստեղծված պայմաններում անհնար է այլևս զավթել Հայաստանը և Անդրկովկասից Սովետական Ռուսաստանի դեմ զինված ուժեր հանել։ Ամերիկյան իմպերիալիստները ստիպված խոստովանում են, որ Հարբորդի միսիայի զեկուցագիրը կազմելուց հետո ընկած ժամանակաշրջանում տեղի ունեցած փոփոխություններն անհնար են դարձնում ամերիկյան զորքերի ուղարկումը Հայաստան, որն այժմ կնշանակեր «մարդկանց զոհաբերում»[4]։ Կարմիր բանակի ընդհուպ մոտենալը Հայաստանի սահմաններին, Անդրկովկասի, ինչպես նաև Մերձավոր ու Միջին արևելքի ժողովուրդների պայքարը ամերիկյան իմպերիալիզմի դեմ, իմպերիալիստական հակասությունների սրումը Մերձավոր արևելքում և Անդրկովկասում, ԱՄՆ-ի և Ճապոնիայի միջև պատերազմի վտանգի հաստատացումը (որն ստիպում էր ԱՄՆ-ի կառավարությանն իր զինված ուժերը պահել Հեռավոր Արևելքում), Արևմտյան Եվրոպայի և ԱՄՆ-ի բանվորների շրջանում հակասովե-

---

1 Տե՛ս „Congressional Record", հատ. 59, մասն 8, էջ 7969։

2 Նույն տեղում, էջ 7889։

3 Նույն տեղում։

4 Նույն տեղում։

տական ինտերվենցիայի նկատմամբ ծագած բուռն դժգոհությունները, միջկուսակցական հակասությունների սրումը ԱՄՆ-ի կոնգրեսում, Վերսալի պայմանագրի վերացումից հրաժարվելը և մի շարք այլ պատճառներ ստիպեցին ԱՄՆ-ի կոնգրեսին 1920 թվականի հունիսի մեկին որոշում ընդունել Հայաստանի մանդատից հրաժարվելու մասին։ Դա Հայաստանը զավթելու ամերիկյան քաղաքականության ձախողումն էր։

ԳԼՈՒԽ ԻՐՐՈՐԴ

ՄԱՑԻՍՑԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

1. ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ: ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 1920 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐՅԱՆ ԿՈՆՖԵՐԱՆՍԸ

Սովետական Ռուսաստանի բանվորների ու գյուղացիների օրեցօր ամրապընդվող հաղթանակը քաղաքացիական պատերազմների և օտարերկրյա ինտերվենտների դեմ մղվող պայքարում նոր ուժ ու հավատ էին ներշնչում սովետական իշխանության համար մարտնչող Անդրկովկասի աշխատավորներին։ Երկրամասի բոլշևիկյան կազմակերպությունների ղեկավարությամբ գնալով ընդլայնվում է բուրժուա-նացիոնալիստական կուսակցությունների և նրանց օտարերկրյա տերերի դեմ մղվող պայքարի ճակատը։ Այդ պայքարը լայն ծավալ էր ստացել նաև Հայաստանում։

1919 թվականի գարնանն ու ամռանը գյուղացիական ելույթները Հայաստանում նոր թափ ստացան։ Բանվորական հուզումներն ու ելույթները ավելի կազմակերպված բնույթ ընդունեցին։ Դաշնակցական կառավարության հալածանքներն ու հետապնդումները չկարողացան կասեցնել հեղափոխական վերելքը, որի ստեղծմանը ոչ պակաս չափով նպաստեց անգլիական զինված ինտերվենցիայի ձախողումը Անդրկովկասում։ 1919 թվականին անգլիական օկուպացիոն զորքերի մեծ մասի դուրս բերումը Անդրկովկասից հնարավորություններ էր ընձեռում երկարամասում սովետական իշխանության հաստատման համար։ Տեղական կուսակցական կազմակերպությունների կողմից առաջ քաշված և Ռկ(բ)կ Կենտկոմի կողմից հավանության արժանացած «Անդրկովկասի անկախ սովետական հանրապետություններ» ստեղծելու լոզունգը էական դեր խաղաց բուրժուա-նացիոնալիստական կուսակցությունների «ազգային անկախության» լոզունգի դեմ մարտնչելու և լայն մասսաներին պայքարի հանելու սովետական իշխանության համար։

Ռկ(բ)Պ Կենտկոմի և Կովկասյան երկրային կոմիտեի կողմից ցուցաբերվող օգնության ու ղեկավարության շնորհիվ նկատելի կերպով աշխուժացավ Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների գործունեությունը։ Լայն թափ ստացավ հատկապես Ալեքսանդրապոլի, Կարսի, Երևանի, Սարիղամիշի, Նոր Բայազետի, Իջևանի, Ղարաքիլիսայի, Ղազախ-Շամշադինի, Զանգեզուրի, Դիլիջանի և այլ գավառների ու շրջանների կազմակերպությունների աշխա-

տանքը, որտեղ ղեկավար դեր էին կատարում ականավոր բոլշևիկներ Ս. Ալավերդյանը, Բ. Ղարիբջանյանը, Ե. Սևյանը, Ղ. Ղուկասյանը, Ա. Խանջյանը, Ս. Փանյանը, Հ. Սարուխանյանը, Ն. Կուրղինյանը, Շ. Ամիրխանյանը, Հ. Կամարին, Ե. Մկրտումյանը, Բ. Բատիկյանը, Ս. Մարտիկյանը, Գ. Հանեսօղլյանը և ուրիշներ։

Բանվորական շարժման կարևոր օջախներից էր Ալեքսանդրապոլը, որտեղ գոյություն ուներ բոլշևիկյան ընդհատակյա առավել ուժեղ կոմիտե։ Նրա գործունեությունը նկատելի էր դարձել նույնիսկ Անդրկովկասում գտնվող անգլիական զինվորական հրամանատարությանը, որը 1919 թվականի մարտի 23-ին տագնապով հայտնում է դաշնակցական կառավարությանը այդ կոմիտեի գործունեության մասին և վճռականորեն պահանջում՝ անհապաղ միջոցներ ձեռնարկել այդ կոմիտեն հայտնաբերելու և նրա ղեկավարներին խիստ պատժելու համար։

Չնայած դաշնակցական կառավարության ձեռնարկած միջոցներին, Ալեքսանդրապոլի բոլշևիկյան կոմիտեն ոչ միայն չդադարեց գործելուց, այլև իր ազդեցությունը տարածեց գավառի Քավթառլու, Ղուլիջան, Պարնի, Նորաշեն և այլ գյուղերի աշխատավորների վրա, որտեղ ևս ստեղծվեցին կուսակցական բջիջներ։ 1919 թվականի հունիսին կայացած Ալեքսոլի կոմունիստական կազմակերպությունների կոնֆերանսը խոշոր դեր խաղաց քաղաքում և գավառի գյուղերում բոլշևիկների գործունեության հետագա ծավալման, բանվորների, գյուղացիների և զինվորների շրջանում եղած կոմունիստական բջիջների ու խմբերի ամրապնդման, նորերի ստեղծման և ընդլայնման գործում։

Հայաստանի բոլշևիկները լայն գործունեություն ծավալեցին նաև երիտասարդության շրջանում։ Դա հատկապես կարևոր նշանակություն ուներ սովետական իշխանության համար մղվող պայքարում, քանի որ դաշնակցականները և ամերիկյան իմպերիալիստները ստեղծել էին իրենց երիտասարդական կազմակերպությունները, որոնց միջոցով երիտասարդությանը թունավորում էին բուրժուական ռեակցիոն գաղափարներով։ Բոլշևիկների ղեկավարությամբ ստեղծված Հայաստանի կոմունիստական երիտասարդական «Սպարտակ» միությունը, որի ղեկավարներն էին երիտասարդ կոմունիստներ Ղ. Ղուկասյանը, Ա. Խանջյանը, Ա. Բուդաղյանը և ուրիշներ, լայն աշխատանք են ծավալում երիտասարդությանը հեղափոխական պայքարի մեջ ընդգրկելու, նրան պրոլետարական ինտերնացիոնալիզմի գաղափարներով դաստիարակելու և կոմունիստական կուսակցության շուրջը համախմբելու գործում։ Կարևոր երևույթ էր երիտասարդական «Սպարտակ» թերթի հանդես գալը, որի առաջին և միակ համարը լույս տեսավ 1919 թվականի մայիսի մեկին։ Թերթն ամբողջությամբ կանգնած էր կոմունիստական երրորդ ինտերնացիոնալի դիրքերում. դաշնակցականները անմիջապես խափանում են թերթի հետագա հրատարակությունը։ «Սպարտակ» միությունը, սակայն, չի դադարեցնում իր գործունեությունը և դառնում է բոլշևիկյան գաղափարների պրոպագանդիստը երիտասարդության շրջանում։

Երկրում ստեղծված քաղաքական իրադրությունը պահանջում էր միավորել Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների ջանքերը՝ սովետական իշխանության համար մղվող պայքարում։

Այդ նպատակով ՌԿ(բ)Կ երկրային կոմիտեն 1919 թվականի գարնանը իր անդամներ Ա. Մռավյանին և Ս. Կասյանին գործուղեց Հայաստան։ Կապ հաստատելով տեղական կազմակերպությունների հետ, նրանք Ս. Ալավերդյանի, Ա. Մելիքյանի, Դ. Շահվերդյանի, Ս. Խանոյանի, Ս. Մարտիկյանի և մյուսների ակտիվ մասնակցությամբ ձեռնամուխ են լինում Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների կոնֆերանսի նախապատրաստմանը։ Դաշնակցականների հալածանքների պայմաններում մի շարք կազմակերպություններ (Ալեքսանդրապոլի, Նոր Բայազետի, Կարսի, էջմիածնի, Աշտարակի) չկարողացան մասնակցել հրավիրվող կոնֆերանսի աշխատանքներին։ Ներկայացուցչական նեղ կազմ ունեցող այդ հավաքը որոշվում է կոչել խորհրդակցություն։

Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների առաջին խորհրդակցությունը տեղի ունեցավ 1919 թվականի սեպտեմբերին Երևանում, Արշավիր Տեր-Ղազարյանի բնակարանում։ Խորհրդակցությանը մասնակցում էին Ս. Կասյանը, Ա. Մռավյանը, Հ. Յաղուբյանը, Ս. Խանոյանը, Ղ. Ղուկասյանը և մի շարք այլ բոլշևիկներ։

Խորհրդակցությունը լսեց և քննարկեց մի շարք զեկուցումներ։ Հայաստանում 1917—1919 թվականներին կուսակցական աշխատանքների և կոմունիստական կազմակերպությունների վիճակի մասին զեկուցումով հանդես են գալիս Ա. Մելիքյանը և Ա. Մռավյանը, ընթացիկ մոմենտի և կոմունիստական կազմակերպությունների խնդիրների մասին՝ Ս. Կասյանը, երիտասարդական շարժման և երիտասարդության շրջանում տարվող կոմունիստական աշխատանքի մասին՝ Ղ. Ղուկասյանը և Ա. Մելիքյանը։ Խորհրդակցությունը լսեց նաև հաղորդումներ տեղերից։

Խորհրդակցությունը խոշոր դեր խաղաց Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների միավորման գործում։ Այն ընտրեց Հայաստանի կազմակերպությունները միավորող ղեկավար օրգան՝ ՌԿ(բ)Կ Հայաստանի կոմիտե (Արմենկոմ), որի կազմում մտան Ս. Կասյանը, Ա. Մռավյանը, Դ. Շահվերդյանը, Ա. Մելիքյանը, Ս. Ալավերդյանը, Ղ. Ղուկասյանը, Ս. Խանոյանը։ Որոշվեց, որ Հայաստանի կոմունիստական երիտասարդության միությունը ամբողջովին ենթարկվելու է Արմենկոմին և պետք է գործի կուսակցության անմիջական ղեկավարությամբ։

Խորհրդակցությունը որոշում է ընդունում 1920 թվականի հունվար-փետրվար ամիսներին հրավիրել Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների կոնֆերանս։

Արմենկոմը խնդիր է դնում լայնորեն ծավալել կոմունիստական կազմակերպությունների աշխատանքները, սերտ կապ հաստատել տեղական կազմակերպությունների հետ, որոշում է հրատարակել թերթ։ Այդ նպատակով ծրագրվում է քաղաքական լայն աշխատանք ծավալել «չեզոք գոտու» աշխատավորության շրջանում, օգտագործել այնտեղ գտնվող տպարանը։ Հաշվի առնելով Գյուղացիական միության հակադաշնակցական տրամադրությունները, խնդիր է դրվում նյութապես աջակցել նրան՝ «Գյուղացու ձայն» թերթը հրատարակելու համար և աշխատակցել թերթին։

Արմենկոմը լուրջ ուշադրություն է դարձնում երիտասարդության շրջանում քաղաքական-կազմակերպական աշխատանքի ծավալմանը, երիտասարդու-

բյանն ընդգրկում է հեղափոխական շարժման մեջ, ղեկավարում նրա քաղաքական դաստիարակության գործը։ Կարևոր նշանակություն տալով սովետական իշխանության համար մղվող պայքարում հայ և ադրբեջանական աշխատավորների ինտերնացիոնալ համախմբմանը, Արմենկոմը հոգ է տանում Հայաստանի ադրբեջանական աշխատավորության շրջանում տարվող աշխատանքի մասին։

Անհրաժեշտ էր աշխատավորությանը ներկայացնել երկրում ստեղծված ծանր վիճակը և ցույց տալ դրանից դուրս գալու ուղիները։ Այդ նպատակով Արմենկոմը հանձնարարում է Ս. Կասյանին գրել մի աշխատություն։ Ս. Կասյանի «Ուր է ելքը» աշխատությունը՝ Ս. Ատենյան կեղծանվամբ, լույս է տեսնում 1919 թվականի վերջերին, որը փաստորեն Ս. Կասյանի զեկուցումն էր 1919 թվականի սեպտեմբերյան խորհրդակցությունում և այդ խորհրդակցության քաղաքական դիրքորոշումը Հայաստանի ներքին և արտաքին դրության հարցերի նկատմամբ։ Ս. Կասյանը մարքսիստական խոր վերլուծության էր ենթարկում երկրում ստեղծված դրությունը և ցույց տալիս, որ հայ ժողովրդի փրկության, նրա վերածննդի միակ ուղին դաշնակցականների իշխանության տապալումն ու երկրում սովետական իշխանության հաստատումը կարող է լինել։

«Երկրագնդի վրա,—գրում է Ս. Կասյանը այդ բրոշյուրում,—թերևս ոչ մի ժողովուրդ այնպիսի ողբալի, այնպիսի օրհասական և սոսկալի օրեր չի ապրում, ինչպիսին ապրում է ժողովուրդը Հայաստանի տերիտորիայի վրա։

Կյանքի բոլոր ասպարեզներն էլ արտաշնչում են դառն ու լեղուտ օդը և թունավորում ամբողջ երկիրը, սպանելով կենսունակ ուժերը, խեղդելով նրա ձգտումներն ու կամքը...

Հայաստանում դրությունը դարձել է անեծք, կյանքը՝ դժոխք»[1]։

Որոշակի փաստերով ցույց տալով հայ ժողովրդի ծանր, մղձավանջային դրությունը, Ս. Կասյանը «Ուր է ելքը» հարցին պատասխանում է. «Երկաթի և արյան միջոցով պահվող, ժողովրդական տառապանքի և հառաչանքի վրա կառուցված այդ աշխարհը չէ, որ պիտի փրկե հայ ժողովրդին տանջանքից և հառաչանքից, այլ այն աշխարհը, որի արշալույսը բացվել է ռուսական հյուսիսում։

Միակ ելքը դա է, ուրիշը չկա»[2]։

Աշխատավորական լայն մասսաների շրջանում կոմունիստական կազմակերպությունների ծավալած քաղաքական-կազմակերպական լայն աշխատանքը տալիս է իր դրական արդյունքը։ Ամրապնդվեցին գոյություն ունեցող բջիջներն ու խմբերը, բազմաթիվ վայրերում ստեղծվեցին նորերը։ Արդեն 1920 թվականի հունվար-փետրվար ամիսներին Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների շարքերում կային ավելի քան 1200 մարդ, որոնք գլխավորում էին աշխատավորության պայքարը սովետական իշխանության համար։

1920 թվականի հունվարի կեսերին Երևանում անցկացավ Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների առաջին կոնֆերանսը,

---

1 Ս. Ատենյան, Ուր է ելքը, Երևան, 1919, էջ 1։

2 Նույն տեղում, էջ 69։

որին մասնակցում էին տեղական կազմակերպությունների 22 ներկայացուցիչներ։

Կոնֆերանսը քննարկեց ընթացիկ մոմենտի և կուսակցության քաղաքական գծի, կազմակերպական կառուցվածքի, երիտասարդության, արհեստակցական միությունների, գյուղացիության և զինվորների շրջանում տարվող աշխատանքների, կազմակերպական և այլ հարցեր։

Կոնֆերանսը ճիշտ գնահատեց Անդրկովկասի և մասնավորապես Հայաստանի քաղաքական դրությունը և ցույց տվեց, որ երկրամասի անջատումը Սովետական Ռուսաստանից և բուրժուական անկախ հանրապետությունների ստեղծումը ծառայում էր օտարերկրյա և տեղական բուրժուազիայի շահերին՝ նրանց պայքարում ընդդեմ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի աշխատավորության։ Մինչև վերջ մերկացնելով դաշնակցականների, մենշևիկների ու մուսավաթականների հակաժողովրդական քաղաքականությունը, կոնֆերանսն անհրաժեշտ համարեց սովետական իշխանության հաստատման համար մղվող մարտերում ամրապնդել երկրամասի բոլոր ժողովուրդների աշխատավոր մասսաների եղբայրական դաշինքը։

Կոնֆերանսը բացահայտեց արևմտյան իմպերիալիստների և նրանց վարձկանների հակաժողովրդական քաղաքականությունը Արևելքի և այդ թվում հայ ժողովրդի նկատմամբ և հստակությամբ ընդգծեց, որ Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների առաջնահերթ խնդիրը դաշնակցականների տիրապետության բոնի տապալումն ու սովետական իշխանության հաստատումն է։

«Քաղաքացիական պատերազմը Հայաստանում տիրող դասակարգերի դեմ (ինչպես և Վրաստանում և Ադրբեջանում).— ասված է կոնֆերանսի բանաձևում,— և այդ դասակարգերի կազմակերպած «դաշնակցական» կառավարության դեմ, դաշնակցականների իշխանության բոնի տապալումը Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների առաջնահերթ խնդիրն է։

Միայն այդ ուղիով մենք կկարողանանք դնել սովետական իշխանության ամուր հիմքը, միայն այդ ուղիով հնարավոր է մասսաներին փրկել կործանումից»[1]։

Կոնֆերանսը կուսակցական կազմակերպություններին հանձնարարում է կազմակերպել պրոլետարական մասսաներին և ամրապնդել բանվոր դասակարգի ու չքավոր գյուղացիության հեղափոխական դաշինքը, բանվոր դասակարգի շուրջը համախմբել աշխատավորական լայն խավերին, ամրապնդել և ընդլայնել կոմունիստական կազմակերպության շարքերը, լայն աշխատանք ծավալել աշխատավորների մասսայական կազմակերպություններում, երիտասարդության շրջանում, բանակում։ Զգուշանալով դաշնակցությանը դուրս մղել արհմիություններից և ապահովել կոմունիստական կազմակերպությունների ղեկավարությունը նրանց նկատմամբ, հատկապես լուրջ ուշադրություն է դարձվում արհմիություններում տարվող աշխատանքներին։

---

1 «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում», էջ 303—304։

Քննարկելով գյուղացիության շրջանում տարվող քաղաքական կազմակերպական աշխատանքի հարցը, կոնֆերանսը կոմունիստական կազմակերպություններին նպատակամղեց գյուղացիական աշխատավոր լայն մասսաներին ներգրավել հեղափոխական ակտիվ պայքարի մեջ։ Դաշնակցության ազդեցությունը հատկապես ուժեղ էր մանրբուրժուական տարրերի և աշխատավորական հետամնաց խավերի վրա։

Դաշնակցությունը, ինչպես նշում է կոնֆերանսը, հողը բողնելով կալվածատերերի և կուլակների ձեռքում գյուղացիությանը ծանրաբեռնում է նոր հարկերով։ Կոնֆերանսը կոմունիստական կազմակերպությունների առաջ խնդիր դրեց՝ ագիտատորների և տեղական բջիջների միջոցով բացատրական լայն աշխատանք ծավալել գյուղացիության շրջանում, բացահայտել դաշնակցության ագրարային քաղաքականության բուրժուական ռեակցիոն էությունը, աշխատավոր գյուղացիությանը համախմբել կոմունիստական կազմակերպության շուրջը։

Կոնֆերանսը խնդիր դրեց պատշաճ ուշադրություն դարձնել բանակում տարվող աշխատանքներին, որովհետև զինվորների համակրանքի նվաճումը և նրանց կոմունիստական կազմակերպության ազդեցության տակ վերցնելը կարևորագույն նշանակություն կունենա սովետական իշխանության համար մղվող պայքարում։

Կոնֆերանսն իր ընդունած բանաձևում ընդգծում էր, որ կոմունիստական կազմակերպության ընդլայնումը, դասակարգային պայքարի լոզունգներով պրոլետարական մասսաների նվաճումը, նրանց ամենօրյա շահերի պաշտպանությունը, կոմունիստական կազմակերպության կողմից պրոլետարիատի քաղաքական-պրոֆեսիոնալ ամբողջ աշխատանքի ղեկավարումը, դաշնակցական կառավարության դիմադրությունն այդ աշխատանքին,—ի վերջո կավարտվի նրանով, որ Ռ<u>Կ(բ)Կ</u> կազմակերպությունը Հայաստանում պաշտպանությունից կանցնի հարձակման[1]։

Ավարտելով Հայաստանի կոմունիստական անջատ-անջատ կազմակերպությունների միավորումը մեկ ընդհանուր ղեկավար կենտրոնի շուրջը, կոնֆերանսը չափազանց կարևոր դեր խաղաց Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների հետագա ամրապնդման գործում և կարևոր նախադրյալներ ստեղծեց Հայաստանի կոմունիստական կուսակցության կազմակերպման, ձևավորման ավարտման համար։ Կոնֆերանսն ընտրեց Ռ<u>Կ(բ)Կ</u> Արմենկոմի նոր կազմ, որի մեջ մտան Ս. Ալավերդյանը, Ս. Կասյանը, Ա. Մռավյանը, Դ. Շահվերդյանը, Հ. Կոստանյանը, Ղ. Ղուկասյանը, Ա. Նուրիջանյանը, Դ. Տեր-Սիմոնյանը, Ա. Գոգունցը, Ս. Մարտիկյանը։

Հայաստանի կոմունիստները շատ լավ էին գիտակցում Արևելքի ժողովուրդների ինտերնացիոնալ համախմբման նշանակությունն այդ ժողովուրդների ազգային ու սոցիալական ազատագրման գործում, իմպերիալիզմի դեմ մղվող համատեղ պայքարում։ Այդ գաղափարներով է տոգորված կոնֆերանսի ողջույնի հեռագիրը՝ ուղղված Ադրբեջանի, Վրաստանի, Իրանի և Թուրքիայի

1 Տե՛ս «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում», էջ 306։

կոմունիստական կազմակերպություններին, որտեղ մասնավորապես ասված է. «Դեռ մոտիկ անցյալում սկսված կոմունիստական աշխատանքը հանձին կոնֆերանսի այսօր տվել է խոշոր հետևանքներ։ Այսօրվանից համարձակ կարելի է ասել, որ կոմունիստական կազմակերպությունը Հայաստանում միակն է, որ իր շողունդներով ու գործելակերպով կազմակերպում և առաջնորդում է պրոլետարական մասսաներին ընդդեմ բուրժուազիայի և նրա դասակարգային պետության»[1]։

1920 թվականի հունվար-մայիս ամիսները հանդիսացան ուժերի հավաքագրման և քաղաքական սուր պայքարի ժամանակաշրջան։ Արմենկոմը հըսկայական քաղաքական-կազմակերպական աշխատանք ծավալեց տեղական կազմակերպությունների, խմբերի ու բջիջների ամրապնդման, աշխատավոր մասսաների շրջանում հեղափոխական պրոպագանդա մղելու ուղղությամբ։ Այդ պայքարը տարվում էր ծանր պայմաններում։ Դաշնակցականները տեսնելով կոմունիստական կազմակերպությունների ծավալած գործունեությունը, դիմեցին կարուկ միջոցների՝ կոմունիստական կազմակերպությունները լիկվիդացնելու և հեղափոխական շարժումները ճնշելու համար։

1920 թվականի փետրվարի 20-ին դաշնակցական կառավարությունը հատուկ շրջաբերական ուղղեց բոլոր մինիստրություններին, որտեղ ասված էր. «Մինիստրների խորհրդի որոշման համաձայն բոլոր մեծամասնականները պետք է հեռացվեն հայկական տերիտորիայի սահմաններից։ Այդ ուղղությամբ արդեն որոշ քայլեր արված են և մի շարք ակտիվ մեծամասնականներ հեռացված են»։

Երկրում ստեղծվում է հալածանք կոմունիստների և նրանց համախոհների նկատմամբ։ Կուսակցական բազմաթիվ գործիչներ, այդ թվում Ս. Կասյանը, Ա. Մռավյանը և ուրիշներ, արտաքսվում են Հայաստանից։ Հայկ Յաղուբյանը, Եղիշե Շամախյանը, Մուշեղ Աղայանը, Արշավիր Շամախյանը և շատ ուրիշներ ձերբակալվում են։ Դաշնակցականները օգտվելով կառավարական որոշումից կողոպտում էին աշխատավորների առանց այն էլ աղքատիկ ունեցվածքը։ Դաշնակցական հարձակմանը կոմունիստները պատասխանում են իրենց շարքերի հետագա ամրապնդմամբ։

Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների ամրապնդման գործում խոշոր նշանակություն ունեցավ Ռկ(բ)կ Կենտկոմի, անձամբ Վ. Ի. Լենինի և Կովկասյան երկրային կոմիտեի օգնությունն ու ղեկավարությունը։ Անդրկովկասի աշխատավորության պայքարը, տեղական կոմունիստական կազմակերպությունների գործունեությունն անմիջականորեն ղեկավարում է Ռկ(բ)կ Կովկասյան երկրային կոմիտեն, որտեղ աշխատում էին հավատարիմ լենինյաններ Ս. Օրջոնիկիձեն, Ս. Կիրովը, Ա. Միկոյանը, Ե. Ստասովան և ուրիշներ։ Մասսաների հեղափոխական պայքարի կազմակերպման գործում կարևոր դեր կատարեց բոլշևիկյան մամուլը։

Ռկ(բ)կ Կովկասյան երկրային կոմիտեի որոշմամբ 1920 թվականի հունվարից Թիֆլիսում սկսում է լույս տեսնել «Պահակ» թերթը, իսկ Երևանում

1 «Պահակ» (Թիֆլիս), 27 հունվարի 1920 թ.։

ապրիլից՝ «Կոմունիստ» թերթը, Ալեքսանդրապոլում՝ «Ալիքը», որոնք, ինչպես նաև «Հոռվա գյուղացիության ձայն» թերթը մեծապես օժանդակում են դաշնակցականների հակաժողովրդական քաղաքականության մերկացմանը, կոմունիստական շարժման հետագա ամրապնդման գործին։

Փետրվար-ապրիլ ամիսներին կուսակցական կոնֆերանսներ ու խորհրդակցություններ են տեղի ունենում Նոր Բայազետում, Ալեքսանդրապոլում, Քրդևանում, Շամշադինում, Խաչաքիլիսայում, Ղամարլվում, Կարսում և այլ վայրերում, որոնք անցնում են հունվարյան կոնֆերանսի որոշումները կյանքում կենսագործելու նշանաբանով։ Աշխատանք է տարվում Զանգեզուրի կոմունիստական կազմակերպությունները ամրապնդելու և համախմբելու ուղղությամբ։

Արդեն 1920 թվականի գարնանը, Մայիսյան ապստամբության նախօրյակին, Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները զգալի ուժ էին ներկայացնում և գլխավորում էին աշխատավորների պայքարը հանուն սովետական իշխանության։

1920 թվականի սկզբներին քաղաքական պայքարի մեջ են ներգրավվում բնակչության ամենատարբեր խավերը։ Դա մասնավորապես բացատրվում էր նրանով, որ դաշնակցականների ներքին հակաժողովրդական քաղաքականությունը մի կողմից, Հայաստանում արևմտյան իմպերիալիստների նվաճողական քաղաքականության ակտիվացումը, մյուս կողմից, բացահայտ կերպով սրել էր քաղաքական մթնոլորտը, ակնհայտ դարձրել հայ ժողովրդի նկատմամբ դաշնակցականների և նրանց օտարերկրյա տերերի վարած քաղաքականության ամբողջ վտանգավորությունը։

Ժողովուրդը տեսնում և հասկանում էր, որ դաշնակցականներն իրենց տիրապետության ընթացքում իրեն չտվեցին ոչ ազատություն, ոչ հող և ոչ էլ խաղաղություն։ Պատերազմները, սովն ու համաճարակը ֆիզիկական բնաջնջման էին ենթարկում ժողովրդին։ Դաշնակցականները բարոյապես ևս սնանկանում են։ Դաշնակցական պետական սիստեմը այլասերված էր։ Չեղծարարությունը, կաշառակերությունն ու չարաշահումները չտեսնված չափերի էին հասել։ Հափշտակումներն ու կեղեքումները բացահայտ սանձարձակության էին վերածվել։ Հայաստանում բուրժուական դեմոկրատիայի ամենատարրական նորմաներն իսկ չէին պահպանվում։ Տիրող կարգերի դեմ ամենափոքր բողոքի արտահայտությունն անգամ դիտվում էր որպես «ազգի դավաճանություն» և պատժվում ամենաբիրտ միջոցներով։

Երկրի դրությունը բարդացել էր նաև նրանով, որ հարյուր հազարավոր գաղթականներ փախչելով թուրքական յաթաղանից, ապաստանել էին Հայաստանում, չունենալով ոչ օթևան և ոչ էլ հաց։ Սովն ու համաճարակը գերեզման էին տանում հազարավոր մարդկանց։ Միայն 1918—1919 թվականների ձմռանը սովից ու համաճարակից մեռել են ավելի քան 150 հազար մարդ։

Դաշնակցականների կառավարական կուսակցություն դառնալը արագացրեց նրանցից հուսախաբ եղած աշխատավոր մասսաների հիասթափության պրոցեսը, նրանց զրկեց ժողովրդի վրա ունեցած երբեմնի ազդեցությունից։

2. ՄԱՅԻՍՅԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

1920 թվականի սկզբներին Սովետական Ռուսաստանի կարմիր բանակը, ջախջախելով օտարերկրյա ինտերվենտներին և ռուսական սպիտակգվարդիական ուժերին, հաղթական քայլերով մոտենում էր Անդրկովկասի սահմաններին։ Դա խիստ բարերար ազդեցություն ունեցավ Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի աշխատավորության մեծ հոկտեմբերի հաղթանակի համար մղվող պայքարի վրա։

1920 թվականի ապրիլի 28-ին Ադրբեջանի բանվորներն ու գյուղացիները կոմունիստական կուսակցության գլխավորությամբ, XI կարմիր բանակի զորամասերի օգնությամբ, տապալեցին մուսավաթականների իշխանությունը և Անդրկովկասում առաջինը հաստատեցին սովետական իշխանություն։ Այդ պատմական հաղթանակը կարևորագույն իրադարձություն հանդիսացավ երկրամասի բոլոր ժողովուրդների կյանքում։ Ազատագրված ադրբեջանական ժողովուրդը եղբայրական օգնության ձեռք մեկնեց Հայաստանի և Վրաստանի աշխատավորներին։ Սովետական իշխանության հաստատումը Ադրբեջանում հեղափոխական վերելքի նոր ալիք առաջացրեց Հայաստանում և Վրաստանում։ Ամրապնդվեց հայ և վրաց աշխատավորության հավատն իրենց մղած պայքարի ելքի նկատմամբ։

Հայաստանի աշխատավորները մեծ ոգևորությամբ ընդունեցին Ադրբեջանում սովետական իշխանության հաղթանակի լուրը։

Մայիսմեկյան ցույցերը Երևանում, Ալեքսանդրապոլում, Կարսում, Սարիղամիշում, Ղարաքիլիսայում, Զանգեզուրում և Հայաստանի այլ վայրերում վերածվեցին Ադրբեջանում սովետական իշխանության պաշտպանության, Ռուսաստանի բանվորների և գյուղացիների հետ համերաշխության ցույցի։ Ամենուրեք ցուցարարները փողոց են դուրս գալիս կոմունիստական լոզունգներով, դաշնակցական կառավարությունը տապալելու և երկրում սովետական իշխանություն հաստատելու կոչերով։

Արմենկոմի անդամ Դ. Տեր-Սիմոնյանը իր հուշերում այդ մասին պատմում է. «Բանվորական մասսաների այդ հախուռն բարձր հեղափոխական տրամադրությունը մարեցնել չէր կարելի և ահա թե ինչու Արմենկոմը ապրիլի 25-ի նիստին հանձնարարում է կուսակցությանը անցնել մայիսի 1-ին բանվորական ցույցի գլուխը և ղեկավարել այդ ցույցը։ Ցույցի կազմակերպումը և ղեկավարությունը (Երևանում — խմբ.) հանձնվում է ընկ. ընկ. Սերգո Մարտիկյանին և Լ. Հովհաննիսյանին։ Ընկ. Մարտիկյանն իրեն հատուկ ոգևորությամբ և թափով ձեռնարկում է դրոշակների, կոմունիստական կուսակցության լիդերների նկարների պատրաստմանը»[1]։

Մայիսի 1-ի վաղ առավոտյան Երևանում սկսված տոնակատարությունը վեր է ածվում հակադաշնակցական մեծ ցույցի։ Դաշնակցականները անզոր են գտնվում այդ ցույցը «հունի մեջ» գցելու։ Դաշնակցական կառավարության ղեկավարները բանակին հրահանգներ են տալիս ցույցերը ցրելու։ Բայց իզուր։ Գնալով ստվարանում էին ցուցարարների շարքերը, որոնք ինտերնացիոնալի

1 «Մայիսյան ապստամբությունը Հայաստանում (1920—1930)», Երևան, 1930, էջ 15։

հնչյունների տակ քայլում էին դեպի պառլամենտի շենքը, ուր տեղի պետք է ունենար միտինգը։ Ցուցարարների առջևից կարմիր դրոշը պարզած գնում էին կոմունիստները։ Նրանք եկել էին իրենց խոսքն ասելու Հայաստանի աշխատավորներին։ Ջգալով իրենց անզորությունը դաշնակցականները ևս որոշում են մասնակցել միտինգին՝ նրան «ուղղություն» տալու նպատակով։

Այդ օրերին դաշնակցական կառավարությանը հյուր եկած մենշևիկյան Վրաստանի մինիստր Ի. Ռամիշվիլին ելույթ է ունենում ցուցարարների առջև, կոչ անելով նրանց «բանականություն» հանդես բերել և հնազանդվել «օրինական» կառավարությանը։ Մենշևիկ «հյուրի» ելույթն ընդհատվում է ցուցարարների սուլոցներով։ Միտինգում կրակոտ ճառով հանդես է գալիս Արմենկոմի անդամ, Երևանի բոլշևիկների ղեկավար Ստեփան Ալավերդյանը։ Նրա ելույթը, որ բազմիցս ընդհատվում է ծափահարություններով, մեղադրական ճառ էր՝ ուղղված տիրող կարգերի դեմ։

Մայիսմեկյան ցույցին պատրաստված դուրս են գալիս նաև Ալեքսանդրապոլի աշխատավորները։ Քաղաքի ընդհատակյա բոլշևիկյան կոմիտեն դեռևս ապրիլի 30-ին կայացած նիստում ծրագրում է մայիսմեկյան ելույթը։ Մինչ այդ Ալեքսանդրապոլի ընդհատակյա կոմիտեն պատրաստում էր աշխատավորությանը ուղղված մարտական կոչ։ «Կոմունիստական կուսակցությունը,— ասված էր այդ կոչում,— Հայաստանի բուրժուական պետության մեջ, որտեղ աշխատավոր մասսաները տնքում են խմբապետական ահռելի ռեժիմի տակ, որտեղ սպեկուլյացիան, կաշառակերությունը, ազգային անվերջ կոտորածներն ու ավերածումները վեր են ածված որոշ սիստեմի, մայիսի մեկին առաջադրում է այն լոզունգները, որոնցով տոգորված են III ինտերնացիոնալը, Խորհրդային Ռուսաստանը և նրա հաղթական կարմիր բանակը...

Ընկերներ,— ասվում է այնուհետև կոչում,— մայիսի 1-ին Անդրկովկասի հայ, թուրք և վրացի բանվորներն ու գյուղացիները համախմբված կոմունիզմի դրոշի տակ պետք է գոչեն։

Մեռնում է դաշնակցականների, մուսավաթականների և մենշևիկների իշխանությունը։

Կեցցե Անդրկովկասի բանվորների և գյուղացիների իշխանությունը...»[1]։

Այս կոչը տարածվում է բանվորների ու քաղաքի աշխատավորության մեջ։

Մայիսի մեկին երկաթգծի և քաղաքի մյուս ձեռնարկությունների բանվորները աշխատանքի դուրս չեն գալիս։ Նրանք վաղ առավոտյան հեղափոխական լոզունգներով ու Կ. Մարքսի, Վ. Ի. Լենինի, Ստ. Շահումյանի նկարներով մասնակցում են աշխատավորության մայիսմեկյան ցույցին։ Դաշնակցականները փորձելով խանգարել ցուցարարներին նույնպես փողոց են դուրս գալիս։ Նրանք նույնիսկ դիմում են զորքի օգնությանը։ Քաղաքի մի շարք վայրերում ընդհարումներ են տեղի ունենում ցուցարարների և դաշնակցականների միջև։ Բանակի զինվորների մի մասը միանում է բոլշևիկ ցուցարարներին։ Այդ օրը քաղաքի աշխատավորության հոծ զանգվածները գնում էին բոլշևիկների հետևից։ Ցույցն անցնում է հեղափոխական բուռն վերելքի պայմաններում։ Միտինգում կրակոտ ելույթներ են ունենում Ա. Նուրիջանյանը, Ս. Մուսայելյանը, Ա. Գո-

1 «Մայիսյան ապստամբությունը Հայաստանում (1920—1930)», էջ 158—159։

դունցը և ուրիշներ։ Միտինգի մասնակիցները մեծ խանդավառությամբ ողջույնի հեռագիր՝են ուղարկում եղբայրական Ադրբեջանի ռազմա-հեղափոխական կոմիտեին։ «Այս հանդիսավոր օրը,— ասված է հեռագրում,— մենք՝ Հայաստանի բանվորները, գյուղացիներն ու զինվորները հայ մուսավաթիստների (դաշնակցականների — խմբ.) հակահեղափոխական դավաճանական կառավարության վրայով մեկնում ենք մեր եղբայրական ձեռքը ձեզ՝ հեղափոխական բանվորներին, գյուղացիներին և ասկյարներին ու հանդիսավոր խոստում ենք տալիս մաքրել հաշիվները հալածանքի և բռնության կառավարության հետ..., այնպես վարվել, ինչպես Դուք վարվեցիք թուրք դաշնակ-մուսավաթիստների կառավարության հետ, որպեսզի մեծ Խորհրդային Ռուսաստանի հետ միասին՝ միացած Արևելքի ճնշված ժողովուրդների հետ, տանենք նրանց միջազգային իմպերիալիզմի դեմ»[1]։

Ղաղախի ադրբեջանական հեղափոխական գյուղացիությունը առանձին խմբերով, կարմիր դրոշներով մոտենում է Հայաստանի սահմաններին՝ ողջունելու ոտքի ելած իրենց դասակարգային եղբայրներին։ Դաշնակցականները պրովոկացիոն լուրեր և հերյուրանքներ են տարածում Ադրբեջանի սովետական իշխանության հասցեին, բորբոքում հետամնաց խավերի շովինիստական կրքերը՝ փորձելով կոտրել մասսաների հեղափոխական տրամադրությունը։

Մայիսմեկյան ցույցերը սովետական իշխանություն հաստատելու նշանաբանով են անցնում նաև Ղարաքիլիսայում, Կարսում, Սարիղամիշում, Զանգեզուրում, Դիլիջանում և Հայաստանի այլ վայրերում։ Մայիսմեկյան ցույցերը Հայաստանում ընդունում են համաժողովրդական բնույթ։

Համընդհանուր քաղաքական ցույցերը մի շարք վայրերում շուտով վերածվում են զինված ապստամբության։

Մայիսի 2-ին Ալեքսանդրապոլի կայարանում գտնվող «Վարդան զորավար» զրահագնացքը, որի հրամանատարն էր կապիտան Սարգիս Մուսայելյանը, դադարում է ենթարկվել դաշնակցական ռազմական հրամանատարությանը և վեր է ածվում ապստամբության նախապատրաստման շտաբի։

Քաղաքում ստեղծված իրադրության մասին ՌԿ(բ)Կ Ալեքսանդրապոլի կոմիտեն մայիսի 3-ին և 5-ին նամակներով տեղեկացնում է Արմենկոմին՝ ընդգծելով մոմենտի ամբողջ լրջությունը և առաջարկելով սկսել զինված ապըստամբություն։ Ալեքսանդրապոլի բոլշևիկները հայտնում են, որ զրահապատը պատրաստ է ապստամբության, կայազորը, ինչպես նաև գավառի աշխատավորությունը համակված են ապստամբական տրամադրությամբ։ Կոմիտեն զգուշացնում էր, որ ապստամբության հետաձգումը ճակատագրական նշանակություն կարող է ունենալ սկսված շարժման ընթացքի համար։

Դաշնակցականները դավադրական քայլի են դիմում։ Տենդորեն նախապատրաստվելով ճնշել ապստամբությունը, նրանք «բանակցություններ» են սկսում բոլշևիկների հետ։ Երևանում դաշնակցական բյուրոյի հանձնարարությամբ Արմենկոմի անդամներ Ս. Ալավերդյանի և Դ. Տեր-Սիմոնյանի հետ բանակցություններ է վարում Հ. Օհանջանյանը, որը փորձում է համոզել բոլշևիկներին հրաժարվել ապստամբությունից։ Նա նույնիսկ «խոստանում» է համոզել

1 «Մայիսյան ապստամբությունը Հայաստանում (1920—1930)», էջ 159—160։

դաշնակցականներին՝ իշխանությունը հանձնել կոմունիստներին։ Ալեքսանդրապոլում նման բանակցություններ են վարում դաշնակցական գավառային կոմիսարն ու մոբիլիզացիայի կոմիսարը։ «Վարդան զորավար» զրահագնացքի հրամանատարության հետ բանակցելու նպատակով Ալեքսանդրապոլ է գործուղվում դաշնակցական բանակի հրամանատարության ներկայացուցիչը։ Նման խորամանկ քայլերի դաշնակցականները դիմում են նաև Կարսում, Սարիղամիշում, Նոր Բայազետում և այլ վայրերում։

Սակայն այդ բանակցությունները արդյունք չեն տալիս։ Հեղափոխական ուժերի դեմ տեռորն ուժեղացնելու և ապստամբությունը կանխելու նպատակով դաշնակցական բյուրոյի որոշմամբ Խատիսյանի կառավարությունը մայիսի 4-ին հրաժարական է տալիս։ Երկրում հայտարարվում է արտակարգ դրություն։ Ստեղծվում է նոր կառավարություն՝ Հ. Օհանջանյանի գլխավորությամբ։ Բոլոր նախարարները նշանակվեցին դաշնակցական կուսակցության բյուրոյի անդամներից։ Հայաստանը բաժանվում է չորս նահանգի (Ղարսի, Շիրակի, Երևանի և Ղարաբաղի)։ Նահանգներում նշանակվեցին գեներալ կոմիսարներ։ Գավառներ են գործուղվում արտակարգ լիազորներ՝ տեղերում զինված ելույթները խափանելու նպատակով։ Զորքը մարտական վիճակում է դրվում։ Երկրում սկսվում են մասսայական ձերբակալություններ։ Գործադուլները հայտարարվում են պետական հանցագործություն, կոմունիստական կուսակցությունը՝ օրենքից դուրս, կառավարության որոշմամբ ստեղծվում են չորս արտակարգ դատարաններ։ Օրենք է ընդունվում մահապատիժ սահմանելու մասին։ Դաշնակցականներն իրենց շուրջը համախմբում են հակահեղափոխական բոլոր ուժերին։

Սակայն դաշնակցականների այս միջոցառումները չկասեցրին մասսաների ելույթները։

Արմենկոմը ապստամբության նախապատրաստման գործում դանդաղում է, որը ճակատագրական նշանակություն է ունենում։ Միայն մայիսի 6-ին Արմենկոմը Ալեքսանդրապոլ է գործուղում իր ներկայացուցիչներին՝ Ա. Մելքոնյանին և Դ. Տեր-Սիմոնյանին։ Հաջորդ օրը «Վարդան զորավար» զրահագնացքում տեղի է ունենում Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների ներկայացուցիչների խորհրդակցություն, որին մասնակցում էին Արմենկոմից՝ Ա. Նուրիջանյանը, Ա. Մելքոնյանը, Դ. Տեր-Սիմոնյանը, զրահագնացքի հրամանատար Ս. Մուսայելյանը, Ալեքսանդրապոլի կազմակերպությունից՝ Ա. Գոգունցը, Լ. Ուլիբեկյանը, Ս. Գրիգորյանը, Թ. Մանդալյանը, Պ. Պետրոսյանը, Ա. Տեր-Սահակյանը, Կարսից՝ Ղ. Ղուկասյանը, Սարիղամիշից՝ Ա. Ճուղուրյանը, Ղազախ-Շամշադինից Կ. Այվազյանը, Քյավթարլուից՝ Ն. Կուրղինյանը։ Խորհրդակցությունն ընտրում է Հայաստանի ռազմա-հեղափոխական կոմիտե, որի կազմում մտնում են Ս. Մուսայելյանը, Ա. Նուրիջանյանը, Ա. Մելքոնյանը, Դ. Տեր-Սիմոնյանը, Ա. Գոգունցը, Պ. Պետրոսյանը, Գ. Սարգսյանը, Ա. Տեր-Սահակյանը, Լ. Ուլիբեկյանը։ Կարմիր զորքերի հրամանատար է նշանակվում Ս. Մուսայելյանը։ Խորհրդակցությունը, որը տևում է մինչև ուշ գիշեր, որոշում է ապստամբությունը սկսել մայիսի 10-ին։

«Մտքերի փոխանակությունը տևեց մինչև ուշ գիշեր,— գրում է խորհրդակցության մասնակից Թ. Մանդալյանը։— Ներկա եղողները գտնում էին, որ հեղաշրջումն անխուսափելի է. չօգտվել ստեղծված դրությունից՝ նշանակում է

քայքայել և ոչնչացնել կուսակցական կազմակերպությունը։ Ապստամբության ռազմական նախագիծը, որը բոլորի կողմից հավանություն գտավ, հետևյալն էր՝ Ղազախից մեր ընկերները կապվում են Աղստաֆայում կանգնած կարմիր բանակի զորամասերի հետ, սկսում շարժումը և տեղեկացնում են մեզ, որից անմիջապես հետո ապստամբում են Ալեքպոլը, Կարսը և Սարիղամիշը։ Ղարաքիլիսան միանում է Դիլիջանին և այսպիսով Հայաստանի հյուսիս-արևելքն ամբողջովին բռնկվում է և ապա մեր զորամասերը շարժվում են Երևանի վրա, Ալեքպոլից և Դիլիջանից միաժամանակ, և ստիպում դաշնակցականներին՝ կամ նահանջել, կամ կռիվն ընդունել։ Երևանում ապստամբություն չէր սպասվում»[1]։

Ռազմա-հեղափոխական կոմիտեն մայիսի 10-ին հրապարակում է կոչ, որով Հայաստանի բանվորների, գյուղացիների և կարմիր զորքերի կամքով տապալված հայտարարեց դաշնակցական կառավարությունը և երկրում հրաչակեց սովետական իշխանություն։

Մայիսի 8-ին ռազմա-հեղափոխական կոմիտե է ստեղծվում նաև Կարսում, որի մեջ մտնում են Ղ. Ղուկասյանը, Ա. Նազարյանը, Դ. Մելիքյանը, Գ. Բայբուրին, Վ. Ղազանչյանը, Ա. Թովմասյանը։ Մայիսի 10-ին Ալեքսանդրապոլի հետ միասին ապստամբություն է բռնկվում նաև Կարսում։

Նույն օրը ապստամբության դրոշ պարզեցին նաև Ալեքսանդրապոլի գավառի գյուղացիները։ Հատկապես նշանակալից են Քյավքարլվում ծավալված դեպքերը։ Դեռևս մայիսի առաջին օրերին գյուղի բժիշկ, ականավոր բոլշևիկ Ա. Փանյանի գլխավորությամբ ստեղծվում է հանձնաժողով, որը գրավում է պահեստները և սերմացուն բաժանում չքավոր գյուղացիությանը։ Մայիսի 8-ին Ն. Կուրղինյանը Ալեքսանդրապոլի խորհրդակցությունից հետո վերադառնում է Քյավքարլու, որտեղ նույն օրը ստեղծվում է ռազմա-հեղափոխական կոմիտե, որի կազմում էին Ա. Փանյանը, Ն. Կուրղինյանը և Ա. Մովսիսյանը։ Մայիսի 10-ին Հեղկոմի գլխավորությամբ ապստամբած գյուղացիները ձերբակալում են շրջանի դաշնակցական ղեկավարներին և զինում ապստամբ գյուղացիներին։ Ապստամբությանն ակտիվ մասնակցում են Պարնիի, Նորաշենի, Ղուլիջանի, Արթիկի և այլ գյուղերի գյուղացիները, որոնց ելույթները գլխավորում են Ս. Գալոյանը, Ե. Գալոյանը և ուրիշներ։

Ալեքսանդրապոլում և Կարսում ծագած ապստամբությունները շփոթ առաջացրին դաշնակցականների շրջանում։ Ժամանակ շահելու և իրենց ուժերը ապստամբների դեմ կենտրոնացնելու նպատակով դաշնակցականները նորից խորամանկ քայլի են դիմում։ Գեներալ Համազովին հանձնարարվում է «դարձի բերել» Մուսայելյանին։ Սակայն նրա ջանքերն իզուր են անցնում։ Սարգիս Մուսայելյանը ցուցաբերում է իսկական կոմունիստին վայել կամք և անսահման նվիրվածություն իր ժողովրդին։ Աննկուն հեղափոխականը դաշնակցական գեներալին վճռականապես մերժում է ասելով. «չշանան շուռ տալ պատմության անիվը, թող չփորձեն կանգնեցնել իրադարձությունների բնական ընթացքը, դաշնակցական կառավարության երգը արդեն երգված է, և մենք կոչ ենք անում երկրի բոլոր կենդանի ուժերին միավորվել կարմիր դրոշների շուրջը և տառապյալ հայ աշխատավոր ժողովրդին դուրս բերել դաշնակցականների ստեղծած ողջ-

---

[1] «Մայիսյան ապստամբությունը Հայաստանում (1920—1930)», էջ 53—54։

բերգական վիճակից։ Հաղորդեցեք կառավարությանը և բոլոր նացիոնալիստներին,— շարունակում է Մուսայելյանը,— որ նրանք հաշտվեն, վերջապես, իրերի գոյություն ունեցող դրության հետ և անհապաղ դադարեցնեն բոլշևիկների հալածանքը... պրոլետարական հեղափոխության կարմիր դրոշը մի քանի օր հետո կծածանվի դաշնակցականների մեռյալ Պառլամենտի վրա...»[1]։

Մուսայելյանը խոր համոզմունքով նշում է, որ Հայաստանի աշխատավոր գյուղացիության և բանվորության միակ փրկությունը սովետական իշխանու-



Ս. Ալավերդյան



Ս. Մուսայելյան



Ղ. Ղուկասյան

թյան հաստատումն է և որ միակ ուժը, որ կարող է փրկել հայ ժողովրդին, դա ուսա հեղափոխական պրոլետարիատն է։

Ժամանակ շահելու և իրենց ուժերը մոբիլիզացնելու նպատակով Կարսում ևս դաշնակցականները ձեռնարկում են մի շարք միջոցառումներ։ Կարսի կայազորի պետ գեներալ Փիրումովը առերես «լոյալ» դիրք է ընդունում ապստամբների նկատմամբ։ Կարսի ապստամբության ղեկավարները սխալ են թույլ տալիս. ապստամբության օրը ձերբակալված դաշնակցական գործիչներին հաջորդ օրը ազատում են։ Գեներալ Փիրումովը ստեղծում է այսպես կոչված «Հայրենիքի փրկության կոմիտե», որն իր շուրջն է համախմբում ռեակցիոն բոլոր ուժերին և Կարսում կուտակված գաղթականների այն մասին, որոնց դաշնակցականները կարողացել էին համոզել, թե բոլշևիկները մտադիր են երկիրը հանձնել թուրքերին։ Մայիսի 12-ին «Հայրենիքի փրկության կոմիտեն» անցնում է հարձակման։ Ալեքսանդրապոլը չի կարողանում օգնության ձեռք մեկնել։ Կարսի ռազմա-հեղափոխական կոմիտեն ժամանակ շահելու նպատակով թողնում է քաղաքը և փոխադրվում բերդ։ Շուտով թշնամին շրջապատում է բերդը։ Ապըստամբները զրկված պարենամթերքից և ռազմական պաշարներից, ստիպված որոշում են մարտերով նահանջել Ալեքսանդրապոլը։ Դաշնակցականների խմբերի դեմ մարտեր մղելով, նրանք հասնում են Ալեքսանդրապոլից 18 կմ հեռավո-

---

1 «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում», էջ 318։

բության վրա։ գտնվող Արգինա գյուղը, որտեղ ստիպված անհավասար մարտի են բռնվում հանկարծակի վրա հասած դաշնակցական ուժերի հետ։ Ապստամբները կռվում են հերոսաբար։ Մարտի ժամանակ հերոսի մահով ընկնում են Ե. Սառուխյանը, Պ. Յավարկովը, Կրեստովսկին և ուրիշներ։ Մարտում ծանր վիրավորված Դ. Ղուկասյանի հետ դաշնակցականները դաժան հաշվեհարդար են տեսնում։

Ալեքսանդրապոլում ապստամբ բանվորներին ու քաղաքի աշխատավորու-



Հ. Սառուխանյան



Բ. Ղարիբջանյան



Ա. Փանյան

թյանը միանում է դաշնակցական բանակի զինվորների զգալի մասը։ Դաշնակցական բանակի գեներալ Խաչատուրովը, գիտակցելով իր ժողովրդի շահերը, անցնում է ապստամբների կողմը, սակայն դաշնակցական տեռորիստի գնդակից նա շուտով զոհվում է։

Ապստամբության օրերին քաղաքական-կազմակերպական մեծ գործունեություն ծավալեց Ռ(բ)Կ Ալեքսանդրապոլի կոմիտեն։ Կոմիտեի անդամներ Բ. Ղարիբջանյանը, Ե. Սևյանը և մյուսները ղեկավարում էին ապստամբների պարեկավորման, կարմիր գվարդիայի ստեղծման, մասսաների մեջ տարվող քաղաքական-կազմակերպական աշխատանքը։ Մայիսի 12-ին Ալեքսանդրապոլի կոմիտեն կոչ է հրատարակում, որտեղ մերկացվում էր դաշնակցականների բախտախնդիր մտայնությունը և օտարերկրյա իմպերիալիստների գաղութային քաղաքականությունը Հայաստանում։ «Միակ փրկության ճանապարհը,— ասվում է կոչում,— ամբողջ աշխարհի ճնշվող դասակարգի միությունն է։ Հայաստանի հեղափոխական մասսաների փրկության ճանապարհը՝ միությունն է Անդրկովկասի և Ռուսաստանի հեղափոխական մասսաների հետ»։

Սակայն գրավելով իշխանությունը, ռազմա-հեղափոխական կոմիտեն դանդաղկոտություն հանդես բերեց սոցիալիստական միջոցառումներ անցկացնելու գործում, հարձակման փոխարեն բռնեց պաշտպանողական դիրք։ Եվ մինչ ռազմա-հեղափոխական կոմիտեն բանակցություններ էր վարում դաշնակցական

ներկայացուցիչների հետ, դաշնակցական բանդաները Սեպուհի գլխավորությամբ մտան քաղաք։ Ալեքսանդրապոլում սովետական իշխանության անկումը հակատագրական նշանակություն ունեցավ ամբողջ երկրի հեղափոխական շարժման համար։

Ալեքսանդրապոլից և Կարսից անմիջապես հետո ապստամբություն բռնկվեց Սարիղամիշում։ Ռազմա-հեղափոխական կոմիտեն, որի կազմում մտնում էին Ա. Ճուղուրյանը (Ադոկ), Լ. Մխչյանը, Ս. Ոսկանյանը, Պ. Կուխմալայկինը և ուրիշներ, իշխանությունը իր ձեռքում է պահում մինչև մայիսի 17-ը։

Կարսի և Ալեքսանդրապոլի անկումից հետո դաշնակցական զորքերը շարժվեցին դեպի Սարիղամիշ։ Գրավելով քաղաքը, դաշնակցականները գնդակահարեցին Պ. Կուխմալայկինին, Ս. Ոսկանյանին և Պ. Մատիչկոյին։

Մայիսի 13—14-ին ապստամբում են Նոր Բայազետի մի շարք գյուղերի աշխատավորներ։ Ալեքսանդրապոլից վերադառնալով Հ. Սարուխանյանը դեռևս մայիսի 8-ին ստեղծում է ռազմա-հեղափոխական կոմիտե, որի կազմում մտնում են Բ. Բատիկյանը, Ս. Մակարյանը, Մ. Պետրոսյանը և ուրիշներ։ 17-ին ապստամբները գրավում են Նոր Բայազետը։ Շուտով ապստամբներին ճնշելու համար կենտրոնացվում են խոշոր ուժեր, որոնց դեմ ապստամբները մի քանի օր անհավասար մարտեր մղելուց հետո նահանջում են։ Դաշնակցականները խոշտանգումների են ենթարկում Հ. Սարուխանյանին։ Գնդակահարվում են նաև ապստամբությանը մասնակցած մի շարք հեղափոխականներ։

Ավելի քան ամիս ու կես է տևում մայիսի 14-ին ապստամբած Ղազախ-Շամշադին գյուղերի դիմադրությունը դաշնակցականներին։ Ապստամբությունը ղեկավարում էր Շավարշ Ամիրխանյանի գլխավորած ռազմա-հեղափոխական կոմիտեն, որի մեջ մտնում էին Ե. Մկրտումյանը, Ան. Բերբերյանը, Գ. Հարությունյանը, Կ. Այվազյանը։ Շրջանի Մովսես, Կարմիր Աղբյուր, Նորաշեն, Զորաթեան, Ղուլալի, Ջինարի, Թոուզ և Բերդ գյուղերում տեղի են ունենում բազմամարդ միտինգներ, որտեղ որոշվում է. «Հայտնել ի գիտություն Խորհրդային Ռուսաստանին, որ Շամշադինի կեղեքված գյուղացիությունը տեր է դառել իր իրավունքներին»[1]։

Մայիսի 19-ին ապստամբության ալիքը տարածվում է Իջևանի շրջանում։ Ապստամբությանն ակտիվ մասնակցում են Ս. Հակոբջանյանը, Ե. Շամախյանը, Ժ. Իշխանյանը, Ե. Մկրտումյանը, Հ. Ցաղուբյանը, Վ. Ալեքսեևը, Ապոստոլովը և ուրիշներ։ Ստեղծված ռազմա-հեղափոխական կոմիտեն դիմում է XI կարմիր բանակի զինվորներին՝ օգնության հասնել ապստամբներին։ Ընդառաջ գնալով ապստամբների խնդրանքին «Ռուսական կարմիր ջոկատը մայիսի 21-ին, ցերեկվա ժամը 12-ին մտավ քաղաք։ Ազգաբնակչությունը դիմավորեց նրան աղ ու հացով և արցունքով աղերսում էր հրամանատարին՝ պաշտպանել Երևանի վրա ապստամբների հետագա արշավանքը, ճնշված ժողովրդին ազատելու համար հակահեղափոխական դաշնակցականների իշխանությունից, որոնք իրենց տխմար քաղաքականությամբ քայքայված Հայաստանը հանձնեցին ար-

1 «Կոմունիստ» (Բաքու), 23 մայիսի 1920 թ.։

մըտյան իմպերիալիստների քմահաճույքին և... եղբայրասպան սպանդանոցի սարսափներին»[1]։

Զանգեզուրում ապստամբությունը բռնկվում է մայիսի վերջերին։ Առաջինը ապստամբության դրոշ է բարձրացնում Խնձորեսկը։ Ապստամբության կազմակերպիչը Զանգեզուրի կոմունիստների ժամանակավոր Կենտրոնական կոմիտեն էր, որին գլխավորում էր Հակոբ Կամարին։ Այստեղ ապստամբությանը ղեկավար մասնակցություն են ունենում Բ. Հարությունյանը, Ք. Մկրտըչյանը, Մ. Մաշուրյանը։ Սակայն Զանգեզուրում, որտեղ բուն էր դրել Դրոյի բանդան, ապստամբությունը լայն ծավալ չի ստանում և շուտով ճնշվում է։

Այսպիսով, ապստամբությունը Հայաստանում ընդունում է համաժողովրդական բնույթ։ Ապստամբները չտեսնված հերոսություն են ցուցաբերում։ Ականատեսներից մեկը՝ Կովկասյան ռազմաճակատի զինվորական Նեչաևը այդ օրերին գրած իր մի զեկուցագրում նշում է. «Ամսի 26-ին (մայիսի — խմբ.) գտնվելով Աչաջուրում, ես վկա եղա գյուղացիների և հարձակվող կառավարական զորքերի միջև սկսված մարտին։ Ես համարձակ, հանգիստ խղճով պընդում եմ, որ ժողովրդական խանդավառության այդպիսի օրինակներ ես, առաջին իսկ կրակոցից, Ռուսաստանի քաղաքացիական պատերազմի մասնակիցս, չեմ տեսել։

Ես տեսնում էի, թե ինչպես մայրերն ու կանայք փամփուշտներով զինում էին իրենց մերձավորներին, և հանձնելով հրացանները, նրանց ուղարկում դիրքերը. դա փաստ է։ Ջումենևալով գնդացիրներ ու թնդանոթներ, սահմանափակ քանակությամբ փամփուշտներով արդյոք նրանք շա՞տ բան կարող էին անել գնդացրային ու հրետանային կրակի դեմ, որով նրանց գնդակոծում էին կառավարական զորքերը»[2]։

Իսկ երբ ապստամբությունը պարտվեց, դաշնակցականներն անցան դաժան տեռորի։ Հունիսի 8-ին որոշվեց ստեղծել «հատուկ քննչական հանձնաժողով» նախարարապետի գլխավորությամբ՝ «1920 թվականի մայիսին Հայաստանի սահմաններում տեղի ունեցած խռովությունների պատճառները քննելու և վերացնելու միջոցները մշակելու նպատակով»։ «Քննչական հանձնաժողովը» անմիջապես ձեռնամուխ եղավ իր պարտականությունների կատարմանը։ Բանտերը լցվեցին հարյուրավոր ապստամբներով։ Հազարավոր մարդիկ փախչում են Հայաստանից և ապաստան գտնում եղբայրական Ադրբեջանում։ Ահա թե ինչ է գրում այդ մասին Ս. Մուսայելյանը 1920 թվականի հունիսի 1-ին Ռ(բ)Կ կենտկոմի կովկասյան բյուրոյին ուղղած իր նամակում. «Այժմ մենք գտնվում ենք բանտում։ Ալեքսանդրապոլում 250-ից ավելի ձերբակալված ընկերներ կան, ամբողջ Հայաստանի բանտերը մերայիններով լիքն են։ Բանտային պայմանները սարսափելի են։ Սովամահ են անում։ Ձերբակալվածները դրամ չունեն, հիվանդության դեպքերը շատանում են. եթե այսպես շարունակվի, ահագին մահացություն կսկսվի։ Տեռորը և մասուզերիզմը դաշնակցականների պետական կառավարության մեջ սիստեմ են դառնում։ Իմ և հինգ (5) այլ ընկերների վերաբերմամբ դատավարություն է տեղի ունենում։ Դա ոչ թե դատ է, այլ կուսակցա-

1 «Մայիսյան ապստամբությունը Հայաստանում (1920—1930)», էջ 181—182։

2 «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ revolutionգիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում», էջ 325։

կան հաշվեհարդար։ Նույնիսկ բուրժուական պետության մեջ ընդունված ամենատարրական կանոնները բացակայում են...

Նրանք կարող են մեզ արձակել և հետո անկյունից խփել, դաշնակցականներն ամեն սրիկայության և ստորության ընդունակ են»։

Բանտերում բոլշևիկներն իրենց պահում են արիաբար։ Երբ Ստ. Ալավերդյանին դաշնակցական դահիճները տանում են գնդակահարության, նա համարձակորեն նրանց երեսին է շպրտում հետևյալ խոսքերը. «Ավել հիշեցեք, հեղափոխության գործը չի մեռնի։ Հայաստանի բանվորներն ու գյուղացիները տեր կդառնան իշխանությանը։ Իսկ դուք, իմացած եղեք, որ իմ թափվելիք արյան յուրաքանչյուր կաթիլի համար կպատասխանեք ձեր հարյուրավոր համախոհների կյանքով»։ Հունիսի սկզբներին գնդակահարվում են Ա. Փանյանը և Ե. Սեվյանը։

Հերոսի նման են իրենց պահում Ս. Մուսայելյանը, Բ. Ղարիբջանյանը և մյուսները։ Նրանք հայ ժողովրդի դահիճներից ներում չեն հայցում և մեռնում են կոմունիզմի հաղթանակի և իրենց ժողովրդի վերածննդի վառ հավատը սրտերում։

Դաշնակցական տեռորը ավելի լայն չափերի կհասներ, եթե Սովետական Ռուսաստանի կառավարությունը վճռականորեն հանդես չգար դրա դեմ։ «Սովետական կառավարությունը,— ասվում է դաշնակցական կառավարությանը օգոստոսի 26-ին ներկայացված նոտայում,— գտնում էր, որ Հայաստանի կառավարությունը պետք է վճռական միջոցներ ձեռնարկի վերջին ժամանակներս տեղի ունեցող արյունոտ ռեպրեսիաներն ու ինքնադատաստանները դադարեցնելու և Հայաստանի ու Սովետական Ռուսաստանի ժողովուրդների խաղաղ համագործակցությունը ծանր փորձություններ չենթարկելու համար»[1]։

Նույնպիսի վճռական բողոքով հանդես են գալիս Սովետական Ադրբեջանի կառավարությունը, Վրաստանի կոմունիստական կուսակցության Կենտկոմը, Արմենկոմը։

Մայիսյան ապստամբությունը խոշոր իրադարձություն հանդիսացավ ոչ միայն հայ ժողովրդի կյանքում, այլև Անդրկովկասի հեղափոխական շարժումների պատմության մեջ։

Կոմունիստական կուսակցության գլխավորությամբ մեծ Հոկտեմբերի հաղթանակի համար մղվող այդ ապստամբությունը Հայաստանի բանվորների ու գյուղացիների պայքարի փայլուն էջերից է։

Ճիշտ է, ապստամբությունը պարտվեց, բայց նա մեծ նշանակություն ունեցավ սովետական իշխանության հաստատման համար Հայաստանի աշխատավորների հետագա պայքարի կազմակերպման գործում։ Մայիսյան ապստամբությունը Հայաստանի ամբողջ աշխատավորության բողոքի պոռթկումն էր ընդդեմ դաշնակցականների և նրանց օտարերկրյա խնամակալների։ Աշխատավորները փորձով համոզվեցին, որ միայն սովետական իշխանության հաստատումը կարող էր փրկել կործանման եզրին կանգնած և ներքին հակասություններից ծվատվող հայ ժողովրդին։

---

1 ՍՄԿԿ Կենտկոմին կից ՄԼԻ կենտրոնական կուսակցության արխիվ (հետագայում՝ ՄԼԻ ԿԿԱ), ֆ. 64, ց. 2, գ. 11, թ. 94։

Ապստամբությունը քաղաքացիական պատերազմի խոշոր դպրոց էր, որը բացեց շատ մոլորվածների աչքերը, նրանց համար պարզ դարձրեց դաշնակցության հայրենադավ քաղաքականության ամբողջ էությունը։

Ապստամբությունը չունեցավ զուտ տեղական նշանակություն։ Այն ստիպեց Հայաստանի վրա աչք դրած ամերիկյան և մյուս իմպերիալիստներին լրջորեն խորհելու Հայաստանը զավթելու ռեալ հնարավորությունների վրա։

Որոնք էին Մայիսյան ապստամբության պարտության հիմնական պատճառները։



Ե. Սևյաե



Հ. Կամարի

Ամենից առաջ պետք է նշել, որ ապստամբության պարտության համար բացասական դեր խաղաց այն հանգամանքը, որ ապստամբությունը միաժամանակ չսկսվեց Հայաստանի տարբեր վայրերում։ Այդ հանգամանքը հնարավորություն տվեց դաշնակցականներին անջատ-անջատ ճնշելու ապստամբությունը։

Ստեղծված իրադրության հետևանքով Արմենկոմը և Հայաստանի Ռազմա-հեղափոխական կոմիտեն չկարողացան փոխհամաձայնեցնել ապստամբ քաղաքների և գյուղերի ելույթները։ Հայաստանի Ռազմա-հեղափոխական կոմիտեն գործեց միայն Ալեքսանդրապոլում և հնարավորություն չունեցավ իրականացնել ապստամբության ղեկավարումը ամբողջ երկրում։ Ապստամբության պարտության գլխավոր պատճառներից մեկը նրա ղեկավարության տատանումներն էին, անվճռականությունն ու հապաղումը։ Արմենկոմը ժամանակին նախաձեռնությունը իր ձեռքը վերցնելու անհրաժեշտ համարձակություն հանդես չբերեց։

Ապստամբության առաջին օրերին կիրառվող հարձակողական տակտիկան շուտով տեղի տվեց պաշտպանողականին։ Տակտիկական հարցի շուրջը նաղած տարաձայնությունները, ապստամբության որոշ ղեկավարների «անարյուն հեղափոխության» և «խաղաղ ելքի» պատրանքները թույլացրին ապստամբների հարձակողական ոգին։ Այդ տարաձայնությունները հատկապես դրսևորվեցին զրահագնացքում մայիսի 13-ին տեղի ունեցած կուսակցական ակ-

տիվի ընդլայնված նիստում, որտեղ մի շարք ղեկավար գործիչներ պաշտպանողական դիրք գրավեցին և քվեարկեցին քաղաքը առանց մարտի հանձնելու օգտին։

Հայաստանը գտնվում էր սովի ճիրաններում։ Երկրում եղած պարենամթերքի չնչին պաշարներն իրենց ձեռքում չկարողացան պահել դաշնակցականները, որոնք առանց այն էլ օգնություն էին ստանում ամերիկյան իմպերիալիստներից։ Զրկված լինելով պարենամթերքից և ժամանակին չկարողանալով զավթել պինանոցները, ապստամբները չկարողացան երկար դիմադրել։ ԱՄՆ-ի ներկայացուցիչ Հասկելը մայիսի 14-ին հանդես է գալիս մի հայտարարությամբ, որտեղ նշում է. եթե ապստամբները վայր չդնեն զենքը, ապա ԱՄՆ-ը կհրաժարվի Հայաստանին նյութական օգնություն տալուց։ Այդ հանգամանքը իր բացասական ազդեցությունն ունեցավ գյուղացիության վրա և նրանց որոշ մասին ետ պահեց ակտիվ գործողություններից։

Դա ամերիկյան տրադիցիոն քաղաքականության կիրառումն էր Հայաստանում։ «Նրանց զենքը պարզ է՝,— գրել է Վ. Ի. Լենինը, մերկացնելով ամերիկյան իմպերիալիստների քաղաքականությունը,— սովի պարանը։ Ահա թե ինչով են նրանք խեղդում ժողովուրդներին»[1]։

Դաշնակցական կառավարությունը, ինչպես ասված է Կոմինտերնի II կոնգրեսում Հայաստանի կոմունիստական կուսակցության ներկայացուցչի դեկուցման մեջ, «որ առաջ բանվորա-գյուղացիական մասսաներին վախեցնում էր ադրբեջանցիների արշավանքի սպառնալիքով, հետագայում, երբ մասսաների համար պարզ դարձավ ձեռնարկվող պատերազմների իմպերիալիստական բնույթը, օգտվեց ամերիկյան հացից, որպես պայքարի հերթական միջոցից, գյուղացիությանը սովամահ անելու սպառնալիքով»[2]։

Գյուղացիության որոշ մասը ընդհանրապես գործում էր տարերայնորեն, անկազմակերպ, որը մասամբ էլ բացատրվում էր Հայաստանի մի շարք շրջաններում կոմունիստական կազմակերպությունների թուլությամբ։

Սովետական Ռուսաստանը, գտնվելով քաղաքացիական պատերազմի մեջ, հնարավորություն չուներ օգնելու ապստամբներին։ Գյանջայում և Լենքորանում մուսավաթականների կողմից նախապատրաստվող խռովությունները այդ հնարավորությունից զրկեց նաև Սովետական Ադրբեջանին։ XI կարմիր բանակի գորքերը ստիպված եղան ուժեր կենտրոնացնել Թուրքիայի կողմից հրահրված մուսավաթական խռովությունները ճնշելու համար։

Չնայած Մայիսյան ապստամբության պարտությանը՝ այն վիթխարի նշանակություն ունեցավ սովետական իշխանության հաստատման համար մղվող Հայաստանի աշխատավորների հետագա պայքարում։

---

1 Վ. Ի. Լենին, երկեր, հատ. 28, էջ 259։

2 «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում», էջ 355։

ԳԼՈՒԽ ՋՈՐՐՈՐԴ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ: ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍՏԵՂԾՈՒՄԸ

1. ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻՋԵՎ 1920 ԹՎԱԿԱՆԻՆ: ՀԱՅ–ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

Առաջին համաշխարհային պատերազմում գերմանական կոալիցիայի պարտությունից հետո, Անտանտը սկսեց աշխարհի նոր վերաբաժանումը: Պարտվող պետություններից էր նաև Թուրքիան, որի բախտը նույնպես պիտի որոշեին հաղթողները:

1920 թվականի ապրիլին Սան-Ռեմոյում (Իտալիա) կայացավ դաշնակիցների Գերագույն խորհրդի նիստը, որտեղ քննվեցին մի շարք հարցեր, այդ թվում նաև Թուրքիայի հետ կնքվելիք հաշտության պայմանները:

Նույն թվականի օգոստոսի 10-ին Սևրում (Ֆրանսիա) հաշտության պայմանագիր կնքվեց Անտանտի և սուլթանական կառավարության միջև:

Սան-Ռեմոյում դաշնակիցները որոշում են Թուրքիայի հետ կնքվելիք հաշտության պայմանագրում մտցնել Էրզրումի, Վանի, Բիթլիսի և Տրապիզոնի վիլայեթների սահմաններում հայկական պետության կազմակերպման հարցը: Այդ որոշումը իր իրավական արտահայտությունը գտավ Սևրի պայմանագրում:

Սևրի հաշտության պայմանագիրը դաշնակիցները կնքել էին սուլթանական կառավարության հետ, որի իշխանությունը փաստորեն Պոլսից դուրս չէր տարածվում, այնինչ Թուրքիայում փաստական իշխանությունը գտնվում էր քեմալականների ձեռքում, որոնք պայքարում էին Սևրի պայմանագրի ոչնչացման համար և դեմ էին հիշյալ վիլայեթները հայերին տալուն: Դաշնակցական կառավարությունը սեփական ուժերով ի վիճակի չէր լուծելու այդ խնդիրը: Իսկ արևմտյան պետությունները չնայած բազմիցս հավաստիացնում էին դաշնակցական կառավարությանը, որ զորքեր կուղարկեն Արևմտյան Հայաստան, սակայն Սան-Ռեմոյում հայտարարեցին, որ իրենք այդ «հնարավորությունը չունեն»:

Վերջապես դաշնակիցների Գերագույն խորհուրդը համաձայնվում է ԱՄՆ-ին հանձնել Հայաստանի մանդատը:

Ինչպես արդեն ասվեց, ԱՄՆ-ը մինչև Սևրի պայմանագրի ստորագրումը, մի շարք պատճառներից ելնելով հրաժարվել էր Հայաստանի մանդատից: Այս-

պիսով, դաշնակիցները իրենց խոստումները չիրականացրին և հայկական պետության կազմակերպման հարցը մնաց չլուծված։

1920 թվականի ամռանը դաշնակցական կառավարության համար նպաստավոր պայմաններ են ստեղծվում կանոնավորելու իր հարաբերությունները Սովետական Ռուսաստանի հետ։ Սովետական իշխանության նախաձեռնությամբ 1920 թվականի մայիս-հուլիս ամիսներին Մոսկվայում բանակցություններ են սկսվում Սովետական Ռուսաստանի և Հայաստանի միջև, որի ժամանակ սովետական կառավարությունն իր համաձայնությունը հայտնեց պայմանագիր կնքել դաշնակցական կառավարության հետ, ճանաչել Հայաստանի անկախությունը։

Խոսելով հայ ժողովրդի նկատմամբ վարած ցարական Ռուսաստանի քաղաքականության մասին, Ս. Մ. Կիրովը, որը 1920 թվականի ամռանը Սովետական Ռուսաստանի դիվանագիտական ներկայացուցիչն էր Վրաստանում, հայտարարեց, որ Սովետական Ռուսաստանն ընդունում է Հայաստանի անկախությունը և որ «...մենք պարտավոր պիտի համարենք օգնել հայերին, նույնիսկ զինական ուժով պաշտպանել անկախ Հայաստանի սահմանները։ Մենք մեր վարկը չափազանց բարձրացրած կհամարենք բոլոր ժողովուրդների առաջ, եթե մեզ հաջողվի հայկական հարցը լուծել ոչ ջարդերով, ինչպես արել են եվրոպացիները, այլ հայ ժողովրդի անկախությունը ապահովելով»[1]։

Թուրքիայում հանուն երկրի անկախության 1920 թվականին պայքար էր ծավալվել օտարերկրյա իմպերիալիստների դեմ։ Հաշվի առնելով, որ քեմալականների շարժումը ուղղված էր ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի կատաղի թշնամիների՝ Անտանտի իմպերիալիստների դեմ, Սովետական Ռուսաստանը պաշտպանում էր այդ շարժումը։ Սակայն քեմալականների շարժումը, ընդհանուր առմամբ լինելով հակաիմպերիալիստական, Անդրկովկասում հետապնդում էր նվաճողական նպատակներ։ Բանակցությունների ժամանակ Սովետական Ռուսաստանի կառավարությունը ձգտում էր վերականգնել Հայաստանի նախապատերազմյան սահմանները։ Համաձայն դաշնակցական կառավարության պատվիրակության ղեկավար Լ. Շանթի 1920 թվականի հունիսի 1-ի Մոսկվայից ուղարկած զեկուցի, Սովետական Ռուսաստանի կառավարությունը սկզբունքորեն համաձայն էր կնքվելիք պայմանագրի մեջ մտցնել Արևմտյան Հայաստանի տերիտորիայի որոշ մասի միացումը Հայաստանին, և որ այդ խնդիրը լուծելու համար ցանկանում էր «...միջնորդի դերում հանդես գալ Քեմալի և մեր միջև»[2]։ Հետագայում Լ. Շանթը խոսելով Մոսկվայի բանակցությունների մասին խոստովանել է, որ «բոլշևիկները կճանչնային մեր անկախությունը, մեզի բոլշևիկ դառնալու պահանջ չէին ըներ, կուզեին միայն, որ փոխադարձ բարեկամական դաշինք կնքեինք»[3]։

Սովետական Ռուսաստանի կառավարությունը միաժամանակ բանակցություններ էր վարում Մոսկվա ժամանած Անկարայի կառավարության պատվիրակության հետ։ Սովետական կառավարությունը ձգտում էր օգտագործել

---

1 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց. 1, գ. 219, թ. 256։

2 Նույն տեղում, գ. 218, թ. 113։

3 «Հուսաբեր», 1960, № 52։

այդ բանակցությունները Հայաստանի և Թուրքիայի սահմանների հարցը ժողովուրդների ազատ ինքնորոշման իրավունքի հիման վրա լուծելու համար և վերջ տալ այն անորոշ վիճակին, որ ստեղծվել էր այդ երկու երկրների միջև։ Թուրքիայի Ազգային մեծ ժողովի նախագահ Մուստաֆա Քեմալին ուղղված 1920 թվականի հունիսի 3-ի նամակում Սովետական Ռուսաստանի արտաքին գործերի ժողկոմ Գ. Չիչերինը գրում էր. «Սովետական կառավարությունը հուսով է, որ դիվանագիտական բանակցությունները Ազգային մեծ ժողովին թույլ կտան հանատատել մի կողմից Թուրքիայի, մյուս կողմից Հայաստանի և Պարսկաստանի ճիշտ սահմաններ, որոնք պահանջում են արդարությունը և ժողովուրդների ինքնորոշման իրավունքը»։

Սովետական կառավարությունը հայտարարում էր, որ պատրաստ է օգնության ձեռք մեկնել աշխարհի բոլոր ժողովուրդներին, միշտ հավատարիմ մնալ յուրաքանչյուր ժողովրդի ազատ ինքնորոշման իրավունքի ճանաչման սկզբունքին։

Սովետական Ռուսաստանը, ինչպես համառուսաստանյան կենտրոնական գործադիր կոմիտեի նիստում տրված իր 1920 թվականի հունիսի 17-ի զեկուցման մեջ նշել է Գ. Չիչերինը, հանդիսանում է բոլոր փոքր ազգերի անշահախնդիր բարեկամ և որ յուրաքանչյուր ազգություն հսնձինս Սովետական Ռուսաստանի կարող է գտնել պաշտպանություն և հովանավորություն իր վրա կատարվող ամեն մի հարձակումից։

Ելնելով այս սկզբունքից, սովետական կառավարությունը Թուրքիայի Ազգային մեծ ժողովի և Հայաստանի կառավարության պատվիրակությունների հետ վարվող բանակցությունների ժամանակ օգտագործեց իր հեղինակությունն ու ազդեցությունը Թուրքիայի և Հայաստանի միջև տերիտորիալ վեճերը լուծելու համար։ Մասնավորապես առաջ է քաշվում էթնիկական սահմանների սկզբունքը և առաջարկվում բնակչության փոխադարձ տեղափոխություն կատարել, որպեսզի երկու կողմերի համար էլ ստեղծվի միատեսակ էթնիկական տերիտորիա։

Սակայն այս հարցի շուրջը պայմանավորվածություն չհայացավ։ ՌՍՖՍՀ-ի արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատի կողմից սովետների VIII համագումարին տրված հաշվետվության մեջ նշվում է, որ դաշնակցականները համաձայնության չեն եկել Հայաստանի սահմանների հարցում։ Բեքիր Սամի բեյի գլխավորած թուրքական պատվիրակության հետ ունեցած բանակցությունների ժամանակ սովետական կառավարությունն առաջ է քաշել թուրքական հին սահմանների այնպիսի ճշգրտման սկզբունք, որի համաձայն մուսուլմանական բնակչությամբ գերակշռող հողերը կանցնեին Թուրքիային, իսկ այն հողերը, որտեղ մինչև 1914 թվականը մեծամասնությունը կազմել են հայերը՝ կանցնեին Հայաստանին։ Թուրքական պատվիրակությունը մերժում է սահմանագծման այդ սկզբունքը։ Ավելին, հետագայում վերադառնալով Անկարա, Բեքիր Սամին սահմանների ճշտման շուրջը Գ. Չիչերինի հետ ունեցած իր զրույցները փորձեց օգտագործել Թուրքիան ընդդեմ Սովետական Ռուսաստանի տրամադրելու համար։

Սովետական կառավարությունը բոլոր ջանքերը գործադրում էր մոսկովյան բանակցությունների հաջող ելքն ապահովելու համար, սակայն թուրքա-

կան պատվիրակությունը ընդառաջող քայլերի չէր դիմում։ Դաշնակցական կառավարությունը ևս ոչ մի քայլի չդիմեց Սովետական Ռուսաստանի հետ հարաբերությունները բարելավելու ուղղությամբ։ Ընդհակառակը, հենց բանակցությունների օրերին դաշնակցական կառավարությունը դաժան ռեպրեսիաների էր ենթարկում Սովետական Ռուսաստանին համակրողներին, իսկ թերթերը լցնում հակասովետական հերյուրանքներով ու զրպարտություններով։



Բ. Լեգրան

Սակայն Սովետական Ռուսաստանի կառավարությունը ամեն կերպ ձգտում էր հաջողությամբ ավարտել բանակցությունները։ Սովետական պետության նախաձեռնությամբ բանակցությունները երկու կառավարությունների՝ Սովետական Ռուսաստանի և Հայաստանի միջև շարունակվեցին։ Սովետական կառավարությունը նպատակահարմար համարեց բանակցությունները շարունակել Բրեվանում, որտեղ հնարավոր կլիներ, ինչպես հայտնում էր Գ. Զիչերինը ՌՍՖՍՀ-ի կառավարության լիազոր ներկայացուցիչ Բ. Լեգրանին՝ «Հայկական կառավարության հետ ուղղակի բանակցությունների միջոցով պարզել նախնական հարցերը։ Նրանց վերաբերյալ համաձայնության բացակայությունը խանգարում էր Մոսկվայում Շանթի դելեգացիայի հետ սովետական կառավարության բանակցությունների հաջող ընթացքին»։

Հուլիսի 19-ին Գ. Զիչերինը բանակցությունների հարցի առթիվ նորից դիմում է դաշնակցական կառավարությանը և կրկին հայտարարում, որ Սովետական Ռուսաստանը հայ ժողովրդի անշահախնդիր բարեկամն է և ցանկանում է օգնել նրան։ «Սովետական Ռուսաստանի բոլոր գործողությունները կովկասում,— ասվում էր հեռագրում,— նպատակ ունեն բարեկամական ներգործություն ունենալ հայ ժողովրդի, ինչպես նաև նրա հարևան մյուս ժողովուրդների հետագա խաղաղ զարգացման վրա։ Հայ ժողովրդի և Մերձավոր արևելքի մյուս ժողովուրդների ապրած ծանր փորձությունների ժամանակ Սովետական Ռուսաստանը հանդես է գալիս որպես ամեն մի ազգության աշխատավորների անշահախնդիր բարեկամ։

Սովետական Ռուսաստանը կշարունակի ընթանալ ամեն մի ազգության աշխատավոր մասսաների նկատմամբ անաչառ բարեկամական վերաբերմունքի այդ նույն ուղիով և հայ ժողովուրդը կարող է հույս դնել նրա մշտական բա-

բնակամական վերաբերմունքի ու ուժերի սահմաններում նրա օգնության վրա՝ հայ ժողովրդին սպառնացող նոր արյունալի աղետները կանխելու համար»[1]։

Բանակցությունները Երևանում շարունակվելու կապակցությամբ Սովետական Ռուսաստանի կառավարությունը Հայաստանի կառավարությանը կից նշանակում է իր լիազոր-ներկայացուցիչին։ Այդ առնչությամբ Գ. Չիչերինը հուլիսի 29-ին դաշնակցական կառավարությանը հայտնում է հետևյալը. «Հայկական հանրապետությանը կից մեր լիազոր-ներկայացուցիչ է նշանակված ընկեր Լեգրանը, որի խնդիրը կայանում է Ռուսական Սովետական Հանրապետության և Հայկական հանրապետության միջև բարի դրացիական հարաբերություններ հաստատելու, բոլոր վիճելի հարցերը կարգավորելու, նրանց միջև եղած կոնֆլիկտները վերացնելու և երկու հանրապետությունների միջև վերջնական խաղաղությունը ամրապնդելու մեջ»[2]։

Ի պատասխան ՌՍՖՍՀ-ի արտաքին գործերի ժողովրդական կոմիսարի այս առաջարկի, դաշնակցական կառավարությունը հայտնել էր, որ «Հայաստանի կառավարությունը ոչնչով դեմ չէ նշված բանակցությունները Երևան տեղափոխելուն, որոնք վարելու է ռուսական սովետական կառավարության ներկայացուցիչ Լեգրանը... Կառավարությունը պատրաստ կլինի Հայաստանում ընդունել ռուսական սովետական կառավարության պատգամավորներին՝ հետագա բանակցությունների համար։ Այդ իմաստով կառավարության կողմից հեռագիր է ուղարկված Մոսկվա՝ Շանթինին»։ Իր կառավարության այս հայտարարությունը արտաքին գործերի մինիստր Հ. Օհանջանյանը կրկին հաստատում է 1920 թվականի հուլիսի վերջերին Գ. Չիչերինին ուղարկած հեռագրով։

Բանակցությունները Երևան փոխադրելու կապակցությամբ դաշնակցական կառավարության դիվանագիտական ներկայացուցիչը Վրաստանում՝ Տ. Բեգզադյանը, դեռևս հուլիսի 6-ին գրում է դաշնակցական կառավարության արտաքին գործերի մինիստրին, որ «...իմ կարծիքով Չիչերինին մի պատասխան միայն պետք է տալ, որ կանչում ենք պատգամավորությունը մանրամասն զեկուցում լսելու համար և միայն դրանից հետո կտանք մեր վերջին որոշումը... Բացի այդ, պարզ է՝ քանի որ դաշն չի կնքվել մեր մեջ, ոչ մի պատգամավորության կամ միսիայի ընդունելու մասին խոսք լինել չի կարող՝ մինչև մեր մեջ վերջնականապես համաձայնություն կնքվելը։ Մի խոսքով, ըստ իս, պատասխանը պիտի լինի վճռական և խրոխտ, մենք ժամանակ կվաստակենք, մինչև կատանանք Անգլիայից եկած ռազմամթերքը[3] և այն ժամանակ կարող կլինենք դիմադրել նույնիսկ ռուս զորքերին... Ղազախի շրջանը ամրացրեք»[4]։

Դաշնակցական կառավարությունը չէր ցանկանում համաձայնության գալ Սովետական Ռուսաստանի հետ։ Սակայն բացեիբաց հրաժարվել բանակցու-

---

1 «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում», էջ 353։

2 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 560, մաս I, թ. 31։

3 Տե՛ս 1920 թվականի օգոստոսին դաշնակցական կառավարությունը ստանում է Անգլիայից հրացաններ, զնդացիրներ, մեծ քանակությամբ փամփուշտ, համազգեստ և այլն (տե՛ս «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում», էջ 359)։

4 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 276, ց. 1, գ. 218, թ. 127։

Թյուններից, հրապարակորեն հրել օգնության նպատակով հայ ժողովրդին մեկնած Սովետական Ռուսաստանի ձեռքը՝ չէր կարող։ Դաշնակցականները զանազան պատրվակներով ձգձգում են բանակցությունների շարունակումը Երևանում։ 1920 թվականի հուլիսի վերջերին Լեգրանը արդեն գտնվում էր Սովետական Ադրբեջանի և Վրաստանի սահմանագլխում, սակայն դաշնակցական կառավարությունը հրաժարվում էր նրան ընդունել Երևանում, պատճառաբանելով, որ իր կողմից բանակցությունները պետք է շարունակի վարել Լ. Շանթը, որը դեռևս չի վերադարձել Մոսկվայից։

1920 թվականի հուլիսի 29-ին Բ. Լեգրանը Թիֆլիսից դաշնակցական կառավարության արտաքին գործերի մինիստրին հեռագրով հաղորդում է, որ ՌՍՖՍՀ-ի կառավարությունը լիազորել է իրեն հաշտության բանակցություններ վարել Հայաստանի Հանրապետության կառավարության հետ, հուսալով, որ իր ժամանումը Երևան կհասցնի այն բանին, որ շուտափույթ բարեկամական հարաբերություններ կհաստատվեն երկու հանրապետությունների միջև։ Լեգրանը, միաժամանակ նշում էր, որ «Սովետական Ռուսաստանի բարեկամական և խաղաղ մտադրությունները չեն հանդիպում Հայաստանի կառավարության այն արձագանքին, որ դառնար հաշտության բանակցությունների շուտափույթ և հաջող ավարտման գրավականը»։

«Խաղաղ հարաբերությունների ժամանակավոր ընդհատումից խուսափելու համար,— նշվում էր այնուհետև հեռագրում,— սովետական կառավարությունը անհրաժեշտ է համարում հաշտության բանակցությունների վերսկսումը Երևանում, չհետաձգելով այն մինչև Շանթի պատվիրակության վերադարձը Մոսկվայից, որի Երևան շուտ ուղևորվելու համար ձեռք են առնված բոլոր միջոցները»։ Այսպիսով, Սովետական Ռուսաստանը ոչ թե ձգձգում էր բանակցությունները, այլ ընդհակառակը, ամեն կերպ աշխատում էր արագացնել բանակցությունների վերսկսումը Երևանում։ Սովետական կառավարությունը ելնում էր այն բանից, որ «Հայաստանի սահմաններում ստեղծված իրադրության պայմաններում Սովետական Ռուսաստանի հետ հաշտության բանակցությունների ամեն մի ընդհատում կարող է միանգամայն անցանկալի բարդություններ առաջ բերել երկու հանրապետությունների ժողովուրդների հարաբերությունների մեջ, և այդ դեպքում կատարվածի համար պատասխանատվությունը կընկնի Հայաստանի կառավարության վրա»։ Մուտ երկու ամիս Սովետական Ռուսաստանի դիվանագիտական միսիան, որի ներկայությունն այնքան անհրաժեշտ էր Հայաստանում, ստիպված է լինում մնալ Թիֆլիսում։

Չնայած Սովետական Ռուսաստանի կառավարության այս ձգտումներին, դաշնակցական կառավարությունը հենց այդ օրերին շարունակում է իր ռազմական գործողությունները Սովետական Ադրբեջանի և նրա սովետական պաշտպանող կարմիր բանակի դեմ։ Այդ անկարգություններին վերջ տալու և Սովետական Ադրբեջանի սահմանագլխում խաղաղությունը վերականգնելու համար XI կարմիր բանակի հրամանատարությունը նշված շրջաններն է մըտցընում կարմիր բանակի զորամասեր։ Դաշնակցական կառավարությունը ռազմական գործողություններ է սկսում Սովետական Ռուսաստանի կարմիր բանակի դեմ։ Չնայած XI կարմիր բանակի հրամանատարության նախազգուշա-

ցումներին, դաշնակցականները չեն հրաժարվում իրենց արկածախնդիր քաղաքականությունից։

1920 թվականի օգոստոսի 10-ին Թիֆլիսում ժամանակավոր համաձայնագիր է կնքվում Սովետական Ռուսաստանի և Հայաստանի կառավարության միջև, որի նպատակն էր Սովետական Ադրբեջանի և դաշնակցական Հայաստանի փոխհարաբերությունների կարգավորումը։ Ըստ համաձայնագրի Սովետական Ռուսաստանի զորամասերը ժամանակավորապես պետք է մտնեին Ղարաբաղի, Զանգեզուրի և Նախիջևանի գավառները՝ աղգամիջյան ընդհարումները կանխելու նպատակով[1]։

Համաձայնագրի ստորագրումը խիստ դժգոհություն է առաջացնում Անդրկովկասում գտնվող Անտանտի ներկայացուցիչների մեջ։ Ինչպես իր կառավարությանը Թիֆլիսից հայտնում էր դաշնակցության դիվանագիտական ներկայացուցիչը, Անգլիայի ներկայացուցիչ Լյուկը հայտնել է Հայաստանի ներկայացուցչին, որ այդ համաձայնագրով Հայաստանը թշնամու առջև բացում է իր դռները և այլևս փակել չի կարող և որ Հայաստանը երես է դարձնում Անտանտից ու վերջինս դժվար թե այլևս օգնի նրան։ Նույնը կրկնում է նաև Ֆրանսիայի ներկայացուցիչ դե Մարտելը[2]։ Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչը շտապում է հանգստացնել նրանց, հայտարարելով, որ համաձայնագիրը ոչ այլ ինչ է, եթե ոչ ժամանակավոր զինադադար, տակտիկական մանյովր, որի նպատակն է ժամանակ շահել մինչև դաշնակիցներից զենք ստանալը[3]։

Դաշնակից պետությունների դժգոհությունը հասկանալի է։ Նրանք չէին ցանկանում, որ բարելավվեն Սովետական Ռուսաստանի և Հայաստանի հարաբերությունները, և Սովետական Ադրբեջանի ու Հայաստանի ժողովուրդների միջև խաղաղություն հաստատվի։

Դաշնակցական կառավարությունը ոգևորված նույն օգոստոսի 10-ին կնքված Սևրի պայմանագրով, ըստ էության արհամարհում էր Սովետական Ռուսաստանի հետ ստորագրած օգոստոսի 10-ի համաձայնագիրը և սահմանային կոնֆլիկտներ էր ստեղծում, միաժամանակ կեղծ լուրեր տարածելով «սովետական զորքերի հարձակման» մասին։ Դա արվում էր սովետական զորքերի դեմ դաշնակցական զինված ուժերի գործողությունները արդարացնելու նպատակով։ Ահա թե այդ օրերին ինչ է հաղորդել Կովկասյան ռազմաճակատի ռազմա-հեղափոխական խորհրդի անդամ Գ. Կ. Օրջոնիկիձեն Լեգրանին. «Ըստ ունեցած տեղեկությունների հայկական զորքերը խմբավորվում են և ուժերը քաշում Կուշչիբելակի շրջանը, որը հակասում է և խախտում օգոստոսի 10-ի համաձայնագրի 4-րդ կետը»։ Բանակի ռազմա-հեղափոխական խորհուրդը խնդրում է Հայաստանում ՌՍՖՍՀ-ի ներկայացուցչության, որպեսզի նա «առաջարկի հայկական կառավարությանը դադարեցնել վերը նշված ուժերի կենտրոնացումը, որովհետև հակառակ դեպքում մեր կողմից կձեռնարկ-

---

1 Համաձայնագիրը տե՛ս ՄԼԻ ԿԿԱ, ֆ. 64, ց. 2, գ. 11, թ. 54։

2 Տե՛ս ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 440, թ. 36—40։

3 Տե՛ս նույն տեղում։

վեն համապատասխան միջոցառումներ։ Արդյունքների մասին ռազմա-հեղափոխական խորհուրդը խնդրում է հաղորդել»։

Դաշնակցական կառավարության կողմից բանակցությունների արհեստական ձգձգումը հասցրեց այն բանին, որ Հայաստանը փաստորեն մեկուսացվեց։ Քեմալականները, օգտվելով այդ հանգամանքից, սկսեցին իրագործել Հայաստանը զավթելու իրենց ագրեսիվ քաղաքականությունը։ Դեռևս 1920 թվականի հունիսին Կարսի մարզի Օլթիի օկրուգում ռազմական գործողություններ սկսվեցին դաշնակցական Հայաստանի և քեմալական Թուրքիայի միջև։ Անգլիացիք 1919 թվականին մաքրել էին Կարսի մարզը թուրքական զորքերից և այն հանձնել Հայաստանի կառավարությանը, որը սակայն իր զորքերը չէր մտցրել Օլթիի։ 1920 թվականի հունիսին դաշնակցական կառավարությունը փորձեց վերցնել այն։ Հայկական զորքերին սկզբում հաջողվեց մտնել վերոհիշյալ շրջանը, բայց շուտով, թուրքական զորքերի հարձակման հետևանքով, նրանք ստիպված եղան թողնել գրաված հողերը։

Սկսված ռազմական գործողությունների կապակցությամբ հունիս և հուլիս ամիսներին նոտաների փոխանակություն տեղի ունեցավ Հայաստանի և քեմալական Թուրքիայի կառավարությունների միջև։

Անկարայի կառավարության հուլիսի 8-ի նոտայում կրկին անգամ բացահայտվեց նրա զավթողական քաղաքականությունը։ Այդ նոտայում թուրքական կառավարությունը հայտարարում էր, որ նա Հայաստանը ճանաչում է այն սահմաններում, որոնք նշված էին Բրեստ-Լիտովսկի պայմանագրում և նրա մասը կազմող Բաթումի կոնվենցիայում։ Այնինչ Սովետական Ռուսաստանը դեռևս 1918 թվականի նոյեմբերին չեղյալ էր հայտարարել Բրեստ-Լիտովսկի պայմանագիրը։ Ինչ վերաբերում է Թուրքիայի և Հայաստանի միջև Բաթումում կնքված պայմանագրին, ապա այն չէր հաստատվել համապատասխան կառավարությունների կողմից։

Իր պատասխանում դաշնակցական կառավարությունը հայտնում էր, որ Հայաստանի և Թուրքիայի սահմանները որոշելու են դաշնակիցները, իսկ մինչև այդ հայկական զորքերը չէին անցնելու 1914 թվականի ռուս-թուրքական սահմանը[1]։

Այսպիսով, դաշնակցական կառավարությունը հայ ժողովրդի բախտը կապում էր Թուրքիայի նկատմամբ Անտանտի վարած քաղաքականության հետ և կանգնում հայ ժողովրդի համար կործանիչ ուղու վրա։ Ոչ ԱՄՆ-ը, ոչ Անգլիան, ոչ Ֆրանսիան իրականում չէին մտածում հայ ժողովրդին օգնություն ցույց տալու մասին։ Այդ պետությունները հետապնդում էին միմիայն իրենց գաղութարարական նպատակների իրագործումը և Հայաստանը նրանց ձեռքում սոսկ դիվանագիտական սակարկությունների առարկա էր հանդիսանում։

Դաշնակցական կառավարության պատասխաններից պարզվում է նաև, որ վարվող բանակցություններում նա անկեղծ չէր Սովետական Ռուսաստանի հետ։ Իրականում դաշնակցությունը Արևմտյան Հայաստանի հարցը ցանկանում էր լուծել իմպերիալիստական պետությունների միջոցով։

---

1 Տե՛ս ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 604, թ. 13—18։

Ստեղծված պայմաններում հայ ժողովրդի շահերը պահանջում էին, որ Հայաստանը խաղալիք չդառնա Անտանտի ձեռքում։ Հենց այդ նպատակն էր հետապնդում Սովետական Ռուսաստանը, որը ցանկանում էր Հայաստանը հեռանա Անտանտից և դառնա չեզոք ու անկախ պետություն։

Սովետական Ռուսաստանի արտաքին գործերի ժողկոմ Գ. Չիչերինը իր հուլիսի 19-ի նոտայով նախազգուշացնում էր դաշնակցական կառավարությանը Թուրքիայի կողմից սպառնացող վտանգի մասին։ Եվ իսկապես, Օլթիի դեպքերի կապակցությամբ դաշնակցական կառավարությանն ուղղած իր նոտաները Թուրքիան վերջնագիր էր համարում[1]։ Սակայն դաշնակցական կառավարությունը լուրջ ուշադրություն չդարձնելով Սովետական Ռուսաստանի նախազգուշացմանը և համապատասխան եզրակացությունների չհանգելով, ղեկավարվում էր Անդրկովկասում Անտանտի ներկայացուցիչների ցուցումներով, որոնք դեմ էին Սովետական Ռուսաստանի և Հայաստանի միջև պայմանագրի կնքմանը։ Հենց այդ պատճառով էլ դաշնակցական կառավարությունը ձգտում էր վիժեցնել իր և Սովետական Ռուսաստանի միջև տարվող բանակցությունները։

Անգլիան, որ զավթել էր նախկին Թուրքական կայսրության հարուստ տերիտորիաները և Անտանտի մյուս պետություններից բոլորից շատ էր շահագրգռված քեմալական շարժման ճնշմամբ, փորձեց այդ իրականացնել Հունաստանի միջոցով։ Միաժամանակ Հայաստանի և Թուրքիայի միջև պատերազմ հրահրելու նպատակով, Անտանտը օգտագործեց Հայաստանի ու Անդրկովկասի նկատմամբ քեմալականների նվաճողական ձգտումները, հուսալով, որ իրեն վերջին հաշվով կհաջողվի պատերազմի մեջ ներքաշել Սովետական Ռուսաստանին։

Պայմանագրի բացակայությունը Սովետական Ռուսաստանի և Հայաստանի միջև ձեռնտու էր Անկարայի կառավարությանն իր զավթողական պլանները Հայաստանի և Անդրկովկասի նկատմամբ իրագործելու համար։ Այդ հանգամանքը գործողություններ ազատություն էր ընձեռում թուրքերին։ 1920 թվականի սեպտեմբերին թուրքերը արևելյան ճակատում կենտրոնացրել էին մոտ 50 հազարանոց բանակ։ Սեպտեմբերին նրանք անցան հարձակման և 29-ին գրավեցին Սարիղամիշն ու Կաղզվանը։ Հենց նույն օրը Հայաստանում ՌՍՖՍՀ-ի լիազոր-ներկայացուցիչ Բ. Լեգրանը Գ. Չիչերինին հեռագրեց. «Թուրքերը հարձակում են սկսել Կարսի ռազմաճակատում, գրավել են Սարիղամիշը։ Անհրաժեշտ է սովետական կառավարության անհապաղ և վճռական դիմումը թուրքերի հարձակումը կանգնեցնելու համար»։

1920 թվականի հոկտեմբերի 9-ին հանդես գալով ՌԿ(բ)Կ Մոսկվայի կազմակերպության ակտիվի խորհրդակցությունում Վ. Ի. Լենինը նշեց. «Վերջերս թուրքերը հարձակում են սկսել Հայաստանի վրա, նպատակ ունենալով գրավել Բաթումը, իսկ հետո կարող է նաև Բաքուն։ Հասկանալի է, որ մենք այդ հարցում պետք է հանդես բերենք մաքսիմում զգուշություն»[2]։ Սովետական Ռուսաստանի կառավարությունը հաշվի էր առնում, որ քեմալական Թուրքիայում

---

1 Տե՛ս ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 604, թ. 15։

2 В. И. Ленин, Полное собрание сочинений, հատ. 41, էջ 339—340։

իշխանության գլուխ են կանգնած կալվածատերերը և կապիտալիստները, որոնք կարող էին անցնել ՌՍՖՍՀ-ի թշնամիների կողմը։ Վ. Ի. Լենինը, խոսելով Թուրքիայի նկատմամբ Անտանտի վարած քաղաքականության մասին, նշել է. «Թուրքիան ղեկավարում են կադետները, օկտյաբրիստները, աղգայնականները, որոնք պատրաստ են մեզ Անտանտին ծախել»[1]։

Ելնելով Վ. Ի. Լենինի ցուցումներից, Գ. Չիչերինը 1920 թվականի հոկտեմբերի 14-ին հետևյալ դիրեկտիվն է տալիս Հայաստանում ՌՍՖՍՀ-ի լիազորներկայացուցիչ Լեգրանին. «Խիստ զգույշ եղեք քեմալականների, ինչպես նաև հայերի (նկատի է առնվում դաշնակցական կառավարությունը — խմբ.) հետ ունեցած հարաբերություններում, որպեսզի հնարավորություն չտալ մեզ ներգրավելու ակտիվ գործողությունների մեջ։ Սիստեմատիկաբար անցկացրեք խաղաղ քաղաքականություն, որպեսզի Անդրկովկասում թույլ չտալ լուրջ ճգնաժամ։ Մատնանշեք հայերին, որ մենք պատրաստ ենք միշնորդ լինել իրենց և քեմալականների միջև»։

Լեգրանին գրած մի այլ նամակում Չիչերինը ընդգծում է, որ «Դաշնակցականների հետ ունեցած Ձեր հարաբերությունների ժամանակ նրանց կատեգորիկ պատասխանեցեք, որ մենք բոլորովին չենք ցանկանում, որպեսզի Հայաստանին ինչ-որ վնաս հասցվի։ Մենք պատրաստ ենք այդ պատճառով, եթե դաշնակցականները ցանկանում են, հանդես գալ որպես միջնորդ»։

Հոկտեմբերի 13-ին Գ. Չիչերինը Վ. Ի. Լենինի ցուցումով կրկին անգամ դիրեկտիվ է տալիս Բ. Լեգրանին՝ ձեռնարկել բոլոր միջոցները հայ ժողովրդին օգնելու համար։ Սովետական Ռուսաստանի արտաքին գործերի ժողկոմը հայտնում էր սովետական կառավարության անկեղծ ու բարեկամական զգացմունքները հայ ժողովրդի նկատմամբ և պատրաստակամությունը՝ նրան օգնելու։

Այդ ժամանակ Հայաստանում ստեղծվել էր չափազանց բարդ իրադրություն։ Դաշնակցականները բանակցություններ էին վարում և՛ Սովետական Ռուսաստանի և՛ Անտանտի հետ։

Հոկտեմբերի 24-ին Բ. Լեգրանը հաղորդում է Չիչերինին, որ Երևան է ժամանել «անգլիական կոմիսար Ստոքսը, որը կարճ ժամանակ դրանից առաջ արդեն եղել էր Երևանում։ Ստոքսը, մեզ հասած տեղեկությունների համաձայն, առաջարկել է անդրկովկասյան կոնֆեդերացիա ստեղծելու պլան, որի մեջ, բացի Վրաստանից ու Հայաստանից, պետք է մտներ նաև Ադրբեջանը, որտեղ Ստոքսի հաշիվներով մոտ ապագայում իշխանությունը զավթելու են մուսավաթականները, և Դաղստանը։ Ըստ երևույթին, հենց այդ կապակցությամբ է այստեղ եկել Վրաստանի նախկին զինվորական մինիստր Գեորգաձեն, որի հետ ժամանել են մի քանի զինվորականներ։ Սպասվում է ֆրանսիական ներկայացուցչի ժամանումը։ Ստոքսը Երևանում թողել է մշտական ներկայացուցիչ, ինչ առաջներում չէր արել։ Բացի դրանից, այստեղ կան իտալական և ամերիկյան ներկայացուցչություններ»։

Հոկտեմբերի 12-ին Սովետական Ռուսաստանի միսիան ժամանում է Երևան և սկսվում են բանակցությունները։ Դրանք վիժեցնելու նպատակով դաշնակցական կառավարությունն աշխատում է անընդունելի պահանջներ ներկա-

---

[1] *В. И. Ленин*, Полное собрание сочинений, հատ. 42, էջ 125։

յացնել Լեգրանին։ Դաշնակցությունն իր այդ քաղաքականությունում ղեկավարվում էր Անտանտի իմպերիալիստների ցուցումներով, որոնք չէին ցանկանում Սովետական Ռուսաստանի և Հայաստանի հարաբերությունների կարգավորումը։

Շնորհիվ Սովետական Ռուսաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Լեգրանի ջանքերի, հոկտեմբերի 28-ին հաջողվեց նախնական պայմանագիր կնքել երկու կողմերի միջև։

Պայմանագրի առաջին հոդվածում ասված էր. «...Ելնելով Ռուսաստանի Սոցիալիստական Ֆեդերատիվ Սովետական Հանրապետության կողմից հռչակված բոլոր ժողովուրդների ազատ ինքնորոշման իրավունքից՝ ընդհուպ մինչև լիակատար անջատումը այն պետությունից, որի կազմի մեջ նրանք մտնում են, Ռուսաստանն անվերապահորեն ճանաչում է հայկական պետության ինքնուրույնությունն ու անկախությունը և կամավոր կերպով հրաժարվում բոլոր այն սուվերեն իրավունքներից, որոնք պատկանել են Ռուսաստանին Հայաստանի ժողովրդի և նրա տերիտորիայի նկատմամբ»։

Պայմանագրում նշվում էր նաև, որ «ՌՍՖՍՀ-ը արդարացի է համարում Թուրքահայաստանի մարզերի միացումը Հայաստանի հանրապետությանը և պատրաստակամություն է հայտնում ցույց տալ իր բարեկամական աղդեցությունը դաշնակից պետությունների հանդեպ՝ նշված մարզերի կամ նրանց մի մասի Հայաստանին փաստորեն միացնելու նպատակով»։

Ի նկատի ունենալով Հայաստանի տնտեսական ծանր դրությունը, Սովետական Ռուսաստանի կառավարությունը համաձայնվում էր Հայաստանին տալ երկուսկես միլիոն ռուբլի ոսկով անվերադարձ փոխառվություն, բաց թողնել այնքան քանակությամբ նավթ, որը կբավարարեր Հայաստանի կարիքները, որից 500 հազար փութ բաց թողնել անմիջապես, տալ վագոններ, ինչպես և արդյունաբերական դազգահներ»[1]։

Նման պայմանագիր կարելի էր կնքել ավելի շուտ, հունիս-հուլիս ամիսներին, երբ Մոսկվայում սկսվել էին բանակցությունները Սովետական Ռուսաստանի և Հայաստանի միջև։ Այդ դեպքում թուրքերը չէին հարձակվի Հայաստանի վրա և հայ ժողովուրդը չէր ներքաշվի պատերազմի մեջ։ Սակայն բանակցությունների ընթացքում, դաշնակցական կառավարության երկդիմի քաղաքականության հետևանքով, համաձայնությունը կայացավ շատ ուշ՝ հոկտեմբերի 28-ին, երբ ոչ միայն արդեն սկսվել էր պատերազմը, այլև դաշնակցական կառավարությունը պարտության նախօրյակին էր գտնվում։ Հոկտեմբերի 30-ին ընկավ Կարսը, մի քանի օրից հետո՝ Ալեքսանդրապոլը, իսկ այնուհետև՝ հաշտություն կնքելու նպատակով, դաշնակցական կառավարությունը բանակցությունների մեջ մտավ Թուրքիայի հետ։ Պայմանագիրը, որ դեռ պիտի հաստատվեր համապատասխան կառավարությունների կողմից, ուժի մեջ չմտավ և գործնական նշանակություն չունեցավ։

Պատերազմում դաշնակցական կառավարությունը պարտություն կրեց, որը ապացուցեց նրա քաղաքականության ամբողջ սնանկությունը։ Վերոհիշյալ կառավարությունը բանակ էր կանչել 40 հազարից ավելի մարդ։ Դրանցից ռազ-

1 Պայմանագիրը տե՛ս ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 632, թ. 1—5 և 11։

մաճակատում էին գտնվում մոտ 32 հազար զինվոր, որից 24 հազարը գործում էր Սարիղամիշ-Կարս ուղղությամբ։

Զինվորների զգալի մասը չէր վստահում կառավարությանը։ Գնալով ուժեղանում էր դաշնակցական բանակի բարոյալքումը և քայքայումը։ Դաշնակցականների ռազմական մինիստրը նոյեմբերի 5-ին Ալեքսանդրապոլից հուսահատական հեռագիր է ուղարկում կառավարության նախագահին. «Մեր զորքերը չեն ցանկանում կռվել,— ասվում է հեռագրում,— այլ հաշտություն են ցանկանում։ Նման պայմաններում հնարավոր չէ շարունակել պատերազմը։ Առաջարկում եմ՝ առաջին՝ բանակցություններ մեջ մտնել և հաշտություն կնքել, երկրորդ՝ անմիջապես զորացրել երեսունից բարձր տարիք ունեցող զինվորներին, կազմակերպելով կամավորական զորամասեր, խոստանալ մոտ ապագայում աստիճանաբար զորացրել և մնացածներին։ Կարծում եմ, որ ամեն ինչ կորած կլինի, եթե շարունակենք պատերազմը»[1]։

Պատերազմում կրած պարտության պատասխանատվությունն իր վրայից գցելու նպատակով, դաշնակցական կառավարությունը սկսեց աղաղակել Հայաստանի դեմ ուղղված ինչ-որ «համաձայնության» մասին, որը, իբր թե, գոյություն ուներ Սովետական Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի միջև։ Այս զրպարտությունը ժամանակին հերքել էր Լեռքանը Վրաստանում դաշնակցական կառավարության դիվանագիտական ներկայացուցիչ Տ. Բեգզադյանի հետ ունեցած զրույցի ժամանակ։ «Մենք,— ասել էր նա,— օգնում ենք, այո, տաճիկներին և պիտի օգնենք նրանց Անտանտի լուծը թոթափելու և ոչ թե հայերի դեմ կռվելու գործի մեջ»[2]։

Սարիղամիշը վերցնելուց հետո թուրքական զորքերը սկսեցին շարժվել դեպի Կարս։ Հոկտեմբերի կեսերին վտանգը Կարսից հեռացնելու և ժողովրդի ու բանակի տրամադրությունը բարձրացնելու նպատակով, հայկական հրամանատարությունը փորձեց անցնել հակահարձակման։ Սակայն այդ փորձը հաջողություն չունեցավ։ Հոկտեմբերի 28-ին մարտեր են սկսվում Կարսի դիրքերի ձախ թևն անցած հակառակորդի հետ։ 29-ին հայկական զորամասերն անցնում են Կարսի ամրությունների ներքին գիծը, իսկ 30-ին Կարսը ընկնում է։ Շարժվելով առաջ՝ թուրքերը նոյեմբերի 6-ին մտնում են Ալեքսանդրապոլ։

Դաշնակցական կառավարությունը համոզված էր, որ դաշնակիցներն օգնության կգան իրեն։ Սարիղամիշի անկումից հետո դաշնակցական կառավարությունը խնդրում է դաշնակիցներից՝ ռմբակոծել և գրավել Տրապիզոնը։ Սակայն Ստոքսը գալիս է Երևան և կառավարության նախագահին հայտարարում, որ Անգլիան մտադիր չէ այդ անել[3]։ Պատասխանից պարզ է դառնում, որ Անգլիան չի ցանկանում օգնել Հայաստանին։

Կարսի անկումից հետո խուճապի մատնված դաշնակցական կառավարությունն անընդհատ օգնություն է խնդրում դաշնակիցներից։ Հոկտեմբերի 31-ին կառավարության նախագահը դիմում է Ստոքսին հետևյալ հեռագրով. «Հասել է այն րոպեն, երբ դաշնակիցները գրականապես և առանց հետաձգելու պետք

---

1 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 602, թ. 89։

2 Նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 111, մաս I, թ. 172։

3 Տե՛ս նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 427, մաս II, թ. 389։

է օգնության դան Հայաստանին... Իմ կառավարության անունից խնդրում եմ Ձեզ բարի լինել՝ հաղորդակցության մեջ մտնել Ձեր կառավարության հետ, որպեսզի անմիջապես օգնություն տրվի Հայաստանին և շեշտել դաշնակիցների կողմից Տրապիզոնում անմիջական դեսանտի անհրաժեշտությունը, հունական ֆրոնտում թուրքերի վրա ճնշում գործվի, որ զենք, ռազմամթերք, ինդանոթներ, մազութ և փոխադրության միջոցներ շտապ ուղարկվեն Հայաստանի համար։ Իմ կառավարությունը սպասում է Ձեր կառավարության կողմից Հայաստանին տրվելիք օգնության չափին և ժամանակի վերաբերյալ պատասխանին։ Որպեսզի դրությունը փրկվի՝ անհրաժեշտ է, որ այս օգնությունը լինի անմիջական, այլապես դաշնակիցների ռազմաճակատի այն մասը, որ Հայաստանի կողմից պաշտպանվում է, անխուսափելիորեն կճեղքվի»[1]։ Կառավարությունը դիմում է նաև ԱՄՆ-ի, Ֆրանսիայի և Իտալիայի Անդրկովկասում գտնվող ներկայացուցիչներին։

Եվրոպայում գտնվող դաշնակցական կառավարության պատվիրակության նախագահ Ա. Ահարոնյանն իր հերթին նույնպես դիմում է դաշնակից պետությունների կառավարություններին։ 1920 թվականի հոկտեմբերի 14-ի իր հաղորդման համաձայն, նա հանդիպել էր Ֆրանսիայի կառավարության նախագահին, Ֆրանսիայում ԱՄՆ-ի դեսպանի և ուրիշ պետությունների պետական գործիչների, ինչպես և մարշալ Ֆոշի հետ[2]։ Բոլորը խոստացել են օգնել, բայց գործնականում ոչինչ չեն արել։ Հայաստանի դրությունը քննում է նաև Աղգերի լիգան, բայց կոնկրետ ոչ մի՛միջոցառում չի ձեռնարկում։

Կարսի անկման լուրը ստանալուց հետո, դաշնակցական կառավարության դիվանագիտական ներկայացուցիչը Վրաստանում անմիջապես հանդիպում է Ստոքսի հետ և հայտնելով նրան այդ մասին՝ հարցնում սպասվելիք օգնության մասին։ Ստոքսը պատասխանում է, որ ինքը շարունակ պահանջում է այդ օգնությունը, բայց պատասխան չի ստանում։ Նրա խոսքերի համաձայն Եվրոպան կամ չի կարող, կամ չի ցանկանում օգնել Հայաստանին։ Այնուհետև նա ցինիկաբար հայտարարում է, որ «երկու դեպքում էլ, սակայն, հետևանքը ձեզ համար (հայերի համար — խմբ.) նույնն է և որովհետև այդ այդպես է, ուրեմն դուք աղատ եք անելու այն ամենը, ինչ որ հարկավոր կգտնեք Ձեր ժողովրդին փրկելու համար»[3]։ Դիվանագիտական ներկայացուցիչը հանդիպում է Անտանտի մյուս պետությունների ներկայացուցիչներին, որոնք նույն խորհուրդն են տալիս նրան։ Ամփոփելով այդ տեսակցությունների արդյունքը, դիվանագիտական ներկայացուցիչը գրում է իր կառավարությանը. «Այդպիսով, Եվրոպայի գոնե այստեղի ներկայացուցիչները, որոնց մեջ Ստոքսին պիտի համարել ամենաազդեցիկը, պարզ և կտրուկ ինձ հայտարարեցին, որ Եվրոպան կամ չի ուզում, կամ չի կարող մեզ օգնել և մենք պիտի մեր գլխի ճարը տեսնենք։ Այդ բոլորից հետո, եթե մենք ուժ ունենք՝ պիտի կռվենք ու հաղթենք, եթե ոչ— մնում է միջոցներ ձեռք առնել որևէ համաձայնության գալու թուրքերի հետ, որն, ըստ երևույթին դուք որոշել եք...»[4]։

1 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 497, թ. 21։

2 Տե՛ս նույն տեղում, ֆ. 199, ց. 1, գ. 111, մասն II, թ. 34—41։

3 Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 602, թ. 10։

4 Նույն տեղում։

Անտանտը ոչ թե չէր կարողանում, այլ չէր ցանկանում օգնել Հայաստանին։ Դաշնակցական կառավարությունն այլևս նրան չէր հետաքրքրում։ Անտանտին հետաքրքրում էր պատերազմը Սովետական Ռուսաստանի և Թուրքիայի միջև։ Պատահական չէր Լլոյդ Ջորջի հայտարարությունը համայնքների պալատում 1920 թվականի դեկտեմբերին այն մասին, որ Թուրքերի արշավը դեպի Հայաստան չպիտի անհանդստացնի անգլիացիներին[1]։

1920 թվականի նոյեմբերի 3-ին դաշնակցական կառավարության նախագահը դիմում է Անկարայի կառավարությանը և առաջարկում՝ ուղիներ որոնել փոխադարձ համաձայնության գալու համար[2]։

Անկարայի կառավարությունն առաջարկում է զինադադար կնքել և բանակցությունների մեջ մտնել հաշտություն կնքելու նպատակով։ Դաշնակցական կառավարությունը համաձայնվում է։ Նոյեմբերի 8-ին Թուրքական զորքերի հրամանատար Քազիմ Կարաբեքիր փաշան հայտնում է զինադադարի պայմանները, որոնց համաձայն հայկական զորամասերը պիտի քաշվեին Արփաչայից դեպի արևելք։ Զինադադարի ամբողջ ընթացքում Թուրքերը գրավելու էին Ալեքսանդրապոլը և Հայաստանը պիտի դադարեցներ ռազմական փոխադրումները Սանահին-Ալեքսանդրապոլ երկաթգծով։ Սակայն հաջորդ օրը, նոյեմբերի 9-ին, Թուրքական հրամանատարությունը դաշնակցական կառավարությանը հաղորդեց զինադադարի նոր պայմաններ, պատճառաբանելով, որ նոյեմբերի 8-ի պայմանները հրամանատարության պայմաններն էին, իսկ նորերը՝ Անկարայի կառավարությանը։ Զինադադարի նոր պայմանները պահանջում էին զինաթափել հայկական բանակը և նրա զենքը հանձնել Թուրքիային։ Հայկական զորամասերը պետք է թաքշվեին Արփաչայից դեպի արևելք՝ ավելի հեռու, քան այդ նախատեսվում էր նոյեմբերի 8-ի պայմաններով։ Ռազմական փոխադրումները Սանահին-Ալեքսանդրապոլ գծով պետք է դադարեցվեին։ Թուրքական կառավարությունն իրավունք էր ստանում իր ներկայացուցիչների միջոցով ստուգել այդ պայմանների կատարումը։

Դաշնակցական կառավարությունը փորձում է մերժել Թուրքերի պայմանները և շարունակել պատերազմական գործողությունները։ Բայց պարզ էր, որ այդ գործողությունները հաջողություն չէին կարող ունենալ։ Դաշնակցական կառավարությունն ստիպված էր դիմել Սովետական Ռուսաստանի կառավարության միջնորդությանը՝ վերջ տալու պատերազմին։ Սովետական կառավարությունը պաշտոնապես հայտարարեց, որ նա իր վրա է վերցնում Թուրքիայի և Հայաստանի միջև բանակցությունների միջնորդությունը։ 1920 թվականի նոյեմբերի 11-ին Թուրքական ազգային կառավարության նախագահին և դաշնակցական կառավարությանը ուղարկած հեռագրում Գ. Չիչերինը նշում էր. «...Սովետական կառավարությունը հայտնում է Ձեզ, որ վերցնում է իր վրա միջնորդություն և այդ նպատակով ռազմական գործողությունների շրջանն է ուղարկում իր լիազոր ներկայացուցիչ Մդիվանում։ Սովետական կառավարությունը հուսով է, որ ռազմական հետագա գործողությունները կդադարեցվեն»[3]։

---

1 Տե՛ս ՀՍՍՀ Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության պետական կենտրոնական արխիվ (հետագայում՝ ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ), ֆ. 114, ց. 2, գ. 65, թ. 17։

2 Տե՛ս ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 602, թ. 74—75։

3 Նույն տեղում, թ. 231։

Սակայն Անտանտի իմպերիալիստների դավերի հետևանքով երկու կողմերն էլ շուտով այդ միջնորդության դեմ արտահայտվեցին։ Նոյեմբերի 15-ին դաշնակցական կառավարությունն ընդունեց զինադադարի թուրքերի պայմանները։ Ռազմական գործողությունները դադարեցվեցին մինչև նոյեմբերի 28-ը, իսկ հետո զինադադարի ժամկետը երկարացվեց մինչև դեկտեմբերի 5-ը։

Դաշնակցական կառավարության դիմումը Սովետական Ռուսաստանին անկեղծ չէր։ Իրականում նա աշխատում էր միայնակ համաձայնության գալ թուրքերի հետ։ Բնորոշ է գնդապետ Ստոքսի աշխատակից անգլիացի Կորտի զրույցը դաշնակցական կառավարության անդամներից մի քանիսի հետ։ Կորտը նոյեմբերի 6-ին Ալեքսանդրապոլից հեռագրում էր Ստոքսին, որ ինքը զրուցել է կառավարության ղեկավար անդամների հետ, որոնց կարծիքով «...իրենց և Մուստաֆա Քեմալ փաշայի միջև կնքված հաշտությունը դաշնակիցների միջնորդությամբ կարող է մշտական լինել։ Նրանք խնդրում են,— շարունակում է Կորտը,— որպեսզի դուք և գերագույն կոմիսարը մասնակցեք այդ գործին։ Նրանք հայտնեցին ինձ, որ դաշնակիցները Հայաստանին կարող են օգնել հետևյալում. 1. ճնշում գործ դնել Պոլսում Թեֆվիք փաշայի կառավարության վրա կամ 2. օգտագործել ամերիկյան և ֆրանսիական ազդեցությունը Մուստաֆա Քեմալի վրա...

Նրանք հայտարարեցին, որ ոչ մի կասկածանք չպիտի լինի իրենց հակաբոլշևիկյան զգացմունքների նկատմամբ։ Ընդհակառակը, նրանք պատրաստ են օգնելու նույնիսկ թուրքերին, եթե վերջիններս մտադիր են կռվելու բոլշևիկների դեմ»[1]։

Թուրքերի կողմից զինադադարի նոր պայմաններ ստանալուց հետո, նոյեմբերի 11-ին դաշնակցական կառավարության դիվանագիտական ներկայացուցիչը Վրաստանում, որը իր կառավարության հանձնարարությամբ շարունակում էր կապ պահպանել Ստոքսի հետ, հանդիպում է նրան։ Ստոքսը հայտարարում է, որ «...եթե ինքը լիներ Անգլիայի ղեկավարը, ապա կաջակցեր քեմալական շարժմանը, որովհետև այդ շարժումը հակաբոլշևիկյան է և աջակցելով Քեմալին՝ Անգլիան կբարձրացներ մահմեդական աշխարհում ընկած իր հեղինակությունը»[2]։

Այս զրույցի հիման վրա դաշնակցական կառավարությունը նոյեմբերի 14-ին հետևյալ ցուցումն է տալիս իր դիվանագիտական ներկայացուցչին. «Ձեր վերջին խոսակցությունը Ստոքսի հետ մեզ հիմք է տալիս ենթադրելու, որ դա Անգլիայի ներկա քաղաքականության արտահայտությունն է և կասկածից դուրս է, որ Ստոքսը կապեր ունի Քեմալի գործակալների հետ։ Այժմ աշխատեցեք այնպիսի հիմք գտնել, որը կկարողանար համաձայնեցնել մեր, քեմալական և անգլիական շահերը։ Աշխատեցեք Ստոքսի միջոցով կապեր հաստատել քեմալականների հետ և հասկացրեք նրան, որ մենք, կարող է պատահել, կկարողանաք ընդառաջել այն նպատակներին, որոնց Անգլիան այժմ ձգտում է»[3]։

Ստոքսը դաշնակցական կառավարության դիվանագիտական ներկայացուցչին հայտնել էր, թե «...այժմ բոլորից լավը այն է, որ Հայաստանը ինքն

1 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 602, թ. 105։

2 Նույն տեղում, թ. 255։

3 Նույն տեղում, գ. 625, թ. 16։

անմիջապես բանակցությունների մեջ մտնի Քեմալի հետ»[1] և ցույց էր տվել Բիֆլիսում Քեմալի ներկայացուցչի ճիշտ հասցեն, որի հետ ինքը՝ Ստոքսը, աշխույժ կապեր է պահպանում։

Նոյեմբերի 16-ին դաշնակցական կառավարության արտաքին գործերի մինիստրության քաղաքական բաժնի վարիչ Յակուլովը հայտնում է իր կառավարության Վրաստանի դիվանագիտական ներկայացուցչին, որ կառավարությունը որոշել է ընդունել զինադադարի թուրքական վերջին առաջարկները և պատգամավորություն ուղարկել Ալեքսանդրապոլ՝ առանց միջնորդի համաձայնության գալու քեմալականների հետ։ Բայց միաժամանակ նա հետևյալ խորհուրդն է տվել. «Ձեր հերթին շարունակեցեք առանձին-առանձին բանակցություններ ինչպես թուրքերի, այնպես էլ բոլշևիկների ու անգլիացիների հետ»[2]։ Իսկ 1920 թվականի նոյեմբերի 20-ին դաշնակցական «Հառաջը» գրում էր. «Իր փրկության համար Հայաստանը ունի մի ճանապարհ՝ գտնել անմիջական կերպով մի ընդհանուր լեզու իր հարևանի՝ թուրքի հետ։ Եթե հայ ժողովուրդը կամենում է ապրել և ապահովել իր պետական և ֆիզիկական գոյությունը հարատևորեն, նա պետք է ունենա ոչ թե ռուսական, այլ թուրքական օրիենտացիա»։

Բերված փաստերը վկայում են, որ դաշնակցական կառավարությունը ձգտում էր լեզու գտնել քեմալականների հետ և նրանց օգնությամբ իր ձեռքում պահպաներ իշխանությունը։ Բ. Լեգրանը իրավացիորեն նոյեմբերի 20-ին Երևանից հայտնում էր Գ. Զիչերինին, որ դաշնակցական կառավարությունն աշխատում է «...մաքսիմալ զիջումների միջոցով ինքնուրույն համաձայնության գալ թուրքերի հետ՝ իր իշխանությունը փրկելու համար»[3]։ Լեգրանը նույն հեռագրում Երևանից հայտնում էր Զիչերինին և Օրջոնիկիձեին. «Երևանում բանակցություններ են վարվում կաբինետի փոփոխման և մենշևիկների ու էսեռների հետ կոալիցիոն կառավարություն ստեղծելու մասին, որոնք ռևալ ուժ չեն ներկայացնում։ Կոալիցիան վարագույր է դաշնակցականների իշխանությունը պաշտպանելու համար, որի հեղինակությունը բանակում և բնակչության մեջ զգալի չափով ընկել է...

Հայկական կառավարությունն ամբողջությամբ գտնվում է խուճապային դրության մեջ, որոշակի ծրագիր, թուրքերի հետ հաշտության պայմանագրի մշակված պայմաններ դեռևս չունի։ Համաձայնողական շրջանները համաձայն են տերիտորիալ անսահմանափակ զիջումների, մյուս մասը հուսով է դնել Կարսի ու 1914 թվականի սահմանների հարցը և այդ պայմանների կենսագործման համար հենվել Սովետական Ռուսաստանի օգնության և միջնորդության վրա»[4]։

Նոյեմբերի 23-ին Հ. Օհանջանյանի կառավարությունը հրաժարական է ներկայացնում, 24-ին կազմակերպվում է նոր կառավարություն՝ Ս. Վրացյանի գլխավորությամբ։

---

1 ՄԼԻ ԿԿԱ, ֆ. 64, ց. 2, գ. 11, թ. 236։
2 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 602, թ. 294։
3 ՄԼԻ ԿԿԱ, ֆ. 64, ց. 2, գ. 11, թ. 242։
4 Նույն տեղում։

Թուրքերը և դաշնակցական կառավարությունը որոշում են բանակցություններ վարել առանց Սովետական Ռուսաստանի ներկայացուցիչ Բ. Մդիվանու մասնակցության, որն այդ նպատակով եկել էր Ալեքսանդրապոլ։ Թուրքական պատվիրակության նախագահ Քյազիմ Կարաբեքիր փաշան հայկական պատվիրակությանը հայտնում է, որ զինադադարի կապակցությամբ Ալեքսանդրապոլ եկած Հայաստանի ներքին գործերի մինիստր Արարատյանը հայտնել էր թուրքերին, թե իր կառավարությունը դեմ է Սովետական Ռուսաստանի ներկայացուցչի մասնակցությանը բանակցություններին և որ քեմալական կառավարությունն իր հերթին նույնպես չի ցանկանում, որ նա մասնակցի[1]։

Բանակցությունները սկսվեցին նոյեմբերի 25-ին։ Թեև նրանք վարվում էին խիստ գաղտնի, բայց և այնպես այս կամ այն ճանապարհով հայտնի էր դառնում դրանց ընթացքը։ Նոյեմբերի վերջին Ս. Վրացյանը տագնապով հայտնում էր Խատիսյանին, որ «Սահմանների պայմանները (թուրքերի կողմից առաջարկված սահմանները — խմբ.), որոնք մեզանից անկախ հայտնի դառան Ալեքսանդրապոլից, շատ ծանր տպավորություն թողին բնակչության վրա»[2]։

Դաշնակցական կառավարության պատվիրակությունը Ա. Խատիսյանի գլխավորությամբ 1920 թվականի դեկտեմբերի 2-ին, այսինքն այն ժամանակ, երբ կառավարությունը, որին նա ներկայացնում էր, տապալված էր և հետևապես իրավունք չուներ հաշտություն կնքելու օտար պետության հետ, Ալեքսանդրապոլում ապօրինի կերպով Հայաստանը ստրկացնող հաշտության պայմանագիր է կնքում Անկարայի կառավարության հետ և այդպիսով Հայաստանի երիտասարդ սովետական իշխանությանը դնում կատարված փաստի առաջ։ Դրանով իսկ դաշնակցականները մի նոր հանցավոր քայլ են կատարում հայ ժողովրդի հանդեպ։

Ալեքսանդրապոլի պայմանագրի համաձայն Հայաստանի տերիտորիան հավասարվում էր Բաթումի դաշնագրով նախատեսված տերիտորիային, այսինքն շրջափակվում էր Երևանի և Սևանի լճի սահմաններում։ Նախիջևանում և Շարուրում հանրաքվեի միջոցով պիտի հաստատվեր առանձին վարչություն։ Հայաստանն իրավունք չուներ խառնվելու այդ վարչության գործերին։ Ժամանակավորապես այդ շրջանները պետք է գտնվեին Թուրքիայի հովանավորության ներքո։ Հայաստանը զինաթափվում էր և զրկվում բանակ ունենալու իրավունքից։ Սահմանները հսկելու և ներքին կարգ ու կանոն պահպանելու համար, սակավաթիվ ոստիկանական ուժերից բացի, նա ունենալու էր 1500 զինվոր, 8 թնդանոթով և 20 գնդացիրով։ Պարտադիր զինապարտությունը Հայաստանում պետք է վերացվեր։ Հայաստանի կառավարությունը պետք է հետ կանչեր իր դիվանագիտական ներկայացուցիչներին արտասահմանյան երկրներից։ Թուրքիային իրավունք էր տրվում իր ներկայացուցիչների միջոցով հսկողություն սահմանել այդ բոլոր պահանջների կատարման վրա։ Թուրքիան իր պատրաստակամությունն էր հայտնում ցույց տալ դաշնակցական կառավարությանը զինված օգնություն, եթե այդ կառավարությունը այն պահանջեր արտաքին կամ ներքին վտանգի ժամանակ։ Թուրքիային իրավունք էր վերապահվում ռազմա-

1 Տե՛ս ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 636, թ. 59։

2 Նույն տեղում, գ. 621, թ. 74։

կան գործողություններ վարել Հայաստանի տերիտորիայում, եթե նա այդ անհրաժեշտ կգտներ իր անվտանգության տեսակետից։ Թուրքիան իրավունք ուներ հսկողություն սահմանել Հայաստանի տերիտորիայի վրայով անցնող երկաթգծի և այլ ճանապարհների վրա[1]։ Պայմանագրի սուր ծայրն ուղղված էր Հայաստանում հաստատված սովետական իշխանության դեմ։

Սկսելով բանակցությունները, Թուրքերը պահանջեցին, որպեսզի դաշնակցական կառավարությունը հրաժարվի Սևրի պայմանագրից։ Դաշնակցական-կառավարության պատվիրակությունը բանակցությունների առաջին նիստում հայտարարեց, որ իր կառավարությունը «ի նկատի ունենալով, որ Սևրի դաշնագրով խախտված և վտանգված են Տաճկաստանի իրական շահերը և որ Տաճկաստանի մեծ ժողովի կառավարությունը ճանաչում և հարգում է Հայաստանի հանրապետության ազատությունն ու անկախությունը և պատրաստակամություն է ցույց տալիս իրական ապահովություն տալ Հայաստանի բարգավաճմանն ու տնտեսական զարգացմանը և ցանկանալով նոր էջ բաց անել երկու պետությունների փոխհարաբերությունների մեջ ու երկարատև դաշինքով բարեկամական հարաբերություններ հաստատել Տաճկաստանի և Հայաստանի միջև՝ հրաժարվում է Սևրի պայմանագրից»[2]։

Հայաստանում սովետական իշխանության հաղթանակից հետո Հայաստանի Հեղկոմը հայտարարեց, որ նա չի ճանաչում սպօրինի կերպով կնքված Ալեքսանդրապոլի պայմանագիրը։

2. ՍՈՎԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Մայիսյան ապստամբության պարտությունից հետո Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունները, շարունակելով ղեկավարել Հայաստանի աշխատավորների պայքարը սովետական իշխանության հաստատման համար, անցան ընդհատակ։ Ռ.Կ(բ)Կ Կովկասյան երկրային կոմիտեին ուղղված զեկուցման մեջ ասված էր. «Կուսակցական աշխատանքն այստեղ չի ընդհատվել. ընկերներին ամեն օր հրահանգներ են տրվում. տաս օր առաջ հրավիրված էր քաղաքային արտակարգ խորհուրդ, որտեղ լսվեց Արմենկոմի զեկուցումը։ Ընտրվեց քաղաքային բյուրո, որի վրա ժամանակավորապես դրված է քաղաքային կոմիտեի ֆունկցիաները։ Գրեթե ամեն օր բյուրոն նիստեր է ունենում, կազմակերպված է «կարմիր խաչը», որը կապված է կալանավորների հետ (կալանավորված կոմունիստների հետ — խմբ.)։ Վերականգնվում են կապերը շրջանների հետ, տեղերում կազմակերպությունները վերականգնելու նպատակով»[3]։

Կուսակցական կազմակերպությունների աշխատանքը ուժեղացնելու նպատակով Ռ.Կ(բ)Կ Կենտկոմի կովկասյան բյուրոյի համաձայնությամբ 1920 թվականի ամռանը ստեղծվում է Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների արտասահմանյան բյուրո, որը որոշ ժամանակ աշխատում է Թիֆ-

1 Պայմանագիրը տե՛ս ՀՍՍՀ ՀՀՇԾ ՊԿԱ, ֆ. 114, ց. 1, գ. 63, էջ 14—16։

2 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 636, թ. 64։

3 «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ revolution և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում», էջ 338։

լիսում, իսկ հետո՝ մենշևիկների կողմից սկսած հալածանքների պատճառով, ստիպված է լինում իր գործունեությունը շարունակել Բաքվում։

Սովետական անկախ հանրապետություններ ստեղծելու, աշխատավորների պայքարը գլխավորելու, կուսակցական-քաղաքական աշխատանքն ուժեղացնելու համար անհրաժեշտ էր կոմունիստական կուսակցություններ ստեղծել Ադրբեջանում, Վրաստանում և Հայաստանում։ 1920 թվականի մայիսի վերջերին — հունիսի սկզբներին ՌԿ(բ)Կ Կենտկոմի կովկասյան բյուրոն որոշում ընդունեց առանձին կոմունիստական կուսակցություններ ստեղծել Ադրբեջանում, Հայաստանում և Վրաստանում։ 1920 թվականի հունիսի 30-ին ՌԿ(բ)Կ Կենտկոմի կազմբյուրոն, քննության առնելով ՌԿ(բ)Կ Կենտկոմի կովկասյան բյուրոյի միջնորդությունը, որոշեց «Վրաստանում, Հայաստանում, Ադրբեջանում ստեղծել կոմունիստական կուսակցություններ՝ նրանց տալով կուսակցությանմարզային կազմակերպությունների իրավունքներ և ենթարկելով Կենտկոմի կովկասյան բյուրոյին։ Տվյալ կուսակցական կազմակերպություններից յուրաքանչյուրը սպասարկում է իր տերիտորիայում ապրող ամբողջ բնակչությանը անկախ ազգային կազմից»[1]։

Կազմակերպական այդ միջոցառումից հետո Հայաստանի կոմունիստական կուսակցությունը մեծ աշխատանք ծավալեց տեղական կազմակերպությունների ամրապնդման, նորերի ստեղծման, աշխատավոր մասսաներին սովետական իշխանության հաստատման համար ապստամբության նախապատրաստելու ուղղությամբ։

1920 թվականի սեպտեմբերին կովկասյան բյուրոն հաստատում է ՀԿ(բ)Կ Կենտկոմի կազմը, որի մեջ են մտնում Ի. Դովլաթյանը, Ա. Նուրիջանյանը, Հ. Կոստանյանը, Ս. Տեր-Գաբրիելյանը, Ա. Խանջյանը[2]։

1920 թվականի սեպտեմբերի 1-ին Բաքվում բացվեց Արևելքի ժողովուրդների համագումարը, որը հրավիրված էր Կոմինտերնի գործկոմի նախաձեռնությամբ։ Համագումարին մասնակցում էին նաև Հայաստանի աշխատավորների ներկայացուցիչները։ Համագումարը մեծ դեր խաղաց Արևելքի ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի ուժեղացման գործում։

Արևելքի ժողովուրդների համագումարի հրավիրման կապակցությամբ Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների արտասահմանյան բյուրոն դիմեց Հայաստանի աշխատավորներին՝ կոչելով նրանց ավելի սերտորեն գործակցել Արևելքի ճնշված ժողովուրդների հետ։

«Ոչ անգլիական լորդերն ու ֆրանսիական բանկիրները, ոչ ամերիկական ֆաբրիկանտներն ու լեհական պաները, ոչ դաշնակներն ու մենշևիկները, և ոչ բեկերը, աղալարներն ու խաները, ոչ ոք չի կարող դիմադրել միլիոնավոր աշխատավորության կամքին. նա ձեռք կբերի այդ ազատությունը. հեռու չէ այն ժամը,— ասվում էր կոչում,— երբ Արևելքի բոլոր շահագործված ու ճնշված ժողովուրդները կազատագրվեն իմպերիալիզմի անարգ լծից և իրենց բազուկներով վեր կբարձրացնեն կոմունիստական կարմիր ինտերնացիոնալի փառավոր դրոշը»[3]։

1 ՄԼԻ Ադրբեջանական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 125, դ. 23, թ. 2։

2 Տե՛ս ՄԼԻ ԿԿԱ, ֆ. 64, ց. 2, գ. 1, թ. 20։

3 «Կոմունիստ» (Բաքու), 18 օգոստոսի 1920 թ.

Համագումարում Հայաստանի պատգամավորները հանդես են գալիս դեկլարացիայով, ուր ասվում էր, որ երկրում դաշնակցական կառավարության կողմից գործադրվող տեռորը խլում է Հայաստանի լավագույն զավակների կյանքը և որ Հայաստանի աշխատավորները փրկության ելքը, իրենց ազատագրումը տեսնում են սովետական իշխանության հաստատման մեջ։

Արևելքի ժողովուրդների համագումարի բացման օրը Բաքվում իր աշխատանքները սկսեց Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների արտասահմանյան կոնֆերանսը, որին մասնակցում էին 50 պատգամավոր։ Կոնֆերանսը քննարկեց Մայիսյան ապստամբությունից հետո Հայաստանում ստեղծված իրադրությունը և նշեց սովետական կարգերի հաստատման համար դալիք վճռական մարտերում Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների խնդիրները։

Հայ-թուրքական պատերազմի հետևանքով Հայաստանի դրությունն էլ ավելի ծանրացավ։ Գյուղատնտեսական աշխատանքները երկրում կանգ էին առել դեռևս աշնանից՝ աշխատող ձեռքերը պատերազմի կապակցությամբ բանակ կանչելու հետևանքով։ Թուրքերի կողմից գրավված վայրերի բնակչությունը՝ ազատվելու համար օկուպանտների հալածանքներից, գաղթել էր Հայաստանի այն մասը, որ դեռ թուրքերը չէին վերցրել։ Ավելի էին վատթարացել կյանքի պայմանները։ Պատերազմ վարելու համար դաշնակցական կառավարությունը քամում էր ժողովրդի վերջին միջոցները։ Թանկությունը չտեսնված չափի էր հասել։ Հոկտեմբերի 15-ին կառավարական տեղեկագիրը հայտնում էր, որ «Կյանքը Հայաստանում անդադար կռիվների ու հաղորդակցության անկանոնության պատճառով արագորեն թանկանում է և որ հումքը չտվեց սպասված արդյունքն ու հացի սաստիկ ճգնաժամ է նկատվում»[1]։ Շամշադինից հոկտեմբերին ուղարկված մի թղթակցությունում այսպես է նկարագրվում շրջանի դրությունը։ «Ոչ մի տեղից ալյուր չի ներմուծվում Հայաստան։ Ջորքը սովի է մատնված։ Գյուղերից պիտի հաց ժողովեն նրան կերակրելու համար։ Կառավարությունը մոռացել էր, որ ինքը ոտնակոխ անելով ու փշացնելով արտերն ու խոտհավաքը՝ սովի է մատնել Շամշադինը»[2]։ Ժողովրդական ամենալայն մասսաների համար միանգամայն պարզ դարձավ, որ իրենց փրկությունը միայն և միայն Հայաստանի բոլշևիկների կողմից ցույց տրված ուղին է, այսինքն սովետական կարգերի հաստատումը։ Դասակարգային հակասությունները երկրում ծայր աստիճան սրվել էին։ Հայաստանի բանվորների և գյուղացիների պայքարը 1920 թվականի հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին նոր թափ էր ստացել։ Ժողովրդական զանգվածների դժգոհությունը դաշնակցության ստեղծած ռեժիմի հանդեպ այլևայլ ձևեր էր ընդունում։

Շամշադինից 1920 թվականի հոկտեմբերին ուղարկված մի թղթակցությունում, որն արտահայտում էր շրջանի գյուղացիների տրամադրությունը, ասված էր. «Պետք է հավաքենք մեր ուժերը և նորից ընդհարվենք ավազակ կառավարության հետ՝ վերջնականապես տապալելու նրան»[3]։ Հետաքրքիր էր նույն

---

1 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 427, մաս II, թ. 394։

2 «Կոմունիստ» (Բաքու), 1920, № 124։

3 Նույն տեղում, № 119։

շրջանից հոկտեմբերի 13-ին ուղարկված մի ուրիշ թղթակցություն, որտեղ գրված էր. «Հայաստանի աշխատավորությունը այս լուրջ պատմական մոմենտին, միակ փրկությունը ապաստում է ռուս կարմիր զորքերից։ Ժամեր ու օրեր է հաշվում նա, թե երբ պիտի լսի այն լուրը, որ Հայաստանում հայտարարված է խորհրդային իշխանություն և իրեն կոչ են անում նրա շուրջը հավաքվելու։ Որքան շուտ կատարվի այս, այնքան շուտ վերջ կտրվի Հայաստանի աշխատավորության փորձություններին»[1]։

Ադրբեջանում սովետական իշխանության հաստատումից հետո ուժեղանում է պայքարը սովետական իշխանության հաղթանակի համար Զանգեզուրում։ Այդ պայքարում աշխատավորներին օգնում էր սովետական զորամասերի մի ջոկատ, որը Զանգեզուր էր մտել Սովետական Ռուսաստանի և Հայաստանի միջև 1920 թվականի օգոստոսի 10-ին կնքված համաձայնագրի հիման վրա։ Սովետական զորամասերը ձգտում էին վերջ տալ ազգամիջյան ընդհարումներին գավառում և այդպիսով աշխատավորների համար ստեղծել անհրաժեշտ պայմաններ՝ խաղաղ աշխատանքով զբաղվելու համար։

Սեպտեմբերին ապստամբները և սովետական զորամասերը հետապնդելով Նժդեհի բանդաները, մտնում են Ղափան։ Շրջանում հաստատվում է սովետական իշխանություն։ Կազմակերպվում է շրջանային Հեղկոմ, որի աշխատանքները ղեկավարում էր բոլշևիկ Բ. Հարությունյանը։ Գյուղերում կազմակերպվում են հեղկոմներ։

1920 թվականի հոկտեմբերի 17-ին Գորիսում բացվում է Զանգեզուրի բոլշևիկյան կազմակերպությունների կոնֆերանսը, որին մասնակցում էին 50 պատգամավորներ։ Օրակարգում դրված էին հետևյալ հարցերը. ընթացիկ մոմենտը, կուսակցության գավառային կոմիտեի զեկուցումը, հաղորդումներ տեղերից, կազմակերպչական հարցեր և այլն։ Կոնֆերանսը նշեց, որ կուսակցական աշխատանքը բոլորից լավ է դրված Սիսիանի և Խնձորեսկի շրջաններում[2]։

Դաշնակցականները շուտով ստանում են լրացուցիչ ուժեր և անցնում հարձակման։ Տեղի են ունենում կատաղի մարտեր ապստամբների և նրանց օգնող սովետական զորամասերի ու Նժդեհի բանդաների միջև։ Ապստամբները կրում են մեծ ոգևորությամբ։ Այդ մասին է վկայում հոկտեմբերի վերջերին Գորիսից ուղարկված մի թղթակցություն։ Հոկտեմբերի 23-ին Ազատության հրապարակի վրա, ասվում է թղթակցությունում, բրիգադի (XI բանակի բրիգադի — խմբ.) հրամանատարն ընդունում է Զանգեզուրի կոմունիստական զորախումբը, որը բաղկացած էր 200 հոգուց, որոնցից շատերը կոմունիստներ էին, իսկ մնացածները՝ համակրողներ։

1920 թվականի հոկտեմբերի առաջին օրերին Հայաստանի Կ(բ)Կ-ի Կենտկոմը դիմեց Հայաստանի բանվորներին և գյուղացիներին՝ կոչելով նրանց համախմբվել կոմունիստական կուսակցության շուրջը և Հայաստանում հաստատել սովետական իշխանություն։ Կոչը վերջանում էր հետևյալ խոսքերով. «Մենք դիմում ենք Հայաստանի բանվորա-գյուղացիական մասսաներին, նրանց հեղափոխական կորովին ու դասակարգային գիտակցությանը՝ կազմակերպվելու

1 «Կոմունիստ» (Բաքու), 22 հոկտեմբերի 1920 թ.։

2 Տե՛ս նույն տեղում, № 124 և 135։

կոմունիստական կուսակցության դրոշակի շուրջը, հավաքելու ցրված հեղափոխական ուժերը, որպեսզի ձեռք-ձեռքի տված Խորհրդային Ռուսաստանի պրոլետարիատի հետ միահամուռ ուժերով խորտակենք միջազգային իմպերիալիզմի հայկական-դաշնակցական հատվածի լուծը, նորից բարձրացնենք կոմունիզմի դրոշակը Հայաստանում»[1]։

Չնայած այն հանգամանքին, որ երկաթուղին գտնվում էր դաշնակցական կառավարության հատուկ հսկողության ներքո, այնուհանդերձ բանվորներին հաջողվում է նոյեմբերին երևանում և Ալեքսանդրապոլում գործադուլ կազմակերպել՝ ուղղված կառավարության դեմ։

Նոր Բայազետից հայտնում են կառավարությանը, որ կոմունիստները ետևանդուն աշխատանք են ծավալել գյուղացիության մեջ և խնդրում են շուտափույթ կերպով անհրաժեշտ միջոցառումներ ձեռք առնել։

Էջմիածնի գավառային զեմստվոյի նախագահը 1920 թվականի նոյեմբերին հայտնում էր կառավարությանը, որ զանազան խմբապետների գինված ջոկատները թափառում են գյուղերում և կողոպտում գյուղացիությանը։ Այդ խմբերը «զորով բռնագրավում են տները, դուրս վռնդում գյուղացիներին, խլում նրանց գույքը։ Ահ ու սարսափը ամենուրեք է։ Այս դրությունը երկար չի կարող շարունակվել»[2]։

1920 թվականի նոյեմբերի 12-ին Սովետական Ադրբեջանի սահմանի մոտ գտնվող դաշնակցական կառավարության զորամասերի հրամանատար գեներալ Խանկալամովը տագնապով հայտնում է, որ նոյեմբերի 10-ին «... 6-րդ գնդի 4-րդ վաշտի հիսուներկու զինվոր զենքով և հանդերձանքով ինքնակամ կերպով թողել են իրենց պահակակետը և, հավանորեն, անցել հակառակորդի (այսինքն սովետական զորամասերի — խմբ.) կողմը»։ Նոյեմբերի 28-ին Դիլիջանից հաղորդում են կառավարությանը, որ «...ռազմամիլիցիոնական գնդի 6-րդ, 2-րդ և 1-ին վաշտերի զինվորները թողնելով դիրքերը՝ գնացել են իրենց տները։ Այսօր 5-րդ և 3-րդ վաշտերը թողին դիրքերը և հեռացան»[3]։ Տեղերից ստացված նման լուրերի հետևանքով դրությունը երևանում էլ ավելի է լարվում։

Զգտելով կանխել աշխատավորների մոտալուտ ապստամբությունը, դաշնակցական կառավարությունը դիմում է արտակարգ միջոցների. հիմնում է զինվորական դատարաններ, բանտարկում կոմունիստներին, հեղափոխական բանվորներին և գյուղացիներին, ռեակցիոն տարրերից կազմակերպում է պատժիչ խմբեր և այլն։ Նոյեմբերի 19-ին Սովետական Ռուսաստանի ներկայացուցիչ Լեգրանը դաշնակցական կառավարության նախագահի հետ ունեցած հանդիպման ժամանակ հայտարարում է, որ Հայաստանի բանտերում գտնվում են մոտ 400 կոմունիստներ[4]։

Դաշնակցական կուսակցության ղեկավարությունը նույնիսկ իր շարքային շատ անդամների մոտ արդեն զրկվել էր հենարանից։ Ոչ միայն աշխատավորական լայն մասսաները, այլև բազմաթիվ շարքային դաշնակցականներ երես էին դարձրել իրենց կուսակցությունից։

---

1 «Коммунист» (Баку), 8 հոկտեմբերի 1920 թ.։

2 ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 214, ց. 1, գ. 51, թ. 760։

3 Նույն տեղում, ֆ. 200, ց. 1, գ. 602, թ. 262, 396։

4 Տե՛ս նույն տեղում, թ. 332—336։

Դաշնակցական կուսակցության քայքայման պրոցեսը սկսվել էր, իհարկե, դրանից շատ առաջ։ Ազգայնական ու սոցիալիստական լոզունգներով խաբված և դաշնակցական կուսակցության շարքերը մտած բանվորներն ու գյուղացիները, համոզվելով, որ դաշնակցության քաղաքականության էությունը



Ա. Մռավյան Ս. Կասյան Ս. Տեր-Գաբրիելյան



Ա. Բեգզադյան Ա. Նուրիջանյան Ի. Դովլաթյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

հակաժողովրդական է, սահմանազատվում էին նրանից։ 1920 թվականի նոյեմբերի 28-ին Ջիլերինին գրած նամակում դաշնակցության կուսակցության քայքայման փաստը նշել է Լեգրանը։ «Ես կարծում եմ,— գրել է նա,— որ դաշնակցության կուսակցության ներսում խոր խմորումների նշանները առկա են։ Պարզորոշ երևում է պառակտման գիծը...»։

ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի նիստում ՀԿ(բ)Կ Կենտկոմի անդամների մասնակցությամբ քննարկվում է Հայաստանում ապստամբության նախապատրաստման հարցը։ Նոյեմբերին ՀԿ(բ)Կ Կենտկոմի կազմի մեջ են մտնում նաև Ս. Կասյանը, Ս. Տեր-Գաբրիելյանը և Ալ. Բեկզադյանը[1]։

1920 թվականի նոյեմբերի 29-ին Քարվանսարայի (Իջևանի) և Դիլիջանի շրջանների աշխատավորները կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ ապստամբություն բարձրացրին։ Այն անմիջականորեն ղեկավարելու համար ստեղծվեց Հայաստանի հեղափոխական կոմիտե, որի կազմի մեջ մտնում էին Ս. Կասյանը (նախագահ), Ս. Տեր-Գաբրիելյանը, Ա. Մռավյանը, Ալ. Բեկզադյանը, Ի. Դովլաթյանը և Ա. Նուրիջանյանը։ Այդ շրջաններում գտնվող կառավարական զորքերը անցնում են ապստամբների կողմը։ Նոյեմբերի 29-ին Քարվանսարան արդեն ապստամբների ձեռքում էր։

Նույն օրը, նոյեմբերի 29-ին, Հեղափոխական կոմիտեն հանդես է գալիս Հայաստանը սովետական սոցիալիստական հանրապետություն հայտարարելու մասին դեկլարացիայով, որտեղ մասնավորապես ասված էր. «Հայաստանի ապստամբ աշխատավոր ժողովրդի կամքով ու ցանկությամբ Հայաստանի կոմունիստական (բոլշևիկյան) կուսակցությունն այսօրվանից Հայաստանը հայտարարում է Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն։ Այսօրվանից Խորհրդային Հայաստանի կարմիր դրոշակը պաշտպանելու է նրա աշխատավոր ժողովրդին ճնշողների դարավոր լծից»։

Այնուհետև դեկլարացիայում ասվում էր, որ Սովետական Ռուսաստանը շատ անգամ փորձեց պոկել դաշնակցական կառավարությանը իմպերիալիստական պետություններից, բայց այդ փորձերը ապարդյուն անցան։ Հեղկոմը համոզմունք էր հայտնում, որ Հայաստանում հաղթանակած սովետական իշխանությունը Սովետական Ռուսաստանի եղբայրական օգնությամբ կվերականգնի երկրի տնտեսությունը և կկառուցի նոր կյանք։ «Ազատ Խորհրդային Հայաստանի կարմիր դրոշակը,— ասված էր դեկլարացիայում,— հուսահատության ու դառնությունների անդունդից դուրս կբերէ նրա աշխատավոր զավակներին։ Հաղթական Ինտերնացիոնալի առաջին հնչյունների հետ ընդմիշտ կանհետանա Հայաստանում գոյություն ունեցող ցեղական ու ազգային պառակտումների ուրվականը և տեղի կտա ժողովուրդների եղբայրությանը՝ նրանց առօրյա կյանքում»[2]։

Նոյեմբերի 30-ին ապստամբները մտնում են Դիլիջան։ Հեղկոմը հեռագրով դիմում է Վ. Ի. Լենինին և խնդրում, որ Սովետական Ռուսաստանն օգնության ձեռք մեկնի ապստամբներին։ «Թող հայտնի լինի համաշխարհային հեղափոխության առաջնորդին,— ասված էր հեռագրում,— որ Դիլիջանի ու Քարվանսարայի շրջանների գյուղացիները, զայրացած դաշնակների կառավարության հանցագործ քաղաքականությունից և երկրում խորացող անարխիայից, բարձրացրին ապստամբության դրոշը։ Հայաստանի կոմունիստական կուսակցությունը իսկույնևէթ ստանձնեց այդ տարերային շարժման ղեկավարությունը և ստեղծեց Հայաստանի Հեղկոմ, Հայաստանը հայտարարելով Սոցիալիստական

---

1 Տե՛ս ՄԼԻ ԿԿԱ, ֆ. 64, ց. 2, գ. 1, թ. 65։

2 «ՀՍՌՀ դեկրետների և հրամանների ժողովածու», պրակ 1, Էջմիածին, 1921, էջ 1—5։

Սովետական Հանրապետություն։ Հասցված է առաջին հարվածը, Դիլիջան քաղաքը մեր ձեռքումն է։ Ոգևորված ապստամբներն առաջ են նետվում ատելի թշնամուն՝ Անտանտի գործակալին, վերջնականապես տապալելու համար։ Եվ կատարելով նրանց կամքը, մենք, կազմելով Հեղկոմ, առաջ ենք շարժվում այն կատարյալ հույսով, որ Արևելքի ճնշված ժողովուրդների ազատարարը՝ սոցիալիստական մեծ Ռուսաստանի հերոսական կարմիր բանակը, մեզ իրական օգնություն ցույց կտա մեր այս դժվարին պայքարում։ Հայաստանի բոլոր բանվորների և գյուղացիների անունից մենք խնդրում ենք Ժողկոմսովետին ցույց տալ այդ օգնությունը»[1]։

Նույն օրը, նոյեմբերի 30-ին, Հայաստանի Հեղկոմը հանդես է գալիս աշխատավորներին ուղղված դիմումով. «Հայաստանի կոմկուսի Կենտկոմը հետեվելով Հայաստանի ապստամբ աշխատավոր մասսաների անհողդողդ կամքին, հանձինս մեզ առանձնացրել է Հեղափոխական կոմիտե, Հայաստանը հայտարարելով Սոցիալիստական Սովետական Հանրապետություն»։ Այնուհետև, մերկացնելով դաշնակցականների վարած հակաժողովրդական քաղաքականությունը, որի հետևանքով երկիրը ավերակների կույտի էր վերածվել, դիմումում ասվում էր, որ սովետական իշխանությունը Հայաստանում կստեղծի խաղաղ աշխատանքային կյանք և որ «Հաղորդակից լինելով աշխատանքի Սովետական հանրապետությունների մեծ ընտանիքին, ավերված Հայաստանը կկարողանա բուժել անիծյալ հին կառավարությունից ծանր ժառանգություն ստացված խոր վերքերը»[2]։

Անկասկած, դաշնակցական կառավարությունը չէր կարող կասեցնել ապըստամբների երթը։ Սակայն ստեղծված իրադրության բարդ պայմաններում Հայաստանի աշխատավորությանը անհրաժեշտ էր Սովետական Ռուսաստանի եղբայրական օգնությունը։

Սովետական Ռուսաստանը կատարեց իր ինտերնացիոնալ պարտքը. նրա կառավարությունը ցուցում տվեց Սովետական Ադրբեջանում գտնվող XI բանակի զորամասերին՝ օգնության հասնել Հայաստանի ապստամբ բանվորներին ու գյուղացիներին։ Այդ զորամասերի շարքերումն էր գտնվում Մայիսյան ապստամբության ճնշումից հետո դաշնակցականների կողմից սկսված հալածանքների հետևանքով Սովետական Ադրբեջան անցած Իջևանի, Դիլիջանի, Շամշադինի և մի քանի ուրիշ շրջանների ապստամբության մասնակիցներից կազմված հայկական գունդը, որը կազմավորվել էր Բաքվում 1920 թվականի կեսերին ՀԿ(բ)Կ Կենտկոմի ղեկավարությամբ և XI բանակի ռազմա-հեղափոխական խորհրդի օգնությամբ։ Գնդի կազմակերպական աշխատանքներին մեծ օգնություն ցույց տվեց Բաքվի պրոլետարիատը։

Հայաստանի աշխատավորները և զինվորները խանդավառությամբ ընդունեցին իրենց օգնության եկած Սովետական Ռուսաստանի զորամասերին։ 1920 թվականի նոյեմբերի 30-ին Գ. Կ. Օրջոնիկիձեն Ջիլերինին հայտնում էր. «Հայկական զորամասերն անցնում են ապստամբների կողմը և մինչև հիմա էլ մի

---

1 «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունն և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում», էջ 406։

2 Նույն տեղում, էջ 407—408։

կրակոց չի եղել»[1]։ Նույնն էր հայտնում նաև Հեղկոմի անդամ Ա. Նուրիջանյանը։ Նոյեմբերի 30-ին նա հաղորդում էր, որ Քարվանսարայի շրջանի գյուղացիները երգերով են մոտենում Սովետական Ադրբեջանի սահմաններին և օգնություն խնդրում և որ «ապստամբներն ու կարմիր բանակի զորամասերը Քարվանսարան գրավեցին առանց մի որևէ դիմադրության»[2]։



Կարմիր բանակի մուտքը Երևան

Վ. Ի. Լենինը ջերմորեն ողջունեց Հայաստանի աշխատավորներին՝ նրանց հաղթանակի առթիվ։ 1920 թվականի դեկտեմբերի 2-ին Հայաստանի Հեղկոմի նախագահ Ս. Կասյանի անունով ուղարկված հեռագրում Վ. Ի. Լենինը գրում էր. «Ձեզ ողջունում եմ իմպերիալիզմի ճնշումից ազատագրված աշխատավորական Սովետական Հայաստանին։ Ջեմ կասկածում, որ դուք կգործադրեք բոլոր ջանքերը՝ Հայաստանի, Թուրքիայի, Ադրբեջանի աշխատավորների միջև եղբայրական համերաշխություն հաստատելու համար»[3]։

Ստեղծված իրադրության մեջ դաշնակցական կառավարությանը ոչինչ չէր մնում անել, բացի Հայաստանում հաղթանակած սովետական իշխանության

1 Մշի կկա, ֆ. 85, գ. 14, թ. 12—13։
2 Նույն տեղում, գ. 35, թ. 1։
3 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 31, էջ 550։

առջև կապիտուլյացիայի ենթարկվելուց, որը ձևակերպվեց 1920 թվականի դեկտեմբերի 2-ին Լեգրանի և դաշնակցականների միջև կնքված համաձայնագրով, որի առաջին կետով դաշնակցականներն ընդունում էին Հայաստանի Հեղկոմի դեկլարացիան Հայաստանը Սովետական Սոցիալիստական Հանրապետության հռչակելու մասին։ Մինչև Հայաստանի սովետների համագումարի հրավիրումը իշխանությունը դանվելու էր Հեղկոմի ձեռքին, որի կազմի մեջ պետք է մտնեին Հայաստանի կոմունիստական կուսակցության հինգ և ձախ դաշնակցականների երկու ներկայացուցիչներ։ Համաձայնագրի կարևոր կետերից մեկն էր հանդիսանում Սովետական Ռուսաստանի համաձայնությունը անհրաժեշտ քանակությամբ զինված ուժ կենտրոնացնել Հայաստանում՝ վերջինի անկախությունը և անվտանգությունը ապահովելու համար[1]։

Համաձայնագրի կնքումից հետո իշխանությունը, մինչև Հայաստանի Հեղկոմի Երևան գալը, հանձնվում էր զինվորական հրամանատարությանը՝ հանձինս Դր. Կանայանի (Դրո) և Սովետական Ռուսաստանի կողմից հրամանատարությանը կից զինվորական կոմիսար նշանակված Սիլինի։

Սակայն, համաձայնագրի կնքումը չէր նշանակում դաշնակցական կառավարության կողմից կամավոր իշխանության հանձնումը Հեղկոմին։ Հեղկոմի դեկլարացիայում ասվում էր. «...Իշխանությունը արդեն խլված է դաշնակցությունից՝ ապստամբ ժողովրդի կամքով ու ցանկությամբ և նրան վերադարձ չկա»։ Ինչպես արդեն ասվեց, համաձայնագիրը դաշնակցական կառավարության կապիտուլյացիա էր։ Նշանակում՝

Դեկտեմբերի 4-ին Հեղկոմի անդամները, ապստամբները և նրանց օգնության եկած սովետական զորամասերը մտնում են Երևան։ Աշխատավորությունը ցնծությամբ է դիմավորում նրանց։

1920 թվականի դեկտեմբերի 6-ին քաղաքում կայանում է բազմամարդ միտինգ։ Միտինգը ողջույնի հեռագիր է ուղարկում Վ. Ի. Լենինին։ Հեռագրում մասնավորապես ասված էր. «Խիտ ու կուռ շարքերով համախմբվելով կոմունիստական կարմիր դրոշակների շուրջը, աշխատավորությունը հանձինս Ձեզ՝ ողջունում է Հոկտեմբերյան հեղափոխության առաջամարտիկին, հեղափոխության, որի ալիքները խորտակելով ու ոչնչացնելով բոլոր արգելքները հասան հեռավոր Հայաստան...

Ունենալով ռուս բանվորների անցյալի փորձը, ներկայումս աշխատավորական Ադրբեջանի ու Ռուսաստանի օգնությունը, խորհրդային Հայաստանի երիտասարդ հանրապետությունը համարձակ և անվախ դիմում է դեպի ապագան և բնավ չի կասկածում, որ աշխատանքը վերջնականապես հաղթահարելու է կապիտալին»[2]։

Երևան գալուց հետո Հեղկոմը նպատակահարմար չգտավ իր կազմի մեջ մտցնել ձախ դաշնակցականների ներկայացուցիչներին։ Դրոն շուտով հանվեց իր պաշտոնից։

---

1 Համաձայնագիրը տե՛ս «Великая Октябрьская социалистическая революция и победа Советской власти в Армении» (сборник документов), Երևան, 1957, էջ 441։

2 «Կոմունիստ» (Երևան), 8 դեկտեմբերի 1920 թ.։

Այսպիսով, Հայաստանի բանվորների ու գյուղացիների պայքարը սովետական իշխանության հաստատման համար՝ ռուս մեծ ժողովրդի եղբայրական օգնությամբ, պսակվում է լիակատար հաղթանակով։ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթական դրոշը ծածանվում է Հայաստանի վրա։

1920 թվականի դեկտեմբերի 2-ին հանդես գալով Սովետների համառուսաստանյան VIII համագումարում ժողովրդական կոմիսարների սովետի հաշվետու զեկուցումով, Վ. Ի. Լենինը ասաց. «Ես պետք է նշեմ նաև, ընկերնե՛ր, որ Արևելքում մեր քաղաքականությունն այս տարվա ընթացքում խոշոր հաջողություններ ունեցավ։ Մենք պետք է ողջունենք Բուխարայի, Ադրբեջանի և Հայաստանի սովետական հանրապետությունների կազմվելն ու ամրապնդվելը, որոնք վերականգնեցին ո՛չ միայն իրենց լիակատար անկախությունը, այլև իշխանությունը վերցրին բանվորների և գյուղացիների ձեռքը։ Այդ հանրապետությունների ապացույց և հաստատումն են այն բանի, որ սովետական իշխանության գաղափարներն ու սկզբունքները մատչելի և անմիջապես իրագործելի են ո՛չ միայն այն երկրներում, որոնք արդյունաբերության տեսակետից զարգացած են, ո՛չ միայն սոցիալական այնպիսի հենարան ունեցող երկրներում, ինչպիսին պրոլետարիատն է, այլև այնպիսի հիմք ունեցող երկրներում, ինչպիսին գյուղացիությունն է»[1]։

Հայաստանի աշխատավորները մեծ խանդավառությամբ ողջունեցին սովետական իշխանության հաստատումը Հայաստանում։ Քաղաքներում ու գյուղերում տեղի էին ունենում բազմամարդ միտինգներ ու ժողովներ, որոնց մասնակիցները խոստանում էին չխնայել իրենց կյանքը սովետական իշխանության պաշտպանության, իրենց ջանքերը երկրի վերակառուցման համար։

Ադրբեջանի Հեղկոմը երկրի բանվորների ու գյուղացիների անունից ջերմորեն ողջունեց Հայաստանի աշխատավորներին՝ նրանց հաղթանակի առթիվ և խոստացավ օգնել ինչով կարող է։

Սովետական իշխանության հաստատումը Հայաստանում ողջունեցին Հյուսիսային Կովկասի ժողովուրդները։ Այդ առթիվ Վլադիկավկազում հանդիսավոր ժողովում զեկուցումով հանդես եկավ Ս. Մ. Կիրովը։ Ժողովը որոշեց ողջունել Հայաստանի աշխատավորներին։ Հեղկոմը ողջույններ ստացավ նաև ուրիշ տեղերից։

Սովետական իշխանության հաստատումը շրջադարձային կետ հանդիսացավ հայ ժողովրդի բազմադարյան պատմության մեջ։ Սովետական կարգերի հաստատմամբ նոր, լուսավոր դարաշրջան սկսվեց նրա կյանքում։ Սովետական իշխանությունը փրկեց հայ ժողովրդին ֆիզիկական բնաջնջումից և աննախընթաց զարգացման հնարավորություններ ստեղծեց նրա համար։ Հայ ժողովուրդը ստեղծեց իր սովետական ազգային պետականությունը։

Թոթափելով սեփական և օտարերկրյա կեղեքիչների լուծը, հայ ժողովուրդը ձեռք բերեց իր սոցիալական ու ազգային ազատագրումը։ Ստեղծելով իր սովետական պետությունը, նա կանգնեց սոցիալիստական զարգացման լայն ճանապարհի վրա։

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 31, էջ 619։

3. ՀԱՅԿԱԿԱՆ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ։ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ

Երիտասարդ սովետական իշխանությունը Հայաստանում ժառանգություն ստացավ ավերված մի երկիր։ Եթե դրան ավելացնենք նաև այն, որ վրացական մենշևիկյան կառավարությունը բլոկադայի էր ենթարկել Սովետական Հայաստանը, կտրելով երկաթուղային կապը նրա և Սովետական Ռուսաստանի ու Ադրբեջանի միջև և որ Ալեքսանդրապոլն իր գավառով գտնվում էր Թուրքերի ձեռքում, Զանգեզուրում շարունակում էին իշխել դաշնակցականները, իսկ Լոռու մի մասը՝ «չեզոք գոտին» գտնվում էր վրաց մենշևիկների իշխանության ներքո՝ պարզ կդառնա, թե ինչպիսի ծանր պայմաններում Հայաստանում հաղթանակած սովետական իշխանությունը ձեռնամուխ եղավ սոցիալիստական շինարարությանը։ Հասկանալի է, որ երկրի առանձնահատկությունները հաշվի առնելու հետ մեկտեղ, սովետական իշխանությունը Հայաստանում պետք է օգտագործեր և օգտագործեց Սովետական Ռուսաստանի, ինչպես նաև սովետական մյուս հանրապետությունների փորձը։

Սովետական իշխանության առջև Հայաստանում ծառացած խնդիրներից անհետաձգելի և ամենակարևորը՝ պրոլետարիատի դիկտատուրայի, սովետական իշխանության օրգանների ստեղծումն ու ամրապնդումն էր։

Հոկտեմբերյան մեծ հեղափոխությունից հետո իշխանությունը Ռուսաստանում իրենց ձեռքը վերցրին սովետները, որոնք հեղափոխության նախօրյակին արդեն դարձել էին բոլշևիկյան։ Այլ էր պատկերը Հայաստանում։ Սովետական իշխանության հաստատման ժամանակ այստեղ սովետներ գոյություն չունեին։ Անհրաժեշտ էր ընտրել նրանց՝ վարից վեր։ Բայց այդ աշխատանքը անմիջապես կատարել հնարավոր չէր այն պատճառով, որ այդ խնդիրը պահանջում էր նախնական մեծ կազմակերպչական և մասսայական-բացատրական աշխատանք։ Հայաստանում սովետական իշխանության հաղթանակից հետո անհրաժեշտ էին իշխանության այնպիսի մարմիններ, որոնք պաշտպանեին աշխատավորների շահերը, սովետական իշխանության կողմից սահմանված հեղափոխական իրավակարգը և նախապատրաստեին պետական իշխանության ընտրովի մարմինների՝ բանվորների, գյուղացիների և կարմիր բանակայինների դեպուտատների սովետների ստեղծման պայմանները։ Իշխանության այդպիսի ժամանակավոր մարմիններ էին հեղափոխական կոմիտեները։

Սովետական Հայաստանի նոր սոցիալ-տնտեսական և քաղաքական կյանքի ստեղծումը կատարվում էր հայ ժողովրդի ազգային պետական իշխանության անդրանիկ օրգանի՝ Հայաստանի Հեղկոմի դեկրետների, կարգադրությունների և հրամանների հիման վրա։

Պետական կյանքի առանձին բնագավառների ղեկավարման համար Հայաստանի Հեղկոմը ստեղծեց ներքին գործերի, արտաքին գործերի, հողագործության, ռազմական, լուսավորության, արդարադատության, ֆինանսների, պարենավորման, աշխատանքի, առողջապահության, սոցիալական ապահովագրության և ճանապարհների, փոստի ու հեռագրի ժողովրդական կոմիսարիատներ։

Այդ ժամանակ ժողովրդական կոմիսարիատների մեջ հատուկ դեր էր խաղում Ներքին գործերի կոմիսարիատը, որը հանդիսանում էր բարձրագույն վարչական մարմինը Հայաստանում։ Նրա միջոցով էր Հեղկոմը կառավարում երկիրը։ Այդ կոմիսարիատի պարտականությունների մեջ էին մտնում տեղերում իշխանության կազմակերպումը, բոլոր վարչական մարմինների գործունեության հսկողությունը։ Կոմիսարիատը Հայաստանի Հեղկոմի համաձայնությամբ իրավունք ուներ հեռացնել տեղական հեղկոմների անդամներին և նշանակել նորերին[1]։ Ներքին գործերի ժողկոմատի 1920 թվականի դեկտեմբերի 13-ի հրամանով վերացվեցին դաշնակցական կառավարության օրոք գոյություն ունեցող վարչական հիմնարկությունները։ «Սույն հրամանը հրատարակելու օրվանից,— ասված էր հրամանում,— վերացվում են հետևյալ հիմնարկությունները ու պաշտոնները՝ նահանգապետությունները, քաղաքային ինքնավարությունները, գավառային կոմիսարները, նախկին ներքին գործերի նախարարության արտակարգ լիազորները, միլիցիայի տեսուչները, նահանգական ատյանները, հանրապետության միլիցիայի պահեստը՝ բոլոր նրանց մոտ գտնված գրասենյակներով և հաստիքներով»[2]։ Մինչև սովետների ընտրությունները գյուղի, շրջանի և գավառի իշխանությունն իրենց ձեռքն էին վերցնում հեղկոմները։ Գավառային հեղկոմները կազմակերպում էին շրջանային հեղկոմներ, իսկ վերջիններս՝ գյուղական հեղկոմներ։ Ներքին գործերի կոմիսարիատը մեծ աշխատանք ծավալեց նոր՝ սովետական վարչական ապարատի կազմակերպման և ղեկավարման ուղղությամբ։ Ներքին գործերի կոմիսար էր նշանակված Հեղկոմի անդամ Ի. Դովլաթյանը։

Հայաստանի Հեղկոմի դեկտեմբերի 21-ի դեկրետով չեղյալ հայտարարվեց Ռուսական կայսրության «Հավաք օրինացը»՝ այն բոլոր փոփոխություններով, որոնք մտցրել էին նրա մեջ ժամանակավոր կառավարությունը, անդրկովկասյան կոմիսարիատը, սեյմը և դաշնակցական կառավարությունը[3]։ Դրա փոխարեն Հայաստանում, տեղական պայմաններին համապատասխան, որոշ փոփոխություններով կիրառվելու էին Ռուսաստանի Սովետական Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետության օրենքները։

Հայաստանի Հեղկոմի դեկտեմբերի 6-ի հրամանով իրենց լիազորություններից զրկվեցին դաշնակցական կառավարության արտասահմանում գտնվող բոլոր դիվանագիտական ներկայացուցչությունները և միսիաները։

Ներքին գործերի ժողկոմատի հունվարի 21-ի հրամանով վերացվեցին դասերը, դասային բոլոր արտոնություններն ու սահմանափակումները։ «Այժմ Հայաստանում գոյություն ունեցող դասերը և քաղաքացիների դասային բաժանումները,— ասված էր հրամանում,— դասային արտոնությունները և սահմանափակումները, դասային կազմակերպությունները և հիմնարկությունները, ինչպես նաև քաղաքացիական բոլոր աստիճանները վերացվում են»[4]։

---

1 Տե՛ս «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում», էջ 426։

2 Նույն տեղում, էջ 425։

3 Տե՛ս նույն տեղում, էջ 441։

4 Նույն տեղում, էջ 465։

Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո Հեղկոմի առջև ծառանում է երկրի պաշտպանության խնդիրը, Սովետական Հայաստանի կարմիր բանակի ստեղծման հարցը։ Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դաշնակցական կառավարության բանակի շարքային կազմը իր մեծամասնությամբ բաղկացած էր գյուղացիներից և բանվորներից, որոնք կամավոր կերպով անցել էին սովետական իշխանության կողմը, Հեղկոմը որոշում է վերակազմել բանակը։ Բանակում քաղաքական-մասսայական աշխատանք տանելու, նրա մարտունակությունն ամրապնդելու նպատակով հիմնվում է քաղաքական վարչություն, հաստատվում է զինվորական կոմիսարների ինստիտուտ։ Պետությունն իր վրա է վերցնում կարմիրբանակայինների ընտանիքների հոգսը, նշանակում է նպաստ և մի շարք արտոնություններ տալիս նրանց։ Ռազմական գործերի ժողկոմ է նշանակվում Ա. Նուրիջանյանը, իսկ քաղաքական վարչության պետ՝ Հ. Լազյանը։

Հին պետական ապարատի վերացման գործում մեծ նշանակություն ունեցավ արդարադատության ժողկոմատի հին դատարանների վերացման մասին 1920 թվականի դեկտեմբերի 18-ի հրամանը։ Հին դատարանների փոխարեն արդարադատության ժողկոմատի դեկտեմբերի 22-ի հրամանով ստեղծվեցին նոր, սովետական դատարաններ։ Հայաստանի Հեղկոմին կից կազմակերպվեց գերագույն հեղափոխական տրիբունալը, իսկ արդարադատության ժողկոմատին կից՝ հեղափոխական տրիբունալները։ Եկեղեցին անջատվեց պետությունից, իսկ դպրոցը՝ եկեղեցուց։ Արդարադատության ժողկոմ նշանակվեց Ս. Բաղդասյանը։

Հակահեղափոխության չարաշահության և սաբոտաժի դեմ պայքարելու նպատակով Հեղկոմի 1920 թվականի դեկտեմբերի 6-ի դեկրետով կազմվում է արտակարգ հանձնաժողով։

Սովետական իշխանությունը վերջ տվեց ազգամիջյան ընդհարումներին և հաստատեց խաղաղություն ու եղբայրություն Հայաստանում ապրող բոլոր ժողովուրդների միջև։ Սովետական կարգերի հաստատվելուց հետո Հայաստան վերադարձան մոտ 100 հազար ադրբեջանցիներ[1], որոնց սովետական պետությունը ամեն տեսակի օգնություն ցույց տվեց ավերված գյուղերը վերակառուցելու և տնտեսությունը կարգավորելու համար։ 1920 թվականի դեկտեմբերի 16-ին Երևանում տեղի ունեցավ ադրբեջանական բնակչության խանդավառ միտինգ։ Միտինգում ընդունված բանաձևում ասված էր, որ ադրբեջանցի աշխատավորները պատրաստ են մինչև վերջ պաշտպանելու Հայաստանում հաղթանակած սովետական իշխանությունը։

Հեղկոմի 1920 թվականի դեկտեմբերի 6-ի դեկրետով Սովետական Հայաստանի սահմաններում պետական լեզու է հայտարարվում հայերենը, իսկ այն վայրերում, որտեղ ապրում էին ադրբեջանցիներ՝ նաև ադրբեջաներենը։

Հեղկոմի 1920 թվականի դեկտեմբերի 28-ին հրապարակված դեկրետով աղգայնացվեց հողը։ «Բանվորա-գյուղացիական ազգաբնակչության հողաղուրկ և սակավահող մասը հողաբաժիններով ապահովելու և գյուղատնտեսությամբ զբաղվել ցանկացողներին հողեր բաշխելու նպատակով, այլև հանրապետու-

1 Տե՛ս «Հայաստանի սոցիալիստական խորհրդային հանրապետության ժողովրդական կոմիսարների 1920—1922 թթ. հաշվետվություն», Երևան, 1923, էջ 26։

թյան բոլոր կարիքները բավարարելու համար, արքունական, նաղելի, եկեղեցական, վանքային, վակուֆային, մեչետային, իրավաբանական անձերի, մասնավոր հողերը դառնում են Հայաստանի Սոցիալիստական Հանրապետության սեփականություն»[1]։ Այսպիսով իրականացավ գյուղացիության հողին տիրանալու դարավոր երազանքը։

Հայաստանի Հեղկոմի դեկտեմբերի 31-ի դեկրետով պետականացվում են ջրերը, իսկ 1921 թվականի հունվարի 10-ի և 11-ի դեկրետներով՝ անտառները և ամբողջ հողի ընդերքը։

Հողային հարցի լուծմամբ չքավոր գյուղացիությունն ավելի սերտորեն կ համախմբվում սովետական իշխանության շուրջը, ավելի է ամրապնդվում բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը։

Աշխատավորների սոցիալական ապահովության գործը կազմակերպելու համար Հեղկոմը ստեղծում է սոցիալական ապահովության ժողովրդական կոմիսարիատ։ Ժողովրդական կոմիսար է նշանակվում Հ. Կոստանյանը։

Հայաստանի ժողովրդական տնտեսությունը սոցիալիստական հիմունքներով վերականգնելու և զարգացնելու նպատակով Հեղկոմը 1921 թվականի հունվարի 21-ի դեկրետով Հեղկոմին կից ստեղծեց ժողովրդական տնտեսության խորհուրդ։ Մասնավոր ձեռնարկությունների ազգայնացումը հիմնականում տեղի ունեցավ 1921 թվականի ապրիլից հետո։

Ֆինանսների ժողովրդական կոմիսարիատի, որին ղեկավարում էր Ե. Երզընկյանը, դեկտեմբերի 28-ի և 31-ի հրամաններով կազմակերպվեց Սովետական Հայաստանի պետական բանկը։

Ժողովրդական տնտեսության խորհրդի և պետական բանկի կազմակերպմամբ, ինչպես և մասնավոր ձեռնարկությունների պետականացմամբ սովետական իշխանությունը լիկվիդացնում էր տապալված շահագործող դասակարգերի տնտեսական ուժը։

Սովետական իշխանությունն իր գոյության առաջին իսկ օրերից մեծ ուշադրություն դարձրեց լուսավորության գործին։ Այդ աշխատանքը ղեկավարելու համար կազմակերպվում է լուսավորության ժողովրդական կոմիսարիատ։ Ժողովրդական կոմիսար է նշանակվում Աշ. Հովհաննիսյանը։ Հայաստանի Հեղկոմի 1920 թվականի դեկտեմբերի 17-ի դեկրետով պետական սեփականություն հայտարարվեցին և լուսավորության ժողկոմատին հանձնվեցին կուլտուր-կրթական հիմնարկությունները՝ հնագիտական և ազգագրական թանգարանները, գրադարանները և այլն։ Հիմնադրվեցին Երևանի պետական համալսարանը, կուլտուր-պատմական ինստիտուտը, մի շարք այլ դպրոցներ և կուլտուրական հաստատություններ։

Պետական խոշոր նշանակություն է ստանում պարենավորման հարցի կարգավորումը։ Այդ նպատակով Հեղկոմը իր դեկտեմբերի 14-ի դեկրետով կազմակերպեց պարենավորման ժողովրդական կոմիսարիատ, որը միաժամանակ ղեկավարում էր արտաքին գործերի ժողովրդական կոմիսար Ալ. Բեգզադյանը։

---

1 «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիայի և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում», էջ 448։

Պարենային ճգնաժամը մեղմացնելու համար սովետական իշխանությունը 1920—1921՝ թվականների ձմռանը ստիպված դիմում է ունևոր գյուղացիների հացի պաշարների մասնակի բռնագրավումների և սահմանում հացի առևտրի պետական մենաշնորհ։ Այդ միջոցառումները փաստորեն նշանակում էին ռազմական կոմունիզմի քաղաքականության կիրառումը, որը, սակայն, լայն չափեր չընդունեց և կարճ տևեց։

Հեղկոմի 1921 թվականի հունվարի 4-ի դեկրետով նախկին պետական վերահսկողությունը վերակազմվում է բանվորա-գյուղացիական տեսչության, որին վերապահվում են ժողովրդական կոմիսարիատի իրավունքներ։ Բանվորա-գյուղացիական տեսչության պարտականություններն էին՝ հետևել Հեղկոմի դեկրետների, որոշումների, ժողովրդական կոմիսարիատների հրամանների և որոշումների արագ և ճիշտ կիրառմանը, ստուգել սովետական հիմնարկների աշխատանքները, պայքարել բյուրոկրատիզմի, քաշքշուկների դեմ, հիմնավորված առաջարկություններ ներկայացնել կենտրոնական և տեղական սովետական կազմակերպություններին՝ սովետական ապարատը ավելի պարզ դարձնելու, աշխատանքի բնագավառում զուգահեռականությունը, անտնտեսվարությունը վերացնելու ուղղությամբ։ Բանվորա-գյուղացիական տեսչությանը կից կազմակերպվում է հատուկ բյուրո, որը պետք է դիմումներ ընդուներ սովետական ծառայողների կողմից կատարված անօրինական գործողությունների, զեղծումների մասին։ Դիմումները պետք է քննվեին բանվորա-գյուղացիական տեսչությունում։ Ջանցանքի ու հանցանքի համար վերոհիշյալ տեսչությունը իրավունք ուներ դատել պաշտոնատար անձանց և համապատասխան օրգանների միջոցով նրանց հեռացնել պաշտոնից։ Բանվորա-գյուղացիական տեսչությունն իր աշխատանքներում պետք է ներգրավեր աշխատավորներին։

Մեծ ուշադրություն դարձնելով աշխատավորների առողջապահության գործին, Հեղկոմը իր 1920 թվականի դեկտեմբերի 22-ի դեկրետով կազմակերպում է առողջապահության ժողովրդական կոմիսարիատ։ Կոմիսարիատի աշխատանքը շուտով սկսում է ղեկավարել Ս. Համբարձումյանը, որին հետո փոխարինում է Ս. Լազարևը։

Երիտասարդ սովետական իշխանությունը կադրերի խիստ կարիք էր զգում։ Ստեղծվող սովետական և կուսակցական օրգանները անհրաժեշտ էր ապահովել փորձված աշխատակիցներով։ Այդ նպատակով ՀԿԿ Կենտկոմի խնդրանքով և ՌԿ(բ)Կ կովկասյան բյուրոյի առաջարկով Ադրբեջանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեն մոբիլիզացնում է Ադրբեջանում աշխատող 310 հայ կոմունիստների և ուղարկում Հայաստան աշխատանքի, որոնք խոշոր գործ են կատարում սովետական իշխանության ամրապնդման համար։ Այդ ժամանակ ՀԿԿ Կենտրոնական կոմիտեի քարտուղարն էր Գ. Ալիխանյանը։

Սովետական պետական օրգանների ստեղծման հետ զուգընթաց Հայաստանի Հեղկոմը Ալեքսանդրապոլի և նրա գավառի բնակչությանը թուրքական զավթիչների ոչնչացումից փրկելու նպատակով դիմում է մի շարք միջոցառումների։

Թուրքական բանակի կողմից գրավված Կարսի մարզի և Ալեքսանդրապոլի գավառի հայ բնակչության այն մասը, որը չկարողացավ փախչել, հալածվում և ոչնչացվում էր թուրքական զորքերի կողմից։

Ռումինական քաղաքացի Վ. Իոնեսկուն, որը չէր կարողացել հեռանալ Կարսից՝ թուրքերի կողմից այն գրավելուց հետո, պատմել է, որ «Կարսում նա թուրքական բժիշկ Նուրի բեյից իմացել է, որ քաղաքում սպանվել է 8 հազար հայ»[1]։ Սակայն Վ. Իոնեսկուի կարծիքով «Սպանվածների թիվը 10—12 հազարից պակաս չպիտի լիներ. դեռ մեկ ամիս հետո քաղաքի շրջակայքում կարելի էր հանդիպել բազմաթիվ դիակների»[2]։

Թուրքական զավթիչները, ձմռան սոսկալի ցրտերին, Ալեքսանդրապոլից և գյուղերից հավաքելով տղամարդկանց՝ հանել են նրանց հագուստը, և հագցրնելով ալյուրի պարկերից կարված շորեր, հարկադիր աշխատանքի քշել դեպի Կարս, Սարիղամիշ և Էրզրում։

Ալեքսանդրապոլի գավառի երկրորդ շրջանի կոմիսարը Հայաստանի Հեղկոմին ուղարկած իր զեկուցագրում հաղորդում է Քավթառու գյուղում թուրքերի կողմից իննը կոմունիստի սպանության մասին։ 1920 թվականի դեկտեմբերի 26-ին գյուղ է մտնում թուրքական զորքերի մի ջոկատ։ Ջոկատը գյուղում տեղավորելու համար թուրքերը աշխատանքի են հանում մի խումբ գյուղացիների, որոնց թվում լինում են նաև իննը կոմունիստ։ Աշխատանքը վերջացնելուց հետո պարզվում է, որ կոմունիստներն անհայտացել են։ Շրջանի կոմիսարը հետաքննություն է կատարում ու պարզում, որ նրանց սպանել են թուրքական զինվորները և դիակները Քավթառու գյուղի մի բնակչի սայլով գյուղից տարել դուրս ու թաղել։ Եվ որպեսզի կորցնեն կատարված ոճրագործության հետքերը, վերադարձին նրանք սպանել են՝ նաև սայլի տիրոջը։ «Ինչպես այդ իմ կողմից բազմիցս հաստատված է,— հայտնում է շրջանի կոմիսարը,— թուրք զինվորները խիստ կարգապահության հետևանքով ոչինչ չեն անում առանց հրամանատարական կազմի գիտության և այստեղից կարելի է եզրակացնել, որ մեր կոմունիստ ընկերները ամենավայրագ կերպով սպանվել են թուրքական հրամանատարական կազմի գիտությամբ»[3]։

Ոչ լրիվ տվյալներով թուրքական զավթիչների ձեռքով Ալեքսանդրապոլի գավառում սպանվել էին մոտ 30 հազար տղամարդ, 30 հազար կին և երեխա։ Բացի այդ, սովից մեռածների թիվը հասել էր 32 հազարի։ Այդ վայրերից թուրքերը էրզրումի ուղղությամբ հարկադիր աշխատանքի էին քշել մոտ 15 հազար մարդ, որոնց մեծագույն մասը չի վերադարձել տուն[4]։ Պետական և մասնավոր գույքի հափշտակումը չտեսնված չափերի է հասել։ Տարել են ամեն ինչ՝ սկսած պատուհանների, դռների շրջանակներից մինչև շոգեքարշերը, վագոնները, հացահատիկը և անասունները։

Սպանությունները, բռնությունները և բնակչության գույքի հափշտակումը դադարեցնելու նպատակով Հայաստանի Հեղկոմը անմիջապես դիմում է մի շարք միջոցառումների։ Անկարայի կառավարությանն ուղղված 1921 թվականի հունվարի 7-ի և 18-ի նոտաներով Հեղկոմը կտրուկ կերպով պահանջում է վերջ տալ այդ բոլորին։ Հունվարի 7-ի նոտայում ասված էր. «Հայաստանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության կառավարության կողմից ստաց-

1 ՀՍՍՀ ՀՀՇ ՊԿԱ, ֆ. 114, ց. 2, գ. 43, թ. 34։

2 Նույն տեղում։

3 Նույն տեղում, գ. 25, թ. 81։

4 Տե՛ս նույն տեղում, ց. 1, գ. 43, թ. 1։

ված ատույգ. տեղեկությունների համաձայն Ալեքսանդրապոլի գավառում և «չեզոք գոտում» «ձեր օկուպացիոն զորքերի կողմից անընդհատ կատարվում են բռնություններ, կողոպուտ և սպանություններ հիշված վայրերի խաղաղ աշխատավոր բնակչության նկատմամբ։ Թուրքական զորքերի կողմից գրավված բոլոր վայրերում գրավվում և Թուրքիա է ուղարկվում Հայաստանի ՍՍՀ պետական գույքը, թալանվում է մասնավոր գույքը և տնտեսությունը, քշվում տարվում են գյուղացիների անասունները և բռնագրավվում են բնակչության պարենի վերջին պաշարները։ Թուրքիա տանելու համար Նալբանդ կայարանում կենտրոնացվում է շրջակա գյուղերում բռնագրավված հացահատիկի խոշոր պաշար, որի հետևանքով այդ գյուղերի բնակիչները սովի, մահվան են դատապարտվում»[1]։ Նոտայի վերջում Հայաստանի Հեղկոմը պահանջում էր գրավված վայրերից դուրս հանել օկուպացիոն զորքերին, դադարեցնել հալածանքներն ու սպանությունները և պատժել այդ հանցագործությունների մեղավորներին։

Հունվարի 18-ի նոտայում բերվում էին նոր փաստեր, մասնավորապես ասվում էր այն մասին, թե ինչպես 18 տարեկանից մինչև 50 տարեկան աշխատունակ տղամարդիկ ուժով քշվում են դեպի Սարիղամիշ ու Էրզրում և այդ վայրերում դաժան պայմաններում պարտադիր աշխատանքի են դատապարտվում։ Ասվում էր նաև, որ թուրքական իշխանությունները փորձում են Ղարաքիլիսայից տուն վերադարձող գաղթականներին ևս ուղարկել դեպի Էրզրում և որ Կարսում սպանությունները ավելի փոքր չափերով դեռևս շարունակվում են։ Նոտայի վերջում ընդգծվում էր, որ Սովետական Հայաստանի կառավարությունը ստիպված է թուրքական հրամանատարության այդ քայլերը դիտել որպես գործողություններ, որոնց նպատակն է արյունաքամ անել և լիովին ավերել այն շրջանները, որոնք ժամանակավորապես օկուպացվել են թուրքական զենքի համար հաջող պատերազմի հետևանքով և որոնք պետք է ազատագրվեն օկուպացիոն զորքերից։

Այսպիսի բացառիկ դժվարին պայմաններում էին տեղի ունենում Հայաստանում հաղթանակած երիտասարդ սովետական իշխանության առաջին քայլերը։

4. ՍՈՎԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ ԼՈՌՎԱ «ՉԵԶՈՔ ԳՈՏՈՒՄ»

Լոռվա «չեզոք գոտում», որը ստեղծվել էր 1918 թվականի դեկտեմբերին Անտանտի իմպերիալիստների հրահրումով բռնկված հայ-վրացական պատերազմից հետո, մինչև 1920 թվականի կեսերը տեր ու տնօրեն էին հանդիսանում անգլիական իմպերիալիստները, իսկ այնուհետև՝ վրացական մենշևիկները։

«Չեզոք գոտու» մեջ էին մտնում նախկին Բորչալու գավառի Ալավերդու, Ուզունլարի և Վորոնցովկայի շրջանները՝ 41 գյուղերով։ Հետագայում մենշևիկների նոր նվաճումների հետևանքով այդ գյուղերի թիվն ավելանում է՝ հասնելով 53-ի։ «Չեզոք գոտին» կառավարելու համար դեռևս 1919 թվականի հուն-

1 ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 114, ց. 2, գ. 318, թ. 69—70։

վարին Թիֆլիսում կայացած հայ-վրացական կոնֆերանսի որոշմամբ ստեղծվել էր խառն վարչություն՝ ամերիկյան, անգլիական ու ֆրանսիական իմպերիալիստների ներկայացուցիչների ղեկավարության և հսկողության ներքո[1]։ «Չեզոք գոտուն» փաստական կառավարիչն էր անգլիական գեներալ-նահանգապետը։

Ադրբեջանում սովետական իշխանության հաստատվելուց հետո Լոռվա «չեզոք գոտուն» կապակցությամբ վրացական մենշևիկների և դաշնակցականների միջև եղած վեճերը այլ բնույթ են ստանում։ Նպատակ ունենալով միացյալ ուժերով պայքարելու ընդդեմ Սովետական Ադրբեջանի և Ռուսաստանի, ճնշելու սովետական իշխանության համար Վրաստանում և Հայաստանում մղվող պայքարը, նրանք արդեն ամեն կերպ ձգտում էին այդ վեճերը հարթել խաղաղ ճանապարհով։

1920 թվականի աշնանը, օգտվելով Հայաստանի համար պատերազմի պատճառով ստեղծված ծանր իրադրությունից, վրաց մենշևիկները դաշնակցականներից պահանջեցին իրենց զորքերը մտցնել Լոռվա «չեզոք գոտին»։ Այդ կապակցությամբ դաշնակցականների և մենշևիկների միջև բանակցություններ են սկսվում, որոնք ավարտվում են 1920 թվականի նոյեմբերի 13-ին կնքած համաձայնագրով։ Ըստ այդ համաձայնագրի Վրաստանի կառավարության առաջարկով Հայաստանի կառավարությունը տալիս է համաձայնություն «չեզոք գոտում» վրացական զորքերը մտցնելու մասին[2]։ Այդպիսով, վրացական մենշևիկները գրավեցին Լոռվա «չեզոք գոտին»։ Հայաստանում սովետական իշխանության հաստատվելուց հետո, շարունակելով իրենց առաջխաղացումը, վրաց մենշևիկների զորամասերը հասնում են մինչև Շահալի կայարանը և գավթում Ջալալօղլին (այժմ Ստեփանավան), Լորուտը, Աթանը և ուրիշ գյուղեր[3]։ Մենշևիկների կողմից գրավված շրջանների վիճակի մասին Լոռվա ռազմա-հեղափոխական կոմիտեի հաղորդագրության մեջ ասված է. «Ներկայումս այդ գրավված շրջաններում թագավորում է սանձարձակ քմահաճ վերաբերմունք և ամենախայտառակ կողոպուտ։ Զինաթափման աստառի տակ բոլոր գյուղերում և խրճիթներում ընդհանուր խուզարկություններ տեղի ունեցան. բացի զենքից, մենշևիկյան բանդաները խլեցին գյուղացիներից ամեն տեսակի մթերքներ...»[4]։

Հայաստանում սովետական իշխանության հաստատվելուց հետո, Հեղկոմը մի շարք նոտաներ է ուղարկում Վրաստանի մենշևիկյան կառավարությանը՝ կտրուկ պահանջ դնելով Լոռվա «չեզոք գոտուց» մենշևիկյան զորքերը դուրս բերելու և տեղի աշխատավորության նկատմամբ եղած բռնություններին վերջ տալու համար։ Սովետական Հայաստանի արտաքին գործերի ժողկոմատը 1920 թվականի դեկտեմբերի 29-ի նոտայով դիմում է մենշևիկյան կառավարությանը՝ առաջարկելով խաղաղ բանակցություններ սկսել Սովետական Ռուսաստա-

---

1 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 200, ց. 1, գ. 16, թ. 72։

2 Տե՛ս նույն տեղում, գ. 765, թ. 180։

3 Տե՛ս «Կոմունիստ» (Երևան), 11 փետրվարի 1920 թ., Լոռվա ռազմա-հեղափոխական կոմիտեի հաղորդագրությունը։

4 Նույն տեղում։

նի ներկայացուցչի մասնակցությամբ։ Սակայն վրացական մենշևիկները ոչինչ հաշվի առնել չեն ցանկանում։ Հայաստանում սովետական իշխանության հաստատումից հետո ավելի է ուժեղանում Վրաստանի աշխատավորության պայքարը մենշևիկների տիրապետության դեմ։ Հասկանալով, որ իրենց տիրապետության օրերն արդեն հաշված են, վրացական մենշևիկները, ինչպես ամբողջ Վրաստանում, նույնպես և «չեղոք գոտում» էլ ավելի են ուժեղացնում հարձակումները ու հալածանքները կոմունիստական կազմակերպությունների ու նրանց հետևից գնացող հեղափոխական բանվորության և գյուղացիության նկատմամբ։ Բանտերը լցվում են կոմունիստներով և նրանց համակրողներով։ Միաժամանակ թույլ չտալով Ռուսաստանից և Ադրբեջանից կենսամթերքներով բեռնված գնացքների շարժումը դեպի Հայաստան, մենշևիկները շարունակում էին Սովետական Հայաստանին հայտարարված բլոկադան։

Ընդհատակում գործող Լոռվա բոլշևիկյան կազմակերպությունների ղեկավարությամբ «չեզոք գոտու» բանվորներն ու գյուղացիները նախապատրաստվում էին զինված ապստամբության։ Այդ ժամանակ Լոռու գավառում ամենաուժեղ կուսակցական կազմակերպությունը Ալավերդու շրջանինն էր, որն ընդգրկում էր վեց երկաթուղային կայան (Այրում, Ախթալա, Շահալի, Ալավերդի, Սանահին, Քոլագերան) և Մանեսի, Ալավերդու, Հաղպատի, Որնակի, Սանահինի, Ուղունլարի, Մղարթի, Շնողի, Արճիշի, Ճոճկանի կուսակցական բջիջները։ «Չեզոք գոտում» գնալով ուժեղանում էր կոմունիստական կուսակցության ազդեցությունը։ Բանվորների և գյուղացիների մեծամասնությունը համոզվում էր, որ փրկության ճանապարհը միայն հաղթական զինված ապստամբությունն է։

Լոռվա բոլշևիկները սերտ կապի մեջ էին Վրաստանի կոմունիստական կազմակերպությունների հետ։ Վրացական մենշևիկների դեմ զինված ապստամբությունը նրանք նախապատրաստում էին միասնաբար։

1921 թվականի փետրվարին Պրիվոլնոյե գյուղում տեղի ունեցած Լոռվա կոմունիստական կազմակերպությունների ընդհատակյա կոնֆերանսի աշխատանքներին ակտիվ ղեկավար մասնակցություն են ունենում Վրաստանի կոմունիստական կուսակցության Թիֆլիսի կոմիտեի ներկայացուցիչները։ Կոնֆերանսում բայման ճառ է ասում Թիֆլիսի կոմիտեի ներկայացուցիչ Հ. Գրիգորյանը։

«Չեզոք գոտում» զինված ապստամբություն նախապատրաստելու, տեղի կոմունիստական կազմակերպություններին օգնելու նպատակով ՌԿ(բ) կուսակցության Կենտկոմի կովկասյան բյուրոն այնտեղ է ուղարկում ղեկավար կուսակցական աշխատողներ՝ Գ. Առուստամյանին, Ս. Լիսինին և ուրիշների։

1920 թվականի դեկտեմբերի սկզբներին Ղարաքիլիսայի (այժմ Կիրովական) գավառային Հեղկոմը, ՌԿ(բ)Կ Կենտկոմի կովկասյան բյուրոյից ուղարկված ներկայացուցիչների հետ միասին, հրավիրում է գյուղացիական մի շարք համագումարներ, որոնք խոշոր դեր խաղացին աշխատավորների հեղափոխական տրամադրությունների բարձրացման և զինված ապստամբության նախապատրաստման գործում։ Ղարաքիլիսայի գավառային Հեղկոմի զեկուցագրում այդ մասին ասված է. «Սույն դեկտեմբեր ամսի մեկից մինչև 10-ը մենք հրավիրել ենք երեք համագումար, որոնցից երկուսը անկուսակցական էին և եր-

բորդը՝ կուսակցական։ Գյուղացիությունը այդ համագումարներում իր պատրաստակամությունը հայտնեց միանալու Սովետական Հայաստանին և ապրատամբության դեպքում օգնել պարենով ու կենդանի ուժով։ ...Ներկայումս բոլոր գյուղերում՝ Վորոնցովկայից մինչև Շահալի, կան կուսակցական կազմակերպություններ։ Ինքնապաշտպանության անվան տակ մենք այդ կազմակերպություններին կից կազմակերպել ենք զինված ուժեր՝ յուրաքանչյուր գյուղում 50—200 մարդ։ Այժմ մեզ մոտ նրանց թիվը հասնում է 2500 մարդու[1]։

Վերոհիշյալ գյուղացիական համագումարների պատգամավորները վերադառնալով իրենց տեղերը, գյուղերում կազմակերպում էին ժողովներ, ուր զեկուցում էին համագումարների արդյունքների և մենշևիկների կողմից «չեզոք գոտում» կատարվող բռնությունների մասին։ Նման ժողովներ են կայացել Վորոնցովկայում, Պրիվոլնոյում, ռուսական Ջալալօղլիում, Նովո-Պոկրովկայում, Նովո-Միխայելովկայում , Կոտուր-Բուլաղում, Արմանիսում, Գյառգյառում և մի շարք այլ գյուղերում։ Ընդունած որոշումներում աշխատավոր գյուղացիությունն իր զայրույթն էր արտահայտում մենշևիկների կողմից «չեզոք գոտում» կատարվող բռնությունների դեմ և պատրաստակամությունը՝ մենշևիկների տիրապետությունը տապալելու և սովետական իշխանություն հաստատելու համար։ Ահա թե ինչ է ասված, օրինակ, 1920 թվականի դեկտեմբերի 17-ին Վորոնցովկայի բնակիչների ժողովում ընդունված որոշման մեջ, որը ստորագրել են ժողովի կողմից լիազորված 174 մարդ։

«Ցանկանալով ազատվել կապանքներից ու շղթաներից, բռնություններից ու կամայականություններից և Վրաստանի ազնվականների ու իշխանների ավելորդ ու անկոչ իշխանությունից և միայն վճռական ցանկություն ունենալով մեզ մոտ ամենուրեք տեսնել մեր ընտրած ժողովրդական իշխանությունը... բանվորների ու գյուղացիների սովետների իշխանությունը, որոշեցինք ընկ. Ս. Մ. Լիսինին անհապաղ գործուղել սովետական բանվորա-գյուղացիական կոմունիստական Ռուսաստանի ներկայացուցչի մոտ՝ բարձրաձայն հայտնելու մեր բողոքը վրացիների (վրացական մենշևիկների — խմբ.) կողմից «չեզոք գոտին» գրավելու, նրանց բռնի կամայականության և նրանց իշխանության կողմից մեր ներքին գործերին ու գոյություն ունեցող օրենքներին միջամտելու դեմ»[2]։

Նույնպիսի ոգով են գրված նաև մյուս գյուղերում կայացած ժողովներում ընդունված որոշումները[3]։

Լոռում և նրան սահմանակից սովետական շրջաններում եղած պարտիզանական ջոկատներն ամրապնդելու, նորերը կազմակերպելու և զինված ապրատամբությունը բազմակողմանիորեն նախապատրաստելու նպատակով Ռ Կ(բ)Կ Կենտկոմի կովկասյան բյուրոյի ցուցումով Հայաստանի Կ(բ)Կ Կենտկոմը 1920 թվականի դեկտեմբերի 20-ին Ղարաքիլիսայում կազմակերպում է ապստամբության շտաբ՝ Ռ Կ(բ)Կ Կենտկոմի կովկասյան բյուրոյի կողմից «չեզոք գոտուն» ամրացված ներկայացուցիչ Հովսեփ Լազյանի գլխավորությամբ։

---

1 «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում», էջ 432։

2 Նույն տեղում, էջ 434—435։

3 Տե՛ս նույն տեղում, էջ 427—429, 433 և այլն։

Շտաբի պրամադրության տակ էին մի շարք կուսակցական ու ռազմական աշխատողներ։ Ապստամբության շտաբն ամբողջ «չեզոք գոտին» բաժանում է 5 գավառամասերի՝ Վորոնցովկայի, Դսեղի, Ուզունլարի, Ջալալօղլու և Շնողի։ Ստեղծվում են գավառամասային ընդհատակյա հեղկոմներ, ամուր կապ է հաստատվում շտաբի և տեղերում գործող հեղկոմների ու կուսակցական բջիջների միջև։



Հ. Լազյան

1921 թվականի հունվարին «չեզոք գոտու» կուսակցական կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ Ղարաքիլիսայում տեղի է ունենում Լոռվա բոլշևիկների կոնֆերանսը, որի աշխատանքները ՀԿ(բ)Կ կենտկոմի կողմից ղեկավարում էր Հայաստանի կոմկուսի Կենտկոմի և Հայաստանի Հեղկոմի անդամ Ա. Մռավյանը։ Նա զեկուցում է Լոռվա կոմունիստական կազմակերպությունների խնդիրների մասին։ Բացի դրանից, լսվում է տեղերի ներկայացուցիչների զեկուցումները։

Կոնֆերանսի աշխատանքներն ավարտելուց հետո, ապստամբության շտաբը հրավիրում է հատուկ խորհրդակցություն, որին մասնակցում են «չեզոք գոտու» պատգամավորները, Ղարաքիլիսայում գտնվող կայազորի հրամանատարությունը և այլ պատասխանատու աշխատողներ։ Խորհրդակցությունը մշակում է ապստամբության մանրամասն պլանը և այն իրականացնելու համար գավառամասերին ամրացնում ռազմական գործի մասնագետներ։ Փետրվարի 7-ին կազմակերպվում է Լոռվա ռազմա-հեղափոխական կոմիտեն՝ Հովսեփ Լազյանի նախագահությամբ։ Ռազմա-հեղափոխական կոմիտեի կազմի մեջ էին մտնում Սիմոն Էվոյանը և Սեդրակ Սարգսյանը։

Փետրվարի առաջին տասնամյակում արդեն լիովին ավարտված էին զինված ապստամբության նախապատրաստական աշխատանքները։

Ապստամբության սկիզբը «չեզոք գոտում» նշանակված էր 1921 թվականի փետրվարի 11-ի լույս 12-ի գիշերը։ Սահմանված ճիշտ ժամանակին Լոռվա «չեզոք գոտում» սկսվում է ապստամբությունը։ Շնորհիվ Վրաստանի կոմունիստական կուսակցության կողմից մենշևիկյան բանակում տարված ագիտացիայի, զորամասերի զինվորների մեծ մասը հրաժարվեց կռվել դասակարգային եղբայրների՝ «չեզոք գոտու» բանվորների ու գյուղացիների դեմ։

Սակայն որոշ տեղերում, ինչպես օրինակ, Լոռվա տափաստանում, մենշևիկների ընտրովի զորամասերը ապստամբներին ցույց են տալիս կատաղի դիմադրություն։ Նրանք հրետանային ուժեղ կրակով ավերում են Վորոնցովկա, Պրիվոլնոյե և շրջակա գյուղերը։ Ապստամբության շտաբը դիմում է Սովետական Ռուսաստանի XI բանակի օգնությանը։ Ընդառաջելով ապստամբներին, Գ. Օրջոնիկիձեի կարգադրությամբ, XI բանակի զորամասերը փետրվարի 12-ին անցնում են «չեզոք գոտու» սահմանը։ Նրանք օգնության են հասնում Լոռվա ապստամբ բանվորներին ու գյուղացիներին։ «Պարզ է, իհարկե,—

դրել է Գ. Օրջոնիկիձեն,— որ մոտ կանգնած կարմիր բանակը չէր կարող սառնարյուն կերպով նայել, թե ինչպես են մենշևիկները գնդակահարում սովետական իշխանության համար ապստամբություն բարձրացրած գյուղացիներին։ Բոցավառվող Վորոնցովկա և Պրիվոլնոյե գյուղերը մի ազդանշան եղան, որոնք կարմիր բանակին օգնության կանչեցին ապստամբներին...»[1]։

Կարմիր բանակի օգնությամբ ապահովվեց ապստամբության արագ հաղթանակը «չեզոք գոտում»։

Ապստամբների առաջնահերթ ու կարևոր խնդիրներից մեկն էր՝ անվնաս կերպով փրկել մենշևիկների կողմից ականված Շահալիի երկաթուղային կամուրջը, որի նշանակությունը բացառիկ էր։ Շնորհիվ ապստամբության շտաբի մտածված ու լուրջ ձեռնարկումների, ապստամբությունն սկսվելուց մի քանի ժամ հետո Շահալիի կամուրջը անվնաս կերպով գրավված էր։ Այդ գործում կարևոր դեր խաղաց Արտաշես Ստեփանյանը, որը խիզախորեն կամուրջը փրկեց ականների պայթյունից և փլուզումից։

Առանց մեծ զոհեր տալու, ապստամբները ազատում են Շահալին, Կուրթանը, Գյուլագարակը, Ալավերդին, Վորոնցովկան, Հաղպատը և երկաթուղային մյուս կայարաններն ու գյուղերը։

Այսպիսով, Լոռվա «չեզոք գոտում» սկսված ապստամբությունը 3—4 օրվա ընթացքում ավարտվում է հաղթանակով։ Մենշևիկների դեմ մղված պայքարում միավորվել և ամուր դաշինք էին հաստատել «չեզոք գոտու» բոլոր ազգերի աշխատավորները։ «Հայ, ադրբեջանցի, վրացի և մալական գյուղացիների այդ եղբայրական դաշինքը,— ասված է ապստամբության հաղթանակի առթիվ Լոռվա Հեղկոմի և ապստամբության շտաբի կոչում,— տարագ կերպով հաղթանակ տվեց մեր ձեռքը»[2]։ Լոռիում հաստատվեց սովետական իշխանություն։ Սովետական Հայաստանի աշխատավորների հետ միասին, Լոռվա աշխատավորները լծվեցին սոցիալիստական շինարարությանը։

Լոռվա ազատագրության համար մղված մարտերում իրենց քաջագործություններով աչքի ընկան հրամանատարներ Գ. Օգանեզովը, Վ. Օղաբաշյանը, Մալումյանը, քաղաքական աշխատողներ Բաբլումյանը, Ավակովը, մարտիկներ Փախչանյանը, Ա. Մատինյանը, Հարությունյանը, Կարապետյանը և շատ ուրիշներ։

Գնահատելով Լոռվա «չեզոք գոտում» տեղի ունեցած ապստամբությունը, Վ. Ի. Լենինը գրել է. «...Փետրվարի սկզբին սարսափելի ապստամբություն պոռթկաց, որը զարմանալի արագությամբ տարածվեց և ընդգրկեց ո՛չ միայն հայ բնակչությանը, այլև վրացական բնակչությանը»[3]։

Վրաստանի կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ Բորչալուի գավառում այդ ժամանակ սկսված ընդհանուր զինված ապստամբությունը ազդանշան հանդիսացավ Վրաստանի մյուս գավառների ու շրջանների համար և արագորեն տարածվեց ամբողջ Վրաստանում։ Շուտով զինված ապստամբություն է սկսվում Գորիում, Դուշեթում, Գուրիայում, Աբխազիայում, Աջար-

1 Գ. Կ. Օրջոնիկիձե, Ընտիր հոդվածներ և ճառեր, Երևան, 1950, էջ 45։

2 «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում», էջ 181։

3 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 32, էջ 176։

ստանում, Հարավային Օսեթիայում, Լեչխումի գավառում և երկրի մյուս մասերում։ Ամենուրեք ապստամբների կողմն էին անցնում մենշևիկյան բազմաթիվ զորամասեր։

Փետրվարի 16-ին Բորչալուի գավառի Շուլավեր գյուղում (այժմ Շահումյան քաղաք) կազմակերպվում է Վրաստանի հեղափոխական կոմիտեն, որը գլխավորում է զինված ապստամբությունը։ Վրաստանի ապստամբ բանվորներին ու գյուղացիներին եղբայրական օգնության են հասնում Սովետական Ռուսաստանի XI բանակի զորամասերը։

Չնայած Անգլիայի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի և մյուս երկրների իմպերիալիստների կողմից վրացական մենշևիկներին ցույց տրված ամեն կարգի օգնությանը, Վրաստանում սկսված ընդհանուր զինված ապստամբությունը ավարտվում է հաղթանակով։ 1921 թվականի փետրվարի 25-ին Վրաստանի մայրաքաղաք Թիֆլիսի վրա ծածանվում է սովետական կարմիր դրոշը։ Շուտով սովետական իշխանություն է հաստատվում ամբողջ Վրաստանում։

Եղբայրական Վրաստանի բանվորների ու գյուղացիների հաղթանակը ջերմորեն ողջունում են Ռուսաստանի, Ադրբեջանի և Հայաստանի աշխատավորները։

Սովետական իշխանության հաստատումը Վրաստանում խոշոր նշանակություն ունեցավ Սովետական Հայաստանում դաշնակցականների կողմից կազմակերպված հակահեղափոխական խռովության՝ փետրվարյան ավանտյուրայի արագ ջախջախման գործում։

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՈՒԻՎՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1921 ԹՎԱԿԱՆԻՆ: ՍՈՎԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ

1. ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆՆԵՐԻ ՀԱԿԱՀԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԽՈՒՎՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանում սովետական իշխանությունը դեռ նոր էր սկսել ամրապընդվել, երբ դաշնակցականները, համախմբելով հակահեղափոխական ուժերը, 1921 թվականի փետրվարին զինված խռովություն բարձրացրին: Սկսվեց քաղաքացիական պատերազմը:

Բանվորների և գյուղացիների սոցիալիստական պետության դեմ ուղղված այդ հակահեղափոխական ելույթն ուներ իր որոշակի նպատակը՝ տապալել սովետական իշխանությունը Հայաստանում, վերականգնել հին կարգերը: Այդ ավանտյուրայով դաշնակցականներն ըստ էության օժանդակեցին Վրաստանի մենշևիկյան իշխանությանը, որի դեմ երկրում լայնորեն ծավալվել էր հեղափոխական պայքար, մի շարք գավառներում վերածվելով զինված ապստամբության:

Փետրվարյան ավանտյուրան, սակայն, ինքնամփոփ երևույթ չէր: Այն սերտորեն շաղկապված էր միջազգային իմպերիալիզմի հակասովետական պլանների հետ:

ԱՄՆ-ի, Անգլիայի և Ֆրանսիայի իմպերիալիստների նպատակն էր ձեռքից բաց չթողնել Անդրկովկասը: Անդրկովկասում ֆրանսիական «գերագույն կոմիսար» Ա. Շևալյեն դեռևս 1920 թվականի դեկտեմբերի 16-ին, Թիֆլիսում մենշևիկյան Վրաստանի հեռագրական գործակալության աշխատակցի հետ ունեցած զրույցում հայտարարել էր, որ ամբողջ աշխարհի (այսինքն իմպերիալիստների — խմբ.) շահերը պահանջում են Հայաստանի և Ադրբեջանի սովետական իշխանությունների տապալում: Նա միաժամանակ մենշևիկյան Վրաստանին խոստացել էր զինված օգնություն, եթե երկրում ծագի հեղափոխություն կամ թե արտաքին թշնամու կողմից նրա վրա հարձակում տեղի ունենա:

Դրանից մի քանի շաբաթ հետո, 1921 թվականի հունվարի 27-ին, անգլիական «Թայմսը» գրում էր. «Դաշնակցականների լիդերներն այս ամսի սկզբներին Թիֆլիսում ունեցած կոնֆերանսում վճռել են բոլոր հնարավոր միջոցներով շարունակել կռիվը բոլշևիկների դեմ...»: Թերթը միաժամանակ նշում էր, որ դրա համար անհրաժեշտ է դրսի օգնությունը դաշնակցականներին:

1920 թվականի վերջերին և 1921 թվականի սկզբներին Թիֆլիսում կազմակերպվում են Հայաստանի, Ադրբեջանի, Կովկասի Լեռնային հանրապետու-

թյան «փրկության կոմիտեներ», որոնց նպատակն էր Կովկասում սովետական հանրապետությունների դեմ կազմակերպել հակահեղափոխական զինված ելույթներ։ «...Երբ Թիֆլիսում կազմակերպվեցին Հայաստանի, Ադրբեջանի, Լեռնական հանրապետության և այլ «փրկության կոմիտեներ»,— գրել է Գ. Օրջոնիկիձեն,— դա Կովկասում ամենուրեք սովետական իշխանության դեմ ապստամբություն բարձրացնելու մի պլան էր»[1]։

Փետրվարյան ավանտյուրայի նախօրյակին Հայաստանում իրադրությունը որոշ չափով բարդացել էր նաև այն պատճառով, որ ռազմական կոմունիզմի քաղաքականության կիրառման ընթացքում, անհրաժեշտ չափով հաշվի չառնելով հանրապետության առանձնահատկությունները, տեղերում թույլ էին տրվել մի շարք շեղումներ ու սխալներ, որոնք օգտագործվեցին դաշնակցականների կողմից։ Այդ արտահայտվեց նրանով, որ խախտելով ռազմական կոմունիզմի սկզբունքները, շատ դեպքում տեղական աշխատողները վերցնում էին ոչ միայն աշխատավոր գյուղացիության պարենային ավելցուկը, այլև ամբողջ պաշարը, որը դժգոհություն էր առաջ բերում։ 1921 թվականի հունվարին նախկին բանակի սպանրի արտաքսումը հանրապետության սահմաններից նույնպես դժգոհությունների առիթ տվեց։ Նման դրությունը ճարպկորեն կարողացան օգտագործել սովետական իշխանության թշնամիները և իրենց կողմը գրավել մանրբուրժուական, ինչպես նաև ինտելիգենցիայի տատանվող տարրերին, ուժեղացնել իրենց քաղաքական պայքարի ճակատը։

Մյուս կողմից, օգտվելով սովետական սպարատի թուլությունից և անբավարար հսկողությունից, նրա տարբեր օղակներում խցկված թշնամական տարրերը, նպատակ ունենալով վարկաբեկելու սովետական իշխանությանը, ինքնագլուխ բռնագրավումներ էին կատարում։ Նույնիսկ Երևանում 1921 թվականի փետրվարի 7—8-ը տեղի ունեցան բռնագրավումներ, որոնցից տուժեցին նաև որոշ սովետական ծառայողներ։ Այդ առթիվ Հայաստանի արտակարգ հանձնաժողովի նույն թվականի փետրվարի 10-ի հրամանում ասված է. «Դաշնակցականների գաղտնի ագենտները խցկված լինելով մեր երիտասարդ խորհրդային հիմնարկություններում, ինքնագլուխ գործունեությամբ և ազգաբնակչության հետ կոպիտ վարվեցողությամբ ի չիք են դարձնում խորհրդային իշխանությունը։

Վերջին օրերս ինքնագլուխ բռնագրավումներ և խուզարկություններ են նկատվում»[2]։

Միաժամանակ դաշնակցականները դիմում էին տեռորիստական ակտերի ընդդեմ Սովետական Հայաստանի կուսակցական ու պետական ղեկավար գործիչների և առանձին շրջաններում՝ էջմիածնում, Աշտարակում, Կոտայքում և այլուր, դավադրության փորձերի։ Սովետական իշխանության դեմ զինված ելույթի վտանգը ավելի ու ավելի ակնհայտ էր դառնում։

Բնութագրելով երկրում ստեղծված ծանր վիճակը, «Կոմունիստ» թերթը գրում էր. «...Հայաստանում դաշնակցությունն իր բազան է դարձրել դժբախտ Զանգեզուրը։ Այստեղ են հավաքված զանազան Ռուբեն, Նժդեհ և այլ տխրա-

1 Գ. Կ. Օրջոնիկիձե, Ընտիր հոդվածներ և ճառեր, էջ 49։

2 «Կոմունիստ» (Երևան), 12 փետրվարի 1921 թ.։

հռչակ «փաշաներն» ու «հերոսները»։ Զանգեզուր են կոտակվում զանազան կողմերից Հայաստանում «անգործ» մնացած բազմաթիվ մաուզերիստները։

...Մյուս կողմից կապեր են հաստատված Թավրիզի միջոցով անգլիացիների և Թիֆլիսի հետ, որոնք հսկայական օգնություն են խոստանում նոր ձեռնարկությանը։ Եթե այդ բոլորին ավելացնենք նաև այն, որ Քեմալի զորեբի կողմից գրավված վայրերը չմարելու մթին քաղաքականությունը միանգամայն համապատասխանում է դաշնակցության դասակարգային ծրագրին, նոր ավանտյուրայի պատկերը կպարզվի միանգամայն։

Սևա այն արտաքին ուժերը (ինչ խոսք, որ մենշևիկյան Վրաստանն էլ նրանց շարքումն է), որոնց վրա հիմնված, դաշնակցությունը պատրաստվում է Հայաստանում հակահեղափոխական հեղաշրջում առաջացնել և բանվորների ու գյուղացիների դիակների վրա կապիտալի ու մաուզերի իշխանություն հաստատել»[1]։

Հանրապետությունում դեռ նոր էին ստեղծվում ու ամրապնդվում սովետական իշխանության օրգանները, նրա ապարատը։ Զգացվում էր կոտակցական ու սովետական աշխատողների խիստ պակաս։ Առանձնապես ծայրամասային և լեռնային շրջաններում (Դարալագյազ, Արագածի ստորոտ, Բաշ-Գյառնի, Նոր Բայազետ և այլն) սովետական իշխանության տեղական մարմինները գտնվում էին ավելի թույլ վիճակում։ Սովետական Հայաստանի կուսակցական ու պետական ղեկավար մարմինները հնարավորություն չունեին հանրապետության բոլոր շրջանները կարճ ժամանակամիջոցում ապահովելու անհրաժեշտ ղեկավար կադրերով։

Օգտվելով նման դրությունից, սովետական կարգերի հաստատումից հետո վերոհիշյալ շրջաններում պատսպարված դաշնակցական զինված խմբերը պատրաստվում էին ակտիվ գործողություններին։ Հակասովետական ուժեղ ագիտացիային զուգընթաց, դաշնակցականները վերադասավորում և լրացնում էին իրենց ուժերը։ Մի շարք շրջաններում և գյուղերում (Դարալագյազ, Բաշ-Գյառնի և այլն) դաշնակցականները նույնիսկ թափանցել էին հեղկոմների կազմի մեջ և այնտեղից քայքայիչ աշխատանք էին կատարում։

Դաշնակցական լիդերներից ոմանք, աշխատանքի տեղավորվելով սովետական ապարատում և շարաշահելով սովետական իշխանության դյուրահավատությունը, զինված դավադրություն էին նախապատրաստում սովետական իշխանության դեմ։

Օգտվելով Սովետական Հայաստանի նորաստեղծ կարմիր բանակում ունեցած ղեկավար դիրքից, Դրոն գաղտագողի իր շուրջն էր համախմբում սովետական իշխանության թշնամիներին։ Հայաստանի կարմիր բանակի շտաբում և մի շարք ղեկավար պաշտոններում նա տեղավորել էր դաշնակցական սպաների, որոնք արժեքավոր հետախուզական տվյալներ վերցնելով կարմիր բանակի ուժերի դասավորության մասին, փետրվարյան ավանտյուրայի նախօրյակին փախել էին Բաշ-Գյառնի։ Դրանց թվումն էր Ս. Թարխանյանը (Կուռոն), որը ավանտյուրայի ժամանակ գլխավորեց դաշնակցականների զինված ուժերի ռազմական գործողությունները։

---

1 «Կոմունիստ» (Երևան), 27 հունվարի 1921 թ.։

Փետրվարյան դավադրության նախապատրաստությունը քողարկելու նպատակով դաշնակցականներն առերես ձգտում էին սովետական իշխանության վստահություն ձեռք բերել։

Մինչդեռ նրանք կատարում էին դաշնակցականների կենտրոնական մարմնի՝ բյուրոյի 1920 թվականի նոյեմբերի 30-ի որոշումը, ուր ասված էր. «...բյուրոն հեռանում է Հայաստանից, թողնելով իր ներկայացուցիչը, և հրահանգում է ընկերներին իրենց տեղական պայմանների համաձայն գործել և գաղտնի պահպանել կուսակցության գոյությունը»[1]։ Այդ որոշման համաձայն 1920 թվականի դեկտեմբերի կեսերին դաշնակցականները Երևանում կազմակերպում են գաղտնի կոմիտե, որի գլուխն է կանգնում Ս. Վրացյանը։ Ավանտյուրայի նախապատրաստությունը վերցնելով իր ձեռքը, այդ կոմիտեն գաղտնի կապեր է հաստատում այն շրջանների հետ, ուր կենտրոնացված էին հակահեղափոխական ուժերը (Բաշ-Գյառնի, Դարալագյազ, Էջմիածին, Աշտարակ և այլն)։

1921 թվականի հունվարի վերջերին դաշնակցականներն իրենց զինված բանդաները կենտրոնացնում են Արագածի ստորոտում, Ներքին Ախտալի, Բաշ-Գյառնիի, Նոր Բայազետի և Դարալագյազի շրջաններում։

Հաշվի առնելով Սովետական Հայաստանի ծանր դրությունը, Ռ(բ)Կ կենտկոմի կովկասյան բյուրոյի հանձնարարությամբ 1921 թվականի հունվարի վերջերին Հայաստան է գալիս Կովկասյան ռազմաճակատում Սովետական Ռուսաստանի արտակարգ հանձնաժողովի լիազոր Գ. Աթարբեկյանը, որի նախաձեռնությամբ հայտնաբերվում և ոչնչացվում են դաշնակցականների մի շարք գաղտնի կազմակերպություններ, ձերբակալվում են դաշնակցական ակտիվ գործիչներից մի քանիսը։ Սակայն թշնամիների մի զգալի մասին հաջողվում է խուսափել ձերբակալությունից և թաքնվել։

Գործադրելով բոլոր ջանքերը, դաշնակցականներն ամեն կերպ արագացնում էին դավադրության նախապատրաստումը։ Այդ օրերին Զանգեզուրից, որը դեռևս շարունակում էր մնալ դաշնակցականների ձեռքում, գաղտնի կերպով Սովետական Հայաստան են անցնում դաշնակցական մի քանի զինված խմբեր, որոնք ծպտվում են Դարալագյազի և Բաշ-Գյառնիի շրջաններում։

Զինված ելույթի առաջին փորձը դաշնակցականները կատարեցին 1921 թվականի հունվարի 22-ին՝ Բաշ-Գյառնիում և գրավեցին այն։ Երևանից մեկնած կարմիր բանակի ջոկատը աշխատավոր գյուղացիության օգնությամբ, նույն ամսի 29-ին լիկվիդացրեց այդ խռովությունը։

Սակայն դաշնակցական ուժերը լիովին չեն ջինաթափվում։ Նրանց մի մասին հաջողվում է թաքնվել, իսկ կարմիր բանակի ջոկատը հրաման է ստանում վերադառնալ Երևան։ Օգտվելով դրանից, հակառակորդը նորից գործելու հնարավորություն է ստանում։ Բաշ-Գյառնի են կենտրոնացվում թշնամու հիմնական ուժերը և շտաբը։

Թշնամին աշխատավորների մեջ տարածում էր հակասովետական հերյուրանքներ, ամեն կերպ աշխատում նրանց հրահրել սովետական իշխանության դեմ։

---

1 «Հայրենիք» (Բոստոն), 1925, № 12 (36), էջ 92։

1921 թվականի փետրվարի 12-ին Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտկոմը և Երևանի կոմիտեն հատուկ կոչով դիմում են Սովետական Հայաստանի բոլոր աշխատավորներին։

«Ընկերներ, արթուն եղեք,— ասված է կոչում,— խստացեք ձեր կոմունիստական կուսակցության շուրջը, լցրեք կարմիր բանակի շարքերը, անողոք կռիվ մղեցեք ձեր դասակարգային թշնամիների դեմ։ Նրանց պետք է ոչնչացնել»[1]։

Հայաստանում սովետական իշխանության տապալման համար քիչ ջանքեր չգործադրեց նաև քեմալական Թուրքիան։ 1921 թվականի փետրվար-մարտ ամիսներին Լոնդոնում հրավիրված մի շարք երկրների (Անգլիա, Ֆրանսիա, Իտալիա, Ճապոնիա, Գերմանիա, Հունաստան) կոնֆերանսին մասնակցում էր նաև քեմալական կառավարության պատվիրակությունը։ Այդ կոնֆերանսում անգլիացիները «Թուրքերին բացահայտ կերպով ցանկանում էին հրել սովետական երկրի դեմ։ Լլոյդ Ջորջը զրույց է ունեցել թուրքական պատվիրակության նախագահ Բեքիր-Սամի բեյի հետ, որը նախքան այդ, եղել էր Մոսկվայում։ Տալով նրան մի քանի հարցեր Սովետական Ռուսաստանի մասին, Լլոյդ Ջորջը զրույցի վերջում նրան ուղղակի առաջարկեց Թուրքիայի հովանավորության տակ վերցնել Անդրկովկասը՝ բաքվի նավթաղբյուրների հետ միասին»[2]։

1921 թվականի փետրվարի վերջերին Մոսկվայում վերսկսվեցին սովետա-թուրքական բանակցությունները, որի ընթացքում պետք է քննվեին Անդրկովկասին, ինչպես նաև Հայաստանին վերաբերող հարցերը։ Կոնֆերանսին մասնակցելու համար Մոսկվա էր ժամանել Սովետական Հայաստանի պատվիրակությունը։ Բայց հենց այդ օրերին դաշնակցականները Հայաստանում հակահեղափոխական խռովություն բարձրացրին։ «Հայրենիքի փրկության կոմիտեի» նախագահ Ս. Վրացյանը հայտնում է կոնֆերանսի մասնակիցներին, որ Հայաստանում իշխանության գլուխն է անցել «Փրկության կոմիտեն» և հետևաբար կոնֆերանսը իրավասու չէ քննության առնելու Հայաստանի հարցերը[3]։ Դա հենց թուրքերի ցանկությունն էր։ Օգտագործելով Վրացյանի դիմումը, թուրքերը պահանջում են ընդունել Ալեքսանդրապոլի պայմանագիրը և հրաժարվում բանակցություններ վարել Հայաստանի պատվիրակության հետ։

Ս. Վրացյանն այդ օրերին նման բովանդակությամբ հեռագիր է ուղարկում նաև Լոնդոնի կոնֆերանսին։ Հեռագրում ասված էր. «Խնդրում եմ հայտնել Լոնդոնի կոնֆերանսին հետևյալը։ Հայաստանը ցանկանում է ապրել հաշտ և բարեկամաբար հարևան Թուրքիայի հետ, ուստի ցանկանում է, որ Լոնդոնի կոնֆերանսի որոշումները առիթ չտան փոխադարձ անվստահության կամ դրժողությունների Թուրքիայի և Հայաստանի միջև»[4]։

Մոսկվայի կոնֆերանսը մարտի 16-ին ավարտեց իր աշխատանքները Սովետական Ռուսաստանի և Թուրքիայի կառավարությունների միջև պայմանագրի կնքմամբ, որով Ալեքսանդրապոլի պայմանագիրը կորցրեց իր ուժը։

---

1 «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում», էջ 479։

2 «История дипломатии», հատ. 3, Մ., 1945, էջ 99—100։

3 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 114, ց. 1, գ. 68, թ. 25։

4 Նույն տեղում, ֆ. 37, ց. 1, գ. 9, թ. 115։

Փետրվարյան ավանտյուրան սկսելը մասամբ հեշտացավ նաև շնորհիվ այն հանգամանքի, որ Հայաստանում գտնվող կարմիր բանակի զորամասերի զգալի մասը կենտրոնացված էր Ղարաքիլիսայում, և երբ Լոռվա «չեզոք գոտում» ու Վրաստանում մենշևիկների դեմ սկսվեց զինված ապստամբություն, այդ զորամասերն օգնության գնացին ապստամբ բանվորներին ու գյուղացիներին։

Փետրվարի 13-ին Դարալագյազում դաշնակցական բանդաները զինված ելույթ սկսեցին սովետական իշխանության դեմ։ Այդ ելույթը ազդանշան հանդիսացավ ավանտյուրան սկսելու համար։ Դրանից 1—2 օր հետո զինված ելույթներ սկսվեցին նաև Բաշ-Գյառնիում, Աշտարակում, Էջմիածնում, Նոր Բայազետում։

Ավանտյուրայի հիմնական ուժերն էին մաուզերիստական խմբերը, կուլակությունը և հակասովետական մյուս տարրերը։

Դաշնակցականների ավանտյուրան զայրույթ է առաջացնում հանրապետության աշխատավորության մեջ։ Տեղի ունեցան բողոքի միտինգներ և ցույցեր, ուր աշխատավորները դատապարտելով դաշնակցականների դավադրությունը, որոշեցին զենքը ձեռքին մեկնել ռազմաճակատ՝ ջախջախելու թշնամուն։

Քարվանսարայում (Իջևան) տեղի ունեցած աշխատավոր գյուղացիների միտինգի բանաձևում ասված էր. «Քարվանսարայի աշխատավոր գյուղացիները փետրվարի 27-ի կիրակնօրյա իրենց միտինգում լսելով զեկուցում Հայաստանում կատարվող դեպքերի մասին՝ հաստատ խոսք են տալիս զենքը ձեռքից վայր չդնել, մինչև Հայաստանում վերջնականապես հաստատվի բանվորների և գյուղացիների իշխանությունը։ Մենք խոսք ենք տալիս վճռական հարվածով ջախջախել հակահեղափոխական խմբապետների, կուլակների գլուխը, որպեսզի նրանք այլևս չերազեն իրենց նախկին գարշելի իշխանությունը վերականգնելու մասին։ Բոլորս մի մարդու պես կգնանք մեր կուսակցության (բոլշևիկների) ետևից՝ Հայաստանի բանվորներին և գյուղացիներին վերջնականապես ազատելու համար թե ներքին և թե դրսի հակահեղափոխական լծից»[1]։

Ջարխեջ գյուղի աշխատավորների միտինգի բանաձևը վերջանում էր հետևյալ խոսքերով. «Մինչև վերջնական հաղթանակը կռվել խմբապետների ու մաուզերիստների դեմ»[2]։

Դաշնակցականների ավանտյուրայի դեմ ուղղված հայ ժողովրդի վճռական բողոքի ու ցասման վառ արտահայտությունն էր մեծանուն բանաստեղծ Հ. Թումանյանի նամակը՝ գրված ավանտյուրայի առթիվ։ «Սրտի խորին կսկիծով հաստատ աղբյուրներից տեղեկանում ենք,— ասված էր այնտեղ,— որ Երևանի «հեղաշրջում» կոչված ավանտյուրան կատարողները կույր գործիք են հանդիսացել մի սոսկալի դավադրության, նույնիսկ հայ ժողովրդի և նրա դատի դեմ և որ հեղաշրջումը կատարվել է արյունալի ոճիրներով։ Էսպիսով, մի նոր աղետ է գալիս դժբախտ հայ ժողովրդի գլխին հենց էն ժամանակ, երբ նա պետք է ազատվեր ամեն աղետներից»[3]։

---

1 «Կարմիր աստղ» (Թիֆլիս), 11 մարտի 1921 թ.։

2 Նույն տեղում։

3 Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. 4, Երևան, 1951, էջ 430։

Այդ աղետի արագ վերացումը Հովհ. Թումանյանը հնարավոր էր համարում միայն ռուս մեծ ժողովրդի, նոր, Սովետական Ռուսաստանի եղբայրական օգնության շնորհիվ և հայ ժողովրդի անունից խնդրում էր այդ օգնությունը. «Խրատասիրտ բողոքելով էս թշվառ դեպքի և կատարված խժդժությունների դեմ՝ իբրև հայ ժողովրդի բանաստեղծ, որն էնքան հավատ է տածել դեպի նոր Ռուսաստանը, խնդրում եմ Սովետական Ռուսաստանին հետացնել էդ վերջին տանջանքի բաժակը արյունաքամ հայ ժողովրդից, նոր վերքեր չհասցնել նրա անհամար թարմ վերքերին, Սովետական Ռուսաստանի մեծահոգությամբ և բանվորա-գյուղացիական կարմիր բանակին հատուկ եղբայրական զգացմունքներով ու ներողամտությունով մոտենալ նրևանին և հայ աշխատավոր ժողովրդին, որ անշուշտ անմեղ է ու անպարտ, գրեթե իր ամբողջությամբ, և յուր բարկությունը չթափել անմեղների վրա, որովհետև մեղավորներին նա չի էլ դտնելու իրենց տեղը»[1]։

Փետրվարյան ավանտյուրան մեծ զայրույթ առաջացրեց նաև Հայաստանից դուրս ապրող հայ աշխատավորության մեջ։ Նրանք նույնպես գումարում էին բողոքի միտինգներ և իրենց վճռական խոսքը ասում՝ ի պաշտպանություն սովետական իշխանության։ Այսպես. Թիֆլիսի արևմտահայ բնակչությունն իր զայրույթի ձայնը բարձրացրեց դաշնակցական ավանտյուրայի դեմ։ «Այն պահին,— ասված է Թիֆլիսում գումարված նրանց միտինգի բանաձևում,— երբ ռուսական հեղափոխական պրոլետարիատի ու չքավոր գյուղացիության կամքըն արտահայտող կարմիր բանակը հակահեղափոխական Վրաստանի մայրաքաղաք Թիֆլիսի դռների առաջն էր կանգնած, հենց այդ պահին, Հայաստանի աշխատավոր մասսաների անարգ թշնամիները, մի ոճրագործ և ճիշտ որ դավաճան ավանտյուրայով, վերջին անգամ էլ, պատճառ եղան ավելորդ արյունահեղության և մի շարք այլ ակնհայտ կորուստների...

Այսպես, ուրեմն, մեզ համար այլևս պարզ է ամեն ինչ. մենք մի անգամ ընդմիշտ մեր թիկունքն ենք դարձնում Հայաստանի աշխատավորության միակ թշնամիներին՝ իմպերիալիստական աշխարհին, դաշնակցական և մնացած բոլոր ազգայնական, շովեն ու ոճրագործ կուսակցություններին»[2]։

Դաշնակցականների ավանտյուրան խստորեն դատապարտում էին նաև Անդրկովկասի այլ քաղաքների ու բնակավայրերի աշխատավորները։

Կուռ շարքերով համախմբվելով կոմունիստական կուսակցության և սովետական իշխանության շուրջը, Հայաստանի աշխատավորները վճռական պայքարի դուրս եկան սովետական իշխանության պահպանման ու ամրապնդման համար։ Նրանց եղբայրական օգնության ձեռք մեկնեցին Սովետական Ռուսաստանի XI բանակի զորամասերը։

Փետրվարի 26-ին Քարվանսարա, Սև Քար, Աչաջուր և այլ գյուղերի աշխատավորներից կազմված կոմունիստական գումարտակը մեկնեց Դիլիջան-Ելենովկա՝ օգնելու դաշնակցականների դեմ կռվող կարմիր բանակի զորամասերին։ Այդպես են վարվում նաև Դիլիջանի, Ղարաքիլիսայի, Ղամարլուի (Ար-

---

1 Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. 4, էջ 430—431։

2 «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում», էջ 507—508։

տաշատի), Վեդիի, Ելենովկայի (Սևանի) և մենշևիկյան լծից նոր ազատագրված Լոռու աշխատավոր գյուղացիները։

Փետրվարյան ավանտյուրայի օրերին Ղարաքիլիսայում կոմկուսի գավկոմի նախաձեռնությամբ երկաթուղային բանվորներից կազմակերպվում է մեկ ջոկատ, որն անմիջապես մեկնում է ռազմաճակատ։

Երբ սկսվեց ավանտյուրան, Ն. Ախտալի շրջանի Ռնդամալ և Քարվանսարա (այժմ Աթարբեկյան) գյուղերի աշխատավորները համառ դիմադրություն ցույց տվեցին գնդացիրներով և հրանոթներով զինված դաշնակցականների խմբերին։ Երկու օր ուժեղ մարտեր մղելով թշնամու դեմ, այդ գյուղերի պարտիզանական ջոկատը անցնում է Ելենովկա, միանում կարմիր բանակի զորամասերին և շարունակում պայքարը։ Պարտիզանական ջոկատներ են կազմակերպվում նաև մյուս շրջաններում։

2. ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ԽՈՎՈՒԹՅԱՆ ՋԱԽՋԱԽՈՒՄԸ

Տիրանալով Կոտայքի, Ախտալի, Նոր Բայազետի, Աշտարակի և էջմիածնի շրջաններին, փետրվարի 17-ին խռովարարները հարձակում սկսեցին Երևանի վրա։

Մոլեգնող թշնամուն հարվածելու և մայրաքաղաքը պաշտպանելու համար Երևանում գտնվող կարմիր բանակի զորամասերը և աշխատավորները դիմում են մի շարք միջոցառումների։ Կոմունիստներից և կոմերիտականներից կազմակերպվում է հատուկ ջոկատ, զինվում է տեղական միլիցիան։ Փետրվարի 15-ին Երևանում իր աշխատանքներն ավարտած անկուսակցական կարմիրբանակայինների առաջին կոնֆերանսի պատգամավորներից ու ռազմաքաղաքական դպրոցի ունկնդիրներից կազմակերպվում է առանձին ջոկատ։ Ջինաթափ է արվում դաշնակցականների ազդեցության տակ գտնվող սակրավոր զորամասը։

Հարձակման նախաձեռնությունը գտնվում էր խռովարարների ձեռքում։ Փետրվարի 17-ին հյուսիսից և արևմուտքից թշնամին արդեն շրջապատել էր մայրաքաղաքը։ Թշնամու դեմ մարտնչող կարմիր զորամասերին օգնելու նպատակով, փետրվարի 17-ին Երմոլենկոյի հրամանատարությամբ Երևանից դեպի Քանաքեռ էր մեկնել մի ջոկատ, որը Քանաքեռի տակ շրջապատվում է թշնամու կողմից և չորս ժամից ավելի մարտնչում նրա դեմ։ Մարտում հերոսաբար ընկնում է ջոկի հրամանատար Երմոլենկոն։ Փետրվարի 17-ին մարտեր են տեղի ունենում Երևանի ծայրամասերում՝ Կոնդի շրջակայքում և Հրազդան գետի կամուրջի մոտ։ Թշնամին մտնում է քաղաք։

Փետրվարի 18-ի վաղ առավոտյան մարտեր են սկսվում Երևանի փողոցներում։ Մարտերը դեռ շարունակվում էին, երբ Աշտարակի, էջմիածնի և Քանաքեռի կողմից Երևան են հասնում մասուզերիստների նոր ուժերը։ Երևանի պաշտպանությունն ամրացնելու նպատակով Շահթախթից մեկնած կարմիր բանակի 178-րդ գունդը՝ «Ազատամարտ» զրահագնացքի հրամանատարի և մեքենավարի սաբոտաժի պատճառով, տեղ է հասնում ուշացումով, այն ժամանակ, երբ քաղաքի հիմնական մասն արդեն թշնամու ձեռքում էր։

Թողնելով Երևանը, փետրվարի 18-ին կարմիր բանակի զորամասերը 178-րդ գնդի և «Ազատամարտ» ու «Մուսայելյան» զրահագնացքների պաշտպանության ներքո սկսում են նաև քաշվել դեպի Ղամարլու։ Նրանց հետ էին ՀԿ(բ)Կ կենտկոմը և Հայաստանի Հեղկոմը։ Նույն օրը երեկոյան նրանք հասնում են Ղամարլու, ուր կանգնած էր հայկական առաջին հրաձիգ բրիգադը։

Սկսվում է Ղամարլու — Վեդիում մեկուսացած և հակահակորդի ուժերով շրջապատված կարմիր բանակի զորամասերի հերոսական գործողություններով հարուստ 45-օրյա մարտերի շրջանը։

Գրավված գավառներում և շրջաններում դաշնակցականները կազմակերպում են «Հայրենիքի փրկության» շրջանային կոմիտեներ։ Բոլոր այդ մարմինների մեջ ամենուրեք իրենց ակտիվ մասնակցությամբ աչքի են ընկնում էսեռները, կադետները («Հայ ժողովրդական կուսակցություն»), սպեցիֆիկները և մյուս հակահեղափոխական տարրերը։

Դաշնակցականների կողմից գրավված վայրերում նորից սկսվում են թալանն ու բռնությունները, կամայականությունն ու տեռորը։ Բանտերը լցվում են կոմունիստներով, կոմերիտականներով և հեղափոխական բանվորներով ու գյուղացիներով։

Գրավված շրջանների բազմաթիվ գյուղերում աշխատավորները հրաժարվում են դաշնակցականներին կռվող ուժ տալուց։ Այդ տեսակետից բնորոշ է Թալինի շրջանի օրինակը։ «Հայրենիքի փրկության» Թալինի շրջանային կոմիտեն «Հայրենիքի փրկության» Էջմիածնի գավառային կոմիտեին 1921 թվականի մարտի 25-ին գրում էր. «Շրջանի ութ գյուղերում, չնայած շրջանային կոմիտեն հրավիրել է կրկնակի հրապարակային բացատրական ժողովներ օրվա մոմենտի մասին և կոչ է արել մասնակցելու ներկա հեղաշրջմանը, բայց դրժբախտաբար այդ աշխատանքը մնացած է ապարդյուն։ Նման պայմաններում կոմիտեն որոշեց բռնի կերպով հավաքել 20—32 տարեկաններին և ուղարկել ճակատ»[1]։ Այս մեթոդով նրանց հաջողվում է ութ գյուղից հավաքել միայն 41 «կամավորներ» և միլիցիայի զինված պահակներով ուղարկել էջմիածին։ Բայց տեղ են հասնում միայն 25 հոգի, իսկ մնացածները ճանապարհին փախչում են։

Էջմիածնի գավառի առաջին շրջանի միլիցիայի պետը 1921 թվականի մարտի 18-ին նույն գավառի «Հայրենիքի փրկության կոմիտեին» նախագահին հայտնում էր, որ իրենց հաջողվել է Սամաղար գյուղում «կամավորներ» հավաքագրել, սակայն գիշերը նրանց կեսից ավելին փախել են։ Միլիցիայի պետը միաժամանակ խնդրում էր ուժեր ուղարկել գյուղը հնազանդեցնելու համար[2]։

Թալինի շրջանի Գյողլու գյուղի քահանան 1921 թվականի մարտի 23-ին էջմիածնի գավառի «Հայրենիքի փրկության կոմիտեին» գրել է. «Շրջանում ամեն տեսակ հակակառավարական գործեր կկատարվեն, շատ տեղերում կառավարության հրամանները երբեք չեն հարգվեր և ըմբոստության փորձեր կըլլան կառավարության կողմե եկած պաշտոնյաներու հանդեպ... Շատ անգամ գինվորներու կողմե առարկություն կըլլա, թե «չգիտենք պատերազմ երթալ, բայց ո՞ւմ դեմ կռվենք, եթե ոչ մեր եղբայրներու և հարազատներու դեմ»[3]։

1, ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 38, ց. 1, գ. 26, թ. 17։
2 Տե՛ս նույն տեղում, գ. 23, թ. 10։
3 Նույն տեղում, գ. 26, թ. 11։

ժողովրդի այդպիսի վերաբերմունքի շնորհիվ դաշնակցականներին չհաջողվեց ամենուրեք գրավել իշխանությունը։ Սովետական իշխանությունը կանգուն մնաց Ղամարլուում, Վեդիում, Ղարաքիլիսայում, Դիլիջանում, Իջևանում և Շամշադինում, որոնց միացավ նաև մենշևիկյան լծից ազատագրված Լոռին։

Իր գոյությունը պահպանելու համար «Հայրենիքի փրկության կոմիտեն» դիմում է արտաքին օգնության։ Նա մեծ հույսեր էր կապել մենշևիկյան Վրաստանի հետ։ Ահա թե ինչու, երբ դաշնակցականները գրավել էին Երևանը, մենշևիկյան Վրաստանի արտաքին գործերի մինիստր Սաբախտարաշվիլին փետրվարի 21-ին հեռագրով ողջունելով նրանց, գրում էր. «...Վրաստանի կառավարությունը առաջարկում է Ձեզ՝ անմիջապես դուրս գալ մեզ հետ միասին և խրախել բոլշևիկների թիկունքին... բոլշևիկյան զորքերի բոլոր գրոհները երեկ և այսօր գիշեր ետ են շպրտված թշնամու համար մեծ կորուստներով։ Ֆրանսիան վերջնականապես բռնեց մեր կողմը և նրա էսկադրան ռմբակոծում էր բոլշևիկյան զորքերին...»[1]։

Սակայն դրանից հետո մենշևիկյան Վրաստանի կառավարությունը գոյություն ունեցավ միայն չորս օր։ Վրաց մենշևիկներից օգնություն ստանալու դաշնակցականների հույսերը խորտակվում են։

Հայաստանի բանվորների ու գյուղացիների դեմ կռիվը շարունակելու նպատակով Ս. Վրացյանը «Հայրենիքի փրկության կոմիտեի» անունից դիմում է Թուրքիայի օգնությանը։ Նա սկսում է տեսակցություններ ունենալ Թուրքիայի արևելյան ճակատի հրամանատար Քյազիմ Կարաբեքիր փաշայի Երևանի ներկայացուցիչ Բահաեդդինի հետ։ 1921 թվականի մարտի 18-ին վերջինիս միջոցով Թուրքիայի Ազգային ժողովի կառավարությանը Ս. Վրացյանը մի դիմում է ուղարկում, որի մեջ ասված էր. «Հայրենիքի փրկության կոմիտեն ...խնդրում է Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարությանը, հանուն ազգերի փոխադարձ շահերի, ըստ կարելույն շուտ՝

1. Երևան վերադարձնել Տաճկաստանում գտնվող հայ զինվորական ռազմագերիներին։

2. Տալ՝ որոշ պայմաններով՝ հայ բանակին ռազմամթերք, առաջին հերթին ռուսական երեք գծանի հրացան կամ տաճկական մաուզերի փամփուշտներ, և կամ Բոսի ու Լեբելի սիստեմի հրացաններ։

3. Հաղորդել մեզ, թե արդյոք Ազգային մեծ ժողովի կառավարությունը հնարավոր է գտնում հասցնել Հայաստանին զինվորական օժանդակություն և եթե կարող է, ի՞նչ չափով և եղանակով և ի՞նչ ժամանակամիջոցում։

Սույն դիմումն անելով՝ Հայաստանի կառավարությունը հիմնվում է այն բարեկամական հարաբերությունների վրա, որոնց հիմք է դրված Ալեքսանդրապոլի դաշնագրից և որոնք խանգարված էին բոլշևիկների իշխանության ժամանակ»[2]։

Բացի դրանից, Ս. Վրացյանը մի քանի նամակներ է գրում Թուրքիայի կառավարությանը՝ նրանից ստացվող օգնության հարցերի և քաղաքական-տնտեսական կապերը ավելի ամրապնդելու մասին։

1 «Ազատ Հայաստան», 23 փետրվարի 1921 թ.։

2 ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 37, ց. 1, գ. 9, թ. 66։

Այդ օրերին «Հայրենիքի փրկության կոմիտեն» մոլեգին ագիտացիա է մղում հօգուտ թուրքական օրիենտացիայի, փորձելով նորից ու նորից մոլորության մեջ գցել հայ ժողովրդին, որը բազմաթիվ անգամ ենթարկվել էր թուրքական զավթիչների չարդարարության։

«Իրերի պատմական բերումով,— գրել է «Հայրենիքի փրկության կոմիտեի» օրգան «Ազատ Հայաստանը»,— Անդրկովկասի ժողովուրդների քաղաքական ազատության իրական պաշտպանը կարող է դառնալ միայն Տաճկաստանը։ Որովհետև Տաճկաստանն է այն միակ իրական մերձավորագույն քաղաքական ուժը, որը անմիջապես և կենսապես շահագրգռված է Անդրկովկասի ժողովուրդների կատարյալ ազատագրմամբ»[1]։

Այսպիսով, դաշնակցականները գործարքի մեջ էին մտնում անգամ թուրքական նվաճողների հետ՝ ընդդեմ Հայաստանի բանվորների ու գյուղացիների իշխանության։

Դաշնակցականները հույսեր էին կապում նաև անգլո-ֆրանսիական և ամերիկյան իմպերիալիստների ու Իրանի խաների օգնության հետ։

Երևանի անկումից հետո, Սովետական Հայաստանի կարմիր բանակի զորամասերը կենտրոնացել էին Ղամարլու-Վեդիի շրջաններում։ Ավելի քան մեկ ամիս կտրված էր կապը այդ և Հայաստանի հյուսիսային շրջանների միջև։

Ահա թե ինչու Հայաստանի հյուսիսային գավառներում սովետական աշխատանքները գլխավորելու և հակահեղափոխության դեմ պայքար կազմակերպելու նպատակով 1921 թվականի փետրվարի 26-ին Դիլիջանում կազմակերպվում է Դիլիջան-Ղարաքիլիսա գավառների ռազմա-հեղափոխական կոմիտե՝ Գ. Աթարբեկյանի գլխավորությամբ։ Ռազմա-հեղափոխական կոմիտեի կազմի մեջ էին մտնում Գ. Ալիխանյանը, Ա. Մռավյանը, Ե. Շամախյանը, Գ. Թովմասյանը (Ղարիբ) և Ա. Պոլյանսկին[2]։

Ռազմա-հեղափոխական կոմիտեի իրավասության սահմանները, ինչպես նշվում էր Հեղկոմի առաջին հրամանում, տարածվում էին Դիլիջանի և Ղարաքիլիսայի գավառների, Լոռու շրջանի և Նոր Բայազետի ելենովկա գավառամասի վրա։ Ռազմա-հեղափոխական կոմիտեի ազդեցությունը տարածվում էր նաև այն շրջանների և գավառների վրա, որոնք ազատագրվում էին կարմիր բանակի զորամասերի կողմից։

Այնուհետև հրամանում նշվում էր, թե տեղական իշխանությունները պետք է հիշեն, որ ստեղծված կացությունը շատ լուրջ է և պահանջում է հեղափոխական ուժեղ կարգապահություն, բոլոր ուժերի լարում՝ Հայաստանում շուտափույթ կերպով հակահեղափոխությանը վերջ տալու և բանվորա-գյուղացիական սովետական իշխանությունը վերականգնելու համար[3]։

Դաշնակցականների խռովությունն արագ կերպով լիկվիդացնելու համար, ինչպես Ղամարլու-Վեդիի կողմից, նույնպես և ելենովկա-Նոր Բայազետ, ելենովկա-Ախտա-Երևան և Համամլու (Սպիտակ)-Ապարան-Աշտարակ-Երևան ուղղություններով սկսվում են կարմիր բանակի զորամասերի և Հայաստանի բան-

1 «Ազատ Հայաստան», 15 մարտի 1921 թ.։

2 Տե՛ս Մ.Ի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 22, թ. 3։

3 Տե՛ս «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում», էջ 494։

վորների ու գյուղացիների պարտիզանական ջոկատների մարտական գործողությունները։

Կարմիր բանակի Ղամարլուում գտնվող զորախումբը փետրվարի 24-ի լույս 25-ի գիշերն անցնում է հարձակման։ Հնգօրյա ուժեղ մարտերի ընթացքում ետ մղելով հակառակորդին և մեծ կորուստներ պատճառելով նրան, հարձակվող զորամասերն ընդհուպ մոտենում են Երևանին։ Սակայն մյուս ռազմաճակատներից կարմիր բանակի զորամասերի հարձակումը ուշանում է և նրանք նորից ետ են քաշվում։

Թշնամու դեմ մղած մարտերում առանձնապես մեծ տոկունություն է ցուցաբերում հայկական կարմիր բանակի 3-րդ հրաձիգ գունդը, որի հրամանատարն էր Ա. Բաղդասարյանը, իսկ կոմիսարը՝ Հ. Աթոյանը։ Ռազմաճակատի հրամանատարության 1921 թվականի մարտի 10-ի հրամանով այդ մարտերում առավել աչքի ընկածներից 34 հոգի պարգևատրվում են Հայկական ՍՍՀ Կարմիր դրոշի շքանշանով։ Պարգևատրվածների թվում էին գումարտակի հրամանատար Արշավիր Տերեզանովը, վաշտի հրամանատարներ Արտյոմ Մանուչարյանը, Ջալո Էդիգարյանը, Վիրաբ Բադալյանը և ուրիշներ։

Դարալագյազում կենտրոնացած դաշնակցական խմբերը առաջադրանք ստանալով՝ հարվածել Ղամարլու-Վեդիում գտնվող կարմիր բանակի զորքերի թիկունքին և միանալ Երևանում գտնվող հակահեղափոխական ուժերին, մարտի 1-ին ուժեղ հարձակում են սկսում դեպի Վեդի։ Սակայն առաջին իսկ հարձակման ժամանակ նրանք ետ են շպրտվում Սովետական Նախիջևանի և Վեդիի շրջանի բանվորներից ու գյուղացիներից կազմված պարտիզանական ջոկատի՝ «Կարմիր տաբորի» չախջախիչ հարվածների տակ։ «Կարմիր տաբորը», որը գործում էր Աբաս-կուլի Շադլինսկու ղեկավարությամբ և բաղկացած էր 400 մարտիկներից, ետ շպրտելով բանդաներին ու գրավելով կարևոր ստրատեգիական կետեր, մինչև վերջ հերոսաբար պաշտպանում է Ղամարլու-Վեդիի շրջանում ամրացած սովետական զորամասերի թիկունքը։ Դրանով նա դաշնակցականների Դարալագյազի խմբերին զրկեց Երևանում գտնվող «Հայրենիքի փրկության կոմիտեի» ուժերին միանալու հնարավորությունից։

Սովետական իշխանության համար մղվող «Կարմիր տաբորի» հերոսական գործողությունները դաշնակցական զինված ուժերի դեմ հայ և ադրբեջանական աշխատավորների միասնական պայքարի վառ արտահայտություններից է։

Մարտի 8-ին Երևանի կողմից սեղմելով կարմիր բանակի զորամասերի ձախ թևը, հանկարծակի ուժեղ հարձակում է սկսում Քյուրուկ-Վեդի գյուղի և Խոր-Վիրապի վրա։ Սակայն, ենթարկվելով հայկական առաջին բրիգադի վճռական հակագրոհներին, հակառակորդը մեծ կորուստներ կրելով, խուճապահար նահանջում է։ Այդ մարտում բրիգադի կոմիսար Լ. Մխչյանը անձամբ գլխավորում է զրահապատ գնացքի դեսանտային ջոկատը։ Մարտի ժամանակ նա ծանր վիրավորվում է և 1921 թվականի ապրիլի 16-ին մահանում Երևանում։

Ղամարլուի ռազմաճակատում հեղափոխական զորամասերի համար ստեղծված դժվարին օրերին մարտիկների և տեղական բնակչության մեջ քաղաքական ու կազմակերպական խոշոր աշխատանք են կազմակերպում Հայաստանի կոմկուսի Կենտկոմը, Հայստանի Հեղկոմը և բանակի քաղաքական ապարա-

տը։ Այդ մասին, մարտերի մասնակից և այն ժամանակ Սովետական Հայաստանի արտակարգ հանձնաժողովի նախագահ Շ. Ամիրխանյանը գրել է. «...Հայաստանի կոմկուսի Կենտկոմի և Հեղկոմի ղեկավարությամբ, զորամասերում կարգապահությունն ամրապնդելու, անձնակազմի տրամադրությունը բարձրացնելու, նրանց մեջ ներքին վստահությունն ավելի խորացնելու համար քաղաքական ու կազմակերպչական մեծ աշխատանք ծավալվեց, որի ընթացքում պարզաբանվեց, որ դաշնակցականների հաջողությունը ժամանակավոր բնույթ



Շ. Ամիրխանյան



Գ. Աբարբկյան

է կրում, որ հյուսիսից մերոնք անպայման օգնության կգան, և հաղթանակը մերը կլինի։ Կոմունիստները, կոմերիտականները և բոլոր տղամարդիկ, ովքեր լինդունակ էին զենք կրելու, մտան կոմունիստական ջոկատի մեջ, որը իր հրամանատարի անունով միաժամանակ կոչվում էր Յանիշևակու ջոկատ։ Ռազմաճակատի առաջին գծում թշնամու դեմ, որպես այդ ջոկատի մարտիկներ, զենքը ձեռքին հերոսաբար կռվում էին նշանավոր բանաստեղծ Ե. Չարենցը, հայտնի Հարտպարապետ Կ. Հալաբյանը, արտակարգ հանձնաժողովի նախագահի տեղակալ Մելիք-Օսիպովը և շատ այլ պատասխանատու աշխատողներ»[1]։

Այդ ռազմաճակատում ակտիվ աշխատանք էին կատարում Սովետական Հայաստանի կուսակցական և պետական ղեկավար գործիչներ Ս. Կասյանը, Ա. Նուբարյանյանը, Դ. Տեր-Սիմոնյանը, Շ. Ամիրխանյանը, Աշ. Հովհաննիսյանը, Հ. Յաղուբյանը, Մելիք-Օսիպովը, Գ. Հանեսօղլյանը և ուրիշներ։

Հարավի բանակի հաղթանակն ապահովելու համար անձնուրաց աշխատանք էին տանում կին կոմունիստներ Աղվանի Բուդումյանը, Վերգուշ Մխիթարյանը, Վասվասա Քեչեգեղյանը, Թեմզա Զաքարյանը, Թամարա Հովհաննիսյանը, Սիրուշ Հակոբյանը (Դորա), Մարո Թումանյանը, Սուսաննա Իշխանյանը և ուրիշներ։

1 «Հին բոլշևիկների հիշողություններ», գիրք առաջին, էջ 442։

Մարտի 9-ին Ղամարլուի ռազմաճակատում գտնվող կարմիր բանակի զորամասերը վերականգնում են ռադիոկապը Թիֆլիսի և Բաքվի հետ, որը փետրվարյան ավանտյուրայի սկզբից ընդհատվել էր։ Ռադիոն հաղորդում է, որ XI բանակի զորամասերը սկսել են հարձակումը դեպի Երևան Ելենովկա-Ախտա և Չամամլու-Ապարան ուղղություններով։ Այդ լուրը մեծ ոգևորություն է առաջացնում Ղամարլու-Վեդիի հատվածում գործող սովետական զորքերի և պարտիզանների մեջ։ Ջնջված ռազմամթերքի, պարենի, հագուստեղենի, կոշկեղենի սուր պակասությանը, հոգնածությանը և սառնամանիքներին, նրանք հառանդուն նախապատրաստություն են տեսնում Երևանի վրա վերջնական գրոհելու համար։



Գ. Օրջոնիկիձե

«Ներկա մոմենտում Հայաստանում դրությունն այսպես է,— ասել է Գ. Կ. Օրջոնիկիձեն 1921 թվականի մարտի 9-ին.— Երևանը շրջապատված է կարմիր զորքերի օղակով։ Զորքերի առաջին խումբը գտնվում է Երևանից 18 վերստ հեռավորության վրա՝ Ղամարլուի շրջանում, ունի երկու զրահապատ և բավական քանակությամբ գնդացիրներ։ Երկրորդ խումբը գտնվում է Ելենովկայի-Ներքին Ախտայի շրջանում։ Երրորդ խումբը՝ Համամլու-Ղարաքիլիսայի շրջանում։ Օղակը քանի գնում նեղանում է, և մոտ օրերս Վրացյանի երևանյան ավանտյուրան, առանց որևէ կասկածի, լիկվիդացիայի կենթարկվի։ Այդ անմիտ, հանցագործ ավանտյուրան դարձյալ մեկ անգամ ևս դժբախտ, տանջված հայ ժողովրդին կենթարկեց պատերազմի ծանր փորձություններին»[1]։

Ելենովկայում գտնվող կարմիր բանակի զորամասերը և պարտիզանական ջոկատները մարտի 12-ին սկսում են հարձակումը Ալեքսանդրովկա-Նոր Բայազետ ուղղությամբ։ Ճանապարհին մի քանի տեղ ուժեղ մարտի բռնվելով և թշնամու դիմադրությունը հաղթահարելով, հարձակվող զորամասերը նույն օրը երեկոյան ազատագրում են Նոր Բայազետը։ Դաշնակցականները խուճապահար փախչում են դեպի Երանոս, որտեղ վերադասավորելով իրենց ուժերը և ստանալով նոր համալրում, մարտի 15-ի լույս 16-ի գիշերը կրկին հարձակվում են Նոր Բայազետի վրա։ Քաղաքի շրջակայքում և փողոցներում մի քանի ժամ ան-

1 Գ. Կ. Օրջոնիկիձե, Ընտիր հոդվածներ և ճառեր, էջ 49։

ընդհատ տեղի են ունենում ուժեղ կռիվներ։ Հակառակորդը մեծ կորուստներ կրելով, մարտի 16-ին դարձյալ դուրս է շպրտվում Նոր Բայազետից և նահանջում դեպի Ղարանլուղ (Մարտունի)։

Նոր Բայազետի համար մղված մարտերում վճռական դեր կատարեց Բաքվի բանվորներից, Շամշադինի, Իշևանի, Նոր Բայազետի և Դիլիջանի աշխատավորներից կազմված մոտ 500 մարտիկներից բաղկացած ջոկատը, որի հիմնական մասը կոմունիստներ էին[1]։



Ս. Կիրով

Կարմիր բանակի զորամասերին և պարտիզանական ջոկատներին մեծ օգնություն էին ցույց տալիս տեղական բնակիչները։

Վեդի-Ղամարլուից առաջ շարժվող կարմիր բանակի ուժերը մարտի 17-ին հասել և ամրացել էին Վ. Աղբաշ-Ուլուխանլու հատվածում։ Այդ օրը Ուլուխանլու կայարանի մոտ տեղի ունեցած մարտում հակառակորդի մի ամբողջ գումարտակ անցավ կարմիր բանակի կողմը։

Ելենովկա-Երևան ուղղությամբ սկսելով հարձակումը, կարմիր բանակի զորամասերը և պարտիզանական ջոկատները կոտրելով հակառակորդի դիմադրությունը, հաջողությամբ առաջ էին շարժվում։ Մարտի 16-ին նրանք ազատագրեցին Ներքին ու Վերին Ախտաները, Քաղսին և շարունակում էին հետապնդել թշնամուն։

Համամլու-Ապարան-Երևան ուղղությամբ հարձակվող զորամասերը նույնպես ազատագրել էին մի շարք բնակավայրեր։

Հակառակորդի շարքերում խուճապը և հուսալքությունը մեծ չափերի էին հասել։ 1921 թվականի մարտի 18-ին Նժդեհին ուղղած նամակում Ս. Վրացյանը գրել է. «Ես արդեն գրել եմ քեզ մեր կացության մասին։ Մի ամիս է կրովում ենք։ Վերջին օրերը նկատվում է ժողովրդի մեջ թուլություն և մարտիկների մեջ խուճապային տրամադրության նշաններ։ Դրությունը կարելի է փրկել միայն Բայազետից ու Դարալագյազից գործող ուժերով... Մտել ենք բանակցության մեջ օգնության մասին նաև տաճիկ հրամանատարության հետ»[2]։

Նպատակ ունենալով հեղքել կարմիր բանակի զորամասերի դիրքերը, միանալ իրենց երևանյան ուժերին և օգնել նրանց պահելու գրաված շրջանները, Դա-

1 Տե՛ս «Ղամարլուից Զանգեզուր» (հիշողությունների ժողովածու), Երևան, 1931, էջ 140—143։
2 «Կոմունիստ (Երևան), 13 մայիսի 1921 թ.։

բալագյազի, և Նոր Բայազետի կողմից Նժդեհի բանդաները մի շարք նոր գրոհներ են սկսում։ Սակայն այդ գրոհները ձախողվում են։ Երևանում գտնվող դաշնակցականների վիճակը գնալով ծանրանում էր։

Հաշվի առնելով, որ Երևանի ազատագրումն արդեն կանխորոշված էր և նրա համար մղվելիք հետագա կռիվներում կարող էին անտեղի զոհեր լինել, XI բանակի ռազմական խորհրդի անդամ Գ. Օրջոնիկիձեն դաշնակցականներին առաջարկում է անձնատուր լինել։ Մարտի 20-ին «Հայբենիքի փրկության կոմիտեի» նախագահի անունով Գ. Օրջոնիկիձեն ուղարկում է հետևյալ հեռագիրը. «Ինձ ներկայացան մի խումբ հայ ընկերներ և առաջարկեցին իրենց նախաձեռնությամբ դիմել ձեզ և առաջարկել, որ վերջ տրվի անիմաստ, աննպատակ և ժողովրդի համար կործանիչ պատերազմին։ Մենշևիկյան կառավարության և խորհրդային իշխանության միջև կռիվը վերջացավ բանվորա-գյուղացիական իշխանության լրիվ հաղթանակով, ամբողջ Վրաստանում խորհուրդների ճանաչումով...

...Ամենքի համար պարզ է և ամենափոքր կասկածանքի անգամ ենթակա չի կարող լինել, որ հասել է բանվորա-գյուղացիական իշխանության տիրապետության ժամը ամբողջ Անդրկովկասում։ Ահա թե ինչու ես ընդունում եմ հայ ընկերների դիմումը և առաջարկում եմ ձեզ՝ անհապաղ դադարեցնել անհուսալի կռիվը՝ հիմք ընդունելով վերջնականապես ղենքը վայր դնել...»[1]։

Գ. Կ. Օրջոնիկիձեի հանձնարարությամբ այդ օրերին Թիֆլիսից Երևան է մեկնում բանաստեղծ Հովհաննես Թումանյանը՝ նուիրակի առաջարկ անելու։ Սակայն դաշնակցականներն այդ բոլոր առաջարկները մերժում են, իսկ Հովհ. Թումանյանին ենթարկում տնային բանտարկության։

Մարտի 25-ին կարմիր բանակի զորամասերը և պարտիզանական ջոկատները գրոհ սկսեցին Երևանի վրա։ Երևանում գտնվող իրենց ուժերին օժանդակելու նպատակով դաշնակցականները Դարալագյազի կողմից հակահարձակման անցան Վեդի-Ղամարլու ուղղությամբ։

Մարտի երկրորդ տասնօրյակում Վեդիի և Ղամարլուի շրջաններում գործող կարմիր բանակի զորամասերի համար սկսվում են ամենածանր օրերը։ Մարտի 20-ին Հայաստանի Հեղկոմը և կարմիր բանակի հրամանատարությունը Ղամարլուից հետևյալ հեռագիրն է հաղորդում Թիֆլիս՝ XI բանակի ռազմա-հեղափոխական խորհրդին. «Պարենամթերքը սպառվում է։ Դրամը շատ քիչ է։ Հարկավոր է ամենաշտապ կերպով, մեյլն ինքնաթիռով ուղարկել քսան փութ ոսկի՝ պարենամթերքի հետ փոխանակելու համար... Այս պահանջի կատարումից է կախված մեր գոյությունը»։

XI բանակի ռազմա-հեղափոխական խորհուրդը, անձամբ Գ. Օրջոնիկիձեն ձեռք են առնում կարուկ միջոցառումներ և կազմակերպում այդ օգնությունը։

1921 թվականի մարտի 25-ին, դժվարին պայմաններում, սովետական ինքնաթիռը թռչում է Թիֆլիսից դեպի Արարատյան դաշտ։ Հայաստանի լեռների ու կիրճերի վրայով, մառախուղը ճեղքելով, ինքնաթիռը վայրէջք է կատարում Արարատյան դաշտում — Արաքսի ափին և փայլուն կերպով կատարում մար-

1 «Կարմիր աստղ», 23 մարտի 1921 թ.

տական առաջադրանքը։ Սովետական ինքնաթիռը վարում էին քաջարի օդաչուներ Վ. Լ. Մելնիկովը և Բ. Ն. Կուդրինը։

Վեդի-Ղամարլուում մարտնչող զորքերի համար ինքնաթիռը փոխադրում է 47 կիլոգրամ (5000 հատ) ոսկի[1], որով կենսամթերքներ են ձեռք բերվում։ Սովետական Ռուսաստանի այդ օգնությունն էլ ավելի է ոգևորում մարտիկներին ու հրամանատարներին։



Ա. Միկոյան

Մարտի 25-ից մինչև ապրիլի 2-ը անընդհատ տեղի ունեցող բոլոր մարտերում նրանք ետ են շպրտում հակառակորդի հարձակումները Երևանի և Դարալագյազի կողմից։

Ինչպես մարտերի ընթացքում, նույնպես և մարտերն ավարտելուց հետո, կարմիր բանակի հրամանատարության հրամանով այդ ռազմաճակատում գործող զորամասերի անձնակազմից և պարտիզաններից Հայկական ՍՍՀ Կարմիր դրոշի շքանշանով պարգևատրվում են 126 հոգի և թանկարժեք նվերներով՝ 87 հոգի։ Կարմիր դրոշի շքանշանով պարգևատրվածների թվումն էին հրետանու հրամանատար Նիկոլայ Կլիչը, «Մուսալեռյան» զրահագնացքի նշանառուներ Աղասի Պետրոսյանը, Համբարձում Ավագյանը, 3-րդ գնդի հրամանատար Արմենակ Բաղդասարյանը, 3-րդ գնդի զինկոմ Հակոբ Աթոյանը, վաշտի հրամանատար Լևոն Կարապետյանը, դասակի հրամանատարներ Ստեփան Ստեփանյանը, Ստեփան Գալանովը, Իվան Խարլամովը, քաղղեկ Դմիտրի Բերեժանովը, կարմիրբանակայիններ Աշոտ Սարգսյանը, Եփրեմ Հովհաննիսյանը, Հովհաննես Կարապետյանը, Մնացական Դարբասյանը, Գուրգեն Չախոյանը, Արամ Աբրահամյանը, պարտիզաններ Ալակպեր Սադիխովը, Ջալալ Մամեդովը, Մուխտար Իբրահիմովը և շատ ուրիշներ։

Այդ կռիվների ընթացքում, որպես մարտիկ և հետախույզ, աչքի ընկնող քաջագործություններ է կատարել գեղչկուհի Մարիամ Խաչատրյանը, որը մարտական առաջադրանքներից մեկի կատարման ժամանակ գերվում է թշնամու կողմից և ծանր տանջանքների ենթարկվելով՝ սպանվում։

Ապրիլի 2-ին XI բանակի զորամասերը և պարտիզանական ջոկատները Քանաքեռի և Աշտարակի կողմից մտնում են Երևան։ Թշնամին դուրս է շպրտ-

1 «Заря Востока», 4 օգոստոսի 1923 թ.։

վում Սովետական Հայաստանի մայրաքաղաքից։ Կարմիր հեծելազորը ապրիլի 3-ին ազատագրում է Էջմիածինը։ Ապրիլի 4-ին Երևան են մտնում նաև Վեդի-Ղամարլվում գտնվող հայկական կարմիր բանակի զորամասերը։ Հետապընդելով ջախջախված հակառակորդին, կարմիր բանակի զորամասերը ապրիլի 7-ին ազատագրում են Բաշ-Գյառնին, իսկ մինչև 15-ը՝ Ղարանլուղի, Բասարգեչարի և Դարալագյազի շրջանները։ Երևանի և մյուս շրջանների աշխատավորությունն իր ազատարարին՝ կարմիր բանակին, դիմավորում է ցնծությամբ։ Թողնելով Երևանը, Աշտարակը, Էջմիածինը և Կոտայքը, դաշնակցականները Բաշ-Գյառնիի վրայով խուճապահար փախչում են դեպի Զանգեզուր։

Այսպիսով, կարմիր բանակի զորամասերը և պարտիզանական ջոկատները ջախջախեցին թշնամուն և ազատագրեցին նրա կողմից գրաված վայրերը։

Զեռք բերած այդ պատմական հաղթանակի առթիվ, ապրիլի 3-ին Գ. Աթարբեկյանը, Վ. Ի. Լենինին և Գ. Կ. Օրջոնիկիձեին հեռագրով հայտնում է. «Այսօր



ՀՍՍՀ կարմիր դրոշի շքանշան



ՀՍՍՀ Աշխատանքային կարմիր դրոշի շքանշան

հայ աշխատավոր մասսաների ջանքերով, կարմիր բանակի զորամասերի օգնությամբ, լիկվիդացված է դաշնակցություն կուսակցության նողկալի ավանտյուրան, մի կուսակցություն, որը հենվելով թուրքահպատակ գաղթականների ապազասակարգայնացած մասի, կուլակների ու մատղերիստների վրա, իր մահից առաջ վերջին անգամ փորձեց լակեյական դեր խաղալ Անտանտի առջև, աղետների հորձանուտը նետելով դժբախտ, հոշոտված երկիրը։ Իրենց տիրապետության կարճ ժամանակամիջոցում դաշնակցականները կատարյալ հյուծման և հուսահատության հասցրին երկիրը։

Հայ գյուղացիներն ու բանվորները ջախջախելով մի բուռ ավանտյուրիստների բանդաներին, գրավեցին Սովետական Հայաստանի մայրաքաղաք՝ Երե-

վանը, վերջնականապես կանգնեցնելով աշխատանքի կարմիր դրոշը։ Քաղաքի ամբողջ բնակչությունը հանդիսավոր կերպով դիմավորեց կարմիր զոկատներին»[1]։

Փետրվարյան ավանտյուրայի ջախջախումից և Հայաստանի աշխատավորության ու նրա հերոսական կարմիր բանակի հաջողություններից կատաղած, դաշնակցական բարբարոսները սկսեցին դատաստան տեսնել բանվորների, գյուղացիների և վերջիններիս շահերի իսկական պաշտպաններ կոմունիստների հետ։

Այդ բարբարոսություններից ամենազազրելին Տաթևի և դրան նախորդող դեպքերն են, որ տեղի ունեցան 1921 թվականի ապրիլին։

1921 թվականի մարտի 25-ին, երբ կարմիր բանակը մոտենում է Երևանին, դաշնակցականները Երևանի բանտից առանձնացնում և պահակային ուժեղ հսկողության տակ դեպի Բաշ-Գյառնի-Զանգեզուր են տանում 63 հեղափոխական մարտիկների։

Ապրիլի 3-ին Բաշ-Գյառնիի մոտ դաշնակցականները ձորի ափից ցած են նետում երեք հիվանդների, որոնք սովից ու չարչարանքից ուժասպառ, այլևս չէին կարողանում քայլել։ Ապրիլի 5-ին Արմենկի դաշտում (Վեդիի շրջան) նրանք սվինահար են անում Հայաստանի կոմերիտմիության Կենտկոմի քարտուղար Արմենակ Բուդաղյանին և բանվոր Տ. Թաղիանոսյանին։ Մինչև Քեշիշքենդ հասնելը ճանապարհին նույն ձևով սպանում են վաշտի հրամանատար Ռ. Պողոսյանին և զինկոմ Ն. Օլթեցյանին։

Քեշիշքենդում հեղափոխական մարտիկների այս խմբին միացվում են 40 բանտարկյալներ՝ այդ շրջանից գերի վերցված հեղկոմների նախագահները, անդամները և սովետական մյուս ակտիվ գործիչները։ Ապրիլի 13-ին բանտարկյալներին հասցնում են Գնդևազ գյուղը։ Դաշնակցականները այստեղ ևս ժայռից ցած են նետում 12 հոգու։ Ապրիլի 14-ին Բազարչայում բանտարկյալների խումբը ավելանում է 100 գերի կարմիրբանակայիններով։ Դրանք այն 400 գերիների մնացորդներն էին, որոնց դաշնակցական հրոսակախմբերը վերցրել էին փետրվարի 13-ին՝ Դարալագյազի վրա կատարած հանկարծակի հարձակման ժամանակ։ 300 հոգու նրանք ոչնչացրել էին խոշտանգելով և սովի մատնելով։ Բանտարկյալներին տանելով դեպի Տաթև, Անգեղակոթում դաշնակցականները սպանում են 16 հոգու, Լծին գյուղում՝ 17 հոգու և այլն։ Այսպիսով 203 հեղափոխական մարտիկներից ճանապարհին ոչնչացվում են 91-ը, երկու հոգու հաջողվում է փախչել, իսկ մնացած 110 բանտարկյալները հասցվում են Տաթև։ Այստեղ Նժդեհի կարգադրությամբ 104 հեղափոխական մարտիկներ ենթարկվելով անասելի խոշտանգումների ու տանջանքների, ցած են նետվում Տաթևի ժայռից։

Ահա այդպես էին հաշվեհարդար տեսնում դաշնակցականները Հայաստանի բանվորների ու գյուղացիների, նրանց լավագույն զավակների հետ։

---

1 «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ revolution և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում», էջ 508—509։

3. ՉԱՆԳԵԶՈՒՐԻ ԱԶԱՏԱԳՐՈՒՄԸ

Դաշնակցականների հակահեղափոխական խռովության ջախջախումից հետո, 1921 թվականի ապրիլ-հունիսին Սովետական Հայաստանը դադարի որոշ շրջան ապրեց։ Չնայած հանրապետության ներքին ու արտաքին դրությունը շարունակում էր մնալ լարված, բայց այդ դադարի ժամանակամիջոցում Հայաստանի կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը խաղաղ շինարարական աշխատանքի բնագավառում մի շարք ձեռնարկումներ կատարեցին։

Ապրիլի 3-ին Հայաստանի Հեղկոմը ազդարարեց դաշնակցականների փետրվարյան խռովության ճնշման մասին։ Այդ առթիվ հրապարակված հրամանում ասված էր. «Տապալելով Երևանի հակահեղափոխական կառավարությունը, այսպես կոչված «Հայրենիքի փրկության կոմիտեն» և վերականգնելով Հայաստանի բանվորա-գյուղացիական խորհրդային իշխանությունը հանրապետության լիակատար սահմաններում՝ ՀՍԽՀ ռազմա-հեղափոխական կոմիտեն հրամայում է.

1. ՀՍԽ հանրապետության հրատարակած բոլոր դեկրետներն ու հրամանները պահպանում են իրենց ուժը հանրապետության ամբողջ տերիտորիայի վրա։

2. Տապալված հակահեղափոխական կառավարության բոլոր հրամաններն ու կարգադրությունները ոչ մի նշանակություն չեն ունենալ»[1]։

Հայաստանի Հեղկոմի այդ հրամանի հիման վրա բոլոր ժողովրդական կոմիսարիատներն ու սովետական մյուս կազմակերպությունները վերսկսում են իրենց աշխատանքները։ Պարենավորման և հողագործության ժողովրդական կոմիսարիատները եռանդուն աշխատանք են ծավալում 1921 թվականի գարնանացանի սերմացուի հայթայթման և բաշխման ուղղությամբ։ Աշխատանք է տարվում քանդված ճանապարհներն ու հաղորդակցության մյուս միջոցները կարգի բերելու համար։

Աշխատանքներ են տարվում նաև սովետական իշխանության տեղական օրգանների՝ գյուղական, շրջանային և գավառային հեղկոմների վերականգնման, նրանց գործունեության աշխուժացման ուղղությամբ։

Անողոք լինելով խռովության կազմակերպիչների նկատմամբ, Հայաստանի սովետական կառավարությունը միաժամանակ ներողամիտ վերաբերմունք է ցուցաբերում բոլոր նրանց հանդեպ, ովքեր ենթարկվելով դաշնակցականների պրովոկացիային, անցել էին նրանց կողմը։ Հայաստանի Հեղկոմի ապրիլի 10-ի «Ներման մասին» դեկրետում ասված է. «Խորհրդային Հայաստանի ռազմա-հեղափոխական կոմիտեն այս շինարար աշխատանքին լծվելու հրավիրում է ոչ միայն նրանց, ովքեր կռվել են հեղափոխության հաղթանակի համար, այլև նրանց, որոնց նետել էին նրա դեմ մղվող ակտիվ կռվի մեջ։ ...Բանվորա-գյուղացիական կառավարությունը մեծահոգի է դեպի այդ բոլոր մոլորյալները, բոլոր նրանց, որոնք ենթարկվել են հանցավոր ագիտացիայի, վախի և փոքրո-

1 «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ revolution և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում», էջ 509։

գության։ Նա հանդիսավորապես մոռացության է տալիս հանցանքը բոլոր նրանց, որոնք Հայաստանի աշխատավորության հավիտենական թշնամիների ոճրագործ միտումների զոհն են եղել, այն թշնամիների, որոնք պետք է կրեն արժանի պատիժ՝ անմեղ ժողովրդի արյան և հայրենի երկրի ավերածության համար։

...Խաղաղ աշխատավորական կյանքի բարեկարգման, դաշնակների ավերած երկրի ժողովրդական տնտեսության վերականգնման և ծաղկող սոցիալիստական հայրենիք ստեղծելու համար անհրաժեշտ է, որ բոլորը նվիրվեն շինարար ստեղծագործ աշխատանքի»[1]։

Սովետական կառավարության այդ դեկրետը լայն արձագանք գտավ ոչ միայն երկրի ներսում, այլև նրանից դուրս։ Հայաստանի բնակչության այն մասը, որ խռովության ճնշման ժամանակ ենթարկվելով դաշնակցականների պրովոկացիային, նրանց հետ փախել էր Իրան, կարճ ժամանակամիջոցում, համարյա ամբողջությամբ, վերադարձավ հայրենիք։ Սովետական Հայաստանի ամբողջ աշխատավոր բնակչությունը, այդ թվում նաև ավանտյուրայի ժամանակ դաշնակցականներին օգնողները կամ տատանվողները, մեծ եռանդով լծվեցին խաղաղ շինարարական աշխատանքներին։

Սովետական կառավարության ձեռք առած վճռական միջոցների շնորհիվ 1921 թվականի ապրիլի 23-ին թուրքական զորքերը դուրս քշվեցին Ալեքսանդրապոլից ու նրա գավառից։

Ալեքսանդրապոլում ու նրա գավառում գտնվելու մոտ կես տարի ժամանակամիջոցում թուրքական զավթիչները հսկայական մարդկային զոհեր ու նյութական վնասներ էին պատճառել հայ ժողովրդին։

Միայն այդ գավառի հայ բնակչությունից մոտ 107 հազար մարդ դարձել էր թուրքական զավթիչների բարբարոսությունների զոհ։ Բացի դրանից, կռիվների ընթացքում, զինվորներից և բնակչությունից վիրավորվել էին 56 հազար մարդ, որոնց մի զգալի մասը նույնպես մահացել էր[2]։

Թուրքական զավթիչների պատճառած նյութական վնասները, միայն Ալեքսանդրապոլում ու նրա գավառում, ոչ լրիվ տվյալներով, կազմում է շուրջ 20 միլիոն ռուբլի ոսկով[3]։

Ալեքսանդրապոլն ու նրա գավառը թուրքական զավթիչներից ազատագրելու շնորհիվ երկաթուղային նորմալ հաղորդակցություն էր հաստատվել Սովետական Վրաստանի, Ադրբեջանի և Ռուսաստանի հետ։ Սովետական Ռուսաստանից ուղարկված պարենային ու դրամական օգնությունը որոշ չափով բարելավել էր հանրապետության տնտեսական վիճակը։

Փետրվարյան ավանտյուրայի ջախջախումից հետո, Սովետական Հայաստանի պետական և կուսակցական հիմնարկների աշխատանքներն ամրապնդելու նպատակով Ռ(բ)Կ Կենտկոմի որոշմամբ Ռուսաստանից ու սովետական մյուս հանրապետություններից Հայաստան աշխատանքի են ուղարկվում մի շարք

---

1 «ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու», պրակ 2, էջմիածին, 1921, էջ 10—11։

2 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 114, ց. 1, գ. 43, թ. 1։

3 Տե՛ս նույն տեղում, թ. 2։

ղեկավար գործիչներ։ Դրանց թվում էին Ալ. Մյասնիկյանը (Ալ. Մարտունի), Ս. Սրապիոնյանը (Լուկաշին), Պ. Մակինցյանը, Ալ. Շահվերդյանը, Ա. Կարինյանը, Ա. Համբարձումյանը, Ար. Երզնկյանը, Ա. Իվանյանը, Ս. Շադունցը, Ս. Կարապետյանը, Հ. Հովհաննիսյանը, Վ. Պողոսյանը, Հ. Պողոսյանը, Հ. Բալյանը, Լ. Վարդապետյանը, Ս. Խանոյանը և ուրիշներ։

Մայիսի սկզբներին գալով Հայաստան, պետական և կուսակցական ականավոր գործիչ Ալ. Մյասնիկյանը նշանակվում է Հայաստանի Հեղկոմի նախագահ։ Մայիսի 21-ին Հայաստանի Հեղկոմը վերակազմվում է Հայկական ՍՍՀ ժողովրդական կոմիսարների սովետի, որի նախագահ և ռազմական գործերի կոմիսար է նշանակվում Ալ. Մյասնիկյանը, արտաքին գործերի ժողկոմ՝ Ա. Մռավյանը, ներքին գործերի ժողկոմ՝ Պ. Մակինցյանը, արդարադատության ժողկոմ՝ Ա. Կարինյանը, ժողտնտխորհի նախագահ՝ Ա. Սրապիոնյանը (Լուկաշին), որը միաժամանակ ՀԿԿ Կենտկոմի քարտուղարն էր, հողագործության ժողկոմ՝ Ար. Երզնկյանը, ֆինանսների ժողկոմ՝ Ս. Խանոյանը, աշխատանքի և սոցիալական ապահովության ժողկոմ՝ Ա. Խաչյանը, լուսավորության ժողկոմ՝ Աշ. Հովհաննիսյանը, առողջապահության ժողկոմ՝ Ս. Համբարձումյանը, փոստհեռագրի ժողկոմ՝ Դ. Տեր-Սիմոնյանը և բանվորա-գյուղացիական տեսչության ժողկոմ՝ Ալ. Շահվերդյանը։

Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտկոմը և ժողովրդական կոմիսարների սովետը հանրապետությունում կազմակերպելով և գլխավորելով խաղաղ շինարարական աշխատանքները, միաժամանակ հոգ էին տանում Զանգեզուրը դաշնակցականներից ազատագրելու մասին։ Քանի դեռ Զանգեզուրը թշնամու ձեռքում էր, իհարկե, Հայաստանում և ամբողջ Անդրկովկասում խաղաղ շինարարական աշխատանքները չէին կարող նորմալ ընթանալ, որովհետև օտարերկրյա իմպերիալիստները և Անդրկովկասի հակահեղափոխական ուժերը՝ սովետական իշխանության դեմ զինված ելույթ սկսելու նպատակով, մեծ հույսեր էին կապում Զանգեզուրում կենտրոնացված դաշնակցական բանդաների հետ և ամեն կերպ օգնում էին նրանց։

Հայաստանի սովետական կառավարությունը աշխատում էր Զանգեզուրը Սովետական Հայաստանին միացնել խաղաղ ճանապարհով։ Այդ նպատակով 1921 թվականի մայիսի կեսերից ՀՍՍՀ ժողովրդական կոմիսարների սովետը հատուկ պատվիրակության միջոցով (Ա. Կարինյան և Վ. Մելնիկով) բանակցությունների մեջ է մտնում Զանգեզուրի այսպես կոչված Լեռնահայաստանի կառավարության հետ։

Մտնելով բանակցությունների մեջ, դաշնակցականները ժամանակ շահելու և Սովետական Հայաստանի վրա նոր հարձակում նախապատրաստելու նպատակով ամեն կերպ ձգձգում էին այն։ Այդ պատճառով էլ բանակցությունները շարունակվեցին մեկ ամիս և փաստորեն մնացին անավարտ։

Երբ արդեն բացահայտ կերպով պարզ դարձավ, որ դաշնակցականները կանխամտածված ձգձգում են բանակցությունները, Հայկական ՍՍՀ ժողկոմսովետը 1921 թվականի հունիսի 13-ին, Զանգեզուրի դաշնակցական իշխանությանն ուղղում է հատուկ հայտարարություն, որով առաջարկում է վերջ տալ դիմադրությանը և ենթարկվել երկրի միակ օրինական իշխանությանը՝ Հայաստանի սովետական կառավարությանը։ «Զանգեզուրի ապստամբությունը

և նրա (Զանգեզուրի — խմբ.) մեկուսացումը,— ասված է հայտարարության մեջ,— խանգարում է մեր հայրենիքի խաղաղ շինարարության գործին և նրա բոլոր հատվածների վերջնական միացմանը»[1]։

Դաշնակցականները չընդունեցին սովետական կառավարության այդ առաջարկը։

Նախապատրաստելով գինված հարձակում Հայաստանի սովետական իշխանության վրա, դաշնակցականներն այս անգամ ևս մեծ հույսեր էին կապել օտարերկրյա իմպերիալիստների և արտասահման փախած Անդրկովկասի հակահեղափոխական ուժերի օգնության հետ։ Իրանի վրայով նրանք ամուր կապեր էին պահպանում այդ ուժերի հետ։ Դաշնակցականները սերտ հարաբերությունների մեջ էին նաև Իրանում գտնվող մուսավաթականների և հակասովետական այլ տարրերի հետ։

Զանգեզուրում պատսպարված դաշնակցականները առանձնապես ոգևորվել էին նրանով, որ 1921 թվականի հունիսի սկզբներին, Անտանտի իմպերիալիստների անմիջական ղեկավարությամբ Փարիզում կայացել էր Անդրկովկասից փախած նախկին բուրժուական կառավարությունների ղեկավարների խորհրդակցություն և նրանց միջև կնքվել էր այսպես կոչված ռազմական դաշինք՝ Անդրկովկասի վրա հարձակվելու և իրենց իշխանությունը վերականգնելու մասին։

Դաշնակցականները Զանգեզուրում ևս չէին վայելում ժողովրդի համակրանքն ու պաշտպանությունը, որի հետևանքով նրանց դրությունը գնալով ծանրանում էր։ Այդ ակամայից խոստովանում են նույնիսկ իրենք՝ դաշնակցական ղեկավարները։ «Անխուսափելի պարտությունը կատարված փաստ էր արդեն»,— գրել է Հ. Քաջազնունին։— Այն, ինչ որ տեղի ունեցավ հետագա երկուսերեք ամիսների ընթացքում՝ (փետրվարյան ավանտյուրայի չախչախումից հետո — խմբ.) Դարալագյազի ու Զանգեզուրի մեջ՝ պայքար չէր, այլ հոգեվարք։

Երևանի անկումից հետո, Լեռնահայաստանի խորհրդայնացումը օրերի խնդիր էր միայն և մեր ներկայությունը թերևս արագացրեց ...իրերի բնական ընթացքը։

Մենք կարծում էինք, թե անցնելով Լեռնահայաստան՝ կուժեղացնենք տեղացիներին, մի բան կավելացնենք նրանց դիմադրական կարողության վրա։ Հաշվի չէինք առել, որ պարտված, կազմալուծված և նահանջի ճամփա բռնած խմբերը և մանավանդ սարսափահար ամբոխը կարող են առաջ բերել միայն լքում ու հուսահատություն։

Տեղացիները խեթ աչքերով նայեցին մեզ վրա, անհյուրընկալ եղան. ավելի գոհ կլինեին, եթե ամենևին եկած չլինեինք, մանավանդ որ ուտում էինք իրենց վերջին պատառ հացը»[2]։

Ահա այդպիսին էր դաշնակցականների վիճակը Զանգեզուրում։ Նման դրությունից դուրս գալու ելքը նրանք դարձյալ փնտրում էին գինված ելույթի մեջ։

---

1 «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում», էջ 530։

2 Հավ. Քաջազնունի, Հ. Հ. դաշնակցությունն անելիք չունի այլևս, Թիֆլիս, 1924, էջ 52—53։

Հունիսի 15-ին, երբ դեռ շարունակվում էին խաղաղ բանակցությունները երկու կողմերի ներկայացուցիչների միջև, դաշնակցական զինված խմբերը հանկարծակի հարձակում են գործում Դարալագյազի վրա։ Այսպիսով, դաշնակցականները նորից քաղաքացիական պատերազմ են բորբոքում, կրկին դառնալով մարդկային մեծ զոհերի և նյութական խոշոր վնասների ու ավերումների պատճառ։

Դաշնակցականների հարձակման հետևանքով կուրմիր բանակի զորամասերը ետ են քաշվում Դարալագյազում գրաված իրենց դիրքերից։ Զավթելով Դարալագյազը, դաշնակցականներն անողոք դատաստան են տեսնում տեղի հեղափոխական ուժերի հետ, թալանում աշխատավոր գյուղացիության ամբողջ ունեցվածքը։ Այդ հարձակումն առաջ է բերում ժողովրդական մասսաների ցասումը։ Սովետական Հայաստանի մայրաքաղաքում, շրջաններում ու գյուղերում տեղի են ունենում աշխատավորների բազմամարդ միտինգներ։ Ամենուրեք աշխատավորները միահամուռ կերպով որոշում են զենքը ձեռքին պայքարի դուրս գալ Զանգեզուրում բուն դրած դաշնակցական խմբերի դեմ, որոնք կեղեքում էին տեղի աշխատավորությանը և խանգարում Սովետական Հայաստանի բանվորների ու գյուղացիների խաղաղ շինարարական աշխատանքը։

Հունիսի 18-ին հրապարակվում է Հայաստանի աշխատավորությանն ուղղված ՀՍՍՀ ԺողկոմսովԵտի կոչը. «Կռիվը սկսվեց։ Մենք մի րոպե անգամ չենք կասկածում,— ասված էր կոչում,— թե ով պիտի լինի հաղթանակողը այս կըռվում։ Խորհրդային իշխանությունը, որ այսօր հաստատորեն ամրապնդվել է համայն Ռուսաստանում, Ասիայի մեծ մասում և ամբողջ Կովկասում, կխորտակի նույնպես Զանգեզուրի հակահեղափոխական որջը։ Այս կռվի ծանրության ամբողջ մեղքը ընկնում է Զանգեզուրում ապաստանած խմբապետների ու «փըրկիչների» վրա։ Աշխատավորության անեծքը թող լիովին ընկնի նրանց արդեն իսկ պատրաստի դամբարանի վրա»[1]։

Նույն օրը Երևանում կայանում է աշխատավորների և կարմիրբանակայինների բազմամարդ միտինգ, որը միահամուռ հավանություն տալով ԺողկոմսովԵտի կոչին, որոշում է գործադրել բոլոր միջոցները՝ կարմիր բանակին օգնելու և Զանգեզուրում դաշնակցական բանդաների վերջնական ջախջախումը արագացնելու համար։

Էջմիածնի գավառի վեցերորդ գավառամասի (Զանգիբասարի) հայ և ադրբեջանական գյուղացիների միացյալ միտինգի բանաձևում ասված է. «Զանգիբասարի շրջանի հայ և ադրբեջանական աշխատավոր անկուսակցական գյուղացիության առաջին համագումարը որոշեց յուր բուռն ու ցասկոտ զայրույթն արտահայտել Զանգեզուր ճողոպրած դաշնակցական ավանտյուրիստներին։ ...Մենք պատրաստ ենք ամեն զոհողություն անել և հարկ եղած աջակցությունը ցույց տալ կոմունիստական կուսակցությանը և խորհրդային իշխանությանը՝ վերջնականապես լիկվիդացիայի ենթարկելու ավազակների վերջին որջը»[2]։

Նույնպիսի որոշումներ են ընդունում նաև մյուս գավառների և շրջանների աշխատավորները։

---

1 «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում», էջ 535։

2 ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿՒ, ֆ. 200, ց. 1, գ. 10, թ. 27։

1921 թվականի գարնանը Անդրկովկասում զգալի աշխատանքներ էին կատարվել սովետական հանրապետությունների պաշտպանունակությունը ամրապնդելու ուղղությամբ։ Մայիսին XI բանակը վերակազմվել էր կովկասյան հատուկ բանակի, որի կազմի մեջ էին մտել Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի ազգային բոլոր զորամասերը։ Բանակի ռազմա-հեղափոխական խորհրդի կազմի մեջ էր մտնում նաև Սովետական Հայաստանի Ժողկոմսովետի նախագահ և ռազմական գործերի ժողովրդական կոմիսար Ալ. Մյասնիկյանը։

Երբ գաշնակցականները սկսեցին հարձակումը Դարալագյազի վրա, թշնամու դեմ մարտի բռնվեցին կովկասյան հատուկ բանակի Հայաստանում գտնվող զորամասերը։ Ստանալով Սովետական Հայաստանի բանվորների ու գյուղացիների ամեն տեսակի օգնությունը, նրանք գրոհը սկսեցին հունիսի 20-ին։

Կարմիր բանակի զորամասերի երևանյան խմբավորման գրոհը դեպի Զանգեզուր ծավալվում է երեք ուղղություններով. Վեդիից դեպի Քեշիշքենդ, Նախիջևանից՝ Անգեղակոթ (Սիսիան) և Օրդուբադից՝ Մեղրի։ Բացի դրանից, Նոր Բայազետի կողմից հարձակում է սկսվում նաև Սելիմի լեռնանցքի վրա, որը վերջին հարձակման ժամանակ գրավել էին դաշնակցականները։

Գրոհի հենց առաջին օրերին երևանյան խմբավորումը ձեռք է բերում մեծ հաջողություններ։ Վեդիի կողմից հարձակվող զորքերը հունիսի 22—23-ին տեղի ունեցած ուժեղ մարտերից հետո դաշնակցականներին ետ են շպրտում և աղատագրում Դարալագյազի գավառի մի շարք գյուղեր ու հասնում մինչև Բաշգյուղ-Քեշիշքենդ-Մալիշկա-Ենգիջա։ Նոր Բայազետի կողմից հարձակվող զորամասերը հունիսի 23-ին գրավում են Սելիմի լեռնանցքը։

Կարմիր բանակի այդ առաջին հուժկու հարվածների շնորհիվ դաշնակցականների զորքերը սաստիկ բարոյալքվում են, սկսվում է նրանց արագ քայքայումը։ Այդ գործում խոշոր դեր է խաղում դաշնակցականների թիկունքում կազմակերպված կոմունիստական ագիտացիան։

Դաշնակցական բանակի քայքայման գործում կոմունիստական ագիտացիայի մեծ դերը խոստովանում են նաև իրենք՝ դաշնակցականները։ Նժդեհի օգնական Կուռոն, որը ղեկավարում էր Դարալագյազի ռազմական գործողությունները, հունիսի 22-ին, երբ դեռ նոր էր ծավալվում կարմիր բանակի հարձակումը, գրել է Նժդեհին, որ Քեշիշքենդից ետ քաշվելու ժամանակ դաշնակցական զինվորների մի զգալի մասը անցել է կարմիր բանակի կողմը[1]։ Նույն հարցի մասին Նժդեհը գրել է, որ այդ օրերին զորքերի մեջ «ծայր է տալիս մասսայական դասալքությունը։ Առաջին հերթին զանգվածորեն փախչում է Ղոտայքի վաշտը։ Երկու օր անց, մի նոր կիսավաշտ, հետո՝ Նոր Բայազետի գումարտակը»[2]։

Հարձակման առաջին երկու-երեք օրում կարմիր բանակի զորամասերը գերի են վերցնում 2000-ից ավելի զինվորներ, մի քանի մարտկոց, մեծ քանակությամբ զենք և ռազմամթերք։ Գերի ընկած զինվորների մեծ մասը մտնում են կարմիր բանակի շարքերը և զենքն ուղղում թշնամու դեմ։

---

1 Տե՛ս «Հայրենիք», 1925, № 11 (25), էջ 91։

2 Նույն տեղում, 1924, № 3, էջ 134։

Շարունակելով հաղթական առաջխաղացումը, հունիսի 26-ին կարմիր բանակի զորամասերը ազատագրում են ամբողջ Դարալագյազը։ Նախիջևանի կողմից հարձակվող զորամասերը հունիսի 28-ին գրավում են Բիչանակի լեռնանցքը և հասնում մինչև Մազրա, Շաղաթ և Անգեղակոթ գյուղերը։

Հունիսի 30-ին դաշնակցական բանդաները արդեն դուրս էին շպրտված Սիսիանի ամբողջ շրջանից։ Հուլիսի 2-ին Շուշիից դեպի Զանգեզուր (Գորիս) իր գրոհն է սկսում նաև կարմիր բանակի Ղարաբաղ-Զանգեզուրյան զորամասը, որին Ղարաբաղի և Զանգեզուրի աշխատավորները ցույց են տալիս ամեն տեսակի օգնություն։ Համառ և հերոսական մարտերից հետո նույն օրը Ղարաբաղ-Զանգեզուրյան առաջապահ զորամասերը մտնում են Գորիս։ Այդ զորամասերի հրամանատարն էր դիվիզիայի պետ Ա. Ի. Տոդորսկին, որը մարտերի հմուտ ղեկավարման համար արժանացավ Սովետական Հայաստանի Կարմիր դրոշի շքանշանին և իրավամբ կոչվեց Զանգեզուրի հերոս։ Նույն օրը արևմտյան կողմից Գորիս են մտնում նաև երևանյան խմբավորման զորամասերը։

Իրենց հերոսական պայքարով կարմիր բանակին օգնում էին Զանգեզուրի աշխատավորները։ Գորիսում կազմակերպված էր կոմունիստական ջոկատ, որը մշտական կապ պահպանելով կարմիր բանակի զորամասերի հետ, նրանց հրամանատարության առաջադրանքներով մարտական ակտիվ գործողություններ էր կատարում թշնամու թիկունքում, մեծ վնասներ պատճառելով նրան։

Նժդեհի ջախջախված բանդաների մնացորդները խուճապահար փախչելով, ուղղություն են վերցնում դեպի Ղափան-Մեղրի։ Հետապնդելով նահանջող հակառակորդին, կարմիր բանակի զորամասերը հուլիսի 7-ին ազատագրում են Ղափանը։ Ուժեղ մարտերից հետո նրանք հուլիսի 13-ին մտնում են Մեղրի։ Հակառակորդի ջախջախված ուժերի մնացորդները դուրս են շպրտվում Հայաստանի սահմաններից։

Զանգեզուրն ազատագրած կարմիր բանակի զորամասերի շտաբի 1921 թվականի հուլիսի 16-ի հաղորդագրության մեջ ասված է. «Ամբողջ Զանգեզուրի վրա ծածանվում է սովետական դրոշը, վերջ է տրված դաշնակցական ավանտյուրային. հակահեղափոխականներից ազատված Զանգեզուրը սկսել է ստեղծագործական աշխատանքը՝ աշխատավորների իշխանությունն ամրապնդելու և դաշնակցականների կողմից քայքայված գյուղատնտեսությունն ու արդյունաբերությունը կարգավորելու համար»[1]։

Ազատագրված Զանգեզուրի աշխատավորներն իրենց ջերմ ողջույնն են ուղարկում Սովետական Հայաստանի կառավարությանը, աշխատավորությանը և հերոսական կարմիր բանակին։

Զանգեզուրն ազատագրած երևանյան զորամասերի հրամանատար Վելիկանովին և վինոլորական կոմիսար Ռատնեկին ուղղված 1921 թվականի հուլիսի 18-ի ողջույնում ՀՍՍՀ ժողկոմսովետի նախագահ և կովկասյան հատուկ բանակի ռազմա-հեղափոխական խորհրդի անդամ Ալ. Մյասնիկյանը գրել է. «Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության ժողովրդական կոմիսարների խորհրդի անունից ողջունում եմ քաջարի կարմիրբանակայիններին, Երևանի զորամասերի հրամանատարներին, որոնք հայկական կարմիր

1 ՀՍՍՀ ՀՀՇԾ ՊԿԱ, ֆ. 114, ց. 2, գ. 89, թ. 33։

բանակի հետ ձեռք-ձեռքի տված՝ այնքան հաջող կերպով արմատախիլ արին Զանգեզուրի հակահեղափոխությունը։ Զորամասի կարմիր զինվորները կարողացան հեռավոր Կովկասի լեռներում ամրացնել ու ծածանել նրանց վստահած պրոլետարական հեղափոխության դրոշը. կոմունիզմի պատմական ոսկե գրքում հաղթության մի էջ էլ ավելացավ, ուր մտցված են Երևանի զորամասի զինվորների փառավոր անունները»[1]։

Սրանով ավարտվեցին քաղաքացիական կռիվները։ Հայաստանի բանվորների և գյուղացիների պայքարը սովետական կարգերի համար պսակվեց պատմական մեծ հաղթանակով։

1921 թվականի քաղաքացիական կռիվներում Սովետական Հայաստանի բանվորներն ու գյուղացիները հաղթանակով դուրս եկան, որովհետև նրանց պայքարը ղեկավարում էր կոմունիստական կուսակցությունը։ Նրանք գիտեին, որ կռվում են արդար գործի, սովետական իշխանության, իրենց հայրենիքի ազատության և անկախության համար։

Քաղաքացիական կռիվներում կարմիր բանակի զորամասերը և պարտիզանական ջոկատները տվեցին բազմաթիվ հերոսներ, որոնք իրենց կյանքը զոհեցին հանուն սովետական իշխանության, հանուն հայ ժողովրդի ազատության և անկախության։ Այդ հերոսների թվում են հայկական կարմիր բանակի առաջին բրիգադի զինվորական կոմիսար Լ. Մխչյանը, հայկական 2-րդ հրաձիգ գնդի հրամանատար Ա. Ֆիշիլևիչը, 2-րդ հրաձիգ գնդի բրիգադի հրամանատար Երմոլենկոն, պարտիզանական ջոկատի հրամանատար Ս. Մակարյանը, Հայաստանի կոմերիտմիության կենտկոմի քարտուղար Ա. Բուդաղյանը, վաշտի հրամանատար Ռ. Պողոսյանը, զինվորական կոմիսար Ն. Օլեինչյանը, շարքային մարտիկներ Ս. Դարբինյանը, Գ. Ջախոյանը, Հ. Խաչատրյանը, Ա. Ղարիբյանը և շատ ուրիշներ։

Այդ պայքարում հայ ժողովուրդը մենակ չէր։ Ռուս մեծ ժողովուրդը հայ ժողովրդին մեկնեց իր եղբայրական օգնության ազատարար ձեռքը։ «Սովետական իշխանության գոյությամբ, իրենց ազատագրմամբ Վրաստանի, Հայաստանի, Ադրբեջանի աշխատավոր մասսաներն ամբողջովին պարտական են Ռուսաստանին,— ասել է Գ. Օրջոնիկիձեն։— Եթե չլիներ Սովետական Ռուսաստանը՝ չէր լինի Սովետական Ադրբեջանը, Սովետական Վրաստանը, Սովետական Հայաստանը և մինչև այսօր էլ նրանք ընկած կլինեին անգլիական իմպերիալիզմի կրնկի տակ։

Միայն Ռուսաստանի բանվորների և գյուղացիների հետ, ռուսաստանյան կարմիր բանակի հետ դաշինք կնքելով, ադրբեջանական բանվորներն ու գյուղացիները, վրացական բանվորներն ու գյուղացիները, հայկական բանվորներն ու գյուղացիները ձեռք բերին իրենց ազատագրումը»[2]։


Թշնամու դեմ մղած պայքարում Հայաստանի բանվորներն ու գյուղացիները էլ ավելի ամուր դաշինքի մեջ մտան Ադրբեջանի, Վրաստանի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների՝ իրենց դարավոր եղբայրների հետ։

---

1 Ալեքսանդր Մյասնիկյան, Ընտիր երկեր, Երևան, 1957, էջ 343։

2 Գ. Կ. Օրջոնիկիձե, Ընտիր հոդվածներ և ճառեր, էջ 111։

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀՈԿՏԵ[illegible]ԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ(1917-1921 թթ.)



բանակի հետ ձեռք-ձեռքի տված՝ այնքան հաջող կերպով արմատախիլ արին Զանգեզուրի հակահեղափոխությունը։ Զորամասի կարմիր զինվորները կարողացան հեռավոր Կովկասի լեռներում ամրացնել ու ծածանել նրանց վստահած պրոլետարական հեղափոխության դրոշը. կոմունիզմի պատմական ոսկե գրքում հաղթության մի էջ էլ ավելացավ, ուր մտցված են Երևանի զորամասի զինվորների փառավոր անունները»[1]։

Սրանով ավարտվեցին քաղաքացիական կռիվները։ Հայաստանի բանվորների և գյուղացիների պայքարը սովետական կարգերի համար պսակվեց պատմական մեծ հաղթանակով։

1921 թվականի քաղաքացիական կռիվներում Սովետական Հայաստանի բանվորներն ու գյուղացիները հաղթանակով դուրս եկան, որովհետև նրանց պայքարը ղեկավարում էր կոմունիստական կուսակցությունը։ Նրանք գիտեին, որ կռվում են արդար գործի, սովետական իշխանության, իրենց հայրենիքի ազատության և անկախության համար։

Քաղաքացիական կռիվներում կարմիր բանակի զորամասերը և պարտիզանական ջոկատները տվեցին բազմաթիվ հերոսներ, որոնք իրենց կյանքը զոհեցին հանուն սովետական իշխանության, հանուն հայ ժողովրդի ազատության և անկախության։ Այդ հերոսների թվում են հայկական կարմիր բանակի առաջին բրիգադի զինվորական կոմիսար Լ. Մխչյանը, հայկական 2-րդ հրաձիգ գնդի հրամանատար Ա. Ֆիշիլևիչը, 2-րդ հրաձիգ գնդի բրիգադի հրամանատար Երմոլենկոն, պարտիզանական ջոկատի հրամանատար Ս. Մակարյանը, Հայաստանի կոմերիտմիության Կենտկոմի քարտուղար Ա. Բուդաղյանը, վաշտի հրամանատար Ռ. Պողոսյանը, զինվորական կոմիսար Ն. Օլեինյանը, շարքային մարտիկներ Ս. Դարբինյանը, Գ. Ջախոյանը, Հ. Խաչատրյանը, Ա. Ղարիբյանը և շատ ուրիշներ։

Այդ պայքարում հայ ժողովուրդը մենակ չէր։ Ռուս մեծ ժողովուրդը հայ ժողովրդին մեկնեց իր եղբայրական օգնության ազատարար ձեռքը։ «Սովետական իշխանության գոյությամբ, իրենց ազատագրմամբ Վրաստանի, Հայաստանի, Ադրբեջանի աշխատավոր մասսաներն ամբողջովին պարտական են Ռուսաստանին,— ասել է Գ. Օրջոնիկիձեն։— Եթե չլիներ Սովետական Ռուսաստանը՝ չէր լինի Սովետական Ադրբեջանը, Սովետական Վրաստանը, Սովետական Հայաստանը և մինչև այսօր էլ նրանք ընկած կլինեին անգլիական իմպերիալիզմի կրնկի տակ։

Միայն Ռուսաստանի բանվորների և գյուղացիների հետ, ռուսաստանյան կարմիր բանակի հետ դաշինք կնքելով, ադրբեջանական բանվորներն ու գյուղացիները, վրացական բանվորներն ու գյուղացիները, հայկական բանվորներն ու գյուղացիները ձեռք բերին իրենց ազատագրումը»[2]։

Թշնամու դեմ մղած պայքարում Հայաստանի բանվորներն ու գյուղացիները էլ ավելի ամուր դաշինքի մեջ մտան Ադրբեջանի, Վրաստանի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների՝ իրենց դարավոր եղբայրների հետ։

---

1 Ալեքսանդր Մյասնիկյան, Ընտիր երկեր, Երևան, 1957, էջ 343։

2 Գ. Կ. Օրջոնիկիձե, Ընտիր հոդվածներ և ճառեր, էջ 111։

Քարտեզի հեղինակ՝ Ա.Ս. Երեմյան

Սանդղակ 1: 2500000

կմ 25 0 25 50 75 100 125 կմ

Պետական սահմաններ 1914 թ.

Ռուսական կայսրության նահանգների, շրջանների և օկրուգների սահմանները

Ռուսական կայսրության նահանգների սահմանները

Թուրքիայի վիլայեթների սահմանները

Ռուսական կայսրության վարչական միավորների կենտրոնները

Գավառի գլխավոր վարչական միավորների կենտրոնները

Գավառի այլ բնակավայրեր

Գետեր և լճեր

Ռելիեֆի ընդհանուր բնույթը

Ռուսական զորքերի ռազմական գործողությունների ուղղությունները

Ռուսական զորքերի հարձակման ուղղությունները


Ռուսական զորքերի նահանջի ուղղությունները

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄԵԾ ՌԵՎՈԼՅՈՒՑԻԱՅԻ ՀԱՂԹԱՆԱ


39° Գրինվիչից արևելք
40°
41°
42°
ՍԱՎ ԾՈՎ
ՔՈՒՐԴԻՍՏԱՆԻ ԱՇԽԱՏԱՎՈՐ ԺՈՂՈՎՐԴԻ ԿՈՄԻՏԵԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՔՈՒՐԴԻՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՔՈՒՐԴԻՍՏԱՆԻ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Զուլրզնք
ԹԱԹՈՒՄԻ ՄԱՐԶ
ԱՐԴԱՀԱՆԻ ՄԱՍ.
ԱՐՏԱՀԱՆԻ ՄԱՍ.
ԿԱՐՍԻ ՄԱՍ.
ԱՐԴՎԻՆԻ ՄԱՍ.
ԱՐՏԱՇԵՆ
ՏՐԱՊԻԶՈՆ
ՀԱՄՇԵՆ
ԱՍԵՐ
ԹՈՐԹՈՒՄ
ԿԱՐԻՆ (ԷՐԶՐՈՒՄ)
ԴԵՐՋԱՆ
ԵՐԶՆԿԱ
ՃՄԻՆ
ԽՆՈՒՍ
ԲԱՂՆՈՑ
ՄԱՆԱԶԿԵՐՏ
ԲԱՍՈՒՆ
ՄՈՒՇ
ԽԱՐԲԵՐԴ
ԱՐՃԿԵ
ԱՐՈՒԱՆԱ-ՄԱԴԵՆ
ԱՐԴՈՒՆԻ
ԱՎԱԿ
ԶԸՆԴՈՒՀ
ՍԻՎԱՆ (ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ)
ԴԻԱՐԲԵՔԻՐ (ՍՄԻԽ)
ՍԱՀԱՐԱՆ
ՍՈՂԵՐՈՒՄ
ԲԱՂԵՇ (ԱԽԼԱԹ)
ՄՈՒՍԱ
ՍԱՍՈՒՆ
ՄԱՐՏԱՆԱՇԱՏ
ՄԱՐԴԻՆ
ՄԱՐԿՈ
ՍԻՐԱՐԴԱՎԱՆ
ՍՈՒՐԲ-ԿԱՐԱՊԵՏ
ՍՈՒՐԲ-ԱՐՏԱՇԱՏ
ՍՈՒՐԲ-ԳԱՐԻ
ՍՈՒՐԲ-ԽԱՉ
ՍՈՒՐԲ-ՍԱՐԳԻՍ
ՍՈՒՐԲ-ՀՈՎՀԱՆՆԵՍ
ՍՈՒՐԲ-ԱՍՏՎԱԾԱԾԻՆ
ՍՈՒՐԲ-ԳԵՈՐԳ
ՍՈՒՐԲ-ՄԱՐԻՆԱ
ՍՈՒՐԲ-ՀԱԿՈԲ

Зак. № 2000 ст.

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ՆՈՐԱՑՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ (1917-1921 թթ.)


Ռուսական կայսրության սահմանները 1914 թ.
Ռուսական զորքերի նահանջի ուղղությունները 1917 թ.
Ռուսական զորքերի նահանջի ուղղությունները 1918 թ.
Ռուսական զորքերի նահանջի ուղղությունները 1919 թ.
Ռուսական զորքերի նահանջի ուղղությունները 1920 թ.
Ռուսական զորքերի նահանջի ուղղությունները 1921 թ.
Ռուսական զորքերի նահանջի ուղղությունները 1917-1921 թթ

Շնորհիվ կոմունիստական կուսակցության և սովետական իշխանության Լիշտ քաղաքականության, Հայաստանի բանվոր դասակարգին հաջողվեց քաղաքացիական կռիվներում ամուր դաշինքի մեջ մտնելով չքավոր գյուղացիության հետ, իր կողմը գրավել միջակ գյուղացիությանը և նրա հետ միասին պայքարել հակահեղափոխության դեմ։

1921 թվականի քաղաքացիական կռիվների հաղթական ավարտի շնորհիվ Սովետական Հայաստանի բանվորներն ու գյուղացիները հնարավորություն ստացան ձեռնամուխ լինելու երկրի քայքայված տնտեսության վերականգնման աշխատանքներին, սոցիալիզմի կառուցման վիթխարի գործին։

ԲԱԺԻՆ Բ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ, ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ 1921-1925

1921 - 1925

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

ԱՆՑՈՒՄ ՆՈՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ։ ԽԱՂԱՂ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԿՈՒԻՎՆԵՐԻՑ ՀԵՏՈ։ ԽԱՂԱՂ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՍԿԻԶԲԸ

Առաջին համաշխարհային պատերազմը քայքայեց ինչպես պատերազմող բոլոր երկրների, նույնպես և ցարական Ռուսաստանի ու նրա գաղութը հանդիսացող Հայաստանի տնտեսությունը։ Այդ պատերազմի հետևանքով հայ ժողովուրդը հսկայական մարդկային ու նյութական կորուստներ կրեց։

Հայաստանի հետամնաց տնտեսությունը ծայրահեղ քայքայման հասավ հատկապես դաշնակցականների կարճատև տիրապետության ժամանակ։ Երկրի ներքին վիճակի և ծայրահեղ տնտեսական քայքայվածության մասին պատկերացում կազմելու համար բավական է նշել, որ արդյունաբերության արտադրանքը 1919 թվականին իջել էր մինչև 1,7 միլիոն ռուբլու[1] (1926—1927 թվականների անփոփոխ գներով), այսինքն 1913 թվականի համեմատությամբ պակասել էր 12 անգամ։

1919 թվականին Հայաստանում աշխատում էր 7 էլեկտրակայան, որոնց արտադրանքը տարեկան կազմում էր 1,7 միլիոն կիլովատժամ[2] (այսինքն՝ երեք անգամ պակաս, քան 1913 թվականին)։ Ամբողջապես քայքայվել ու կանգ էին առել պղնձահանքերն ու պղնձի մշակման ձեռնարկությունները Ալավերդում և Ղափանում։ Համարյա նույն վիճակում էին գինու-կոնյակի արտադրությունը, բամբակի մշակությունը։ Էլ ավելի ծանր հարված հասցրեց երկրի ամբողջ տնտեսությանը 1920 թվականի թուրքական արշավանքը։

Քայքայված վիճակում էին գտնվում նաև երկաթուղային տրանսպորտը և խճուղային ճանապարհները։ Ավերվել էին երկաթուղային գծերը, կամուրջները, շոգեքարշերը, վագոնները։ Թուրքական զավթիչները թալանել և ամբողջովին տակն ու վրա էին արել Ալեքսանդրապոլի դեպոն, որի հետևանքով որոշ ժամանակ Հայաստանը զրկվել էր վնասված շոգեքարշերի ու վագոնների վերանորոգման հնարավորությունից։

---

1 *Տե՛ս* «Социалистическое строительство Армянской ССР», *էջ 23։*

2 *Տե՛ս նույն տեղում, էջ 24։*

Դաշնակցականների տիրապետության ժամանակ երկրի տնտեսության գլխավոր ճյուղը հանդիսացող գյուղատնտեսությունը ևս ծայրահեղ անկում ապրեց։ Յանքատարածությունները 1913 թվականի 345,7 հազար հեկտարից 1919 թվականին նվազել և հասել էին 82,7 հազար հեկտարի[1]։ Քայքայվել էր և հնարավոր չէր օգտագործել ոռոգման սիստեմը։ Խոպան էին մնացել հսկայական տարածություններ։

Եթե հացահատիկային կուլտուրաների ընդհանուր արտադրանքը 1913 թվականին կազմել էր 1779,0 հազար ցենտներ, ապա 1919 թվականին այն իջել էր մինչև 383,7 հազար ցենտների[2], այսինքն հինգ անգամ պակասել էր։ Համապատասխանաբար նվազել էին՝ բամբակի արտադրանքը՝ 135,0 հազար ցենտներից —3,4 հազար ցենտներ, մոտ 40 անգամ պակաս, կարտոֆիլինը՝ 473,8 հազար ցենտներից 53,2 հազար ցենտներ, մոտ 9 անգամ պակաս, բնական խոտինը՝ 2681,3 հազար ցենտներից 317,9 հազար ցենտներ[3], 8,5 անգամ պակաս և այլն։

Հայաստանի գյուղատնտեսության ամբողջ արտադրանքը 1913 թվականի 65,8 միլիոն ռուբլուց (1926—1927 թվականների անփոփոխ գներով) 1919 թվականին նվազել էր մինչև 11,3 միլիոն ռուբլու, այսինքն պակասել էր մոտ 6 անգամ, այդ թվում անասնապահության արտադրանքը 27,0 միլիոն ռուբլուց իջել էր մինչև 4,3 միլիոն ռուբլու[4], այսինքն պակասել էր 6,5 անգամ։

Թալանվել ու ավերվել էին երկրի մթերային բոլոր պաշարները։ Դատարկվել էին պետական բոլոր պահեստները։ Իսկ ֆինանսական տեսակետից տիրում էր աներևակայելի խառնաշփոթություն։ Երկիրը հեղեղված էր ոչնչով չապահովված թղթադրամներով։

Դաշնակցականների տիրապետության ժամանակ ռուբլու կուրսի արագընթաց անկման մասին պատկերացում են տալիս հետևյալ թվերը։ 1919 թվականի աշնանը 10 ռուբլիանոց ռուսական ոսկին դաշնակցականների թղթադրամով արժեր 900 ռուբլի, իսկ 1920 թվականի նոյեմբերին, սովետական կարգերի հաստատման նախօրյակին, այն արդեն հասել էր 200.000 ռուբլու[5]։ Շուկայում ապրանքների գները բարձրանում էին չտեսնված արագությամբ։

Դաշնակցականների փետրվարյան ավանտյուրայի հետևանքով ծավալված քաղաքացիական կռիվներն էլ ավելի ծանրացրին հանրապետության տնտեսական-ֆինանսական դրությունը։

Արարատյան դաշտում, որը նախապատերազմյան ժամանակաշրջանում տալիս էր գյուղատնտեսական արտադրանքի խոշորագույն մասը, տիրում էր համատարած քայքայվածություն։ Լեռնային շրջաններից Ալեքսանդրապոլը և մասամբ Ղարաքիլիսան իրենց գավառներով ամբողջովին ավերված ու թալանված էին թուրքական զավթիչների կողմից։

Ուսումնասիրելով Լոռու գյուղացիության վիճակը, Հայաստանի Հեղկոմի ներկայացուցիչը 1921 թվականի ապրիլի 14-ին Հեղկոմին ուղղած իր զեկու-

---

1 Տե՛ս «Социалистическое строительство Армянской ССР», էջ 64։

2 Տե՛ս նույն տեղում, էջ 70։

3 Տե՛ս նույն տեղում։

4 Տե՛ս նույն տեղում, էջ 47։

5 Տե՛ս «Խորհրդային Հայաստան, 1920—1925 թթ.» (ժողովածու), Երևան, 1926, էջ 161։

ցաղրում նշել է. «Գյուղատնտեսության դրության մասին ես պետք է հաղորդեմ հետևյալը. աշխատավոր գյուղացիության տնտեսական դրությունը շատ ծանր էր։ Անասնապահությունը, որը Լոռում հանդիսանում է բնակչության հիմնական զբաղմունքներից մեկը, գնում է դեպի անկում։ Անասունները ոչնչանում են վերի պակասությունից և էպիդեմիկ հիվանդություններից։ ...Գյուղացիները մնացել են առանց նավթի, աղի և որ գլխավորն է, հնարավորություն չունեն վերականգնելու գյուղատնտեսական գործիքները՝ նյութի պակասության պատճառով։ ...Պետք է նշել, որ առաջիկա ցանքերի կապակցությամբ կա սերմացուի մեծ պահանջ»[1]։

Այդպիսին էր դրությունը նաև Հայաստանի մյուս շրջաններում։

Երկրի տնտեսական ծանր կացությունը խիստ կերպով անդրադարձել էր բնակչության վիճակի վրա։ Հանրապետությունում կար 200 հազար գաղթական[2], որի գերակշռող մասը դեռ նոր էր տեղավորվում և հողով ու աշխատանքով ապահովվում։ Որբանոցներում կար 50 հազար երեխա և պատանի։ Աշխատավոր բնակչությունը գտնվում էր ծայրահեղ աղքատ վիճակում։ Քայքայված արտադրական ձեռնարկությունները դեռ նոր-նոր էին կարգի բերվում և սկսում աշխատել, այն էլ ոչ լրիվ կարողությամբ։ Բավականին ծանր էր բանվորների դրությունը, որոնց մի մասն իր գոյությունը պահպանելու համար սկսել էր զբաղվել գյուղատնտեսությամբ։ Սակայն այստեղ ևս նրանք ապահովություն չէին գտնում, որովհետև գրեթե աղքատությունն ու կարիքը մասսայական բնույթ էին կրում։ Մթերքներով ապահովված էին միայն կուլակները և ունևոր տնտեսությունները, որոնք իրենց ունեցվածքը ամեն կերպ թաքցնում էին պետությունից և չարաշահումներով էին զբաղվում։

Տնտեսական քայքայվածության հետևանքով 1921 թվականին հանրապետության որոշ գավառներում դեռևս շարունակվում էր սովը, որը կրկնվեց նաև 1922 թվականին։

Այս պայմաններում 1921 թվականի ամռանը Սովետական Հայաստանի մի շարք գավառներում նկատվեցին համաճարակային հիվանդություններ։ Սակայն կառավարության կողմից ձեռք առնված միջոցների շնորհիվ մեծ վտանգներ սպառնացող համաճարակը արագությամբ կանխվեց։

Եթե երկրի ներքին կյանքում դեռևս գոյություն ունեցող այդ դժվարություններին ավելացնենք նաև, որ ռազմական կոմունիզմի քաղաքականության կիրառումը որոշ դժգոհություն էր առաջացրել աշխատավոր գյուղացիության մեջ, ապա պարզ կդառնա, թե քաղաքական իրադրության ինչպիսի դժվարություններ էին ստեղծվել Սովետական Հայաստանում քաղաքացիական կռիվների ավարտից հետո։

Սուր բնույթ էր ընդունել դասակարգային պայքարը ինչպես քաղաքում, այնպես էլ գյուղում։ Չնայած փետրվարյան ավանտյուրայի լիկվիդացումով սովետական իշխանությունը ջախջախիչ հարված էր հասցրել սոցիալիզմի թշնամիներին՝ դաշնակցականներին, էսեռներին, մենշևիկներին, սոցիալֆիլներին և հակասովետական մյուս տարրերին, սակայն դրանց թաքնված մնացորդները, օգտագործելով հանրապետության ներքին տնտեսական-քաղաքական դժ-

1 ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 113, գ. 34, թ. 253։

2 Տե՛ս նույն տեղում, ֆ. 114, ց. 2, գ. 5, թ. 94։

վարությունները, միանալով կուլակային ուժերին, կատաղի պայքար էին տանում սովետական իշխանության դեմ։ Նրանք գյուղացիության մեջ սերմանում էին պրովոկացիոն, հակասովետական լուրեր, դիմադրում էին սովետական իշխանության միջոցառումներին, փորձում էին սովետական կարգերից դժգոհ տարրերին համախմբել և զինված ելույթներ կազմակերպել սովետական իշխանության դեմ։ Նրանք տեռորիստական ակտեր էին կազմակերպում կուսակցական-սովետական աշխատողների դեմ, թալանում և հափշտակում էին պետական միջոցները։ Դաշնակցական-կուլակային հակահեղափոխական տարրերին նույնիսկ հաջողվում է հանրապետության որոշ գավառներում (Դիլիջան, Դարալագյազ և այլն) անցնել բանդիտական գործողություններին։

1921 թվականի հոկտեմբերի 9-ին ժողովրդական կոմիսարների սովետի, ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատի և արտակարգ հանձնաժողովի կողմից տեղական հեղկոմներին ուղարկված նամակում, որը հրահանգներ էր պարունակում բանդիտիզմի դեմ պայքարելու մասին, ասված է. «Աշնան սկզբից երկրի մի քանի վայրերում բռնկվել է բանդիտիզմը։ Սակավաթիվ և իրենց կազմով թույլ բանդիտական ջոկատները պաշտպանություն են ստանում բնակչության կուլակային տարրերից... Նրանք չեն խնայում ոչ ոքի և ոչինչ։ Օրերս Դիլիջանի շրջանում սպանեցին մեր լավագույն աշխատողներից մեկին՝ ընկ. Շամախյանին։ Որպեսզի մեր երկիրը և աշխատավորներին ապահովենք բանդիտիզմից, պետք է ոտքի կանգնեցնել քաղաքի, գավառի, գավառակի (շրջանի) և գյուղի բոլոր մարտական ուժերը»[1]։

Սովետական կառավարության և Հայաստանի կոմունիստական կուսակցության ձեռք առած վճռական միջոցների ու աշխատավորության ակտիվ պայքարի շնորհիվ Հայաստանում բանդիտիզմը շուտով լիկվիդացվեց։

Հայաստանի կոմկուսը և սովետական կառավարությունը ձեռնամուխ եղան երկիրը տնտեսական քայքայվածության ծանր վիճակից դուրս բերելու գործին։ Այդ նպատակն իրագործելու համար անհրաժեշտ էր վերականգնել գյուղատնտեսությունը, արդյունաբերությունը, տրանսպորտը, բուժել պատերազմի հասցրած վերքերը։

Այդ խնդիրների կենսագործման համար Հայաստանի կոմունիստական կուսակցությունը մոբիլիզացրեց հանրապետության բանվորներին ու գյուղացիներին, բոլոր աշխատավորներին։ Ժողովրդական տնտեսության վերականգնման գործը ծավալելու, առաջադրված խնդիրները հաջողությամբ կենսագործելու նպատակով Հայկոմկուսի Կենտրոնական կոմիտեն կոչ ուղղեց գավառային կոմիտեներին և բոլոր կոմունիստներին. «Շնորհիվ մեր ուժերի մաքսիմում լարման, անսպառ եռանդի ու ինքնազոհության, հաղթանակով դուրս ենք քաղաքացիական պատերազմից։ Ներկայումս, երբ պարզորեն ստեղծված է դարձ, մեր առաջ ծառացած է երկրի տնտեսական ֆրոնտի կազմակերպման խնդիրը, որը պահանջում է մեզանից անկասկած գերագույն ճիգեր, ուժեր ու աշխատանքի մաքսիմում կենտրոնացում։ Ոչ մի աշխատանք մեզ համար ծանր չէ և կյանքում նրա կիրառելը դժվարին չի լինի...»[2]։

---

1 «Բանբեր Հայաստանի արխիվների», Երևան, 1961, № 1, էջ 94։

2 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 13, թ. 97։

Կենտրոնական կոմիտեն պահանջում էր բարձրացնել հեղափոխական զգոնությունը, ամրապնդել երիտասարդ սովետական հիմնարկների բոլոր օղակները։

Կուսակցական կազմակերպությունների ծավալած աշխատանքի շնորհիվ աշխատավոր գյուղացիությունը համախմբվում է սովետական իշխանության շուրջը։ 1921 թվականի կեսերին, համարյա բոլոր գավառներում և շրջաններում հրավիրվում են գյուղացիական համագումարներ, որոնք վճռականություն են հայտնում նվիրված աշխատանքով ու պայքարով ամրապնդել երիտասարդ սովետական իշխանությունը, ամեն կերպ նպաստել քայքայված տնտեսության վերականգնմանը։

1921 թվականի հուլիսի 17-ին հրավիրված Բաշ-Գյառնիի շրջանի 50 գյուղերի գյուղացիների ներկայացուցիչների համագումարի բանաձևում ասված է. «Մեր անձնական եռանդով ու աշխատանքով կվերականգնենք մեր քայքայված երկիրը, կլծվենք շինարարության գործին՝ մեր կառավարության ղեկավարությամբ։ Մենք չենք խնայի մեր ուժերը, մեր կուրծքը դեմ կտանք այն պահանջած ծանր ու անդուլ աշխատանքին, որով պիտի վերաշինվի և կենդանանա մեր հայրենիքը»[1]։

Այսպիսի որոշումներ են ընդունում նաև մյուս շրջաններում հրավիրված աշխատավոր գյուղացիների համագումարները։

1921 թվականի մայիսի 21-ին հրավիրվում է Էջմիածնի գավառի գաղթականության համագումարը։ Արտահայտելով բազմաչարչար հայ ժողովրդի ձգտումները, համագումարը միահամուռ կերպով իր բանաձևում արձանագրել է.

«Մենք ի լուր ամենքի հայտնում ենք.

1. Որ հետայսու մեր բոլոր ուժերը — մտավոր, ֆիզիկական թե նյութական — նվիրելու ենք ՀՍԽ Հանրապետությանը։

2. Միայն ՀՍԽ Հանրապետության հարատև գոյության ու ամրապնդման միջոցով Հայաստանի աշխատավորությունը կարող է իր իղձերն ու փափագները իրագործված տեսնել։

3. Ներկա ՀՍԽ Հանրապետության ուժեղացման և տնտեսական զարգացման մեջ ենք մենք որոնում տաճկահայ աշխատավորների ընկերային ապահովության և նրա ապագա տենչերի իրագործումը»[2]։

Համագումարը ողջույնի հեռագրեր է ուղարկում հայ ժողովրդի ազատարար Վ. Ի. Լենինին, ՀԿ(բ)Կ Կենտկոմին, Հայաստանի, Ադրբեջանի և Վրաստանի հեղկոմներին։

Վ. Ի. Լենինին ուղղված հեռագրում ասված է. «Լսելով Հայաստանի կոմունիստական կուսակցության ներկայացուցչի զեկուցումը Խորհրդային Ռուսաստանի և նրա քույր Խորհրդային Հայաստանի էության ու նրա կարգերի մասին, սասունցի, մշեցի, ալաշկերտցի, վանեցի և այլ տեղացի արևմտահայ չքավոր գյուղացիների առաջին համագումարը միաձայն որոշեց հանձինս Ձեզ չերմ կերպով ողջունել Խորհրդային Ռուսաստանի բանվոր դասակարգին և չքավոր գյուղացիությանը, միաժամանակ ամեն կերպ աշխատել, որպեսզի զորա-

1 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 138, գ. 3, թ. 27—28։

2 Նույն տեղում, ֆ. 113, ց. 3, գ. 13, թ. 107։

նա և ամրապնդվի մեր շահերի իսկական պաշտպան և մեր միակ վիրկարար Խորհրդային Հայաստանի երիտասարդ հանրապետությունը»[1]։

Տնտեսության վերականգնման համար մղվող պայքարի առաջին շրջանում գլխավոր հարցերն էին պարենային ճգնաժամի ու սովի վերացումը և բանվորության համար աշխատանքային նորմալ պայմանների ստեղծումը։

Սակայն Սովետական Հայաստանը միայն իր ուժերով ու ներքին միջոցներով այդ անել չէր կարող։

Պարենային ճգնաժամի լուծման գործում Հայաստանն օգնության մեծ կարիք էր զգում։ Այդ օգնությունը նա կարող էր ստանալ միմիայն Սովետական Ռուսաստանից և մյուս եղբայրական սովետական հանրապետություններից։

Հայ ժողովրդի և Հայաստանի ճակատագիրը սերտորեն շաղկապված էր աշխարհում առաջին սոցիալիստական հեղափոխության հաղթանակ դրոշը բարձրացրած ռուսական հերոսական բանվոր դասակարգի բախտի հետ։ Ռազմական դաշինքի ամրապնդմանը զուգահեռ, տնտեսության վերականգնման համար մղվող պայքարում ավելի մեծ կարևորություն էր ստանում տնտեսական դաշինքի և Սովետական Ռուսաստանի կողմից Հայաստանին տրվող օգնության հարցը։

Այդ դժվարին օրերին Սովետական Ռուսաստանը Հայաստանին ցույց տվեց բազմապիսի օգնություն, նրան դուրս բերելով ծանր վիճակից, հնարավորություն ստեղծեց հետագա առաջընթացի համար։

Սովետական Ռուսաստանն այդ ժամանակ դեռևս նոր էր ավարտել քաղաքացիական կռիվները և գտնվում էր տնտեսական ծանր պայմաններում։ Չնայած դրան, նա նյութական մեծ օգնություն ցույց տվեց հայ ժողովրդին, ինչպես նաև մյուս ժողովուրդներին։

Հայաստանում սովետական կարգերի հաստատման առաջին օրերին, 1920 թվականի դեկտեմբերի 12-ին, ընդունելով Հայաստանի Հեղկոմի անդամներ Ս. Տեր-Գաբրիելյանին և Ա. Մռավյանին և լսելով նրանց զեկուցումը հանրապետության դրության մասին, Վ. Ի. Լենինը հայտարարել է, որ Սովետական Ռուսաստանը բոլոր միջոցները կգործադրի Թուրքիայի լծից Ալեքսանդրապոլն ու երկաթուղին ազատելու, ինչպես նաև Սովետական Հայաստանին ամեն կերպ օգնելու համար[2]։ 1920 թվականի դեկտեմբերին Սովետական Ռուսաստանի ֆինժողկոմատը Հայաստանին բաց է թողնում երկու միլիարդ ռուբլի սովետական թղթադրամ (ոսկու հաշվով 600 հազար ռուբլի)։ Միաժամանակ Սովետական Ռուսաստանի պարենավորման ժողովրդական կոմիսարիատը սկսում է Հայաստան ուղարկել մեծ քանակությամբ հացահատիկ, մանուֆակտուրա և այլ ապրանքներ։

1921 թվականի ապրիլի 15-ին Ռոստովի երկրային տնտեսական խորհրդին ուղղած հեռագրում Վ. Ի. Լենինը ցուցում է տալիս վճռական միջոցներ ձեռք առնել Բաքվին, Վրաստանին ու Հայաստանին ապրանքներ մատակարարելու համար[3]։

Կենսագործելով Վ. Ի. Լենինի ցուցումները, Ռոստովի երկրամասի կու-

1 ՀՍՍՀ ՀԱՀԿ պԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 13, թ. 113։

2 Տե՛ս Ա.սֆաանազ Մռավյան, Հոդվածներ և ճառեր, Երևան, 1961, էջ 222։

3 Տե՛ս «Ленинский сборник», XX, էջ 227—228։

սակցական-սովետական օրգանները մեծ քանակությամբ կենսամթերքներ են ուղարկում Սովետական Ադրբեջան, Վրաստան և Հայաստան։

Դործիքների և սերմացուի պակասության հետևանքով, 1921 թվականի գարնանացանը Հայաստանում կանգնած էր ձախողման վտանգի առջև։ Նկատի ունենալով այդ, Մոսկվայի բանվորներն օգնության կարգով Հայաստան են ուղարկում մեծ քանակությամբ գյուղատնտեսական գործիքներ։ Հկ(բ)կ Կենտկոմի օրգան «Կոմունիստ» թերթը (հայերեն) Մոսկվայի բանվորների այդ օգնությունը այսպես է գնահատել.

«Խորհրդային Ռուսաստանի և խորհրդային Հայաստանի սերտ համերաշխության և համագործակցության մի փառավոր փաստ է այն նվերը, որ Մոսկվայի բանվորներն իրենց համեստ պահեստներից բաժին են բերում գյուղացիական Հայաստանին։

Հայաստանի աշխատավորությունն արդեն զգում է, որ իր թիկունքում կանգնած է վիթխարի Ռուսաստանի անհաղթելի ուժը և այդ հանգամանքը նոր եռանդ պիտի ներշնչի մեր բանվորա-գյուղացիությանը՝ տասնապատկելու իր ջանքերը շինարարության աշխատանքի ասպարեզում»[1]։

1921 թվականի ապրիլին Սովետական Ռուսաստանի Ժողկոմսովետը որոշում է մեկնակես միլիոն ռուբլի (ոսկով) վարկ բաց թողնել Հայաստանին՝ նրա կարիքները բավարարելու համար[2]։

Այդ ծանր օրերին Սովետական Հայաստանը զգալի նյութական օգնություն ստացավ նաև Ադրբեջանից, Ուկրաինայից և մյուս սովետական հանրապետություններից։

Սովետական Ռուսաստանի և մյուս եղբայրական հանրապետությունների օգնությունը վճռական նշանակություն ունեցավ Սովետական Հայաստանի տնտեսական ծանր դրության բարելավման գործում։ Այդ օգնության շնորհիվ լիկվիդացվում էր սովն իր ծանր հետևանքներով, վերացվում էին համաճարակային հիվանդությունները։ Ստեղծվում էին նպաստավոր պայմաններ երկրի քայքայված տնտեսության վերականգնման աշխատանքները լայն մասշտաբով ծավալելու համար։

2. ԱՆՑՈՒՄ ՆՈՐ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ։ Վ. Ի. ԼԵՆԻՆԻ 1921 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 14–Ի ՆԱՄԱԿԸ

1920 թվականի վերջերին Սովետական Ռուսաստանում քաղաքացիական կռիվները հիմնականում ավարտվել էին։ Ջախջախվել և մեր երկրի սահմաններից դուրս էին քշվել օտարերկրյա իմպերիալիստների օկուպացիոն զորքերը։ Սովետական Ռուսաստանը, նրա հերոսական կարմիր բանակը, կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ ձեռք էին բերել պատմական հաղթանակներ։

Կարևոր հաջողությունների էր հասել սովետական դիվանագիտությունը, ամրապնդվել էր երկրի միջազգային հեղինակությունը։ 1920 թվականի ընթաց-

1 «Կոմունիստ» (Երևան), 6 հունվարի 1921 թ.։

2 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 114, ց. 2, գ. 5, թ. 1։

քում Սովետական Ռուսաստանը խաղաղության առաջին պայմանագրերն էր կնքել Էստոնիայի, Լատվիայի, Լիտվայի և Ֆինլանդիայի հետ։ 1921 թվականի մարտի 16-ին կնքվում է անգլո-սովետական առևտրական համաձայնագիրը։ Դրանով իսկ ինտերվենցիայի ակտիվ կազմակերպիչներից մեկը՝ Անգլիան, փաստորեն ճանաչում է Սովետական Ռուսաստանին։ Շուտով Սովետական Ռուսաստանը այդպիսի համաձայնագրեր է կնքում նաև Գերմանիայի ու Իտալիայի հետ։

Խաղաղության այդ առաջին պայմանագրերի և առևտրական համաձայնագրերի կնքումը վկայում է մի կողմից ինտերվենցիայի և տնտեսական բլոկադայի միջոցով սովետական հանրապետություններին հարվածելու և պրոլետարիատի դիկտատուրան տապալելու արևմտյան իմպերիալիստների հույսերի խորտակումը, մյուս կողմից այդ դիկտատուրայի հարաճուն ամրապնդումը, նրա ընդլայնումը և աղդեցության աճը միջազգային ասպարեզում։

Եվրոպական երկրների հետ կնքած պայմանագրերին զուգընթաց, Սովետական Ռուսաստանը իրավահավասարության հիմունքներով պայմանագրեր կնքեց Արևելքի թույլ, կիսագաղութային երկրների՝ Թուրքիայի, Իրանի և Աֆղանստանի հետ։

Դրանք երիտասարդ սովետական պետության առաջին լուրջ հաջողություններն էին արտաքին քաղաքականության բնագավառում։

Սակայն իմպերիալիստական պետությունների մեծ մասը դեռևս չէր կամենում որևէ հարաբերության մեջ մտնել սովետական երկրի հետ և հույս ուներ ոչ միայն տնտեսական բլոկադայի, այլև հարմար առիթի դեպքում, ռազմական ուժի միջոցով տապալելու պրոլետարիատի դիկտատուրան։

Այդ ժամանակաշրջանում երկրի ներքին կյանքի բնորոշ կողմն այն էր, որ դեռևս շարունակվում էր ռազմական կոմունիզմի քաղաքականությունը, որը լինելով միակ ճիշտ քաղաքականությունը օտարերկրյա ռազմական ինտերվենցիայի և քաղաքացիական կռիվների տարիներին, այլևս չէր համապատասխանում սովետական երկրի խաղաղ զարգացման պայմաններին։

Քաղաքացիական կռիվների ավարտից հետո գյուղացիության մեջ դժգոհություններ են սկսվում ռազմական կոմունիզմի քաղաքականությունից, առանձնապես պարենմասնատորումից։ Նվ իրոք, նոր, խաղաղ պայմաններում աշխատավոր գյուղացիության շահերը պահանջում էին, որ փոխվի այդ քաղաքականությունը, վերացվի պարենմասնատորումը, թույլատրվի հացի ազատ առևտուր և ապրանքափոխանակություն ծավալվի գյուղի ու քաղաքի միջև։ «Գյուղացիական մասսան ընդհանուր առմամբ տեսավ և հասկացավ,— գրել է Վ. Ի. Լենինը,— որ այդ ահագին ծանրությունները, որոնք դրվում են նրա վրա, անհրաժեշտ են, որպեսզի կարելի լիներ բանվորա-գյուղացիական իշխանությունը պաշտպանել կալվածատերերի դեմ, որպեսզի մեզ չխեղդեր կապիտալիստական արշավանքը, որը սպառնում էր խլել հեղափոխության բոլոր նվաճումները։ Բայց զոդում չկար ազգայնացված, սոցիալիզացիայի ենթարկված ֆաբրիկաներում, գործարաններում, սովխոզներում կառուցվող էկոնոմիկայի և գյուղացիական էկոնոմիկայի միջև»[1]։

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 33, էջ 313—314։

Սովետական երկրի բանվոր դասակարգը, կրելով քաղաքացիական կռիվների հիմնական ծանրությունը, այդ կռիվների ավարտից հետո ձեռնամուխ եղավ խաղաղ տնտեսական շինարարության աշխատանքին։ Սակայն ռազմական կոմունիզմի տարիներին նրա որոշ խավերի մեջ նույնպես դժգոհություններ էին առաջացել։ Արդյունաբերական ձեռնարկությունների անկանոն աշխատանքի հետևանքով աշխատավարձը վճարվում էր ուշացումներով, կար գործազրկություն։ Բանվորներն զբաղվում էին տնայնագործությամբ։ Նրանց մի մասը գյուղ էր գնում։

Բնորոշելով Սովետական Ռուսաստանի այդ ժամանակաշրջանի ներքին դրությունը, Վ. Ի. Լենինը գրել է. «...այն բանից հետո, երբ մենք հաղթահարեցինք քաղաքացիական պատերազմի կարևորագույն էտապը և հաղթահարեցինք հաղթականորեն, մենք դեմ առանք Սովետական Ռուսաստանի ներքին քաղաքական մի մեծ, իմ կարծիքով, ամենամեծ ճգնաժամի, որը հասցրեց ո՛չ միայն գյուղացիության, այլև բանվորների նշանակալից մասի դժգոհությանը»[1]։

Դասակարգային թշնամին ջանք չէր խնայում օգտագործելու սովետական իշխանության ներքին դժվարությունները։ Այդ հողի վրա նրան հաջողվեց Սովետական Ռուսաստանի, Ուկրաինայի, Անդրկովկասի և սովետական մյուս հանրապետությունների մի շարք շրջաններում բարձրացնել հակասովետական խռովություններ, որոնք, սակայն, արագորեն ճնշվեցին։

Միջազգային ու ներքին այդպիսի իրադրության պայմաններում կոմունիստական կուսակցությունը Վ. Ի. Լենինի գլխավորությամբ ձեռնամուխ եղավ սովետական երկրի կյանքում նոր, վճռական շրջադարձ կատարելուն, ռազմական կոմունիզմից նոր տնտեսական քաղաքականության անցնելուն։ Այդ նշանակում էր տնտեսական շինարարության բոլոր հարցերում մշակել նոր դիրքավորում, որի գլխավոր նպատակն էր բանվոր դասակարգի ու գյուղացիության դաշինքի հետագա ամրապնդումը և մեր երկրում սոցիալիստական շինարարության հաղթական առաջընթացի ապահովումը։

Անհրաժեշտ էր վերականգնել խոշոր արդյունաբերությունը, լուծել արդյունաբերության էներգետիկ բազայի, առաջին հերթին էլեկտրիֆիկացիայի հարցը, վերականգնել ածխի, նավթի, մետալուրգիայի և արդյունաբերության մյուս կարևորագույն ճյուղերը։ Արդյունաբերության մի շարք ճյուղերը հումքով, իսկ բնակչությանը՝ կենսամթերքներով ապահովելու, հացազրկությունը վերացնելու համար անհրաժեշտ էր վերականգնել գյուղատնտեսությունը, ծավալել ապրանքափոխանակություն քաղաքի և գյուղի միջև։

Այսպիսով, սովետական հասարակության զարգացման տվյալ էտապում կոմունիստական կուսակցության և սովետական իշխանության առջև ծառացան տնտեսական խաղաղ շինարարության բազմապիսի հարցեր, որոնք պահանջում էին իրենց լուծումը։

Խաղաղ տնտեսական շինարարությունն սկսելու կապակցությամբ առանձին սրությամբ դրվեց աշխատավորների ամենամասսայական կազմակերպությունների՝ արհեստակցական միությունների մասնակցության հարցը այդ շինարարությանը։ Վ. Ի. Լենինը արհմիությունները գնահատել է որպես կոմու-

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 33, էջ 499—500։

նիստական դաստիարակության դպրոց, որպես կոմունիզմի դպրոց, որոնց խընդիրն է ակտիվ կերպով մասնակցել սոցիալիստական շինարարությանը, ամրապնդել գիտակցական կարգապահությունը, բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը։

ՌԿ(բ)Կ X համագումարը 1921 թվականի մարտին հատուկ որոշում ընդունեց պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում արհմիությունների դերի և խնդիրների մասին։ Որոշման մեջ նշված էր, որ արհմիությունների, որպես պրոլետարիատի դիկտատուրայի հենարանի, անհետաձգելի խնդիրն է՝ բոլոր բանվոր-ծառայողների գլխովին ընդգրկումը սոցիալիստական շինարարության մեջ[1]։

ՌԿ(բ)Կ X համագումարը քննության առնելով Վ. Ի. Լենինի զեկուցումը, որոշում ընդունեց ռազմական կոմունիզմից նոր տնտեսական քաղաքականության անցնելու մասին։ Տվյալ հարցի վերաբերյալ համագումարի ընդունած լենինյան բանաձևը սահմանում էր, որ պարենհարկը ավելի քիչ է լինելու, քան պարենմասնատրումը։ Պարենհարկը պետք է համապատասխաններ գյուղացիական տնտեսությունների եկամուտներին։ Ջքավոր գյուղացիական տնտեսությունները մասամբ կամ ամբողջովին կարող էին ազատվել պարենհարկից, իսկ քիչ կարողության տեր կամ միջակ տնտեսությունները հարկը վճարելու էին ցածր դրույքով։

Կոմունիստական կուսակցությունը գտնում էր, որ անցնելով նոր տնտեսական քաղաքականության, թույլ է տրվում որոշ, կարճատև նահանջ՝ թիկունքը ամրապնդելու, ուժերը վերադասավորելու և լայն ճակատով կապիտալիստական տարրերի վրա գրոհելու, սոցիալիզմի կառուցումն իրականացնելու համար։ Այսպիսով, նոր տնտեսական քաղաքականությունն ուներ երկակի բնույթ, մեկ կողմից որոշ, կարճատև նահանջ, կապիտալիստական տարրերի որոշ աշխուժացման թույլտվություն, իսկ մյուս կողմից, որը գլխավորն է, պրոլետարիատի դիկտատուրայի ուժերի վերադասավորում, բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի հետագա ամրապնդում, սոցիալիստական շինարարության ծավալում։

Մինչդեռ, աղավաղելով Լենինի գծի հակառակորդները այն համարում էին միայն նահանջ, չցանկանալով հաշվի առնել նրա գլխավոր նպատակը, որով ապահովվելու էր սոցիալիստական էկոնոմիկայի հիմքի կառուցումը։

Վճռական հակահարված հասցնելով այդ հակառակորդներին, կոմունիստական կուսակցությունը հաստատ կերպով իրականացնում էր վերցրած կուրսը։

Անցնելով նոր տնտեսական քաղաքականությանը, կոմունիստական կուսակցությունը առանձին սրությամբ առաջ քաշեց առևտրի ծավալման, առևտուր անելի սովորելու հարցը, որովհետև առանց դրա անհնարին էր ապրանքաշրջանառության ծավալումը քաղաքի և գյուղի միջև, անհնարին էր ամրա-

---

1 Տե՛ս «ՍՄԿՊ-ն համագումարների, կոնֆերանսների և Կենտկոմի պլենումների բանաձևերում ու որոշումներում» (հետագայում՝ «ՍՄԿՊ-ն... բանաձևերում ու որոշումներում»), մաս I, Երևան, 1954, էջ 684—685։



Ալ. Մյասնիկյան

պրենդել գյուղի և քաղաքի կապը, անհնարին էր բարձրացնել գյուղատնտեսությունը, քայքայումից դուրս բերել արդյունաբերությունը։

Նոր տնտեսական քաղաքականության կենսագործման կապակցությամբ Վ. Ի. Լենինն առանձնապես ընդգծում էր կոոպերացիայի զարգացման անհրաժեշտությունը, նշելով, որ կոոպերացիան հեշտացնում է միլիոնավոր բնակչության կազմակերպումը, ապահովում սոցիալիզմի կառուցումը։

Նոր տնտեսական քաղաքականությունը հանդիսանալով մեր երկրում սոցիալիզմի կառուցման անհրաժեշտ օղակներից մեկը, միաժամանակ ունի խոշորագույն միջազգային նշանակություն։

Վ. Ի. Լենինն ընդգծում էր, որ այդ քաղաքականությունն ամենուրեք նույնությամբ, նույն մեթոդներով ու հղանակներով կիրառել չի կարելի, որ յուրաքանչյուր պարագայում անհրաժեշտ է հաշվի առնել տվյալ երկրի սոցիալ-տնտեսական զարգացման աստիճանը, նրա կոնկրետ առանձնահատկությունները և դրանցից բխող դասակարգային փոխհարաբերությունները։

Հայաստանի կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության առջև լուրջ խնդիր էր դրված՝ ուշադիր կերպով հաշվի առնելով Սովետական Ռուսաստանի հարուստ փորձը, երբեք չմոռանալ այն տարբերությունները, որ այն ժամանակ կային Հայաստանի ու Սովետական Ռուսաստանի միջև ինչպես սոցիալ-տնտեսական զարգացման աստիճանի առումով, այնպես էլ նրանց կենսամակարդակի տեսակետից։ Միայն այդպիսի մոտեցումը կապահովեր հանրապետության կյանքում տեղի ունենալիք վճռական շրջադարձի՝ նոր տնտեսական քաղաքականության, հաջող իրագործումը։

Այս առումով ամբողջ Անդրկովկասի, այդ թվում նաև Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների համար պատմական կարևորագույն նշանակություն ունեցավ Վ. Ի. Լենինի 1921 թվականի ապրիլի 14-ի ծրագրային նամակը Ադրբեջանի, Վրաստանի, Հայաստանի, Դաղստանի և Լեռնականների հանրապետության կոմունիստներին։

Վ. Ի. Լենինի այս նամակը փայլուն կերպով ցույց է տալիս, թե նա որքան էր մտահոգվել ազգային սովետական հանրապետությունների, այդ թվում նաև Անդրկովկասի սովետական հանրապետությունների վիճակով, նրանցում տեղի ունեցող սոցիալիստական վերափոխությունների հարցերով։

Վ. Ի. Լենինի այդ նամակի մասին Ալ. Մյասնիկյանը գրել է. «1921 թվականի ապրիլի կեսերին ես պետք է մեկնեի Սովետական Անդրկովկաս և ապա Հայաստան։ Մոսկվայից մեկնելուց առաջ ես ընկեր Լենինի հետ տեսակցություն ունեցա, որի ժամանակ մենք մանրամասն զրուցեցինք այն մասին, թե ինչպես պիտի աշխատել Կովկասում, ինչ ձևով պետք է հաշվի առնել ռուսական հեղափոխության փորձը, ինչ քաղաքականություն վարել Թուրքիայի նկատմամբ։

...Միանգամայն պարզ դարձավ, որ Արևելքում կատարվելիք աշխատանքը բավական բարդ է և պատասխանատու, և այդ պատճառով էլ ես խնդրեցի ընկեր Լենինին՝ համառոտ շարադրել իր մտքերը թղթի վրա, նամակի ձևով, որպեսզի այդ նամակը ես կարողանամ հասցնել Կովկասի ընկերներին, որ նրանք կարողանան ղեկավարվել նրանով իրենց ամենօրյա աշխատանքում։ Լենինը

սիրով համաձայնեց դրան։ Հենց հետևյալ օրը սուրհանդակը ինձ բերեց նրա նամակը...»[1]։

1921 թվականի մայիսի սկզբին Ալ. Մյասնիկյանը այդ նամակը բերում է իր հետ և շուտով հրատարակում մամուլում, որը դառնում է Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների ու բոլոր աշխատավորների աշխատանքի ու պայքարի ծրագիրը։

Նամակում Վ. Ի. Լենինը հանճարեղ խորաթափանցությամբ շարադրել էր նոր տնտեսական քաղաքականության իրականացման կոնկրետ ուղիները Անդրկովկասում. «...ամենից ավելի կարևոր է,— գրել է Վ. Ի. Լենինը,— որ Անդրկովկասի կոմունիստները հասկանան իրենց դրության, իրենց հանրապետությունների դրության յուրօրինակությունը, ի տարբերություն ՌՍՖՍՀ դրության ու պայմանների, հասկանան մեր տակտիկան նույնությամբ չընդօրինակելու, այլ մտածված կերպով կոնկրետ պայմանների տարբերության համապատասխան այն ձևափոխելու անհրաժեշտությունը»[2]։

Այդ տարբերությունը Վ. Ի. Լենինը համարում էր. ա) Սովետական Ռուսաստանը տարիներ շարունակ կռվելով Անտանտի ռազմական արշավանքների ու նրա բլոկադայի դեմ, ոչ մի տեղից քաղաքական ու ռազմական օժանդակություն չի ստացել։ Մինչդեռ Կովկասի սովետական հանրապետություններն այդպիսի օգնություն ստանում էին Սովետական Ռուսաստանից. բ) Կովկասի սովետական հանրապետությունները Սովետական Ռուսաստանի օգնության շնորհիվ կարող էին ոչ մի վախ չունենալ Անտանտից։ «Ռուսաստանը գաղել էր» Անտանտի ձեռքերը, և այդ նրան կհարկադրի, հավանորեն, որոշ ժամանակ մի փոքր ավելի զգույշ լինելուց[3]. գ) Կովկասը էլ ավելի գյուղացիական երկիր է, քան Ռուսաստանը. դ) «Կովկասը կարող է ավելի արագ ու ավելի հեշտ կերպով «համակեցություն» ու ապրանքափոխանակություն գլուխ բերել կապիտալիստական Արևմուտքի հետ»[4]։

Ընդգծելով, որ Կովկասը ավելի գյուղացիական երկիր է, քան Ռուսաստանը, Վ. Ի. Լենինը Կովկասի կոմունիստներից պահանջում էր ոչ թե նույնությամբ ընդօրինակել ռուսական կոմունիստների տակտիկան, այլ ինքնուրույն կերպով հաշվի առնել նրա յուրօրինակությունը, նրա ոգին և իմաստը, ըստ որում Կովկասում անհրաժեշտ էր «ավելի մեղմություն, զգուշություն, զիջողականություն մանր բուրժուազիայի, ինտելիգենցիայի և մանավանդ գյուղացիության նկատմամբ... Ավելի դանդաղ, ավելի զգույշ, ավելի սիստեմատիկ անցում դեպի սոցիալիզմ,— ահա թե ինչն է հնարավոր ու անհրաժեշտ Կովկասի հանրապետությունների համար՝ ի տարբերություն ՌՍՖՍՀ-ի։ Ահա թե ինչն է հարկավոր հասկանալ ու կարողանալ իրականացնել ի տարբերություն մեր տակտիկայի»[5]։

---

1 Ալեքսանդր Մյասնիկյան, Ընտիր երկեր, էջ 469—470։

2 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 32, էջ 402։

3 Նույն տեղում, էջ 403։

4 Նույն տեղում։

5 Նույն տեղում, էջ 403 և 404։

Վ. Ի. Լենինը Կովկասի կոմունիստներին սովորեցնում էր, որ տնտեսության վերականգնման աշխատանքները պետք է սկսել գյուղատնտեսությունից, առոդոմից։ «Իսկույն աշխատել բարելավել գյուղացիների դրությունը և սկսել էլեկտրիֆիկացիայի, առոդման խոշոր աշխատանքներ։ Առոդումն ամենից ավելի է պետք և ամենից ավելի կվերստեղծի երկիրը, կվերածնի նրան, կթաղի անցյալը, կամրապնդի անցումը դեպի սոցիալիզմ»[1]։

Որպես սովետական իշխանության պահպանման գլխավոր պայման, նրա հետագա հզորացման համար Վ. Ի. Լենինը միաժամանակ ընդգծում էր Կովկասի սովետական հանրապետությունների եղբայրական անխախտ դաշինքի անհրաժեշտությունը։

Առաջնորդվելով Վ. Ի. Լենինի ցուցումներով և կուսակցության համապատասխան որոշումներով, Հայաստանի կոմունիստական կուսակցությունը Ռ(բ)Կ Կենտկոմի անդրկովկասյան բյուրոյի ղեկավարությամբ բազմակողմանիորեն նախապատրաստեց ու սկսեց անցումը նոր տնտեսական քաղաքականության։

1921 թվականի ապրիլ-մայիս ամիսներին և հունիսի առաջին երկու տասնօրյակում հանրապետությունում այդ ուղղությամբ կատարվեցին նախնական որոշ ձեռնարկումներ։ Այդպիսի ձեռնարկումներից էին պարենավորման ժողովրդական կոմիսարիատի նույն թվականի ապրիլի 16-ի հրամանը «Պարենային բռնագրավումների վերացման մասին» և դրա անմիջական շարունակությունը հանդիսացող ապրիլի 29-ի հրամանը հանրապետությունում՝ «Բռնագրավումների ամբողջական վերացման մասին»։ Առաջինով հրամայվում էր. «Այսօրվանից վերացվում են ամեն տեսակի պարենի բռնագրավումները, նույնպես և կայուն գները շուկայում։

Բոլոր գնումները կատարել ազատ գներով»[2]։

Երկրորդ հրամանում ասված էր, որ համաձայն Հայաստանի Հեղկոմի որոշման, արգելվում են ամեն տեսակի բռնագրավումները և խուզարկությունները՝ թաքցրած ապրանքները հայտնաբերելու նպատակով։

Դրանք առաջին միջոցառումներն էին ռազմական կոմունիզմը նոր տնտեսական քաղաքականությամբ փոխարինելու ուղղությամբ։

Հունիսի 24-ին Ալ. Մյասնիկյանի ստորագրությամբ հրապարակվում է Հայկական ՍՍՀ Ժողկոմսովետի դեկրետը «Պարենտուրքի մասին»։ Ըստ այդ դեկրետի հանրապետության գյուղատնտեսությամբ զբաղվող յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր էր պարենմասնատրման փոխարեն պետությանը վճարել պարենհարկ, որը սահմանվում էր նվազագույն չափով և որի նպատակն էր բարելավել աշխատավոր գյուղացիության դրությունն ու ապահովել նրա շահագրգռվածությունը գյուղատնտեսության արտադրության բարձրացման գործում։

Դեկրետի համաձայն պարենհարկը տալուց հետո գյուղացու տրամադրության տակ էր մնում նրա տնտեսության ամբողջ ավելցուկը, որը նա կարող էր ազատ կերպով շուկա հանել։ «Պարենի, հում նյութերի ու ֆուրաժի այն բոլոր պաշարը, որը տուրքը վճարելուց հետո մնում է հողագործի մոտ,— ասված էր

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 32, էջ 404։

2 «ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու», պրակ 2, էջ 17։

դեկրետում,— գտնվում է նրա լիակատար տրամադրության տակ և չի կարող ենթարկվել ոչ ոքի կողմից բռնագրավմանը»[1]։

Այսպիսով, Հայկական ՍՍՀ-ի ժողովրդական կոմիսարների սովետի հունիսի 24-ի դեկրետով օրենսդրական հաստատում է ստանում ռազմական կոմունիզմը նոր տնտեսական քաղաքականությամբ փոխարինելու շրջադարձը։ Այդ հիման վրա նույն թվականի հուլիս-օգոստոս ամիսներին լույս տեսած մի շարք նոր դեկրետներով վերացվեցին ռազմական կոմունիզմի մնացորդները[2]։

Սովետական Ռուսաստանի համեմատությամբ Հայկական ՍՍՀ-ում ռազմական կոմունիզմից նոր տնտեսական քաղաքականության անցումը տեղի ունեցավ որոշ ուշացումով։ Դրա ամենահիմնական պատճառը պետք է համարել այն, որ երբ Սովետական Ռուսաստանում 1921 թվականի մարտին սկսեց անցումը նոր տնտեսական քաղաքականության, Սովետական Հայաստանում դեռևս շարունակվում էին դաշնակցականների փետրվարյան ավանտյուրայի հետևանքով սկսված քաղաքացիական կռիվները, որոնց հաղթական ավարտումից հետո միայն Հայաստանում հնարավոր դարձավ անցնել նոր տնտեսական քաղաքականության։

3. ԽԱՂԱՂ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ։ ՆԷՊԻ ԱՌԱՋԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Հայաստանի աշխատավորները կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ բոլոր ուժերով ձեռնամուխ եղան հանրապետության քայքայված ժողովրդական տնտեսության վերականգնման գործին, որի հաջող իրականացմանը խոշոր չափով նպաստեց նոր տնտեսական քաղաքականության կենսագործումը։

Այդ ժամանակաշրջանում ներքին տնտեսական շինարարության գծով ամենակարևոր և միաժամանակ ամենադժվարին հարցերից մեկը 1921 թվականի գարնանացանի կատարման ու բերքահավաքի կազմակերպման խնդիրն էր։ Զգացվում էր սերմացուի, լծկան ուժի, գործիքների խիստ պակասություն։ Եվ չնայած սուղ միջոցներին, սովետական իշխանությունը աշխատավոր գյուղացիությանը խոշոր օգնություն կազմակերպեց։ Գյուղացիական շատ տնտեսություններ պետությունից ստացան սերմացու, գործիքներ և ֆինանսական օգնություն։ Միայն Երևանի և Էջմիածնի գավառների գյուղացիությանը Հայաստանի սովետական կառավարությունը 1921 թվականի գարնանացանի ժամանակ տվեց 71 հազար փութ հացահատիկի սերմացու[3]։

Պետության և կարմիր բանակի զորամասերի կողմից աշխատավոր գյուղացիական տնտեսություններին մեծ օգնություն ցույց տրվեց նույն թվականի բերքահավաքի ժամանակ։ Կարմիր բանակի զորամասերի կողմից աշխատավոր գյուղացիությանն օգնություն ցույց տալու մասին Հայկական ՍՍՀ ռազ-

---

1 «ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու», պրակ 2, էջ 17։

2 Տե՛ս նույն տեղում, էջ 61—62, 98—100։

3 Տե՛ս «Հայաստանի սոցիալիստական խորհրդային հանրապետության ժողովրդական կոմիսարիատների 1920—1922 թթ. հաշվետվությունը», էջ 67։

մական ժողովրդական կոմիսարիատը հատուկ հրաման արձակեց[1]։ Հայկական ՍՍՀ ժողկոմսովետի հատուկ դեկրետով նույն թվականի մայիսին տեղի ունեցավ կարմիր բանակի շարքերում գտնվող մեծահասակ մարտիկների զորացրում, որը ղգալի չափով նպաստեց գյուղացիական տնտեսությունները աշխատավոր ձեռքերով ապահովելու գործին։

Իշխանության ձեռք առած միջոցառումների շնորհիվ գյուղատնտեսությունը որոշ չափով աշխուժացավ։ Նկատելի տեղաշարժ կատարվեց արդյունաբերության, սովետական առևտրի ծավալման, ինչպես նաև տնտեսական շինարարության այլ բնագավառներում։ Ապրանքափոխանակության ծավալման շնորհիվ սկսեցին ամրապնդվել գյուղի և քաղաքի կապերը, նոր նախադրյալներ ստեղծելով սոցիալիստական տնտեսության հետագա զարգացման համար։

Անհրաժեշտություն զգացվեց Հայաստանում իրականացնել վարչական նոր վերաբաժանում։ 1921 թվականի հուլիսի 20-ին ՀՍՍՀ ժողկոմսովետը դեկրետ ընդունեց «ՀՍՍՀ վարչական վերաբաժանումների մասին»։ Ըստ այդ դեկրետի հանրապետությունում կազմակերպվեցին Երևանի, Էջմիածնի, Ալեքսանդրապոլի, Ղարաքիլիսայի, Լոռու, Իջևանի, Նոր Բայազետի և Դարալագյազի գավառները, որոնք իրենց հերթին բաժանվեցին գավառակների (շրջանների)։ Բոլոր այդ ութ գավառների մեջ մտնում էին 33 գավառակ[2]։ Ազատագրված Զանգեզուրը շուտով դարձավ հանրապետության 9-րդ գավառը (6 գավառակներով)։ Այսպիսով, 1921 թվականի կեսերին հանրապետությունն ուներ 9 գավառ՝ 39 գավառակներով։ Վարչական այդպիսի բաժանումը կուսակցական և սովետական ապարատը էլ ավելի մոտեցրեց մասսաներին, նրանց աշխատանքներն էլ ավելի ճկուն դարձրեց։ Դրանով իսկ հանրապետությունում ավելի լավ հիմքերի վրա դրվեց տեղերի ղեկավարությունը կենտրոնից և ապահովվեց բանվորների, գյուղացիների ու աշխատավոր ինտելիգենցիայի ակտիվ մասնակցությունը ժողովրդական տնտեսության վերականգնման աշխատանքներին։

1921 թվականի գարնանացանն ավարտելուց հետո, հանրապետությունում նախապատրաստական աշխատանքներ սկսվեցին պարենային հարկի գանձման ուղղությամբ։ Հայաստանի կոմունիստական կուսակցությունը խոշոր կարևորություն տալով այդ գործին, մոբիլիզացրեց բոլոր ուժերն ու հնարավորությունները, այն հաջողությամբ իրականացնելու համար։ Ագիտացիոն ու պրոպագանդիստական աշխատանքի միջոցով գյուղացիությանը բացատրվում էր նոր տնտեսական քաղաքականության իմաստը և նշանակությունը, պարենային հարկի տարբերությունը պարենմասնատրումից, ցույց էր տրվում սովետական իշխանության հոգատարությունը չքավոր և միջակ տնտեսությունների նկատմամբ։ Աշխատավոր գյուղացիությունն ըմբռնելով այդ, ավելի սերտորեն էր համախմբվում սովետական իշխանության շուրջը։ «Գյուղացիության վերաբերմունքը դեպի պարենտուրքը միանգամայն լավ է,— ասված է կառավարության հաղորդագրություններից մեկում։— Տուրքը գանձվում է առանց դժվարությունների։ Գյուղացիությունը լավ է ըմբռնել պարենտուրքի հաջող ավարտման անհրաժեշտությունը պետության համար»[3]։

1 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 114, ց. 2, գ. 5, թ. 28—29։

2 Տե՛ս «ՀՍՍՀ դեկրետների և հրամանների ժողովածու», պրակ 2, էջ 83—84։

3 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 114, ց. 2, գ. 5, թ. 34։

Աշխատավոր գյուղացիության այդ վերաբերմունքի շնորհիվ պարենհարկի առաջին գանձումը հանրապետությունում անցնում է հաջողությամբ։ Որպես պարենհարկ, սովետական կառավարությունը 1921 թվականին գյուղից ստացավ միայն 175 հազար փութ հացահատիկ[1]։ Այն ժամանակ, երբ նոր էր սկսվել գյուղատնտեսության վերականգնումը, դա անկասկած, կարևոր հաջողություն էր, որ ձեռք բերվեց դասակարգային թշնամու կատաղի դիմադրության պայմաններում։

Կուլակությունը բոլոր միջոցներով աշխատում էր ձախողել պարենհարկի գանձումը։ Հակասովետական ագիտացիային զուգընթաց, որոշ տեղերում կուլակները փորձում էին ոչ միայն չտալ պարենհարկը, այլև աշխատավոր գյուղացիներին տանել իրենց հետևից։ Սակայն Հայաստանի կոմկուսի ծավալուն աշխատանքի շնորհիվ աշխատավորական մասսաները ջախջախիչ հարված են հասցնում թշնամիների փորձերին։ «Պետք է ասել, որ պարենհարկի հաջող գանձմանը նպաստել է ամենից առաջ ինքը՝ ազգաբնակչությունը,— ասված է ՀՍՍՀ պարենավորման ժողովրդական կոմիսարիատի հաշվետվության մեջ։— Այդ խնդրում ավելի քան մի ուրիշ տեղում ազգաբնակչությունը վերաբերվեց գիտակցաբար. դա ամենալավ ազդակն է խորհրդային իշխանության բարձր ժողովրդականության»[2]։

1921 թվականի նոյեմբերի 25-ին լույս է տեսնում Հայկական ՍՍՀ ժողովրդական կոմիսարների սովետի դեկրետը բամբակագործության մասին։ Հանրապետությունում բամբակագործության զարգացումը խթանելու նպատակով, դեկրետը վերացված համարեց պետական մենաշնորհը և սահմանեց, որ 1922 և 1923 թվականներին բամբակագործներն ազատվում են պարենհարկից, նրանց թույլատրվում է ընդհանուր նորմաներից դուրս ազատ հողաբաժիններ ունենալ և վարկեր ստանալ։

Նեպին անցնելու առաջին շրջանում կոմունիստական կուսակցության և սովետական իշխանության ձեռք առած միջոցառումների շնորհիվ միջակ գյուղացիությունը վճռական շրջադարձ կատարեց դեպի սովետական իշխանությունը։ Դրան նպաստեցին հետևյալ հանգամանքները. ա) սովետական իշխանությունը կարողացավ վերջնականապես լուծել հողային հարցը, որի համար դարեր շարունակ պայքարել էր գյուղացիությունը։ Պետությունը աշխատավոր գյուղացիությանն ապահովեց հողով. բ) նոր տնտեսական քաղաքականությանն անցնելով, սովետական իշխանությունը ամենալայն օգնություն կազմակերպեց աշխատավոր գյուղացիությանը։ Պետությունը գյուղացիներին տվեց սերմացու, վարկ, գյուղատնտեսական գործիքներ. գ) գյուղատնտեսական և արդյունաբերական ապրանքների գների սովետական քաղաքականությունը, որի նպատակն էր մոտեցնել մկրատի ծայրերը, ավելի ամրապնդեց բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը։

Սակայն վերականգնման շրջանի սկզբում գյուղատնտեսության զարգացմանն արգելակում էին մի շարք լուրջ դժվարություններ։ Հայաստանում գյու-

---

1 Տե՛ս «Հայաստանի սոցիալիստական խորհրդային հանրապետության ժողովրդական կոմիսարիատների 1920—1922 թթ. հաշվետվությունը», էջ 89։

2 Նույն տեղում։

ղատնտեսությունը բավականին հետամնաց էր, մշակման գործիքները՝ պրիմիտիվ, ցանքերը կատարվում էին մեծ մասամբ առանց սերմազտման և առանց պարարտացման։ Ամբողջությամբ քայքայված էր առանց այն էլ շատ քիչ հողատարածություններ ընդգրկող ոռոգման սիստեմը։ Այդ բոլորի հետևանքով ստացվում էր ցածր բերք։ Մյուս կողմից զգալի տարբերություն կար արդյունաբերական և գյուղատնտեսական ապրանքների գների միջև, ըստ որում գյուղատնտեսական ապրանքների գները ցածր էին, իսկ արդյունաբերականինը՝ բարձր։ Այդ հանգամանքը դժգոհություն էր ստեղծում գյուղացիության մեջ և իր հերթին արգելակում գյուղատնտեսության վերականգնման աշխատանքները, պետական և կոոպերատիվ առևտրի ծավալումը։

Այդ ժամանակաշրջանում կոմունիստական կուսակցության և սովետական պետության առջև լուրջ խնդիր ծառացավ՝ նախատեսել գյուղատնտեսության զարգացման հետագա ուղիները, նշել միջոցառումներ գյուղի և քաղաքի միջև ապրանքափոխանակություն ծավալելու, գյուղը սոցիալիզմի ուղիով առաջ տանելու համար։

Նոր տնտեսական քաղաքականությանն անցնելու կապակցությամբ Վ. Ի. Լենինը մեծ նշանակություն էր տալիս գյուղի և քաղաքի միջև ապրանքափոխանակությունը կազմակերպելու և ընդարձակելու գործին, որը պետք է կատարվեր առաջին հերթին պետական և կոոպերատիվ առևտրի ծավալման միջոցով։ Իր կարևորությամբ և հրատապությամբ այդ հարցը Վ. Ի. Լենինը տվյալ ժամանակաշրջանում համարում էր առաջնակարգ հարց։ «Սա իր կարևորությամբ ու հրատապությամբ ներկայումս առաջին հարցն է,— գրել է Վ. Ի. Լենինը 1921 թվականի մայիսին։— Նախ՝ առանց բանակին ու քաղաքային բանվորներին լրիվ ու կանոնավոր կերպով պարեն մատակարարելու՝ պետությունը չի կարող տնտեսական շինարարություն կատարել ընդհանրապես, իսկ ապրանքափոխանակությունը պետք է դառնա պարեն հավաքելու գլխավոր միջոցը։ Երկրորդ՝ ապրանքափոխանակությունն արդյունաբերության ու հողագործության ճիշտ փոխհարաբերության ստուգման է, ինչպես և հիմքը ամեն մի աշխատանքի, որի նպատակն է շատ թե քիչ կանոնավոր գործող դրամական սիստեմ ստեղծել... ապրանքափոխանակության հարցի վրա պետք է այժմ գլխավոր ուշադրությունը դարձնեն բոլոր տնտեսորհուրդները, տնտեսական շինարարության բոլոր օրգանները»[1]։

Այնուհետև, Վ. Ի. Լենինը նշում է, որ այդ կապակցությամբ անհրաժեշտ է սովետական պետության, նրա տեղական օրգանների կողմից ամեն կերպ խրախուսել մանր հողագործի նախաձեռնությունը, ձեռներեցությունը։ Դա մեծ չափով կնպաստի ապրանքափոխանակության ավելի ծավալմանը[2]։

Այս տեսակետից խոշոր նշանակություն ունեցան Հայկական ՍՍՀ Ժողովրդական կոմիսարների սովետի 1921 թվականի հունիսի 3-ի և նոյեմբերի 24-ի դեկրետները։ Հունիսի 3-ի դեկրետը սահմանում էր, որ Հայկոոպի ցանցում ընդգրկված սպառողական կոոպերացիան իրավունք ունի՝ ա) փոխանակել, գնել և վաճառել թե գյուղատնտեսական արտադրության մթերքներ, թե մասնավոր

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 32, էջ 491—492։

2 Տե՛ս նույն տեղում, էջ 494—495։

արդյունաբերական ձեռնարկությունների արտադրած ապրանքներ և թե տնայնագործական արտադրանք. բ) սովետական օրենսդրության համաձայն կնքել պայմանագրեր գյուղատնտեսական և քաղաքային արտադրող խմբերի, ինչպես նաև կոոպերատիվների հետ՝ մթերքների և առարկաների պատրաստման, վերամշակման, գնման ու վաճառքի մասին. գ) կազմակերպել մթերքների ձեռք բերման և վերամշակման արտադրական ձեռնարկություններ և այլն[1]։

Այդ դեկրետից հետո 1921 թվականի կեսերից սկսվում են Հայաստանի սպառողական կոոպերացիայի՝ Հայկոոպի և նրա ստորին կազմակերպությունների վերակազմավորման և ուժեղացման աշխատանքները։ 1921 թվականի վերջերին Հայկոոպի ցանցը ամբողջ հանրապետությունում իր մեջ ընդգրկում էր 121 միավոր[2]։ Հայկոոպն իր բաժանմունքներն ուներ նաև եղբայրական սովետական հանրապետությունների տարբեր քաղաքներում՝ Թբիլիսիում, Բաքուում, Սուխումում, Բաքվում և այլն։ Հայկոոպին տրված էր նաև արտաքին առևտրի իրավունք, որն իրականացնելու համար նա իր բաժանմունքներն ուներ Թավրիզում, Կոստանդնուպոլսում և Եվրոպայի մի շարք երկրներում[3]։ Այդ բաժանմունքների միջոցով նա, պետական այլ կազմակերպությունների հետ միասին, իրականացնում էր ապրանքափոխանակության գործը կապիտալիստական որոշ երկրների հետ։

1921 թվականի վերջերին և 1922 թվականի սկզբներին հանրապետության տարբեր գավառներում Հայկոոպը հիմնել էր նաև արտադրական որոշ ձեռնարկություններ, որոնք ընդգրկում էին օճառի արտադրությունը, ջուլհակային արհեստանոցները, թիթեղի մշակությունը, ծխախոտի և լուցկու գործարանները, կոշկակարանոցները, և մի շարք այլ արհեստանոցներ ու մանր ձեռնարկություններ։ Դրանց միջոցով սպառողական կոոպերացիան մեկ կողմից զարկ էր տալիս որոշ ապրանքների արտադրությանը, մյուս կողմից, որը ամենից գլխավորն է, ավելի ու ավելի ծավալում ապրանքափոխանակությունը քաղաքի ու գյուղի միջև։ Բացի դրանից, Հայկոոպը իրագործում էր աշխատավորական գյուղացիական տնտեսություններին անհրաժեշտ նյութերի և արտադրական որոշ գործիքների մատակարարումը։

1921 թվականի օգոստոսի 10-ին Հայկական ՍՍՀ Ժողովրդական կոմիսարների սովետը դեկրետ հրատարակեց տնայնագործությանը և մանր արդյունաբերությանն օժանդակելու միջոցառումների մասին։ Այդ դեկրետով նոր, ավելի նպաստավոր պայմաններ են ստեղծվում հանրապետությունում տնայնագործական կոոպերացիայի զարգացման համար[4]։

Հայկական ՍՍՀ Ժողովրդական կոմիսարների սովետը 1921 թվականի օգոստոսի 14-ի դեկրետով ժողովրդական տնտեսության Գերագույն խորհրդին կից հիմնում է կոոպերացիայի, տնայնագործության և մանր արդյունաբերության վարչություն, որը կոչված էր նպաստելու այդ ճյուղերի զարգացմանը, այն ծառայեցնելով սոցիալիստական տնտեսության շահերին[5]։

---

1 Տե՛ս «ՀՍՀՀ դեկրետների և հրամանների ժողովածու», պրակ 2, էջ 46—47։

2 Տե՛ս «Խորհրդային Հայաստան 1920—1925 թթ.» (ժողովածու), էջ 257։

3 Տե՛ս նույն տեղում։

4 Տե՛ս «ՀՍՀՀ դեկրետների և հրամանների ժողովածու», 1921, № 2, էջ 10։

5 Տե՛ս նույն տեղում, էջ 21։

Նկատի ունենալով կոոպերատիվ շարժման հաջողությունները և կարևոր դերը ժողովրդական տնտեսության վերականգնման գործում, Հայկական ՍՍՀ ժողկոմսովետը, որպես 1921 թվականի հունիսի 3-ի դեկրետի զարգացում, նույն թվականի նոյեմբերի 24-ին նոր դեկրետ է հրատարակում միասնական կոոպերացիայի մասին։ Դեկրետում ասված էր. «Հայաստանի կոոպերատիվ շինարարության հիմքում դնել միասնական կոոպերացիայի սկզբունքը, որ նպատակ ունի համախմբել գյուղի և քաղաքի մանր աշխատավորական արտադրողներին, յուրացնելով սպառողական, գյուղատնտեսական ու արդյունաբերական կոոպերացիայի գործունեությունը»[1]։

Դեկրետը նախատեսում էր ամեն կերպ աջակցել մանր արտադրողներին կոոպերացիայի մեջ համախմբելուն, որի համար հանձնարարվում էր պետական կազմակերպություններին. ա) պատվերը տալ կոոպերատիվներին՝ նրանց առավելություն տալով մասնավորի նկատմամբ. բ) պետական հում նյութից, արտադրական գործիքներից, սերմացուից, ինչպես նաև դրամական միջոցներից ավանսավորել կոոպերատիվ ընկերություններին. գ) մասնավոր անձանց նկատմամբ կոոպերատիվներին առավելություն տալ՝ գործիքներ, շենքեր ձեռք բերելու և այլ խնդիրներում[2]։

Այդ որոշումների կենսագործումով 1921—1922 թվականներին հանրապետությունում ավելի ու ավելի են ամրապնդվում սպառողական և տնայնագործական կոոպերացիաների դիրքերը։ Իսկ գյուղատնտեսական կոոպերացիայի կազմակերպման և ծավալման ուղղությամբ նախապատրաստական աշխատանքներ են տարվում։

1921 թվականի սեպտեմբերին կազմակերպվում է Հայպետառը (հետագայում վերանվանվեց Հայատ), որի առջև խնդիր է դրվում միավորել Սովետական Հայաստանի ամբողջ պետական առևտուրը և լայնորեն ծավալել այն։

1921—1922 թվականներին Սովետական Հայաստանում որոշ աշխատանքներ են կատարվում ոռոգման ուղղությամբ։ Պետության ձեռնարկած առաջին միջոցառումների և աշխատավոր գյուղացիության ակտիվ մասնակցության շնորհիվ հիմնականում վերականգնվում է նախկինում գոյություն ունեցած ոռոգման ցանցը։

1922 թվականի հոկտեմբերին սկսվում է Շիրակի ջրանցքի շինարարությունը, որը առաջին խոշոր կառուցումն էր ոռոգման բնագավառում։ Սակայն ջրանցքի շինարարության համար զգացվում էր ֆինանսական միջոցների պակասություն։ Այդ պակասը լրացնելու նպատակով Ալեքսանդրապոլի գավառի ոռոգման և էլեկտրիֆիկացիայի կոմիտեն հատուկ կոչով դիմում է հանրապետության աշխատավորությանը. «...20 տարուց ավելի է, որ Շիրակի աշխատավորը երազում է ջրանցք անցկացնելու մասին,— ասված էր կոչում,— բայց այդ երազները նա կարողացավ իրականացնել միայն այսօր, երբ նա դարձել է իր երկրի և իր բախտի միակ տնօրենը։

Սկսված շինարարական մեծ աշխատանքը չի կրում զուտ տեղական բնույթ ...Շիրակի աշխատավորությունը սկսել է այս մեծ գործը այն խորին համոզ-

---

1 «ՀՍՍՀ դեկրետների և հրամանների ժողովածու», 1921, № 13, էջ 133։

2 Տե՛ս նույն տեղում։

մունքով, որ մենակ չի մնալու, որ Հայաստանի գյուղացին ու բանվորը կմնկնեն նրան օգնության եղբայրական ձեռքը և ջրանցքի աշխատանքները կգնան առանց հապաղելու։

Այժմ խոսքը ձերն է Հայաստանի աշխատավորներ։ Հասցրեք որքան կարող եք ձեր օգնությունը, որքան էլ նա քիչ լինի»[1]։

Մեծ ոգևորությամբ արձագանքելով այդ կոչին, Հայաստանի աշխատավորները Շիրակի ջրանցքի կառուցման ֆոնդն են մուծում 35.771 ռուբլի[2]։ Ջրանցքի կառուցմանը նրանք օգնում են ոչ միայն ֆինանսական միջոցներով, այլև բանվորական ուժով։ Հայաստանի համարյա բոլոր գավառներից մեծ թվով աշխատավորներ ակտիվ մասնակցում են ջրանցքի շինարարությանը, որը հանդիսացավ Սովետական Հայաստանի առաջին համաժողովրդական շինարարություններից մեկը։

Այդ տարիներին սկսվում են Երևանի էլեկտրակայանի ընդարձակման և նոր էլեկտրակայանների կառուցման նախապատրաստական աշխատանքները։ Առաջին քայլերն են կատարվում քայքայված արդյունաբերության վերականգնման ուղղությամբ։

Հանրապետությունում տնտեսական շինարարությանը զարկ տալու նպատակով 1921 թվականի հոկտեմբերին Հայկական ՍՍՀ Ժողկոմսովետին կից ստեղծվում է տնտեսական խորհրդակցություն, որը միավորում և ղեկավարում է հանրապետության բոլոր տնտեսական հաստատությունների գործունեությունը։ 1921—1922 թվականներին սկսում են աշխատել Երևանի գինու-կոնյակի «Արարատ» գործարանը, երկու կաշեգործարանները և ուրիշ ձեռնարկություններ։ Սովետական Ռուսաստանից եղբայրական օգնության կարգով ստացված սարքավորումներով սկսում է ընդարձակվել պոլիգրաֆ արդյունաբերությունը։ 1922 թվականին Իվանովո-Վոզնեսենսկ քաղաքի բանվորներից նվեր է ստացվում տեքստիլ գործարանի սարքավորում և հիմնադրվում է Ալեքսանդրապոլի տեքստիլ գործարանը՝ Սովետական Հայաստանի նորաստեղծ արդյունաբերության առաջին ձեռնարկություններից մեկը։

1921 թվականի վերջերին և 1922 թվականի սկզբներին հանրապետությունում արդեն նկատելի են դառնում առաջին հաջողությունները ժողովրդական տնտեսության վերականգնման ուղղությամբ։

Նոր տնտեսական քաղաքականության առաջին տարում Սովետական Հայաստանի ձեռք բերված հաջողությունները ամփոփվեցին հանրապետության սովետների առաջին համագումարում, որը աշխատեց 1922 թվականի հունվարի 30-ից մինչև փետրվարի 4-ը։ Ժողովրդական կոմիսարների սովետի հաշվետվության մեջ Ալ. Մյասնիկյանը նշեց, որ «...այս մի տարվա ընթացքում խորհրդային կառավարությունը Հայաստանում աշխատել է, մի կողմից՝ վերացնել հինը, անպետքը, մյուս կողմից՝ կամաց-կամաց ամրապնդել իր հիմքերը, գլուխ բերել այն գործը, որ դրված է հայ բանվորների և գյուղացիների ուսերին»[3]։

Զեկուցման մեջ նշված էր, որ կուսակցությունը խոշոր ուշադրություն է դարձրել գյուղատնտեսության վրա և զգալի օգնություն է ցույց տվել աշխա-

1 «Բանբեր Հայաստանի արխիվների», № 1, էջ 51։

2 Տե՛ս նույն տեղում։

3 Ալեքսանդր Մյասնիկյան, Ընտիր երկեր, էջ 391։

տավոր գյուղացիությանը։ Միայն հողագործության կոմիսարիատը մեկ տարվա ընթացքում աշխատավոր գյուղացիությանը բաց էր թողել 50 հազար փութ հացահատիկ՝ որպես սերմացու, 10 հազար փութ հացահատիկ՝ որպես սննդամթերք և 6000 գյուղատնտեսական զանազան գործիքներ[1]։ Բացի դրանից, կառավարությունն աշխատավոր գյուղացիությանն օգնել էր նաև ֆինանսական միջոցներով։

1922 թվականի նոյեմբերին Երևանում գումարվում է Հայաստանի գյուղացիական առաջին համագումարը, որին մասնակցում էին բոլոր գավառների ներկայացուցիչները։ Առաջին իսկ նիստում համագումարը հեռագիր է ընդունում՝ ուղղված Վ. Ի. Լենինին։ Ջերմորեն ողջունելով մեծ առաջնորդին, պատգամավորները նշում էին, որ «միայն Սովետական Ֆեդերատիվ Ռուսաստանի հետ համերաշխ ու լիակատար համագործակցությամբ փոքրիկ Հայաստանին կհաջողվի օգտագործել մինչև օրս թաքնված հնարավորությունները։ Այդ հեռանկարով ոգեշնչված համագումարը ձեռնամուխ է լինում իր աշխատանքներին և Ձեր միջոցով իր ընկերական ողջույնն է հղում ամբողջ Ռուսաստանի պրոլետարիատին ու գյուղացիությանը»[2]։

Համագումարը լսում է զեկուցումներ ու հաղորդումներ հանրապետության գյուղատնտեսության բոլոր հիմնական բնագավառների վիճակի և հետագա խնդիրների մասին, մշակում միջոցառումներ գյուղատնտեսության բարձրացման ուղղությամբ։

1921 թվականին Հայաստանում զգալիորեն աճել էին արհեստակցական միությունները, համարյա բոլոր գավառներում ստեղծվել էին արհմիութենական բյուրոներ։ Այդ ժամանակ Հայաստանի արհմիությունների շարքերում ընդգրկված էին մոտ 16 հազար աշխատավոր։ Դա մի խոշոր բանակ էր, որը կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ լծված էր ժողովրդական տնտեսության վերականգնման աշխատանքներին։

Նույն թվականի օգոստոսի 20—24-ը Երևանում տեղի ունեցավ Հայաստանի արհմիությունների առաջին համագումարը, որին մասնակցում էին 198 պատգամավոր։ Իր որոշումներում համագումարը նշեց հանրապետության արհմիությունների գործնական խնդիրները երկրի զարգացման տվյալ էտապում։ Համագումարը հատկապես ընդգծեց արհեստակցական միությունների ակտիվ մասնակցության անհրաժեշտությունը ժողովրդական տնտեսության վերականգնման գործին։

Համագումարից հետո արհմիությունների աշխատանքները նոր թափ են ստանում։ Զգալի գործ է կատարվում նրանց շարքերի ամրապնդման, դեպի աշխատանքը կոմունիստական վերաբերմունք ունենալու, աշխատանքային կարգապահությունն ամրապնդելու և այլ բնագավառներում։

Ժողովրդական տնտեսության վերականգնման գործում ակտիվ մասնակցություն ունեցավ երիտասարդությունը։

1921 թվականի օգոստոսի 23—24-ին Երևանում տեղի ունեցավ Հայաստանի կոմերիտմիության առաջին համագումարը, որը կարևոր դեր խաղաց

---

1 Տե՛ս Ալեքսանդր Մյասնիկյան, Ընտիր երկեր, էջ 396։

2 «Աշխատավորների նամակները Վ. Ի. Լենինին», Երևան, 1961, էջ 414։

երիտասարդության ուժերի մոբիլիզացման, նրա կոմունիստական դաստիարակության գործի կազմակերպման ուղղությամբ։ Համագումարի որոշմամբ Հայաստանի կոմերիտմիությունը միավորվեց Ռուսաստանի կոմերիտմիությանը և դարձավ նրա մարտական ջոկատներից մեկը։

Դնալով ամրապնդվում էր Սովետական Ռուսաստանի ներքին և միջազգային դրությունը, որը հիմք էր ծառայում անդրկովկասյան սովետական հանրապետությունների ներքին ու միջազգային դրության ամրապնդման համար։

1921 թվականի հոկտեմբերի 13-ին, Կարսում, մի կողմից Հայաստանի, Ադրբեջանի ու Վրաստանի սովետական հանրապետությունների, մյուս կողմից քեմալական Թուրքիայի միջև կնքվում է պայմանագիր, որը համապատասխանում էր նույն թվականի մարտի 16-ին Մոսկվայում Սովետական Ռուսաստանի և Թուրքիայի միջև կնքված պայմանագրի սկզբունքներին։ Բանակցություններին մասնակցում էր Սովետական Ռուսաստանի ներկայացուցիչը։ «Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարությունը,— ասված է Կարսի պայմանագրի առաջին հոդվածում,— և Հայաստանի, Ադրբեջանի ու Վրաստանի խորհրդային հանրապետությունների կառավարությունները համարում են ոչընչացված և ուժը կորցրած այն բոլոր դաշնագրերը, որոնք կապվել են դաշնագրվող կողմերի տերիտորիաների վրա անցյալում գերիշխանություն բանեցնող կառավարությունների միջև այդ տերիտորիաների վերաբերյալ, նմանապես այն դաշնագրությունները, որոնք կապվել են երրորդ պետությունների հետ և որոնք վերաբերում են անդրկովկասյան հանրապետություններին»[1]։

Կարսի պայմանագրով վերջնականապես չեղյալ համարվեց 1920 թվականի դեկտեմբերի 2-ին Ալեքսանդրապոլում Թուրքիայի և դաշնակցականների միջև կնքված պայմանագիրը։

Սակայն Հայաստանին պատկանող տերիտորիաների զգալի մասը մնաց Թուրքիայի ձեռքում, որը նա նվաճել էր դեպի Անդրկովկաս իր վերջին երկու արշավանքների ժամանակ՝ 1918—1920 թվականներին և դրանից առաջ։

1921 թվականի նոյեմբերին լրացավ Հայաստանում սովետական իշխանության հաստատման առաջին տարեդարձը։ Նոյեմբերի 16-ին լույս տեսավ Հայկական ՍՍՀ ժողովրդական կոմիսարների սովետի դեկրետը 1920 թվականի նոյեմբերի 29-ը՝ դաշնակցականների հակաժողովրդական իշխանության տապալման և Հայաստանում սովետական կարգերի հաստատման օրը, Հայաստանի բանվորների և գյուղացիների համաժողովրդական տոն հայտարարելու մասին։

Նոյեմբերի 29-ին Հայաստանի աշխատավորները մեծ խանդավառությամբ տոնում են իրենց ազատագրման առաջին տարեդարձը։ Ամենուրեք, բոլոր արտադրական ձեռնարկություններում, հիմնարկներում, գյուղերում հրավիրվում են աշխատավորների ժողովներ։

Հայաստանի աշխատավորների տոնը նրանց հետ միասին նշում են նաև եղբայրական սովետական հանրապետությունների բանվորներն ու գյուղացիները։

Այդ տարեդարձի առթիվ Գ. Կ. Օրջոնիկիձեն ՌԿ(բ)Կ Անդրկովկասյան երկ-

---

1 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 114, ց. 2, գ. 5, թ. 54։

բային կոմիտեի անունից Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտկոմին ողջույնի հեռագիր է ուղարկում, որտեղ ասված էր. «Մի տարի սրանից առաջ Հայաստանի կոմունիստական կուսակցությունը տեսնելով իր հայրենիքի բազմաչարչար բանվորների ու գյուղացիների անմեղ արյան վտակները, հաստատապես որոշեց վերջ դնել մեկընդմիշտ այդ տանջանքներին և ապըստամբվեց Հայաստանի աշխատավորությանը ծաղրող դաշնակների դեմ։ Ապըստամբությունը պսակվեց հաղթանակով։ Հայաստանում խաղաղություն և հանդըստություն է տիրում։ Այժմ Հայաստանի կոմունիստական կուսակցությունը պարծանքով կարող է հայտարարել, որ միայն նա կարողացավ հաստատել խաղաղությունը և բարի դրացիական հարաբերությունները հարևան պետությունների հետ»[1]։

Ուշագրավ է նաև Ադրբեջանի կոմունիստական կուսակցության Կենտկոմի քարտուղար Ս. Մ. Կիրովի ողջույնը։ «Մենք խորը համոզված ենք, որ Անդրկովկասի բոլոր հանրապետությունների միացման աշխատանքը մոտիկ ապագայում կպսակվի կատարյալ հաջողությամբ և այդ իսկ ակտով ազգամիջյան հաշտությունն էլ ավելի անխախտ կդառնա, անդրկովկասյան ժողովուրդների եղբայրությունն անհողդողդ կմնա»[2]։

* * *

ՌԿ(բ)Կ XI համագումարում (1922 թվականի մարտ), Կենտկոմի քաղաքական հաշվետվության մեջ Վ. Ի. Լենինն ամփոփվելով նոր տնտեսական քաղաքականության մեկ տարվա արդյունքները, ընդգծեց, որ «մենք մի տարի նահանջում էինք։ Այժմ մենք պետք է ասենք կուսակցության անունից, բավակա՛ն է։ Մենք հասել ենք այն նպատակին, որը հետապնդում էր այդ նահանջը։ Այդ շրջանը վերջանում է, կամ վերջացել է։ Այժմ առաջ է մղվում ուրիշ նպատակ՝ ուժերի վերախմբավորումը»[3]։ Վ. Ի. Լենինը միաժամանակ նշեց, որ ուժերի այդ վերախմբավորման նպատակն է նախապատրաստել հարձակումը մասնավոր կապիտալի դեմ տնտեսական բնագավառում։

Գնահատելով նեպի մեկ տարվա արդյունքների նշանակությունը, Վ. Ի. Լենինն ընդգծեց, որ այդ արդյունքները փայլուն կերպով ապացուցեցին կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության քաղաքականության ճշտությունը, որի շնորհիվ մեր երկրի բանվոր դասակարգը և աշխատավոր գյուղացիությունը ծավալելով իրենց ստեղծագործական ուժերը ժողովրդական տնտեսության վերականգնման գործում, ավելի ու ավելի կուռ շարքերով համախմբվեցին կոմունիստական կուսակցության ու սովետական կառավարության շուրջը։

Ջինված Վ. Ի. Լենինի ցուցումներով և ՌԿ(բ)Կ XI համագումարի որոշումներով, Հայաստանի բանվորներն ու գյուղացիները շարունակում էին հերոսական պայքարը հանրապետության ժողովրդական տնտեսության վերականգնման համար։

---

1 «Կոմունիստ» (Բաքու), 1921, № 238։

2 Նույն տեղում, № 236։

3 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 33, էջ 329։

Սովետական հանրապետությունների ձեռք բերած հաջողությունները ներքին քաղաքականության բնագավառում մեծ նշանակություն ունեցան նրանց միջազգային դրության ամրապնդման տեսակետից։ Նոր պայմաններում վճռական հակահարված տալով ներքին ու արտաքին թշնամիներին, սովետական պետությունը հաստատ կերպով իրականացնում էր իր լենինյան խաղաղասիրական քաղաքականությունը։

Մինչդեռ այդ ժամանակ կապիտալիստական աշխարհի դրությունը բնութագրվում էր ներքին ու արտաքին հակասությունների հարաճուն աճմամբ։ Ծավալվում էր արդյունաբերական ճգնաժամը, աճում էին հեղափոխական շարժումները, վերելք էին ապրում ազգային-ազատագրական շարժումները գաղութային և կիսագաղութային երկրներում։ Ավելի ու ավելի էին սրվում հակասությունները բուրժուական պետությունների միջև։

Սովետական պետության նկատմամբ միջազգային ռեակցիան՝ Անգլիայի, Ֆրանսիայի ու ԱՄՆ-ի իմպերիալիստների գլխավորությամբ, տվյալ ժամանակաշրջանում իր ծրագրերը կառուցում էր այն հաշվով, որ իբր թե սովետական իշխանությունը անկարող է սեփական ուժերով ու միջոցներով հաղթահարել ներքին դժվարությունները, վերացնել քայքայվածությունը, աղքատությունն ու սովը։ Նրանք հուսով էին, որ սովետական պետությունը հարկադրված կդիմի զիջումների, ստրկական պայմանագրեր կնքելով բուրժուական պետությունների հետ։ Միաժամանակ իմպերիալիստները մեծ հույսեր էին կապում մեր երկրի ներքին թշնամիների հետ, կարծելով, որ վերջիններին կհաջողվի կործանել սովետական պետությունը և վերականգնել շահագործողների տիրապետությունը։ Խաղաղ շինարարության մեկ տարվա հաջողությունները սովետական հանրապետություններում խորտակեցին միջազգային իմպերիալիստական ռեակցիայի այդ հույսերը։

1922 թվականի փետրվարի 22-ին Մոսկվայում կայացավ ՌՍՖՍՀ, ուկրաինական, բելոռուսական, վրացական, ադրբեջանական, հայկական, բուխարական-խորեզմական և հեռավորարևելյան հանրապետությունների ներկայացուցիչների խորհրդակցությունը։ Այդ խորհրդակցությունը միահամուռ որոշում ընդունեց սովետական հանրապետությունների ներկայացուցչությունը հանձնել Սովետական Ռուսաստանին՝ առաջիկայում կայանալիք Ջենովայի կոնֆերանսում բոլոր սովետական հանրապետությունների շահերը միասնաբար պաշտպանելու համար։ Այսպիսով, օտարերկրյա իմպերիալիստներին հակահարված տալու նպատակով, ստեղծվեց ուղը սովետական հանրապետությունների դիվանագիտական դաշինքը Սովետական Ռուսաստանի հետ, որը ոչ միայն Ջենովայի և Հաագայի կոնֆերանսների ժամանակ, այլև հետագայում խոշորագույն նշանակություն ունեցավ սովետական պետության լենինյան արտաքին քաղաքականության նորանոր հաղթանակների, նրա միջազգային դիրքերի ամրապնդման գործում։ Ջենովայի կոնֆերանսի սովետական պատվիրակության անդամ էր Սովետական Հայաստանի արտաքին գործերի ժողկոմ Ա. Բեդուդյանը։

Միջազգային ասպարեզում սովետական պետության վարած հաստատուն քաղաքականությունը, որը զգաստ կերպով հաշվի էր առնում իմպերիալիստական լագերի ուժերի հարաբերությունը և օգտագործում նրանց միջև առաջա-

ցած հակասությունները, հնարավորություն տվեց կուսակցությանը և սովետական կառավարությանը, որ առաջնորդվում էր Վ. Ի. Լենինի այն ցուցումով, թե «այժմ միջազգային հեղափոխության վրա մենք մեր գլխավոր ներգործությունն անում ենք մեր տնտեսական քաղաքականությամբ»[1], հիմնական ուշադրությունը կենտրոնացնել ներքին խնդիրների, տնտեսական շինարարությունն էլ ավելի լայն ճակատով ծավալելու վրա։

1922 թվականին Ճենովայում և Հաագայում տեղի ունեցած կոնֆերանսներում կապիտալիստական երկրները դիվանագիտական ճնշման միջոցով ձգտում էին Սովետական Ռուսաստանի վրին փաթաթել համաձայնության սպրլկական պայմանագրեր։ Ճենովայի կոնֆերանսում, օրինակ, եվրոպական կապիտալիստներն ամեն միջոց գործադրեցին պարտավորեցնելու Սովետական Ռուսաստանին վճարել ցարական կառավարության բոլոր պարտքերը և փոխառությունները, օտարերկրյա նախկին տերերին վերադարձնել Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակի շնորհիվ ազգայնացված բոլոր ֆաբրիկաներն ու գործարանները և այլն։ Կոնֆերանսում սովետական պատվիրակությունը վճռական հակահարված տվեց Անտանտի իմպերիալիստների փորձերին և մերժեց նրանց պահանջները։ Ճենովայի կոնֆերանսի որոշմամբ նույն թվականի հուլիսին Հաագայում հրավիրվեց եվրոպական երկրների նոր կոնֆերանս։ Այստեղ ևս, հանդիպելով սովետական պատվիրակության վճռական հակահարվածին Անգլիայի, Ֆրանսիայի և մյուս երկրների իմպերիալիստների հարձակումները սովետների երկրի դեմ ձախողվեցին։

Սովետական պատվիրակությունն այդ կոնֆերանսներում առաջարկելով անցկացնել սպառազինությունների ընդհանուր կրճատում, միաժամանակ ցուցադրեց սովետական կառավարության խաղաղասիրական քաղաքականությունը։ Չնայած այդ առաջարկը մերժվեց կոնֆերանսի կողմից, բայց ըստ էության կարևորագույն նշանակություն ունեցավ իմպերիալիստների՝ որպես նոր պատերազմի հրձիգների, մերկացման գործում։ Ճենովայի կոնֆերանսի ժամանակ Սովետական Ռուսաստանի և Գերմանիայի միջև Ռապալոյում կնքված պայմանագրով ճեղքվեց կապիտալիստական երկրների միասնական ճակատը։ Այդ պայմանագրով դիվանագիտական նորմալ հարաբերություններ հաստատվեց Սովետական Ռուսաստանի և Գերմանիայի միջև։

Սովետական կառավարությունը Ճենովայի և Հաագայի կոնֆերանսներում կարողացավ որոշակի հաջողություններ ձեռք բերել շնորհիվ այդ ժամանակ հաստատված սովետական բոլոր հանրապետությունների անսասան դիվանագիտական դաշինքի։

4. ՍՈՎԵՏԱԿԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Սովետական Հայաստանի ներքին դրության բարելավումը և ժողովրդական տնտեսության վերականգնման աշխատանքներն ընթանում էին Սովետական Ռուսաստանի կառավարության, ռուս մեծ ժողովրդի և սովետական մյուս ժողովուրդների կողմից ցույց տրվող եղբայրական օգնության, նրանց միջև

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 32, էջ 562։

հարաճուն կերպով ամրապնդվող բարեկամության և համագործակցության պայմաններում։

1921 թվականի մայիս-նոյեմբեր ամիսների ընթացքում Սովետական Ռուսաստանից օգնության կարգով Հայաստան է ուղարկվել 1.545 հազար ռուբլի ոսկեդրամ, 426 հազար փութ հացահատիկ և ալյուր, 50 հազար փութ ձուկ, 7000 փութ շաքար, 7 վագոն բրինձ, 1,5 միլիոն արշին մանուֆակտուրա, 10.173 գյուղատնտեսական գործիքներ, 12 վագոն դեղորայք, 12 հազար ձեռք զինվորական հանդերձանք, մի քանի հարյուր հազար գիրք, հազարավոր փթերով թուղթ, ոսկով 100 հազար ռուբլու արժողությամբ հագուստեղեն, մեծ քանակությամբ հեռախոսային և հեռագրական ապարատներ ու սարքավորում, 2 տպարանի, 1 ցինկոգրաֆիայի, 1 վիմագրատան և 2 կաղմատան սարքավորումներ, մեծ քանակությամբ լծկան անասուններ, ավտոմեքենաներ և այլն[1]։ Նույն ժամանակամիջոցում եղբայրական օգնության կարգով Սովետական Ադրբեջանից Հայաստան է ուղարկվել 1.177 հազար փութ վառելանյութ (մազութ, նավթ, բենզին, մեքենայի յուղ)[2]։

1922 թվականի փետրվարին Հայաստանի բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների սովետների դեպուտատների առաջին համագումարում Հայկական ՍՍՀ կառավարության հաշվետվության մեջ ամփոփելով 1921 թվականի սկզբներից մինչև 1922 թվականի սկիզբը Սովետական Ռուսաստանից ստացած օգնության արդյունքները, Ալ. Մյասնիկյանը նշել է, որ այդ ժամանակամիջոցում Հայաստանը Սովետական Ռուսաստանից ստացել է միայն դրամական օգնություն 3,5 միլիոն ռուբլի ոսկով[3]։ Համագումարը արձանագրել է, որ նույն ժամանակամիջոցում Ռուսաստանից Հայաստան է ուղարկվել 2.895 հազար փութ կենսամթերք և զանազան ապրանքներ[4]։

1921 թվականի անբերրիության հետևանքով Սովետական Ռուսաստանի մի շարք նահանգներում, հատկապես Միջին Վոլգայի շրջաններում բռնկված մեծ սովը ընդգրկել էր 23,3 միլիոն բնակչություն։ Մյուս նահանգների հետ միասին, որոնք համեմատաբար քիչ էին վնասվել երաշտից, 1921—1922 թվականներին Ռուսաստանում սովյալների թիվը հասնում էր 32 միլիոնի։

Ահա այդպիսի ծանր պայմաններում Սովետական Ռուսաստանը, եղբայրական օգնության ձեռք մեկնեց բոլոր այն ժողովուրդներին, որոնք կարիքի մեջ էին, այդ թվում նաև հայ ժողովրդին։ Սովետական Հայաստանի բանվորներն ու գյուղացիները իրենց հերթին, 1921—1922 թվականներին, Ռուսաստանում բռնկված սովի ժամանակ, իրենց սուղ միջոցներից բաժին էին հանում Ռուսաստանի սովյալներին։ Հօգուտ Ռուսաստանի սովյալների, Հայաստանի բանվորներն ու ծառայողները նվիրաբերում էին իրենց աշխատավարձը, ստացված կենսամթերքների նորմաները, կազմակերպում էին շաբաթօրյակներ։ Աշ-

---

1 Տե՛ս «Восстановление народного хозяйства Армянской ССР» (Материалы и документы за 1921—1928 гг.), Երևան, 1958, էջ 99—100։

2 Տե՛ս նույն տեղում։

3 Տե՛ս «Հայաստանի սոցիալիստական խորհրդային Հանրապետության բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների պատգամավորական խորհուրդների առաջին համագումարի արձանագրությունը», Երևան, 1922, էջ 18։

4 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 5 փետրվարի 1922 թ.։

խառտավոր գյուղացիները Սովետական Ռուսաստանի սովյալների համար գյուղատնտեսական տարբեր մթերքներ էին ուղարկում։ Ճիշտ է, այդ օգնությունը մեծ չէր, բայց այն կարևոր և ուսանելի է սովետական ժողովուրդների բարեկամության, նրանց եղբայրական ամուր կապերի առումով։

1921 թվականի գյուղատնտեսության համար անբարենպաստ պայմանների (մինչև հուլիս շարունակվող քաղաքացիական կռիվները, աշխատավոր ձեռքերի, գործիքների, սերմացուի պակասը և այլն) և որոշ գավառներում մոլախի պատճառած վնասների ու մասնակի անբերրիության հետևանքով 1922 թվականի սկզբներին սով է բռնկվում նաև Սովետական Հայաստանում, որն ընդգրկում է բնակչության մոտ մեկ քառորդը[1]։

Սովետական Հայաստանի Ժողովրդական կոմիսարների սովետի 1922 թվականի փետրվարի 8-ի որոշմամբ Սովետական Ռուսաստանի կողմից օգնության կարգով Հայաստան ուղարկված 75 հազար ռուբլին (ոսկով) հատկացվում է սովյալներին օգնելու ֆոնդին։ Բացի դրանից, նույն որոշմամբ այդ ֆոնդի համար կառավարության միջոցներից հատկացվում է ևս 300 հազար ռուբլի (ոսկով)[2]։

Ոչ լրիվ տվյալներով 1922 թվականի ընթացքում Սովետական Ռուսաստանից օգնության կարգով Հայաստան է ուղարկվել 1,5 միլիոն ռուբլի ոսկով, բացի դրանից, յուրաքանչյուր ամիս 166 հազար ռուբլի ոսկով՝ որպես դոտացիա, ավելի քան 110 վագոն հացահատիկ, 11 վագոն շաքար, 7 վագոն դեղորայք, մեկ տեքստիլ ֆաբրիկայի սարքավորում՝ 18 հազար իլիկով, 25 վագոն մանուֆակտուրա և մեծ քանակությամբ այլ տեսակի կենսամթերքներ, ապրանքներ ու սարքավորումներ[3]։

Շնորհիվ այդ օգնության և տնտեսական տարվա համեմատաբար հաջող արդյունքների, որոշ չափով բարելավվում է հանրապետության վիճակը։

Սովետական Ռուսաստանի և մյուս հանրապետությունների եղբայրական օգնությունը ավելի էր ոգևորում Հայաստանի աշխատավորներին սոցիալիզմի համար մղվող պայքարում։

---

1 Տե՛ս «Жизнь национальностей», 1922, № 11/17։

2 Տե՛ս «Восстановление народного хозяйства Армянской ССР» (Материалы и документы за 1921—1928 гг.), էջ 57։

3 Տե՛ս «Вестник Московского Комитета помощи Армении», М., 1923, № 1, էջ 13—16։

ԳԼՈՒԽ ՅՈԹԵՐՈՐԴ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԱՌԱՋԻՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ: ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՖԵԴԵՐԱՑԻԱՑԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ: ՍՍՀՄ-Ի ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ

1. ՍՈՎԵՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանում սովետական կարգերի հաստատման սկզբնական շրջանում իշխանության օրգաններն էին հեղափոխական կոմիտեները՝ հեղկոմները, որոնք ծնունդ էին այն ժամանակաշրջանում երկրում տիրող քաղաքական բարդ իրադրության։ 1920 թվականի նոյեմբերին Հայաստանում գոյություն չունեին բանվորների, գյուղացիների ու զինվորների պատգամավորների սովետներ, որոնք, ապստամբության հաղթանակի դեպքում, կարող էին իշխանությունը վերցնել իրենց ձեռքը։

Ինչպես ասվեց, Հայաստանում սովետական իշխանության հաստատման առաջին իսկ օրից, որպես իշխանության պետական օրգաններ, կազմակերպվել էին հեղափոխական կոմիտեներ։ Նրանք կատարում էին ինչպես բարձրագույն, նույնպես և տեղական իշխանության պարտականությունները։ Իշխանության բարձրագույն օրգանն էր հանդիսանում Հայաստանի սովետական սոցիալիստական հանրապետության հեղափոխական կոմիտեն։

Երկրի ներքին գործերի բարձրագույն վարչական մարմնի պարտականությունը դրված էր ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատի վրա, որն իրականացնում էր իշխանության կազմակերպումը տեղերում, ղեկավարում էր բոլոր տեղական, գավառական և քաղաքային հեղկոմները։ Կատարելով այդ պարտականությունները, ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատը մեծ աշխատանք տարավ նոր, սովետական ապարատի կազմակերպման, ղեկավարման և ամրապնդման ուղղությամբ։

Տեղերում իշխանության օրգաններն էին հանդիսանում գավառակային (շրջանային) և գյուղական հեղկոմները։

1921 թվականի հունիսի 20-ին հրապարակվեց Հայկական ՍՍՀ Ժողովրդական կոմիսարների սովետի դեկրետը գյուղական, գավառային և գավառակային հեղկոմների մասին, որն օրենսդրական կարգով հաստատեց հեղկոմների, որպես սովետական իշխանության կառավարման տեղական օրգանների գոյությունը։

«Մինչև ՀՍԽՀ սահմանադրության մշակումը,— ասված էր դեկրետում,— կազմակերպվում են տեղական հեղափոխական կոմիտեներ (հեղկոմներ) հետևյալ հիմունքներով.

1. Հեղկոմները ժամանակավոր սովորադասական կարգով նշանակովի իշխանություններ են.

2. Հեղկոմների նպատակն է՝

ա) Խորհրդային իշխանության ամրապնդումը տեղերում։

բ) Խորհուրդների ընտրությունների և համագումարների նախապատրաստությունը։

գ) Երկրի կառավարելը, մինչև որ կկազմակերպվեն ընտրովի խորհրդային մարմիններ։

3. Հեղկոմները, ըստ սովորադասական կարգի, բաժանվում են՝ ա. գյուղական, բ. գավառամասային և գ. գավառական հեղկոմներին»[1]։

Դեկրետում սահմանված էին հեղկոմների կոնկրետ խնդիրներն ու պարտականությունները։

Գյուղական հեղկոմներն առանձին բաժիններ չունեին։ Նրանք իրենց խնդիրներն իրականացնում էին անմիջականորեն, առանց բաժինների։ Այդ հեղկոմների աշխատանքներին օժանդակելու համար գյուղի աշխատավորության մասնակցությամբ կազմակերպվում էին գյուղական տնտեսության, կուլտուրական, ժողովրդական սեփականության պահպանության, կարմիրբանակայինների ընտանիքներին ծառայող, ճանապարհների պահպանության, առողջապահության, բանվորա-գյուղացիական տեսչության աջակցող հանձնաժողովներ։ Յուրաքանչյուր հանձնաժողովի համար մանրամասն հրահանգներ էր մշակելու գավառային հեղկոմը։

Գավառակային հեղկոմները հանդիսանում էին սովետական իշխանության միակ իրավազոր մարմինը գավառակի սահմաններում։ Նրանք միավորում և ղեկավարում էին իրենց ենթակա բոլոր գյուղական հեղկոմների աշխատանքները։ Գավառակային հեղկոմներն ունեին հետևյալ բաժինները. ա) վարչական, բ) ժողովրդական լուսավորության, գ) գյուղական տնտեսության, դ) պարենավորման և ե) ղինվորական։ Դեկրետում մանրամասն կերպով շարադրված էին գավառակային հեղկոմների պարտականություններն ու խնդիրները յուրաքանչյուր բնագավառում[2]։

Գավառային հեղկոմների մասին դեկրետում ասված էր. «Յուրաքանչյուր գավառում կազմակերպվում է գավառական Հեղկոմ, որը գավառի բարձր իշխանությունն է և ենթակա է ՀՍԽՀ ժողկոմների խորհրդին։ Գավառային հեղկոմների պարտականությունն է միացնել, հսկել և ղեկավարել իրենց ենթակա գավառակային և գյուղական հեղկոմների գործունեությունը»[3]։ Գավառային հեղկոմներն ունեին վարչական, ղինվորական, քաղաքական (հակահեղափոխության դեմ պայքարող), սոցիալական ապահովության և աշխատանքի, ժողովրդական լուսավորության, հողային, ֆինանսական, պարենավորման, առողջապահության, բանվորա-գյուղացիական տեսչության և այլն, ընդամենը

1 «ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու», պրակ 2, էջ 76։

2 Տե՛ս նույն տեղում, էջ 77։

3 Նույն տեղում, էջ 81։

13 բաժին, որոնք, բացի գավառային Հեղկոմից, վերջինիս միջոցով ենթարկվում էին նաև համապատասխան ժողովրդական կոմիսարիատներին։

Հեղկոմների կազմի մեջ էին մտնում բանվորների, բատրակների, աշխատավոր գյուղացիության և ինտելիգենցիայի ներկայացուցիչները։ Կուսակցական ղեկավարությունը հեղկոմներում իրականացվում էր նրանցում ընդգրկված կոմունիստների և տեղական կուսակցական կազմակերպությունների միջոցով։ Սովետական կարգերի թշնամիներն ամեն կերպ ձգտում էին թափանցել հեղկոմների կազմում։ Որոշ տեղերում, ինչպես, օրինակ, Դարալագյազում, Բաշ-Գյառնիում, նրանց հաջողվել էր խցկվել գյուղական և նույնիսկ գավառական հեղկոմների կազմում։

Ինչպես նշվեց, հեղկոմները, իր տարբերությամբ սովետների, իրենց գոյության հենց սկզբից, նշանակովի օրգաններ էին, որն օրենքի ուժով հաստատվեց Հայկական ՍՍՀ Ժողովրդական կոմիսարների սովետի 1921 թվականի հուլիսի 20-ի դեկրետով։ Գյուղական հեղկոմների կազմը նշանակվում էր գավառակային Հեղկոմի կողմից, գավառակայինը՝ գավառային Հեղկոմի, գավառայինը՝ Հայաստանի Հեղկոմի, իսկ 1921 թվականի մայիսի 21-ից՝ Հեղկոմին փոխարինած Հայկական ՍՍՀ Ժողովրդական կոմիսարների սովետի կողմից։

Լինելով իշխանության բուրժուական մարմին, հեղկոմներն իրենց գոյության մոտ մեկ տարվա ընթացքում Հայաստանում հսկայական դեր կատարեցին թշնամական ուժերի ջախջախման, սովետական կարգերի ամրապնդման, մասսաների քաղաքական և աշխատանքային ակտիվության բարձրացման գործում։

Հեղկոմներին վստահված սովետական իշխանության հիմնական օղակներն էին հանդիսանում ժողովրդական կոմիսարիատները և մյուս հաստատությունները, որոնցից յուրաքանչյուրն ուներ իր գործունեության որոշակի բնագավառը։

Լինելով երկրի ներքին և արտաքին յուրահատուկ պայմաններում ստեղծված իշխանության արտակարգ օրգաններ և խոշոր դեր կատարելով սովետական կարգերի ամրապնդման գործում, 1921 թվականի վերջերին հեղկոմներն այլևս չէին ապահովում խաղաղ շինարարության բազմապիսի խնդիրների կենսագործումը։ Այժմ անհրաժեշտ էր հեղկոմները փոխարինել ընտրովի, հետևաբար ավելի դեմոկրատական օրգաններով՝ բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների դեպուտատների սովետներով։

Սովետները, շնորհիվ իրենց կառուցվածքի և կազմակերպչական ճկունության, ավելի լայն ու ամուր կապեր պետք է հաստատեին մասսաների հետ, կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ կազմակերպեին, գլխավորեին և առաջ մղեին աշխատավորների պայքարը հետամնաց ու քայքայված Հայաստանը առաջավոր սոցիալիստական հանրապետության դարձնելու համար։

Հայաստանի կոմունիստական կուսակցության I համագումարում (1922 թվականի հունվար) սովետական շինարարության մասին տված զեկուցման մեջ անդրադառնալով այդ հարցին, Ալ. Մյասնիկյանը նշել է. «Մեր աշխատանքի երկրորդ շրջանը տևել է հուլիսից մինչև աշուն (1921 թվականի — խմբ.), երբ թշնամիներին հաղթահարել էինք և ապահովությամբ կարող էինք

շինարար աշխատանքի անցնել։ Բայց արդյունավետ աշխատանք կատարելու համար մենք կազմակերպված խորհրդային մարմիններ ու ապարատներ չունեինք, ուստի այս շրջանում պետական օրգանների կազմակերպման հարցն ամենահրթիռականն էր...

– Եթե մեր կոմիսարիատները որոշ պակասություններ ունեցել են, այդ պակասությունների մի մասն առաջացել է մեր հեղկոմների սիստեմից։ Իսկ այժմ, երբ մենք անցնում ենք խորհուրդների սիստեմին, ապա կարելի է հուսալ, որ նման սխալները վերացվելու են[1]»։

1921 թվականի նոյեմբերի 19-ին հրապարակվում է ՀՍՍՀ Ժողովրդական կոմիսարների սովետի որոշումը՝ սովետների ընտրությունները նախապատրաստող և անցկացնող հանրապետական կենտրոնական հանձնաժողով կազմակերպելու մասին։ Այդ որոշման հիման վրա նման հանձնաժողովներ են կազմակերպվում նաև քաղաքներում ու գավառներում։ Նոյեմբերի 20-ին լույս է տեսնում դեպուտատների սովետների ընտրության ժամանակավոր կանոնադրությունը, որի համաձայն գյուղերում, քաղաքներում, գավառակներում ու գավառներում իշխանության օրգանները լինելու էին սովետները, որոնք հաշվետու էին իրենց ընտրողների առջև։ Համապատասխան դեպուտատների սովետներն իրենց աշխատանքները համագումարների միջև ընկած ժամանակաշրջանում իրականացնելու էին գործադիր մարմինների՝ գյուղսովետի, քաղսովետի, գավառամասային սովետի, գավառային գործադիր կոմիտեի և Կենտրոնական գործադիր կոմիտեի միջոցով։

Բացի ընտրությունների կարգից, կանոնադրությունում սահմանված էին սովետների անելիքները, քաղաքացիների մասնակցության կարգը ընտրություններին և այլն[2]։ Այդ կանոնադրությունը դարձավ ՀՍՍՀ ապագա սահմանադրության հիմքը։

Վերոհիշյալ կանոնադրության հիման վրա 1921 թվականի դեկտեմբերին Սովետական Հայաստանի քաղաքներում, գյուղերում, գավառամասերում և գավառներում տեղի են ունենում դեպուտատների սովետների առաջին ընտրությունները, որոնք անցնում են աշխատավորական մասսաների ամենաակտիվ մասնակցությամբ և ամենուրեք տալիս են լավագույն արդյունքներ։

1921 թվականի դեկտեմբերի 27-ին, Հայաստանում առաջինը բացվում է Ալեքսանդրապոլ քաղաքի բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների դեպուտատների սովետի նիստը, որտեղ զեկուցումներ են լսվում ընթացիկ մոմենտի և Անդրկովկասյան Ֆեդերացիայի կազմակերպման մասին։ Ալեքսանդրապոլի քաղսովետի նիստում որոշվում է միանալ Անդրֆեդերացիայի կազմակերպման համար ծավալված համաժողովրդական շարժմանը։

Երևան քաղաքի բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների դեպուտատների սովետի առաջին նիստը բացվում է 1922 թվականի հունվարի 1-ին։ Մայրաքաղաքի սովետի առաջին նիստը ջերմագին ողջույն է ուղարկում Երևանի քաղաքային սովետի պատվավոր անդամ ընտրված Վ. Ի. Լենինին։ Հեռագրում ասված էր.

«Երևանի քաղսովետի պատվավոր անդամ ընկեր Լենինին.

1 ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 114, ց. 2, գ. 5, թ. 88։

2 Տե՛ս «ՀՍՍՀ դեկրետների և հրամանների ժողովածու», № 3, 1921, հոդվ. 87։

Երևան քաղաքի բանվորների, կարմիրբանակայինների դեպուտատների վերընտրված սովետն իր պատվավոր անդամին և առաջին պրոլետարական հեղափոխության թանկագին առաջնորդին հղում է ջերմագին ողջույն։

Սովետական Հայաստանի բանվորներն ու գյուղացիները, մեծ սովետական ֆեդերացիայի ընդհանուր ընտանիքում, խաղաղ պայմաններում կռում են կոմունիստական հասարակական հիմքերը, նվիրվելով իմպերիալիստների ու նրանց լակեյների՝ հայկական նացիոնալիստական կուսակցությունների կողմից քարուքանդ արված իրենց օջախների վերականգնման ստեղծարար աշխատանքներին։ Հայաստանի աշխատավորները դրա համար երախտապարտ են Հոկտեմբերյան մեծ հեղափոխությանը և առաջին հերթին համաշխարհային պրոլետարիատի դասակարգային պայքարը ղեկավարող Ձեր հանճարին։

Հավատարիմ լինելով Հոկտեմբերյան հեղափոխության պատգամներին, Երևան քաղաքի բանվորների ու կարմիրբանակայինների դեպուտատների սովետը, որը ամուր կանգնած է սովետական ֆեդերացիայի պրոլետարիատի նվաճումների պաշտպանության դիրքերում՝ նրա հարավային սահմանի վրա, անդրդվելիորեն հավատում է միջազգային հեղափոխության հաղթանակին»[1]։

Անդրկովկասյան Ֆեդերացիայի մասին զեկուցումը լսելուց հետո սովետը մայրաքաղաքի բոլոր աշխատավորների անունից արտահայտվում է Անդրֆեդերացիայի կազմակերպման անհրաժեշտության օգտին։

Երևանի քաղաքային սովետի առաջին նիստը հատուկ կոչ է ուղղում բոլոր երկրների բանվորներին։ Կոչում ընդգծվում էր, որ սովետական կարգերի հաստատմամբ հայ ժողովուրդը ձեռք է բերել իսկական ազատություն և անկախություն, սկսվել է նրա պատմության նոր շրջանը։ «Աղքատ ու քայքայված մեր երկրում,— ասված էր կոչում,— մենք ոգով արի ենք, չենք վհատվում, համարձակ ու եռանդուն նոր կյանք ենք ստեղծում, մեր կոմունիստական հասարակությունը կառուցում»[2]։

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՎԵՏՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ։ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

Սովետների առաջին ընտրությունների ընթացքում Հայաստանի գյուղերում, գավառներում և գավառակներում հեղկոմների փոխարեն, որպես իշխանության տեղական օրգաններ, ընտրվեցին բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների դեպուտատների սովետները։

Խաղաղ շինարարության պայմաններում հանրապետության առաջ ծառացած նոր խնդիրները նշելու, երկրի հիմնական օրենքը՝ առաջին սահմանադրությունն ընդունելու և կենտրոնական գործադիր կոմիտեի ընտրությունն իրականացնելու նպատակով անհրաժեշտ էր գումարել Հայաստանի բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների դեպուտատների սովետների առաջին համագումարը, որը կայացավ Երևանում, 1922 թվականի հոկտեմբերի 30-ից մինչև փետրվարի 4-ը։

Համագումարին մասնակցում էր 252 պատգամավոր, որից վճռական ձայնի իրավունքով՝ 239, խորհրդակցական ձայնի իրավունքով՝ 13։ Նրանք

1 «Աշխատավորների նամակները Վ. Ի. Լենինին», էջ 435—436։

2 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 114, ց. 2, գ. 5, թ. 86։

ընտրվել էին սովետների գավառային համագումարներում։ 218 պատգամավոր կոմունիստական կուսակցության անդամ-թեկնածուներ էին։ Ըստ սոցիալական կազմի պատգամավորները ներկայացնում էին հետևյալ պատկերը. գյուղացիներ՝ 154, բանվորներ՝ 40, ծառայողներ՝ 24, կարմիրբանակայիններ և հրամանատարներ՝ 34, ըստ ազգային կազմի —հայեր՝ 212, ռուսներ՝ 21, ադրբեջանցիներ՝ 14, քրդեր՝ 2, ասորի՝ 1, լեհ՝ 1, հույն՝ 1։ Կին պատգամավորների թիվը 17 էր[1]։

Համագումարը հաստատեց ՀՍՍՀ սահմանադրությունը, լսեց ու քննարկեց ՀՍՍՀ կառավարության հաշվետվությունը, Անդրկովկասի Սովետական Հանրապետությունների Ֆեդերացիայի կազմակերպման, տնտեսական շինարարության, գյուղական տնտեսության և հողային քաղաքականության, կոոպերացիայի, պարենավորման, սոցիալական ապահովության, կարմիր բանակի մասին զեկուցումները։ Համագումարում տեղի ունեցավ նաև Հայաստանի Կենտգործկոմի ընտրությունը[2]։

Սովետական Հայաստանի կառավարության մեկ տարվա գործունեության մասին համագումարը լսեց Ժողկոմսովետի նախագահ Ալ. Մյասնիկյանի զեկուցումը։ Վերլուծելով երկրի դրությունը, Ալ. Մյասնիկյանը ցույց տվեց, որ մեկ տարվա ընթացքում տնտեսության վերականգնման ուղղությամբ հանրապետությունում զգալի աշխատանքներ են կատարվել։

Չնայած սուղ միջոցներին և ծանր պայմաններին,— նշել է նա,— Սովետական Հայաստանի կառավարությունն իր գոյության մեկ տարվա ընթացքում զգալի օգնություն է ցույց տվել աշխատավոր գյուղացիությանը։

Խոսելով արդյունաբերության մասին, Ալ. Մյասնիկյանը նշել է, որ կարգի են բերվել և սկսել են գործել արդյունաբերական ձեռնարկությունների որոշ մասը։

Սակայն հանրապետությունում սոցիալիստական շինարարության հետագա առաջընթացը պահանջում էր եղբայրական էլ ավելի սերտ դաշինք, տնտեսական, քաղաքական և ռազմական ծավալուն համագործակցություն հաստատել սովետական մյուս հանրապետությունների հետ։

Հայաստանի բանվորների, գյուղացիների, կարմիրբանակայինների ներպատառաների սովետների առաջին համագումարի կարևորագույն խնդիրներից մեկն էր քննարկել և հաստատել Սովետական Հայաստանի առաջին սահմանադրությունը (հիմնական օրենքը)։ Դա խոշորագույն պատմական իրադարձություն էր հայ ժողովրդի կյանքում։

Սովետական կարգերի հաղթանակը հայ ժողովրդին փրկեց կործանումից և նրան տվեց իսկական ժողովրդական պետականություն, տնտեսական, քաղաքական ու կուլտուրական զարգացման լայն հնարավորություններ, որի հիման վրա 1922 թվականին Սովետների համահայաստանյան առաջին համագումարն ընդունեց Սովետական Հայաստանի առաջին սահմանադրությունը։

ՀՍՍՀ սահմանադրության մասին զեկուցեց Ա. Մռավյանը։ Զեկուցողը

---

1 Տե՛ս «Հայաստանի սոցիալիստական խորհրդային հանրապետության բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների պատգամավորական խորհուրդների առաջին համագումարի արձանագրությունը», էջ 128։

2 Տե՛ս նույն տեղում։

ցույց տվեց, որ Սովետական Հայաստանի սահմանադրությունը բանվորների և գյուղացիների իշխանության հիմնական օրենքն է և արմատապես տարբերվում է բուրժուական ամեն տեսակի սահմանադրություններից, որոնք օրենսդրականորեն ամրապնդում են շահագործողների տիրապետությունը։

Հայկական ՍՍՀ-ի սահմանադրությունը մշակվել էր Վ. Ի. Լենինի «Աշխատավոր ու շահագործվող ժողովրդի իրավունքների դեկլարացիայի» դրույթների հիման վրա և 1918 թվականի հուլիսին ընդունված ՌՍՖՍՀ-ի սահմանադրության սկզբունքներով։

Հայաստանի բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների դեպուտատների սովետների առաջին համագումարում ընդունված Հայկական ՍՍՀ առաջին սահմանադրությունը բաղկացած էր 5 հատվածից, ուներ 12 գլուխ և 89 հոդված։

Սահմանադրությունը օրենսդրականորեն ամրապնդեց 1920 թվականի նոյեմբերի 29-ի և 1921 թվականի քաղաքացիական կռիվներում կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ Հայաստանի բանվորների և գյուղացիների ձեռք բերած պատմական հաղթանակները։

Սահմանադրության առաջին հատվածում տրված են սովետական իշխանության հիմնական սկզբունքները։ «Հայաստանի ապստամբ բանվորների և աշխատավոր գյուղացիների կամքով Հայաստանը 1920 թվականի նոյեմբերի 29-ին հայտարարված է սոցիալիստական խորհրդային հանրապետություն։

Ամբողջ իշխանությունը կենտրոնում և տեղերում պատկանում է բանվորների, գյուղացիների և կարմիր զինվորների պատգամավորական խորհուրդներին»[1]։ Դրան հաջորդող հոդվածներում ասված է, որ հանրապետությունում բոլոր աշխատավորները, անկախ ազգությունից ու դավանանքից, օգտվում են հավասար իրավունքներով և բոլոր աշխատավորների համար աշխատանքը պարտադիր է՝ «ով չի աշխատում, նա չի ուտում»։

Հողը, նրա ընդերքը, անտառները, բանկերը, երկաթուղիներն ու խոշոր արդյունաբերությունը հայտարարվեցին սոցիալիստական սեփականություն։ Շահագործող դասակարգի ներկայացուցիչները և ուրիշի աշխատանքով ապրողները զրկվեցին քաղաքական իրավունքից։ Աշխատավորների քաղաքական ակտիվության բարձրացման համար սահմանադրությունը ապահովում էր բոլոր հնարավորությունները՝ նիստեր, ժողովներ, միտինգներ, ցույցեր կազմակերպելը, մամուլի օգտագործումը և այլն։ Հաստատվեց եկեղեցու անջատումը պետությունից, դպրոցի անջատումը՝ եկեղեցուց։ Սահմանադրությունը սահմանեց, որ հանրապետությունում աշխատավորների համար կստեղծվեն բոլոր հնարավորությունները ձրի կրթություն ստանալու համար։

Սահմանադրությամբ չեղյալ հայտարարվեցին Հայաստանի վերաբերյալ բոլոր միջազգային պայմանագրերը, որոնք կնքվել էին նախկին կառավարության կողմից։ Մերժելով ամեն տեսակի ազգային ճշնամանքը, հիմնական օրենքը սահմանեց, որ հանրապետության տերիտորիայում գտնվող բոլոր ազգերի համար ստեղծվելու են զարգացման լայն հնարավորություններ և որ հա-

---

1 «Հայաստանի սոցիալիստական խորհրդային հանրապետության բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների պատգամավորական խորհուրդների առաջին համագումարի արձանագրություն», էջ 133։

րևան բոլոր ժողովուրդների հետ կհաստատվեն բարի դրացիական հարաբերություններ։

Սահմանադրության մեջ ձևակերպված էր քաղաքացիների սրբազան պարտականությունը սոցիալիստական հայրենիքի պաշտպանության գործում. «Բանվորների և չունևոր գյուղացիների դասակարգային հեղափոխական դիկտատուրան ապահովելու և արտաքին ու ներքին հակահեղափոխությունից պաշտպանելու նպատակով,— ասված է 9-րդ հոդվածում,— կազմվում է ՀՍԽՀ կարմիր բանակը, բոլորի համար պարտադիր դարձնելով զինվորական ծառայությունը»[1]։

Սահմանադրությունը հաստատելով հին դատարանի վերացումը, սահմանեց, որ սովետական կարգերում արդարադատությունը հանձնարարվում է նոր, ժողովրդական դատարանին, որի խնդիրն է պաշտպանել սովետական պետության և ժողովրդի շահերը։

Սահմանադրության 11-րդ հոդվածը օրենսդրականորեն ամրապնդում էր պրոլետարիատի դիկտատուրան։

Երկրորդ հատվածը նվիրված էր սովետական իշխանության կենտրոնական ու տեղական օրգաններին և նրանց պարտականություններին։ Հանրապետության իշխանության գերագույն օրգանը համարվում էր բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների դեպուտատների սովետների համագումարը։ Համագումարն ընտրում էր կենտրոնական գործադիր կոմիտե, որն իշխանության գերագույն օրգանն էր համարվում՝ սովետների համագումարների միջև ընկած ժամանակամիջոցում և հաշվետու էր սովետների համագումարի առջև։ Ըստ սահմանադրության, այն գումարվելու էր տարին մեկ անգամ։ Կենտրոնական գործադիր կոմիտեն էր կազմելու հանրապետության կառավարությունը՝ ժողովրդական կոմիսարների սովետը։ Հանրապետությունում սահմանվում էին արտաքին գործերի, ներքին գործերի, արդարադատության, ժողովրդական լուսավորության, ռազմական, ֆինանսների, հողագործության, պարենավորման, արտաքին առևտրի, սոցիալական ապահովության, փոստ-հեռագրի, առողջապահության, բանվորա-գյուղացիական տեսչության, աշխատանքի և հաղորդակցության ճանապարհների ժողովրդական կոմիսարիատներ։ Կազմակերպվում էր նաև ժողովրդական տնտեսության Գերագույն խորհուրդ։

Հիմնական օրենքը սահմանում էր, որ սովետական իշխանության տեղական օրգաններն են համարվում բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների դեպուտատների քաղաքային ու գյուղական սովետները, իսկ գավառներում՝ գավառային գործադիր կոմիտեները։ Սովետների գավառային համագումարի համար գյուղական վայրերի 1000 բնակչից ընտրվում էր մեկ պատգամավոր, իսկ քաղաքի 200 ընտրողից՝ մեկ պատգամավոր։ Ընտրական նման նորմաների սահմանումը ելնում էր քաղաքի և գյուղի բնակչության դասակարգային կազմից և նպատակ ուներ ապահովելու բանվոր դասակարգի ղեկավար դերը սովետական իշխանության օրգաններում։

Սահմանադրության երրորդ հատվածը նվիրված էր ընտրական իրավունքի

---

1 «Հայաստանի սոցիալիստական խորհրդային հանրապետության բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների պատգամավորական խորհուրդների առաջին համագումարի արձանագրությունը», էջ 135։

և ընտրություններին կարգին։ Չորրորդ հատվածում խոսվում էր բյուջեի, իսկ հինգերորդում՝ հանրապետության պետական գերբի և դրոշի մասին։

Հայաստանի բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների դեպուտատների առաջին համագումարը միահամուռ կերպով հաստատեց հանրապետության առաջին սահմանադրությունը, որը հիմք դրեց պրոլետարական դեմոկրատիզմին։

Այսպիսով, Հայկական ՍՍՀ առաջին սահմանադրությունը քաղաքական բնագավառում հենվելով սոցիալիզմի տարած հաղթանակի վրա, օրենսդրականորեն ամրապնդեց սովետական իշխանության՝ որպես պրոլետարիատի դիկտատուրայի պետական ձևի կառուցվածքի հետևյալ հիմնական սկզբունքները. բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների դեպուտատների սովետների միջոցով աշխատավորական լայն մասսաների ընդգրկումը պետության կառավարման գործում, հեղափոխական օրինականության ամրապնդումը, շահագործողների անողոք ճնշումը, աշխատավորական մասսաների համար սահմանված դեմոկրատական իրավունքների և ազատությունների իրականացման նպատակով նյութական նախադրյալների ստեղծումը, սովետական պետական ապարատի հիմնադրումը՝ դեմոկրատական ցենտրալիզմի հիմունքներով։

Հայկական ՍՍՀ առաջին սահմանադրությունը խոշորագույն նշանակություն ունեցավ աշխատավորական մասսաներին կոմունիստական կուսակցության և սովետական իշխանության շուրջը համախմբելու գործում։ Միաժամանակ մեծ նշանակություն ունեցավ կապիտալիստական տարբեր երկրներում տառապող բազմահազար հայ աշխատավորության համար։ Համագումարում Անդրկովկասյան Ֆեդերացիայի կազմակերպման մասին զեկուցումով հանդես եկավ Ա. Մռավյանը։ Համագումարն անհրաժեշտ համարեց Անդրկովկասյան Ֆեդերացիայի կազմակերպումը։

Հանրապետության բոլոր աշխատավորների անունից համագումարը սրտագին ողջույնի և երախտագիտության խոսք ուղղեց Համառուսաստանյան Կենտրոնական գործադիր կոմիտեի նախագահ Մ. Ի. Կալինինին, հանձին նրա՝ ռուս մեծ ժողովրդին, որի եղբայրական օգնությամբ հայ ժողովուրդը փրկվեց կործանումից և ձեռք բերեց իր ազատությունը։

«Հայաստանի խորհուրդների համագումարն առաջինն է,— ասված էր ողջույնի մեջ,— որ իրականացնում է երկրի իշխանությունը ամբողջ աշխատավորությանը հանձնելու փառավոր ժամը և հիացմունքով ու սիրով լի իր հայացքը, իր հոգու անկեղծ խոսքն է ուղղում բանվորա-գյուղացիական Ռուսաստանին։ Համագումարը գիտակցում է այն օգնությունը, որ Խորհրդային Ռուսաստանը ցույց է տվել մեր երկիրը Արևմտյան Եվրոպայի իմպերիալիստների ու նրանց ծառա դաշնակիների լծից ազատելու գործում։ Համագումարն իր շնորհակալությունն է ուղղում Ռուսաստանի փառավոր կարմիր բանակին, որը Հայաստանի մասսաներին աջակցեց խորհրդային իշխանության կարմիր դրոշակը բարձրացնելու համար։

Իր ջերմ ողջույնն ուղղելով Ռուսաստանի բանվորա-գյուղացիական և կարմիր զինվորների պատգամավորական խորհուրդների Կենտրոնական գործադիր կոմիտեին, Հայաստանի խորհուրդների համագումարը համառուսական

ԿԴ կոմիտեին հայտնում է Հայաստանի աշխատավորության կամքը՝ մենք մեր հաղթական դրոշակը բարձր կպահենք և ոչ մի ուժ այդ դրոշակը մեր ձեռքից խլել չի կարող»[1]։

Համագումարը հատուկ դիմում ուղղեց գաղութահայ աշխատավորությանը, որտեղ ասված էր, որ հանձին սովետական իշխանության, հայ ժողովուրդը ձեռք է բերել իր պետականությունը ու ազատությունը և այժմ նա ունի իր սուրբ հայրենիքը, մեծ եռանդով ձեռնամուխ է եղել նրա վերաշինության խաղաղ աշխատանքներին։ Ազատագրված ժողովրդի անունից ողջունելով գաղութահայ աշխատավորությանը, համագումարը կոչ էր անում նրան համախմբել իր ուժերը, շարունակել պայքարը դաշնակցականների և մյուս թշնամիների դեմ, օգնել վերաշինվող հայրենիքին[2]։

Համագումարի աշխատանքներին մասնակցում էր և ելույթ ունեցավ հայ ժողովրդի լավագույն բարեկամ Գ. Կ. Օրջոնիկիձեն։ Նա ասաց. «Ես ձեզ կոչ եմ անում ընկերներ, նորոգել քանդված Հայաստանը, վերականգնել նրա տնտեսությունը, օգնել կարմիր բանակին...»[3]։

Հայաստանի սովետների առաջին համագումարն ընտրեց հանրապետության կենտրոնական գործադիր կոմիտեի առաջին կազմը՝ բաղկացած 75 անդամից, 17 թեկնածուից։

Կենտրոնական գործադիր կոմիտեի կազմում ընտրվեցին Ալ. Մյասնիկյանը, Ա. Միկոյանը, Գ. Օրջոնիկիձեն, Հ. Հովսեփյանը, Ս. Սրապիոնյանը (Լուկաշին), Ս. Համբարձումյանը, Ա. Մռավյանը, Ա. Կարինյանը, Աշ. Հովհաննիսյանը, Լիսինը, Ե. Գենկինը և ուրիշներ։

Համագումարից հետո տեղի ունեցավ կենտգործկոմի նստաշրջանը, որը կենտգործկոմի նախագահ ընտրեց Ս. Համբարձումյանին։ Կենտգործկոմը հաստատեց Հայկական ՍՍՀ կառավարության՝ ժողովրդական կոմիսարների սովետի կազմը Ալ. Մյասնիկյանի նախագահությամբ։

1922 թվականի հունվարի 26—29-ը Երևանում կայացավ ՀԿ(բ)Կ I համագումարը։ ՀԿ(բ)Կ Կենտկոմի հաշվետվությամբ հանդես եկավ Կենտկոմի քարտուղար Ս. Լուկաշինը։ Հաշվետվության մեջ վերլուծվեց Հայաստանի կոմկուսի 1920—1921 թվականների գործունեությունը և նշվեցին նրա հետագա խնդիրները ժողովրդական տնտեսության վերականգնման համար մղվող պայքարում։

Կենտկոմի հաշվետու զեկուցման առթիվ ընդունված բանաձևում համագումարը նշեց, որ Հայաստանի կոմկուսի շարքերը միասնական են և որ այդ հանգամանքը հիմք կծառայի սոցիալիզմի կառուցման համար մղվող աշխատավորության պայքարը ղեկավարելու ապագա գործում։

Համագումարում ՌԿ(բ)Կ XI կոնֆերանսի արդյունքների մասին զեկուցումով հանդես եկավ Հայկական ՍՍՀ ժողկոմսովետի նախագահ Ալ. Մյասնիկյանը։ Կոնֆերանսը, որը կայացել էր 1921 թվականի դեկտեմբերին, մի

---

1 «Հայաստանի սոցիալիստական խորհրդային հանրապետության բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների պատգամավորական խորհուրդների առաջին համագումարի արձանագրությունը», էջ 148—149։

2 Տե՛ս նույն տեղում, էջ 150—151։

3 Նույն տեղում, էջ 116։

շարք կարևոր որոշումներ էր ընդունել երկրի տնտեսական շինարարության խնդիրների, ինչպես նաև կուսակցության շարքերի հետագա ամրապնդման մասին։ Այդ որոշումների ոգով զեկուցման մեջ առաջ քաշվեցին Հայաստանի կոմկուսի կոնկրետ խնդիրները։ Հայաստանի կոմկուսի I համագումարը առանձնահատուկ ուշադրություն դարձրեց սովետական շինարարության և Անդրկովկասյան Ֆեդերացիայի կազմակերպման հարցերին, որի մասին զեկուցումով հանդես եկավ Ալ. Մյասնիկյանը։ Զեկուցման մեջ հանգամանորեն ցույց է տրված հանրապետության կուսակցական կազմակերպությունների կատարած խոշոր աշխատանքը սովետական շինարարության և Անդրկովկասյան Ֆեդերացիայի կազմակերպումը նախապատրաստելու ուղղությամբ։ Գյուղում կատարվող աշխատանքի մասին զեկուցեց հողագործության ժողովրդական կոմիսար Ար. Երզնկյանը։

Համագումարն ընտրեց ՀԿ(բ)Կ կենտկոմի նոր կազմ, վերստուգիչ հանձնաժողով և Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների I համագումարի պատգամավորներ։

Առաջին համագումարը ցույց տվեց Հայաստանի կոմկուսի գաղափարական միասնությունը, նրա շարքերի միաձուլությունը կուսակցության գլխավոր գծի համար մղվող պայքարում։

Համագումարում Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեի անդամներ ընտրվեցին Ալ. Մյասնիկյանը, Ս. Լուկաշինը, Ս. Համբարձումյանը, Աշ. Հովհաննիսյանը, Ա. Մռավյանը, Շ. Ամիրխանյանը, Դ. Հանեսօղլյանը, Ս. Էվոյանը և ուրիշներ, թվով 17 հոգի։ Համագումարից հետո տեղի ունեցած Կենտկոմի պլենումը Կենտկոմի քարտուղար է ընտրում Աշ. Գ. Հովհաննիսյանին։

Կուսակցությունը միշտ էլ մեծագույն ուշադրություն է դարձրել իր շարքերի անաղարտության, նրա անխախտելի միասնության պահպանման և ամրապնդման վրա։ «Կուսակցությունը մի կամավոր միություն է,— գրել է Վ. Ի. Լենինը,— որն անխուսափելիորեն կկազմալուծվեր, սկզբում գաղափարապես, իսկ հետո նաև նյութապես, եթե որ նա իրեն չմաքրեր այն անդամներից, որոնք հակակուսակցական հայացքներ են քարոզում»[1]։

Առաջնորդվելով ՌԿ(բ)Կ X համագումարի որոշումներով, Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունները 1921 թվականի դեկտեմբեր և 1922 թվականի հունվար-փետրվար ամիսներին կատարեցին իրենց շարքերի ստուգում և զտում։ Հայաստանի կոմկուսից ստուգումը և զտումը անցան 8251 հոգի, որից կուսակցության անդամներ էին 3046-ը, իսկ թեկնածուներ՝ 5205-ը[2]։ Հայաստանի կոմկուսի անդամ-թեկնածուների քանակի այդպիսի փոխհարաբերությունը, երբ թեկնածուների քանակը կուսակցության ընդհանուր կազմի 63 տոկոսից ավելի էր, պետք է բացատրել նրանով, որ Հայաստանում սովետական իշխանության հաստատումից հետո, մինչև այդ ստուգումը և զտումը, կուսակցության շարքերում մեծ քանակությամբ նոր մարդիկ էին ընդունվել, որոնց մի զգալի մասը պատահական ու խորթ տարրեր դուրս եկան։ Ստուգ-

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 10, էջ 43։

2 Տե՛ս «Известия Кавказского Бюро ЦК РКП(б)», Թիֆլիս, 1922, № 2, էջ 21։

ման և զտման հետևանքով կուսակցության շարքերից վտարվեցին 2262 հոգի, այսինքն՝ ընդհանուր կազմի 27,5 տոկոսը կամ անդամների 21,5, թեկնածուների՝ 29,4 տոկոսը։ Եթե մինչև ստուգումը և զտումը Հայաստանի կոմկուսի շարքերում բանվորները կազմում էին 10,5, գյուղացիները՝ 75,4 և ծառայողները՝ 14,1 տոկոս, ապա դրանից հետո այդ տոկոսները փոփոխվեցին հետևյալ կերպ. բանվորներն արդեն կազմում էին 13,6, գյուղացիները՝ 74,8 և ծառայողները՝ 11,6 տոկոս[1]։

Այդ ժամանակ Հայաստանի կոմկուսի սկզբնական կազմակերպությունների (բջիջների) թիվը ամբողջ հանրապետությունում հասնում էր 260-ի, որից 76-ը՝ քաղաքներում, 184-ը՝ գյուղերում[2]։

Ստուգման և զտման հետևանքով էլ ավելի բարձրացավ ՀԿ(բ)Կ-ի մարտունակությունը։

3. ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակով բոլոր ազգերն ու ժողովուրդները ազատագրվելով ազգային ու սոցիալական ճընշումից, գտան իրենց ազատ ու երջանիկ կյանքի իսկական ուղին, ձեռնամուխ եղան սոցիալիզմի կառուցման մեծ գործին։

Նոր հասարակարգի կառուցումը հաջողությամբ իրականացնելու համար անհրաժեշտ էր հաղթահարել հին կարգերից ժառանգած ազգային թշնամանքը, անվստահությունն ու սահմանափակվածությունը, անհրաժեշտ էր կազմակերպել և ամրապնդել ազգերի ու ժողովուրդների պետական դաշինքն ու համագործակցությունը՝ տնտեսական, քաղաքական, ռազմական և կուլտուրական փոխադարձ օգնության հիմունքներով։

Ղեկավարվելով ազգությունների իրավահավասարության, բարեկամության և եղբայրական համագործակցության լենինյան սկզբունքներով, Սովետների համառուսաստանյան III համագումարը 1918 թվականի հունվարին ստեղծեց առաջին սովետական ֆեդերացիան՝ ՌՍՖՍՀ։ Համագումարի կողմից ընդունված դեկլարացիայում Ռուսաստանի Ֆեդերացիայի մասին ասված էր. «Ռուսաստանի Սովետական Հանրապետությունը հիմնվում է ազատ ազգերի ազատ միության հիմունքով, իբրև սովետական ազգային հանրապետությունների ֆեդերացիա»[3]։

Սովետական Ռուսաստանի Ֆեդերացիայի փորձը և օրինակը կարևոր նշանակություն ունեցավ մեր երկրի ժողովուրդների պետական համագործակցության հետագա ուղիների կանխագծման գործում։ Ռ Կ(բ)Կ VIII համագումարում (1919) ընդունված կուսակցության ծրագրում ասված էր. «...որպես անցման ձևերից մեկը դեպի լիակատար միասնություն տանող ուղու վրա, կու-

1 Տե՛ս «Известия Кавказского Бюро ЦК РКП(б)», № 2, էջ 21—22։

2 Տե՛ս Մ.Ի. հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 253, թ. 2—3։

3 Վ. Ի. Լենին, երկեր, հատ. 26, էջ 517։

սակցությունը առաջադրում է սովետական տիպով կազմակերպված պետությունների ֆեդերատիվ միավորումը»[1]։

Սովետական ֆեդերացիան արմատապես տարբերվում է բուրժուական ֆեդերացիայից։ Որպես բազմազգ պետության նոր, ավելի բարձր ձև, սովետական ֆեդերացիայի հիմքը հանդիսանում է պրոլետարիատի դիկտատուրան, որը հաստատել է արտադրության միջոցների ու գործիքների հանրային սեփականություն, հետևողականորեն իրականացրել ազգերի ու ժողովուրդների բարեկամության և եղբայրական համագործակցության քաղաքականությունը։

Առաջնորդվելով կոմունիստական կուսակցության ազգային քաղաքականությամբ և հաշվի առնելով Ռուսաստանի Ֆեդերացիայի փորձը, Անդրկովկասի սովետական հանրապետություններն իրենց գոյության առաջին իսկ ամիսներից որոշակի քայլեր կատարեցին միմյանց միջև եղբայրական հարաբերություններ հաստատելու, փոխադարձաբար իրար օգնելու ուղղությամբ։ Մյուս կողմից, իրավահավասարության հիման վրա Սովետական Ռուսաստանի հետ կնքելով դաշնակցային պայմանագրեր, նրանք պետական-քաղաքական ամուր դաշինք հաստատեցին։

Անդրկովկասի այն ժամանակի պայմաններում անհրաժեշտություն էր՝ հաստատել երկրամասի սովետական հանրապետությունների պետական դաշինքը՝ Անդրկովկասյան Ֆեդերացիան, որը պետք է ավելի ամրապնդեր երկրամասի ժողովուրդների եղբայրական կապերը, միավորեր Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի ուժերն ու միջոցները։

Դեռևս 1921 թվականի ապրիլին Վ. Ի. Լենինը հույս էր հայտնում, որ Կովկասի սովետական հանրապետությունների «սերտ դաշինքը կստեղծի ազգային խաղաղության մի այնպիսի օրինակ, որը չի տեսնված բուրժուազիայի ժամանակ և անհնարին է բուրժուական հասարակարգում»[2]։

Կովկասի ազգությունների բանվորների և գյուղացիների ազգային խաղաղությունը, եղբայրական դաշինքը և սերտ համագործակցությունը Վ. Ի. Լենինը համարում էր սովետական իշխանության պահպանման և զարգացման, սոցիալիզմի կառուցման կարևորագույն նախադրյալ։

Առանձնապես ընդգծելով սովետական հանրապետությունների հոժարակամ միություն ստեղծելու գործում եղած լուրջ դժվարությունները, Վ. Ի. Լենինը գրել է. «Այդպիսի միությունը չի կարելի միանգամից իրագործել, դրան հարկավոր է հասնել մեծագույն համբերությամբ և զգուշությամբ աշխատելով, որպեսզի գործը չփչանա, որպեսզի անվստահություն չառաջանա, որպեսզի վերացվի այն անվստահությունը, որը մնացել է կալվածատերերի և կապիտալիստների դարավոր ճնշումից, մասնավոր սեփականության և դրա բաժանման ու վերաբաժանման համար եղած դարավոր թշնամանքից»[3]։

Անդրկովկասյան Ֆեդերացիայի ստեղծման անհրաժեշտությունը պայմանավորված էր տնտեսական ու քաղաքական մի շարք նկատառումներով։

Սոցիալիզմի կառուցումը հաջողությամբ իրականացնելու համար անհրաժեշտ էր երկրամասի սովետական հանրապետությունների ներքին բոլոր մի-

1 «ՍՄԿԿ-ն... բանաձևերում ու որոշումներում», մասն I, էջ 527։

2 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 32, էջ 402։

3 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 30, էջ 368։

ջոցների ու հնարավորությունների համատեղ օգտագործումը, այդ հանրապետությունների տնտեսական սերտ համագործակցությունը և փոխադարձ օգնությունը, նրանց սերտ դաշինքը Սովետական Ռուսաստանի ու մյուս սովետական հանրապետությունների հետ։ Ֆեդերացիայի ստեղծումը հնարավորություն կընձեռեր Անդրկովկասի սովետական հանրապետությունների միջև եղած տնտեսական մեկուսացվածությունը վերացնելու համար, որն ավելի ուժեղացել էր Անդրկովկասի բուրժուական կառավարությունների օրոք։

Երկրամասի սովետական հանրապետությունների զարգացման տվյալ ժամանակաշրջանում ֆեդերացիան պետական դաշինքի այն միակ ճիշտ ձևն էր, որն ավելի լայն հնարավորություններ կստեղծեր ազգերի միջև խաղաղություն և եղբայրական համագործակցություն հաստատելու, հին կարգերից ժառանգված ազգային մեկուսացվածությունն ու թշնամանքը վերացնելու համար։

Ֆեդերացիայի ստեղծումը հնարավորություն կտար միավորել Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի սովետական հանրապետությունների ռազմական ուժերը, ամրապնդել նրանց դիվանագիտական դաշինքը։

Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունները Գ. Կ. Օրջոնիկիձեի, Ս. Մ. Կիրովի և Ա. Ֆ. Մյասնիկյանի ղեկավարությամբ մեկ կողմից շարունակում էին ծավալուն ագիտացիոն-քաղաքական աշխատանք հօգուտ Ֆեդերացիայի կազմակերպման, նրա գաղափարների ամրապնդման, մյուս կողմից աստիճանաբար կարևոր միջոցառումներ էին իրականացնում երկրամասի սովետական հանրապետությունների դաշինքի և համագործակցության ամրապընդման ուղղությամբ։

1921 թվականի ապրիլի 20-ին հրապարակվեց Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի միջև կնքված համաձայնագիրը Անդրկովկասի երկաթուղիների միավորման մասին։ «Շահագործման ենթակա բոլոր երկաթուղիները,— ասված էր համաձայնագրի առաջին կետում,— որ անցնում են Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի սովետական հանրապետությունների սահմաններով, միավորվում են Անդրկովկասյան հանրապետությունների երկաթուղիների մեկ ընդհանուր ցանցի մեջ»[1]։ Այդ համաձայնագրի իրականացման շնորհիվ զգալիորեն ամրապնդվեցին դաշնակից հանրապետությունների տնտեսական կապերը։

Երկաթուղիները միավորելուց երկու ամիս հետո, 1921 թվականի հունիսի 25-ին հրապարակվեց Անդրկովկասի երեք հանրապետությունների արտաքին առևտրի միավորման համաձայնագիրը, որտեղ արտացոլվել էին եղբայրական այդ հանրապետությունների արտաքին շուկաներում միասնաբար հանդես գալու հիմնական սկզբունքները։

Համագործակցության նման կապերը գործնականում ավելի ու ավելի էին համոզում Անդրկովկասյան Ֆեդերացիայի ստեղծման անհրաժեշտությունը։

1921 թվականի նոյեմբերի 3-ին Ռ(բ)Կ Կենտկոմի կովկասյան բյուրոյի պլենումը քննության առավ ֆեդերացիայի կազմակերպման հարցերը։ «Ան-

---

1 «Образование СССР», Сборник документов. 1917—1924 гг. (հետագայում՝ «Образование СССР»), М.-Л., 1949, էջ 271։

դրկովկասյան հանրապետությունների մեկուսացած պետական գոյությունը,— ասված էր պլենումի ընդունած բանաձևում,— նրանց թուլացնում է կապիտալիստական ու բուրժուական երկրների առաջ։ Սերտ քաղաքական միությունը ամուր երաշխիք կլինի, որ հակահեղափոխական ուժերը ոչ մի դատնձգություն չեն անի նրանց դեմ, և կամրացնի սովետական իշխանությունը Մերձավոր արևելքի սահմանագլխին։

Քաղաքական միավորումը հանրապետություններին հնարավորություն կտա միմյանց միջև տնտեսական սերտ միություն հաստատել, որպիսի փորձեր քանիցս արվել են։ Մինչդեռ հանրապետությունների բաժանվածությունը խորացրեց Անդրկովկասի տնտեսական առանց այն էլ ծանր կացությունը, ժողովրդական մասսաների աղքատությունն ու քայքայումը և առաջ բերեց մի շարք թյուրիմացություններ հանրապետությունների միջև։ Անդրկովկասն իրենից ներկայացնում է տնտեսական մեկ միասնական միավոր և նրա տնտեսական զարգացումը կարող է ընթանալ միայն ընդհանուր կովկասյան տնտեսական համախմբման ձևով։

Վերջապես, բազմաթիվ ժողկոմատների և հիմնարկությունների գոյությունը երեք հանրապետություններում կլանում է շատ ուժեր ու միջոցներ...

Ելնելով սրանից, կովկասյան բյուրոն, անհետաձգելիորեն անհրաժեշտ է համարում ֆեդերատիվ դաշինքը հանրապետությունների միջև նախ և առաջ ռազմական, տնտեսական, ֆինանսական, աշխատանքի և արտաքին քաղաքականության ասպարեզում»[1]։

1921 թվականի նոյեմբերի 7-ին Թիֆլիսում տեղի ունեցավ Անդրկովկասյան երկրային կոմակցական 2-րդ խորհրդակցությունը, որտեղ լսվեց Գ. Կ. Օրջոնիկիձեի զեկուցումը ֆեդերացիայի ստեղծման ուղղությամբ Վրաստանում, Ադրբեջանում և Հայաստանում կատարվող աշխատանքների ընթացքի մասին։ Զեկուցման առթիվ միաձայն ընդունված բանաձևում երկրային կոմակցական 2-րդ խորհրդակցությունն ընդգծելով ֆեդերացիայի կազմակերպման ուղղությամբ երկրամասում ծավալված հսկայական ագիտացիոն-քաղաքական աշխատանքները, անհրաժեշտ համարեց արագացնել ֆեդերացիայի կազմակերպման գործը։

Անդրկովկասյան Ֆեդերացիայի կազմակերպման անհրաժեշտության մասին Ռ(բ)Կ Կենտկոմի կովկասյան բյուրոյի պլենումի վերոհիշյալ բանաձևը նույն թվականի նոյեմբերի վերջերին ներկայացվեց Ռ(բ)Կ Կենտկոմի հաստատմանը։ Վ. Ի. Լենինը ծանոթանալով այդ որոշմանը, Կենտկոմի քաղբյուրոյի հաստատմանը ներկայացնելու նպատակով նոյեմբերի 29-ին կազմում է Անդրկովկասյան Հանրապետությունների Ֆեդերացիա կազմակերպելու վերաբերյալ առաջարկի նախագիծ։

Նախագծում ասված էր. «1) Անդրկովկասյան Հանրապետությունների Ֆեդերացիան համարել սկզբունքորեն բացարձակապես ճիշտ և անպայման իրագործման ենթակա, սակայն գործնականապես անհապաղ իրագործելու իմաստով վաղաժամ, այսինքն՝ պահանջվում է որոշ ժամանակ քննարկման, պրոպագանդայի և սովետական եղանակով ներքևից անցկացնելու համար.

---

1 Ալեքսանդր Մյասնիկյան, Ընտիր երկեր, էջ 369։

2) առաջարկել (կովկասյան բյուրոյի միջոցով) Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի կենտրոնական կոմիտեներին՝ ֆեդերացիայի հարցն ավելի լայնորեն դնել կուսակցության և բանվորական ու գյուղացիական մասսաների քննարկմանը, հատկապես պրոպագանդա մղել ֆեդերացիայի օգտին և այն անցկացնել յուրաքանչյուր հանրապետության սովետների համագումարների միջոցով. մեծ օպոզիցիա լինելու դեպքում ճշտորեն և ժամանակին տեղեկացնել ՌԿԿ կենտկոմի քաղբյուրոյին»[1]։

Վ. Ի. Լենինի կազմած այս նախագիծը Անդրկովկասյան Սովետական Հանրապետությունների Ֆեդերացիայի ստեղծման մասին հաստատվում է Կենտկոմի քաղբյուրոյի նոյեմբերի 29-ի նիստում։

Դրանից հետո երկրամասում ֆեդերացիայի կազմակերպման ուղղությամբ տարվող նախապատրաստական աշխատանքները նոր թափ ու լայն ծավալ են ստանում։ Ադրբեջանի, Հայաստանի ու Վրաստանի աշխատավորությունը, կոմունիստական կազմակերպությունների ղեկավարությամբ, ամենուրեք իրենց հաստատ կամքն ու վճռականությունն են արտահայտում հօգուտ Անդրկովկասյան Սովետական Հանրապետությունների Ֆեդերացիայի կազմակերպման։

Հայաստանի կոմունիստական կուսակցության I համագումարը Անդրկովկասյան Հանրապետությունների Ֆեդերացիայի կազմակերպման մասին Ա. Ֆ. Մյասնիկյանի զեկուցման առթիվ ընդունած որոշման մեջ նշել է. «Ներկա պայմաններում Հայաստանում սովետական իշխանության կազմակերպվածությունը և ուժը կախված է Ադրբեջանի և Վրաստանի հետ սերտ կապից։ Այդ առումով Անդրկովկասյան Հանրապետությունների Ֆեդերացիան ամբողջովին համապատասխանում է մեր երկրի շահերին։ Անդրկովկասյան Ֆեդերացիան նշանակում է Անդրկովկասի հանրապետությունների ուժեղացում քաղաքական և միջազգային առումով։ Նա տնտեսապես իրար հետ կկապի Անդրկովկասի հանրապետությունները .և դրանով իսկ կբարձրացնի երկրի էկոնոմիկան։

Վերջապես ֆեդերացիան եղբայրական համագործակցություն կհաստատի Անդրկովկասի աշխատավոր ժողովուրդների մեջ և ուժեղ հարված կհասցնի նացիոնալիստական շմոլքին...

Այդ պատճառով էլ ողջունելով ֆեդերացիան, համագումարը հանձնարարում է Հայաստանի պատգամավորությանը կովկասյան առաջիկա համագումարում հաստատ կերպով պնդել ֆեդերացիայի իրականացումը մոտակա ժամանակում»[2]։

Հայաստանի բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների դեպուտատների սովետների առաջին համագումարի քննարկած հարցերից մեկն էր Անդրֆեդերացիայի կազմակերպման հարցը։ Համագումարը որոշեց. «Հայաստանի բանվորների, գյուղացիների և կարմիր զինվորների առաջին համագումարը խանդավառությամբ է ընդունում Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի խորհրդային Հանրապետությունների Ֆեդերացիայի հաստատված գաղափարը և հանձնարարում է Հայաստանի Կենտրոնական գործադիր կոմիտեին

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 33, էջ 136։

2 ՄԼԻ հայկական ֆիլիալի արխիվ, ՀԿ(բ)Կ առաջին համագումարի ստենոգրաֆիական հաշվետվությունը, էջ 42։

գործնական բոլոր միջոցները շտապորեն կատարել Ֆեդերացիան շուտով իրականացնելու համար»[1]։

Նույնպիսի որոշումներ են ընդունում նաև Ադրբեջանի ու Վրաստանի կոմունիստական կուսակցությունների և սովետների համագումարները։

Անդրկովկասյան Ֆեդերացիայի կազմակերպման համար ծավալված համաժողովրդական շարժմանը առաջավոր դիրքերում էր գտնվում Բաքվի բազմազգ պրոլետարիատը, որն ինտերնացիոնալ պայքարի հարուստ դպրոց էր անցել։

1922 թվականի մարտի 12-ին գումարվում է Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի Սովետական Հանրապետությունների Կենտրոնական գործադիր կոմիտեների լիազոր կոնֆերանսը, որը համագործակցության պայմանագիր է կնքում այդ երեք հանրապետությունների քաղաքական, տնտեսական ու ռազմական սերտ դաշինքի մասին։ Կազմակերպվում է Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի պետական միությունը։ Առաջին շրջանում այն կոչվում էր Անդրկովկասյան Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Ֆեդերատիվ Միություն։

Դրանով իսկ Անդրկովկասի սովետական հանրապետությունների միջև հաստատվեց ռազմա-քաղաքական և տնտեսական սերտ դաշինք, որի հիմունքները ձևակերպվեցին նրանց միջև կնքված համագործակցության պայմանագրում, ուր ասված էր.

«1. Հանրապետությունների միության բարձրագույն իշխանությունը հանդիսանում է Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի կառավարությունների կողմից հավասար թվով ընտրված ներկայացուցիչների լիիրավ կոնֆերանսը։

2. Լիիրավ կոնֆերանսի գործադիր մարմինը միութենական սովետն է, որի անդամներն ընդունվում և ետ են կանչվում կոնֆերանսի կողմից։

3. Միութենական սովետի իրավասության են անցնում ռազմական գործերը, ֆինանսները, արտաքին քաղաքականությունը, արտաքին առևտուրը, հաղորդակցության ճանապարհները, ժողովրդական կապը, պայքարը հակահեղափոխության դեմ և տնտեսական քաղաքականության ղեկավարությունը՝ պայմանավորվող հանրապետությունների տերիտորիաներում»[2]։

Պայմանագրի մնացած կետերում խոսվում էր միութենական սովետի ղեկավար օրգանների, նրանց խնդիրների, իրավունքների և փոխհարաբերությունների մասին։ Նրա վերջին՝ 13-րդ կետում սահմանված էր միութենական սովետի և ՌՍՖՍՀ-ի փոխհարաբերությունների կարգը։ Հիշյալ կետում ասված էր. «Հանրապետությունների միությունը ՌՍՖՍՀ-ի հետ փոխհարաբերություններ է հաստատում դաշնագրային պայմանագրի հիման վրա»[3]։

Այսպիսով, համագործակցության այդ պայմանագրով դրվեց Անդրկովկասյան Ֆեդերացիայի հիմքը։

---

1 «ՀՍԽՀ բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների պատգամավորական խորհուրդների առաջին համագումարի արձանագրությունը», էջ 120։

2 «Образование СССР», էջ 288։

3 Նույն տեղում, էջ 288—289։

Գնալով համագործակցությունը ավելի ու ավելի ընդարձակվեց։ Մինչև նույն թվականի վերջը, այսինքն անցած 8 ամիսների ընթացքում, երեք հանրապետությունների արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատների փոխարեն միութենական սովետին կից ստեղծվեց արտաքին հարաբերությունների բաժին։ Վերացվեցին մաքսատները մի կողմից Անդրկովկասի սովետական հանրապետությունների, մյուս կողմից՝ Անդրկովկասի ու Սովետական Ռուսաստանի միջև։ Միավորվեց երկրամասի փոստի և հեռագրի գործը։ Կազմակերպվեցին Անդրկովկասի Ֆեդերացիայի արտակարգ հանձնաժողով, բանվորա-գյուղացիական տեսչություն, ռազմա-ծովային գործերի, աշխատանքի ժողովրդական կոմիսարիատներ։ Գործնական լուրջ քայլեր կատարվեցին անդրկովկասյան միասնական դրամ ստեղծելու, երեք հանրապետությունների ֆինանսական կապերը ամրապնդելու ուղղությամբ[1]։

Այսպիսով, Անդրկովկասի Սովետական Ֆեդերատիվ Միության առաջին ութ ամիսների գործունեությունը ոչ միայն արդարացրեց աշխատավորական մասսաների սպասելիքները, այլև գործնականում ցույց տվեց ֆեդերացիայի կենսական մեծ ուժը Անդրկովկասի սովետական հանրապետությունների զարգացման տվյալ շրջանում։

Միութենական սովետի փորձի հիման վրա անհրաժեշտություն էր առաջացել ավելի լայնացնել երեք հանրապետությունների ֆեդերատիվ կապերը։ 1922 թվականի նոյեմբերի կեսերին Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի կենտրոնական գործադիր կոմիտեների ներկայացուցիչների խորհրդակցության ընդունած որոշման մեջ ասված էր. «Իր գոյության 8 ամսվա ընթացքում Անդրկովկասյան Ֆեդերացիան ապացուցեց ոչ միայն իր կենսունակությունը, այլև Անդրկովկասի ժողովուրդների միջև էլ ավելի սերտ և ամուր կապեր հաստատելու ձգտում, ինչպես նաև եղբայրական միասնության հաստատում վերջիններիս և մյուս սովետական հանրապետությունների միջև»[2]։

Այդ որոշման հիման վրա 1922 թվականի դեկտեմբերի 10—13-ը Բաքվում տեղի ունեցավ բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների դեպուտատների սովետների անդրկովկասյան առաջին համագումարը, որը նույնպես լիակատար հավանություն տվեց միութենական սովետի գործունեությանը։

Համագումարը լսեց Ս. Մ. Կիրովի զեկուցումը Անդրկովկասյան Ֆեդերացիայի արտաքին և ներքին դրության մասին։ Վերլուծելով սովետական հանրապետությունների միջազգային դրությունը, նա ցույց տվեց, թե ինչպես հաղթահարելով ներքին ու արտաքին բազմաթիվ դժվարություններ, սովետական հանրապետությունները գնալով ավելի ամրապնդվում էին։

Սովետական հանրապետությունների միության մասին համագումարում տված զեկուցման մեջ մերկացնելով բուրժուական նացիոնալիստներին, որոնք դեմ էին ֆեդերացիային, Գ. Կ. Օրջոնիկիձեն ասել է. «Վրացական նացիոնալիստները պահանջում են ոչնչացնել Անդրկովկասի Ֆեդերացիան, որովհետև չեն ուզում գործ ունենալ Ադրբեջանի և Հայաստանի հետ։

Ադրբեջանական նացիոնալիստները պահանջում են ոչնչացնել Անդրկովկասի Ֆեդերացիան, որովհետև չեն ուզում գործ ունենալ Հայաստանի և Վրաս-

1 Տե՛ս «Первый Закавказский съезд Советов», Թիֆլիս, 1923, էջ 30—32։

2 «Образование СССР», էջ 305։

տանի հետ։ Հայկական դաշնակցականները պահանջում են ոչնչացնել Անդրկովկասյան Ֆեդերացիան՝ հենց այդ նույն պատճառներով։

Իսկ ի՞նչ պետք է ասենք մենք, կոմունիստներս։ Դուք ուզում եք ոչնչացնել Անդրկովկասյան Ֆեդերացիան, որովհետև այստեղ մենք, Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի աշխատավոր մասսաներս միավորվում ենք միասնական եղբայրական ընտանիքի մեջ։ Դուք ուզում եք մեր անջատումը, որովհետև դուք գիտեք, որ մեր դաշինքն անպարտելի է։ Ո՛չ, այդ չի լինի։ Մենք միասնական ենք, մենք միասնական սեղմ ճակատով առաջ ենք գնում ընդդեմ միջազգային կապիտալիզմի լակեյների՝ մենշևիկների, դաշնակցականների, մուսավաթականների»[1]։ Գ. Կ. Օրջոնիկիձեի այս խոսքերը արժանանում են համագումարի մասնակիցների միասնական հավանությանը։

Սովետների անդրկովկասյան առաջին համագումարը վճռական հակահարված հասցրեց բուրժուական նացիոնալիստներին, որոնք ամեն ինչ անում էին Անդրկովկասյան Ֆեդերացիայի կազմակերպումը ձախողելու համար։

Համագումարում քննության առնվեցին նաև միութենական սովետի հաշվետվությունը, Անդրկովկասյան Ֆեդերացիայի սահմանադրության հարցը, ինչպես նաև տնտեսական շինարարության մի շարք հարցեր։ Լսվեց զեկուցում կարմիր բանակի ու նավատորմի մասին։

Սովետների անդրկովկասյան առաջին համագումարը որոշեց Անդրկովկասի Հանրապետությունների Ֆեդերատիվ Միությունը վերածել միասնական ֆեդերատիվ հանրապետության։ Դրանով ավարտվեց Անդրկովկասյան Սովետական Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետության ձևավորումը։

Համագումարն ընտրեց Անդրֆեդերացիայի գերագույն օրգան՝ Անդրկովկասյան Կենտգործկոմ, որը պետք է ղեկավարեր ֆեդերացիայի աշխատանքները անդրկովկասյան սովետների համագումարների միջև ընկած ժամանակամիջոցում։ Համագումարն ընտրեց նաև Սովետների համամիութենական առաջին համագումարի պատգամավորներ։

Շուտով կազմակերպվում է Անդրկովկասյան Ֆեդերացիայի կառավարությունը՝ Ժողովրդական կոմիսարների սովետը։ Համագումարում ընդունված սահմանադրության համաձայն, այն խնդիրները, որոնք հավասար չափով շոշափում էին Ադրբեջանի, Վրաստանի ու Հայաստանի շահերը և այդպիսով կապում այդ հանրապետությունները, միացնում մի տնտեսական-քաղաքական միավորման մեջ, հանձնվեցին Անդրկովկասի ֆեդերատիվ կառավարությանը։ Իսկ մնացած բոլոր խնդիրները՝ ներքին գործերը, արդարադատությունը, ժողովրդական լուսավորությունը, կուլտուրական շինարարությունը, առողջապահությունը, սոցիալական ապահովությունը և այլն՝ մնացին առանձին հանրապետությունների տնօրինությանը։

Անդրֆեդերացիան հիմնվում էր իր մեջ մտնող հանրապետությունների կամավոր համաձայնության, փոխադարձ վստահության և ինքնուրույնության վրա։ Ֆեդերացիան ամեն կերպ խթանում, պաշտպանում էր երկրամասի բոլոր ժողովուրդների զարգացումը, այն սերտորեն կապելով սոցիալիստական շի-

1 Գ. Կ. Օրջոնիկիձե, Ընտիր հոդվածներ և ճառեր, էջ 116—117։

նարարության, նրանց դասակարգային-ինտերնացիոնալ պայքարի խնդիրների հետ։

Անդրֆեդերացիայի ստեղծումը հանդիսացավ կոմունիստական կուսակցության լենինյան ազգային քաղաքականության հաղթանակը։ Նրա կազմակերպումով նոր էջ բացվեց Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի սովետական հանրապետությունների պատմության մեջ։ Սովետական Ռուսաստանի եղբայրական օգնությամբ այդ հանրապետությունների համատեղ աշխատանքն ու պայքարը մեծ թափ հաղորդեցին սոցիալիստական շինարարությանը։



Հ. Թոջկյան (Գայ)

Անդրկովկասյան Ֆեդերացիայի ստեղծման կապակցությամբ Հայաստանի Ժողկոմսովետի նախագահ և ռազմական գործերի ժողովրդական կոմիսար Ալ. Մռավյանենկյանը ղեկավար աշխատանքի է փոխադրվում Անդրկովկասյան երկրային կոմիտեն։

Հայաստանի Կենտգործկոմի 1922 թվականի հոկտեմբերի 17-ի որոշմամբ Սովետական Հայաստանի ռազմական գործերի ժողովրդական կոմիսար է նշանակվում 1918—1920 թվականների Ռուսաստանի քաղաքացիական կռիվների լեգենդար հերոս Գայը՝ Հայկ Դիմիտրի Թոջկյանը։ Իր գիտելիքները և ռազմական հարուստ փորձը ամբողջությամբ նա նվիրաբերում է Սովետական Հայաստանի երիտասարդ կարմիր բանակի կռիմանը և ամրապնդմանը։ Ամուր կապեր հաստատելով կարմիր բանակի զորամասերի և նրանց անձնակազմի հետ, Գայը անընդմեջ հետևում էր նրանց ռազմական և քաղաքական ուսուցման բարձրացմանը։ Հրամանատարական և շարքային կազմի համար նա հաճախ հանդես էր գալիս բովանդակալից դասախոսություններով, հաղորդելով 1918—1920 թվականների քաղաքացիական կռիվների հարուստ փորձը։ Նա առանձնահատուկ ուշադրություն էր դարձնում հայկական կարմիր բանակի համար ազգային հրամանատարական կադրեր պատրաստելու գործի վրա։ Գայը հաճախ այցելում էր Հայկական դիվիզիայի հրամանատարական դպրոցը, մտերմական զրույցներ ունենում նրա ունկնդիրների հետ։

1922 թվականի նոյեմբերի վերջին Հայաստանի ռազմական գործերի ժողովրդական կոմիսարիատը վերակազմվում է ղինվորական կոմիսարիատի։ Գայը հաստատվում է որպես հանրապետության ղինվորական կոմիսար։

1923 թվականի հունվարի 1-ի առթիվ Հայաստանի կարմիր բանակի անձնակազմին ուղղած հրամանում հանրապետության ղինվորական կոմիսար Գայը գրել է. «Մենք պարտավոր ենք պողպատի պես ամուր, խտացած շարքերով պաշտպանել այդ ստեղծագործիչ աշխատանքները հակահեղափոխության ոտնձգություններից, որպեսզի բանվորն ու գյուղացին հանգիստ հոգով գործի կպչեն։ Մենք կկատարենք այդ սուրբ պարտականությունը, և թող այդ իմանան Հայաստանի աշխատավորները»։

Մոտ հինգ ամիս աշխատելով Հայաստանում, Գայը նոր աշխատանքի է նշանակվում Սովետական Ռուսաստանում և 1923 թվականի մարտի 23-ին մեկնում Հայաստանից։

4. ՍՍՀՄ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄԸ։ ԱՆԴՐՖԵԴԵՐԱՑԻԱՆ ՍՍՀՄ ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐ ԱՆԴԱՄ

Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակից հետո, կոմունիստական կուսակցության առջև հրամայական խնդիր դրվեց՝ սոցիալիզմի կառուցումը ապահովելու համար համախմբել մեր լայնածավալ երկրի բոլոր ազգերի ու ժողովուրդների ուժերը, նախապատրաստել և կազմակերպել նրանց պետական միավորումը։ Ինչպես սոցիալիզմի կառուցման, նույնպես և սովետներն իրավահավասարության վրա հենված բազմազգ սոցիալիստական պետության ստեղծման համար առաջինը ուղի պետք է հարթեր մեր երկիրը։ Ըստ որում, այդ դժվարագույն հարցի լուծումը պահանջում էր բազմակողմանիորեն հաշվի առնել երկրի քաղաքական ու տնտեսական զարգացման առանձնահատկությունները, այնտեղ ապրող ազգերի ու ժողովուրդների, բոլոր սովետական հանրապետությունների կենսական շահերը։ Անհրաժեշտ էր, ելնելով պրոլետարական ինտերնացիոնալիզմի դիրքերից, հստակ կերպով մշակել նոր ստեղծվելիք բազմազգ սոցիալիստական պետության սկզբունքները, նրա կոնկրետ խնդիրները։

Ազատագրվելով կապիտալիստական շահագործումից և ձեռնամուխ լինելով սոցիալիստական հասարակարգի կառուցմանը, սովետական ժողովուրդը կանգնեց նոր դժվարությունների առջև։ Երկարատև պատերազմների հետևանքով ծայրահեղորեն քայքայվել էր երկրի տնտեսությունը։ Անջատ-անջատ ազգային սովետական հանրապետություններն անկարող էին իրենց սեփական ուժերով հաղթահարել քայքայված երկրի տնտեսական դժվարությունները։ Անհրաժեշտ էր միավորել սովետական հանրապետությունների տնտեսական, քաղաքական, դիվանագիտական ու ռազմական բոլոր ուժերն ու հնարավորությունները, նրանց միջև 1918 թվականի հունվարին ստեղծված Ռուսաստանի Սովետական Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետության օրինակով հաստատել ամուր պետական համագործակցություն։

1918—1921 թվականների ընթացքում սովետական ազգային հանրապետությունների միջև հաստատված համագործակցությունը զարգանալով ու ամրապնդվելով, վեր էր ածվել համաժողովրդական շարժման՝ հանուն այդ հանրապետությունների ֆեդերատիվ միավորման՝ Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմակերպման։

Այդ շարժման առաջին փուլն ընդգրկում է 1918—1921 թվականները, երբ ներքին հակասովետական ուժերի և օտարերկրյա ինտերվենտների դեմ մղվող պայքարում հաստատվեց սովետական հանրապետությունների ռազմա-բաղաքական դաշինքը, որով ապահովվեց թշնամու ջախջախումը։ Այդ դաշինքի կոնկրետ արտահայտությունը սովետական հանրապետությունների ռազմական ուժերի միավորումն էր, որի ընթացքում Սովետական Ռուսաստանի հերոսական կարմիր բանակը ստացավ մեր երկրի բոլոր ազգերի ու ժողովուրդների ամենաջերմ ու ամենագործուն աջակցությունը։ Կազմակերպվեցին ուկրաինական, բելոռուսական, լատիշական, ադրբեջանական, վրացական, հայկական և մի շարք այլ ազգային զորամասեր և միավորումներ։

Սովետական Ռուսաստանի հերոսական կարմիր բանակի հետ միասին, ազգային այդ զորամասերը խոշոր դեր կատարեցին հակահեղափոխական ուժերի ջախջախման, սովետական հայրենիքի պաշտպանության և ամրապնդման գործում։

Այսպիսով, սովետական ժողովուրդների ռազմա-քաղաքական դաշինքը հանդիսացավ այն կարևորագույն գործոններից մեկը, որը 1918—1921 թվականներին ապահովեց մեր հաղթանակը թշնամու դեմ մղած ծանր պայքարում։

Սովետական հանրապետությունների միավորման համար ծավալված շարժման երկրորդ փուլը ընդգրկում է 1921 թվականի վերջից մինչև 1922 թվականի սկիզբն ընկած ժամանակաշրջանը, երբ Սովետական Ռուսաստանի գլխավորությամբ ստեղծվեց այդ հանրապետությունների դիվանագիտական դաշինքը։ Հիշյալ դաշինքի շնորհիվ Ճենովայի և Հաագայի կոնֆերանսներում վրճռական հակահարված տրվեց Արևմուտքի իմպերիալիստներին։

Սովետական հանրապետությունների հետագա զարգացումը և քաղաքական ու տնտեսական նոր պայմանները գործնականում ցույց տվեցին, որ դաշինքի այն ձևերը, որոնք մինչև 1922 թվականը հաստատվել էին անջատ-անջատ սովետական հանրապետությունների միջև, իր ժամանակին մեծագույն դեր կատարելով հանդերձ, նոր պայմաններում, երբ ամբողջ երկրում ծավալվում էր խաղաղ տնտեսական շինարարությունը, արդեն անբավարար էին։ Արդեն անհրաժեշտ էր էլ ավելի ծավալել, բազմակողմանի դարձնել, էլ ավելի ամրապնդել այդ դաշինքը։ Սոցիալիզմի կառուցման համար անհրաժեշտ էր միավորել ժողովրդական բոլոր ուժերը, ապահովել երկրի ամուր պաշտպանությունը և ստեղծել բոլոր պայմանները սովետական ժողովուրդների բազմակողմանի զարգացման համար։

1920 թվականի հունիսին այդպիսի միավորման անհրաժեշտության մասին Վ. Ի. Լենինը գրել է. «...անհրաժեշտ է ձգտել ավելի և ավելի սերտ ֆեդերատիվ միության, նկատի ունենալով, առաջին՝ ամբողջ աշխարհի ռազմական տեսակետից անհամեմատ ավելի զորեղ իմպերիալիստական պետություններով շրջապատված սովետական հանրապետությունների գոյությունը պաշտպանելու անհնարինությունն առանց սովետական հանրապետությունների ամենասերտ դաշինքի. երկրորդ՝ սովետական հանրապետությունների տնտեսական սերտ դաշինքի անհրաժեշտությունը, առանց որի անիրագործելի է իմպերիալիզմի կողմից ավերված արտադրողական ուժերի վերականգնումը և աշ-

խատավորների բարեկեցության ապահովումը. երրորդ՝ միասնական, մի ընդհանուր պլանով բոլոր ազգերի պրոլետարիատի կողմից կարգավորվող համաշխարհային տնտեսության՝ որպես ամբողջության ստեղծման տենդենցը, որը միանգամայն ակնհայտորեն դրսևորվել է արդեն կապիտալիզմի օրով և անպայման ենթակա է հետագա զարգացման ու լիակատար ավարտման սոցիալիզմի օրով[1]։

Սովետական հանրապետությունների միավորման համար համաժողովրդական շարժման նոր, երրորդ փուլը սկսվեց 1922 թվականի կեսերից, որով և ավարտվեց ՍՍՀՄ-ի կազմավորումը։ Այդ շարժումը լայն ծավալ ընդունեց Անդրկովկասում, Ուկրաինայում, Բելոռուսիայում և Ռուսաստանում։ Կուսակցական կազմակերպությունների ժողովներում, սովետներում, աշխատավորության ժողովներում քննարկվում էր անկախ սովետական հանրապետությունների միավորման, միասնական սոցիալիստական պետության ստեղծման հարցը։ Ամենուրեք բանվորները, գյուղացիները և աշխատավոր ինտելիգենցիան արտահայտում էին իրենց վճռական կամքը հօգուտ միավորման։

1922 թվականի նոյեմբերին Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների երկրորդ խորհրդակցությունը լսեց Գ. Կ. Օրջոնիկիձեի զեկուցումը ՍՍՀՄ-ի կազմավորման մասին։ Զեկուցման առթիվ ընդունված բանաձևում նշվեց, որ խորհրդակցությունը հավանություն է տալիս ՍՍՀՄ-ի ստեղծման գաղափարին և անհրաժեշտ համարում, որ Վրաստանը, Ադրբեջանը և Հայաստանը մտնեն ՍՍՀՄ-ի մեջ Անդրկովկասյան Ֆեդերացիայի միջոցով[2]։ *Նույն օգով որոշումներ ընդունվեցին նաև Բաքվի, Թիֆլիսի, Երևանի, Սուխումի, Ղարաքիլիսայի, Նախիջևանի և այլ քաղաքների ու գյուղերի աշխատավորների ժողովները։*

Երևանի գավառի բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների պատգամավորների սովետների համագումարի բանաձևում ասված է, որ համագումարը «...տնտեսական, ֆինանսական և քաղաքական բնագավառներում անհրաժեշտ է համարում ավելի սերտ համագործակցություն հաստատել Անդրկովկասի սովետական սոցիալիստական հանրապետությունների, ինչպես նաև այդ հանրապետությունների և Սովետական Ռուսաստանի միջև։ Համագումարը գտնում է, որ միայն սովետական հանրապետությունների սերտ միությունը հնարավորություն կտա նրանց արագ վերածննդի և սովետական մեծ ֆեդերացիայի հաջող շինարարության համար»[3]։

Հայաստանի բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների դեպուտատների II համագումարը, որը կայացավ Երևանում 1922 թվականի նոյեմբերին, ի թիվս մյուս հարցերի, քննության առավ նաև ՍՍՀՄ կազմավորման հարցը։ Միաձայն ընդունված որոշումով համագումարը հավանություն տվեց Ռուսաստանի, Ուկրաինայի, Անդրկովկասի և Բելոռուսիայի միջև պետական դաշինք կնքելու, ՍՍՀՄ ստեղծելու գաղափարին։

Այդ հարցը քննարկվեց նաև Ադրբեջանի ու Վրաստանի սովետների համագումարներում, որոնք նույնպես անհրաժեշտ համարեցին ՍՍՀՄ-ի իրականա-

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 31, էջ 168։

2 Տե՛ս «Образование СССР», էջ 304։

3 Նույն տեղում, էջ 305։

յումը որպես՝ կարևորագույն առաջընթաց քայլ սովետական պետության հզորացման, երկրում սոցիալիզմի կառուցումը հաջողությամբ իրականացնելու համապարհին։

Բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների դելեգատների անդրկովկասյան առաջին համագումարը լսեց Գ. Կ. Օրջոնիկիձեի զեկուցումը ՍՍՀՄ-ի կազմավորման մասին։ Տալով երկրամասում ՍՍՀՄ-ի կազմակերպման ուղղությամբ կատարված նախապատրաստական աշխատանքների գնահատականը, Գ. Կ. Օրջոնիկիձեն նշել է. «Վերջերս բոլոր երեք հանրապետություններում ավարտված զավառական համագումարները միահամուռ կերպով կողմ արտահայտվեցին սովետական հանրապետությունների մի այնպիսի միության ստեղծելու, որը, լիովին ապահովելով սովետական հանրապետությունների ժողովուրդների կուլտուրական զարգացումը, պահպանելով նրանց լեզուն, գրականությունը և այլն, և միևնույն ժամանակ առանձին անկախ հանրապետությունները միավորելով մի ընդհանուր միութենական պետության մեջ, ամրապնդեր բոլոր սովետական հանրապետությունների հզորությունը։ Մենք կողմնակից ենք այդպիսի միության ստեղծելուն։ Այդպիսի միությունը մեր սովետական ընտանիքը դարձնում է անպարտելի մի ուժ»[1]։

Ձնկուցման առթիվ համագումարում ընդունված բանաձևում ասված էր, որ անհրաժեշտ է ՌՍՖՍՀ, Ուկրաինական, Բելոռուսական հանրապետությունները և Անդրկովկասյան Ֆեդերացիան լիակատար իրավահավասարության հիմունքներով միավորել մեկ միութենական պետության՝ ՍՍՀՄ-ի մեջ, ըստ որում յուրաքանչյուր հանրապետությանը իրավունք վերապահել ազատ կերպով դուրս գալու միությունից։ Միության քաղաքացիների համար պետք է սահմանել ընդհանուր և միասնական քաղաքացիականություն, իսկ նրա մայրաքաղաքը համարել Մոսկվան։

Սովետների անդրկովկասյան առաջին համագումարն ընտրեց սովետների համամիութենական առաջին համագումարի 91 պատգամավոր, որոնց թվում էին Գ. Օրջոնիկիձեն, Ալ. Մյասնիկյանը Ս. Կիրովը, Ն. Նարիմանովը, Ա. Ենուկիձեն, Ս. Քալֆարաձեն, Հ. Նազարեթյանը, Մ. Օրախելաշվիլին, Ա. Տոդորսկին, Կ. Ռատնեկը, Բունյաթ-Զադեն և ուրիշներ։ Հայաստանից այդ պատգամավորության թվում էին Ս. Լուկաշինը, Ս. Տեր-Դաբրիելյանը, Ս. Համբարձումյանը, Ի. Դովլաթյանը, Հ. Հովսեփյանը, Մ. Սահակյանը, Ռ. Դաշտոյանը, Հ. Ղարիբյանը, Վ. Մամիկոնյանը և ուրիշներ։

ՍՍՀՄ-ի ստեղծման անհրաժեշտության վերաբերյալ 1922 թվականի դեկտեմբերին համապատասխան որոշումներ ընդունեցին նաև Ուկրաինայի սովետների VIII և Բելոռուսիայի սովետների IV համագումարները։

Այն բանից հետո, երբ արդեն Ուկրաինայի, Անդրկովկասյան Ֆեդերացիայի և Բելոռուսիայի սովետների համագումարները միասնական որոշումներ էին ընդունել ՍՍՀՄ-ի ստեղծման մասին, 1922 թվականի դեկտեմբերի 23—27-ը Մոսկվայում կայացավ Սովետների համառուսաստանյան X համագումարը, որը լսեց ՌԿ(բ)Կ Կենտկոմի հանձնաժողովի զեկուցումը ՍՍՀՄ կազմակերպման մասին։ Համագումարը հավանություն տվեց սովետական հանրապետու-

1 Գ. Կ. Օրջոնիկիձե, Ընտիր հոդվածներ և ճառեր, էջ 112։

Թյունների պետական միավորման՝ Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմակերպման գաղափարին։

Սովետական հանրապետությունների պետական միավորման ճանապարհին կարևոր առաջընթաց քայլ հանդիսացավ ՌՍՖՍՀ, Ուկրաինայի, Բելոռուսիայի և Անդրկովկասյան Ֆեդերացիայի լիազոր պատգամավորությունների կոնֆերանսը, որը կայացավ 1922 թվականի դեկտեմբերի 29-ին և միահամուռ կերպով հաստատեց ՌԿ(բ)Կ Կենտկոմի հանձնաժողովի մշակած և Կենտկոմի կողմից հավանության արժանացած ՍՍՀՄ-ի կազմման մասին դեկլարացիայի և պայմանագրի նախագծերը։

1922 թվականի դեկտեմբերի 30-ին Մոսկվայում բացվեց ՍՍՀՄ-ի սովետների առաջին համագումարը, որին մասնակցում էին 2215 պատգամավոր, 1727-ը՝ ՌՍՖՍՀ-ից, 364-ը՝ ՈՒՍՍՀ-ից, 91-ը՝ ԱՍՖՍՀ-ից և 33-ը՝ ԲՍՍՀ-ից։

Համագումարը քննարկեց ՍՍՀՄ-ի կազմավորման մասին դեկլարացիան և պայմանագիրը (զեկուցող Ի. Վ. Ստալին) և ընտրեց ՍՍՀՄ Կենտրոնական գործադիր կոմիտե։

Համագումարի կողմից ընդունված դեկլարացիայում ընդգծված էր, որ միայն Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության հաղթանակի և պրոլետարիատի դիկտատուրայի հաստատման շնորհիվ հնարավոր եղավ մեր երկրում լիկվիդացնել ազգային ճնշումը, ստեղծել ժողովուրդների փոխադարձ վստահություն և դնել նրանց եղբայրական համագործակցության ամուր հիմքերը։ Դրա շնորհիվ սովետական հանրապետություններին հաջողվեց հաղթական կերպով ետ շպրտել պրոլետարիատի դիկտատուրայի ներքին թշնամիների և իմպերիալիստական պետությունների կատաղի հարձակումները։ Դեկլարացիան սահմանում էր, որ ՍՍՀՄ-ն իրավահավասար ժողովուրդների կամավոր միություն է, յուրաքանչյուր հանրապետության համար ապահովված է միությունից ազատորեն դուրս գալու իրավունք, որ նրա մեջ կարող են մտնել ինչպես գոյություն ունեցող, այնպես էլ ապագայում կազմակերպվելիք սովետական հանրապետությունները և, որ Սովետական Միությունն ամեն կերպ կնպաստի սովետական բոլոր ժողովուրդների զարգացմանը։

Պայմանագրի համաձայն այդ ժամանակ ՍՍՀՄ-ի կազմի մեջ մտան չորս հանրապետություններ՝ Ռուսաստանյան Ֆեդերացիան, Ուկրաինան, Անդրկովկասյան Ֆեդերացիան և Բելոռուսիան։ Պայմանագրում միաժամանակ շարադրված էին այն հարցերը, որոնք ենթակա էին ՍՍՀՄ-ի գերագույն օրգանների իրավասությանը, ինչպես նաև նշված էր այդ օրգանների կառուցվածքը, միասնական սովետական քաղաքացիության սկզբունքները և այլն։

Կոմունիստական կուսակցությունը և նրա առաջնորդ Վ. Ի. Լենինը անհաշտ պայքար մղելով և՛ վերնախավային շովինիզմի և՛ տեղական նացիոնալիզմի դեմ, իրականացրին Սովետական Միության կազմակերպումը։

Կոմունիստական կուսակցության հետևողական աշխատանքի ու պայքարի շնորհիվ, նախկինում ցարիզմի կողմից ճնշված ժողովուրդների մոտ հաստատուն հիմքերի վրա դրվեց փոխադարձ վստահությունն ու հավատը։ Այդ վստահության անսասան հիմքերի վրա էլ ստեղծվեց Սովետական Միությունը, որը հանդիսացավ կոմունիստական կուսակցության և սովետական իշխանության ազգային քաղաքականության մի նոր, փայլուն հաղթանակը։

Այդ հաղթանակի կազմակերպիչն ու ոգեշնչողը հանդիսացավ Վ. Ի. Լենինը։ Դեռևս սոցիալիստական հեղափոխության հաղթանակից առաջ Վ. Ի. Լենինը ցույց էր տվել, որ կոմունիստները պայքարում են աղգությունների այնպիսի կամավոր միավորման համար, որի պայմաններում կտրականապես բացառվելու է աղգերին միմյանց դեմ գրգռելը և լիակատար կամավորության ու իրավահավասարության հիման վրա հաստատվելու է իսկական եղբայրական դաշինք։ Սովետական իշխանության հաստատման առաջին տարիներին Վ. Ի. Լենինը բազմիցս առաջ էր քաշել դաշնակցային սովետական պետություն ստեղծելու հարցը, որի կոնկրետ արտահայտությունը հանդիսացավ Խորհրդային Ֆեդերացիայի կազմակերպումը։

Բնորոշելով առաջին բազմազգ սոցիալիստական պետության էությունը և ցույց տալով նրա արմատական տարբերությունը բուրժուական ֆեդերացիայից, Վ. Ի. Լենինը 1918 թվականի հունվարին գրել է. «Մենք իշխում ենք ոչ թե բաժանելով, ըստ հին Հռոմի դաժան օրենքի, այլ միացնելով բոլոր աշխատավորներին կենդանի շահերի, դասակարգային գիտակցության անխղելի շղթաներով։ Սա մեր միությունը, մեր նոր պետությունն ավելի ամրակուռ է, քան բռնադատական իշխանությունը, որը ստով ու երկաթով միավորում է իմպերիալիստների համար հարկավոր արհեստական պետական կազմավորումները»[1]։

1919 թվականի հուլիսին «Մեծ նախաձեռնություն» հոդվածում, որտեղ վերլուծվում է բանվորների հերոսական աշխատանքը Թիկունքում, Վ. Ի. Լենինը գրել է, որ կոմունիզմի համար, նոր կյանքի կառուցման համար աշխատավորները «...սկզբում միավորվում են մեկ սոցիալիստական պետության մեջ, հետո սովետական հանրապետությունների միության մեջ»[2]։ Նույն միտքը ավելի ընդարձակ կերպով Վ. Ի. Լենինը Դենիկինի դեմ տարած հաղթանակի առթիվ արտահայտել է 1919 թվականի դեկտեմբերին, Ուկրաինայի բանվորներին և գյուղացիներին ուղղված նամակում. «Մենք ազգերի կամավոր միություն ենք ուզում, այնպիսի միություն, որը ոչ մի բռնություն չթույլատրեր մի ազգի կողմից մյուսի վրա, այնպիսի միություն, որը հիմնված լիներ ամենալրիվ վստահության վրա, եղբայրական միասնության պարզ գիտակցության վրա, լիովին կամավոր համաձայնության վրա»[3]։

Դնելով սովետական հանրապետությունների պետական միավորման, նրանց ֆեդերացիայի ստեղծման հարցը, Վ. Ի. Լենինը նշել է, որ այդ ֆեդերացիան իր սկզբունքներով ու նպատակներով ֆեդերատիվ պետության նոր ձև է լինելու և ոչ մի առնչություն չունի բուրժուական ֆեդերացիայի հետ։

Վ. Ի. Լենինի կողմից նոր, սովետական ֆեդերացիայի պետական ձևի հայտնագործումը սովետական ժողովուրդներին հնարավորություն տվեց իրավահավասարության, բարեկամության և եղբայրության հիման վրա համախմբվելու իրենց բազմազգ պետության՝ Սովետական Միության մեջ։

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 26, էջ 588։
2 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 29, էջ 524։
3 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 30, էջ 368։

Հիվանդության պատճառով Վ. Ի. Լենինը ի վիճակի չեղավ մասնակցելու Կենտկոմի հանձնաժողովի աշխատանքներին, որին հանձնարարված էր նախապատրաստել ՍՍՀՄ-ի կազմակերպումը։ Նա չկարողացավ մասնակցել նաև Սովետների համամիութենական առաջին համագումարին, որտեղ ձևավորվեց Սովետական Միությունը։

Կենտկոմի հանձնաժողովը 1922 թվականի սեպտեմբերին ընդունել էր Ի. Վ. Ստալինի կազմած «Անկախ հանրապետությունների հետ ՌՍՖՍՀ փոխհարաբերությունների վերաբերյալ բանաձևի նախագիծը», ըստ որի ապագային սովետական հանրապետությունները Ռուսաստանյան Դեդերացիայի մեջ պետք է մտնեին ավտոնոմիայի հիմունքներով։ Ծանոթանալով այդ նախագծին, նույն ամսի 27-ին Կենտկոմի քաղբյուրոյի անդամներին հասցեագրված նամակում Վ. Ի. Լենինը քննադատում է այն և գտնում, որ նախագծում, ըստ էության, անտեսված է ազգերի իրավահավասարությունը։ «...Մենք,— գրում է Վ. Ի. Լենինը,— մեզ իրավահավասար ենք ճանաչում Ուկրաինական ՍՍՀ-ի և մյուսների հետ և նրանց հետ մեկտեղ ու նրանց հետ հավասարապես մտնում ենք նոր միության, նոր ֆեդերացիայի մեջ...»[1]։ Դրանով իսկ Վ. Ի. Լենինն առաջարկեց հարցի սկզբունքային այլ լուծում՝ ոչ թե ավտոնոմիայի հիման վրա Ռուսաստանյան Ֆեդերացիայի կազմի մեջ ազգային հանրապետությունների ընդունում, այլ լիակատար իրավահավասարության հիմունքներով բոլոր սովետական հանրապետությունների, այդ թվում նաև Ռուսաստանյան Ֆեդերացիայի կամավոր միավորումը պետական մի նոր կազմակերպության՝ սովետական հանրապետությունների միության մեջ[2]։ Լենինյան այդ ցուցումների հիման վրա Կենտկոմի հանձնաժողովը անհրաժեշտ ուղղումներ կատարեց վերոհիշյալ բանաձևի նախագծում, որից հետո այն հաստատվեց Կենտկոմի հոկտեմբերյան պլենումում։

Սովետների համամիութենական առաջին համագումարի բացման և նրա հաջորդ օրը՝ 1922 թվականի դեկտեմբերի 30-ին և 31-ին, Վ. Ի. Լենինը թելադրեց «Ազգությունների կամ «ավտոնոմիզացիայի» հարցի շուրջը» նամակը։ Այդ նամակում տալով պրոլետարական ինտերնացիոնալիզմի խոր վերլուծությունը, նա հատկապես ընդգծեց, որ անհրաժեշտ է խստիվ պահպանել կուսակցության ծրագրում առաջադրված ազգային հարցի սկզբունքները։ Այստեղ ևս քննադատելով «ավտոնոմիզացիայի» սխալ գաղափարը, Վ. Ի. Լենինը սովետական հանրապետությունների պետական միավորման միակ ճիշտ ձևը համարեց ազգային սովետական հանրապետությունների սուվերեն իրավահավասարության հիման վրա ստեղծված պետական միությունը։

Հանդիսանալով Անդրկովկասյան Ֆեդերացիայի իրավահավասար անդամներից մեկը, վերջինիս միջոցով Հայկական ՍՍՀ-ն մտավ ՍՍՀՄ-ի մեջ։ Այդ պատմական մեծագույն ակտը վճռական նշանակություն ունեցավ հայ ժողովրդի քաղաքական, տնտեսական և կուլտուրական զարգացման համար։

ՍՍՀՄ-ի կազմավորման նշանակությունը չի սահմանափակվում մեր երկրի շրջանակներում։ Սովետական Միության պատմական խոշորագույն նշա-

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 36, էջ 853։

2 Տե՛ս նույն տեղում։

նակությունը դուրս է գալիս սովետական երկրի սահմաններից և ստանում միջազգային բնույթ։

Սովետական սոցիալիստական հանրապետությունների միությունը հաստատեց աղգամիջյան հարաբերությունների նոր, պատմության մեջ մինչ այդ չտեսնված ձև, որի գրանիտե պատվանդանը հանդիսանում է պրոլետարական ինտերնացիոնալիզմը։

1924 թվականի հունվարին Սովետների համամիութենական II համագումարը հաստատեց ՍՍՀՄ սահմանադրությունը, որը ստեղծվել էր պրոլետարիատի դիկտատուրայի գոյության վեց տարիների ընթացքում ձեռք բերված հաղթանակների հիման վրա, համապատասխան երկրի այն ժամանակի էկոնոմիկայի ու դասակարգային փոխհարաբերությունների։ Որպես սովետական պետության հիմնական օրենք, սահմանադրությունը ամենալայն հնարավորություններ էր ստեղծում երկրի բոլոր ազգերի ու ժողովուրդների տնտեսական, քաղաքական և կուլտուրական բարգավաճման համար։

Սահմանադրության համաձայն յուրաքանչյուր միութենական հանրապետություն ազատ կերպով կարող էր դուրս գալ ՍՍՀՄ-ի կազմից։ Այդ բխում էր հանրապետությունները ՍՍՀՄ-ի մեջ մտնելու կամավորության սկզբունքից։

Հիմնական օրենքը սահմանում էր, որ ՍՍՀՄ-ի գերագույն օրգանը սովետների համամիութենական համագումարն է, իսկ համագումարների միջև ընկած ժամանակամիջոցում՝ ՍՍՀՄ կենտրոնական գործադիր կոմիտեն, որը բաղկացած էր երկու պալատից՝ Միության և Ազգությունների սովետներից։ Հայաստանի սովետների IV համագումարը, որը գումարվեց 1925 թվականի մարտին, հանրապետության առաջին սահմանադրության մեջ ավելացրեց հատուկ հոդված (14-րդ), որտեղ խոսվում էր Սովետական Հայաստանը Անդրկովկասի Ֆեդերացիայի միջոցով ՍՍՀՄ-ի մեջ մտնելու մասին։

ՍՍՀՄ-ի կազմակերպումով սկսվեց Սովետական Հայաստանի, ինչպես նաև սովետական մյուս հանրապետությունների պատմության մի նոր շրջան։ Սովետական ժողովուրդների եղբայրական ընտանիքում մեծ հաջողությամբ առաջ ընթացավ հանրապետության ժողովրդական տնտեսության վերականգնման գործը։

ԳԼՈՒԽ ՈՒԹԵՐՈՐԴ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

1. ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԳԱ ԸՆԹԱՑՔԸ

ՍՍՀՄ-ի կազմավորումից հետո ժողովրդական տնտեսության վերականգնման ուղղությամբ տարվող խաղաղ շինարարական աշխատանքներն ավելի լայն ծավալ ստացան։ Որպես սոցիալիստական շինարարության կարևորագույն հարց, կոմունիստական կուսակցությունը դրեց մեր երկրի ժողովուրդների կուլտուրական և տնտեսական փաստական անհավասարության վերացման անհրաժեշտությունը։

Այդ մասին կարևոր որոշումներ ընդունեցին 1923 թվականի ապրիլին տեղի ունեցած ՌԿ(բ)Կ XII համագումարը և նույն թվականի հունիսին Մոսկվայում կայացած ՌԿ(բ)Կ Կենտկոմի չորրորդ խորհրդակցությունը՝ ազգային հանրապետությունների և մարզերի պատասխանատու աշխատողների մասնակցությամբ։ Վերջինս քննության առավ ազգային հարցի վերաբերյալ կուսակցության XII համագումարի բանաձևի կենսագործման պրակտիկ միջոցառումների հարցը և որոշում ընդունեց այդ մասին։ Ազգային հանրապետություններում և մարզերում տնտեսական շինարարությունը հաջողությամբ առաջ տանելու նպատակով խորհրդակցությունն անհրաժեշտ համարեց կարգավորել վերաբնակեցումները, պետական հողային ֆոնդի հաշվին աշխատավոր բնակչությանն ապահովել հողով, տեղական բնակչությանը մատչելի պայմաններով հատկացնել դյուղատնտեսական վարկ, ուժեղացնել ոռոգման աշխատանքները, ամեն կերպ օգնել կոոպերացիային, նոր ֆաբրիկաներ և գործարաններ կառուցել հումքի բազաների մոտ, տեղական բնակչության համար կազմակերպել տեխնիկական դպրոցներ, գյուղատնտեսական դասընթացներ[1]։

Սովետական Հայաստանը հաղթահարելով ժողովրդական տնտեսության վերականգնման դժվարությունները, առաջ էր տանում խաղաղ շինարարական աշխատանքները։

Գյուղատնտեսության բնագավառում ընդհանուր ցանքատարածությու-

---

1 *Տե՛ս «ՍՄԿՊ-ն... բանաձևերում ու որոշումներում», մասն I, էջ 979։*

ները տարեցտարի աճելով, 1923 թվականին հասել էին 236,6 հազար դեսյատինի[1], կազմելով 1913 թվականի ցանքատարածությունների 74,9 տոկոսը։

1921 թվականի ապրիլի 14-ի նամակում Վ. Ի. Լենինը Անդրկովկասի կոմունիստներին ցուցում էր տվել, որ «առոգումը հատկապես կարևոր է հողագործությունն ու անասնապահությունը ինչ գնով էլ լինի բարձրացնելու համար»[2]։ Կենսագործելով առաջնորդի ցուցումները, Հայաստանի կոմունիստական կուսակցությունը և կառավարությունը առաջին լուրջ հաջողություններն էին ձեռք բերել այդ բնագավառում։ 1922 թվականի նոյեմբերին Էջմիածնի շրջանում ավարտվեց Վ. Ի. Լենինի անվան ջրանցքի շինարարությունը, որը ոռոգում էր 2000 հեկտար հողամաս։ Խոշոր աշխատանքներ էին սկսվել Սարդարաբադի, Ջանգիբասարի, Վեդիբասարի, Բաշ-Գյառնիի, Կոտայքի, Ապարանի և հանրապետության մյուս շրջանների ոռոգման ցանցի վերանորոգման ուղղությամբ։ Հայաստանում զգալի աշխատանքներ էին կատարվել հողաշինարարության գծով, որի շնորհիվ սակավահող գյուղացիությունն ապահովվեց հողով։

Գյուղատնտեսության վերականգնման գործին խոշոր չափով նպաստեց աշխատավոր գյուղացիության դրության բարելավումը և գյուղատնտեսական միասնական հարկի սահմանումը, որի շնորհիվ բնահարկի մի մասը փոխարինվեց դրամական հարկով և միավորվեցին պետական ու տեղական բոլոր տեսակի հարկերը։ Կենսագործելով կուսակցության որոշումները, Սովետական Հայաստանի կառավարությունը վճռական պայքար մղելով կուլակային-վաշխառուական տարրերի դեմ, սիստեմատիկ և հետևողական աշխատանք էր կատարում գյուղատնտեսական վարկի ծավալման ու ամրապնդման ուղղությամբ։ Միայն 1923—1924 տնտեսական տարում Հայկական ՍՍՀ գյուղատնտեսական բանկը վարկային կոոպերացիայի միջոցով հանրապետության գյուղատնտեսությունը վարկավորել էր 1.628 հազար ռուբլով[3]։

Կուսակցական կազմակերպությունները շարունակում էին ծավալուն քաղաքական-դաստիարակչական աշխատանքը աշխատավոր գյուղացիության մեջ։ Այդ տեսակետից կարևոր դեր էին կատարում տեղերում հրավիրված անկուսակցական գյուղացիական կոնֆերանսները։ Միայն 1923 թվականի առաջին եռամսյակում հանրապետության 9 գավառներում տեղի ունեցան այդպիսի 75 կոնֆերանսներ։

1923 թվականի մարտին Երևանում կայացավ Հայաստանի կոմունիստական կուսակցության II համագումարը, որը քննարկեց ՀԿԿ Կենտկոմի քաղաքական և կազմակերպչական հաշվետվությունը (զեկուցողներ Ս. Լուկաշին, Գ. Մեհրաբյան), Ռուսաստանի կոմունիստական կուսակցության 25-ամյակի առթիվ զեկուցումը (Ա. Մռավյան), ֆինանսական քաղաքականության խնդիրները, գյուղատնտեսության վերականգնման, ժողովրդական լուսավորության հարցերը և այլն։

---

1 Տե՛ս «Հայաստանի ՍՀՀ ժողովրդական տնտեսությունը 1924—1925 և 1925—1926 թթ.», Երևան, 1927, էջ 7։

2 Վ. Ի. Լենին, երկեր, հատ. 32, էջ 404։

3 Տե՛ս «Խորհրդային Հայաստանը թվերով» (վիճակագրական տեղեկատու. 1923—1927 թթ.), Երևան, 1928, էջ 249։

Կենտկոմի հաշվետվության մեջ նշվեց, որ Հայաստանի կոմունիստական կուսակցության տեղական կազմակերպությունները մեծ աշխատանք են կատարել հանրապետության բանվորների, գյուղացիների և ինտելիգենցիայի շրջանում կուսակցության լենինյան ազգային քաղաքականությունը կենսագործելու համար, որի շնորհիվ հաջողությամբ ավարտվեցին Անդրկովկասյան Ֆեդերացիայի ստեղծման աշխատանքները։



Ս. Լևպաշիե (Սրապիոնյան)

Համագումարը նշեց, որ հաշվետու շրջանում հանրապետության գյուղատնտեսությունը կարողացել էր կատարել իր խնդիրները։ Պարենհարկի կարգով նա պետությանը հանձնել էր 300 հազար փութ հացահատիկ։ Լսելով զեկուցում հանրապետության ժողովրդական լուսավորության վիճակի մասին, համագումարը որոշեց բարելավել դպրոցների ֆինանսավորման գործը, ընդարձակել բազմազան աշակերտությանը ցույց տրվող օգնությունը, լուրջ ուշադրություն դարձնել դասագրքերի ստեղծման վրա և այլն։ Համագումարը կուսակցական, սովետական, կոոպերատիվական և արհմիութենական կազմակերպությունների առջև խնդիր դրեց հատուկ ուշադրություն դարձնել անգրագիտության վերացման գործի վրա։

Համագումարն ընտրեց ՀԿԿ Կենտկոմի նոր կազմ, որն իր առաջին պլենումում ԿԿ-ի առաջին քարտուղար ընտրեց Ա. Գ. Հովհաննիսյանին, իսկ քարտուղարներ Ա. Շահսուվարյանին և Ե. Բակունցին։

Նույն ամսին Թբիլիսիում գումարվեց Անդրկովկասյան կոմունիստական կազմակերպությունների II համագումարը։ Այն ամփոփեց երկրամասի կոմունիստական կազմակերպությունների մեկ տարվա աշխատանքի ու պայքարի արդյունքները, միահամուռ պաշտպանեց Ռ(բ)Կ Կենտկոմի լենինյան գիծը ընդդեմ տրոցկիստների ու մյուս հակալենինյան հոսանքների և նշեց հետագա խնդիրները։

Կարևոր հաջողություններ էին ձեռք բերվել հանրապետության արդյունաբերության վերականգնման ուղղությամբ։ Վերականգնվել և աշխատում էին կաշվի վերամշակման Երևանի երկու գործարանները, ընդարձակվել և նոր սարքավորումներով հարստացել էր պոլիգրաֆ արդյունաբերությունը, որի շնորհիվ 1922 թվականի համեմատությամբ, 1923 թվականին հանրապետությունում տպագրված գրքերի, ամսագրերի և լրագրերի տպաքանակն ավելացել էր մոտ երկու անգամ։ Որոշ չափով ավելացել էր Երևանի մեխանիկական և «Արարատ» գործարանների արտադրանքը։ Երևանում և Ալեքսանդրապոլում վերականգնվել և սկսել էին աշխատել մի շարք մանր ձեռնարկություններ։ Ալեքսանդրապոլում ծավալվել էին տեքստիլ ֆաբրիկայի շինարարության աշխատանքները։

Հայաստանում սովետական իշխանության գոյության առաջին 2—3 տարիների ընթացքում ձեռք բերած խաղաղ շինարարական աշխատանքի առաջին հաջողությունները ակնառու էին։ Նույնիսկ դաշնակցական կառավարության նախկին լիդերներից մեկը՝ Հ. Քաջազնունին, ստիպված եղավ խոստովանել. «Երկու տարի ու կես կառավարեցինք մենք երկիրը,— գրել է նա,— մոտ երկու ու կես տարի է, ո՞ կառավարում են բոլշևիկները։

Մենք ունեցա՞ք պատերազմներ՝ Վրաստանի, Ադրբեջանի ու Թուրքիայի դեմ։ Բոլշևիկները պատերազմ չունեցան։ Մենք ունեցանք անընդհատ բազմաթիվ կռիվներ՝ Աղբաբա, Զոդ, Զանգիբասար, Վեդի-բասար, Միլիի ձորերը, Շարուր, Նախիջևան, Զանգեզուր. բոլշևիկները ներքին կռիվներ չունեցան, բացի փետրվարյան ապստամբության հետ կից կռիվները։ Մենք շարունակ պահում էինք երկիրը զենքի տակ, անընդհատ կռիվների մեջ, զբաղեցրել էինք բոլոր աշխատավոր ձեռքերը պատերազմի դաշտերում, մինչդեռ ամենամեծ կարիք ունեինք շինարար աշխատանքների. բոլշևիկներն ազատեցին ժողովուրդն այդ աղետից, այդ անտանելի ծանր բեռից։

Մեր ժամանակ ժողովուրդը կոտորվում էր կամ հյուծվում սովից։ Մենք ավերեցինք այնպիսի հացառատ վայրեր, ինչպիսին են Շարուրն ու Վեդին, այնպիսի անասնառատ վայր, ինչպիսին է Աղբաբան, ավերեցինք առանց օգտվելու հարստություններից. 1920 թվականի բերքը, միակ առատ բերքը, որ պիտի ունենայինք սով-տարիներից հետո, տվինք (ուրիշ շատ հարստությունների հետ միասին) Քյազիմ Կարաբեքիր փաշայի բանակին։ Իսկ այսօր լսում եմ, թե Հայաստանը կշտացել է, համարյա կարիք չունի հացի։ Ես հավատում եմ, չէ որ ժողովուրդը ժամանակ ունեցավ ցանելու և կալսելու»[1]։

* * *

Սովետական Հայաստանում ժողովրդական տնտեսության վերականգնումն ընթանում էր դասակարգային սուր պայքարի պայմաններում։

Սոցիալիզմի թշնամիները նպատակ ունենալով մեր երկրում ձախողել սոցիալիզմի կառուցումը, տապալել սովետական կարգերը և վերականգնել շահագործողների տիրապետությունը, կատաղաբար դիմադրում էին կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության քաղաքականությանը։ Արևմտյան իմպերիալիստների օգնությամբ ներքին թշնամիները տնտեսության տարբեր ճյուղերում, հատկապես արդյունաբերության մեջ, տրանսպորտում և գյուղում կազմակերպում էին սաբոտաժ, դիվերսիա և այլ կարգի թշնամական գործողություններ։ Կուլակային և մյուս հակահեղափոխական ուժերը բանդիտական ելույթներ էին կազմակերպում սովետական իշխանության դեմ։ Հայաստանում 1922—1923 թվականներին այդպիսի ելույթներ տեղի ունեցան Դարալագյազի, Դիլիջանի և այլ գավառներում։

Սովետական երկրում նոր տնտեսական քաղաքականության իրագործումը սոցիալիզմի ներքին և արտաքին թշնամիների որոշ մասի կողմից զնահատ-

1 Հմվ. Քաջազնունի, Հ. Հ. դաշնակցությունն անելիք չունի այլևս, Թիֆլիս, 1924, էջ 70—71։

վեց որպես էվոլյուցիա դեպի կապիտալիզմը։ Ելնելով դրանից, նրանք քարոզում էին սովետական իշխանության հետ համագործակցելու, նրան օգնելու գաղափարը, այդ «օգնությունը» համարելով ՍՍՀՄ-ում կապիտալիզմի վերականգնմանը նպաստող միջոց։ Այդ ուղղությունը կոչվեց սմենովեխականություն (նրանց օրգան ամսագրի անվանը համապատասխան)։

Կոմունիստական կուսակցությունը Լենինի գլխավորությամբ մինչև վերջ մերկացրեց այդ թշնամիներին։ Ռ.Կ(բ)Կ XI համագումարում Վ. Ի. Լենինը նշեց, որ սմենովեխականները, որոնց նպատակն է մեր երկրում վերականգնել կապիտալիզմը, սովետական իշխանության բացահայտ թշնամիներն են։

Սմենովեխականությունն իր արտահայտությունը գտավ նաև դաշնակցականների որոշ մասի մոտ, որոնք նույնպես հույս էին դրել սովետական իշխանության վերասերման և Հայաստանում հին կարգերի վերականգնման վրա։ Սակայն այդ հույսերը խորտակվեցին։

Սովետական կարգերի թշնամիները քաղաքում ստանալով բանվոր դասակարգի վճռական հակահարվածը, իրենց ուշադրությունը կենտրոնացրել էին գյուղի վրա՝ հույս ունենալով օգտագործել գյուղացիության մեջ եղած դժգոհ և տատանվող տարրերին, նրանց բարձրացնել սովետական կարգերի դեմ։ Սակայն նրանք այստեղ ևս ստացան վճռական հակահարված։

Կոմունիստական կուսակցությունը և սովետական իշխանությունը խոշոր օգնություն ցույց տվեցին գյուղին։ Հարկային ճիշտ քաղաքականության և գյուղատնտեսական մթերքների գների կարգավորման շնորհիվ զգալի չափով բարելավվեց աշխատավոր գյուղացիության վիճակը։ Լավագույն կադրերով ամրապնդվեց գյուղի կուսակցական և սովետական ապարատը, ավելի բովանդակալից դարձավ նրանց աշխատանքը։ Քաղաքից գյուղ աշխատանքի ուղարկվեցին զգալի թվով փորձված կադրեր։

Իրենց շուրջը համախմբելով չքավոր և միջակ գյուղացիությանը, կուսակցական կազմակերպությունները մերկացնում ու հակահարված էին հասցնում դասակարգային թշնամուն։

* * *

1924 թվականը սովետական ժողովրդի համար սկսվեց ծանր վշտով։ Հունվարի 21-ին վախճանվեց կոմունիստական կուսակցության և սովետական պետության հիմնադիր Վ. Ի. Լենինը։ «Մեր ուսուցչի մահը — այդ ծանր հարվածը,— ասված է Ռ.Կ(բ)Կ Կենտկոմի պլենումի դիմումի մեջ,— էլ ավելի ուժգին կհամախմբի մեր շարքերը։ Մարտական համերաշխ շղթայով մենք արշավի ենք գնում կապիտալի դեմ, և աշխարհում ոչ մի ուժ չի խանգարի մեր վերջնական հաղթանակին։

...Կուսակցությունը երկաթե քայլերով առաջ կգնա։ Որովհետև նա լենինյան կուսակցություն է։ Որովհետև նա դաստիարակվել, կոփվել է մարտերում։ Որովհետև նա իր ձեռքին ունի այն կտակը, որ նրան թողել է ընկեր Լենինը»[1]։

Վ. Ի. Լենինի մահվան կապակցությամբ ամբողջ երկրում տեղի ունեցան աշխատավորների սգո միտինգներ և ժողովներ։ Սովետական Հայաստանի աշ-

1 «ՍՄԿՊ-ն... բանաձևերում ու որոշումներում», մաս I, էջ 1029։

խատավորները արտահայտելով իրենց ծանր վիշտը սիրելի առաջնորդի մահվան առթիվ, միաժամանակ ցույց տվեցին իրենց հաստատ կամքն ու վճռականությունը՝ մինչև վերջ հավատարիմ մնալու Լենինիզմին։

Հունվարի 23-ին Երևանի աշխատավորների համաքաղաքային միտինգում ընդունված բանաձևում ասված էր. «Երևանի բանվորները, կարմիրբանակայինները՝ և աշխատավորության լայն մասսաները խորը ցնցված են մեր ուսուցիչ և ղեկավար Վ. Ի. Լենինի մահվան բոթով։

...Հաղթանակի միասնական կամքով և շարքերի խտությամբ Խորհրդային Միության ու ամբողջ աշխարհի բանվորներն ու գյուղացիները կամրացնեն խորհրդային և պրոֆմիութենական բոլոր կազմակերպությունների հիմքերը, որ կոչված են իրագործելու Թանկագին ուսուցչի մտքերն ու ավանդները»[1]։

Որպես հանրապետության բոլոր աշխատավորների միասնական կամքի արտահայտություն, Վ. Ի. Լենինի հիշատակը հավերժացնելու նպատակով Հայկական ՍՍՀ Կենտգործկոմը 1924 թվականի հունվարին որոշեց հանրապետության մայրաքաղաքում կանգնեցնել Վ. Ի. Լենինի մոնումենտ-արձանը, իսկ հունվարի 27-ի որոշմամբ Ալեքսանդրապոլ քաղաքը վերանվանվեց Լենինական։

Խոր գիտակցելով մեծ առաջնորդի ծանր կորուստը, Սովետական Միության աշխատավորները էլ ավելի կուռ շարքերով համախմբվեցին Լենինյան կուսակցության շուրջը։ Կուսակցության Կենտկոմի հասցեով ստացվում էին անկուսակցական բանվորների տասնյակ հազարավոր դիմումներ, որոնցով խնդրում էին իրենց ընդունել Լենինի ստեղծած կուսակցության շարքերը։ Ընդառաջելով անկուսակցական բանվորների մասսայական դիմումներին, Կենտկոմը հայտարարեց լենինյան կոչ դեպի կուսակցության շարքերը։ Լենինյան կոչի օրերին ամբողջ երկրում կոմունիստական կուսակցության շարքերն անցան 240 հազար առաջավոր բանվորներ։

Լենինյան կոչի օրերին և դրանից հետո անցած կարճ ժամանակամիջոցում զգալի չափով աճեցին նաև Հայաստանի կոմունիստական կուսակցության շարքերը։ Եթե 1924 թվականի հունվարին Հայաստանի կոմկուսի շարքերում կային 4032 անդամ-թեկնածու, ապա 1925 թվականի հուլիսին այդ թիվը հասել էր 6130-ի[2]։ Ըստ որում, զգալի չափով աճել էր բանվոր կոմունիստների թիվը, կազմելով 23,2 տոկոս[3]։

Առաջնորդվելով Լենինյան պատգամներով, Հայաստանի կոմունիստական կուսակցությունը շարունակում էր հատուկ ուշադրություն դարձնել կոմունիստների և աշխատավորների գաղափարական-քաղաքական պատրաստականությունը բարձրացնելու, սոցիալիստական շինարարության բոլոր բնագավառներում կուսակցական ղեկավարությունն ամրապնդելու գործին։

1923—1924 թվականների ներկուսակցական սուր պայքարի ժամանակաշրջանում Հայաստանի կոմունիստական կուսակցությունը մինչև վերջ հավա-

1 «Խորհրդային Հայաստան», 25 հունվարի 1924 թ.։

2 Տե՛ս «Կոմունիստ» (ամսագիր), 1925, № 3—4, էջ 11։

3 Տե՛ս նույն տեղում, էջ 12։

տարիմ մնալով լենինիզմին, վճռական հակահարված տվեց տրոցկիստներին ու մյուս թշնամիներին։

1924 թվականի մայիսին Երևանում տեղի ունեցավ Հայաստանի կոմունիստական կուսակցության III համագումարը։ Համագումարում լսվեցին զեկուցումներ ՀԿԿ կենտկոմի քաղաքական և կազմակերպչական գործունեության, գյուղում և երիտասարդության մեջ տարվող աշխատանքի և այլ հարցերի մասին։ Կենտկոմի հաշվետվության մեջ (Ս. Լուկաշին և Աշ. Հովհաննիսյան) ցույց տրվեցին հանրապետությունում հաշվետու տարում ժողովրդական տնտեսության վերականգնման գործում ձեռք բերած հաջողությունները, դեռևս առկա թերություններն ու դժվարությունները։

Նշելով Հայաստանի կոմերիտմիության շարքերի աճը, համագումարը անհրաժեշտ համարեց ուժեղացնել երիտասարդության շրջանում կատարվող քաղաքական-դաստիարակչական աշխատանքը, վերացնել անգրագիտությունը կոմերիտմիության մեջ, ուժեղացնել օգնությունը ժողովրդական կրթության գործին, ապահովել երիտասարդության ակտիվ գործունեությունը արդյունաբերության, գյուղատնտեսության մեջ և ժողովրդական տնտեսության մյուս բնագավառներում։

Սովետական ժողովուրդների եղբայրական ընտանիքում ծավալելով ստեղծագործական, խաղաղ շինարարական աշխատանք, Սովետական Հայաստանի աշխատավորները 1924 թվականին հանրապետության ժողովրդական տնտեսության վերականգնման գործում հասել էին նոր հաջողությունների։

Գյուղատնտեսության բնագավառում այդ հաջողությունները բնորոշվում էին հետևյալ հիմնական ցուցանիշներով։ Նախորդ տարվա համեմատությամբ ցանքատարածությունները աճել էին 10 տոկոսով, ըստ որում զգալի չափով ավելացել էին բամբակի ցանքատարածությունները, 4000 դեսյատինից հասնելով 15 հազարի[1]։ Որոշ կուլտուրաների բերքատվությունը մոտեցել էր նախապատերազմյան մակարդակին, իսկ բամբակի, խաղողի և կարտոֆիլի բերքատվությունը դեռևս զգալի չափով ետ էր մնում։

Որոշ առաջընթաց էր կատարվել նաև անասնապահության բնագավառում։ Այդ թվականին անասունների ընդհանուր գլխաքանակը հասել էր 1.348.367-ի՝ 1919 թվականի 747.643 գլխի դիմաց[2]։

ՌԿ(բ)Կ XII համագումարը (1924 թվականի մայիս) առաջադրեց գյուղը կոոպերացնելու լոզունգը։ Միաժամանակ որոշում ընդունվեց աշխատավոր գյուղացիությանը պետության կողմից տրվող էժան վարկի միջոցներն ընդլայնելու և այդ ասպարեզից վաշխառուներին դուրս մղելու մասին։

1924 թվականի օգոստոսին հրապարակվեց Հայկական ՍՍՀ Կենտգործկոմի և Ժողկոմսովետի դեկրետը գյուղատնտեսական կոոպերացիայի մասին։ Դեկրետում ասված էր. «ՀՍԽՀ սահմաններում գյուղատնտեսությամբ կամ նրա հետ կապված արհեստներով զբաղվող բոլոր քաղաքացիներին, որոնք համաձայն ՀՍԽ հանրապետության սահմանադրության, վայելում են խորհուրդներում ընտրելու և ընտրվելու իրավունք, թույլատրվում է կազմել կոոպերատիվ միու-

---

1 Տե՛ս «Հայաստանի ՍԽՀ ժողովրդական տնտեսությունը 1924—1925 և 1925—1926 թթ.», էջ 7։

2 Տե՛ս «Խորհրդային Հայաստան 1920—1925 թթ.» (ժողովածու), էջ 113։

թյուններ»[1]։ Դեկրետում սահմանված էին այդ միությունների խնդիրները՝ կոոպերատիվ հիմունքներով գյուղատնտեսական արտադրության կազմակերպումը, գործիքների, սերմացուի, պարարտանյութերի, աղնվացեղ անասունների և այլ միջոցների հայթայթումը, հողերի բարելավումը և այլն։

Այդ աշխատանքները կազմակերպելու և գլխավորելու նպատակով նույն թվականին կազմակերպվում է Հայաստանի գյուղատնտեսական կոոպերատիվների կենտրոնը (գյուղկոոպկենտրոնը)։ 1924 թվականի հոկտեմբերին Հայաստանում կային 76 կաթնատնտեսական, այգեգործական, խառը գյուղատնտեսական և այլ ընկերություններ։ Նրանց մեջ ընդգրկված էին 9197 աշխատավորական տնտեսություններ, որոնք կազմում էին բոլոր աշխատավորական տնտեսությունների 6,1 տոկոսը[2]։

Կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության ձեռնարկած միջոցառումների շնորհիվ բարելավվեց չքավոր և միջակ գյուղացիության դրությունը։

Սակայն գյուղում տեղի ունեցող դասակարգային տեղաշարժերը դրանով չսահմանափակվեցին։ Նոր տնտեսական քաղաքականության պայմաններում, երբ կապիտալիստական տարրերի աշխուժացման համար առկա էին որոշ հնարավորություններ, ունևոր և միջակ տնտեսությունների հաշվին մասամբ ավելանում էին կուլակային տնտեսությունները։ Գյուղում ավելի սրվեց դասակարգային պայքարը։ Կուլակները պրովոկացիոն միջոցներով փորձում էին վարկաբեկել սովետական իշխանությանը, դիմադրում էին պետական հարկերը վճարելուն, տեռորիստական ակտեր էին կազմակերպում կուսակցական-սովետական ակտիվ աշխատողների դեմ։

Նախորդ տարիների համեմատությամբ 1924 թվականին ավելի լայն ծավալով էին շարունակվում Հայաստանի արդյունաբերության վերականգնման աշխատանքները։ Հուլիսից սկսվեցին Ղափանի պղնձահանքերի և մյուս ձեռնարկությունների վերականգնման աշխատանքները, որի համար կառավարությունը բաց էր թողել 846 հազար ռուբլի[3]։

Եթե նոյեմբեր ամսին Ղափանի հանքերում և մյուս օժանդակ ձեռնարկություններում աշխատում էին 500 բանվոր, ապա դեկտեմբերին դրանց թիվը հասել էր 800-ի[4]։ Շարունակվում էին նաև Ալավերդու պղնձահանքերի և մյուս ձեռնարկությունների վերականգնման աշխատանքները։ 1924 թվականին այստեղ սկսվեց պղնձի ձուլումը։ 1924—1925 տնտեսական տարում Հայաստանում պղնձի ընդհանուր արտադրանքի արժեքը կազմեց 1913 թվականի արտադրանքի արժեքի միայն 13,1 տոկոսը, իսկ բանվորների թիվը՝ 18 տոկոսը[5]։ Հանրապետության արդյունաբերության այն ժամանակի ամենահիմնական այդ ճյուղը իր արտադրանքով դեռևս շատ հեռու էր նախապատերազմյան մակարդա-

1 «ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու», 1924, № 14, հոդվ. 43։

2 Տե՛ս «Հայկոոպշինսոյուզ 1920—1925 թթ.» (ժողովածու), էջ 270։

3 Տե՛ս «Экономический вестник ССР Армении», Երևան, 1925, № 1—9, էջ 110։

4 Տե՛ս նույն տեղում։

5 Տե՛ս «Հայաստանի ՍԽՀ ժողովրդական տնտեսությունը 1924—1925 և 1925—1926 թթ.», էջ 27։

կից, որին հասնելու նպատակով խոշոր աշխատանքներ պետք է կատարվեին հետագա տարիներին։

Հանրապետության արդյունաբերության մյուս կարևոր ճյուղերից մեկի՝ գինու-կոնյակի-սպիրտի արտադրության գծով մինչև 1924 թվականի նոյեմբերը աշխատում էր միայն Երևանի «Արարատ» գործարանը, որը այլևս չէր հասցնում մշակել խաղողի տարեցտարի աճող բերքը։ Այդ թվականի վերջերին վերակազմվում և իրենց նորմալ աշխատանքներն են սկսում Դամարլուի (Արտաշատի) գինու գործարանը և Դավալուի գինեգործական բաժանմունքը։ Միաժամանակ զգալի չափով ընդարձակվում էր «Արարատ» գործարանը։

Ընդարձակվել և մասնակի մեքենայացման էին ենթարկվել Երևանի կաշվի մշակման երկու գործարանները։ Եթե 1923—1924 տնտեսական տարում նրանք վերամշակել էին 53.331 հատ մանր և 6.474 խոշոր կաշի, ապա հաջորդ տընտեսական տարում այդ թվերը համապատասխանաբար ավելացել և հասել էին 86.000-ի և 10.690-ի[1]։ Նախապատրաստական աշխատանքներ սկսվեցին Երևանում կոշիկի ֆաբրիկա կառուցելու համար, որը պետք է աշխատեր այդ գործարանների արտադրանքի բազայի վրա։

Առանձնապես խոշոր առաջընթաց էր ապրել հանրապետության պոլիգրաֆ արդյունաբերությունը, որի արտադրանքը 1913 թվականի համեմատությամբ, 1924 թվականին եռապատկվել էր[2]։

Էներգետիկայի արտադրությունը 1924 թվականին կազմում էր նախապատերազմյան արտադրանքի 135 տոկոսը[3]։

Հայաստանի սովետների IV համագումարը (1925 թվականի մարտ) քննության առնելով արդյունաբերության վերականգնման վիճակը ընդգծեց, որ հանրապետությունում խոշոր աշխատանք է տարվել արդյունաբերության վերականգնման ուղղությամբ, որի շնորհիվ ձեռք են բերված առաջին լուրջ նվաճումները։

Համագումարը միաժամանակ խնդիր դրեց արագացնել Ղափանի և Ալավերդու պղնձարդյունաբերության վերականգնման աշխատանքները, ծավալել թեթև արդյունաբերության ձեռնարկությունների շինարարությունը։

* * *

Այդ տարիներին զգալի տեղաշարժեր էին կատարվել Սովետական Հայաստանի նորաստեղծ պետական ապարատի աշխատանքներում։ Այդ ապարատը, որն ուներ միայն 3—4 տարվա աշխատանքի փորձ, ամրապնդվել ու բարելավվել էր իր գործունեությունը, ավելի էր մոտեցել աշխատավորական մասսաներին, իր աշխատանքների ընթացքում արժանանալով վերջիններիս օժանդակությանը։ Բարելավվել և աշխուժացել էին նաև աշխատավորների դեպուտատների սովետների աշխատանքները։

---

1 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 454, թ. 7։

2 Տե՛ս «Հայաստանի ՍԽՀ ժողովրդական տնտեսությունը 1924—1925 և 1925—1926 թթ.», էջ 2։

3 Տե՛ս նույն տեղում։

Պետական ապարատի և սովետների աշխատանքների բարելավման գործում կարևոր դեր խաղաց բանվորա-գյուղացիական տեսչությունը։

Խոսելով բանգյուղտեսչության խնդիրների մասին, Վ. Ի. Լենինը նշել է. «Բանվորա-գյուղացիական տեսչության խնդիրն է՝ ոչ միայն և նույնիսկ ոչ այնքան «որսալ», «մերկացնել» (սա դատարանի խնդիր է, դատարան, որի հետ բանգյուղտեսչությունը շփվում է մոտիկից, բայց որին բնավ նույնական չէ),— որքան կարողանալ ուղղել։

Ժամանակին հմտորեն ուղղել՝ ահա բանգյուղտեսչության գլխավոր խնդիրը։

Ուղղել կարողանալու համար հարկավոր է 1-ին, ուսումնասիրել և ուսումնասիրել գործի վարումը այս կամ այն հիմնարկում, ձեռնարկությունում, բաժնում և այլն, 2-րդ, ժամանակին կատարել անհրաժեշտ գործնական փոփոխությունները, կենսագործել դրանք իրականում»[1]։

Լենինյան այդ դրույթների և Սովետական Ռուսաստանի փորձի հիման վրա Հայաստանի Հեղկոմը դեռևս 1921 թվականի հունվարի 4-ին դեկրետ էր հրատարակել Հայկական ՍՍՀ բանվորա-գյուղացիական տեսչության ստեղծման մասին, նրան տալով ժողովրդական կոմիսարիատի իրավասություն։

Դեկրետում սահմանված էին բանվորա-գյուղացիական տեսչության խնդիրները.

ա) պայքարել սովետական հիմնարկություններում տեղ գտած բյուրոկրատիզմի դեմ, վերահսկել կառավարության դեկրետների ու որոշումների կենսագործումը, օգնել սովետական իշխանության բոլոր օրգաններին՝ նրանց աշխատանքների բարելավման համար.

բ) բոլոր հիմնարկություններում հսկել ամեն կարգի բողոքների ու դիմումների ընդունման և ընթացք տալու գործը։ ԲԳՏ-ին կից ստեղծել բողոքների հատուկ բյուրո՝ պաշտոնատար անձանց անկանոն գործողությունների, զեղծումների և իրավազանցումների վերաբերյալ բողոքներ քննելու և ընթացք տալու համար.

գ) կենտրոնական և տեղական իշխանությունների քննարկմանը ներկայացնել գործնական առաջարկություններ և միջոցառումներ սովետական ապարատի աշխատանքները բարելավելու, ավելի պարզ և էժան դարձնելու, տարբեր հաստատությունների աշխատանքներում զուգահեռականությունը վերացնելու, պետական կյանքի այս կամ այն բնագավառում ամբողջ վարչական սիստեմը վերակազմելու մասին.

դ) զանցառությունների ու հանցանքների համար դատական պատասխանատվության ներկայացնել պաշտոնական անձանց, համապատասխան օրգաններին առաջադրումներ անել այդպիսիներին պաշտոնից հեռացնելու մասին[2]։

Սակայն իր գոյության առաջին շրջանում, մինչև 1923 թվականի կեսերը, Հայկական ՍՍՀ ԲԳՏ-ն, աշխատավորների համեմատաբար ավելի նեղ շրջանների մասնակցությամբ, զբաղվում էր գլխավորապես վերստուգիչ-վերահսկիչ գործունեությամբ։ Այդ գործունեությունը դեռևս միակողմանի էր ու սահմա-

---

1 Վ. Ի. Լենին, երկեր հատ. 33, էջ 27։

2 Տե՛ս «ՀՍՍՀ դեկրետների և հրամանների ժողովածու», պրակ 1, էջ 50—51։

նափակ, որը հետևանք էր հիմնականում այն բանի, որ ԲԳՏ-ն ապահովված չէր բարձրորակ կադրերով։

1923 թվականի սկզբին հրապարակվեցին Վ. Ի. Լենինի «Ինչպես վերակազմենք բանգյուղտեսչությունը (առաջարկ կուսակցության XII համագումարին)» և «Լավ է քիչ, բայց լավ» հոդվածները։ Այդ նշանավոր հոդվածներում Վ. Ի. Լենինը կարևոր միջոցառումներ նշեց ԲԳՏ-ի աշխատանքների վերակառուցման, հետագա բարելավման և ընդարձակման համար։ Նա կուսակցության առջև խնդիր դրեց ԲԳՏ-ն ապահովել լավագույն և ստուգված կադրերով, ընդարձակել ԲԳՏ-ի ապարատը և գործունեությունը, պետական վերահսկողությունը միավորել կուսակցական վերահսկողության հետ։ Կուսակցության XII համագումարը քննության առնելով այդ հարցը, միահամուռ հավանություն տվեց Վ. Ի. Լենինի առաջարկին և որոշում ընդունեց միավորել ԲԳՏ-ն ԿՎՀ-ի հետ, նշելով ԿՎՀ-ԲԳՏ առաջնահերթ խնդիրները։ Համագումարը անհրաժեշտ համարեց, որպեսզի ԿՎՀ-ԲԳՏ-ն իր աշխատանքներում լայնորեն ընդգրկելով արտադրության մեջ աշխատող բանվորներին, կազմակերպի պետական ապարատի և հասարակական հիմնարկությունների աշխատանքների սիստեմատիկ վերահսկողություն՝ նպատակ ունենալով ավելի ու ավելի բարելավել, էժանացնել այդ ապարատը։

Կուսակցության XII համագումարի այդ որոշումից հետո, ինչպես մյուս սովետական հանրապետություններում, նույնպես և Հայկական ՍՍՀ-ում ԿՎՀ-ԲԳՏ-ի աշխատանքները սկսեցին ավելի աշխուժանալ և բարելավվել։ Նա ամրապնդվեց ստուգված և լավագույն ղեկավար կադրերով, իր աշխատանքներում ընդգրկեց արտադրության մեջ աշխատող բանվորներից շատերին։

Ստանալով ՍՍՀՄ ԿՎՀ-ԲԳՏ ժողովրդական կոմիսարիատի մշտական օգնությունը, կոմիսարիատ, որի գլուխ կանգնած էր փորձված լենինյան Վ. Վ. Կույբիշևը, Հայկական ՍՍՀ ԿՎՀ-ԲԳՏ-ն 1923—1925 թվականներին ծավալուն աշխատանքներ կատարեց։ Նա մանրամասն հետազոտությունների ենթարկեց սովետական-տնտեսական հիմնարկների մի շարք օղակները և իր գործնական առաջարկներով զգալի չափով բարելավեց նրանց աշխատանքները։

2. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ։ ԳՅՈՒՂԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ։ ԴԱՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՊԱՅՔԱՐԸ

Խաղաղ շինարարության հինգ տարիների ընթացքում՝ 1921—1925 թվականներին, Սովետական Միությունը խոշոր հաջողությունների էր հասել ժողովրդական տնտեսության վերականգնման ուղղությամբ։ Երկրի արդյունաբերությունը և գյուղատնտեսությունն իրենց արտադրանքի չափով ընդհուպ մոտեցել էին նախապատերազմյան մակարդակին։ 1924—1925 տնտեսական տարում ՍՍՀՄ գյուղատնտեսության արտադրանքը կազմում էր մինչպատերազմյան մակարդակի 87 տոկոսը, իսկ խոշոր արդյունաբերությունը՝ մոտ երեք քառորդը։ Միայն 1924—1925 տնտեսական տարում կապիտալ շինարարության մեջ ներդրվել էր 385 միլիոն ռուբլի։ Հաջողությամբ իրականացվում էր երկրի էլեկտրիֆիկացման լենինյան պլանը։ Այդ ժամանակաշրջանում արդյունաբե-

բության ընդհանուր արտադրանքի մեջ սոցիալիստական սեկտորը կազմում էր 61 տոկոս, իսկ խոշոր արդյունաբերության մեջ՝ 96,1 տոկոս։

Ժողովրդական տնտեսության վերականգնման գործում ձեռք բերված հաջողությունների շնորհիվ գնալով ավելի էին ամրապնդվում Սովետական Միության միջազգային դիրքերը։

Խոշոր հաջողություններ էին հասել բոլոր ազգային սովետական հանրապետությունները, այդ թվում նաև անդրկովկասյան հանրապետությունները՝ Ադրբեջանը, Վրաստանը և Հայաստանը։ Երկրամասում ամբողջ գյուղատնտեսության համախառն արտադրանքը 1925 թվականին կազմում էր մինչպատերազմյան մակարդակի 72,3 տոկոսը, իսկ արդյունաբերությանը՝ ավելի քան 75 տոկոսը։ Նշանակալից հաջողություններ էին ձեռք բերվել նաև կուլտուրական շինարարության բնագավառում։

Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների IV համագումարում ցույց տալով կոմունիստական կուսակցության լենինյան ազգային քաղաքականության կենսագործման հաջողությունները, Անդրերկոմի քաղաքական հաշվետվության մեջ Գ. Կ. Օրջոնիկիձեն նշել է, որ Անդրկովկասում ձեռք է բերվել՝

«1. Անխորտակելի ազգային խաղաղություն, որը վերջին քառորդ դարի ընթացքում առաջին անգամ անդրկովկասյան բանվորին և գյուղացուն ապահովեց ազատ, անվտանգ, խաղաղ աշխատանք։

2. Անդրկովկասի աշխատավորական մասսաների աչքում նացիոնալիստական հակահեղափոխական կուսակցությունների՝ մենշևիկների, դաշնակների, մուսավաթականների և մյուսների կատարյալ վարկաբեկումը, որը վերջացավ դրանցից ամենաուժեղի՝ վրացական մենշևիկների կատարյալ քայքայմամբ ու կազմալուծմամբ (մուսավաթականների և դաշնակների մասին հարկ էլ չկա խոսել)։

3. Քաղաքական բնույթի բանդիտիզմի բացակայություն։

4. Անդրկովկասի գյուղացիական մասսաների վերջնական նվաճումը՝ հողային հարցի արմատական լուծումով։

5. Գյուղատնտեսության և արդյունաբերության վերականգնման արագ տեմպ Անդրկովկասում։


6. Գաղափարական բեկում ինտելիգենցիայի շրջանում՝ սովետական իշխանության նկատմամբ լոյալ վերաբերմունք ունենալու կողմը»[1]։

Նշանակալից հաջողություններ էին ձեռք բերվել նաև Սովետական Հայաստանում։ Այդ հաջողություններն ամփոփվեցին ՀԿԿ IV համագումարում, որը տեղի ունեցավ Երևանում 1925 թվականի նոյեմբերի 4-ից դեկտեմբերի 2-ը։

Հանրապետության աշխատավորներն իրենց նվիրական աշխատանքի շնորհիվ 1925 թվականին հիմնականում ավարտել էին ժողովրդական տնտեսության վերականգնումը։ Ցանքատարածությունները կազմում էին 1913 թվականի մակարդակի 85,5 տոկոսը, իսկ 1919 թվականի համեմատությամբ ավե-

1 Գ. Կ. Օրջոնիկիձե, Ընտիր հոդվածներ և ճառեր, էջ 130—131։

լացել էին ավելի քան 3,5 անգամ[1]։ Գյուղատնտեսական հիմնական կուլտուրաների բերքատվությունը մոտեցել էր նախապատերազմյան մակարդակին։ Ձգալի աշխատանք էր տարվում հողի մշակման ու ոռոգման բարելավման ուղղությամբ։ 1925 թվականի հունիսին շահագործման հանձնվեց Շիրակի ջրանցքը, որի բացումը վերածվեց համաժողովրդական տոնի։ Սովետական Հայաստանի բազմաթիվ շրջանների պատգամավորություններից ու ներկայա-



Շիրակի ջրանցքի բացումը

ցուցիչներից բացի, հանդեսին ներկա էին եղբայրական սովետական հանրապետությունների ներկայացուցիչները։ Այդ օրերին Հայաստանում էր գտնվում և Շիրակի ջրանցքի բացմանը մասնակցեց նաև Ազգերի լիգային կից աշխատանքի միջազգային բյուրոյի հանձնաժողովը՝ շվեդական նշանավոր գիտնական, Սովետական Միության և հայ ժողովրդի բարեկամ Ֆ. Նանսենի գլխավորությամբ, որը ելույթ ունենալով ջրանցքի բացման առթիվ տեղի ունեցած միտինգում, նշեց, թե ինչպիսի հաջողություններ կարող է հասնել մի ընդունակ ժողովուրդ իր համեստ միջոցներով, չնայած կրած ղրկանքներին, տանջանքներին, պատերազմի սրհավիրքներին և դարեր շարունակ իրար հաջորդող

1 Տե՛ս «Народное хозяйство ССР Армении к концу восстановительного периода», Երևան, 1928, էջ 27։ «Социалистическое строительство Армянской ССР. 1920—1940 гг.», էջ 64։

ավերածություններին[1]։ Այնուհետև խոսելով Սովետական Հայաստանի հաջողությունների մասին, նա ասաց. «Այնտեղ, ուր իշխում էին քաոսը, թշվառությունը և սովը, հաստատվեց կարգ ու կանոն։ Այսօր բոլորը վերելքի ուղի են բռնած, հասարակության օրգանիզմը զարգանում է շնորհիվ կառավարության ճեռնարկությանը»[2]։

1924—1925 տնտեսական տարում Սովետական Հայաստանի գյուղատնտեսության ընդհանուր արտադրանքը արժեքային արտահայտությամբ կազմում էր 57,16 միլիոն ռուբլի[3] (1925—1927 թվականների անփոփոխ գներով)։ Այդ նշանակում է, որ 1925 թվականին հանրապետության գյուղատնտեսության ընդհանուր արտադրանքն արժեքային արտահայտությամբ արդեն մոտենում էր 1913 թվականի մակարդակին, որը կազմում էր 65,8 միլիոն ռուբլի[4]։

Ժողովրդական տնտեսության վերականգնման շրջանի վերջում հանրապետության գյուղատնտեսության կյանքում սկսում են նկատելի դեր կատարել գյուղատնտեսական արտադրական կոոպերացիայի պարզ ձևերը և վարկային ընկերությունները։

Չնայած սովխոզները քանակով չէին աճել (կար 4 սովխոզ), սակայն կազմակերպական, տնտեսական առումով զգալի չափով ամրապնդվել էին։ Ավելացել էր մշակելի հողերի տարածությունը, բարելավվել տեխնիկական զինվածությունը և բարձրացել բերքատվությունը։ Լինելով սոցիալիստական օրինակելի տնտեսություններ, սովխոզները աշխատավոր գյուղացիությանը գործնականում ցույց էին տալիս իրենց առավելությունները։

Տնտեսության վերականգնմանը զուգընթաց, անընդհատ աճում էին պետության կողմից կապիտալ ներդրումները հանրապետության գյուղատնտեսության մեջ։ Այսպես, միայն 1924—1925 տնտեսական տարում ներդրվել էր 1.740 հազար ռուբլի[5]։ Զգալի չափով բարելավվել էր չքավոր և միջակ գյուղացիության դրությունը, որին սովետական իշխանությունը մեծ օգնություն էր ցույց տալիս։ 1924—1925 տնտեսական տարում չքավոր ու միջակ գյուղացիությանը տրվել էր 4.416 հազար ռուբլի պետական վարկ[6]։ 1925 թվականից զգալի չափով պակասեցվեց գյուղատնտեսական հարկը՝ հօգուտ չքավոր և միջակ տնտեսությունների։ Տեղի ունեցավ արդյունաբերական որոշ ապրանքների գների իջեցում։ Չքավոր գյուղացիության որոշ մասը տնտեսապես ամրացավ և դարձավ միջակ։

Սակայն գյուղում կատարվող դասակարգային տեղաշարժերը դրանով չէին սահմանափակվում։ Ունևոր և միջակ տնտեսությունների հաշվին որոշ չափով աճում էին կուլակային տնտեսությունները, որը պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում չէր կարող լայն ծավալ ընդունել, ինչպես կապիտալիստական երկրներում։ Սովետական գյուղում տեղի ունեցող շերտավորումը

---

1 Տե՛ս «Նոր ուղի», 1930, № 4—5, էջ 55—56։

2 Նույն տեղում, էջ 49։

3 Տե՛ս «Народное хозяйство ССР Армении к концу восстановительного периода», էջ 30—31։

4 Տե՛ս «Социалистическое строительство Армянской ССР», էջ 47։

5 Տե՛ս «Народное хозяйство ССР Армении к концу восстановительного периода», էջ 39։

6 Տե՛ս «Հայաստանի ՍԽՀ ժողովրդական տնտեսությունը 1924—1925 և 1925—1926 թթ.», էջ 21։

տրամագծորեն հակառակ էր կապիտալիստական գյուղում կատարվող շերտավորմանը. «Դիտելով սոցիալ-դասակարգային տեսակետից,— ասված է Համկ(բ)կ XV համագումարի՝ գյուղում կատարվող աշխատանքի վերաբերյալ բանաձևում,— գյուղատնտեսության զարգացման պրոցեսը ներկայումս բնութագրվում է սոցիալիստական և կապիտալիստական տենդենցների պայքարով։ Այդ պայքարն իր առանձնահատուկ դրոշմն է դնում գյուղի դիֆերենցացման պրոցեսի վրա, դիֆերենցացում, որը մեր պայմաններում խիստ տարբերիչ առանձնահատկություններ ունի»[1]։ Եթե կապիտալիստական գյուղում զարգացումը ընթանում է միջակ գյուղացիության քայքայման և ծայրախմբերի՝ չքավորության ու կուլակության աճման պայմաններում, ապա մեզ մոտ նոր տնտեսական քաղաքականության հետևանքով կուլակության ժամանակավոր աշխուժացման, մասնակի աճման պայմաններում տեղի ուներ չքավորության նվազեցման և միջակության աճման պրոցես։

Բուխարինականներն ամեն կերպ փորձում էին կոծկել գյուղում տեղի ունեցող դասակարգային շերտավորումը և կուլակության մասնակի աճման փաստը։ Իսկ տրոցկիստները ուռճացնում էին կուլակության և կապիտալիստական մյուս տարրերի՝ նեպմանների, սպեկուլյանտների վտանգը։ Տրոցկիստները համառորեն պնդում էին իրենց սխալ դրույթը այն մասին, թե նոր տնտեսական քաղաքականությունը միայն նահանջ է, որը կուսակցության կողմից դատապարտվել էր հենց նեպի անցնելու առաջին շրջանում։

Կոմունիստական կուսակցությունը մերկացնելով և վճռական հակահարված տալով բուխարինականներին ու տրոցկիստներին, ճիշտ կերպով գնահատեց տվյալ ժամանակաշրջանում սովետական գյուղում կատարվող շերտավորումը։ Կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ սովետական իշխանությունը նախադրյալներ էր ստեղծում անհատական մանր տնտեսությունների հետամնաց տեխնիկայի վրա հենված գյուղը սոցիալիստական ուղու վրա դնելու համար։

Թշնամին համառորեն դիմադրում էր սովետական կառավարության միջոցառումներին։ Կուլակները, նեպմանները և մյուս հակասովետական տարրերը պայքարում էին գների սովետական քաղաքականության դեմ, քաղաքականություն, որի նպատակն էր ապրանքաշրջանառության ծավալման միջոցով ավելի ու ավելի ամրապնդել գյուղի և քաղաքի միջև եղած կապը, բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը։ Գների սովետական քաղաքականությունը հետևողականորեն իրականացնում էր ապրանքաշրջանառության գործում կուլակային-նեպմանական տարրերի սահմանափակման, պետական և կոոպերատիվ առևտրի ծավալման միջոցով նրանց աստիճանաբար առևտրի ոլորտից դուրս մղելու գիծը։

Դասակարգային թշնամու կողմից սովետական իշխանության դեմ մղվող պայքարը արտահայտվում էր նաև տեռորիստական գործողությունների միջոցով, որոնք առաջին հերթին ուղղված էին կուսակցական-սովետական ակտիվ աշխատողների դեմ։ Այդպիսի մի ակտ էր 1925 թվականի հուլիսին Վաղար-

1 «ՍՄԿՊ-ն... բանաձևերում ու որոշումներում», մաս II, 1955, էջ 598։

շապատի գավառի Ներքին Աղջաղլայի գյուղսովետի քարտուղար Մանուկ Խուշոյանի սպանությունը։ Նման տեռորիստական ակտեր կատարվեցին նաև Բասարգեչարում, Դարալագյազում, Կոտայքում և Հանրապետության մի շարք այլ վայրերում։

Դասակարգային պայքարը սուր կերպով արտահայտվում էր նաև քաղաքում։ Այստեղ թշնամին գործադրելով տարբեր միջոցներ, ամեն կերպ փորձում էր ձախողել արդյունաբերական ձեռնարկությունների վերականգնումը, նոր գործարանների և այլ շինությունների կառուցումը։ Աշխատավորների մեջ սովետական իշխանության նկատմամբ դժգոհություն առաջացնելու նպատակով, թշնամական տարրերը խառնաշփոթություն էին մտցնում տարիֆային գործում, խախտում էին աշխատավարձի նորմաները, աշխատավորների նյութական-կենցաղային պայմանների բարելավման համար հատկացված գումարները ծախսում էին այլ նպատակներով, կամ որտեղ հնարավոր էր, վատնում էին այն։ Հին կարգերից մնացած բյուրոկրատիզմը, որը տեղ էր գտել սովետական ապարատի առանձին օղակներում, դասակարգային թշնամու կողմից նույնպես օգտագործվում էր որպես սովետական ապարատը վարկաբեկելու և աշխատավորության մեջ դժգոհություններ առաջացնելու միջոց։

Գյուղի և քաղաքի զոդումն ամրապնդելու նպատակով, որպես վարչա-քաղաքական միջոցառումներ, անհրաժեշտ համարվեց գյուղում ծավալել սովետական դեմոկրատիան, աշխուժացնել սովետների աշխատանքները, էժանացնել պետական ապարատը, նրանից դուրս մղել բյուրոկրատիզմի մնացորդները և թշնամական տարրերին, պետական ապարատը լիովին մերձեցնել մասսաներին, այն դարձնել ավելի մասսայական և հզոր։

Սովետական կառավարության որոշմամբ 1925 թվականին տեղի ունեցավ գյուղատնտեսական հարկի իջեցում։ Հօգուտ բատրակության, չքավոր ու միջակ գյուղացիության ճշգրտվեցին և կարգավորվեցին վարձակալության և վարձու աշխատանքի հարցերը։ Պետության օգնությամբ զգալի չափով ընդարձակվեց և ամրապնդվեց գյուղատնտեսական վարկի սիստեմը, ավելի լայն մասշտաբներ ընդունեց կուլտուրական շինարարությունը։

Սովետների գործունեությունն աշխուժացնելու նպատակով գյուղում խոշոր աշխատանքներ ծավալվեցին անկուսակցական ակտիվի կադրեր պատրաստելու ուղղությամբ (կարճատև դասընթացներ, կուրսեր-դպրոցներ և այլն)։ Գնալով բարձրացավ չքավոր ու միջակ գյուղացիության ակտիվությունը։

Դասակարգային թշնամու դեմ մղվող պայքարում չքավոր գյուղացիության համախմբման ու նրա քաղաքական ակտիվության բարձրացման գործում կարևոր դեր կատարեցին չքավորական խմբերը, որոնք կազմակերպվեցին Համկ(բ)կ Կենտկոմի 1925 թվականի հոկտեմբերյան պլենումի որոշմամբ։

Սովետական Հայաստանում չքավորական խմբերի գործունեությունը ակտիվացավ 1926 թվականների սկզբներին։ Իրենց շուրջը համախմբելով բատրակներին ու չքավոր գյուղացիությանը, այդ խմբերը, միջակ գյուղացիության հետ միասին, կուսակցական կազմակերպությունների ղեկավարությամբ գյուղում խոշոր աշխատանք սկսեցին սովետների աշխուժացման, կոոպերացիայի պարզ ձևերի ամրապնդման, հասարակական-քաղաքական աշխատանքների բարելավման համար։ Սովետների ընտրությունների ժամանակ չքավորական

խմբերը ակտիվ պայքար տարան և օժանդակեցին ընտրությունների հաջող ընթացքին։ Նրանք հակահարված տալով կուլակների և մյուս թշնամիների սուվետներ թափանցելու փորձերին, միասնաբար առաջադրում և սուվետների կազմում ընտրում էին իրենց ներկայացուցիչներին։

Գյուղում աշխատանքները բարելավելու և կուսակցական ղեկավարությունը ամրապնդելու նպատակով կուսակցության XIV կոնֆերանսը (1925 թվականի ապրիլ) որոշեց քաղաքից գյուղ աշխատանքի ուղարկել 3000 պրոպագանդիստ, 1000 կուսակցական ղեկավար աշխատող և 2000 կոմերիտական։

Ի կատարումն այդ որոշման, 1925 թվականին Հայաստանի կոմկուսի Երևանի կազմակերպությունն իր շարքերից գյուղ աշխատանքի ուղարկեց 26 լավագույն կուսակցականներ։ Լավագույն կոմունիստներին գյուղում աշխատանքի են ուղարկում նաև Լենինականի, Ղարաքիլիսայի, Ղափանի և Ալավերդու կուսակցական կազմակերպությունները։ Գյուղ մեկնած կոմունիստները զգալի գործ կատարեցին գյուղական կուսակցական կազմակերպություններին օգնելու, նրանց աշխատանքները բարելավելու բնագավառում։

Որպես քաղաքի կողմից գյուղին օգնելու ձևերից մեկը, կուսակցության որոշմամբ այդ ժամանակ լայն ծավալ ընդունեց շեֆական աշխատանքը, արդյունաբերական ձեռնարկություններն, բարձրագույն ուսումնական հաստատությունների և սովետական մյուս հիմնարկությունների շեֆությունը գյուղի վրա։ Շեֆական աշխատանքի նպատակն էր մասսայական-քաղաքական և կուլտուրական աշխատանքի ծավալման միջոցով օգնել աշխատավոր գյուղացիությանը կոմունիստական կուսակցության և սովետական իշխանության որոշումների կատարման գործում, ամրապնդել կապը քաղաքի և գյուղի միջև։ Շեֆական շատ կազմակերպություններ ենթաշեֆ գյուղերին օգնում էին գրականությամբ, կուլտուր-լուսավորական այլ միջոցներով, գյուղատնտեսական գործիքներով, նրանց վերանորոգումներով և այլն։

Գյուղում շեֆական աշխատանքների գծով առանձնապես խոշոր աշխատանքներ ծավալեցին Երևանի և Լենինականի կուսակցական կազմակերպությունները։

3. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Սովետական Հայաստանի բանվոր դասակարգը 1921—1925 թվականներին հերոսական աշխատանք կատարեց հանրապետության քայքայված արդյունաբերության վերականգնման համար։ 1925—1926 տնտեսական տարում ավարտվել էր Սովետական Հայաստանի արդյունաբերության վերականգնումը։

Բնորոշ է, որ 1921—1925 թվականներին Սովետական Հայաստանի արդյունաբերությունը չի սահմանափակվել միայն վերականգնման աշխատանքներով։ Հին վերականգնմանը զուգընթաց, ստեղծվել էին արդյունաբերության մի շարք նոր, այդ թվում տեքստիլ, քիմիական, շինանյութերի և էլեկտրաէներգիայի ճյուղեր։

Ինչպես ասվեց, հանրապետության արդյունաբերության գլխավոր ճյուղի՝ պղնձարդյունաբերության վերականգնման աշխատանքներն սկսվել էին որոշ-

ուշացումով՝ 1924 թվականից, երբ զգալի չափով բարելավվել էր հանրապետության տնտեսական-ֆինանսական դրությունը, որը հնարավորություն տվեց անհրաժեշտ ֆինանսական ներդրումներ կատարել պղնձարդյունաբերության վերականգնման համար։

Կարևոր նշանակություն տալով պղնձարդյունաբերության վերականգնմանը, Հայաստանի կոմկուսը և կառավարությունը, բացի ֆինանսական միջոցներ ներդնելուց, մոբիլիզացրեց նաև այլ հնարավորություններ։ Առանձնապես խոշոր աշխատանք տարվեց արդյունաբերության այդ ճյուղը մասնագետներով և բանվորական կադրերով ապահովելու ուղղությամբ։

Հաղթահարելով բազմաթիվ դժվարություններ, որոնք հատկապես արտահայտվում էին թույլ տեխնիկական զինվածությամբ, անհրաժեշտ սարքավորումների բացակայությամբ, մասնագիտական ուժերի պակասությամբ, պղնձարդյունաբերության աշխատողները հաստատ կերպով առաջ էին տանում նրա վերականգնման աշխատանքները։

Արագ կերպով աճում էր պղնձարդյունաբերության մեջ աշխատող բանվորների թիվը, ավելանում էր պղնձի արտադրանքը։ 1924—1925 տնտեսական տարում բանվորների միջին թիվը հանրապետության պղնձարդյունաբերության մեջ կազմել է 792, իսկ հաջորդ տնտեսական տարում այն հասել է 2.082-ի[1]։ Ճիշտ է, այդ թվերը դեռևս բավական հեռու էին 1913 թվականի մակարդակից, բայց ակնառու կերպով ցույց են տալիս, որ պղնձարդյունաբերությունը բռնել էր արագ և անշեղ վերականգնման ուղին։

Հանրապետության արդյունաբերության մյուս կարևոր ճյուղը հանդիսանում էր գինեգործությունը։ 1924—1925 տնտեսական տարում սննդի արդյունաբերության այս ճյուղում աշխատում էր 114 բանվոր։ Գինեգործության ընդհանուր արտադրանքի արժեքը 1924—1925 տնտեսական տարում կազմել է նախապատերազմյան մակարդակի 55,3 տոկոսը, իսկ այդ ճյուղում զբաղված բանվորների միջին թիվը՝ 55,7 տոկոսը։

Բերված թվերը ցույց են տալիս, որ արդյունաբերության այս ճյուղի վերականգնումը ընթացել է դանդաղ տեմպերով։ Այդ գլխավորապես պետք է բացատրել նրանով, որ պատերազմների հետևանքով Հայաստանում խիստ չափով նվազել էր այգեգործությունը, հատկապես խաղողագործությունը։ Խաղողի այգիները համարյա ամբողջությամբ ոչնչացել էին, իսկ մնացածն էլ խիստ ցածր բերքատվություն ուներ։

Արագ կերպով առաջ էր գնում պանրագործարանների շինարարությունը։ 1925—1926 տնտեսական տարում պանրի արտադրանքն արդեն կազմում էր 1913 թվականի մակարդակի 111,8 տոկոսը։ Ավարտվել էր կաշվի մշակման արդյունաբերության վերականգնումը։ 1925—1926 տնտեսական տարում նրա ընդհանուր արտադրանքը արժեքային արտահայտությամբ կազմում էր 396,0 հազար ռուբլի, այսինքն նախապատերազմյան արտադրանքի 99 տոկոսը[2]։ Հանրապետությունում էլեկտրաէներգիայի արտադրությունը 1913 թվականի հա-

---

1 Տե՛ս «Հայաստանի Սովետական տնտեսությունը 1924—1925 և 1925—1926 թթ.», էջ 26։

2 Տե՛ս նույն տեղում, էջ 26—27։

մեմատությամբ 1925—1926 տնտեսական տարում եռապատկվել էր։ Պոլիգրաֆ արդյունաբերության արտադրանքը նույն ժամանակամիջոցում ավելացել էր 10 անգամ, իսկ փայտասղոցարանների արտադրանքը ավելի քան 3,5 անգամ։ Զգալի չափով աճել էին կապիտալ ներդրումները արդյունաբերության մեջ։ 1924—1925 տնտեսական տարում արդյունաբերության և էլեկտրիֆիկացիայի մեջ ներդրվել էր 2.706 հազար ռուբլի[1]։

1925 թվականին Սովետական Հայաստանի ամբողջ արդյունաբերության ընդհանուր արտադրանքը կազմում էր նախապատերազմյան արտադրանքի 75,5 տոկոսը։

Այսպիսով, հանրապետության արդյունաբերությունը 1925—1926 տնտեսական տարում հիմնականում վերականգնվել էր, որը արդյունք էր Հայաստանի աշխատավորների անձնուրաց աշխատանքի և կոմունիստական կուսակցության լենինյան ազգային քաղաքականության հետևողական կենսագործման։

Էական հաջողություններ էին ձեռք բերվել նաև երկաթուղային տրանսպորտի աշխատանքներում։ 1922 թվականի համեմատությամբ հանրապետությունում 1925 թվականին վագոնների վերանորոգումն ավելացել էր 3,8, իսկ շոգեքարշերինը՝ 5,2 անգամ։ Վերանորոգվել էին հին գծերը և քանդված ու ավերված շատ կամուրջներ։ Զգալի չափով ավելացել էր վագոնների և շոգեքարշերի քանակը։ Երկաթուղային տրանսպորտը արդեն հիմնականում կարողանում էր ապահովել արագ կերպով աճող բեռների և մարդկանց փոխադրումների պահանջը։

Հայաստանի բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների դեպուտատների սովետների IV համագումարը (1925 թվականի մարտ) լսեց Հայկական ՍՍՀ Ժողտնտխորհի զեկուցումը հանրապետության արդյունաբերության և տրանսպորտի վերականգնման արդյունքների մասին։ Այդ զեկուցման առթիվ ընդունած որոշման մեջ համագումարը նշել է, որ խոշոր աշխատանքներ են կատարված արդյունաբերության և տրանսպորտի վերականգնման, ինչպես նաև արդյունաբերության նոր ճյուղերի ստեղծման ուղղությամբ։ Համագումարը կառավարության առջև խնդիր դրեց ուժեղ թափով առաջ տանել պղնձարդյունաբերության վերականգնումը և հետագա զարգացումը, արագացնել Լենինականի տեքստիլ ֆաբրիկայի կառուցումը, ընդարձակել պեմզայի, գինուկոնյակի-սպիրտի և կաշվի մշակման արտադրությունը, Երևանի մեխանիկական գործարանը, ուժեղ թափ հաղորդել Երևանի և Լենինականի հիդրոէլեկտրակայանների շինարարությանը և այլն։

Ամփոփելով հանրապետության ժողովրդական տնտեսության վերականգնման արդյունքները, 1925 թվականի դեկտեմբերին Հայաստանի կոմկուսի IV համագումարն իր ընդունած որոշման մեջ նշել է. «Կոմունիստական կուսակցության տնտեսական քաղաքականությունը մեր երկրում առաջ բերեց տնտեսական վերելք։ ...Ընթացիկ տարում մեր տնտեսությունն ընդհանուր առմամբ ավարտեց իր վերականգնման պրոցեսը։ Տնտեսության բարձրացումը առաջադրում է մեզ արագացնելու ժողովրդական տնտեսության արտադրողական ուժերի զարգացումը. ներկայումս կուսակցության համար իր ամբողջու-

1 Տե՛ս «Народное хозяйство ССР Армении к концу восстановительного периода», էջ 39։

թյամբ դրված է այն խնդիրը, որ ավելացվեն մեր տնտեսության մեջ սոցիալիստական էլեմենտները ինչպես քաղաքում, նույնպես և գյուղում, որի համար համագումարն առաջարկում է ձեռք առնել մի շարք տնտեսական ձեռնարկումներ»[1]։

– Սովետական Հայաստանի ժողովրդական տնտեսության վերականգնմանը դուգընթաց մեծ չափով ավելացել էր բանվոր-ծառայողների թիվը։ Այդ մասին պատկերացում են տալիս հետևյալ թվերը։ 1925—1926 տնտեսական տարում արդյունաբերության մեջ աշխատում էին 6000 բանվոր-ծառայող, կապի ձեռնարկություններում՝ 5000, շինարարության մեջ՝ 4100, պետական հիմնարկներում և պետական-կոոպերատիվ առևտրի ցանցում՝ 12.300, ընդամենը 27.400 բանվոր-ծառայող[2]։ Ինչպես հայտնի է, 1913 թվականին Հայաստանի արդյունաբերության մեջ աշխատել են միայն 4956 բանվոր-ծառայող։

4. ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ԿԵՆՍԱՄԱԿԱՐԴԱԿԻ ԲԱՐՁՐԱՑՈՒՄԸ

Սովետական պետությունը արմատական միջոցներ ձեռք առավ բանվորների աշխատանքային պայմանները և կենցաղը բարելավելու ուղղությամբ։ Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակի առաջին իսկ օրերին հրատարակվեց սովետական կառավարության դեկրետը 8-ժամյա բանվորական օրվա մասին։ 1918 թվականի հունիսի 14-ին հրատարակվեց Սովետական Ռուսաստանի ժողկոմսովետի դեկրետը բանվորներին և ծառայողներին յուրաքանչյուր տարի արձակուրդ տալու մասին՝ արձակուրդի ժամանակամիջոցում պահպանելով նրանց աշխատավարձը։ Նույն թվականի դեկտեմբերին սովետական կառավարությունը հաստատեց «Աշխատանքային օրենսգիրքը», որը 1922 թվականին վերանայվեց և լրացվեց մի շարք նոր դրույթներով։ «Սա սովետական իշխանության հսկայական նվաճումն է,— ասել է այդ օրենսգրքի մասին Վ. Ի. Լենինը,— որ մի այնպիսի ժամանակ, երբ բոլոր երկրները զինվում են բանվոր դասակարգի դեմ, մենք հանդես ենք գալիս մի օրենսգրքով, որը հաստատապես սահմանում է աշխատանքային օրենսդրության հիմունքները, ինչպես, օրինակ, 8-ժամյա աշխատանքային օրը»[3]։

Սովետական Ռուսաստանի աշխատանքային այդ օրենսդրությունը իր կիրառումը գտավ նաև ազգային սովետական հանրապետություններում, այդ թվում՝ Սովետական Հայաստանում։

Աշխատանքային օրենսդրության ստեղծման զուգընթաց, սովետական կառավարությունը սիստեմատիկ կերպով հոգ էր տանում աշխատավորների նյութական կենսամակարդակի բարելավման ուղղությամբ։ Կոմունիստական կուսակցությունը հետևողականորեն կենսագործում էր բոլոր այն միջոցառումները, որոնք ծառայում էին այդ նպատակին։ Այդ միջոցառումներն էին՝ լայն սպառման առարկաների գների սիստեմատիկ իջեցումը, բանվոր-ծառայողների

1 ՄԼԻ հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 5, գ. 1, թ. 336։

2 Տե՛ս «Народное хозяйство ССР Армении к концу восстановительного периода», էջ 42։

3 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 33, էջ 464։

ռեալ աշխատավարձի բարձրացումը, արդյունաբերական ապրանքների և գյուղատնտեսական մթերքների գների միջև եղած անհամաչափության լիկվիդացումը, կայուն դրամական սիստեմի հաստատումը, աշխատավորների սոցիալական ապահովության համար հատկացվող միջոցների ավելացումը, նրանց առողջապահության գործի բարելավումը և այլն։

Ապրանքաշրջանառության ծավալմանը և աշխատավորների նյութական կենսամակարդակի բարելավմանը զգալի չափով խոչընդոտում էր Սովետական Միությունում միասնական և կայուն դրամի բացակայությունը։ Մինչև 1924 թվականը երկրում գոյություն ունեին դրամական երկու միավոր՝ սովետական հին դրամանիշը, որը ապահովված չէր ոսկու և ապրանքային ֆոնդերով, այդ պատճառով էլ խիստ անկայուն էր, և չերվոնեցը, որը բաց էր թողնվել 1922 թվականին և ապահովված էր ոսկու ու ապրանքային ֆոնդերով, բայց շրջանառության մեջ էր դրված սահմանափակ քանակությամբ (50 և 100 ռուբլիանոցներ)։ Այդ պատճառով էլ վերջինս տարածում չուներ և շուկայում գերիշխող չէր հանդիսանում։ Այդպիսի իրադրության պայմաններում անհրաժեշտություն առաջացավ անցկացնել դրամական ռեֆորմ, որի նպատակն էր երկրում հաստատել միասնական և կայուն դրամ, ամրապնդել պետության ֆինանսական վիճակը, ավելի ծավալել ապրանքաշրջանառությունը և նպաստել աշխատավորների նյութական կենսամակարդակի բարձրացմանը։

Բանվոր դասակարգի հետ միասին դրամական նոր ռեֆորմով կենսական նորեն շահագրգռված էին նաև մեր երկրի մանր արտադրողները՝ գյուղացիությունը և արհեստավորությունը։ Միասնական և կայուն դրամի առկայությունը կնպաստեր նրանց արտադրանքի անարգել իրացմանը, ապրանքայնության բարձրացմանը։ Մյուս կողմից դրամական ռեֆորմով վճռական հակահարված կհասցվեր սպեկուլյանտներին և կուլակներին, որոնք օգտվելով անկայուն քղթադրամի ընկնող կուրսից, բազմաթիվ մթքենայություններ էին կատարում և վնասում էին պետությանն ու աշխատավորներին։

Նկատի ունենալով այդ բոլորը, սովետական կառավարությունը 1924 թվականին երկրում իրականացրեց դրամական ռեֆորմը։ Ամբողջ Սովետական Միությունում վերացվեցին հին դրամները և սահմանվեց միասնական կայուն դրամ՝ չերվոնեցը։ Միաժամանակ տեղի ունեցավ լայն սպառման ապրանքների գների իջեցում, նշվեցին մի շարք միջոցառումներ պետական-կոոպերատիվ առևտրի հետագա ընդարձակման, առևտրի բնագավառից կուլակային նէպմանական տարրերին դուրս մղելու համար։ Այդ միջոցառումների շնորհիվ, ժողովրդական տնտեսության վերականգնման տարիներին սովետական երկրում ձեռք բերվեցին աշխատավորների նյութական կենսամակարդակի բարձրացման առաջին հաջողությունները, որոնք Սովետական Հայաստանում հիմնական դծերով արտահայտվում էին հետևյալում։

Պետական բյուջեի աճը. կայուն բյուջեի առկայությունը կարևոր նշանակություն ունի աշխատավորների նյութական կենսամակարդակի համար։ Սակայն ինչպիսին էր այն ժամանակ Հայկական ՍՍՀ պետական բյուջեի վիճակը։ Հանրապետությունում առաջին բյուջեն կազմվել էր 1921 թվականի փետրվարյան ավանտյուրայի չախչախումից հետո՝ նույն թվականի ապրիլ-հունիս ամիսների համար, իսկ մինչև 1924 թվականը բյուջեները կազմվել են դարձյալ կարճ

ժամանակ միջոցների համար (6 ամսով, 9 ամսով և այլն)։ 1924 թվականից, երբ հաստատվեց կայուն դրամը, ստեղծվեց կայուն բյուջե և տարեցտարի տեղի ունեցավ նրա ավելացում՝ մեկ կողմից հանրապետության ընդհանուր եկամուտների ավելացման, մյուս կողմից համամիութենական միջոցներից դոտացիա ստանալու շնորհիվ։ 1924—1925 տնտեսական տարում հանրապետության բյուջեի եկամտային մասը կազմում էր 6. 781 հազար ռուբլի (որից 1.510 հազար ռուբլին դոտացիա էր համամիութենական միջոցներից)։ Հաջորդ տնտեսական տարում բյուջեն աճել էր ավելի քան երկու անգամ, հասնելով 14.667 հազար ռուբլու (որից 4.907 հազար ռուբլին դոտացիա էր համամիութենական միջոցներից)[1]։

Հանրապետական և տեղական բյուջեի ավելի քան 50 տոկոսը այդ տարիներին ծախսվել էր բնակչության նյութական-կենցաղային և կուլտուրական կարիքների համար։ Առանձնապես արագ կերպով աճում էին կոմունալ շինարարության վրա կատարվող ծախսերը։ 1923—1926 թվականներին հանրապետության քաղաքատիպ վայրերում պետությունը կառուցել էր 498 նոր շենք, որոնցից 371-ը բնակելի՝ 21.910 քառ. մետր ընդհանուր տարածությամբ[2]։ Այդ շենքերը հատկացվում էին աշխատավորներին և որոշ չափով բավարարում նրանց պահանջները։

Զգալի հաջողություններ էին ձեռք բերվել պետական-կոոպերատիվ առևտրի և ապրանքաշրջանառության ծավալման գործում։ 1923—1926 թվականների ընթացքում հանրապետությունում ապրանքաշրջանառության ընդհանուր գումարը ավելացել էր մոտ երկուևկես անգամ և հասել 74 միլիոն ռուբլու[3]։ Ըստ որում արագ կերպով ավելանում էր պետական-կոոպերատիվ առևտրի տեսակարար կշիռը մեծածախ և մանրածախ առևտրի բնագավառներում։ Մասնավոր առևտուրը չէր դիմանում մրցությանը, աստիճանաբար դուրս էր մղվում ասպարեզից, իր տեղը զիջելով սոցիալիստական սեկտորին։ Բարձրանում էր բանվոր-ծառայողների ռեալ աշխատավարձը։

Վճռական միջոցառումներ ձեռնարկվեցին գործազրկության դեմ, որն այն ժամանակ դեռևս լիկվիդացված չէր։ Գնալով պակասեց գործազուրկների թիվը։ Աշխատանքային համապատասխան ստաժ ունեցող գործազուրկները ստանում էին պետական նպաստ։ Բացի դրանից, պետության օգնությամբ գործազուրկներից կազմակերպվեցին տարբեր տեսակի՝ կոշկակարների, ջուլհակների, կառուցողների և այլ աշխատանքային-արտադրական արտելներ։

Սովետական պետության դեպի չքավոր ու միջակ գյուղացիությունը ցուցաբերած հոգատարության և օգնության շնորհիվ զգալի չափով բարելավվել էր նրանց, ինչպես նաև սովետական ինտելիգենցիայի՝ ուսուցչության, պրոֆեսորա-դասախոսական կազմի, գիտական աշխատողների, պետական ապարատի ծառայողների և մյուս շերտերի նյութական, կենցաղային պայմանները։

---

1 Տե՛ս «Խորհրդային Հայաստանը թվերով» (վիճակագրական տեղեկատու. 1923—1927 թթ.), էջ 242 և 244։

2 Տե՛ս նույն տեղում, էջ 264։

3 Տե՛ս «Հայաստանի ՍԽՀ ժողովրդական տնտեսությունը 1924—1925 և 1925—1926 թթ.», էջ 44։

Հանրապետության աշխատավորների նյութական դրության բարելավումով է բացատրվում այն փաստը, որ ժողովրդական տնտեսության վերականգնման տարիներին տեղի էր ունեցել զգալի քանակությամբ անհատական բնակարանների շինարարություն։ 1923—1926 թվականներին միայն քաղաքատիպ վայրերում կառուցվել էին 3065 անհատական բնակարաններ՝ 61.575 քառ. մետր ընդհանուր տարածությամբ[1]։ Բացի դրանից, որոշ կոմունալ շինություններ էին կառուցել նաև հասարակական ու կոոպերատիվ կազմակերպությունները։

Նշված ժամանակամիջոցում Սովետական Հայաստանում պետության, հասարակական և կոոպերատիվ կազմակերպությունների կողմից և անհատական կարգով կառուցվել էր 3579 շենք՝ 83. 859 քառ. մետր ընդհանուր տարածությամբ[2], որի խոշորագույն մասը հատկացվել է բնակելի տարածության։

Շինարարական այդ աշխատանքները հիմնականում կատարվել էին Երևանում, Լենինականում, Ղարաքիլիսայում, Ղափանում և Ալավերդում։

Նշանավոր ճարտարապետ Ալ. Թամանյանը 1923 թվականին տեղափոխվեց մշտական աշխատանքի Հայաստան։ Կառավարության հանձնարարությամբ նա մշակեց Երևանի վերակառուցման գլխավոր հատակագիծը։ Միաժամանակ նախագծեց սովետահայ ճարտարապետության նշանավոր շենքերը՝ Երևանի առաջին հիդրոէլեկտրակայանը, կառավարական տունը, օպերայի թատրոնը, ինչպես նաև անասնաբուժական-անասնաբուծական, բժշկական (անատոմիկում), ֆիզիոթերապևտիկ ինստիտուտների շենքերը և մի շարք այլ կառույցներ։

Ժողովրդական տնտեսության վերականգնման տարիներին հանրապետությունում խոշոր աշխատանք կատարվեց աշխատավորների առողջապահության գործի բարելավման բնագավառում, որը մինչև սովետական կարգերի հաստատումը շատ ցածր մակարդակի վրա էր գտնվում։ Դրա մասին պատկերացում է տալիս այն փաստը, որ 1913 թվականին ամբողջ Հայաստանում աշխատել է միայն 57 բժիշկ[3]։ Առողջապահության մանր-մունր հաստատությունները գրտնվում էին գլխավորապես մասնավոր անձանց տնօրինության տակ և բժշկական օգնության բարձր գների հետևանքով անմատչելի էին աշխատավորական մասսաներին։ Աշխատավորության առողջապահության գործը կազմակերպելու նպատակով ստեղծվեց Հայկական ՍՍՀ առողջապահության ժողովրդական կոմիսարիատ։

Չնայած երկրի նյութական-ֆինանսական ծանր վիճակին, սովետական կառավարությունը խոշոր միջոցներ հատկացրեց առողջապահությանը, որի շնորհիվ, կարճ ժամանակամիջոցում զգալի չափով ընդարձակվեց նրա ցանցը։ 1921 թվականի դեկտեմբերին Հայաստանում, միայն առժողկոմատի ցանցում գործել են 77 հաստատություններ (հիվանդանոցներ, պոլիկլինիկաներ, գիտական ինստիտուտներ, բուժկայաններ, լաբորատորիաներ և այլն), 1923 թվականին դրանց թիվը 95 էր՝ 878 աշխատակիցներով, որից 108-ը բժիշկ, իսկ

---

1 Տե՛ս «Հորհրդային Հայաստանը թվերով» (վիճակագրական տեղեկատու. 1923—1927 թթ.), էջ 264։

2 Տե՛ս նույն տեղում, էջ 264—265։

3 Տե՛ս «Социалистическое строительство Армянской ССР», էջ 100։

1925 թվականի դեկտեմբերին առողջապահական հաստատությունների թիվը հասել էր 151-ի, 1026 աշխատակիցներով, որից 187-ը բժիշկ[1]։

Կառավարության որոշմամբ 1923 թվականին Երևանում կազմակերպվեց հանրապետությունում առաջին գիտա-հետազոտական առողջապահական հիմնարկը՝ տրոպիկական ինստիտուտը, որն իր գոյության առաջին իսկ շրջանից մեծ աշխատանք ծավալեց Արարատյան դաշտում բնակչության մեջ լայն տարածված ջերմախտի (մալարիայի) բուժման գործում։ Տրոպիկական կայանների թիվը 1925 թվականին հասել էր 9-ի[2]։ Բնակչությանը ցույց տրված ձրի բժշկական օգնության շնորհիվ արագ կերպով նվազեց ջերմախտով հիվանդների թիվը։

Պետության կողմից ցույց տրված օգնության շնորհիվ 1921—1925 թվականներին բնակչության մեջ մեծ չափով պակասել էր նաև այլ հիվանդությունների թիվը։

Աշխատավորների առողջապահության գործը բարելավելու նպատակով սովետական իշխանությունը ձեռնամուխ եղավ հանրապետությունում առողջարանների և հանգստյան տների կազմակերպմանը։ 1923 թվականին Ծաղկաձորում կազմակերպվեց առաջին հանգստյան տունը։ 1924 թվականից սկսեց գործել Դիլիջանի առողջարանը։

Սովետական իշխանության կողմից աշխատավորների առողջապահության նկատմամբ ցուցաբերած հոգատարության օրինակներից է այդ բնագավառում ծախսված գումարների արագ աճը։ Եթե 1921 թվականին միայն առողջապահության ժողկոմատի գծով ծախսվել էր 117.134 ռուբլի, ապա 1924—1925 տնտեսական տարում՝ 1.124.124 ռուբլի[3]։ Բացի դրանից, խոշոր ծախսեր էին կատարվել աշխատավորների սոցիալական ապահովության գծով։

Սովետական Հայաստանում, ժողովրդական տնտեսության վերականգնման տարիներին, աշխատավորների նյութական բարեկեցության բարելավման անմիջական արդյունքներից մեկը հանդիսացավ բնակչության բնական արագ աճը և մահացությունների նվազումը։ Այսպես, հանրապետության բնակչության բնական աճը կազմել է՝ 1923 թվականին՝ 2,52, իսկ 1926 թվականին՝ 3,69 տոկոս։ Եթե սովետական կարգերի հաստատման ժամանակ Հայաստանի բնակչության թիվը 700 հազար էր, ապա 1926 թվականին այն հասել էր 881.290-ի[4]։ Բացի բնական աճից, բնակչության թիվը ավելացել էր նաև արտասահմանից ներգաղթած և սովետական մյուս հանրապետություններից Հայաստան եկած աշխատավորների հաշվին։

* * *

Սովետական Հայաստանում ժողովրդական տնտեսության վերականգնումը տեղի ունեցավ սովետական պետության զարգացման առաջին շրջանում, երբ պետության հիմնական խնդիրն էր ճնշել տապալված դասակարգերի դիմադրու-

---

1 Տե՛ս «Խորհրդային Հայաստանը թվերով» (վիճակագրական տեղեկատու. 1923—1927 թթ.), էջ 44։

2 Տե՛ս «Խորհրդային Հայաստան 1920—1925 թթ.» (ժողովածու), էջ 343։

3 Տե՛ս նույն տեղում, էջ 344։

4 Տե՛ս «Социалистическое строительство Армянской ССР», էջ 9։

թյունը, կազմակերպել երկրի պաշտպանությունը ինտերվենտների հարձակումներից, վերականգնել ժողովրդական տնտեսությունը և անհրաժեշտ պայմաններ նախապատրաստել կապիտալիստական տարրերի լիկվիդացման համար։

Սովետական Միության ժողովրդական տնտեսության արագ վերականգնման, սոցիալիստական շինարարության ծավալման գործում վճռական նշանակություն ունեցավ արտադրության գործիքների ու միջոցների հանրայնացումը և ժողովրդական տնտեսության պլանաչափ զարգացումը։ Կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ ճիշտ կերպով պլանավորելով ամբողջ երկրի, բոլոր ազգային հանրապետությունների ժողովրդական տնտեսության վերականգնման գործը, սովետական պետությունը կարողացավ հաջողությամբ իրականացնել այն, մեր երկիրը կանգնեցնելով զարգացման նոր՝ սոցիալիստական ինդուստրացման էտապի առջև։

Սովետական Հայաստանի ծայրահեղ քայքայված ժողովրդական տնտեսության արագ վերականգնումը, դրան զուգընթաց տեղի ունեցած սոցիալիստական վերակառուցումը կոմունիստական կուսակցության լենինյան ազգային քաղաքականության հետևողական կենսագործման արդյունք էին։ Այդ տեսակետից պատմական խոշոր դեր կատարեց Անդրկովկասյան Ֆեդերացիան, որը փայլուն կերպով լուծեց կոմունիստական կուսակցության կողմից իր առջև դրված խնդիրները սոցիալիստական շինարարության տվյալ ժամանակաշրջանում։ Հանդիսանալով մեր բազմազգ սոցիալիստական պետության՝ ՍՍՀՄ-ի իրավահավասար անդամներից մեկը, Անդրկովկասյան Ֆեդերացիան իր շուրջը համախմբելով երկրամասի բազմազգ աշխատավորությանը, մոբիլիզացնելով նրա ուժերն ու հնարավորությունները, 1922—1925 թվականների ընթացքում հսկայական ստեղծագործական աշխատանք ծավալեց երկրամասում ժողովրդական տնտեսության վերականգնման և վերակառուցման ուղղությամբ. «...եթե այսօր Անդրկովկասը հանդիսանում է համախորհրդային մեծ Միության անդամներից մեկը, եթե նրա տնտեսությունը զարգանում է անընդհատ և հաստատուն քայլերով,— ասված է Անդրֆեդերացիայի երրորդ տարեդարձի առթիվ Հայաստանի սովետների չորրորդ համագումարի կոչում,— ու եթե նա իր խորհրդային հեղափոխական պարտականությունը կատարում է հանդեպ այդ Միության, ապա անկասկած այդ դեպքում նա պարտական է առաջին հերթին իր՝ Անդրկովկասի հանրապետությունների ֆեդերացիային»[1]։

Անդրկովկասյան Ֆեդերացիայի նշանակությունը չէր սահմանափակվում միայն դրանով։ Նա հսկայական դեր կատարեց նաև երկրամասի աշխատավորական մասսաների ինտերնացիոնալ դաստիարակության և ժողովուրդների իրավահավասարության ու եղբայրական համագործակցության գաղափարները ամրապնդելու գործում։

Սոցիալիստական շինարարության գործում նոր, ավելի մեծ հաջողությունների հասնելու նպատակով՝ կոմունիստական կուսակցությունը մեր պետության, ամբողջ սովետական ժողովրդի առջև մարտական խնդիր դրեց՝ գործի դնել տնտեսական շինարարության բոլոր ուժերը, յուրաքանչյուր շրջանում, մար-

---

1 «ՀՍՖՀ խորհուրդների չորրորդ համագումարը» (տպագրական հաշվետվություն), Երևան, 1926, էջ 254։

կում, նահանգում և ազգային հանրապետությունում աշխուժացնել արդյունաբերական կյանքը, զարգացնել արտադրողական ուժերը, կենտրոնի շահերը սերտորեն շաղկապել տեղերի շահերին, ծավալուն կերպով առաջ տանել երկրի սոցիալիստական շինարարությունը։

– Ամբողջ Սովետական Միության, նրա բաղկացուցիչ մասը հանդիսացող Անդրկովկասյան Ֆեդերացիայի, այդ թվում Սովետական Հայաստանի հետագա զարգացումը անշեղ կերպով ընթացավ նախագծված ուղիով։

ԲԱԺԻՆ Գ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ 1926 - 1932

ԳԼՈՒԽ ԻՆՆԵՐՈՐԴ

ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԻՆԴՈՒՍՏՐԱՑՄԱՆ ԵՎ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿՈԼԵԿՏԻՎԱՑՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1. ԻՆԴՈՒՍՏՐԱՑՄԱՆ ՍԿԻԶԲԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Ժողովրդական տնտեսության վերականգնումը ավարտելուց հետո Սովետական Միությունը թևակոխեց երկրի սոցիալիստական ինդուստրացման ժամանակաշրջանը։ Դա սոցիալիզմի կառուցման համար մղվող պայքարի նոր էտապ էր, երբ խնդիր էր դրվում ստեղծել սոցիալիզմի նյութա-տեխնիկական բազան։ «Սոցիալիզմի միակ նյութական հիմքը,— ասել է Վ. Ի. Լենինը,— կարող է լինել խոշոր մեքենայական արդյունաբերությունը, որն ընդունակ է վերակառուցելու նաև հողագործությունը»[1]։

Վերականգնման ժամանակաշրջանի վերջում կոմունիստական կուսակցության XIV համագումարը (1925 թվականի դեկտեմբեր) կուսակցությանը և ժողովրդին կողմնորոշեց դեպի սոցիալիստական ինդուստրացման լենինյան պլանի կենսագործումը։ Սոցիալիստական ինդուստրացումը դարձավ կոմունիստական կուսակցության քաղաքականության գլխավոր գիծը։

Սովետական Միության տնտեսա-տեխնիկական հետամնացությունը շուտափույթ լիկվիդացնելու նպատակով կոմունիստական կուսակցությունը և սովետական պետությունը ծրագրեցին սոցիալիստական ինդուստրացումը սկսել ծանր արդյունաբերությունից։ Դա անհրաժեշտ էր ամբողջ ժողովրդական տնտեսությունը վերակառուցելու և երկրի պաշտպանունակությունը ապահովելու համար։

Սովետական Միությունը, որն այն ժամանակ կապիտալիստական շրջապատման մեջ սոցիալիզմ կառուցող միակ երկիրն էր, չէր կարող ընտրել երկրի ինդուստրացման այլ ուղի։ Մինչդեռ, ինչպես հայտնի է, կապիտալիստական երկրների ինդուստրացումը սկսվել է թեթև արդյունաբերությունից։ Ինդուստրիայի ստեղծման համար պահանջվում էին հսկայական կապիտալ ներդրումներ։ Երկրի ինդուստրացման միջոցների հայթայթումը հիմնական դժվարություններից մեկն էր, որը, այնուամենայնիվ, հաջողությամբ հաղթահարվեց։ Սովետական պետության համար սկզբունքորեն անընդունելի էին ծանր

---

1 Վ. Ի. Լենին, *Երկեր*, հատ. 32, էջ 391։

ինդուստրիայի ստեղծման այնպիսի աղբյուրներ, որոնցից օգտվել են կապիտալիստական երկրները, այն է՝ գաղութային և կիսագաղութային երկրներ կողոպտելը, ռազմական տուգանքները, սեփական ժողովրդի շահագործումը։ Մեր երկրի համար բացառվում էին նաև արտաքին փոխառությունները, որպիսիք կապիտալիստական երկրները հրաժարվում էին տալ։

Սովետական ժողովրդին վիճակված էր հաղթահարելու ներքին և արտաքին կարգի մի շարք դժվարություններ ևս, ինչպես՝ համապատասխան փորձի և կադրերի բացակայությունը, շահագործող տարրերի և թշնամիների դիմադրությունը՝ երկրի ներսում և նրանից դուրս, կապիտուլյանտների պայքարը կուսակցության ներսում և այլն։

Այդպիսի պայմաններում սոցիալիզմի կառուցումը և ինդուստրիայի ըստեղծումը մեծագույն սխրագործություն էր սովետական ժողովրդի և կոմունիստական կուսակցության համար։

Երկրի սոցիալիստական ինդուստրացումը ենթադրում էր արդյունաբերական բազաների ստեղծում սովետական բոլոր հանրապետություններում։ Ինդուստրացումով կարևոր էտապ սկսվեց Ռուսաստանի նախկին հետամնաց ծայրամասերի, որոնց թվում և Հայաստանի, պատմականորեն ստեղծված փաստական անհավասարությունը վերացնելու համար։

Սոցիալ-տնտեսական դրությամբ Հայաստանը հետամնաց, գյուղատնտեսական շրջան էր։ 1926 թվականին Հայաստանի բնակչության թիվը հասնում էր 881 հազարի, որի 19,0 տոկոսը բնակվում էր քաղաքներում, իսկ 81,0 տոկոսը՝ գյուղական վայրերում[1]։ Ընդ որում, քաղաքային բնակչության մի մասը նույնպես զբաղվում էր գյուղատնտեսությամբ։ Սոցիալիստական ինդուստրացումն ու գյուղի կոլեկտիվացման նախապատրաստումը նախադրյալներ էին ստեղծում երկրի տնտեսական վերածնության և բնակչության սոցիալական կառուցվածքի արմատական վերափոխման համար։

Հայ ժողովուրդը մեծ եռանդով ձեռնամուխ եղավ երկրի սոցիալիստական ինդուստրացման աշխատանքներին։

1926 թվականի հունվարին Երևանում կայացած Անդրկովկասի Կենտգործկոմի նստաշրջանը նշեց Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի զարգացման կոնկրետ խնդիրները։ Նախատեսվեց Հայաստանում ստեղծել և զարգացնել պղնձի, քիմիական, շինանյութերի արդյունաբերական ճյուղերը, էլեկտրաէներգիայի արտադրությունը, ինչպես նաև թեթև ու սննդի արդյունաբերությունը և այլն[2]։

Արդյունաբերության ու գյուղատնտեսության զարգացման խնդիրները քննարկվեցին ՀՍՍՀ սովետների V համագումարում, որը կայացավ 1927 թվականի մարտ-ապրիլին։ Համագումարին մասնակցում էին 384 պատգամավոր, այդ թվում՝ ազգային փոքրամասնությունների 53 ներկայացուցիչներ։ Համագումարում քննարկվեցին ՀՍՍՀ կառավարության հաշվետվությունը և հողժողկոմատի զեկուցումը (զեկուցողներ՝ ՀՍՍՀ ժողկոմսովետի նախագահ Ս. Համ-

---

1 Տե՛ս «Советская Армения за 40 лет» (статистический сборник), Երևան, 1960, էջ 17։

2 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 27—30 հունվարի, 1926 թ.։

բարձումյան և հողժողկոմ Ա. Երզնկյան)[1]։ Համագումարը մեծ ուշադրություն նվիրեց պղնձարդյունաբերության վերականգնման և դրա հետ կապված երկաթուղային շինարարության (Ջուլֆա—Մինջևան), էլեկտրիֆիկացիայի, գյուղատնտեսական հումքը վերամշակող արդյունաբերության և ինդուստրացման հետ կապված այլ հարցերի։ Համագումարը որոշեց զարգացնել գյուղատնտեսական կոոպերացիան, ուժեղացնել աշխատավոր գյուղացիությանը ցույց տըրվող օգնությունը։

Սովետների V համագումարն ընտրեց Կենտգործկոմի նոր կազմ։ Կենտգործկոմի անդամների թվում էին Ս. Լուկաշինը, Աշ. Հովհաննիսյանը, Ա. Մռավյանը, Ա. Երզնկյանը, Ն. Կուրսելը, Մ. Աբեղյանը, Բ. Էֆենդիևը, Տ. Մալիշիխինը, Բ. Ներսիսյանը, Գ. Աբաջյանը, Վ. Թարախչյանը և ուրիշներ։ Համագումարն ընտրեց նաև Անդրկովկասյան սովետների IV համագումարի պատգամավորներ (86 վճռական և 11 խորհրդակցական ձայնով) և ՍՍՀՄ Կենտգործկոմի Ազգությունների խորհրդի անդամներ (Ս. Կասյան, Ա. Կարինյան, Աշ. Հովհաննիսյան, Ա. Մռավյան, Հ. Դիլանյան) ու թեկնածուներ (Բ. Սայադյան և Պ. Կուզնեցով)։

Հայաստանի Կենտգործկոմի նստաշրջանը հաստատեց Կենտգործկոմի նախագահության կազմը։ Կենտգործկոմի նախագահ վերընտրվեց Արտաշես Կարինյանը, նախագահի տեղակալ՝ Հայկ Ազատյանը և Կենտգործկոմի քարտուղար՝ Ռուբեն Դաշտոյանը։ Նույն նստաշրջանում հաստատվեց ՀՍՍՀ ԺողկոմսովետԻ կազմը, որի նախագահն էր Սաքո Համբարձումյանը, իսկ նախագահի տեղակալը՝ Ասքանազ Մռավյանը։

Երկրի սոցիալիստական ինդուստրացմանն անցնելու կապակցությամբ պահանջվում էր ավելի ուժեղացնել կուսակցական և հասարակական կազմակերպությունների աշխատանքը, հետևողականորեն կենսագործել կուսակցության առաջ քաշած «ներսներս դեպի արտադրություն» լոզունգը, որն անհրաժեշտ էր աշխատավորների ուժերը մոբիլիզացնելու, նրանց ուշադրությունը ինդուստրացման խնդիրների վրա բևեռելու համար։ Պայքար ծավալվեց միջոցների խստագույն տնտեսման, վարչա-տնտեսական ծախսերի կրճատման, արդյունաբերական ապրանքների գների իջեցման ուղղությամբ, որի նպատակը ինդուստրացման համար միջոցների կուտակումն էր։

Հայաստանի ինդուստրացումը դժվարանում էր նրանով, որ ժողովրդական տնտեսության որոշ ճյուղերի վերականգնումը չէր ավարտվել։ Չնայած Հանրապետության արդյունաբերության զարգացման տեմպերը բարձր էին միութենական միջին ցուցանիշներից, այնուամենայնիվ համախառն արտադրանքի տեսակետից արտադրության նախապատերազմյան մակարդակը դեռևս գերազանցված չէր։

Ինդուստրացման հենց առաջին տարում՝ 1926 թվականին, շահագործման հանձնվեց Երևանի հիդրոէլեկտրակայանը, հանրապետության ինդուստրիալ ձեռնարկությունների առաջնեկը, որի շինարարությունը սկսվել էր 1923 թվականին։ Հիդրոէլեկտրակայանի հանդիսավոր բացմանը ներկա էին Անդրկովկասյան Ֆեդերացիայի կուսակցական ու պետական ղեկավարներ Գ. Օրջոնի-

1 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՄԾ ՊԿԱ, ֆ. 112, ց. 2, գ. 87։

կիձեն, Ս. Աղամալի-Օղլին, Շ. Էլիավան և ուրիշներ։ Իր ճառում Գ. Օրջոնիկիձեն ասաց. «Հիդրոէլեկտրակայանի կառուցումով Հայաստանի աշխատավորությունը հսկայական քայլ է անում դեպի Հայաստանի էլեկտրիֆիկացման գործը։ Նա դրանով իրագործում է ընկ. Լենինի խոշոր ավանդներից մեկը, որը ասում է. «Կոմունիզմը դա սովետական իշխանությունն է պլյուս ամբողջ երկրի էլեկտրիֆիկացիան»[1]։

1925 թվականին Շիրակի ջրանցքի վրա սկսված Լենինականի հիդրոէլեկտրակայանի կառուցումը ավարտվեց 1928 թվականին։

Ավելի մեծ նշանակություն էր ունենալու Զորագէսի հիդրոէլեկտրակայանը, որի շինարարությունը սկսվեց 1927 թվականի հուլիսին։ Կայանի հիմնադրմանը նվիրված միտինգում ճառերով հանդես եկան Մ. Օրախելաշվիլին, Ս. Կասյանը, Վ. Ստուրուան, Ս. Համբարձումյանը, Ա. Կարինյանը, պրոֆ. Մ. Աբեղյանը և ուրիշներ։

«Ողջունում եմ Զորագէսի հիդրոկայանի հիմնադրումը,— ասված է ՍՍՀՄ ժողտնտխորհի նախագահ Վ. Կույբիշևի հեռագրում,— Հիդրոկայանը խոշոր դեր պիտի խաղա Հայաստանի տնտեսության վերելքի ասպարեզում։ Իմ ցանկությունն է՝ լավ, շտապ և էժան կառուցել հիդրոկայանը»։ Կայանը էլեկտրաէներգիա էր մատակարարելու Հյուսիսային Հայաստանի շրջաններին։ Հաշվի առնելով Զորագէսի կարևորությունը, ՀԿ(բ)Կ Կենտկոմի պլենումը 1927 թվականի հուլիսին որոշում ընդունեց նրա շինարարությունն արագացնելու մասին։

Զորագէսը շատ բարդ կառույց էր։ Նա առաջինն էր Սովետական Միությունում իր տեխնիկական բարդ կառուցվածքով և բարձր ճնշումային հզորությամբ։ Հիդրոկայանի ամբարտակի փականն այն ժամանակ ամենախոշորն էր աշխարհում։ Ականավոր գրող Մարիետա Շահինյանը, որը տարիներ շարունակ եղել է կայանի շինարարությունում և ուսումնասիրել այն, նրա դժվարությունների և նշանակության մասին գրել է. «Զորահիդրոկայանը, առանց որևէ փորձի ու նախատիպի, առանց լավ պատրաստված աշխատող կադրերի, շատ սահմանափակ նախահաշվով և միանգամայն դժվար կենցաղային ու բնական պայմաններում, միանգամից դուրս է գալիս համաշխարհային տեխնիկայի լայն ճանապարհը, դնելով ու լուծելով ամենաայժմեական և ամենադժվարին տեխնիկական հարցերից մեկը»[2]։

Կայանի կառուցման աշխատանքները ղեկավարում էր անվանի ինժեներ Հովսեփ Տեր-Աստվածատրյանը։ Հայաստանի Կենտգործկոմի նախագահությունը 1928 թվականի նոյեմբերի 26-ի որոշումով հանրապետությունում առաջինը (սոցիալիստական շինարարության բնագավառում) նրան պարգևատրեց «Աշխատանքային կարմիր դրոշի» շքանշանով։

Գյուղական էլեկտրակայաններ գործարկվեցին Ղարաքիլիսայում, Նոր Բայազետում, Մեղրիում, Իջևանում և այլ վայրերում։ Էներգետիկայի զարգացումը հնարավորություն էր ստեղծում հանրապետության բնական հարստությունները շահագործելու, լեռնա-հանքային և քիմիական արդյունաբերությունը զարգացնելու համար։

---

1 «Խորհրդային Հայաստան», 18 մայիսի 1926 թ.։

2 «Նոր ուղի», ապրիլ-մայիս, 1930, էջ 135։

Շարունակվում էին պղնձարդյունաբերության վերականգնման աշխատանքները, որն ուներ միութենական նշանակություն։ Հանրապետության արդյունաբերության այդ հիմնական ճյուղի վերականգնումը շարունակվեց ընդհուպ մինչև առաջին հնգամյակի վերջերը։ Պղնձարդյունաբերության վերականգնման և զարգացման աշխատանքները ղեկավարելու համար կազմակերպվեց ՍՍՀՄ Ժողտնտխորհին ենթակա «Հայպղինձ» տրեստ («Անդրկովկասի մետալուրգիական ձեռնարկությունների պետական միավորում»), որը գոյություն ունեցավ մինչև 1930 թվականը և լիկվիդացվեց Ալավերդում և Զանգեզուրում ինքնուրույն կոմբինատներ կազմակերպվելու կապակցությամբ։ Մինչև 1928 թվականը շահագործման հանձնվեցին Զանգեզուրի (Լենինյան, Շահումյանի անվան) հանքերը և Շամլուղի ու Ալավերդու (Լենինյան) հանքերի մեծ մասը։ Մինչ այդ գործարկվել էին մեկական պղնձաձուլական գործարան՝ Ալավերդում և Ղափանում։

1928—1929 թվականներին, ինչպես հանքաքարի, այնպես էլ պղնձի ձուլումը հասնում էր հազիվ նախապատերազմյան մակարդակի մոտավորապես կեսին։

Պղնձարդյունաբերության վերականգնումը ուղեկցվում էր մի շարք դժվարություններով։ Հիմնական դժվարությունը կապված էր երկրաբանական-հետախուզական աշխատանքների դանդաղ ընթացքի հետ։

Հաղթահարելով դժվարությունները, Հայաստանի պղնձարդյունաբերությունը վերականգնվում էր, իր տեղը գրավելով Սովետական Միության գունավոր մետալուրգիայի արդյունաբերության մեջ։

Հանրապետության արդյունաբերության նորաստեղծ ճյուղերից էր քիմիական արդյունաբերությունը։ 1927 թվականին շահագործման հանձնվեց Երևանի կարբիդի գործարանը, որը առաջինն էր Սովետական Միությունում։ Նրա արտադրանքը հիմնականում սպառվում էր միութենական շուկայում։

Հայաստանը վաղուց հայտնի է իր շինարարական քարերի և նյութերի բազմաթիվ տեսակներով (տուֆ, պեմզա, բազալտ և այլն), սակայն մինչև սովետական կարգերի հաստատումը գրեթե քայլեր չէին արվել դրանց օգտագործման ուղղությամբ։ Սովետական իշխանության տարիներին սկսվեցին դրանց հանքապաշարների հետախուզությունը և շահագործման աշխատանքները։

1926 թվականից սկսած կատարվեցին տուֆի պաշարների հետազոտություն և նրա հատկություններ գիտական ուսումնասիրություններ, որոնք գլխավորում էին ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի և Ժողտնտխորհի կառուցումների ինստիտուտի գիտնականները և ինժեներները։ Ուսումնասիրությունները տուֆի հարուստ պաշարներ հայտնաբերեցին Արթիկի և այլ շրջաններում։ 1928 թվականին Հայաստանի տուֆը ցուցադրվեց Փարիզի համաշխարհային տոնավաճառում, որտեղ մեծ հետաքրքրություն առաջացրեց։

1928 թվականի հուլիսի 27-ին, ապա օգոստոսի 31-ին ՍՍՀՄ Աշխատանքի և պաշտպանության խորհուրդը ընդունեց երկու որոշում՝ Արթիկի տուֆը շինարարության մեջ լայնորեն օգտագործելու և տուֆի արդյունաբերությունը զարգացնելու մասին։ Սկսվեց Լենինական—Արթիկ երկաթգծի կառուցումը և էլեկտրահաղորդման գծի անցկացումը։

Սովետական Հայաստանում գեղեցիկ և բազմերանգ տուֆը աստիճանաբար դարձավ հիմնական շինաքար։ Այն արտահանվում էր Սովետական Միության մյուս հանրապետությունները, ինչպես նաև արտասահման։

Այդ տարիներին Սովետական Միության շինարարության, ինչպես նաև արդյունաբերության այլ ճյուղերի պեմզայի պահանջի միակ մատակարարողը Հայաստանն էր, չհաշված ներմուծումը արտասահմանից։ Պեմզայի պահանջի ավելացման կապակցությամբ հետախուզվեցին նոր հանքավայրեր և սկսվեց Անի կայարանից դեպի հանքեր տանող երկաթգծի կառուցումը։

1926—1929 թվականներին նախկին մեխանիկական արհեստանոցի բազայի վրա կառուցվեց Երևանի Ջերժինսկու անվան մեխանիկական գործարանը, որն ուներ ձուլման ցեխ և հիմնականում արտադրում էր գյուղատնտեսական գործիքներ, կատարում վերանորոգման աշխատանքներ և այլն։

Ինդուստրացման առաջին տարիներին որոշ զարգացում ապրեց կաշվի արդյունաբերությունը։ Նախկին դաբաղանոցների փոխարեն Երևանում գործարկվեց երկու գործարան, որտեղ մեքենայացվեցին կաշվի մշակման հիմնական գործողությունները։

Որոշ վերելք տեղի ունեցավ նաև թեթև և սննդի արդյունաբերության ճյուղերում։

Ծավալվեց Լենինականի տեքստիլ գործարանի շինարարությունը։ 1923 թվականին, երբ գործարկվեց Լենինականի հիդրոէլեկտրակայանը, շահագործման հանձնվեցին տեքստիլ գործարանի մանվածքային, գործվածքային, գուլպայի ու տրիկոտաժի բաժանմունքները։

1926 թվականի հոկտեմբերի 22-ին տեղի ունեցավ ուժեղ երկրաշարժ, որը մեծ վնաս հասցրեց Լենինական քաղաքին և շրջակա գյուղերին։ Սովետական Միության եղբայրական ժողովուրդների և միութենական կառավարության օգնությամբ Հայաստանի աշխատավորները անմիջապես ձեռնամուխ եղան տուժած շրջանների վերականգնմանը։ Առաջին հերթին օգնություն ցույց տրվեց բնակչությանը՝ ժամանակավոր օթևաններում տեղավորելու և սննդով բավարարելու համար։ ՀՍՍՀ Ժողկոմսովետի և ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախագահության 1926 թվականի հոկտեմբերի 26-ի որոշումներով առանձնացվեց աղետյալներին նախնական օժանդակություն ցույց տվող արտակարգ հանձնաժողով։ Վերականգնման հետ կապված հարցերը նախապատրաստելու նպատակով հատուկ հանձնաժողով էր աշխատում ՀԿ(բ)Կ Կենտկոմին կից։ Շինարարական աշխատանքները ղեկավարելու համար կազմակերպվեց Լենինական քաղաքի և գավառի վերականգնման կոմիտե՝ կառավարության նախագահ Ս. Համբարձումյանի գլխավորությամբ։ ՀԿ(բ)Կ Կենտկոմը, ՀՍՍՀ Կենտգործկոմը և Ժողկոմսովետը հատուկ կոչով դիմեցին հանրապետության աշխատավորներին՝ աղետյալներին օգնություն ցույց տալու մասին։ Մինչև 1927 թվականի մարտ ամիսը միութենական կառավարությունը տրամադրեց վեց միլիոն, իսկ Ուկրաինայի, Ադրբեջանի, Վրաստանի և մյուս սովետական հանրապետությունների աշխատավորները՝ 1,4 միլիոն ռուբլի։

1927 թվականի հունիսին ՍՍՀՄ Կենտգործկոմի նախագահ Մ. Կալինինը ժամանեց Լենինական։ Նա ծանոթացավ երկրաշարժից տուժած քաղաքի և գյուղերի վերականգնման ընթացքին, եղավ արդյունաբերական ձեռնարկությու-

ներում։ 1926 թվականի ուժեղ երկրաշարժից հետո, վերածնվող Լենինականը դառնում էր ինդուստրիալ բարեկարգ քաղաք, Հանրապետության տեքստիլ արդյունաբերության կենտրոն։ Կառուցվեցին նոր տեխնիկայով զինված երկու խոշոր բամբակազտիչ գործարաններ։ Հանրապետության և Անդրֆեդերացիայի կառավարությունները մեծ ուշադրություն դարձրեցին բամբակի արտադրության ավելացմանը և ամեն կերպ նպաստեցին երկրամասում բամբակի ցանքատարածությունների ընդարձակմանը՝ տեքստիլ արդյունաբերությունը հումքով ապահովելու համար։ Դեռևս 1925—1926 տնտեսական տարում Հայաստանում մաքրված բամբակի արտադրությունը զգալի չափով գերազանցեց 1913 թվականի մակարդակը։ 1926 թվականի վերջերին Երևանում շահագործման հանձնվեց ձեթ-օճառի գործարանը։

Սոցիալիստական ինդուստրացման առաջին տարիների փորձը ցույց տվեց, որ հանրապետությունում անշեղորեն կենսագործվում է Հայաստանի տնտեսական հետամնացությունը վերացնելու ծրագիրը։ Տեղական հանքային հարստությունների արդյունաբերական մշակումը դարձավ հանրապետության ինդուստրացման հիմնական ուղին, որով և նա հաղորդակից դարձավ Անդրկովկասի և ամբողջ Սովետական Միության տնտեսությանը։

Հայաստանում ինդուստրացման քաղաքականության կենսագործման վերաբերյալ գոյություն է ունեցել այն տեսակետը, թե իբր դա երկիրը տանում է «փակ տնտեսություն» ստեղծելու, «տնտեսական ունիվերսալիզմի»՝ արդյունաբերության բոլոր ճյուղերն ունենալու ուղիով։ Դա սխալ տեսակետ էր։ Ինչպես սոցիալիստական և կոմունիստական շինարարության բոլոր ժամանակաշրջաններում, այնպես էլ ինդուստրացման առաջին տարիներին Հայաստանի արդյունաբերությունը կազմել է Սովետական Միության արդյունաբերության բաղկացուցիչ մասը, իսկ արդյունաբերական օբյեկտների շինարարությունը հաստատվել և ֆինանսավորվել է միութենական օրգանների կողմից՝ ելնելով տեղական ռեսուրսների, կապիտալ ներդրումների կոնկրետ հնարավորություններից և ազգային հանրապետությունների զարգացման շահերից։

Ստեղծվում էին սոցիալիստական ինդուստրիայի առաջին օջախները։ Այսպիսով, երբեմնի հետամնաց, ագրարային Հայաստանը ոտք է դնում տեխնիկական վերափոխության շեմին։

Սոցիալիստական ինդուստրացման առաջին տարիներին, ինչպես և մինչ այդ, Հայաստանում կոնցեսիա ձեռք բերելու մի շարք առաջարկություններ եղան։ Ինչպես հայտնի է, նոր տնտեսական քաղաքականությանն անցնելու ժամանակ Վ. Ի. Լենինը որոշակի սահմաններում հնարավոր էր համարում առանձին ձեռնարկություններ օտարերկրյա կապիտալիստներին կոնցեսիայով տալը՝ մեր արդյունաբերությունը, առաջին հերթին ծանր ինդուստրիան արագորեն վերականգնելու համար։

Այսպիսի առաջարկություններ եղան Հայաստանի պղնձարդյունաբերությունը վերականգնելու, հիդրոէլեկտրակայան (Հրազդանի վրա), ցեմենտի, բաղալտի և այլ գործարաններ կառուցելու, բամբակագործությունը զարգացնելու, ոռոգման և այլ աշխատանքներ կատարելու մասին։ Կապիտալիստ-շահագործողների առաջարկները, սովորաբար, ուղեկցվում էին բարձր շահույթներ ստանալու և քաղաքական նպատակ հետապնդող առաջարկներով։

Սովետական իշխանությունը միջոցներ գտավ երկիրը ինդուստրացնելու համար։ Հայաստանը բռնեց ինդուստրացման անշեղ վերելքի ուղին։ ՍՍՀՄ կառավարության անշահախնդիր օգնությամբ և Հայաստանի աշխատավորների ջանքերով, սեփական միջոցներով, վերականգնվեց պղնձի արդյունաբերությունը, կառուցվեցին պահածոների, ցեմենտի, բաղալտի գործարաններ, հիդրոկայաններ և բազմաթիվ այլ արդյունաբերական օբյեկտներ, ջուր ստացան խոպան տարածություններ։

Ինդուստրիայի ծավալումը և նրա զարգացման հեռանկարները պահանջում էին որակյալ բանվորներ և ինժեներա-տեխնիկական աշխատողներ։ Ինդուստրացման առաջին տարիներին Սովետական Հայաստանում որոշ հաջողություններ ձեռք բերվեցին կադրերի պատրաստման ուղղությամբ։

Վերակառուցվեց մասնագիտական-տեխնիկական կրթության սիստեմը։ 1926 թվականին Երևանի նախկին դպրոց-արհեստանոցը վերափոխվեց կենտրոնական ֆաբրիկա-գործարանային ուսումնարանի, որի առաջին ուսումնական տարվա ավելի քան հարյուր սովորողներ հանրապետության արդյունաբերական ձեռնարկություններից էին։ Բանվորական մասնագիտական կադրեր էր պատրաստում նաև Լենինականի տեքստիլ գործարանը, որտեղ աշխատող և սովորող հարյուրավոր աշակերտների ճնշող մասը մանկատների նախկին սաներ էին։ 1929 թվականին ֆաբրիկա-գործարանային ուսումնարաններ բացվեցին Ալավերդում և Լենինականի տեքստիլ գործարանում։ Նույն թվականին ֆաբգործուսների և համապատասխան տիպի զանազան դասընթացների թիվը հասավ 21-ի, իսկ աշակերտների թիվը՝ ավելի քան երկու հազարի։

Միջին որակավորման պրոֆտեխնիկական կադրեր էին պատրաստում Երևանի ինդուստրիալ, գեղարվեստական-արդյունաբերական և Լենինականի ինդուստրիալ տեխնիկումները։

Երևանի պետական համալսարանի տեխնիկական ֆակուլտետը տալիս էր հիմնականում շինարար-ինժեներներ։ 1929—1930 ուսումնական տարում հիշյալ ֆակուլտետին կից բացվեց նաև քիմիական բաժին։

ՀՍՍՀ ԺողկոմսովետԻ 1929 թվականի հունվարի 11-ի որոշմամբ կոնկրետ խնդիրներ դրվեցին լուսժողկոմատի, համապատասխան տեխնիկումների և պետական համալսարանի առջև՝ էլեկտրիֆիկացիան, ինչպես նաև զարգացող շինարարությունը և քիմիական արդյունաբերությունը միջին որակի ու բարձրագույն տեխնիկական կադրերով ապահովելու համար[1]։

Համապատասխան կադրերի հավաքագրման ու օգտագործման, ինչպես նաև գիտելիքների տարածման ուղղությամբ մեծ դեր խաղաց հանրապետության ճարտարապետների, տեխնիկների և գյուղատնտեսների ընկերությունը, որի շարքերում հաշվվում էր մի քանի հարյուր մասնագետ։

Ինդուստրացման տարիներին արագորեն աճեց բանվոր դասակարգը։ 1929 թվականին բանվորների և ծառայողների թիվը հասնում էր մոտ 55 հազարի[2]։ Ինդուստրացման շնորհիվ պայմաններ ստեղծվեցին գործազրկությունը վերացնելու համար։

---

1 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 113, ց. 4, գ. 11673, թ. 2—5։

2 Տե՛ս «Советская Армения за 40 лет» (статистический сборник), էջ 157։

Պետք է ասել, որ հանրապետությունում արդյունաբերության նոր ճյուղերի ստեղծման և հների զարգացման գործում, ինչպես նաև ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերում տեղական կադրերի հետ միասին մեծ լումա են ներդրել եղբայրական սովետական հանրապետություններից տարբեր տարիներ Հայաստան ժամանած շատ մասնագետներ, այդ թվում հին կադրերը, որոնք նվիրվածությամբ ծառայեցին սոցիալիստական շինարարությանը։ Պրընճարդյունաբերության վերականգնման գործում աչքի ընկնող ծառայություն են մատուցել երկրաբան Հ. Կարապետյանը, ինժեներներ Վ. Զարապովը, Ս. Մելիք-Հայկազյանը, Հ. Մելիք-Աղամիրյանը և ուրիշներ։ Հայաստանում քիմիական արդյունաբերության ստեղծման նախաձեռնողներից էին Գ. Գուրգենյանը, պրոֆեսորներ Ս. Ղամբարյանը և Լ. Ռոտինյանը։ Էլեկտրիֆիկացիայի և ոռոգման ուղղությամբ մեծ աշխատանք կատարեցին Հ. Տեր-Աստվածատրյանը և Գ. Շիրմազանյանը։ Հայաստանի մասնագետները համագործակցում և օգնություն էին ստանում Մոսկվայի, Լենինգրադի և այլ կենտրոնների գիտնականներից և ինժեներներից։

Սակայն ինժեներա-տեխնիկական և բանվորական կադրերի պրոբլեմը շարունակում էր մնալ հանրապետության սոցիալիստական վերակառուցման նեղ տեղերից մեկը։ Կադրերի պրոբլեմի լուծումը պահանջում էր տևական ու համառ աշխատանք, որ շարունակվեց և ծավալվեց սոցիալիստական շինարարության հաջորդ տարիներին։

Սովետական Միության սոցիալիստական վերակառուցումը հանդիպեց միջազգային իմպերիալիզմի կատաղի դիմադրությանը, որը սոցիալիզմ կառուցող միակ երկրի հզորացման մեջ սպառնալիք էր տեսնում։

Սովետական Միության ինդուստրացման քաղաքականությանն անցնելու ժամանակաշրջանում միջազգային դրությունը բնորոշվում էր կապիտալիզմի հարաբերական կայունությամբ, որը, սակայն, ժամանակավոր և անհաստատ էր։ Սրվում էին կապիտալիստական երկրների և հատկապես ԱՄՆ-ի ու Անգլիայի հարաբերությունները, հասունանում էին հեղափոխական մարտերը։

Սովետական Միության դեմ պայքարի նախաձեռնողներն էին անգլիական իմպերիալիստները, որոնք հասան սովետա-անգլիական հարաբերությունների խզմանը (1927)։ Մի շարք երկրներում հարձակումներ կատարվեցին սովետական ներկայացուցչությունների վրա։ Լեհաստանում սպանվեց ՍՍՀՄ լիազոր ներկայացուցիչը։ 1929 թվականին չինական միլիտարիստները զինված միջադեպի միջոցով զավթեցին ՍՍՀՄ-ին պատկանող չին-արևելյան երկաթուղին։

Միջազգային դրության այսպիսի պայմաններում գլուխ բարձրացրին նաև Կովկասի սահմաններից վռնդված բուրժուա-նացիոնալիստական տարրերը։ 1927 թվականին Փարիզում կազմակերպվեց, այսպես կոչված, «Կովկասի փրկության կոմիտե», որին ակտիվորեն աշխատակցում էին նաև դաշնակցականները։ Կովկասում նախկին ֆրանսիական գերագույն կոմիսար գնդապետ Ա. Շեվալյեի ղեկավարությամբ Ռամիշվիլին, Ժորդանիան, Խոսրով բեկ Սուլթանովը, Ռասուլ Զադեն, Վրացյանը, Խատիսյանը և Անդրկովկասի ու Հյուսիսային Կովկասի ժողովուրդների մյուս դավաճանները, հույս ունենալով, թե անգլիական իմպերիալիստները, լեհական և մյուս հակասովետական ուժերը կհարձակվեն

Սովետական Միության վրա, իրենք ևս նախապատրաստում էին Կովկասի «աղատագրումը»։

Կոմիտեն բանակցություններ էր վարում իմպերիալիստական շրջանների հետ, գործարքներ առաջարկում Կովկասի նավթի հաշվին, որպեսզի միջոցներ հայթայթի իր քշնամական գործունեությունը շարունակելու համար։ Նա հրատարակում էր իր օրգանը՝ «Պրոմեթեյ» վերնագրով (ֆրանսերեն)։

Սովետական պետության հաստատակամ քաղաքականության շնորհիվ ձախողվեցին իմպերիալիստների բոլոր ոտնձգությունները։ 1929 թվականին Անգլիան վերականգնեց դիվանագիտական հարաբերությունները մեր երկրի հետ։ Նույն թվականին կարգավորվեց նաև սովետա-չինական կոնֆլիկտը։

Սովետական Միությունը հետևողականորեն վարում էր խաղաղությունն ամրապնդելու և զինաթափման քաղաքականություն։

ՍՍՀՄ դիվանագիտության հաջողություններն էին 1926 թվականին Գերմանիայի հետ կնքված չեզոքության մասին պայմանագիրը և 1925—1927 թվականներին կնքված չեզոքության և չհարձակման պայմանագրերը Թուրքիայի, Աֆղանստանի, Իրանի և Լիտվայի հետ։

Արաքս և Արփաչայ սահմանային գետերի օգտագործման մասին 1925 թվականին սկսված սովետա-թուրքական բանակցություններն ավարտվեցին 1927 թվականի հունվարի 8-ին՝ Կարսում կոնվենցիայի ստորագրումով (հինգ տարի ժամանակով), որը նույն թվականին վավերացվեց ՍՍՀՄ Կենտգործկոմի և Թուրքիայի Մեջլիսի կողմից։ Բանակցություններին սովետական պատվիրակության կազմում մասնակցում էին նաև Հայաստանի ներկայացուցիչները։ Կոնվենցիային կից ստորագրվեց նաև Արաքս գետի վրա ամբարտակի կառուցման մասին լրացուցիչ արձանագրություն։ Ամբարտակի կառուցումը նախատեսվում էր Սարդարաբադի տափաստանը ոռոգելու նպատակով ջրանցք անցկացնելու համար։

Ամրապնդվում էին Սովետական Միության միջազգային հեղինակությունը և կապերը համաշխարհային պրոլետարիատի հետ։

Այդ տարիներին Սովետական Միությունն ժամանեցին մի շարք արտասահմանյան, այդ թվում բանվորական, պատվիրակություններ։ Նրանց մի մասը եղավ նաև Սովետական Հայաստանում։ Ավստրիական, գերմանական, ֆրանսիական բանվորական և մյուս պատվիրակությունների վրա մեծ տպավորություն գործեցին հանրապետությունում տեղի ունեցող վերափոխումները։ Ֆրանսիական բանվորական պատվիրակության ղեկավարը, դիմելով Սովետական Հայաստանի աշխատավորներին, հայտարարեց. «Ձեր արիությունը, հաստատակամությունը բարձրացրին ձեր երկիրը, ստեղծելով արդյունաբերություն, վերականգնելով գյուղատնտեսությունը։ Եվ դա է՛լ ավելի մեծ ծառայություն է նրանով, որ ձեր երկիրը եղել է քայքայված, որ դուք սկսել եք կառուցել ոչինչ չունենալով»[1]։

1927 թվականի հոկտեմբերին հայ ժողովրդին հյուր եկավ ականավոր գրող, ՍՍՀՄ-ի մեծ բարեկամ Հանրի Բարբյուսը։ Նա դիտեց Լենինականի կառույցները, եղավ էջմիածնում, հանդիպում ունեցավ մայրաքաղաքի կոլեկտիվ-

1 «Խորհրդային Հայաստան», 6 դեկտեմբերի 1927 թ.։

նների հետ։ «Տեսա Խորհրդային Հայաստանը, նրա գեղեցկությունները, նրա պատմական վայրերը, նրա ավերակներն ու ավերակների կողքին բարձրացող նոր շինարարությունը»[1],— ամփոփել է իր տպավորությունները ֆրանսիական նշանավոր դրողը։

ՍՍՀՄ-ի հաջողությունները սոցիալիստական ինդուստրացման, գյուղատնտեսության կոոպերացման և մյուս բնագավառներում, ձեռք էին բերվում երկրի ներսում սրվող դասակարգային պայքարի պայմաններում։

1926 թվականի ամռանը տրոցկիստները, զինովևականները և օպոզիցիոն մյուս խմբերի մնացորդները միավորվեցին հակակուսակցական բլոկի մեջ։ Տրոցկիստական-զինովևական բլոկը ժխտում էր սոցիալիզմի հաղթանակի հնարավորությունը մեր երկրում։ Կոմունիստական կուսակցության XV կոնֆերանսը և Կոմունիստական ինտերնացիոնալի գործադիր կոմիտեի VII ընդլայնած պլենումը գաղափարական ջախջախիչ հարված հասցրին տրոցկիստական-զինովևական օպոզիցիային, այն բնութագրելով որպես մենշևիկյան թեքում։

Չնայած դրան, տրոցկիստները և զինովևականները չդադարեցրին իրենց հակակուսակցական գործունեությունը և 1927 թվականին հանդես եկան իրենց, այսպես կոչված, «83-ի պլատֆորմով», որը միահամուռ կերպով մերժվեց կոմունիստների և ժողովրդական մասսաների կողմից։

Համ(բ)Կ XV համագումարի նախօրյակին կայացած համակուսակցական դիսկուսիոն ժողովները բացահայտեցին տրոցկիստների և զինովևականների սնանկությունը։ Տրոցկիստների օգտին քվեարկեցին հատուկենտ մարդիկ։ Կուսակցության XV համագումարը (1927 թվականի դեկտեմբեր) եզրափակեց տրոցկիստական-զինովևական հակալենինյան բլոկի դեմ կուսակցության պայքարը և նշանավորեց կոմունիստական կուսակցության լենինյան քաղաքականության հաղթանակը։

Տրոցկիստական օպոզիցիան շատ քիչ թվով կողմնակիցներ գտավ նաև Հայաստանի կոմունիստական կուսակցության շարքերում։

Տրոցկիստների առաջին հրապարակային ելույթները տեղի ունեցան Հկ(բ)Կ Կենտկոմի 1927 թվականի հուլիսյան պլենումում։ Հուլիսի 20-ին «Խորհրդային Հայաստան» թերթում տպագրվեց հակակուսակցական «Ներքի դեկլարացիան», որ ստորագրել էին Ռ. Սաֆրազբեկյանը, Գ. Փիրգուլյանը և Պ. Ղազարյանը։ Տրոցկիստներից ոմանք հանդես եկան նաև Երևանի կուսակցական կազմակերպության ակտիվի ժողովում (հուլիսի 27-ին), որտեղ զեկուցում լսվեց Կոմինտերնի գործկոմի VIII պլենումի որոշումների մասին։ Ամենուրեք տրոցկիստները ջախջախիչ հարված էին ստանում։

Համակուսակցական դիսկուսիայի ժամանակ Հայաստանում օպոզիցիային ձայն տվեցին միայն 71 մարդ, որը վկայում էր նրանց՝ մասսաներից կտրված և դատապարտված լինելու մասին։

Ակտիվ օպոզիցիոներները հեռացվեցին կուսակցությունից։ Մինչև Համ(բ)Կ XV համագումարը և նրանից հետո Հայաստանում օպոզիցիոներների մեծ մասը հրաժարվեցին իրենց հայացքներից։ Նրանց հարցով զբաղվեց նաև Հկ(բ)Կ V համագումարը, որը կայացավ 1927 թվականի նոյեմբերին։ Համա-

1 «Խորհրդային Հայաստան», 23 հոկտեմբերի 1927 թ.։

գումարը լսեց Անդրերկրկոմի քարտուղար Մ. Օրախելաշվիլու զեկուցումը Համկ(բ)Կ Կենտկոմի և ԿՎՀ-ի 1927 թվականի հոկտեմբերյան միացյալ պլենումի արդյունքների մասին։ ՀԿ(բ)Կ Կենտկոմի հաշվետու զեկուցումներով հանդես եկան Կենտկոմի քարտուղար Հ. Հովսեփյանը և Ժողկոմսովետի նախագահ Ս. Համբարձումյանը։ Համագումարը քննեց նաև Կենտգործկոմի նախագահ Ա. Կարինյանի զեկուցումը գյուղում տարվող աշխատանքի մասին և ՀԿԿ ԿՎՀ-ի հաշվետվությունը (զեկուցող՝ Շ. Ամիրխանյան)։

ՀԿ(բ)Կ Կենտկոմի հաշվետվության առթիվ ընդունված բանաձևում ասված է, որ տրոցկիստական օպոզիցիան հանդիսանում է հիմնական վտանգը կուսակցության մեջ, ուստի նրա դեմ մղվող պայքարը պետք է ավելի ուժեղացնել։ Համագումարը Կենտկոմին հանձնարարեց Հայաստանի կոմունիստական կուսակցության մեջ լիովին լիկվիդացնել տրոցկիստական ֆրակցիան, կուսակցությունից վտարել բոլոր նրանց, ովքեր չեն ուղղի իրենց սխալները և չեն ենթարկվի կուսակցական կարգապահությանն ու որոշումներին։

Համագումարը հավանություն տվեց Հայաստանի օպոզիցիոներների վերաբերյալ ԿՎՀ-ի որոշումներին և նշեց, որ այսուհետև ևս ԿՎՀ-ի, կուսակցական բոլոր օրգանների և կուսակցության բոլոր անդամների կարևորագույն խնդիրն է պահպանել Լենինյան կուսակցության շարքերի միասնությունը[1]։

Արձանագրելով սոցիալիստական շինարարության հաջողությունները, համագումարը տնտեսական շինարարության գլխավոր խնդիրը համարեց երկրի արտադրողական ուժերի՝ սոցիալիստական հատվածի, հարաճուն զարգացումը և որոշեց ծավալել գոնավոր մետաղների, հանքային շինանյութերի, էլեկտրիֆիկացիայի, քիմիական, ինչպես նաև տեղական ու տնայնագործական (կոոպերատիվ) արդյունաբերությունը։ Համագումարը առաջարկեց ուժեղացնել գյուղի արտադրական կոոպերացման աշխատանքը, առանձնապես անհրաժեշտ համարելով պարզ տիպի կոլտնտեսությունների կազմակերպումը[2]։ Զգալիորեն աճել և ամրապնդվել էին Հայաստանի կուսակցական կազմակերպությունները։ 1927 թվականին հաշվվում էր մոտ 450 կուսակցական բջիջ։ 1927 թվականի հունվարի 1-ի դրությամբ կուսակցության անդամների և թեկնածուների թիվը կազմում էր մոտ 8500, 1924 թվականի 4000-ի դիմաց[3]։ Այդպիսի մեծ աճը կուսակցության շարքերն ընդունվելու լենինյան կոչի արդյունքն էր։ Բանվորների տեսակարար կշիռը կուսակցության անդամների և թեկնածուների մեջ աստիճանաբար բարձրանում էր։

Հինգերորդ համագումարի նորընտիր Կենտկոմի առաջին պլենումը ՀԿ(բ)Կ Կենտկոմի քարտուղար ընտրեց Հայկ Հովսեփյանին։ ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1928 թվականի ապրիլյան պլենումը Հայկ Հովսեփյանի փոխարեն Կենտկոմի առաջին քարտուղար ընտրեց Հայկազ Կոստանյանին։

* * *

Կարճ ժամանակամիջոցում մեծ հաջողություններ ձեռք բերվեցին Սովետական Միության սոցիալիստական ինդուստրացման բնագավառում։ Ներքին մի-

1 Տե՛ս «ՀԿ(բ)Կ V համագումարի բանաձևերը», Երևան, 1928, էջ 26—28։

2 Տե՛ս նույն տեղում, էջ 6—7, 12—13։

3 Տե՛ս «ՀԿ(բ)Կ Կենտկոմի հաշվետու նյութեր ՀԿ(բ)Կ VI համագումարին», Երևան, 1929, էջ 14—15։

ջոցների մոբիլիզացման, խստագույն խնայողություն անելու շնորհիվ զգալի չափով ավելացվեց կապիտալ ներդրումների գումարը։ Երկրի տարբեր մասերում և բոլոր ազգային հանրապետություններում կառուցվում էին գործարաններ, ֆաբրիկաներ, երկաթուղիներ, բացվում էին հանքահորեր։ Նորագույն տեխնիկայի բազայի վրա վերակառուցվում էին հին գործարանները։ Ստալինյան սոցիալիստական ինդուստրիայի խոշոր օբյեկտների՝ Դնեպրի հիդրոէլեկտրակայանի, Ձերժինսկու անվան տրակտորային գործարանի, Թուրքեստան-Սիբիր երկաթգծի կառուցումը։ Տեխնիկական վերակառուցման ենթարկվեց Բաքվի նավթարդյունաբերությունը, գործարկվեց Զեմո-Ավճալյան հիդրոէլեկտրակայանը (Թբիլիսիի մոտ)։ Մարգանեցի արտադրությունը (Ճիաթուրի), որը միութենական նշանակություն ուներ, արագ տեմպերով սկսեց զարգանալ հատկապես կոնցեսիայի վերացումից հետո (1928)։ Գյանջայում (Կիրովաբադ) կառուցվում էր տեքստիլ արդյունաբերության խոշոր կոմբինատ։ Սկսվեց Բաքու-Բաթում նավթամուղի շինարարությունը։

1927 թվականի վերջին ՍՍՀՄ-ի արդյունաբերությունը և գյուղատնտեսությունը գերազանցեցին նախապատերազմյան մակարդակը։ Ավելի արագ տեմպերով էր զարգանում սոցիալիստական խոշոր արդյունաբերությունը։ Կապիտալիստական երկրների համեմատությամբ նրա աճի տեմպերը ավելի բարձր էին, որը տնտեսության սոցիալիստական սիստեմի առավելության ապացույցն էր։

Արդյունաբերությունը զարգանում էր սոցիալիստական սեկտորի ամրապնդման ուղով, որի առաջատար դերը ավելի էր ուժեղանում ժողովրդական տնտեսության մեջ։ Կապիտալիստական տարրերը դուրս էին մղվում նաև առևտրի ասպարեզից։ Սովետական ժողովուրդը կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ հաջողությամբ և վստահ կերպով առաջ էր տանում սոցիալիզմի կառուցումը։

2. ԿՈԼԵԿՏԻՎԱՑՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ

Սոցիալիստական խոշոր արդյունաբերության արագ զարգացման պայմաններում ակնառու դարձավ գյուղատնտեսության ետ մնալը։ Խիստ ցածր էին վերջինիս աճման տեմպերը, ավելի դանդաղ էր ավելանում հացահատիկի և հատկապես նրա ապրանքային մասի արտադրանքը։ Այսպես, 1927 թվականին գյուղատնտեսության համախառն արտադրանքն անցել էր նախապատերազմյան մակարդակից, իսկ հացահատիկի արտադրությունը հասել էր նրա 95 տոկոսին։ Վերջինիս ապրանքային արտադրանքը կազմում էր ամբողջ արտադրության 13,3 տոկոսը, 1913 թվականի 26 տոկոսի դիմաց[1]։

Հացահատիկի ցածր ապրանքայնության հիմնական պատճառը գյուղատնտեսական արտադրության մեջ իշխող գյուղացիական տնտեսությունների մանրատվածությունն էր։

Գյուղատնտեսության նման վիճակը արգելք էր ստեղծում սոցիալիստա-

1 Տե՛ս «Սովետական Միության կոմունիստական կուսակցության պատմություն», Երևան, 1963, էջ 517։

կան շինարարության առաջընթացի համար, որը չէր կարող անվերջ հենվել երկու հակոտնյա հիմքերի՝ արտադրության միջոցների հասարակական (արդյունաբերություն) և մասնավոր (գյուղատնտեսություն) սեփականաձևերի վրա։ Ամբողջ ժողովրդական տնտեսությունը հանրային, սոցիալիստական սեփականության հիմքերի վրա վերակառուցելը, մի խոսքով՝ սոցիալիստական արտադրահարաբերություններ հաստատելը օբյեկտիվ անհրաժեշտություն էր, որը բխում էր սոցիալիզմի կառուցման պահանջից։

Կոմունիստական կուսակցության XV համագումարը իր մի բերեց ինդուստրացման առաջին հաջողությունները, պարզեց գյուղատնտեսության ետ մնալու պատճառները և պատմական նշանակություն ունեցող որոշում ընդունեց գյուղատնտեսության կոլեկտիվացման մասին։ Ժամանակակից տեխնիկայի բազայի վրա մանրգյուղացիական տնտեսությունները խոշոր սոցիալիստական տնտեսությունների մեջ միավորելը, գյուղատնտեսության կոլեկտիվացման ծավալումը դիտվեց որպես կուսակցության հիմնական խնդիրը գյուղում։ Նախապատրաստվում էր ամբողջ ճակատով սոցիալիստական ծավալման հարձակումը։

Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը սոցիալիզմի կառուցման դժվարագույն խնդիրներից է, քանի որ այստեղ հարցը վերաբերում է միլիոնավոր մանր, անհատական տնտեսություններին, որոնց արտադրությունը հիմնված է մասնավոր սեփականության վրա։

Ինչպես մատնանշել է Վ. Ի. Լենինը, մանր արտադրության վրա հիմնված գյուղի սոցիալիստական վերակառուցման գործը ամենադժվար, բայց միևնույն ժամանակ ամենակարևոր և ամենաշնորհակալ աշխատանքն է, որպիսին մանր, կուտորակված տնտեսություն ունեցող երկրներում (Սովետական Միությունը հենց այդպիսին էր) կարող է իրականացվել համառ ու տևական աշխատանքով, աստիճանաբար։ Նման երկրներում սոցիալիզմին անցնելը անհնար է առանց մի ամբողջ շարք հաջորդական նախնական աստիճանների[1]։

Պրոլետարիատի դիկտատուրայի հաստատումից հետո մանր գյուղացիների նկատմամբ մեր խնդիրն է լինելու,— գրել է Էնգելսը, «...նրանց մասնավոր արտադրությունը և մասնավոր ունեցվածքը դարձնենք ընկերական, բայց ոչ թե բռնի ճանապարհով, այլ օրինակի և այդ նպատակի համար հասարակական օգնություն առաջարկելու միջոցով»[2]։

Վ. Ի. Լենինը մշակեց մեր երկրում սոցիալիզմի կառուցման պլանը, որի բաղկացուցիչ մասերից է կոոպերացիայի միջոցով գյուղի սոցիալիստական վերափոխումը։ Սովետների համամիութենական VIII համագումարում տրված զեկուցման մեջ Վ. Ի. Լենինը մատնանշել է, որ մանրգյուղացիական Ռուսաստանում տնտեսական բազան ավելի ամուր է կապիտալիզմի, քան կոմունիզմի համար, ուստի անհրաժեշտ է «երկրի տնտեսությունը, այդ թվում նաև հողագործությունը, փոխադրել նոր տեխնիկական բազայի վրա, ժամանակակից խոշոր արտադրության տեխնիկական բազայի վրա»[3]։

---

1 Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 28, էջ 436—437։

2 Կ. Մարքս և Ֆ. Էնգելս, Ընտիր երկեր, երկու հատորում, հատ. II, Երևան, 1950, էջ 559—560։

3 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 31, էջ 653—654։

Վ. Ի. Լենինը սովորեցնում էր, որ հնօրյա ձևով տարվող հողագործությունը աստիճանաբար, բայց անշեղորեն պետք է դնել գիտության ու տեխնիկայի նվաճումների բազայի և հանրային արտադրության հիմքերի վրա։ Կոտորակված մանր տնտեսությունից հասարակական արտադրությանն անցնելը մի քանի անգամ կբարձրացնի աշխատանքի արտադրողականությունը, կխնայի մարդկային աշխատանքը, գյուղացիներին ընդմիշտ դուրս կբերի խավարից, կմոտեցնի կուլտուրական կյանքին և նրանց քաղաքացիների հետ կդնի հավասար վիճակում[1]։

Սովետական Հայաստանում գյուղատնտեսության կոլեկտիվացումը հիմնականում սկսվեց կուսակցության XV համագումարից հետո, երբ Սովետական Միության որոշ շրջաններում և հանրապետություններում արդեն կային մի քանի տարվա փորձ ունեցող հարյուրավոր կոլեկտիվ տնտեսություններ։

Հայաստանի գյուղատնտեսության համախառն արտադրանքը 1928 թվականին անցավ նախապատերազմյան մակարդակից։ Այդ տարեթվին ցանքերի տարածությունը (332 հազար հեկտար) ընդհուպ մոտեցավ 1913 թվականի չափերին (345,7 հազար հեկտար)[2]։ Գյուղատնտեսության համախառն արտադրանքը 1913 թվականի 65,8 միլիոն ռուբլու դիմաց 1928 թվականին կազմեց 72,4 միլիոն ռուբլի (1926—1927 թվականների անփոփոխ գներով)[3]։ Հաջողությամբ էին կենսագործվում Վ. Ի. Լենինի ցուցումները ոռոգումը զարգացնելու վերաբերյալ։ Ինդուստրացման համար մղվող պայքարի տարիներին կառուցվեց Սարդարաբադի ջրանցքը։ Խոպան տարածություններին սկսեց ջուր տալ Այղր լճի ջրհան կայանը, որի գործարկումը կատարվեց 1929 թվականին։ Սկսվեցին ղռերի ոռոգման աշխատանքները։

Գյուղատնտեսության վերականգնմանը և զարգացմանը զուգընթաց ընթանում էր ագրարային ռեֆորմի իրագործումը։ Սովետական իշխանության ագրարային ռեֆորմը, հողօգտագործման և հողաշինարարության քաղաքականությունը օգնեց աշխատավոր գյուղացիներին՝ ճիշտ և ռացիոնալ կազմակերպելու գյուղատնտեսությունը և հողային տարածությունը, նպաստեց և շահագրգռեց անցնել հողի ընկերական, կոլեկտիվ մշակմանը։

Սակավահողության և մեծ թվով գաղթականության առկայության պատճառով Հայաստանի հողաշինարարությունը ավելի էր դժվարանում։

1927 թվականին հիմնականում ավարտվեցին միջգյուղային և ներքին հողաշինարարության աշխատանքները, որոնց շնորհիվ վերացվեցին հին կարգերից ժառանգություն մնացած անասելի խճճվածությունն ու անարդարությունները, բավարարվեցին հողազուրկ և սակավահող տնտեսությունները, խոշորացվեցին հողակտորները, կարգավորվեց ազգային փոքրամասնությունների հողօգտագործումը։

Սովետական իշխանության ագրարային ռեֆորմի և բազմակողմանի օգնության շնորհիվ գյուղի սոցիալ-տնտեսական զարգացումը դրվեց նոր հունի մեջ։ Այժմ գյուղացիության շերտավորումը գնում էր մի ուղղակի ուժեղացման,

---

1 Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 28, էջ 439, 440, 444, 447։

2 Տե՛ս «Сельское хозяйство Армянской ССР» (статистический сборник), Երևան, 1961, էջ 15։

3 Տե՛ս «Социалистическое строительство Армянской ССР», էջ 47։

չքավորների կրճատման և կուլակների տեսակարար կշռի անկման ուղղությամբ։

Սովետական գյուղի զարգացման այս ընդհանուր օրինաչափությունները Հայաստանում ունեին մի շարք առանձնահատկություններ։ Երկրի սակավահողության, մեծաթիվ գաղթական բնակչության առկայության, իմպերիալիստական պատերազմի ու դաշնակցականների տիրապետության հետևանքով առաջացած խոր տնտեսական փլուզման և այլ առանձնահատկությունների պատճառով Հայաստանում գյուղացին տնտեսապես ավելի թույլ էր, համեմատաբար մեծ էր չքավորների տեսակարար կշիռը, թույլ էին միջակ գյուղացիների տնտեսությունները։

Համատարած կոլեկտիվացման նախօրյակին Հայաստանի գյուղի սոցիալ-տնտեսական դրության գնահատականը տրվեց ՀԿ(բ)Կ VI համագումարում (1929 թվականի հունվար)։ «Կուսակցության հերթական անելիքները գյուղում» համագումարի բանաձևում ասված է, որ Հայաստանի գյուղի սոցիալական դեմքը բնորոշվում է միջակ գյուղացիության գերակշռությամբ, որը թե՛ քանակով և թե՛ տնտեսական նշանակությամբ կազմում է գյուղացիության հիմնական զեմքը։ Անցյալի ծանր ժառանգության հետևանք էր գյուղի չքավոր տնտեսությունների զեռևս բարձր տոկոսը, որոնք, սակայն, աստիճանաբար բարելավում էին իրենց տնտեսական դրությունը և ուժեղացնում միջին հատվածը։ Բանաձևում, այնուհետև, ասված է, որ գյուղացիության շերտավորման շնորհիվ, միջակների վերնաշերտի հաշվին, աճում են կուլակային տնտեսությունները[1]։

Գյուղացիական տնտեսությունների մեջ ցանք չունեցողների տեսակարար կշիռը 1925 թվականի 15,3 տոկոսից 1929 թվականին իջել էր 10,7 տոկոսի, իսկ մինչև 1,0 հեկտար ցանք ունեցողների թիվը՝ համապատասխանաբար կազմում էր 39,2 և 33,8 տոկոս։ 1,1—4,0 հեկտար ցանքատերերի թիվը նույն ժամանակամիջոցում 41,1-ից բարձրացել էր 48,9 տոկոսի, իսկ չորս հեկտարից ավելի ցանք ունեցողները համապատասխանաբար կազմում էին 4,4 և 6,5 տոկոս[2]։

1924—1929 թվականների ընթացքում բանող անասուն չունեցող տնտեսությունների թիվը կրճատվել էր քսան տոկոսով՝ 55,0-ից իջնելով 35,6-ի, իսկ մեկ գլուխ բանող անասուն ունեցողների թիվը 32,8-ից իջել էր 10,4 տոկոսի։ Մեկից մինչև երկու զույգ լծկան ունեցող տնտեսությունների տեսակարար կշիռը 12,2-ից բարձրացել էր 46,1 տոկոսի։ 1929 թվականին հինգ գլխից ավելի բանող անասուն ունեցողները կազմում էին 7,9 տոկոս[3]։

Այսպիսով, ցանք չունեցող և մինչև մեկ հեկտար ցանքատեր տնտեսությունները, որոնց ճնշող մասը չքավոր դասից էին, համատարած կոլեկտիվացման նախօրյակին կազմում էին գյուղի բնակչության 44,5 տոկոսը։ Բանող անասուններից զուրկ և մեկ գլուխ լծկան ունեցողների տեսակարար կշիռը, որոնք նույնպես չէին կարող սեփական միջոցներով ապահովել իրենց վարն ու ցանքը, նույն ժամանակամիջոցում հասնում էր 46,0 տոկոսի։ Չնա-

1 Տե՛ս «ՀԿ(բ)Կ VI համագումարի բանաձևերն ու որոշումները», Երևան, 1929, էջ 25։
2 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 163, գ. 17, թ. 13 և գ. 4485, թ. 1—49։
3 Տե՛ս նույն տեղում, գ. 3368, թ. 6 և գ. 4485, թ. 1—49։

յած չքավորների թվի կրճատմանը, այնուամենայնիվ, նրանց թիվը բավականաչափ մեծ էր։

Գյուղատնտեսական գործիքների վերաբերյալ տվյալները նույնպես վկայում են սոցիալական շերտավորման և գյուղատնտեսության տեխնիկական հետամնացության մասին։

Գյուղատնտեսական գործիքներ և լծկան չունեցող տնտեսությունների մի մասը դառնում էր ցանքատեր, իսկ ավելի փոքր մասը իր հողը վարձով էր տալիս՝ հիմնականում ունևոր, կուլակային տնտեսություններին։ Նրանցից ոմանք դիմում էին բատրակության կամ վարձու աշխատանքի՝ արդյունաբերության մեջ։ Վերջինս հատկապես տարածված էր Ջանգեզուրում, Մեղրիում և Դարալագյազում։

Սովետական իշխանությունը թուլացնում էր հողի և աշխատուժի վարձակալումը որպես ժամանակավոր երևույթ, միաժամանակ ստեղծում էր այնպիսի պայմաններ, որ սահմանափակվի շահագործումը։ Հենվելով չքավորների ու միջակների դաշինքի վրա, սովետական իշխանությունը աստիճանաբար ուժեղացնում էր հարձակումը կուլակների դեմ, կիրառելով վերջինիս սահմանափակելու և արտամղելու քաղաքականություն։

Կուլակության աշխուժացումը սահմանափակելու կարևոր լծակ էր հարկային քաղաքականությունը։ Հարկերի ծանրությունը դրվում էր կուլակների վրա, միջակները վճարում էին բավականին քիչ, իսկ չքավորները դրանից ազատ էին։

Այսպես, 1928/29 տնտեսական տարում 162 հազար գյուղացիական տնտեսություններից հարկից ազատված էին ավելի քան 74 հազարը։ Դրանք չքավոր և թույլ միջակ տնտեսություններն էին։ Ընդհանուր կարգով հարկվող ավելի քան 85 հազար միջակ տնտեսությունները վճարել էին գյուղատնտեսական հարկի 66 տոկոսը, իսկ անհատական կարգով հարկվող 2.600 կուլակային տնտեսությունների վրա ընկել էր հարկի 34 տոկոսը[1]։ Հայկական ՍՍՀ Ժողկոմսովետի 1929 թվականի ապրիլի 3-ի որոշումով բարձրացվեց գյուղատնտեսական եկամուտների չհարկվող մինիմումը, որի շնորհիվ հարկից լրացուցիչ ազատվեցին հազարավոր միջակ տնտեսություններ և իջեցվեց միջակների հարկի բացարձակ չափը, ինչպես նաև նրանց հարկի գումարի տեսակարար կշիռը[2]։

Գյուղի սոցիալիստական վերափոխման գործում առանձին ուշադրություն էր նվիրվում ազգային փոքրամասնություններին, որոնց մեծ մասը բնակվում էր գյուղական շրջաններում։ Հայաստանի ազգային փոքրամասնությունների թվին են պատկանում ռուսները, ադրբեջանցիները, քրդերը, հույները, որոնք 1926 թվականի մարդահամարի տվյալներով կազմում էին բնակչության 18,0 տոկոսը[3]։ Նստակյաց կյանքի էր անցնում քուրդ ժողովուրդը։ 1927 թվականի դեկտեմբերին Երևանում կայացած քրդերի կոնֆերանսը, ողջունելով կուսակցության XV համագումարը, նշում էր, որ աշխատավոր քրդերը ջերմորեն շնոր-

---

1 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 113, ց. 4, գ. 8397, թ. 12։ «Խորհրդային Հայաստան», 1 հոկտեմբերի 1929 թ. (առաջնորդող հոդվածը)։

2 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 11 ապրիլի 1929 թ.։

3 Տե՛ս «1926 թվականի համամիութենական մարդահամար։ Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն», բաժին I, Թիֆլիս, 1929, էջ 7—8։

հակալուծյուն են հայտնում կոմունիստական կուսակցությանը՝ նրա ճիշտ ազգային քաղաքականության համար, քաղաքականություն, որի շնորհիվ Հայաստանում՝ Մերձավոր արևելքի սահմանագլխին, բնակվող 20 հազար քրդեր ազատվել են դարավոր ճնշումից և բռնել են տնտեսական, քաղաքական ու կուլտուրական զարգացման ուղին[1]։

Մեծ աշխատանք պահանջվեց ռուսական գյուղերում սովետական իշխանությունն ամրապնդելու, հողահավասարեցումը անցկացնելու, կոոպերացիան արմատավորելու համար։

Ազգային փոքրամասնությունների շրջանում դեռևս քիչ էին կուսակցականները և հատկապես ազգային կադրերը։ Համեմատաբար ակտիվ էին կոմնիրատական կազմակերպությունները, որոնք հանդես էին գալիս որպես նորի նախաձեռնողներ և կազմակերպիչներ։

Հայաստանի կոմունիստական կուսակցությունը և կառավարությունը մոբիլիզացրին հանրապետության աշխատավորների ուժերը գյուղատնտեսության կոլեկտիվացումը նախապատրաստելու համար։

1928 թվականի հունվարին տեղի ունեցավ ՀԿ(բ)Կ Կենտկոմի պլենում, որը կուսակցական և կոոպերատիվ կազմակերպությունների ուշադրությունը բևեռեց գյուղատնտեսության կոլեկտիվացման աշխատանքներն ուժեղացնելու վրա, խնդիր դնելով գարկ տալ պարզ տիպի արտադրական կոոպերատիվներին, աստիճանաբար անցնել ավելի բարձր տիպերին, ապա ստեղծել կոլեկտիվացումը կազմակերպող և ղեկավարող օրգան[2]։

Գյուղատնտեսության և նրա վերակառուցման խնդիրները քննվեցին նաև ՀԿ(բ)Կ Կենտկոմի IV պլենումում (1928 թվականի հունիս-հուլիս), որտեղ մեծ ուշադրություն նվիրվեց գյուղում ճիշտ դասակարգային քաղաքականություն վարելու, դասակարգային պայքարի, գյուղատնտեսության մեքենայացման, հողաշինարարության և կոլեկտիվացման հետ կապված մյուս հարցերին։

Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցմանն էին ծառայում կոոպերացիան, վարկավորումը, կոնտրակտացիան, շեֆական ու կուլտուրական աշխատանքը։

Ուժեղացվեց գյուղում տարվող քաղաքական-դաստիարակչական աշխատանքը, որն անմիջապես ընկած էր գյուղական կուսակցական, կոմերիտական բջիջների, սովետների և արհեստակցական միությունների վրա։ 1929 թվականին գյուղական կուսակցական կազմակերպություններում հաշվում էր ավելի քան չորս հազար կոմունիստ։ 720 կոմերիտական բջիջներում ընդգրկված էին 16 հազար երիտասարդներ[3]։ Գյուղական սովետներում ընտրված չքավորների ու միջակների թիվը 17 հազարից ավելի էր[4]։ Արհմիությունների մեջ ընդգրկված էր ավելի քան 15 հազար մարդ, այդ թվում 12.500 բատրակ[5]։ Կուլակության դեմ մղվող պայքարում չքավորների և միջակների համախմբման գոր-

1 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 7 դեկտեմբերի 1927 թ.։

2 Տե՛ս Մ. Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 11, գ. 4, թ. 403—408։

3 Տե՛ս նույն տեղում, ֆ. 1, ց. 13, գ. 1, թ. 286։

4 Տե՛ս «Խորհրդային Հայաստանի 15 տարին թվերով», Երևան, 1935, էջ 239։

5 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 25 ապրիլի 1929 թ.։

ծում մեծ դեր ունեին կատարելու չքավորական խմբերն ու խորհրդակցությունները։

Հայաստանում չքավորական խմբերի կազմակերպումը սկսվեց 1926 թվականին։ Գյուղական կուսակցական, կոմերիտական ու սովետական ակտիվը պայքարում էր չքավորների ու միջակների համախմբման, սովետների ամրապնդման, կուլակությանը մեկուսացնելու ուղղությամբ։ Զարգացման նոր էտապում նրանց գործունեության մեջ կարևոր էր դառնում կոլտնտեսությունների պրոպագանդան, կոոպերացիայի գործունեության լայն ծավալումը։ Հենց կոոպերացիայի միջոցով նախապատրաստվում էր գյուղի սոցիալիստական վերակառուցումը։

Կոոպերացիայի բացառիկ նշանակությունն այն է, որ պրոլետարիատի դիկտատուրայի պայմաններում նա դառնում է «ըստ կարելույն ավելի հասարակ, հեշտ ու գյուղացու համար մատչելի»[1] ճանապարհը սոցիալիզմին անցնելու համար։ Կոոպերացիան աստիճանաբար և հեշտ ձևով է աշխատանքի սոցիալիստական ձևեր սերմանում գյուղում, գյուղացիներին քայլ առ քայլ ներգրավում սոցիալիստական շինարարության մեջ։ Լիակատար կոոպերացման դեպքում, գրել է Վ. Ի. Լենինը, մենք երկու ոտքով արդեն կանգնած կլինենք սոցիալիստական հողի վրա։

Կոոպերացիան զարգացնելու գործում Վ. Ի. Լենինը կարևոր նշանակություն էր տալիս նրան տրամադրվող արտոնություններին, տեխնիկական-տնտեսական, ֆինանսական-վարկային օգնությանը և կուլտուրական գործունեությանը։

Կոոպերացիայի ամենապարզ ձևը սպառողական կոոպերացիան է, որը 1928—1929 թվականներին միայն գյուղում ընդգրկում էր ավելի քան 122 հազար փայատեր կամ բոլոր տնտեսությունների ավելի քան երկու երրորդը[2]։ Սպառողական կոոպերացիան, որն ավելի վաղ էր սկսել զարգանալ, պայմաններ էր ստեղծում գյուղատնտեսական արտադրական կոոպերացիայի զարգացման համար։

Հայաստանում գյուղատնտեսական կոոպերացիան սկսեց զարգանալ հատկապես 1924 թվականից հետո, երբ տեղի ունեցավ գյուղատնտեսական կոոպերատիվների առաջին համագումարը, որտեղ ձևավորվեց Հայաստանի գյուղատնտեսական կոոպերատիվների միությունը՝ Հայգյուղկոոպը։ Սկզբում հիմնականում գոյություն ունեին վարկային կոոպերատիվներ, իսկ 1925 թվականից կոոպերացիան սկսեց ընդգրկել նաև մատակարարման (գլխավորապես գյուղատնտեսական մեքենաների ու գործիքների, ինչպես նաև այլ արդյունաբերական ապրանքների) և մթերման ու վաճառահանման (գյուղատնտեսական ապրանքների) բնագավառները։

1928 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կոոպերացիայի մեջ ընդգրկված էին մոտ 61.650 տնտեսություններ, որոնք կազմում էին Հայաստանի բոլոր գյուղացիական տնտեսությունների 38,5 տոկոսը, 1924 թվականի 5,9 տոկոսի

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 33, էջ 557։

2 Տե՛ս «ՀՍՍՀ կառավարության հաշվետվության նյութեր. 1928/29—1929/30», Երևան, 1931, էջ 107։ «Խորհրդային Հայաստան», 6 դեկտեմբերի 1929 թ.։

դիմաց[1]։ Կոոպերատիվների թիվը հասնում էր 265-ի, այդ թվում՝ 41 վարկային, 3 խառը և 164 մասնագիտական գյուղատնտեսական ընկերություններ, 57 կոլտնտեսություններ ու կոմունաներ։ Դուրս մղելով մասնավորին, գյուղատնտեսական կոոպերացիան ընդհանուր ապրանքաշրջանառության մեջ աստիճանաբար բարձրացնում էր իր տեսակարար կշիռը։

1927 թվականից սկսած Հայգյուղկոոպը մթերման և վաճառահանման բնագավառում օգտագործում էր կոնտրակտացիան, որը գյուղատնտեսական մթերքների մթերման սիստեմ է։ Երբ պետական ու կոոպերատիվ կազմակերպությունները պայմանագրային հարաբերությունների մեջ են մտնում անհատական գյուղացիական և կոլեկտիվ տնտեսությունների հետ, կոչվում է կոնտրակտացիա։ Պայմանագրի համաձայն վերջիններս պարտավորվում էին սահմանված գներով ու որոշակի ժամկետներում նշված քանակությամբ և համապատասխան որակով գյուղատնտեսական մթերքներ հանձնել պետությանը։ Իսկ պետությունը օգնում էր աշխատավոր գյուղացիներին և կոլտնտեսություններին՝ գյուղատնտեսական մթերքների արտադրությունը կազմակերպելու, գյուղատնտեսությունը ինդուստրացնելու և այլ բնագավառներում։ Այս ձևով անհատական արտադրության վրա հիմնված գյուղատնտեսությունը ներգրավվում էր միասնական պետական պլանավորման մեջ, իսկ ժողովրդական տնտեսության սոցիալիստական սեկտորը ներգործում էր գյուղացու տնտեսության վրա, ուղղություն տալիս նրա զարգացմանը։ Կոնտրակտացիան քաղաքի և գյուղի, բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության արտադրական զոդման ձևերից մեկն էր, որը նպաստում էր անհատական գյուղացիական տնտեսությունների կոոպերացմանը, ապրանքաշրջանառությունից և գյուղատնտեսական արտադրությունից կապիտալիստական տարրերի արտամղմանը։ Կոնտրակտացիան կարևոր դեր խաղաց գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը նախապատրաստելու պայքարում։

1929 թվականի օգոստոսի 26-ի որոշումով Համկ(բ)կ Կենտկոմը առաջարկեց լայնորեն կիրառել կոնտրակտացիան, գնահատելով այն որպես գյուղացիական տնտեսությունների վերելքի և սոցիալիստական վերակառուցման կարևոր լծակ[2]։

Հասկանալով կոնտրակտացիայի առավելությունները գյուղացիությունը նախընտրում էր այն։ 1926/27 և 1927/28 տնտեսական տարիներին Հայաստանում պայմանագրված էր բամբակի ամբողջ ցանքը, խաղողի, բրդի, բոժոժի և շվեյցարական պանրի ամբողջ ապրանքային արտադրանքը[3]։

Գյուղատնտեսական կոոպերացիայի տնտեսական գործունեության մյուս կողմը հիմնականում գյուղատնտեսական տեխնիկայի և մեքենաների մատակարարումն էր, որը 1926 թվականից կենտրոնացվել էր Հայգյուղկոոպում։

---

1 Տե՛ս «Հայաստանի գյուղատնտեսական կոոպերացիայի գործունեության հաշվետվությունը» (հետագայում՝ «Հայգյուղկոոպի գործունեության հաշվետվությունը»), Երևան, 1928, էջ 19։

2 Տե՛ս «Коллективизация сельского хозяйства. Важнейшие постановления Коммунистической партии и Советского правительства. 1927—1935», М., 1957, էջ 196—198։

3 Տե՛ս «Հայգյուղկոոպի գործունեության հաշվետվությունը», էջ 66։

Այդ օգնությունը կազմակերպվում էր վարկային կոոպերացիայի և գյուղատնտեսական բանկի միջոցներով։

ՍՍՀՄ ԺողկոմսովետԻ 1926 թվականի հոկտեմբերի 29-ի որոշման համաձայն ՀՍՍՀ տնտխորհը որոշում ընդունեց չքավորական տնտեսությունների վարկավորման ֆոնդ կազմակերպելու մասին[1], որի նպատակն էր աստիճանաբար բարձրացնել չքավորների, ինչպես նաև միջակների տնտեսությունը և մեքենայացնել գյուղատնտեսական աշխատանքները։ Վարկավորումը հիմնականում նպատակային էր և երկարատև։ Այն տրվում էր գյուղատնտեսական մեքենաներ, լծկաններ ձեռք բերելու և արտադրական նշանակություն ունեցող այլ նպատակներով։ Գյուղատնտեսության մեջ, այդ թվում նաև սովխոզներում և կոլտնտեսություններում, 1926/27, 1927/28 և 1928/29 տնտեսական տարիներին վարկի գծով կատարված ներդրումների գումարը կազմում էր 15,3 միլիոն ռուբլի[2]։

Հանրապետության գյուղատնտեսությունը Հայգյուղկոոպի միջոցով 1927—1929 թվականներին ստացել էր 85 տրակտոր, 7.146 գութան, 580 տարբեր տեսակի շարքացան, ավելի քան երկու հարյուր սերմազտիչ և գյուղատնտեսական այլ գործիքներ[3]։ 1929 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ Հայաստանում կար 228 տրակտոր[4], որոնց մեծ մասը գտնվում էր Հայգյուղկոոպի տրամադրության տակ։ Հիմնականում բամբակագործական կոոպերատիվների, վարձութակետերի, ինչպես նաև սովխոզների միջոցով տրակտորը նպաստավոր պայմաններով ծառայեցվում էր չքավոր և միջակ տնտեսություններին, համոզելով նրանց, որ անհրաժեշտ է անցնել հողի կոլեկտիվ օգտագործմանն ու մշակմանը։ Եվ պատահական չէ, որ Հայաստանում առաջին կոլտնտեսությունները հանդես եկան բամբակագործական շրջաններում, որտեղ առավել չափով էր տարածված տրակտորի օգտագործումը։

Չնայած գյուղատնտեսական կոոպերացիայի ցույց տված օգնությանը, այնուամենայնիվ, Հայաստանի գյուղատնտեսությունը շարունակում էր մնալ տեխնիկապես հետամնաց։ Վարը հիմնականում կատարվում էր արորով, գութանով վար էր կատարվում ավելի պակաս, իսկ տրակտորը դեռևս շատ քիչ տեղ էր գրավում։

Սովետական Միության սոցիալիստական ինդուստրացումը, գյուղատնտեսական մեքենաների գործարանների կառուցումը պայմաններ ստեղծեցին գյուղատնտեսության տեխնիկական վերազինման և կոլեկտիվ հողօգտագործման ու հողամշակության համար։

Գյուղատնտեսության սոցիալիստական վերափոխումը նախապատրաստելու գործում զգալի դեր ունեին կատարելու առաջին սովխոզները և կոլտնտեսությունները, նրանց դրական օրինակը։ Սովխոզները, որոնք համարվում էին օրինակելի սոցիալիստական ձեռնարկություններ, իրենց գործունեությամբ և օրինակով կոչված էին ապացուցելու խոշոր սոցիալիստական տնտեսությու-

---

1 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 128, ց. 1, գ. 1518, թ. 32։

2 Տե՛ս Մ.Ի. հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 13, գ. 22, թ. 62։

3 Տե՛ս նույն տեղում, գ. 235, թ. 99։

4 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 113, ց. 6, գ. 31, թ. 34—35։

ների առավելությունը մանրգյուղացիական տնտեսությունների նկատմամբ, գյուղացիներին մղելու դեպի կոլեկտիվ տնտեսություն։

Սովետական կառավարությունը միութենական հանրապետությունների ժողկոմսովետներին և մյուս համապատասխան օրգաններին առաջարկեց մաքսիմալ չափով ուժեղացնել սովխոզների զարգացման տեմպը, սովետական տնտեսությունները բարձր տեխնիկայի բազայի վրա դարձնել սոցիալիստական տիպի խոշոր գյուղատնտեսական ձեռնարկություններ, ամեն կերպ ուժեղացնել նրանց կողմից գյուղատնտեսության վերակառուցմանը և կոլեկտիվացմանը ցույց տրվող օգնությունը և այլն[1]։

1928—1929 թվականներին Հայաստանի առաջին պետական տնտեսություններին ավելացան նորերը՝ Դիլիջանի, Սեմյոնովկայի, Յանըղի կաթնաանասնապահական, Ալագյազի ոչխարաբուծական ֆերմաները և Լենինականի հացահատիկա-ճակնդեղագործական ու Զոդի անասնաբուծական սովխոզները։ 1929 թվականին հանրապետության սովխոզների թիվը հասնում էր 14-ի, որոնք ունեին այգեգործական, անասնաբուծական և դաշտավարական ուղղություն[2]։

Սովխոզները գյուղացիներին մատակարարում էին տեսակավոր սերմեր, աշնվացեղ անասուններ, խաղողի վազի ու պտղատու ծառերի մատեր, օգնում էին պայքարելու գյուղատնտեսական հիվանդությունների ու վնասատուների դեմ, մշակելու հողամասերը, կալսելու հացահատիկը և այլն։

Մինչև Համ(բ)Կ XV համագումարը Հայաստանում գոյություն ուներ ընդամենը 8—9 կոլտնտեսություն և կոմունա։ Առաջինը Երևանի գավառի Ախտայի գավառամասում 1925 թվականին կազմակերպված «Խոտուրջուր» անունով կոմունան էր, որը 1928 թվականին վերակառուցվեց և վերանվանվեց «Կարմիր հովիտ»։ 1927 թվականի սկզբին հանդես եկան «Լուկաշինի» (Լուկաշինի անվան ավանում) և Թաքիա գյուղի (Աշտարակի մոտ) «Նոր կյանք» կոմունաները։ 1927 թվականի հունիսին Լենինականի գավառի Դահարլի (Գետք), Բայանդուր, Օջախղուլի (Առափի) և Թութադուլակ գյուղերի մեքենա-օգտագործական ընկերությունները վերածվեցին հողը համատեղ մշակող ընկերությունների։ Առաջին կոլտնտեսություններին օգնելու համար նույն թվականին գյուղատնտեսական բանկում կազմակերպվեց կոլտնտեսությունների վարկավորման հատուկ ֆոնդ[3]։

Կոլտնտեսությունների և կոլեկտիվացման հարցերով անմիջապես զբաղվում էր Հայգյուղկոոպի կոլեկտիվ տնտեսությունների սեկցիան (կոլտնտսեկցիա)։

Կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության միջոցառումների շնորհիվ առաջին հերթին կոլեկտիվ տնտեսությունների մեջ ընդգրկվելու ցանկություն հայտնեցին բազմաթիվ չքավոր գյուղացիներ, որոնք Հայգյուղկոոպին խնդրում էին արագացնել կոլտնտեսությունների կազմակեր-

---

1 Տե՛ս «Коллективизация сельского хозяйства. Важнейшие постановления Коммунистической партии и Советского правительства. 1927—1935», էջ 139—142։

2 Տե՛ս «ՀՍՍՀ կառավարության հաշվետվության նյութեր. 1928/29—1929/30», էջ 32։

3 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 113, ց. 2, գ. 671, թ. 35—36։

պումը և կանոնադրությունների հաստատումը։ Հայգյուղկոոպին հասցեագրած իրենց դիմումի մեջ Էջմիածնի շրջանի Հայկական Զեյվա (Ներքին Զեյվա) գյուղի 16 չքավոր տնտեսություններ, խնդրելով կազմակերպել հողօգտագործական կոլեկտիվ, գրում էին, թե իրենք լավ են գիտակցում, որ դա բխում է իրենց դասակարգային շահերից[1]։

Հայտնելով նույն ցանկությունը, Վերին Նովրուզլու գյուղի մի խումբ չքավորներ և միջակներ 1928 թվականի փետրվարի 3-ին Ղամարլուի գավգործկոմին գրում էին, թե իրենք եկել են այն գիտակցության, որ տնտեսությունը կարելի է բարձրացնել կոլեկտիվ կերպով, ուստի որոշել են թողնել անհատական տնտեսությունը և գնալ նոր ուղիով, որը տանում է դեպի սոցիալիզմ[2]։

Չքավոր գյուղացիների և բատրակների 1928 թվականի ժողովներում և կոնֆերանսներում առաջին անգամ առաջարկություններ են արվում կոլտնտեսություններ կազմակերպելու մասին։ «Միայն կոլեկտիվը (կոլտնտեսությունը) և արտելը մեզ կազատեն կուլակի ճանկերից», «Չքավոր գյուղացիներից շատերը իրենց հողամասը տալիս են ունևորներին՝ կիսով և դրանից չեն օգտվում, ընկնում են կուլակի ազդեցության տակ, իմ առաջարկն է՝ գյուղում ունենալ կոլտնտեսություն», «Բոլոր բատրակները պարտավոր են մտնել կոլեկտիվ տնտեսությունները, որպեսզի նոր տեխնիկայով բարձրացնենք գյուղատնտեսությունը»,— ասվում էր հիշյալ ժողովներում և կոնֆերանսներում՝ չքավորների ու բատրակների ելույթներում[3]։ Կազմակերպվեցին մի քանի տասնյակ կոլտնտեսություններ։ 1928 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ նրանց թիվը հասավ 75-ի՝ ավելի քան 1500 տնտեսությամբ[4]։

Կոլտնտեսային շարժման առաջին արդյունքները ամփոփեց 1928 թվականի նոյեմբերի 17—21-ը կայացած կոլտնտեսականների հանրապետական առաջին համագումարը, որը քննարկեց կոլտնտեսկեցիայի հաշվեհավությունը և կոլտնտեսություններում աշխատանքի կազմակերպման, վարձատրության և անբաժանելի միջոցների կուտակման մասին զեկուցումներ[5]։ Համագումարն արձանագրեց, որ կոմունիստական կուսակցության XV համագումարի որոշումները լայն արձագանք են գտել Հայաստանի աշխատավոր գյուղացիության մեջ և միաժամանակ նշեց, որ միջակ գյուղացիների զգալի մասը դեռևս թերահավատ է դեպի կոլտնտեսությունները, ուստի հարկավոր է միջակին, ինչպես նաև չքավորին գործնականորեն ապացուցել կոլտնտեսությունների առավելությունները անհատականի նկատմամբ, ավելի ուժեղացնել քաղաքական և բացատրական աշխատանքը չքավորների ու միջակների շրջանում։

Հաշվի առնելով կոլտնտեսային շարժման զարգացման հեռանկարները, համագումարը որոշեց կազմակերպել Հայաստանի կոլեկտիվ տնտեսությունների միություն՝ Կոլտնտակենտրոն։

---

1 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 42, գ. 946, թ. 25։

2 Տե՛ս նույն տեղում, գ. 505, թ. 244։

3 Տե՛ս Մ. Ի. Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 13, գ. 234, թ. 33, 42, ֆ. 48, ց. 3, գ. 968, թ. 13—20 և այլն։

4 Տե՛ս «ՀՍՄՀ կառավարության հաշվետվության նյութեր. 1926/27—1927/28», Երևան, 1929, էջ 134—135։

5 Տե՛ս «Կոլեկտիվ տնտեսությունների համահայաստանյան առաջին համագումարի որոշումները», Երևան, 1929։

Այսպիսով, սոցիալիստական ինդուստրացման առաջին տարիներին, գյուղատնտեսական կոոպերացիայի միջոցով, նոր տեխնիկայի բազայի վրա նախապատրաստվում էր գյուղի սոցիալիստական վերափոխումը։

Գյուղատնտեսության կոլեկտիվացումը նախապատրաստելու բնագավառում նոր հաջողություններ ձեռք բերվեցին 1929 թվականին, երբ գյուղը ընդհուպ մոտեցավ մասսայական կոլեկտիվացմանը։

3. ԱՌԱՋԻՆ ՀՆԳԱՄՅԱ ՊԼԱՆԸ։ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄՐՑՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼՈՒՄԸ

Նոր տեխնիկայի բազայի վրա ամբողջ ժողովրդական տնտեսությունը վերակառուցելու, սոցիալիզմի նյութա-տեխնիկական հիմք ստեղծելու համար անհրաժեշտ դարձավ համընդհանուր հեռանկարային պլանի մշակումը։

Դեռևս 1927 թվականի դեկտեմբերին կուսակցության XV համագումարը ընդունել էր հնգամյա պլան մշակելու մասին դիրեկտիվներ։

ՍՍՀՄ պետպլանը պատրաստեց հնգամյա պլանի մինիմալ և օպտիմալ վարիանտներ։ Մինիմալ վարիանտը պաշտպանում էին աջ օպորտունիստները։ Դասակարգային պայքարի սրումը և սոցիալիստական վերակառուցման դժվարությունները բնակչության մանրբուրժուական խավերում տատանումներ առաջացրին, որը և արտացոլվեց կուսակցության մեջ՝ ի դեմս աջ օպորտունիզմի առաջացման։ Աջ կապիտուլյանտների խումբը հանդես եկավ սոցիալիստական ինդուստրացման և գյուղատնտեսության կոլեկտիվացման քաղաքականության դեմ, փորձում էր կուսակցությանը և կառավարությանը ետ պահել ծանր ինդուստրիայի զարգացման արագ տեմպերի կուրսից։ Աջ օպորտունիստները դեմ էին կուլակների դեմ ծավալված պայքարին։

Աջ կապիտուլյանտների չախչախման գործում վճռական դեր խաղացին 1928 թվականի օգոստոսին Մոսկվայում կայացած Կոմինտերնի VI կոնգրեսը, Համկ(բ)Կ Կենտկոմի 1928 թվականի նոյեմբերյան պլենումը, 1929 թվականի ապրիլին կայացած կուսակցության Կենտկոմի ու ԿՎՀ-ի միացյալ պլենումը և կուսակցության XVI կոնֆերանսը, իսկ Համկ(բ)Կ Կենտկոմի 1929 թվականի նոյեմբերյան պլենումը նշեց, որ աջ օպորտունիզմի պրոպագանդան անհամատեղելի է կուսակցության շարքերում գտնվելու հետ։

Աջերի չախչախումը ավելի համախմբեց կուսակցության և ժողովրդի ուժերը՝ սոցիալիստական շինարարությունը հաջողությամբ առաջ տանելու, առաջին հնգամյա պլանը կենսագործելու համար։

1929 թվականի մարտին ՍՍՀՄ Ժողկոմսովետի և Աշխատանքի ու պաշտպանության խորհրդի համատեղ նիստը, սովետական հանրապետությունների ներկայացուցիչների մասնակցությամբ քննարկեց հնգամյա պլանի նախադիծը։ Կոմունիստական կուսակցության XVI կոնֆերանսը (1929 թվականի ապրիլ) և սովետների V համագումարը (1929 թվականի մայիս) վերջնականապես ընդունեցին ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման առաջին հնգամյա պլանը, որի հիմնական խնդիրը ամբողջ ժողովրդական տնտեսության տեխնիկական վերազինման համար համապատասխան բազայի ստեղ-

ծումն էր, սոցիալիստական էկոնոմիկայի հիմքի կառուցումը։ Հնգամյա պլանը սոցիալիստական ծավալուն հարձակման ծրագիր էր ժողովրդական տնտեսության բոլոր ճակատների համար։ Այն մեր երկրի սոցիալիստական ինդուստրացման և գյուղատնտեսության սոցիալիստական վերափոխման ծրագիր էր։

Առաջին հնգամյա պլանում հատուկ տեղ էր գրավում ազգային հանրապետությունների զարգացումը։ Սովետների համամիութենական V համագումարը հնգամյա պլանի մասին որոշման մեջ գոհունակությամբ նշեց պլանում նախատեսված «ՍՍՀՄ միության հետամնաց շրջանների և ազգությունների տնտեսական ու կուլտուրական վճռական վերելքը»[1]։ Դեռևս կուսակցության XV համագումարը դիրեկտիվ էր տվել, որ «հնգամյա պլանը պետք է հատուկ ուշադրություն դարձնի ազգային հետամնաց ծայրամասերի և հետամնաց շրջանների էկոնոմիկայի և կուլտուրայի վերելքի հարցերին, ելնելով նրանց տնտեսական և կուլտուրական հետամնացությունն աստիճանաբար վերացնելու անհրաժեշտությունից, համապատասխանաբար նախատեսելով նրանց էկոնոմիկայի և կուլտուրայի զարգացման ավելի արագ տեմպ, ելնելով այդ շրջանների կարիքներն ու պահանջները միության կարիքների ու պահանջների հետ շաղկապելուց»[2]։

Հանրապետության ժողովրդական տնտեսության զարգացմանը մեծ ուշադրություն նվիրեց Հայաստանի կոմկուսի VI համագումարը (1929 թվականի հունվար)։ Համագումարը քննարկեց կենտկոմի հաշվետվությունը (զեկուցող՝ ՀԿԿ կենտկոմի քարտուղար Հ. Կոստանյան), հանրապետության հրնգամյա պլանի նախագիծը (զեկուցող՝ ԺողկոմսովետԻ նախագահ Ս. Տեր-Գաբրիելյան)։ Գյուղում տարվող աշխատանքների մասին զեկուցումով հանդես եկավ կենտկոմի քարտուղար Ա. Խանջյանը։

Ամրապնդվել էր կուսակցության ղեկավարությունը տնտեսական, քաղաքական և կուլտուրական կյանքում։ 1929 թվականի հունվարի 1-ի դրությամբ ՀԿ(բ)Կ շարքերում կային 10.600 անդամ և թեկնածու։ Վերջին երկու տարում կուսակցական կազմակերպությունը աճել էր 2200-ով։ Բարելավվել էր կուսակցության սոցիալական կազմը։ Բանվորները կազմում էին անդամների և թեկնածուների 42 տոկոսը։ 1929 թվականին անցկացված զտման հետևանքով կուսակցությունը դարձավ ավելի միասնական ու գործունակ։

Ամփոփելով հաշվետու ժամանակաշրջանում տնտեսական ու կուլտուրական բնագավառներում ձեռք բերված նվաճումները, համագումարը նշեց, որ Հայաստանի տնտեսական զարգացումը ընթանում է ինդուստրացման և գյուղի սոցիալիստական վերակառուցումը իրագործելու նշանաբանով։ Հավանություն տրվեց Անդրկովկասի միացյալ ժողովրդական տնտեսության գերագույն խորհուրդ ստեղծելու Անդրերկրկոմի որոշմանը, որն ավելի էր ամրապնդելու Անդրկովկասյան Ֆեդերացիայի տնտեսական բազան և միասնական պլանի իրագործումը։ Հայաստանի տնտեսական զարգացումը դիտվում էր որպես

1 «Съезды Советов в документах». Сборник документов в трех тома, հատ. 3, Մ., 1960, էջ 156։

2 «ՍՄԿՊ-ն... բանաձևերում ու որոշումներում», մասն II, էջ 586։

Անդրկովկասի և Սովետական Միության տնտեսական զարգացման բաղկացուցիչ մասը։

Տվյալներ բերելով գյուղատնտեսության լրիվ վերականգնումը ավարտելու և նրա ետ մնալու մասին, VI համագումարն իր որոշումներում արձանագրեց, որ գյուղատնտեսության հետամնացությունը և նրա աճման դանդաղ տեմպը պայմանավորված են մանրը ու ցիրուցան տնտեսությունների հսկայական գերակշռությամբ, գյուղատնտեսական տեխնիկայի նահապետական ձևերով, հողասակավությամբ, գյուղի ցածրը կուլտուրական մակարդակով և այլն։ Նշելով, որ սոցիալիստական շինարարության ամենակարևոր հերթական խնդիրների թվում կուսակցությունը դասում է գյուղատնտեսության հետագա զարգացումը, համագումարը որոշեց, որ «նույն խնդիրն իր ամբողջ հրամայականությամբ ու վճռական նշանակությամբ այժմ կանգնած է նաև Հայաստանի կոմկուսի առաջ և կազմելու է նրա աշխատանքների հիմնական առանցքը»[1]։



Ս. Տեր-Գաբրիելյան

Համագումարի որոշումների մեջ կարևոր տեղ էին գրավում գաղափարական բնագավառի խնդիրները։ Համագումարը կուսակցության ուշադրությունը հրավիրեց գաղափարական աշխատանքի մասսայական ձևերի վրա, որի հիմնական խնդիրներից էր ժողովրդի դաստիարակումը պրոլետարական ինտերնացիոնալիզմի և ժողովուրդների բարեկամության ոգով, պայքարը տրոցկիստական ու աջ օպորտունիստական թեքումների և նացիոնալիզմի դրսևորումների դեմ։

Համագումարը հավանություն տվեց Հայաստանի ժողովրդական տնտեսության զարգացման հնգամյա պլանի նախագծին և Կենտրոնական կոմիտեին հանձնարարեց ապահովել պլանի համաժողովրդական քննարկումը, կուսակցական և բանվորական լայն մասսաների մասնակցությամբ։

ՀՍՍՀ ժողկոմսովետը և ժողտնտխորհը պլանը ներկայացրին Հանրապետության սովետների VI համագումարին, որը հրավիրվեց 1929 թվականի ապրիլին։ Համագումարը լսեց և քննարկեց ԱՍՖՍՀ ժողկոմսովետի գործունեության մասին ինֆորմացիոն զեկուցումը, ՀՍՍՀ ժողկոմսովետի հաշվետվությունը, Հայաստանի ժողովրդական տնտեսության զարգացման հնգամյա պլանի, կուլ-

1 «ՀԿ(բ)Կ VI համագումարի բանաձևերն ու որոշումները», էջ 19—20։

տուրական շինարարության հերթական խնդիրների և Հայաստանի շրջանացման մասին զեկուցումները։

Հայաստանի սովետների VI համագումարը հավանություն տվեց Անդրֆեդերացիայի կառավարության գործունեությանը, որի վերաբերյալ զեկուցումով հանդես եկավ ԱՍՖՍՀ Ժողկոմսովետի նախագահ Շալվա Էլիավան։ Նշվեց, որ ավելի է ամրապնդվել Անդրկովկասյան Ֆեդերացիայի տնտեսական բազան, որ Անդրկովկասի սովետական հանրապետությունները դարձել են ազգային խաղաղության անսասան ամրոց։

ՀՍՍՀ Ժողկոմսովետի նախագահ Ս. Տեր-Գաբրիելյանը հանդես եկավ կառավարության հաշվետվությամբ։ Համագումարը կառավարության վարած գիծը գտավ ճիշտ և հավանություն տվեց նրա գործունեությանը։

Սովետների VI համագումարը քննարկեց հանրապետության վարչա-տերիտորիալ բաժանման հարցը։ Նոր նախագիծը, որ ելնում էր բնակչության տեղաբաշխումից, աշխարհագրական առանձնահատկություններից, ազգային փոքրամասնությունների շահերից, միաժամանակ հաշվի էր առնում արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացման հեռանկարները։ Համագումարը կենտգործկոմին հանձնարարեց ավարտել նախագծի մշակումը։ ՀՍՍՀ Կենտգործկոմը 1929 թվականի հուլիսի 26-ի որոշումով[1] Հայաստանը ենթարկվեց նոր շրջանացման։ Պահպանելով վարչական բաժանման եռաստիճան սիստեմը (գյուղ, գավառակ և գավառ), մինչ այդ գոյություն ունեցող ինը գավառի և 38 գավառակի փոխարեն ստեղծվեցին հինգ օկրուգ (գավառ) (Երևանի, Լենինականի, Լոռու, Սևանի և Ջանգեզուրի) և 31 շրջան (գավառակ)։

Սովետների VI համագումարի կենտրոնական հարցը հանրապետության առաջին հնգամյա պլանն էր, որի մասին զեկուցեց ՀՍՍՀ Ժողկոմսովետի նախագահի տեղակալ և պետպլանի նախագահ Մ. Սահակյանը։ Ինչպես նշեց համագումարը, պլանը ելնում էր հանրապետության ինդուստրիալ զարգացման, գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման և կուլտուրական հեղափոխության խնդիրներից։ Նախատեսվում էր զարգացնել և ընդարձակել լեռնային ու լեռնագործարանային արդյունաբերությունը, զարկ տալ քիմիական արդյունաբերության զարգացմանը, ոռոգման և էլեկտրիֆիկացիայի նպատակով առավելագույն չափով օգտագործել ջրային պաշարները, արդյունաբերական մշակման ենթարկել շինանյութերի հարուստ հանքերը և ավելի զարգացնել գյուղատնտեսական հումքը վերամշակող արդյունաբերությունը։

Արդյունաբերության զարգացման արագ տեմպերի շնորհիվ համախառն արտադրանքն ավելանալու էր չորս անգամ, այդ թվում արտադրության միջոցների արտադրությունն աճելու էր ավելի քան 5,5 անգամ։ Կառուցվելու էին ծանր ինդուստրիայի մի քանի խոշոր ձեռնարկություններ՝ ծծմբաթթվի, պղնձարջասպի և պղնձաձուլական գործարաններ Ալավերդում, Ղափանի հարստացուցիչ ֆաբրիկան, քիմիական պարարտանյութերի գործարան Ղարաքիլիսայում (Կիրովական), ցեմենտի գործարան Դավալուում (Արարատ)։ Էլեկտրիֆիկացիայի բնագավառում ամենամեծ աշխատանքը լինելու էր Քանաքեռի հիդրոէլեկտրակայանի շինարարությունը։ Հիշյալ օբյեկտների մի մասի կառուցումն սկսս-

1 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 6 օգոստոսի 1929 թ.։

վեց 1929—1930 թվականներին։ Ամբողջ ժողովրդական տնտեսության մեջ հինգ տարվա ընթացքում նախատեսվում էր ներդնել մոտ 277 միլիոն, այդ թվում միայն արդյունաբերության մեջ՝ մոտ 118 միլիոն ռուբլի։

Գյուղատնտեսության բնագավառում հիմնական խնդիրը կոլտնտեսությունների և սովխոզների կազմակերպումը և գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացումն էր։ Նախատեսվում էր հինգ տարվա ընթացքում կոլեկտիվ տնտեսությունների մեջ ընդգրկել գյուղացիական տնտեսությունների 17 տոկոսը։

Ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերափոխման այս վիթխարի խնդիրների կատարումը անհնար էր առանց կադրերի մասսայական պատրաստման և կուլտուրական շինարարության բուռն վերելքի։ Համագումարը քննարկեց նաև լուսավորության ժողկոմ Ա. Մռավյանի զեկուցումը կուլտուրական շինարարության խնդիրների մասին։

Հայաստանի սովետների VI համագումարը հավանություն տվեց հանրապետության ժողովրդական տնտեսության զարգացման հեռանկարներին ու կառավարությանը հանձնարարեց հետագայում վերացնել թերությունները և բոլոր միջոցներով ապահովել պլանի կենսագործումը։

Սովետների VI համագումարում զեկուցումների քննարկմանը ակտիվորեն մասնակցեցին տասնյակ պատգամավորներ, որոնք քննադատական դիտողությունների հետ մեկտեղ, պատմեցին բանվորների և գյուղացիների աշխատանքային խանդավառության, հնգամյա պլանը կատարելու նրանց պատրաստակամության և կոլեկտիվացման անհրաժեշտության մասին։ Բազմաթիվ բանվորական պատգամավորություններ համագումարին խոստացան հնգամյա պլանը կատարել պատվով, ժամանակին։ Ղափանի հանքագործների ներկայացուցիչը իր ողջույնի խոսքում ասաց. «Մենք սոցիալիզմի կառուցման առաջին քայլերն արել ենք արդեն, բարձրացրել ենք արդյունաբերությունը։ Այսուհետև ևս կմարտնչենք մինչև սոցիալիզմի վերջնական հաղթանակը»[1]։

Համագումարը ընտրեց ՀՍՍՀ կենտգործկոմի նոր կազմ, բաղկացած 220 մարդուց (150 անդամ և 70 թեկնածու)։ Բանվորների, աշխատավոր գյուղացիների, ինտելիգենցիայի ընտրյալների թվում էին Սարգիս Կասյանը, Մանուկ Աբեղյանը, Նիկոլայ Գյանջունցը, Լևոն Յաղուբյանը, Վահան Երեմյանը, Ստեփան Զորյանը, Ալեքսանդր Թամանյանը, Իվան Իպատովը, Կարո Հալաբյանը, Արաբ Շամիլովը, Իոն Շչեդրինը, Կոստի Պիլիևը, Մարտիրոս Սարյանը, Ֆլորա Վարդանյանը և ուրիշներ։ Համագումարն ընտրեց ԱՍՖՍՀ և ՍՍՀՄ սովետների V համագումարների պատգամավորներ, ՍՍՀՄ կենտգործկոմի ազգությունների խորհրդի անդամներ և թեկնածուներ։ Կենտգործկոմի նստաշրջանը Սարգիս Կասյանին ընտրեց ՀՍՍՀ կենտգործկոմի նախագահ և հաստատեց ժողկոմսովետի կազմը՝ Սահակ Տեր-Գաբրիելյանի նախագահությամբ։

Հայաստանի բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների պատգամավորների սովետների VI համագումարը կարևոր տեղ է գրավում հանրապետության սոցիալիստական շինարարության պատմության մեջ։ Համագումարի որոշումները մոբիլիզացրին Հայաստանի աշխատավորների ուժերը սոցիա-

---

1 «Խորհրդային Հայաստան», 12 ապրիլի 1929 թ.։

լիզմի նյութա-տեխնիկական հիմքի ստեղծման, առաջին հնգամյա պլանը կենսագործելու համար։

1929 թվականի մայիսին Անդրկովկասի սովետների V համագումարը հավանություն տվեց Անդրկովկասի սովետական հանրապետությունների զարգացման հնգամյա պլանին։

ԱՍՖՍՀ կառավարության ղեկուցման առթիվ միութենական կառավարությունը 1929 թվականի հոկտեմբերի 4-ին ընդունեց որոշում, որով հավանություն տվեց տեղական բնական հարստությունները օգտագործելու միջոցով խոշոր արդյունաբերություն ստեղծելու և էլեկտրիֆիկացիայի հիման վրա ամբողջ ժողովրդական տնտեսությունը վերակառուցելու ԱՍՖՍՀ կառավարության ընդունած պլանին։ ՍՍՀՄ կառավարությունը շարադրեց միութենական և անդրկովկասյան ղեկավար օրգանների խնդիրներն ու անելիքները Անդրկովկասի ժողովրդական տնտեսության և կուլտուրական զարգացման ասպարեզում։

Նույն թվականի նոյեմբերին Համ(բ)Կ Կենտկոմը որոշում ընդունեց «Համ(բ)Կ Անդրերկրկոմի հետագա աշխատանքների մասին»։ Կուսակցության Կենտկոմը Անդրկովկասյան Ֆեդերացիայի ղեկավար օրգաններից պահանջեց բոլոր ուժերը կենտրոնացնել ազգային հանրապետությունների տնտեսական շինարարության, նրանց ինդուստրացման և գյուղատնտեսության տեխնիկական ու սոցիալիստական վերակառուցման վրա։ Անդրֆեդերացիայի ղեկավար դերի ուժեղացման հետ միասին, զարգացման նոր էտապում պահանջվում էր լայնորեն ծավալել նրա կազմի մեջ մտնող ազգային հանրապետությունների ինքնագործունեությունը և տնտեսական նախաձեռնությունը։

Հնգամյա պլանը սովետական ժողովրդի առջև վիթխարի խնդիրներ դրեց, որոնց իրագործումը կապված էր մեծ դժվարությունների հաղթահարման հետ (միջոցների և կադրերի պակասը, միջազգային դրության լարվածությունը և երկրի ներսում շահագործող տարրերի դիմադրությունը, կոլեկտիվացման գործի բարդությունը և այլն)։ Դժվարությունները հիմնականում պայմանավորված էին երկրի տնտեսական-տեխնիկական հետամնացությամբ։

Նոր պահանջներին համապատասխան վերակառուցվեցին կուսակցական, սովետական, կոմերիտական և հասարակական մյուս կազմակերպությունների աշխատանքները։ Այդ գործում մասնավորապես կարևոր դեր խաղաց քննադատության և ինքնաքննադատության ծավալումը, որի կապակցությամբ կուսակցության բոլոր անդամներին և բոլոր բանվորներին ուղղված կոչով Համ(բ)Կ Կենտկոմը հանդես էր եկել դեռևս 1928 թվականի հունիսի 3-ին։

«Խորհրդային Հայաստան» թերթում առանձնացվեց հատուկ էջ՝ «Բանվորա-գյուղացիական տեսչության թերթիկ» խորագրով, որի միջոցով աշխատավորները վճռական պայքարի էլան կուսակցական, սովետական, տնտեսական և մյուս կազմակերպությունների ու օրգանների աշխատանքներում տեղ գտած սխալներն ու թերությունները մերկացնելու, բյուրոկրատիզմը չախչախելու համար։ Մոտ վեց հազար բանվոր և գյուղացի թղթակիցներ էին աշխատակցում հանրապետական թերթերին։ Իր գործունեությունն ուժեղացրեց բանվորա-գյուղացիական տեսչության ժողկոմատը։ 1928—1929 թվականներին ԲԳՏ-ի սեկցիաներ կազմակերպվեցին քաղսովետներին և խոշոր գյուղսովետներին կից։ Կոմունիստական կուսակցության կոչին ակտիվորեն արձագանքեց

նաև լենինյան կոմերիտմիությունը։ Նրա նախաձեռնությամբ կազմակերպվեցին «Թեթև հեծելազորի» ջոկատներ, որոնց «արշավները» դարձան բյուրոկրատիզմի դեմ պայքարելու ձևերից մեկը։ 1930 թվականի օգոստոսին ջոկատների թիվը հասավ 600-ի՝ 8000 անդամով[1]։ 1929 թվականի մայիսին կայացած ՀԼԿԵՄ VI համագումարն անցավ առաջին հնգամյա պլանը կատարելու, սոցիալիստական շինարարության մեջ կոմերիտականներին և բոլոր երիտասարդներին ակտիվ մասնակից դարձնելու նշանաբանով։

Համկ(բ)Կ XVI կոնֆերանսի որոշմամբ 1929—1930 թվականներին ինչպես ամբողջ Սովետական Միությունում, այնպես էլ Հայաստանում անցկացվեց սովետական ապարատի և կուսակցության շարքերի զտում, որի ընթացքում հարյուրավոր բանվորներ ընդունվեցին կուսակցության մեջ և առաջ քաշվեցին սովետական օրգաններում աշխատելու համար։

Կոմունիստական կուսակցությունը վճռական պայքար ծավալեց արհմիությունների աշխատանքներում տեղ գտած թերությունները, ինչպես նեղ, ցեխային պարփակվածությունը, աշխատավորների շահերի նկատմամբ բյուրոկրատական անուշադրությունը և այլն, վերացնելու համար։ Հայաստանի արհեստակցական միությունների 6-րդ գումարման II պլենումը, որը կայացավ 1929 թվականի ապրիլին Լենինականում, արհմիությունների 55 հազար անդամների ուշադրությունը կենտրոնացրեց հնգամյա պլանը կատարելու վրա։

Այդ ժամանակաշրջանում բանվոր դասակարգի առջև կանգնած կարևոր խնդիրներից էր արտադրության կատարելագործումը։ Այդ նպատակով պայքար ծավալվեց արտադրական խորհրդակցությունների աշխատանքն ուժեղացնելու համար։ Հայաստանի բանվոր դասակարգը ակտիվորեն մասնակցեց «Պրավդա» թերթի հայտարարած արտադրական խորհրդակցությունների համամիութենական ստուգատեսին, որը անցկացվեց 1928 թվականի նոյեմբերից մինչև 1929 թվականի մարտը։ Միայն Երևանում և Լենինականում ստուգատեսային արտադրական ժողովներին մասնակցել է բոլոր բանվորների ավելի քան 70 տոկոսը[2]։

Ստուգատեսի ընթացքում ավելացավ արտադրության առաջավորների, ռացիոնալիզատորների ու նորարարների թիվը։

Արտադրական խորհրդակցությունների ստուգատեսի կարևոր արդյունքն այն էր, որ այդ ընթացքում կուսակցականների և կոմերիտականների նախաձեռնությամբ հանդես եկան երիտասարդական հարվածային բրիգադներ, որոնք պայքարում էին ռացիոնալիզացիայի միջոցով արտադրողականությունը բարձրացնելու, ինքնարժեքն իջեցնելու, որակյալ արտադրանք տալու համար։

Առաջին կոմերիտական հարվածային բրիգադները կազմակերպվեցին Սովետական Միության արդյունաբերական կենտրոններում։ Դեռևս 1926 թվականի հուլիսից նման բրիգադներ գործում էին Կազանի երկաթուղագծում, 1927 թվականի նոյեմբերից՝ Զլատոուստի մեխանիկական գործարանում (Ուրալ)։ 1928 թվականի կեսերին հարյուր հիսուն մարդուց բաղկացած մի քանի երի-

---

1 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 128, ց. 1, գ. 2919, թ. 19—21։

2 Տե՛ս նույն տեղում, ֆ. 65, ց. 4, գ. 917, թ. 118—119։

տասարդական հարվածային խմբեր կային Լենինգրադի «Ռավենստվո» տեքստիլ ֆաբրիկայում։

Հարվածային բրիգադների գործունեությունը վերակենդանացրեց կոմունիստական շաբաթօրյակների տրադիցիան և ազդարարեց մասսայական սոցիալիստական մրցության ծնունդը, որի կազմակերպման և զարգացման համար մեծ աշխատանք ծավալեց կոմունիստական կուսակցությունը։

1929 թվականի հունվարի 20-ին «Պրավդայում» առաջին անգամ տպագրվեց Վ. Ի. Լենինի «Ինչպե՞ս կազմակերպել մրցությունը» հոդվածը։ «Սոցիալիզմը ոչ միայն չի մարում մրցությունը,— գրել է Վ. Ի. Լենինը,— այլ, ընդհակառակը, առաջինն է հնարավորություն ստեղծում իրոք լայնորեն կիրառելու այն, իրոք մասսայական չափով, իրոք աշխատավորների մեծամասնությունը ներգրավելու այնպիսի աշխատանքի ասպարեզը, որտեղ նրանք կարող են երեվան բերել իրենց, ծավալել իրենց ընդունակությունները, դրսևորել տաղանդներ, որոնք ժողովրդի մեջ անսպառ աղբյուր են և որոնց կապիտալիզմը ճմլել, ճնշել, խեղդել է հազարներով ու միլիոններով»[1]։ Մրցությունը համարելով սովետական իշխանության հերթական խնդիրներից մեկը, Վ. Ի. Լենինն այն դիտում էր որպես նոր, սոցիալիստական հասարակարգի կառուցման գործում աշխատավորներին ներգրավելու հզոր միջոց։

1929 թվականի հունվարի 26-ին «Կոմսոմոլսկայա Պրավդան» դիմեց Սովետական Միության բոլոր կոմերիտականներին՝ համամիութենական սոցիալիստական մրցում կազմակերպելու կոչով։ Նույնպիսի կոչով մարտի 31-ին հանդես եկավ ՀամԼԿԵՄ Կենտկոմը։

Այս բոլորին հաջորդեց երիտասարդական հարվածային բրիգադների կազմակերպումը և արտադրական ձեռնարկությունների կողմից միմյանց սոցիալիստական մրցման հրավիրումը։

Աշխատավոր մասսաների արտադրական խանդավառության ծավալման համար կոմունիստական կուսակցության XVI կոնֆերանսը 1929 թվականի ապրիլի 29-ին դիմեց Սովետական Միության բոլոր բանվորներին և աշխատավոր գյուղացիներին։ Դիմումում ասված է, որ Սովետական Միության բանվոր դասակարգը պահպանել և բազմապատկել է անցած տարիների տրադիցիաները, որ, մասնավորապես, հարվածային բրիգադները կոմունիստական շաբաթօրյակների լավագույն տրադիցիաների շարունակողներն են, և որ արդեն սոցիալիստական հիմունքներով մրցություն կազմակերպելու լենինյան գաղափարը ավելի մեծ չափերով գործնական մարմնավորում է ստացել։ Կոնֆերանսը քաղաքի և գյուղի բոլոր աշխատավորներին կոչ արեց առավել մեծ եռանդով պայքարել Սովետական Միության ինդուստրացման, սոցիալիզմի կառուցման համար[2]։

Կոնֆերանսի կոչը լայն արձագանք գտավ ամբողջ երկրում, սովետական բոլոր հանրապետություններում։

Սոցիալիստական մրցումը և հարվածայնությունը Սովետական Հայաստանում սկսեց տարածվել ապրիլ-մայիս ամիսներից։

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 26, էջ 493—494։

2 Տե՛ս «ՍՄԿԿ-ն... բանաձևերում ու որոշումներում», մասն II, էջ 778—783։

Լենինգրադի «Կրասնի վիբորժեց» գործարանի կոլեկտիվը մարտի 5-ին սոցիալիստական մրցման հրավիրեց Սովետական Միության բոլոր արդյունաբերական ձեռնարկություններին։ Երևանի կարբիդագործները առաջինը Հայաստանում ընդունեցին լենինգրադցիների մրցահրավերը։ Այդ առթիվ լենինգրադցիներին ուղղած հեռագրում ասված է. «Մենք ամեն ջանք կգործադրենք, որպեսզի կարողանանք հավելումով կատարել կառավարության մարտական առաջադրանքն ինքնարժեքի իջեցման մասին»[1]։ Կարբիդագործները կատարեցին իրենց խոստումը։ Իրենց արտադրական պլանները սիստեմատիկաբար գերակատարում էին բանվորներ Ա. Գևորգյանը, Մ. Ուլոյանը, Մ. Միրաբյանը, Ա. Մկրտչյանը և ուրիշներ։

Ապրիլի 24—25-ը Երևանում տեղի ունեցավ մայրաքաղաքի արդյունաբերական ձեռնարկությունների սոցիալիստական մրցության տարածմանը նվիրված կոնֆերանս, որտեղ Երևանի գործարանների միջև ստորագրվեց Հայաստանում առաջին սոցիալիստական մրցության պայմանագիրը։ Պայմանագրում ասված է, որ այն ստորագրող ձեռնարկությունների կոլեկտիվները, հետևելով Մոսկվայի, Տվերի, Իվանովո-Վոզնեսենսկի, Բաքվի և մյուս քաղաքների բանվորների օրինակին, պարտավորվում են կատարել արտադրանքի ինքնարժեքն իջեցնելու, արտադրողականությունը բարձրացնելու առաջադրանքները, բարելավել արտադրանքի որակը և այլն։ Կոնֆերանսը սոցիալիստական մրցման հրավիրեց Հայաստանի գործարանների կոլեկտիվներին։

Շուտով սոցիալիստական մրցումն ու հարվածայնությունը տարածվեց Հայաստանի բոլոր գործարաններում և երկաթուղային տրանսպորտում։

Ալավերդում սկզբում մրցում էին երեք ցեխ և տաս բրիգադ, Շամլուղում՝ տաս հարվածային բրիգադ։ Իսկ նոյեմբերին ամբողջ կոմբինատում մրցող բրիգադների թիվը հասավ 60-ի։ Անհատական պայմանագիր ունեին մոտ 80 մարդ։ Մրցության մեջ ընդգրկված էր ավելի քան 700 բանվոր և ինժեներա-տեխնիկական աշխատող կամ ամբողջ կոլեկտիվի կեսից ավելին[2]։ Կոմերիտականների ջանքերով Շամլուղում կարճ ժամանակում վերականգնվեց «Կուլր» հանքահորը, որը վերանվանվեց Մայիսի 1-ի անվան։ Հանքահորը վերականգնելու գործում աչքի ընկավ Ս. Բաբայանի բրիգադը, որն այդտեղ էր փոխադրվել արտադրական խորհրդակցության որոշմամբ։ Աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու պլանը գերակատարում էին Ա. Մահմուդովի, Մ. Փափախչյանի, Սամարչևի, Վախանելովի, Ա. Մադոյանի և մյուսների բրիգադները։ Կարլ Մարքսի անվան գործարանում Թ. Ալիխանյանի և Գ. Նասիբյանի հարվածային հերթափոխությունները ավելացրին պղնձի ձուլումը։ Լենինականի երկաթուղային դեպոյում կազմակերպված կոմերիտական հարվածային բրիգադը երեք օրով կրճատեց յուրաքանչյուր շոգեմեքենայի վերանորոգման ժամկետը, որի շնորհիվ մինչև նոյեմբեր ամիսը տնտեսվեց 28 հազար ռուբլի։ Միայն երկու ամսվա ընթացքում տնտեսվեց 40 հազար ռուբլու վառելանյութ[3]։ Տնտեսական ցուցանիշները բարելավելու և առաջադրանքները գերակատարելու

---

1 «Խորհրդային Հայաստան», 13 ապրիլի 1929 թ.։

2 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՄՇ ՊԿԱ, ֆ. 187, ց. 2, գ. 109, թ. 3—16։

3 Տե՛ս «Բանվոր», 30 հունիսի 1929 թ.։ «Խորհրդային Հայաստան», 24 նոյեմբերի 1929 թ.։

համար Լենինականի երկաթուղային դեպոյի կոլեկտիվը արժանացավ Անդրկովկասի երկաթուղային վարչության առաջին կարգի մրցանակին[1]։

Միմյանց սոցիալիստական մրցության հրավիրեցին Հայաստանի, Վրաստանի, Ադրբեջանի և սովետական մյուս հանրապետությունների մի շարք ֆաբրիկանների ու գործարանների կոլեկտիվներ, երկաթուղայիններ ու շինարարներ։

Սոցիալիստական մրցության պայմանագիր ունեին Ուզբեկստանի Դալվերզինի և Հայաստանի Սարդարաբադի ջրանցքների շինարարները[2]։ Նրանք ձգտում էին ժամկետից շուտ շահագործման հանձնել ջրանցքները, որոնք ոռոգելու էին տասնյակ հազարավոր հեկտար անմշակ տարածություններ։ Մրցության մեջ էին նաև Անդրկովկասի խոշոր հիդրոէլեկտրակայանների՝ Ռիոնգէսի և Զորագէսի շինարարների կոլեկտիվները։ Մրցության շնորհիվ 1929 թվականին Զորագէսում ավարտվեց թունելի փորումը տեղանքի ամենակարծր մասում, որտեղ աշխատում էին Դ. Գարբուշկինի և Ա. Բախտամյանի հարվածային բրիգադները։

Անդրկովկասի և մյուս հանրապետությունների սոցիալիստական մրցումը դարձավ տրաղիցիա։ Այն ավելի մոտեցրեց եղբայրական ժողովուրդներին և ամրապնդեց նրանց բարեկամությունը։

Ի պատիվ Բաքվի հերոս կոմունարների հիշատակի, Անդրկովկասի աշխատավորները 1929 թվականի սեպտեմբերի 20-ը հայտարարեցին «ինդուստրացման օր»։ Այդ օրվա ամբողջ աշխատավարձը հատկացվեց ինդուստրացման ֆոնդին։ «Այդ օրը,— ասված է Համ(բ)Կ Անդրերկրկոմի դիմումի մեջ,—պետք է լինի ԱՍՖՍՀ բոլոր պրոլետարների և աշխատավորների ստեղծագործական ուժի և էնտուզիազմի մոբիլիզացիայի օր՝ պայքարելու սոցիալիզմի ճանապարհին գտնվող դժվարությունների դեմ»[3]։

Ինդուստրացման և սոցիալիզմի գործին նվիրվածության վառ օրինակ էին նաև շաբաթօրյակները։ 1929 թվականի փետրվարին կոմերիտմիության Լոռի-Փամբակի գավկոմը ՀԼԿԵՄ կենտկոմին հայտնել է, որ գավառի շաբաթօրյակներին մասնակցել են հազար հինգ հարյուր երիտասարդներ, այդ թվում 1200 կոմերիտականներ։ Նրանք աշխատել են Ալավերդում, Զորագէսի թունելի շինարարությունում, վերանորոգել են կամուրջներ ու ճանապարհներ և այլն։ Կոմերիտական մեծ շաբաթօրյակ կազմակերպվեց նոյեմբերի 29-ին՝ Հայաստանում սովետական կարգերի հաղթանակի 9-րդ տարեդարձի օրը։ Կոմերիտական շաբաթօրյակներից հավաքված գումարը հատկացվում էր ինդուստրացման, երկրի պաշտպանության, ինչպես նաև անգրագիտության վերացման ֆոնդին։

«Ինդուստրացման օրը» և կոմունիստական շաբաթօրյակները հիշեցնում էին սովետական իշխանության առաջին տարիներին ծնունդ առած շաբաթօրյակները, որը Վ. Ի. Լենինը անվանեց կոմունիստական և որին նա տվեց պատմական նշանակություն, այն պատճառով, «որ նրանք մեզ ցույց են տալիս

---

1 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 28 դեկտեմբերի 1929 թ.։

2 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 65, ց. 1, գ. 1377, թ. 220։

3 «Խորհրդային Հայաստան», 19 սեպտեմբերի 1929 թ.։

բանվորների գիտակցական և կամավոր նախաձեռնությունն աշխատանքի արտադրողականության զարգացման մեջ, նոր աշխատանքային կարգապահության անցնելու, տնտեսության և կյանքի սոցիալիստական պայմաններ ստեղծելու մեջ»[1]։

Սոցիալիստական մրցության և հարվածային աշխատանքի շնորհիվ Հայաստանի աշխատավորները հնգամյակի առաջին տարում ձեռք բերեցին մեծ հաջողություններ։ 1928/29 տնտեսական տարում, նախորդ տարվա համեմատությամբ, ամբողջ արդյունաբերության համախառն արտադրանքը ավելացավ ավելի քան 46 տոկոսով։ Նույն ժամանակամիջոցում մեկ բանվորի աշխատանքի արտադրողականությունը բարձրացավ ավելի քան 30, իսկ արտադրանքի ինքնարժեքն իջավ 13 տոկոսով, պլանով նախատեսված 9,0 տոկոսի փոխարեն[2]։

Սովետական ժողովուրդը երկրի ինդուստրացման գործը, հերոսական աշխատանքի հետ միասին, գլուխ էր բերում մեծ զոհողությունների գնով։

1929 թվականի դեկտեմբերին Մոսկվայում տեղի ունեցավ հարվածային բրիգադների համամիութենական առաջին համագումարը, որը ամփոփեց սոցիալիստական մրցության և հարվածայնության առաջին արդյունքները և ուղիներ նշեց նրա հետագա ծավալման ու խորացման համար։ Զեկուցումով հանդես եկավ ՍՍՀՄ Ժողտնտգերխորհի նախագահ Վ. Վ. Կույբիշևը։ Նա նշեց, որ սոցիալիստական մրցումը դառնում է մեր աշխատանքի հիմնական մեթոդը։ «Մեր առաջնահերթ գործն է,— ասաց Վ. Վ. Կույբիշևը,— նախկին ստրկական կապիտալիստական աշխատանքի, հարկադրական աշխատանքի փոխարեն, հարկադրական կարգապահության փոխարեն ստեղծել այլ, կոմունիստական վերաբերմունք աշխատանքի նկատմամբ, կոմունիստական աշխատանք և կոմունիստական կարգապահություն»[3]։

Սոցիալիստական մրցության ծագումը օրինաչափ երևույթ էր։ Այն նախապատրաստված էր սովետական պետության և բանվոր դասակարգի անցած պատմությամբ։

Այսպիսով, առաջին հնգամյա պլանի ընդունումը, ինչպես ամբողջ Սովետական Միությունում, այնպես էլ Սովետական Հայաստանում, նշանավորվեց պատմական նշանակություն ունեցող շարժումով, այն է՝ մասսաների քաղաքական ակտիվության վերելքով և սոցիալիստական մրցության ու հարվածայնության ծագմամբ և տարածմամբ։

Բանվոր դասակարգից հետ չմնացին նաև գյուղի աշխատավորները։ Բանվորների աշխատանքային խանդավառությունը, սոցիալիստական ինդուստրիայի և գյուղատնտեսական տեխնիկայի նորակառույցներում ծավալված սոցիալիստական մրցումը մեծ ազդեցություն թողեց գյուղի աշխատավոր մասսաների վրա, որոնք բանվոր դասակարգի օգնությամբ արագացրին կոլտնտեսությունների կազմակերպումը։ Զքավորների հետևից կոլտնտեսությունների մեջ սկսեցին մտնել միջակ գյուղացիները։ 1929 թվականին, հատկապես երկրորդ

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 29, էջ 519։

2 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՄԾ ՊԿԱ, ֆ. 65, ց. 6, գ. 659, թ. 5։

3 *В. В. Куйбышев*, Избранные произведения, М., 1958, էջ 151։

կեսին, կոլեկտիվացումը մասսայական բնույթ ընդունեց, որը ՍՍՀՄ մի շարք շրջաններում վերածվեց համատարած կոլեկտիվացման։

Հանրապետության կառավարությունը և կոմունիստական կուսակցությունը մի շարք միջոցառումներ մշակեցին առաջին կոլտնտեսությունները ամրապնդելու համար։ Կոլտնտեսություններին ցույց տված օգնությունը և արտոնությունները դեպի կոլտնտեսություններն էին գրավում աշխատավոր գյուղացիների նորանոր զոհատներ։ ՀԿ(բ)Կ կենտկոմը 1928 թվականի օգոստոսի 17-ին և դեկտեմբերի 4-ին որոշումներ ընդունեց կոլտնտեսությունների հողերի կենտրոնացման մասին, որոնցով կուսակցության գավառային կոմիտեներին հանձնարարվում էր կոնկրետ կերպով ղեկավարել և արագացնել հիշյալ աշխատանքները[1]։ ՀՍՍՀ Կենտգործկոմի և Ժողկոմսովետի նույն թվականի օգոստոսի 22-ի և դեկտեմբերի 15-ի որոշումներով կոլտնտեսություններին տրվեցին մի շարք արտոնություններ. մասնավորապես նրանց հողաշինարարությունը կատարվելու էր առաջին հերթին և անվճար[2]։ Կոլտնտեսությունների հողերի կենտրոնացումը նրանց գործունեության առաջնահերթ պայմանն էր։ Մեծ չափով ավելացվեց կոլտնտեսություններին հատկացվող վարկի գումարը։ Այսպես, միայն 1928/29 տնտեսական տարում Հայաստանի կոլտնտեսություններին տրվել է մոտ 830 հազար ռուբլու վարկ, իսկ անհատական տնտեսություններին՝ երկու միլիոն ռուբլի[3]։ Այդ նշանակում է, որ յուրաքանչյուր կոլտնտեսական ընտանիքին ընկնում էր տաս անգամ ավելի գումար, քան անհատական տնտեսատիրոջը։ Այս հանգամանքը 1928—1929 թվականներին կարևոր դեր էր խաղում չքավորներին, ինչպես նաև միջակներին կոլտնտեսությունների կողմը գրավելու գործում։

Ծավալվեց շեֆական աշխատանքը։ 1929 թվականի գարնանը բազմաթիվ բանվորական ու կոմերիտական բրիգադներ մեկնեցին գյուղերը։ Նրանք գյուղացիներին բացատրում էին կոլտնտեսային կարգի առավելությունները, կազմակերպում էին տարբեր տեսակի օգնություն և այլն։ «Արարատ» տրեստի բանվորական բրիգադները մի քանի անգամ մեկնեցին Ղամարլուի շրջանի Գյոդաքլու ենթաշեֆ գյուղը, իրենց հետ տանելով մասնագիտական գրականություն, թերթեր։ Նրանք կազմակերպում էին զեկուցումներ այգիների մշակության և կոլեկտիվացման հարցերի մասին։ Հայգյուղկոոպի բրիգադները չորս ամսվա ընթացքում 12 անգամ եղան Ջարրախում, գյուղացիներին նվիրելով երկու շարքացան մեքենա և այլ գործիքներ։ Հողագործության ժողկոմատը շեֆություն էր անում Ավան գյուղում, ավտովաթորդների կոլեկտիվը՝ Ղամարլուի շրջանի Իմանշալու գյուղում և այլն։ ՀԿ(բ)Կ կենտկոմը նշել է, որ 1929 թվականին շեֆական աշխատանքի ընթացքում զգալի նվաճումներ են ձեռք բերվել Երևանի և Լենինականի գավառներում, որն առանձնապես արտահայտվել է «շեֆ գյուղերում չքավորների վարը կազմակերպելու, շրջիկ արհեստանոցների միջոցով

---

1 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 881, թ. 5, 12։

2 Տե՛ս նույն տեղում, թ. 6։ «Խորհրդային Հայաստան», 4 հունվարի 1929 թ.։

3 Տե՛ս «ՀՍԽՀ կառավարության հաշվետվության նյութեր. 1928/29—1929/30», էջ 146։

գյուղատնտեսական գործիքները վերանորոգելու, ինչպես նաև կուլտուրական-լուսավորական աշխատանքների ասպարեզում»[1]։

Լենինականի երկաթուղային դեպոյի, Ալավերդու, Ջանգեզուրի, Երևանի և այլ բանվորական-կոմերիտական բրիգադներ զգալի աշխատանք տարան գյուղերում։ Որոշ տեղերում (Էջմիածին, Փարպի, Լոռի-Փամբակ, Լենինական և այլն) կոմերիտական բջիջների նախաձեռնությամբ կազմակերպվեցին կոլտնտեսություններ[2]։ Կոմերիտական շաբաթօրյակներից հավաքված գումարը տրամադրվեց նոր կազմակերպվող կոլտնտեսություններին (Ղուրդուղուլիի շրջանում և այլ տեղերում)։

Բանվորական և կոմերիտական բրիգադների շեֆական աշխատանքը քաղաքի և գյուղի զոդման, գյուղում բանվոր դասակարգի ղեկավար դերի ու բանվորա-գյուղացիական դաշինքի ամրապնդման ձևերից մեկն էր։

1929 թվականին գյուղում տարվող աշխատանքների մեջ նկատվեցին մի շարք բացասական մոմենտներ, որոնք ազդեցին կոլեկտիվացման նորմալ ընթացքի վրա։ ՀԿ(բ)Կ Կենտկոմը 1929 թվականի ապրիլի 9-ին նամակով դիմեց կուսակցական բոլոր բջիջներին[3]։ Նամակում ասված է, որ տեղական կազմակերպությունները, առանձին կուսակցական աշխատողներ և կուսակցական բջիջներ գործնական ու մասսայական աշխատանքներում թույլ են տվել մի շարք սխալներ, կուսակցության գծի նկատելի աղավաղումներ, որոնք բխում են միջակ գյուղացիության թերագնահատումից։ Դա արտահայտվել է նրանով, որ 1928—1929 թվականներին, ընտրական կամպանիայի ժամանակ, համեմատաբար քիչ միջակներ էին ընտրվել սովետներում, ընտրական ձայնից զրկվել էին որոշ միջակ տնտեսատերեր, վերջիններս անհրաժեշտ չափով չէին ներգրավվել կոլտնտեսությունների մեջ։ Երբեմն կոլտնտեսությունները կազմակերպվել են հարկադրաբար, առանց նախապատրաստության։ Միջակի թերագնահատումը տեղ էր գտել նաև հարկային քաղաքականության բնագավառում։ Անհատական հարկադրման էին ենթարկվել նաև որոշ թվով միջակ տնտեսություններ։

Դեռևս 1929 թվականի հունվարին, ՀԿ(բ)Կ VI համագումարի կողմից նույնպես խիստ քննադատության էին ենթարկվել այն թերությունները ու սխալները, որոնք տեղ էին գտել գյուղում տարվող աշխատանքներում և կոլեկտիվացման բնագավառում։

ՀԿ(բ)Կ Կենտկոմի նամակը կուսակցության բոլոր անդամների ուշադրությունն էր հրավիրում կուսակցության քաղաքական գծի ճիշտ յուրացման և անշեղ կենսագործման վրա, հիշեցնելով, որ մեր քաղաքականությունն է՝ ամուր հենվել չքավոր գյուղացիության վրա, սերտ դաշինք ստեղծել միջակի հետ և պայքար ծավալել կուլակի դեմ։

Կազմակերպվեցին տասնյակ նոր կոլտնտեսություններ։ Մեկ տարվա ընթացքում (1928 թվականի հոկտեմբեր—1929 թվականի հոկտեմբեր) ստեղծվեցին 170 նոր կոլտնտեսություններ, իսկ հների մեջ մտան բազմաթիվ նոր անդամներ։ 1929 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ Հայաստանում կոլեկ-

---

1 Մշի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 13, գ. 390, թ. 58։

2 Տե՛ս Ավանգարդ, 9 օգոստոսի 1929 թ.։

3 Տե՛ս Մշի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 14, գ. 9, թ. 107։

տիվ տնտեսությունների թիվը հասել էր 245-ի՝ 6.300 տնտեսությամբ, որը կազմում էր գյուղացիական բոլոր տնտեսությունների 4,0 տոկոսը[1]։

Կոլտնտեսային շարժումը համաչափ չէր ընթանում։ Կոլեկտիվացումը համեմատաբար բարձր էր ավելի նպաստավոր պայմաններ ունեցող շրջաններում։ Այսպես, բարձր ապրանքային կուլտուրայի՝ բամբակի շրջաններին (Արաբասյան դաշտավայր), որտեղ կոոպերացիան ավելի էր զարգացած, ընկնում էր բոլոր կոլտնտեսությունների 40 տոկոսը, իսկ ավելի ցածր ապրանքայնություն ունեցող անասնապահական շրջաններին՝ 15,5 տոկոսը։

Առջևից գնում էր Ղուրդուղուվիի շրջանը, ուր կոլտնտեսությունների մեջ ընդգրկված էին շրջանի տնտեսությունների 17,5 տոկոսը։ 1929 թվականի աշնանը Մեծ Շահրիար (Նալբանդյան), Աղջարխ (Արևիկ), Ջաֆարաբադ (Գետաշեն), Սարդարաբադ (Հոկտեմբեր), Արմթլու (Տանձուտ), Քյալագարխ (Շենավան) և այլ գյուղերում կոլտնտեսությունների մեջ էին մտել տնտեսությունների մոտավորապես կեսը կամ կեսից ավելին։

Այս տվյալները վկայում են, որ 1929 թվականի երկրորդ կեսին Հայաստանի որոշ շրջաններում ծավալվել էր գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը, սկիզբ էր առել մասսայական կոլտնտեսային շարժումը։

ՀԿ(բ)Կ կենտկոմի 1929 թվականի նոյեմբերյան պլենումը ամփոփեց գյուղի սոցիալիստական վերակառուցումը նախապատրաստելու արդյունքները հանրապետությունում և արձանագրեց, որ «կոլտնտեսային շարժումը, որն սկզբում գլխավորապես չքավորական շարժում էր և այն էլ չքավորության մի մասի, այժմ արդեն դարձել է չքավոր ու միջակ գյուղացիության լայն մասսայական շարժում։ Միջակ գյուղացին, գյուղատնտեսության կենտրոնական դեմքը, արդեն պոկվում է կապիտալիստական ուղիով զարգանալու ճանապարհից և հարում է կոլեկտիվացմանը... Մենք ընդհուպ մոտենում ենք ոչ միայն առանձին գյուղերի, այլև ամբողջ շրջանների լրիվ կոլեկտիվացմանը»[2]։ Պլենումը միջոցառումներ մշակեց կոլտնտեսությունների ամրապնդման և կոլեկտիվացման հետագա զարգացման համար։

Այսպիսով, Սովետական Հայաստանում, ավելի ճիշտ, հանրապետության մի շարք շրջաններում 1929 թվականի երկրորդ կեսին սկսվեց մասսայական կոլեկտիվացումը։ Դա գյուղի սոցիալիստական զարգացումը նախապատրաստելու՝ կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության քաղաքականության հաղթանակն էր։

1929 թվականը Սովետական Միության պատմության մեջ մտավ որպես մեծ բեկման տարի, որը սոցիալիզմի կառուցման ճակատներում սովետական ժողովուրդների մղած հերոսական պայքարի արդյունքն էր։ Ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման՝ ինդուստրիայի ծավալման և կոլեկտիվացման նախապատրաստման բնագավառներում մեր երկիրը հասավ զգալի հաջողությունների։ Սկսվեց և լայն ծավալ ստացավ աշխատավոր մասսաների արտադրական խանդավառության վառ արտահայտությունը՝ սոցիալիստական մրցությունը։ Ծավալվեց ծանր արդյունաբերության առաջին մի-

---

1 Տե՛ս Մշի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 13, գ. 22, թ. 4։

2 Նույն տեղում, թ. 114։

շարք օբյեկտների շինարարությունը։ Սկսվեց մասսայական կոլտնտեսային շարժումը, միջակ գյուղացին գնաց դեպի կոլտնտեսություն։

1926—1929 թվականներին Սովետական Հայաստանում ծավալվեց նոր արդյունաբերական ձեռնարկությունների՝ սոցիալիստական ինդուստրիայի առաջին օջախների շինարարությունը։ Նախապատրաստվեց գյուղի սոցիալիստական վերակառուցումը։ Սոցիալիզմի կառուցման գործը Հայաստանում ավելի էր դժվարանում երկրի հետամնաց լինելու և այլ պատճառներով։ Սովետական Միության ժողովուրդների եղբայրական օգնությամբ Հայաստանի բանվորներն ու գյուղացիները կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ հաջողությամբ հաղթահարեցին սոցիալիզմի կառուցման հետ կապված դժվարությունները։

1926—1929 թվականներին Սովետական Միության ժողովուրդները, այդ թվում և հայ ժողովուրդը, սոցիալիզմի կառուցման լենինյան պլանով ղեկավարված, ձեռնամուխ եղան սոցիալիզմի նյութա-տեխնիկական բազայի ստեղծմանը։ Ծավալվեց ամբողջ ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման նախապատրաստումը։

Սովետական Միությունը թևակոխեց պատմական զարգացման նոր՝ ժողովրդական տնտեսության ամբողջ ճակատով սոցիալիզմի ծավալման հարձակման ժամանակաշրջանը։

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐՈՐԴ

ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԿՈԼՏՆՏԵՍԱՑԻՆ ՇԱՐԺՄԱՆ ՍԿԻԶԲԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ։ ԱՐՄԱՏԱԿԱՆ ՀԵՂԱՇՐՋՈՒՄ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

1. ՀԱՄԱՏԱՐԱԾ ԿՈԼԵԿՏԻՎԱՑՄԱՆ ՍԿԻԶԲԸ

Սովետական Միության գյուղատնտեսության զարգացումը 1929 թվականի աշնանից թևակոխեց նոր էտապ։ Գյուղի բազմամիլիոն աշխատավորները սկսեցին միավորվել կոլեկտիվ տնտեսությունների մեջ։ Երկիրը անցավ սոցիալիստական խոշոր հողագործության ստեղծման գործին։

Գյուղում տեղի ունեցող հեղաշրջումը խարսխվում էր երկրի տնտեսական, նյութական և կուլտուրական շինարարության բնագավառներում ձեռք բերված նվաճումների վրա։

Տասնյակ միլիոնավոր մանր սեփականատերերի կյանքում իրականացնել այնպիսի «մեծագույն հեղաշրջումներ, որոնք վերաբերում են կյանքի ու կենցաղի առավել խորը հիմքերին, այնպիսի հեղաշրջումներ, ինչպես մանր զատ-զատ գյուղացիական տնտեսությունից հողի ընդհանուր մշակմանն անցնելն է,— գրել է Լենինը,— կարող են ստեղծվել միայն տևական աշխատանքով, որ նրանք առհասարակ իրագործելի են միայն այն ժամանակ, երբ անհրաժեշտությունն ստիպում է մարդկանց վերափոխել իրենց կյանքը»[1]։

Միլիոնավոր մանրգյուղացիական տնտեսությունների գոյությունը, որոնք դուրկ էին ընդլայնված վերարտադրության հնարավորությունից, ոչ միայն դանդաղեցնում էին արտադրողական ուժերի զարգացումը, այլև արգելակում էին սոցիալիստական արդյունաբերության արագ զարգացումը։ Գյուղատնտեսությունը իր զարգացման տեմպերով չափազանց ետ էր մնում սոցիալիստական ինդուստրիայի զարգացման տեմպերից՝ գյուղը-քաղաքից։ Ժողովրդական տնտեսության առաջընթացի համար հսկայական նշանակություն ունեցող գյուղատնտեսության գլխավոր ճյուղերի՝ հացահատիկային տնտեսության, անասնաբուծության և տեխնիկական կուլտուրաների, արտադրությունը չէր բավարարում երկրի աճող պահանջներն ընդհանրապես, արդյունաբերությանը՝ մասնավորապես։ Այդ իսկ պատճառով կուսակցության և կառավարության տնտեսական քաղաքականության կարևորագույն խնդիրներից մեկը շարունակում էր մնալ գյուղատնտեսության, «առանձնապես նրա հացահատիկային ու տեխնա-

1 Վ. Ի. Լենին, *Երկեր*, հատ. 28, էջ 438։

նապահական սեկտորների զարգացման տեմպերի չափազանց հետամնացության հաղթահարումը»[1]։

Գյուղատնտեսության հետամնացությունը վերացնելու միակ ուղին՝ նրա խոշորացումն էր, որը, սակայն, կապված էր յուրահատուկ դժվարությունների հետ։ Վ. Ի. Լենինը մատնանշել է, որ համայնացման գործը գյուղում «ամենից դժվարինն է, բայց և միաժամանակ ամենից կարևորը»[2]։ Այդ դժվարությունները ոչ միայն մասնավոր սեփականատիրական դարավոր սովորույթի ու հոգեբանության արգասիք էին, այլև գյուղի ընդհանուր հետամնացության հետևանք։ Դրանք պայմանավորված էին գյուղատնտեսական արտադրության մանր ապրանքային բնույթով, ցրվածությամբ, արտադրության միջոցների ցածր մակարդակով, տնտեսությունը վարելու միջնադարյան հետամնաց եղանակով, գյուղի ցածր գրագիտությամբ ու կուլտուրայով։

Գյուղի արտադրողի մասնավոր սեփականատիրական հոգեբանության վերաիոխումը և հանրային տնտեսական կարգի մեջ նրա ընդգրկումն առանձնակի դժվարություն էր ներկայացնում, որի հաղթահարումը պահանջում էր ոչ միայն անհրաժեշտ ժամանակամիջոց, այլև համապատասխան նյութա-տեխնիկական նախադրյալներ։

Իմպերիալիստական պետությունների շրջապատման պայմաններում պրոլետարական դիկտատուրայի միակ երկրի՝ Սովետական Միության հզորացման, ժողովրդական տնտեսության արագ զարգացման և սոցիալիզմի կառուցման շահերը թելադրում էին արդյունաբերությունը, տրանսպորտը և գյուղատնտեսությունը ենթարկել արմատական տեխնիկական վերակառուցման։ Այդ խնդիրների լուծման գործում վճռական նշանակություն ուներ ժողովրդական տնտեսության զարգացման առաջին հնգամյա պլանը, որի առաջին տարվա ծրագրային նախագծումների կենսագործման արդյունքները որոշակի նախադրյալներ ստեղծեցին արդյունաբերության հետագա բուռն զարգացման և մասսայական կոլտնտեսային շարժման ծավալման համար։

Երկրի մի շարք առաջավոր մարզերում ու շրջաններում 1929 թվականի վերջերին կոլտնտեսային շարժումը արդեն հսկայական չափեր էր ընդունել։ Իրականանում էր Վ. Ի. Լենինի կանխատեսումը այն մասին, որ հանրային տնտեսաձևին անցնելու գործում գյուղացիական լայն զանգվածների ընդերքում ժամանակին կառաջանա այնպիսի մասսայական շարժում, որի մասին մենք այժմ երազել անգամ չենք կարող[3]։

Կոլտնտեսային մասսայական շարժումը մանր հողագործության, գյուղի «տնտեսական հարաբերությունների մեջ, գյուղացիության կյանքի ամբողջ կազմության մեջ»[4] նշանավորեց պատմական մեծագույն կարևորության ներկայացնող հեղաշրջում։

Կոլտնտեսային մասսայական շարժման առաջին արդյունքները հանգամանորեն քննարկվեցին Համկ(բ)Կ Կենտկոմի 1929 թվականի նոյեմբերյան պլենումում։ Կոլտնտեսային շինարարության վիճակի և առաջիկա խնդիրների վե-

1 «ՍՄԿԿ-ն... բանաձևերում ու որոշումներում», մաս II, էջ 789։
2 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 28, էջ 436։
3 Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 33, էջ 318։
4 «ՍՄԿԿ ծրագիրը», Երևան, 1961, էջ 15։

բարերյալ ընդունած իր որոշումներում պլենումը նշեց, որ երկիրը թևակոխել է գյուղի ծավալուն սոցիալիստական վերակառուցման շրջանը և առանձին մարզերի առաջ դրվում է համատարած կոլեկտիվացման խնդիրը[1]։

Սակայն կոլտնտեսային շարժման բուռն աճի հետ մեկտեղ երևան եկան նոր դժվարություններ ու թերություններ, որոնցից ամենաաչքի ընկնողները, ինչպես մատնանշեց պլենումը, հանդիսանում էին կոլտնտեսությունների տեխնիկական զինվածության դեռևս ցածր մակարդակը, աշխատանքի անբավարար կազմակերպվածությունն ու ցածր արտադրողականությունը, կոլտնտեսային կադրերի և անհրաժեշտ մասնագետների պակասը[2]։ Այդ դժվարությունները հաղթահարելու և կոլտնտեսային շինարարության ղեկավարությունն ուժեղացնելու հարցերի վրա պլենումը բևեռեց ամբողջ կուսակցության և սովետական մարմինների ուշադրությունը։

ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1929 թվականի նոյեմբերյան պլենումը զբաղվեց Հայաստանի գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման ընթացքով և առաջիկա խնդիրներով։ Պլենումը արձանագրեց, որ կոլտնտեսային շարժումը Հայաստանի գյուղերում ևս աննախընթաց վերելք է ապրում և որ 1929 թվականի կեսերից այն արդեն լայնորեն ծավալվել է աշխատավոր գյուղացիության մեջ[3]։ Եթե 1928 թվականի հոկտեմբերի 1-ի տվյալներով կոլտնտեսություններում ընդգրկված ավելի քան 1530 տնտեսությունների թվում միջակ գյուղացիները կազմում էին 19,5 տոկոս, ապա 1929 թվականի հոկտեմբերի սկզբին կոլեկտիվացված 6290 տնտեսությունների 25 տոկոսը միջակ գյուղացիներ էին[4]։

Պլենումը առաջ քաշեց կոլտնտեսությունների խոշորացման հարցը, ինչպես նոր անդամների ներգրավման, այնպես էլ առանձին փոքր կոլտնտեսությունները միաձուլելու ճանապարհով։ Պլենումը նշեց, որ ոչ միայն առանձին գյուղեր, այլև մի քանի շրջաններ ընդհուպ մոտեցել են լրիվ կոլեկտիվացմանը։ Կոլտնտեսային շարժման 1929 թվականի ստուգիչ թվերի գերազանցումը ցույց տվեց, որ հնգամյակը այդ բնագավառում չէր նախատեսել հանրապետության զարգացման բոլոր հնարավորությունները, որ շարժման տեմպը արդեն զգալի չափերով ետ է թողել նախատեսված ծրագիրը։ Այդ իսկ պատճառով անհրաժեշտ համարվեց վերանայել կոլտնտեսային շինարարության հնգամյակը[5]։ Խնդիր դրվեց արագացնել տեխնիկական կուլտուրաներով զբաղվող շրջանների կոլտնտեսային շինարարության թափը։ Բացի Ղուրդուղուլու շրջանից համատարած կոլեկտիվացման համար նախադրյալներ ունեցող վայրերի թվին դասվեցին նաև Վաղարշապատի, Հրազդանի, Ղամարլուի և Դուզքենդի շրջանները[6]։ Այդ որոշումներն իրականացնելու տեսանկյունով վերամշակվեց և ճշգրտվեց 1929—1930 տնտեսական տարվա գյուղատնտեսական աշխատանքների ծրագիրը։ Հողաշինարարության, գյուղատնտեսական մեքենաների ու գործիքների ներմուծման, սերմացուի կուտակման և գարնանացանի նախապատրաստման

1 Տե՛ս «ՍՄԿԿ-ն... բանաձևերում ու որոշումներում», մասն II, էջ 813։
2 Տե՛ս նույն տեղում, էջ 818—819։
3 Տե՛ս Մ.Ի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 13, գ. 20, թ. 119։
4 Տե՛ս նույն տեղում, թ. 91—92։
5 Տե՛ս նույն տեղում։
6 Տե՛ս նույն տեղում։

հետ կապված մյուս հարցերը դրվեցին հանրապետության կուսակցական կազմակերպությունների, հողժողկոմատի և կոլտնտկենտրոնի ուշադրության կենտրոնում։

Կոլտնտեսային շարժումը ինչպես իր թափով, այնպես էլ ծավալով առանձնապես աչքի էր ընկնում Միության հացահատիկային առաջավոր շրջաններում։ Մանր արտադրողների լայն զանգվածների մեջ դեպի հանրային տնտեսությունը առաջացած այս արմատական շրջադարձը կոմունիստական կուսակցությանը հիմք ավեց առաջ քաշելու համատարած կոլեկտիվացմանն անցնելու խնդիրը, որը կենսագործելու նկատառումով անհրաժեշտություն զգացվեց առանձին շրջաններում, մարզերում, ազգային հանրապետություններում սահմանել համապատասխան տեմպեր և ժամկետներ։ Այդ կարևոր խնդրի վերաբերյալ Համկ(բ)կ Կենտկոմը 1930 թվականի հունվարի 5-ին որոշում ընդունեց կոլեկտիվացման տեմպի և կոլտնտեսային շինարարությանը պետության կողմից օգնության ցույց տալու միջոցառումների մասին։

Համկ(բ)կ Կենտկոմի այդ որոշումը կարևոր ուղենիշ հանդիսացավ լենինյան կոոպերատիվ պլանի իրականացման բարձր ձևերին անցնելու գործում։ Որոշումը կանխագծեց կուսակցության նոր դիրքորոշումը կուլակության նկատմամբ, այն է՝ համատարած կոլեկտիվացման հիման վրա անցումը սահմանափակման և արտամղման քաղաքականությունից նրան որպես դասակարգ վերացնելու քաղաքականությանը։

Նկատի ունենալով Միության տարբեր շրջանների կոնկրետ պայմաններից և համատարած կոլեկտիվացման համար նրանց պատրաստ լինելու աստիճանից, Կենտկոմը սահմանեց այն ավարտելու տարբեր ժամկետներ։ Առանձին կարևոր հացահատիկային մարզերում, այդ թվում Ստորին ու Միջին Վոլգայի շրջանում և Հյուսիսային Կովկասում, հնարավոր համարվեց կոլեկտիվացումը հիմնականում ավարտել 1930 թվականի աշնանը, կամ «1931 թվականի գարնանը, իսկ հացահատիկային մյուս շրջանների կոլեկտիվացումը կարող է հիմնականում ավարտվել 1931 թվականի աշնանը կամ համենայն դեպս՝ 1932 թվականի գարնանը»[1]։

Մնացած շրջաններում և ազգային հանրապետություններում կոլեկտիվացումը հիմնականում ավարտելու ժամկետը սահմանվեց հնգամյակի վերջը՝ 1933 թվականը։

Կարևոր նշանակություն տալով կոլտնտեսությունները կադրերով ապահովելու խնդրին, Կենտկոմը անհրաժեշտ համարեց նրանց պատրաստման համար կազմակերպել կարճատև դասընթացների լայն ցանց։ Կոլտնտեսային շինարարության զարգացման տվյալ փուլում գյուղատնտեսական արտելը համարելով կոլտնտեսության առավել բարձր ձև, հանձնարարվեց միության հողժողկոմատին՝ կոլտնտեսային կազմակերպությունների հետ միասին մշակել արտելի օրինակելի կանոնադրություն։ Կենտկոմը ավելացրեց 1929—30 տնտեսական տարում կոլտնտեսային սեկտորին տրվող վարկի գումարը՝ 270 միլիոն ռուբլուց հասցնել 500 միլիոն ռուբլու[2]։ Կենտկոմը կուսակցական կազ-

---

1 «ԽՄԿԿ-ն... բանաձևերում ու որոշումներում», մաս II, էջ 841։

2 Տե՛ս նույն տեղում, էջ 842։

մակերպություններին ամենայն լրջությամբ նախազգուշացրեց, որ վերևից հրահրեստավորել կոլեկտիվացումը, հարկադրանք չգործադրել գյուղացիների նկատմամբ։ Սակայն երկրի շատ շրջաններում, մարզերում ու ազգային հանրապետություններում, այդ թվում նաև Հայաստանում, կենտկոմի որոշման հիմնական դրույթները ճշտությամբ չկիրառվեցին։ Համատարած կոլեկտիվացման շրջաններ հայտարարվեցին այնպիսի մարզեր ու շրջաններ, որտեղ դրա համար անհրաժեշտ նախադրյալներ դեռևս չէին ստեղծվել։

Անդրֆեդերացիայի կուսակցական և սովետական մարմինները, ինչպես նաև հանրապետությունների ղեկավար օրգանները, կոլեկտիվացման բարձր տեմպերի կուրս էին ընդունել, զանց առնելով ինչպես երկրամասի տարբեր շրջանների, այնպես էլ Հայաստանի շատ վայրերի առանձնահատկությունները։

1930 թվականի հունվարի 6-ին, ՀԿ(բ)Կ կենտկոմը գարնանացանի մասին ընդունած իր ծավալուն որոշման մեջ շեշտը դնելով հանրապետության գյուղատնտեսության կոլեկտիվացման հարցի վրա, ավելի կոնկրետացրեց մինչ այդ նույն խնդրի վերաբերյալ ունեցած իր գիծը։ Որպես մոտակա գործնական խնդիր կենտկոմի նախագահությունը անհրաժեշտ համարեց «համատարած կոլեկտիվացում սկսել Բասարգեչարի, Դուզքենդի շրջաններում և Երևանի ամբողջ օկրուգում»[1]։

Այնուհետև, հանրապետության հողժողկոմատի և կոլտնտկենտրոնի կողմից ըստ առանձին շրջանների մշակված կոլեկտիվացման աճի տեմպերն համարելով անբավարար, ՀԿ(բ)Կ կենտկոմը պարտավորեցրեց կոլտնտկենտրոնին և օկրուգային կուսակցական կոմիտեներին առանձին աշխատանք ծավալել այն հաշվով, որ այդ նվազագույն առաջադրությունները գերազանցվեն 1930 թվականի ընթացքում»[2]։ Հանձնարարվեց հողժողկոմատին և կոլտնտկենտրոնին ծրագիր մշակել ելնելով՝ ա) կոլտնտեսականների արտադրության միջոցների համայնացման չափերի ընդարձակման, բ) կոլտնտեսությունների ստորին ձևերը բարձր ձևերի փոխադրելու և գ) գերազանցապես բարձր ձևերի կանոնադրությունով կոլտնտեսություններ (արտելներ և կոմունաներ) կազմակերպելու տեսանկյունից[3]։

Հայաստանի կոմկուսի կենտկոմի մատնանշված որոշումից պարզ երևում է կարճ ժամանակամիջոցում ՌՍՖՍՀ հացահատիկային առաջավոր շրջանների կոլեկտիվացման տեմպերին հավասարվելու ձգտում, որը բխում էր Համկ(բ)Կ Անդրկովկասյան երկրային կոմիտեի ընդհանուր գծից։ Այդ նշանակում էր անտեսել երկրամասի առանձնահատկությունները, շրջանցել Անդրկովկասի հանրապետությունների յուրահատուկ պայմանները։ Մինչդեռ հայտնի է, որ Վ. Ի. Լենինը դեռևս 1921 թվականին Կովկասի կոմունիստներին ուղղած իր պատմական նամակում պարզաբանել էր, որ ամենից կարևորն այն է, որպեսզի Անդրկովկասի կոմունիստները հասկանան իրենց հանրապետությունների դրության յուրահատկության տարբերությունը՝ ՌՍՖՍՀ դրությունից ու պայմաննե-

---

1 ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 905, թ. 4։

2 Նույն տեղում։

3 Տե՛ս նույն տեղում։

րից։ Լենինը Ադրբեջանի, Վրաստանի ու Հայաստանի կոմունիստներին նախազգուշացրել էր, որ պետք է կիրառել Ռուսաստանի փորձի ոչ թե տառը, այլ ոգին, իմաստը, դասերը։ Նա պահանջում էր «Ավելի դանդաղ, ավելի զգույշ, ավելի սիստեմատիկ անցում դեպի սոցիալիզմ,— ահա թե ինչն է հնարավոր ու անհրաժեշտ Կովկասի հանրապետությունների համար՝ ի տարբերություն ՌՍՖՍՀ-ի»[1]։

Թեև Արարատյան դաշտավայրի մի քանի շրջաններ մասամբ հիմք ունեին համատարած կոլեկտիվացման անցնելու համար, այնուհանդերձ հանրապետության շրջանների գերակշռող մասում, այդ թվում նաև Երևանի օկրուգի մեջ մտնող մի շարք շրջաններում համապատասխան նախադրյալներ չկային։ Դարալագյազի, Կոտայքի, Վեդու, Աշտարակի շրջանների, մանավանդ դրանց նախալեռնային ու լեռնային շատ գյուղերի վրա չէր կարելի տարածել համատարած կոլեկտիվացման մասին որոշումը։ Այդ շրջաններում դեռևս մինիմալ նյութա-տեխնիկական պայմաններ չէին ստեղծվել։ Գյուղատնտեսական կոոպերացիայի մյուս ձևերի զարգացումը պահանջվող մակարդակին չէր հասել և իր տեսակարար կշռով շատ էր ետ մնում դաշտավայրի շրջաններից։ Հետևաբար համատարած կոլեկտիվացումը տարբեր վայրերում իրականացնելու նպատակով անհրաժեշտ էր բաղմակողմանի նախապատրաստական աշխատանք կատարել։ Անտարակույս, կոլտնտեսային շարժման հետագա ծավալման իսկական հաջողությունները պայմանավորված էին առանձին շրջանների նկատմամբ դիֆերենցացված մոտեցում ունենալուց, համատարած կոլեկտիվացման համար նրանց նախապատրաստված լինելու աստիճանը ճիշտ որոշելուց, և հետևաբար դրանից ելնելով համապատասխան ժամկետներ սահմանելուց։

Կոլտնտեսային շարժումը հանրապետությունում որոշ վերելք ունեցավ 1930 թվականի հունվարի սկզբներին, որը հատկապես ուժեղ դրսևորվեց Արարատյան դաշտավայրի շրջաններում։ Այսպես, 1930 թվականի հունվարի առաջին օրերին Ղուրդուղուլու շրջանում կոլտնտեսություններում մեջ էր արդեն աշխատավորների 35 տոկոսը։ Կոլեկտիվացումը հիմնականում ավարտվել էր Փոքր Շահրիար, Քյալագյարխ (Շենավան), Մեծ Շահրիար (Նալբանդյան), Արջարխ (Արևիկ) գյուղերում։ Այդ ժամանակամիջոցում Ղամարլուի շրջանի չքավոր և միջակ տնտեսությունների 25 տոկոսն ընդգրկվել էր կոլտնտեսությունների մեջ, հինգ գյուղերում կոլեկտիվացումը հիմնականում ավարտվել էր։ Էջմիածնի, Հրազդանի, Ջանգիբասարի շրջանների շատ գյուղերում աշխատավորների զգալի մասը անշեղորեն բռնել էր հանրային տնտեսության ուղին։

Հունվարի վերջերին Ղուրդուղուլու և Ղամարլուի շրջաններում կոլեկտիվացումը արդեն հիմնականում ավարտվել էր։ Այն զգալի ծավալ էր ընդունել նաև Մեղրու, Էջմիածնի, ինչպես նաև Երևանի, Լենինականի, Լոռու, Սևանի սկրուգների առանձին շրջանների մի շարք գյուղերում։ Սակայն ամբողջ հանրապետությունում կոլտնտեսային շարժումը դեռևս այնպիսի մասսայական բնույթ չէր ստացել, որպեսզի վերաճեր համատարած կոլեկտիվացման։ Մասնավորապես Ջանգեզուրում, Աղբաբայի, Ապարանի, Մարտունու, Շամշադինի,

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 32, էջ 404։

Կոտայքի, Ախտալի և լեռնային մյուս շրջաններում կոլեկտիվացումն ինչպես հարկն է չէր ծավալվել, որը հիմնականում պայմանավորված էր այդ վայրերի առանձնահատկություններով։ Հանրապետության շատ շրջաններում աշխատավոր գյուղացիության հիմնական մասը, մանավանդ միջակների մեծամասնությունը դեռևս անհրաժեշտ շրջադարձ չէր կատարել դեպի կոլեկտիվ տնտեսությունը։

Կոլտնտեսային շինարարության բնագավառում գոյություն ունեցող ռեալ վիճակը թելադրում էր հապճեպություն չցուցաբերել այդ գործում։ Չնայած Հայաստանի կուսակցական կազմակերպություններն արդեն իրենց ձեռքի տակ ունեին Համկ(բ)Կ Կենտկոմի 1930 թվականի հունվարի 5-ի որոշումը, ինչպես նաև այդ որոշումից բխող Անդրերկրկոմի հետագա ցուցումները՝ գյուղի կոլեկտիվացման գործում հանրապետությունների և տարբեր շրջանների առանձնահատկությունները խստորեն հաշվի առնելու մասին, այնուամենայնիվ տեղական կուսակցական կազմակերպությունները կոլեկտիվացման բարձր տեմպեր ընդունեցին։ Իսկ կուսակցական վերադաս մարմինները ժամանակին չկանխեցին այդ սխալ գիծը։ Կարճ ժամանակամիջոցում կոլեկտիվացման բարձր տոկոսի հասնելու ձգտումն ընդհանուր բնույթ ստացավ։ Կոլտնտեսային շարժման ծավալով ու տեմպերով ետ մնացող օկրուգներում պայքար ծավալվեց առաջավոր շրջաններին հասնելու համար։

Անդրերկրկոմի հունվարյան պլենումը 1930 թվականի գարնանացանի և կոլեկտիվացման հարցի մասին ընդունած իր որոշման մեջ ընգծեց, որ կոլտնտեսային շարժումը ծավալելիս «երբեք չպետք է անտեսվեն երկրամասի ազգային, տնտեսական և քաղաքական առանձնահատկությունները, որոնք պայմանավորում են քաղաքական իրադրության և դասակարգային պայքարի ձևերի յուրահատուկ պատկերը երկրամասի առանձին շրջաններում»[1]։

Սակայն այդ դիրեկտիվները կոպիտ կերպով խախտվեցին ինչպես Հայաստանում, այնպես էլ Անդրկովկասի մյուս հանրապետություններում։ 1930 թվականի ընթացքում կոլեկտիվացումը հիմնականում ավարտելու ձգտումը ընդհանուր երևույթ դարձավ։ Ավելին. ՀԿ(բ)Կ Կենտկոմի 1930 թվականի հունվարի 6-ի որոշման մեջ թույլ տված սխալ դրույթները հասցրին այն բանին, որ ամբողջ հանրապետությունում պայքար ծավալվեց գարնանացանը դիմավորել կոլեկտիվացումը հիմնականում ավարտած։ Դրանով իսկ անտեսվեց նույնիսկ մինչ այդ Կենտկոմի հանձնարարությամբ վերամշակված կոլտնտեսային շինարարության 1930 թվականի ծրագիրը, որի համաձայն հանրապետությունում տարվա վերջին այն պետք է հասներ 30,8 տոկոսի, իսկ ցանքերի համայնացումը՝ 28,3 տոկոսի։ Ընդ որում ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ այդ ծրագրում որոշակի արտահայտություն էր գտել տարբերակված մոտեցումը։ Այսպես, նախագծված էր կոլեկտիվացման մակարդակը Երևանի օկրուգում հասցնել 59,4 տոկոսի, Լենինականի օկրուգում՝ 18,3 տոկոսի, Սևանի օկրուգում՝ 12,5 տոկոսի, Լոռում՝ 18,4 տոկոսի և Զանգեզուրում՝ 8,6 տոկոսի[2]։

Սակայն հունվարի ընթացքում բոլոր օկրուգներում առանց բացառության

---

1 «Խորհրդային Հայաստան», 28 հունվարի 1930 թ.։

2 Տե՛ս նույն տեղում։

այդ տարբերակված մոտեցումը շրջանցվել էր։ Եթե մինչ այդ շատ շրջաններում կոլտնտեսային շարժման հարցում բացակայում էր բարձր տոկոսի հասնելու ծայրահեղ շտապողականությունը, ապա հունվարի ընթացքում և հատկապես փետրվարի սկզբներից տեղերում դրսևորվում է կոլեկտիվացման տեմպերն արագացնելու բացահայտ ձգտում։ Հայաստանի շատ կուսակցական կազմակերպություններ խախտում են իրենց իսկ կողմից մինչ այդ սահմանված կոլտնտեսային շինարարության տեմպի պլանը։

Հայաստանի օկրուգային և շրջանային կազմակերպությունները մրցում էին, թե ով ավելի շուտ և ավելի շատ տնտեսություններ կհամայնացնի, ավելի բարձր տոկոսի կհասնի։ Դրա հետևանքով հանրապետության շատ շրջաններում կոլեկտիվացման տեմպը արագությամբ բարձրանում էր։ 1930 թվականի հունվարի 28-ի տվյալներով կոլեկտիվացված էր տնտեսությունների 27 տոկոսը, իսկ փետրվարի 1-ին կոլտնտեսություններում արդեն միավորված էր 53633 տնտեսություն, կամ աշխատավորական տնտեսությունների 33,5 տոկոսը[1]։

Թեև հողի հանրային մշակման անցնելու գործում երկրի առաջավոր շրջաններում գյուղի աշխատավորների պայքարի հիման վրա ղգալի գործ էր կատարվել կոլտնտեսային շինարարության բնագավառում, այնուամենայնիվ այդ դեռևս չէր նշանակում, որ կոլեկտիվացումը համատարած երևույթ էր ամբողջ Միության մեջ։ Մանավանդ ճիշտ չէր այն տեսակետը, որ միջակն ամենուրեք արդեն մասսայաբար մտնում է կոլտնտեսություն։

Համատարած կոլեկտիվացման համար տակավին անպատրաստ Միության շատ մարզերում, այդ թվում նաև Հայաստանում, շտապողականության պատճառով խախտվեց կամավորության լենինյան սկզբունքը։

Խոսելով գյուղացիությանը հանրային տնտեսաձևի մեջ ընդգրկելու հարցի մասին, Վ. Ի. Լենինը նախազգուշացնում էր, որ չի կարելի բռնությամբ սոցիալիզմ փաթաթել գյուղացիների վզին, որ «դեկրետների, օրենքների միջոցով հողի հանրային մշակում մտցնելու փորձը մեծագույն անհեթեթություն կլիներ», որ չի կարելի մասսաների զարգացումից առաջ վազել, այլ անհրաժեշտ է «սպասել մինչև որ այդ մասսաների սեփական փորձից, նրանց սեփական պայքարից կծնի առաջընթաց շարժում»[2]։

1930 թվականի փետրվարի առաջին տասնօրյակի ընթացքում գումարվեցին կոլտնտեսականների օկրուգային համագումարներ, որոնք ամփոփեցին կոլտնտեսային շարժման առաջին արդյունքները։ Երևանի օկրուգի համագումարը գյուղի աշխատավորների ուշադրությունը բևեռեց կոլտնտեսությունները ամրապնդելու, նրանց տնտեսական-արտադրական աշխատանքները կազմակերպելու և գարնանացանը հաջող ավարտելու հարցերի վրա։

Փետրվարին կոլտնտեսային շարժման պատկերը հանրապետությունում խիստ կերպով փոխվեց։ Որպես օրինակ հարկ է հիշատակել, որ Լենինականի օկրուգի Աղբաբայի շրջանը, որտեղ համատարածն անհրաժեշտ հող չուներ, փետրվարի սկզբներին կոլեկտիվացված էր տնտեսությունների 91,2 տոկոսը,

---

1 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 4 փետրվարի 1930 թ.։

2 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 28, էջ 165։

Մոլլագյոզչպի (Անիի) շրջանում՝ 52 տոկոսը[1]։ Այնուհետև, Շամշադինի շրջանում՝ 85 տոկոսը, Իջևանի շրջանում՝ 58 տոկոսը, Ալավերդու շրջանում՝ 45 տոկոսը, Ղարաքիլիսայի շրջանում՝ 40 տոկոսը, իսկ Համամլուի (Սպիտակ) շրջանի յոթ գյուղերում կոլեկտիվացումն արդեն հասնում էր 100 տոկոսի։

Հանրապետության մի շարք առաջավոր՝ Ղուրդուղուլու, Ղամարլուի, Հրազդանի, էջմիածնի և մի քանի այլ շրջանների համատարած կոլեկտիվացումը փետրվարի կեսերին հիմնականում ավարտվել էր։ Կոլեկտիվացման գործում տեղի ունեցող այդ վազքով էին պայմանավորված այն լուրջ սխալները, որ կատարվեցին ինչպես Միությյան մի շարք այլ վայրերում, այնպես էլ Հայաստանում։ Կարճատև ժամանակամիջոցում միջակային խավերին կոլեկտիվ տնտեսության մեջ ընդգրկելու ձգտումը ուղեկցվեց վարչարարությամբ, խախտվեց կամավորության սկզբունքը։ Այդ խախտումները հետևանք էին ոչ միայն տեղերի, այլև վերադաս օրգանների սխալ ցուցումների։ Սվերդլովի անվան կոմունիստական համալսարանի ուսանողների հարցերին, 1930 թվականի փետրվարի 9-ին տված իր պատասխաններում, Ի. Ստալինը խորհուրդ էր տալիս «ուժեղացնել կոլեկտիվացման աշխատանքը համատարած կոլեկտիվացում չունեցող շրջաններում»[2]։ «Պրավդա» թերթը իր 1930 թվականի փետրվարի 3-ի առաջնորդող հոդվածում մատնանշում էր, որ 1930—1931 թվականների համար չքավոր և միջակ տնտեսությունների 75 տոկոսով կոլեկտիվացման չափը մաքսիմում չի կարող համարվել։ Հետևաբար հարց էր դրվում ձգտել կոլեկտիվացման ավելի բարձր մակարդակի հասնելու համար։

1930 թվականի փետրվարի 6-ին հրապարակված գյուղատնտեսական արտելի կանոնադրությունը, որը կոչված էր կոլտնտեսային շինարարության ուղեցույց լինելու, պատասխան չէր տալիս այնպիսի կարևոր հարցերի, ինչպիսիք էին կոլտնտեսություն մտնող գյուղացու արտադրության մեջ եղած արտադրական միջոցների և անասունների համալնացման կարգը, կոլտնտեսականներին հատկացվելիք տնամերձ հողային տարածությունների չափը և մի քանի այլ խնդիրներ։ Մինչդեռ տեղական աշխատողները հենց այդ հարցերում էլ թույլ էին տալիս լուրջ սայթաքումներ։ Համալնացվում էին կոլտնտեսականների ոչ ապրանքային անասունները, արտադրական նշանակություն չունեցող շենքերը և այլն։ Շատ վայրերում թերագնահատվում էր հողը համատեղ օգտագործող ընկերությունների անհրաժեշտությունը, հիմնականում կազմակերպում էին արտելային տիպի տնտեսություններ, երբեմն էլ միանգամից կոմունայի անցնելու տենդենցներ էին դրսևորվում։ Հանրային տնտեսության անցնելու գործում շտապողականություն ցուցաբերելը Լենինը համարում էր անթույլատրելի, քանի որ այն ընդունակ էր միայն «ուժեղացնելու միջակ գյուղացիության նախապաշարմունքները նորամուծությունների դեմ»[3]։

Կուլակության վերացումը սերտորեն կապված էր մասսայական կոլեկտիվացման հետ, այն կարող էր իրականացվել միայն համատարած կոլեկտիվացման հիման վրա։ Կուլակությունը, որպես դասակարգի, լիկվիդացնելու քաղաքականությունն իր օրենսդրական ձևակերպումն ստացավ ԽՍՀՄ Կենտգործ-

1 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 4 փետրվարի 1930 թ.։

2 Ի. Ստալին, Երկեր, հատ. 12, էջ 212։

3 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 29, էջ 259։

կոմի և ԺողկոմխորհԻ 1930 թվականի փետրվարի 1-ի որոշմամբ, որը վերացրեց մինչ այդ գործող այն օրենքը, ըստ որի անհատ տնտեսությանը թույլատրվում էր հողի վարձակալում և վարձու աշխատանքի օգտագործում։ Այդ որոշումը տեղական իշխանության օրգաններին իրավունք էր վերապահում համատարած կոլեկտիվացման վայրերում բռնագրավել կուլակային տնտեսության արտադրական միջոցները, տնտեսական կաուսյցները։ Գյուղի հասարակության և իշխանության որոշումով նրանցից առավել ճշնամաբար տրամադրվածները արտաքսվում էին հեռավոր վայրեր կամ տվյալ մարզի սահմաններից դուրս։

Սակայն սովետական պետության այդ դիրեկտիվը կենսագործելու բնագավառում՝ տեղերում, այդ թվում նաև Հայաստանի շատ շրջաններում թույլատրվեցին լուրջ սխալներ և խախտումներ։ Այդ խախտումները Հայաստանում արտահայտվեցին ոչ միայն նրանով, որ ապակուլակացում էր իրականացվում նաև այն շրջաններում, ուր համատարած կոլեկտիվացում չէր անցկացվելու, այլև նրանով, որ մի շարք վայրերում խախտումներ դրսևորվեցին անգամ միջակ գյուղացիների նկատմամբ։

Կոմունիստական կուսակցությունն իր որոշումներում բազմիցս մատնանշել էր, որ միջակ գյուղացուն պետք է ցույց տալ հանրային տնտեսության առավելությունները, համոզել կոլեկտիվ տնտեսության մեջ մտնելու հարցում և միաժամանակ ընդգծել էր, որ նրա նկատմամբ պետք է բացառվի որևէ հարկադրանք։

Միջակ գյուղացու նկատմամբ ունենալիք վերաբերմունքի մասին կուսակցության VIII համագումարի ընդունած որոշումներում, որը գրել էր Վ. Ի. Լենինը, ընդգծված էր, որ միջակ գյուղացիներին խաոնել կուլակների հետ, նրանց վրա այս կամ այն չափով տարածել այն ձեռնարկումները, «որոնք ուղղված են կուլակության դեմ, նշանակում է ամենակոպիտ կերպով խախտել ո՛չ միայն Սովետական իշխանության բոլոր դեկրետները և նրա ամբողջ քաղաքականությունը, այլև կոմունիզմի բոլոր հիմնական սկզբունքները...»[1]։

1930 թվականի հունվար-փետրվար ամիսներին Միության բազմաթիվ շրջաններում ու մարզերում, այդ թվում նաև Անդրկովկասում, կոլտնտեսային շարժման պրակտիկայում դրսևորված սխալները ցույց տվեցին, որ կուսակցության և Վ. Ի. Լենինի այդ ցուցումները անտեսվել էին։

Կոլտնտեսային շարժման բնագավառում 1930 թվականի առաջին ամիսներին թույլ տրված սխալները միջակ գյուղացիների և չքավորության որոշ մասի մեջ մեծ դժգոհության առիթ ծառայեցին։ Կուլակությունը և հակասովետական մյուս տարրերը չհապաղեցին այդ դժգոհություններն օգտագործելու ընդդեմ սովետական իշխանության և գյուղի սոցիալիստական շինարարության։

Կոլեկտիվ տնտեսության մեջ թափանցելու, կոլտնտեսությունները ներսից քայքայելու կուլակային տարրերի բոլոր փորձերը հանդիպում էին կոմունիստների, կոմերիտականների և կայուն կոլտնտեսականների միահամուռ հակահարվածին։ Այդ ուղղությամբ հիմնականում հաջողություն չունենալով, նրանք իրենց պայքարի տակտիկան ու մեթոդները փոխեցին։ Կուլակությունը փորձեց

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 29, էջ 257։

իր նպատակին հասնել նաև տեռորի, պրովոկացիաների ու ահաբեկումների միջոցով։

1930 թվականի սկզբներին կուլակային տարրերը Հայաստանի մի շարք շրջաններում (Ղամարլու, Ապարան և այլն) դիմեցին տեռորիստական ակտերի՝ ուղղված կոլտնտեսային շարժման ակտիվ մասնակիցների դեմ։ Իսկ Դարալագյազի, Վեդու, Մարտունու, Շամշադինի շրջաններում տեղի ունեցան բանդիտական ելույթներ։

Սոցիալիզմի թշնամիները ջանում էին ձախողել հանրապետության 1930 թվականի գարնանացանի գործը, վիժեցնել կոլտնտեսությունների դաշտային աշխատանքները։ Այդ նպատակով նրանք հրդեհեցին Իջևան, Դսեղ, Ջարխեջ (Կույբիշև) ու մի քանի այլ գյուղերի կոլտնտեսությունների և Մարտունու շրջանի վարկային ընկերության անասնակերը։ Առանձին կոլտնտեսություններում փորձեր կատարվեցին կենդանի քաշող ուժը շարքից հանելու, գյուղատնտեսական գործիքները փչացնելու, կոլտնտեսություններում սերմի կուտակման գործը խափանելու ուղղությամբ։

Կոլտնտեսականների արտադրության միջոցների համայնացման բնագավառում թույլ տված սխալներն օգտագործելով, հակակոլտնտեսային տարրերը միջակ գյուղացիներին համոզում էին մինչև կոլտնտեսություն մտնելը վատնել և ոչնչացնել սեփական տնտեսության մեջ եղած անասունները։ Դրա հետևանքով մեծ վնաս հասցվեց անասնաբուծությանը, որի վերականգնումը երկար ժամանակ անհնարին դարձավ։ Բավական է մատնանշել, որ եթե հանրապետության ամբողջ խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը 1928 թվականի հունվարի 1-ի տվյալներով կազմում էր 804,0 հազար գլուխ, ապա 1933 թվականի հունվարի 1-ին այն նվազեց և հասավ 528,0 հազարի, կամ պակասել էր ավելի քան 35,6 տոկոսով։ Մանր եղջերավոր անասունների գլխաքանակը նույն ժամանակամիջոցի տվյալներով 1.259,0 հազար գլխից նվազեց և հասավ 687,7 հազար գլխի, կամ պակասել էր ավելի քան 45,4 տոկոսով[1]։

Գյուղի կապիտալիստական տարրերը և նրանց շահերն արտահայտողները, հենվելով միջակ գյուղացու մասնավոր սեփականատիրական հոգեբանության վրա և օգտագործելով նրա տատանումները, աշխատում էին միջակին հրահրել չքավորների և բանվոր դասակարգի դեմ, թուլացնել նրանց միջև հաստատված դաշինքը։ Կոլտնտեսային կարգի թշնամիները նպատակ ունենալով ջլատել գյուղի սոցիալիստական վերակառուցման միասնական ճակատը, փորձում էին սեպ խրել կոլտնտեսականների և դեռևս կոլտնտեսություն չմտած աշխատավորության միջև։

Սովետական Միության թշնամիները հույս ունեին, որ կոլտնտեսային շարժման բնագավառում թույլ տված սխալների ու շեղումների հետևանքով առաջացած դժգոհությունները հիմք կծառայեն միջակային խավերին իրենց հետևից տանելու համար։ Սակայն այդ հույսերը իրենց հիմքում ոեալ հող չունեին։

Աշխատավոր գյուղացիությունը համոզվեց, որ կոլտնտեսային շարժման բնագավառում դրսևորված շեղապողականությունը, վարչարարությունը և մյուս

---

1 Տե՛ս «Сельское хозяйство Армянской ССР», էջ 345։

կարգի շեղումները կոմունիստական կուսակցության լենինյան գծի խախտումներ էին, որոնց դեմ կուսակցությունը հետևողական պայքար էր մղում։

Կոլեկտիվ տնտեսության շինարարության ասպարեզում, թե նրա շարժման ծավալմանն աջակցելու գործում, թե նրանում կատարված սխալների վերացման ուղղությամբ հսկայական դեր կատարեց բանվոր դասակարգը՝ էլ ավելի ամրապնդելով իր դաշինքը գյուղի աշխատավորության հետ։

2. ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ՈՒ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ ԴԱՇԻՆՔԻ ՀԵՏԱԳԱ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ

Մանրատված հողագործության սոցիալիստական վերակառուցումը շատ ջանքեր էր պահանջում նաև բանվոր դասակարգից։ Առանց բանվոր դասակարգի անմիջական, բազմակողմանի, ակտիվ օգնության ու աջակցության, անհնարին էր գյուղում սոցիալիստական շինարարության ծավալումը։

Բանվոր դասակարգի դերը վճռական էր ոչ միայն վերակառուցվող գյուղատնտեսության համար նյութա-տեխնիկական բազա ստեղծելու, արտադրողական ուժերը արագ զարգացնելու գործում, այլև խոշոր, կոլեկտիվ տնտեսությունների ղեկավարությունը բարելավելու նպատակով կադրերով օգնելու, գյուղի չքավոր և միջակ խավերին կոմունիստական ոգով դաստիարակելու բնագավառում։ Բանվոր դասակարգի առջև խնդիր էր դրված օգնել գյուղին՝ կոլեկտիվացման ընթացքում գոյություն ունեցող դժվարությունները հաղթահարելու համար։

Գյուղատնտեսության կոլեկտիվացման մասսայական շարժման առաջին շրջանում հիմնական դժվարությունը տնտեսության տեխնիկական բազայի հետամնացությունն էր։ Գյուղի սոցիալիստական վերակառուցման համար նյութա-տեխնիկական բազայի ստեղծումը վճռական և առաջնակարգ նշանակություն էր ստանում։ Այս կարևորագույն պրոբլեմի լուծումը կուսակցությունից և բանվոր դասակարգից պահանջում էր ուժերի հսկայական լարում։

Կոմունիստական կուսակցության Կենտկոմի 1929 թվականի նոյեմբերյան պլենումը, կարևոր նշանակություն տալով սոցիալիստական գյուղատնտեսության նյութա-տեխնիկական բազայի ստեղծմանը, որոշեց արագ տեմպերով կառուցել տրակտորային և գյուղատնտեսական բարդ տեխնիկայի արտադրության մի շարք նոր գործարաններ։ Կառուցվեցին Ստալինգրադի, Խարկովի, Չելյաբինսկի տրակտորային, Ռոստովի, Սարատովի և այլ գյուղատնտեսական մեքենաշինության գործարանները, որոնք սոցիալիստական գյուղատնտեսությունը զինեցին ժամանակակից առաջավոր տեխնիկայով։

Գյուղատնտեսության սոցիալիստական վերափոխումների բնագավառում գոյություն ունեցող դժվարությունների թվում առանձնակի սրությամբ էր դրված ղեկավար կադրերի պակասը լրացնելու հարցը, որի հզոր ռեզերվներից էր բանվորությունը։ Կոլտնտեսային շարժման մեջ բանվոր դասակարգի ղեկավար դերը ամրապնդելու համար անհրաժեշտ էր օգտագործել այդ ռեզերվը։ Կոլեկտիվ տնտեսություններում և կոլտնտեսային սիստեմի բոլոր օղակներում, որպես կազմակերպիչներ ու ղեկավարներ, հարկավոր էր վճռականորեն առաջ

քաշել բանվորներին։ Իսկ դա, անտարակույս, հնարավորություն կտար «կոլտնտեսային շարժումը հասցնել ավելի բարձր աստիճանի և արագորեն անցնել իսկական սոցիալիստական հողագործության»[1]։

Սոցիալիստական գյուղատնտեսությունը ղեկավարող կադրերով ապահովելու անհրաժեշտությունից ելնելով Համ(բ)Կ Կենտկոմի նոյեմբերյան պլենումը անհրաժեշտ համարեց մոտակա ամիսների ընթացքում գյուղ ուղարկել կազմակերպչական-քաղաքական փորձ ունեցող 25 հազար բանվոր՝ կոլտնտեսություններում, մեքենա-տրակտորային կայաններում, փնջային միավորումներում և այլ բնագավառներում աշխատելու համար[2]։

Առաջավոր, փորձված բանվորներ գյուղ ուղարկելու մասին կուսակցության որոշումը հնչեց որպես բանվոր դասակարգին ուղղված կոչ։ Ինչպես Մոսկվայի արդյունաբերական կենտրոնների, այնպես էլ Սովետական Հայաստանի բազմաթիվ առաջավոր բանվորներ, կուսակցության պահանջը կատարելու նպատակով ցանկություն հայտնեցին գնալ գյուղ՝ կոլտնտեսային շինարարության գործին աջակցելու համար։

Գյուղին օգնելու գործում կուսակցական կազմակերպությունների հետ միասին մեծ աշխատանք էին կատարում արհեստակցական միությունները և կոմերիտմիությունը։ Հայաստանի արհեստակցական միությունների խորհուրդը հատուկ որոշում ընդունեց գյուղ ուղարկել առաջավոր բանվորներ՝ գարնանացանի նախապատրաստման աշխատանքներին և կոլտնտեսային շարժմանն օգնելու համար։ Որոշման իրագործումը ապահովելու նպատակով միությունը կոչ արեց արհմիության կազմակերպություններին և հանրապետության բանվոր դասակարգին՝ բոլոր հնարավոր միջոցներով աջակցել գյուղ մեկնող բանվորներին, որպեսզի նրանք պատվով կատարեն իրենց վրա դրված պարտականությունները։

Գյուղ ուղարկված բանվորությունը կարևոր միջոցառումներ ձեռնարկեց և գործնական աջակցություն ցույց տվեց իրենց տնտեսությունը հանրային սկզբունքով վերակառուցելու նպատակով պայքարի դուրս եկած չքավորներին և միջակներին։ Արհմիութենական և կոմերիտական կազմակերպությունները էլ ավելի ուժեղացրին շեֆական աշխատանքները։ Գյուղ ուղարկվող բանվորական բրիգադների կազմակերպումը լայն թափ ստացավ։ Երևանի, Լենինականի, Ալավերդու, Ղափանի արդյունաբերական ձեռնարկությունների և երկաթուղու բանվորների նախաձեռնությամբ առանձնացվեցին բազմաթիվ բրիգադներ։

Կոլտնտեսային շարժմանը և գարնանացանին օգնելու նպատակով սոցիալիստական մրցություն ծավալելու նախաձեռնությամբ հանդես եկան Լենինականի դեպոյի բանվորները։ Այդ կապակցությամբ նրանք նամակով դիմեցին ՀԿ(բ)Կ Կենտկոմին և հանրապետության բանվոր դասակարգին։

Նրանք որոշեցին կազմակերպել մի շարք շաբաթօրյակներ, որից ստացվող դումարը տրամադրել կոլտնտեսությունների համար մեքենաներ և տրակտորներ ձեռք բերելու նպատակին։ Դրա հետ միասին նրանք պարտավորվեցին կատարել և գերակատարել իրենց արտադրական պլանները, գյուղ գնացող բան-

---

1 «ՍՄԿԿ-ն... բանաձևերում ու որոշումներում», մաս II, էջ 819—820։

2 Տե՛ս նույն տեղում։

վորների դազգահները անգործ չթողնել, նրանց փոխարեն առաջ քաշել նոր բանվորներ և պատրաստել որակյալ կադրեր[1]։

Ընդունելով այդ պարտավորությունները, նրանք մրցման հրավիրեցին Լենինականի տեքստիլ կոմբինատի, մեխանիկական գործարանի, Ալավերդու և Ղափանի պղնձագործ, Երևանի «Արարատ», մեխանիկական և հանրապետության մյուս ձեռնարկությունների բանվորներին՝ իրենց օրինակով օգնություն կազմակերպել կոլեկտիվ շարժման գործին[2]։

Լենինականի դեպոյի բանվորների մրցակռավերը լայն արձագանք գտավ Հայաստանի բանվոր դասակարգի մեջ։ Գյուղում աշխատելու ցանկություն հայտնեցին Երևանի «Արարատ», կաշվի, հացի, ծխախոտի գործարանների և տպարանի շատ բանվորներ։ Գյուղի սոցիալիստական վերակառուցման գործին աջակցելու ցանկությամբ զգալի թվով բանվորներ հանդես եկան նաև Լենինականի, Ալավերդու, Ղափանի արդյունաբերական ձեռնարկություններից և երկաթուղուց։

Հայաստանի կուսակցական, արհեստակցական միության և կոմերիտական կազմակերպությունների ջանքերով կազմակերպվեց և գյուղ մեկնեց 169 բրիգադ՝ կարճատև ժամանակով գյուղում աշխատելու համար։ Այդ բրիգադներում ընդգրկված էր մոտ 970 բանվոր և ծառայող[3]։ Գյուղ մեկնող բանվորների համար Երևանում, Լենինականում, Ալավերդում և Ղափանում 1930 թվականի հունվարի 1-ից կազմակերպվեցին կարճատև դասընթացներ, որոնց նպատակն էր տալ նրանց գյուղատնտեսական համապատասխան գիտելիքներ։

Կոլտնտեսային շարժման և գարնանացանի աշխատանքներին աջակցելու նպատակով փոխադարձ օգնությամբ հանդես եկան Անդրկովկասի եղբայրական հանրապետությունների բանվորները։ Բաքուն Հայաստան ուղարկեց ավելի քան հարյուր բանվոր, որոնցից կազմակերպվեց ինը բրիգադ տարբեր շրջաններում աշխատելու համար։ Առաջավոր բանվորներ եկան նաև Վրաստանից։

Հայաստանի կոմկուսի Կենտկոմը 1930 թվականի հունվարի սկզբներին որոշում ընդունեց կոլտնտեսային շինարարությունն անհրաժեշտ կադրերով ապահովելու մասին։ Այդ որոշման հիման վրա կազմակերպվեցին մի շարք կուրսեր ու դասընթացներ, որոնք ընդգրկում էին մի քանի հազար մարդ։ Այսպես, կազմակերպվեցին կոլտնտեսային հաշվային աշխատողների կուրսեր՝ 200 ունկնդիրներով։ Մեկամսյա կուրսեր դասընթացի միջոցով պատրաստվեց խոշոր կոլտնտեսությունների 60 նախագահ։ Տեղում չքավոր և միջակ ակտիվ գյուղացիների համար կազմակերպվեցին դասընթացներ, որոնք ընդգրկում էին մոտ վեց հազար ունկնդիրներ։ Կարճատև կուրսեր կազմակերպվեցին նաև խրճիթվարների, բանվորական և կոմերիտական բրիգադների անդամների, կանանց պատգամավորական ժողովների մասնակիցների համար։

Բանվոր դասակարգի լայն խավերը ակտիվորեն մասնակցում էին գյուղի կոլեկտիվացման անմիջական աշխատանքներին, աջակցում էին կուսակցությանը և աշխատավոր գյուղացիներին գյուղում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական արմատական փոփոխությունները հաղթական ավարտին հասցնելու

1 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 28 դեկտեմբերի 1929 թ.։

2 Տե՛ս նույն տեղում։

3 Տե՛ս Մ. Լ. Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 15, գ. 4, թ. 3։

գործում։ Կոլտնտեսային շինարարությունը փորձված կադրերով ապահովելու համար կարևոր նշանակություն ունեցավ 25-հազարականների շարժումը։ Գյուղ մեկնեցին 66 քսանհինգհազարականներ, որոնցից 36-ը հաստատվեցին կոլտնտեսության նախագահներ, հինգը՝ նախագահի տեղակալներ, իսկ մյուսները վարում էին կոլտնտեսության վարչության անդամների և այլ պարտականությունները[1]։

Կուսակցության և բանվոր դասակարգի պատվիրակները՝ քսանհինգհազարականները, գյուղ մեկնեցին կոլտնտեսային շարժման ամենալարված պահին, երբ գյուղի սոցիալիստական վերակառուցումը թևակոխել էր իր վճռական փուլը։ Համատարած կոլեկտիվացման հիման վրա տեղի էր ունենում կուլակի, որպես դասակարգի, վերացումը։ Գյուղի սոցիալիստական վերափոխումների հաղթանակի համար մղվող պայքարի այդ լարված իրադրության պայմաններում կոլտնտեսականները բանվոր դասակարգի պատվիրակներին լայն աջակցություն էին ցուցաբերում։

Հենվելով կոլտնտեսական ակտիվի վրա, կուսակցական կազմակերպությունների ղեկավարությամբ ու աջակցությամբ քսանհինգհազարականները բեղմնավոր գործ ծավալեցին կոլտնտեսային արտադրությունը կազմակերպելու, աշխատուժը արտադրության մեջ դասավորելու և կոլտնտեսությունները կազմակերպչորեն ու տնտեսապես ամրապնդելու ուղղությամբ։ Նրանցից շատերն աչքի ընկան իրենց կազմակերպչական ունակություններով, դեպի հանրային տնտեսությունը ցուցաբերած հոգատարությամբ։ Դրանով էլ պայմանավորվեց կոլտնտեսականների վստահությունը և հարգանքը դեպի բանվոր դասակարգի այդ պատվիրակները՝ կոլտնտեսության բարեխիղճ ղեկավարները։

Շրջանային կենտրոն Աշտարակ ավանի Ստ. Շահումյանի անվան կոլտնտեսության անդամներն իրենց տնտեսության վարչության նախագահ ընտրեցին Երևանի կենտրոնական արհեստագործական դպրոցի գլխավոր վարպետ, բազմամյա խառատ Սերգեյ Վարդանյանին, որի ջանքերի շնորհիվ կոլտնտեսությունը կազմակերպչորեն ամրապնդվեց և ձեռք բերեց տնտեսական զգալի հաջողություններ։

Երկրի տարբեր մարզերում ու շրջաններում, այդ թվում նաև Հայաստանում քսանհինգ հազարականների կատարած աշխատանքը բարձր գնահատության արժանացավ։ Բազմաթիվ դժվարությունների հաղթահարման ճանապարհով նրանք հսկայական աշխատանք կատարեցին կոլտնտեսային շինարարության բնագավառում թույլ տված սխալների վերացման ուղղությամբ, կոլտնտեսային կարգի ամրապնդման, աշխատանքի կազմակերպման, կուլակության դեմ մղված պայքարի և այլ բնագավառներում։ Քսանհինգհազարականների շարժումն իրեն հիմնովին արդարացրեց։

Սոցիալիստական շինարարության մեջ գյուղի աշխատավորության լայն զանգվածներին ներգրավելու գործում մեծ էր նաև լենինյան կոմերիտմիության դերը։ Դեռևս կուսակցության XV համագումարն իր որոշումներում մատնանշելով կոմերիտմիության անելիքը գյուղի սոցիալիստական շինարարության բնագավառում, խնդիր դրեց նրա առաջ՝ լայն աշխատանք ծավալել գյուղատըն-

1 Տե՛ս Մ.Ի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 15, գ. 4, թ. 5։

տեսության վերելքի ու կոլեկտիվացման, կուլտուրական լայն նախաձեռնության զարգացման և նոր կադրերի աճեցման ուղղությամբ։

Ելնելով կուսակցության XV համագումարի որոշումներից, Համկ(բ)Մ VIII համագումարը (1928) կոնկրետ ծրագիր մշակեց երկրի ինդուստրացման և գյուղատնտեսության կոլեկտիվացման գործում կոմերիտմիության մասնակցության վերաբերյալ։ Գյուղի սոցիալիստական վերակառուցման մասին իր որոշումներում համագումարը մատնանշեց, որ կոլտնտեսային շինարարությանը մասնակցելու հարցը պետք է դրվի ամբողջ միության ուշադրության կենտրոնում և դառնա յուրաքանչյուր բջիջի ու կազմակերպության կարևորագույն գործը։

Ձեռնամուխ լինելով համագումարի որոշումների անմիջական իրականացմանը, կոմերիտմիությունը մեծ աշխատանք կատարեց ինչպես կոլտնտեսային մասսայական շարժման նախադրյալների նախապատրաստման, այնպես էլ նրա ծավալման շրջանում։ Գյուղական կազմակերպությունների հետ միասին կոլտնտեսային շինարարությանն ակտիվ մասնակցություն ցուցաբերեցին նաև արդյունաբերական ձեռնարկությունների, պետական հիմնարկների և ուսումնական հաստատությունների կոմերիտականներն ու արտամիութենական երիտասարդությունը։

Գարնանացանի աշխատանքներին օգնելու, հանրային տնտեսությունն ամրապնդելու և գյուղատնտեսության մեքենայացման մակարդակը ընդհանրապես, բամբակագործությանն առանձնապես բարձրացնելու ուղղությամբ կարևոր նախաձեռնություն դրսևորեց Երևանի կոմերիտական կազմակերպությունը։ 1929 թվականի դեկտեմբերի վերջերին տեղի ունեցած քաղաքային ակտիվի ընդունած որոշմամբ Երևանի կազմակերպությունը հանդես եկավ կոմերիտական տրակտորային շարասյուն ստեղծելու առաջարկությամբ։ Համկ(բ)Մ Կենտկոմը դիմեց հանրապետության կոմերիտմիությանը՝ ձեռնամուխ լինել Երևանի կազմակերպության առաջարկը կարճ ժամանակամիջոցում իրականացնելու գործին։ Համկ(բ)Մ Կենտկոմը որոշեց կոմերիտմիության նախաձեռնությամբ հավաքվելիք նյութական միջոցներով կազմակերպել տրակտորային երկու շարասյուն՝ Էջմիածնի և Հրազդանի շրջաններին հանձնելու համար։

Տրակտորային շարասյան կազմակերպման մասին Երևանի կոմերիտականների նախաձեռնությունը լայն արձագանք գտավ Հայաստանի կոմերիտական կազմակերպություններում։ Մի շարք կոմերիտական կազմակերպությունների միջոցով կոլտնտեսությունների համար գնվեցին նաև գյուղատնտեսական այլ մեքենաներ ու գործիքներ։ Լենինականի կազմակերպությունը, օրինակ, հատուկ ֆոնդ ստեղծեց 10 սերմացուիչ և 15 գութան ձեռք բերելու համար։ Սիսիանի շրջանի կոմերիտական բջիջները գնեցին և կոլտնտեսություններին հանձնեցին 12 գութան, Ղափանի կազմակերպությունը՝ 9 գութան և այլն։

Գյուղատնտեսության կոլեկտիվացման և գարնանացանի աշխատանքներին օգնելու նպատակով Համկ(բ)Մ Երևանի քաղաքային կոմիտեն կազմակերպեց և գյուղ ուղարկեց երեք շրջիկ վերանորոգման արհեստանոց, տասը երիտասարդական բրիգադ՝ բաղկացած 50 կոմերիտականներից և արտամիութենական բանվոր-երիտասարդներից։ Զանգեզուրի, Լոռի-Փամբակի, Լենինականի օկրուգների և մյուս շրջանների գյուղերում աշխատում էին բազմաթիվ կոմերի-

տական բրիգադներ, որոնք ընդգրկում էին հարյուրավոր բանվոր-երիտասարդներ, ուսուցիչներ, ուսանողներ և կոմերիտական էնտուզիաստներ։

Երիտասարդությունը հանդիսանում էր գյուղի ազգաբնակչության առավել դրագետ մասը. նա առաջինը տիրապետեց մեքենան վարելու գործին։ Բնականաբար նա էլ հանդիսացավ գյուղատնտեսական արտադրության մեջ առաջավոր տեխնիկայի ներդրման նախաձեռնողը։ Հայաստանի առաջին ՄՏԿ-ի մեխանիզատորները Ղուրդուղուլու շրջանի երիտասարդներն էին։

1930 թվականի փետրվարի կեսերին Ղուրդուղուլու, Ղամարլվի, Հրազդանի, էջմիածնի, Աշտարակի, Կոտայքի, Վեդու, Մեղրու շրջանների կոմերիտականների ավելի քան 90 տոկոսը գտնվում էր կոլտնտեսությունների մեջ։ Լենինականի օկրուգի 4500 կոմերիտականներից կոլտնտեսականներ էին 3200-ը։

Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման գործին ակտիվ մասնակցություն էր ցույց տալիս նաև գյուղի արտամիութենական երիտասարդությունը։ Կոմերիմիության գլխավորությամբ երիտասարդության լայն զանգվածները, մանավանդ համատարած կոլեկտիվացման շրջաններում, ընդգրկվել էին կոլտնտեսային շարժման մեջ։

Գյուղի սոցիալիստական վերակառուցումը նոր, էլ ավելի կարևոր խնդիրներ դրեց պետական իշխանության տեղական օրգանների՝ շրջանային և գյուղական սովետների առջև։ Կոլեկտիվ տնտեսությունների կազմակերպումը ոչ միայն չէր բացասում, այլ ենթադրում էր դասակարգային պայքարի սրում, կուլակության և հակասովետական տարրերի թե քողարկված և թե բացահայտ դիմադրության ակտիվացում։ Այս հանգամանքներն ինքնին թելադրում էին համապատասխանաբար վերակառուցել սովետների աշխատանքը, ուժեղացնել նրանց դերը։

Մինչդեռ համատարած կոլեկտիվացման առնչությամբ ի հայտ են գալիս տենդենցներ՝ գյուղական սովետները լուծարքի ենթարկելու, նրանց իրավունքները կոլեկտիվ տնտեսությունների վարչություններին հանձնելու մասին։ Ակընհայտ է, որ սովետները կոչված էին մոբիլիզացնելու, կազմակերպելու և գլխավորելու բատրակների, չքավոր և միջակ գյուղացիների նախաձեռնությունը՝ գյուղի արտադրա-տնտեսական կյանքը սոցիալիստական հիմունքներով վերակառուցելու համար։ Իսկ կոլեկտիվ տնտեսությունները և նրանց վարչությունները, որպես արտադրական միավորումներ, ամենևին չէին կարող և չպետք է հակադրվեին գյուղական սովետներին, որոնք եղել և շարունակում էին մնալ որպես պետական իշխանության տեղական մարմիններ։ Դրանից հետևում է, որ գյուղական սովետները լուծարքի ենթարկելու, նրանց ղեկավար դերը թուլացնելու կամ նսեմացնելու թե բացահայտ և թե սքողված փորձերը սխալ էին ու վնասակար։

Այդ կարգի տրամադրությունները չէին կարող իրենց բացասական ազդեցությունը չունենալ գյուղական սովետների աշխատանքի վրա։ Որոշ գյուղսովետներ չկարողացան գլխավորել կոլտնտեսային շարժման գործը, կամ թույլ մասնակցություն ունեցան գյուղի սոցիալիստական վերափոխումների իրականացման առաջին շրջանի բուռն իրադարձություններին, իսկ երբեմն էլ գնացին շարժման հետևից, իսկ որոշ գյուղսովետներ թույլ տվեցին սովետական օրինականության լուրջ խախտումներ. երբեմն ունեզրկեցին միջակ գյուղացինե-

րին, նույնիսկ նրանցից ոմանց գյուղից և շրջանից արտաքսելու որոշումներ ընդունեցին։

Պայքարելով գյուղական սովետների դերը թուլացնելու, կամ այն նսեմացնելու բոլոր տեսակի տենդենցների դեմ, կուսակցությունը և կառավարությունը լուրջ միջոցներ ձեռնարկեցին գյուղական սովետների աշխատանքը վերակառուցելու, նրանց դերը ուժեղացնելու ուղղությամբ։

3. ՊԱՅՔԱՐ ԿՈԼՏՆՏԵՍԱՅԻՆ ՇԱՐԺՄԱՆ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ԵՎ ՍԽԱԼՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Կոլտնտեսային շարժման մեջ կամավորության սկզբունքի խախտման հետևանքով աշխատավոր գյուղացիների շրջանում առաջացած դժգոհությունները 1930 թվականի փետրվարի կեսերից ավելի ակնառու բնույթ ստացան։ Ինչպես Համկ(բ)կ Կենտկոմը, այնպես էլ Անդրֆեդերացիայի և հանրապետությունների կուսակցական ու սովետական վերադաս մարմինները այդ մասին տեղերից բազմաթիվ լուրջ ահազանգեր էին ստանում։ Ստեղծված իրադրությունը թելադրում էր դիմել կտրուկ միջոցների՝ թույլ տված սխալներն ու աղավաղումները վերացնելու համար։

Կոլտնտեսային շարժման բնագավառում Անդրկովկասի հանրապետություններում թույլ տված սխալները վերացնելու անհրաժեշտությունը հարկադրեց Համկ(բ)կ Անդրերկրկոմին, չնայած ուշացումով, 1930 թվականի փետրվարի 6-ին անդրադառնալ այդ հարցին և հատուկ որոշում ընդունել։ Կոլեկտիվացման տեմպը որոշելիս, ասված էր այդ որոշման մեջ, ոչ մի դեպքում թույլ չտալ Սովետական Միության հացահատիկային առաջավոր շրջանների փորձի փոխադրումը Անդրկովկաս, հետևապես երկրամասի բազմաթիվ առավել հետամնաց շրջանների կոլեկտիվացման տեմպը առայժմ չի կարող հասցվել երկրի առաջավոր շրջանների կոլեկտիվացման տեմպին[1]։

Անդրերկրկոմը պահանջեց անհապաղ դադարեցնել կոլեկտիվացման ձևական տոկոսների հետևից ընկնելու պրակտիկան, որ նկատվում էր մի շարք շրջաններում։ Այնուհետև խնդիր դրվեց անհետաձգելիորեն վերանայել այն գավառների ու գավառակների ցանկը, որոնց վերաբերյալ մինչ այդ որոշումներ էին ընդունվել 1930 թվականի գարնանը համատարած կոլեկտիվացումն ավարտելու մասին[2]։

1930 թվականի փետրվարի 11-ին ՀԿ(բ)կ Կենտկոմի նախագահությունը նոր որոշում ընդունեց համատարած կոլեկտիվացմանը պատրաստ շրջանների մասին, որոնց թվին դասվեցին Երևանի օկրուգից՝ Ղուրդուղուլու, Հրազդանի, Ղամարլուի, Էջմիածնի, Աշտարակի և Մեղրու, Լենինականի օկրուգից՝ Դուզքենդի և Մոլլա-Գյոգչայի, Լոռու օկրուգից՝ Ստեփանավանի և Իջևանի, իսկ Սևվանի օկրուգից՝ Նոր Բայազետի (Կամո) շրջանները[3]։

---

1 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 11 փետրվարի 1930 թ.։

2 Տե՛ս նույն տեղում։

3 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 905, թ. 34։

Այդ որոշումը, սակայն, շրջանցեց կատարված և շարունակվող սխալները, չկանխեց այն հապճեպությունը, որ համակել էր տեղերի աշխատողներին ոչ միայն համատարածի ենթակա, այլև նրանից դուրս գտնվող շրջաններում։ Այդ է հատատում այն փաստը, որ մինչև կոլտնտեսություններից գյուղացիների արտաՀոսքի սկսվելը հանրապետությունում արդեն կազմակերպվել էր 668 կոլտնտեսություն, որոնք ընդգրկում էին աշխատավորական տնտեսությունների 63,0 տոկոսը։

1930 թվականի փետրվարի 20-ին Համկ(բ)կ Կենտկոմի կողմից հրավիրված երկրամասային և նահանգային մի շարք կուսակցական կազմակերպությունների ղեկավարների խորհրդակցությունը դատապարտեց կոլտնտեսային շարժման մեջ դրսևորված շտապողականությունը և պահանջեց իրականացնել անհետաձգելի ձեռնարկումներ՝ կոլտնտեսային շինարարությունը ճիշտ հունի մեջ դնելու համար։ Կուսակցության Կենտկոմը փետրվարի վերջերին որոշում ընդունեց տնտեսապես հետամնաց ազգային հանրապետությունների և մարզերի, այդ թվում նաև Անդրկովկասի կոլեկտիվացման հարցի մասին։ Որոշման մեջ ընդգծվում էր, որ առաջավոր հացահատիկային շրջանների կոլեկտիվացման փորձը չի կարելի մեխանիկորեն փոխադրել տնտեսապես համեմատաբար հետամնաց, դեռևս անհրաժեշտ նախապատրաստություն չունեցող ազգային հանրապետություններն ու շրջանները։ Կենտկոմը պարզաբանեց, որ ելնելով այդ շրջանների ազգային և տնտեսական առանձնահատկություններից՝ կոլեկտիվացումը պետք է իրականացնել ավելի դանդաղ տեմպերով, որ ներկա էտապում գլխավոր ուշադրությունը պետք է բևեռել նախապատրաստական աշխատանքների վրա։

Գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման գործում թույլ տված սխալների ուղղման և կոլտնտեսությունների ամրապնդման համար կարևոր նշանակություն ունեցավ 1930 թվականի մարտի 2-ին հրապարակված գյուղատնտեսական արտելի նոր կանոնադրությունը։ Այդ կանոնադրության մեջ արդեն հաշվի էր առնված գյուղացիների արտադրական միջոցների համայնացման հարցի մեջ պարզություն մտցնելու պահանջը։ Կոլտնտեսային շինարարության տվյալ փուլում հիմնական ձև էր համարվում գյուղատնտեսական արտելը, որի մեջ համայնացվելու էին գյուղացու բանող անասունները, գյուղատնտեսական մեքենաները, տնտեսական նշանակություն ունեցող շենքերը։ Համայնացման ենթակա չէին բնակելի կառույցները, տնամերձ հողամասը, մանր անասունները, թռչունները և այն գործիքները, որոնք անհրաժեշտ էին տնամերձը մշակելու համար։ Կոլտնտեսականին իրավունք էր տրվում ունենալ մի կով։

1930 թվականի մարտի 9-ին և 14-ին Համկ(բ)կ Կենտկոմը կարևոր որոշումներ ընդունեց ուղղված կոլտնտեսային շարժման բնագավառում կատարված սխալների բացահայտմանն ու դրանց դեմ մղվող պայքարի կազմակերպմանը։ Կենտկոմը իր մարտի 14-ի որոշման մեջ առանձնապես մատնանշում էր, որ կատարված սխալներն ու կուսակցության գծի ծռումները «այժմ հանդիսանում են կոլտնտեսային շարժման հետագա աճման հիմնական արգելակը և ուղղակի օգնություն մեր դասակարգային թշնամիներին»[1]։ Կենտկոմը կուսակ-

1 «ՍՄԿԿ-ն... բանաձևերում ու որոշումներում», մաս II, էջ 846։

ցական կազմակերպություններից պահանջում էր անհապաղ վերացնել այդ սխալները, շտկել կուսակցության գծի ծռումները, որոնք ոչ մի կապ չունեն կուսակցության քաղաքականության հետ[1]։

Կոլտնտեսականների նյութական շահագրգռվածությունը բարձրացնելու և կոլտնտեսություններն ամրապնդելու գործում կարևոր նշանակություն ունեցավ կուսակցության ու կառավարության որոշումը՝ կոլտնտեսություններին և կոլտնտեսականներին մի շարք արտոնություններ տալու մասին։ 1930 թվականի ընթացքում կոլտնտեսություններին 500 միլիոն ռուբլու վարկ տրամադրելու վերաբերյալ Միության Կենտգործկոմի և ժողկոմխորհի որոշումը հանդիսացավ կարևոր ազդակներից մեկը՝ կոլտնտեսային շինարարության զարգացմանը նոր թափ հաղորդելու և նրա համար նոր վերելք խթանելու ուղղությամբ։

Ստեղծված պայմաններում անհրաժեշտ էր ամրապնդել կոլտնտեսային կարգը, զարգացնել գյուղատնտեսության սոցիալիստական սեկտորը, ապահովել գարնանացանի նախապատրաստումն ու հաջող ավարտումը։ Այդ խնդիրների հաջող կենսագործումը հնարավոր էր միայն այն դեպքում, եթե մինչև վերջ վերացվեին կատարված սխալները։ Այդ խնդիրների լուծումն իր հերթին թելադրում էր իրականացնել մի շարք կարևոր գործնական միջոցառումներ՝ կուսակցական կազմակերպությունների աշխատանքը վերակառուցելու, գյուղական սովետների աշխատանքը աշխուժացնելու, նրանց դերը բարձրացնելու, համապատասխան կադրերով իշխանության ներքին օղակներն ապահովելու ուղղությամբ։

Հայաստանի կոմկուսի Կենտկոմը, հանրապետության կուսակցական կազմակերպությունները իրենց ամբողջ աշխատանքը վերադասավորեցին կուսակցության դիրեկտիվների տեսանկյունով, ձեռնարկվեցին մի շարք միջոցառումներ կոլտնտեսային շինարարության հետագա առաջընթացը լենինյան կամավորության սկզբունքներով կազմակերպելու ուղղությամբ։ Այս առումով կարևոր նշանակություն ունեցավ հանրապետության շրջանայնացումը և օկրուգների վերացումը, որը հնարավորություն ընձեռեց ղեկավարությունը մոտեցնել գյուղին, կոլտնտեսությանը։ Զգալի թվով նոր ձեռնհաս կադրերով ուժեղացվեց շրջանային և գյուղական սովետների ղեկավար կազմը։ Գյուղական սովետներին, կոլտնտեսություններին և կոոպերատիվ մյուս կազմակերպություններին առընթեր գոյություն ունեցող բատրակա-չքավորական խմբակների աշխատանքը բարելավվեց, զգալիորեն բարձրացվեց նրանց դերը գյուղի տնտեսական, պետական, կոոպերատիվ և կուլտուրական աշխատանքների բնագավառում։

ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախագահությունը 1930 թվականի ապրիլի 15-ին քննարկեց կոլտնտեսային շարժման մեջ կատարված սխալների վերացման ընթացքը։ Հայաստանի Կենտգործկոմը և կառավարությունը հատուկ հանձնաժողովների միջոցով զբաղվեցին ավակուլակացման առնչությամբ կատարված սխալների ուղղման հարցով։

Այդ հանձնաժողովների կատարած դրական աշխատանքով միջակ գյուղացիների նկատմամբ թույլ տված խախտումները մայիս-ապրիլ ամիսներին հիմնականում վերացվեցին։ Հանրապետության ութ շրջաններում ապակուլա-

1 Տե՛ս ԸՍՄԿՊ-ն... բանաձևերում ու որոշումներում», մասն II, էջ 846։

կացված 446 տնտեսությունից 256-ը ճանաչվեցին որպես միջակ աշխատավորական տնտեսություններ և վերականգնվեցին նրանց բոլոր իրավունքները[1]։ Այսպես, Ալավերդու շրջանում որպես կուլակի ենթարկվել էր 48 տնտեսություն, սակայն հանձնաժողովների կատարած ստուգումը պարզեց, որ դրանք բոլորն էլ աշխատավորական տնտեսություններ էին և նրանց իրավունքները վերականգնվեցին։ Դարալագյազի շրջաններում ենթարկված 22 տնտեսությունից միայն մեկն էր կուլակային։ Ղափանի շրջանի մի քանի գյուղերում կատարված ապակուլակացումը ամբողջությամբ չեղյալ համարվեց։ Իջևանի շրջանից ապակուլակացված տնտեսություններից միջակ էին 93 տոկոսը, Շամշադինի շրջանից՝ ավելի քան 80 տոկոսը, Ստեփանավանի շրջանից՝ 56 տոկոսը, Մոլլա-Դյոգչայի շրջանից՝ ավելի քան 44 տոկոսը, Ղուրդուղուլու շրջանից՝ 23 տոկոսը և այլն[2]։

Շատ կոլտնտեսություններ, որոնք կազմակերպվել էին հապճեպորեն, վարչարարական մեթոդներով՝ քայքայվեցին։ Զգալի թվով կոլտնտեսություններ էլ, որպես ոչ կենսունակ տնտեսություններ, վերադաս մարմինների որոշմամբ վերացվեցին։ Կոլտնտեսությունները մեծ մաղում տվեցին, որը հատկապես մասսայական բնույթ ստացավ լեռնային և նախալեռնային շրջաններում։ Այդ վայրերի թվին էին պատկանում Թալինի, Վեդու, Ազիզբեկովի, Քեշիշքենդի, Աղբաբայի, Ապարանի, Բասարգեչարի, Ալավերդու, Մարտունու, Նոր Բայազետի և մի քանի այլ շրջաններ։ 1930 թվականի փետրվարին եղած 665 կոլտնտեսություններից նույն թվականի հունիսի վերջերին մնաց 380 կոլտնտեսություն։ Գյուղացիների կոլեկտիվացման մակարդակը նույն ժամանակամիջոցում 63 տոկոսից իջավ 8,5 տոկոսի։

Հանրապետության առաջավոր, համալնական տնտեսության համար զգալի չափով նախապատրաստված Ղուրդուղուլու, Ղամարլուի, Մեղրու, Էջմիածնի շրջաններում, ամբողջ կոլտնտեսությունների տարերայնորեն քայքայման դեպքեր համարյա տեղի չունեցան։ Այդ վայրերում թույլ տրված սխալներն իրենց ծայրահեղ հետևանքները չունեցան, որովհետև կոլտնտեսությունների գերակշռող մասը երկու-երեք տարվա գոյության և դրական աշխատանքի փորձ ունեին, և որ գլխավորն էր, այդ վայրերում ստեղծվել էր նյութա-տեխնիկական նախադրյալների որոշ բազա։

Ղուրդուղուլու շրջանում 1930 թվականին կազմակերպվել և գործում էր Սարդարաբադի ՄՏԿ-ը, որն առաջինն էր հանրապետությունում։ Դաշտավայրի մյուս շրջաններում աշխատում էին մեքենա-տրակտորային շարասյուներ, որոնք մեծ օգնություն էին ցույց տալիս կոլտնտեսություններին։ Մեծ էր նաև հանրապետության սովխոզների դերը, որոնց զարգացման համար կուսակցությունը և կառավարությունը լուրջ ուշադրություն ու միջոցներ էին հատկացնում։

Հայաստանի կուսակցական կազմակերպությունների պայքարը ուղղված գյուղի սոցիալիստական վերակառուցման «ձախ» խոտորիչների և սոցիալիզմի մեջ կուլակի խաղաղ ներաճման աջերի հակալենինյան տեսության դեմ՝ էլ ավելի ուժեղացավ։ Կոլտնտեսային շինարարության լենինյան գծի ամեն կարգի


---

1 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 112, գ. 648, թ. 8։

2 Տե՛ս նույն տեղում, թ. 8, 19, 24—25։

նենգափոխման դեմ անհաշտ պայքար ծավալելու ցուցում տվեց 1930 թվականի մայիսի 24—28-ը տեղի ունեցած ՀԿ(բ)Կ VII համագումարը։

Համագումարում ՀԿ(բ)Կ Կենտկոմի հաշվետվությամբ հանդես եկավ Կենտկոմի առաջին քարտուղար Ա. Խանջյանը։ Համագումարը քննեց նաև գյուղատնտեսության վերելքի և կոլտնտեսային շինարարության խնդիրները (զեկուցող Ս. Կասյան), երիտասարդության մեջ տարվող աշխատանքը և այլ հարցեր։ Քննարկված խնդիրների վերաբերյալ համագումարի ընդունած որոշումներում արձանագրվեցին հանրապետության արդյունաբերության զարգացման, կուլտուրական շինարարության ծավալման և գյուղում տեղի ունեցող սոցիալ-տնտեսական վերափոխումների բնագավառներում ձեռք բերված հաջողությունները։ Դրանց զուգընթաց համագումարի որոշումներում մատնանշվեցին մի շարք ակնառու թերություններ ու բացեր՝ ժողովրդական տնտեսության տարբեր բնագավառներում, կուսակցության լենինյան գծի լուրջ աղավաղումներ՝ գյուղացիական հարցում։



Ա. Խանջյան

Համագումարը մշակեց անհրաժեշտ միջոցառումներ ամբողջ ժողովրդական տնտեսության մեջ նոր, էլ ավելի բարձր վերելք ապահովելու համար։ Կուսակցական կազմակերպություններին և Կենտկոմին ցուցում տրվեց՝ կոլտնտեսային շարժման գործում թույլ տրված սխալներն ու աղավաղումները լիկվիդացնելու և համայնական տնտեսությունները կուսակցության դիրեկտիվների հիման վրա կազմակերպելու վերաբերյալ ընդհանուր կարգի որոշումներ ընդունելուց անցնել ծավալուն գործնական միջոցառումների կենսագործմանը, գյուղի սոցիալիստական վերակառուցման գործի ճիշտ կազմակերպմանը։

Կոլտնտեսային շինարարության բնագավառում կատարված սխալների վերացման ուղղությամբ կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության գործադրած միջոցառումները գյուղացիական լայն զանգվածների մեջ հանգստություն մտցրին։

Վերը մատնանշված միջոցառումների կենսագործման շնորհիվ կուսակցությանը հաջողվեց վերականգնել համայնական տնտեսության կառուցման լենինյան սկզբունքները, կարգավորել փոխհարաբերությունները միջակի հետ, զգալիորեն ամրապնդել կոլտնտեսությունները և կոլտնտեսային շինարարությունը դնել զարգացման ճիշտ հիմքերի վրա։ Արտահոսքը կոլտնտեսություն-

ներից հիմնականում դադարեց։ Արարատյան դաշտավայրի շատ գյուղերում գյուղացիները սկսեցին վերադառնալ կոլտնտեսությունները։ 1930 թվականի երկրորդ կեսին, ինչպես և հետագայում, կազմակերպվեցին զգալի թվով նոր կոլտնտեսություններ։ Գոյություն ունեցող կոլտնտեսությունները սկսեցին կազմակերպչորեն ամրապնդվել։ Եթե 1930 թվականի հուլիսին Հայաստանում գոյություն ուներ 380 կոլտնտեսություն, ապա դեկտեմբերի 15-ի տվյալներով դրանց թիվը արդեն հասավ 458-ի։ Այդ նույն ժամանակամիջոցում գյուղացիական տնտեսությունների ընդգրկումը՝ 15914 տնտեսություններից հասավ 18958 տնտեսության, կամ կոլեկտիվացման մակարդակը 8,5 տոկոսից բարձրացավ 11,4 տոկոսի[1]։ Միջակ տնտեսությունների տեսակարար կշիռը կոլտնտեսություններում սկսեց բարձրանալ և հոկտեմբերի 1-ին արդեն կազմում էր 30,0 տոկոս։

Այսպիսով, կոլեկտիվացման պրակտիկայում թույլ տված սխալների ու ծռումների վերացման նպատակով կուսակցության և կառավարության ձեռնարկած միջոցառումների իրականացումը, գյուղին օգնելու ուղղությամբ բանվոր դասակարգի ուժերի մոբիլիզացումը, վերջին հաշվով հանգեցին միջակի նկատմամբ խախտված լենինյան սկզբունքների վերականգնմանը, բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքին սպառնացող խոչընդոտների լիկվիդացմանը և գյուղի սոցիալիստական վերակառուցման հետագա առաջընթացքի ապահովմանը։

---

1 Տե՛ս Մշի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, գ. 43, թ. 46։

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ

1. ՊԱՅՔԱՐ ԱՌԱՋԻՆ ՀՆԳԱՄՅԱ ՊԼԱՆԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ: ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍՈՎԵՏՆԵՐԻ VII ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

Առաջին հնգամյա պլանի հիմնական խնդիրն էր սոցիալիզմի տնտեսական հիմքի կառուցման ավարտումը և ամբողջ ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման համար առաջավոր տեխնիկական բազայի ստեղծումը։

Երկրում մեծ թափով ծավալվում էր սոցիալիստական շինարարությունը։ Ինդուստրացման բնագավառում տեղի ունեցող մեծ առաջընթացը, բարձր տեմպերով արդյունաբերական շինարարության ծավալումը ուղեկցվում էր բանվորական լայն զանգվածների արտադրական վերելքով։ Բանվոր դասակարգի առանդի ու նախաձեռնության զարգացման շնորհիվ գերակատարվեց հնգամյակի առաջին տարվա համար պլանավորված արդյունաբերության համախառն արտադրանքի թողարկման առաջադրանքը, որը հիմք տվեց կուսակցությանը և կառավարությանը զգալիորեն բարձրացնելու 1929—30 տնտեսական տարվա համար ծրագրված արտադրանքի պլանը՝ հնգամյակով նախատեսված 21,5 տոկոս աճի փոխարեն սահմանել 31,3 տոկոս։ Այդպիսի բարձր առաջադրանքի կատարումը պահանջելու էր ուժերի մեծ լարում, միջոցների մոբիլիզացում և շատ դժվարությունների հաղթահարում։

Այդ ծրագրի կենսագործումն ապահովելու նշանաբանով էր պայմանավորված բանվոր դասակարգի առաջավոր ջոկատների մեջ ծնունդ առած հնգամյակը ժամկետից շուտ կատարելու նախաձեռնությունը։ Հենվելով աշխատավորական մասսաների նախաձեռնության վրա, կուսակցությունը առաջ քաշեց հնգամյակը չորս տարում կատարելու լոզունգը։

Համկ(բ)կ XVI համագումարը (1930 թվականի հունիս-հուլիս), որը կոմունիստական կուսակցության և սովետական ժողովրդի պատմության մեջ մտավ որպես ամբողջ ճակատով սոցիալիզմի ծավալման հարձակման համագումար, բազմակողմանիորեն մշակեց հնգամյա պլանը չորս տարում կենսագործելու ծրագիրը, մատնանշեց դրան հասնելու վճռական նշանակություն ունեցող ուղիներն ու միջոցները։ Համագումարը հանձնարարեց կուսակցության կենտկոմին

«հետագայում ևս ապահովել սոցիալիստական շինարարության մարտական բոլշևիկյան տեմպերը, հասնել իսկապես հնգամյակի չորս տարում կատարելուն»[1]։

Համագումարի ծրագրային որոշումներն ու դիրեկտիվները կենսագործելու անհրաժեշտության գաղափարով համակված, Հայաստանի բանվոր դասակարգը պայքար ծավալեց հնգամյակը չորս տարում կատարելու համար։

Առաջին հնգամյակի վերջին տարիները Սովետական Հայաստանի համար հանդիսացան արդյունաբերական շինարարության ծավալման, արդյունաբերության նոր կարևոր ճյուղերի և ձեռնարկությունների ստեղծման ժամանակաշրջան։ Այդ տարիներին միաժամանակ կառուցման աշխատանքներ էին տարվում ավելի քան 25 արդյունաբերական ձեռնարկությունների, հիդրոէլեկտրակայանների, երկաթուղային ճանապարհների և ջրանցքների շինարարության ուղղությամբ։ 1930—1932 թվականներին հիմք դրվեց մի քանի կարևոր ձեռնարկությունների շինարարության։ 1930 թվականից սկսեց Քանաքեռի խոշոր հիդրոէլեկտրակայանի, Ալավերդու քիմիական, Դավալուի ցեմենտի գործարանների, Երևանի սննդի կոմբինատի, Ղափանի պղնձահանքային կոմբինատի ֆլոտացիոն ֆաբրիկայի, Երևանի ծխախոտի և Իջևանի փայտամշակման գործարանների կառուցումը։ Նույն թվականին ավարտվեցին և շահագործման հանձնվեցին տեխնիկական նոր սարքավորումներով հագեցված Երևանի պահածոների գործարանը, Իջևանի հիդրոկայանը, Սարդարաբադի փոքր ջրանցքը և այլն։

Արդյունաբերական շինարարությունը էլ ավելի ծավալվեց հնգամյակի վերջին տարիներին։ Տարեցտարի ավելանում էր կապիտալ ներդրումների չափը։ այսպիս, եթե 1929—30 տնտեսական տարում ժողկոմատային ենթակայության հիմնական արդյունաբերության մեջ կատարված կապիտալ ներդրումները կազմել էր 31,3 միլիոն ռուբլի, ապա 1931 թվականին այն հասավ 35,1 միլիոն ռուբլու։ Դրանով էլ հենց պայմանավորվեց արդյունաբերական շինարարության թափը։

1929—1930 տնտեսական տարվա պլանի քանակական ու որակական նախագծումների անթերի կենսագործումը կարևոր նշանակություն ուներ հնգամյակի վերջին տարիների տնտեսական շինարարության ծրագիրը ամբողջությամբ իրականացնելու գործում։ Այդ նպատակին էր նվիրված Համ(բ)Կ կենտկոմի 1930 թվականի սեպտեմբերի 3-ի կուսակցական, տնտեսական, արհմիութենական և կոմերիտական կազմակերպություններին ուղղած դիմումը։ Կենտկոմը պահանջում էր անհրաժեշտ ջանքեր ներդնել հնգամյակի երկրորդ տարվա պլաններն անթերի կատարելու համար։

ՀԿ(բ)Կ կենտկոմը այդ դիմումի քննարկմանը մասնակական բնույթ տվեց։ Բանվորները և ինժեներա-տեխնիկական աշխատողները գործնական առաջարկություններ էին անում արտադրության կազմակերպմանը և պլանների կատարմանը խանգարող խոչընդոտների վերացման, դժվարությունների հաղթահարման, թողարկվող արտադրանքի որակի բարձրացման, խնայողության ռեժիմի կիրառման և այլ հարցերի կապակցությամբ։

---

1 «ՍՄԿԿ-ն... բանաձևերում ու որոշումներում», մասն III, Երևան, 1955, էջ 25։

Սոցիալիստական մրցությունը և հարվածային շարժումը նոր թափ ստացան։ Հազարավոր նոր բանվորներ ընդգրկվեցին հարվածայինների շարժման մեջ, կազմակերպվեցին զգալի քանակությամբ հարվածային նոր բրիգադներ, որոնք սեպտեմբերի վերջերին ընդգրկում էին մինչև 17 հազար բանվոր և ինժեներա-տեխնիկական աշխատող։ Այսպես, Լենինականի տեքստիլ կոմբինատում կազմակերպված հարվածային բրիգադների թիվը հասնում էր 70-ի, Երևանի կարի ֆաբրիկայի բանվորների 80 տոկոսը հարվածայիններ էին։ Ետ չէին մնում նաև մյուս ձեռնարկությունները։

Կենտկոմի դիմումի քննարկումից հետո որոշակի առաջընթաց կատարվեց արտադրական պլանների կատարման ուղղությամբ։ ՀԱՄԽ-ի նախագահությունն իր 1930 թվականի սեպտեմբերի 29-ի ընդլայնած նիստում ամփոփեց հանրապետության ձեռնարկությունների պլանների կատարման ընթացքը։ Մի շարք ձեռնարկություններ, այդ թվում Լենտեքստիլ կոմբինատը, Ջորագեսի շինարարությունը, Շամլուղի հանքերը, Երևանի փայտամշակման, «Արարատ», կարբիդի, կաշվի գործարանները և ուրիշ ձեռնարկություններ իրենց պլանները հաջող կատարելու և գերակատարելու համար արժանացան հանրապետական կարմիր տախտակին։

Հնգամյա պլանի երկրորդ տարվա առաջադրանքների կատարման ընթացքում սովետական ժողովուրդը լուրջ հաջողությունների հասավ։ ՀամԿ(բ)Կ Կենտկոմի և ԿՎՀ-ի 1930 թվականի դեկտեմբերյան միացյալ պլենումը, ամփոփելով 1929—1930 տնտեսական տարվա արդյունքները, նշեց, որ պլանային նախագծումների հիմնական ցուցանիշները իրականացվել են զգալի գերազանցումով։ Այս հաջողությունների հիման վրա պլենումը նախագծեց հնգամյակի երրորդ վճռական տարում ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի զարգացման ավելի բարձր առաջադրանքներ, որոնք ապահովում էին ՍՍՀՄ ինդուստրիայի, գյուղատնտեսության և կուլտուրայի զարգացման առավել մեծ առաջընթաց։

Հայաստանի աշխատավորները հնգամյակի երկրորդ տարին ավարտեցին աչքի ընկնող նվաճումներով։ Ժողովրդական տնտեսության արտադրանքի ընդհանուր ծավալի մեջ զգալիորեն աճեց արդյունաբերության արտադրանքի տեսակարար կշիռը՝ 1927—28 տնտեսական տարվա 21,8 տոկոսից 1929—30 տնտեսական տարում բարձրանալով մինչև 40,9 տոկոսի։

Հնգամյակի երկրորդ տնտեսական տարվա արդյունքների ամփոփումը համընկավ Հայաստանում սովետական կարգերի հաստատման առաջին տասնամյա հոբելյանի հետ։ Սոցիալիստական շինարարության բոլոր ճակատամասերում՝ հանրապետության արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացման, կուլտուրական շինարարության, աշխատավորների նյութական ու կենցաղային պայմանների բարելավման բնագավառներում ձեռք բերված աննախընթաց նվաճումներով նշանավորվեց Սովետական Հայաստանի տաս տարին։

Հայ ժողովրդի հաղթանակների փառապանծ տասնամյակը Սովետական Միության ԿԳԿ նախագահության անունից ողջունեց նրա նախագահ Մ. Ի. Կալինինը։ Սովետական Հայաստանի աշխատավորները, ասված էր հայ ժողովրդին ուղղված այդ դիմումի մեջ, անցած տասը տարիների ընթացքում ոչ միայն

վերականգնեցին երկրի քայքայված էկոնոմիկան, այլև հետամնաց տնտեսություն ունեցող Հայաստանը վերածեցին «իր արդյունաբերությամբ և գյուղատնտեսությամբ բուռն թափով զարգացող, տեխնիկական նոր բազայի անցած և մեքենայացման ուղիով ընթացող մի երկիր, որտեղ ձևով ազգային և էությամբ սոցիալիստական կուլտուրայի իր զարգացման ընթացքում ձեռք է բերել փայլուն նվաճումներ»[1]։

Բարձր գնահատելով տնտեսական ու կուլտուրական զարգացման բնագավառում հայ ժողովրդի նվաճումները, պրոֆեսիոնալ հեղափոխական, ՄՄԿԿ և միջազգային բանվորական շարժման հնագույն գործիչ, Անդրֆեդերացիայի կենտգործկոմի նախագահ Մ. Գ. Ցխակայան իր ողջույնի մեջ նշեց, որ առաջընթացի դժվարությունները դեռևս մեծ են, նեղ տեղեր շատ կան, բայց դրանք բոլշևիկորեն կհաղթահարեն լենինյան կոմունիստական կուսակցությունը և Հայաստանի ԽՍՀ բանվորներն ու գյուղացիները և ամբողջ Անդրֆեդերացիան[2]։

Հայաստանի բանվորներին, նրանց հաղթանակների տասնամյակի առթիվ ջերմ ողջույն հղեց Ֆրանսիայի կոմկուսի առաջնորդ Մ. Թորեզը։ Շնորհավորելով հայ ժողովրդի մեծագույն նվաճումները, ֆրանսիական պրոլետարիատի առաջնորդը հայտնում էր, որ ՖԿԿ կենտկոմը որոշել է Սովետական Հայաստանի նվաճումները լայնորեն պրոպագանդել Ֆրանսիայում ապրող հայ աշխատավորական զանգվածների շրջանում[3]։

Ավստրիայի պրոլետարիատի ներկայացուցիչները իրենց հայ բարեկամներին գրում էին. «Ձեր սոցիալիստական շինարարության յուրաքանչյուր աղյուսն ուժեղացնում է մեր հույսը, ամրացնում մեր դիմադրությունը մեր դասակարգային թշնամիների դեմ, խտացնում է մեր շարքերը, հեշտացնում է մեր պայքարը»[4]։

Սոցիալիստական շինարարության առաջին տասնամյակի նվաճումները օրինակ հիացմունքի աղբյուր էին հանդիսանում սովետական մարդկանց համար։

Ապրելով և գործելով տնտեսական բուռն շինարարության պայմաններում, նրանք խոր համոզմունքով բարձր գնահատեցին այն հաջողությունները, որոնք ձեռք էին բերվել տասը տարում։ Այդ մասին հայ ժողովրդի մեծանուն վիպասան Ալ. Շիրվանզադեն գրել է. «Տասը տարին մի երկրի կամ ազգի պատմության համար մի ակնթարթ է, բայց վայրկյաններ կան մարդկության կյանքում, որ դարերի իմաստն ու խորհրդավորությունն են կրում իրենց մեջ, լավագույն դարերի»[5]։

Հայաստանի բանվորների և գյուղացիների աշխատանքային սխրանքները ակադեմիկոս Ա. Թամանյանը համարում էր այն բոլորի գերազանցումը, որ «կարող էր նախատեսել համարձակ միտքը»։ Շիրակի ջրանցքը, գրում էր նա,

---

1 «Խորհրդային Հայաստան», 29 նոյեմբերի 1930 թ.։
2 Տե՛ս նույն տեղում։
3 Տե՛ս նույն տեղում։
4 Նույն տեղում։
5 Նույն տեղում։

մի գեղեցիկ գործ է, որը «կատարված է տեխնիկայի վերջին կատարելագործությամբ և հիացմունք է պատճառում յուրաքանչյուր այցելուի»[1]։

Շատ մտավորականներ, որոնք դեպքերի բերումով գտնվում էին իրենց հայրենիքից հեռու, այսուհանդերձ մնում էին իրենց ժողովրդի հետ։

Հայ ժողովրդի մեծանուն բանաստեղծ Ավ. Իսահակյանը Սովետական Հայաստանի տասնամյակի կապակցությամբ Փարիզից ուղարկած իր հոդվածում գրում էր, որ հայ ժողովուրդը իմպերիալիստների ու թուրք բռնակալների կողմից պատրաստած «գերեզմանից վեր ելավ... թեև արյունլվա ու վիրավոր, բայց նոր ուժով լցված, կանգնեց մեծ Միության կողքին և նրա հետ բռնեց ու բարձրացրեց աշխարհի վրա սոցիալիզմի դրոշը...

Այսօր, ձեր տոնին ամբողջ հոգովս ներկա եմ, ձեզ հետ, Հայաստանի աշխատավորներ։ Դուք, որ անչափելի զոհաբերությամբ, կենցաղային զրկանքներով, բայց անսասան կամքով շինում եք արդարության և աշխատանքի մեր հայրենիքը»[2]։

Մեծ էին Հայաստանի աշխատավորների տասնամյա նվաճումները կուլտուրայի և լուսավորության զարգացման բնագավառում։ Նախկին կարգերի ծանր ժառանգության՝ աշխատավորների անգրագիտության վերացման ուղղությամբ կատարված աշխատանքի արդյունքները, ընդհանուր պարտադիր ուսման ձեռնարկումները, կադրերի պատրաստման բարձրագույն և միջնակարգ ուսման ցանցի ստեղծումն ու ընդլայնումը, մասնագետների համախմբումն ու գիտա-հետազոտական աշխատանքների կազմակերպումը հանրապետությունում՝ շատ կարևոր գործոններ էին կուլտուրական հեղափոխությունը խթանելու համար։ Այդ նվաճումները կոմունիստական կուսակցության լենինյան ազգային քաղաքականության ակնառու արդյունքներ էին Հայաստանում։

Հայաստանի աշխատավորները 1930 թվականի վերջերից սկսեցին նախապատրաստվել իշխանության տեղական օրգանների՝ սովետների վերընտրություններին։ Քաղաքական կարևոր նշանակություն տալով սովետների ընտրական կամպանիային, կուսակցությունը խնդիր դրեց, որ ընտրությունները պետք է անցկացվեն երկրի էկոնոմիկայի բոլոր ճակատներում սոցիալիզմի ծավալուն հարձակման նշանաբանով։ Անհրաժեշտ էր էլ ավելի բարձրացնել սովետների դերը։ Իրենց գործնական աշխատանքով սովետները կարևոր դեր էին կատարում գյուղի սոցիալիստական վերակառուցումը հաջող իրականացնելու գործում։ Սովետները պետք է ավելի հաճախ և մոտիկից զբաղվեին ժողովրդական տնտեսության պլանների կատարման հարցերով, առավել ուշադրություն հատկացնեին արդյունաբերությունը և նորակառույցները աշխատուժով ապահովելու գործին, բանվորների նյութա-կենցաղային պայմանների բարելավմանը, նրանց կուլտուրական-տեխնիկական մակարդակի բարձրացմանը, սոցմրցության ծավալման և հարվածայինների շարժման ղեկավարությունը ուժեղացնելու հարցերին։

---

1 «Խորհրդային Հայաստան», 29 նոյեմբերի 1930 թ.։

2 Նույն տեղում։

Սովետների ընտրությունները նախապատրաստելու և անցկացնելու ուղղությամբ մեծ քաղաքական-մասսայական աշխատանք ծավալեցին Հայաստանի կուսակցական և կոմերիտական կազմակերպությունները։ Հանրապետության արհմիությունները գյուղ ուղարկեցին մեծ թվով ինդուստրիալ բանվորներ, որոնք ակտիվ մասնակցություն ունեցան սովետների ընտրությունների նախապատրաստման աշխատանքներին։

Սովետների ընտրական կամպանիան հիրավի դարձավ սոցիալիստական շինարարության նվաճումների ստուգատես, կարևոր միջոցներից մեկը՝ պետական ապարատը վերակառուցելու, նրա աշխատանքը բարելավելու գործում։

Ինչպես քաղաքներում, այնպես էլ գյուղական վայրերում սովետների հաշվետու-ընտրական ժողովներին ընտրողների մասնակցությունը զգալիորեն բարձր էր, քան 1929 թվականի ընտրությունների ժամանակ։ Այսպես, Երևանի քաղաքային սովետի ընտրություններին մասնակցեցին ընտրողների 69,5 տոկոսը, որը 24,6 տոկոսով ավելի էր, քան 1929 թվականի ընտրությունների ժամանակ։ Հանրապետության 13 գյուղական շրջաններում գումարված 552 հաշվետու ժողովներին մասնակցեց ընտրական իրավունք ունեցողների 51,5 տոկոսը։ Ընտրողների թվում կանայք կազմում էին 27,5 տոկոս, իսկ կոլտնտեսականները՝ 63,2 տոկոս։ Նույն շրջաններում կանանց համար հրավիրված 192 նախընտրական ժողովներին մասնակցած 16,5 հազար ընտրողներից 86,8 տոկոսը կանայք էին։

Տեղական սովետների ընտրությունները հաջողությամբ ավարտելուց հետո, ՀՍԽՀ Կենտգործկոմի որոշմամբ, 1931 թվականի փետրվարի 14-ին Երևանում գումարվեց Հայաստանի սովետների VII համագումարը։ Վճռական ձայնի իրավունքով համագումարին մասնակցում էին 476 պատգամավորներ, որոնց թվում 139 բանվորներ, 128 գյուղացիներ, 174 ծառայողներ, 32 կարմիրբանակայիններ և 3 ոնայնագործ արհեստավորներ։

Համագումարը քննարկեց Անդրֆեդերացիայի կառավարության զեկուցումը (զեկուցող՝ Ա. Փիրումյան), Հայաստանի կառավարության հաշվետվությունը (զեկուցող՝ Ս. Տեր-Գաբրիելյան), հանրապետության գյուղատնտեսության վերելքը և նրա սոցիալիստական վերակառուցման խնդիրները (զեկուցող՝ Ա. Գուլոյան), ընդհանուր պարտադիր ուսումը և անգրագիտության վերացումը (զեկուցող Ա. Եղիազարյան) և այլ հարցեր։

Արդյունաբերական մի շարք ձեռնարկությունների բանվորների, երկաթուղայինների և կոլտնտեսականների կողմից առանձնացված պատվիրակները համագումարին ներկայացրին զեկույց-պարտավորություններ։ Պատմելով իրենց նվաճումների մասին, նրանք հավաստիացնում էին, որ ջանքեր չեն խնայի իրագործելու հնգամյակը չորս տարում ավարտելու վերաբերյալ կուսակցության ընդունած ուղեգիծը և համագումարի կողմից նախանշվող առաջադրանքները։

Անդրֆեդերացիայի կառավարության ինֆորմացիոն զեկուցման մեջ իրենց արտացոլումը գտան երկրամասի ժողովրդական տնտեսության զարգացման հնգամյա պլանի առաջին երկու տարիների հաջողությունները։ Համագումարը միասնաբար հավանություն տվեց Անդրկովկասյան ֆեդերատիվ կառավարության գործունեությանը։

Հանրապետության ժողովրդական կոմիսարների խորհրդի նախագահ Ս. Տեր-Գաբրիելյանն իր հաշվետվության մեջ հանգամանորեն վերլուծեց հանրապետության ժողովրդական տնտեսության զարգացման ընթացքը, առանձնահատուկ տեղ տալով հնգամյա պլանի իրականացման ուղղությամբ ձեռք բերված հաջողությունների և թերությունների լուսաբանման խնդիրներին։ Զեկուցողը առանձնապես մատնանշեց արդյունաբերության առանձին բնագավառների (պղնձի, շինանյութերի արդյունաբերություն) թերացումները պլանային առաջադրանքների կատարման ուղղությամբ։

Համագումարը հանգամանորեն քննության առավ Հայաստանի գյուղատնտեսության դրությունը, նրա սոցիալիստական վերակառուցման ընթացքը, ինչպես նաև տարրական ընդհանուր պարտադիր ուսման և անգրագիտության վերացման խնդիրները։

Հայաստանի կառավարության հաշվետվության, ինչպես նաև մյուս զեկույցումների առթիվ համագումարն ընդունեց ծավալուն որոշումներ, որոնք դրվեցին հանրապետության կուսակցական, պետական, տնտեսական և բոլոր մյուս կազմակերպությունների առաջիկա գործունեության հիմքում։ Տալով հնգամյակի առաջին երկու տարիների պլանային առաջադրանքների կատարման հանրագումարը, համագումարը նոր միջոցառումներ նախագծեց հնգամյակի երրորդ տարվա համար։

Սովետների VII համագումարը որոշեց պետական ցենզային արդյունաբերության և մանր տնայնա-արհեստագործական արդյունաբերության համայնացված հատվածի 1931 թվականի արտադրանքի ընդհանուր չափը սահմանել 100,1 միլիոն ռուբլի, 1929—1930 տնտեսական տարվա 52,7 միլիոն ռուբլու դիմաց։ Արդյունաբերության ընդհանուր արտադրանքի մեջ ծանր արդյունաբերության ձեռնարկությունների գծով արտադրանքը պետք է հասներ 40 միլիոն ռուբլու, 1929—1930 տնտեսական տարվա 19,2 միլիոն ռուբլու դիմաց, իսկ թեթև արդյունաբերության պատկանող ձեռնարկությունների գծով՝ 65 միլիոն ռուբլու, 1929—30 տնտեսական տարվա 32 միլիոն ռուբլու դիմաց[1]։

Համագումարը կոնկրետ առաջադրանքներ ընդունեց գունավոր մետալուրգիայի, շինանյութերի արտադրության, տեքստիլ և արդյունաբերության մյուս ճյուղերի գծով։ Պղնձահանքի հանույթի, պղնձի ձուլման, բոլոր տեսակի շինանյութերի արտադրության ծրագրի կատարումը համագումարը համարեց արդյունաբերության աշխատողների առաջնահերթ խնդիրը։ Համագումարը հանձնարարեց կառավարությանը սահմանված ժամկետին ապահովել Զորագէսի, Երևանի 2-րդ հիդրոէլեկտրակայանի գործարկումը և Քանաքեռագէսի շինարարությունը։

Համագումարը նշեց, որ 1931 թվականի պլանի կատարման հիմնական աշխատանքների կենտրոնում պետք է գտնվի շինարարության մեջ ներդրված կապիտալ միջոցների «առավելագույն ակտիվացումը՝ արագացնելով, ավարտելով և շահագործման մեջ մտցնելով կառուցվող օբյեկտները»[2]։

---

1 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 112, գ. 814, թ. 4։

2 Նույն տեղում։

Պետական արդյունաբերության մեջ 1931 թվականին ներդրվելիք կապիտալ միջոցների չափը սահմանվեց 25 միլիոն ռուբլի, իսկ էլեկտրիֆիկացիայի հիմնական ներդրումները՝ 16 միլիոն ռուբլի, այդ թվում մինչև 14 միլիոն ռուբլի շրջանային կայանների և փոխանցման գծերի կառուցման համար[1]։ Համագումարը առաջադրանքներ ընդունելով աշխատանքի արտադրողականության աճի, արտադրանքի ինքնարժեքի իջեցման և որակի բարձրացման, աշխատուժի ճիշտ դասավորման, մեխանիզմների ինտենսիվ օգտագործման և այլ հարցերի մասին, առանձնակի սրությամբ դրեց արդյունաբերության արտադրանքի որակի բարձրացման հարցը։

Այսպիսով, հնգամյակի վճռական տարին ինչպես ամբողջ Միության, այնպես էլ Սովետական Հայաստանի համար հանդիսանում էր արդյունաբերությունը բարձր տեմպերով զարգացնելու, արդյունաբերական մի շարք կարևոր ձեռնարկությունների շինարարությունն ավարտելու, նոր գործարանների ու հիդրոէլեկտրակայանների կառուցման աշխատանքները հարվածային թափով առաջ մղելու և մի շարք ձեռնարկություններ գործարկելու տարի։

Այդ կարևորագույն խնդիրների իրականացումը պահանջում էր բանվոր դասակարգի լայն զանգվածների նախաձեռնության էլ ավելի մեծ ծավալում, սոցիալիստական մրցության բոլոր առաջավոր ձևերի լայն արմատավորում և հարվածայինների շարժման խորացում ու զարգացում։

Հանրագումարի բերելով գյուղատնտեսության բնագավառում ձեռք բերված հաջողություններն ու փոփոխությունները, հատկապես կոլտնտեսային շինարարության 1930 թվականի արդյունքները հանրապետությունում, սովետների VII համագումարը մատնանշեց այն փաստը, որ գյուղացիական լայն խավերի վճռական շրջադարձ է սկսվել դեպի սոցիալիզմը։

Գյուղատնտեսության կոլեկտիվացման գործում թույլ տրված աղավաղումների վերացման ուղղությամբ կուսակցության կիրառած միջոցառումների շնորհիվ ոչ միայն հիմնականում դադարել էր արտահոսքը կոլտնտեսություններից, այլև 1930 թվականի աշնանից նոր վերելք էր սկսվել կոլտնտեսային շարժման բնագավառում։ Կոլեկտիվ և սովետական տնտեսությունների շինարարության հնգամյա պլանի երկրորդ տարվա նախագծումները թե ամբողջ Միության մասշտաբով և թե Հայաստանում, 1930 թվականի երկրորդ կեսին արդեն գերակատարվել էին։

Կոլտնտեսային շինարարության բնագավառում զգալի հաջողություններ էին ձեռք բերվել Հայաստանում։ Սովետների VII համագումարի նախօրյակին՝ 1931 թվականի փետրվարի 1-ի տվյալներով, կոլտնտեսությունների թիվը հանրապետությունում արդեն հասնում էր 544-ի, որոնք ընդգրկում էին մոտ 23,4 հազար տնտեսություն, որը կազմում էր գյուղացիական տնտեսությունների 14 տոկոսը[2]։ Գյուղատնտեսության մեջ սոցիալիստական սեկտորի ուժեղացման մասին էր վկայում նաև սովետական տնտեսությունների շինարարության ծավալումը Հայաստանում։ 1930 թվականին դրանց թիվը հասել էր 25-ի, 1929 թվականի 14-ի դիմաց։ Նկատելի չափով ավելացել էր սովետական տնտեսու-

1 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 112, գ. 814, թ. 4։

2 Տե՛ս «Съезды Советов в документах. 1917—1937», М., 1964, հատ. 6, էջ 420։

թյունների տրամադրության տակ եղած հողային տարածությունը, որից 4,9 հազար հեկտարը զբաղեցրել էին տարբեր կուլտուրաների ցանքատարածությունները, որը մոտ 4,4 անգամ գերազանցում էր 1929 թվականի տարածության չափը։

Ամբողջ երկրում կոլտնտեսային շինարարության ծավալման, կոլտնտեսային կարգի ամրապնդման, սովետական տնտեսությունների և մեքենա-տրակտորային կայանների ցանցի ավելացման շնորհիվ 1930 թվականին ամուր բազա ստեղծվեց ապրանքային հացի պրոբլեմը գյուղի սոցիալիստական սեկտորի միջոցով լուծելու համար։ Եթե մինչ այդ սոցիալիստական հարաբերությունների հիմքը բացառապես սոցիալիստական արդյունաբերությունն էր, ապա կոլտնտեսային շարժման հաջողությունների շնորհիվ այն հենվում է նաև գյուղատնտեսության սոցիալիստական սեկտորի վրա։ «Այժմվանից ՍՍՀՄ կարևորագույն հացահատիկային շրջաններում,—ասված է XVI համագումարի որոշումներում,— գյուղը բաժանվում է երկու հիմնական մասերի՝ կոլտնտեսականների, որոնք ճանդիսանում են սովետական իշխանության իսկական և կայուն հենարանը, և ոչ կոլտնտեսական չքավորների ու միջակների», որոնք դեռևս կոլտնտեսության մեջ չէին, բայց կոլեկտիվ տնտեսության մասսայական փորձը շուտով նրանց համոզելու էր կոլեկտիվացման ուղին բռնելու անհրաժեշտության մեջ[1]։

1930 թվականի հացահատիկային ապրանքային արտադրանքի բնագավառում հանրայնացած սեկտորի բաժինը կազմեց ամբողջ ապրանքային արտադրանքի մոտ 50 տոկոսը՝ հնգամյակի վերջին տարվա համար ենթադրվող 43 տոկոսի դիմաց։ Այդ նշանակում էր, որ կոլտնտեսային գյուղացիությունն արդեն դարձել էր սովետական իշխանության հիմնական հենարանը գյուղում։

1930 թվականի դեկտեմբերի 1-ի տվյալներով Սովետական Միության աշխատավորական տնտեսությունների միայն 24,1 տոկոսն էր կոլտնտեսությունների մեջ, իսկ հիմնական հացահատիկային շրջաններում՝ 49,3 տոկոսը[2]։ Հետևաբար երկրի չքավոր և միջակ գյուղացիների գերակշռող մեծամասնությունը, մանավանդ ազգային հանրապետություններում, դեռևս միավորված չէր կոլտնտեսություններում, որից հետևում է, որ աշխատավոր մենատնտեսներին ցույց տրվող տնտեսական աջակցության խնդիրը չէր կարելի անտեսել և որ այդ հարցի թերագնահատման անգամ փոքրիկ երևույթի դեմ մղվող պայքարը նրբեք չպետք է թուլացվեր։

Համկ(բ)կ XVI համագումարում նշվեց, որ երկրի մի շարք շրջաններում անհատական տնտեսությունը դեռևս երկար ժամանակ գոյություն կունենա, ուստի այն չպետք է անտեսվի։ Համագումարի այդ ցուցումից ելնելով Հայաստանի կոմունիստական կուսակցությունն անհրաժեշտ հետևության հանգեց։ Անհատական աշխատավորական տնտեսությունների կոոպերացումը, սովետներում չքավորության ինքնուրույն կազմակերպումը և այլն, նշանակալից դեր պետք է կատարեին առաջիկայում՝ նրանց կոլտնտեսությունների մեջ համախմբելու ուղղությամբ։ Հայաստանի կուսակցական և սովետական մարմինները

1 Տե՛ս «ՍՄԿՊ-ն... բանաձևերում ու որոշումներում», մասն III, էջ 62։

2 Տե՛ս նույն տեղում, էջ 94։

միջոցառումներ ձեռնարկեցին գյուղատնտեսական արտադրական և վաճառահանման կոոպերատիվ ընկերությունների աշխատանքը վերականգնելու և բարելավելու ուղղությամբ։ Կարճ ժամանակամիջոցում կարգավորվեց աշխատավորների կոոպերացման, նրանց վարկավորման և մեքենամատակարարման գործը։ 1931 թվականի հունվարի սկզբի տվյալներով գյուղատնտեսական կոոպերատիվ ընկերությունների թիվը հանրապետությունում հասնում էր 424-ի, որոնք միավորում էին ավելի քան 62 հազար գյուղացիական տնտեսություն։ Կառավարությունը գյուղկոոպերացիայի միջոցով չքավոր և միջակ տնտեսություններին օգնում էր վարկով, գյուղատնտեսական մեքենաներով, գործիքներով, ագրոմիջոցներով և այլն։ 1930 թվականին մեքենամատակարարման ներդրումների գումարը հասցվեց 1380 հազար ռուբլու, 1929 թվականի 500 հազար ռուբլու դիմաց։ Հնգամյակի երրորդ տարում հանրապետության գյուղատնտեսությունը, բացի տրակտորային պարկի նկատելի ավելացումից, ստացավ զգալի քանակությամբ գյուղատնտեսական այլ մեքենաներ և գործիքներ, որոնց մեծ մասը տրվեց աշխատավոր մենատնտեսների օգտագործման։

Հայաստանի սովետների VII համագումարում գյուղատնտեսության վերելքին և նրա սոցիալիստական վերակառուցման խնդրին նվիրված զեկուցման մեջ, ինչպես նաև ընդունած որոշումներում արտացոլվում էր այն մեծ հոգատարությունը, որ միշտ ցուցաբերել ու ցուցաբերում էին կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը դեպի ժողովրդական տնտեսության գլխավոր բնագավառներից մեկի՝ գյուղատնտեսության զարգացման պրոբլեմը։ Համագումարը ծավալուն միջոցառումներ մշակեց աշխատավորական տնտեսություններին ցույց տրվող նյութական ու ֆինանսական օգնության, ջրաշինարարության, հողաշինարարության, ցանքատարածությունների պլանավորման, մեքենամատակարարման, անասնաբուծության զարգացման և մյուս խնդիրների ուղղությամբ։

Նշելով սովետական պետության կողմից աշխատավոր գյուղացիներին, կոլհակտիվ և սովետական տնտեսություններին ցույց տրվող լայն աջակցության տարեցտարի աճման փաստը, գյուղատնտեսության մեքենայացման հետզհետե ուժեղացող տեմպերի առկայությունը, համագումարը ընդգծեց, որ այդ բոլորը հնարավորություն են ընձեռում հանրապետության գյուղացիական տնտեսությունների կոլեկտիվացման մակարդակը 1931 թվականին հասցնել 25 տոկոսի, իսկ բամբակագործական հիմնական շրջաններում մինչև 50 տոկոսի։ Նախատեսվեց 1931 թվականին կոլտնտեսային սեկտորի ցանքատարածությունը հասցնել հանրապետության ընդհանուր ցանքատարածության 25—26 տոկոսից ոչ պակաս, այդ թվում բամբակինը մինչև 60 և ծխախոտինը՝ 35 տոկոսի։ Համագումարը խնդիր դրեց ընդլայնել տեխնիկական կուլտուրաների ցանքատարածությունը, հատուկ միջոցառումներ կենսագործել հացահատիկային կուլտուրաների բերքատվությունը առավելագույն չափով բարձրացնելու համար։

Խոշոր նշանակություն էր ստանում գյուղատնտեսության մեքենայացման հարցը, որը արտադրությունը բարձրացնելու կարևորագույն ուղիներից էր։ Խնդիրը ամենից առաջ այն էր, որպեսզի համեմատաբար կարճ ժամանակամիջոցում գյուղատնտեսական արտադրության բնագավառից վերացվեին տնտեսությունը վարելու միջնադարյան պրիմիտիվ եղանակներն ու արտադրության

գործիքները, դրանք փոխարինելով արտադրության մեքենայացված գործիքներով ու ագրոգիտական ձևերի ներմուծումներով։ Այդ նպատակներից ելնելով Հայաստանի սովետների VII համագումարը առանձնապես մատնանշեց, որ գյուղացիական տնտեսություններում հետզհետե արորը պետք է փոխարինել դութանով և «առավելագույն չափով պետք է օգտագործվեն մեքենայացված գործիքները»[1]։

Հայաստանի սովետների VII համագումարը իր որոշումներում պատշաճ տեղ հատկացրեց կուլտուրական շինարարության հարցերին։ Սոցիալիստական շինարարության խնդիրների հաջող իրականացումը թելադրում էր բարձրացնել աշխատավորության լայն զանգվածների կուլտուրական մակարդակը։ Երկրի հարաճուն ինդուստրացումը, արդյունաբերության, գյուղատնտեսության և տրանսպորտի տեխնիկական վերասարքավորումը պահանջում էին տեխնիկապես պատրաստված կադրեր։ Դրանից ելնելով համագումարը անհրաժեշտ համարեց արմատապես բարելավել ժողովրդական լուսավորության գործը, անցնել ընդհանուր յոթնամյա կրթության սիստեմի իրականացմանը, լայն թափ հաղորդել բարձրորակ կադրերի պատրաստման գործին, զգալիորեն վերացնել աշխատավորների մեջ դեռևս գոյություն ունեցող անգրագիտությունը և կիսագրագիտությունը։

Համագումարը ընտրեց Կենտգործկոմի կազմ, որի մեջ մտան 236 անդամ և 91 անդամության թեկնածու։ ԿԳԿ անդամների թվում ընտրվեցին 23, իսկ անդամության թեկնածուների կազմում՝ 7 արտադրության մեջ անմիջապես աշխատող բանվորներ, 33 գյուղացիներ, որոնցից՝ անդամների թվում 19 կոլտնտեսականներ և 6 մենատնտես աշխատավորներ, իսկ անդամության թեկնածուների կազմում՝ 5 կոլտնտեսականներ և 3 ոչ կոլտնտեսականներ։

Հանրապետության Կենտգործկոմի VII գումարման առաջին սեսիան ընտրեց ԿԳԿ նախագահություն՝ բաղկացած 15 անդամից և 5 թեկնածուից։ ԿԳԿ նախագահության նախագահ ընտրվեց Ա. Ականյանը, քարտուղար՝ Ռ. Դաշտոյանը։ Նախագահության անդամների թվում ընտրվեցին նաև Ա. Գալոյանը, Կ. Այվազյանը, Ա. Երզնկյանը, Ա. Խանջյանը, Ս. Խանոյանը և ուրիշներ։ Սեսիան հաստատեց կառավարության կազմը։ Ժողկոմսովետի նախագահ հաստատվեց Ս. Տեր-Գաբրիելյանը, առաջին տեղակալ՝ Ա. Երզնկյանը, երկրորդ տեղակալ՝ Սուսաննա Շահվերդյանը։

Հնգամյակի երրորդ տարում կուսակցության, բանվոր դասակարգի, հանրապետության բոլոր աշխատավորների առջև խոշորագույն խնդիրներ էին դրված։ 1931 թվականը վճռական տարի էր հնգամյակի հսկայական ծրագիրը չորս տարում ավարտելու գործում, որը շատ մեծ եռանդ ու աշխատանք էր պահանջում նախագծված ծրագիրը իր բոլոր քանակական ու որակական ցուցանիշներով անպայման կատարելու և գերակատարելու համար։

ՀԿ(բ)Կ Կենտկոմը և Հանրապետության կառավարությունը 1931 թվականի ժողովրդա-տնտեսական արտադրական և ֆինանսական պլանների կատարումն ապահովելու համար մեծ աշխատանք ծավալեցին։ Կենտկոմը բազմիցս ղեկավարեց արդյունաբերության հետ մնացող ճյուղերի (գունավոր մետալուրգիա,

---

1 ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 112, դ. 814։

շինանյութերի, տեքստիլ ձեռնարկություններ և այլն), նորակառույցների շինարարության, բանվորական ուժի հավաքագրման ու որակավորման, առողջության

Սոցիալիստական մրցության առաջավոր ձևերի և աշխատանքի հարվածային մեթոդների արմատավորման շնորհիվ մի շարք ձեռնարկություններ և շինարարական օբյեկտներ 1931 թվականի առաջին կեսին իրենց արտադրա-ֆինանսական առաջադրանքների կատարման ուղղությամբ հասել էին զգալի հաջողությունների։ Սակայն դրանց կողքին կային արդյունաբերական կարևոր բնագավառներ (տեքստիլ, Հայպղինձ և այլն), որտեղ պլանների կատարման գործում ի հայտ էին եկել էական թերություններ, որն ամենից առաջ բացատրվում էր նրանով, որ այդ ձեռնարկությունների ղեկավարները, կուսակցական ու արհմիութենական կազմակերպությունները անկարողություն էին դրսևորել բանվորների արտադրական խանդավառությունը գլխավորելու, աշխատանքը կազմակերպելու, արտադրության մեջ աշխատուժը ճիշտ ու նպատակասլաց դասավորելու գործում։ Բանվորական ուժի հոսունության, արտադրության մեջ տեղ գտած դիմազրկության, աշխատավարձի «ձախ» հավասարեցման երևույթների առկայությունը լուրջ արգելքներ էին ստեղծում արտադրական պլանների կատարման գործում բանվորների նախաձեռնությունը լայնորեն ծավալելու համար։

Անընդհատ զարգացող արդյունաբերությունը, տրանսպորտը, լայն ծավալ ընդունած նոր կառուցվող ձեռնարկությունների, հիդրոէլեկտրակայանների, քաղաքային և կոմունալ շինարարությունը բանվորական ուժի մեծ պահանջ էր առաջադրում։ Այդ բոլորի շնորհիվ գործազրկությունը 1931 թվականի սկզբներին արդեն վերացել էր։ Ավելին, բանվորական ուժի պահանջը գնալով մեծանում էր։ Հատկապես լուրջ դժվարություններ էր ստեղծում որակյալ բանվորական ուժի պակասը։ Այդ խնդրի լուծումը հնգամյա պլանը կենսագործելու անհրաժեշտ պայմաններից մեկն էր, որը լուրջ և հետևողական ջանքեր էր պահանջում՝ մի կողմից հետզհետե մեծացող բանվորական ուժի պակասը համալրելու, մյուս կողմից՝ արդյունաբերության կադրերի որակավորման գործը կազմակերպելու ուղղությամբ։

Ելնելով դրանից Հայաստանի կոմկուսի VII համագումարն իր որոշումներում նշեց, որ Կենտկոմը և կուսակցական կազմակերպությունները պետք է հետևողականորեն պայքար ծավալեն որակյալ կադրերի պակասը լրացնելու համար[1]։

Հանրապետության կառավարության և կուսակցության Կենտկոմի մշակած միջոցառումները՝ աշխատուժի պահանջը բավարարելու, արտադրության մեջ ղբաղված բանվորների որակը բարձրացնելու և նոր որակյալ աշխատուժ պատրաստելու վերաբերյալ՝ գործնական մեծ նշանակություն ունեցան։

Առանձնապես հիշատակության արժանի է այն լուրջ աշխատանքը, որ կատարում էին Հայաստանի լենինյան կոմերիտմիության Կենտկոմը և նրա տեղական կազմակերպությունները՝ թե արտադրության մեջ ընդգրկված երիտասարդության տեխնիկական որակավորումը բարձրացնելու և թե երիտասարդներից բանվորական նոր կադրեր պատրաստելու բնագավառներում։ Ինչպես ամբողջ Միությունում, այնպես էլ Հայաստանում, կոմերիտմիությունը նա-

1 Տե՛ս «ՀԿ(բ)Կ VII համագումարի որոշումները», Երևան, 1930 թ.։

խաձեռնեց ֆաբրիկա-գործարանային ուսուցման ու երիտասարդության տեխնիկական ուսուցման մյուս ձևերի կազմակերպումը և զարգացումը։

Սոցիալիստական շինարարությունը պահանջում էր նոր տիպի մասնագետների հսկայական բանակ, սակայն նրանց պատրաստման տեմպը չէր համապատասխանում ինդուստրացման և գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման տեմպերին։ Մասնագետների պահանջի ու նրանց պատրաստման միջև առաջացած խզումը կարող էր լուրջ արգելք հանդիսանալ սոցիալիստական տնտեսության հետագա հաջող զարգացման համար։

Ժողովրդական տնտեսության կողմից ներկայացվող բարձր և միջին որակի մասնագիտական կադրերի պահանջը բավարարելու անհրաժեշտությունից ելնելով, հարկ եղավ վերակառուցել պետական համալսարանը, ստեղծել առանձին ճյուղային ինստիտուտներ, կազմակերպել մի շարք միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններ։

Հայաստանի բանվոր դասակարգը, բոլոր աշխատավորները հնգամյակի ավարտական տարին թևակոխեցին ժողովրդական տնտեսության զարգացման բնագավառում ձեռք բերած կարևոր հաջողություններով։ Հանրապետության նվաճումների հանրագումարը և առաջիկա խնդիրները բազմակողմանի արտացոլում գտան 1932 թվականի հունվարին տեղի ունեցած Հայաստանի կոմունիստական կուսակցության VIII համագումարին ՀԿ(բ)Կ կենտկոմի տված հաշվետվության մեջ (զեկուցող՝ Ա. Խանջյան)։ Համագումարը քննության առավ նաև հանրապետության անասնապահության զարգացման ու նրա սոցիալիստական վերակառուցման խնդիրը (զեկուցող՝ Ա. Գուլոյան), որը տնտեսական կարևոր նշանակություն ուներ։

Համագումարը արձանագրեց, որ Հայաստանի աշխատավորների, առաջին հերթին նրանց ավանգարդը հանդիսացող բանվոր դասակարգի դրսևորած ջանքերի շնորհիվ, հնգամյակի վճռական տարում սոցիալիզմի տնտեսական հիմքի կառուցման ուղղությամբ նոր, ավելի մեծ առաջընթաց էր կատարվել, որը նշանավորվել էր սոցիալիստական ինդուստրիայի բուռն աճով, արդյունաբերական նոր ճյուղերի, ձեռնարկությունների և կենտրոնների ստեղծմամբ, բանվորական զանգվածների արտադրական խանդավառության հզոր վերելքով։ 1931 թվականին շարունակվեց այնպիսի կարևոր ձեռնարկությունների կառուցումը, ինչպիսիք էին Զորագէսը, Քանաքեռգէսը, Կիրովականի քիմիական կոմբինատը, Արարատի ցեմենտի գործարանը և այլն։ Հայաստանի ժողովրդական տնտեսության ամբողջ արտադրանքի ծավալը 1930 թվականի համեմատությամբ 1931 թվականին ավելացավ 16,1 տոկոսով, իսկ արդյունաբերության արտադրանքը՝ 47,4 տոկոսով։ Դրա շնորհիվ ամբողջ ժողովրդական տնտեսության արտադրանքի ծավալի մեջ արդյունաբերության արտադրանքի տեսակարար կշիռը 1930 թվականի 33,3 տոկոսից 1931 թվականին բարձրացավ 42,4 տոկոսի։

Զգալի չափով բարձրացավ էլեկտրաէներգիայի արտադրությունը, որի տարեկան աճը կազմեց 24,4 տոկոս։

Ինդուստրացման բազայի վրա զարգացող արդյունաբերությունը և ծավալվող նորակառույցների շինարարությունը պայմանավորեցին Հայաստանի բանվոր դասակարգի քանակական աճը և նրա շարքերի որակական փոփոխու-

թյունները։ 1930 թվականի համեմատությամբ 1931 թվականին բանվորների թիվը արդյունաբերության մեջ ավելացավ 45 տոկոսով, իսկ շինարարության բնագավառում 15,4 տոկոսով[1]։

Հաջողությունների հետ միասին համագումարը նշեց, որ որոշ ձեռնարկություններ թույլ են տվել պլանային առաջադրանքների քանակական և որակական թերակատարումներ։

Հնգամյակի վճռական տարում գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման բնագավառում տեղի ունեցած տեղաշարժերը գլխավորապես արտահայտվեցին գյուղի սոցիալիստական սեկտորի ամրապնդման գծով։ Ջնայած դեռևս գոյություն ունեին շատ դժվարություններ ու խոչընդոտներ, որոնք զգալի չափով պայմանավորված էին գյուղացիության հարցում թույլ տված սխալներով, այնուամենայնիվ կոլտնտեսային շինարարության բնագավառում նկատելի առաջընթաց կատարվեց։ Բավական է մատնանշել, որ 1931 թվականի հուլիսի 1-ի տվյալներով հանրապետությունում կոլտնտեսությունների թիվը հասել էր 724-ի, որոնք միավորում էին 40,6 հազար տնտեսություն, կամ գյուղացիական տնտեսությունների 21,6 տոկոսը։

Տնտեսապես զգալի չափով ամրապնդվեցին սովխոզները, նրանց քանակը հասնում էր 45-ի։ 1931 թվականին նկատելիորեն ուժեղացավ գյուղի սոցիալիստական հատվածի տեխնիկական բազան, բարձրացավ աշխատանքի մեքենայացման մակարդակը։ Կոլտնտեսությունների սեփական տրակտորային պարկը հաշվում էր մինչև 196 տրակտոր։ 1931 թվականին արդեն գործում էր չորս մեքենատրակտորային կայան, որոնք ունեին 168 տրակտոր, 2274 ձիու ուժ ընդհանուր կարողությամբ և զգալի չափի հասնող գյուղատնտեսական այլ մեքենաների պարկ։ ՄՏԿ-ները սպասարկում էին 153 կոլտնտեսություն։

Հայաստանի կուսակցական կազմակերպությունները պայքարում էին կոլտնտեսային սեկտորի արտադրությունը կազմակերպական բարձր հիմքերի վրա դնելու, աշխատանքը ճիշտ կազմակերպելու, կադրերի պատրաստման գործը բարելավելու, արտադրության մեջ բարձր ցուցանիշներ ապահովելու համար։

3. ԱՌԱՋԻՆ ՀՆԳԱՄՅԱ ՊԼԱՆԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ։ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՎԱՐՏԸ

Սովետական աշխատավորությունը հաջողությամբ կատարելով հնգամյակի առաջին երեք տարիների ծրագրային առաջադրանքները, ձեռնամուխ եղավ հնգամյակի չորրորդ տարվա՝ 1932 թվականի տնտեսական և կուլտուրական շինարարության խնդիրների կենսագործմանը։ Համ(բ)Կ XVII կոնֆերանսը (1932 թվականի հունվար-փետրվար) ամփոփելով 1931 թվականին արդյունաբերության բնագավառում ձեռք բերված հաջողությունները, նշեց, որ դրանք հնարավորություն են տալիս 1932 թվականի համար նախագծել նոր, առավել կարևոր առաջադրանքներ և ապահովել դրանց հաջող կենսագործումը։

---

1 Տե՛ս Հ(բ)Կ VIII համագումարի բանաձևերը», Երևան, 1932, էջ 5։

1932 թվականի ամբողջ ժողովրդական տնտեսության պլանի հիմնական խնդիրը կոնֆերանսը համարեց սև մետալուրգիայի, ածխի և մեքենաշինության արտադրական ու շինարարական ծրագրի կատարումը։ Հնգամյակի վերջին տարվա առաջադրանքներում կարևոր տեղ հատկացվեց նաև էներգետիկ բազայի հետագա ընդլայնման, որպես արդյունաբերության առաջատար ճյուղերի արագ զարգացումն ապահովելու կարևոր միջոցի, գունավոր մետալուրգիայի և քիմիական արդյունաբերության հետագա լայն զարգացման, թեթև ու սննդի արդյունաբերության արտադրանքի առավել բարձր աճի ապահովման հարցերին[1]։

Հայաստանի սոցիալիստական շինարարության 1932 թվականի առաջադրանքներում ՀԿ(բ)Կ VIII համագումարը և ՀՍԽՀ Կենտգործկոմի 2-րդ նստաշրջանը նախագծեցին հանրապետության համար չափազանց մեծ կարևորություն ներկայացնող խնդիրներ, որոնց իրականացումը պահանջում էր ուժերի մեծ լարում և միջոցների ավելի լայն մոբիլիզացում։ Այդ կարևոր էր ամենից առաջ նրանով, որ 1932 թվականին նախատեսվում էր ավարտել հնգամյա պլանի կենսագործումը, երկրորդ՝ որ այդ տարվա ընթացքում ինչպես Միությունում, այնպես էլ Հայաստանում գործող ձեռնարկությունների շարքն էին անցնելու ժողովրդական տնտեսության համար մեծ կարևորություն ներկայացնող մի շարք արդյունաբերական ձեռնարկություններ, հիմք էր դրվելու էլ ավելի մեծ նշանակություն ունեցող նոր գործարանների շինարարությանը։ Հնգամյակի վերջին տարում առաջնակարգ նշանակություն էր ստանում կառուցվող արդյունաբերական օբյեկտների և էլեկտրակայանների շինարարության տեմպերի արագացումը։ Այդ իսկ նկատառումով անհրաժեշտ համարվեց հիմնական կապիտալ հատկացումներն ու շինարարական մյուս կարգի միջոցները կենտրոնացնել առավել կարևորություն ներկայացնող կառույցներում։ Ընդ որում, խնդիր դրվեց 1932 թվականին անպայման ավարտել և շահագործման հանձնել Ղարաքիլիսայի քիմիական և Դավալուի ցեմենտի գործարանները, Ջորագէսի և Երևանի հիդրոէլեկտրակայանները, արագացնել Քանաքեռի հիդրոկայանի կառուցման աշխատանքները։

Պլանավորվեց 1932 թվականին սկսել Ալավերդու պղնձաձուլական գործարանի, Ղափանի հարստացուցիչ ֆաբրիկայի, Օխչի գետի վրա կառուցվող Ղափանի էլեկտրակայանի շինարարությունը։

Որագրվեց հնգամյակի վերջին տարում ապահովել հինգ հազար տոննա պղնձի արտադրությունը, որն իրագործելու համար սկսել Ղափանի և Ալավերդու պղնձահանքերի վերակառուցման ու վերասարքավորման աշխատանքները։ Պղնձի և բազմամետաղների պաշարները ճշգրտելու և նոր հանքավայրեր հայտնաբերելու նպատակով լայն ծավալ էին ստանալու լեռնահետախուզական աշխատանքները։

1932 թվականի պլանային առաջադրանքներում պատշաճ տեղ հատկացվեց գյուղական էլեկտրակայանների շինարարությանը։ Առանձնապես կարևոր

---

1 Տե՛ս «ՍՄԿՊ-ն... բանաձևերում ու որոշումներում», մասն III, էջ 174—178։

էր Մեղրու, Դիլիջանի և Իջևանի հիդրոէլեկտրակայանների ավարտումը, Շաքիի և Յանղի էլեկտրակայանների կառուցման աշխատանքների ծավալումը։ Թեթև արդյունաբերության զարգացման գծով խնդիր դրվեց լայնացնել Լենինականի տեքստիլ ֆաբրիկան, հասցնել այն նրա նախագծային հզորությանը, արագացնել մսի կոմբինատի կառուցումը և այլն։

1932 թվականի համար կարևոր միջոցառումներ նախատեսվեցին գյուղատնտեսության սոցիալիստական շինարարության բնագավառում։ Կոլտնտեսությունների տնտեսական, կազմակերպական և քաղաքական ամրապնդման հարցերը, որպես առաջնահերթ խնդիրներ, շարունակում էին տակավին մնալ օրակարգում։

Գյուղատնտեսության սոցիալիստական հատվածում վճռականը նրա արտադրության բարձրացման, նրա կազմակերպման խնդիրն էր։ Աշխատանքի ճիշտ կազմակերպումը, արտադրության աշխատատար բնագավառների մեքենայացման ուժեղացումը, գործավարձի կիրառումը, սոցիալիստական մրցության բոլոր ձևերի լայն արմատավորումը արտադրության բոլոր ճյուղերում այն կարևոր լծակներն էին, որոնք պետք է խթանեին աշխատանքի արտադրողականության բարձրացումը։

1932 թվականի հանդիպական պլանի, հարվածայինների շարժման և սոցիալիստական մրցման հիմնական, որոշիչ խնդիրը յուրաքանչյուր ձեռնարկության, նորակառույցի համար պետք է լիներ՝ հասնել այնպիսի վիճակի, որպեսզի «ավյալ նյութական միջոցներով, ավելի մեծ խնայողության, արտադրական ճնարավորությունների ավելի լավ օգտագործման, ուժերի ավելի լավ մոբիլիզացման և ավելի լավ գործնական ղեկավարման հիման վրա ավելի շատ և ավելի լավ որակի արտադրանք տալ երկրին»[1]։ Ահա այս կարևոր դիրեկտիվը դրվեց կուսակցության ու բանվոր դասակարգի ամենօրյա աշխատանքի հիմքում և հանդիսացավ հնգամյակի կատարման համար մղվող պայքարի հիմնական ուղեցույց։

Սոցիալիստական մրցությունը և հարվածայինների շարժումը հանրապետությունում էլ ավելի մեծ ծավալ ընդունեց, իր մեջ ընդգրկելով յուրաքանչյուր բրիգադ, ցեխ, տեղամաս, ձեռնարկություն, նորակառույց, սովետական և կոլեկտիվ տնտեսություն։ Արտադրության առաջավորների աշխատանքի փորձը, մրցության բարձր ձևերն արմատավորվում էին տնտեսության բոլոր բնագավառներում։ Արտադրության տեխնիկային տիրապետելու, տեխնիկան ավելի ռացիոնալ օգտագործելու և ավելի շատ արտադրանք տալու կուսակցության կոչը համախմբել էր մասսաներին։

Երևանի Ֆ. Ձերժինսկու անվան մեխանիկական գործարանի հայտնի խառատ Հ. Դիլանյանը հանրապետության արդյունաբերության աչքի ընկնող առաջավորներից էր։ Նա իր գիտելիքներով և աշխատանքի փորձով դաստիարակել էր տասնյակ երիտասարդների։ Նրա օրինակով շատերը դարձան արտադրության առաջավորներ։ Իրենց հարվածային, օրինակելի աշխատանքով աչքի էին ընկնում նաև խառատ Ա. Մատինյանը, փականագործներ Մ. Հովհաննիսյանը և Գ. Մարտիրոսյանը, հղկող Մ. Մելքոնյանը և շատ ուրիշներ։

---

1 «ՍՄԿԿ-ն... բանաձևերում ու որոշումներում», մասն III, էջ 184։

«Արարատ» գործարանի սպիրտի թորման ցեխի անվանի մեքենավար Հ. Հարությունյանը, ծխախոտի գործարանի բարձրորակ վարպետ Հ. Երզնկյանը, պոլիգրաֆ արդյունաբերության հնագույն աշխատող գրաշար Կ. Եղիկյանը, հանրապետության գործարանների ու ֆաբրիկաների հարյուրավոր որակյալ, երկարամյա աշխատանքի փորձ ունեցող բանվորներ Սովետական Հայաստանի բանվոր դասակարգի առաջամարտիկներ էին։

Հայաստանի բանվոր դասակարգը հիմնականում կազմավորվել և հզորացել էր ի հաշիվ տեղի կադրերի։ Սակայն նրա շարքերում քիչ չէին նաև մեր երկրի եղբայրական մյուս ժողովուրդների զավակները։

Շինարարների կատարյալ ինտերնացիոնալ կոլեկտիվներ էին Զորագէսի, Քանաքեռագէսի, Դավալուի ցեմենտի, Ղարաքիլիսայի քիմիական, Երևանի սինթետիկ կաուչուկի կոմբինատների շինարարները, Ալավերդու և Ղափանի պղնձագործները։ Եղբայրական ժողովուրդների շատ զավակներ աշխատում էին նաև հանրապետության մյուս ձեռնարկություններում։ Զորագէսի և Քանաքեռագէսի թունելագործներ Հ. Գրիգորյանի, Ե. Սարգսյանի, Ա. Հայրապետյանի և մյուսների կողքին Հայաստանի էլեկտրիֆիկացիայի խոշորագույն առաջնեկների կառուցմանը մասնակցում էին ռուս և ուկրաինական ժողովուրդների զավակներ Ի. Լուկյանովը, Մ. Կոլեսնիկովը, Ա. Ֆեոդորովը, Գ. Կալուժնին, Մ. Լավրովը և շատ ուրիշներ։ Քանաքեռագէսի շինարարության թունելագործ Ի. Տրուշինը, որպես հարվածային և առաջավոր թունելագործ, պարգևատրվեց Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով։ Իր անբասիր աշխատանքի շնորհիվ նա ընտրվեց շինարարների կուսակցական կազմակերպության քարտուղար։ Թունելագործ Հ. Գրիգորյանի բրիգադը Քանաքեռագէսի շինարարության մեջ մրցում էր Սերգոբինցևի և Կորնևի բրիգադների հետ։

Հանրապետության արդյունաբերության առաջավորները ոչ միայն ջանք չէին խնայում իրենց արտադրության բնագավառում պատվով կենսագործելու կառավարության և կուսակցության դիրեկտիվները, այլև պետական ու հասարակական աշխատանքներում բանվորական ուժի հավաքագրման ու նրանց որակավորման գործում օգնում էին համապատասխան հիմնարկներին և կազմակերպություններին։

Քանաքեռագէսի շինարարության հարվածային բանվորները և ինժեներատեխնիկական աշխատողները 1932 թվականի հոկտեմբերի 10-ին դիմում հղեցին հանրապետության մի շարք շրջանների կուսակցական ու սովետական կազմակերպություններին, կոլտնտեսություններին և կոլտնտեսականներին՝ բանվորական ուժով օգնելու Հայաստանի արդյունաբերության զարգացման համար հսկայական կարևորություն ներկայացնող Քանաքեռագէսի կառուցումն արագ ավարտելու և այն գործարկելու համար։

1932 թվականի հոկտեմբերի 14-ին «Խորհրդային Հայաստան» թերթը տպագրեց Ղարաքիլիսայի քիմիական կոմբինատի շինարարության և գործող ցեխերի բանվորների ու մասնագետների դիմումը ուղղված հանրապետության բանվորներին, կոլտնտեսականներին, աշխատավոր մենատնտեսներին ու Զորագէսի շինարարներին՝ ապահովել քիմշինը շինարարներով, էներգիայով և ցույց տալ այլ կարգի աշակցություն, որպեսզի մինչև 1933 թվականի մայիսի 1-ը կոմբինատը լրիվ հանձնվի շահագործման։ Նրանք նշում էին, որ Ղարաքիլի-

սալի անտառի եզրին ծնունդ է առել հանրապետության քիմիական արդյունաբերության խոշոր առաջնեկը, որի կորպուսներն ու ցեխերը մեկը մյուսի ետևից ավարտվում են բանվորների անընկճելի աշխատանքի ու խանդավառության շնորհիվ և որ իրենց հետ ունենալով Մոսկվայի, Ռոստովի ու այլ տեղերի պրոլետարիատի որակյալ ուժեր՝ առաջ են տանում կոմբինատի սարքավորման գործը։

Երկրի տեխնիկա-տնտեսական հետամնացությունը վերացնելու և սեփական ինդուստրիալ բազա ստեղծելու համար պահանջվում էր հսկայական չափերի հասնող կապիտալ ներդրումներ։ Ահա թե ինչու Հայաստանի ժողովրդական տնտեսության մեջ հնգամյակում նախատեսված 276,8 միլիոն ռուբլու դիմաց փաստացի կապիտալ ներդրումը կազմեց 312,3 միլիոն ռուբլի։ Ընդ որում ներդրումների հիմնական բաժինը հատկացվեց արդյունաբերության, էներգետիկայի և գյուղատնտեսության զարգացման նպատակներին։

Առաջին հնգամյակում հանրապետության ամբողջ ժողովրդական տնտեսության մեջ ընդհանուր կապիտալ ներդրումը ավելի քան 4 անգամ գերազանցեց սովետական իշխանության գոյության ընթացքում, ներառյալ 1927—28 տնտեսական տարում, ներդրված գումարի չափը։ Այդ ներդրումներով էլ պայմանավորվեց ժողովրդական տնտեսության զարգացման այն ծավալը, որ տեղի ունեցավ հնգամյակում։

Բացի այն, որ առաջին հնգամյակի տարիներին հանրապետությունում շահագործման հանձնվեցին մի շարք նոր ձեռնարկություններ, կառուցման պրոցեսում էին գտնվում նաև զգալի թվով արդյունաբերական օբյեկտներ։ Շահագործման հանձնված նորակառույցների թվումն էին Զորագէսը, Երևանի երկրորդ ավտոմատ էլեկտրակայանը, Լենինականի հիդրոկայանի երկրորդ հերթը, Երևանի Զերժինսկու անվան մեխանիկական (հետագայում մեքենաշինական), ֆերմենտացիոն գործարանները, կարի նոր ֆաբրիկաները Երևանում և Լենինականում, Մինջևան-Ղափան երկաթուղին, Ղարաքիլիսայի կղմինդրի և աղյուսի գործարանը, Դիլիջանի, Ստեփանավանի էլեկտրակայանները և այլն։ Արագ տեմպերով կառուցվում և ավարտին էին մոտենում Քանաքեռի խոշոր հիդրոկայանի, Ղարաքիլիսայի քիմիական կոմբինատի, Դավալուի ցեմենտի գործարանի, Երևանի ծխախոտի ֆաբրիկայի, Հոկտեմբերյանի բամբակազտիչ գործարանի, Երևանի տրամվայի և մի շարք այլ ձեռնարկությունների շինարարությունը։

Հնգամյակի տարիներին հանրապետությունում կառուցված արդյունաբերական նոր ձեռնարկությունների, հին գործարանների ու ֆաբրիկաների վերակառուցման և վերասարքավորման, հիդրոէլեկտրակայանների գործարկման շնորհիվ, խոշոր արդյունաբերության արտադրական միջոցները 1928 թվականի համեմատությամբ 1932 թվականին աճեցին ավելի քան երեք անգամ։ Հայաստանի խոշոր արդյունաբերության համախառն արտադրանքը 1927—28 տնտեսական տարվա 19,4 միլիոն ռուբլու դիմաց 1923 թվականի վերջին հասավ 85,6 միլիոն ռուբլու, կամ աճեց 4,5 անգամ։ Իսկ մանր արդյունաբերության համախառն արտադրանքը համապատասխանաբար 8,8 միլիոն ռուբլուց հնգամյակի վերջին հասավ 25,4 միլիոն ռուբլու։

Մեծ էին հաջողությունները հանրապետության էլեկտրիֆիկացիայի բնագավառում։ Այդ ուղղությամբ հնգամյակում պլանավորված կապիտալ ներդրումը գերակատարվեց 74,3 տոկոսով։ Զորագէսի հիդրոէլեկտրակայանը, որ այդ ժամանակ ամենախոշորն էր հանրապետությունում, էլեկտրաէներգիայով սպասարկելու էր Ղարաքիլիսայի քիմիական և Ալավերդու պղնձաձուլական կոմբինատները, ինչպես նաև մերձակա շրջանների կոլտնտեսությունների արտադրության որոշ ճյուղեր, ՄՏԿ-ները և գյուղերը։

1932—1933 թվականների ընթացքում ավարտվեց Զորագէս-Ղարաքիլիսա, Զորագէս-Ալավերդի էլեկտրահաղորդագծերի, Ղարաքիլիսայի նավազեցուցիչ ենթակայանի, ինչպես նաև սկսվեց Քանաքեռ-Համամլու (Սպիտակ)-Ղարաքիլիսա հաղորդագծի շինարարությունը։ Նշված հաղորդագծերի ընդհանուր երկարությունը հասնում էր 140 կիլոմետրի։ Բացի այն էլեկտրակայաններից, որոնք գործարանային և կոմունալ նշանակություն ունեին, հնգամյակի ընթացքում կառուցված և շահագործման հանձնված էլեկտրակայանների թիվը հասնում էր 9-ի, որից երեքը շրջանային, իսկ վեցը՝ գյուղական։ Էլեկտրակայանների ընդհանուր կարողությունը չհաշված տեղայնացվածների հզորությունը, հնգամյակում ավելացավ 4,26 անգամ, էլեկտրաէներգիայի տարեկան արտադրությունը՝ ավելի քան 2,5 անգամ։

Արդյունաբերության բուռն զարգացումը ապահովեց համախառն արտադրանքի անշեղ աճը, ժողովրդական տնտեսության համախառն արտադրանքը բարձրացավ 1927—28 տնտեսական տարվա 21,5 տոկոսից հնգամյակի վերջում հասնելով 58,0 տոկոսի[1]։ Այդ նշանակում է, որ անցյալում հետամնաց ագրարային երկրից Հայաստանը դառնում էր ինդուստրիալ-ագրարային երկիր։

Հանրապետության արդյունաբերական հին կենտրոնների ինդուստրիալ ծավալումն զարգացմանը զուգընթաց առաջացան նոր կենտրոններ՝ Ղարաքիլիսան, Արթիկը, Դավալուն։

Հայաստանի սոցիալիստական արդյունաբերությունը կոոպերատիվ սեկտորի հետ միասին ամբողջովին դուրս մղելով արդյունաբերության բնագավառից մասնավոր սեկտորին, առաջին հնգամյակում անբաժան իշխող դիրք գրավեցին։

Հնգամյակում աչքի ընկնող տեղաշարժեր կատարվեցին հանրապետության գյուղատնտեսության բնագավառում։ Ընդհանուր ցանքատարածությունը, ի հաշիվ խոպան հողերի և չորացվող ճահիճների, ավելացավ մոտ 12,9 տոկոսով։ Հացահատիկային կուլտուրաների ցանքատարածությունը 1928 թվականի համեմատությամբ 1932 թվականին ավելացավ 59,5 հազար հեկտարով, տեխնիկական կուլտուրաներինը՝ 22,5 հազար և կերաբույսերի գծով՝ 19,5 հազար հեկտարով[2]։

Հնգամյակի սկզբին Հայաստանի գյուղատնտեսությունը բաղկացած էր գերազանցապես մանր և մանրագույն անհատական տնտեսություններից։ Նրա արտադրության մանր ապրանքային բնույթը, արտադրական պրիմիտիվ միջոցները, ագրոտեխնիկայի ցածր մակարդակը խիստ դժվարացնում էին նրա

1 Տե՛ս «ՀՍԽՀ կառավարության հաշվետվության նյութեր (1929—1934 թթ.) խորհուրդների VIII համագումարի առթիվ», Երևան, 1935, էջ 19։

2 Տե՛ս «Сельское хозяйство Армянской ССР», էջ 15։

փոխադրումը նոր մեքենայական տեխնիկայի ռելսերի վրա։ Այդ ժամանակ կոլտնտեսային սեկտորը միանգամայն չնչին տեղ էր գրավում, որի ապրանքային արտադրությունը ոչ մի դեր չէր կարող խաղալ գյուղատնտեսական մթերքների արտադրության բնագավառում։ Հնգամյակի վերջում դրությունը էապես փոխվեց։ Գյուղի սոցիալիստական վերակառուցման գործում նշանակալից նվաճումներ ձեռք բերվեցին։

Գյուղատնտեսության տեխնիկա-տնտեսական վերակառուցումը, որն առաջին հնգամյակի կարևոր խնդիրներից մեկն էր, անհնարին կլիներ իրականացնել առանց պետական ֆինանսական աճող օգնության։ Հայաստանի գյուղատնտեսության մեջ հնգամյակում կապիտալ ներդրումը (96,6 միլիոն ռուբլի) 5,4 անգամ գերազանցեց մինչև հնգամյակը ներդրված գումարը։ Ոռոգման շինարարության նպատակներին հատկացվեց 33,8 միլիոն ռուբլի, սովխոզների շինարարությանը՝ 31,4 միլիոն ռուբլի, ՄՏԿ-ին՝ 3,2 միլիոն ռուբլի, իսկ մնացածը՝ կոլտնտեսություններին և այլ նպատակներին[1]։

Հնգամյակի տարիներին կազմակերպվեց յոթ մեքենա-տրակտորային կայան, որոնց տրակտորային պարկը հաշվում էր 296 տրակտոր։ Սովխոզներում կենտրոնացված էր 194, իսկ կոլտնտեսություններում՝ 50 տրակտոր։ Բացի տրակտորներից գյուղատնտեսության սոցիալիստական սեկտորը զինված էր զգալի քանակությամբ գյուղատնտեսական այլ մեքենաներով։

1932 թվականի հուլիսի 1-ի տվյալներով հանրապետությունում կազմակերպված 892 կոլտնտեսություններում միավորված էր 63,1 հազար աշխատավորական տնտեսություն, որը կազմում էր գյուղացիական տնտեսությունների 37,9 տոկոսը։ Համայնացված ցանքատարածությունը հասնում էր 159,4 հազար հեկտարի, որը կազմում էր ամբողջ ցանքատարածության 39,2 տոկոսը[2]։ Մեքենա-տրակտորային կայանները սպասարկում էին կոլտնտեսությունների 39,1 տոկոսը։

Հանրապետության առաջավոր՝ Ղուրդուղովու, Մեղրու և Ղամարլուի շրջաններում համատարած կոլեկտիվացումը հիմնականում ավարտվել էր։

Գյուղի սոցիալիստական սեկտորում 1932 թվականին կենտրոնացված էր հացահատիկային կոմբայնների 34,4 տոկոսը, տեխնիկական կուլտուրաների 64,8 տոկոսը, բոստանա-բանջարանոցային կուլտուրների և կարտոֆիլի 48,3 տոկոսը[3]։ Կոլտնտեսությունների համախառն արտադրանքի եկամուտը 1932 թվականին հասնում էր 45,4 միլիոն ռուբլու, իսկ դրամական եկամուտը՝ 21,7 միլիոն ռուբլու[4]։

Հնգամյակի տարիներին հատուկ ուշադրություն էր դարձվում անասնաբուծության զարգացման խնդիրներին՝ ընդհանրապես, սոցիալիստական անասնատահաբության կազմակերպման հարցերին՝ առանձնապես։ 1932 թվականի վերջերին կոլտնտեսային կաթնապրանքային ֆերմաների թիվը հասել էր 233-ի, որտեղ կենտրոնացված էր 29,4 հազար գլուխ խոշոր եղջերավոր անասուն։ Ոչխարաբուծական 119 ֆերմաներում հաշվում էր 74,6 հազար գլուխ մանր եղջե-

1 Տե՛ս «Социалистическое строительство Армянской ССР», էջ 43։
2 Տե՛ս նույն տեղում, էջ 48։
3 Տե՛ս «Խորհրդային Հայաստանի 15 տարին թվերով», էջ 136։
4 Տե՛ս «Социалистическое строительство Армянской ССР», էջ 54։

բավոր անապուն։ Զգալի առաջադիմել էր նաև ձիաբուծական և խոզաբուծական ֆերմաների կազմակերպումը։ Այսպիսով, առաջին հնգամյակում գյուղատնտեսության սոցիալիստական սեկտորը նշանակալից նվաճումների էր հասել ցանքատարածության հանրայնացման, արտադրանքի ավելացման և տնտեսության տեխնիկական զինվածության մակարդակի բարձրացման բնագավառներում։

Արդյունաբերության զարգացումը և մեծ չափերի հասնող արդյունաբերական ու քաղաքային շինարարությունը պայմանավորեցին աշխատուժի քանակական աճը և նրա շարքերի որակական փոփոխությունները։ Սովետական Միության բանվորների և ծառայողների քանակը առաջին հնգամյակի ժամանակաշրջանում համարյա կրկնապատկվեց, իսկ Հայաստանում ավելի քան կրկնապատկվեց՝ 1928 թվականի 42473-ից 1932 թվականին հասնելով 93996-ի[1]։

Հանրապետության արդյունաբերության, շինարարության և տրանսպորտի բնագավառներում զբաղված աշխատավորների տարեկան միջին քանակը 1923 թվականի 20361-ից 1932 թվականին հասավ 44635-ի[2]։ Ցենզային արդյունաբերության մեջ 1928 թվականին զբաղված բանվորների միջին տարեկան թիվը հասնում էր 5537-ի, իսկ 1932 թվականին այն հասավ 12925-ի, կամ աճեց ավելի քան 2,3 անգամ։ 1928 թվականին նորակառույցների վրա աշխատում էին 6088 բանվոր և ծառայող, իսկ 1932 թվականին միայն բանվորների թիվը անցնում էր 16,0 հազարից[3]։

Առաջին հնգամյակին նախորդող ժամանակաշրջանում կանանց աշխատուժը շատ սահմանափակ էր արդյունաբերության և շինարարության մեջ։ Մինչդեռ արտադրության հետզհետե մեծացող պահանջը աշխատուժով բավարարելու գործում կանանց բանվորական ուժը հիմնական ռեզերվներից մեկն էր հանդիսանում։ Այդ անհրաժեշտությունը թելադրեց հանրապետության կուսակցական և պետական մարմիններին, արհմիութենական և կոմերիտական կազմակերպություններին սիստեմատիկ կերպով զբաղվել կանանց արդյունաբերության մեջ ներգրավելու հարցով։ Հնգամյակի տարիներին այդ ուղղությամբ զգալի բեկում է կատարվել։ Եթե 1929 թվականի հունվարի սկզբներին ֆաբրիկա-գործարանային արտադրության մեջ զբաղված կանանց թիվը տղամարդկանց թվի 19,6 տոկոսն էր կազմում, ապա 1932 թվականի հունվարին այն հասել էր 31,3 տոկոսի[4]։

Հայաստանի բանվոր դասակարգը իր կազմով հետզհետե երիտասարդանում էր։ 1932 թվականին արդյունաբերական բանվորների ավելի քան մեկ երրորդը կազմում էր 18—20 տարեկան երկսեռ երիտասարդությունը[5]։

Այսպիսով, հանրապետության բանվորների մեծամասնությունը արտադրություն էր եկել հնգամյակի վերջին տարիներին, մինչդեռ արդյունաբերության տեխնիկական վերազինումը որակյալ աշխատուժի մեծ պահանջ էր առա-

---

1 Տե՛ս «Социалистическое строительство Армянской ССР», էջ 12։

2 Տե՛ս «Խորհրդային Հայաստանի 15 տարին թվերով», էջ 30։

3 Տե՛ս նույն տեղում։

4 Տե՛ս «Выполнение народно-хозяйственного плана ССР Армении за 1933 г.», Երևան, 1934, էջ 193։

5 Տե՛ս նույն տեղում։

չադրում։ Որակյալ բանվորական ուժը հնգամյակի կատարման անհրաժեշտ նախապայմանն էր։ Հետևաբար, բանվորների որակավորման և վերաորակավորման խնդիրը չափազանց լուրջ նշանակություն էր ստանում։ Հնգամյակի տարիներին հանրապետության պետական մարմինները, արհմիությունները, կոմերիտմիությունը այդ ուղղությամբ լայն գործունեություն ծավալեցին. բանվորների որակավորման և կրթության սիստեմը բավականաչափ լայնացվեց։ Կադրերի պատրաստման համար գործադրվում էին մի շարք ձևեր։ Արտադրությունից դուրս կադրերի պատրաստման կարևոր հաստատություններն էին ֆաբգործուանները, մասնագիտական տեխնիկական դպրոցները, տարբեր տևողության մասնագիտական դասընթացները, իսկ արտադրության մեջ՝ տեխնիկայի տիրապետման խմբակները, որակավորման բրիգադային ուսուցումը և այլ ձևեր։

Գերատեսչությունների գծով գործող կարճատև դասընթացները, որոնք մեծ տեղ էին գրավում կադրերի պատրաստման գործում, զգալի չափով բավարարում էին ժողովրդական տնտեսության կադրերի սուր պահանջը։ 1930—1932 թվականներին այդ դասընթացներում որակավորվեցին և վերաորակավորվեցին մոտ 800 մարդ։ Նույն ժամանակամիջոցում ֆաբգործուանները ավարտեցին և արտադրություն գնացին ավելի քան 1000 պատանի և աղջիկ։ Բավականաչափ մեծ թվով բանվորներ սովորում էին արտադրության մեջ։

Կարճատև մասսայական դասընթացների միջոցով հնգամյակում գյուղատնտեսության համար պատրաստվեց և վերապատրաստվեց մոտ 46 հազար մարդ։

Տեխնիկայի տիրապետման և նրա պրոպագանդման մասին կուսակցության և կառավարության դիրեկտիվները լայն մասսայականություն ստացան թե՛ քաղաքում և թե՛ գյուղում։ Տեխնիկական գիտելիքներ ձեռք բերելու, արտադրության տեխնիկային տիրապետելու ձգտումը ավելի մեծ չափով դրսևորվում էր երիտասարդության մեջ։ Այն իր արտահայտությունն էր գտնում նաև պարտադիր տեխնիկական քննություններ հանձնելու կառավարության միջոցառումների կենսագործմամբ։

Հանրապետության բուհերում հնգամյակի սկզբում սովորում էին 1366 ուսանող, իսկ հնգամյակի վերջում՝ 3526 ուսանող։ Տեխնիկումներում սովորողների թիվը համապատասխանաբար՝ 1852-ից հասնում է 7555-ի, բանֆակներում՝ 659-ից հասնում է 2644-ի[1]։

Առաջին հնգամյակի վերջին երեք տարիների ընթացքում հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունները ժողովրդական տնտեսությանը տվեցին 872 մասնագետ, այդ թվում 123 ինժեներ, 185 գյուղատնտես, 152 տնտեսագետ և այլն։ Տեխնիկումները, ինչպես նաև բանֆակները նույն ժամանակամիջոցում ժողովրդական տնտեսությանը տվեցին զգալի թվով միջին որակի կադրեր։

Արդյունաբերության աշխատավորների քանակական աճը ուղեկցվում էր նրա շարքերի որակական փոփոխություններով։ Դրա կարևորագույն արտահայտությունն այն էր, որ բանվոր դասակարգի հիմնական մասը դառնում էր ար-

---

1 Տե՛ս «Социалистическое строительство Армянской ССР», էջ 113։

տադրության հարվածային։ Աշխատանքի տեխնիկային տիրապետելու գործում նրանք իրենց օրինակով ոգեշնչում էին հազարավոր նորեկների, նրանց ընդգրկում էին սոցիալիստական մրցության մեջ, օգնում տիրապետելու արտադրության առաջավոր տեխնիկային ու փորձին, ոգևորում աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու, բարձր որակի արտադրանք տալու, խնայողության անհրաժեշտ ռեժիմ իրականացնելու համար։

Արտադրության տեխնիկական սարքավորումը և աշխատանքի էներգաշինվածության զգալի ավելացումը ձեռնարկություններում, մրցության բոլոր ձևերի լայն արմատավորումը, բանվոր դասակարգի կուլտուր-տեխնիկական մակարդակի նկատելի բարձրացումը և արտադրության մեջ ինժեներա-տեխնիկական կադրերի թվի զգալի ավելացումը, խթանում էին արտադրության ռացիոնալացումը և աշխատանքի արտադրողականության բարձրացումը։ Հանրապետության ծանր արդյունաբերության ձեռնարկություններում մեկ բանվորի տարեկան միջին արտադրանքը 1928—29 տնտեսական տարվա համեմատությամբ հնգամյակի վերջում ավելացավ 213,5 տոկոսով, թեթև արդյունաբերության ժողկոմատի ձեռնարկություններում բանվորի տարեկան արտադրանքը 3061 ռուբլուց հասավ 5245 ռուբլու, իսկ սննդհամի ձեռնարկություններում՝ 5660 ռուբլուց հասավ 10,3 հազար ռուբլու[1]։

Զգալի ծավալ ստացավ գյուտարարական և ռացիոնալիզատորական շարժումը, որը կապված էր բանվորների կուլտուր-տեխնիկական մակարդակի բարձրացման հետ։ 1932 թվականի առաջին ամիսների տվյալներով հանրապետության ձեռնարկություններում կազմակերպվել էր 45 գյուտարարական խմբակ, որոնք ընդգրկում էին շուրջ 680 գյուտարար և ռացիոնալիզատոր։ 1932 թվականի մարտի սկզբին հաշվի առնված գյուտարարական առաջարկությունների թիվը հասնում էր 850-ի։ Արտադրության մեջ ներդրված 440 առաջարկից պետությունը ստացավ ավելի քան 68 հազար ռուբլու խնայողություն։ Շինարարության բնագավառում կիրառված 162 առաջարկը տվեց 150 հազար ռուբլու տնտեսում։ Սակայն, բանվորական գյուտարարությունը զարգացնելու, բանվորների ավելի մեծ խմբեր այդ գործին մասնակից դարձնելու ասպարեզում դեռևս կային խոչընդոտներ, բյուրոկրատական քաշքշուկ և առանձին տնտեսավարների կողմից դեպի այդ գործը ոչ հոգատար մոտեցում, որոնց վերացման ուղղությամբ կուսակցական կազմակերպությունները և արհմիությունները անդադար պայքար էին մղում։

Ինչպես արտադրության պրոցեսում, այնպես էլ հասարակական-քաղաքական կյանքում զգալի թվով կոփված բանվորներ հնգամյակի տարիներին առաջ քաշվեցին կուսակցական, պետական, տնտեսական և հասարակական պատասխանատու աշխատանքի։ Զգալի չափով աճեցին սոցիալիստական գյուղատնտեսության կադրերը։ Դազգահի հարյուրավոր հասունացած բանվորներ և սոցիալիստական դաշտերի աշխատողներ, որոնք աճել էին սոցմրցման և հարվածային աշխատանքի մեջ, խտացնում էին իրենց ավանգարդի՝ կոմունիստական կուսակցության շարքերը։ Հանրապետության բանվորների և ծա-

1 Տե՛ս «ՀՍԽՀ կառավարության հաշվետվության նյութեր (1929—1934 թթ.) խորհուրդների VIII համագումարի առթիվ», էջ 33։

ռայողների բացարձակ մեծամասնությունը՝ ավելի քան 94 տոկոսը, ընդգրկվել էր արհմիությունների մեջ, որը 1932 թվականի հուլիսի 1-ի տվյալներով իր շարքերում հաշվում էր 88519 անդամ։

Առաջին հնգամյակի ժամանակաշրջանում արդյունաբերության և գյուղատնտեսության տեխնիկա-տնտեսական վերակառուցման պլանային առաջադրանքների կատարման ուղղությամբ սովետական ժողովրդի ձեռք բերած նվաճումները լուրջ տեղաշարժեր կատարեցին թե աշխատանքի և թե աշխատավորների նյութական ու կենցաղային պայմանների բարելավման գործում։ Արմատական փոփոխություններ կատարվեցին աշխատանքի հասարակական բաժանման բնագավառում։

Հնգամյակի տարիներին անշեղ կերպով բարձրացավ բանվորների և ծառայողների տարեկան միջին աշխատավարձը, 1928 թվականի մակարդակը գերազանցելով ավելի քան երկու անգամ։ Աշխատավարձից զատ մի շարք այլ գծերով պետությունը հսկայական միջոցներ էր առանձնացնում բանվոր դասակարգի կուլտուր-կենցաղային բարեկեցությունը բարձրացնելու համար։ Այդ միջոցները գործադրվում էին լուսավորության, կուլտուրական սպասարկման, առողջապահության, սոցիալական ապահովության, բնակարանային շինարարության բնագավառում և ուղղված էին սովետական մարդու աճող պահանջմունքները բավարարելու նպատակին։

Բանվորների նյութական կյանքի մակարդակի բարձրացմանը մեծապես նպաստեց գործազրկության վերացումը։ Աշխատանքի պայմանների բարելավումը, աշխատանքային ժամերի կրճատումը, արտադրության մեջ նրանց անվրտանգության ապահովումը հանդիսանում էին պետության և արհմիությունների ամենօրյա հոգատարության առարկան։

Պետական և կոոպերատիվ առևտրի աննախընթաց զարգացումը, ապրանքային շրջանառության ծավալի հսկայական մեծացումը, և դրա շնորհիվ այդ բնագավառից կապիտալիստական-նէպմանական տարրերի իսպառ վերացումը, երկրի ապրանքային ռեսուրսների բավականաչափ աճի հետ միասին նպաստավոր դեր խաղացին բանվորների և գյուղացիների սպառողական սպասարկումը ըստ ամենայնի բարելավելու գործում։

Առաջին հնգամյա պլանի կատարման շնորհիվ փոխվեց Սովետական Միության դեմքը։ Տեխնիկա-տնտեսական հետամնաց, մանրգյուղացիական երկրից նա դարձավ ինդուստրիալ-ագրարային երկիր, բարձրացավ նրա պաշտպանունակությունը։ Հնգամյակի արդյունքների մեջ ակնառու կերպով իր արտացոլումը գտավ կոմունիստական կուսակցության լենինյան ազգային քաղաքականության կենսունակությունը։ Սովետական Հայաստանը, որն անցյալում հետամնաց ագրարային երկիր էր, դուրս եկավ արդյունաբերական զարգացման լայն ճանապարհ, դառնալով առաջավոր արդյունաբերության, խոշոր կոլտնտեսային և առաջավոր կուլտուրայի երկիր։

Այդ պատմական հաջողությունները հնարավոր դարձան սովետական պետական սիստեմի, բանվորների, կոլտնտեսային աշխատավորների և սովետական ինտելիգենցիայի ցուցաբերած ստեղծագործական ակտիվության, աշխատանքային խանդավառության շնորհիվ։ Սոցիալիստական մրցությունը և հարվածային շարժումը դարձան սոցիալիզմի կառուցման լծակներ։

Առաջին հնգամյա պլանի իրականացումը չորս տարի երեք ամսում հնարավոր եղավ սովետական ժողովուրդների համագործակցության, նրանց բարոյա-քաղաքական միասնության ամրապնդման հիման վրա։

Առաջին հնգամյա պլանի հաջող ավարտումը անհրաժեշտ նյութա-տեխնիկական նախադրյալներ ստեղծեց երկրի արտադրողական ուժերի հետագա լայն զարգացման, սոցիալիստական էկոնոմիկայի կառուցման ավարտումն ապահովելու համար։

ԲԱԺԻՆ Դ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՎԱՐՏԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ 1933 - 1941

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԴ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ-Ը ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱԿԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ (1933—1937)

1. ԵՐԿՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱ ՊԼԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

ՍՍՀՄ-ի ժողովրդական տնտեսության զարգացման երկրորդ հնգամյա պլանի իրագործումը տեղի ունեցավ միջազգային բարդ իրադրության պայմաններում։

Կապիտալիստական մի շարք երկրների (Գերմանիա, Իտալիա, Ճապոնիա) մոնոպոլիստական բուրժուազիան համաշխարհային պատերազմի նախապատրաստման խնդիրներին ամբողջապես ծառայեցրեց իր արտաքին քաղաքականությունը։ 1933 թվականի հոկտեմբերին ֆաշիստական Գերմանիան և միլիտարիստական Ճապոնիան դուրս եկան Ազգերի լիգայից և բացահայտ կերպով սկսեցին նախապատրաստվել պատերազմի։ 1935 թվականից Գերմանիան և Իտալիան ձեռնամուխ եղան իրենց նվաճողական պլանների իրագործմանը։ Օգտվելով Անգլիայի, ԱՄՆ-ի և Ֆրանսիայի կառավարող շրջանների «թեղտվության» քաղաքականությունից, ֆաշիստական Իտալիան 1935 թվականի հոկտեմբերին հարձակվեց Հաբեշստանի վրա և ամբողջապես զավթեց այն։ 1936 թվականի մարտին Գերմանիան գրավեց ապառազմականացված Հռենոսյան մարզը։ 1936 թվականի հուլիսին Գերմանիան և Իտալիան համատեղ ձինված միջամտության անցան հանրապետական Իսպանիայի ներքին իրադարձություններին։

1936 թվականի նոյեմբերին Գերմանիայի և Ճապոնիայի միջև կնքվեց հակակոմինտերնյան պակտ, որին 1937 թվականին միացավ նաև Իտալիան։ 1937 թվականի ամռանը ճապոնական միլիտարիստները ներխուժեցին Չինաստան և կարճ ժամանակամիջոցում գրավեցին Հյուսիսային ու Կենտրոնական Չինաստանի բազմաթիվ քաղաքներ և նավահանգիստներ։ Համաշխարհային պատերազմի սպառնալիքը գնալով աճում էր։ Անհրաժեշտ էր ամրապնդել խաղաղասեր ուժերի միասնությունը, ապահովել կոլեկտիվ անվտանգությունը և վրճռական դիմադրություն ցույց տալ ֆաշիստական ագրեսիային։

Մարդկության համար ստեղծված այդ տագնապալից պահին Սովետական Միությունը մեծ տերություններին առաջարկեց՝ համատեղ միջոցառումներ կիրառել և սանձահարել ագրեսորներին։ Սակայն այդ տերությունների կառավարող շրջանները ոչ միայն չարձագանքեցին Սովետական Միության արդա-

բացի առաջարկին, այլև ամեն ջանք գործադրեցին Գերմանիայի ու Ճապոնիայի ագրեսիան ուղղելու ՍՍՀՄ-ի դեմ։

1934 թվականին Սովետական Միությունը մտավ Ազգերի լիգայի մեջ և հանդես եկավ կոլեկտիվ անվտանգության սկզբունքի պաշտպանությամբ։

Հետևողականորեն շարունակելով իր խաղաղասիրական քաղաքականությունը, 1935 թվականի մայիսին Սովետական Միությունը փոխադարձ օգնության պայմանագիր կնքեց Չեխոսլովակիայի, իսկ 1936 թվականի մարտին՝ Մոնղոլական Ժողովրդական Հանրապետության հետ։ 1937 թվականի օգոստոսին չհարձակման պայմանագիր կնքվեց ՍՍՀՄ-ի և Չինաստանի միջև։ Ճաշխատական ագրեսիայի ծավալումը ուժեղացնում էր ռազմական հարձակման վտանգը ՍՍՀՄ-ի նկատմամբ։ Երկրի պաշտպանունակությունը ամրապնդելու համար անհրաժեշտ էր բարձրացնել նրա տնտեսական ու ռազմական հզորությունը, ամեն կերպ նպաստել արտադրողական ուժերի արագ զարգացմանը և ապահովել պետական ռեզերվների կուտակումը։

Երկրի համար կենսական նշանակություն ունեցող այդ խնդիրների կատարման ուղղությամբ խոշոր տեղաշարժեր էին կատարվել ժողովրդական տնտեսության զարգացման առաջին հնգամյակի և նրան նախորդող երկու տարիների ընթացքում։ Երկրի ինդուստրացման հաջող իրականացման և գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման շնորհիվ ամրապնդվել էին ՍՍՀՄ-ի տնտեսական ու քաղաքական հիմքերը։ Երկրում ստեղծվել էր սոցիալիստական ծանր ինդուստրիա, ռազմական տեխնիկայի արտադրություն և զարգացած թեթև արդյունաբերություն։ Գյուղատնտեսության կոլեկտիվացման շնորհիվ, արտադրության հիմնական միջոցները կենտրոնացվել էին կոլտնտեսությունների ձեռքում։ Սակայն ռազմական հարձակման վտանգի ուժեղացումը պահանջում էր արագ կերպով ավարտել ժողովրդական տնտեսության վերակառուցումը և բարձրացնել նրա հզորությունը։

1932 թվականի հունվարին Համկ(բ)կ XVII կոնֆերանսը ընդունեց, «ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման երկրորդ հնգամյա պլանը կազմելու դիրեկտիվները» (1933—1937)։ Կոնֆերանսը հնգամյակի հիմնական քաղաքական ու տնտեսական խնդիրները համարեց ամբողջ ժողովրդական տնտեսության վերակառուցման ավարտումը և կապիտալիստական տարրերի վերջնական լիկվիդացումը։

Ելնելով երկրի ներքին ու արտաքին վիճակից, հնգամյա պլանում նախատեսված առաջնահերթ խնդիրներից էր ծանր ինդուստրիայի՝ մեքենաշինության, սև և գունավոր մետալուրգիայի, էլեկտրաէներգիայի, վառելիքի ու քիմիական արդյունաբերության զարգացումը։ Հնգամյա պլանով նախագծվում էր 1932 թվականի համեմատությամբ մեքենաշինության արտադրանքը ավելացնել 3—3,5 անգամ, էլեկտրաէներգիայի արտադրությունը հասցնել 38 միլիարդ կիլովատ ժամի, քարածխինը՝ 152,5 միլիոն տոննայի, նավթինը՝ 46,8 միլիոն տոննայի, չուգունինը՝ 16 միլիոն տոննայի, պողպատինը՝ 17 միլիոն տոննայի, գլանվածքինը՝ 13 միլիոն տոննայի[1]։

Խոշոր ինդուստրիայի բազայի վրա, հնգամյա պլանը նախատեսում էր

1 Տե՛ս «ՍՄԿՊ-ն... բանաձևերում ու որոշումներում», մասն III, էջ 255։

ծավալել թեթև ու սննդի արդյունաբերության արտադրությունը և իրականացնել գյուղատնտեսության հետագա տեխնիկական վերակառուցումը։ Խնդիր էր դրվում հնգամյակի ընթացքում հիմնականում ավարտել աշխատատար պրոցեսների մեքենայացումը, բարձրացնել աշխատանքի արտադրողականությունը, իջեցնել ինքնարժեքը և այդ բոլորի հիման վրա բարձրացնել աշխատավորության նյութական բարեկեցությունը։

Համաժողովրդական քննարկումից հետո հնգամյա պլանը վերջնականապես հաստատվեց Համկ(բ)կ XVII համագումարի կողմից և դարձավ աշխատանքի ու պայքարի ծրագիր։ Ամբողջ ժողովրդական տնտեսության համար կապիտալ ներդրումների ծավալը նախատեսվեց 133 միլիարդ ռուբլի, առաջին հնգամյակի 64,5 միլիարդ ռուբլու դիմաց։

Հնգամյա պլանով վճռական տեղաշարժեր պետք է կատարվեին արտադրողական ուժերի տեղաբաշխման ուղղությամբ։ Խնդիր էր դրված առավել ուշադրություն դարձնել արդյունաբերական տեսակետից համեմատաբար հետամնաց շրջանների վրա և ազգային բոլոր հանրապետություններում արդյունաբերական նոր ճյուղերի ստեղծման զուգահեռ՝ արագ թափով առաջ տանել գործող ձեռնարկությունների վերակառուցումն ու յուրացումը։

Համագումարի որոշումների հիման վրա ՍՍՀՄ-ի ազգային բոլոր հանրապետությունները մշակեցին ժողովրդական տնտեսության զարգացման իրենց հնգամյա պլանները։ 1932 թվականի վերջին մշակվեց նաև Հայկական ՍՍՀ-ի ժողովրդական տնտեսության զարգացման հնգամյա պլանը։

Հայաստանի ժողովրդական տնտեսության զարգացման երկրորդ հնգամյա պլանը նախատեսում էր ժամանակակից տեխնիկայի հիման վրա վերակառուցել ամբողջ ժողովրդական տնտեսությունը՝ արդյունաբերությունը, գյուղատնտեսությունն ու տրանսպորտը և վերջնականորեն լիկվիդացնել կապիտալիստական տարրերին։

Հնգամյա պլանում ընդգծվում էր հանրապետության ծանր արդյունաբերության՝ գունավոր մետալուրգիայի, քիմիական արդյունաբերության և էլեկտրաէներգիայի արտադրության արագ վերակառուցման ու զարգացման անհրաժեշտությունը։ Գունավոր մետալուրգիայի արտադրության գծով անհրաժեշտ էր համարվում՝ լայն չափով օգտագործել հանրապետության բնական հարստությունները, վերակառուցել գործող ձեռնարկությունները, կիրառել հանքաքարի հարստացման եղանակը, կրկնապատկել պղնձի արտադրանքը, ճշտել պղնձա-մոլիբդենային հանքաքարի պաշարները։

Քիմիական արդյունաբերության ասպարեզում հնգամյա պլանն առաջադրում էր զարգացնել պարարտանյութերի արտադրությունը։ Հումքի տեղական տեսակների՝ պղնձի արդյունաբերության մնացորդների, ծծմբաքարի և Վավալուի կրաքարի բազայի վրա Ալավերդում, Ղափանում ու Ղարաքիլիսայում կառուցել նոր գործարաններ։ Ստեղծել պղնձարջասպի, ծծմբաթթվի, քլորի, խրոմպիկի և քացախաթթվի արտադրություն, ընդարձակել Ղարաքիլիսայի ցիանամիդի գործարանը։

Խնդիր էր դրվում ընդարձակել հանրապետության շինանյութերի հիմնական տեսակների՝ տուֆի, պեմզայի, մարմարի, բազալտի, ցեմենտի և կրի արտադրությունը, Դավալուում կազմակերպել նոր տեսակի ցեմենտի արտադրու-

թյուն, Երևանում՝ կղմինդրի արտադրություն, Արթիկում՝ տերմո-բետոնային բլոկների, իսկ Դսեղում՝ հրակայուն աղյուսի գործարան։

Հանրապետության գունավոր մետալուրգիայի, քիմիական արդյունաբերության և ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերի վերակառուցման ու հետագա զարգացման համար անհրաժեշտ էր ընդարձակել էներգետիկ բազան, վճռական նշանակություն տալով Սևանի էներգետիկ ռեսուրսների օգտագործմանը։ Հնգամյա պլանի համաձայն 1937 թվականին հանրապետության էլեկտրակայանների կարողությունը պետք է կազմեր 585 հազար կիլովատ ժամ։

Վերակառուցվելու և ընդարձակվելու էին նաև հանրապետության թեթև և սննդի արդյունաբերության ձեռնարկությունները։ 1932 թվականի համեմատությամբ ղգալի չափով ավելացվում էր արդյունաբերական և պարենային ապրանքների արտադրությունը։ Լենինականում կառուցվելու էին մանվածքային և գործվածքային երկու խոշոր գործարաններ, ստեղծվելու էր 240 հազար իլիկի կարողության տեքստիլ արդյունաբերություն։ Նախատեսվում էր նաև վերակառուցել ու մասնագիտացման ենթարկել Երևանի կաշվի գործարանը, շահագործման հանձնել Լենինականի մսի կոմբինատը և կառուցել Սարդարաբադի պահածոների գործարանը։

Արդյունաբերության տեխնիկական վերակառուցմանը զուգընթաց, հնգամյա պլանով պետք է ավարտվեր հանրապետության գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը։

Հնգամյակի ընթացքում նախատեսվում էր ընդարձակել ցանքատարածությունները, ավելացնել հացահատիկային ու տեխնիկական կուլտուրաների բերքատվությունը և բարելավել գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպական ղեկավարումը։

Ժողովրդական տնտեսության ընդհանուր վերելքը հիմք էր ստեղծելու աշխատավորների նյութական և կուլտուրական բարեկեցությունը բարձրացնելու համար։

Հնգամյակի խնդիրների կատարումը պահանջում էր բարձրացնել բանվորական ու տեխնիկական կադրերի որակավորումը, ոգևորության նոր ալիք առաջ բերել տեխնիկայի յուրացման գործում և ծավալել սոցիալիստական մրցույթյունն ու հարվածայնությունը։

1933 թվականից սովետական ժողովուրդը ձեռնամուխ եղավ երկրորդ հնգամյակի խնդիրների կատարմանը։ Մեր երկրի բանվորները և ինժեներա-տեխնիկական աշխատողները մրցության մեջ մտան՝ աշխատատար պրոցեսները արագ կերպով վերակառուցելու, աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու և հնգամյակի խնդիրները գերակատարելու համար։ Հանրապետության գունավոր մետալուրգիայի և քիմիական արդյունաբերության ձեռնարկությունների բանվորներն ու ինժեներա-տեխնիկական աշխատողները մտնելով համամիութենական մրցության մեջ պարտավորվեցին գերակատարել հանքային հանույթի և պղնձի ձուլման տարեկան պլանները, յուրացնել քիմիական նոր նյութերի արտադրությունը և ավելացնել նրա արտադրանքը։

Թեթև և սննդի արդյունաբերության ձեռնարկությունների կոլեկտիվները արձագանքելով Միության առաջավոր ձեռնարկությունների կոչից ծավալված մրցությանը, պարտավորվեցին բարձրացնել արդյունաբերական ու պարենա-

յին ապրանքների որակը և երկու ամիս շուտ կատարել հնգամյակի առաջին տարվա 1933 թվականի արտադրական պլանները։

Հնգամյակի առաջին երկու տարիների ընթացքում գյուղատնտեսական աշխատանքները մեքենայացնելու, հացահատիկային ու տեխնիկական կուլտուրաների բերքատվությունը բարձրացնելու համար հանրապետության կոլտնտեսություններին, սովխոզների և ՄՏՏ կայանների աշխատողները մղան սոցիալիստական մրցության մեջ։

Հայաստանի գյուղատնտեսության աշխատողների մեջ սոցիալիստական մրցությունը ծավալելու գործում խոշոր նշանակություն ունեցավ հարվածային կոլտնտեսականների առաջին համագումարը (Մոսկվա, 1933 թվականի փետրվար)։ Համագումարը կոչ արեց ՍՍՀՄ գյուղատնտեսության բոլոր աշխատողներին՝ ծավալել սոցիալիստական մրցությունը։

1933 թվականի հունիսի 14-ին Երևանում տեղի ունեցավ Հայաստանի հարվածային կոլտնտեսականների առաջին համագումարը։ Համագումարում «Կոլտնտեսությունների մարտական խնդիրների մասին» զեկուցումով հանդես եկավ ՀԿ(բ)Կ կենտկոմի քարտուղար Ա. Խանջյանը։ Համագումարը դիմեց հանրապետության գյուղատնտեսության բոլոր աշխատողներին՝ լայնորեն ծավալել սոցիալիստական մրցությունը, հասնել բարձր ցուցանիշների գյուղատնտեսության բոլոր բնագավառներում։

Կուսակցական ու սովետական կազմակերպությունների ղեկավարությամբ կոլտնտեսությունների ու սովխոզների աշխատողները սոցիալիստական մրցություն ծավալելով հաջողությամբ ավարտեցին երկրորդ հնգամյակի առաջին տարվա գյուղատնտեսական աշխատանքները։

Արդյունաբերության մեջ ծավալված սոցիալիստական մրցության արդյունքը եղավ այն, որ զգալի տեղաշարժեր կատարվեցին համախառն արտադրանքի ավելացման և աշխատատար պրոցեսների տեխնիկական վերակառուցման ուղղությամբ։ Արդյունաբերության համախառն արտադրանքը 1932 թվականի 111 միլիոն ռուբլուց, 1933 թվականին հասավ 117 միլիոն ռուբլու։ Արդյունաբերության ընհանուր արտադրանքի տեսակարար կշիռը ժողովրդական տնտեսության մեջ 1933 թվականին կազմեց 54 տոկոս[1]։

Սոցիալիստական ինդուստրացման քաղաքականության հաջող իրականացման շնորհիվ ավելի արագ էր աճում ծանր արդյունաբերությունը, որի արտադրանքը դրամական արտահայտությամբ 1933 թվականին կազմեց 17 միլիոն ռուբլի[2]։ Ղափանում կառուցվեց հարստացուցիչ ֆաբրիկա, ընդարձակվեց Ալավերդու պղնձաձուլական գործարանը, մեքենայացվեցին հանքերի հորատման աշխատանքները, գործարկվեց Ղարաքիլիսայի քիմիական գործարանի առաջին հերթը։ Խոշոր աշխատանքներ կատարվեցին Ալավերդու ծծմբաթթվի և պղնձարջասպի գործարանների կառուցման ուղղությամբ։ Սկսվեց Երևանի Ս. Կիրովի անվան սինթետիկ կաուչուկի գործարանի կառուցումը, վերանորոգվեց կարբիդի գործարանը։ Նշանակալից կերպով աճեց գործող էլեկտրակայանների կարողությունը, որը 1932 թվականի 21,3 հազար կիլովատի փոխարեն, 1933 թվականին հասավ 39 հազար 600 կիլովատ ժամի։

1 Տե՛ս Մ.Լ.Ի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 22, գ. 4։

2 Տե՛ս նույն տեղում։

Նկատելի տեղաշարժեր կատարվեցին լայն սպառման ապրանքների արտադրության մեջ։ 1933 թվականին հանրապետության թեթև արդյունաբերության ձեռնարկությունները երկրին տվեցին 26 միլիոն ռուբլու արտադրանք[1]։

Հնգամյակի առաջին տարում զգալի փոփոխություններ տեղի ունեցան նաև գյուղատնտեսության մեջ։ Վերացվեցին կոլտնտեսային շինարարության գործում մինչ այդ թույլ տրված սխալները, բարելավվեց աշխատանքի կազմակերպման և հաշվառման գործը, բարձրացավ կոլտնտեսային աշխօրերի արժեքը։ Այդ ամենի շնորհիվ ուժեղացավ գյուղացիների ձգտումը դեպի կոլտնտեսությունները, որոնց մեջ մտան 9000 գյուղացիական տնտեսություններ։ 1933 թվականի վերջին կոլտնտեսությունները ընդգրկում էին ամբողջ գյուղացիական տնտեսությունների 38,2 տոկոսը։ Նրանց ձեռքում էր կենտրոնացվել ամբողջ ցանքատարածությունների 39,6 տոկոսը[2]։

Արդյունաբերության և գյուղատնտեսության մեջ հնգամյակի առաջին տարվա պլանների հաջող կատարման շնորհիվ աճեց ժողովրդական տնտեսության եկամտաբերությունը, ծավալվեց պետական ու կոոպերատիվ առևտուրը։ 1932 թվականի համեմատությամբ նկատելի կերպով բարձրացավ աշխատավորների նյութական ապահովվածությունը։

1934 թվականի հունվարի 10-ից մինչև 13-ը տեղի ունեցավ ՀԿ(բ)Կ IX համագումարը, որը քննարկեց Կենտրոնական կոմիտեի, ԿՎՀ — ԲԳՏ-ի և վերստուգիչ հանձնաժողովի հաշվետու զեկուցումները։ Կենտկոմի հաշվետվության մեջ (զեկուցող՝ Ա. Խանջյան) ամփոփված էին հնգամյակի առաջին տարում ժողովրդական տնտեսության մեջ ձեռք բերված նվաճումները, բացահայտված էին արդյունաբերության պլանավորման, արտադրական պլանների թերակատարման և տեխնիկայի տիրապետման ու ներդրման գործում եղած թերությունները։

Համագումարը նշեց, որ դեռևս դանդաղ է ընթանում արդյունաբերական մի շարք ձեռնարկությունների վերակառուցումը, թերակատարվել էին կապիտալ շինարարության պլանները, թույլ էր պայքարը արտադրանքի որակի բարձրացման համար։

Ընդգծելով գյուղատնտեսության մեջ ձեռք բերած հաջողությունները, համագումարը միաժամանակ կուսակցական ու սովետական կազմակերպությունների ուշադրությունը հրավիրեց այդ բնագավառում դեռևս գոյություն ունեցող թերությունների վրա և միջոցառումներ մշակեց նրանց վերացման համար։

Մասնավորապես խնդիր դրվեց էլ ավելի ծավալել կոլտնտեսային շինարարությունը, տնտեսապես ու կազմակերպչորեն ամրապնդել կոլտնտեսությունները, բարձրացնել ՄՏ կայանների դերը գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման գործում, վերացնել անասնապահության ետ մնալը։

Համագումարը ընտրեց Կենտկոմի նոր կազմ։ Կենտկոմի առաջին քարտուղար ընտրվեց Ա. Խանջյանը։

---

1 Տե՛ս Մշի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 22, գ. 4։

2 Տե՛ս «Советская Армения за 40 лет», էջ 84։

1934 թվականի հունվարի 15-ին հրավիրվեց անդրկովկասյան կոմունիստական կազմակերպությունների VII համագումարը։ Համագումարն արձանագրեց, որ եղբայրական երեք հանրապետություններում հիմնականում կատարվել են կուսակցության ու կառավարության կարևորագույն տնտեսական ու քաղաքական առաջադրանքները։ 1932 թվականի համեմատությամբ զգալի կերպով աճել էր արդյունաբերական շինարարությունը։ Համագումարը ազգային երեք հանրապետությունների առաջ խնդիր դրեց՝ երկրի հումքի հարուստ աղբյուրներն օգտագործելու հիման վրա, ավելի արագորեն առաջ մղել ծանր արդյունաբերության զարգացումը, ընդարձակել լեռնահանքային և գունավոր մետաղաձուլության, հիդրոէներգետիկայի, ածխի, քիմական, մեքենաշինության և շինանյութերի արդյունաբերությունը։ Անհրաժեշտ համարվեց տեխնիկական վերակառուցմամբ ենթարկել պղնձի, մարգանեցի և ածխի արդյունաբերությունը, ավարտել սկսված հիդրոկայանների կառուցումը և 1934 թվականից սկսել հզոր հիդրոէլեկտրակենտրոնների շինարարության նախապատրաստումը (Ռիոնի 2-րդ էլեկտրակայանը, Գյումուշի էլեկտրակայանը և այլն)։

Գյուղատնտեսության բնագավառում Անդրկովկասի կառավարության առաջնահերթ խնդիրը համագումարը համարեց կոլտնտեսությունների նախաձեռնության ծավալումը և նրանց նյութա-տեխնիկական բազայի ամրապնդումը։

Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների VII և ՀԿ(բ)Կ IX համագումարների որոշումների նշանաբանով, Հայաստանի աշխատավորները ստեղծագործական լայն աշխատանք ծավալեցին հնգամյակի երկրորդ տարվա տնտեսական ու քաղաքական խնդիրները հաջողությամբ կատարելու համար։ Հայաստանի բանվոր դասակարգը իր աշխատանքի ու պայքարի հիմնական խնդիրը դարձրեց արդյունաբերական ձեռնարկությունների տեխնիկական վերակառուցման ավարտումը և նոր ձեռնարկությունների շինարարության ծավալումը։

1934 թվականի հունվարի 26-ից մինչև փետրվարի 10-ը Մոսկվայում տեղի ունեցավ Համ(բ)Կ XVII համագումարը, որը հաստատեց ամբողջ ժողովրդական տնտեսության տեխնիկական վերակառուցման ավարտման և երկրորդ հնգամյակում արտադրանքի աճի ծրագիրը։

Համագումարը նշեց, որ ժողովրդական տնտեսության զարգացման ու տեխնիկական վերակառուցման ծրագիրը կատարելու համար անհրաժեշտ է՝ անցկացնել ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության տեխնիկական վերազինում, բոլոր աշխատատար և ծանր պրոցեսների մեքենայացում, էներգետիկ բազայի ընդարձակում, ինքնարժեքի իջեցման հետ միասին, որակի ու ասորտիմենտի խիստ լավացում։ Գյուղատնտեսության ասպարեզում համագումարը հերթական անհետաձգելի խնդիր համարեց կոլեկտիվացման լիովին ավարտումը և տեխնիկական վերակառուցման իրականացումը։

1935 թվականի հունվարի 9-ին Երևանում հրավիրվեց ՀՍՍՀ սովետների VIII համագումարը, որը հանրագումարի բերեց սովետների VII համագումարից հետո ընկած ժամանակաշրջանում Հայաստանի ժողովրդական տնտեսության նվաճումները։

ՀՍՍՀ սովետների VIII համագումարը ամփոփելով երկրորդ հնգամյակի երրորդ տարվա նվաճումները, միաժամանակ որոշումներ ընդունեց հանրապե-

տության ինդուստրացման հետագա խորացման, գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը ավարտելու և կուլտուրական շինարարությունը ծավալելու մասին։ Համագումարը հանձնարարեց ՀՍՍՀ կառավարությանը՝ ապահովել արդյունաբերության որակական ցուցանիշների հետագա բարելավումը, անդուլ պայքար մղել գյուղատնտեսության տեխնիկական վերակառուցումը ավարտելու, հացահատիկային ու այլ արժեքավոր կուլտուրաների մշակությունը զարգացնելու և դրանց հիման վրա պարենային սեփական բազան ընդարձակելու համար։

Աշխատավորների բարեկեցությունը բարձրացնելու նպատակով, համագումարը անհրաժեշտ համարեց բարելավել կոմունալ տնտեսությունը, ծավալել բնակարանային և կուլտուրական օջախների շինարարությունը։

Համագումարը ընտրեց ՀՍՍՀ կենտրոնական գործադիր կոմիտեի նոր կազմ՝ բաղկացած 241 հոգուց։ Կենտրոնական գործադիր կոմիտեի նախագահ ընտրվեց Ս. Մարտիկյանը։

1935 թվականի նոյեմբերին Հայաստանի աշխատավորները մեծ խանդավառությամբ տոնեցին Հայաստանում սովետական իշխանության հաստատման 15-ամյակը։ Տոնակատարությանը մասնակցելու համար Հայաստան ժամանեց ՍՍՀՄ Կնտգործկոմի նախագահ Մ. Ի. Կալինինը։

Հայաստանում սովետական իշխանության հաստատման 15-ամյակի կապակցությամբ հայ ժողովուրդը նամակ հղեց Համկ(բ)Կ Կենտկոմին՝ իր երախտագիտության խոսքը ասելով սովետական իշխանությանն ու կոմունիստական կուսակցությանը։

«Իրոք, նորից է ծնվել մեր երկիրը,— ասված էր նամակում, ...մեր հիշողությունից հեռանում է փլատակների, մոխրի, սովի ու հեծեծանքի Հայաստանը։ Խորհրդային Միության ժողովուրդների ընտանիքում բարձրացել է խորհրդային Հայաստանը իր կենսուրախ ու երջանիկ ժողովրդով։

Եվ իսկապես, ո՞ւր էինք և ո՞ւր հասանք այս տասնհինգ տարում...

Ամայի տեղում բարձրացել է Լենինականի տեքստիլ կոմբինատը, որն այս տարի տալիս է 13 միլիոն 683 հազար մետր կտավ, 2211 տոննա մանվածք. Կիրովականի քիմիական կոմբինատը, որը տալիս է 12 հազար տոննա կարբիդ, Արարատի ցեմենտի գործարանը, որը մեր շինարարությանը տալիս է տարեկան 90 հազար տոննա ցեմենտ։ Վերակառուցվել են Ալավերդու և Ղափանի պղնձարդյունաբերությունը՝ տեխնիկայի վերջին խոսքով էլեկտրիֆիկացիայի են ենթարկվել շախտերը, որոնք այս տարի երկրին տալիս են 3600 տոննա պղինձ։ Մեր լեռնային արդյունաբերության մեջ ստեղծվել են կարևոր ճեռնարկություններ՝ Արթիկի տուֆը, որը մեր շինարարությանը տալիս է տարեկան 100 հազար խ.րանարդ մետրից ավելի բարձրորակ շինանյութ, Անիի պեմզան, որը տալիս է 133 հազար խորանարդ մետր պեմզա...

Մեր երկիրը պատվում է ծայրից ծայր էլեկտրակայանների խիտ ցանցով։ Մեր գործարաններին ու կոլտնտեսություններին, դարերով խավերի մեջ թաղված քաղաքներին ու գյուղերին լույս են տալիս Զորագէսը, Երևանի երկու հիդրոկայանները, Լենինականի հիդրոկայանը և բազմաթիվ շրջանային հիդրոկայաններ մեր երկրի անգամ ամենահեռու անկյուններում...

Այժմ մենք արդեն ունենք 187 ցենզային արդյունաբերական միավոր, մեր արդյունաբերությունը տալիս է 145 միլիոն ռուբլու տարեկան արտադրանք, 83 անգամ ավելի, քան տվել է այս երկրի արդյունաբերությունը 1919 թվին։ Խորհրդային Հայաստանի բանվորների և ծառայողների ընդհանուր թիվը 110 հազարի է հասնում, նախախորհրդային 11 հազարի փոխարեն»[1]։

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ ԵՐԿՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱԿԻ ՊԼԱՆԸ ԺԱՄԿԵՏԻՑ ՇՈՒՏ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ։ ՍՏԱԽԱՆՈՎՅԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԾԱՎԱԼՈՒՄԸ

Ժողովրդական տնտեսության զարդացման երկրորդ հնգամյա պլանը ժամկետից շուտ կատարելու նպատակով Հայաստանի աշխատավորները 1935 թվականից մտան երկրում ծավալված ստախանովյան շարժման մեջ։

Այդ շարժումը սոցիալիստական մրցության հետագա զարգացումն էր։ Այն սոցիալիստական հասարակության լավագույն մարդկանց կողմից տեխնիկային խորապես տիրապետելու և աշխատանքի նոր ձևերի ու մեթոդների կիրառման արդյունք էր։ Ստախանովյան շարժումը համաժողովրդական բնույթ ստանալով նոր խթան հանդիսացավ աշխատանքի բարձր արտադրողականության հասնելու համար։

Համ(բ)Կ Կենտկոմի 1935 թվականի դեկտեմբերյան պլենումը խնդիր դրեց բոլոր կուսակցական կազմակերպությունների առաջ՝ գլխավորել այդ շարժումը և այն տարածել ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում։

Հայաստանում ստախանովյան շարժման առաջին տարածողները դարձան Ալավերդու և Ղափանի բանվորներն ու ինժեներա-տեխնիկական աշխատողները։

1935 թվականի հոկտեմբերի 15-ին Ալավերդու պղնձի կոմբինատի կուսակցական կոմիտեի նախաձեռնությամբ հրավիրվեց բոլոր հանքերի, գործարանների, ցեխերի ու բրիգադների հարվածային աշխատողների հավաք, որտեղ որոշում ընդունվեց աշխատանքի ստախանովյան մեթոդներին անցնելու մասին։

Արձագանքելով հարվածայինների կոչին, պղնձահանքերի գրեթե բոլոր բանվորները սկսեցին գերակատարել իրենց օրվա առաջադրանքները։

1935 թվականի հոկտեմբերին ստախանովյան շարժում սկսվեց Ալավերդու պղնձաձուլական գործարանում։ Շարժման նախաձեռնողը գործարանի կոմերիտական բրիգադն էր։

Մտնելով ստախանովյան շարժման մեջ, Ղափանի պղնձի կոմբինատի բանվորներ Մ. Պապյանը, Լ. Ստեփանյանը և մյուսները օրական կատարում էին կրկնակի արտադրական նորմաներ։

1935 թվականի հոկտեմբերին շրջանային կոմիտեի ղեկավարությամբ Արթիկի և Անի-Պեմզայի հանքերում անցկացվեցին արտադրական խորհրդակցություններ ու ժողովներ և մի շարք միջոցառումներ մշակվեցին տեխնիկական պրոցեսների կազմակերպման, մեխանիզմների ռացիոնալ օգտագործման և աշխատատար պրոցեսների մեքենայացման վերաբերյալ։ Դրանց իրականացման

---

1 «Խորհրդային Հայաստան», 28 նոյեմբերի 1935 թ.։

շնորհիվ Անի-Պեմզայի բազմաթիվ բանվորներ իրենց պլանները կատարում էին 150—180 տոկոսով։

1935 թվականի աշնանը Հայաստանի հանքագործարանային բանվորների հետ միասին ստախանովյան շարժման մեջ մտան Քանաքեռի հիդրոկայանի և Երևանի Ս. Մ. Կիրովի անվան գործարանի շինարարությունների բանվորներն ու ինժեներա-տեխնիկական աշխատողները։

1935 թվականի հոկտեմբերին ստախանովյան շարժման մեջ մտան Քանաքեռի հիդրոկայանի շինարարության 117 բրիգադներ, որոնցում ընդգրկված էին 1532 բանվորներ։

1935 թվականի աշնանը ստախանովյան շարժմանը արձագանքեցին Երևանի մեխանիկական, պահածոների, կաշվի գործարանների, ծխախոտի ֆաբրիկայի, Կիրովականի քիմիական և Լենինականի տեքստիլ կոմբինատների բանվոր-ծառայողները։ Երևանի մեխանիկական գործարանի վարպետ Ն. Պապյանը, դարբնոցային ցեխի վարպետ Պ. Մկրտչյանը, ծխախոտի գործարանի գլանակի ցեխի բանվորուհի Զ. Նովիկովան, կաշվի գործարանի վերամշակող բանվոր Հ. Հայկյանը և շատ ուրիշներ մի շարք նորարարական առաջարկություններ կատարեցին, որոնց կիրառման շնորհիվ զգալի չափով կրճատվեց հումքի կորուստը և բարձրացավ աշխատանքի արտադրողականությունը։

Ստախանովյան շարժումը հանրապետությունում ավելի մասսայական դարձավ 1936 թվականին։ Արդյունաբերական ձեռնարկությունների կուսակցական ու արհմիութենական կազմակերպություններն օգտագործելով Միության առաջավոր կոլեկտիվների փորձը լայն պայքար կազմակերպեցին արտադրության մեջ ստախանովյան առաջավոր մեթոդների արմատավորման համար։

Արդյունաբերական ձեռնարկություններում ստախանովյան շարժումը ծավալելու ուղղությամբ խոշոր աշխատանք կատարեցին կոմերիտական ու արհմիութենական կազմակերպությունները։

1936 թվականի փետրվարի 12—16-ը տեղի ունեցավ ՀԼԿԵՄ IX համագումարը, որը արձանագրեց Հայաստանի կոմերիտմիության ակտիվ մասնակցությունը հնգամյակի առաջադրանքների կատարմանը։

Հայաստանի կոմերիտական կազմակերպությունների գործունեությանը բարձր գնահատական տվեց նաև Անդրկովկասի կոմերիտական կազմակերպությունների VII համագումարը (1936 թվականի փետրվար), որը խնդիր դրեց նրանց առաջ ապահովել կոմերիտականների ակտիվ մասնակցությունը ժողովրդական տնտեսության սոցիալիստական վերակառուցման հետագա աշխատանքներին[1]։ 1936 թվականին արագ կերպով աճեց արդյունաբերության մեջ ընդգրկված կոմերիտական ստախանովականների թիվը։

Ստախանովյան շարժման ծավալման գործում կուսակցական կազմակերպությունների ղեկավարությամբ եռանդուն աշխատանք էին կատարում նաև հանրապետության արհմիութենական կազմակերպությունները։

1935—1937 թվականներին կուսակցական, կոմերիտական և արհմիութենական կազմակերպությունների ղեկավարությամբ, ստախանովյան շարժման

1 Տե՛ս «Ավանգարդ», 1936, № 21։

ծավալման պայմաններում, աշխատանքը լավագույն ձևով կազմակերպելու, տեխնոլոգիական պրոցեսները ռացիոնալիզացման ենթարկելու և արտադրության մեջ աշխատանքի ճիշտ բաժանում անցկացնելու շնորհիվ հանրապետության արդյունաբերության բոլոր ճյուղերում աշխատանքի արտադրողականության բարձրացման խոշոր առաջընթաց կատարվեց։

Համկ(բ)կ կկ-ի 1935 թվականի դեկտեմբերյան պլենումը, հիմք ընդունելով հնգամյակի առաջին երկու տարում ՍՍՀՄ-ի արդյունաբերության մեջ տեխնիկական պրոգրեսի և աշխատանքի մեթոդների կատարելագործման ուղղությամբ կատարված տեղաշարժերը, հանրապետությունների կոմկուսների և տնտեսական վերադաս օրգանների առաջ խնդիր դրեց՝ ստախանովյան շարժման շուրջը համախմբել բանվորների ամենալայն մասսաներին, վերանայել գործող տեխնիկական նորմաները, փոխարինել դրանք ավելի բարձր նորմաներով և մշակել առաջավոր տեխնիկայի մակարդակին ու աշխատանքի արտադրողականության հետագա վերելքի խնդրին համապատասխանող նորմաներ[1]։

Ստախանովյան շարժումը լայն տարածում գտավ նաև գյուղատնտեսության մեջ և տրանսպորտում։

Համկ(բ)կ Կենտկոմի և ԿՎՀ-ի 1933 թվականի հունվարյան միացյալ պլենումի որոշման համաձայն ՍՍՀՄ-ի բոլոր ՄՏ կայաններին և սովխոզներին կից ստեղծվեցին քաղաքական բաժիններ (քաղբաժիններ)։ Որպես կուսակցական ղեկավարման արտակարգ օրգաններ, քաղաքական բաժինների առջև խնդիր դրվեց վճռականապես բարելավել քաղաքական ու տնտեսական աշխատանքը գյուղում, բարձրացնել կոլտնտեսությունների և սովխոզների դերը և ուժեղացնել կուսակցական հսկողությունը նրանց նկատմամբ։

Քաղաքական բաժիններին առաջադրվեց նաև՝ վճռական պայքար տանել կուլակային տարրերի դեմ և սոցիալիստական մրցություն ծավալել բոլոր կոլտնտեսություններում, ՄՏ կայաններում ու սովխոզներում։ Քաղաքական բաժինները իրենց շուրջը համախմբեցին կոլտնտեսությունների, ՄՏ կայանների ու սովխոզների մասսայական ակտիվին և նրանց մասնակցությամբ վճռեցին կոլտնտեսային շինարարության հարցերը, բացահայտեցին արտադրության կազմակերպման գործում եղած թերությունները և շրջանային մյուս ղեկավար օրգանների հետ միասին պայքարեցին դրանք վերացնելու համար։

Քաղաքական բաժինները, շրջանային կուսակցական ու սովետական ղեկավար օրգանները սիստեմատիկ կերպով պարզաբանում էին մասսաներին կոլտնտեսային շինարարության խնդիրները, դրանց կատարման մեթոդներն ու ձևերը, բացատրում էին կոլտնտեսային կարգերի առավելությունները գյուղատնտեսության հետագա վերելքի կազմակերպման և նյութական բարեկեցության բարձրացման գործում։

Գյուղատնտեսության գործում հնգամյակի խնդիրների պրոպագանդման և դրանց հաջող կատարման ուղղությամբ խոշոր աշխատանք կատարեցին քաղաքական բաժիններին կից ստեղծված թերթերը, որոնց էջերում սուր քննա-

1 Տե՛ս «ՍՄԿՊ-ն... բանաձևերում ու որոշումներում», մաս II, էջ 339։

դատության էին ենթարկվում կոլտնտեսային շինարարության գործում եղած թերությունները և սիստեմատիկաբար պրոպագանդվում էր սոցիալիստական աշխատանքի առաջավոր փորձը։

Գյուղատնտեսության ճյուղերում արտադրական բարձր ցուցանիշների հասնելու նպատակով Հայաստանի կոլտնտեսությունները սոցիալիստական մրցության պայմանագրեր կնքեցին Վրաստանի, Ադրբեջանի և միջինասիական հանրապետությունների հետ։

Ստախանովյան շարժման ծավալման պրոցեսում երևան եկան գյուղատնտեսական աշխատանքների տաղանդավոր կազմակերպիչներ և հաղարավոր առաջավորներ, որոնք իրենց փորձով ու աշխատանքով ոգևորում էին բոլորին։

ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության վերակառուցումը հաջողությամբ իրականացնելու համար վճռական նշանակություն ուներ արտադրական կադրերի պատրաստումը և նրանց տեխնիկական ուսուցումը։

Հայաստանի կոմունիստական կուսակցությունը և Հայկական ՍՍՀ ժողկոմսովետը հնգամյակի տարիներին գործնական միջոցներ ձեռնարկեցին արտադրական տեխնիկական դասընթացների կազմակերպման և տեխնիկայի պրոպագանդումը լայն կերպով ծավալելու ուղղությամբ։

Կադրերի ուսուցման հիմքում դրվեց տեսության ու պրակտիկայի օրգանական կապի խնդիրը։ Ուսուցման մեջ մտցվեց պարտադիր արտադրական պրակտիկա։ Վերանայվեցին բոլոր բուհերի ու տեխնիկումների ուսումնական պլաններն ու ծրագրերը։ Ստեղծվեցին մասնագիտական թեքումներով նոր ինստիտուտներ ու ֆակուլտետներ։ Արտադրական կադրերի պատրաստման գործը բարելավելու նպատակով վերակառուցվեցին նաև հանրապետության բանֆակներն ու ֆաբրիկա-գործարանային ուսումնարանները։

1936 թվականին հանրապետության արդյունաբերական ձեռնարկություններում կազմակերպվեցին ավելի քան 560 տեխնիկական մինիմումի խմբակներ։ Նույն թվականին հանրապետության արդյունաբերական ձեռնարկություններում աշխատող 13902 բանվորներից 5515-ը հանձնեցին տեխնիկական մինիմումները և հաջողությամբ աշխատանքի անցան գործարաններում ու ֆաբրիկաներում։

Հնգամյակի ընթացքում հանրապետության բարձրագույն և միջնակարգ տեխնիկական յոթնամյա ուսումնական հաստատությունները ժողովրդական տնտեսությանը տվեցին 9014 մասնագետ կադրեր, որից 3242-ը բարձրագույն, իսկ 5772-ը միջնակարգ տեխնիկական կրթությամբ[1]։

Առաջին հնգամյակի համեմատությամբ բարձրագույն կրթությամբ մասնագետների թիվը աճեց ավելի քան մեկուկես անգամ։ 1937 թվականին հանրապետությունում գործում էին 57 միջնակարգ մասնագիտական տեխնիկումներ, որոնցում սովորում էին 10 050 ուսանող։

Առաջին հնգամյակի համեմատությամբ բարձրագույն կրթությամբ մասնագետների թիվը աճեց ավելի քան երկու անգամ, իսկ միջնակարգ տեխնիկական կրթությամբ մասնագետների թիվը՝ մեկուկես անգամ։

---

1 Տե՛ս «Социалистическое строительство Армянской ССР», էջ 114։

Տեխնիկական ուսուցման մեջ ընդգրկված և բարձրագույն ու միջնակարգ տեխնիկական հաստատությունները ավարտած մասնագետ-կադրերի մի զգալի տոկոսը կազմում էին կանայք։ Բարձրագույն ու միջնակարգ տեխնիկական հաստատություններում, գործարաններին կից կուրսերում ու խմբակներում մասնագիտական կրթություն էին ստանում հարյուրավոր կանայք։ Արտադրության մեջ նրանց տեսակարար կշիռը 1936 թվականին կազմեց 35,9 տոկոս[1]։

Հնգամյակի խնդիրները հաջողությամբ կատարելու համար, կադրերի պատրաստման, որակավորման և աշխատավոր ձեռքն լրիվ օգտագործման ուղղությամբ խոշոր տեղաշարժեր կատարվեցին նաև գյուղատնտեսության մեջ և տրանսպորտում։ Գյուղատնտեսության ղեկավար կադրեր պատրաստելու նպատակով կազմակերպվեցին միջնակարգ մասնագիտական տեխնիկումներ և բազմաթիվ վերապատրաստման դասընթացներ։ Հնգամյակի ընթացքում հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունները գյուղատնտեսությանը տվեցին 326 գյուղատնտես և 639 անասնաբույժ։ Գյուղատնտեսական տեխնիկումներն ավարտեցին ավելի քան 1387 միջին որակավորման մասնագետներ, որոնք դարձան կոլտնտեսային արտադրության լավագույն կազմակերպիչներ[2]։

ՄՏՏ կայաններում ու սովխոզներում կազմակերպվեցին մեխանիզատորների կուրսեր, իսկ տեխնիկական կուլտուրաների և այգեգործության շրջաններում՝ որակավորման դասընթացներ։ Երևանում և Լենինականում կազմակերպվեցին կոլտնտեսությունների նախագահների, տնտեսվարների և հաշվապահների երկարատև ուսուցման կամ նախապատրաստման դպրոցներ։ Այս ամենի շնորհիվ հնգամյակի ընթացքում տեղի ունեցավ հանրապետության սոցիալիստական գյուղատնտեսության համար անհրաժեշտ կադրերի և ղեկավար աշխատողների զգալի քանակական ու որակական աճ։

Ինչպես արդյունաբերության, այնպես էլ գյուղատնտեսության մեջ մասնագետ կադրերի ուսուցումը և պատրաստումը հանդիսացավ հնգամյակի խնդիրները հաջողությամբ կատարելու կարևոր պայմաններից մեկը։

3. ԵՐԿՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱԿԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

1937 թվականին ավարտվեց ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման երկրորդ հնգամյա պլանի կատարումը։ ՍՍՀՄ-ը վերածվեց խոշոր ինդուստրիալ երկրի և զարգացման տեմպերի տեսակետից առաջ անցավ կապիտալիստական գլխավոր երկրներից։ Արդյունաբերության արտադրանքի ծավալով Սովետական Միությունը գրավեց Եվրոպայում առաջին, իսկ աշխարհում՝ երկրորդ տեղը։

Հնգամյակի տարիներին շարք մտան արդյունաբերական 4500 նոր ձեռնարկություններ։ Արագ աճեց ծանր արդյունաբերության արտադրանքը։ Արտա-

1 Տե՛ս Մ. Հայկական Ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 25, գ. 255։

2 Տե՛ս «Социалистическое строительство Армянской ССР», էջ 114—115։

դրության միջոցների արտադրության տեսակարար կշիռը ամբողջ արդյունաբերության համախառն արտադրանքի մեջ 1937 թվականին կազմեց 57,8 տոկոս։

Հնգամյակի վերջում ավարտվեց գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը։ 1937 թվականին ՍՍՀՄ-ի ամբողջ գյուղացիական տնտեսությունների 93 տոկոսն ընդգրկված էր կոլտնտեսությունների մեջ։ Ամրապնդվեց գյուղատնտեսության տեխնիկական բազան։ 1932 թվականի համեմատությամբ երկուսկես անգամ ավելացավ ՄՏՏ կայանների թիվը։

Ժողովրդական տնտեսության բոլոր գծերով խոշոր առաջընթաց տեղի ունեցավ ՍՍՀՄ-ի ազգային հանրապետություններում, այդ թվում նաև Հայաստանում։

Հանրապետության աշխատավորների հերոսական ջանքերով հաջողությամբ կատարվեց Հայաստանի ժողովրդական տնտեսության զարգացման երկրորդ հնգամյա պլանը։

Կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության կողմից արտադրողական ուժերի սոցիալիստական տեղաբաշխման սկզբունքը հետևողականորեն կիրառելու շնորհիվ, հնգամյակի վերջում միանգամայն փոխվեց Հայաստանի ամբողջ ժողովրդական տնտեսության պատկերը։ Հիմնականում ավարտվեց ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի տեխնիկական վերակառուցումը։ Խոշոր չափերով ընդարձակվեց ծանր արդյունաբերության և ընդհանրապես ամբողջ ժողովրդական տնտեսության վերակառուցման ու զարգացման համար հիմնական լծակ հանդիսացող էլեկտրաէներգիայի արտադրությունը։ 1936 թվականին շահագործման հանձնվեցին Քանաքեռի հիդրոկայանի առաջին և երկրորդ ագրեգատները, իսկ 1937 թվականին՝ երրորդ և չորրորդ ագրեգատները։ Յուրացվեցին Զորագէսի երեք ագրեգատները։ Աշխատանք էր տարվում Քանաքեռ-Սպիտակ-Կիրովական էլեկտրահաղորդագիծը անցկացնելու ուղղությամբ։

Հնգամյակի ընթացքում շահագործման հանձնվեցին Թալինի ու Միկոյանի (Նեղգնաձոր) շրջանային էլեկտրակայանները, վերակառուցվեցին Դիլիջանի, Կիրովականի, Ղափանի ու Գորիսի էլեկտրակայանները։ Էլեկտրաշինարարության նպատակների համար ներդրվեց 152,4 միլիոն ռուբլի։ Միայն 1933—1934 թվականների ընթացքում հանրապետության էլեկտրաշինարարության մեջ երկու անգամ ավելի շատ ներդրումներ էին կատարվել, քան առաջին հնգամյակի չորսը տարիների ընթացքում[1]։

Հնգամյակի վերջին տարում՝ 1937 թվականին Հայաստանում գործում էին տեղական ու հանրապետական նշանակություն ունեցող 48 էլեկտրակայաններ, որոնց ընդհանուր կարողությունը կազմում էր 76,8 հազար կիլովատ-ժամ։

Երկրորդ հնգամյակում էլեկտրաէներգիայի արտադրության այդպիսի աճը սոցիալիստական շինարարության ամենախոշոր նվաճումներից էր, որի շնորհիվ լայն հնարավորություններ բացվեցին արդյունաբերության սոցիալիստական վերակառուցման ու նրա հետագա զարգացման համար։ Էլեկտրաէներ-

1 Տե՛ս «ՀԿ(բ)Կ VIII համագումարի բանաձևերը», էջ 9—10։

դիայի արմտ աճի հիման վրա հնարավոր դարձավ ծանր արդյունաբերության վերակառուցումը։ Հնգամյակի ընթացքում ընդարձակվեցին Ալավերդու պղնձի կոմբինատի արտադրական ցեխերը։ Կառուցվեցին նոր գործարաններ ու նոր ցեխեր։ 1936 թվականին փորձնական շահագործման հանձնվեց Ալավերդու կոմբինատի մետաղաձուլական գործարանը։ Ղափանում կառուցվեց պղնձարդյունաբերության վերակառուցման ու զարգացման համար վճռական նշանակություն ունեցող հարստացուցիչ գործարանը։

Երկրորդ հնգամյակում զգալի կերպով ընդարձակվեց գունավոր մետալուրգիայի հանքային բազան։ Նախապատրաստական լուրջ աշխատանքներ կատարվեցին մոլիբդենի և պղնձի հանքագործարանային արտադրություն ստեղծելու ուղղությամբ։

Շահագործման հանձնվեց Ալավերդու պղնձարջասպի գործարանը, որի արտադրանքը օգտագործվում էր Անդրկովկասի երեք հանրապետությունների այգեգործության մեջ։

Երկրորդ հնգամյակում խոշոր տեղաշարժեր կատարվեցին հանրապետության շինանյութերի արտադրության մեջ։ Միջոցառումներ ձեռնարկվեցին հանրապետության շինանյութերի հումքի աղբյուրների գիտական ու տեխնիկական ուսումնասիրություններ կատարելու, շինանյութերի նոր տեսակների արտադրություն կազմակերպելու, գործող ձեռնարկությունները վերակառուցելու և ընդարձակելու ուղղությամբ։

Հնգամյակի տարիներին շահագործման հանձնվեցին ժողովրդական տնտեսության համար կարևոր նշանակություն ունեցող Դավալուի ցեմենտի, երևանի բաղալուի, պեմզաբետոնի բլոկների, գրանիտ կտրող և մարմար մշակող գործարանները։ Ընդարձակվեցին Արթիկի տուֆի և Անի-Պեմզայի ձեռնարկությունները։ 1937 թվականին Արթիկի տուֆի արտադրությունը կազմեց 103 հազար խորանարդ մետր,- պեմզա-բլոկինը՝ 489 հազար հատ, ցեմենտի արտադրությունը՝ 76,7 հազար տոննա, աղյուսինը՝ 4,3 միլիոն հատ, դիատոմիտինը՝ 5,4 հազար հատ, գրանիտինը՝ 23,1 հազար խորանարդ մետր, կրինը՝ 79,0 հազար տոննա[1]։

Հնգամյակի ընթացքում վերակառուցվեցին ու ընդարձակվեցին մետաղամշակման ձեռնարկությունները։ ՀԿ(բ)Կ IX համագումարի որոշման համաձայն վերակառուցվեցին Երևանի մեքենաշինական և Լենինականի մեխանիկական գործարանները։ Երևանի Զերժինսկու անվան մեքենաշինական գործարանում կազմակերպվեց նավթային մղիչ խողովակների և կոմպրեսորների շարժիչների արտադրություն։ Արտադրանքի այդ նոր տեսակների յուրացման շնորհիվ գործարանը ստացավ համամիութենական նշանակություն։

Արտադրության հիմնական միջոցների խոշոր աճի շնորհիվ ավելացավ նաև ծանր արդյունաբերության արտադրանքի տեսակարար կշիռը։ 1937 թվականին այն կազմեց 84 տոկոս։ Ամբողջ արդյունաբերության 255,2 միլիոն ռուբլու համախառն արտադրանքի 214,3 միլիոն ռուբլի բաժին էր ընկնում ծանր արդյունաբերությանը։

---

1 Տե՛ս «Социалистическое строительство Армянской ССР», էջ 40։

Հնգամյակի տարիներին ՍՍՀՄ-ի բոլոր ազգային հանրապետություններում, այդ թվում նաև Հայաստանում զարկ տրվեց թեթև ու սննդի արդյունաբերության ձեռնարկությունների շինարարությանը։ Գործող ձեռնարկությունների վերակառուցմանը զուգընթաց Հայաստանում կառուցվեցին և շահագործման հանձնվեցին մի շարք գործարաններ ու ֆաբրիկաներ։ Լենինականում հիմնադրվեցին մանվածքային, կարի ու կոշիկի գործարանները, վերակառուցվեցին ու ընդարձակվեցին Երևանի կարի, կոշիկի, կաշվի, մետաքսյա գործվածքեղենի և մյուս գործող ձեռնարկությունները։

Երկրորդ հնգամյակում հանրապետության թեթև արդյունաբերությունը ավելի բազմաճյուղային դարձավ։ Աճեց ժողովրդական սպառման առարկաների համախառն արտադրանքը։

Երկրորդ հնգամյակում վերակառուցվեցին ու ընդարձակվեցին նաև հանրապետության սննդարդյունաբերության մի շարք, այդ թվում Երևանի մսի կոմբինատը և «Արարատ» տրեստի ձեռնարկությունները։ 1937 թվականին «Արարատ» տրեստը երկրին տվել է 70 հազար հեկտոլիտր գինի, 48 հազար հեկտոլիտր կոնյակ, 20 հազար հեկտոլիտր օղի և 330 հազար հեկտոլիտր այլ տեսակի խմիչքներ[1]։

Տեխնիկական վերակառուցման շնորհիվ կրկնապատկվեց Երևանի պահածոների գործարանի արտադրանքը։ 1937 թվականին այն կազմեց մոտ 20 միլիոն պայմանական տուփ։

1932 թվականի համեմատությամբ, երկրորդ հնգամյակի վերջին աճեց մսի, կենդանական յուղի, հրուշակեղենի, պանրի արտադրանքը։

Հնգամյակի տարիներին ընդարձակվեց ու զարգացավ տեղական արդյունաբերությունն ու արհեստագործական կոոպերացիան։ 1932 թվականի համեմատությամբ արհեստագործական կոոպերացիայի արդյունաբերության արտադրանքը աճեց երկու անգամ։

Առավելապես արագ էր աճում ծանր արդյունաբերության համախառն արտադրանքը։ 1932 թվականի 85,6 միլիոն ռուբլու դիմաց ծանր արդյունաբերության համախառն արտադրանքը 1937 թվականին կազմեց 214,3 միլիոն ռուբլի, թեթև արդյունաբերության համախառն արտադրանքը 1932 թվականի 25,4 միլիոն ռուբլուց 1937 թվականին հասավ 40,9 միլիոն ռուբլու[2]։

Արդյունաբերության վերակառուցման և զարգացման ուղղությամբ ձեռք բերված վերոհիշյալ նվաճումները արդյունք էին առաջին հերթին կապիտալ այն խոշոր ներդրումների, որոնց ընդհանուր գումարը հասավ 233,6 միլիոն ռուբլու[3]։ Ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ հնգամյակում կապիտալ ներդրումների մեծ մասը տրամադրվեց ծանր արդյունաբերության զարգացմանը։

Հնգամյա պլանի հաջող կատարման շնորհիվ Հայաստանը դարձավ ինդուստրիալ առաջավոր հանրապետություն։ Բարձրացավ հանրապետության արդյունաբերության տեխնիկական զինվածությունը, աճեց ու բազմամարդ

---

1 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 28 նոյեմբերի 1937 թ.։

2 Տե՛ս «Социалистическое строительство Армянской ССР», էջ 23։

3 Տե՛ս նույն տեղում, էջ 19։

դարձավ տեխնիկական ինտելիգենցիան։ 1936 թվականին բանվորների ու ծառայողների թիվը հասավ 105 հազարի[1]։

Արդյունաբերական ձեռնարկությունները համալրվեցին երիտասարդ կադրերով, որոնք արագ կերպով յուրացրեցին ժամանակակից տեխնիկայի գործարանային ու շինարարական մեխանիզմները։ Բանվոր դասակարգի որակական փոփոխման մյուս բնորոշ կողմն էլ այն էր, որ տեխնիկայի ուսուցման շնորհիվ, նրա հիմնական մասը դարձավ հարվածային, նոր վերաբերմունք մշակեց աշխատանքի նկատմամբ։ Հանրապետության բանվոր դասակարգի քանակական և որակական աճը վճռական նշանակություն ունեցավ հնգամյակի քաղաքական ու տնտեսական խնդիրները լուծելու գործում։

Հնգամյակի ընթացքում սոցիալիստական ինդուստրացման քաղաքականության անշեղ կիրառման շնորհիվ հանրապետության մի շարք շրջաններում ստեղծվեցին արդյունաբերական նոր կենտրոններ, կառուցվեցին բանվորական ավաններ և կատարվեց բանվոր դասակարգի ուժերի նոր տեղաբաշխում։

Հնգամյակի տարիներին զգալի տեղաշարժեր կատարվեցին հանրապետության տրանսպորտում։ Սոցիալիստական ինդուստրիայի ընդարձակումը, գյուղատնտեսության մեջ բարդ մեխանիզմների օգտագործումը և ընդհանրապես արտադրողական ուժերի համաչափ տեղաբաշխումը հումքի աղբյուրներին մոտ, պահանջում էին արագացնել երկաթուղային տրանսպորտի բեռնաշրջանառությունը և ընդարձակել անռելս ճանապարհների ցանցը։ Միայն հնգամյակի առաջին երկու տարում շահագործման հանձնվեցին 823 կմ երկարությամբ անռելս նոր ճանապարհներ, ինչպես նաև ավտոտրանսպորտային երթևեկության մի քանի նոր ուղեմասեր[2]։

Արմատական փոփոխություններ կատարվեցին գյուղատնտեսության մեջ։ Իրականացվեց գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը։ 1937 թվականին Հայաստանի ամբողջ գյուղացիական տնտեսությունների 88,7 տոկոսն ընդգրկված էր կոլտնտեսությունների մեջ։ 1932 թվականի 893 կոլտնտեսությունների փոխարեն 1937 թվականին Հայաստանում կային 1074 կոլտնտեսություններ և 16 սովխոզներ։ Նրանցում էր կենտրոնացված հանրապետության բոլոր ցանքատարածությունների 92,6 տոկոսը[3]։

Կոլտնտեսային շինարարության ծավալման գործում կարևոր նշանակություն ունեցավ գյուղատնտեսական արտելի օրինակելի կանոնադրությունը, որն ընդունվեց 1935 թվականին ՍՍՀՄ հարվածային կոլտնտեսականների երկրորդ համագումարում։ Կանոնադրության մեջ շարադրված էին կոլտնտեսային կյանքի նորմաները, հանրային տնտեսությունը վարելու ձևերն ու եղանակները։

Համագումարի կողմից ընդունված օրինակելի կանոնադրությունը քննարկվեց երկրի բոլոր կոլտնտեսություններում։

Գյուղատնտեսական արտելի նոր կանոնադրության կիրառման շնորհիվ հնարավոր դարձավ բացահայտել կոլտնտեսային շինարարության մեջ թույլ տրված սխալներն ու թերությունները։ Խնդիր դրվեց լրիվ կերպով օգտագոր-

---

1 Տե՛ս «Социалистическое строительство Армянской ССР», էջ 12։

2 Տե՛ս Մկի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 25, գ. 4ա։

3 Տե՛ս «Советская Армения за 40 лет», էջ 70։

ծել կոլտնտեսությունների արտադրական ու աշխատանքային հնարավորությունները, վերացնել աշխօրերի նորմավորման, կադրերի տեղաբաշխման, տնամերձերի օգտագործման և կոլտնտեսականների իրավունքների պահպանման գործում թույլ տրված սխալներն ու կամայականությունները։

Մի շարք տարիների անբերրիության, ինչպես և վարչարարության և բյուրոկրատական վերաբերմունքի հետևանքով, 1934 թվականին Հայաստանի հյուսիսային մի քանի շրջաններում ստեղծվել էին տնտեսական լուրջ դժվարություններ։ Տեղական պայմաններն աչքաթող անելով վերադաս մարմինները թույլ էին տվել ցանքսի և մթերման պլանավորման սխալներ, որի հետևանքով կոլտնտեսականների մեջ առաջ են գալիս որոշ դժգոհություններ, որոնք անդրադառնում էին կոլտնտեսությունների աշխատանքների ընթացքի վրա։ 1934 թվականին Անդրերկրկոմը և ՀԿ(բ)Կ կենտկոմը միջոցառումներ մշակեցին դրանց վերացման համար։ ՀԿ(բ)Կ կենտկոմի ցուցումներով գյուղացիական կուսակցական կազմակերպությունները ագիտացիոն-պրոպագանդիստական խոշոր աշխատանք կատարեցին թույլ տված սխալների ու թերությունների պատճառները պարզաբանելու և կուլակային թշնամական տարրերի կողմից դրանք օգտագործելու փորձերը կանխելու նպատակով։ Կոլտնտեսային կարգերի թշնամիները շարունակում էին օգտագործել առանձին դժվարությունները և խոչընդոտում էին գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը։ Կոլտնտեսային գյուղացիությունը համախմբված կուսակցական ու հասարակական կազմակերպությունների շուրջը, բացահայտում ու մերկացնում էր դասակարգային թշնամիների փորձերը և տնտեսապես ու կազմակերպչորեն ամրապնդում կոլտնտեսությունները։

Հնգամյակների տարիներին գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման և կոլտնտեսությունները տնտեսապես ամրապնդելու գործում վճռական դեր կատարեցին ՄՏ կայանները։ 1932 թվականի 4 ՄՏ կայանների փոխարեն 1937 թվականին Հայաստանում գործում էին 24 ՄՏ կայաններ։ Բոլոր ՄՏ կայաններում, սովխոզներում և կոլտնտեսություններում գյուղատնտեսական աշխատանքներին սպասարկում էին 1358 տրակտոր, 127 կոմբայն, 395 բեռնատար ավտոմեքենա և 254 բարդ կառուցվածքի կալսիչ[1]։

Հնգամյակի տարիներին զարկ տրվեց գյուղական էլեկտրակայանների շինարարությանը, որի շնորհիվ գյուղատնտեսական աշխատանքներում ընդարձակվեց էլեկտրաէներգիայի կիրառումը։ 1932 թվականի 28 կոլտնտեսությունների փոխարեն, 1937 թվականին էլեկտրիֆիկացման ենթարկվեցին 68 կոլտնտեսություններ[2]։

1937 թվականին, 1932 թվականի համեմատությամբ զգալիորեն աճեց հանրապետության գյուղատնտեսության համախառն արտադրանքը։ 1932 թվականի 60,8 միլիոն ռուբլու դիմաց, 1937 թվականին այն կազմեց 99,1 միլիոն ռուբլի[3]։

Գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվության և անասնապահության մթերատվության բարձրացման շնորհիվ, աճեցին կոլտնտեսությունների

1 Տե՛ս «Социалистическое строительство Армянской ССР», էջ 48։

2 Տե՛ս նույն տեղում, էջ 44։

3 Տե՛ս նույն տեղում, էջ 47։

եկամուտները։ 1937 թվականին հանրապետության բոլոր կոլտնտեսությունների համախառն եկամուտը կազմեց 181,1 միլիոն ռուբլի, 1932 թվականի 45,4 միլիոն ռուբլու դիմաց։ Հնգամյակի ընթացքում կառուցվեցին մի շարք ջրհան կայաններ, վերակառուցվեցին Էջմիածնի ու Շիրակի ջրանցքները, ոռոգելի հողերի տարածությունները աճեցին ավելի քան 40 հազար հեկտարով։ 1932 թվականի 119,2 հազարի փոխարեն, հանրապետության ոռոգելի տարածությունները 1937 թվականին կազմեցին 160,6 հազար հեկտար։

Հնգամյակի ընթացքում կոլեկտիվացման քաղաքականության հաջող իրականացման, կոլտնտեսությունների ու սովխոզների տնտեսական և տեխնիկական բազան ամրապնդելու շնորհիվ Հայաստանի գյուղատնտեսության մեջ գրեթե լիովին տիրապետող դարձավ սոցիալիստական տնտեսաձևը։ Գյուղում ամբողջապես վերացվեցին կապիտալիստական տարրերը։ Փոխվեց գյուղացիության սոցիալական դեմքը։ Աճեց նրա քաղաքական ու տնտեսական ակտիվությունը։

Բանվոր դասակարգի և գյուղացիության քանակական ու որակական վերափոխմանը զուգընթաց, վերափոխվեց նաև ինտելիգենցիան։ Նախկին բուրժուական ինտելիգենցիայի փոխարեն ստեղծվեց բանվորների և գյուղացիների ծոցից դուրս եկած նոր սոցիալիստական ինտելիգենցիա, որը խոշոր դեր կատարեց հանրապետության հասարակական քաղաքական ու տնտեսական կյանքում։

Հանրապետությունում կատարված սոցիալական ու դասակարգային կառուցվածքի փոփոխությունների հետևանքով վերացան ինչպես բանվոր դասակարգի ու գյուղացիության, այնպես էլ այդ երկու դասակարգերի ու ինտելիգենցիայի միջև եղած վաղեմի հակասությունները։

Երկրորդ հնգամյակում ժողովրդական տնտեսության հիմնական վերակառուցումն ավարտելու և այն արագ թափով զարգացնելու հիման վրա զգալի չափով բարձրացավ աշխատավորների նյութական բարեկեցությունը և կուլտուրական մակարդակը։ Աճեցին նաև կոլտնտեսականների նատուրալ և դրամական եկամուտները։

Բանվոր-ծառայողների և կոլտնտեսականների եկամուտների աճի հիման վրա բարձրացավ նրանց գնողունակությունը։ Զգալի չափով ծավալվեց առևտուրն ու ապրանքաշրջանառությունը։ Առևտրի ասպարեզից ամբողջապես դուրս մղվեց մասնավոր կապիտալը։ Մոտ երեք անգամ աճեց պետական ու կոոպերատիվ առևտրի ծավալը[1]։

Լայն ծավալ ստացավ բնակարանային և կոմունալ շինարարությունը։ Հանրապետության քաղաքներում և արդյունաբերական այլ կենտրոններում կառուցվեցին հազարավոր նոր բնակելի տներ։ 1933—1937 թթ. քաղաքներում ու բանվորական ավաններում շահագործման հանձնվեց 483 հազար քառ. մետր բնակելի տարածություն[2]։

Աճեցին պետության կողմից բնակչությանը ցույց տրվող օգնության ֆոնդերը։ Սոցիալական ապահովության միջոցները 1936 թվականին կազմեցին

1 Տե՛ս «Социалистическое строительство Армянской ССР», էջ 97։

2 Տե՛ս «Советская Армения за 40 лет», էջ 143։

85 միլիոն, իսկ կենսաթոշակները՝ 12 միլիոն ռուբլի[1]։ Բոլոր հիվանդանոցներում մահճակալների թիվը 1933 թվականի 1600-ից 1937 թվականին հասավ 2214-ի։

Նյութական բարեկեցության բարձրացմանը զուգընթաց աճեց հանրապետության բնակչության թիվը։

Հնգամյակի տարիներին Հայաստանում հաջողությամբ իրագործվեց կոմունիստական կուսակցության լենինյան ազգային քաղաքականությունը, որի շնորհիվ Հայաստանը անցավ քաղաքական, տնտեսական ու կուլտուրական զարգացման հոյակապ ուղի։ Արմատապես վերակառուցվեց Սովետական Հայաստանի ժողովրդական տնտեսությունը։

Հնգամյակի վերջում մեր երկրում հիմնականում ավարտվեց սոցիալիզմի կառուցումը։

---

1 Տե՛ս Մ.Ի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 25, գ. 4ա։

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ

1. ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՀԱՂԹԱՆԱԿԸ: ՍՍՀՄ ՆՈՐ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ: ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ:

1. ԿԱՊԻՏԱԼԻԶՄԻՑ ՍՈՑԻԱԼԻԶՄԻՆ ԱՆՑՆԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՆՐԱԳՈՒՄԱՐԸ: ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՀԱՅ ԱՋԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Երկրի ինդուստրացման և կոլտնտեսային կարգերի հաղթանակի շնորհիվ ՍՍՀՄ-ը սոցիալիզմի կառուցման բնագավառում վճռական հաջողություններ հասավ: Իրականացավ Վ. Ի. Լենինի հանճարեղ կանխատեսումը. նեպական Ռուսաստանը դարձավ սոցիալիստական: Դա ՍՍՀՄ 1917—1937 թթ. զարգացման կարևորագույն հանրագումարն էր, որը համաշխարհային պատմական նշանակություն ուներ:

Առաջին հնգամյակի պլանի հաջող կատարումը ապահովեց սոցիալիստական էկոնոմիկայի հիմքի կառուցումը, նախադրյալներ ստեղծվեցին ՍՍՀՄ-ում սոցիալիզմի լիակատար հաղթանակի համար:

Աշխատավոր լայն մասսաների հերոսական աշխատանքի շնորհիվ երկրորդ հնգամյակը ևս կատարվեց հաջողությամբ և ժամկետից շուտ: Ավարտվեց ժողովրդական տնտեսության տեխնիկական վերակառուցումը: Երկրում վերջնականապես վերացվեցին շահագործող դասակարգերը:

Երկրորդ հնգամյակի վերջում ժողովրդական տնտեսության մեջ արդյունաբերության արտադրանքը կազմեց 77,4 տոկոս[1]: Արտադրության միջոցների թողարկման տեսակարար կշիռը զգալի չափով բարձրացավ: Արագ թափով ընկըսեց զարգանալ սև մետալուրգիան: 1913 թվականի համեմատությամբ 1936 թվականին մեքենաշինության արտադրանքը ավելացավ 28 անգամ, հաստոցաշինությանը՝ 31 անգամ[2]:

Արդյունաբերության բուռն զարգացումը հնարավորություն տվեց ապահովել ՍՍՀՄ տեխնիկա-տնտեսական անկախությունը առաջավոր կապիտալիստական երկրներից: Հայրենական արդյունաբերությունը արդեն ապահովում էր շոգեքարշերի, վագոնների, ներհատիչ մեքենաների, հաստոցների, գյու-

---

1 *Տե՛ս «Խորհրդային իշխանության 20 տարին», Երևան, 1938, էջ 14:*

2 *Տե՛ս նույն տեղում, էջ 29:*

ղատնտեսական մեքենաների պահանջմունքը, որոնց մեծ մասը մինչ այդ ներմուծվում էր արտասահմանից։

Սոցիալիզմի կարևորագույն նվաճումներից էր նաև նոր տեխնիկայի հիման վրա առաջացած արտադրության առաջավորների շարժումը, որը վճռական դեր խաղաց ինչպես տեխնիկական հեղաշրջման, այնպես էլ ողջ ժողովրդական տնտեսությունը արագ թափով զարգացնելու գործում։

Արտադրողական ուժերի զարգացմանը հսկայական թափ հաղորդեց նորարարների շարժումը, որը միաժամանակ ժողովրդական մասսաների ուժերի աճման, նրանց կոմունիստական գիտակցության բարձրացման փայլուն ապացույցն էր։ Այդպիսի շարժումը կարող էր առաջանալ միայն սոցիալիստական տնտեսության պայմաններում։ «Հիրավի, դա աշխատանքի բնագավառում մարդկային մտքի հսկայական չափերի հասնող արթնացումն է,— ասել է այդ առթիվ ֆրանսիական ականավոր գրող Ռոմեն Ռոլանը։— Այն հնարավոր է միայն իսկական սոցիալիստական հասարակարգում, որտեղ բանվորն իր աշխատանքի տերն է և ոչ թե շահագործվող, որտեղ նա ոչ թե աշխատում է իրեն հշնամի դասակարգի հարստացման համար, որի ամբողջ հոգսը այն է, որ բանվորներից ավելի մեծ օգուտ քաղի, այլ ամբողջ հասարակության համար, որտեղ բանվորը իրավամբ գրավում է առաջին տեղը։ Արժանապատվության և հպարտության այդ զգացումը իրոք որ շատ հրապուրիչ է»։

Նորարարական շարժումը մեծ ծավալ ստացավ նաև գյուղատնտեսության բնագավառում, որը հետևանք էր կոլտնտեսությունների քաղաքական ու կազմակերպական ամրապնդման, կոլտնտեսականների և, ընդհանրապես, գյուղատնտեսության աշխատողների սոցիալիստական գիտակցության բարձրացման։

1937 թվականին ավարտվեց ՍՍՀՄ գյուղատնտեսության կոլեկտիվացումը։ 18,5 միլիոն գյուղացիական տնտեսություններ կամ ամբողջ գյուղացիական տնտեսությունների 93 տոկոսը և հացահատիկի ցանքատարածությունների 99,1 տոկոսն արդեն միավորված էին կոլտնտեսությունների մեջ[1]։

Կոլտնտեսային կարգի հաղթանակն ու ամրապնդումը, գյուղի սոցիալիստական վերափոխումը է՛լ ավելի ամրապնդեցին բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը, ապահովեցին սովետական ժողովրդի բարոյա-քաղաքական միասնությունը։

Բարձրացավ ժողովրդի նյութական բարեկեցությունը, զգալիորեն զարգացան գիտությունը և կուլտուրան։ Ավելի քան երկուևկես անգամ աճեց բանվորների ու ծառայողների աշխատավարձի ֆոնդը, երեք անգամից ավելի՝ կոլտնտեսականների դրամական եկամուտը։

Սովետական Միության կոմունիստական կուսակցության ազգային քաղաքականության կիրառման շնորհիվ նախկինում հետամնաց ծայրամասային ժողովուրդները պատմական կարճ ժամանակամիջոցում, ժողովրդական տնտեսության զարգացման առավել արագ տեմպերի հետևանքով, ձեռք բերեցին հսկայական նվաճումներ սոցիալիզմի կառուցման ճանապարհին։

Զգալի վերելք ապրեց նաև Անդրկովկասյան Ֆեդերացիան։ Երկրամասում սկսեցին զարգանալ հանքային հարստությունների մշակումը, քիմիական արդ-

1 Տե՛ս «Խորհրդային իշխանության 20 տարին», էջ 43։

յունաբերության մի շարք ճյուղեր, մեքենաշինությունը, տեքստիլ արդյունաբերությունը և այլն։ Նավթի հանույթը Ադրբեջանում կրկնապատկվեց։ 1937 թվականին ՍՍՀՄ նավթի և գազի հանույթի 76 տոկոսը տալիս էր Բաքուն։ Հանրապետության արդյունաբերության տեսակարար կշիռը կազմեց 89,7 տոկոս, Վրացական ՍՍՀ-ում՝ 75 տոկոս, իսկ Հայկական ՍՍՀ-ում՝ 84 տոկոս։

Հայկական ՍՍՀ արդյունաբերության համախառն արտադրանքը 1938 թվականին՝ 1919 թվականի համեմատությամբ աճեց 189,6 անգամ[1], էլեկտրաէներգիայի արտադրությունը նույն ժամանակներում 1,5 հազար կվտ-ից հասավ 88,1 հազար կվտ-ի[2]։

Նախկինում հետամնաց ծայրամասերը կարճ ժամանակում դարձան ինդուստրիալ-կոլտնտեսային հանրապետություններ։

Կարևորագույն խնդիրներից մեկը բանվորական բարձրորակ կադրերի ստեղծումն էր։ Ազգային բանվորական կադրերի պատրաստումը վճռական դեր խաղաց այդ հանրապետություններում բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի ամրապնդման, քաղաքի և գյուղի մերձեցման, ՍՍՀՄ ազգերի բարեկամության ամրապնդման գործում։ Սակայն կային մի շարք հանգամանքներ, որոնք խանգարում էին արդյունաբերության և ամբողջ էկոնոմիկայի ավելի արագ զարգացմանը։

Սովետական օրինականության խախտման հետևանքով շատ արդյունաբերական ձեռնարկություններ զրկվեցին լավագույն ինժեներա-տեխնիկական կադրերից, որոնց պահանջը ազգային հանրապետություններում առանց այն էլ շատ մեծ էր։ Արտադրության որոշ ապաշնորհ ղեկավարներ պլանների ձախողումը բացատրում էին մտացածին «ժողովրդի թշնամիներին» վնասարարությամբ և կարիերիստական նպատակներով հաշվեհարդար տեսնում համարձակ ու անաչառ կադրերի հետ։

Անդրկովկասում կոլտնտեսային շինարարության բնագավառում կային լուրջ դժվարություններ։ Կոլտնտեսային շարժմանը հատկապես խանգարում էին կուլակային-բեկական ելույթներն ու բանդիտական շարժումները, որոնք բավական ուժեղ ընթացք ստացան 1930—1931 թվականներին։ Կոլտնտեսություններին մեծ վնաս հասցրին նաև ղեկավարման վարչարարական մեթոդները, կամավորության սկզբունքի խախտումը, լեռնային շրջանների համար կոլեկտիվացման բարձր տեմպերի ընդունումը, տեղական առանձնահատկությունների անտեսումը։ Այդ էր պատճառը, որ Անդրկովկասում գյուղացիության հիմնական մասսան (Ադրբեջանական ՍՍՀ-ում մոտ 50 տոկոսը և Վրացական ու Հայկական ՍՍՀ-ներում՝ ավելի քան 40 տոկոսը) կոլտնտեսություն մտավ որոշ դանդաղումով՝ երկրորդ հնգամյակի տարիներին։

Կուսակցության և կառավարության ձեռնարկած միջոցառումների շնորհիվ գյուղացիական տնտեսությունների կոլեկտիվացման մակարդակը 1932 թվականի համեմատությամբ 1937 թվականին Ադրբեջանում 51 տոկոսից հասավ 87 տոկոսի, Հայաստանում՝ 38-ից 83,7 տոկոսի, Վրաստանում՝ 36-ից 77 տո-

---

1 Տե՛ս Социалистическое строительство Армянской ССР», էջ 23։

2 Տե՛ս նույն տեղում, էջ 24։

կոսի։ Ահեցին բազմաթիվ նոր կադրեր, կոլտնտեսային շինարարության առաջավորներ։

Երկրորդ հնգամյակի վերջում կոլեկտիվացումը բոլոր հանրապետություններում հիմնականում ավարտվեց, որով երկրի բնակչության գերակշռող մասը ընդգրկվեց սոցիալիստական շինարարության մեջ։

Ազգային բանվոր դասակարգի ձևավորումը կարևոր դեր խաղաց տեղերում թե՛ արդյունաբերության և թե՛ գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման համար։

Ազգային ու տեղական որոշ յուրահատկությունների, մասնավորապես քոչվորական կյանքի և տոհմական ու ֆեոդալական հարաբերությունների մնացուկների առկայության պատճառով ավտոնոմ հանրապետություններում և մարզերում գյուղատնտեսության կոլեկտիվացումը ավելի դանդաղ էր ընթանում, քան կենտրոնական Ռուսաստանում և մի շարք ազգային հանրապետություններում։

Գյուղատնտեսության կոլեկտիվացումը և նրա տեխնիկական վերակառուցումը կարևոր նշանակություն ունեցան հետամնաց ազգային շրջանների առաջընթացի համար։

Սովետական երկիրը տնտեսական ու քաղաքական մեծ թռիչք կատարեց։ Սոցիալիզմի համար մղվող պայքարը հաղթանակով ավարտվեց։ Սոցիալիզմը թե՛ քաղաքում և թե՛ գյուղում դարձավ միակ տիրապետող սիստեմը։

Սոցիալիզմի հաղթանակը սովետական հասարակության մեջ ընդմիշտ վերացրեց ներքին հակադրություններ ծնող բոլոր պատճառները։ Դադարեց գոյություն ունենալ վերջին շահագործող դասակարգը՝ կուլակությունը։ Այլևս չէր գործում արտադրության միջոցների մասնավոր սեփականության սիստեմը, որը հասարակությունը թշնամի դասակարգերի բաժանելու հիմքն էր հանդիսանում։ Հասարակության տնտեսական հիմքը խարսխվեց արտադրության միջոցների սոցիալիստական սեփականության վրա։

Շահագործման ոչնչացումը և ընդհանուր շահերով ու բարեկամական կապերով միավորված միասնական հասարակարգի ստեղծումը պատմական նշանակություն ունեցող իրադարձություն էր, սոցիալիզմի խոշորագույն նվաճումը։ Հաղթանակեց սոցիալիստական տնտեսության համապարփակ ձևը։ Այդ ամենի հետևանքով ձևավորվեցին սոցիալիստական ազգերը։ Բանվորների և ծառայողների թիվը ՍՍՀՄ-ում աճեց և 1936 թվականին հասավ 25,8 միլիոնի՝ 1913 թվականի 11,4 միլիոնի դիմաց[1]։ Նախկինում հետամնաց ծայրամասերում ստեղծվեցին կոմունիստական գաղափարներով զինված ազգային բանվորական բազմահազար կադրեր։ Քանակական աճի հետ մեկտեղ արագորեն բարձրանում էր բանվորների կուլտուրական և տեխնիկական մակարդակը։ Բանվորության գերակշռող մասը հանձնել էր պետական տեխնիկական քննություններ։ Սոցիալիզմի կառուցման ընթացքում բանվոր դասակարգը հանդես եկավ որպես ղեկավար և որոշիչ ուժ։ Մանր, ցաք ու ցրիվ գյուղացիական տնտեսությունների փոխարեն ստեղծվեց սոցիալիստական հիմունքներով միավորված կոլտնտեսային գյուղացիությունը, որը կանգնեց սոցիալիստական հասարա-

1 Տե՛ս «Խորհրդային իշխանության 20 տարին», էջ 13։

կարդ կպուտցողների շարքերում։ Վերացավ գյուղի դարավոր հետամնացությունը։ Գյուղում հանդես եկան բազմաթիվ նոր կադրեր, գյուղատնտեսության մասնագետներ, մեխանիզատորներ։ Երկրորդ հնգամյակի վերջում տրակտորիստների թիվը հասնում էր մեկ միլիոնի, ավտովարորդներինը՝ 100 հազարի, կոմբայնավարներինը և ղեկակալներինը՝ 200 հազարի։ Պատրաստվեցին կոլտնտեսային հազարավոր նախագահներ, բրիգադիրներ, ֆերմաների վարիչներ և բազմաթիվ այլ մասնագիտական կադրեր։ Այդ բոլորի հետևանքով սկսեցին աստիճանաբար վերափոխվել գյուղացիության հոգեբանությունն ու գիտակցությունը։

Սոցիալիստական շինարարության զարգացման ընդհանուր պրոցեսում գյուղական բնակչության մի մասը աշխատանքի էր անցնում արդյունաբերության, տրանսպորտի և այլ բնագավառներում։ Եթե 1913 թվականին ցարական Ռուսաստանի բնակչության 75 տոկոսն էր զբաղված գյուղատնտեսության և անտառային տնտեսության մեջ, ապա 1937 թվականին՝ 56 տոկոսը։

Զգալի փոփոխություն տեղի ունեցավ նաև սովետական ինտելիգենցիայի կյանքում, որն ամբողջովին նվիրվեց բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության գործին, սոցիալիստական հասարակարգի հաղթանակի գործին։ Երկրորդ հնգամյակի վերջում սովետական ինտելիգենցիան իր շարքերում հաշվում էր 9,6 միլիոն մարդ, որոնց գերակշռող մասը ծագում էր բանվորներից, գյուղացիներից և մյուս աշխատավոր տարրերից։ Երկրում ամենուրեք հաստատվեց «Յուրաքանչյուրից ըստ ընդունակությունների, յուրաքանչյուրին ըստ աշխատանքի» սոցիալիստական սկզբունքը։

Մասսաների այն գիտակցությունը, որ իրենց աշխատանքի արդյունքը պատկանում էր ոչ թե շահագործողներին, այլ հենց իրենց, հսկայական հեղաշրջող դեր կատարեց նրանց հոգեկան կերպարի վերափոխման գործում, սոցիալիզմի կառուցման համար մղվող պայքարում։

Սոցիալիզմի հաղթանակով վերացան քաղաքի և գյուղի միջև նախկինում գոյություն ունեցող հիմնական հակասությունները։ Ռեալ պայմաններ ստեղծվեցին մտավոր և ֆիզիկական աշխատանքի հակասությունները վերացնելու համար։

Սոցիալիստական հասարակարգում պետական և կոոպերատիվ սեփականության երկու ձևերի ընդհանրությունը ավելի ամրապնդեց բանվոր դասակարգի և կոլտնտեսային գյուղացիության դաշինքը։ Այդ հիմքի վրա ստեղծվեց սոցիալիստական հասարակության սոցիալ-քաղաքական, գաղափարական, հոգեկան ու բարոյական միասնությունը, որը նախկին հասարակարգերում չտեսնված, միայն սոցիալիստական հասարակությանը հատուկ երևույթ էր և արդյունք կոմունիստական կուսակցության ու սովետական պետության լենինյան քաղաքականության հաղթանակի։

Սովետական ժողովուրդների միասնության ստեղծումը դարձավ սոցիալիստական հասարակության շարժիչ կարևոր ուժ։

Սոցիալիզմի կարևորագույն հաղթանակներից մեկն էլ ազգային հարցի լուծումն էր։

Սովետական հասարակարգը լայն հնարավորություններ ստեղծեց ազգերի զարգացման և բարգավաճման համար։ Կոմունիստական կուսակցության

լենինյան ազգային քաղաքականության հաղթանակն ապահովեց ազգերի լիակատար իրավահավասարությունը։ Խոշոր աշխատանք կատարվեց անցյալից ժառանգած տնտեսական և կուլտուրական հետամնացությունը վերացնելու ուղղությամբ։ Այդ բոլորի հետևանքով նախկինում հետամնաց ազգերը վերածնվեցին ու առաջադիմական մեծ թռիչք կատարեցին։ Ձևավորվեցին սոցիալիստական ազգերը, որոնք իրենց հոգևոր կերպարով և քաղաքական նպատակներով միանգամայն նոր որակ էին ներկայացնում։ Նրանց հոգևոր կերպարի բնորոշ գիծը դարձավ պրոլետարական ինտերնացիոնալիզմի, ժողովուրդների բարեկամության գաղափարը։ Ավելի ուժեղացավ սոցիալիստական ազգերի զարգացման ու մերձեցման պրոցեսը։

Սոցիալիզմի հաղթանակն ամրապնդեց սովետական ժողովուրդների բարեկեցության նյութական հիմքը, պայմաններ ստեղծեց ավելի ունևոր և կուլտուրական կյանքի համար։ Քաղաքի և գյուղի աշխատավորների կուլտուրական-կենցաղային դրության բարելավման, նրանց լուսավորության, առողջապահության և այլ կարիքների վրա պետության կատարած ծախսերը 1932 թվականի 8,3 միլիարդ ռուբլու դիմաց 1937 թվականին կազմեցին 30,8 միլիարդ ռուբլի։ Հսկայական միջոցներ էին հատկացվում նաև կոմունալ տնտեսության, բուժհիմնարկների, մանկապարտեզների, մանկամսուրների ցանցի ընդլայնման և այլ նպատակների համար։ Միջին հաշվով մեկ բանվորի ու մեկ ծառայողի վրա կատարած տարեկան ծախսը 1936 թ. կազմում էր 601 ռուբլի[1]։ Զգալի չափով բարձրացավ ժողովրդի կրթական մակարդակը։ 1939 թվականի մարդահամարի տվյալներով գրագետ էր 9 տարեկանից բարձր հասակ ունեցողների 81,2 տոկոսը, գյուղական բնակչության 76,8 տոկոսը, մինչդեռ 1926 թվականի մարդահամարի տվյալներով գրագետ էր բնակչության միայն 51,1 տոկոսը։ ՍՍՀՄ ժողովուրդներից 40-ը, որոնք նախկինում չունեին իրենց գիրն ու գրականությունը, այն ստեղծեցին սովետական կարգերի օրոք և բուռն կերպով զարգացրին իրենց կուլտուրան։

Այսպիսով, սոցիալիզմի կառուցման ընթացքում տեղի էր ունենում ՍՍՀՄ ժողովուրդների տնտեսական և կուլտուրական մակարդակի աստիճանական հավասարեցում։ Այդ հողի վրա էլ գնալով ամրապնդվում էր ժողովուրդների անխախտելի բարեկամությունը, որը և պայմաններ էր ստեղծում նրանց է՛լ ավելի զարգացման և մերձեցման, կուլտուրական կյանքի փոխադարձ հարըստացման և առավել բարգավաճման համար։

Երկրորդ հնգամյակի հանրագումարներում արտացոլված են կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու համար մղված պայքարի հաջողությունները, քաղաքում կապիտալիստական տարրերի դուրս մղման և գյուղում կուլակության վերացման ասպարեզում ձեռք բերված հաջողությունները։ Դա նէպի, որպես անցման շրջանի տնտեսական քաղաքականության ավարտն էր, սոցիալիստական սիստեմի հաղթանակը։

Սովետական ժողովուրդների եղբայրական ընտանիքում լուրջ հաջողությունների հասավ հայ ժողովուրդը։ Նախկինում քայքայված, սուվի ու մահվան դատապարտված Հայաստանը դարձավ տնտեսապես զարգացած, կուլ-

1 Տե՛ս «Խորհրդային իշխանության 20 տարին», էջ 74։

տուրապես, առաջադեմ սոցիալիստական հանրապետություն։ Լայն հեռանկարներ բացվեցին հայ ժողովրդի հոգևոր ուժերի հետագա ծաղկման համար։ Հանրապետության բնակչությունը 1926 թվականի համեմատությամբ 1939 թվականին աճեց 145,4 տոկոսով և հասավ 1.281.599-ի։ Քաղաքային բնակչությունն աճեց 219,3 տոկոսով[1]։

Նպաստավոր պայմաններ ստեղծվեցին սոցիալիստական հայ ազգի ձևավորման և զարգացման համար։ Սոցիալիստական ազգերի ձևավորումը ՍՍՀՄ-ում սովետական կարգերի հաղթանակի, բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի ամրապնդման արդյունքն էր։ Սոցիալիստական ազգերն իրենց քաղաքական և հոգևոր կերպարով միանգամայն նոր հասարակական կազմավորում էին, ազգի նոր տիպ։ Նրանց տնտեսական հիմքը արտադրամիջոցների սոցիալիստական սեփականությունն էր, սոցիալիստական արտադրաեղանակը։ Սոցիալիստական ազգերի ձևավորումն ու զարգացումը հետևանք էր այնպիսի գործոնների, ինչպիսիք էին արդյունաբերության բուռն զարգացումը, արդյունաբերական խոշոր կենտրոնների ստեղծումը և բանվոր դասակարգի քաղաքական ու որակական աճը, գյուղի սոցիալիստական վերակառուցումը, արդյունաբերության և գյուղատնտեսության տնտեսական կապերի ամրապնդումը, նրանց փոխադարձ օգնության ուժեղացումն ու զարգացումը, տրանսպորտի, ինչպես նաև կապի միջոցների արագ զարգացումն ու առևտրի ծավալումը, գյուղի և քաղաքի, հանրապետության բոլոր շրջանների, ինչպես նաև ազգային հանրապետությունների միջև տնտեսական և կուլտուրական սերտ հարաբերությունների զարգացումը։ Ահա այսպիսի պայմաններում էլ ստեղծվեց սոցիալիստական ազգերի տնտեսական ընդհանրությունը։

Սոցիալիզմի հաղթանակը տնտեսության բնագավառում հիմնովին վերափոխեց նաև ՀՍՍՀ-ի բնակչության դասակարգային կառուցվածքը։ Նախկինում գոյություն ունեցող շահագործողների դասակարգը վերացվեց։ Քաղաքում իսպառ անհետացան կապիտալիստները, գյուղում՝ կուլակությունը, առևտրական ցանցում՝ մասնավոր առևտրականները։ Մնացին միայն երկու բարեկամ դասակարգեր՝ բանվորներն ու գյուղացիները և նրանց ծոցից ելած սովետական ինտելիգենցիան։ Դրանք էլ հենց կազմում են սոցիալիստական հայ ազգը։ Սակայն, դրանք սոցիալիզմի հաղթանակի հետևանքով ամբողջովին փոխվեցին, նոր որակ ստացան։ Սոցիալիստական հայ ազգի ձևավորման ու զարգացման գործում կարևոր ու վճռական դերը խաղաց Հայաստանի բանվոր դասակարգը, որը զգալիորեն աճել էր սոցիալիստական ինդուստրիայի զարգացման հետևանքով։ Բանվոր դասակարգը, ազատագրվելով ամեն տեսակ ճնշումից ու շահագործումից և անցնելով իշխանության գլուխ, դարձավ հասարակության առաջատար ուժը։ Բանվորների ու ծառայողների թիվը հանրապետությունում 1932 թվականի 93.996-ից 1936 թվականին հասավ 104.505-ի։

1937 թվականին բանվորները և ծառայողները կազմում էին բնակչության 34,7 տոկոսը, կոլտնտեսականները՝ 55,5 տոկոսը։

---

[1] Տե՛ս «Социалистическое строительство Армянской ССР», էջ 9։

Որակական փոփոխության ենթարկվեց գյուղացիությունը։ Մանր արտադրողների դասակարգից այն վերափոխվեց կոլտնտեսային և իր սոցիալիստական բնույթով մերձեցավ բանվոր դասակարգին։ Համաժողովրդական պետական և կոլտնտեսային-կոոպերատիվ սեփականությունների ընդհանրությունը սոցիալ-տնտեսական ամուր հիմք ստեղծեց այդ դասակարգերի շահերի ընդհանրության համար։ Աճել էր գյուղատնտեսության տեխնիկական հագեցվածությունը։

Մեծ փոփոխություններ կատարվեցին հայ ազգի հոգևոր կյանքում։ Բուռն աճ ապրեց ժողովրդական լուսավորությունը, զարգացավ հայ ժողովրդի ազգային, սոցիալիստական մշակույթը։

Սոցիալիստական հայ ազգի ձևավորման գործում կարևոր դեր կատարեց հայկական սովետական պետականության ստեղծումը, որը հանդես գալով որպես սովետական կարգերի հաղթանակի արդյունքը, խթանեց Հայաստանի տնտեսական ու կուլտուրական կյանքի կազմակերպման ու զարգացման, հայ ժողովրդի աշխատավոր ուժերի միավորման ու կոնսոլիդացման գործը։ Կարևոր նշանակություն ունեցավ աշխարհով մեկ ցրված վտարանդի հայերի ներգաղթի կազմակերպումը։ Դառնվելով Անդրֆեդերացիայի կազմում և նրա միջոցով մտնելով ՍՍՀՄ-ի մեջ, հայ պետականությունը շրջապատված էր բարեկամական ջերմ հոգատարությամբ, նյութական ու բարոյական հսկայական օգնություն էր ստանում, որի շնորհիվ աշխատասեր ու ստեղծագործ հայ ժողովուրդը կարճ ժամանակում կարողացավ վերաշինել իր ավերված օջախը և ընթանալ սոցիալիզմի կառուցման ուղիով։

ՍՍՀՄ բոլոր մյուս ժողովուրդների հետ հայ ժողովրդի ազգային հարաբերությունների զարգացումն ընթացավ ժողովուրդների բարեկամության ու սոցիալիստական ինտերնացիոնալիզմի գաղափարների հիման վրա։ Սոցիալիզմի հաղթանակի պայմաններում ազգային հարցում գործող երկու առաջադիմական տենդենցները՝ ազգերի բարգավաճումն ու մերձեցումը, ավելի լայն չափերով սկսեցին զարգանալ։ Տեղի ունեցավ յուրաքանչյուր ազգի բուռն ու համակողմանի զարգացում, միութենական ու ինքնավար հանրապետությունների իրավունքների ընդլայնում և դրա հետ մեկտեղ սոցիալիստական ազգերի ավելի սերտ մերձեցում, նրանց փոխադեցության, կապերի ու փոխադարձ հարստացման ուժեղացում։ ՍՍՀՄ բազմազգ ժողովուրդների եղբայրական ընտանիքում աճեց ու ամրապնդվեց հայ և մյուս ժողովուրդների քաղաքական ու գաղափարական միասնությունը։

Սոցիալիստական շինարարության պրոցեսում աճեց նաև սովետական դարաշրջանի նոր մարդը, որն օժտված էր ջերմ հայրենասիրությամբ, ժողովրդի ընդհանուր գործի նկատմամբ անսահման նվիրվածությամբ։ Սովետական մարդկանց այդ հատկությունները հանդես էին եկել ժողովրդական տնտեսության տարբեր բնագավառներում կատարած անձնուրաց աշխատանքում, բնության տարերքը հաղթահարելու և կոմունիստական կուսակցության ու սովետական կառավարության առաջադրանքները կատարելու ընթացքում։

Սոցիալիստական արտադրաեղանակի պայմաններում մարքսիզմ-լենինիզմի ոգով տոգորված հայ ժողովրդի ազգային սոցիալիստական կուլտուրան

խոշոր նշանակություն ունեցավ հայ սոցիալիստական ազգի ձևավորման համար։

Հանդես գալով որպես մի միասնություն, հայ սոցիալիստական ազգը զարգացման ավելի բարձր տեմպերով առաջ ընթացավ։ Ձեռք բերելով խոշոր հաջողություններ, համախմբված կոմունիստական մեծ կուսակցության շուրջը, նա իր ավանդը մուծեց ՍՍՀՄ-ում սոցիալիզմի կառուցման գործում։

ՍՍՀՄ-ը, պատմական համեմատաբար կարճ ժամանակամիջոցում դառնալով հզոր ինդուստրիալ երկիր, ապահովեց իր անվտանգությունը, որը և խոշոր պատմական նշանակություն ունեցավ սոցիալիստական սիստեմի հետագա ընդլայնման ու զարգացման համար։ Դա խոշոր, պատմության մեջ աննախադեպ սխրագործություն էր, որ կատարեց սովետական ժողովուրդը։

Սոցիալիզմի երկրի պատմական մեծ հաջողություններն ակնառու կերպով ցույց տվեցին ամբողջ աշխարհի աշխատավորներին, որ բանվորներն ու գյուղացիները, իշխանությունն իրենց ձեռքը վերցնելով, կարող են ստեղծել տնտեսապես ու քաղաքականապես հզոր պետություն, որը, պաշտպանելով ժողովրդի շահերը՝ նրա համար ստեղծում է խաղաղ ու երջանիկ կյանք։

ՍՍՀՄ-ը դարձել էր ամբողջ աշխարհի աշխատավորների ու առաջադեմ մարդկության շահերի պաշտպանության կարևորագույն պատվարը։

* * *

Կոմունիստական կուսակցությունը ՍՍՀՄ-ում ձեռք բերած տնտեսական ու քաղաքական խոշոր հաջողությունների համար մղվող պայքարի ղեկավարող և կազմակերպող ուժն էր։ Այդ պայքարում հսկայական չափով աճեց նաև տեղական կուսակցական կազմակերպությունների դերն ու պատասխանատվությունը։ Նրանք եռանդուն աշխատանք ծավալեցին մասսաներին կազմակերպելու և սոցիալիստական շինարարության հաղթանակը ապահովելու համար։

Գնալով ուժեղացավ կուսակցական կազմակերպությունների ազդեցությունը մասսաների վրա, նրանց ավանգարդային դերը ժողովրդական տնտեսության բոլոր բնագավառներում։ Սակայն դեռևս խոշոր թերություններ կային կուսակցության երիտասարդ անդամների դաստիարակման, նրանց մարքս-լենինյան գաղափարներով կոփելու գործում։

Մի շարք կազմակերպություններում բանվորական կորիզը թույլ էր։ Առանձին դեպքերում կուսակցության մեջ էին խցկվում նաև կարիերիստական տարրեր։ Այդ թերությունները վերացնելու համար 1933 թվականի հունվարի 12-ին Համկ(բ)կ կկ և կվՀ միացյալ պլենումը որոշում ընդունեց կուսակցության զտման և կուսակցության մեջ ընդունելությունը ժամանակավորապես դադարեցնելու մասին։ Զտումից հետո անցկացվեց կուսակցական փաստաթղթերի ստուգում և փոխանակում։ Նշված միջոցառումներն ամրապնդեցին կուսակցության շարքերը, սակայն տեղի ունեցան նաև լուրջ սխալներ ու շեղումներ։ Որոշ կարիերիստներ ցանկանում էին կուսակցության շարքերի զտումն օգտագործել իրենց նպատակների համար, հաշվեհարդար տեսնել

աղնիվ ու նվիրված կուսակցականների հետ։ Մի շարք հանրապետություններում զգալի չափով կրճատվեց կուսակցականների թիվը։

Համկ(բ)կ Կենտկոմի 1938 թվականի հունվարյան պլենումը դատապարտեց կոմունիստների նկատմամբ ցուցաբերած հախուռն վերաբերմունքը, երբ առանց փաստերի ստուգման շատերին հեռացնում էին կուսակցության շարքերից, զրկում աշխատանքից, հայտարարում ժողովրդի թշնամի և այլն։

Կոմունիստական դեմոկրատիայի կոպիտ խախտումները անհատի պաշտամունքի պայմաններում մեծ վնաս էին հասցնում կուսակցական աշխատանքին։

Սակայն ինչի՞ հետևանք էր այս բոլորը, որո՞նք են այս երևույթների սոցիալական ու քաղաքական պատճառները։ Դրանք, իհարկե, բխում էին այդ ժամանակաշրջանում երկրում առկա տնտեսական շինարարության և քաղաքական կյանքի անցողիկ շրջանի հատուկ դժվարություններից, կապիտալիստական շրջապատման վտանգից։ Մեր երկիրը միակ սոցիալիստական երկիրն էր, և եթե նա կարճ ժամանակում, ընդամենը առաջին երկու հնգամյակում հսկայական թռիչք չկատարեր, խոշոր ինդուստրիայի երկիր չդառնար, ապա կուլ կգնար արդեն գլուխ բարձրացնող ֆաշիստական Գերմանիային և մյուս գիշատիչներին։

Սկսվեց իրոք որ հսկայական պայքարի ու վերափոխումների մի էպոխա։ Դասակարգային պայքարը սուր բնույթ ստացավ։ Տրոցկիստների ու աջերի պայքարը ավելի ծանրացրեց վիճակը։ Իմպերիալիստները ցանկանում էին օգտվել ստեղծված դրությունից և ինտերվենցիա սկսել ՍՍՀՄ-ի դեմ։ Այդ ուղղությամբ մի շարք պրովոկացիոն փորձեր եղան։ Պետք էր երկիրը դուրս բերել նման վիճակից, միասնություն ստեղծել։ Այդ պայմաններում ձևավորվեց Ստալինի անձի պաշտամունքը, խախտվեցին դեմոկրատիզմի լենինյան սկզբունքները, մի հանգամանք, որը քաղաքական-հասարակական կյանքի զարգացմանը մեծ վնաս հասցրեց։ Անօրինակությունն զոհ դարձան բազմաթիվ լավագույն կադրեր։

Անհատի պաշտամունքը մեծ վնաս հասցրեց նաև հասարակական գիտությանը։ Ստալինի մտքերը համարվեցին գիտության վերջին խոսք, որոնց պրոպագանդումը և տարածումը դարձավ հասարակական գիտությունների հիմնական խնդիրը։ Դա ծանր վիճակ էր։

Սակայն այդ էպոխան միաժամանակ սովետական ժողովրդի հերոսական պայքարի, երկրի ինդուստրացման և կոլեկտիվացման, սոցիալիզմի հաղթանակի և պատմական մեծ նշանակություն ունեցող վերափոխումների էպոխա էր։

Անհատի պաշտամունքը իրեն հատկապես զգալ տվեց կուսակցության XVII համագումարում և դրան հաջորդող ժամանակաշրջանում։ XVII համագումարում խիստ չափազանցվեցին Ստալինի ծառայությունները։ Այդ ժամանակից կուսակցության և սովետական ժողովրդի ձեռք բերած հաջողությունները վերագրվեցին Ստալինին և ամբողջովին կապվեցին նրա անվան հետ։ Գնալով Ստալինը իրեն համարում էր անսխալական, հեռանում էր կոլեկտիվ ղեկավարության լենինյան նորմաներից, կտրվում մասսաներից և չարաշահում էր իր դիրքը։ Օրավուր ակնհայտ էին դառնում նրա անձի պաշտամունքի

բացասական կողմերը։ Ստալինը անհանդուրժողական վերաբերմունք էր ցուցաբերում դեպի քննադատությունը, հաշվի չէր առնում կոլեկտիվ կարծիքը, վարչարարություն, բռնություն էր թույլ տալիս մարդկանց նկատմամբ։ Այդ բոլորը կուսակցության լենինյան տիպի գործիչների շրջանում մեծ անհանգստություն առաջացրեց։

Սակայն կուսակցական գործիչների արդարացի պահանջները որակավորվեցին որպես նահանջ դասակարգային թշնամու հանդեպ, և նրանք շուտով անձի պաշտամունքի զոհ դարձան։

Ի. Ստալինի մի շարք սխալ դրույթները մեծապես վնասում էին սովետական դեմոկրատիայի զարգացմանը։ Շահագործող դասակարգերի վերացումից հետո Ստալինի առաջ քաշած այն դրույթը, թե որքան սովետական երկիրը մոտենում է սոցիալիզմին, այնքան դասակարգային պայքարը ավելի է սրվում, միանգամայն սխալ կողմնորոշում էր և անտեղի բռնությունների ու հալածանքների տեղիք էր տալիս։ Մինչդեռ 1936 թվականին Ստալինը ամերիկյան գրող Հովարդի հետ ունեցած զրույցի ժամանակ հայտարարել էր, որ ՍՍՀՄ-ում արդեն վերացված են դասակարգերը և նրա բնակչությունը բաղկացած է քաղաքի և գյուղի ազատ աշխատավորներից։

Համկ(բ)կ կկ 1937 թ. փետրվարյան պլենումում Ստալինը ոչ միայն նորից առաջ քաշեց դասակարգային պայքարի սրման վերաբերյալ իր սխալ դրույթը, այլև հորինեց «հին» և «նոր» վնասարարների վերսիա։ «Հներին» նա համարեց բացարձակ դասակարգային թշնամիներ, իսկ «նորերին» պետք է որոնեին ու գտնեին։ Այդ սխալը նոր ռեպրեսիաների պատճառ հանդիսացավ։

Համկ(բ)կ կենտկոմի որոշմամբ 1935—1936 թվականներին անցկացված կուսակցական փաստաթղթերի ստուգումը և փոխանակումը կարևոր նշանակություն ունեցան կուսակցական շարքերը խորթ ու պատահական տարրերից մաքրելու գործում։ Սակայն, անհատի պաշտամունքի պայմաններում, այդ քաղաքական կամպանիայի ժամանակ թույլ տրվեցին բազմաթիվ սխալներ, որի հետևանքով Հայաստանի կուսակցական կազմակերպությունների շարքերից անտեղի հեռացվեցին բազմաթիվ ազնիվ և սոցիալիզմի գործին նվիրված կոմունիստներ։ Համկ(բ)կ կենտկոմը հետագայում ցուցում տվեց շտկել թույլ տրված սխալները։

Ջգոնությունը բարձրացնելու պատրվակով ավանտյուրիստ Բերիան և նրա դրածոները լենինյան կադրերի ջարդ կազմակերպեցին Հայաստանում։ Բանսարկելով՝ նրանք ստեղծեցին անվստահության և կասկածամտության լարված մթնոլորտ։ Կադրերին իրար դեմ լարելով՝ նրանք ահաբեկչական միջոցներով վարկաբեկում էին ազնիվ ու նվիրված աշխատողներին։ Շինծու մեղադրանքներ հորինվեցին լավագույն կոմունիստների և Լենինի մեծ գործին նվիրված որոշ գործիչների նկատմամբ։

Կատարելով Բերիայի ցուցումները, կարեերիստական տարրերը ջանում էին ցույց տալ, թե իբր Հայաստանում նացիոնալիստական-տրոցկիստական կազմակերպությունների լայն ցանց գոյություն ունի։ Նման մեթոդներով Բերիան լարված վիճակ ստեղծեց Հայաստանում և 1935 թվականին շարքից հանեց Հայկական ՍՍՀ Ժողկոմսովետի նախագահ Ս. Տեր-Գաբրիելյանին։ Այ-

նուհետև, 1936 թվականին անհատի պաշտամունքի կամայականության զոհ դարձավ ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Աղասի Խանջյանը։

Խանջյանին և ականավոր այլ գործիչների շարքից հանելուց հետո, Բերիայի դրածոները Հայաստանում սկսեցին շատերին մեղադրել «խանջյանականության» մեջ։ Բուրժուական նացիոնալիստներ որոնելու մոլուցքով տարված՝ նրանք հորինում էին գոյություն չունեցող կազմակերպություններ։ Հավատարիմ լենինյան, աղնիվ ու նվիրված կոմունիստ Ներսիկ Ստեփանյանին նրանք հայտարարեցին Հայաստանում իբր թե գոյություն ունեցող նացիոնալիստական-տրոցկիստական խմբի ղեկավար։ Մտացածին այդ խմբի անդամներն էին համարվում այնպիսի ականավոր սովետական գրողներ, ինչպիսիք էին Եղիշե Չարենցը, Ակսել Բակունցը, Ալազանը, Մահարին, Նորենցը և ուրիշներ։

Անհատի պաշտամունքը մեծապես խանգարում էր գիտության զարգացմանը, կաշկանդում մարդկանց միտքը։ Գիտական աշխատությունների համար այն ժամանակ լուրջ թերություն էր համարվում, եթե Ստալինի աշխատություններից մեջբերումներ չէին կատարվում։ Երբ մի շարք հեղինակներ ինքնուրույն միտք արտահայտելու որոշ համարձակություն էին հանդես բերում, նրանք դառնում էին անհատի պաշտամունքի զոհ։ Դա դոգմատիզմի արտաոռց արտահայտություններից էր։

Հանդես գալով «գիտնականի» և կուսակցության պատմության «տեսաբանի» դերում, Բերիան իր «Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների պատմության հարցի շուրջը» ստահոդ գրքույկում ամբողջովին աղավաղել և ծուռ հայելու մեջ էր ներկայացրել Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների հեղափոխական պայքարի հարուստ պատմությունը։ Նրա նպատակն էր կեղծել պատմությունը, վարկաբեկել ու շարքից հանել բոլշևիկյան կուսակցության շատ պայծառ դեմքերի։ Իր «Փոշիացնել, հողմացրիվ անել սոցիալիզմի թշնամիներին» հոդվածում բազմաթիվ ականավոր գործիչների ոչնչացնելու նպատակով Բերիան զրպարտիչ մեղադրանքներ բարդեց նրանց վրա։

Բերիայի դրածոների և ավանտյուրիստական տարրերի կեղծիքը այն աստիճանի էր հասել, որ նրանք կարողանում էին թյուրիմացության մեջ գցել անգամ հանրապետության կուսակցական կազմակերպություններին։ Նրանց այդ գիծը իր արտահայտությունը գտավ ՀԿ(բ)Կ X համագումարում։

1937 թվականի մայիսի 26-ին ՀԿ(բ)Կ X համագումարում Կենտկոմի հաշվետու զեկուցման մեջ Ա. Խանջյանին վարկաբեկելու նպատակով ՀԿ(բ)Կ Կենտկոմի հաշվետու ժամանակաշրջանի գործունեությունը գնահատվեց անբավարար։

1937 թ. սեպտեմբերյան պլենումը ՀԿ(բ)Կ Կենտկոմի առաջին քարտուղար է ընտրում Գ. Հարությունյանին։

Զրպարտչական հայտարարությունները պատճառ դարձան, որ կուսակցության շարքերից հեռացվեին, դատապարտվեին և բանտարկություններին ու ֆիզիկական ոչնչացման ենթարկվեին հարյուրավոր մարդիկ։ Կեղծ մեղադրանքների հիման վրա 1937 թվականի նոյեմբերին և դեկտեմբերին քրեվեցին «Լոռվա ազնվացեղ անասունների սովխոզում եղած հակահեղափոխա-

կան, վնասարարական կազմակերպության» և «ՀՍԽՀ հողժողկոմատի օրգաններում գործող հակահեղափոխական, աջ տրոցկիստական, նացիոնալիստական-դաշնակցական, վնասարարական կազմակերպության մասնակիցների» դատավարությունները։ Դրանք սովետական օրինականության կոպիտ խախտման արտահոց արտահայտություններից էին։

1936—1937 թվականների ընթացքում շարքից հանվեցին, ռեպրեսիայի ենթարկվեցին հեղափոխական շարժման ականավոր ներկայացուցիչներ, հին բոլշևիկներ՝ ՀԿ(բ)Կ Կենտկոմի նախկին քարտուղարներ Գևորգ Ալիխանյանը, Սարգիս Սրապիոնյանը (Լուկաշին), Աշոտ Հովհաննիսյանը, Հայկ Հովսեփյանը, Հայկազ Կոստանյանը, Աղասի Խանջյանը, Հայաստանի ռազմա-հեղափոխական կոմիտեի առաջին նախագահ Սարգիս Կասյանը, ՀՍՍՀ Ժողկոմսովետի նախագահ Սահակ Տեր-Գաբրիելյանը, ՀՍՍՀ Կենտգործկոմի նախագահներ Սերգո Մարտիկյանը և Գևորգ Հանեսօղլյանը, լուժժողկոմներ Ներսիկ Ստեփանյանը և Արտո Եղիազարյանը, ականավոր կուսակցական ու պետական գործիչներ Դանուշ Շահվերդյանը, Ալեքսանդր Բեկզադյանը, Արշավիր Մելիքյանը, Ռուբեն Դաշտոյանը, Արամայիս Երզնկյանը և ուրիշներ։

Անհատի պաշտամունքի զոհ դարձան նաև գրականության, գիտության և կուլտուրայի շատ աչքի ընկնող գործիչներ, նրանց թվում՝ բանաստեղծ Եղիշե Չարենցը, արձակագիր Ակսել Բակունցը, գրականագետ Պ. Մակինցյանը, գինվորական գործիչներից՝ հայկական դիվիզիայի հրամանատար Հ. Աթոյանը և ուրիշներ։

Խախտվում էին կուսակցական կյանքի նորմանները, ժամանակին չէին հրավիրվում ազգային կոմունիստական կուսակցությունների համագումարները, կոնֆերանսներն ու Կենտկոմի պլենումները։ Համ(բ)Կ XVII համագումարում ընդունված կուսակցության կանոնադրության համաձայն միութենական հանրապետություններում կուսակցական համագումարները պետք է հրավիրվեին մեկ կես տարին մեկ անգամ, սակայն իրականում այդ ժամկետները ամենուրեք խախտվում էին։

Այնուհանդերձ այս ամենը չէին կարող շեղել սոցիալիստական երկրի զարգացման ընթացքը, կասեցնել ժողովրդական տնտեսության ու կուլտուրայի վերելքը։

1936 թվականի նոյեմբերին վերսկսվեց ընդունելությունը կուսակցության մեջ։ Անհատական ընտրությամբ կուսակցության շարքերն էին ընդունվում սոցիալիզմի գործին նվիրված բանվորները, գյուղացիները և աշխատավոր ինտելիգենցիայի ներկայացուցիչները։ Հայաստանում մինչև 1937 թվականի վերջը կուսակցության շարքերը ընդունվեցին 3,8 հազար մարդ։ Զգալի չափով աճեց կուսակցական կազմակերպությունների բանվորական կորիզը, սկսեց սիստեմատիկորեն կազմակերպվել կուսակցական լուսավորության գործը, որի մեջ ընդգրկվում էին կուսակցական և անկուսակցական լայն մասսաները։ Հանրապետության կուսակցական ակտիվի համար ստեղծվում էին կուսակցական կուրսեր, կուսդպրոցներ, կուսակցական լուսավորության տներ և բազմաթիվ խմբակներ։ Այդ բոլորի շնորհիվ աճեց կուսակցական կազմակերպությունների ազդեցությունը մասսաների վրա։

2. ՍՍՀՄ ՆՈՐ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

Ձեռք բերած տնտեսական խոշոր հաջողությունները սերտորեն կապված էին ազգային պետականության հետագա զարգացման ու կատարելագործման հետ, որը արտահայտվում էր ավտոնոմիայի և ֆեդերացիայի ձևով։ Ազգային պետականությունը սոցիալիզմի կառուցման գործում հանդես էր գալիս որպես բոլոր ժողովուրդների քաղաքական, տնտեսական ու կուլտուրական ուժերի կազմակերպման գործոն։ Տեղական սովետների միջոցով աշխատավորության բոլոր խավերն ու ազգային-էթնիկական խմբերը կազմակերպվում և մասնակից էին դառնում սոցիալիստական շինարարությանը։ Սովետական ազգային պետականությունը նպաստում էր նաև տարբեր ազգերի և էթնիկական խմբերի միավորմանն ու կոնսոլիդացմանը։

Ազգային պետականությունը հատկապես մեծ դեր կատարեց տեղական ազգային կադրերի պատրաստման գործում։

Երկրորդ հնգամյակի վերջում ազգային հանրապետությունները լուծեցին կարևորագույն պրոբլեմներից մեկը՝ տեղական ազգային կադրերի ստեղծումը, որը մի կողմից ամրապնդում էր ազգային սովետական պետականությունը և մյուս կողմից՝ զարգացնում կապերը մյուս սովետական հանրապետությունների հետ։ Այդ ժամանակ սովետական բազմազգ պետությունը բաղկացած էր 7 միութենական, 16 ինքնավար հանրապետություններից, 16 ինքնավար մարզերից և 10 ազգային շրջաններից։

Սոցիալիստական շինարարության կարևորագույն հարցերը լուծելու համար գնալով ավելի էին ընդլայնվում ազգային սոցիալիստական պետության գործունեության սահմանները։ Փոքր ազգերի տնտեսական և կուլտուրական հաջողությունները հիմք էին ստեղծում նրանց ազգային պետականության զարգացման և իրավունքների ընդլայնման համար։

Սոցիալիզմի հաղթանակը հսկայական փոփոխություններ մտցրեց ոչ միայն երկրի տնտեսական կյանքում, այլև հասարակության դասակարգային կառուցվածքում։ Այդ ամենը հրատապ պահանջ էր դնում որոշ փոփոխություններ մտցնել պետության կառավարող օրգանների ֆունկցիաների մեջ։

Սովետական երկրի հաջողությունները սոցիալիզմի կառուցման գործում առաջադրում էին սոցիալիստական հասարակարգի զարգացման նոր աստիճանին համապատասխան պահանջներ, կազմել նոր սահմանադրություն, հաղթանակած սոցիալիստական երկրի սահմանադրություն։

1924 թվականի սահմանադրությունն ընդունելուց հետո, ՍՍՀՄ-ում անցած տարիների ընթացքում ստեղծվել էր հզոր սոցիալիստական ինդուստրիա, գյուղում հաղթել էր կոլտնտեսային կարգը, ոչնչացվել էր կապիտալիստական վերջին շահագործող դասակարգը՝ կուլակությունը, ամբողջ երկրում հաստատվել էր արտադրության միջոցների սոցիալիստական սեփականությունը, որը կազմում էր սովետական հասարակության հիմքը։

Արմատական փոփոխություններ էին տեղի ունեցել երկրի բնակչության սոցիալ-դասակարգային կազմում։ Շահագործող տարրերը լիկվիդացվել էին ու երկրում մնացել էին բանվոր դասակարգը, գյուղացիությունը և աշխատավորական ինտելիգենցիան։ Նման պայմաններում ՍՍՀՄ առաջին սահմանադրության

դրույթները այլևս չէին համապատասխանում հասարակական կյանքում տեղի ունեցած փոփոխություններին։ Սովետական ընտրական սիստեմի հետագա դեմոկրատացումը, մասսաների ստեղծագործական ուժերի ավելի լայն օգտագործումը դարձել էին կենսական անհրաժեշտություն։

1935 թվականի փետրվարի 1-ին Համկ(բ)Կ Կենտկոմի պլենումը որոշեց սովետների VII համագումարում առաջարկել ՍՍՀՄ սահմանադրության մեջ մի շարք փոփոխություններ մտցնելու անհրաժեշտության մասին, որոնց նպատակն էր՝ ավելի դեմոկրատացնել ընտրական սիստեմը, ոչ լիովին հավասար ընտրությունները՝ հավասար, բազմաստիճանը՝ ուղղակի և բացը՝ փակ (գաղտնի) ընտրություններով փոխարինելու համար։ Անհրաժեշտ էր ճշտել սահմանադրության մեջ նշված ՍՍՀՄ սոցիալ-տնտեսական հիմունքները՝ դասակարգային ուժերի փոխհարաբերությունները տվյալ շրջանին համապատասխան։ ՍՍՀՄ սովետների VII համագումարը տալով սոցիալիզմի կառուցման բնագավառում ձեռք բերված կարևորագույն հաջողությունների հանրագումարը, 1935 թվականի փետրվարի 6-ին որոշեց կազմել ՍՍՀՄ նոր սահմանադրություն՝ հաշվի առնելով այն փոփոխությունները, որոնք տեղի էին ունեցել մեր երկրի կյանքում։

Կատարելով այդ որոշումը, ՍՍՀՄ Կենտգործկոմի նեսիան ընտրեց 31 մարդուց կազմված սահմանադրական հանձնաժողով, որը և ձեռնամուխ եղավ նոր սահմանադրության նախագծի մշակմանը։

1936 թվականի հունիսի սկզբներին նոր սահմանադրության նախագիծը արժանացավ նախ Համկ(բ)Կ Կենտկոմի պլենումի, ապա ՍՍՀՄ Կենտգործկոմի նախագահության հավանությանը և նույն ամսի 12-ին հրապարակվեց մամուլում՝ համաժողովրդական քննարկման համար։

Հինգևկես ամիս տևող այդ քննարկմանը մասնակցեց հասակավոր բնակչության կեսից ավելին (55 տոկոսը). կատարվեցին բազմաթիվ ուղղումներ ու առաջարկություններ։ 1936 թվականի հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին տեղի ունեցան շրջանային, մարզային, երկրամասային, ինչպես նաև հանրապետական սովետների արտակարգ համագումարներ, որտեղ ընդհանրացվեցին համաժողովրդական քննարկման արդյունքները։

1936 թվականի նոյեմբերի 19-ին բացվեց ՀՍՍՀ սովետների արտակարգ IX համագումարը, որը լսեց ՀՍՍՀ Կենտգործկոմի նախագահ Գ. Հանեսօղլյանի զեկուցումը նոր սահմանադրության նախագծի համաժողովրդական քննարկման արդյունքների մասին։ Ամենուրեք այն արժանացել էր մասսաների միահամուռ հավանությանը։

Համագումարն ընտրեց Սովետների համամիութենական VIII արտակարգ համագումարի պատգամավորներ և ապա ընդհատեց իր աշխատանքները, որպեսզի հետագայում, ՍՍՀՄ սահմանադրությունը հաստատելուց հետո հավաքվի ՀՍՍՀ նոր սահմանադրության նախագիծը քննարկելու համար։

1936 թվականի նոյեմբերի 25-ին Մոսկվայում բացվեց ՍՍՀՄ սովետների VIII արտակարգ համագումարը։

Համագումարին վճռական ձայնի իրավունքով մասնակցում էր 2016 պատգամավոր։ Նրանք ներկայացնում էին 63 ազգություններ։ Պատգամավորների 42 տոկոսը բանվորներ էին, 40 տոկոսը՝ գյուղացիներ, 18 տոկոսը՝ ծառայող-

ներ։ Համագումարը քննարկեց նոր սահմանադրության նախագիծը։ Համագումարի դեկտեմբերի 1-ի որոշման մեջ հավանություն տրվեց ներկայացված նախագծին, և այն ընդունվեց որպես հիմք։ Կազմվեց 220 հոգուց բաղկացած խմբագրական հանձնաժողով, որին տրվեց երեք օր ժամանակ՝ արված ուղղումներն ու քննադատական դիտողությունները հաշվի առնելու և վերջնական տեքստ ներկայացնելու համար։ Խմբագրական հանձնաժողովը ուղղումներ և լրացումներ մտցրեց 38 հոդվածներում։

Սահմանադրության ընդունումը նոր էտապ էր սովետական դեմոկրատիայի զարգացման մեջ։ Այն սոցիալիզմի հաղթանակի հետևանքով ձեռք բերված հաջողությունների օրենսդրական ամրապնդումն էր։

Սահմանադրությունը հաստատեց «Յուրաքանչյուրից ըստ ընդունակությունների, յուրաքանչյուրին ըստ աշխատանքի» սկզբունքը, որը հաշվի առնելով սովետական մարդկանց անձնական ու հասարակական շահերը, խթանում էր աշխատավորների շահագրգռվածությունը աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու գործում։

Սահմանադրությունն ազդարարում էր, որ ՍՍՀՄ-ը բանվորների և գյուղացիների սոցիալիստական պետություն է, որի հիմքը ժողովրդական տնտեսության սոցիալիստական սիստեմն է, արտադրական միջոցների ու գործիքների սոցիալիստական սեփականությունը։ ՍՍՀՄ-ի քաղաքական հիմքը աշխատավորների դեպուտատների սովետներն են, որոնց և պատկանում է ամբողջ իշխանությունը։ Սովետների այս նոր բնորոշումը ելնում էր սովետական հասարակարգի ամբողջ կառուցվածքի այն խոշոր փոփոխություններից, որոնք հիմք ստեղծեցին պրոլետարիատի դիկտատուրայի՝ համաժողովրդական սոցիալիստական պետության վերաճելու համար։

Նոր սահմանադրությունն ընդգծում էր ՍՍՀՄ բոլոր ժողովուրդների կամավոր միավորումը և բոլոր քաղաքացիների իրավահավասարությունը՝ անկախ ազգային և ռասայական տարբերությունից։ ՍՍՀՄ հիմնական օրենքը հիմնված է պրոլետարական ինտերնացիոնալիզմի վրա, որը մերժում է ամեն տեսակի ռասայական կամ ազգային բացառիկություն։ Սահմանադրության համաձայն, ազգերի իրավունքների ուղղակի կամ անուղղակի սահմանափակումը պատժվում է որպես հանցագործություն։ Հիմնական օրենքը քաղաքական ապաստանի իրավունք է տալիս այն անձանց, ովքեր իրենց հեղափոխական առաջադիմական գործունեության համար ենթարկվում են հալածանքի։

Ըստ նոր սահմանադրության, մեր երկրի պետական իշխանության բարձրագույն օրգանը ՍՍՀՄ Գերագույն սովետն է՝ կազմված Միության սովետից և Ազգությունների սովետից, որոնք ընտրվում են ՍՍՀՄ քաղաքացիների ուղղակի ընտրությամբ։

Սահմանադրությունը բոլոր քաղաքացիներին տալիս է աշխատանքի, հանգստի, կրթության, բուժսպասարկումից օգտվելու և թոշակավորվելու իրավունք։ Կինը քաղաքական, տնտեսական ու կուլտուրական կյանքի բոլոր բնագավառներում օգտվում է տղամարդուն հավասար իրավունքներով։ Ամեն մի քաղաքացի ունի խղճի, խոսքի և մամուլի, ժողովների ու միտինգների, փողոցային երթերի ու ցույցերի ազատություն, հասարակական կազմակերպությունների մեջ միավորվելու, անձի անձեռնմխելիության իրավունք և այլն։

Սահմանադրությունն արգելում է մարդու կողմից մարդուն շահագործումը։ Դա հաղթանակած սոցիալիզմի կարևոր սկզբունքներից մեկն էր։

Նոր սահմանադրության մեջ տրված է սովետական քաղաքացիների պարտականությունների և բարոյական նորմաների հակիրճ ձևակերպումը, որի հավատարիմ աշխատանքը յուրաքանչյուր քաղաքացու սրբազան պարտականություն է։ Հիմնական օրենքը սովորեցնում է ազնվաբար վերաբերվել դեպի հասարակական պարտքը, սրբությամբ կատարել պետական օրենքները, սոցիալիստական համակեցության կանոնները, լինել կարգապահ, ամրապնդել սոցիալիստական սեփականությունը, նվիրված լինել սոցիալիստական հայրենիքին։ «Հայրենիքի պաշտպանությունը ՍՍՀՄ յուրաքանչյուր քաղաքացու սրբազան պարտքն է»,—ասված է սահմանադրությունում։

Հիմնական օրենքը առաջադրեց աշխարհում ամենադեմոկրատական ընտրական սիստեմը, որը ոչ մի սահմանափակում չի ընդունում սոցիալական ծագման կամ դիրքի, սեռի, ազգային և ռասայական, դավանության և այլ հատկանիշների տեսակետից։ Նա հաստատեց, որ պետական իշխանության օրգանները ներքևից մինչև վերև ընտրվում են ընդհանուր, ուղղակի ընտրությամբ և գաղտնի քվեարկությամբ։ Թեկնածուների առաջադրման իրավունքը վերապահվում է հասարակական կազմակերպություններին, աշխատավորների ընկերություններին։

Սահմանադրությունը նշում է նաև դեպուտատի պարտականությունները։ Ամեն մի դեպուտատ պարտավոր է իր կատարած աշխատանքի մասին հաշվետվություն տալ ընտրողների առջև։ Ընտրողներին իրավունք է վերապահվում իրենց վստահությունը չարդարացնող դեպուտատներին ցանկացած ժամանակ ետ կանչել և նրանց տեղը ուրիշին առաջադրել։

Սահմանադրությունն արտացոլում է սոցիալիստական ազգերի զարգացումն ու սովետական ազգային պետականության հետագա կատարելագործումը։ Ստեղծվեցին նոր միութենական՝ Ղազախական և Կիրգիզական հանրապետությունները։

* * *

ՍՍՀՄ սովետների VIII արտակարգ համագումարի որոշմամբ լիկվիդացիայի ենթարկվեց Անդրֆեդերացիան, որպես իր դերն արդեն կատարած։ Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի Սովետական Սոցիալիստական Հանրապետությունները նոր սահմանադրության համաձայն, որպես միութենական հանրապետություններ, ինքնուրույն կերպով մտան ՍՍՀՄ կազմի մեջ։

Անդրֆեդերացիան խոշոր դեր խաղաց սոցիալիստական շինարարության հաղթանակի գործում Անդրկովկասում և լիովին լուծեց իր առջև դրված խնդիրները։ Անդրֆեդերացիայի վերացումը միանգամայն հասունացած խնդիր էր հենց իրենց՝ Անդրկովկասյան հանրապետությունների հետագա զարգացման համար։

Նոր սահմանադրության ընդունմամբ 1936 թվականին ստեղծվեցին Կոմիի, Կաբարդինո-Բալկարիայի, Մարիի, Հյուսիսային Օսեթիայի և Չեչենո-Ին-

գուշեթիայի ինքնավար հանրապետությունները։ Կարակալպակիայի ինքնավար հանրապետությունը ՌՍՖՍՀ կազմից անջատվեց և մտավ Ուզբեկական ՍՍՀ կազմի մեջ։ Այսպիսով, ազգային պետականության զարդացման բնագավառում ևս տեղի ունեցան խոշոր փոփոխություններ։ Արդեն 1937 թվականի վերջերին ՍՍՀՄ կազմի մեջ կային 11 միութենական, 22 ավտոնոմ հանրապետություն, 8 ավտոնոմ մարզ և 10 ազգային օկրուգ։

Սովետական ավտոնոմիայի, ազգային պետականության զարգացումը ոչ միայն չէր թուլացնում միավորման ինտերնացիոնալ կապերի տենդենցը, այլ գնալով ավելի էր ուժեղացնում ժողովուրդների բարեկամությունը և նրանց եղբայրական համագործակցությունը։ Կամավորության սկզբունքի վրա խարըսխված սոցիալիստական ազգերի կապերը տանում էին դեպի այդ ազգերի հետագա մերձեցումը։ Ամեն մի ազգի ձեռք բերած հաջողությունները դառնում էր բոլորի սեփականությունը, իսկ դա անցյալի գիրկն էր նետում հնացած ավանդները, զարգացնում ու տարածում էր առաջավորները։ Այդ բոլորը մերձեցնում և իրար հարազատ էր դարձնում տարբեր ազգությունների մարդկանց։

3. ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՆՈՐ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Անդրկովկասյան Ֆեդերացիայի վերացումը և Հայկական ՍՍՀ-ն որպես միութենական հանրապետություն ՍՍՀՄ կազմի մեջ մտնելը պայմանավորված էր ոչ միայն նրա տնտեսական ու քաղաքական կյանքում ձեռք բերված հաջողություններով, այլ նաև այն օբյեկտիվ հատկանիշներով, որոնք պարզաբանված են սովետների VIII համամիութենական արտակարգ համագումարում նոր սահմանադրության մասին տրված զեկուցման մեջ։

Միութենական հանրապետություն կազմելու համար անհրաժեշտ էր, որ տվյալ հանրապետությունը ծայրամասային, տերիտորիալ տեսակետից սահմանակից լինի որևէ օտար պետության, որպեսզի տվյալ հանրապետությունը սահմանադրությունում նշված իրավունքի համաձայն ցանկացած դեպքում հնարավորություն ունենա ՍՍՀՄ կազմից դուրս գալու։ Չնայած ՍՍՀՄ պատմության մեջ նման դեպք դեռևս չի կատարվել, քանի որ բոլոր հանրապետությունները իրար հետ միացած են համընդհանուր շահերով, սակայն սովետներն հանրապետությունների այդ իրավունքները պաշտպանելու համար պետք է ստեղծվեր անհրաժեշտ ու ռեալ պայմաններ։

Հայկական ՍՍՀ-ն տերիտորիալ տեսակետից գտնվում է ՍՍՀՄ-ի հարավային մասում, սահմանակից է Ադրբեջանական և Վրացական սովետական հանրապետություններին, ինչպես նաև Թուրքիային և Իրանին։

Նոր սահմանադրությունը պահանջում էր նաև, որ տվյալ հանրապետության այս կամ այն ազգության անունով կոչելու դեպքում այդ ազգությունը հանրապետությունում բնակվող մյուս ազգությունների նկատմամբ մեծամասնություն կազմի։ Այդ տեսակետից էլ Հայկական հանրապետությունում սահմանադրության այս պահանջը ևս բավարարվում էր, քանի որ 1939 թվականի մարդահամարի տվյալներով հայերի թիվը կազմում էր հանրապետության բնակչության 82,8 տոկոսը։

Անհրաժեշտ էր նաև, որ միութենական հանրապետության բնակչությունը մեկ միլիոնից պակաս չլիներ, որպեսզի կարողանար պաշտպանել իր սովերեն իրավունքները, ունենար իր սեփական բանակը և պաշտպանության համապատասխան միջոցները։

Թե՛ 1926 թվականին Սովետական Հայաստանի բնակչությունը 881290 էր, ապա 1936 թվականին այն հասավ ավելի քան 1280 հազարի, որը լիակատար հիմք էր տալիս հանդես գալու որպես միութենական հանրապետություն։ Այսպիսով, ելնելով ՍՍՀՄ նոր սահմանադրության պահանջներից ՀՍՍՀ-ն արդեն 1936 թվականին բոլոր անհրաժեշտ պայմաններն ուներ անմիջապես մըտնելու ՍՍՀՄ կազմի մեջ, որպես սովերեն հանրապետություն։

ՍՍՀՄ կազմի մեջ մտնելու կապակցությամբ Սովետական Հայաստանը պետք է ստեղծեր իր նոր սահմանադրությունը, որպեսզի օրենսդրական կարգով ամրապնդեր ու ձևակերպեր 1922—1937 թվականներին հանրապետության տնտեսական և քաղաքական կյանքում տեղի ունեցած արմատական փոփոխությունները։

1936 թվականի հունիսին, ՍՍՀՄ սահմանադրության նախագծի հրապարակումից անմիջապես հետո, ՀՍՍՀ Կենտգործկոմի սեսիայի որոշմամբ ստեղծված հանձնաժողովը (նախագահ Ա. Խանջյան, անդամներ Ս. Մարտիկյան, Պ. Թորոսյան, Ռ. Դաշտոյան և ուրիշներ) մշակեց ՀՍՍՀ սահմանադրության նախագիծը, որը նույն թվականի հոկտեմբերին՝ համաժողովրդական քննարկման համար հրապարակվեց մամուլում։ Ընտրողների հազարավոր առաջարկություններն ու ցանկությունները միայն մի նպատակ էին հետապնդում՝ սովետական երկիրը դարձնել էլ ավելի առաջավոր ու հզոր։

Նոր սահմանադրությունը լայն արձագանք գտավ արտասահմանյան հայ գաղութներում։ Սփյուռքի աշխատավոր մասսաներն ու նրանց առաջադիմական կազմակերպությունները նոր սահմանադրության ընդունումը համարեցին պատմական խոշոր իրադարձություն հայ ժողովրդի կյանքում։

1937 թվականի փետրվարի 22-ին ՀՍՍՀ Կենտգործկոմը հավանություն տվեց ՍՍՀՄ սահմանադրության հիման վրա կազմված Հայկական ՍՍՀ հիմնական օրենքի նախագծին։

Փետրվարի 25-ին Երևանի կարբիդի գործարանի բանվոր-ծառայողները հավանություն տալով սահմանադրության նախագծին, գոհունակությամբ նշեցին, որ սովետական ժողովուրդների եղբայրական ընտանիքում սոցիալիստական Հայաստանը «աննախընթաց նվաճումներ ձեռք բերեց»[1], իսկ կաուչուկշինի բանվոր-ծառայողները, քննարկելով ՀՍՍՀ սահմանադրության նախագիծը, ընդգծեցին, որ «դա աշխարհի ամենադեմոկրատական սահմանադրությունն է, որն ուրախ ու բերկրալից կյանք է ապահովում մեզ ու մեր զավակների համար, հարթում է կոմունիզմի լուսապայծառ ուղին»[2]։

Բազմամարդ միտինգներ և ժողովներ տեղի ունեցան նաև Հոկտեմբերյանում, Վեդիում, Թալինում և այլ շրջաններում ու քաղաքներում։

---

1 ՄԼԻ հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 24, գ. 31, թ. 139—140։

2 «Խորհրդային Հայաստան», 1937, № 47։

Բանվորները, կոլտնտեսականներն ու սովետական ինտելիգենցիան նոր պարտավորություններ վերցրեցին՝ տնտեսական պլանները ժամկետից շուտ կատարելու, մեր երկրի հզորությունն ավելի ամրապնդելու համար։

Ուշագրավ է հայ մեծ բանաստեղծ Ավ. Իսահակյանի «Մարմնացավ հայ աշխատավոր ժողովրդի հինավուրց երազը» հոդվածը, որտեղ խոսվում էր հայ ժողովրդի անցած պատմական ուղու և սովետական իրավակարգում ՍՍՀՄ ժողովուրդների եղբայրական ընտանիքում նրա ձեռք բերած խոշոր նվաճումների մասին։ «Սովետական Հայաստանի սահմանադրությունը ՍՍՀՄ-ի սահմանադրության մսից ու արյունից է,— գրել է Ավ. Իսահակյանը։ Հայկական ՍՍՀ սահմանադրությունը դարերով շահագործված մեր ժողովրդին հռչակում է տեր և տնօրեն վեհապետական բոլոր իրավունքներով իր հայրենիքի մշակույթի և աշխատանքի...»։

Սահմանադրության նախագծի մեկ ամիս տևող քննարկումը ցույց տվեց, որ հասարակության բոլոր խավերն ու ազգությունները ջերմորեն պաշտպանում ու հավանություն են տալիս այդ կարևոր փաստաթղթին, որը ամբողջովին արտացոլում էր սոցիալիստական դեմոկրատիայի և պրոլետարական ինտերնացիոնալիզմի, ժողովուրդների բարեկամության լենինյան վեհ գաղափարները։

Հայաստանի սովետների IX արտակարգ համագումարը 1937 թվականի մարտի 20-ին վերսկսեց իր աշխատանքները։ Համագումարի քննարկմանն էին դրված Հայկական ՍՍՀ 1937 թվականի սահմանադրության նախագծի ընդունման, ինչպես նաև Անդրկովկասյան Ֆեդերացիայի լիկվիդացիայի հարցերը։ Համագումարում ՀՍՍՀ նոր սահմանադրության նախագծի մասին զեկուցումով հանդես եկավ ՀՍՍՀ Կենտգործկոմի նախագահ Գ. Հաննեսօղլյանը։ Թե՛ զեկուցողը և թե՛ բանվորների, կոլտնտեսականների ու ինտելիգենցիայի ներկայացուցիչները, բոլոր ազգերի պատգամավորները՝ հայերը, ռուսները, ադրբեջանցիները, քրդերը և այլն, միահամուռ հավանություն տվեցին սահմանադրության նախագծին և առաջարկեցին հաստատել այն։

Սահմանադրության նախագիծը համագումարում քննարկելուց հետո, ընտրվեց 75 հոգուց կազմված խմբագրական հանձնաժողով։ Համագումարն իր մարտի 23-ի որոշմամբ հաստատեց ՀՍՍՀ նոր սահմանադրությունը։ Համագումարը որոշեց ՍՍՀՄ հիմնական օրենքի 13-րդ հոդվածի համաձայն Անդրֆեդերացիան և նրա ղեկավար օրգանները համարել վերացված։ Նման որոշում ընդունեցին նաև Ադրբեջանական ՍՍՀ սովետների IX և Վրացական ՍՍՀ սովետների VIII համագումարները։

Հայկական ՍՍՀ սովետների IX համագումարը ամփոփեց և օրենսդրական կարգով հաստատեց սոցիալիզմի կառուցման պատմական գործում հայ ժողովրդի ձեռք բերած հաջողությունները։ Սահմանադրության մեջ ամփոփված էր սոցիալիզմի համար մղվող պայքարի հանրագումարը։ Համագումարը որոշեց, իսկ ՀՍՍՀ նոր սահմանադրությունը օրենսդրական կարգով ձևակերպեց Հայկական ՍՍՀ որպես սովերեն հանրապետություն և իրավահավասար անդամ ՍՍՀՄ կազմի մեջ մտցնելու փաստը։

Համագումարի հանձնարարությամբ ՀՍՍՀ Կենտգործկոմը մշակեց հանրապետության սովետների ընտրությունների կանոնադրությունը։

Ելնելով ՍՍՀՄ հիմնական օրենքի դրույթներից, Հայկական ՍՍՀ սահմանադրությունը արտացոլում և օրենսդրական կարգով ամրապնդում էր այն արմատական փոփոխությունները, որոնք տեղի էին ունեցել հանրապետության տնտեսության, կուլտուրայի բնագավառներում, ինչպես նաև հասարակական հարաբերություններում, քաղաքական կյանքում և դասակարգային կառուցվածքում։

Հայկական ՍՍՀ հասարակական կյանքի զարգացումը միանգամայն նոր ընթացք էր ընդունել. վերացվել էին շահագործող դասակարգերը և մարդու կողմից մարդուն շահագործելու հնարավորությունները, ապրանքաշրջանառությունից դուրս էին մղվել նէպմաններն ու շահագործող մյուս տարրերը։ Դրության տերը բանվոր ու գյուղացի դասակարգերն էին և սովետական ինտելիգենցիան։ Այս ամենը էլ ավելի ամրապնդեցին բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի տնտեսական և քաղաքական բոլոր հիմքերը, որը սովետական պետության հետագա զարգացման ու հզորության գլխավոր երաշխիքն էր։ Բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը իր զարգացման այդ նոր փուլում նշանավորվեց նրանով, որ կոլտնտեսային կարգի հաղթանակի շնորհիվ գյուղացիությունը մանր արտադրողների դասակարգից դարձավ սոցիալիստական դասակարգ, մի հանգամանք, որը ավելի էր մոտեցնում գյուղացիությանն ու բանվոր դասակարգի շահերը և այդպիսով ապահովում ողջ հասարակության միասնական պայքարը նոր կյանքի՝ կոմունիստական հարաբերությունների ստեղծման համար։

Սահմանադրությունը հաստատեց, որ Հայկական ՍՍՀ-ն բանվորների և գյուղացիների սոցիալիստական պետություն է, որի քաղաքական հիմքը աշխատավորների դեպուտատների սովետներն են, իսկ տնտեսական հիմքը՝ արտադրության միջոցների սոցիալիստական սեփականությունը։

Սահմանադրությունով ապահովվում էր քաղաքացիների աշխատանք ստանալու իրավունքը։ Կապիտալիստական հասարակությանը հատուկ գործազրկությունը վաղուց վերացել էր մեր երկրում և աշխատանքի ընդունակ բոլոր քաղաքացիները երաշխավորվում էին աշխատանքով։ Բացի այդ, հիմնական օրենքը սահմանում էր աշխատանքի այնպիսի պայմանների ստեղծում, որը լիովին պետք է ապահովեր աշխատավորների նյութական բարեկեցությունը, նրանց առողջապահական պայմանները։

Ելնելով աշխատավորների շահերից սովետական օրենսդրությունը քաղաքացիներին ապահովում էր նյութական միջոցներով՝ նրանց ծերության և անաշխատունակ դառնալու դեպքում։ Աշխատավորության համար ստեղծված սոցիալական ապահովության լայն սիստեմը նմանը չունի ամբողջ աշխարհում։ Զրի բժշկական օգնության, աշխատավորների առողջապահական վիճակը բարելավող բազմաթիվ հիմնարկների, առողջարանների, հանգստյան տների համար պետությունը հսկայական միջոցներ էր տրամադրում։ Դրա հետ մեկտեղ պետական կենսաթոշակների սիստեմը բարեկեցիկ պայմաններ է ստեղծում ծեր և աշխատունակությունը կորցրած քաղաքացիների համար։ Աշխատավորների համար բարեկեցություն ստեղծելու կարևորագույն ցուցանիշ է նաև քաղաքացիների ձրի, պետության հաշվին հարմարավետ բնակարաններով ապա-

հովելը, կոմունալ-կենցաղային պայմանները բարելավելու նպատակով հսկայական միջոցներ տրամադրելը։

Սահմանադրության կարևորագույն երաշխիքներից էր նաև կրթության իրավունքի հաստատումը, որը ապահովվում էր ձրի, ընդհանուր պարտադիր և պոլիտեխնիկական կրթության զարգացմամբ, դպրոցական լայն ցանցի ստեղծումով։

Այս ամենը աշխատավորների մեջ ի սպառ վերացրեց անվստահությունը վաղվա նկատմամբ, արմատավորեց այն համոզմունքը, որ աշխատավորների պետության ու ամբողջ հասարակության միակ և կարևորագույն խնդիրն է՝ բարելավել աշխատավորների նյութական ու կուլտուրական բարեկեցությունը և ամենուր աճող նրանց պահանջմունքները։ Սահմանադրությունն ապահովում էր անձի անձեռնմխելիությունը։ Հիմնական օրենքը օրենսդրական կարգով սահմանեց. «Ոչ ոք չի կարող ձերբակալվել այլ կերպ, քան դատարանի որոշմամբ կամ դատախազի սանկցիայով»։

Հայկական ՍՍՀ սահմանադրությունը բոլոր քաղաքացիներին լայն իրավունքներ ու դեմոկրատական ազատություն տալով, միաժամանակ նրանց վրա շատ բարձր պարտականություններ էր դնում, այն է՝ սրբությամբ կատարել օրենքները, պատասխանատվության բարձր զգացումով վերաբերվել դեպի աշխատանքը և ազնվությամբ կատարել հասարակական պարտքը, հարգել սոցիալիստական համակեցության կանոնները, պաշտպանել ու ամրապնդել սոցիալիստական սեփականությունը։ Սահմանվեց նաև, որ ՍՍՀՄ զինված ուժերում ազնվորեն ծառայելն ու հայրենիքի պաշտպանությունը, Հայկական ՍՍՀ յուրաքանչյուր քաղաքացու սրբազան պարտքն է։ Հայրենիքի հզորությանը վնաս հասցնելը, լրտեսությունն ու դավաճանությունը, երդում խախտելն ու թշնամու կողմն անցնելը համարվում էր ծանր հանցագործություն և պատժվում օրենքի խստությամբ։ Կնոջը տղամարդուն հավասար իրավունք էր տրվում։ Բոլոր քաղաքացիները ապահովվում էին խոսքի, մամուլի, ժողովների, միտինգների, երթերի ու ցույցերի ազատությամբ։ Այդ նպատակի համար տրամադրվում էին պետական հսկայական միջոցներ։ Սահմանադրության մեջ միաժամանակ նշվում էր, որ Հայկական ՍՍՀ-ն իրավահավասար մի հանրապետություն է և կամավոր կերպով է մտել ՍՍՀՄ կազմի մեջ։

Նոր սահմանադրությունը միաժամանակ արտացոլում էր հանրապետության առանձնահատկությունները, օրենսդրական կարգով ընդգծում ազգային կուլտուրայի ու լեզվի զարգացման կարևոր նշանակությունը, մյուս բոլոր ազգերի ու ժողովուրդների փոխադարձ կապերի ու հարաբերությունների զարգացումն ու նրանց մերձեցումը։

Լենինյան ազգային քաղաքականությունը հսկայական հաջողությունների էր հասել։ Վերջնականապես վերացվել էր ազգային թշնամանքը և Հայաստանում ապրող բոլոր ազգերը՝ հայերը, ադրբեջանցիները, ռուսները, քրդերը և ուրիշները կազմել էին համերաշխ եղբայրական մի ընտանիք։ ՀՍՍՀ սահմանադրությունն ապահովում էր բոլոր ժողովուրդների իրավահավասարությունը, եղբայրությունը և բարեկամությունը։

Որպես առանձնահատկություն պետք է նշել այն փաստը, որ եթե ՌՍՖՍՀ սահմանադրության երկրորդ հոդվածում ասվում էր, թե «ՍՍՀՄ քաղաքական

հիմքն են կազմում աշխատավորների դեպուտատների սովետները, որոնք տճել ու ամրապնդվել են կալվածատերերի ու կապիտալիստների իշխանությունը տապալելու և պրոլետարիատի դիկտատուրան նվաճելու հետևանքով», ապա ՀՍՍՀ սահմանադրության «Հասարակական կառուցվածքը» գլխում այդ դրույթները պահպանելով հանդերձ, միաժամանակ նշվում էր հայ ժողովրդի մղած պայքարը ընդդեմ ցարիզմի, ռուսական բուրժուազիայի ազգային ճնշման, ինչպես նաև դաշնակցական հակահեղափոխական ուժերը ջախջախելու և պրոլետարիատի դիկտատուրա հաստատելու կարևոր խնդիրների մասին։ Ընդգծվում էր նաև, որ Հայկական ՍՍՀ-ն, ոչ թե ֆեդերատիվ, այլ ունիտար, սուվերեն պետություն է, որի կազմում չկան ավտոնոմ հանրապետություններ և մարզեր, ինչպես և ազգային օկրուգներ և որ Հայկական ՍՍՀ պետական իշխանության տեղական օրգանների ընտրական նորմաները տարբերվում են մյուս հանրապետություններից։ Նշվում էին նաև մի շարք այլ առանձնահատկություններ, որոնք հատուկ են միայն Հայկական ՍՍՀ-ին։ Այս ամենով հանդերձ Հայկական ՍՍՀ սահմանադրությունը իր հիմնական կառուցվածքով ու սկզբունքներով համապատասխանում և ամբողջովին ելնում էր ՍՍՀՄ սահմանադրության հիմնական դրույթներից, քանի որ թե՛ ՍՍՀՄ և թե՛ Հայկական ՍՍՀ սահմանադրությունների տնտեսական ու քաղաքական հիմքերը նույնն էին։ Ինչպես տնտեսական, այնպես էլ հասարակական կազմակերպություններին ղեկավարող և միասնական ուղղություն տվող ուժը Սովետական Միության կոմունիստական կուսակցությունն էր։ ՍՍՀՄ բոլոր հանրապետությունների սահմանադրություններում օրենսդրական կարգով ամրապնդված էր կոմունիստական կուսակցության ավանգարդային ու ղեկավար դերը։

Կարևոր է նաև, որ ՍՍՀՄ, ինչպես նաև Հայկական ՍՍՀ սահմանադրություններում օրենսդրական կարգով հաստատվում էր սովետական պետականության սոցիալիստական բնույթը, համավոր սկզբունքներով հանրապետությունների միավորումը և ինտերնացիոնալիզմը, բոլոր քաղաքացիների իրավահավասարությունն՝ անկախ նրանց ազգային ու ռասայական պատկանելությունից։

Նոր սահմանադրության ընդունումով սովետական պետությունը անցավ իր զարգացման հետևյալ փուլին։ Սովետական պետության զարգացման առաջին փուլը՝ պրոլետարիատի դիկտատուրայի ամրապնդումն էր, որը անհրաժեշտ էր կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու ժամանակաշրջանում։ Շահագործող դասակարգերի վերացման հետևանքով, վերացել էր նաև նրանց դիմադրությունը ճնշելու խնդիրը։ Սակայն պետք է նկատի ունենալ, որ այն ժամանակ ՍՍՀՄ-ը միակ սոցիալիստական երկիրն էր և գտնվում էր կապիտալիստական շրջապատման մեջ, ուրեմն և գոյություն ուներ ռազմական ինտերվենցիայի, կապիտալիզմի վերականգնման վտանգը։ Պարզ է, որ նման պայմաններում սոցիալիզմի հաղթանակը վերջնական համարել չէր կարելի և այն պաշտպանելու, ամրապնդելու ու զարգացնելու համար դեռևս պետք է գոյություն ունենար պրոլետարիատի դիկտատուրան։

Նոր հասարակարգ ստեղծելու մարդկային հասարակության դարավոր երազանքը իրականություն դարձավ։ Կոմունիստական կուսակցությունը՝ ին-

ված Մարքսի, Էնգելսի, Լենինի ուսմունքով, գիտականորեն հիմնավորեց և գործնականորեն իրականացրեց ՍՍՀՄ-ում սոցիալիստական հասարակարգի կառուցումը։

Սոցիալիզմի կառուցման պատմական նշանակությունը նախ և առաջ այն է, որ ՍՍՀՄ օրինակով հաստատվեց կապիտալիզմը ավելի բարձր՝ կոմունիստական հասարակարգով փոխարինելու մարքսիստական կանխատեսությունը, առանձին վերցրած երկրում սոցիալիզմի հաղթանակի հնարավորության վերաբերյալ Լենինի հանճարեղ հետևությունը։ Սոցիալիզմի հաղթանակը ՍՍՀՄ-ում ոգևորիչ օրինակ հանդիսացավ բոլոր երկրների աշխատավորների համար և ժողովուրդներին ցույց տվեց կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու ուղին։

Սովետական նոր սահմանադրությունը միջազգային կարևոր նշանակություն ունեցող փաստաթուղթ է։ Այն հրապարակվեց աշխարհի բազմաթիվ լեզուներով և արժանացավ աշխատավորների և առաջադեմ մարդկանց բարձր գնահատականին։ Սովետական սահմանադրության մեջ աշխարհի առաջադեմ մարդկությունը տեսնում էր իր լավագույն ցանկությունների ու երազանքների իրականացումը։

Հաղթանակած սոցիալիզմի երկրի սահմանադրության մշակումն ու ընդունումը պատմական նշանակություն ունեցող խոշոր իրադարձություն էր։

* *
*

Սովետների VIII համագումարի հանձնարարությամբ ՍՍՀՄ Կենտգործկոմի IV սեսիան 1937 թվականի հուլիսին 9-ին հաստատեց «ՍՍՀՄ Գերագույն սովետի ընտրությունների կանոնադրությունը», որը ելնում էր նոր սահմանադրությամբ հաստատված ընտրական սիստեմից։

ՍՍՀՄ Կենտգործկոմը իր 1937 թվականի հոկտեմբերի 1-ի որոշմամբ Գերագույն սովետի ընտրությունների օրը նշանակեց նույն թվականի դեկտեմբերի 12-ը։ Համկ(բ)կ Կենտկոմի պլենումը հատուկ որոշում ընդունեց ՍՍՀՄ Գերագույն սովետի ընտրությունների կապակցությամբ ագիտացիոն-պրոպագանդիստական լայն աշխատանք ծավալելու մասին։

Կանոնադրության համաձայն մտցվում էր գաղտնի քվեարկությամբ ընդհանուր, հավասար և ուղղակի ընտրության ձևը։ Եթե նախկինում ընտրություններն անց էին կացվում գործարաններում, ֆաբրիկաներում և այլ արտադրական ձեռնարկություններում, ըստ աշխատանքի վայրի, ապա այժմ Գերագույն սովետի ընտրությունները առաջին անգամ տեղի էին ունենալու ըստ քաղաքացիների բնակավայրի, որը հնարավորություն կտար բնակչության լայն խավերին ավելի ակտիվորեն մասնակից դարձնելու ընտրական կամպանիային։

Հայկական ՍՍՀ-ում մեծ աշխատանք ծավալվեց ընտրությունները քաղաքական բարձր ակտիվության պայմաններում անցկացնելու համար։ Քաղաքներում և գյուղական վայրերում ստեղծվեցին ընտրությունների կանոնադրու-

թյունն ուսումնասիրող խմբակներ, որոնց մեջ ընդգրկված էին հազարավոր ընտրողներ։ Հանրապետության աշխատավորները ընտրությունների նախապատրաստման կամպանիան նշանավորեցին աշխատանքային նոր սխրանքներով, սոցիալիստական մրցության ծավալման նոր օրինակներով։ Ընտրական կամպանիային ակտիվորեն մասնակցում էին արհմիութենական, կոմերիտական և այլ հասարակական կազմակերպությունները։

1937 թվականի հոկտեմբերին սկսվեց ՍՍՀՄ Գերագույն սովետի դեպուտատության թեկնածուների առաջադրումը։ Կոմունիստական կուսակցությունը անկուսակցականների հետ բլոկ կազմած, առաջադրում էր արդյունաբերության, գյուղատնտեսության, գիտության ու կուլտուրայի առաջավորների, պետական և կուսակցական ականավոր գործիչների լավագույն ներկայացուցիչներին։ Համկ(բ)Կ Կենտկոմը եռանդուն աշխատանք ծավալեց ընտրական կամպանիան գլխավորելու գործում։ 1937 թվականի դեկտեմբերի 6-ին երկրի բոլոր ընտրողներին ուղղած դիմումի մեջ կուսակցության Կենտրոնական կոմիտեն գրում էր, որ կուսակցությունը «ընտրություններում հանդես է գալիս բլոկ կազմած, միություն կազմած անկուսակցական բանվորների, գյուղացիների, ծառայողների, ինտելիգենցիայի հետ»։ Սոցիալիզմի հաղթանակը և հակամարտ դասակարգերի վերացումը ամրապնդեցին սովետական ժողովրդի բարոյա-քաղաքական միասնությունը, որի շնորհիվ առաջադրված թեկնածուները հավասար պաշտպանություն էին գտնում բոլոր կողմից։ «Յուրաքանչյուր անկուսակցական դեպուտատ կլինի նաև կոմունիստների դեպուտատը,— ասված էր կուսակցության Կենտկոմի դիմումի մեջ,— ինչպես նաև յուրաքանչյուր կոմունիստ դեպուտատ կլինի անկուսակցականների դեպուտատը»։

Կուսակցության ղեկավարությամբ ընտրությունների նախապատրաստման գործում լայն աշխատանք ծավալեց լենինյան կոմերիտմիությունը։ ՍՍՀՄ Գերագույն սովետի ընտրական կամպանիայի ժամանակ կոմերիտմիությունը կատարելով կուսակցության դիրեկտիվները, ագիտացիոն-մասսայական լայն աշխատանք ծավալեց ընտրողների մեջ։

1937 թվականի մայիսին տեղի ունեցած արհեստակցական միությունների համամիութենական կենտրոնական խորհրդի պլենումը մատնանշել էր աշխատավորների մեջ տարվող մասսայական աշխատանքի, սոցիալիստական մրցությունը ծավալելու, արհմիութենական դեմոկրատիայի ընդլայնման և մի շարք այլ բնագավառներում գոյություն ունեցող լուրջ թերությունները։ Ընդգծվել էր նաև արտադրական և քաղդաստիարակչական աշխատանքների ծավալման անհրաժեշտությունը աշխատավորների մասսայական կազմակերպություններում։ Ելնելով վերոհիշյալից ընտրական կամպանիայի շրջանում զգալի աշխատանք կատարեցին նաև արհեստակցական կազմակերպությունները։

Ընտրությունների նոր սիստեմի պայմաններում կարևորագույն խնդիրը կոմունիստների և անկուսակցականների բլոկի սերտ միասնությունն էր, որ ցույց էր տալիս մեր կուսակցության դերի աճը, մասսաների հետ նրա ունեցած կապերի ամրապնդումը։

1937 թվականի դեկտեմբերի 12-ին կայացած ընտրությունները մասսաների և կուսակցության միջև գոյություն ունեցող սերտ կապի փայլուն արտահայտությունն էին։ Երկրի 94238159 ընտրողներից ընտրությունների մաս-

նակեց 91113153-ը կամ նրանց 96,8 տոկոսը։ Մոտ 90 միլիոնը կամ 98,6 տոկոսը իր ձայնը տվեց կոմունիստների և անկուսակցականների բլոկի թեկնածուների օգտին։ Առաջադրված 1143 թեկնածուներն էլ, որոնց թվում 870-ը կոմունիստներ և 273-ը անկուսակցականներ, ընտրվեցին ՍՍՀՄ Գերագույն սովետի կազմում։ Նրանց 40 տոկոսից ավելին բանվորներ էին, 30 տոկոսը՝ գյուղացիներ և մոտ 30 տոկոսը սովետական ինտելիգենցիայի ներկայացուցիչներ։

Հայկական ՍՍՀ-ում 620,220 ընտրողներից ընտրությանը մասնակցեցին 590,641-ը կամ ընտրողների 95,2 տոկոսը։

Հայկական ՍՍՀ-ից ՍՍՀՄ Գերագույն սովետի կազմում ընտրվեց 29 դեպուտատ, որոնցից չորսը Միության սովետում և քսանհինգը՝ Ազգությունների սովետում։ Դեպուտատների թվում էին Ա. Միկոյանը, Կ. Հալաբյանը, Լ. Հովսեփյանը, Մինաս Պապյանը, Գ. Հարությունյանը, Ա. Փիրուզյանը, Ա. Ալեքսանյանը, Բ. Մարտիրոսյանը և ուրիշներ։

ՍՍՀՄ Գերագույն սովետի առաջին սեսիան տեղի ունեցավ 1938 թվականի հունվարի 12-ին։ Միության սովետի նիստը բացեց ավագ դեպուտատ, ակադեմիկոս Ա. Ն. Բախը, իսկ Ազգությունների սովետինը՝ դեպուտատ, հին բոլշևիկ Միխա Ցխակայան։ Ընտրվեց Գերագույն սովետի քսանչորս հոգուց բաղկացած նախագահություն, որի առաջին նախագահ ընտրվեց Մ. Ի. Կալինինը, նրա տեղակալներ ընտրվեցին տասնմեկ հանրապետությունների ներկայացուցիչներ։ Սեսիան ընտրեց մշտական գործող հանձնաժողովներ, ինչպես նաև հաստատեց ժողովրդական կոմիսարների սովետի կազմը։

Կարևոր նշանակություն ունեցան սեսիայի որոշումները մի շարք նոր երկրամասեր և մարզեր կազմելու, ինչպես նաև նոր ժողովրդական կոմիսարիատներ ստեղծելու վերաբերյալ։ Ստեղծվեց ռազմա-ծովային նավատորմի ժողովրդական կոմիսարիատը, որը կարևոր նշանակություն ուներ երկրի պաշտպանությունը ամրապնդելու համար։

4. ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԵՐԱԳՈՒՅՆ ՍՈՎԵՏԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ՍՈՎԵՏԵՐԵՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

ՍՍՀՄ Գերագույն սովետի ընտրություններից հետո սկսվեց միութենական հանրապետությունների Գերագույն սովետների ընտրությունները։

Հայկական ՍՍՀ-ն սահմանադրության հիման վրա ձեռնամուխ եղավ իր պետական նոր կառուցվածքի ստեղծմանը։

Հայկական ՍՍՀ 1937 թվականի սահմանադրությունը օրենսդրական կարգով հաստատեց ընտրական սիստեմի դեմոկրատացումը. ոչ լիովին հավասար ընտրությունները փոխարինվեցին հավասար ընտրություններով, բազմաստիճանը՝ ուղղակիով, բացը՝ փակ, գաղտնի քվեարկությամբ։ Դրա հիման վրա Հայկական հանրապետության գերագույն, քաղաքային, շրջանային և տեղական բոլոր սովետների դեպուտատները ընտրվեցին ընդհանուր, հավասար, ուղղակի և գաղտնի քվեարկությամբ։

Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի ընտրությունները նշանակվեցին 1938 թվականի հունիսի 12-ին։ Հանրապետությունում նախընտրական լայն աշխատանք ծավալվեց։ Հայաստանի աշխատավորները ընտրությունները դիմավորեցին արտադրական նորանոր հաջողություններով։ Նրանք իրենց ձայնը տվեցին կոմունիստների և անկուսակցականների բլոկի օգտին։ Հունիսի 12-ը, ընտրությունների օրը, դարձավ տոնական օր։ Հայ ժողովուրդը առաջին անգամ ընդհանուր և հավասար իրավունքներով, գաղտնի քվեարկությամբ, ընտրեց իր բարձրագույն պետական օրգանը՝ ՀՍՍՀ Գերագույն սովետը։

Հայ ժողովուրդը մեծ համախմբվածություն ու միասնություն ցուցաբերեց ընտրությունների ժամանակ։ Հանրապետության 611649 ընտրողներից ընտրություններին մասնակցեց 605907-ը, այսինքն՝ ընտրողների 99,06 տոկոսը։ Կոմունիստների և անկուսակցականների բլոկի թեկնածուների օգտին ձայն տվեց ընտրողների 99,67 տոկոսը։ Հանրապետության 256 ընտրական օկրուգներում ընտրվեցին 256 դեպուտատ, որոնցից կոմունիստներ էին 156-ը, անկուսակցականներ՝ 100-ը[1]։ Դեպուտատներից բանվորներ էին 56-ը, կոլտնտեսականներ՝ 145-ը և ծառայողներ՝ 55-ը։

Հանրապետության իշխանության գերագույն օրգանը ինտերնացիոնալ կազմ ուներ։ Ըստ ազգերի այն հետևյալ պատկերն էր ներկայացնում. հայեր՝ 212, ադրբեջանցիներ՝ 27, ռուսներ՝ 13, քրդեր՝ 2, վրացի՝ 1, հույն՝ 1։ Դեպուտատներից 65-ը կանայք էին։

Հայ ժողովրդի կուլտուրայի, գիտության ու արվեստի գործիչներից դեպուտատների թվումն էին Արազին, Հարո Ստեփանյանը, Հայկանուշ Դանիելյանը, Ռուբեն Գյանջումցյանը, Սիմակ Սահակյանը, Շարա Տալյանը, Գաբրիել Գյուրջյանը և ուրիշներ[2]։

Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի առաջին սեսիան տեղի ունեցավ ընտրություններից մեկ ամիս հետո՝ 1938 թվականի հուլիսի 12-ին։ Սեսիան բացեց ավագագույն դեպուտատ, գրող Արազին։ Սեսիան ընտրեց Գերագույն սովետի նախագահություն և կազմեց հանրապետության կառավարությունը՝ ժողկոմսովետը։ Գերագույն սովետի նախագահության նախագահ ընտրվեց Մ. Պապյանը, ժողկոմսովետի նախագահ՝ Ա. Փիրուզյանը։

Հանրապետության պետական գերագույն օրգաններ ստեղծելուց հետո, նախապատրաստական աշխատանք ծավալվեց Հայկական ՍՍՀ տեղական սովետների ընտրությունների ուղղությամբ։ Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի երրորդ սեսիան 1939 թվականի սեպտեմբերին հաստատեց քաղաքային, շրջանային, գյուղական և ավանային սովետների ընտրությունների կանոնադրությունը, որի հիման վրա աշխատավորները առաջին անգամ ընդհանուր, հավասար, ուղղակի ընտրությամբ և գաղտնի քվեարկությամբ ընտրեցին իրենց իշխանության տեղական օրգանները՝ աշխատավորների դեպուտատների տեղական սովետները։ Ամբողջ հանրապետությունում ընտրվեցին 38 շրջանային, 9 քաղաքային, 4 քաղաքային-շրջանային, 671 գյուղական և 18 ավանային սովետներ։

---

1 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1938 թ.։

2 Տե՛ս նույն տեղում։

• • •

ՍՍՀՄ սահմանադրությունը երաշխավորեց և լիովին ապահովեց ՀՍՍՀ-ի, ինչպես նաև բոլոր ազգային հանրապետությունների անկախությունն ու սուվերեն իրավունքները տնտեսական և կուլտուրական շինարարության բոլոր ոլորտներում։ ՀՍՍՀ սուվերեն իրավունքների հիմքն էր հանդիսանում ՍՍՀՄ տնտեսական անկախությունն ու ռազմական հզորությունը։ Ազգային հանրապետությունների սուվերեն իրավունքները ապահովվում էր ինչպես իրենց սահմանադրություններով, այնպես էլ ՍՍՀՄ սահմանադրությամբ նախատեսված օրենսդրական օրենքներով։

Հայկական ՍՍՀ սուվերենությունը հաստատվում է նրա սահմանադրությամբ, որտեղ ասված է, որ ՀՍՍՀ փոխադարձ օգնության նպատակով տնտեսական, քաղաքական և պաշտպանության գծով, միավորվելով մյուս ազգային հանրապետությունների հետ, կամավոր կերպով մտնում է ՍՍՀՄ-ի մեջ՝ նրա կազմից ազատորեն դուրս գալու իրավունքի վերապահումով։

Հայկական ՍՍՀ հիմնական օրենքը սահմանում է, որ հանրապետությունն ունի իր որոշակի տերիտորիան. այն անձեռնմխելի է և նրա փոփոխման հարցը որոշում է ինքը՝ ժողովուրդը և նրա պետական բարձրագույն մարմինը՝ Գերագույն սովետը։

Սահմանադրությունում ասված է նաև, որ Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահը ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահի տեղակալներից մեկն է, իսկ ՀՍՍՀ-ի Ժողկոմսովետի նախագահը մտնում է ՍՍՀՄ կառավարության կազմի մեջ։ Անհրաժեշտության դեպքում, եթե միութենական որևէ հանրապետություն պահանջ է դնում, ՍՍՀՄ Գերագույն սովետը պարտավոր է արտահերթ նստիա հրավիրել և ռեֆերենդում հայտարարել քննարկման համար առաջադրված հարցի մասին։ Միութենական հանրապետությունները կարող են նաև օրենքների նախագծեր ներկայացնել ՍՍՀՄ Գերագույն սովետի քննարկմանը, պահանջել այս կամ այն օրենքի փոփոխում ու լրացում։ Բացի այդ, ՍՍՀՄ Գերագույն սովետի ընդունած որոշումները հրատարակվում են միութենական բոլոր հանրապետությունների լեզուներով։ Բոլոր քաղաքացիների համար հանրապետությունների սահմանները որևէ արգելք չեն ստեղծում. նրանք կարող են ազատ երթևեկել ՍՍՀՄ տերիտորիայում և ապրել ու աշխատել որտեղ ցանկանան։

Հանրապետության պետական բարձրագույն ինքնուրույն մարմիններն էին Հայկական ՍՍՀ Գերագույն սովետը և նրա նախագահությունը, Ժողկոմսովետն իր ժողովրդական կոմիսարիատներով ու գերատեսչություններով, դատախազությունը և գերագույն դատարանը։

ՀՍՍՀ-ն ունի իր մայրաքաղաքը, պետական գերբը, դրոշակը և պետական հիմնը։

Հայկական ՍՍՀ Գերագույն սովետը պետական շինարարության բնագավառում իրականացնում է հանրապետության սահմանադրության ընդունումը, ապահովում է նրա իրականացման վերահսկողությունը և պետական օրենքների պաշտպանությունը, վարչա-տնտեսական բաժանումը։ Տնտեսական բնագավառում հաստատում է ժողովրդական-տնտեսական պլանները և պետական

բյուջեն, իրականացնում նրանց կատարման վերահսկողությունը, սահմանում է հարկերն ու այլ եկամուտները, գլխավորում է ապահովագրական և խնայողական գործը, արդյունաբերական, շինարարական, տրանսպորտի ու ճանապարհային շինարարության, գյուղատնտեսական և առևտրական ձեռնարկություններ-ղեկավարումը, որոշում բնական հարստություններից և ընդերքից օգտվելու կարգը, ղեկավարում բնակարանային, կոմունալ տնտեսության, քաղաքների, ավանների ու այլ բնակավայրերի բարեկարգման աշխատանքները և այլն։

ՀՍՍՀ Գերագույն սովետը ընտրվում է չորս տարի ժամանակով՝ հինգ հազար բնակչից մեկ դեպուտատի նորմայով (սկսած 1958 թվականից վեց հազար բնակչից մեկ դեպուտատ)։ Դեպուտատության թեկնածու կարող է առաջադրվել հանրապետության 21 տարին լրացած յուրաքանչյուր քաղաքացի՝ առանց ռասայական ու ազգային խտրության, սեռի ու դավանանքի, կրթական ցենզի, նստակյացության, սոցիալական ծագման, գույքային դրության, անցյալում գործունեության հանգամանքների հաշվի առման։ Ընտրված դեպուտատների ընդհանուր ժողովը՝ Գերագույն սովետի սեսիան, հանդիսանում է հանրապետության իրավական իշխանության բարձրագույն ձևը, որի նիստերը հրավիրվում են տարեկան երկու անգամ։ ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահության կողմից, կամ թե դեպուտատների թվի մեկ երրորդի պահանջով արտահերթ սեսիաներ կարող են հրավիրվել անհրաժեշտության դեպքում։

Հայկական ՍՍՀ Գերագույն սովետը բաղկացած է մեկ պալատից, որն իր կազմում ունենալով մյուս ազգությունների ներկայացուցիչներ, լիովին արտահայտում է հանրապետությունում ապրող ազգությունների շահերը և բոլոր միջոցներով նպաստում նրանց տնտեսական ու կուլտուրական զարգացման գործին։ ՀՍՍՀ գործող օրենքները ամբողջովին ելնում են ՍՍՀՄ սահմանադրությունից և արտահայտում են մեր երկրի բոլոր ժողովուրդների շահերը։ Թեև մինչև 1937 թվականի սահմանադրության ընդունումը Հայկական ՍՍՀ օրենքները սահմանվում էին սովետների համագումարի, ԿԳԿ-ի նախագահության, հանրապետության Ժողկոմսովետի կողմից, ապա նոր սահմանադրությունը օրենսդրական ֆունկցիան վերապահում էր միայն Գերագույն սովետին։ Այս հանգամանքը նպաստեց օրենքների կայունացմանը և գերագույն իշխանության հեղինակության բարձրացմանը։ Օրենքները ուժի մեջ են մտնում Գերագույն սովետի սեսիայում ձայների մեծամասնությամբ հաստատելուց հետո և հրապարակվում են Գերագույն սովետի նախագահության նախագահի և քարտուղարի ստորագրությամբ՝ հայերեն, ռուսերեն և ադրբեջաներեն լեզուներով։

Ժողովրդի ընտրյալները, դեպուտատները բացի Գերագույն սովետի սեսիաներին մասնակցելուց, ակտիվ աշխատանք են տանում ընտրողների մեջ։ Դեպուտատը հաճախակի հանդիպումներ պետք է ունենա ընտրողների հետ, զրույցներ կազմակերպի, լսի նրանց առաջարկներն ու պահանջները, օգնի ընտրողների տնտեսական և կուլտուրական պահանջմունքները բավարարելու աշխատանքներին։ Հայկական ՍՍՀ սահմանադրության 118-րդ հոդվածում դեպուտատի պարտականությունների մասին ասված է. «Դեպուտատը պարտավոր է ընտրողների առաջ հաշիվ տալ իր աշխատանքի և աշխատավորների դեպուտատների սովետի աշխատանքի մասին և կարող է ամեն ժամանակ ետ կանչվել ընտրողների մեծամասնության որոշմամբ, օրենքով սահմանված կարգով»։

Այստեղ արտահայտված է սոցիալիստական դեմոկրատիայի ուժը, ժողովրդի ընտրյալները կոչված են ամբողջովին ծառայելու նրան, արտահայտելու ժողովրդի կամքը։

Դեպուտատներն ընդգրկվում են մշտական գործող հանձնաժողովների մեջ։ Այդպիսիներից է մանդատային հանձնաժողովը, որը բաղկացած է 9 դեպուտատներից և գործում է ՀՍՍՀ սահմանադրության 32-րդ հոդվածի հիման վրա։ Հանձնաժողովը, իր նախագահի գլխավորությամբ, ստուգում է դեպուտատների լիազորությունները և զեկույց ներկայացնում Գերագույն սովետի սեսիային։ Նախկին դեպուտատների այս կամ այն պատճառով դուրս գալու և նորերի ընտրության մասին նույնպես զեկույց է տրվում Գերագույն սովետի սեսիային։ Կարևոր աշխատանք է տանում բյուջետային հանձնաժողովը, որը ուսումնասիրում և վերահսկում է ՀՍՍՀ Ժողկոմսովետի կողմից Գերագույն սովետի սեսիայի քննարկմանը ներկայացրած պետական բյուջեի կատարումը և նոր տարվա բյուջեի կոնտրոլ թվերը։ Բյուջեի վերաբերյալ ներկայացնում է հարակից զեկուցում. այդ կապակցությամբ ընդհանրացնում և համապատասխան ընթացք է տալիս դեպուտատների առաջարկություններին։ Այս բոլորի հիման վրա Գերագույն սովետը օրենք է ընդունում պետական բյուջեի հաստատման վերաբերյալ, որը արտահայտում է ժողովրդական տնտեսության զարգացման, մասսաների կուլտուրական ու նյութական բարեկեցության բավարարման պահանջները։

Օրենսդրական նախագծումների, ինչպես նաև մյուս մշտական հանձնաժողովները ևս մեծ աշխատանք են տանում պետական կառավարման օրգանների աշխատանքը կատարելագործելու ուղղությամբ։ Նույն կարգով տեղական սովետների մշտական գործող հանձնաժողովները հաշվետու են համապատասխան սովետների առջև։

Հայկական ՍՍՀ սահմանադրության 33-րդ հոդվածի հիման վրա Գերագույն սովետը, ինչպես նաև տեղական սովետները, կոնկրետ առաջադրանքներ կատարելու համար, անհրաժեշտության դեպքում կարող են ստեղծել նաև ժամանակավոր հանձնաժողովներ, որից հետո նրանց գործունեությունը դադարեցվում է։ Թե պետական հիմնարկները և թե բոլոր պատասխանատու անձինք պարտավոր են հանձնաժողովին ներկայացնել պահանջված նյութերն ու փաստաթղթերը, կատարել նրա պահանջները։

Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի դեպուտատը իր պարտականությունների հետ միասին օգտվում է նաև որոշակի իրավունքներից. նա կարող է իր, կամ մի խումբ դեպուտատների անունից հարցադրում ներկայացնել պետական գործադիր օրգաններին, որոնք պարտավոր են երեք օրվա ընթացքում պատասխանել դեպուտատին։ Նա օգտվում է նաև անձեռնմխելիության իրավունքից, չի կարող դատական պատասխանատվության կանչվել, կամ ձերբակալվել մինչև այդ մասին չլինի Գերագույն սովետի, կամ նրա նախագահության ցուցումը։

Պետության գործունեությունը գլխավորելու և օրենքների իրագործումը վերահսկելու գործում մեծ դեր ունի ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահությունը, որը բաղկացած է նախագահից, նրա երկու տեղակալներից, քարտուղարից և նախագահության 9 անդամից (1958 թվականից դարձել է 11)։ Նախագահը ընտրվում է Գերագույն սովետի կողմից և պատասխանատու է վերջինիս առջև։

ղեկավարման նման սխտեմը ամբողջովին բխում է կոլեգիալության սկզբունքներից։

Հիմնական օրենքը սահմանում է, որ Հայկական ՍՍՀ պետական իշխանության բարձրագույն կարգադրիչ օրգանը Ժողկոմսովետն է։ Այն կազմվում է Գերագույն սովետի կողմից և հաշվետու է նրա առջև։ Ժողկոմսովետը կազմված է նախագահից, նախագահի առաջին տեղակալից և տեղակալներից, պետական պլանային հանձնաժողովի նախագահից, ժողկոմներից և պետական կոմիտեների նախագահներից։

ՀՍՍՀ Ժողկոմսովետը գործում է ՍՍՀՄ Ժողկոմսովետի որոշումներին համապատասխան և նրա հետ սերտ կապ է պահպանում Մոսկվայում գտնվող իր մշտական ներկայացուցչության միջոցով, որը կատարում է ՀՍՍՀ Ժողկոմսովետի հանձնարարությունները, մասնակցում ՍՍՀՄ կառավարական օրգաններում Հայաստանին վերաբերող հարցերի քննարկմանն ու հաստատմանը, ապահովում հանրապետության ժողովրդական տնտեսության անհրաժեշտ նյութերի մատակարարումը, օգնություն է ցույց տալիս կադրերի պատրաստմանը և այլն։

Հատկապես կարևոր դեր է կատարում ՀՍՍՀ պետական պլանային հանձնաժողովը, քանի որ հանրապետության կյանքում առաջնակարգ նշանակություն ունի պլանավորման գործը։ Սահմանադրության 11-րդ հոդվածում ասված է. «Հայկական ՍՍՀ-ի տնտեսական կյանքը որոշում և նրան ուղղություն է տալիս պետական ժողովրդա-տնտեսական պլանը՝ հանրային հարստությունն ավելացնելու, աշխատավորների նյութական ու կուլտուրական մակարդակն անշեղորեն բարձրացնելու, սոցիալիստական պետության անկախությունն ամրապնդելու և նրա պաշտպանունակությունն ուժեղացնելու նպատակով»։

Պետպլանի նախագահը հաստատվում է ՀՍՍՀ Գերագույն սովետի կողմից և մտնում է հանրապետության կառավարության կազմի մեջ։ Պետպլանը տեղերում՝ քաղաքային ու շրջանային սովետներին կից ստեղծում է պլանային հանձնաժողովներ, որոնք օգնում են ի մի բերելու և գլխավորելու պլանավորման աշխատանքները ամբողջ հանրապետությունում։

Հանրապետության ճյուղային կառավարման բարձրագույն օրգանները ժողկոմներն են, որոնք գլխավորվում են Գերագույն սովետի կողմից նշանակված ժողկոմներով։ Ժողկոմները մտնում են Հայկական ՍՍՀ կառավարության կազմի մեջ։

Հայկական ՍՍՀ պետական իշխանության տեղական մարմինները՝ բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների դեպուտատների գյուղական, ավանային, քաղաքային ու շրջանային սովետները, 1937 թվականի սահմանադրությունով վերակազմվեցին աշխատավորների դեպուտատների սովետների։ Այդ վերակազմումը բխում էր հասարակական կյանքում տեղի ունեցած սոցիալական փոփոխություններից և սոցիալիզմի հաղթանակից, որի հետևանքով դեմոկրատական սկզբունքներով ստեղծված սովետների դերը ավելի բարձրացավ և աշխատավորները լայնորեն սկսեցին մասնակցել պետական կառավարման գործին։

Աշխատավորների սովետները տնտեսական ու կուլտուրական շինարարության բնագավառում գլխավորում են տեղական օրգանների աշխատանքները, տեղական պահանջներին համապատասխան կազմում են բյուջե, հսկում պե-

տական կարգ ու կանոնի պահպանումը և օրենքների կատարումը, պաշտպանում քաղաքացիների իրավունքները, հետևում նրանց բարեկեցության, կուլտուր-կենցաղային, բնակարանային պայմանների բարելավմանը։ Տեղական կարևոր հարցերը որոշվում են սովետների սեսիաներում, որոնց թիվը պետք է լինի ոչ պակաս քան տարեկան վեց անգամ, իսկ շրջանային բաժանում ունեցող քաղաքներում ոչ պակաս քան չորս անգամ։ Սեսիայի նիստերը ղեկավարելու համար ընտրվում է նախագահ և քարտուղար։ Ընտրվում են նաև մշտական հանձնաժողովներ, որոնց դերը չափազանց մեծ է մասսաներին սովետների աշխատանքին մասնակից դարձնելու, սովետների գործադիր կոմիտեներին օժանդակելու, տնտեսական և կուլտուրական շինարարության գործը առաջ տանելու, ինչպես նաև պետական որոշումներն ու առաջադրանքները ժամանակին կատարելու գործում։

Աշխատավորների դեպուտատների սովետի առաջին սեսիայում ընտրվում է գործադիր կոմիտե, որը հաշվետու է թե տվյալ սովետի և թե վերադաս սովետի գործկոմի առջև։

Այսպիսով, սոցիալիզմի հաղթանակը և նոր հասարակարգի կառուցումը պատմական մեծ նշանակություն ունեցող մի ժամանակաշրջան էր մեր երկրի կյանքում։

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԶՈՐՍԵՐՈՐԴ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՐՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱ ՊԼԱՆԸ: ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՆԱԽՕՐՅԱԿԻՆ

1. ԵՐՐՈՐԴ ՀՆԳԱՄՅԱ ՊԼԱՆԸ ԵՎ ՊԱՅՔԱՐ ՆՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Երկրորդ հնգամյակի հաջող կատարումն անհրաժեշտ պայմաններ ստեղծեց ամբողջ Սովետական Միության, նրա մեջ մտնող բոլոր ազգային սովետական հանրապետությունների, այդ թվում նաև Սովետական Հայաստանի էկոնոմիկայի և կուլտուրայի հետագա զարգացման համար։

1939 թվականի հունվարին Համ(բ)Կ կենտրոնական կոմիտեն հրապարակեց կուսակցության հերթական XVIII համագումարում քննարկվելիք ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման երրորդ հնգամյա պլանի (1938—1942) դիրեկտիվների նախագիծը։

1939 թվականի փետրվարի 26-ին Երևանում բացվեց Հ(բ)Կ XII համագումարը։ Նրա պատգամավորները ներկայացնում էին կուսակցության 18429 անդամների և 8381 թեկնածուների։ Համագումարը քննարկեց կուսակցության XVIII համագումարին ներկայացվող զեկուցումների թեզիսները և տվեց իր հավանությունը։ Ելնելով ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման երրորդ հնգամյա պլանի դիրեկտիվներից, համագումարը մշակեց Հայաստանի արդյունաբերության, գյուղատնտեսության, գիտության, կուլտուրայի հետագա զարգացման խնդիրները երրորդ հնգամյակի տարիներին։

Սովետական ժողովրդի ու կոմունիստական կուսակցության կյանքում կարևոր իրադարձություն էր Համ(բ)Կ XVIII համագումարը, որը տեղի ունեցավ 1939 թվականի մարտին։ Համագումարը նշեց, որ Սովետական Միությունում նոր տեխնիկայի հիման վրա հիմնականում ավարտվել է ժողովրդական տնտեսության, արդյունաբերության և գյուղատնտեսության տեխնիկական վերակառուցումը և վերջնականապես վերացվել են շահագործող դասակարգերը։

Համագումարը հաստատեց ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության զարգացման երրորդ հնգամյա պլանի դիրեկտիվները, փոփոխություններ մտցրեց կուսակցության կանոնադրության մեջ։ Համագումարը հավանություն տվեց սովետական կառավարության արտաքին քաղաքականությանը։

Ժողովրդական տնտեսության զարգացման երրորդ հնգամյա պլանը նախատեսում էր արդյունաբերության և գյուղատնտեսության աննախընթաց վերելք։ Արդյունաբերության արտադրանքի ծավալը հնգամյակում կազմելու էր 92 տոկոս[1]։

Նախատեսվում էր արագ տեմպերով զարգացնել մեքենաշինությունը, ածխարդյունաբերությունը, ստեղծել նավթարդյունաբերության նոր բազա՝ «երկրորդ Բաքուն», էլեկտրակայանների ընդհանուր հզորությունը ավելացնել 2,1 անգամ, քիմիական արդյունաբերությունը դարձնել արդյունաբերական առաջատար ճյուղերից մեկը։ Թեթև արդյունաբերության, լայն սպառման առարկաների արտադրանքը պետք է ավելացվեր 1,7 անգամ[2]։ Հնգամյա պլանում հատուկ ընդգծվեց տեղական արդյունաբերության և արհեստագործական կոոպերացիայի զարգացման անհրաժեշտությունը. կոոպերացիան դիտվեց որպես աշխատավորների հարաճուն պահանջմունքների բավարարման խոշոր աղբյուր։

Երրորդ հնգամյա պլանով գյուղատնտեսական արտադրանքի ծավալն արտահայտությամբ 1937 թվականի 20,1 միլիարդ ռուբլու դիմաց 1942 թվականին հասնելու էր 30,5 միլիարդ ռուբլու[3]։

Սովետական Միության կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը արդյունաբերական նոր շինարարությունը տեղաբաշխելիս, անհրաժեշտ գտան երրորդ հնգամյակում իրականացնել նրա մոտեցումը հումքի աղբյուրներին և սպառման շրջաններին, ապահովել ազգային հանրապետությունների և մարզերի տնտեսական ու կուլտուրական հետագա վերելքը։

Բնակչության հարաճուն պահանջմունքները բավարարելու նպատակով, երրորդ հնգամյա պլանով նախատեսվում էր ընդարձակել թեթև և սննդի արդյունաբերությունը, ծավալել բնակարանային շինարարությունը, զարկ տալ կուլտուրական շինարարությանը։

Որպես կարևորագույն խնդիր նոր հնգամյակում պետք է իրականացվեր երկրի պաշտպանական արդյունաբերության հետագա զարգացումը։

Երրորդ հնգամյա պլանը նախատեսում էր նաև Հայկական ՍՍՀ-ի ժողովրդական տնտեսության հետագա զարգացումը։

Հնգամյա պլանով Հայկական ՍՍՀ-ում զգալիորեն պետք է ընդարձակվեր քիմիական արդյունաբերությունը, վերակառուցվեր ու զարգանար մետաղամշակությունը, մեքենաշինությունը և շինանյութերի արտադրությունը։ Մեծ չափով զարգանալու էր էլեկտրաէներգիայի արտադրությունը։ Նախատեսվում էր ամբողջապես ավարտել Քանաքեռէսի շինարարությունը, սկսել Գյումուշէսի և Սևանի ստորերկրյա էլեկտրակայանի շինարարությունները։ Երրորդ հնգամյա պլանում մեծ տեղ էր հատկացվում թեթև և սննդի արդյունաբերության հետագա զարգացմանը, որի արտադրանքը նախատեսվում էր կրկնապատկել։ Տեղի էր ունենալու ժողովրդական տնտեսության մեջ կապիտալ ներդրումների խոշոր աճ։

---

1 Տե՛ս «ՍՄԿՊ-ն... բանաձևերում ու որոշումներում», մաս III, էջ 432։

2 Տե՛ս նույն տեղում, էջ 438։

3 Տե՛ս նույն տեղում, էջ 441։

Հետագա զարգացում էր ստանալու Սովետական Հայաստանի գյուղատնտեսությունը։ Աճելու էր մեքենատրակտորային կայանների ցանցը, գյուղատնտեսությունը հագեցվելու էր նոր տեխնիկայով։ Նախագծվում էր խոշոր ջրանցքների կառուցում, որի հիման վրա մեծ չափերով զարգանալու էր այգեգործությունն ու բանջարաբուծությունը։ Սահմանվում էին հացահատիկի, բամբակի, ծխախոտի, շաքարի ճակնդեղի, կարտոֆիլի բերքատվության բարձր ցուցանիշներ։

Անասնաբուծության հետագա զարգացման համար, հնգամյա պլանով պետք է ավելացվեր հանրային անասնապահության գլխաքանակը և բարձրացվեր նրա մթերատվությունը։ Հնգամյակի ընթացքում բոլոր կոլտնտեսություններում ստեղծվելու էին անասնապահական ֆերմաներ։

Երրորդ հնգամյա պլանով նախատեսվում էր աշխատավորության նյութական բարեկեցության ու կուլտուրական մակարդակի հետագա բարձրացում։

Սովետական Հայաստանի կուսակցական և պետական օրգանները կազմակերպական մեծ աշխատանք ծավալեցին երրորդ հնգամյա պլանի կատարման համար։ Արտադրական ձեռնարկություններում, գործարաններում, ֆաբրիկաներում, կառույցներում, երկաթուղում արտադրական պլանների կատարման ու գերակատարման համար ծավալվեց համաժողովրդական սոցիալիստական մրցություն։ Կյանք առան սոցիալիստական մրցության նոր ձևեր։ Լայն ծավալ ընդունեց բազմադազգահայինների շարժումը։ Պայքար էր մղվում մասնագիտության կատարելագործման, արտադրանքի որակի բարձրացման, հումքը և էլեկտրաէներգիան խնայելու համար։

Արդյունաբերության, շինարարության, տրանսպորտի բնագավառներում Հայաստանի բանվոր դասակարգը աշխատանքային սխրագործության լավագույն օրինակներ էր ցույց տալիս։ Սոցիալիստական մրցության առաջավորներից էին Ալավերդու պղնձահանքերի հանքափոր Մինաս Հակոբյանը և նույն հանքերի հորատող Պետրոս Սարգսյանը։

Ալավերդու և Ղափանի հանքերում ու գործարաններում ստախանովական աշխատանքի նոր մեթոդներ կիրառելու շնորհիվ աշխատանքի արտադրողականությունը բարձրացել էր 18 տոկոսով։

Շամլուղի անվանի հանքափոր, Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի դեպուտատ Յանգաբուտովը, Ալավերդու հանքերից Արշակ Ադամյանը և Այտեմ Անտոնյանը կատարում ու գերակատարում էին իրենց արտադրական նորմաները։

Սովետական Հայաստանի արդյունաբերության բնագավառի բազմաթիվ կուսակցական կազմակերպություններ հմտորեն էին գլխավորում սոցիալիստական մրցությունը, պայքարում աշխատանքի արտադրողականության բարձրացման, արտադրանքի գերազանց որակի և պլանների կատարման ու գերակատարման համար։ Իրենց կազմակերպական լավագույն աշխատանքով աչքի էին ընկնում Երևանի Զերժինսկու անվան գործարանի, երկաթուղու 6-րդ բաժանմունքի, Կիրովականի քիմիական գործարանի, Ղափանի պղնձահանքերի և մի շարք այլ արդյունաբերական ձեռնարկությունների սկզբնական կուսակցական կազմակերպությունները։

Հայաստանի լենինյան կոմերիտմիությունը պատվավոր գործ էր կատարում հանրապետության հարվածային կառույցներում, վճռական տեղամասե-

րում, գործարաններում ու ֆաբրիկաներում։ Կոմերիտմիությունը ձեռնարկությունների ստեղծում էր հարվածային բրիգադներ, երիտասարդության մեջ ծավալում սոցիալիստական մրցություն։ Երևանի Կիրովի անվան գործարանում կազմակերպված 23 կոմերիտական-ստախանովական բրիգադներ իրենց արտադրական պլանները սիստեմատիկաբար կատարում էին 250—300 տոկոսով։ Լուրջ հաջողությունների էին հասել կոմերիտական կազմակերպությունները Անդրկովկասի երկաթուղու 6-րդ բաժանմունքում։ Այստեղ արտադրության մեջ աշխատող 762 կոմերիտականներից 595-ը սոցիալիստական մրցության առաջավորներ էին։ Կոմերիտական աշխատանքի լավ օրինակներ էին տալիս նաև Ջերժինսկու անվան մեքենաշինական, Երևանի կաշվի գործարանների, Երգեհի և Լենինականի տեքստիլ կոմբինատի կոմերիտական կազմակերպությունները։

Սովետական Հայաստանի արհմիությունները ևս լայն աշխատանք ծավալեցին արտադրողականության բարձրացման, աշխատանքային կարգապահության ամրապնդման, բանվոր-ծառայողների կուլտուր-կենցաղային կարիքների բարելավման, աշխատավորության կոմունիստական դաստիարակության գործը կազմակերպելու ուղղությամբ։

Երևանի կաշվի գործարանի կոլեկտիվի նախաձեռնությամբ արհմիությունները 1940 թվականի հունվարից ծավալեցին Հայաստանում սովետական իշխանության հաստատման 20-ամյակին նվիրված սոցիալիստական մրցություն՝ հոբելյանը արտադրական նոր հաղթանակներով դիմավորելու նպատակով։

Հայաստանի արհմիութենական կազմակերպությունները ջերմորեն արձագանքեցին ՀԱՄԿԽ-ի դիմումին։ Ելնելով ՍՍՀՄ Գերագույն սովետի որոշումից, դիմումում նշվում էր, որ արդյունաբերության զարգացման տեմպերը և երկրի պաշտպանության գործը պահանջում են անցնել 8 ժամյա բանվորական օրվա։ Միաժամանակ ՀԱՄԿԽ-ը պահանջում էր խիստ ամրապնդել աշխատանքային կարգապահությունը և թույլ չտալ բանվորական ուժի հոսունություն։

* * *

Հանրապետության արդյունաբերությունը երրորդ հնգամյակի առաջին տարիներին զգալի առաջընթաց կատարեց։ Արդյունաբերության վճռական ճյուղերում հնգամյակի առաջին տարիների պլանները հաջողությամբ կատարվեցին և գերակատարվեցին, բարձրացավ աշխատանքի արտադրողականությունը։ 1937 թվականի համեմատությամբ, 1938 թվականին հանրապետության արդյունաբերության արտադրանքի աճը կազմեց 13,8 տոկոս, իսկ 1939 թվականին՝ 19,4 տոկոս։ Նույն ժամանակամիջոցում հանրապետության արդյունաբերության մեջ աշխատանքի արտադրողականությունը բարձրացավ 19 տոկոսով։ Երրորդ հնգամյակի երկրորդ տարվա արդյունաբերության արտադրանքի պլանը կատարվեց 100,4 տոկոսով[1]։ Հայաստանի պղնձահանքային արդյունաբերության բանվորները, արձագանքելով Մոսկվայի «Կրասնի պրոլետարի» գործա-

1 Տե՛ս «Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի առաջին գումարման չորրորդ սեսիայի տեղեկությունը», 1940, էջ 9, 16։

րանի բանվորական կոլեկտիվի՝ սոցիալիստական մրցություն կազմակերպելու կոչին, զգալի հաջողությունների հասան և 1939 թվականին՝ 1937 թվականի համեմատությամբ, պղնձի արտադրությունը ավելացրին 35 տոկոսով, Ալավերդում և Ղափանում ընդարձակվեցին լեռնահանքային արդյունաբերության ձեռնարկությունները։

Հայաստանի բանվոր դասակարգի հերոսական ջանքերով հնգամյակի առաջին երեք տարիների ընթացքում գործարկվեցին մի շարք խոշոր արդյունաբերական տեղամասեր։ Շարունակվեցին գործող արդյունաբերական ձեռնարկությունների հետագա տեխնիկական վերակառուցման աշխատանքները։ 1939 թվականի մարտին ավարտվեց Ս. Մ. Կիրովի անվան խոշոր գործարանի շինարարությունը, որը մեր հանրապետությունում հիմք դրեց սինթետիկ կաուչուկի արտադրությանը։

Կիրովականի Ալ. Մյասնիկյանի անվան քիմիական գործարանի մի շարք ցեխերի ու ալավերդու ծծմբաթթվի գործարանի գործարկումով զգալի չափով բարձրացվեց քիմիական արդյունաբերության տեսակարար կշիռը։ Հանրապետության քիմիական արդյունաբերության արտադրանքի աճը 1937 թվականի համեմատությամբ, 1939 թվականին կազմեց 43 տոկոս։

Արմատապես վերակառուցվեց Երևանի Ջերժինսկու անվան մեքենաշինական գործարանը, որը զինվեց նոր սարքավորումներով և դարձավ հանրապետության մեքենաշինական արդյունաբերության խոշոր ձեռնարկություններից մեկը։

1938 թվականի հոկտեմբերին ավարտվեց Համամլու-Լենինականի էլեկտրահաղորդման գծի և Լենինականի ենթակայանի կառուցումը, որը էլեկտրական էներգիայով ապահովեց Լենինականի արդյունաբերական ձեռնարկությունները։ Հանրապետության այս կարևորագույն կառույցում աճեցին նոր ստախանովականներ՝ բետոնագործներ Մանասար Մելքոնյանը, Անդրանիկ Առաքելյանը, Հովհաննես Տիտանյանը և ուրիշներ։

Շինարարության թափի ընդլայնման կապակցությամբ, 1939 թվականի ապրիլի 5-ին Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով, Հայկական ՍՍՀ Ժողկոմխորհին կից ստեղծվեց շինարարական նյութերի արդյունաբերության գլխավոր վարչությունը, որի կազմի մեջ մտնում էին աղյուսի, կղմինդրի արդյունաբերության, ոչ հանքային հանածոների, բետոնի, բնական քարի մշակման և ջերմամեկուսիչ նյութերի ձեռնարկությունները։

Արդյունաբերության, շինարարության և տրանսպորտի բնագավառներում ծավալված համաժողովրդական սոցիալիստական մրցության շնորհիվ, երրորդ հնգամյակի առաջին երեք տարիների՝ 1938—1940 թվականների ընթացքում, հանրապետությունում շահագործման հանձնվեցին նաև Լենինականի մանվածքային ֆաբրիկան՝ 76,000 իլիկով և գործվածքային ֆաբրիկան՝ 2272 դազգահով, Երևանի ալրաղաց կոմբինատը, Քանաքեռգեսի հինգերորդ և վեցերորդ ագրեգատները և նրանց միացվող 326 կիլոմետր բարձրավոլտ հաղորդման գծի կառուցումը։ Երրորդ հնգամյակի տարիներին արագ թափով ծավալվեց գյուղական էլեկտրակայանների կառուցումը, որոնցից 7-ը շահագործման հանձնվեցին 1938—1939 թվականների ընթացքում։

Արագ կերպով զարգանում էր հանրապետության սննդի արդյունաբերու-

թյունը։ Պահածոների գործարանները հագեցվեցին նորագույն տեխնիկայով և արմատապես վերակառուցվեցին։ Հնգամյակի տարիներին շահագործման հանձնվեցին Այրումի պահածոների գործարանը, Երևանի ալրաղաց կոմբինատը, որը սարքավորված էր նորագույն տեխնիկայով[1]։

Մեծ չափով զարգացավ նաև հանրապետության երկաթուղային տրանսպորտը։ Երկաթուղային տրանսպորտում ծավալված ստախանովյան շարժման առաջավորների շարքերում էր Լենինականի շոգեքարշային դեպոյի ավտոմատ ցեխի կոմերիտական բրիգադը Կնյազ Բարսեղյանի գլխավորությամբ, որը իր արտադրական պլանը կատարում էր 300 տոկոսից ոչ պակաս։

Նոր կառույցներում, արդյունաբերական ձեռնարկություններում աճեց սեփական արտադրական-տեխնիկական ինտելիգենցիան՝ ինժեներների, կոնստրուկտորների և արտադրության հրամանատարների բանակը։ Թեև սովետական իշխանության առաջին տարիներին մասնագիտական կադրերը հրավիրվում էին դրսից, առավելապես Սովետական Ռուսաստանից, ապա երկրորդ և երրորդ հնգամյակի տարիներին հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունները ժողովրդական տնտեսությանը տվեցին մեծ թվով բարձրորակ ինժեներա-տեխնիկական կադրեր, որոնք հաջողությամբ էին աշխատում արդյունաբերության, տրանսպորտի և գյուղատնտեսության բնագավառներում։ Այդ ժամանակաշրջանում ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում աշխատում էին մոտ 700 բարձրագույն կրթությամբ մասնագետներ։ Դա սովետական ինտելիգենցիայի մի մեծ ջոկատ էր, որը ակտիվ կերպով մասնակցում էր սոցիալիզմի կառուցմանը Հայաստանում։

Սոցիալիստական արդյունաբերության հարաճուն զարգացումը, ինչպես ամբողջ Սովետական Միության մեջ, նույնպես և Սովետական Հայաստանում պահանջում էր նոր բանվորական ուժի մշտական ներհոսք դեպի գործարաններն ու ֆաբրիկաները։ Ելնելով այդ պահանջներից, ՀՍՍՀ Գերագույն սովետի նախագահությունը 1940 թվականի հոկտեմբերի 2-ին հրապարակեց «Պետական աշխատանքային ռեզերվների ստեղծման մասին» հրամանագիրը, որտեղ ասված էր, որ քաղաքի և գյուղի երիտասարդներից արհեստագործական, երկաթուղային ուսումնարաններում և ֆաբրիկա-գործարանային ուսուցման դպրոցներում յուրաքանչյուր տարի արդյունաբերության ու երկաթուղային տրանսպորտի համար պետք է պատրաստել պետական աշխատանքային ռեզերվներ՝ 800 հազարից մինչև մեկ միլիոն բանվոր[2]։ Այդ որոշման համաձայն, Հայկական ՍՍՀ-ն պետք է տարեկան պատրաստեր 1000 որակյալ բանվորներ։ ՀԿ(բ)Կ Կենտրոնական կոմիտեն և Հայկական ՍՍՀ Ժողկոմսովետը 1941 թվականի մայիսին հատուկ որոշում ընդունեցին հանրապետության աշխատանքային ռեզերվների դպրոցներում երիտասարդների հավաքագրումն ուժեղացնելու միջոցառումների մասին։ Ստեղծվեց արհեստագործական ուսումնարանների և ֆաբրիկա-գործարանային դպրոցների լայն ցանց, որը զգալի չափով երիտասարդ բանվորական ուժ տվեց և համալրեց հանրապետության արդյունաբերական ու երկաթուղային տրանսպորտի ձեռնարկությունները։

---

1 Տե՛ս Մ.Ի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 29, գ. 3, թ. 30։

2 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1940, № 232։

Երրորդ հնգամյակի տարիներին զգալի հաջողություններ ձեռք բերվեցին հանրապետության ամբողջ արդյունաբերության գծով, որի համախառն արտադրանքը՝ 1937 թվականի համեմատությամբ 1940 թվականին աճեց 68 տոկոսով, իսկ տեքստիլ արդյունաբերության արտադրանքը՝ 1937 թվականի համեմատությամբ, ավելացավ 204 տոկոսով[1]։

Արդյունաբերության և ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերի հետագա զարգացման համար կարևորագույն նշանակություն ուներ էլեկտրաէներգիայի արտադրությունը, որը 1937 թվականի 258,3 միլիոն կիլովատ ժամի դիմաց, 1940 թվականին հասավ 395,5 միլիոնի։

Հանրապետության արդյունաբերության հաջող զարգացման հետ, գոյություն ունեին նաև թերություններ, որոնք խոչընդոտում էին երրորդ հնգամյակի պլանների կատարման գործը։ Այսպես, Լենինականի տեքստիլ կոմբինատը երրորդ հնգամյակի հենց առաջին տարվանից թերակատարեց իր արտադրական պլանները։ Լավագույն բանվորների, արտադրության առաջավորների աշխատանքի փորձը չէր մասսայականացվում։

ՀԿ(բ)Կ Կենտրոնական կոմիտեն և Հայաստանի կառավարությունը կտրուկ միջոցներ ձեռնարկեցին հանրապետության արդյունաբերության աշխատանքի մեջ եղած թերությունները վերացնելու և երրորդ հնգամյա պլանը անթերի կատարելու համար։

Սովետական Հայաստանի արդյունաբերության, շինարարության, տրանսպորտի և կապի զարգացման հետ միասին, աճում էր նաև հանրապետության բանվոր դասակարգը՝ թե քանակապես և թե որակապես։ 1939 թվականին Սովետական Հայաստանի միայն խոշոր արդյունաբերության ձեռնարկություններում աշխատում էր մոտ 25 հազար բանվոր։ Բանվորների մեծ մասը սովորում էր որակավորման բարձրացման դասընթացներում և տիրապետում նորագույն տեխնիկային։

Սովետական Հայաստանի արդյունաբերության աննախընթաց վերելքը արմատապես փոխեց հանրապետության էկոնոմիկայի բնույթը։ 1939 թվականին արդյունաբերության արտադրանքի տեսակարար կշիռը ժողովրդական տնտեսության մեջ կազմում էր 77,7 տոկոս, 1937 թվականի 71,6 տոկոսի դիմաց։

Սովետական Միության, այդ թվում Սովետական Հայաստանի ինդուստրացումը՝ բանվոր դասակարգի, ամբողջ սովետական ժողովրդի հերոսական աշխատանքի արդյունքն էր։ Այս մեծ ու դժվարագույն խնդիրը լուծվեց կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության ամենօրյա հոգատարության, սովետական ժողովուրդների համագործակցության ու փոխադարձ օգնության շնորհիվ։

* * *

Սովետական Հայաստանի գյուղացիական տնտեսություններից 1938 թվականի հուլիսի 1-ին կոլտնտեսությունների մեջ չին ընդգրկվել 91,9 տոկոսը։ Հանրապետության ցանքատարածությունների 95,9 տոկոսը գտնվում էր կոլ-

1 Տե՛ս «Народное хозяйство Армянской ССР», Երևան, 1957, էջ 22, 26։

տնտեսությունների տրամադրության տակ[1]։ Իսկ 1940 թվականին արդեն կոլեկտիվացված էր Հայաստանի գյուղական տնտեսությունների 98,3 տոկոսը և բոլոր ցանքատարածությունների 99,9 տոկոսը պատկանում էր կոլտնտեսություններին։ Այսպիսով, հանրապետության գյուղատնտեսության մեջ վճռական օղակը հանդիսանում էր սոցիալիստական տնտեսության նոր ձևը-կոլտնտեսությունը։ Կոմունիստական կուսակցության ու սովետական կառավարության ձեռնարկած միջոցառումները ուղղված էին կոլտնտեսությունների տնտեսական ու կազմակերպական ամրապնդմանը։

Երրորդ հնգամյակի տարիներին կուսակցության Կենտրոնական կոմիտեն և կառավարությունը մի շարք միջոցներ ձեռնարկեցին կոլտնտեսային կարգի ամրապնդման, հացահատիկային ու տեխնիկական կուլտուրաների բերքատվության և անասնապահության մթերատվության բարձրացման ուղղությամբ։ 1938—1941 թթ. Սովետական Հայաստանի գյուղատնտեսության մեջ կապիտալ ներդրումները կազմեցին 349 միլիոն ռուբլի։

Համկ(բ)կ Կենտրոնական կոմիտեի 1939 թվականի մայիսյան պլենումը քննարկեց կոլտնտեսությունների հանրային հողերի շռայլումները կանխելու միջոցառումների հարցը և նշեց կոլտնտեսային հողօգտագործման բնագավառում տեղ գտած կուսակցության քաղաքականության լուրջ աղավաղումներ։

Այդ միջոցառումներից ելնելով, Համկ(բ)կ Կենտրոնական կոմիտեն և ՍՍՀՄ Ժողկոմսովետը 1939 թվականի մայիսի 27-ին ընդունեցին «Կոլտնտեսությունների հանրային հողերը շռայլելուց պահպանելու միջոցառումների մասին» որոշումը։

Կուսակցության Կենտրոնական կոմիտեն և Ժողկոմսովետը պահանջեցին տեղական կուսակցական ու սովետական բոլոր կազմակերպություններից՝ անհապաղ վերացնել կոլտնտեսային հողերի շռայլումն ու կողոպտումը, տնամերձ հողամասերի չափը համապատասխանեցնել կանոնադրության նորմաներին, խստագույն հսկողություն սահմանել կոլտնտեսային հանրային հողերի անձեռնմխելիության նկատմամբ, վերացնել կոլտնտեսությունների հողերի օգտագործման մեջ գոյություն ունեցող խառնաշփոթություններն ու անկարգությունները։

Ելնելով Համկ(բ)կ Կենտկոմի պլենումի որոշումներից, Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտկոմի պլենումը նույն թվականի հունիսին քննարկեց և բացահայտեց հանրապետության կոլտնտեսություններում հողօգտագործման բնագավառում տեղի ունեցած խախտումները։ Հանրապետության մի շարք շրջաններում խախտվել էր գյուղատնտեսական արտելի կանոնադրությամբ կոլտնտեսականների անձնական օգտագործման համար նախատեսված տնամերձ հողամասերի չափը, որի հետևանքով ամբողջ հանրապետությունում շռայլվել էր ավելի քան 22273 հեկտար հանրային հող[2]։ Ստուգումները ցույց տվեցին, որ հանրապետության մի շարք կոլտնտեսություններում տնամերձ տնտեսությունը կորցնում է օժանդակ տնտեսության բնույթը և երբեմն դառնում կոլտնտեսականի եկամտի հիմնական աղբյուրը։ Իսկ Աշտարա-

---

1 Տե՛ս «Народное хозяйство Армянской ССР», էջ 55։

2 Տե՛ս ՄԼԻ հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 29, գ. 3, թ. 79—80։

կի շրջանում կոպիտ կերպով խախտելով գյուղատնտեսական արտելի կանոնադրությունը, մի շարք կոլտնտեսականների թույլատրվել էր փոխել իրենց տնամերձ հողամասերը կոլտնտեսության ավելի լավ հողամասի հետ։ Այդ շրջանի Շահումյանի անվան կոլտնտեսության 600 հեկտար այգիներից 400 հեկտարը՝ որպես տնամերձ հողամաս, անցել էր կոլտնտեսականներին։ Այդ կարգի խախտումներ կային նաև Ախուրյանի, Կալինինոյի, Ապարանի, Մեղրու, Ստեփանավանի, Թալինի և այլ շրջաններում[1]։

Գյուղատնտեսական արտելի կանոնադրության կոպիտ խախտումներ կային նաև կոլտնտեսային դեմոկրատիայի կիրառման բնագավառում։

Կոլտնտեսություններում հողօգտագործման հարցերը կարգավորելու և խախտումները վերացնելու նպատակով, ՀՍՍՀ Գերագույն սովետի և ժողկոմսովետի 1939 թվականի սեպտեմբերի 3-ի որոշման համաձայն Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահության հրամանագրով բոլոր շրջաններում կազմակերպվեցին շրջանային հողային հանձնաժողովներ, իսկ հանրապետության մասշտաբով՝ հանրապետական հողային հանձնաժողով[2]։

Հայկական ՍՍՀ կառավարության որոշմամբ վերը նշված խախտումների հետևանքով շռայլված այդ հողերը վերադարձվեցին կոլտնտեսություններին և բոլոր տեղական օրգանների ուշադրությունը հրավիրվեց հանրային հողերի պահպանման հարցի վրա։ Ուժեղացվեց հսկողությունը կոլտնտեսություններում գյուղատնտեսական արտելի կանոնադրության խիստ պահպանման նկատմամբ, յուրաքանչյուր շրջանի համար սահմանվեց աշխօրերի մինիմում, արտադրական նորմաներ, գյուղատնտեսական կուլտուրաների բերքատվության և անասունների մթերատվության առաջադրանքներ և այդ առաջադրանքների կատարման ու գերակատարման համար լրացուցիչ վարձատրության կարգ։

Սովետական Հայաստանի գյուղատնտեսության և հատկապես անասնապահության հետագա զարգացման գործում կարևոր նշանակություն ունեցավ Համկ(բ)կ Կենտկոմի ու ՍՍՀՄ ժողկոմսովետի 1939 թվականի հունիսի 8-ի, «Կոլտնտեսություններում հանրային անասնապահության զարգացման միջոցառումների մասին» որոշումը։ Այդ որոշման մեջ գյուղական բոլոր կուսակցական ու սովետական կազմակերպություններից պահանջվում էր ուշադրություն դարձնել հանրային անասնապահության զարգացման հարցերի վրա, բոլոր կոլտնտեսություններում անխտիր կազմակերպել անասնապահական ֆերմաներ, հատկապես հետևել կերի կայուն բազայի ստեղծման, անասունների ցեղայնության բարելավման, գլխաքանակի ավելացման ու մթերատվության բարձրացման վրա։ Մինչև այդ որոշումը հանրապետության 9 կոլտնտեսություն չուներ ոչ մի մթերատու անասուն, 45 կոլտնտեսություն՝ ոչ մի խոշոր եղջերավոր անասուն, 138 կոլտնտեսություն՝ ոչխարաբուծական, իսկ 828 կոլտնտեսություն՝ խոզաբուծական ֆերմաներ չունեին[3]։

Կիրառելով կուսակցության Կենտրոնական կոմիտեի ու սովետական կառավարության որոշումը, Հայաստանի կոլտնտեսությունները շոշափելի արդյունքների հասան։ Կարճ ժամանակամիջոցում հանրապետության կոլտնտե-

1 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 618, ց. 1, գ. 3, թ. 60—63։

2 Տե՛ս նույն տեղում, ֆ. 113, ց. 10, գ. 6, թ. 5։

3 Տե՛ս Մ. Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 29, գ. 14, թ. 19։

սություններում կազմակերպվեցին 516 անասնապահական ֆերմաներ[1]։ Եվ արդեն մինչև 1940 թվականի հունվարի 1-ը հանրապետության կոլտնտեսությունների անասնապահական ֆերմաների թիվը հասավ 3248-ի[2]։

Հայկական ՍՍՀ Ժողկոմխորհը և Հայաստանի կոմկուսի Կենտկոմը միջոցառումներ մշակեցին կոլտնտեսություններում հացահատիկային կուլտուրաների, անասնապահության, ինչպես նաև տեխնիկական կուլտուրաների, խաղողագործության ու պտղաբուծության զարգացման համար։ Հայկական ՍՍՀ Ժողկոմխորհի և ՀԿ(բ)Կ Կենտրոնական կոմիտեի 1938 թվականի մարտի 31-ի «Հայաստանում խաղողագործությունն ու պտղաբուծությունը զարգացնելու միջոցառումների մասին» որոշման մեջ նախատեսվում էր զգալի չափով ավելացնել պտղատու այգիների տարածությունը, ստեղծել տնկարանային տնտեսություններ, հին այգիները համալրել նոր տնկիներով։ Որոշման մեջ գյուղատնտեսական բուհերին առաջադրվում էր այգեգործության բնագավառում աշխատելու համար պատրաստել բարձրորակ կադրեր։ Այդ որոշումը մեծ խթան հանդիսացավ խաղողագործության ու պտղաբուծության զարգացման գործում։ Եթե առաջին և երկրորդ հնգամյակներում ամբողջ հանրապետությունում ստեղծվել էր 2300 հեկտար խաղողի նոր այգի, ապա միայն 1939 թվականին ստեղծվեց 2100 հեկտար[3]։

Սովետական Հայաստանում խաղողագործության, պտղաբուծության ու տեխնիկական կուլտուրաների հետագա զարգացման առավել մեծ խնդիրներ առաջադրվեցին ՀամԿ(բ)Կ Կենտրոնական կոմիտեի և ՍՍՀՄ Ժողկոմսովետի 1940 թվականի սեպտեմբերի 6-ի «Հայկական ՍՍՀ-ում պտղաբուծությունը, խաղողագործությունը և տեխնիկական կուլտուրաները զարգացնելու ձեռնարկումների մասին» որոշման մեջ։ Այդ որոշումը, որը հատուկ քննարկման առարկա դարձավ ՀԿ(բ)Կ Կենտկոմի պլենումում, մեծ նշանակություն ունեցավ հանրապետության գյուղատնտեսության զարգացման գործում։

Վարչական նոր վերաբաժանման շնորհիվ 1938 թվականին ստեղծվեցին Աղինի, Ալագյազի, Ղուկասյանի, Դյուզքանդի, Ջանգիբասարի, Կարաբաղլարի, Կալինինոյի, Կրասնոսելսկի, Նոյեմբերյանի, Սևանի և Սպիտակի շրջանները։

Հայաստանի կուսակցական, պետական օրգանների, գյուղական կազմակերպությունների կարևորագույն միջոցառումներից էր նաև ջրովի հողերի տարածությունների ավելացումը և ճահճուտների չորացումը։ Հայաստանի կուսակցական կազմակերպությունները երրորդ հնգամյակի տարիներին լուրջ ուշադրություն դարձրեցին նաև ոռոգման գործին, որի շնորհիվ ոռոգվող հողամասերի տարածությունը 1940 թվականին հասավ 180,0 հազար հեկտարի[4], որը 1937 թվականի համեմատությամբ 20 հազար հեկտարով ավելի էր։

Ոռոգման ու ճահճուտների ցամաքեցման գործում ակտիվ մասնակցություն ունեցան կոլտնտեսությունները։ Երրորդ հնգամյակի առաջին տարիներին շահագործման հանձնվեցին մի շարք ջրանցքներ։ 1940 թվականի հունիսին շարք մտավ Նալբանդի ջրանցքը, որը կառուցվել էր Սպիտակի շրջանի կոլտնտեսու-

1 Տե՛ս Մ.Ի. հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 29, գ. 3, թ. 70։
2 Տե՛ս նույն տեղում, թ. 89։
3 Տե՛ս նույն տեղում, թ. 58։
4 Տե՛ս նույն տեղում, ց. 30, գ. 4, թ. 159։

բյունների միջոցներով և կոլտնտեսականների ակտիվ մասնակցությամբ։ Չիշխանչայի ջրերը, որ դարեր շարունակ անօգուտ հոսում էին, սովետական մարդկանց ջանքերով փոխեցին իրենց հունը։ Ավելի քան 2650 հեկտար հողամասը ոռոգելի դարձավ։ Ջրանցքի երկարությունը 47 կիլոմետր էր։ Նրա կառուցման աշխատանքներին մասնակցել էին ավելի քան 2500 մարդ։ Սպիտակի ջրանցքի շինարարության ընթացքում աչքի ընկան սոցիալիստական մրցության բազմաթիվ առաջավորներ, որոնց օրինակելի աշխատանքը գնահատելով, Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահությունը 1940 թվականի հուլիսի 16-ին 66 մարդու պարգևատրեց Գերագույն սովետի պատվոգրով։ Պարգևատրվածների մեջ էին կոլտնտեսականներ Ս. Դեմուրյանը, Ս. Խալթաղչյանը, Մ. Աղաջանյանը, Խ. Խահակյանը, շինարարության պետ Ա. Ավետիսյանը, Սպիտակի շրջկոմի քարտուղար Ս. Մարգարյանը, շրջսովետի նախագահ Մ. Ասատրյանը և ուրիշներ։ Այդ ջրանցքը միաժամանակ արդյունաբերական նշանակություն ուներ։ Նրա ջրերը ոռոգելու էին նաև Սպիտակի շրջանի ճակնդեղի դաշտերը, որոնց բերքը մշակվելու էր Համամլուի նոր կառուցվող շաքարի գործարանում։

Պետական միջոցներով կառուցվեց և 1939 թվականին շահագործման հանձնվեց Դալմայի ջրանցքը։ Ղամարլվի շրջանի կոլտնտեսականները մեծ աշխատանք ծավալեցին իրենց միջոցներով և ուժերով ճահճուտ հողերի չորացման ու խոպան և անմշակ հողերի յուրացման ուղղությամբ։ Զանգիբասարում սկսվեցին 1900 հեկտար նոր հողերի չորացման ու յուրացման աշխատանքները։

1940 թվականին հանրապետության ջրանցքների երկարությունը հասնում էր 502,5 կիլոմետրի, որոնք ոռոգում էին 77647 հեկտար հողամաս։

Հանրապետության գյուղատնտեսության կարևոր ճյուղերից էր բամբակագործությունը, որի բերքատվությունը զգալիորեն աճեց հնգամյակի տարիներին։ Եթե 1937 թվականին մեկ հեկտարից ստացվել էր 13 ցենտներ բամբակ, ապա 1939 թվականին այն հասավ 19,2 ցենտների[1]։ Այդ նշանակում է, որ երկրորդ տարում հանրապետության բամբակագործները կատարեցին երրորդ հնգամյակի վերջին տարվա համար պլանով նախատեսված բերքատվության նորմաները։ Առանձին շրջաններ և կոլտնտեսություններ ավելի բարձր ցուցանիշների հասան։ Էջմիածնի շրջանի Էջմիածին գյուղի «Անաստված» կոլտնտեսությունը բամբակի 270 հեկտար տարածության յուրաքանչյուր հեկտարից ստացել էր 27 ցենտներ։ Բամբակի բարձր բերքատվությունը ագրոտեխնիկական միջոցառումների ճիշտ կատարման, ցանքի ժամկետները կրճատելու, բամբակացան շրջանների կոլտնտեսականների ու կոլտնտեսուհիների քրտնաջան աշխատանքի հետևանք էր։

Հանրապետությունում տարեցտարի զարգացող տեխնիկական կուլտուրաների շարքում կարևոր տեղ էր գրավում ծխախոտի մշակությունը։ 1937 թվականին 2400 հեկտարի դիմաց, 1940 թվականին ծխախոտի ցանքատարածությունը հասել էր 5600 հեկտարի։ Եթե 1938 թվականին ծխախոտագործությամբ զբաղվում էին հանրապետության 11 շրջաններ, ապա 1940 թվականին դրանց թիվը հասավ 22-ի։ Պլանով նախատեսված 7 ցենտների դիմաց 1939 թվականին մեկ հեկտարից ստացվել էր միջին հաշվով 8,2 ցենտներ ծխախոտ։ Ավելի

1 Տե՛ս ՄԼԻ հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 29, գ. 3, թ. 50։

բարձր բերք էին ստացել Շամշադինի և Կոտայքի շրջանների ծխախոտագործները։

Հանրապետության գյուղատնտեսության մեջ արմատավորվեցին նոր տեխնիկական կուլտուրաներ՝ շաքարի ճակնդեղը և խորդենին։ Հնգամյակի առաջին տարում շաքարի ճակնդեղի ցանքատարածությունը կազմեց միայն 1000 հեկտար, իսկ 1940 թվականին այն արդեն հասել էր 1500 հեկտարի։ 1938 թվականի մեկ հեկտարից ստացված 173 ցենտների դիմաց 1939 թվականին հեկտարից միջին հաշվով ստացվեց 182 ցենտներ շաքարի ճակնդեղ։ Առանձին կոլտնտեսություններում շաքարի ճակնդեղի բերքատվությունը մեկ հեկտարից հասավ 250—300 ցենտների։ Այդպես էր հատկապես Սպիտակի շրջանի ճակնդեղագործների մոտ։

Խորդենու ցանքատարածությունը հանրապետությունում 1939 թվականին հասավ 280 հեկտարի[1]։

Հանրապետության գյուղատնտեսական կուլտուրաներից ամենահետամնացը հացահատիկային կուլտուրաների բնագավառն էր։ Բերքատվության պլանային առաջադրանքները չէին կատարվում։ ՀԿ(բ)Կ XIII համագումարը որոշեց ստեղծել 16 սերմաբուծական կոլտնտեսություններ, որոնք մշտապես լավագույն սերմացուներ պետք է մատակարարեին հանրապետության կոլտնտեսություններին։ Համագումարը միաժամանակ կուսակցական ու պետական օրգանների ուշադրությունը հրավիրեց հացահատիկային կուլտուրաների բերքատվության բարձրացման վրա։

Սովետական Հայաստանի անասնապահները որոշ արդյունքների հասան անասունների գլխաքանակի ավելացման ու մթերատվության բարձրացման ասպարեզում։ Առ 1-ը հունվարի 1940 թվականի հանրային անասունների գլխաքանակը՝ 1937 թվականի համեմատությամբ, ավելացել էր. ձիերինը՝ 39, խոշոր եղջերավոր անասուններինը՝ 18,7, մանր եղջերավորներինը՝ 34,3 և խոզերինը՝ 5,8 տոկոսով[2]։

Անասնապահության զարգացման կարևորագույն պայմանը կերի կայուն բազայի ստեղծումն էր։ Այդ նպատակով ընդարձակվեցին կերաբույսերի ցանքատարածությունները. 1939 թվականի 27200 հեկտարի դիմաց 1940 թվականին հասցվեց 43000 հեկտարի[3]։

Չնայած որոշ չափով ավելացել էր անասունների գլխաքանակը և բարձրացել մթերատվությունը, գյուղատնտեսության այս կարևոր ճյուղը շարունակում էր ետ մնալ ինչպես ամբողջ Սովետական Միությունում, այնպես էլ Սովետական Հայաստանում։

Երրորդ հնգամյակի տարիներին զգալի տեղաշարժեր կատարվեցին հանրապետության սոցիալիստական գյուղատնտեսության մեքենայացման գործում։ Եթե 1937 թվականին հանրապետությունում կար 27 մեքենատրակտորային կայան, 1111 տրակտորով, ապա 1939 թվականին արդեն կար 32 մեքենատրակտորային կայան՝ 1285 տրակտորով[4]։ Կոմբայնների թիվը 1939 թվականին

1 Տե՛ս Մ.Ի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 29, գ. 3, թ. 52—54։

2 Տե՛ս «ՀԿ(բ)Կ կենտկոմի հաշվետվությունը XIII համագումարին», էջ 54։

3 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1940, № 93։

4 Տե՛ս «ՀԿ(բ)Կ կենտկոմի հաշվետվությունը XIII համագումարին», էջ 60։

հասնում էր 246-ի։ Միայն 1939 թվականին տարբեր դասընթացների և հատուկ դպրոցների միջոցով հանրապետությունում պատրաստվել էին 1175 տրակտորավար, կոմբայնավար, վարորդ և այլն։ Մեքենա-տրակտորային կայանները սպասարկում էին հանրապետության 1078 կոլտնտեսություն, որոնց ցանքատարածությունները կազմում էին 401, 163 հեկտար[1]։

– Ինչպես ամբողջ Սովետական Միության, այնպես էլ Սովետական Հայաստանի գյուղատնտեսության հետագա զարգացմանը մեծապես նպաստեց ծավալվող սոցիալիստական մրցությունը և պայքարը 1939 թվականին Մոսկվայում բացված համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսին մասնակցելու նպատակով։

Գյուղատնտեսության բոլոր ճյուղերի զարգացման համար սոցիալիստական մրցություն էր ծավալվում ոչ միայն Հայաստանի կոլտնտեսությունների, սովխոզների, բրիգադների, օղակների, կոլտնտեսականների միջև, այլև մեր և եղբայրական հանրապետությունների կոլտնտեսությունների միջև։ Վրաստանի Մախարաձեի շրջանի Նաթանեբի գյուղի կոլտնտեսության հետ սոցիալիստական մրցության մեջ էր Հոկտեմբերյանի շրջանի Մեծ Շահրիար գյուղի կոլտնտեսությունը։ Մեծ Շահրիարի կոլտնտեսականների ներկայացուցիչները 1940 թվականի հունվարին այցելեցին Նաթանեբի գյուղը և մրցակիցների հետ միասին հանրագումարի բերեցին անցյալ տնտեսական տարվա արդյունքները։ Շահրիարցիները 1939 թվականին բարձր բերք էին ստացել։ Կոլտնտեսության տարեկան եկամուտը կազմել էր 1 միլիոն 330,621 ռուբլի։ Նա արժանացել էր համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսի գլխավոր կոմիտեի երկրորդ կարգի դիպլոմին[2]։

Սոցիալիստական մրցության մեջ էին Կոտայքի շրջանի Քանաքեռ գյուղի և Վրացական ՍՍՀ Լյուքսեմբուրգի շրջանի Ցախրուս գյուղի, Ադրբեջանական ՍՍՀ Ղազախի շրջանի և Հայկական ՍՍՀ Շամշադինի շրջանի կոլտնտեսականները։ Եղբայրական հանրապետությունների կոլտնտեսականների մրցությունը, նրանց պատվիրակների փոխադարձ այցելությունները, սոցիալիստական պարտավորությունների ստանձնումը խոշոր նշանակություն ունեցավ, ինչպես սոցիալիստական գյուղատնտեսության զարգացման, այնպես էլ ժողովուրդների բարեկամության ամրապնդման գործում։

Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսի գլխավոր կոմիտեն ըստ արժանվույն գնահատելով հանրապետության սոցիալիստական գյուղատնտեսության առաջավորների 1939 թվականի աշխատանքի արդյունքները, 1940 թվականի փետրվարի 20-ի որոշմամբ, Հայաստանի գյուղատնտեսության բնագավառի 17 առաջավոր աշխատողների պարգևատրեց ոսկե մեդալներով։

Խաղողի բարձր և կայուն բերքատվության համար, համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսում 1939 թվականին առաջին կարգի դիպլոմով պարգևատրվեցին «Արարատ» տրեստի № 3 սովխոզը և Էջմիածնի շրջանի «Պայքար» կոլտնտեսությունը։

---

1 Տե՛ս «ՀԿ(բ)Կ Կենտկոմի հաշվետվությունը XIII համագումարին», էջ 60։

2 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1940, № 4։

Հանրապետության յուրաքանչյուր շրջան, կոլտնտեսություն, սովխոզ, ֆերմա, ՄՏ կայան պայքարում էին համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսին մասնակցելու համար։ Այդ ձգտումը մեծապես նպաստում էր առաջավորների փորձի փոխանակմանը և սոցիալիստական գյուղատնտեսության զարգացմանը։

Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսին 1940 թվականին Հայաստանից մասնակցեցին 407 կոլտնտեսություն, 6 սովխոզ, 2 մեքենատրակտորային կայան, 9 գյուղատնտեսական գիտա-հետազոտական կազմակերպություն, 107 անասնապահական ֆերմա և գյուղատնտեսության 3995 առաջավորներ[1]։

Բարձր բերքատվության համար Լենինի շքանշանով պարգևատրվեցին Էջմիածնի շրջանի «Անաստվածծ» կոլտնտեսությունը և Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով՝ Արտաշատի շրջանի Փարիսյան կոմունայի անվան կոլտնտեսությունը[2]։

Հայաստանի գյուղատնտեսության աշխատավորության գործունեությանը ամենօրյա ղեկավարություն էին ցույց տալիս կուսակցական կազմակերպությունները։ Ուժեղացել էր գյուղական կուսակցական կազմակերպությունների պահանջկոտությունը կոլտնտեսային արտադրության հարցերում, բարձրացել էր կոմունիստների ավանգարդային դերը սովխոզային ու կոլտնտեսային արտադրության մեջ։ Երրորդ հնգամյա պլանի կատարման համար մղած պայքարում իրենց ակտիվ գործունեությամբ աչքի էին ընկնում Հոկտեմբերյանի շրջանի Մեծ Շահրիար կոլտնտեսության, Արտաշատի շրջանի Վերին Դվինի, Նոր Բայազետի շրջանի Սարուխան, Սպիտակի շրջանի Նալբանդ գյուղերի կոլտնտեսությունների սկզբնական կուսակցական կազմակերպությունները, որոնք կոլտնտեսային վարչությունների հետ միասին, ճիշտ տեղադրելով կոմունիստների ուժերը արտադրության կարևոր տեղամասերում, մոբիլիզացնում էին կոլտնտեսականների ամբողջ եռանդը՝ արտադրական առաջադրանքները և սոցիալիստական մրցությամբ ստանձնած պարտավորությունները անթերի կատարելու համար։

Մեծ գործունեություն ծավալեց այդ ուղղությամբ Հայաստանի լենինյան կոմերիտմիությունը։ Երրորդ հնգամյակի առաջին տարիներին կատարած նրա գործունեությունը հանրագումարի բերեց կոմերիտմիության XII համագումարը, որը կայացավ 1940 թվականի սեպտեմբերին։ Համագումարը բոլոր կոմերիտական կազմակերպությունների առջև խնդիր դրեց հատուկ ուշադրություն դարձնել քաղաքի ու գյուղի երիտասարդության կոմունիստական դաստիարակության հարցերին։

Գյուղում տարվող աշխատանքի զգալի մասն ընկնում էր տեղական սովետների վրա. նրանք զբաղվում էին գյուղերի բարեկարգման, առողջապահության, լուսավորության հարցերով։

1939 թվականի դեկտեմբերի 24-ին տեղի ունեցան տեղական սովետների ընտրությունները։ Շրջանային սովետներում ընտրվեցին 1161 դեպուտատ,

---

1 Տե՛ս «Социалистическое строительство Армянской ССР», էջ 91։

2 Տե՛ս նույն տեղում, էջ 93։

գյուղական սովետներում՝ 9726 դեպուտատ, որից 3000 կին։ Ընտրողների 99,5 տոկոսը քվեարկել էր դեպուտատության թեկնածուների օգտին։ Ընտրություններից հետո զգալիորեն աշխուժացավ տեղական սովետների աշխատանքը։ Մի շարք շրջանային սովետների գործադիր կոմիտեներին կից ստեղծվեցին տեղական արդյունաբերության, կոմունալ-տնտեսության բաժիններ։ Հայաստանի գյուղական սովետական օրգանները սկսեցին ավելի մոտիկից զբաղվել կոլտնտեսային ու սովխոզային արտադրության հարցերով։ Բարձրացվեց գյուղի աշխատավորների ակտիվությունը։

Կուսակցական, կոմերիտական և սովետական օրգանների ձեռնարկած միջոցառումների, կոլտնտեսականների ու սովխոզների բանվորության քրտնաջան աշխատանքի շնորհիվ գյուղատնտեսության բնագավառում նախապատերազմյան տարիների պլանները կատարվեցին ու գերակատարվեցին։ ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության 1940 թվականի նոյեմբերի 23-ի հրամանագրով Հայաստանի գյուղատնտեսության առավել աչքի ընկած 309 առաջավորներ պարգևատրվեցին կառավարական շքանշաններով, ըստ որում՝ Լենինի շքանշանով՝ 12, Աշխատանքային կարմիր դրոշի՝ 35, Պատվո նշան շքանշանով՝ 74 և մեդալներով՝ 188 մարդ։ Լենինի շքանշանով պարգևատրվեցին Կիրովականի շրջանի Հաջիդարա գյուղի կոլտնտեսության պտղաբույծ Մակար Հակոբյանը, Էջմիածնի ՄՏԿ տրակտորիստ Գևորգ Ջաքարյանը, ՀԿ(բ)Կ Արտաշատի շրջկոմի քարտուղար Սամսոն Ղազարյանը, Կոտայքի շրջանի Ելղովան գյուղի կոլտնտեսության օղակավարուհի Վարդուշ Մելիքյանը և Հոկտեմբերյանի շրջանի Մայիսի 1-ի անվան կոլտնտեսության օղակավարուհի Հրանուշ Մխիթարյանը։ Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով պարգևատրվեցին ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալի բիոլոգիական ինստիտուտի տնօրեկտոր Վարդան Գուլքանյանը, Հայկական ՍՍՀ հողագործության ժողկոմ Հայկազ Մարջանյանը, ՀԿ(բ)Կ Հոկտեմբերյանի շրջկոմի քարտուղար Նադյեժդա Մահմուդովը, Հոկտեմբերյանի Լենինի անվան կոլտնտեսության կոլտնտեսուհի Մարիամ Շասոյանը և ուրիշներ։

* * *

Հայաստանի արդյունաբերության և սոցիալիստական գյուղատնտեսության զարգացման հետ միասին երրորդ հնգամյակի տարիներին զգալի չափով բարելավվեց աշխատավորների նյութական կենսամակարդակը։ Հնգամյակի առաջին երկու տարում արդյունաբերության մեջ աշխատող բանվորների միջին տարեկան աշխատավարձը աճեց 25 տոկոսով, իսկ կոլտնտեսականների զգալի մասի դրամական եկամուտները աճեցին 2—3 անգամ։

Սովետական կառավարությունը յուրաքանչյուր տարի ավելի շատ միջոցներ էր հատկացնում բնակչության սոցիալ-կուլտուրական կարիքների համար։ Երրորդ հնգամյակի առաջին երկու տարիներին սոցիալ-կուլտուրական միջոցառումների ծախսերը աճեցին 39,5 տոկոսով[1]։

1 Տե՛ս ՄՀԻ հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 29, գ. 3, թ. 85—87։

Հանրապետության քաղաքներում և գյուղական վայրերում ծավալվեց բնակարանային շինարարությունը։ 1938—1941 թվականներին Հայաստանի քաղաքներում կառուցվեց 247 հազար քառակուսի մետր բնակելի տարածություն[1], Լայն թափ ստացավ կոլտնտեսականների բնակարանային շինարարությունը։ Հազարավոր կոլտնտեսականներ դուրս գալով հին, գետնափոր նկուղներից, կառուցեցին նոր, լուսավոր ու ընդարձակ բնակարաններ։ Գյուղերում կառուցվեցին բուժարաններ, ակումբներ, դպրոցներ, մանկապարտեզներ ու մանկամսուրներ։

Երրորդ հնգամյակի տարիներին արդյունաբերության, գյուղատնտեսության և կուլտուրայի զարգացման հետ միասին, ավելացավ բանվոր-ծառայողների թիվը՝ 1940 թվականին հասնելով 74 հազարի, որից միայն արդյունաբերության մեջ աշխատում էին 34,5 հազարը։

Բնակչության բարեկեցության մասին է վկայում նաև ապրանքաշրջանառության աճը, որը 1937 թվականի համեմատությամբ ավելացել էր 37 տոկոսով։ Աշխատավորների սպառումն աճել էր 1,5 անգամ[2], յուրաքանչյուր տարի ավելանում էր կենսամթերքների արտադրությունը։ Եթե 1937 թվականին կենդանական յուղի արտադրությունը 344 տոննա էր, ապա 1940 թվականին այն հասել էր 1559 տոննայի, պանրի արտադրությունը 748 տոննայից հասել էր 1876 տոննայի։

Զգալի չափով բարելավվել էր բնակչության բժշկական սպասարկումը։ 1937 թվականի 51 հիվանդանոցի և 2000 մահճակալի դիմաց, 1939 թվականին հանրապետությունում կար 65 հիվանդանոց՝ 2950 մահճակալով[3]։

Աշխատավորների բարեկեցության բարելավման հետ միասին տեղի էր ունեցել հանրապետության բնակչության աճ, իջել էր մահացության տոկոսը՝ 1221334 մարդուց, 1940 թվականին հանրապետության բնակչության թիվը հասել էր 1,3 միլիոնի[4]։ Յուրաքանչյուր 1000 բնակչին 1940 թվականին ընկնում էր 41,2 ծնված, 13,8 մահացած, իսկ աճը կազմում էր 27,4 մարդ[5]։ Այդ ժամանակամիջոցում զգալի չափով աճել էր հանրապետության քաղաքների բնակչությունը։

Աշխատավորների նյութական ու կուլտուրական բարեկեցության բարելավման գործում կարևոր նշանակություն ունեցավ հանրապետության քաղաքների շինարարությունն ու բարեկարգումը։ Բացի Երևանից, որը դարձել էր առաջնակարգ սոցիալիստական քաղաքներից մեկը, բարգավաճում էին հանրապետության մյուս քաղաքները ևս՝ Լենինականը, Կիրովականը, Ալավերդին, նաև Արթիկը, Էջմիածինը, Ղափանը, Գորիսը, Նոր Բայազետը և մի շարք այլ բնակավայրեր։

Հայաստանի յուրաքանչյուր 3 բնակչից մեկը սովորում էր դպրոցներում, տեխնիկումներում կամ բարձրագույն ուսումնական հաստատություններում։

---

1 Տե՛ս Մլի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 29, գ. 3, թ. 87։

2 Տե՛ս «Народное хозяйство Армянской ССР», էջ 27։

3 Տե՛ս Մլի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 29, գ. 3, թ. 86—87։

4 Տե՛ս «Народное хозяйство Армянской ССР», էջ 3։

5 Տե՛ս նույն տեղում, էջ 165։

ՀՏԵՋ

Հանրապետության քաղաքներում և գյուղական վայրերում ծավալվեց բնակարանային շինարարությունը։ 1938—1941 թվականներին Հայաստանի քաղաքներում կառուցվեց 247 հազար քառակուսի մետր բնակելի տարածություն[1], Լայն թափ ստացավ կոլտնտեսականների բնակարանային շինարարությունը։ Հազարավոր կոլտնտեսականներ դուրս գալով հին, գետնափոր նկուղներից, կառուցեցին նոր, լուսավոր ու ընդարձակ բնակարաններ։ Գյուղերում կառուցվեցին բուժարաններ, ակումբներ, դպրոցներ, մանկապարտեզներ ու մանկամսուրներ։

Երրորդ հնգամյակի տարիներին արդյունաբերության, գյուղատնտեսության և կուլտուրայի զարգացման հետ միասին, ավելացավ բանվոր-ծառայողների թիվը՝ 1940 թվականին հասնելով 74 հազարի, որից միայն արդյունաբերության մեջ աշխատում էին 34,5 հազարը։

Բնակչության բարեկեցության մասին է վկայում նաև ապրանքաշրջանառության աճը, որը 1937 թվականի համեմատությամբ ավելացել էր 37 տոկոսով։ Աշխատավորների սպառումն աճել էր 1,5 անգամ[2], յուրաքանչյուր տարի ավելանում էր կենսամթերքների արտադրությունը։ Եթե 1937 թվականին կենդանական յուղի արտադրությունը 344 տոննա էր, ապա 1940 թվականին այն հասել էր 1559 տոննայի, պանրի արտադրությունը 748 տոննայից հասել էր 1876 տոննայի։

Զգալի չափով բարելավվել էր բնակչության բժշկական սպասարկումը։ 1937 թվականի 51 հիվանդանոցի և 2000 մահճակալի դիմաց, 1939 թվականին հանրապետությունում կար 65 հիվանդանոց՝ 2950 մահճակալով[3]։

Աշխատավորների բարեկեցության բարելավման հետ միասին տեղի էր ունեցել հանրապետության բնակչության աճ, իջել էր մահացության տոկոսը՝ 1221334 մարդուց, 1940 թվականին հանրապետության բնակչության թիվը հասել էր 1,3 միլիոնի[4]։ Յուրաքանչյուր 1000 բնակչին 1940 թվականին ընկնում էր 41,2 ծնված, 13,8 մահացած, իսկ աճը կազմում էր 27,4 մարդ[5]։ Այդ ժամանակամիջոցում զգալի չափով աճել էր հանրապետության քաղաքների բնակչությունը։

Աշխատավորների նյութական ու կուլտուրական բարեկեցության բարելավման գործում կարևոր նշանակություն ունեցավ հանրապետության քաղաքների շինարարությունն ու բարեկարգումը։ Բացի Երևանից, որը դարձել էր առաջնակարգ սոցիալիստական քաղաքներից մեկը, բարգավաճում էին հանրապետության մյուս քաղաքները ևս՝ Լենինականը, Կիրովականը, Ալավերդին, նաև Արթիկը, Էջմիածինը, Դափանը, Գորիսը, Նոր Բայազետը և մի շարք այլ բնակավայրեր։

Հայաստանի յուրաքանչյուր 3 բնակչից մեկը սովորում էր դպրոցներում, տեխնիկումներում կամ բարձրագույն ուսումնական հաստատություններում։

---

1 Տե՛ս Մկի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 29, գ. 3, թ. 87։
2 Տե՛ս «Народное хозяйство Армянской ССР», էջ 27։
3 Տե՛ս Մկի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 29, գ. 3, թ. 86—87։
4 Տե՛ս «Народное хозяйство Армянской ССР», էջ 3։
5 Տե՛ս նույն տեղում, էջ 165։

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՔԱՐՏԵՋ



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՃՅՈՒՂԵՐ

- Գունավոր մետալուրգիա
- Քիմիական
- Մեքենաշինություն և մետաղամշակում
- Շինանյութերի արտադրություն
- Տորֆի արդյունահանում
- Անտառային և փայտամշակման
- Տեքստիլ-տրիկոտաժի
- Գորգագործություն
- Կարի
- Կաշվի- կոշկեղենի, մուշտակեղենի
- Սննդհամի
- Ցուղա-պանրագործական ճարպային
- Պահածոների
- Գինու-կոնյակի
- Ծխախոտի
- Եթերայուղերի
- Այլք

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ

- Երկաթուղիներ կառուցված մինչև 1920 թ.
- 1920 թ. հետո
- Խճուղիներ
- Ջրային (լճային) ուղիներ

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ

Խոշորագույն

Խոշոր

Միջին

Այլ նշանակալի

ՀԻԴՐՈԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆՆԵՐ

հզորությունը (կիլովատ)

25 000	100 000
5 000	25 000
1 000	5 000
Մինչև 1 000	

Ջրանցքներ

Քարտեզի հեղինակ՝ Լ.Հ.Վալեսյան

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԱՐԴՅՈՒՆԱԲԵ



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ


ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՃՅՈՒՂԵՐ

- Գունավոր մետալուրգիա
- Քիմիական
- Մեքենաշինություն և մետաղամշակում
- Շինանյութերի արտադրություն
- Տորֆի արդյունահանում
- Անտառային և փայտամշակման
- Տեքստիլ-տրիկոտաժի
- Գորգագործություն
- Կաուչի

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ

Խոշորագույն


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՐՏԵԶ
Ք. Երևան
Արարատ
Վայոց Ձոր
Սյունիք
Գեղարքունիք
Կոտայք
Արմավիր
Արագածոտն
Լոռի
Տավուշ
Ջրհովիտ
Ազատ
Ողջի
Ձորագետ
Ձկնագետ
Ողջի
Ձորագետ
Ձկնագետ
Ողջի
Ձորագետ
Ձկնագետ



Հատկապես կոլտնտեսային գյուղում զգալի չափով ավելացել էր կինոթատրոնների, ակումբ-գրադարանների, ընթերցարանների ցանցը։ Գյուղում արդեն ստեղծվել էր սեփական ինտելիգենցիան։

2. ՊԱՅՔԱՐԻ ՈՒ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 20 ՏԱՐԻՆ

1940 թվականի նոյեմբերին հանրապետության աշխատավորները, ամբողջ Սովետական Միության ժողովուրդների հետ միասին, մեծ հանդիսավորությամբ նշեցին Հայաստանում սովետական իշխանության հաստատման քսանամյակը։

Քսանամյակին նվիրված համաժողովրդական մրցության կոչեց ՀԿ(բ)Կ XIII համագումարը, որը տեղի ունեցավ 1940 թվականի մարտին, Երևանում։ Համագումարը ներկայացնում էր կուսակցության 33,729 անդամների ու թեկնածուների[1]։

ՀԿ(բ)Կ XIII համագումարը լսեց և քննարկեց ՀԿ(բ)Կ կենտրոնական կոմիտեի ու վերստուգիչ հանձնաժողովի հաշվետվությունները և ընտրեց Հայաստանի կոմկուսի ղեկավար օրգանները։ Կենտկոմի հաշվետվությամբ համագումարում հանդես եկավ ՀԿ(բ)Կ կենտկոմի առաջին քարտուղար Գ. Ա. Հարությունյանը, որը և նորից վերընտրվեց առաջին քարտուղարի պաշտոնում։

Հայաստանում սովետական իշխանության հաստատման 20-ամյա հոբելյանը արժանավայել դիմավորելու համար հանրապետությունում ծավալվեց համաժողովրդական սոցիալիստական մրցություն։ Գործարաններում, ֆաբրիկաներում, կառույցներում, սովխոզներում և կոլտնտեսություններում Խտուն աշխատանք էր տարվում սոցիալիստական պարտավորությունների կատարման ու գերակատարման համար։

Նախահեղափոխական հետամնաց, կիսագաղութային, ագրարային երկրից, Հայաստանը սովետական իշխանության քսան տարիների ընթացքում դարձել էր առաջավոր սոցիալիստական հանրապետություն՝ զարգացած ինդուստրիայով և կոլեկտիվ գյուղատնտեսությամբ։ Այդ տարիների ընթացքում հանրապետությունում կառուցվել էին ավելի քան 25 խոշոր արդյունաբերական ձեռնարկություններ՝ Երևանի սինթետիկ կաուչուկի կոմբինատը, Կիրովականի Ալ. Մյասնիկյանի անվան քիմիական գործարանը, Երևանի մեքենաշինական գործարանը, Լենինականի Մայիսյան ապստամբության անվան տեքստիլ կոմբինատը, Ալավերդու պղնձարջասպի գործարանը, Դավալուի ցեմենտի գործարանը, Երևանի պահածոների գործարանը, մսի կոմբինատը և շատ ուրիշներ, որոնք արմատապես փոխել էին Հայաստանի էկոնոմիկան։ Հայաստանում ստեղծվել էին արդյունաբերության բոլորովին նոր՝ մեքենաշինական, քիմիական, շինանյութերի, սննդի, թեթև արդյունաբերության այլ ճյուղեր։ Միայն խոշոր արդյունաբերության մեջ աշխատում էր 25000 բանվոր։

Ամբողջ հանրապետության արդյունաբերության համախառն արտադրանքը՝ 1913 թվականի համեմատությամբ, 1940 թվականին աճել էր 8,7 անգամ, իսկ ծանր արդյունաբերության գծով՝ 23 անգամ։ Հայաստանում 72 անգամ

---

1 Տե՛ս Մ.Լ.Ի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 2, գ. 13, թ. 2։

ավելի էլեկտրաէներգիա էր արտադրվում, քան 1913 թվականին։ Բանվոր-ծառայողների թիվը 1940 թվականի սեպտեմբերին կազմում էր 142,200 մարդ։

Արդյունաբերության արտադրանքի տեսակարար կշիռը ժողովրդական տնտեսության մեջ կազմում էր 78 տոկոս, որը Հայաստանի ինդուստրիայի զարգացման լավագույն ապացույցն է։

Անցած քսան տարիների ընթացքում զգալիորեն զարգացավ Հայաստանի սոցիալիստական գյուղատնտեսությունը։ Մինչև 1940 թվականի հուլիսի 1-ը արդեն կոլեկտիվացված էր հանրապետության գյուղացիական տնտեսությունների 98,3 տոկոսը։ Ցանքատարածությունների 99,9 տոկոսը պատկանում էր սոցիալիստական սեկտորին։ Հանրապետությունում կար 1078 կոլտնտեսություն, 14 սովխոզ, 32 մեքենատրակտորային կայան[1], կոլտնտեսությունների ցանքատարածությունները հասել էին 401163 հեկտարի[2]։

Կոլտնտեսային կարգը արմատապես փոխեց գյուղի դեմքը։ Նախասովետական Հայաստանում կիսաքաղց գյուղացին հարստահարվում էր կուլակների ու վաշխառուների կողմից, հազիվ էր քարշ տալիս իր գոյությունը։ Հայ գյուղացին այժմ կանգնել էր սոցիալիստական տնտեսության ուղու վրա։ Եթե նախկինում գյուղացիները գաղափար չունեին ռադիոյի, թերթի մասին, ապա այժմ նրանք ունեին ռադիո, ստանում էին թերթեր, ամսագրեր։ Կինոնկարի ցուցադրումը գյուղում սովորական երևույթ էր դարձել։ Եթե մինչև սովետական կարգերի հաստատումը գյուղացիության ճնշող մեծամասնությունը անգրագետ էր, ապա 1940 թվականին գրագիտությունն ընդհանուր երևույթ էր դարձել։

Մանր, անհատական տնտեսություններից խոշոր սոցիալիստական տնտեսության անցումը, ինչպես ամբողջ Սովետական Միությունում, այնպես էլ Հայաստանում «մեծ հեղափոխություն էր տնտեսական հարաբերությունների մեջ, գյուղացիության կյանքի ամբողջ կացութաձևի մեջ»[3]։

Կոլեկտիվացումը գյուղը ընդմիշտ փրկեց քայքայումից և աղքատացումից։ Գյուղացիական դարավոր հարցը, լենինյան կոոպերատիվ պլանի իրագործման հիման վրա, իր իսկական լուծումը գտավ սովետական իշխանության օրոք։

Կոլտնտեսային կարգի լիակատար հաղթանակի հետ միասին, հանրապետությունում իրագործվեց նաև կուլտուրական հեղափոխությունը, որը հայ գյուղացուն դուրս բերեց հոգևոր ստրկությունից ու խավարից։

Կոլեկտիվացումը ավելի մոտիկացրեց բանվոր դասակարգին ու կոլտնտեսային գյուղացիությանը, ամրապնդեց նրանց դաշինքը, անխախտ դարձրեց նրանց բարեկամությունը։ Ամրապնդվեց Հայաստանի աշխատավորության բարոյա-քաղաքական միասնությունը։

Արմատական փոփոխություններ տեղի ունեցան գյուղատնտեսական արտադրության մեջ. կոլտնտեսային դաշտերի մեծ մասը մշակվում էր տրակտորներով, կոմբայններով, խոտհնձի և այլ մեքենաներով։ Բազմաթիվ աշխատատար պրոցեսներ մեքենայացված էին։ Գիտության նվաճումները համարձակ կերպով ներդրվում էին գյուղատնտեսության մեջ։

Արդյունաբերության, գյուղատնտեսության աննախընթաց վերելքը ապա-

1 Տե՛ս «Народное хозяйство Армянской ССР», էջ 55։

2 Տե՛ս նույն տեղում, էջ 61։

3 «ՍՄԿՊ ծրագիր», 1962, էջ 16։

հովեց աշխատավորների նյութական բարեկեցության բարձրացման արագ աճը, ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրայի ծաղկումը։

Այդ ժամանակաշրջանում հանրապետության ազգաբնակչության 8,3 տոկոսը ուներ բարձրագույն և միջնակարգ կրթություն։ Ժողովրդական տնտեսության մեջ աշխատում էին 7300 բարձրորակ մասնագետներ, իսկ միջին որակի մասնագետների թիվը հասել էր 12100-ի[1]։

1940—1941 թվականների ուսումնական տարում Սովետական Հայաստանում գործում էր 1155 մասսայական դպրոց, որտեղ սովորում էին 326600 աշակերտ։ Միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորում էին 62 հազար ուսանող, 9 բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ 11100 ուսանող։ Հանրապետությունում կար 36 գիտա-հետազոտական ինստիտուտ, 908 մասսայական գրադարան աշխատավորներին սպասարկում էր անհրաժեշտ գրականությամբ։ Հայաստանի գյուղերում գործում էր 797 ակումբային հիմնարկ, 108 կինոսարքավորում։ Հանրապետությունում հրատարակվում էր 56 անուն թերթ և 24 ամսագիր[2]։

Այդ նվաճումները, որ ձեռք էին բերել Սովետական Հայաստանի աշխատավորները, հանդիսանում էին կոմունիստական կուսակցության կողմից լենինյան ազգային քաղաքականության հետևողական կենսագործման արդյունքները։

Հազարամյակների պատմություն ունեցող հայ ժողովուրդը, միայն իր պատմության այդ քսան տարիների ընթացքում կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, սովետական կառավարության օգնությամբ կարողացավ ոչ միայն բուժել իր վերքերը, այլև խաղաղ ու ստեղծագործ աշխատանքով փայլուն հաջողություններ հասնել սովետական բազմազգ ժողովուրդների եղբայրական մեծ ընտանիքում։

1940 թվականի նոյեմբերի 23-ին բացվեց Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության Գերագույն սովետի հոբելյանական նստաշրջանը, որտեղ «Սովետական իշխանության քսան տարին Հայաստանում» զեկուցումով հանդես եկավ Հայկական ՍՍՀ Ժողկոմսովետի նախագահ Ա. Փիրուզյանը։

Նոյեմբերի 23-ին Համկ(բ)Կ Կենտրոնական կոմիտեն և ՍՍՀՄ Ժողկոմսովետը շնորհավորական հեռագիր ուղարկեցին Հայաստանի Կ(բ)Կ Կենտկոմին, Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի նախագահությանը և Ժողկոմսովետին։ Հեռագրում ասված էր. «Անցյալում հետամնաց երկրից Հայաստանը սովետական իշխանության գոյության տարիների ընթացքում դարձել է առաջավոր սոցիալիստական հանրապետություն՝ զարգացած ինդուստրիայով և կուլտուրական գյուղատնտեսությամբ։

Համամիութենական կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության Կենտրոնական կոմիտեն և ՍՍՀ Միության Ժողովրդական կոմիսարների սովետը հատուկ համոզմունք են հայտնում, որ Սովետական Հայաստանի աշխատավորներն այսուհետև էլ բոլշևիկյան հաստատակամությամբ կպայքարեն արդյունաբերության և գյուղատնտեսության հետագա զարգացման համար, հայ ժողովրդի սոցիալիստական կուլտուրայի նորանոր հաղթանակների համար»։

1 Տե՛ս «Народное хозяйство Армянской ССР», էջ 22։

2 Տե՛ս նույն տեղում, էջ 149։

Գիտության և տեխնիկայի ասպարեզում մատուցած աչքի ընկնող ծառայությունների համար գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչում ստացան ակադեմիկոսներ Հ. Օրբելին, Հ. Մանանդյանը, պրոֆեսորներ Ա. Հակոբյանը, Ս. Վելլերը, Գ. Աղաջանյանը, Հր. Բունյաթյանը, Ա. Տերտերյանը, Ավ. Տեր-Պողոսյանը։

Համկ(բ)կ Կենտրոնական կոմիտեի օրգան «Պրավդա» թերթի «Սովետական Հայաստանի 20-ամյակը» խորագրով առաջնորդող հոդվածում համառոտակի բնութագրեց սոցիալիզմի կառուցման ճանապարհին ձեռք բերված հայ ժողովրդի փայլուն հաջողությունները։ «Սովետական Հայաստանի այսօրվա տոնը,— գրում էր «Պրավդան»,—լի է խոր իմաստով և նշանակությամբ։ Իր հանրապետության 20-ամյակն է տոնում մի ժողովուրդ, որը գոյություն ունի մոտ երկուկես հազար տարի»։

Հանրագումարի բերելով սովետական իշխանության քսան տարիների ընթացքում ձեռք բերած հաջողությունները, Սովետական Հայաստանի աշխատավորները շարունակեցին պայքարել սոցիալիզմի կառուցումը ավարտելու և աստիճանաբար կոմունիզմին անցնելու, ժողովրդական տնտեսության նոր վերելքի, սովետական հայրենիքի պաշտպանության և նրա հետագա ամրապնդման համար։

1940 թվականի հոկտեմբերին հանդիսավոր կերպով բացվեց Երևանի բուսաբանական այգին, նոյեմբերին շահագործման հանձնվեց Ա. Մյասնիկյանի անվան պետական հանրային գրադարանի նոր շենքը։ Նույն ամսին բացվեց հանրապետության հոբելյանական ցուցահանդեսը, որտեղ ցուցադրվեցին սովետական իշխանության քսան տարիների ընթացքում Հայկական ՍՍՀ-ի էկոնոմիկայի և կուլտուրայի ասպարեզում ձեռք բերված նվաճումները։ Ցուցահանդեսի բացումը նշանակալից երևույթ էր հանրապետության կյանքում։

1940 թվականի նոյեմբերի 24-ին Երևանի Լենինի հրապարակում մեծ հանդիսավորությամբ բացվեց Վլադիմիր Իլյիչ Լենինի մոնումենտալ հուշարձանը, որի հեղինակն է ականավոր քանդակագործ, ՍՍՀՄ ժողովրդական նկարիչ Ս. Մերկուրովը։ Այդ հոյակապ հուշարձանով երախտապարտ հայ ժողովուրդն իր սերն ու նվիրվածությունն էր արտահայտում մեծ առաջնորդի նկատմամբ։

Քսանամյակի տոնակատարությանը մասնակցում էին բոլոր եղբայրական հանրապետությունների ներկայացուցիչները, որոնք իրենց սրտի խոսքն ասացին և լավագույն ցանկություններ հայտնեցին եղբայրական հայ ժողովրդին։ Հայաստանում սովետական իշխանության հաստատման քսանամյակի տոնակատարությունը մի անգամ ևս ցույց տվեց սովետական բազմազգ ժողովուրդների եղբայրական բարեկամությունը։

3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՄՂՎՈՂ ՊԱՅՔԱՐԻՆ

Սովետական Միության նախապատերազմյան տարիները հագեցված էին խոշոր պատմական իրադարձություններով, ինչպես երկրի ներսում, այնպես էլ միջազգային հարաբերությունների ասպարեզում։

ՍՍՀՄ Միությունը ընթանում էր սոցիալիստական էկոնոմիկայի աննախընթաց վերելքի ուղիով, իսկ կապիտալիստական աշխարհը հազիվ դուրս գալով տնտեսական ճգնաժամի ճիրաններից, խրվել էր նոր, անլուծելի հակասությունների մեջ։

Կապիտալիստական խոշոր երկրները բաժանվել էին երկու հակադիր խմբավորումների։ Մի խմբավորման մեջ էին Գերմանիան, Ճապոնիան և Իտալիան, իսկ մյուսի մեջ՝ ԱՄՆ-ը, Անգլիան և Ֆրանսիան։ Աշխարհը վերաբաժանելու նպատակով ֆաշիստական Գերմանիան, Իտալիան և միլիտարիստական Ճապոնիան տենդորեն նախապատրաստվում էին համաշխարհային նոր պատերազմի, իրենց ամբողջ էկոնոմիկան ենթարկելով այդ պահանջներին։ Գերմանիայի, Իտալիայի և Ճապոնիայի ագրեսիվ գործողությունները ծավալվում էին անարգել կերպով։

Սովետական Միությունը անշեղորեն ղեկավարվելով լենինյան խաղաղասիրական արտաքին քաղաքականությամբ, հետևողականորեն պայքարում էր խաղաղության ամրապնդման, կոլեկտիվ անվտանգության և ագրեսորներին վճռական հակահարված տալու համար։ Սակայն սովետական կառավարության և խաղաղասիրական բոլոր պետությունների ջանքերը՝ արգելելու ագրեսիան, կանխելու երկրորդ համաշխարհային պատերազմը, հաջողությամբ չպսակվեց։

Անգլո-ամերիկյան իմպերիալիստական շրջանները վարում էին Թողտվության, այսպես կոչված չմիջամտելու քաղաքականություն, որն, ըստ էության, ագրեսորներին սանձազերծելու քաղաքականություն էր։ Հաշվի առնելով այդ, գերմանա-իտալական ֆաշիզմը և ճապոնական միլիտարիզմը ավելի ակտիվացրին իրենց ագրեսիվ գործողությունները։

Երկրորդ համաշխարհային պատերազմն ավելի ու ավելի անխուսափելի դարձավ։

1938 թվականի սկզբներին ֆաշիստական Գերմանիան զավթեց Ավստրիան, իսկ նույն թվականի աշնանը, օգտվելով Մյունխենյան համաձայնությունից, ներխուժեց Չեխոսլովակիայի Սուդետական մարզը։

Ճապոնական իմպերիալիստները 1938 թվականի հուլիսի 29-ին, խախտելով սովետական պետության սահմանը, ներխուժեցին Խասան լճի շրջանը։ Սակայն կարմիր բանակի հզոր հարվածների տակ մեծ կորուստներ կրելով ետ շպրտվեցին։ Ճապոնական ռազմամոլները 1939 թվականի մայիսի 11-ին՝ Խալխին գյոլի մոտ, ներխուժեցին Մոնղոլական ժողովրդական Հանրապետության տերիտորիան։

Համաձայն Մոնղոլական ժողովրդական Հանրապետության հետ կնքած փոխադարձ օգնության պայմանագրի, կարմիր բանակի զորամասերը օգնության հասան մոնղոլական ժողովրդին։ 1939 թվականի օգոստոսին օղակի մեջ առնելով Մոնղոլական ժողովրդական Հանրապետության սահմանները ներխուժած ճապոնական զորքերին, կարմիր բանակը մոնղոլական զորքերի հետ միասին, պլխովին ջախջախեց Թշնամու զորքերին և Մոնղոլիայի տերիտորիան մաքրեցին օտարերկրյա զավթիչներից։

Ճապոնական իմպերիալիստների այդ ագրեսիվ գործողությունների կապակցությամբ, ինչպես ամբողջ Սովետական Միությունում, այնպես էլ Սովետական Հայաստանում տեղի ունեցան հակաճապոնական միտինգներ, որտեղ

աշխատավորներն արտահայտում էին իրենց զայրույթը և պատրաստակամությունը՝ հակահարված տալու ճապոնական ռազմամոլներին։ Հակապատերազմական այդ միտինգներում Հայաստանի աշխատավորությունը միաժամանակ պարտավորվեց կրկնապատկել իր եռանդն ու ջանքերը, գերակատարել արտադրական պլանները և էլ ավելի ամրապնդել սովետական երկրի հզորությունը։

Ճապոնական իմպերիալիզմի ագրեսիվ պլանները Հեռավոր Արևելքում ձախողվեցին։ Սակայն Խաղաղ օվկիանոսից մինչև Ջիբրալտար ընկած շրջանները՝ 500 միլիոն բնակչությամբ, ընդգրկվել էին պատերազմի մեջ։

Սովետական Միության համար պատերազմի վտանգն ավելի ու ավելի ռեալ էր դառնում։

Անգլիայի ու Ֆրանսիայի կառավարությունները՝ ժողովուրդներին ապակողմնորոշելու նպատակով կոլեկտիվ անվտանգության պատճառաբանությամբ բանակցություններ սկսեցին Սովետական Միության հետ։ Սակայն նրանք շուտով ձախողեցին այդ բանակցությունները, հրաժարվելով առհասարակ Գերմանիայի դեմ պայքարելուց։

Չմերժելով Գերմանիայի առաջարկությունը, 1939 թվականի օգոստոսի 23-ին սովետական կառավարությունը նրա հետ կնքեց չհարձակվելու պակտ։ Պատերազմի վտանգը որոշ ժամանակով հեռացվեց մեր երկրից։

Գերմանական ֆաշիզմը 1939 թվականի սեպտեմբերի 1-ին սկսեց պատերազմ Լեհաստանի դեմ, հսկայական բանակով ներխուժելով վերջինիս տերիտորիան։ Անգլիան ու Ֆրանսիան ստիպված էին պատերազմ հայտարարել Գերմանիային։ Սկսվեց երկրորդ համաշխարհային պատերազմը։

Երկրորդ համաշխարհային պատերազմը սկսվեց անգլո-ամերիկյան ու ֆրանսիական կառավարող շրջանների թողտվության քաղաքականության հետևանքով։

Տասնյոթ օրվա ընթացքում գերմանական ֆաշիզմը ընդհուպ մոտենալով Արևմտյան Բելոռուսիայի և Արևմտյան Ուկրաինայի սահմաններին, օկուպացրեց ամբողջ Լեհաստանը։ Այդ տերիտորիաները, որտեղ բնակվում էին 7 միլիոն ուկրաինացիներ և 3 միլիոն բելոռուսներ, անջատվել էին իրենց մայր հայրենիքից դեռևս քաղաքացիական պատերազմի դժվարին տարիներին։ Ընդառաջելով եղբայրական այդ ժողովուրդների ցանկությանը, սովետական կառավարությունը որոշեց նրանց փրկել ֆաշիզմի ճիրաններից։ 1939 թվականի սեպտեմբերի 17-ին կարմիր բանակը մտավ Արևմտյան Ուկրաինայի և Արևմտյան Բելոռուսիայի տերիտորիանները. տեղի ժողովուրդը ցնծությամբ դիմավորեց ազատարար կարմիր բանակին։

Հայաստանի աշխատավորությունն իր գոհունակության խոսքն ասաց Արևմտյան Ուկրաինայի ու Արևմտյան Բելոռուսիայի ժողովուրդների ազատագրման մասին։ Հանրապետության բոլոր քաղաքներում ու այլ բնակավայրերում տեղի ունեցան աշխատավորների միտինգներ, որտեղ միահամուռ հավանություն տրվեց սովետական կառավարության արդարացի միջոցառումներին։

Իմպերիալիստական տերություններին հաջողվեց 1939 թվականի նոյեմբերին ֆիննական ռեակցիոներներին պատերազմի դրթել ՍՍՀՄ-ի դեմ։

Ձգտելով թուլացնել Սովետական Միությունը, ֆաշիստական Գերմանիան ամեն կերպ աջակցում և զենքով ու հանդերձանքով օգնում էր ֆիննական կա-

ռավարությանը։ Սակայն իմպերիալիստական տերությունների դավադրությունները պարտություն կրեցին։ Պատերազմը սպիտակ ֆինների դեմ վերջացավ 1940 թվականի մարտին, կարմիր բանակի լիակատար հաղթանակով, որը հնարավորություն ստեղծեց ամրապնդելու Լենինգրադի պաշտպանությունը, պետական սահմանը որոշ չափով հեռացնելով նրանից։

Հայ ժողովրդի բազմաթիվ զավակներ ակտիվ մասնակցություն ունեցան սպիտակ ֆինների դեմ մղված պատերազմին, որոնց մի մասը իր կյանքը նվիրաբերեց հարազատ հայրենիքին։ Հայ ժողովրդի զավակներից շատերը սխրագործությունների համար պարգևատրվեցին կառավարական շքանշաններով, իսկ կարմիրբանակային Կարապետ Սիմոնյանը՝ այդ մարտերում հրամանատարության մարտական առաջադրանքներն օրինակելիորեն կատարելու և խիզախություն ու հերոսություն ցուցաբերելու համար ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահության 1940 թվականի հունվարի 12-ի հրամանագրով արժանացավ Սովետական Միության հերոսի բարձր կոչմանը։ Դա հայ ժողովրդի զավակներից առաջին Սովետական Միության հերոսն էր։ Սովետական Միության հերոսի բարձր կոչման արժանացան նաև դիվիզիայի հրամանատար Մինքայել Պարսեղովը և կրտսեր լեյտենանտ Գրիգոր Հայրապետյանը։

Զգտելով կանխել արևմուտքի իմպերիալիստական պետությունների ոտընձգությունները, Սովետական Միությունը հատուկ ուշադրություն էր դարձնում Մերձբալթյան երկրների վրա և օգնում էր տեղի ժողովուրդների ազատագրական պայքարին։ 1939 թվականին Սովետական Միությունը փոխադարձ օգնության պայմանագիր կնքեց Լատվիայի, Լիտվայի և Էստոնիայի հետ։ Այդ պայմանագրերի համաձայն, 1940 թվականի գարնանը, կարմիր բանակի զորամասերը մտան Լատվիա, Լիտվա և Էստոնիա։ Օգտվելով կարմիր բանակի զորամասերի աջակցությունից, այդ երկրների աշխատավորները, կոմունիստական կուսակցությունների ղեկավարությամբ, տապալեցին բուրժուա-նացիոնալիստական կառավարությունները և վերականգնեցին սովետական իշխանությունը։

Ընդհանուր քվեարկությամբ ընտրված ժողովրդական սեյմը՝ Լատվիայում և Լիտվայում, իսկ Պետական դուման՝ Էստոնիայում, 1940 թվականի հուլիսին դիմեցին ՍՍՀՄ Գերագույն սովետին, խնդրելով նոր հանրապետություններին ընդունել Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միության կազմի մեջ։ 1940 թվականի օգոստոսին ՍՍՀՄ առաջին գումարման Գերագույն սովետի սեսիան ընդունեց օրենք՝ Լիտվական, Լատվիական, Էստոնական Սովետական Սոցիալիստական Հանրապետությունները ՍՍՀՄ-ի կազմի մեջ ընդունելու մասին։

1940 թվականի հունիսի 26-ին ՍՍՀՄ-ի ժողկոմսովետը հրապարակեց Բեսարաբիայի և Հյուսիսային Բուկովինայի հարցի շուրջը եղած սովետա-ռումինական կոնֆլիկտի խաղաղ լուծման մասին հայտարարություն, որտեղ ասված էր, որ 1918 թվականին Ռումինիան օգտվելով Սովետական Ռուսաստանի թուլությունից, զավթել էր Բեսարաբիան և Բուկովինայի մի մասը։ Այդ հողերն այժմ պետք էր վերադարձնել Սովետական Միությանը։ Ռումինիայի թագավորը պարտավորվեց չորս օրվա ընթացքում այդ տերիտորիաները մաքրել իր զորքերից և հարցը լուծել խաղաղ ճանապարհով։ ՍՍՀՄ Գերագույն սովետի նույն սեսիան օրենք ընդունեց միութենական նոր հանրապետության՝ Մոլ-

դավական Սովետական Սոցիալիստական Հանրապետություն կազմելու մասին։ Բեսարաբիայի ու Հյուսիսային Բուկովինայի հարցի խաղաղ լուծման կապակցությամբ, ինչպես ամբողջ Սովետական Միության մեջ, նույնպես և Հայաստանում տեղի ունեցան բազմահազարանոց միտինգներ։

Գնալով գերմանա-ֆաշիստական ագրեսիան ընդարձակվում էր։ 1940 թվականի ապրիլին ֆաշիստական Գերմանիան ներխուժեց Սկանդինավյան երկրները, գրավեց Դանիան և Նորվեգիան, այնուհետև Բելգիան ու Հոլանդիան և ներխուժեց Ֆրանսիա։ Ջախջախված ֆրանսիական բանակը հետ նահանջեց։ Պետենի ռեակցիոն կառավարությունը 1940 թվականի հունիսի 22-ին կապիտուլյացիայի ենթարկվեց։ Ֆրանսիայի զգալի մասը, ներառյալ Փարիզը, օկուպացվեց հիտլերյան Գերմանիայի կողմից։ Ֆաշիստական գաղաղած հորդանները ոչ միայն առանձին պետություններ էին գրավում, այլև գաղանաբար բնաջնջում էին առանձին ժողովուրդների։ Հայտնի են հրեական ջարդերը. հիտլերյան ճիվաղները բնաջնջման էին ենթարկում խաղաղ հրեա բնակչությունը։

Այդ կապակցությամբ, 1938 թվականի դեկտեմբերի 2-ին, Հայաստանի աշխատավորները միտինգներ գումարեցին և իրենց զայրույթն արտահայտեցին ֆաշիստների նկատմամբ։ Երևանի ինտելիգենցիայի միտինգում զայրույթով լի ճառերով հանդես եկան ՀՍՍՀ ժողովրդական արտիստ Հայկանուշ Դանիելյանը, ակադեմիկոս Հովսեփ Օրբելին, ասմունքի վարպետ Սուրեն Քոչարյանը, կոմպոզիտոր Հարո Ստեփանյանը, անվանի գրող Ստեփան Զորյանը, վաստակավոր արտիստ Վաղարշ Վաղարշյանը։

Ֆրանսիայի պարտությունից հետո, ֆաշիստական Գերմանիան, 1940 թվականի երկրորդ կեսից, հիմնական ուշադրությունը նվիրեց Սովետական Միության դեմ պատերազմի նախապատրաստմանը։ Գերմանական ռազմամոլները ձգտում էին գրավել մեր երկիրը, ոչնչացնել սովետական կարգերը։

Սովետական պետությունը հանդես էր գալիս որպես խաղաղության և ժողովուրդների ազատության դրոշակակիր։ Տեսնելով իմպերիալիստական տերությունների տենդագին սպառազինությունը և պատերազմի ծավալումը, ագրեսորներին հակահարված տալու նպատակով նա, միաժամանակ, ամրապնդում էր իր սահմանները։ Սովետական կառավարությունը գործադրում էր բոլոր ջանքերը, որպեսզի պատերազմ չծավալվի։

Ի դեմս Սովետական Միության, աշխարհի ժողովուրդները տեսնում էին խաղաղության և ժողովուրդների ազատության ջահակրին։

Սովետական երկրի վրա կախված պատերազմի ահեղ վտանգը կոմունիստական կուսակցությունից և ամբողջ սովետական ժողովրդից պահանջում էր առավել լարված աշխատանք։ Անհրաժեշտ էր ավելի բարձրացնել Սովետական Միության ինդուստրիալ հզորությունը և ամրապնդել նրա պաշտպանունակությունը։ Այս հարցում կարևոր դեր խաղաց Համ(բ)Կ XVIII կոնֆերանսը, որը տեղի ունեցավ 1941 թվականի փետրվարի 15—20-ը։ Կոնֆերանսը քննարկեց կուսակցական կազմակերպությունների խնդիրները արդյունաբերության ու տրանսպորտի բնագավառում, 1940 թվականի տնտեսական տարվա արդյունքները և ժողովրդական տնտեսության զարգացման 1941 թվականի պլանի հարցը։ Կոնֆերանսը ծավալուն միջոցառումներ մշակեց արդյունաբերության ու տրանսպորտի գործունեությունը աշխուժացնելու, կարգապահությունն ամ-

բապնդելու, թափթփվածությունը վերացնելու, արտադրողականությունը զգալի չափով բարձրացնելու ուղղությամբ։ Իր որոշման մեջ կոնֆերանսը պահանջեց «կուսակցական կազմակերպությունների ուշադրությունը վճռականորեն կենտրոնացնել արդյունաբերության ու տրանսպորտի կարիքների ու շահերի նկատմամբ առավելագույն հոգատարություն ցույց տալու գործի վրա»[1]։ Կոնֆերանսը հանրագումարի բերեց 1940 թվականի տնտեսական տարվա արդյունքները և հավանություն տվեց ժողովրդական տնտեսության զարգացման 1941 թվականի պլանին, որը ելնում էր երկրի պաշտպանունակությունն էլ ավելի ամրապնդելու հարցերը հաշվի առնելով։

Հայաստանի կուսակցական կազմակերպությունները միահամուռ պաշտպանելով կուսակցության XVIII կոնֆերանսի որոշումները կուսակցության կողմից առաջադրված հրատապ ու կարևոր խնդիրները անշեղորեն կենսագործելու նպատակով մոբիլիզացրին արդյունաբերության ու տրանսպորտի աշխատողների ուժերը։ Քաղաքային ու շրջանային կուսակցական ակտիվի ժողովները, քննարկելով Համկ(բ)կ XVIII կոնֆերանսի արդյունքները, բացահայտեցին հանրապետության արդյունաբերական ձեռնարկությունների ու տրանսպորտի աշխատանքում եղած թերությունները, նշեցին այդ թերությունների վերացնելու ուղիները։

Նախապատերազմյան տարիներին սովետական կառավարության ներքին քաղաքականության մեջ կարևոր տեղ էին գրավում աշխատանքի լավագույն կազմակերպման և աշխատանքային կարգապահությունն ամրապնդելու խնդիրները։ Բանվոր-ծառայողներին աշխատանքի տեղավորելու և աշխատանքից ազատելու գործը կարգավորելու նպատակով ՍՍՀՄ Ժողովրդական կոմիսարների սովետը 1938 թվականի դեկտեմբերի 20-ին որոշում ընդունեց աշխատանքային գրքույկներ մտցնելու մասին, իսկ աշխատանքում աչքի ընկնողներին խրախուսելու համար ՍՍՀՄ Գերագույն սովետը սահմանեց՝ սոցիալիստական աշխատանքի հերոսի բարձր կոչում և «Աշխատանքային արիության համար» ու «Աշխատանքային գերազանցության համար» մեդալներ։

ՍՍՀՄ Ժողկոմսովետը, Համկ(բ)կ Կենտկոմը և ՀԱՄԿԽ-ն 1938 թվականի դեկտեմբերի 28-ին ընդունեցին «Աշխատանքային կարգապահությունը կարգավորելու, պետական սոցիալական ապահովագրության պրակտիկան բարելավելու և այդ գործում չարաշահումների դեմ պայքարելու միջոցառումների մասին» որոշումը։ Գերագույն սովետի նախագահությունը 1940 թվականի հունիսի 26-ին ընդունեց «Ութժամյա աշխատանքային օրվա, յոթնօրյա աշխատանքային շաբաթի անցնելու և ձեռնարկություններից ու հիմնարկներից բանվորների ու ծառայողների ինքնագլուխ հեռացումը արգելելու մասին» հրամանագիրը։ Վերոհիշյալ որոշումներն ու հրամանագրերը մեծապես նպաստեցին աշխատանքի արտադրողականության զգալի բարձրացմանը և հատկապես մեծ նշանակություն ունեցան աշխատանքային կարգապահության բարձրացման գործում։ Ինչպես ամբողջ Սովետական Միության, այնպես և Հայաստանի արդյունաբերական ձեռնարկություններում տեղի ուներ բանվորական ուժի հոսունություն։ Բանվորներից կամ ծառայողներից ոմանք ինքնագլուխ կերպով հա-

1 «ՍՄԿԿ-ն... բանաձևերում ու որոշումներում», մասն III, էջ 544։

ճախ աշխատանքը թողնում էին և անցնում այլ աշխատանքի։ Այդ երևույթը թուլացնում էր աշխատանքային կարգապահությունը և չէր ապահովում բանվորների անհրաժեշտ որակավորումը։

Կուսակցության ու կառավարության ձեռնարկած միջոցառումների շնորհիվ արագացվեցին ամբողջ արդյունաբերության, հատկապես պաշտպանական արդյունաբերության զարգացման տեմպերը։ ՍՍՀՄ արդյունաբերության համախառն արտադրանքը 1941 թվականի կեսերին արդեն հասել էր երրորդ հնգամյակով 1942 թվականի համար նախատեսված պլանի 86 տոկոսին։ Եթե ամբողջ արդյունաբերության արտադրանքի տարեկան աճը կազմում էր 13 տոկոս, ապա պաշտպանական արդյունաբերության աճը 39 տոկոս էր։ Կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը ամենօրյա ուշադրություն էին նվիրում կոլտնտեսությունների կազմակերպչական, տնտեսական ամրապնդմանը, բերքատվության բարձրացմանը, հատկապես հացահատիկային կուլտուրաների զարգացմանը։ Սովետական պետությանը՝ պատերազմի դեպքում քաղաքների բնակչությունն ու բանակն ապահովելու նպատակով անհրաժեշտ էր ունենալ հացահատիկի ռեզերվներ։ Դրա համար էլ կուսակցությունն ընդգծեց, որ գյուղատնտեսության հիմքը հանդիսանում է հացահատիկի արտադրությունը, որի վրա էլ կենտրոնացվեց գյուղատնտեսության բնագավառի բոլոր աշխատողների ուշադրությունը։

Հայաստանի կուսակցական, սովետական օրգանները, գյուղատնտեսության աշխատողները անդադրում պայքար էին մղում հանրապետությունում հացահատիկային կուլտուրաների ցանքատարածությունը ավելացնելու և բերքատվությունը բարձրացնելու համար։

Համաձայն ՍՍՀՄ Գերագույն սովետի 1939 թ. սեպտեմբերին ընդունված «Զինվորական ընդհանուր պարտականության մասին» օրենքի հանրապետությունում ևս ուժեղացվեցին ռազմա-պաշտպանական աշխատանքները։ Կուսակցական օրգաններին կից կազմակերպվեցին ռազմական բաժիններ, որոնք գլխավորում էին ռազմա-պաշտպանական միջոցառումները, օգնում ռազմական օրգաններին հաջողությամբ կազմակերպելու զորակոչը և հակաօդային պաշտպանությունը։

Սովետական Հայաստանի աշխատավորները, ոգեշնչված սոցիալիզմի կառուցման հաջողություններով, իրենց ջանքերը չէին խնայում ստեղծագործական աշխատանքով էլ ավելի բարձրացնելու սոցիալիստական հայրենիքի տնտեսական ու ռազմական հզորությունը։ Երրորդ հնգամյակի երեքնկես խաղաղ տարիների ընթացքում, Հայաստանի աշխատավորներն իրագործեցին այն բոլոր խնդիրները, որոնք առաջադրված էին ժողովրդական տնտեսության վերելքի համար։ Սովետական ժողովրդի եղբայրական համերաշխ մեծ ընտանիքում բարգավաճում էր հայ ժողովուրդը։

Սակայն ֆաշիստական Գերմանիայի ուխտադրուժ հարձակումը մեր սրբազան հայրենիքի վրա, ընդհատեց ամբողջ սովետական ժողովրդի, այդ թվում և հայ ժողովրդի խաղաղ ստեղծագործական աշխատանքը։

ԲԱԺԻՆ Ե

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ 1920 - 1940

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՀԻՆԳԵՐՈՐԴ

ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

1. ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ

Հայաստանում սովետական կարգերի հաստատումը նշանավորեց նոր դարաշրջանի սկիզբը հայ ժողովրդի ոչ միայն քաղաքական ու տնտեսական, այլև նրա հոգևոր կյանքում, մշակույթի ասպարեզում։ Սոցիալիստական հեղափոխության հաղթանակի շնորհիվ հայ ժողովրդի առջև բացվեցին ազգային վերածննդի լայն հորիզոններ՝ ազատ հոգևոր ստեղծագործության որևէ ճնշումից։

Սովետական Հայաստանի կուլտուրական շինարարության պատմությունը սոցիալիստական հասարակության կառուցման համար՝ հայ ժողովրդի մղած պայքարի բաղկացուցիչ մասն է։ Սոցիալիստական նոր մշակույթի ստեղծողը շահագործումից ազատագրված ժողովուրդն էր։ Տակավին սոցիալիստական հեղափոխության հաղթանակից առաջ Վ. Ի. Լենինը կանխատեսել էր, որ կապիտալիզմի ժամանակ գիտելիքներ ստանալու և մշակույթին հաղորդակից դառնալու հնարավորություններից զրկված ժողովրդական մասսաները, սովետական իշխանության պայմաններում, անսահման ձգտում կցուցաբերեն դեպի գիտությունն ու մշակույթը։ Վ. Ի. Լենինը նշում էր, որ սոցիալիստական հեղափոխությունը ժողովրդական մասսաներին դուրս կբերի ահավոր խավարից և կզարթեցնի միլիոնավոր ճնշված մարդկանց բանականությունը։

Սոցիալիստական հասարակության կառուցման նախապատերազմյան շրջանում (1920—1940) Սովետական Հայաստանում իրականացված կուլտուրական շինարարության պատմությունը բաժանվում է երկու փուլի։ Առաջին էտապը սկսվում է 1920 թվականի նոյեմբերին՝ Հայաստանում սովետական իշխանության հաղթանակի պահից և ավարտվում է 1930 թվականով, երբ հանրապետությունում մտցվեց ընդհանուր պարտադիր ուսուցում։

Ո՞րն էր առաջին էտապում կուլտուրական շինարարության հիմնական խնդիրը։ Ամենից առաջ ժողովրդական ամենալայն զանգվածների համար մշակույթը մատչելի դարձնելն էր, այլ խոսքով՝ նրա դեմոկրատացումը։ Հենց այդ նպատակով սովետական իշխանության հաղթանակի առաջին իսկ ամիսներին իրականացվեցին մի շարք միջոցառումներ։ Վերացվեց լուսավորության հին սիստեմը, դպրոցն անջատվեց եկեղեցուց, ազգայնացվեցին կուլտուր-լուսա-

վորական հիմնարկները և այլն։ Սկսվեցին անգրագիտության վերացման աշխատանքները, դրվեցին նոր, սովետական դպրոցի հիմքերը, ստեղծվեցին առաջին բարձրագույն ուսումնական հաստատությունները։ Դպրոցական շինարարության հաջողությունները հնարավորություն ընձեռեցին արդեն 1930 թվականին նախապատրաստելու բոլոր անհրաժեշտ պայմաններն ընդհանուր տարրական պարտադիր ուսուցման իրականացման համար։

Գաղափարական աշխատանքի բնագավառում կուսակցության քաղաքականության նպատակն էր՝ հաղթահարել անցյալի բուրժուական գաղափարախոսության ազդեցությունը, մասսաներին դաստիարակել սոցիալիզմի ոգով։

Կուլտուրական շինարարության առաջին էտապի վերջերին հիմնականում ձևավորվեց սովետահայ մտավորականությունը։ Գրականության և արվեստի բնագավառում կուսակցությունը ջանում էր սոցիալիստական հիմքի վրա համախմբել բոլոր ստեղծագործական ուժերը, հասնել գաղափարական միասնության գրականության և արվեստի բնագավառում։

Կուլտուրական շինարարության երկրորդ փուլը սկսվեց 1930 թվականների սկզբներից, որն ընդհատեց Հայրենական մեծ պատերազմը։ Այդ փուլի հիմնական խնդիրը սոցիալիստական նոր մշակույթի զարգացումն էր՝ ոչ միայն լայնությամբ, այլև խորությամբ։ Ընդհանուր տարրական ուսուցում ապահովելուց և ապա յոթնամյա պարտադիր ուսուցման անցնելուց զատ՝ հիմնականում այս շրջանում ավարտվեցին չափահաս բնակչության անգրագիտությունը վերացնելու աշխատանքները։ Սոցիալիստական շինարարության ծավալումը թափը առաջին պլանի վրա քաշեց ժողովրդական տնտեսության համար բարձրորակ մասնագիտական կադրեր պատրաստելու խնդիրը։ Դրան համապատասխան հանրապետությունում մեծ զարգացում ստացավ բարձրագույն ուսումնական հաստատությունների ցանցը, արագ տեմպերով սկսեց զարգանալ գիտությունը։ Իրենց ծաղկումն էին ապրում հայ գրականությունն ու արվեստը։

Հայաստանում սովետական իշխանության հաստատումից այն ժամանակ, երբ Սովետական Ռուսաստանն արդեն ուներ կուլտուրական շինարարության երամյա փորձ։ Հայաստանի աշխատավորները լայնորեն օգտագործում էին Սովետական Ռուսաստանի կուտակած փորձը՝ իհարկե հանրապետության առանձնահատկություններին համապատասխան։ Կուլտուրական շինարարության ասպարեզում ՌՍՖՍՀ-ի կողմից հայ ժողովրդին մատուցած օգնությունը, սակայն, չէր սահմանափակվում լոկ ձեռք բերած փորձի հաղորդմամբ։ Հարկ է նշել, որ Հայաստանում դեռևս սովետական իշխանության հաստատումից առաջ, ՌՍՖՍՀ-ում որոշակի աշխատանքներ էին կատարվել Ռուսաստանի մի շարք վայրերում սփռված հայ բնակչության կուլտուր-քաղաքական լուսավորության ուղղությամբ։ Այդ աշխատանքներն իրականացնում էր ազգությունների գործերի ժողովրդական կոմիսարիատին առընթեր հայկական գործերի կոմիսարիատը։ 1918—1919 թվականներին կոմիսարիատը հայ ազգաբնակչություն ունեցող Ռուսաստանի մի շարք քաղաքների (Աստրախան, Դոնի Ռոստով, Սարատով, Յարիցին, Արմավիր և այլն) տեղական սովետներին առընթեր ստեղծել էր իր բաժանմունքները և ներկայացուցչությունները, որոնք նշանակալից աշխատանք կատարեցին աշխատավոր հայ զանգվածների կուլտուր-քա-

ղաքական լուսավորության ասպարեզում։ Զգալի էր կոմիսարիատի կատարած աշխատանքը նաև Ռուսաստանում գտնվող հայ փախստականների մեջ։

Հայկական գործերի կոմիսարիատը հրատարակչական լայն աշխատանք էր ծավալել. նա իր տպագիր օրգաններն ուներ թե կենտրոնում և թե տեղերում։ 1918—1919 թվականներին կոմիսարիատը հրատարակեց 80 անուն գիրք՝ 400 հազար օրինակ ընդհանուր տպաքանակով։

Հայաստանում սովետական իշխանության հաստատումից հետո հայկական գործերի կոմիսարիատը դադարեցրեց իր աշխատանքները. նրան սպասարկող կուլտուրայի գործիչները հնարավորություն ստացան վերադառնալ Հայաստան և լծվել հայրենի երկրի վերածննդի ուղղությամբ սկիզբ առած աշխատանքներին։

Հայաստանում կուլտուրական հեղափոխությունը սկսվեց ժողովրդական տնտեսության քայքայվածության և աշխատավորների նյութական անասելի ծանր դրության պայմաններում։ Առաջին համաշխարհային պատերազմի և նրան հաջորդած դաշնակցական կառավարության տարիներին անկում էր ապրել ոչ միայն երկրի տնտեսական կյանքը, այլև քայքայվել էր առանց այն էլ ողորմելի լուսավորության սիստեմը։ Դպրոցների թիվը համեմատած անգամ ցարիզմի տիրապետության օրոք գոյություն ունեցող վիճակի հետ, խիստ կրճատվել էր։ Այսպես, եթե առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Հայաստանում գործում էր 459 դպրոց (446 տարրական, 6 ոչ-լրիվ միջնակարգ և 7 միջնակարգ), ապա 1919 թվականին դրանց թիվը կրճատվել և հասել էր 166-ի։ Դրեթե երկու անգամ պակասել էր աշակերտների քանակը։ Հայաստանի բնակչության 80 տոկոսից ավելին մնում էր անգրագետ։ Երկրում փաստորեն չկար և ոչ մի բարձրագույն ուսումնական հաստատություն։

Այսօրինակ ծանր պայմաններում, երիտասարդ սովետական հանրապետության աշխատավորների առջև ծառանում էր ժողովրդական տնտեսության արագ վերականգնման խնդիրը։

Սովետական իշխանության առաջնահերթ խնդիրներից մեկն էլ գաղափարախոսության բնագավառում հրամանատարական բարձունքների նվաճումն էր։ Պետական հին ապարատի ջախջախմանը զուգընթաց վերացվեցին նաև մշակույթի ասպարեզում պետական կառավարման հին օրգանները։ 1920 թվականի սկզբներին, ի թիվս այլ ժողովրդական կոմիսարիատների, ստեղծվեց Սովետական Հայաստանի լուսավորության ժողովրդական կոմիսարիատը, որի վրա էր դրված կուլտուրական շինարարության բոլոր ճյուղերի՝ դպրոցների և արտադպրոցական ուսուցման, մտավորական կադրերի պատրաստման, գրականության և արվեստի բնագավառում վարվելիք քաղաքականության և հրատարակչական գործի անմիջական ղեկավարումը։ Սովետական Հայաստանի առաջին լուսավորության ժողովրդական կոմիսար հաստատվեց Ա. Գ. Հովհաննիսյանը։

1920 թվականի դեկտեմբերից մինչև 1921 թվականի փետրվարն ընկած ժամանակամիջոցում, այսինքն սովետական իշխանության հաստատումից մինչև դաշնակների փետրվարյան ավանտյուրան, ՀՍՍՀ Հեղկոմն ու լուսավորության ժողովրդական կոմիսարիատը իրականացրին մի շարք միջոցառումներ, որոնք ուղղված էին մշակույթի դեմոկրատացման, կուլտուրական շինարա-

րության նոր օրգանների կազմակերպման, հայ ժողովրդի նոր, սոցիալիստական մշակույթի հիմքերը դնելու նպատակին։

1920 թվականի դեկտեմբերի 6-ին Հայաստանի Հեղկոմը դեկրետ ընդունեց պետական լեզվի մասին, որի համաձայն հանրապետության սահմաններում պետական լեզու ճանաչվեց հայերենը[1]։ Նույն թվականի դեկտեմբերի 17-ին Հեղկոմի և լուսժողկոմի դեկրետով ազգայնացվեցին կրոնական հաստատությունների պատկանող կուլտուր-կրթական հիմնարկությունները՝ դպրոցները, հնագիտական և ազգագրական թանգարանները, մատենադարաններն ու տպարանները[2]։ Այնուհետև վերացվեցին բոլոր մասնավոր կուլտուր-լուսավորական հիմնարկները, իսկ դրանց պատկանող շենքերն ու գույքը՝ ազգայնացվեցին[3]։ Այս բոլոր միջոցառումների շնորհիվ հանրապետությունում նախապայմաններ ստեղծվեցին կուլտուր-լուսավորական գործի վերակառուցման համար։ Վերացվեցին զեմստվոյական և քաղաքային կրթության բաժինները, իսկ նրանց ունեցվածքը հանձնվեց տեղական հեղկոմների համապատասխան բաժիններին։

Դպրոցներում արգելվեց որևէ կրոնական առարկայի դասավանդումը կամ կրոնական դավանանքի ծիսակատարումը։ Դրանով իսկ իրականացվեց դպրոցի անջատումը եկեղեցուց։ Այս միջոցառումը պարտադիր կերպով տարածվեց նաև ամերիկացիների հսկողության տակ գտնված որբանոցների ու դպրոցների վրա, որոնք աննշան թիվ չէին կազմում այդ պահին։ 1921 թվականի հունվարի 21-ին ՀՍՍՀ Հեղկոմը որոշում ընդունեց անապաստան երեխաների դրությունը բարելավելու մասին։ Հաշվի առնելով որբերի ծանր վիճակը և նրանց կենցաղային պայմանները բարելավելու ու աշխատանքով ապահովելու անհրաժեշտությունը, Սովետական Հայաստանի կառավարությունը ստեղծեց որբերի գծով արտակարգ կոմիսարի պաշտոն։ Պետական բոլոր հիմնարկները պարտավոր էին ամեն տեսակ օգնություն ցույց տալ արտակարգ կոմիսարին՝ որբերի դրությունը բարելավելու, նրանց ուսուցման գործը կազմակերպելու, աշխատանքով ապահովելու, մանկատները անհրաժեշտ գույքով ու մթերքով մատակարարելու և այլ հարցերում։ Որբերի գծով արտակարգ կոմիսար հաստատվեց Հանրապետության սոցիալիստական ապահովագրության ժողկոմ Դ. Տեր-Սիմոնյանը[4]։

Այս նույն ժամանակաշրջանին են վերաբերում այն առաջին միջոցառումները, որոնք ձեռնարկվեցին հանրապետությունում մասսաների կուլտուր-լուսավորական գործի կազմակերպման ուղղությամբ։ 1921 թվականի հունվարի 8-ին ՀՍՍՀ լուսավորության ժողկոմը հրաման արձակեց՝ գեղարվեստական ու հնաոիտական արժեք ունեցող հուշարձանները պաշտպանելու մասին։ Այդ նպատակով լուսժողկոմատին կից ստեղծվեց «Հնության և գեղարվեստանց պահպանման հանձնաժողով»[5]։ Կուլտուրական արժեքները պահպանելու ձգտումով էր թելադրված նաև Հայաստանի բոլոր գրադարանները ցուցակագրելու որոշումը։

1921 թվականի փետրվարի 5-ին ՀՍՍՀ Հեղկոմի և լուսժողկոմի կողմից ընդունված դեկրետով ազգայնացվեցին և հանրապետության լուսժողկոմատի

---

1 Տե՛ս «ՀՍՍՀ դեկրետների և հրամանների ժողովածու», պրակ 1, էջ 7։

2 Տե՛ս նույն տեղում, էջ 16։

3 Տե՛ս նույն տեղում, էջ 17։

4 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 113, ց. 47, գ. 34։

5 «ՀՍՍՀ դեկրետների և հրամանների ժողովածու», պրակ 1, էջ 58։

տնօրինությանը հանձնվեցին էջմիածնի կուլտուր-կրթական հաստատությունները՝ Մատենադարանը, թանգարանը և տպարանը։ Այդ հիմքի վրա էջմիածնում ստեղծվեց կուլտուր-պատմական ինստիտուտ, որի խնդիրն էր «Գիտական հիմքերի վրա դնել Հայաստանի ժողովրդական կուլտուրաների ուսումնասիրության գործը և միաժամանակ մասսաների սեփականություն դարձնել հնության այն բոլոր հիշատակները, որոնք գիտական ու գեղարվեստական նշանակություն ունեն և կարող են աղբյուր դառնալ կուլտուրական նոր արժեքների ստեղծման»[1]։

Կուլտուրական շինարարության բնագավառում սովետական իշխանության առաջին միջոցառումները այն հիմքն էին, որոնց շնորհիվ հետագայում ծաղկում ապրեց հայ ժողովրդի սոցիալիստական կուլտուրան։

2. ՍՈՎԵՏԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ՋԱՐԳԱՑՈՒՄԸ

Սոցիալիստական հեղափոխության հաղթանակը արմատապես փոխեց դպրոցի դերն ու նշանակությունը։ Բուրժուազիայի դասակարգային տիրապետության գործիքից այն վերածվեց հասարակության կոմունիստական դաստիարակության միջոցի. դպրոցը դարձավ հասարակական զարգացման հզոր գործոն։ Սովետական դպրոցը, հիրավի, վիթխարի ծառայություն մատուցեց ժողովրդական լայն զանգվածների կուլտուրական հետամնացության վերացման, բնակչության կուլտուրական մակարդակի բարձրացման գործին։ Կոմունիստական կուսակցությունը ի սկզբանե մեծ նշանակություն էր տալիս դպրոցներին՝ կոմունիստական հասարակարգ կառուցելու գործում։ Տակավին 1919 թվականին Ռ(բ)Կ VIII համագումարում ընդունված ծրագրում ընդգծված էր, որ «դպրոցը ոչ միայն պետք է լինի կոմունիզմի սկզբունքների հաղորդիչն ընդհանրապես, այլև պրոլետարիատի իդեական, կազմակերպական, դաստիարակչական ազդեցությունը աշխատավոր մասսաների կիսապրոլետարական և ոչ պրոլետարական խավերին հաղորդողը՝ կոմունիզմը վերջնականապես հաստատելու ընդունակ սերունդ դաստիարակելու նպատակով»[2]։

Կուսակցության ծրագրով ժողովրդական կրթության մերձավորագույն խնդիրն էր իրագործել մինչև 17 տարեկան երկսեռ բոլոր երեխաների ձրի և պարտադիր ընդհանուր ու պոլիտեխնիկական կրթությունը, ինչպես նաև «լիովին կենսագործել միասնական աշխատանքային դպրոցի սկզբունքները, դասավանդումը տանելով մայրենի լեզվով, երկու սեռի երեխաների միատեղ ուսուցումով, դպրոց, որ անպայման աշխարհիկ է, այսինքն ազատ է կրոնական որևէ ազդեցությունից, ուսուցումը սերտորեն կապակցում է հասարակական-արտադրական աշխատանքի հետ, պատրաստում է կոմունիստական հասարակության բազմակողմանիորեն զարգացած անդամներ»[3]։

Վ. Ի. Լենինը սովետական դպրոցի առաջ խնդիր էր դնում տեսության և պրակտիկայի միասնական հիմքի վրա պատրաստել կոմունիստական հասա-

1 «ՀՍՍՀ դեկրետների և հրամանների ժողովածու», պրակ 1, էջ 58։
2 «ՍՄԿԿ-ն... բանաձևերում ու որոշումներում», մասն I, էջ 530։
3 Նույն տեղում, էջ 531։

րակարգի կառուցման գիտակ և ակտիվ մասնակիցներ։ «Ձեր առաջ ծառացած է շինարարության խնդիրը,— ասում էր Վ. Ի. Լենինը,— և դուք կարող եք վճռել այն, միայն տիրապետելով ժամանակակից ամբողջ գիտությանը, կարողանալով կոմունիզմը սերտած պատրաստի ֆորմուլաներից, խորհուրդներից, դեղատոմսերից, առաջադրություններից, ծրագրերից վերածել ձեր անմիջական աշխատանքը միավորող կենդանի գործի, կոմունիզմը դարձնել ձեր գործնական աշխատանքի ուղեցույցը»[1]։

Վ. Ի. Լենինի ցուցումներն ու կոմունիստական կուսակցության ծրագրի պահանջները հիմք ծառայեցին նաև սովետական նոր դպրոցի գործունեության համար Հայաստանում։

Հայկական սովետական դպրոցի ստեղծումը ընթանում էր քայքայվածության ծանր պայմաններում։ Անբավարար էին դպրոցական շենքերը, չկային դասագրքեր, զգացվում էր դասատուների պակաս։ ՌՍՖՍՀ-ի լուսժողկոմ Ա. Վ. Լունաչարսկուն ուղարկած նամակում Հայաստանի Հեղկոմը հաղորդում էր, որ հանրապետությունը մեծ դժվարությունների առաջ է կանգնած ժողովրդական կրթության զարգացման ասպարեզում, որ դպրոցական շենքերի ու գույքի պակասը զգացվում է ոչ միայն գյուղերում, այլև բուն Երևանում։

Երիտասարդ սովետական հանրապետության կառավարությունը սակայն, ձեռք էր առնում հնարավոր բոլոր միջոցները ժողովրդական կրթության պահանջները բավարարելու համար։ Այդ նպատակով 1921 թվականի հոկտեմբերին Հայաստանի ժողովրդական կոմիսարների սովետը դեկրետ ընդունեց այլ գերատեսչությունների կողմից զբաղեցվող դպրոցական շենքերը անհապաղ ազատելու և դրանք ըստ իրենց նպատակին օգտագործելու համար լուսժողկոմատի տնօրինությանը հանձնելու մասին։

1921 թվականի հունվար-ապրիլ ամիսներին Հայաստանի շատ գավառներում տեղի ունեցան ուսուցչական համագումարներ։ Այդ համագումարներում հանրապետության Հեղկոմի և լուսժողկոմատի ղեկավար աշխատողները հանդես էին գալիս զեկուցումներով, շարադրում էին ժողովրդական լուսավորության ասպարեզում կուսակցության ծրագիրը, ուսուցչությանը կոչ անելով ակտիվորեն ներգրավվել սովետական նոր դպրոցի ստեղծման աշխատանքներին։

Սովետական իշխանության առաջին իսկ ամիսներին Հայաստանի Հեղկոմի անունով տեղերից ստացվում էին բազմաթիվ նամակներ, ժողովների բանաձևեր ու որոշումներ, որոնք արտահայտում էին աշխատավորների միահամուռ կամքը՝ պաշտպանել սովետական իշխանության ձեռնարկումները նոր դպրոց ստեղծելու ասպարեզում, ըստ կարելվույն օգնել ամբողջ ժողովրդի համար կարևոր այդ գործի իրագործմանը։ 1921 թվականի մայիսի 25-ին Քեչիշքենդում գումարված գյուղացիական համագումարում Դարալագյազի գավառի 33 գյուղերի ներկայացուցիչները նկատի առնելով գավառում դպրոցների բացակայությունը և խորապես գիտակցելով կրթության նշանակությունը, որոշում են առաջիկա սեպտեմբերին գավառի բոլոր գյուղերում բացել դպրոցներ։ Այդ որոշումը իրագործելու նպատակով համագումարի մասնակից գյուղական հեղ-

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 31, էջ 353։

կոմների ներկայացուցիչները պարտավորվում են մինչև սեպտեմբեր ամիսը ամեն մի գյուղում բացվելիք դպրոցների համար առանձնացնել մեկական շենք[1]։ Այդպիսով, ընդհանուր պարտադիր ուսուցման գաղափարը մասսաների մեջ ծագել էր նախքան այդ կապակցությամբ լուսավորության օրգանների կողմից համապատասխան որոշումներ ընդունելը։

Հաշվի առնելով դպրոցական շինարարության փորձը ՌՍՖՍՀ-ում, ՀՍՍՀ լուսժողկոմատը 1921 թվականին որոշեց Հայաստանում ստեղծել երկու հիմնական տիպի դպրոց՝ տարրական և յոթնամյա։ Այնուհետև, որոշում ընդունվեց կազմակերպել աշխատանքային դպրոցներ՝ արտադրության մեջ զբաղված երեխաների համար[2]։ Հայկական սովետական դպրոցի ստեղծման ուղղությամբ ձեռնարկված ռեֆորմը ավարտվեց դասավանդումը մայրենի լեզվով անցկացնելու և ձրի ուսուցում-մտցնելու մասին որոշումներով։ Այդ միջոցառումների շնորհիվ արդեն 1921—1922 ուսումնական տարում դպրոցների թիվը Հայաստանում հասավ 506-ի՝ 47,7 հազար աշակերտներով։ Հաջորդ տարիներին դպրոցների թիվը շարունակում էր աճել. 1925—1926 ուսումնական տարում հանրապետությունում գործում էր 758 դպրոց՝ 76,9 հազար աշակերտով[3]։

Ժողովրդական կրթության զարգացման հարցերը մշտապես գտնվում էին Հայաստանի կոմունիստական կուսակցության ուշադրության կենտրոնում։ 1923 թվականի մարտին Հայաստանի Կ(բ)Կ II համագումարը քննարկեց ժողովրդական լուսավորության մերձակա խնդիրները։ Համագումարը առաջադրեց ավելացնել ժողովրդական լուսավորության կարիքների համար տրվող բյուջետային հատկացումները։ Համագումարը նշեց նաև ուսուցիչների նյութական դրությունը բարելավելու անհրաժեշտությունը[4]։

1926 թվականի հունիսին Հայաստանի Կ(բ)Կ Կենտկոմի պլենումը քննարկեց դպրոցական շինարարության հարցը և որոշում ընդունեց քաղաքային և գյուղական դպրոցների հիմնական տիպերը սահմանելու վերաբերյալ։ Քաղաքներում նպատակահարմար համարվեց հաստատել եռաստիճան դպրոցներ՝ տարրական, յոթնամյա, լրիվ միջնակարգ։ Գյուղական վայրերում հիմնական տիպ ճանաչվեց տարրական դպրոցը. բացի դրանից, գյուղերում պիտի ստեղծվեին նաև գյուղական երիտասարդության (գյուղերիտ) դպրոցներ։

Ընդհանուր պարտադիր ուսուցումն իրականացնելու համար լուրջ նշանակություն էր ստանում կրթության նյութական բազայի ընդլայնումը՝ դպրոցական շենքերի կառուցումը և դրանց հագեցումը անհրաժեշտ գույքով ու սարքավորմամբ։ Հիմնական ուշադրությունը դարձվեց գյուղական շրջանների դպրոցական շինարարության վրա։ 1921—1928 թվականների ընթացքում հանրապետության գյուղական վայրերում կառուցվեց 108 դպրոցական շենք։ Դպրոցական շենքերի կառուցումը առանձնապես լայն ծավալ ընդունեց ընդհանուր տարրական կրթության անցնելու ժամանակաշրջանում։ 1929—1932 թվականներին հանրապետությունում կառուցվեց 383 դպրոցական շենք, դրանցից 379-ը գյուղերում։ Գյուղի սոցիալական վերափոխման տարիներին գյուղա-

1 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 113, ց. 12, գ. 4, թ. 57։
2 Տե՛ս նույն տեղում, ֆ. 122, ց. 1, գ. 375, թ. 71։
3 Տե՛ս «Խորհրդային Հայաստան. 1920—1925» (ժողովածու), էջ 292։
4 Տե՛ս Մ.Մ. հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 2, գ. 3, թ. 8—12։

ցիները հանձն էին առնում ամեն տեսակի դժվարություն և զրկանք, միայն թե օգնեին պետությանը՝ գյուղում կուլտուրան առաջ մղելու գործում, գյուղական ուսուցիչներին շրջապատում էին հոգատարությամբ և ուշադրությամբ։ 1932—1933 ուսումնական տարում հանրապետությունում ընդամենը գործում էր 1099 դպրոց, այդ թվում 782 տարրական, 302 յոթնամյա և 12 միջնակարգ։ Նրանցում սովորում էին 179 հազար աշակերտներ։ Դպրոցական ցանցի ընդլայնումը և ուսուցչական կադրերի զգալի ավելացումը հնարավորություն ընձեռեցին հանրապետությունում մտցնելու ընդհանուր պարտադիր տարրական ուսուցում։

1928 թվականի մայիսին լուսժողկոմատը մշակեց հանրապետությունում պարտադիր ուսուցում մտցնելու պլան։ Լուսժողկոմատը գտնում էր, որ անհրաժեշտ էր բարելավել կուլտուրական աշխատանքը աղգային փոքրամասնությունների շրջանում, վերացնել քաղաքի և գյուղի միջև եղած կուլտուրական մակարդակի սուր տարբերությունը, ինչպես նաև վերացնել դպրոցական ցանցում տղաների և աղջիկների ընդգրկվածության աստիճանի միջև գոյություն ունեցող տարբերությունը։ Պլանավորվում էր 1930—1931 ուսումնական տարվա ընթացքում մտցնել ընդհանուր պարտադիր տարրական ուսուցում[1]։

Կոմունիստական կուսակցության XVI համագումարը որոշեց արագացնել կուլտուրական շինարարության տեմպերը և ամբողջ երկրում անցնել ընդհանուր պարտադիր տարրական ուսուցման։ 1930 թվականի օգոստոսի 14-ին ՍՍՀՄ Կենտգործկոմը և Ժողկոմսովետը ընդունեցին որոշում «ընդհանուր պարտադիր տարրական կրթության մասին»։ Այդ որոշումը ինչպես տեղական, այնպես էլ պետական բյուջեների գծով նախատեսում էր նշանակալից չափով ավելացնել դպրոցական շինարարության վրա կատարվող հատկացումները։ Առաջարկվում էր տեղական սովետներին կից արագ կարգով ստեղծել ընդհանուր պարտադիր ուսուցմանը աջակցող հանձնաժողովներ[2]։

Ընդհանուր պարտադիր, տարրական ուսուցման ուղղությամբ կուսակցության և կառավարության որոշումները ժողովրդական կրթության հետագա զարգացման ծրագիրը դարձան նաև Սովետական Հայաստանի համար։ 1930 թվականի հոկտեմբերի 5-ին ՀՍՍՀ Ժողկոմսովետը որոշում ընդունեց հանրապետությունում ընդհանուր պարտադիր տարրական ուսուցում մտցնելու վերաբերյալ։

Ընդհանուր պարտադիր տարրական կրթության առաջին իսկ տարում հանրապետության գրեթե բոլոր շրջանների առաջին աստիճանի դպրոցներում երեխաների ընդգրկման պլանը կատարվեց։ Ամենուրեք, ընդհանուր պարտադիր տարրական ուսուցում մտցնելու շրջանում, ծնունդ առավ աշխատավոր զանգվածների ստեղծագործական մի նոր նախաձեռնություն, որն արտահայտվեց պարտադիր ուսուցման հասարակական ստուգատեսի կազմակերպմամբ։ Այդ միջոցառումը մեծապես օգնեց ժողովրդական կրթության օրգաններին՝ դպրոցական հասակի երեխաների հաշվառման գործում։ Ստուգատեսը բացատրական աշխատանք էր տանում բնակչության շրջանում, լրացուցիչ միջոց-

1 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 113, ց. 1, գ. 325, թ. 6, 6բ։

2 Տե՛ս «Директивы ВКП(б) и постановления Советского правительства о народном образовании», պրակ 1, էջ 102—105։

ներ էր գտնում և ամեն կերպ նպաստում էր պարտուսի հաջող իրականացմանը։ Մասսայական միջոցառման բնույթ ստացած պարտուսի հասարակական ստուգատես հանրապետությունում անցկացվեց 1931 թվականի սկզբներին։ Առաջին աստիճանի դպրոցներում ընդգրկված էր դպրոցական հասակի երեխաների 93 տոկոսը։

Ինչպես ընդհանուր պարտադիր կրթության նախապատրաստված էր հանրապետության տնտեսական ու կուլտուրական զարգացման ողջ ընթացքով։ Դպրոցական շինարարության ընդլայնումը և ուսուցչական կադրերի ավելացումը հնարավորություն ստեղծեցին ժողովրդական կրթության բնագավառում ձեռնամուխ լինել այդ կարևոր միջոցառման իրագործմանը։ Ընդհանուր պարտադիր տարրական կրթությունը Երևանում և հանրապետության մի շարք շրջաններում փաստորեն-արդեն իրականացվում էր 1920-ական թվականների վերջերից։

Ընդհանուր պարտադիր ուսուցման անցնելու կարևորագույն պայմաններից մեկը դպրոցների ապահովումն էր մանկավարժական կադրերով։ Ուսուցչական կադրերի հարցը սովետական իշխանության առաջ փաստորեն բարձրացել էր տակավին դպրոցի ստեղծման առաջին իսկ օրից։ 1922 թվականին Հայաստանի դպրոցներում ուսուցիչների քանակը պահանջվածներից երեք անգամ պակաս էր։ Բնականաբար, մանկավարժական կադրերի պրոբլեմը չէր հանգում լոկ ուսուցիչների թվի ավելացմանը։ Անհրաժեշտ էր հնարավորին չափ կարճ ժամանակամիջոցում բարձրացնել մանկավարժական կադրերի որակավորումը։ Սովետական իշխանության առաջին տարիներին դպրոցում հիմնական աշխատանքը կատարում էին ուսուցչական հին կադրերը։ Ուսուցչությունը՝ հայ հին մտավորականության այդ ամենաբազմաքանակ ջոկատը, սրտանց անցավ սովետական իշխանության կողմը, ազնվորեն ծառայելով հայրենի ժողովրդի լուսավորության գործին։ Հայաստանում սովետական իշխանության հաղթանակից ընդամենը քսան օր անց, ուսուցիչների միությունը Երևանում ժողով գումարեց և քննարկեց դեպի սովետական իշխանությունն ունենալիք վերաբերմունքի հարցը։ Ընդունված բանաձևում ուսուցիչների միությունը ողջունեց բանվորա-գյուղացիական դաշինքի վրա հենվող սովետական իշխանությանը և իր լիակատար պատրաստակամությունը հայտնեց՝ դպրոցական և հասարակական մարզերում նրա կողմից ծավալված ստեղծագործական աշխատանքներում ամբողջ ուժով աջակցել և համագործակցել նրան[1]։

1921 թվականի կեսերին տեղի ունեցավ Երևանի և Էջմիածնի գավառների դպրոցական աշխատողների համագումարը, որտեղ լսվեց լուսավորության ժողովրդական կոմիսար Ա. Հովհաննիսյանի զեկուցումը Սովետական Հայաստանում ժողովրդական կրթության խնդիրների մասին։ Զեկուցման առթիվ ընդունված բանաձևում համագումարի մասնակիցներն իրենց անսահման վստահությունը հայտնեցին սովետական իշխանությանը և խոստացան վճռականորեն պայքարել ինչպես բանվորա-գյուղացիական կառավարության հեղափոխական ընդհանուր պրակտիկայի լիակատար հաղթանակի, այնպես էլ ժողովրդական

1 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 122, գ. 747, թ. 2։

մասսաների լուսավորության գործը կոմունիստական աշխարհայացքի սկզբունքներով վերակառուցելու համար[1]։

Լուսավորության աշխատողների համագումարներ տեղի ունեցան նաև Դիլիջանի, Ղարաքիլիսայի, Զանգեզուրի և մյուս գավառներում։ Այդ համագումարներում ուսուցիչները ծանոթանում էին «Միասնական աշխատանքային դպրոցի կանոնադրությանը», նշում իրենց խնդիրները ժողովրդական լուսավորության ասպարեզում։ Ուսուցչական բոլոր համագումարները ողջունում էին սովետական իշխանությանը և պատրաստակամություն հայտնում աջակցել նրան երկրի առաջ ծառացած խնդիրները կենսագործելու համար։

1924 թվականին տեղի ունեցավ Հայաստանի ուսուցիչների առաջին համագումարը։ Համագումարում ՍՍՀՄ արտաքին ու ներքին դրության և մեր խընդիրների մասին զեկուցումով հանդես եկավ հանրապետության Ժողկոմսովետի նախագահ Ս. Լուկաշինը։ Համագումարի ընդունած բանաձևում շեշտված էր, որ Հայաստանի ուսուցչությունն ունի միայն մի կողմնորոշում՝ սովետական կողմնորոշում և որ նա անկեղծորեն կապված է բանվորա-գյուղացիական իշխանության հետ ու ցանկանում է ամբողջ ուժով լծվել սոցիալիստական շինարարության մեծ գործին[2]։ Վ. Ի. Լենինը ուսուցիչներին համարում էր կուսակցության գաղափարների ակտիվ տարածողներ, նոր հասարակարգի առաջավոր կառուցողներ։ «Այժմ մենք,— ասել է Վ. Ի. Լենինը քաղլուսվարների համառուսաստանյան խորհրդակցությունում 1920 թվականի նոյեմբերի 3-ին,— պետք է դաստիարակենք մանկավարժական ուսուցչական անձնակազմի նոր բանակ, անձնակազմ, որը պետք է սերտորեն կապված լինի կուսակցության հետ, նրա գաղափարների հետ, պետք է տոգորված լինի նրա ոգով, պետք է իր կողմը գրավի բանվորական մասսաներին, նրանց տոգորի կոմունիզմի ոգով, նրանց հետաքրքրի այն բանով, ինչ որ անում են կոմունիստները»[3]։

Ուսուցիչները լուսավորության մարզում իրենց ծավալած անձնազոհ և ազնիվ աշխատանքով արժանացան ազատագրված Հայաստանի ողջ բնակչության բանվորների ու գյուղացիների անսահման սիրուն և հարգանքին։ Անցյալում ուսուցիչը երբեք չէր շրջապատվել այնպիսի պատվով ու հարգանքով, ինչպես սովետական իշխանության տարիներին։ Վ. Ի. Լենինը մատնանշում էր, որ «Մեզ մոտ ժողովրդական ուսուցիչը պետք է դրված լինի այնպիսի բարձրության վրա, որի վրա նա երբեք կանգնած չի եղել, կանգնած չէ և չի էլ կարող կանգնած լինել բուրժուական հասարակության մեջ»[4]։

Սովետական իշխանության առաջին տարիներին գյուղում համարվելով մտավորականության գրեթե միակ ներկայացուցիչը, ուսուցիչը մեծ դեր էր խաղում բնակչության կուլտուրական ընդհանուր մակարդակի բարձրացման գործում, քաղաքական-լուսավորական աշխատանքներում։ Գյուղական համայնքները, իսկ հետագայում կոլտնտեսությունները նրանց տրամադրում էին մթերք, վառելիք, նրանց էին տալիս գյուղի ամենալավ բնակարանները։ 1928—

---

1 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 122, գ. 12, թ. 37։

2 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1924, № 296։

3 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 31, էջ 461։

4 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 33, էջ 551։

1932 թվականների ընթացքում տարրական դպրոցների ուսուցիչների աշխատավարձը բարձրացավ մոտավորապես երկու անգամ: Առաջավոր ուսուցիչների անունները հայտնի էին սովետական ողջ հասարակությանը: Դրանց թվում էին Ա. Տոնոյանը, Վ. Տեր-Սահակյանը, Ռ. Մեծատունյանը, Մ. Մխիթարյանը, Ա. Աղասյանը, Մ. Գրիգորյանը, Տ. Դրեպալոն, Խ. Սարուխանյանը, Մ. Սահակյանը և շատ ուրիշներ: 1930 թվականին Հայաստանի կառավարությունը հաստատեց հանրապետության վաստակավոր ուսուցչի պատվավոր կոչումը: Սովետական Հայաստանի առաջին պատվավոր ուսուցիչը դարձավ հայ նշանավոր մանկավարժներից մեկը՝ Սիմակ Սահակյանը:

Սովետական իշխանության առաջին տարիներին մանկավարժական կադրերը պատրաստվում էին Երևանի պետական համալսարանում, որտեղ 1921 թվականի հոկտեմբերին բացվեց մանկավարժական ֆակուլտետ: Բացի դրանից, տարբեր ժամանակներում հիմնվեցին մանկավարժական տեխնիկումներ Սրևանում, Լենինականում, Ստեփանավանում, Դորիսում: 1927—1928 ուսումնական տարում Հայաստանի դպրոցներում աշխատում էր 2598 ուսուցիչ, այսինքն չորս անգամ ավել, քան 1919 թվականին: Սակայն բոլոր ուսուցիչների մոտ 10 տոկոսը ուներ բարձրագույն կրթություն: 1929 թվականի մարտին Համ(բ)Կ Կենտրոնական կոմիտեն ընդունեց «Մանկավարժական բուհերում և մանկավարժական տեխնիկումներում դասատուների պատրաստման և վերապատրաստման մասին», իսկ նույն թվականի ապրիլին «Մանկավարժական բուհերի համալրման մասին» որոշումները, որոնցով կուսակցությունը պահանջում էր մանկավարժական կադրերի պատրաստման ամբողջ սիստեմի վերակառուցում այն հաշվով, որպեսզի հնարավոր դառնա պարտադիր ուսուցման բոլոր դպրոցների ապահովումը անհրաժեշտ քանակի ուսուցիչներով:

1930 թվականի օգոստոսին Հայաստանի Կ(բ)Կ ԿԿ որոշում ընդունեց Երևանի պետական համալսարանը վերակառուցելու և նրա բազայի վրա մի շարք ինքնուրույն ինստիտուտներ կազմակերպելու մասին: Հանրապետության լուսժողկոմատի տնօրինությանը հանձնվեց նոր կազմակերպված մանկավարժական ինստիտուտը: Լուսժողկոմատի 1930 թվականի հունիսի 5-ի որոշմամբ մանկավարժական ինստիտուտում բացվեցին նախադպրոցական, կենսաբանական, քիմիական, ֆիզիկո-տեխնիկական, երկրաբանա-աշխարհագրական, լեզվի ու գրականության և հասարակագիտության ֆակուլտետներ: Միջոցներ ձեռնարկվեցին նաև մանկավարժական տեխնիկումների ցանցի ընդլայնման ուղղությամբ: Մանկավարժական նոր տեխնիկումներ բացվեցին Դիլիջանում և Նոր Բայազետում: Լուսժողկոմատին կից կազմակերպվեցին դասատուների կատարելագործման կուրսեր: Նման կուրսեր ստեղծվեցին նաև մանկավարժական ինստիտուտում: Այդ միջոցառումները տվեցին իրենց արդյունքները: 1932 թվականին հանրապետության դպրոցներում արդեն աշխատում էր 4500 ուսուցիչ: Բնականաբար, վերը նշված միջոցառումները բարձրագույն և մասնագիտական կրթությամբ ուսուցչական կադրեր պատրաստելու ուղղությամբ ծավալված գործի սկիզբն էին միայն: Մանկավարժական կադրերի պատրաստումը շարունակում էր ետ մնալ Սովետական Հայաստանի օրավուր աճող պահանջներից:

* * *

Ժողովրդական տնտեսության վերականգնման հաջող ավարտը՝ սոցիալիստական ինդուստրացման ու գյուղատնտեսության սկսվող կոլեկտիվացումը, նոր խնդիրներ էին դնում կուլտուրական շինարարության առաջ։ Եթե կուլտուրական հեղափոխության առաջին էտապում հիմնական խնդիրը կուլտուրայի դեմոկրատացումն էր, հայ ժողովրդի աշխատավոր ամենալայն զանգվածների համար կուլտուրային և կրթությանը հաղորդակցելու պայմանների ստեղծումը, ապա այժմ, սոցիալիստական շինարարության պայմաններում, անհրաժեշտ էր ավարտել չափահաս բնակչության անգրագիտության վերացումը, ընդհանուր պարտադիր տարրական կրթությունից անցնել յոթնամյա կրթության, առավել մեծ չափով բավարարել հանրապետության ժողովրդական տնտեսության բարձրորակ մասնագիտական կադրերի նկատմամբ ունեցած պահանջները։ Այս խնդիրների կատարումը նշանավորեց կուլտուրական հեղափոխության վճռական հաջողությունները։

1932 թվականին հանրապետությունում լիովին իրագործված էր ընդհանուր պարտադիր տարրական կրթությունը, որի հաջող իրագործումը թույլ տվեց անցընել յոթնամյա ուսուցման։

Արդեն 1933—1934 ուսումնական տարում հանրապետությունում գործում էր 377 յոթնամյա դպրոց, որոնք կազմակերպվել էին տարրական դպրոցների հիման վրա։ Այդ ժամանակաշրջանում քաղաքներում ընդհանուր պարտադիր յոթնամյա կրթության անցումը արդեն ավարտվել էր։

Ընդհանուր պարտադիր տարրական կրթության իրականացումը և անցումը յոթնամյա ուսուցման, պահանջում էին ուժեղացնել դպրոցական կրթության նյութական բազան։ 1933—1940 թվականների ընթացքում հանրապետությունում կառուցվեցին 460 դպրոցական շենքեր՝ 97 հազար աշակերտական տեղով. այդ դպրոցներից 399-ը կառուցվեցին գյուղերում[1]։ Հասարակական խոշոր տնտեսությունների վրա հիմնված կոլտնտեսային կարգը արտադրության իր առաջավոր տեխնիկայով, գիտության ներդրմամբ, փորձադաշտերով և փորձակայաններով, լաբորատորիաներով, գյուղի աշխատողներին կուլտուրական ավելի մեծ պահանջներ էին ներկայացնում։ Կոլտնտեսությունները մշտապես զգում էին ֆերմաները, բրիգադները, արտադրական խոշոր այլ տեղամասերը ղեկավարելու ընդունակ և ուսուցված մարդկանց կարիքը։ Դրանով էլ բացատրվում է գյուղում դպրոցական շինարարության ուժեղ թափը։ Յոթնամյա կրթության ծավալմանը զուգընթաց քաղաքներում և գյուղական վայրերում միաժամանակ աճում էր լրիվ միջնակարգ դպրոցների թիվը։ 1940—1941 ուսումնական տարում հանրապետությունում կար 1155 դպրոց, որոնցից 255 տարրական, 572 յոթնամյա և 325 միջնակարգ։ Բոլոր տիպի դպրոցներում սովորում էր 326.617 աշակերտ։ Տվյալ ժամանակաշրջանում գյուղական վայրերում գործում էր 1020, այդ թվում՝ 235 տարրական, 551 յոթնամյա և 234 միջնակարգ դպրոց[2]։

---

1 Տե՛ս «Культурное строительство Армянской ССР», էջ 14։

2 Տե՛ս նույն տեղում, էջ 16։

Դպրոցական սիստեմի զարգացումը ընթանում էր ոչ միայն լայնությամբ։ 1930-ական թվականների առաջին կեսը ժողովրդական կրթության սովետական սիստեմի հետագա զարգացման ժամանակաշրջանն էր։ Այդ գործում մեծ դեր խաղացին կուսակցության ու կառավարության որոշումները ժողովրդական կրթության, մասնավորապես դպրոցի մասին։ 1931 թվականի սեպտեմբերի 5-ին հրապարակվեց կուսակցության Կենտկոմի «Տարրական և միջնակարգ դպրոցների մասին» որոշումը, որի մեջ զարգացած էին կուսակցության ծրագրային դրույթները պոլիտեխնիկական կրթության վերաբերյալ, նշված էր, որ դպրոցական ուսուցման միակցումը արտադրության և հասարակական աշխատանքի հետ դարձյալ շարունակում էր մնալ որպես հիմնական խնդիր։ Որոշումը արմատական թերություն էր համարում այն հանգամանքը, որ դպրոցական ուսուցումը դեռ չի ապահովում հանրակրթական գիտելիքների անհրաժեշտ պաշար և անբավարար է լուծում տեխնիկումների ու բարձրագույն դպրոցների համար միանգամայն գրագետ կոնտիգենտ պատրաստելու խնդիրը[1]։ Որոշումը հանրապետությունների ժողովրդական լուսավորության կոմիսարիատներին պարտավորեցնում էր կազմակերպել ծրագրերի գիտական մշակում, ապահովել սիստեմատիզացված գիտելիքների (մայրենի լեզու, մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա, աշխարհագրություն, պատմություն) ճշտապես ուրվագծված շրջանակը։ Այդ որոշմանը համապատասխան 1932 թվականի սեպտեմբերի մեկից Հայաստանի դպրոցներն ուսումնական տարին սկսեցին նոր ծրագրերով ու դասագրքերով։

Ժողովրդական կրթության զարգացման գործում կարևոր նշանակություն ունեցան կուսակցության Կենտկոմի «Ուսումնական ծրագրի և տարրական ու միջնակարգ դպրոցների ռեժիմի մասին» (1932) և ՍՍՀՄ Ժողկոմսովետի ու Համկ(բ)կ Կենտկոմի «ՍՍՀՄ-ում տարրական և միջնակարգ դպրոցի ստրուկտուրայի մասին» (1934) որոշումները։ Այս որոշումների, ինչպես նաև 1936 թվականին Համկ(բ)կ Կենտկոմի կողմից ընդունված «Լուսժողկոմատի սիստեմում եղած մանկաբանական խեղաթյուրումների մասին» որոշման համաձայն, ամբողջ Սովետական Միության մեջ, այդ թվում նաև Հայաստանում, ձեռնարկվեց ուսումնական ամբողջ պրոցեսի վերակառուցում։ Մի կողմ նետվեցին բուրժուական դպրոցից մեխանիկորեն ընդօրինակված ուսուցման այնպիսի մեթոդներ, ինչպիսիք էին «Դալտոն-պլանը», «լաբորատոր-բրիգադային մեթոդը» և այլն։ Ստեղծվեց մանկավարժական գիտությունների ինստիտուտ, հաստատվեցին դպրոցների հետևյալ երեք տիպերը՝ տարրական (4 դասարան), ոչ-լրիվ միջնակարգ (7 դասարան) և միջնակարգ (10 դասարան)։ Դպրոցը սովորողին պետք է տար կայուն գիտելիքներ, նրանց մոտ ձևավորեր մատերիալիստական աշխարհայացք, լայնացներ աշակերտների հասարակական-քաղաքական մտահորիզոնը և նրանցից պատրաստեր գրագետ, կուլտուրական մարդիկ։

Անկասկած է, որ այդ աշխատանքը դրական դեր խաղաց դպրոցական կրթության զարգացման գործում։

---

1 Տե՛ս «КПСС о культуре, просвещении и науке», փաստաթղթեր։ Ժողովածու, Մ., 1963, էջ 352—353։

Հայաստանի ժողովրդական կրթությանը մեծ վնաս հասցրեցին 1936—1938 թվականների մասսայական անհիմն ռեպրեսիաները։ Անհատի պաշտամունքի կամայականությունների հետևանքով ռեպրեսիաների ենթարկվեցին Հայաստանի կուլտուրական շինարարության ականավոր գործիչներ Աշոտ Հովհաննիսյանը, Դրաստամատ Տեր-Սիմոնյանը, Արտավազդ Եղիազարյանը, Լևոն Ասիրյանը, Ներսիկ Ստեփանյանը, որոնք տարբեր ժամանակներում եղել էին հանրապետության ժողովրդական լուսավորության կոմիսարներ, ինչպես նաև կուլտուրական ճակատի անվանի աշխատողներ Երվանդ Խոջամիրյանը, Վարդուշ Տարախչյանը և շատ ուրիշներ։

Սովետահայ դպրոցը իր ժամանակի համար կատարեց պատմական վիթխարի կարևորության խնդիր։ Ընդհանուր պարտադիր յոթնամյա կրթության իրականացման շնորհիվ առաջընթաց կարևոր քայլ արվեց մի ամբողջ ժողովրդի կուլտուրական զարգացման բնագավառում։ Հայաստանի դպրոցների շրջանավարտները, իրենց կրթությունը շարունակելով տեխնիկումներում և բուհերում, լրացնում էին ժողովրդական մտավորականության շարքերը։ Իրենց բարոյական բարձր հատկությունները, համոզվածության ուժը Սովետական Հայաստանի դպրոցների շրջանավարտները շուտով ի հայտ բերեցին Հայրենական մեծ պատերազմի ժամանակ, անձնազոհ կերպով մարտնչելով ռազմաճակատներում։ Երիտասարդ սերնդի դաստիարակմանը մեծ ծառայություններ մատուցեցին մանավանդ Կիրովականի օրինակելի դպրոցը, Ստեփանավանի շրջանի Գյուլագարակ գյուղի ոչ-լրիվ միջնակարգ և նույն շրջանի Կալինինո գյուղի ռուսական միջնակարգ դպրոցները, Մեղրիի միջնակարգ դպրոցը, Երևանի Շահումյանի և Խանջյանի անվան դպրոցները, Լենինականի №6 և այլ դպրոցներ։ 1939 թվականին մի խումբ լավագույն ուսուցիչներ պարգևատրվեցին ՍՍՀՄ շքանշաններով։ Լենինի շքանշանով պարգևատրվեցին Հայկական ՍՍՀ վաստակավոր ուսուցիչ Սիմակ Սահակյանը, Աշտարակի տարրական դպրոցի ուսուցչուհի Մարիամ Գրիգորյանը, Թումանյանի միջնակարգ դպրոցի ուսուցչուհի Հայկուշ Պողոսյանը և Ֆիոլետովոյի միջնակարգ դպրոցի ուսուցչուհի Կլավդիա Բաբրովան։

3. ՄԱՍՍԱՅԱԿԱՆ ԱՆԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՑՈՒՄԸ

Հայաստանում կուլտուրական շինարարության երկրորդ կարևոր խնդիրը չափահաս բնակչության անգրագիտության վերացումն էր։ Այդ խնդրի հաջող լուծմամբ էր պայմանավորված սոցիալիստական շինարարության ընթացքը, քանի որ, ինչպես ընդգծում էր Վ. Ի. Լենինը «անգրագետ երկրում կոմունիստական հասարակություն կառուցել չի կարելի[1]»։ Բնականաբար, երիտասարդ սովետական իշխանության առաջ անմիջապես ծառացավ անգրագիտության վերացման խնդիրը։ Անգրագիտության դեմ պայքար ծավալելու նախաձեռնությունը պատկանում էր հանրապետության աշխատավոր զանգվածներին։ Դեռևս մինչև Սովետական Հայաստանի կառավարության կողմից այդ առթիվ դեկրետ ընդունելը, արդեն 1921 թվականի հունվարի սկզբներին, Հայաստանի

1 Վ. Ի. Լենին, երկեր, հատ. 31, էջ 362։

արհմիությունների բյուրոն որոշում էր ընդունել անգրագիտության վերացման մասին[1]։

1921 թվականի սեպտեմբերի 21-ին ՀՍՍՀ ժողովրդական կոմիսարների սովետն ընդունեց դեկրետ անգրագիտության վերացման մասին, որը հանրապետության ամբողջ չափահաս բնակչությանը պարտավորեցնում էր մայրենի լեզվով գրագիտություն ձեռք բերել քաղաքի և նրա տեղական օրգանների կողմից կազմակերպվելիք հատուկ դպրոցներում[2]։ Անգրագիտության վերացման գծով աշխատանքները ղեկավարելու նպատակով հանրապետության լուսժողկոմատին առընթեր ստեղծվեց անգրագիտության վերացման արտակարգ հանձնաժողով, որի մեջ մտան Հայաստանի ԼԿԵՄ ԿԿ-ի, արհմիությունների, կարմիր բանակի քաղբաժնի, կանանց մեջ աշխատանքի գծով հանձնաժողովի և Հայաստանի կոմկուսակցության ԿԿ-ի ագիտացիայի բաժնի աղղային փոքրամասնությունների ենթաբաժնի ներկայացուցիչները։

Նկատի ունենալով աշխատանքների մեծ ծավալը, արտակարգ հանձնաժողովը որոշեց առաջին հերթին անգրագիտության վերացման աշխատանքները տանել 16—35 տարեկան բանվորների և գյուղացիների շրջանում։ Գրագիտության ուսուցումը կատարվում էր անգրագիտության վերացման կետերում, ուսուցման ժամկետ էր սահմանված 3—6 ամիս։ 1922—1923 ուսումնական տարում Հայաստանում գործում էին անգրագիտության վերացման 316 կետ՝ 6400 սովորողներով, 1923—1924 ուսումնական տարում՝ 429 կետ՝ 85000 սովորողներով[3]։

Անգրագիտության վերացումը հսկայական ներդրում էր պահանջում, մինչդեռ հանրապետության կառավարությունը ի վիճակի չէր այդ գործի համար հատկացնել բոլոր անհրաժեշտ միջոցները։ Նման պայմաններում հատկապես կարևոր նշանակություն էր ստանում սովետական լայն հասարակայնության ակտիվ մասնակցության դերը անգրագիտության վերացման գործում։ Այդ նպատակով 1924 թվականին ստեղծվեց անգրագիտության վերացմանն աջակցող ընկերություն (հետագայում վերանվանվեց «Կորչի անգրագիտությունը» ընկերություն)։ 1923 թվականին կազմակերպված «Կորչի անգրագիտությունը» համառուսաստանյան ընկերության օրինակով կանոնադրություն ընդունվեց ընկերության բջիջների մասին։ Նոր կազմակերպված ընկերության նախագահությունը կոչով դիմեց իշխանության տեղական օրգաններին, արհմիութենական և հասարակական մյուս կազմակերպություններին, բոլոր գիտակից քաղաքացիներին և մատնանշեց ընկերության խնդիրները, նրա կարիքների համար Վ. Ի. Լենինի անվան ֆոնդի ստեղծումը և այլն։ Ընկերությունը կոչ էր անում քաղաքներում և գյուղերում կազմակերպել բջիջներ, ամենուրեք ստեղծել ընկերության բաժանմունքներ, գրագիտության կետեր, սեփական ուժերով ձեռնամուխ լինել երկրում գրագիտության տարածման գործին։ Վ. Ի. Լենինի հայտնի ավանդներից մեկը՝ անգրագիտության վերացումը՝ ասված էր կոչում, աշխատավորներից պահանջում էր ինքնագործունեություն[4]։

1 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 122, ց. 1, գ. 617, թ. 6։

2 Տե՛ս «ՀՍՍՀ դեկրետների և որոշումների ժողովածու», պրակ II, էջ 63—64։

3 Տե՛ս «Խորհրդային Հայաստան. 1920—1925» (ժողովածու), էջ 309։

4 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1924, № 50։

Ընկերության աշխատանքների առաջին իսկ շաբաթներին նրան անդամագրվեցին հազարավոր աշխատավորներ՝ լուսավորության, կուլտուրայի ու արվեստի աշխատողներ, արտադրության առաջավորներ։ Հետագայում ընկերության կենտրոնական խորհրդի մեջ մտան ՀՍՍՀ Կենտգործկոմի քարտուղար Տուբեն Դաշտոյանը, որն ընտրվեց կենտրոնական խորհրդի նախագահ, գրող Ստեփան Զորյանը, հանրապետության հասարակական գործիչներ Կարո Ղազարյանը, Սերիկ Դավթյանը, Վարդուշ Տարախչյանը և ուրիշներ։ Ընկերության բջիջներ հիմնվեցին շրջաններում, խոշոր ձեռնարկություններում։ Աշխատանք ծավալվեց անգրագետների և կիսագրագետների հաշվառման ուղղությամբ։ Որոշվեց լիկկայանների ցանցում ընդգրկել 16—39 տարեկան անգրագետներին։ Անգրագիտության վերացման առաջին լուրջ հաջողությունները արտացոլում գտան բնակչության համամիութենական մարդահամարում, որն անցկացվեց 1926 թվականին։ Եթե 1921—1923 թվականներին Հայաստանում ամեն մի 1000 մարդուն ընկնում էր 169 գրագետ, ապա 1926 թվականի մարդահամարի տվյալներով գրագետների թիվը հասել էր 252-ի։ Այդ աճը լուրջ նվաճում էր, քանի որ այն ձեռք էր բերվել ընդամենը չորս տարում և այն էլ երկրի համար չափազանց ծանր ժամանակաշրջանում։ Անգրագիտության վերացման վերոհիշյալ արդյունքները ցույց են տալիս, որ սովետական իշխանության առաջին իսկ տարիներին այդ գործում էական շրջադարձ է կատարվել Հայաստանում։

Սակայն ամբողջությամբ վերցրած դրությունը շարունակում էր մնալ անմխիթար։ Նույն 1926 թվականի համամիութենական մարդահամարի տվյալներով Հայաստանում ապրում էր 16—39 տարեկան 312 844 մարդ։ Դրանցից գրագետ էին 120 944-ը, այսինքն 38,6 տոկոսը։ Հայաստանի քաղաքային բնակչության գրագիտության տոկոսը հավասար էր 51-ի, այդ այն դեպքում, երբ գյուղական բնակչության միայն 19,2 տոկոսն էր գրագետ[1]։ Եթե նկատի ունենանք, որ 20-ական թվականների վերջերին Հայաստանի բնակչության գերակշռող մասը գյուղացիությունն էր, ապա պարզ կդառնա, որ անգրագիտության վերացման պրոբլեմը ամենից առաջ վերաբերում էր գյուղին։ Բայց անգրագիտության վերացման խնդիրը միայն զուտ կուլտուրական նշանակություն չուներ. այն քաղաքական կարևոր միջոցառում էր և ուներ նաև կարևորագույն տնտեսական նշանակություն։ 20-ական թվականների սկզբներին արդեն օրակարգի հարց էր դարձել գյուղի սոցիալիստական վերափոխումը։ Բայց գյուղական մասսաների կուլտուրական ցածր մակարդակի պայմաններում դժվար էր իրականացնել գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման պլանը։ Դրա համար էլ կուսակցության XV համագումարը, գյուղի մասին իր որոշման մեջ, մասնավորապես ընդգծում էր գյուղում սոցիալիստական կուլտուրայի զարգացումն ուժեղացնելու և գյուղացիների գրագիտական մակարդակը բարձրացնելու անհրաժեշտությունը։

1928 թվականին լուսավորության ժողովրդական կոմիսարիատը «Կորչի անգրագիտությունը» ընկերության հետ միասին մշակեց Հայաստանում անգրագիտության վերացման հնգամյա պլանը։ Որոշվեց լիկկայանների ցանցում

---

1 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 23, գ. 48, թ. 52։

ընդգրկել 16՝—49 տարեկան հասակի անգրագետներին՝ մոտավորապես 215.000 մարդ։

Առաջին հնգամյակի հենց սկզբին մասսաների ստեղծագործական ինքնադործունեությունը առաջ քաշեց գրագիտության համար ծավալվող պայքարի մի նոյնպիսի հիանալի ձև, ինչպիսին կուլտուրական արշավն էր։ Այդ շարժման նախաձեռնողը լենինյան կոմերիտմիությունն էր։ Կուլտուրական արշավը առաջին անգամ և հաջող կերպով իրականացվեց Ներքին Վոլգայի (Սարատով) երկրամասում։ Սարատովցիների փորձը, որն արժանացել էր Համկ(բ)Կ կենտկոմի պաշտպանությանն ու հավանությանը, շուտով լայն տարածում գտավ ամբողջ երկրում, այդ թվում նաև Հայաստանում։ 1928 թվականի հոկտեմբերին հանրապետությունում անցկացվեց «անգրագիտության վերացման շաբաթ», որը շուտով վերաճեց կուլտուրայի մարտիկների մեծ ջոկատի լայն շարժման։ Սրանք հասարակական աշխատողներ էին, որոնք իրենց սեփական նախաձեռնությամբ և առանց պետական միջոցների, կոմպլեկտավորում էին դպրոցներ և լիկկայաններ, սովորեցնում էին գրագիտություն, հիմնում գրադարաններ և ակումբներ, անցկացնում զրույցներ և դասախոսություններ։ Սկիզբ առնելով քաղաքներում՝ կուլտարշավը աստիճանաբար թափանցեց նաև գյուղ, իր մեջ ընդգրկելով ուսուցիչներին, կոմերիտականներին, նորաստեղծ կոլտնտեսությունների ակտիվը։ Այդ շարժման թափը այն արդյունքը տվեց, որ 1928—1932 թվականներին անգրագիտությունը վերացնելու կայանների ցանցում արդեն սովորում էր 500 հազար մարդ, այսինքն հանրապետության բնակչության գրեթե 60 տոկոսը։

Բայց անգրագիտության վերացման ընթացքը ավելի երկարատև եղավ, քան այդ նախատեսում էին պլանավորող օրգանները։ Անգրագիտության վերացման գծով աշխատանքը հիմնականում ծավալվեց հանրապետությունում ընդհանուր պարտադիր տարրական կրթություն մտցնելու ժամանակաշրջանում։ Այսպիսով, Հայաստանում կուլտուրական շինարարության առաջին փուլում դրվեցին անգրագիտության վերացման հիմքերը, որոնք հնարավորություն տվեցին սոցիալիստական շինարարության հետագա տարիներին մեկընդմիշտ ազատվելու անցյալից ժառանգություն մնացած այդ ծանր բեռից։

Հայաստանում կուլտուրական շինարարության առաջին փուլում մեծ ուշադրություն էր նվիրվում ազգային փոքրամասնությունների կուլտուրական մակարդակի բարձրացմանը։ Հայաստանի բնակչությունը ազգային տեսակետից ավելի միատարր էր, քան Անդրկովկասի մյուս հանրապետությունների՝ Վրաստանի և Ադրբեջանի բնակչությունը։ 1926 թվականի մարդահամարի տվյալներով Հայաստանի բուն բնակիչները՝ հայերը, կազմում էին բնակչության 84,6 տոկոսը, ադրբեջանցիները՝ 8,8, քրդերը՝ 1,7, հույներն ու ասորիները՝ 0,3 տոկոսը։ Հայաստանում ապրող ադրբեջանական բնակչության ավելի քան 94 տոկոսը անգրագետ էր։ Ազգային փոքրամասնությունների կուլտուրական հետամնացությունը բացատրվում է նրանով, որ մինչև սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում ազգային փոքրամասնությունների լեզվով չի գործել և ոչ մի դպրոց։ Քրդերը չունեին իրենց գիրը, իսկ ադրբեջանական բնակչության կրթության գործը հանձնված էր մահմեդական մզկիթներին։

Իր գոյության առաջին իսկ օրից սովետական իշխանությունը կուլտուր-լուսավորական լայն աշխատանք ծավալեց Հայաստանի ազգային փոքրամասնությունների մեջ։ Այդ ուղղությամբ ձեռնարկված առաջին միջոցառումներից մեկը դպրոցներում ուսուցումը մայրենի լեզվով տանելն էր, հայերենը որպես պետական լեզու, դպրոցներում դասավանդվում էր իբրև պարտադիր առարկա[1]։ Մայրենի լեզվով կրթություն ստանալու հնարավորության ընձեռումը ազգային փոքրամասնությունների համար ստեղծեց ամենաանհրաժեշտ պայմանները նրանց ազգային մշակույթի զարգացման համար առհասարակ։ Ազգային փոքրամասնությունների մեջ տարվող կուլտուր-լուսավորական աշխատանքները ղեկավարելու համար 1922 թվականին հանրապետության լուսժողկոմատին կից ստեղծվեց ազգային փոքրամասնությունների բյուրո։ 1924 թվականին այդ նույն նպատակով Հայաստանի Կ(բ)Կ ԿԿ-ի ագիտացիայի բաժնին կից ստեղծվեց ազգային փոքրամասնությունների կոլեգիան։ Սովետական իշխանության առաջին տարիներին այդ օրգանները բացառական մեծ աշխատանք անցկացրին Հայաստանի ազգային փոքրամասնությունների շրջանում, աշխատավոր զանգվածներին հասցնելով սովետական իշխանության և կոմունիստական կուսակցության նպատակներն ու խնդիրները, երկրում կուլտուրական հեղափոխության իրականացման պլանը։ Այդ նպատակով գումարվում էին ազգային փոքրամասնությունների աշխատավորական համագումարներ, խորհրդակցություններ, որտեղ կոնկրետ միջոցառումներ էին մշակվում ազգային փոքրամասնությունների կուլտուրական մակարդակը բարձրացնելու համար։ Եթե Հայաստանում զգացվում էր ուսուցչական կադրերի խիստ պակաս, ապա ազգային փոքրամասնությունների լեզվով աշխատող ուսուցիչներ ուղղակի շատ քիչ էին։ Սովետական իշխանության առաջին տարիներին հանրապետության ադրբեջանական դպրոցների համար ուսուցիչներ հրավիրվում էին Սովետական Ադրբեջանից։ Ազգային փոքրամասնությունների լեզվով չկային դասագրքեր, չկար նրանց մեջ կատարված աշխատանքի փորձ։ Բոլոր այդ դժվարություններն արգելակում, խոչընդոտում էին ժողովրդական լուսավորության օրգանների գործունեությանը։ Բայց, չնայած այդ բոլոր դժվարություններին, ազգային փոքրամասնությունների միջև կատարվող աշխատանքը չէր ընդհատվում։ Այն իր արտահայտությունը գտավ առաջին հերթին դպրոցական շինարարության ասպարեզում։ Այսպես, 1923 թվականին Հայաստանում արդեն կար 56 ադրբեջանական դպրոց, 1925 թվականին՝ 96, 1926 թվականին՝ 114։ Մի քանի շրջաններում ստեղծվեցին հայ-ադրբեջանական խառը դպրոցներ։

1926—1927 թվականներին իրականացվեց անցումը ադրբեջանական նոր այբուբենին՝ հիմնված լատինականի վրա։ Այդ միջոցառումը, անկասկած, նպաստեց թե աշակերտների և թե անգրագետ ադրբեջանցիների կողմից գրագիտության արագ յուրացմանը։ Մեծ աշխատանք կատարվեց քրդական այբուբենի ստեղծման ուղղությամբ։ 1929 թվականի մարտ ամսին այդ աշխատանքը ավարտվեց։ Այնուհետև հրավիրվեց քրդական մտավորականության ներկայացուցիչների և ուսուցիչների խորհրդակցություն, որը քննարկեց նոր այբուբենի տարածման ծրագիրը։ 1931 թվականին Երևանում բացվեց քրդական մանկա-

1 Տե՛ս «ՀՍՍՀ դեկրետների և հրամանների ժողովածու», պրակ 2, էջ 20։

վարժական-տեխնիկում, որը Անդրկովկասում քրդական դպրոցների համար ուսուցիչներ պատրաստող առաջին և միակ ուսումնական հաստատությունն էր։ Տեխնիկումի շրջանավարտներն աշխատանքի էին անցնում ոչ միայն Հայաստանի քրդական դպրոցներում, այլև հարևան հանրապետություններում։

Հանրապետությունում ընդհանուր պարտադիր տարրական ուսուցում մըտցնելուց հետո ազգային փոքրամասնությունների դպրոցների ցանցը շարունակում էր աճել։ 1930—1931 ուսումնական տարում ազգային փոքրամասնությունների տարրական դպրոցներում սովորում էին բոլոր ադրբեջանցի երեխաների 90 տոկոսը, քուրդ երեխաների՝ 82 և ասորի ու հույն երեխաների՝ 88 տոկոսը[1]։ 1934—1935 ուսումնական տարում ազգային փոքրամասնությունների դպրոցներում լրիվ ընդգրկված էին համապատասխան տարիքի բոլոր երեխաները։ Իր հերթին այն նպաստում էր հանրապետության ազգային փոքրամասնությունների մեջ անգրագիտությունը վերացնելու գործին։

Հետագայում, սկսած 1930-ական թվականների կեսերից, ազգային փոքրամասնությունների մեջ տարվող կուլտուրական աշխատանքը դադարեց պրոբլեմ լինելուց։

Հայաստանի քուրդ և ադրբեջանական բնակչության զարգացումը առաջ էր գնում հայ ժողովրդի ընդհանուր կուլտուրական զարգացմանը համընթաց։ Դրան նպաստեցին ընդհանուր պարտադիր կրթություն մտցնելը և չափահաս բնակչության անգրագիտության վերացման հաջողությունները։ Ադրբեջանական և քրդական դպրոցները առավելապես պահպանվեցին Հայաստանի այն շրջաններում, որտեղ բնակվում էին այդ ազգությունները։ Հայկական մանկավարժական ինստիտուտում կազմակերպվեց ադրբեջանական բաժին, որը դարձավ Հայաստանի ադրբեջանական բնակչության համար կադրերի պատրաստման հիմնական դարբնոցը։ Այսպիսով, շնորհիվ Հայաստանի կոմունիստական կուսակցության և կառավարության ուշադրության, կուլտուրական շինարարության արդեն առաջին փուլում հիմնականում լուծվեց ազգային փոքրամասնությունների կուլտուրական շինարարության խնդիրը։

* * *

Կուլտուրական շինարարության բնագավառի մյուս նվաճումը չափահաս բնակչության անգրագիտության վերացման ավարտումն էր։ 1933—1936 թվականների ընթացքում — երբ անգրագիտության վերացման ու ընդհանուր պարտադիր կրթություն մտցնելու ուղղությամբ ծավալված աշխատանքը արդեն տվել էր իր պտուղները և զգալապես փոխել հանրապետության կուլտուրական դեմքը, անգրագիտության վերացման ցանցում ընդգրկված էին 240 հազարից մի փոքր ավելի մարդ։ Փոխվում էր լուսավորության աշխատանքի բնույթը։ Գրագիտության տարրական հիմունքների յուրացումը ավելի սերտորեն զուգակցվեց քաղաքական լուսավորության, արտադրական գիտելիքների պրոպագանդման հետ։ Լուսավորական աշխատանքում հատուկ տեղ սկսեց գրավել գյուղը, որը կանգնել էր կոլեկտիվացման ուղու վրա։ 1930-ական թվականնե-

1 Տե՛ս Մ[ի] հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 17, գ. 110, թ. 35։

րին Հայաստանում անգրագիտության վերացումը անց էր կացվում «Գրագետ կոլտնտեսականի համար» լոզունգի ներքո։ Այդ նշանակում էր պայքար արտադրության բարձր կուլտուրայի, տեխնիկայի յուրացման, ագրոնոմիական գիտելիքների ու հասարակական արտադրության նկատմամբ նոր վերաբերմունք դաստիարակելու համար։

Անգրագիտության վերացման աշխատանքներն ուղեկցվում էր խրճիթ-ընթերցարանների, կարմիր անկյունների, իսկ ավելի ուշ՝ կոլտնտեսային ակումբների և կուլտուրայի տների կազմակերպմամբ։ Եթե 1923 թվականին Հայաստանում կային ընդամենը 31 ակումբներ (դրանցից գյուղերում՝ 6-ը), ապա 1940 թվականին նրանց թիվը հասավ 897-ի (դրանցից գյուղական վայրերում՝ 797-ը)[1]։ 1940 թվականին հանրապետությունում կար 908 մասսայական գրադարան, այդ թվում 784-ը գյուղական վայրերում։ Անգրագիտության վերացման աշխատանքներն ընթանում էին նաև ակումբներում ու գրադարաններում։ Սովետական իշխանության հաղթանակի սկզբից մինչև 1939 թվականը Հայաստանում ուսուցման ցանցի միջոցով գիտելիքներին հաղորդակից դարձավ բնակչության ճնշող մեծամասնությունը։

Այսպիսով, 1930-ական թվականների վերջերին Սովետական Հայաստանը դարձել էր բարձր գրագիտության երկիր։

Անգրագիտության վերացումը կայուն հիմքերի վրա դրվեց, երբ մտցվեց ընդհանուր պարտադիր ուսուցումը։ Դպրոցական կրթության և անգրագիտության վերացման ցանցի զուգակցումը հիմնականում պայման հանդիսացան բնակչության մասսայական անգրագիտության վերացման համար։

Հանրապետության բնակչության գրագիտության չափի դինամիկան սովետական իշխանության տարիներին կարելի է պատկերել հետևյալ աղյուսակով[2]։

Գրագետների տոկոսը 9—49 տարեկան հասակ ունեցողների մոտ

Քաղաքային և գյուղական բնակչությունը	Ամբողջ բնակչությունը	Տղամարդիկ	Կանայք
1897	9,2	14,5	2,9
1926	38,7	53,7	22,7
1939	83,9	92,7	74,7

1936 թվականին հանրապետությունում վերացվեց «Կորչի անգրագիտությունը» ընկերությունը։ Իրականացավ այն, որի մասին ասել էր Վ. Ի. Լենինը, 1921 թվականի հոկտեմբերին «Կորչի անգրագիտությունը» ընկերության գալիք վերացումը՝ համարելով սովետական իշխանության կատարած ամենամեծ հրաշքներից։

Պատմական կարճ ժամանակամիջոցում հայ ժողովուրդը, նվաճելով քաղաքական ազատության և անկաշկանդ զարգացման իրավունք, հաղթահարեց դարավոր չարիքը և թոթափեց խավարի շղթաները։

1 Տե՛ս «Культурное строительство Армянской ССР», Երևան, 1962, էջ 194։

2 Տե՛ս «Итоги Всесоюзной переписи населения 1959 г. Армянская ССР», М., 1963, էջ 27։

4. ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴՊՐՈՑԻ ՍՏԵՂԾՈՒՄԸ: ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ

Սովետական իշխանության առաջին տարիները Հայաստանում բարձրագույն դպրոցների ստեղծման ժամանակաշրջան էր: Բարձրորակ մասնագիտական կադրերի պատրաստումը քաղաքական ու տնտեսական մեծ նշանակություն ունեցող խնդիր էր, որի հաջող լուծումը հնարավորություն կտար վերածնվող հանրապետության ժողովրդական տնտեսությունն ապահովել մասնագիտական կադրերով: Մյուս կողմից, բարձրորակ մասնագետների պատրաստումը այն կարևոր ուղիներից մեկն էր, որի շնորհիվ ստեղծվելու էր բանվորների և գյուղացիների ծոցից ելած հայ աշխատավոր մտավորականությունը:



Հ. Մանանդյան

Խոշոր իրադարձություն էր Երևանի պետական համալսարանի հիմնադրումը: 1920 թվականի դեկտեմբերի 17-ին լուսավորության ժողովրդական կոմիսարի հրամանով կազմվեց մի հանձնաժողով, որին հանձնարարված էր ամենակարճ ժամկետում մշակել նոր, ժողովրդական համալսարանի հիմունքները:

1920 թվականի դեկտեմբերի 28-ին լուսժողկոմատը Երևանի ժողովրդական համալսարանի հիմնադրման համար ստեղծված հանձնաժողովի աշխատանքը համարեց ավարտված և որոշում ընդունեց համալսարանի կազմակերպման մասին: Միաժամանակ հաստատվեց Երևանի ժողովրդական համալսարանի ժամանակավոր կանոնադրությունը, որտեղ ասված էր. «Երևանի ժողովրդական համալսարանը բանվորա-գյուղացիական ազատ դպրոց է, որ մասսաների սեփականություն է դարձնում բնական և սոցիալական գիտություններն ու նրանց ուսումնասիրության մեթոդները, նպաստելով կյանքի գիտակցական վերաշինությանը կոմունիստական աշխարհայացքի հիմունքներով»[1]:

Առաջին հերթին համալսարան էին ընդունվում բանվորներն ու չքավոր գյուղացիները: Ուսուցումը համալսարանում անվճար էր: Հետագայում, հանրապետության կառավարության հատուկ որոշմամբ, համալսարանում հաստատվեց ուսանողական 50 թոշակ[2]:

---

1 «ՀՍՍՀ դեկրետների և հրամանների ժողովածու», պրակ 1, էջ 35:

2 Տե՛ս նույն տեղում, էջ 17:

Հիմնադրման տարին Երևանի համալսարանն ուներ երկու ֆակուլտետ՝ բնագիտական և հասարակագիտական։ Համալսարանի առաջին ռեկտորն էր նշանավոր պատմաբան Հակոբ Մանանդյանը։ Համալսարանի հանդիսավոր բացումը տեղի ունեցավ 1921 թվականի հունվարի 23-ին, իսկ 25-ին սկսվեցին սիստեմատիկ պարապմունքները։

1921—1922 ուսումնական տարում համալսարանում սովորում էր 255 ուսանող, իսկ հաջորդ տարին նրանց թիվը հասավ 463-ի, 1925—1926 ուսումնական տարում՝ 1160-ի, 1929—1930 ուսումնական տարում՝ ավելի քան 1300-ի։ Համալսարանի բանվոր և գյուղացի ուսանողների թիվը դանդաղ էր աճում։ 1929—1930 ուսումնական տարում բանվոր և գյուղացի ուսանողների թիվը կազմում էր ուսանողության ընդհանուր քանակի 14 տոկոսը միայն։

Հանրապետության ժողովրդական տնտեսության սկսվող վերականգնումը նոր խնդիր է դնում համալսարանի առջև։ Դրանց համապատասխան՝ բնագիտական (որը շուտով վերակազմվեց գյուղատնտեսական ինստիտուտի), տեխնիկական, արևելագիտական (հետագայում վերակազմվեց պատմագրական ֆակուլտետի), մանկավարժական և սովետական շինարարության։ Հիշյալ ֆակուլտետները հետագայում ինքնուրույն ինստիտուտների ստեղծման հիմք հանդիսացան։ 1922 թվականին Ժողովրդական կոմիսարների սովետի որոշմամբ Երևանի համալսարանին միացվեց քաղաքային բժշկական դպրոցը և կազմակերպվեց համալսարանի բժշկական ֆակուլտետը[1]։

Հանրապետության կուլտուրական կյանքի կարևոր միջոցառումներից էր բանվորական ֆակուլտետների (բանֆակների) ստեղծումը։ Առաջին բանֆակը կազմակերպվեց 1923 թվականին՝ Երևանի ժողովրդական համալսարանին կից։

Բանֆակների նշանակությունը, իհարկե, չէր սահմանափակվում միայն բարձրագույն դպրոց ընդունվելու համար բանվորական կադրեր պատրաստելով։ Իրենց գոյության տարիներին բանֆակները պատրաստեցին սովետական, կուսակցական, տնտեսական և արհմիութենական բազմաթիվ աշխատողներ, արտադրության ղեկավարներ։

1923 թվականին Երևանի բանֆակն ընդունվեցին 226, իսկ 1928—1929 ուսումնական տարում՝ 365 մարդ։ Բանֆակին կից գործում էր ադրբեջանական սեկտորը։ Բանֆակը իր առաջին շրջանավարտները (28 հոգի) տվեց 1925—1926 ուսումնական տարում, իսկ 1927—1928 ուսումնական տարում՝ 48 մարդ։

1930 թվականին բանֆակի ցանցը վերակազմավորվեց։ Բանֆակների ուսումնական պլաններում և ծրագրերում փոփոխություններ մտցվեցին, որոնք ապահովելու էին նրանց համապատասխան թեքումն ու մասնագիտացումը։ Այսպես, Երևանի բանֆակի երեկոյան բաժնին տրվեց ինդուստրիալ-տեխնիկական, ցերեկայինին՝ գյուղատնտեսական, իսկ ադրբեջանական սեկտորին՝ հասարակագիտական թեքում։ Լենինականի բանֆակում կազմակերպվեցին ինդուստրիալ-տեխնիկական և գյուղատնտեսական թեքում ունեցող բաժանմունքներ, ինդուստրիալ-տեխնիկական բաժանմունքներ ստեղծվեցին նաև Ալավերդու և Ղափանի բանֆակներում[2]։ Այսպիսով. բանֆակներն ստանում էին մասնա-

1 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 112, ց. 1, գ. 5, թ. 28։

2 Տե՛ս նույն տեղում, ֆ. 113, ց. 3, գ. 1068, թ. 146։

գիտական թեքում, որը հնարավորություն էր ստեղծում նրանց շրջանավարտների համար՝ իրենց ընտրած մասնագիտությամբ աշխատել ժողովրդական տնտեսության տարբեր հյուղերում։

1928 թվականից սկսած ավելացավ բանֆակներում սովորող գյուղացիների թիվը, ընդ որում առաջին հերթին ընդունվում էին բատրակները։ Նույն թվականի մայիսին Լենինականի բանֆակին կից կազմակերպվեցին եռամսյա դասընթացներ՝ բատրակներին բանֆակներն ընդունելու համար նախապատրաս-



Երևանի պետական համալսարանի շենքը

տելու նպատակով[1]։ Նման դասընթացներ կազմակերպվեցին նաև Երևանի բանֆակին առընթեր։ 1929 թվականին Հայաստանի Կ(բ)Կ ԿԿ-ն որոշում ընդունեց՝ բանֆակների միջոցով մասնագետների պատրաստումը բարելավելու մասին։ Որոշումը բանֆակների առաջ խնդիր էր դնում՝ արտադրության գիտական հիմունքների ուսումնասիրման միջոցով նպաստել բանվոր-ունկնդիրների արտադրական որակավորման բարձրացմանը[2]։ Կուլտուրական շինարարության առաջին փուլում Հայաստանում կային 11 բանֆակներ՝ ավելի քան 2600 ունկնդիրներով։ 1923—1932 թվականներին Հայաստանի բանֆակներն ավարտեցին ավելի քան 3000 բանվոր ու գյուղացի։ Նրանցից շատերը մնացին արտադրության մեջ, իսկ մնացածները շարունակեցին կրթությունը բարձրագույն ուսումնական հաստատություններում։

---

1 Տե՛ս ՄԼԻ հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 11, գ. 27, թ. 2։

2 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 19, գ. 86, թ. 7։

Կուլտուրական շինարարության առաջին փուլում շարունակվում էր Հանրապետության բարձրագույն կրթության սիստեմի զարգացումը, որն սկսվել էր Երևանի ժողովրդական համալսարանի հիմնադրմամբ։ Հանրապետության երկրորդ բարձրագույն ուսումնական հաստատությունը դարձավ Երևանի կոնսերվատորիան, որը հիմնադրվեց 1923 թվականին։ Այն կազմակերպվեց 1921 թվականի դեկտեմբերին ստեղծված երաժշտական ստուդիայի հիման վրա։ Հայաստանում երաժշտական կրթության կազմակերպման գործում մեծ դեր խաղաց նշանավոր կոմպոզիտոր և մանկավարժ Ռոմանոս Մելիքյանը։ Երևանի կոնսերվատորիայում ստեղծվեցին նվագախմբային, խմբերգային և օպերային դասարաններ։

1928 թվականին Երևանում բացվեց անդրկովկասյան անասնաբուժական-անասնաբուծական ինստիտուտը։

Սոցիալիստական ինդուստրացման, հանրապետությունում արդյունաբերական նոր ճյուղերի ստեղծման հաջողությունները, ինչպես նաև գյուղատնտեսության կոլեկտիվացման սկիզբը բարձրագույն դպրոցի առաջ դնում էին նոր խնդիրներ։ Այդ հանգամանքն իր արտացոլումը գտավ Հայաստանի բարձրագույն և միջնակարգ դպրոցի վերակառուցման մեջ, որը ձեռնարկվեց 1930 թվականի հունիսին Անդրֆեդերացիայի կառավարության որոշման համաձայն, Երևանի համալսարանի համապատասխան ֆակուլտետների հիման վրա կազմակերպվեցին գյուղատնտեսական, շինարարական (հետագայում պոլիտեխնիկական), առևտրա-կոոպերատիվ, մանկավարժական և բժշկական ինստիտուտները[1]։ Պետական համալսարանը լուծարքի ենթարկվեց։ Առանձին ինստիտուտների ստեղծումը միանգամայն ճիշտ և ժողովրդական տնտեսության պահանջներից բխող միջոցառում էր։ Սակայն հաշիվ թե ճիշտ էր պետական համալսարանի լուծարքը։ Համալսարանական կրթությունը հատուկ տեղ էր գրավում բարձրագույն կրթության սիստեմում։ 1933 թվականին մանկավարժական և առևտրա-կոոպերատիվ ինստիտուտների հիման վրա համալսարանը կրկին վերաստեղծվեց։

Բարձրագույն կրթության վերակառուցումը, որն իրականացվեց 1930 թվականին, հանրապետությունում առաջ բերեց բուհերի ճյուղավորված ցանց և կանխորոշեց բարձրագույն կրթության զարգացումը Հայաստանում։ 1930 թվականին ստեղծված բարձրագույն կրթության սիստեմը, չնչին փոփոխություններով, պահպանվել է մինչև այժմ։ 1931—1932 ուսումնական տարում հանրապետությունում գործում էր ութ բարձրագույն ուսումնական հաստատություն, որոնցում սովորում էին 3400 ուսանող[2]։ 1928—1932 թվականների ընթացքում Հայաստանի բուհերը պատրաստեցին մոտ 1500 մասնագետներ, այդ թվում՝ 430 մանկավարժ, 300 բժիշկ, 120 ինժեներ, 300 գյուղատնտես, 100 անասնաբույժ և անասնաբուծ, 250 տնտեսագետ, 10 արվեստի աշխատող[3]։ Հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունները, այսպիսով, դարձան ժողովրդական տնտեսության համար կադրեր պատրաստող հիմնական դարբնոցները։

1 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 113, ց. 1, գ. 346, թ. 2։

2 Տե՛ս «Культурное строительство Армянской ССР», էջ 163։

3 Տե՛ս «Социалистическое строительство Армянской ССР», էջ 114։

Կուլտուրական շինարարության առաջին փուլում Հանրապետությունում լայնորեն զարգացավ միջնակարգ մասնագիտական դպրոցների ցանցը։ 1920-ական թվականներին Հայաստանում ստեղծվեցին առաջին միջնակարգ-տեխնիկական հաստատությունները՝ ինդուստրիալ, գեղարվեստական, արդյունաբերական (Երևանում) և երեք մանկավարժական տեխնիկումներ։ Վերջիններից մեկը ադրբեջանական էր։ Սովետական իշխանության առաջին տարիներին ուսումնական այդ հաստատությունները ժողովրդական տնտեսությանը տվեցին միջին որակավորման հարյուրավոր մասնագետներ։ Բայց 20-ական թվականների վերջին, երբ Հանրապետությունում սկսեց հաջողությամբ զարգանալ արդյունաբերությունը և առաջին քայլերը կատարվեցին կոլեկտիվացման ուղղությամբ, վերոհիշյալ տեխնիկումներն իրենց պրոֆիլով և մասնագիտությամբ այլևս չէին կարող բավարարել Հայաստանի ժողովրդական տնտեսության, հատկապես նրանում նոր զարգացող ճյուղերի հարաճուն պահանջներին։ Այդ նպատակով 1928—1930 թվականներին միջնակարգ մասնագիտական կրթության ողջ սիստեմը վերակառուցման ենթարկվեց։ Խնդիրը հետևյալն էր. նախ զարգացող արդյունաբերության հիմնական ճյուղերի պրոֆիլին համապատասխան պետք էր ընդլայնել ուսումնական այդ հաստատությունների ցանցը, այնուհետև անհրաժեշտ էր ուսումնական ամբողջ պրոցեսը սերտորեն կապել արտադրության հետ և երրորդ, կարևոր խնդիր էր նաև միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում ամենից առաջ ապահովել բանվորների և գյուղացիների երեխաների ընդունելությունը։

Այդ վերակառուցումից հետո միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների՝ տեխնիկումների ցանցը նշանակալից չափով ընդլայնվեց։ 1931—1932 ուսումնական տարում Հանրապետությունում կար 64 տեխնիկում և միջնակարգ մասնագիտական այլ ուսումնական հաստատություններ, որոնցում սովորում էր 6700 մարդ։ Ի լրացումն եղածի՝ Երևանում, Լենինականում, Կիրովականում, Ստեփանավանում, Գորիսում, Էջմիածնում, Դիլիջանում սրտեղծվեցին նորերը՝ քիմիական, մեխանիկական, երեք շինարարական, լեռնա-մետալուրգիական, լեռնա-հետախուզական, ճանապարհային, երկու բժշկական և այլ միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններ։ Համեմատաբար նեղ մասնագիտացում ունեցող տեխնիկումների կազմակերպումը բխում էր ժողովրդական տնտեսության ամենատարբեր ճյուղերը մասնագիտական կադրերով ապահովելու անհրաժեշտությունից։ Հետագայում այդ տեխնիկումներից մի քանիսը խոշորացվեցին, միացվեցին։ Բայց արդյունաբերության արագ զարգացման և գյուղատնտեսության ծավալվող կոլեկտիվացման շրջանում նրանք հիմնականում կատարեցին իրենց խնդիրը։

* * *

Հանրապետության արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացումը, ժողովրդական տնտեսության մի շարք նոր ճյուղերի ստեղծումը, սովետական պետական և կուսակցական ապարատի զարգացումն ու կատարելագործումը պահանջում էին մեծ թվով մասնագիտական կադրեր՝ ընդունակ նոր խնդիրների մակարդակին համապատասխան ղեկավարելու արդյունաբե-

րական ձեռնարկություններ, կառույցներ, կոլտնտեսություններ և սովխոզներ, կուլտուրայի և արվեստի օբյեկտներ։

1932—1933 ուսումնական տարում հանրապետությունում կային ինը բարձրագույն ուսումնական հաստատություն՝ 3500 ուսանողով և 65 տեխնիկում ու միջնակարգ մասնագիտական հաստատություններ, որտեղ ընդգրկված էին ավելի քան 7600 սովորող[1]։

Ընդհանուր պարտադիր տարրական ուսուցման իրագործումը և անցումը յոթնամյա կրթության՝ առաջադրում էին պատրաստել ավելի մեծ թվով բարձր որակավորման մանկավարժական կադրեր, ինչպես նաև բարձրացնել արդեն աշխատող դասատուների որակավորումը։ Այդ նպատակով ձեռնարկվեցին մի շարք կոնկրետ միջոցառումներ։ 1935 թվականի հունվարին Երևանում և Լենինականում կազմակերպվեցին երեկոյան մանկավարժական ինստիտուտները, իսկ նույն թվականի սեպտեմբերին սկսեց գործել Երևանի ռուսական մանկավարժական ինստիտուտը։ Ավելացվեց Երևանի պետական համալսարանի հումանիտար ֆակուլտետներն ընդունվողների թիվը, ֆակուլտետներ, որոնք հիմնականում պատրաստում էին մանկավարժական կադրեր։ Այսպես, 1933—1940 թվականների ընթացքում հանրապետության դպրոցները աշխատանքի եկան Հայաստանի բուհերն ավարտած 1950 մանկավարժ։ Այդ նույն ժամանակամիջոցում տեխնիկումներն ու միջնակարգ մասնագիտական մյուս հաստատությունները պատրաստեցին լուսավորության ավելի քան 5000 աշխատող։

Սովետական բարձրագույն դպրոցի զարգացման համար մեծ նշանակություն ունեցավ սովետական կառավարության և կուսակցության Կենտկոմի 1936 թվականի հունիսի 23-ի «Բարձրագույն ուսումնական հաստատությունների աշխատանքի և բարձրագույն դպրոցի ղեկավարման մասին» որոշումը, որը կանոնավորեց բարձրագույն դպրոցներն ընդունվելու հարցերը, նշեց կայուն ուսումնական ծրագրեր ստեղծելու և ուսուցման այսպես կոչված «բրիգադա-լաբորատորային» մեթոդի վերացման անհրաժեշտությունը։ Այդ որոշումից հետո Հայաստանի բուհերում խոշոր աշխատանք կատարվեց։ Մեծ ուշադրություն դարձվեց ուսանողների արտադրական պրակտիկայի կազմակերպմանը։ 1940 թվականին հանրապետության բուհերն ընդունվեցին 4400 ուսանող, իսկ տեխնիկումները՝ 4300։ Հայաստանի բուհերում 1940—1941 ուսումնական տարում սովորում էր 11.120 ուսանող, իսկ տեխնիկումներում՝ մոտ 9000։ Հայաստանի բուհերը ժողովրդական տնտեսության համար պատրաստում էին բազմապիսի մասնագետներ՝ քիմիկոսներ, մեխանիկներ, էներգետիկներ, շինարարներ, ճարտարապետներ, հիդրոշինարարներ, երկրաբաններ, ֆիզիկոսներ, լուսավորության, արվեստի, կուլտուրայի և առողջապահության աշխատողներ, գյուղատնտեսական մասնագետներ և այլն։ Հասարակության սոցիալական կառուցվածքում տեղի ունեցած արմատական փոփոխությունների շնորհիվ, Հայաստանի բուհերում առավելապես սովորում էին բանվորների ու գյուղացիների երեխաները, որոնք ստանալով բարձրագույն կրթություն՝ համալրում էին սովետահայ մտավորականության շարքերը։

---

1 Տե՛ս «Культурное строительство Армянской ССР», էջ 63։

1930-ական թվականներին հանրապետության բուհերում արդեն աշխատանքի անցան դասախոսներ, որոնք իրենց կրթությունը ստացել էին սովետական իշխանության օրոք։ Կազմակերպվեց պրոֆեսորա-դասախոսական բարձրորակ անձնակազմ՝ կազմված ինչպես հին դպրոցի ներկայացուցիչներից, այնպես էլ սովետական երիտասարդ մասնագետներից։

Բարձրագույն կրթության զարգացման ասպարեզում ձեռք բերված ակընհայտ հաջողություններին զուգընթաց Հայաստանում կային նաև թերություններ։

Բարձրագույն կրթությանը զգալի հարված հասցրին անհատի պաշտամունքի ընդհանուր մթնոլորտը և հատկապես 1936—1938 թվականների կամայականությունն ու ռեպրեսիաները, երբ ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի շատ աշխատողների հետ մեկտեղ անօրինական ռեպրեսիայի ենթարկվեցին նաև ոչ քիչ թվով գիտական աշխատողներ, հանրապետության բուհերի դասախոսներ և ղեկավարներ։

5. ԳԻՏԱԿԱՆ ՄՏՔԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Սովետական Հայաստանում կուլտուրական շինարարության առաջին շրջանը բնորոշվում է նաև նրանով, որ այդ տարիներին դրվեց գիտության զարգացման, գիտական հիմնարկների կազմակերպման սկիզբը։

Այս ուղղությամբ կատարված առաջին քայլը Էջմիածնի կուլտուր-պատմական ինստիտուտի ստեղծումն էր։ Հանրապետության առաջին խոշոր գիտական կենտրոնը ՀՍՍՀ գիտության և արվեստի ինստիտուտն էր, որն ակադեմիական սկզբունքներով կազմակերպվեց 1925 թվականի հունվարին։ Ինստիտուտի մեջ մտնում էին իսկական և թղթակից-անդամներ՝ ընտրված երեք տարի ժամանակով։ Գիտության և արվեստի ինստիտուտի բարձրագույն օրգանը նրա անդամների ընդհանուր ժողովն էր։ Բացի դրանից, կար ինստիտուտի խորհուրդ, ինչպես նաև գիտական տարբեր ճյուղերի գծով բաժանմունքներ։ Ինստիտուտի խնդիրն էր հանրապետությունում զարգացնել բնական, տեխնիկական և հումանիտար գիտությունները։ Գիտության և արվեստի ինստիտուտի կանոնադրության մեջ ասվում էր, որ նա առաջին հերթին կչանքի է կոչված նպաստելու հանրապետության առջև դրված տնտեսական և կուլտուրական բնագավառների սոցիալիստական խնդիրների լուծմանը։ Ինստիտուտն ուներ բնական-մաթեմատիկական, պատմա-հասարակական և արվեստի բաժանմունքներ։ Ինստիտուտի գործունեության մեջ գերակշռողը հասարակական հարցերի մշակումն էր, մի բան, որ բացատրվում էր Հայաստանում հասարակական գիտությունների զարգացման բնագավառում եղած հարուստ տրադիցիաների առկայությամբ։ Բնագիտության և տեխնիկայի ասպարեզում գիտական աշխատանքը կատարում էր առաջին քայլերը միայն։ Իր գոյության առաջին տարիներին (մինչև 1930 թվականի վերջը) գիտության և արվեստի ինստիտուտը որոշակի աշխատանք տարավ Հայաստանի հնագույն հուշարձանները ուսումնասիրելու, հայ ժողովրդի պատմության և կուլտուրայի հարցերը մշակելու, արվեստի հուշարձանները հավաքելու և պահպանելու ուղղությամբ։ Երկրաբանության և կուլտուրտոլոգիայի բնագավառում հետագոտվում էին հանրապետության բնական

հարստությունները։ Գիտության և արվեստի ինստիտուտը կապեր էր պահպանում երկրի գիտական կազմակերպությունների, մասնավորապես ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի հետ։ 1928 թվականին ինստիտուտը Հայաստանում առաջին անգամ կազմակերպեց գիտական աշխատողների կոնֆերանս։ Գիտության և արվեստի ինստիտուտի իսկական անդամներ էին հայ անվանի գիտնականներ, մշակույթի և արվեստի գործիչներ։ Դրանց թվում էին բնական-մաթեմատիկական բաժանմունքի գծով՝ բժիշկներ Գ. Արեշյանը, Վ. Արծրունին, մեխանիկ Ա. Հակոբյանը, կենսաբան Ա. Հովհաննիսյանը, քիմիկոսներ Լ. Ռոտինյանը, Ս. Ղամբարյանը, միկրոբիոլոգ Պ. Քալանթարյանը և ուրիշներ, պատմա-հասարակական բաժանմունքի գծով՝ պատմաբաններ Հ. Մանանդյանը, Լեոն (Ա. Բաբախանյանը), Աշ. Հովհաննիսյանը, գրականագետներ Մ. Աբեղյանը, Ց. Խանզադյանը, Ա. Կարինյանը, Ա. Տերտերյանը, հնագետներ և ազգագրագետներ Ե. Լալայանը, Ա. Քալանթարը, լեզվաբաններ Հր. Աճառյանը, Գ. Ղափանցյանը, Ա. Խաչատրյանը (Ասատուր), տնտեսագետ Հ. Ազատյանը, փիլիսոփա-հրապարակախոս Հ. Գյուլիքևխյանը, արվեստի բաժանմունքի գծով՝ ճարտարապետներ Թ. Թորոմանյանը, Ա. Թամանյանը, Ն. Բունիաթյանը, ռեժիսյորներ և դերասաններ Ա. Բուրջալյանը, Մ. Մանվելյանը, Լ. Քալանթարը, գրողներ Եղիշե Չարենցը, Դ. Դեմիրճյանը, նկարիչ Մ. Սարյանը, կոմպոզիտորներ Ա. Սպենդիարյանը, Ռ. Մելիքյանը և ուրիշներ։

1920-ական թվականների վերջերին առաջին պլանի վրա դրվեցին այն գիտությունները, որոնց պրոբլեմատիկան անմիջականորեն կապված էր ժողովրդական տնտեսության պահանջների հետ։ Գիտական աշխատանքը զարգացում է ապրում քիմիական, կենսաբանական, գյուղատնտեսական և բժշկական գիտությունների բնագավառներում։ Ստեղծվեց էքսպերիմենտալ բազա՝ սկզբում բուհերի (համալսարան, բժշկական և գյուղատնտեսական ինստիտուտներ) լաբորատորիաներին կից, ապա՝ ինքնուրույն գիտա-հետազոտական լաբորատորիաներում և ինստիտուտներում։ Նկատելի էին քիմիայի բնագավառում ձեռնարկված աշխատանքները։ Պրոֆեսոր Ս. Պ. Ղամբարյանի ջանքերով ստեղծվեց հայ քիմիկոսների դպրոցը, որն անմիջականորեն կապվում է հանրապետությունում քիմիական արդյունաբերության ստեղծելու խնդիրների հետ։ Հայ նշանավոր ինժեներ-էներգետիկ Ի. Ա. Տեր-Աստվածատրյանը հիմնեց հայ հիդրոտեխնիկ-շինարարների դպրոցը, որը ծնունդ առավ Հայաստանում էներգետիկ բազայի բուռն զարգացման շրջանում։ Ինժեներ-երկրաբաններ Հ. Կարապետյանի և Տ. Ջրբաշյանի ջանքերով ընդլայնվեցին աշխատանքները նաև կիրառական երկրաբանության գծով։

1929 թվականին Համկ(բ)կ Անդրերկրկոմը անդրկովկասյան հանրապետություններում ձեռնարկեց գիտական հիմնարկների գործունեության հետազոտումը։ Վերջինս ցույց տվեց, որ չնայած առանձին հաջողություններին, գիտա-հետազոտական աշխատանքների ընդհանուր վիճակը Անդրկովկասում անբավարար է։ Գիտական աշխատանքը հիմնականում ցրված էր բուհերում, չուներ համապատասխան գիտական կենտրոններ, գիտական հիմնարկները վատ էին ապահովվում նյութական բազայով[1]։ Կատարելով Համկ(բ)կ Անդրերկրկոմի

1 Տե՛ս Մ.Ի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 13, գ. 339, թ. 94—99։

որոշումը, Հայաստանի կառավարությունը սկսեց գիտա-հետազոտական ինքնուրույն հիմնարկների կազմակերպումը, հիմնարկներ, որոնց գիտական աշխատանքի պրոբլեմատիկան պետք է սերտորեն կապված լիներ արդյունաբերության և գյուղատնտեսության կարիքների հետ։ 1929 թվականին կազմակերպվեցին գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցման ինստիտուտը, կարտոֆիլաբուծության և մեղվաբուծության զոնալ կայանները, բույսերի պահպանման ինստիտուտը և գյուղատնտեսական պրոֆիլի գիտա-հետազոտական այլ հիմնարկներ։ Իրենց գիտա-հետազոտական աշխատանքները ծավալեցին կիրառական երկրաբանության և կառուցումների ինստիտուտները, կաթի արդյունաբերության գիտա-հետազոտական ինստիտուտի հայկական ֆիլիալը և այլ հիմնարկներ։ 1933 թվականին հանրապետությունում գործում էին 39 ինքնուրույն, այդ թվում հողժողկոմատին կից՝ 21, առողջապահության ժողկոմատին կից՝ 6 և ժողովրդական տնտեսության խորհրդին կից՝ 4 գիտա-հետազոտական հիմնարկներ[1]։

Գյուղատնտեսության պրոֆիլի գիտա-հետազոտական հիմնարկներն աշխատանք ծավալեցին սելեկցիայի, փորձարարական-անասնաբուժության, հողագործության-խաղողագործության և գինեգործության, բամբակագործության, ծխախոտագործության, մետաքսագործության և այլ բնագավառների գծով։ Բժշկական գիտա-հետազոտական հիմնարկները նշանակալից աշխատանք կատարեցին գինեկոլոգիայի, մանկաբարձության և մայրերի պաշտպանության, կուրորտոլոգիայի բնագավառներում։ Տրոպիկական ինստիտուտը գիտա-հետազոտական աշխատանք ծավալեց ջերմախտային հիվանդությունների դեմ։ Գործել սկսեց ֆիզիո-թերապևտիկ ինստիտուտը։

Ժողովրդական տնտեսության խորհրդին կից ստեղծվեցին կառուցումների ինստիտուտը, որը զբաղվում էր սեյսմոլոգիայի ու շինանյութերի հարցերով և Սևանի կոմիտեն, որն ուսումնասիրում էր Սևանի և Հրազդան գետի հիդրոտեխնիկական պաշարների օգտագործման խնդիրները։ Հայաստանի ջրային տնտեսության վարչությանը կից կազմակերպվեց ոռոգման աշխատանքներն ուսումնասիրող գիտա-հետազոտական հատուկ մի խումբ, որը ղեկավարում էր ինժեներ Գ. Շիրմազանյանը։

Հանրապետությունում մի շարք գիտա-հետազոտական հիմնարկներ էին գործում նաև հասարակական գիտությունների գծով։ Դրանց թվումն էին՝ կուլտուրայի պատմության ինստիտուտը, պետական պատմական թանգարանը, հնդափոխության թանգարանը, հին ձեռագրերի պահպանման ձեռագրատունը (Մատենադարանը)։ 1930 թվականին ՀՍՍՀ ժողկոմսովետի որոշմամբ գիտությյան և արվեստի ինստիտուտը վերակառուցվեց գիտության ինստիտուտի, որը հաջորդ տարում վերակազմավորվեց Հայաստանի Կ(բ)Կ ԿԿ-ին կից մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի։ Նորաստեղծ այս ինստիտուտի առաջ խնդիր էր դրված իր գիտա-հետազոտական և տեսական աշխատանքները սերտորեն կապել Հայաստանի տնտեսության և կուլտուրական շինարարության տարբեր բնագավառների կոնկրետ խնդիրների լուծման հետ։

1 Տե՛ս Մ.Լ. հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 21, գ. 256, թ. 47։

Հայաստանում գիտական աշխատանքի կազմակերպմանը մեծապես աշակցում էին Սովետական Միության մի շարք խոշոր գիտնականներ. ակադեմիկոսներ՝ Ն. Յա. Մառը, Վ. Լ. Կոմարովը, Ֆ. Յու. Լևինսոն-Լեսսինգը, Ն. Ի. Վավիլովը, Վ. Ա. Կեյլերը, Հ. Ա. Օրբելին և ուրիշներ։ Երիտասարդ գիտական կադրերի պատրաստման գործում մեծ նշանակություն ուներ հայ մասնագետներին միության գիտական կենտրոնները՝ Մոսկվա, Լենինգրադ և այլ քաղաքներ գործուղելու պրակտիկան։ 1928 թվականին Երևանի պետական համալսարանից կից բացվեց ասպիրանտուրա, որը հնարավորություն տվեց պլանային կարգով սկսել գիտական կադրերի պատրաստումը։

Գիտա-հետազոտական հիմնարկների ցանցի զարգացումը և գիտական կադրերի աճը 1920—1930-ական թվականներին առաջ քաշեցին գիտական ողջ աշխատանքները մեկ միասնական կենտրոնում միավորելու խնդիրը։ Այսպիսի կենտրոն հանդիսացավ ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալը, որը կազմակերպվեց 1935 թվականին։


Սկզբնական շրջանում ՍՍՀՄ ԳԱ հայկական ֆիլիալի կազմում մտան երկրաբանության, քիմիայի, կենսաբանության ինստիտուտները և գեոֆիզիկայի սեկտորը։ ՍՍՀՄ ԳԱ հայկական ֆիլիալի նախագահ հաստատվեց խոշոր երկրաբան Ֆ. Յու. Լևինսոն-Լեսսինգը, որը շատ բան կատարեց Հայաստանի երկրաբանական հետազոտման բնագավառում։ 1930-ական թվականների ընթացքում ՍՍՀՄ ԳԱ հայկական ֆիլիալը իր մեջ ընդգրկելով Հայաստանի բոլոր հիմնական գիտական հիմնարկները, արդեն դարձել էր հանրապետության գիտական մտքի կենտրոնը։ 1941 թվականին Արմֆանի կազմում հաշվվում էին 11 գիտա-հետազոտական հիմնարկներ, որոնցում աշխատում էին ավելի քան 180 գիտական աշխատողներ, այդ թվում գիտության 16 դոկտոր ու պրոֆեսոր և 23 թեկնածու։ Այստեղ աշխատում էին այնպիսի կադրեր, որոնք Արմֆանը դարձնում էին ՍՍՀՄ խոշոր գիտական կենտրոններից մեկը. դրանց թվում էին աստրոֆիզիկոս Վ. Հ. Համբարձումյանը, քիմիկոսներ Վ. Ի. Իսագուլյանցը, Ս. Պ. Ղամբարյանը, Ռ. Ա. Ռոտինյանը, ֆիզիկոսներ Ա. Ի. Ալիխանյանը, Ա. Ի. Ալիխանովը, գյուղատնտեսներ և կենսաբաններ Մ. Գ. Թումանյանը, Ս. Բ. Յուզբաշյանը, պատմաբան Հ. Մանանդյանը և ուրիշներ։

1938 թվականի սկզբներին ՍՍՀՄ ԳԱ հայկական ֆիլիալի նախագահ նշանակվեց սովետական խոշոր արևելագետ, ակադեմիկոս Հովսեփ Աբգարի Օրբելին, որը մեծ ծառայություններ է մատուցել Հայաստանի գիտության զարգացման համար։

Նախապատերազմյան տարիներին ՍՍՀՄ ԳԱ հայկական ֆիլիալի մեջ մըտնող և չմտնող գիտա-հետազոտական հիմնարկներում կենսաբանության և գյուղատնտեսական գիտությունների բնագավառում աշխատանքներ էին տարվում, սելեկցիայի, գենետիկայի, Հայաստանի բուսական աշխարհի ուսումնասիրման ուղղությամբ։

Քիմիայի գծով տարվող գիտա-հետազոտական աշխատանքը կապված էր Հայաստանի արդյունաբերության նոր ճյուղի՝ բուրդ զարգացում ապրող քիմիական արդյունաբերության հետ։ Հատուկ նշանակություն էին ստանում այն հետազոտությունները, որոնք վերաբերում էին սինթետիկ կաուչուկին, օրգանական և անօրգանական քիմիային։

Երկրաբանությունը ևս սերտորեն կապված էր Հայաստանի ժողովրդական տնտեսության կարիքների հետ։ Նախապատերազմյան տարիներին էր, որ առաջին անգամ գիտական հիմունքներով հետազոտական աշխատանքներ ձեռնարկվեցին հանրապետության ընդերքի ուսումնասիրման և օգտակար հանածոների հայտնաբերման ուղղությամբ։ Այդ աշխատանքները ղեկավարում էին ակադեմիկոս Ֆ. Յու. Լևինսոն-Լեսսինգը և երկրաբաններ Հ. Կարապետյանն ու Կ. Պաֆենհոլցը։



Հ. Տեր-Ասովածատրյան

Էներգետիկան Հայաստանում զարգանում էր էներգետիկ հղոր բազայի վրա։ Ինչպես էլեկտրիֆիկացման, այնպես էլ ոռոգման համար հատուկ նշանակություն էին ստանում այն աշխատանքները, որոնք կապված էին Սևանա լճի ջրային պաշարների օգտագործման հետ։ Հայ հիդրոտեխնիկ շինարարների դպրոցը գլխավորում էր ակադեմիկոս Ժ. Հ. Ա. Տեր-Ասովածատրյանը։

Աշխատանքներ էին տարվում նաև Հայաստանի շինանյութերի՝ տուֆերի, պեմզայի և այլի ուսումնասիրության ուղղությամբ։


Հասարակագիտության բնագավառում հիմնականում ուսումնասիրվում էին հայ ժողովրդի պատմության, լեզվի և գրականության բազմապիսի պրոբլեմները։ Հայ ժողովրդի պատմության ուսումնասիրմանը մեծ ծառայություն մատուցեց Հ. Մանանդյանը, որն այդ տարիներին ստեղծեց մի շարք կարևոր աշխատություններ։ 1939 թվականին Հ. Մանանդյանն ընտրվեց ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս։

Հայ լեզվաբանության զարգացման գործում նշանակալից ներդրում կատարեցին պրոֆեսորներ Ստեփանոս Մալխասյանն ու Հրաչյա Աճառյանը։ Նրանցից առաջինը երկար տարիներ աշխատեց հայ լեզվի բացատրական բառարան կազմելու վրա, մի աշխատություն, որն իրոք հայ բառարանագիտության խոշոր նվաճումն էր։ Հր. Աճառյանի աշխատությունները նվիրված էին հայոց լեզվի գիտական քերականության և հայ լեզվաբանության բազմապիսի այլ հարցերի։ Բացի դրանից, Աճառյանը ստեղծեց հայոց լեզվի արմատական բառարանը, որն անզուգական աշխատություն է, ոչ միայն հայագիտության, այլև ընդհանուր լեզվաբանության բնագավառում։ Հայ լեզվաբանության զարգացման գործում բեղմնավոր աշխատանք էր կատարում նաև պրոֆեսոր Գրիգոր Ղափանցյանը։

Հայ գրականությունը հարստացավ պրոֆ. Մանուկ Աբեղյանի կապիտալ աշխատություններով։ Նրա «Հայ հին գրականության պատմություն» աշխատությունը մեր օրերում էլ պահպանել է իր գիտական մեծ նշանակությունը։ Մ. Աբեղյանն ու Կ. Մելիք-Օհանջանյանը մեծ աշխատանք կատարեցին հայ ժողովրդի հերոսական էպոս «Սասունցի Դավթի» գիտական տեքստը կազմելու ուղղու-



Հր. Աճառյան



Մ. Աբեղյան

թյամբ։ Հայ գրականության պատմության գծով այդ տարիներին լուրջ աշխատություններ ստեղծեց պրոֆ. Ա. Տերտերյանը։

Նախապատերազմյան տարիներին սկսվեց Հայաստանի հնագիտական հուշարձանների ուսումնասիրությունը։ Այդ գործում մեծ դեր խաղացին Ամբերդի պեղումները, որոնք տեղի ունեցան 1936 թվականին, ակադեմիկոս Հ. Օրբելու գլխավորությամբ։ 1939 թվականին Բ. Բ. Պիոտրովսկու ղեկավարությամբ սկսվեցին Կարմիր-բլուրի՝ ուրարտական քաղաք-ամրոց Թեյշեբաինիի պեղումները, որոնք շուտով համաշխարհային ճանաչում ստացան։

Նախապատերազմյան տարիներին հանրապետությունում աշխատանքներ տարվեցին ֆիզիկո-մաթեմատիկական և տեխնիկական գիտությունների բնագավառներում։ Այս երկու ուղղությունների գծով կային ընդամենը երկու գիտական հիմնարկներ՝ նոր կազմակերպված ֆիզիկայի ինստիտուտը և ոչ մեծ աստղադիտարանը, որը գտնվում է Երևանում։ Սակայն արդեն այդ տարիներին Երևանի համալսարանն ընդլայնեց մասնագետ-ֆիզիկոսներ և մաթեմատիկոսներ պատրաստելու աշխատանքը։ Մոտակա տարիներին այդ կադրերը ոչ միայն առաջ մղեցին հիշյալ գիտությունները Հայաստանում, այլև հանրապետության

ապագա գիտությունների ակադեմիայի սիստեմում այդ բնագավառները դարձրին առաջնահարթ։

Գիտական աշխատանք էին կատարում հանրապետության բարձրագույն ուսումնական հաստատությունների ամբիոնները և լաբորատորիաները։ Նշանակալից հաջողությունների էին հասել բժշկության ասպարեզի աշխատողները կոերորատագիտության, ֆիզիոթերապիայի բնագավառներում։ Բարձրագույն ուսումնական հաստատությունների զարգացումը, գիտա-հետազոտական ինստիտուտների և լաբորատորիաների թվի ավելացումը հասցրեցին գիտա-հետազոտական աշխատանքների ծավալի ընդլայնմանը և գիտության մեջ նոր ուղղությունների ստեղծմանը, ուղղություններ, որոնք կապված էին Հայաստանի ժողովրդական տնտեսության պահանջների հետ։

6. ՍՈՎԵՏԱՀԱՅ ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Մասնագիտական կադրերի և գիտական աշխատողների պատրաստումն, ըստ էության, կազմում էր սովետահայ մտավորականության ստեղծման համար ծավալված մեծ աշխատանքի բաղկացուցիչ մասը։ Սովետական մտավորականություն ստեղծելու պրոբլեմը մեր երկրում լուծվեց երկու հիմնական ուղիով. մի կողմից, հին մտավորականությանը մասնակից դարձնելով սոցիալիստական շինարարությանը, մյուս կողմից՝ նոր, սովետական մտավորականության ստեղծմամբ։

Խոսելով հայ ժողովրդի հին մտավորականության մասին, հարկ է նշել, որ բուն Հայաստանում գտնվում էին նրա ցածր և միջին շերտերը միայն՝ ուսուցիչներ, մանր ծառայողներ, ոչ մեծ թվով բժշկական աշխատողներ և այլն։ Հայ ժողովուրդը, ըստ էության, չուներ ինժեներա-տեխնիկական և գիտական բարձրորակ մտավորականություն։ Ռուսաստանում և եվրոպական երկրներում կրթություն ստացած սակավաթիվ միայնակները սոցիալական խավ չէին ներկայացնում. ընդ որում նրանց մեծամասնությունն էլ աշխատում էր Հայաստանի սահմաններից դուրս։ Համեմատաբար բազմամարդ էր ստեղծագործական մտավորականությունը՝ արվեստի աշխատողները, գրողները։ Սակայն, հին մտավորականության այս մասի ներկայացուցիչների մեծամասնությունը նույնպես ապրում և ստեղծագործում էր Հայաստանից դուրս։ Հայտնի է, որ պատմական իրադարձությունների բերումով, հարյուրամյակներ շարունակ հայ ժողովրդի հոգևոր կյանքը զարգացել է ոչ միայն բուն Հայաստանում, այլև այն երկրներում, որտեղ հաստատվել էին ամենից բազմամարդ հայ գաղութները։ XIX դարում հայկական մշակույթի ճանաչված կենտրոններ էին Թիֆլիսը, Մոսկվան, Կոստանդնուպոլիսը և այլն։ Այս քաղաքներում ոչ միայն գործում էին հայկական դպրոցներ, այնպիսիք, ինչպիսիք, օրինակ, Մոսկվայի Լազարյան ճեմարանն ու Թիֆլիսի Ներսիսյան դպրոցներն էին, որոնք մեծ դեր խաղացին հայ ժողովրդի մշակութային կյանքում, այլև լայն զարգացում էին ապրում հայ արվեստը (թատրոններ Թիֆլիսում և Կոստանդնուպոլսում), հրատարակչական գործը, մամուլը։ Հետևապես հայ հին մտավորականությանը սոցիալիստական շինարարության մեջ ընդգրկելու համար պետք էր նկատի ու-

նենալ, որ բուն Հայաստանում աշխատում էր միայն նրա մի մասը, գերազանցապես ուսուցչությունը։

Թեև մտավորականության հիմնական մասը իր ծագման բերումով և տիրապետող դասակարգից ունեցած նյութական կախվածությամբ կապիտալիզմի օրոք ծառայում է վերջինիս, համենայն դեպս բարոյա-քաղաքական առումով նա միաձույլ խավ չէր ներկայացնում։ Կապիտալիստական հասարակության հակաժողովրդական բնույթը, նրա դասակարգային խոր հակասությունները ընկալում է մտավորականության առաջավոր մասը, որը հակադրվում է կապիտալիստական կարգերին և իր ուժերը նվիրում ժողովրդի գործի համար մղվող պայքարին։ Այդպես էր նաև հայ իրականության մեջ։ Տակավին XIX դարի կեսերին հայ գրականության, մշակույթի և լուսավորության առաջավոր գործիչները միացել էին ռուսական հասարակության առաջադեմ խավերին և նրանց հետ մեկտեղ դիմադրում էին ցարական ինքնակալությանը։ Այդպես էր նաև մարքսիզմի տարածման շրջանում։ Ճիշտ հասկանալով պրոլետարիատի դերը, հայ մտավորականության լավագույն ներկայացուցիչներ անցնում էին նրա կողմը և մեծ դեր խաղացին պրոլետարական կուսակցության և Անդրկովկասում ու Հայաստանում նրա կազմակերպությունների ստեղծման գործում։ Այդ պատճառով էլ հայ մտավորականության առաջավոր այդ հատվածը Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակի մեջ տեսավ իր գաղափարների ու նպատակների իրականացումը և լծվեց սոցիալիստական շինարարության մեծ գործին։ Պայքարելով սովետական իշխանության հաղթանակի համար այդ գործիչներից շատերը աշխատում էին հայկական գործերի կոմիսարիատի օրգաններում, ինչպես նաև բուն Հայաստանում։ Այսպիսով, հայ հին մտավորականության այդ հատվածը սովետական կողմնորոշում ուներ դեռևս Հայաստանում սովետական իշխանության հաղթանակից առաջ։

Հայաստանում սովետական իշխանության հաղթանակից հետո հայ հին մտավորականության ամենաբազմամարդ խավը՝ բժիշկները, ուսուցիչները, ծառայողները, իր հիմնական զանգվածով ձեռք մեկնեց սովետական իշխանությանը և լծվեց սոցիալիստական հասարակության կառուցմանը։ Սովետական կարգերի հաստատման առաջին իսկ շաբաթներին տեղի ունեցած Հայաստանի քաղաքների և գավառների ուսուցչական ժողովները, ճանաչելով սովետական իշխանությունը, պատրաստակամություն հայտնեցին իրենց ուժերը նվիրաբերել հարազատ ժողովրդի լուսավորության գործին։ Սովետական իշխանությունը ճանաչելու և սոցիալիստական շինարարությանը ամենաակտիվ կերպով մասնակցելու մասին են խոսում նաև մի շարք արհմիությունների (պետական հիմնարկների, փոստի, բժշկական աշխատողների և այլն) կողմից ընդունված բանաձևերը։ Եվ դա հասկանալի է։ Սոցիալիստական հեղափոխության հաղթանակը հին մտավորականության լայն շերտերին հնարավորություն տվեց ազատ աշխատանք ծավալելու հարազատ ժողովրդի բարօրության համար։ Ութժամյա բանվորական օրվա սահմանումը, արդյունաբերության ազգայնացումը և բանվորական օրենսդրության բնագավառի այլ միջոցառումներ դրականորեն անդրադարձան նաև ծառայողների դրության վրա։ Դպրոցի անջատումը եկեղեցուց, բոլորի համար ազատ դպրոցի ստեղծումը, ձրի ուսուցում մտցնելը չէին կարող չհամապատասխանել ժողովրդական լուսավորության իսկական պաշտպան-

ների նպատակներին։ Ի դեմս ուսուցիչների՝ սովետական իշխանությունը Հայաստանում գտավ իր հավատարիմ օգնականին, սոցիալիզմի բարձր գաղափարների տարածողին։

Սովետական իշխանության կողմն անցնելու պրոցեսը մի փոքր բարդ ընթացավ հայ հին մտավորականության բարձր խավի ներկայացուցիչների մոտ։ Այդ մտավորականության մի մասը անմիջապես, անվերապահ կերպով, ճանաչեց սովետական իշխանությունը և ակտիվ կերպով լծվեց սոցիալիստական շինարարության։ Այդ մասի մեջ էին մտնում պատմաբաններ Հակոբ Մանանդյանը և Լեոն, գրողներ Հովհ. Հովհաննիսյանը, Դերենիկ Դեմիրճյանը, Նար-Դոսը, կոմպոզիտորներ Ալեքսանդր Սպենդիարյանը, Ռոմանոս Մելիքյանը, Նիկողայոս Տիգրանյանը, Սպիրիդոն Մելիքյանը, գրականագետներ Մանուկ Աբեղյանը, Ստեփան Մալխասյանը, Արսեն Տերտերյանը, ճարտարապետներ Ալեքսանդր Թամանյանն ու Թորոս Թորամանյանը, նկարիչներ Մարտիրոս Սարյանն ու Ստեփան Աղաջանյանը, լեզվաբան Գրիգոր Ղափանցյանը և շատ ուրիշներ։

Կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը ելնելով լենինյան ցուցումներից, հին մտավորականության նկատմամբ վարում էին նրանց սովետական պետության կողմը գրավելու և նրանց հետ համագործակցելու քաղաքականություն։ Սովետական իշխանության հաստատման հենց առաջին ամսում Հայաստանի Հեղկոմը դեկրետ ընդունեց տեխնիկական մասնագետների, գյուղատնտեսության բարձրորակ բանվորների և այլ մասնագետների հաշվառման մասին։ Հանրապետության տեխնիկական ուժերի հաշվառման համար տեսեսական օրգանների ներկայացուցիչներից ստեղծվեց հատուկ հանձնաժողով, որը և որոշում էր տվյալ մասնագետների օգտագործման ոլորտը[1]։

Սովետական իշխանությունը դաստիարակչական մեծ աշխատանք էր տանում մտավորականության շրջանում, ձգտում էր փարատել նրանց տարակուսանքները և ստեղծել բարենպաստ մթնոլորտ նրանց ստեղծագործական աշխատանքի համար։ Հայ մտավորականության լավագույն ներկայացուցիչները չանում էին այդ գործում օգնել սովետական իշխանությանը։ Այս առումով բնորոշ է 1920 թվի դեկտեմբերի 18-ին Հայաստանի Հեղկոմին ուղղած Հովհաննես Թումանյանի նամակը։ Մեծանուն բանաստեղծը հայտնում էր, որ հայ հին մտավորականության մի մասը այժմ երկյուղ է ապրում։ Հովհ. Թումանյանը գտնում է, որ նման վիճակը կարող է քայքայել և ցրել մեր առանց այն էլ փոքրաթիվ մտավորականությունը։ Հայաստանի Հեղկոմը պետք է պարզի վիճակը և մարդկանց դուրս բերի անորոշությունից, հրավիրելով բոլորին ազատ ծառայել հարազատ ժողովրդին։

Այդ նամակում իրենց արտահայտությունն էին գտել հին մտավորականության մի մասի տատանումները, բայց միաժամանակ նաև՝ նրա անկեղծ ձգտումը՝ իր ուժերն ու գիտելիքները նվիրաբերելու հարազատ ժողովրդի բարօրությանը։ Հայ մտավորականության այն մասի համար, որ ցանկանում էր ազնվաբար ծառայել նոր կարգերին, ազատ աշխատանքի պայմաններ ստեղ-

1 Տե՛ս «Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում», էջ 450։

ծելու նպատակով, Հայաստանի Հեղկոմը և կոմունիստական կուսակցությունը ձեռնարկեցին մի շարք միջոցառումներ։ 1921 թվականին Հայաստանի կառավարությունը որոշում ընդունեց գրականության, արվեստի և գիտության աշխատողներին ապահովելու մասին։ Թոշակավորվեցին նաև մի շարք գործիչներ, որոնք ապրում էին Հայաստանի սահմաններից դուրս։

Հայ մտավորականության մյուս մասը սովետական իշխանության ճանաչմանը հանգեց, անցնելով կասկածանքի ու տատանումների բավականին ծանր ուղի։ Նրանց սովորեցնում էր ինքը՝ կյանքը, հասարակական հարաբերությունների նոր կարգը, որը բարձրանում էր հնի փլատակների վրա։ Իսկական հայրենասերները, իրենց ժողովուրդը ջերմորեն սիրող մտավորականները չէին կարող չտեսնել, որ բզկտված ու տանջված Հայաստանի փոխարեն ստեղծվում է աղատ աշխատանքի մի նոր երկիր, որտեղ ամեն ինչ ժողովրդինն է, կատարվում է ժողովրդի համար։ Եվ սովետական իշխանության հաղթանակի արդեն առաջին իսկ տարիներին ոչ քիչ թվով փառաբանված հայ գործիչներ, որոնք միշտ հասկացել էին ժողովրդին, մոտիկից համակրել նրա պայքարն ու ձգտումները, որոշելով նվիրվել Հայաստանում սոցիալիստական շինարարության մեծ գործին, հեռուներից վերադառնում էին հայրենիք։ Հայ պետականության վերստեղծումը, մայրենի լեզվով սովորելու և սովորեցնելու հնարավորությունը, հարազատ ժողովրդի բարօրության համար աշխատելը՝ ահա սրանք էին այն հիմնական գործոնները, որոնք հայ հին մտավորականությանը համախմբեցին հայրենի հողի վրա։

Պետք է նշել, որ մյուս գործոնների կողքին, վերոհիշյալ հանգամանքը ևս մեծապես նպաստեց հայ սոցիալիստական ազգի համախմբման արդեն սկիզբ առած պրոցեսին։ Հայ ազգի համախմբման գործում մշակույթի նշված դերը կուլտուրական շինարարության առանձնահատկություններից մեկն է Հայաստանում, քանի որ այդ պրոցեսի նշանակությունը չի սահմանափակվում միայն սակավաթիվ մտավորականության շրջանակներով։ Հայ ժողովրդի մշակույթի զարգացումը, նրա ազգային վերածնունդը կարևոր գործոն են աշխարհով մեկ սփռված և իրենց հայրենի երկիրը վերադառնալ երազող հարյուր հազարավոր հայերի համար, երկիր, որտեղ կային հոգևոր զարգացման լայն հնարավորություններ։ Սովետական իշխանության առաջին տարիներին Հայաստան վերադարձան գրող Ալեքսանդր Շիրվանզադեն, մեծանուն դերասան Հովհաննես Աբելյանը, նշանավոր գիտնական Հրաչյա Աճառյանը, ավելի ուշ՝ հայ մեծ բանաստեղծ Ավետիք Իսահակյանը և մտավորականության այլ ներկայացուցիչներ։ Հրաչյա Աճառյանը, որը վերադառնալուն պես դարձավ Երևանի համալսարանի պրոֆեսոր, արտահայտելով հայ հին մտավորականության այդ մասի իղձերը, Հայաստանում սովետական իշխանության հաղթանակի չորրորդ տարեդարձի առթիվ գրեց. «Պատանեկան տարիքից ես նվիրվել եմ գիտության և իմ ամբողջ հոգեկան աշխարհը կենտրոնացած է եղել ընդհանրապես լեզվի և մասնավորապես հայ լեզվի ուսումնասիրության վրա։ Մի երազ միայն ունեի ես. այդ էր՝ լինել մի այնպիսի տեղում, ուր կարողանայի ազատորեն նվիրվել իմ սիրած մասնագիտության, մի այնպիսի հաստատության մեջ, որ կարողանայի իմ ուսումնասիրության արդյունքներին հաղորդակից անել գոնե մի տասնյակ հետաքրքրվող սաներին։ Այդ երազի իրականացումը ես վայելում եմ այժմ այս

երկրում, մեր պետական համալսարանում, Հայաստանի խորհրդային հանրապետության հովանավորության ներքո»[1]։

Սոցիալիզմի կառուցման շրջանում ժողովրդական տնտեսության, լուսավորության և կուլտուրայի պահանջները բավարարելու համար, միայն հին մտավորականության ուժերը խիստ անբավարար էին։ Այդ նպատակով Հայաստանի կոմունիստական կուսակցությունը և կառավարությունը հին մտավորականությանը սոցիալիստական շինարարության մեջ ներգրավելու հետ միասին, հատուկ ուշադրություն դարձրին նոր, սովետական մտավորականության ըստեղծման հարցին։ Դեռևս մինչև Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակը Վ. Ի. Լենինը մատնանշում էր մտավորական կադրերի այն լայն պահանջը, որ կառաջանա պրոլետարական նորաստեղծ պետության մեջ. «Մեզ հարկավոր են բանկային գործի, ձեռնարկությունների միավորության լավ կազմակերպիչներ (այս գործում կապիտալիստներն ավելի են փորձառու, իսկ փորձառու մարդկանց հետ աշխատանքը հեշտ է գնում). մեզ հարկավոր են, առաջվա համեմատությամբ, ավելի ու ավելի մեծ թվով ինժեներներ, ագրոնոմներ, տեխնիկներ, գիտականապես կրթված ամեն տեսակ մասնագետներ, կասի պրոլետարական պետությունը»[2]։ Ժողովրդական տնտեսության վերականգնման հաջող ընթացքը, արդյունաբերության ինդուստրացումն ու գյուղատնտեսության կոլեկտիվացումը առաջադրում էին պատրաստել այնպիսի կադրեր, որպիսիք հայ ժողովուրդն առհասարակ չէր ունեցել։ Այդ նպատակին էր ծառայում բարձրագույն և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատությունների ցանցը, որը լայնորեն զարգացավ Հայաստանում կուլտուրական շինարարության առաջին փուլում։ Ձգտելով փոփոխել մտավորականության դասակարգային դեմքը, կուսակցությունը հետևողականորեն իրագործում էր ուսանողության սոցիալական կազմը բարելավելու, բանվորների և գյուղացիների երեխաներին բուհերն ու տեխնիկումներն ընդունելիս առավելություններ տալու իր իսկ որդեգրած սկզբունքները։ Ինչպես ասվեց, այդ նպատակին էին ծառայում նաև բանֆակները.

Մտավորականության կազմը փոփոխելու գործում կարևոր նշանակություն ունեցավ բանվորներին բանֆակների միջոցով կամ ուղղակի՝ անմիջապես արտադրությունից տնտեսական ու կուսակցական ղեկավար աշխատանքների առաջ քաշելը։ Վերջիններիս համար պետությունը հետագայում հնարավորություն ստեղծեց լրացնելու իրենց գիտելիքների պակասը։

Սովետական Հայաստանում կուլտուրական շինարարության առաջին փուլը կարևոր էր նաև սովետահայ մտավորականությանը վերադաստիարակելու, նրան ստեղծագործական ակտիվ գործունեության մղելու առումով։ Հին մտավորականությունը, իր ճնշող մեծամասնությամբ, արդարացրեց ժողովրդի հույսերը և անշահախնդրորեն ու նվիրվածությամբ նրան տրամադրեց իր գիտելիքներն ու կորովը։ Միաժամանակ նաև իրականանում էր նոր, աշխատավորների ծոցից դուրս եկած մտավորականության կազմավորումը։ Բանվոր դա-

1 «Խորհրդային Հայաստան», 1924, № 138։
2 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 26, էջ 118։

սակարգի և աշխատավոր գյուղացիության հետ միասին Հայաստանի մասնավորականությունն իրականացնում էր Լենինյան կուսակցության նախանշումները, կառուցում էր սոցիալիստական հասարակարգ։

7. ՄԱՍՍԱՆԵՐԻ ՄԵՋ ՏԱՐՎՈՂ ԿՈՒԼՏՈՒՐ-ԼՈՒՍԱՎՈՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Սովետական իշխանության առաջին իսկ օրերից կարևորագույն խնդիրներից էր մասսաների դաստիարակումը կոմունիզմի ոգով։ Վ. Ի. Լենինը մատնանշում էր, որ պրոլետարիատի դիկտատուրայի դաստիարակչական աշխատանքը անհրաժեշտ է առաջին պլան մղել, քանի որ մասսաներին պետք է նախապատրաստել սոցիալիստական շինարարության։ Վ. Ի. Լենինը բազմիցս ընդգծում էր, որ մասսաների քաղաքական գիտակցությունն ու ակտիվությունը սոցիալիստական հասարակության կառուցման անհրաժեշտ պայմանն են։ Կուլտուրայի, կրթության նպատակը, սովորեցնում էր Վ. Ի. Լենինը, իսկական կոմունիստներ դաստիարակելն է։

Բնականաբար, մասսաների քաղաքական դաստիարակումը կոմունիզմի ոգով, նոր հասարակության գիտակից և ակտիվ կառուցողների դաստիարակումը չափազանց բարդ և բազմակողմանի պրոցես էր։ Այդ աշխատանքը փաստորեն սկսվել էր դեռևս մինչև Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակը, երբ կոմունիստական կուսակցությունը կարողացել էր բանվորների և գյուղացիների առաջավոր մասսաներին հասցնել իր գաղափարները, բացատրել հեղափոխական պայքարի իմաստն ու նպատակը։ Սովետական իշխանության հաստատումից հետո անհրաժեշտ էր սոցիալիստական հասարակության գիտակից կառուցողներ դարձնել ամբողջ բանվոր դասակարգն ու գյուղացիությունը, որովհետև, ինչպես մատնանշում էր Վ. Ի. Լենինը, բանվորների ու գյուղացիների պետությունը ուժեղ է մասսաների գիտակցականությամբ։ Սոցիալիստական շինարարության ասպարեզում կոմունիստական կուսակցության ու սովետական պետության վարած քաղաքականությունն առաջին հերթին այդ նպատակն էր հետապնդում։

Ժողովրդական կրթության՝ կուլտուրական շինարարության այդ ամենակարևոր բնագավառի զարգացումը Վ. Ի. Լենինը դիտում էր որպես քաղաքական խնդիր։ Նա գտնում էր, որ «չենք կարող լուսավորական աշխատանքը կազմակերպել քաղաքականությունից անկախ։

Այդպիսի միտքը իշխում էր և իշխում է բուրժուական հասարակության մեջ։ Լուսավորության «ապոլիտիկությունը» կամ «անպոլիտիկությունը» անունը բուրժուազիայի կեղծավորությունն է, դա ոչ այլ ինչ է, եթե ոչ մասսաների խաբում»[1]։

Վ. Ի. Լենինը հատկապես ընդգծում էր աշխատավոր ամենալայն զանգվածների մասնակցությունը սոցիալիստական շինարարությանը. «որքան ավելի խոր է բարեփոխությունը, որ մենք ուզում ենք իրագործել, այնքան ավելի շատ հետաքրքրություն և գիտակցական վերաբերմունք պետք է առաջ բերել դեպի այն, նորանոր միլիոնների և տասնյակ միլիոնների համոզել նրա անհրա-

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 31, էջ 455։

ժեշտության մեջ։ Վերջին հաշվով մեր հեղափոխությունն այն պատճառով շատ առաջ անցավ բոլոր մնացած հեղափոխություններից, որ նա սովետական իշխանության միջոցով պետական շինարարության մեջ ակտիվ մասնակցության ներգրավեց տասնյակ-միլիոնավոր այնպիսիների, որոնք առաջ այդ շինարարության նկատմամբ մնում էին անտարբեր»[1]։

Սոցիալիստական հեղափոխության հաղթանակից հետո կոմունիստական կուսակցությունը՝ քաղաքական և դաստիարակչական աշխատանք ծավալելու նպատակով, օգտագործում էր մասսաների վրա ազդելու բազմաթիվ միջոցներ. սովետների միջոցով աշխատավորներին անմիջական պետական ղեկավարման մեջ ներգրավումը, կոմունիստական և արհմիութենական կազմակերպություններում, կարմիր բանակում և կոոպերացիայում կատարվող դաստիարակչական գործը, կանանց շրջանում իրականացվող աշխատանքը, որ կատարում էին հատկապես այդ նպատակի համար ստեղծված կանանց բաժինները։ Վերջապես, այդ աշխատանքի կատարման համար էր կազմակերպվել քաղաքական-լուսավորական հիմնարկների բավականին ընդարձակ ցանցը։ Մասսաների կուլտուրական և քաղաքական լուսավորման ասպարեզում ՌՍՖՍՀ-ում կուտակվել էր որոշակի փորձ։ Ինչպես կուլտուրական շինարարության մյուս բնագավառներում, այդ փորձը ևս օգտագործվեց Սովետական Հայաստանում։

Կուլտուրական շինարարության առաջին փուլում մասսաների մեջ տարվող կուլտուր-լուսավորական աշխատանքի բնույթը որոշվում էր հանրապետության առաջ ծառացած քաղաքական և տնտեսական խնդիրներով։ Սկսած Հայաստանում սովետական իշխանության հաստատումից մինչև վերականգնման ժամանակաշրջանի վերջը այդ բնագավառի հիմնական խնդիրը կուլտուր-լուսավորական նոր տիպի հիմնարկների կազմակերպումն ու նրանց գործունեության ծավալումն էր, հանրապետության ամենալայն մասսաների մեջ ագիտացիոն-պրոպագանդիստական բազմակողմանի աշխատանքների կատարումը։ Անհրաժեշտ էր ժողովրդական մասսաներին մոբիլիզացնել տնտեսական խնդիրներ լուծելու համար, նրանց բացատրել կոմունիստական կուսակցության տնտեսական քաղաքականությունը, ըստ ամենայնի ամրապնդել բանվոր դասակարգի ու գյուղացիության դաշինքը։ 1920 թվականի կեսերից ընդհուպ մինչև կուլտուրական շինարարության առաջին փուլի վերջը հանրապետությունում ծավալված կուլտուր-լուսավորական աշխատանքը հիմնականում նպատակ ուներ աջակցելու քաղաքական և տնտեսական այնպիսի կարևոր խնդիրների լուծմանը, ինչպիսիք էին երկրի ինդուստրացումը, գյուղատնտեսության սոցիալիստական վերակառուցումը և հանրապետության ժողովրդական տնտեսության առաջին հնգամյա պլանի կատարումը։ Այդ շրջանին բնորոշ են քաղաքական-լուսավորական աշխատանքի այնպիսի ձևեր, ինչպիսիք էին քաղաքի ստանձնած շեֆությունը գյուղի նկատմամբ, կուլտարշավների կազմակերպումը, գրադարանային գործի զարգացումը և այլն։

Մասսաների քաղաքական և կուլտուրական դաստիարակության կարևոր միջոցներից մեկն էլ մամուլն է։ Սովետական իշխանության առաջին իսկ օրերին Հայաստանում փակվեցին բուրժուական բոլոր թերթերը, ազդայնացվեցին

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 31, էջ 630։

մասնավոր տպարանները։ 1920 թվականի դեկտեմբերից Երևանում հայերեն լեզվով սկսեց հրատարակվել «Կոմունիստ» թերթը՝ Հեղկոմի և Հայաստանի կուսակցության ԿԿ-ի օրգանը, որով սկիզբ դրվեց Հայաստանի նոր մամուլին և որը հանդիսացավ նախահեղափոխական շրջանի հայ բոլշևիկյան մամուլի տրադիցիաների շարունակողը։ 1921—1926 թվականներին Հայաստանում լույս էին տեսնում հանրապետական մի շարք թերթեր՝ «Խորհրդային Հայաստան», «Աշխատանք», «Մաճկալ», «Բանվոր», «Ավանգարդ». 1928 թվականին Հայաստանում հրատարակվում էր ինը անուն թերթ և 22 անուն հանդես։ 1930-ական թվականների սկզբին, Համկ(բ)Կ Անդրկովկասի երկրային կոմիտեի որոշմամբ Հայաստանում կազմակերպվեց շրջանային թերթերի հրատարակում (հայերեն՝ 9 շրջանում, ռուսերեն՝ Ստեփանավանի շրջանում, ադրբեջաներեն՝ Վեդու և Բասարգեչարի շրջաններում)։ Պարբերական մամուլի ցանցի ընդլայնման շնորհիվ ստեղծվեց բանգյուղ-թղթակիցների բազմամարդ մի շտաբ։ 1932 թվականին Հայաստանում արդեն լույս էր տեսնում 59 անուն թերթ և 19 անուն հանդես՝ 400 հազար ընդհանուր տպաքանակով[1]։ Կուլտուր-քաղաքական կարևոր իրադարձություն էր ազգային փոքրամասնությունների լեզվով՝ «Ռիա-Թազա» (քրդերեն) և «Կըզլ-Շաֆակ» (ադրբեջաներեն) թերթերի հրատարակումը։

Սոցիալիզմի գաղափարների պրոպագանդման և տնտեսական խնդիրների կատարման համար Սովետական Հայաստանի պարբերական մամուլը ակտիվ աշխատանք էր տանում հանրապետության աշխատավորների ուժերը մոբիլիզացնելու ուղղությամբ։ Թերթերի հեղինակային ակտիվը՝ բանգյուղթղթակիցներն էին։ Մամուլը մեծապես նպաստում էր կուսակցական և սովետական աշխատողների դաստիարակմանը, աշխատողներ, որոնցից շատերի աշխատանքային ուղին սկսվում էր թղթակցություններ գրելով։

1921 թվականին կազմակերպվեց պետական հրատարակչությունը, որը ձեռնամուխ եղավ քաղաքական գրքերի, դասագրքերի և այլ գրականության հրատարակմանը։ Մեծ ուշադրություն դարձվեց հայերեն լեզվով Վ. Ի. Լենինի երկերի հրատարակման գործին։ Սկսեցին լույս ընծայվել նաև հայ և ռուս գրականության կլասիկների՝ Ալ. Շիրվանզադեի, Գ. Սունդուկյանի, Հովհ. Թումանյանի, Լ. Տոլստոյի, Ա. Չեխովի, Ա. Պուշկինի, Մ. Գորկու և այլոց գործերը։ Կուլտուրական շինարարության առաջին փուլի վերջում հրատարակված գրքերի անունների թիվը հասավ 650-ի՝ ավելի քան 2.650 հազար տպաքանակով[2]։

Հրատարակչական գործի հետ էր կապված գրադարանների ցանցի ընդլայնումը և գրքային ֆոնդի աճը։ 1921 թվականին ՀՍՍՀ կառավարության որոշմամբ ստեղծվեց Հայաստանի հանրային գրադարանը, որը հետագայում կոչվեց Ալ. Մյասնիկյանի անունով։ Արդեն 1925 թվականին գրադարանում կար 200 հազար գիրք։ Հանրային գրադարանը դարձավ հայ գրքի հավաքման կարևոր կենտրոն և մեծ դեր խաղաց հանրապետության կուլտուրական կյանքում։ Գյուղական վայրերում հիմնվում էին խրճիթ-ընթերցարաններ, որոնք հանդիսանում էին աշխատավոր գյուղացիության քաղաքական լուսավորման կենտրոնները։ 1932 թվականին Հայաստանում գործում էր ավելի քան 470 գրադարան։

---

1 Տե՛ս Մ. Լ. Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 21, գ. 256, թ. 42։

2 Տե՛ս «Խորհրդային Հայաստանի 15 տարին թվերով», էջ 210։

Մասսաների քաղաքական լուսավորության հիմնական աշխատանքը իրականացնում էին լուժժողկոմատի օրգանները, իսկ 1922 թվականից՝ քաղաքական լուսավորության գլխավոր վարչությունը։ Սովետական իշխանության առաջին ամիսներին, երբ երկրում հրատարակվում էին շատ քիչ թվով թերթեր և գրքեր, երբ ժողովրդական լուսավորությունը իր առաջին քայլերն էր միայն կատարում և նոր էր ձեռնարկվում բարձրագույն դպրոց ստեղծելու գործը, քաղաքական-լուսավորական աշխատանքը հիմնականում իրականացվում էր արտադպրոցական կրթության ուղիով, որը վերաբերում էր չափահաս բնակչությանը։ Կոմունիստական կուսակցությունը պետք է լայն մասսաներին բացատրեր սովետական կարգերի հիմունքները, սովետական իշխանության առաջին միջոցառումները, երկրի քաղաքական դրությունն ու տնտեսական խնդիրները։ Այդ շրջանում, հատկապես Հայաստանում, քաղաքացիական պատերազմի ժամանակ, մասսաների քաղաքական դաստիարակության գործում մեծ դեր էր խաղում կարմիր բանակը։ Կոմունիստական կուսակցությունը անխոնջ աշխատանք էր կատարում մասսաների շրջանում, նրանց բացատրում էր խորհրդարանների նպատակները և կոչ անում պայքարել դաշնակցականների դեմ, որոնք ձգտում էին վերականգնել իրենց տիրապետությունը։

Դաշնակցականների փետրվարյան խռովությունը ճնշելուց հետո քաղաքական-լուսավորական աշխատանքներում առաջին պլան մղեցին մասսաներին խաղաղ աշխատանքի մոբիլիզացնելու հարցերը, կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության տնտեսական քաղաքականությունը պարզաբանելու խնդիրը։ Այդ աշխատանքը կատարում էր քաղաքական լուսավորության գլխավոր վարչությունը (գլխքաղլուսավարչությունը), որը կազմակերպվել էր լուժժողկոմատի արտադպրոցական բաժնի հիման վրա։ Գլխքաղլուսավարչության գործունեության ծրագիրը սահմանել էր Վ. Ի. Լենինը 1920 թվականին՝ քաղլուսաշխատողների համառուսաստանյան խորհրդակցությունում ունեցած իր ելույթներում։ Վ. Ի. Լենինը ընդգծում էր քաղաքականության հետ լուսավորության ունեցած կապի հսկայական նշանակությունը և կուսակցության ղեկավար դերը մասսաների քաղաքական լուսավորման գործում։ «Ամենից առաջ,— ասում էր Վ. Ի. Լենինը,— այդ օրգանի աշխատանքում պետք է բացահայտորեն ճանաչվի կոմունիստական կուսակցության քաղաքականության առաջնությունը»[1]։ Վ. Ի. Լենինը առաջին պլան էր քաշում տնտեսական խաղաղ շինարարության պրոպագանդման խնդիրը և ժողովրդական տնտեսության վերականգնման պրոպագանդան։ «Մենք,— ասում էր Վ. Ի. Լենինը,— ձեռք կբերենք այն ամենը, ինչ որ հարկավոր է, կհաղթահարենք բոլոր արգելքները, որոնք մնացել են մեղ հին հասարակարգից և որոնք միանգամից դեն շպրտել անկարելի է, հարկավոր է վերադաստիարակել մասսաներին, իսկ նրանց վերադաստիարակել կարող է միայն ագիտացիան ու պրոպագանդան, հարկավոր է մասսաներին առաջին հերթին կապել ընդհանուր տնտեսական կյանքի շինարարության հետ»[2]։

Հայաստանի քաղլուսի աշխատանքները սկզբում տարվում էին գրոհային կարգով։ Աշխատանքի ամբողջ թափը ուղղված էր այն բանին, որպեսզի

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 31, էջ 459։

2 Նույն տեղում, էջ 467։

չափահասներն ընդգրկվեին դպրոցներում։ Հարկ է նշել, որ այդ նպատակին հատկացվող միջոցները սկզբում անբավարար էին։ Դրությունը փոխվեց Հանրապետության քաղաքական լուսավորության աշխատողների առաջին համագումարից հետո, որ տեղի ունեցավ 1923 թվականին։ Համագումարից հետո քաղլուսի աշխատանքները վերակազմվեցին, իսկ կառավարությունը սկսեց ավելի շատ միջոցներ հատկացնել քաղաքական-մասսայական աշխատանքներին։ Գլխքաղլուսի ներկայացուցիչները մտցվեցին Հայաստանի կոմկուսի Կենտկոմի և ՀԿԿԵՄ Կենտկոմի ագիտացիոն բաժինների կոլեգիաների կազմում։ Քաղլուսին առընթեր ստեղծվեցին հատուկ հանձնաժողովներ՝ գյուղում տարվող աշխատանքի և անգրագիտության վերացման գծով, իսկ հետագայում անգրագիտության վերացման արտակարգ հանձնաժողով, որի հիման վրա ավելի ուշ կազմակերպվեց «Կորչի անգրագիտությունը» ընկերությունը։ Գլխքաղլուսի օրգաններ ստեղծվեցին նաև տեղերում՝ գավառական սովետներին կից։ 1923—1924 թվականներին Գլխքաղլուսի գծով Հանրապետությունում կային անգրագիտության վերացման 430 կետ. կիսագրագետների 25 դպրոց, բարձր տիպի 3 դպրոց և 320 խրճիթ-ընթերցարան։ Ամբողջ այդ ցանցում ընդգրկված էր 40 հազար մարդ։ Չափահաս բնակչության անգրագիտության վերացումը առաջին հերթին նշանակում էր վերացնել նրա քաղաքական անգրագիտությունը։ Չափահաս անգրագետների համար կազմվել էին հատուկ դասագրքեր, որոնք բովանդակում էին քաղաքական գրականության մինիմումը, բանվորներին ու գյուղացիներին պարզաբանում սովետական իշխանության հիմունքները, նրա հիմնական նպատակներն ու խնդիրները։

Հայաստանի պայմաններում, որի բնակչության գերակշռող մասը այդ ժամանակաշրջանում գյուղացիներ էին, մեծ նշանակություն ուներ գյուղում քաղաքական-լուսավորական աշխատանքի անցկացումը։ Խնդիրը ոչ միայն գյուղացիության ագրոնոմիական անգրագիտության վերացումն էր, այլև լենինյան կոոպերատիվ պլանի լայն պարզաբանումը։ Անհրաժեշտ էր գյուղացիությանը աստիճանաբար մոտեցնել կոլեկտիվ տնտեսության առավելությունների գիտակցմանը, մի աշխատանք, որն առավել մեծ նշանակություն ստացավ գյուղատնտեսության կոլեկտիվացման սկզբնական շրջանում։ Հայաստանի սովետների VI համագումարը (1929) հատկապես նշեց, որ գյուղի լուսավորության հետ կապված աշխատանքները անհրաժեշտ է ենթարկել գյուղի սոցիալիստական վերափոխման գործին։ Այդ խնդրի կատարման համար սովետների համագումարը հանձնարարեց խրճիթ-ընթերցարաններում կենտրոնական տեղ տալ կոլեկտիվացման հարցերին, ուժեղացնել գյուղատնտեսական և գյուղական երիտասարդության դպրոցների կապը կոլտնտեսությունների հետ։ Նշվեց նաև խրճիթ-ընթերցարանները բարձրորակ գրադարանավարներով ապահովելու և գրքային ֆոնդը լրացնելու անհրաժեշտությունը[1]։ Պատահական չէ, որ խրճիթ-ընթերցարանների վիճակին այդքան կարևոր ուշադրություն էր նվիրվում։ Գյուղում տարվող կուլտուր-լուսավորական աշխատանքի սկզբնական շրջանում խրճիթ-ընթերցարանները կուլտուրական աշխատանքի միակ հենակետերն էին, մանավանդ այն գյուղական վայրերում, որտեղ տակավին դպ-

1 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 112, ց. 2, գ. 809, մաս II, թ. 199։

րոցներ չկային։ Երբ սկսվեց գյուղատնտեսության կոլեկտիվացումը, Հանրապետությունում կար մոտ 200 խրճիթ-ընթերցարան։ Խրճիթ-ընթերցարանների այդ քանակը չէր կարող բավարարել գյուղում կուլտուր-քաղաքական աշխատանքների ծավալման անգամ ամենահամեստ պահանջները։ Դրա համար էլ ամենից առաջ անհրաժեշտ էր ընդլայնել խրճիթ-ընթերցարանների ցանցը այն հաշվով, որպեսզի մշակույթի այդ օջախները ընդգրկեն բնակչության մեծ զանգվածներ։ 1929 թվականի նոյեմբերին Համկ(բ)կ կենտկոմը որոշում ընդունեց «Խրճիթ-ընթերցարանների մասին», ուր նշված էր, որ խրճիթ-ընթերցարանը պիտի դառնա չքավոր և միջակ գյուղացիության կուլտուրական ու քաղաքական ակտիվությունը կազմակերպող կենտրոն։ 1932 թվականին Հանրապետությունում խրճիթ-ընթերցարանների թիվը հասավ 317-ի։ Գյուղատնտեսության կոլեկտիվացման շրջանում դրանց գործունեության հիմնական բովանդակությունն էին դարձրել կոլտնտեսությունների ստեղծման և նրանց մեջ ընդունվելու համար մղվող ագիտացիոն-պրոպագանդիստական աշխատանքը։ Այդ կարևոր գործին գյուղին մեծապես օգնում էր բանվոր դասակարգը։ Ծողովրդական տնտեսության վերականգնման, ապա նաև կոլեկտիվացման շրջանում Հանրապետությունում մեծ ծավալ ընդունեց գյուղի շեֆության ստանձնումը։

Լուսավորության հիմնարկների գյուղում տարած աշխատանքը տվեց իր արդյունքները։ Արդեն կուլտուրական շինարարության առաջին փուլում սկսվում էր փոխվել գյուղի դեմքը։ Տարրական և գյուղական երիտասարդության դպրոցների ստեղծումը, խրճիթ-ընթերցարանների, կազմակերպվող կոլտնտեսությունների կից գործող ագրոնոմիական տարբեր կուրսերի աշխատանքը չէին կարող շաղդել գյուղացիության գիտակցության վրա, չէին կարող նրան չդարձնել գյուղի կուլտուրական վերափոխման եռանդուն կողմնակից։

Կուլտուր-լուսավորական մեծ աշխատանք էին կատարում ակումբները։ Առաջին շրջանում ակումբները գլխավորապես ստեղծվում էին քաղաքներում՝ արհմիություններին կից, բայց 1930-ական թվականների սկզբներին առաջին ակումբները երևացին նաև գյուղերում։ 1932 թվականին Հայաստանում արդեն կար ավելի քան 90 ակումբ։ Այսպես, Երևանում մեծ ժողովրդականություն էին վայելում կառուցողների, ադրբեջանական կանանց, լուսավորության աշխատողների և այլ ակումբներ։

Մասսաների կուլտուրական լուսավորության կարևոր միջոցառումներից էր նաև հակակրոնական պրոպագանդան։ Այդ աշխատանքը սերտորեն կապված էր բնակչության անգրագիտության վերացման հետ։ Դպրոցի անջատումը եկեղեցուց և դպրոցներում սկզբից ևեթ կրոնական առարկաների դասավանդման արգելումը երեխաների շրջանում տարվող հակակրոնական աշխատանքը դրեցին ճիշտ ուղու վրա։ Ինչ վերաբերում է հակակրոնական պրոպագանդային ամբողջությամբ վերցրած, ապա այդ խնդիրը պահանջում էր մեծ ջանքեր, լըրջ մըտություն և քրտնաջան աշխատանք։ Այնինչ հակակրոնական պրոպագանդայի բնագավառում թույլ տրվեցին լուրջ շեղումներ և բացեր։ Սովետական իշխանության առաջին տարիներին հակակրոնական պրոպագանդան տարվում էր կամպանիոն ձևով. ոչ թե գիտա-աթեիստական գիտելիքներ էին տարածվում, այլ մասսայաբար փակվում էին եկեղեցիները, կիրառվում էին հարկադրական քնության արգելափակումներ և այլն։ Հայաստանի կոմունիստական կուսակցու-

թյունը, նրա կենտկոմը բազմիցս զբաղվեցին հակակրոնական աշխատանքի հարցերով։ Հայաստանի կոմունիստական կուսակցության II համագումարը նշեց, որ կրոնական նախապաշարմունքների դեմ մղվող պայքարում պետք է ցուցաբերել զգուշություն, շրջանցել հարկադրանքի միջոցները, համբերատար կերպով մասսաներին բացատրել կրոնի հետադիմական էությունը։ Ստեղծվեց անաստվածների ընկերություն, որը որոշակի դեր խաղաց աթեիստական աշխարհայացքի պրոպագանդման գործում։ Հակակրոնական թեմաներով լույս տեսան գրքեր և բրոշյուրներ, սկսեց հրատարակվել անաստվածների ընկերության ամսագիրը։ Սակայն մի շարք հաջողություններով հանդերձ հակակրոնական պրոպագանդան չվերացրեց և չէր էլ կարող կարճ ժամանակում վերացնել կրոնական նախապաշարմունքները՝ մարդկանց գիտակցության մեջ եղած անցյալի այդ վերապրուկը։

Մասսաների կուլտուր-քաղաքական լուսավորության կարևոր բնագավառներից մեկն էլ կանանց շրջանում տարվող աշխատանքն էր, որի նպատակն էր հայ աշխատավորուհուն դարձնել սոցիալիստական հասարակության լիիրավ անդամ, սոցիալիզմի ակտիվ կառուցող։ Կանանց համար ստեղծվեցին տղամարդկանց համահավասար քաղաքական, տնտեսական և կուլտուրական գործունեության պայմաններ։ Քաղաքական իրավահավասարությունը, որ երաշխավորված էր Սովետական Հայաստանի սահմանադրությամբ, տղաների և աղջիկների համատեղ ուսումնառությունը, բարձրագույն կրթություն ստանալու հնարավորությունը սովետական իշխանության կանանց ազատագրման ուղղությամբ ձեռնարկած առաջին հիմնադիր միջոցառումներն էին։

Կանանց մեջ տարվող աշխատանքը Սովետական Հայաստանում իրականացվում էր բազմապիսի ձևերով։ Կանանց բաժինների ստեղծումը, 1921 թվականին կանանց համահայաստանյան առաջին համագումարի անցկացումը, «Հայաստանի աշխատավորուհի» ամսագրի հրատարակումը, մանկապարտեզների և մանկամսուրների ցանցի ընդարձակումը, որոնց նպատակն էր կանանց աշխատանքի թեթևացումը, այս բոլոր միջոցառումներն իրենց նշանակալից դերը կատարեցին սովետական կնոջը, որպես սոցիալիզմի ակտիվ կառուցողի, դաստիարակելու գործում։ Այս ամենի շնորհիվ 1930-ական թվականների սկզբներին Սովետական Հայաստանի կանայք արդեն ակտիվ մասնակցում էին երկրի սոցիալիստական վերափոխման, ժողովրդական տնտեսության և մշակույթի զարգացման գործին։ Իսկ այնպիսի ասպարեզներում, ինչպիսիք ժողովրդական լուսավորությունն ու առողջապահությունն էին, կանայք սկսեցին առաջավոր դեր խաղալ։ Մեծ աշխատանք կատարվեց նաև Հայաստանի ազգային փոքրամասնությունների կանանց՝ ադրբեջանուհիների և քրդուհիների շրջանում։

---

* *
*

1930-ական թվականներին անցկացված կուլտուր-լուսավորչական աշխատանքը նպատակ ուներ աշխատավորներին դարձնել սոցիալիստական շինարարության գիտակից և ակտիվ մասնակիցներ։ Հանրապետության ժողովրդա-

կան տնտեսության զարգացման հաջողությունները հնարավորություն ընձեռեցին կուլտուրա-քաղաքական աշխատանքներին հատկացնել ավելի շատ միջոցներ, այդ կարևոր աշխատանքի համար ստեղծել գիտական կայուն բազա։ Հատուկ ուշադրություն դարձվեց գյուղական բնակչության կուլտուրական լուսավորման գործին։ Այդ նպատակի համար օգտագործվում էին տարբեր միջոցներ՝ մամուլը, ռադիոն, գրքերը, կուլտուրական և ագիտացիոն-մասսայական աշխատանքի տարբեր ձևեր։

Կուլտուր-քաղաքական աշխատանքի սիստեմում կարևոր տեղ էր գրավում սովետական մամուլը։ Երկրի սոցիալիստական ինդուստրացման և գյուղատնտեսության կոլեկտիվացման շրջանում մամուլը դարձել էր մասսաների դաստիարակման և կազմակերպման հզոր գործոն։ Իր էջերում լայնորեն լուսաբանելով սոցիալիստական շինարարության հաջողությունները, պրոպագանդելով առաջավոր ձեռնարկությունների և կոլտնտեսությունների փորձը, սովետահայ մամուլը դրանով իսկ կարևոր դեր էր խաղում ժողովրդական տնտեսության մեջ սոցիալիստական մրցության ծավալման, ստախանովյան շարժման կազմակերպման գործում։

1933—1940 թվականների ընթացքում նշանակալից չափով մեծացավ հանրապետությունում հրատարակվող թերթերի տպաքանակը, ավելացավ նրանց թիվը։ Եթե 1933 թվականին Հայաստանում հրատարակվում էր քառասուն անուն թերթ՝ 213 հազար ընդհանուր տպաքանակով, ապա 1940 թվականին լույս էր տեսնում 56 անուն թերթ՝ 235 հազար ընդհանուր տպաքանակով։ Այդ նույն ժամանակամիջոցում հանրապետությունում հրատարակվող ամսագրերի թիվը 20 անունից հասավ 40-ի, իսկ նրանց տպաքանակը՝ 126 հազարից՝ 505 հազարի[1]։ Հանրապետությունում հրատարակվում էր մոտ 40 անուն շրջանային թերթ։

Պարբերական մամուլի հետ միասին արագ ընդլայնվում էր գրքերի հրատարակման գործը։ 1933 թվականին Սովետական Հայաստանի կառավարությունը որոշում ընդունեց հանրապետությունում հրատարակչական աշխատանքը կարգավորելու մասին։ Ամրապնդվեց հրատարակչությունների նյութական բազան։ 1933 թվականին հանրապետությունում լույս ընծայվեց 507 անուն գիրք, իսկ 1940 թվականին՝ 708 անուն։ Նշանակալից չափով աճել էր գեղարվեստական գրականության տպաքանակը, որը վկայում էր հանրապետության բնակչության հոգևոր պահանջմունքների աճի մասին։ Նախապատերազմյան տարիներին մեծ տպաքանակով լույս տեսան Խ. Աբովյանի, Մ. Նալբանդյանի, Գ. Սունդուկյանի երկերը, ինչպես նաև սովետահայ գրողներ Ավ. Իսահակյանի, Ե. Չարենցի, Ա. Բակունցի, Դ. Դեմիրճյանի, Ստ. Զորյանի, Գ. Սարյանի, Ն. Զարյանի և ուրիշների ստեղծագործությունները։ Նշանակալից աշխատանք կատարվեց ՍՍՀՄ ժողովուրդների գրականությունը հայերեն լեզվով թարգմանելու և հրատարակելու ուղղությամբ։ Լույս տեսան Պուշկինի, Գոգոլի, Նեկրասովի, Շևչենկոյի և ուրիշների գործերը։ Հանրապետությունում գրքերի հրատարակման աճին զուգընթաց ավելանում էր գրադարանային ֆոնդը, ընդլայնվում էր գրադարանների ցանցը։ 1934 թվականի մարտ ամսին ՍՍՀՄ կենտգործկոմը ընդունեց «ՍՍՀ Միությունում գրադարանային գործի մասին» որոշումը, որից հետո

1 Տե՛ս «Культурное строительство Армянской ССР», էջ 118։

նշանակալից միջոցներ հատկացվեցին գրադարանների կառուցման և գրադարանային ֆոնդի ընդլայնման համար: Հատկապես մեծ դեր էին կոչված կատարելու գյուղական գրադարանները, որոնք հաճախ կուլտուրական աշխատանքի միակ կենտրոններն էին գյուղում: 30-ական թվականների ընթացքում մեծ չափով աճեց մասսայական գրադարանների ցանցը: 1932 թվականին Հայաստանում կար 388 գրադարան (նրանցից 269-ը գյուղերում), որոնց գրքային ֆոնդը կազմում էր 332 հազար օրինակ. 1940 թվականին մասսայական գրադարանների թիվը աճեց և հասավ 908-ի (դրանցից 784-ը գյուղերում), որոնց գրքային ֆոնդը հաշվվում էր 711 հազար օրինակ[1]: Ալ. Մյասնիկյանի անվան Երևանի պետական հանրային գրադարանը դարձավ Միության խոշորագույն գրադարաններից մեկը, որտեղ մեծ աշխատանք էր կատարվում նաև հայ պարբերական մամուլի և հնատիպ հայերեն գրքերի հավաքման ուղղությամբ:

Մասսաների կոմունիստական դաստիարակության գործում կարևոր դեր էին խաղում թանգարանները: 1935 թվականին Հայաստանի կոմկուսակցության կենտկոմի որոշմամբ պետական կուլտուր-պատմական թանգարանը վերակազմավորվեց և նրա բազայի վրա ստեղծվեցին պատմական, գրական, թատերական և արվեստի թանգարանները[2]: Բացի կուլտուրայի բնագավառում հայ ժողովրդի ձեռք բերած նշանակալից նվաճումները պրոպագանդելուց, այդ թանգարանները, դառնալով հայ ժողովրդի պատմության, գրականության և արվեստի գծով նյութերի հավաքման կենտրոններ, գիտա-հետազոտական լայն աշխատանքներ էին տանում: 1940 թվականին Հայաստանում գործում էին 11 թանգարան:

30-ական թվականների երկրորդ կեսից գյուղում կուլտուր-քաղաքական աշխատանքի հիմնական օղակը կոլտնտեսությունների ակումբներն էին: 1940 թվականին հանրապետությունում կար 897 ակումբ, որոնցից 737-ը գտնվում էին գյուղերում և շրջկենտրոններում: Շատ ակումբներին կից գործում էին գրադարաններ, բանվորների և կոլտնտեսականների քաղաքական կրթության բարձրացման խմբակներ. լայն զարգացում էր սկսել ստանալ աշխատավորների գեղարվեստական ինքնագործունեությունը:

1930-ական թվականներին, մամուլին զուգընթաց ընդլայնվում էր ռադիոֆիկացիան և դառնում կուլտուր-լուսավորական աշխատանքի կարևոր միջոցներից մեկը: 1933 թվականին կառավարության որոշմամբ կազմակերպվեց Հայկական ՍՍՀ ժողովրդական կոմիսարների սովետին կից ռադիոհաղորդումների և ռադիոֆիկացիայի կոմիտե, որը մեծ աշխատանք կատարեց հանրապետության ռադիոֆիկացման ուղղությամբ: 1940 թվականին հանրապետությունում արդեն կար 38 հազար ռադիոկետ: Ռադիոն լայնորեն մուտք էր գործում հայ ժողովրդի կենցաղի մեջ:

Սոցիալիստական շինարարության նախապատերազմյան տարիներին կուսակցության ծավալած գաղափարական աշխատանքներում կենտրոնական տեղ էր գրավում մարքս-լենինյան ուսմունքի պրոպագանդան: Սոցիալիզմի կառուցումն ավարտող սովետական հասարակության հաջող զարգացումը աներևա-

---

1 Տե՛ս «Культурное строительство Армянской ССР», էջ 101:
2 Տե՛ս Մի հայկական ֆիլիալի արխիվ. ֆ. 1, ց. 23, գ. 12, թ. 88:

կայելի էր ապանց աշխատավորների գաղափարական-տեսական, կուլտուրական մակարդակի և գիտակցականության բարձրացման, աշխատանքի ու հասարակական սեփականության նկատմամբ ունեցած սոցիալիստական վերաբերմունքի։ 1938—1940-ական թվականներին Հայաստանի կոմկուսակցության կենտկոմը, գաղափարական աշխատանքի դրվածքը բարելավելու նպատակով, անցկացրեց մի շարք կարևոր միջոցառումներ։ 1938 թվականի նոյեմբերին Համկ(բ)կ կենտկոմը որոշում ընդունեց կուսակցական աշխատանքի դրվածքի մասին. որոշումը դատապարտում էր կուսակցական պրոպագանդայում գոյություն ունեցող անկազմակերպվածությունը, ընդգծում կուսակցական պրոպագանդայի և ուսուցման որակի բարձրացման անհրաժեշտությունը։ Կուսակցական պրոպագանդան ղեկավարելու նպատակով միութենական հանրապետությունների կոմկուսակցությունների կենտկոմներին կից ստեղծվեցին ագիտացիայի և պրոպագանդայի բաժիններ, ինչպես նաև դասախոսական խմբեր։ Բուհերում մտցվեց մարքսիզմ-լենինիզմի առարկայի դասավանդումը։ Այդ միջոցառումները նպաստեցին կուսակցական պրոպագանդայի և մասսաների մեջ տարվող գաղափարական-դաստիարակչական աշխատանքների բարելավմանը։

Մասսաների կուլտուր-քաղաքական լուսավորման և նրանց ընդհանուր կուլտուրական մակարդակի բարձրացման գործում, հիրավի, կարևոր դեր կարող էր խաղալ հայկական սովետական հանրագիտարանը, որի ստեղծմանը ձեռնամուխ եղան հայ գիտնականները 1930-ական թվականների սկզբներին։ Ըստ մտահղացման, հանրագիտարանը պետք է լիներ ժամանակակից գիտության և տեխնիկայի բոլոր բնագավառների, ինչպես նաև հայ ժողովրդի պատմության և մշակույթի վերաբերյալ գիտելիքների մի հավաքածու։ Այդ ուղղությամբ շոշափելի աշխատանք կատարվեց։ Կազմվեց բառացանկը, անցկացվեց բաժանորդագրություն, հրատարակման պատրաստվեց առաջին հատորը։ Սակայն անհատի պաշտամունքի պայմաններում կարևոր այդ աշխատանքը որակավորվեց իբրև «նացիոնալիզմի» արտահայտություն և հանրագիտարանի ստեղծման աշխատանքները դադարեցվեցին։

1930-ական թվականներին ընդլայնվում և ամրապնդվում էին հայ ժողովրդի մշակութային կապերը ՍՍՀՄ մյուս ժողովուրդների հետ։ Բնականաբար, եղբայրական ժողովուրդների մշակույթին ծանոթանալն ու նրան հաղորդակից դառնալը մեծապես ընդլայնում էին Հայաստանի աշխատավորության կուլտուրական մտահորիզոնը, նպաստում քաղաքական կարևոր գործի՝ ՍՍՀՄ ժողովուրդների բարեկամության ամրապնդման խնդրի իրականացմանը։ Այդ նպատակով էլ ՍՍՀՄ ժողովուրդների կուլտուրանների ազգային տոները նշվում էին որպես բոլոր ժողովուրդների տոներ։ Դա նպաստում էր եղբայրական ժողովուրդների մերձեցման գործին։ Որպես օրինակ, կարելի է մատնանշել 1937 թվականին ռուս մեծ բանաստեղծ Ա. Ս. Պուշկինի մահվան 100-ամյա հոբելյանի անցկացումը։ Հայաստանում ստեղծվեց հանրապետական կոմիտե։ Այդ առթիվ հայերեն հրատարակվեցին մեծ բանաստեղծի ստեղծագործությունները, պարբերական մամուլում, ռադիո-զրույցներում լայնորեն լուսաբանվեցին Ա. Ս. Պուշկինի ստեղծագործության նշանակությունը, նրա կապերը Հայաստանի հետ։ Հանրապետության կառավարության որոշմամբ Բզովդալի լեռնանցքից ոչ հեռու գտնվող Ստեփանավանի շրջանի Գերգեր գյուղը, որ-

տեղ Ա. Ս. Պուշկինը հանդիպել էր Թեհրանում սպանված Ա. Ս. Գրիբոյեդովի փոխադրվող դիակին, ստացավ Պուշկինո, իսկ լեռնանցքը՝ Պուշկինյան լեռնանցք անունը, ուր կանգնեցվեց մեմորիալ խորաքանդակ։ Միաժամանակ երեվանի լավագույն դպրոցներից մեկին տրվեց բանաստեղծի անունը։ Հայ ժողովուրդն ըստ արժանվույն նշեց ռուս ժողովրդի ազգային մեծ բանաստեղծի հիշատակը։

Հայաստանի աշխատավորները 1937 թվականին մեծ հանդիսավորությամբ նշեցին նաև Շոթա Ռուսթավելու 750-ամյակը։ Լույս ընծայվեց Շ. Ռուսթավելու «Վագրենավորը» հայերեն Գ. Ասատուրի թարգմանությամբ։

1939 թվականին, որպես առաջավոր մշակույթի, որպես ՍՍՀՄ ժողովուրդների տոն, նշվեց հայկական ժողովրդական էպոս «Սասունցի Դավիթ» 1000-ամյակը։ Տոնակատարության օրերին ՍՍՀՄ ԳԱ-ն ռուսերեն լեզվով հրատարակեց էպոսը՝ ակադեմիկոս Հ. Օրբելու ներածական հոդվածով։ Մոսկվայում տեղի ունեցավ հանդիսավոր երեկո նվիրված «Սասունցի Դավիթ» էպոսի 1000-ամյակին։ Հանդիսավոր երեկոյին ելույթ ունեցան գրողներ Ալեքսեյ Տոլստոյը, Ալեքսանդր Ֆադեևը, ակադեմիկոս Հովսեփ Օրբելին և ուրիշներ։ Երևանում տեղի ունեցավ ՍՍՀՄ գրողների միության արտակարգ պլենումը, որին մասնակցելու համար Երևան եկան եղբայրական բոլոր հանրապետությունների ներկայացուցիչները, այդ թվում սովետական հայտնի գրողներ Ա. Ֆադեևը, Լ. Լեոնովը, Վ. Իվանովը, Ա. Կարավևան և ուրիշներ։ Հայկական ժողովրդական հերոսական էպոսի հոբելյանը դարձավ ՍՍՀՄ բոլոր ժողովուրդների բարեկամության և մշակույթի տոն։

Այսպիսով, սոցիալիզմի կառուցման ավարտի շրջանում կուսակցության ծավալած գաղափարական աշխատանքի, մասսաների կուլտուրա-քաղաքական լուսավորման նպատակը սովետական մարդկանց հայրենասիրության, Լենինի գաղափարներին նվիրվածության, պրոլետարական ինտերնացիոնալիզմի և բարեկամության ոգով դաստիարակումն էր։

* * *

Հայաստանի տնտեսության մեջ տեղի ունեցած արմատական տեղաշարժերը, ինչպես նաև ծավալվող կուլտուրական հեղափոխության շնորհիվ բնակչության ընդհանուր կուլտուրական մակարդակի բարձրացումը լուրջ փոփոխություններ մտցրեցին հայ ժողովրդի կենցաղում։

Այդ փոփոխությունները, առաջին հերթին արտահայտվեցին իրենց դարն ապրած ընտանեկան հին հարաբերությունները վերափոխելու և տղամարդու ու կնոջ իրավահավասարության վրա հիմնված նոր ընտանիք հաստատելու մեջ։ Կյանքի բոլոր ասպարեզներում կանանց տրվեցին հավասար իրավունքներ։ Ընդհանուր պարտադիր կրթություն իրականացնելիս հատուկ ուշադրություն դարձվեց աղջիկներին դպրոցական ցանցում ընդգրկելու խնդրին։ Հայ կնոջ առաջ բաց էին Հայաստանի բուհերի ու տեխնիկումների դռները։

Եթե մինչև հեղափոխությունը հայ կինը, հատկապես գեղջկուհին, սահմանափակված էր տնային տնտեսությամբ, ապա սովետական իշխանության տարիներին նա սկսեց ավելի ու ավելի ընդգրկվել հասարակական և արտադրա-

կան գործունեության ասպարեզ։ Դրան մեծապես նպաստեց հանրապետության հին աղգաբնակչության ընդհանուր կուլտուրական մակարդակի բարձրացումը։ 1940 թվականին հանրապետության բուհերում և միջնակարգ մասնագիտական հաստատություններում սովորում էր 20 հազար ուսանող, այդ թվում՝ 9462 աղջիկ (կամ ուսանողության 47,5 տոկոսը)[1]։ 1939 թվականի մարդահամարի տվյալներով, Հայաստանում բարձրագույն և միջնակարգ կրթությամբ աշխատում էր 2400 կին։ Ամեն մի հազար կնոջ ընկնում էր բարձրագույն կրթություն ունեցող 4 կին (այդ ցուցանիշով Հայաստանը ՍՍՀՄ-ում համաքայլ ընթանում էր ՌՍՖՍՀ-ի և Ուկրաինական ՍՍՀ-ի հետ, զիջելով միայն Վրացական ՍՍՀ-ին)[2]։ Այդ նույն թվականին Հայաստանում ամեն մի 1000 կնոջ ընկնում էր թերի բարձրագույն, միջնակարգ և ոչ լրիվ-միջնակարգ կրթություն ունեցող 59 կին[3]։ Եթե հաշվենք, որ 1926 թվականի մարդահամարով Հայաստանի կին բնակչության գրեթե 80 տոկոսն անգրագետ էր, ապա պարզ կդառնա հայ կնոջ կուլտուրական մակարդակի այն վիթխարի առաջընթացը, որ տեղի էր ունեցել 15 տարուց էլ պակաս ժամանակամիջոցում։ Ժողովրդական տնտեսության շատ ճյուղերում հայ կինը աշխատում էր տղամարդուն հավասար։ Նախապատերազմյան տարիներին կին աշխատողների թիվը հատկապես մեծ էր թեթև արդյունաբերության մեջ, ժողովրդական լուսավորության, առողջապահության և կուլտուրայի բնագավառներում։

Հայ կինը ակտիվորեն մասնակցում էր հանրապետության հասարակական-քաղաքական կյանքին։ Այդ պարզորեն երևում է, երբ համեմատում ենք հանրապետության բարձրադիր օրենսդիր օրգանում՝ բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների դեպուտատների համագումարներում, իսկ ավելի ուշ՝ Հայկական ՍՍՀ Գերագույն սովետում կանանց պատգամավորներ և դեպուտատներ ընտրվելու մասին տվյալները։ Այսպես, Հայաստանի սովետների առաջին համագումարի (1922) աշխատանքներին մասնակցել են 17 կին-պատգամավոր (252 պատգամավորից)։ Հայաստանի սովետների VI համագումարին (1929), որպես պատգամավոր ընտրված էր 43 կին (399 պատգամավորից)։ Հայկական ՍՍՀ առաջին դումարման Գերագույն սովետի դեպուտատ էր ընտրված 65 կին (256 պատգամավորից)։ Հայաստանի կանայք իրենց լուման էին ներդնում սոցիալիստական հասարակության կառուցման գործում։

Զգալիորեն փոխվեց հայկական ընտանիքի պատկերը։ Նախկինում հայերին բնորոշ էր բազմանդամ ընտանիքը, գերդաստանը բաղկացած ուղղակի և անուղղակի հարազատների, երբեմն մի քանի սերունդների ներկայացուցիչներից։ Կոլեկտիվացման նախորդող շրջանում տեղի ունեցավ ընտանիքների տրոհման պրոցեսը՝ պայմանավորված գյուղական տնտեսությունների մասնատումով։ Բնորոշ երևույթ դարձավ երիտասարդ սերնդի՝ հայրական տնից հեռանալը և երիտասարդ ինքնուրույն ընտանիքներ կազմելը։ Անցյալի գիրկը նետվեցին ընտանեկան կենցաղի նահապետական հին սովորույթներից շատերը։

---

1 Տե՛ս «Культурное строительство Армянской ССР», էջ 64։

2 Տե՛ս «Женщины и дети в СССР», статистический сборник, М., 1961, էջ 68, 71։

3 Տե՛ս նույն տեղում, էջ 71։

Աշխատավորների ընդհանուր կուլտուրական մակարդակի և նյութական բարեկեցության բարձրացումն իրենց կնիքը դրեցին սովետական մարդու՝ բանվորների, գյուղացիների և մտավորականության կենցաղի վրա։ Անհետացավ, իհարկե, առաջին հերթին քաղաքում, ազգային հին զգեստը, որին փոխարինելու եկավ ժամանակակից տարազը։ Քաղաքում և գյուղում կատարվող բնակարանային շինարարությունը հանգեցրեց տնային հին կահ-կարասու փոփոխմանը. բնակարաններում երևացին ժամանակակից կահույքը, ռադիոընդունիչները և այլն։

Հայ ժողովրդի կենցաղում կատարված փոփոխությունները, հին շատ սովորությունների և նախապաշարմունքների հաղթահարումը վկայում էին մասսաների մեջ սոցիալիստական մշակույթի խոր ներթափանցման, նոր մշակույթի նվաճումներին ժողովրդական ամենալայն խավերի հաղորդակից դառնալու մասին։

* * *

Հանրապետության տնտեսության մեջ կատարված արմատական փոփոխությունները և արտադրության սոցիալիստական եղանակի հաղթանակը հանդիսացան հայ ժողովրդի ձեռք բերած կուլտուրական նվաճումների հիմքը։ Դրա հետ միասին, իր հերթին կուլտուրական հեղափոխությունը ևս վերափոխիչ այն մեծ ուժն էր, որ կուլտուրապես կերպարանափոխեց հայ ժողովրդին և դարերի խորքից եկող այդ ժողովրդին հաղորդակից դարձրեց արդի քաղաքականության նվաճումներին։

Սկսելով մասսայական անգրագիտության վերացումից և մշակույթի մատչելիության ու աշխատավորությանը մշակույթին հաղորդակից դարձնելու համար անհրաժեշտ պայմանների ստեղծումից, կոմունիստական կուսակցությունը կարողացավ բարձրացնել հայ ժողովրդի ընդհանուր կուլտուրական մակարդակը։

Սովետական Հայաստանում կուլտուրական հեղափոխության առաջին շրջանի գլխավոր հանրագումարը հայկական սոցիալիստական մշակույթի ստեղծումն էր։ Սոցիալիստական մշակույթը՝ դա ամբողջ ժողովրդի մշակույթն է, նրա ստեղծողը ժողովուրդն է և այն ծառայում է ժողովրդին։ Սոցիալիստական մշակույթի հիմքը մարքս-լենինյան ուսմունքն է։ Իսկ դա նշանակում է, որ կուլտուրական հեղափոխությունը հանգեցրել էր կոմունիստական գաղափարախոսության վերջնական հաղթանակին։

Հայաստանում կուլտուրական հեղափոխության հաջողությունները արդյունք էին կոմունիստական կուսակցության լենինյան ազգային քաղաքականության իրականացման, քաղաքականություն, որը բոլոր մեծ թե փոքր ազգերի համար ճանաչում էր լիակատար իրավահավասարություն։ Սովետական իշխանության առաջին իսկ օրերից կոմունիստական կուսակցությունը խնդիր էր դրել հասարակական զարգացման բոլոր՝ թե տնտեսական, թե քաղաքական և թե կուլտուրական բնագավառներում մեր բազմազգ երկրի ժողովուրդների միջև ստեղծել լիակատար հավասարություն։ Վ. Ի. Լենինը սովորեցնում էր, որ միայն դեպի տարբեր ազգերն ունեցած հնկայական ուշադրությունն է վերացնում ընդ-

հարուստների հիմքը, վերացնում ինոխադարձ անվստահությունը, վերացնում երկյուղը որևէ խարդավանքի հանդեպ, ստեղծում հատկապես տարբեր լեզուներով խոսող բանվորների ու գյուղացիների այն վստահությունը, առանց որի բացարձակապես անհնարին են թե ժողովուրդների միջև եղած հարաբերությունները և թե այն ամենի քիչ թե շատ հաջող զարգացումը, որն արժեքավոր է ժամանակակից քաղաքականության մեջ[1]։

Հայ ժողովրդի կարիքների հանդեպ ունեցած ուշադրության և կոմունիստական կուսակցության մշտական հոգատարության շնորհիվ Սովետական Հայաստանը հասավ տնտեսական ու կուլտուրական զարգացման բարձր մակարդակի։

---

1 Տե՛ս В. И. Ленин, Полное собрание сочинений, հատ. 45, էջ 240։

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՎԵՑԵՐՈՐԴ

ՍՈՎԵՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1. ՍՈՎԵՏԱՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԶԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Բազմադարյան հայ գրականությունը զարգացման նոր շրջան թևակոխեց Հայաստանում սովետական իշխանության հաստատումից հետո։ 20-ական թվականների հենց սկզբից ծայր առավ գրականության բովանդակության ու ձևերի հարստացման, իրականության արտացոլման գեղարվեստական նոր սկզբունքների մշակման բարդ ընթացք։

Զարգացման արդյունավետ ուղիներ և դրանց կողքին՝ բազում խաչուղիներ ու փիղզագներ։ Գեղարվեստական հայտնություններ և դրանց կողքին՝ մոլորություններ ու սայթաքումներ։ Ռոմանտիկական խանդավառություն նոր գրականության գալիքի հանդեպ ու տարակուսանքներ՝ նորի ստեղծման կապակցությամբ։ Կրքոտ վիճաբանություններ, տասնյակ տևական հարցադրումներ՝ միմյանց լրացնող ու միմյանց հերքող։ Այսպիսի հակասական իրադրության մեջ սկսվեց 20-ական թվականների գրական շարժումը։ Պատմությունը առաջադրեց սոցիալիստական գրականության կերտման պահանջը։ Ժողովրդի կյանքում կատարված արմատական հեղաշրջումը թելադրում էր սոցիալիստական գրականության գաղափարական բովանդակության ու գեղարվեստական որոնումների մի նոր ընթացք. այն գրականության, որն իր բովանդակությունը պետք է հաստատեր ժողովրդի պատմական գործունեության՝ կրյանքի սոցիալիստական վերափոխության հիմքի վրա։

Հասարակական հեղաշրջման յուրահատուկ դժվարին իրադրությունը՝ նրան բնորոշ ներքին հակասություններով ու լարված պայքարով, խոր կնիք է դնում գրականության զարգացման ընթացքի ու գրական կենցաղի վրա։ Նոր գրականության ձևավորման շրջանում առանձնակի կարևորություն է ստանում նրա ստեղծագործական անձնակազմի հարցը. ովքե՞ր են այն ուժերը, որոնք դնելու են ապագա գրականության հիմքերը, «նոր գրողները» ինչ հարաբերության մեջ են լինելու «հների»՝ անցյալից եկող գրողների հետ։ Այս բարդ «հանգույցը» բնականաբար, լուծվում է այն վերաբերմունքով, որ հանդես են բերում գրական տարբեր շերտերը հեղափոխական, նոր իրականության նկատմամբ։

Նախահեղափոխական ժամանակաշրջանից հայտնի գրողների համար առաջնահերթ է դառնում քաղաքական ինքնորոշման խնդիրը։ XX դարի ուս-

ականավոր բանաստեղծ Ալ. Բլոկի պատմական կոչը՝ «ամբողջ մարմնով, ամբողջ սրտով, ամբողջ գիտակցությամբ ունկնդրել հեղափոխությունը» — դառնում է նաև հայ մտավորականության լավագույն ներկայացուցիչների գործունեության նշանաբանը։

Վահան Տերյանից հետո, որ դեռևս 1917 թվականին դարձել էր կոմունիստ, ապրելով իր ստեղծագործական կյանքի երկրորդ ծնունդը, տարբեր ուղիներով ու ամեն մեկը յուրովի, երբեմն սուր հակասություններով ու ներքին տագնապներով, հայ գրականության ու արվեստի գործիչները (բացառությամբ մի քանի փախստականների) կատարեցին ընտրություն՝ ընդառաջ գնացին սոցիալիստական հեղափոխությանը։



Ավ. Իսահակյան

Հովհաննես Թումանյանն ու Հովհաննես Հովհաննիսյանը, Ավետիք Իսահակյանն ու Ալեքսանդրը Շիրվանզադեն, Նար-Դոսն ու Դերենիկ Դեմիրճյանը՝ գեղարվեստական խոսքի ճանաչված վարպետները և նրանց հետ շատերը խորին հավատով զինվորագրվեցին «մուրճի ու մանգաղի» իշխանությանը։ 1925 թվականին, դեռ արտասահմանում գտնվող Ալ. Շիրվանզադեն գրեց. «Թող լալկանները շարունակեն ողբալ, թող թերահավատները իրենց թթու խոսքերը հորջորջեն,— ես հավատում եմ Հայաստանի, լավագույն Հայաստանի գոյությանը։ Հավատում եմ և պատրաստվում եմ նրա երգը երգելու և նրան նվիրելու իմ կյանքի մնացորդը։ Հավատում եմ նրա երիտասարդ կառավարության ուժերին, աշխատությանը, հայրենասիրությանը և անկեղծությանը։ Գիտեմ, որքան դժվարին, որքան ծանր է այլասերված ու ապուշ տարրերի ձեռքով ավերված երկրի վերականգնումը, բայց և գիտեմ, որքան զորավոր է հայ աշխատավորի, հայ գյուղացու բազուկը...»[1]։

Ականավոր գրողների քաղաքական դիրքորոշումը մեծ տպավորություն գործեց նաև արտասահմանում գտնվող այն մտավորականների վրա, որոնք ինչ-որ ժամանակ խաբուսիկ հույսեր էին կապել արևմտյան դիվանագիտության սուտ խոստումների հետ։ 1921—1925 թվականների ընթացքում սովետական իշխանության պաշտպանությամբ հանդես եկան Ե. Օտյանը, Վ. Թեքեյանը, Ա. Զոպանյանը, Լ. Բաշալյանը, Զ. Եսայանը, Տ. Կամսարականը և ուրիշ-

1 «Երևան» (Փարիզ), 1925, № 12։

ներ։ Դաշնակցական զրպարտանքի ու հալածանքի պայմաններում նրանք հարազատ ժողովրդի և նրա մշակույթի վերածնությունը կապեցին սովետական իշխանության ազգային քաղաքականության, սոցիալիզմի գաղափարների հաղթանակի հետ։

Հայ գրականության խոշոր վարպետների հետ միասին սոցիալիստական գրականության կերտմանը լծվեցին հեղափոխությունից առաջ արդեն Ճանաչված գրողները (Մ. Մանվելյան, Կ. Միքայելյան, Ստ. Զորյան, Վ. Թոթովենց), ինչպես նաև այսպես կոչված «գյուղացիական գրողները» (Աթ. Խնկոյան, Վ. Միրաքյան, Մ. Դարբինյան և ուրիշներ)։



Ա. Շիրվանզադե

Մյուս հոսանքը, որ մտավ սովետահայ գրականության ընտանիքը, պրոլետարական գրական շարժման ներկայացուցիչներն էին, որոնց, դեռ 1905 թվականից սկսած, աճեցնում և գաղափարապես կոփում էին կուսակցության այնպիսի ականավոր գործիչներ, ինչպես Սուրեն Սպանդարյանը և Ստեփան Շահումյանը։ Հայ պրոլետարական գրականության հիմնադիր Հակոբ Հակոբյանի, հեղափոխական բանաստեղծուհի Շուշանիկ Կուրղինյանի, բանվորդրամատուրգ Անուշավան Վարդանյանի, արձակագիրներ Մովսես Արազու, Մադաթ Պետրոսյանի, Մարո Ջուրաբյանի և հեղափոխական-դեմոկրատական մամուլի օրգանների շուրջը համախմբված մյուս գրողների համար գոյություն չուներ «անցման» տանջալից խնդիր։

Այս հարցը դրված չէր նաև գրական այն սերնդի առաջ, որին կյանքի ուղեգիր տվեց Հոկտեմբերյան հեղափոխության և քաղաքացիական պատերազմի ժամանակաշրջանը (Ե. Չարենց, Ա. Վշտունի, Գ. Աբով և ուրիշներ)։ Այս խմբերի կողքին սովետահայ գրականության անձնակազմում տեղ գրավեցին նաև գյուղական ու բանվորական միջավայրից, որբանոցներից եկած երիտասարդ գրողները (Ա. Բակունց, Գ. Մահարի, Վ. Ալազան, Ն. Զարյան, Վ. Նորենց, Մ. Արմեն, Սիրաս, Ս. Տարոնցի, Սարմեն, Գ. Սարյան, Արաքս և ուրիշներ)։ Բազմամարդ դարձավ գրականության անձնակազմը։

Գեղարվեստական տարբեր ըմբռնումներ ու սկզբունքներ դավանող գրողների համագործակցության հարցը դարձավ գրական քաղաքականության առաջնահերթ խնդիրներից մեկը։

Սովետական իշխանությունը մեծագույն հոգատարությամբ շրջապատեց գրականության «հին» ու «նոր» գործիչներին, նյութական ու բարոյական լայն հնարավորություններ ստեղծեց նրանց ստեղծագործական աճման համար։ 1921 թվականի հոկտեմբերի 4-ին գրած նամակում Հովհ. Թումանյանը դեռևս արտասահմանում գտնվող Ավ. Իսահակյանին շտապեց հայտնել, որ «...գրականությունն ու գեղարվեստը երբեք էսքան ուշադրության առարկա եղած չեն մեր աշխարհում»[1]։

1921 թվականի հոկտեմբերին հրապարակվեց «Գրական-գեղարվեստական աշխատողների ապահովության մասին» դեկրետը։ Կենսաթոշակ նշանակվեց ոչ միայն Անդրկովկասում ապրող, այլև արտասահմանում գտնվող բոլոր նշանավոր հայ գրողներին։ Այդ լայնախոհ վերաբերմունքը մեծ ոգևորություն առաջ բերեց գրչի մշակների շրջանում, որոնք անում էին ամեն ինչ՝ նորաստեղծ Հայաստանի տնտեսության ու մշակույթի բարգավաճմանը իրենց մասնակցությունը բերելու համար։

Գեղարվեստական գրականության զարգացման կարևոր լծակներ դարձան գրական-գեղարվեստական, քաղաքական-հասարակական հանդեսները («Նորք», «Դարբնոց», «Մուրճ», «Նոր-ակոս», «Դիրքերում», «Վերելք», «Նոր ուղի», «Գրական դիրքերում»), օրաթերթերը («Խորհրդային Հայաստան», «Մարտակոչ», «Պրոլետար»), գրական հավելվածները, մանկական ու երիտասարդական պարբերականները («Պատկոմ», «Կարմիր ծիլեր», «Պիոներ», «Երիտասարդ բոլշևիկ», «Ավանգարդ») և երգիծական մամուլի օրգանները։ Պարբերական մամուլը նշանակալից դեր խաղաց գրականության հիմնական կադրեր աճեցնելու, տեսության մի շարք պրոբլեմներ մշակելու, գրականության նորությունները մասսայականացնելու գործում։ 20-ական թվականների ներգրական պայքարի հիմնական օրինաչափությունները նույնպես արտացոլվեցին գրական մամուլի էջերում։

Ներգրական պայքարի կենտրոնական խնդիրը՝ նոր գրականության ստեղծման հնարավորության ու նրա հեռանկարների խնդիրն էր։ Գաղափարական պայքարի շիկացած մթնոլորտում տեսակետներ արտահայտվեցին այն մասին, թե նոր գրականությունը զարգացման հեռանկար չունի, թե նրա միակ հուսալի ապագան՝ անցյալն է։ Պարտվողական տրամադրությունների կրողները գտնում էին, որ հայ գրականությունը սպառել է իրեն, նոր խոսք չունի ասելու, իսկ լավագույն դեպքում կարող է լինել միայն հին գրականության դժգույն արձագանքը։ Մի շարք տեսաբաններ էլ, որոնք կոչված էին քննելու ընթացիկ գրական կյանքի երևույթները, Հայաստանում անհնարին էին համարում պրոլետարական կուլտուրայի կառուցումը, որպես փաստարկ բերելով «սոցիալական անհրաժեշտ բազայի բացակայությունը»։ Այս տեսակետի հակապատմական ու աղանդավորական բնույթը արտահայտվում էր այն բանում, որ գյուղացիական իրականությունը անհարազատ էր համարվում սոցիալիստական բովանդակությանը։ «Գյուղացիական» և «պրոլետարական» հոգեբանությունները դիտվում

---

1 Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. 5, Երևան, 1945, էջ 100։

էին որպես տրամագծորեն ներհակ սոցիալական տարերքներ, ուրիշ խոսքով՝ ժողովրդի մեծագույն մասի կյանքն ու աշխատանքը «դուրս էր մղվում» սոցիալիստական գրականության տեսադաշտից։

20-ական թվականներին Հայաստանում լայն ծավալ ստացավ պրոլետարական գրական շարժումը։ Թիֆլիսի «Հայ գրչի մշակների ընկերության» (1921—1923) և Երևանի «Հայ գեղարվեստական աշխատավորների միության» (1921—1922) կողքին արդեն հանդես եկան առաջին պրոլետարական գրական խմբակները, որոնք հրապարակ բերեցին իրենց գեղագիտական ծրագրերը։ 1922 թվականին «Երեքի» խմբակը (Ե. Չարենց, Գ. Աբով, Ա. Վշտունի) տպագրեց իր դեկլարացիան՝ գրական առաջին մանիֆեստը Սովետական Հայաստանում։ Դեկլարացիան ասպարեզ եկավ «գրականությունը հեղաշրջելու», նրա զարգացման նոր ուղիները հաստատելու, նոր բովանդակությանը համապատասխանող գեղարվեստական արտահայտչության ձևեր մշակելու պահանջով։ Դրական էր և պատմականորեն արդարացված «Երեքի» դեկլարացիայի խոռվությունը նացիոնալիզմի, արվեստի ապադասակարգայնության քարողների և էսթետիզմի դեմ։ Դրական էր նաև դեկլարացիայի պահանջը գրականության և արդիականության կապի խորացման մասին. «Դուրս հանել բանաստեղծությունը սենյակներից դեպի փողոցներն ու մասսաները և գրքերից՝ դեպի կենդանի խոսքը»[1]։

Հեղափոխության ու արվեստի հարաբերության հարցին մոտենալով ճիշտ դիրքերից, «Երեքը» սխալվում էր առաջադրած ուղիների ընտրության հարցում։ Փոխ. առնելով Պրոլետկուլտի աղանդավորական տեսակետները և ռուսական ֆուտուրիստների «ուլտրա-հեղափոխական» լոզունգները, դեկլարացիայի հեղինակները հրապարակ բերեցին անցյալի կուլտուրական ժառանգության նկատմամբ մի ծրագիր, որ խորապես հակասում էր կոմսակցության մշակած քաղաքականության ոգուն։ «Երեքը» արդիականության նավից դուրս նետեց նախահեղափոխական գրական ժառանգությունն ամբողջությամբ, նրա ավանդների օգտագործման վերաբերյալ խոսակցությունն իսկ համարելով ավելորդ։

Եթե «Երեքի» խմբակի ստեղծագործական դրույթները որոշ չափով ռուս ֆուտուրիստների տեսակետների կրկնությունն էին, որոշ մասով պրոլետկուլտական սեպարատիզմի արձագանքը, ապա պրոլետարական առաջին մասսայական կազմակերպությունների՝ «Դարբնոցի» (Թիֆլիս, 1922—1923), «Մուրճի» (1922—1923), «Քուրայի» (Մոսկվա, 1923) գործունեության հիմքում դրված էին պրոլետկուլտից անջատված ռուսական «Կուզնիցա» խմբակի ստեղծագործական ու կազմակերպչական սկզբունքները։ «Դարբնոցը», «Մուրճը» և դրանց հիմքի վրա 1923 թվականին կազմակերպված պրոլետարական գրողների ասոցիացիան, չնայած գործունեության ընթացքում ունեցան մի շարք սխալներ, որոնք բխում էին նրանց դավանած «դասակարգային ինքնամփոփվածության» տեսությունից, դրական դեր խաղացին մասնավորապես պրոլետարական միջավայրից գրական երիտասարդ կադրերի առաջ քաշման առումով։

Սովետահայ գրականության սկզբնավորման շրջանում գրողների գաղափարական դաստիարակության ու համախմբման, անցյալի գեղարվեստական

---

1 «Խորհրդային Հայաստան», 1922, № 13։

արժեքների հանդեպ էիշտ վերաբերմունք մշակելու, նոր գրականության շարժման ուղղությունը կարգավորելու գործում արդյունավետ աշխատանք կատարեց մարքսիստական գրականագիտությունը։

Գտնվելով գրական-քաղաքական պայքարի կենտրոնում, գրաքննադատությունը առանդուն պայքարում էր ինչպես ֆշնամական գաղափարախոսության արտահայտությունների, այնպես էլ պրոլետարական գրական շարժման մեջ դրսևորված սխալ հայացքների, մարքսիստական տեսության գռեհկացման փորձերի դեմ։

20-ական թվականներին գրաքննադատության բնագավառում արդյունավետ աշխատանք կատարեցին Ալ. Մյասնիկյանը, Ա. Կարինյանը, Հ. Սուրխաթյանը, Աշ. Հովհաննիսյանը, Պ. Մակինցյանը, Յ. Խանզադյանը, Հ. Գյուլիքևխյանը, Ա. Տերտերյանը, Ս. Հակոբյանը։

Տեսականորեն ընդհանրացնելով անցյալի ժառանգության վիճակարի նշանակությունը արդիականության համար, Ալ. Մյասնիկյանը միաժամանակ առաջնահերթ էր համարում գեղարվեստի սեփական վարպետներ ունենալու, սոցիալիզմի գաղափարներն արտահայտող նոր գրականության ստեղծման հարցը։ Սոցիալիստական հայ գրականության զարգացման համար գեղագիտական ծրագրի նշանակություն ունեցավ «Պրոլետարական գրականությանը նվիրված «Մուրճ» ամսագրի № 1-ի առթիվ» հոդվածը։ Գրական երկերի գնահատության հարցում կիրառելով բարձր գաղափարայնության, ռեալիստական խորության և գեղարվեստականության չափանիշները, Մյասնիկյանը սուր քննադատության է ենթարկում «մուրճական գեղագիտության» սկզբունքները՝ արծարծած նյութի վերացականություն, ժողովրդայնության պակաս, վարպետության ցածր աստիճան։ Առաջադրելով «հայ գրականության պրոլետարականությունը և պրոլետարական գրականության հայկականությունը» ձևակերպումը, Մյասնիկյանը գտնում է, որ պրոլետարական գեղարվեստը կարող է հասակ նետել ազգային ավանդների ու սոցիալիստական շինարարության փորձից բխող ինտերնացիոնալիստական բովանդակության հիմքի վրա։ Քննելով գրականության զարգացման ուղիների հարցը, Մյասնիկյանը գրում է, որ նոր բովանդակության արտացոլման համար առավել կարևորություն ու նշանակություն ունեն Հայաստանի կոնկրետ իրականությունից՝ հեղափոխական անցյալից ու սոցիալիստական շինարարության կենդանի փորձից քաղված թեմաները։ Այդ հոդվածը ամրապնդում էր գրականության գաղափարական հիմքերը, գրողների ուշադրությունը կենտրոնացնում սոցիալիստական շինարարության հերթական հարցերի ու գեղարվեստական վարպետության խնդիրների վրա։

Պրոլետարական գրականության շարժումը, անցնելով «ինքնորոշման» շրջանը, տարեցտարի տիրապետող դիրքեր գրավեց։ Պրոլետարական գրողների ասոցիացիան զգալի աշխատանք կատարեց բանվորների և գյուղացիների շարքերից նոր գրողներ առաջ քաշելու, գրականության տեսության մի շարք հարցերի պարզաբանման, բուրժուական գաղափարախոսության արտահայտությունների դեմ պայքարելու գործում։ Դրական աշխատանքի հետ միասին ասոցիացիան գրական քաղաքականության մեջ թույլ տվեց մի շարք կոպիտ սխալներ։ Հավասարակշռված աշխատանքին փոխարինեց բանաձևերի ու դիրեկտիվների հեղեղը, դեմոկրատական մտավորականության՝ այսպես կոչ-

ված «ուղեկիցների» նկատմամբ կիրառվեցին ղեկավարման կոպիտ մեթոդներ, ստեղծագործական ազատ մրցության սկզբունքը փոխարինվեց վարչարարությամբ։

Սովետական գրականության առջև կանգնած հիմնական խնդիրները՝ սոցիալիստական գրական շարժման վերելքն ապահովելու, բուրժուական գաղափարախոսության ազդեցությունը հաղթահարելու և գրողներին սոցիալիստական շինարարությանը մասնակից դարձնելու խնդիրները լուծելու գործում մեծ նշանակություն ունեցավ ՌԿ(բ)Կ Կենտկոմի 1925 թվականի հուլիսի 18-ի «Կուսակցության քաղաքականությունը գեղարվեստական գրականության բնագավառում» բանաձևը։ Նշելով պրոլետարական գրականության աճման նշանները, կուսակցությունը խնդիր էր դնում ստեղծագործական մրցման միջոցով նվաճել պրոլետարական գրականության հեգեմոնիայի պատմական իրավունքը։ Սուր կերպով դրվեցին աղանդավորական միտումների, կոմսնապարծության ու վարչարարության վերացման, «ուղեկիցների» նկատմամբ զգայուն վերաբերմունք մշակելու, գրողներին սոցիալիստական շինարարության ակտիվ մասնակիցներ դարձնելու հարցերը։

20-ական թվականների դասակարգային սրված իրադրության մեջ, պաշտպանելով սոցիալիստական գրականության բարձր գաղափարայնության սկզբունքները, կուսակցությունը գրողներին կոչեց դեպի ստեղծագործական լայն ճանապարհ, դեպի մասսայական գրականության ստեղծում։ Բանաձևը արդյունավետ նշանակություն ունեցավ նաև սովետահայ գրականության գաղափարական հիմքերի ամրապնդման համար։ Բանաձևի հրապարակումից հետո մի շարք գրողներ՝ Ե. Չարենցը և ուրիշներ, չհաշտվելով ասոցիացիայի անխոհեմ գրական քաղաքականության հետ, միացան Լենինականի բանվոր ու գյուղացի գրողների «Հոկտեմբեր» միությանը։ 1925 թվականին հիմնադրվեց պրոլետարական գրողների «Նոյեմբեր» միությունը։ Գործունեության նշանաբան ունենալով ստեղծագործական մրցության ելակետը, «Նոյեմբերը» հանդես եկավ գրական ուժերի կաստայացման և «ջերմոցային» եղանակներով գրականություն ստեղծելու փորձերի դեմ։ «Նոյեմբերը» պաշտպանեց ազգային գրականության ավանդների վրա հենվող և ժողովրդական կյանքով սնվող ռեալիստական գրականությունը։ 1926 թվականին հրապարակվեց ՀԿ(բ)Կ Կենտկոմի «Հայաստանի կոմկուսի քաղաքականությունը գեղարվեստական գրականության ասպարեզում» բանաձևը, որտեղ նորմալ երևույթ համարվեց երկու պրոլետարական գրական կազմակերպության («Ասոցիացիա» և «Նոյեմբեր») ղեկավարելը։ Շուտով, սակայն, այդ միությունների ներգրական տարաձայնությունները այնպիսի սուր բնույթ ստացան, որ ծառացավ գրողների միասնական կազմակերպություն ունենալու հարցը։ 1926 թվականի դեկտեմբերին, միավորիչ կոնֆերանսում, ստեղծվեց Հայաստանի պրոլետարական գրողների միությունը։ Նորաստեղծ միությունը և նրա «Գրական դիրքերում» հանդեսը գրական քաղաքականության մի շարք արմատական հարցերում, ինչպես ազգային-դեմոկրատական կուլտուրայի քննադատական յուրացումը, ուղեկիցների նկատմամբ վերաբերմունքը, գրական վարպետությունը, շարունակեցին կոպիտ վարչարարությունը։ Պրոլետարական գրողների միության և 1927 թվականին կազմակերպված «Հայ աշխատավորական գրողների միության» (որի կազմում էին

«ուղեկիցները») հիման վրա 1929 թվականին կազմակերպվեց Հայաստանի խորհրդային գրողների ֆեդերացիան, որով «պրոլետարական գրականություն» հասկացությունը ավելի լայն իմաստ ստացավ և կոչվեց «սովետահայ գրականություն»։ Նորաստեղծ ֆեդերացիան դարձավ սովետական միասնական գրականության ազգային ջոկատներից մեկը։



Ե. Չարենց

20-ական թվականներին սովետահայ գրականությունը ամրապնդվեց ոչ միայն կազմակերպչորեն, այլև ունեցավ ստեղծագործական այնպիսի նվաճումներ, որոնք հարստացնում էին սոցիալիստական մշակույթի գանձարանը։

Սովետահայ գրականության զարգացման առաջին շրջանում, պատմական հանգամանքների բերումով, կենտրոնական հարց դարձավ իրականության գեղարվեստական արտացոլման նոր սկզբունքների մշակումը։ Այդ պրոցեսը առավել բնորոշությամբ արտահայտվեց ժամանակի պոեզիայում։

Առաջին բանաստեղծը, որ խորապես ըմբռնեց պատմության հրամայական պահանջը՝ նոր գեղագիտության անհրաժեշտությունը, նորիշ Չարենցն էր։ Չարենցը, ելնելով պատմության մեջ ժողովրդական մասսաների խաղացած դերի ճշմարիտ ըմբռնումից, իր ստեղծագործության մեջ արտահայտեց հերոսական էպոսի վերածնման գաղափարը։

Առաջին ստեղծագործությունը, որտեղ արտահայտվեց հեղափոխական նոր էպոսի կերտման պահանջը, դարձավ նրա «Ամենապոեմը» (1920—1921)։

Կյանքը՝ հեղափոխությունը և գեղարվեստական խոսքը՝ պոեզիան, «Ամենապոեմում» դիտվում են ոչ թե իրարից անջատ, այլ անխզելի միասնության մեջ, որպես ազգակից երևույթներ.

Եվ միթե՞ դուք չգիտեք,
Որ ամեն մի անհայտ բանվոր,
Որ ձեռքով իր երկաթ է կռում —
Հազա՜ր պոեմներ ունի
Իր հուժկու, երկաթե թոքերում։

Չգիտե՞ք...
Իմացե՛ք հիմա։

Ականջներդ — լայն — բացե՛ք —
— Ուրիշ հանճարներ չկան
Աշխարհում — նրանցից բացի[1]։

Չարենցն այստեղ խոսում է ժողովրդի մասին, որը բանաստեղծներից մեծագույնն է, նյութական և հոգևոր բոլոր արժեքների ստեղծողը, բոլոր էպոսների հեղինակը։

Սովետահայ պոեզիան իր ձևավորման շրջանում զգալի չափով հետևեց գեղագիտական այն սկզբունքներին, որ թեժ պայքարում մշակվում էր ռուսական ժամանակակից պոեզիայում։ «Ռուսաստանում կատարված ամեն մի գրական շարժում,— գրել է Չարենցը,— անմիջապես արձագանքել է մեզանում, առաջ է մղել մեր գրականության անիվը, նշել է նրա համար շավիղներ և ուղիներ»[2]։

Վլ. Մայակովսկին և Ալ. Բլոկը, Ս. Եսենինն ու Էդ. Բագրիցկին, Դ. Բեդնին, Ն. Տիխոնովը և «Կոմերիտական բանաստեղծները»՝ ռուսական պոեզիայի հայտնի դեմքերը, ուղղակի կամ անուղղակի ազդեցության ճանապարհով մասնակցեցին սովետահայ պոեզիայի գաղափարական ու գեղագիտական ուղեգծի մշակմանը։

Առանձնապես ուժեղ ներգործություն ունեցավ Վլ. Մայակովսկու պոեզիայի հասարակական լայն դիապազոնը, քաղաքական կրքոտ հնչեղությունը և ժողովրդայնությունը, նրա բանաստեղծությունների մարտնչող կուսակցականությունն ու նպատակասլացությունը։

Պոեզիայի զարգացման ընթացքը տարավ դեպի էպիկական հերոսական կերպարների ստեղծումը։ Չարենցը, որ գլխավորում էր ժամանակի գրական շարժումը և արդեն տասնամյակի սկզբում հանդես էր եկել հերոսական թեմայի գեղագիտությամբ, մշակեց երևույթների ընկալման նոր տեսանկյուն՝ հերոսական թեմայի ռոմանտիկական ձևը տանելով կոնկրետության ու ռեալիզմի հունով։

Չարենցը որոնողի ու մտածողի հսկայական աշխատանք էր ներդնում՝ գտնելու ժամանակի ու ժողովրդի ճակատագրի, հեղափոխության հերոսների գեղարվեստական պատկերման ամենահարազատ ձևերը։

1924 թ. սկսած Ե. Չարենցը մշակում է նոր ելակետ կոնկրետ պատմական անհատի և ժողովրդական մասսաների փոխհարաբերության վերաբերյալ, պատմական պրոցեսի մեջ անհատների խաղացած դերի և պատմության շարքային հերոսների նշանակության մասին։

Չարենցն իր ժամանակակիցներից ամենից ավելի խոր ըմբռնեց, որ հերոսի պրոբլեմը նախ և առաջ ճշմարտության պրոբլեմն է, որ հերոսությունն իր մեջ պարունակում է երկու կողմ՝ պատմական և սուբյեկտիվ-մարդկային, որ մարդիկ իրենք են կերտում իրենց պատմությունը, պատմական շարժման մեջ պահպանելով հոգեկան աշխարհի հարստությունը։

---

1 Ե. Չարենց, *Երկերի ժողովածու*, հատ. II, Երևան, 1963, էջ 125։
2 «Պայքար», 1923, № 5։

Այս խորհրդածությունները ծնվեցին այն ժամանակ, երբ նա անդրադարձավ հեղափոխության առաջնորդի և «երկրագնդում երբևէ եղած ամենամարդկային մարդու»՝ Վ. Ի. Լենինի կերպարին։

...Լենին, այո՛,— Լենին։— Բայց ոչ միտինգային,
Բայց ո՛չ թմբուկ թեթև, բայց ո՛չ պլակատ։
Լենին — այսօր արդեն ասել է—գագաթ,
Ասել է—ներքին կառուցում քո նոր թեմայի[1]։

Լենինի կերպարը Չարենցի առաջ նոր ուղիներ բացեց դեպի մարդկային հոգեբանություն, դեպի հերոսական թեմայի առավել խոր ու իմաստուն ճանաչողություն։

Հեղափոխության և Լենինի կապի չարենցյան էսթետիկան միաժամանակ գեղեցիկի նոր ըմբռնում էր, գեղեցիկի մարմնավորումը նրա ամենաբարձր արտահայտությամբ։

Չարենցի «Լենինիանան»՝ «Ես և Իլյիչը», «Լենին», «Լենին քեռին», «Բալլադ Իլյիչի, մուժիկի և մի զույգ կոշիկի մասին», «Լենինն ու Ալին», «Կոմունարների պատը Փարիզում», «Մահվան քայլերգ», «Զուգունե մարդը» մտնում են սովետական արվեստի լավագույն հուշարձանների շարքը։

Սովետահայ «Լենինիանայի» մեջ առանձնահատուկ տեղ են գրավում ժողովրդական բանահյուսության նմուշները՝ հեքիաթներ, լիրիկական բազմաթիվ երգեր և դրանց շարքում սովետական ժամանակաշրջանի ֆոլկլորի պսակը՝ «Լենին փաշա» հերոսական վիպերգը։

20-ական թվականները կարելի է անվանել սովետական պոեզիայի «բալլադային շրջան»,— այնքան հաճախ էին բանաստեղծներն անդրադառնում անցյալի ռոմանտիկական պոեզիայում տարածված գրական տեսակին։

Դրամատիկական մեծ ուժով, հերոսական տարեգրություններ ոճով իր բալլադներում Չարենցը ցուցադրեց հեղափոխության նահատակների՝ հայկական հրաձգային բրիգադի անձնվեր կոմիսար Լիպարիտ Մխչյանի, Բաքվի կոմունայի ղեկավար Ստեփան Շահումյանի ու նրա ընկերների, Վրաստանի կոմերիտմիության հիմնադիր Բորիս Զնելաձեի կերպարները։

Հերոսական նահատակությանն են նվիրված նաև մյուս բանաստեղծների՝ Դ. Մահարու («Բալլադ մի ռուս զինվորի մասին», «Կարմիր ձիավորի մահը», «Բալլադ ուռենու, դարբնի սև տղայի և ելնող արևի մասին», «Շուր սարի բալլադը»), Վ. Նորենցի («Բալլադ մի բուռ ցորենի, սպանված հերոսի և կարմիրբանակայինի մասին»), Ս. Տարոնցու («Բալլադ չիբուխի մասին») ստեղծագործությունները։

Մեր հասարակության «մանկության շրջանում» կյանքը մարդկանց հեքիաթային էր թվում իր կոսմիկական ծավալներով և դրանով էլ բացատրվում է այն հանգամանքը, որ բանաստեղծության մեջ լայն տեղ գրավեցին երևույթների արտացոլման տիեզերական մասշտաբները։ Սակայն վերին աստիճանի հետաքրքրական է մի ուրիշ երևույթ. համաշխարհային հեղափոխության մասին ազդարարող կոսմիկական բանաստեղծությունների կողքին, գրեթե միա-

1 Ե. Չարենց, Երկեր, Երևան, 1932, էջ 221։

ժամանակ, գրվեցին նաև այնպիսի գործեր, որոնցում բանաստեղծները ոգևորվում էին առօրյայի այնպիսի «աննշան» կոնկրետ երևույթներով, ինչպես փողոցների մայթի կառուցումը, գյուղում կոոպերատիվ խանութի և խրճիթ-ընթերցարանի հիմնումը, էլ չենք խոսում գյուղ մտած գյուղատնտեսական տեխնիկայի՝ տրակտորի, շոգեգութանի, սերմացուիչի մասին (որոնք ժամանակակիցներին թվում էին դարի «հրաշքներ») և ժողովրդական տնտեսության, կուլտուրայի զարգացման վերաբերյալ այն բազմաթիվ դեկրետների ու լոզունգների մասին, որոնք ընկալվում էին որպես կյանքի սոցիալիստական վերակառուցման հրովարտակներ։

Պոեզիայի և սոցիալիստական իրականության մերձեցման, եթմայի կոնկրետացման բնագավառում, սակայն, ամենանշանակալից դերը խաղացին երկրի ոռոգման ու էլեկտրիֆիկացման այն եռանդուն աշխատանքները, որոնք կոչված էին դառնալու նրա սոցիալիստական վերածնության հիմքը։

Լենինականին մերձակա Կապս գյուղում 1922 թվականին սկսվեցին Հայաստանում սոցիալիստական շինարարության առաջնեկի՝ Շիրակի խոշոր ջրանցքի կառուցման աշխատանքները։ Ժողովրդին համակած մասսայական ոգևորությունը և աշխատանքային վերելքը, բնականաբար, արտահայտություն գտան նաև պոեզիայում՝ գրականության ամենաճկուն և օպերատիվ բնագավառում։ Հակոբ Հակոբյանը այցելելով ջրանցքի շինարարության վայրը, գրեց «Բայլըևիկ է Շիրկանալը» (1924) պոեմը։

Նրան հետևեցին Գ. Սարյանը («Շիրակի հարսանիքը», 1925), Սարմենը («Դաշտերը ժպտում են», 1925), Ն. Զարյանը («Ջրանցքի կապույտ երկրում», 1926), Գ. Մահարին («Շիրակի ջրանցքը», 1925), Մ. Արմենը («Շիրկանալ», 1926) և ուրիշներ։

«Շիրկանալյան պոեզիան», չնայած ակնհայտ սխեմատիզմին, բանաստեղծությունը մոտեցրեց սոցիալիստական շինարարությանը։

Պոեզիայում արտացոլվում էր նաև գյուղի զարթոնքը։ Առաջին շրջանում, իհարկե, գյուղի մասին ստեղծված պոեզիան դուրս չեկավ հին ու նոր գյուղի առօրյայի սովորական, դեկլարատիվ հակադրության կամ հերկվորի, սելվորի, մաճկալի, հնձվորի աշխատանքի՝ հայ դասական պոեզիային վաղածանոթ ավանդական գովերգության շրջանակներից։ Բանաստեղծները (Ա. Վշտունի, Ն. Զարյան, Գ. Մահարի, Վ. Ալազան և ուրիշներ) ստեղծեցին գյուղանկարների շարքեր, գյուղական պեյզաժներ՝ մոտավորապես այն կոլորիտով, որ հատուկ էր Վարուժանի «Հացին երգը» բանաստեղծական շարքին. ռոմանտիկական գեղեցիկ աշխարհ, անդորր բնություն, գյուղական կալեր ու ճանապարհներ, խոտի դեզեր, ջրաղացներ, չինչ լուսին, ավանդական հորովել, իր աշխատանքին մերված հողի մշակի խաղաղ մտորումներ։

«Հեթանոսական» որոշ երանգներ ունեցող այս շափածոյի մեջ հետզհետե, ճիշտ է, դեռ թույլ առկայծումների ձևով, լսվում են սոցիալիստական գաղափարների արձագանքները և, մուտք են գործում գյուղի զարգացման ընթացիկ փուլի որոշ հարցեր՝ գերազանցորեն ագիտացիոն, լոզունգային պոեզիայի ձևով։

Այս բնագավառում գնահատելի է Աթաբեկ Խնկոյանի (Խնկո Ապոր) գրական վաստակը։

Ա. Խնկոյանը երկար տարիներ աշխատակցում էր գյուղացիական «Մաճկալ» թերթին, որը հրատարակվում էր բացառապես գեղջուկ ընթերցողների համար։ «Մաճկալում» տպագրվում են բազմաթիվ ագրոզրույցներ, երգիծական բանաստեղծություններ, չափածո ֆելիետոններ, առակներ, ակնարկներ, որոնցում Խնկոյանը հանդես է գալիս որպես պոետ-ագիտատոր։ Սովետահայ պոեզիայում մեծ տեղ է գրավում նաև զարթնող Արևելքի թեման։

Ե. Չարենցը («Ստամբոլ», 1925), Ն. Զարյանը («Ջին աղջիկը», 1925), Դ. Սարյանը («Գյուլնարա», 1928) իրենց պոեմներում արտահայտելով սովետական ժողովրդի ինտերնացիոնալիստական զգացմունքները, վերարտադրեցին միջազգային կյանքի երևույթները, բացահայտելով կապիտալիստական-ֆեոդալական հարաբերությունների փլուզման, աշխատավորների ազգային ու սոցիալական ինքնագիտակցության աճման, նրանց հեղափոխական գիտակցության հասունացման ընթացքը։ Հայ բանաստեղծները խրոխտ շեշտերով հնչեցրեցին մասնավորապես արևելյան ժողովուրդների արթնացման և ըմբոստացման թեման։ Հասարակական լայն ճանաչում ձեռք բերին Ազատ Վշտունու՝ Արևելքին նվիրված բանաստեղծությունները։

Օրինաչափ էր և այն, որ սովետահայ արձակը իր պատմությունը սկսեց կարճ ձևերով՝ պատմվածք, պատկեր, արձակ բանաստեղծություն և այն, որ նրա սկզբնավորմանը զերազանցորեն մասնակցեցին իրենց ստեղծագործական կյանքը հեղափոխությունից առաջ սկսած գրողները։

Արձակը նույնպես զարգացավ տարբեր, հաճախ միմյանց բացասող ըմբռնումների պայքարի օրինաչափությունների։ Պայքարի առաջին մարտադաշտը արձակի բովանդակության և ընդգրկումների պրոբլեմն էր, երկրորդ՝ ձևի որոնումների, «նոր ոճի» ստեղծման, հին ձևերի կատարելագործման հարցը։ Այս խնդիրների լուծման դժվարությունները հաճախ առաջ էին բերում գեղարվեստական ստեղծագործության առաջադրանքները պարզունակացնող ըմբռնումներ, սխալ ու վերացական պատկերացումներ։ Գեղարվեստական պրակտիկայում, մասնավորապես, արտահայտվեց արդիականությունը «հրատապությամբ» փոխարինելու տենդենցը, որը բացատ թողեց սխեմատիզմի, «փաստի» գրականության և նատուրալիստական մերկության համար։ Զարգացման առաջին տասնամյակում հայկական արձակը շփվեց նաև մոդեռնիստական այն հոսանքների հետ, որոնք գրական միջավայր էին մուտք գործում արևմտյան գրականությունից։

Չնայած արմատական ռեալիտների ու տաքարյուն «նորարարների» միջև ծավալվող մերթ բացահայտ, մերթ արտաքուստ «խաղաղ» վեճերին, հայկական արձակը առաջին տասնամյակում կուտակեց արժեքներ, որոնք արտահայտում են ընթացիկ կյանքի յուրահատկությունները, ժամանակաշրջանի սոցիալ-պատմական հոգեբանությունը։

Փոխվում է արձակի թեմատիկան, փոխվում են գրականության հերոսները, առավել մեծ չափով փոխվում է գրական ստեղծագործության տրամադրությունը՝ քննադատական պաթոսից գնալով դեպի հաստատման լավատեսակ անպաթոսը,— այս ամենը նշանավորեցին նոր հատկանիշների ու գեղագիտական նոր սկզբունքների ծնունդը։

Դեռևս հեղափոխությունից առաջ իրենց գրական կյանքը սկսած արձակագիրների (Ալ. Շիրվանզադե, Նար-Դոս, Դ. Դեմիրճյան, Ստ. Զորյան, Մ. Մանվելյան, Վ. Թոթովենց) կողքին հանդես եկան նոր հեղինակներ, որոնց միացյալ ջանքերով հաստատվեց արձակի գաղափարական-թեմատիկական և ժանրային-ոճային նկարագիրը։

Հայկական արձակում պատմության նոր երևույթների ու պատմական նոր հերոսների գեղարվեստական յուրացումը չունեցավ նույն արագությունը, ինչով աշքի ընկավ ռուս գրականությունը։ Առաջին շրջանում գերիշխում էր ավանդական թեմատիկան՝ հայ գյուղի թեման, որը լայն տեղ գրավեց երկու առաջնակարգ նովելիստների՝ Ստ. Զորյանի և Ակսել Բակունցի ստեղծագործության մեջ։ Ստ. Զորյանը և Ա. Բակունցը,— խոհուն ու սրատես գեղագետներ,— դեռհիկ սոցիոլոգիական նախապաշարմունքների և աբստրակտ ռոմանտիզմի իրադրության մեջ իրենց գյուղական պատմվածքներով հաստատեցին ռեալիստական գրականության տրադիցիան և առաջ քաշեցին ժողովրդական կյանքի խորքերը սուզվելու, հասարակ մարդու ճակատագիրն ու հոգեբանությունը գրականության բովանդակություն դարձնելու նշանաբանը։ Նրանց գրվածքների «հակառոմանտիկական» և «հականատուրալիստական» տրամադրությունը լիցք էր ստանում հայ գրականության ժողովրդային-դեմոկրատական ավանդներից, մասնավորապես Հովհ. Թումանյանի գեղագիտությունից։ Իրենց գեղարվեստական որոնումներով ծառանալով հին ու նոր արվեստների միջև անանցանելի պատվարներ դնող «սահմանագծի» տեսության դեմ, թե Զորյանը, թե Բակունցը ըմբռնեցին նաև, որ անհրաժեշտ է գրողի նոր գեղարվեստական վարպետություն՝ տեսնելու պատմական պրոցեսի նոր առանձնահատկությունները։ Բայց ոչ թե արվեստի «առանձնահատուկ» ձև, ոչ թե տրադիցիայի բացասում, այլ առաջավոր ավանդների ստեղծագործական զարգացում։ Այսպիսին էր այս դեպքում Հովհ. Թումանյանը՝ դասական հայ գրականության ամենախոշոր դեմքը։

Զարգացնելով նախորդ շրջանի գեղարվեստական նվաճումները և հենվելով դրանց վրա, Հովհ. Թումանյանը հեղաշրջում կատարեց իր ժամանակի գրական պատկերացումներում։ Հերոսական անհատականության իդեալի և աշխատավոր մարդու սոցիալական միջավայրի հետ միասին, նա գրականության բերեց ժողովրդի կյանքի հիմքը հանդիսացող ժողովրդական մարդու գեղագիտությունը։ Հովհ. Թումանյանը իմաստուն լուծում տվեց արվեստի ժողովրդայնության պրոբլեմին, գտնելով, որ ժողովրդայնության հիմքերը նվաճելու համար նախ և առաջ անհրաժեշտ է իջնել ժողովրդական հերոսների հոգու անհատակ խորությունները, հոգեբանական վերլուծումը զուգակցել գեղեցիկի իդեալին, ընդգրկել մարդկային կենդանի ապրումների ու կրքերի այն անսահման ընդարձակ դիապազոնը, որով հատկանշվում է «ժողովրդական աշխարհը»։

Հովհ. Թումանյանի գրական ավանդների հունի մեջ ձևավորեց Ստ. Զորյանի և Ա. Բակունցի գեղարվեստական վարպետությունը։ Իրենց գյուղական պատմվածքներով (Ստ. Զորյան. «Պատերազմ», Ա. Բակունց. «Մթնաձոր») թեմատիկորեն ազգակից լինելով գյուղագիրներին, նրանք միաժամանակ թեմայի նոր, սոցիալականորեն ճշգրիտ, փիլիսոփայորեն հարուստ մեկնաբանությամբ հարված հասցրին գյուղագիրների նատուրալիստական բարքագրությանը, նրանց

բարոյախոսական միամիտ դեղատոմսերին։ Նույնպիսի զգայուն վերաբերմունքով, ինչպես գյուղագիրները, վեր հանելով հին գյուղի առօրյա կենցաղի պատկերները, նրանք, սակայն, ուշադրությունը կենտրոնացրին ժողովրդի լայն հոգու, անսպառ կենսուժի, ստեղծագործական ձիրքի և մարդկային այն բոլոր առաքինությունների վրա, որոնք արժեք ունեն ժողովրդի ապագա կյանքի կառուցվածքի համար։ Ժողովրդական տարերքի բանաստեղծական կողմերի խոր ըմբռնումը դարձավ նրանց ստեղծագործության հիմքը։

Սովետահայ արձակի պատմությունն սկսվում է ոչ միայն անցյալի կյանքի մեջ եղած ժողովրդական առողջ սկզբունքների վերհանումով, այլև հակաժողովրդական ուժերի ու ժողովրդի կենսական շահերին դեմ ընթաց հետադիմական գաղափարների անողոք երգիծանքով։ Նոր դարաշրջանի արտահայտիչները անհրաժեշտ էին համարում դիմելու ծիծաղի ազատարար ներգործությանը՝ ճշմարտությունը ասից ու կեղծիքից տարբերելու և ժողովրդի պատմական զարգացմանն արգելակող երևույթների մտրակման համար։ Ստեղծվեց երգիծանքի ուժեղ հոսանք։

1922—1925 թվականներին «Նորք» հանդեսի մի քանի համարներում տպագրվեց Ե. Չարենցի «Երկիր Նաիրի» երգիծական վեպը, որը ժամանակակիցների վկայությամբ «...իսկական ցնծությամբ ընդունվեց հայ մամուլի կողմից և առաջին իսկ օրից դարձավ կանոնացված գիրք, բոլորի կողմից ընդունվեց իբրև նոր գրականության հանգուցակետ, մի այնպիսի երևույթ, որի հրապարակումով ժամանակագրական թվական է հաստատվում գրականության մեջ»[1]։

«Երկիր Նաիրին» հայ գրականության, ներառյալ նաև դասական անցյալը, ամենաուժեղ երգիծական էջերից մեկը լինելով, հետաքրքրություն էր ներկայացնում նաև հայ ժողովրդի պատմական ուղիների վերաբերյալ արտահայտած խոր ու ճշմարտացի կոնցեպցիայով, պատմական իրադարձությունները երգիծանքի միջոցով ընդհանրացնելու ուժով, երգիծական տիպականացման արվեստով։

«Երկիր Նաիրի» պոեմանման վեպից բացի, գեղարվեստական նկատելի արժեք են ներկայացնում Դ. Դեմիրճյանի «Համառոտ անմահներ կամ հավիտենական մահկանացուներ» երգիծանքը, նույն Չարենցի «Հանգուցյալ պարոնը կամ պարոն հանգուցյալը» ընդարձակ պատմվածքը, որտեղ սպանիչ ծաղրի է ենթարկվում «ոգևհարցուբյան» միստիկական զգացմունքին ապավինած դաշնակցությունը, Ա. Բակունցի «Հովնաթան Մարշը» (1927), որտեղ հասարակական քննության է դրվում «ազգային ռոմանտիզմի» ուշացած և այդ իսկ պատճառով ավելի հիմարացած վարքագիծը։ 20-ական թվականներին երգիծանքի բնագավառում աչքի ընկնող դեր խաղացին Լեո-Կամսարը, Դ. Դեմիրճյանը, Էդ. Խոճիկը, Վ. Թոթովենցը՝ իրենց ֆելիետոններով։

Արձակը ձգտում էր բացահայտել նաև ժամանակաշրջանի առաջատար հերոսների սոցիալական էությունը։ Առաջին հերթին, բնականաբար, ուշադրության արժանացան այն մարդկանց կերպարները, որոնք գտնվում էին հնդապոխության և քաղաքացիական կռիվների առաջին շարքերում։

---

1 *М. Шагинян*, Предисловие редактора (Е. Чаренц, Страна Наири, *М., 1933*)։

Արձակը թեև չստեղծեց հեղափոխական պայքարի բովով անցած ժողովրդի մոնումենտալ վեպը՝ նրա էպիկական հերոսապատումը, բայց պատմական նոր նյութի յուրացման և նրա գեղարվեստական վերարտադրության հարցում ունեցավ մի շարք նվաճումներ։

Այդ ճիշտ դիրքերը առավել որոշակի հանդես եկան Ստ. Զորյանի «Հեղկոմի նախագահը» (1923) և «Գրադարանի աղջիկը» (1925) վիպակներում։ Ցուցադրելով ժամանակակից հերոսի սոցիալական հոգեբանությունը, իր այդ գրվածքներում Զորյանը հասավ ժողովրդի և հեղափոխության շահերի միասնության, որպես պատմության գլխավոր տենդենցի, ըմբռնմանը։ Նրա գրվածքների անմիջական ենթահողը դարձավ պատմական գիտակցական կյանքի բարձրացրած ժողովրդի զգացմունքների ճշմարտությունը և հեղափոխության հոգևբանական իմաստավորումը։



Ա. Բակունց

Ժողովրդի ընդերքից բարձրացած պայքարող հերոսների կերպարներ գծեց Ակսել Բակունցն իր մի շարք պատմվածքներում («Բրուտի տղան», «Սև ցլերի սերմնացանը»)։

Պատմա — հեղափոխական գրվածքներով հանդես եկան նաև Մ. Դարբինյանը, («Կիկոսը», «Ջաղացպան Անտոնը»), Ծ. Թորգոմյանը («Հորձանքում»), Հ. Հակոբյանը («Ագիտատորի հուշերից»)։

20-ական թվականների երկրորդ կեսից հայկական արձակը ծանրացավ երկու խնդրի վրա, որոնք հասարակական լայն հետաքրքրություն էին ներկայացնում և որոնցով բնութագրվում էր ժամանակի դեմքը։ Դրանցից առաջինը կյանքի նոր ձևերի և քաղաքական-սոցիալական նոր հարաբերությունների ֆոնի վրա հին կյանքի շառավիղների դանդաղ մահացման ընթացքի գեղարվեստական պատկերումն է, որին դիմեցին Մ. Արազին («Անցյալորներ» պատմվածքաշարը), Դ. Դեմիրճյանը («Անցյալի ուրուներ»), Նար-Դոսը («Վերջին մոհիկաններ»), Մ. Մանվելյանը։ Մյուս պրոբլեմը նոր մարդու անհատականության կազմավորման ընթացքի պատկերումն է, որ առավել ցայտուն արտահայտվեց Դ. Դեմիրճյանի («Սաթոն», «Արդուզ», «Կայարանի Ակոբը», «Մերկենը»), Արազու («Ընկեր Մուկուչը», «Աչքը վախեցած Հանեսը») պատմվածքներում։

Իր պատմվածքներում ու փոքրիկ վիպակներում անհատի ինքնագործունեությունը կաշկանդող երևույթներից ազատագրվող կնոջ կերպարն ստեղծեց Արաքսը։ Ժողովրդի մոտավոր անցյալի պատմությունը վերարտադրելու պա-

հանդը 20-ական թվականների վերջում ստեղծեց «մանկության թեմայի» ավանդությունը։ «Մի կյանքի պատմությունից» վեպին անցնելու պրոցեսում առաջին փորձը պատկանում է Գ. Մահարուն, որը հրատարակեց «Մանկություն և պատանեկություն» ինքնատիպ գիրքը։

Տասնամյակի վերջում հայկական արձակը գլխավոր ուշադրությունը դարձրեց ժողովրդական լայն մասսաների պատմական դերը էպիկական մեծ կտավներով արտացոլելու խնդրին։ Առաջ քաշվեց մոնումենտալ ձևի ստեղծման զաղափարը։ Դ. Դեմիրճյանը, օրինակ, իր նոր մտահղացումներից մեկը վերնագրեց «Նոր մոնումենտալ», հիմնավորելով արձակի ընդգրկումների մասշտաբայնության պահանջը։ Մոնումենտալ ռեալիզմի կենսագործման անհանդիստ խմորումներով էին ապրում մի շարք նշանավոր գրողներ։

Վահան Թոթովենցն սկսեց (1930) «Բաքու» պատմա-հեղափոխական նոահատոր վեպը՝ Անդրկովկասի պրոլետարիատի պատմության մասին, Ա. Բակունցը գրեց «Կարմրաքար» էպոպեայի առաջին գլուխները։

20-ական թվականներին հայկական արձակը զարգացման հետաքրքրական ընթացք ունեցավ. սոցիալիստական իդեալների վերացական դեկլարացիաներից անցավ արդիական թեմաների հոգեբանական մշակման ճանապարհը. տարեցտարի ընդարձակվեց նրա թեմաների, ժանրերի ու ոճաբանական սկզբունքների որոնումների դիապազոնը. դրեց ժամանակակից հերոսի պրոբլեմը. գիտակցեց անցյալի ավանդների նշանակությունը նոր արձակի ձևավորման գործում. կարճ ձևերից գնաց դեպի վեպ-էպոպեայի ուղին։ Այս ամենը նշանավորեցին սոցիալիստական ռեալիզմի սկզբունքների արմատավորումը։

Հեղափոխական նոր իրադրության մեջ սուր կերպով դրվեց ժամանակակից կյանքի իրադարձությունները արտացոլող դրամատուրգիայի ստեղծման հարցը։ Քիչ «ձախություններ» չեղան նաև այս բնագավառում. դասական ժառանգությունը՝ Սոֆոկլեսից մինչև Իբսեն ու Շիրվանզադե,— համարվում էր «հնացած»։ «Հին թատրոնի վերացում,— ահա թե ուր է տանում նոր թատրոնի էվոլյուցիան»,—1921 թվականին գրում էր հայ ֆուտուրիստը։ Նույն ոգով է գրված բանաստեղծ Ե. Չարենցի, ճարտարապետներ Կ. Հալաբյանի և Մ. Մազմանյանի «Standard»— հանդեսի դեկլարացիան (1924)։ Դեկլարացիայում դրամատուրգիայի ամենաակնառական, օրինական ձևերն էին համարվում ագիտական, ագիտդրաման, պլակատը, քաղաքական բուֆֆոնադը, ժխտվում էին կենցաղն ու հոգեբանությունը։

Առաջին տասնամյակում գրականության ու թատրոնի մեջ տիրապետող դիրքեր գրավեց ծիծաղը՝ կյանքի հնացած ձևերի ու հնացած պատկերացումների ահեղ խարազանողը։ Բնական է, որ դրամատուրգիայում էլ առաջատար ժանր դարձավ կատակերգությունը, որի միջոցով հնարավոր էր առավել լիակատարությամբ արտահայտել հաղթողների զրնգուն և ուրախ ծաղրը հնացած բոլոր գաղափարների ու նախապաշարմունքների դեմ։

Հրապարակ եկան Դ. Դեմիրճյանի «Քաջ Նազար» (1923), Ե. Չարենցի «Կապկազ» թամաշա (1924), Շիրվանզադեի «Մորգանի խնամին» (1926) կատակերգությունները, որոնք արտահայտում էին հասարակական նոր գիտակցության զայրույթը հին աշխարհի մահացող ուժերի ու դրանց գոյությունը արդարացնող հասկացությունների դեմ։

Դ. Դեմիրճյանը, որ ժողովրդական հեքիաթի մշակմանը անդրադարձավ այն ժամանակ, երբ հեղափոխությունը սկիզբ էր դրել քաջ նազարների իշխանության կործանմանը, բնականաբար, իր ուշադրությունը կենտրոնացրեց աշխարհի վրա անամոթաբար ծիծաղող հերոսներին՝ իրենց «անսասան» թվացող բարձրությունից վայր գցելու գաղափարական դրույթի վրա։

Երկրորդ ուշագրավ երկը՝ Եղիշե Չարենցի «Կապկազ» քամաշան էր, ժողովրդական հնագույն թատրոնի (Ղարադյոզ) և դիմակների կատակերգության սկզբունքներով հյուսված ստեղծագործություն, որտեղ որպես գործող անձինք հանդես են գալիս անդրկովկասյան հակահեղափոխական կառավարությունների ներկայացուցիչները՝ դաշնակցական Կարճիկյանը, մենշևիկ Գնգեշկորին, մուսավաթական Թոփչիբաշևը՝ իրենց «տերերով ու ծառաներով»։ Ժողովրդական հինավուրց թատրոնից ծանոթ պերսոնաժ Ղարան (ռուսական Պետրուշկայի, անգլիական Պոնչայի հայկական տարատեսակը) քամաշայում հանդես է գալիս որպես հին կյանքի սկզբունքները երգիծական ծաղրով մերկացնող։

Քաղաքական կատակերգության ժանրում նոր գծեր բերեց քննադատական ռեալիզմի խոշորագույն գեղագետ Ալ. Շիրվանզադեն, գրելով «Մորգանի խնամին»։

Այդ կատակերգությամբ Շիրվանզադեն ավարտեց բուրժուական հասարակության կյանքի գեղարվեստական պատմությունը, որ նա սկսել էր անցյալ դարի 80-ական թվականներից և արդեն հաղթած ժողովրդի դիրքերից ահեղ ծաղրի ենթարկեց բուրժուազիայի «վերջին մոհիկաններին», որոնք հեղափոխության վճռական ձեռքով դուրս շպրտվելով երկրից, սպիտակ էմիգրացիայում անղոր գալարումներով երազում էին հին, պատմականորեն մահվան դատապարտված կյանքի ու սկզբունքների վերականգնումը։

Ստեղծագործական նախորդ շրջանում գերազանցորեն դրամաներ գրած հեղինակն այս անգամ կատակերգության դիմեց այն ճշմարիտ զգացողությամբ, որ իր նկարագրած բուրժուական աշխարհը հասնելով կործանման եզրը, այլևս ծիծաղելի է թվում հաղթող դեմոկրատիայի հզորացող ուժի հանդեպ։

20-ական թվականների երկրորդ կեսից դրամատուրգիայում հայտնվեցին նաև հեղափոխական ու քաղաքացիական պատերազմի մասնակիցները (Դ. Դեմիրճյան. «Հաղթական սիրո երգը», Վ. Թոթովենց. «Հրդեհ», Ա. Վարդանյան. «Կարմիր պարտիզաններ»), սոցիալիզմի երիտասարդ շինարարները (Ա. Ղարագյոզյան. «Կարմիր աստղիկ», Վ. Վաղարշյան. «Նավթ»)։ Դրամատուրգիան, հաղթահարելով նոր հերոսի պատկերման սխեմատիզմն ու երևույթների մատուցման քարոզչությունը, ուժեր կուտակեց արդիական նյութի նվաճման համար։

2. ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵԱԼԻԶՄԻ ՄՆԹՈՒԹ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

30-ական թվականներին, մեր երկրում սոցիալիզմի հաղթական շինարարության տարիներին, գեղարվեստական գրականությունը ավելի ու ավելի տոգորվեց ժողովրդի կյանքի հետ կապերի ամրապնդման գիտակցությամբ։ Ուժեղացավ քաղաքում և գյուղում կատարվող պատմական վերափոխությունների

արտացոլման ձգտումը, սովետական գրողների տարբեր սերունդների ներկայացուցիչների միջև հաստատվեց գաղափարական մերձեցում ու ստեղծագործական համագործակցություն։ Պատմական նոր իրադրության մեջ այլևս ավելորդ համարվեց գրական տարբեր խմբավորումների համատեղ ու միաժամանակյա գոյությունը։ Պրոլետարական գրական կազմակերպությունները, որ առաջին տասնամյակում դրական դեր խաղացին բուրժուական գաղափարախոսության արտահայտությունների դեմ մղվող պայքարում, աստիճանաբար սկսեցին վարակվել վարչարարությամբ ու խմբակայնությամբ, գրականության զարգացման համար դառնալով լուրջ արգելակ։ ՌԱՊՊ-ի[1] անհանդուրժողական քաղաքականությունը, նրա հռչակած «դաշնակից, թե՞ թշնամի» հրահանգը, խմբակային մեկուսացումը խանգարեցին սովետական գրականության բնականոն զարգացման ընթացքին, գրական ազատ մրցության ծավալմամբ գրողների լայն շերտերին սոցիալիստական շինարարության հրատապ խնդիրների շուրջը համախմբելու գործին։

1932 թվականի ապրիլի 23-ին Համկ(բ)Կ Կենտկոմը որոշում ընդունեց ՌԱՊՊ-ի բոլոր կազմակերպությունները լուծարքի ենթարկելու մասին. որոշվեց ստեղծել սովետական իշխանության պլատֆորմը պաշտպանող և սոցիալիստական շինարարությանը մասնակցելու ձգտող բոլոր գրողների միասնական միություն։

ՀԿ(բ)Հ Կենտկոմի քարտուղարության որոշմամբ ստեղծվեց կազմկոմիտե՝ Հայաստանի գրողների միությունը կազմակերպելու համար։

1934 թվականի օգոստոսին կայացավ Հայաստանի գրողների առաջին համագումարը։ Դեռևս նախահամագումարյան շրջանում տեղի ունեցան ստեղծագործական մի շարք ասուլիսներ՝ սովետական գրականության մեթոդի, նոր մարդու պատկերման եղանակների, դասական ժառանգության օգտագործման, սոցիալիստական բովանդակության ու ազգային ձևի հարաբերության, գրական լեզվի շինարարության և ուրիշ տեսական խնդիրների շուրջը։

Սովետական գրողների համամիութենական առաջին համագումարին (1934 թվականի օգոստոս) Հայաստանի գրողները մասնակցեցին գեղարվեստական գրականության բոլոր ժանրերում ձեռք բերած ստեղծագործական լուրջ նվաճումներով։

Հայաստանի գրականության մասին տրված հարակից զեկուցման մեջ (Դր. Տեր-Սիմոնյան) և համագումարի պատգամավորների (Ե. Չարենց, Դ. Դեմիրճյան, Ա. Բակունց, Զ. Եսայան, Ալ. Շիրվանզադե) ելույթներում ընդգծվեց սովետահայ գրականության գաղափարական-գեղարվեստական նորարարությունն ու նրա զարգացման ուղիների կենսունակությունը։

Համամիութենական ամբիոնից հպարտ հնչեց ժողովրդական գրողի, գեղարվեստական խոսքի մեծ վարպետի՝ Ալ. Շիրվանզադեի հուզիչ ելույթը, որի մեջբերումով սկսվեց համագումարի նշանակությանը նվիրված «Պրավդայի» խմբագրական հոդվածը։

«Ես հին սերնդի մարդ եմ, ես տեսել եմ երեք թագավորների երեք թագավորություն։ Ես տեսել ու ապրել եմ մի քանի ռեժիմ՝ ցարական ռեժիմ, կերենսս-

---

1 РАПП — Российская ассоциация пролетарских писателей (հետագայում՝ ՌԱՊՊ)։

կիական ռեժիմ, դաշնակների ռեժիմ և այլն։ Ես 76 տարեկան եմ, բայց ձեզ հավատացնում եմ, որ ես երբեք ինձ այնքան առողջ չեմ զգացել, որքան վերջին ութ տարվա ընթացքում, որ անց եմ կացրել այստեղ։ Մարդիկ հաճախ հարցնում են ինձ. «Ինչ՞ով եք դուք սնվում, ի՞նչ եք դուք անում, որ չեք ծերանում։ Իսկ ես չեմ ծերանում, քանի որ ապրում եմ սովետական իշխանության օրոք և դեռ էլի կապրեմ, ես ցանկանում եմ իմ վերջին ուժերը, նույնիսկ ոչ վերջին, այլ նախավերջին ուժերը տալ սովետական երկրին»։

Գրողների համամիութենական առաջին համագումարը արդյունավետ նշանակություն ունեցավ ազգային գրականությունների զարգացման համար։ Գրողների ստեղծագործական նշանաբանը դարձավ սոցիալիզմի գործին, ժողովրդի գործին ծառայելու պատրաստակամությունը։ Սկսվեց ստեղծագործական աշխատանքի վերելքի ու ոգևորության շրջան, որը, սակայն, շուտով խաթարվեց «անձի պաշտամունքի» կամայականությունների պատճառով։ Հայաստանում վերստին սկսեց մոլեգնել խմբակային անառողջ պայքարը. 1937 թվականի կամայականություններին զոհ գարձան մի շարք նշանավոր գրողներ ու գրականագետներ՝ Ե. Չարենցը, Ա. Բակունցը, Զ. Եսայանը, Վ. Թոթովենցը, Մ. Զանյանը, Ս. Հակոբյանը, Պ. Մակինցյանը, Հ. Սուրխաթյանը. ծանր ռեպրեսիաների ենթարկվեցին Գ. Մահարին, Վ. Նորենցը, Վ. Ալազանը և ուրիշներ։

Չնայած գրականությանը հասցված հարվածին, գրական-ստեղծագործական կյանքը կանգ չառավ. 1937—1941 թվականների ընթացքում գրվեցին մի շարք արժեքավոր երկեր արդիականության երևույթների ու պատմական անցյալի մասին։

1941 թվականի մայիսի 10—20-ը Մոսկվայում տեղի ունեցավ հայ գրականության տասնօրյակը, որը հանդիսացավ աշխարհի հնագույն գրականություններից մեկի դասական ու նոր արժեքների ստուգատեսը։

Սովետահայ գրականության նվաճումները 30-ական թվականներին ավելի լիակատար ու ցայտուն ընդգծեցին գեղարվեստական նոր մեթոդի՝ սոցիալիստական ռեալիզմի մեթոդի կենսունակությունը։ Արձակում, պոեզիայում, դրամատուրգիայում ստեղծվեցին պատմական նոր բովանդակությամբ հագեցած, սոցիալական նոր իդեալի հաստատման համար ակտիվորեն պայքարող նոր հերոսների մասին պատմող մի շարք արժեքավոր ստեղծագործություններ։ Որդեգրելով անցյալի առաջավոր գրականության երկու կարևոր սկզբունքները՝ ռեալիստական ճշմարտացիության ու արվեստի հասարակական նշանակության սկզբունքները, սոցիալիստական ռեալիզմը ի դեմս Ե. Չարենցի, Դ. Դեմիրճյանի, Ա. Բակունցի, Ստ. Զորյանի, Գ. Սարյանի, Ն. Զարյանի և այլոց ստեղծագործության, գեղարվեստական-պատմական նոր բովանդակություն ու որակ բերեց հայ գրականությանը։

Սոցիալիստական ռեալիզմի գրականությունը իր պատմական նոր բովանդակությունը հաստատեց մի կողմից «գեղագիտական չեզոքության» և ֆորմալիստական տենդենցների, մյուս կողմից՝ սխեմատիզմի և նատուրալիստական փաստագրության, երկու դեպքում էլ հակառեալիստական ուղղությունների դեմ մղվող պայքարում։

Պատմական նոր ժամանակաշրջանում հայ գրականության մեջ խորապես գիտակցվեց գեղարվեստական նոր բնագծեր նվաճելու անհրաժեշտությունը։

Դրական շարժման պարագլուխը՝ Ե. Չարենցը, հանդես էկավ «էպիկական լուսաբաց» (1930) ծրագրային գրքով, առաջադրելով ժամանակակից գեղագիտության մի շարք արմատական պրոբլեմները՝ գրականության գաղափարայնության ու ժողովրդայնության, նրա բովանդակության հարստացման, գրականության ու դարաշրջանի կապի, անցյալի գեղարվեստական լավագույն ավանդությունների շարունակման ու հարստացման պրոբլեմները։

Չարենցն իր բանաստեղծական խորհրդածություններում ստեղծագործական միակ աղատությունը համարեց ժողովրդին ծառայելու գրողի պատրաստակամությունը։ Կյանքի ու ժողովրդի առաջ, պատմության առաջ պատասխանատվության խոր զգացումով Չարենցն իր արձակագիր բարեկամին՝ Ակսել Բակունցին գրեց.

Հասել ենք մենք արդեն այն սահմանին, որից
Սկսվում է մի նոր ու դժվարին վերելք։—
Սին տենչերի փոշին մեր խոհերից քերենք
Ու հանապարհ ընկնենք, մե՛ծ հանապարհ, նորից։—
Ես տեսնում եմ հիմա տարիների հեռում
Հորիզոններ՝ բազում փորձություններով հղի,
Հերոսություն, պայքար, և անհասնելի ուղի,
Որ մի՛ անգամ է լոկ մեզ աշխարհում տրվում։—
Ճանապարհին այս մեծ, այս վերելքին ահեղ
Մենք չե՛նք հոգնի երբեք, չե՛նք կորչելի ուղիե,
Չկտրվենք նեթ սերունդների հողից,
Սերունդների՝ աչքով թե մեր երթին նայենք...[1]

Նոր մարդու զգացմունքների ու խոհերի հարստության արտացոլման, դարաշրջանի տրամադրությունների ու պայքարի ճշմարիտ վերարտադրության համար Չարենցն առանձնացնում է երկու գլխավոր նախապայման՝ կյանքի խոր ճանաչողություն և համաշխարհային արվեստի նվաճումների յուրացում։ Նա գտնում էր, որ միայն այս սկզբունքների սինթեզի ճանապարհով կարելի է լուծել սովետական կլասիկայի ստեղծման խնդիրը, որը հանդիսանում էր ժամանակաշրջանի գեղագիտության առանցքը։

Բնորոշ է, որ հենց 30-ական թվականներին, հասարակական վերելքի իրադրության պայմաններում, սովետահայ գրողները հաճախ են իրենց ստեղծագործություններում անդրադառնում ժամանակի գեղագիտության խնդիրներին։ Ն. Զարյանը («Ֆիրդուսի», «Պոեմ մենոդի մասին»), Վ. Ալազանը («Պոեմ պոետների մասին»), Վ. Նորենցը («Պայքար»), Գ. Սարյանը, Ս. Տարոնցին և ուրիշներ, հիմք ընդունելով կյանքի ու գրականության հարուստ կապերը, առաջ քաշեցին գրականության գաղափարական բովանդակության խորացման, ժողովրդայնության, գրողի քաղաքացիական ակտիվության հարցերը։ Գրականությունը համարելով հզոր զենք սոցիալիզմի համար մղվող պայքարում, Չարենցն ու նրա զինակիցները սովետահայ գրականության խնդիրը համարեցին կյանքի կենդանի բազմազանության ու հարստության վերարտադրությունը։

1 Ե. Չարենց, Երկեր, Երևան, 1932, էջ 180։

Վեպում ու պատմվածքում, պոեմում ու ակնարկում, քնարերգության մեջ ու դրամայում լուրջ փորձեր կատարվեցին սոցիալիստական շինարարության պաթոսը մարմնավորող նոր մարդու կերպարի ստեղծման ուղղությամբ։ Եթե 20-ական թվականների գրականությունը դեռ միայն շոշափում էր նոր մարդու կերպարը, հաճախ նրան ներկայացնելով սխեմատիկ գույներով, ապա 30-ական թվականների գրականության մի շարք երկերում սոցիալիստական հասարակության մարդու անհատականությունը բացահայտվեց հասարակական նոր հարաբերությունների լույսի տակ։ Մարդու պատկերումը դարձավ ավելի կենդանի ու ավելի բազմազան, բազմակողմանի ու գունեղ, աղատագրվելով քաղգրագիտական ճիչերից ու պլակատային շեշտերից։

Ինչպես միշտ, կյանքի նոր երևույթներին առաջինը արձագանքեց պոեզիան՝ արդեն 1930 թվականին հրապարակ բերելով այնպիսի նշանակալից ստեղծագործություն, ինչպես Ն. Զարյանի «Ուշանի քարափը» էպիկական պոեմը։ Ուշադիր զննելով սոցիալական ու հոգեբանական այն նոր երևույթները, որոնք առաջ եկան սոցիալիստական զարգացման ուղին բևեռոխած հայկական գյուղում, Ն. Զարյանը «Ուշանի քարափում» պատմական կոնկրետությամբ արտացոլեց իրականության զարգացման բարդ ընթացքը, իրարամերժ հոգեբանությունների՝ սոցիալիստական գիտակցության ու անհատապաշտական ավանդությունների սուր բախումները։ «Ուշանի քարափի» բովանդակությունը ժողովրդական լայն մասսաների առաջընթաց այն շարժումն է, որին ուղեկցում են հոգեբանության «կայունացած» գծերի ու նոր հոգեբանության ստեղծման պայքարում առաջացած դրամատիկական ապրումները։

30-ական թվականներին Ն. Զարյանը գրեց նաև «Սաքո Մկրկինյան» ու «Կարինե» պոեմները, դարձյալ նյութ ունենալով հայ գյուղացու նոր վերաբերմունքը աշխատանքի հանդեպ, նոր հոգեբանության մշակման ընթացքը։

30-ական թվականներին մարդկային նոր հարաբերությունների ու կառուցման հիմքի վրա բուն ծավալում ապրեց այսպես կոչված «կառուցման քնարերգությունը»։ Ժողովրդական մասսաներին համակած աշխատանքային ոգևորությունը, նոր Հայաստանի կերպարը, երկրի սոցիալիստական վերափոխումն ու տեղաշարժերը, աշխատանքային հերոսության առօրյան խոր արձագանք գտան հայ բանաստեղծների երկերում։ Սկսած պրոլետարական գրականության վետերան Հակոբ Հակոբյանից մինչև տաղանդավոր սկսնակներ Թաթուլ Հուրյանը և Հովհաննես Շիրազը,—բոլոր բանաստեղծները այս կամ այն չափով դարձան կառուցման երգիչներ։

Հայ պոեզիայի դարավոր ընթացքում առաջին անգամ այս շրջանում գծագրվեց սոցիալիստական նոր քաղաքի պատկերը, որը նշանավորեց հայ ժողովրդի սոցիալիստական վերածննդությունը։

Սոցիալիստական կառուցման թեմայի գեղարվեստական յուրացման փայլուն նմուշներ տվեց Գեղամ Սարյանը, երևույթների ռեալիստական կոնկրետ պատկերումին զուգակցելով առօրյա աշխատանքի ռոմանտիկ ընկալումը։

Բանաստեղծությունը, հաղթահարելով նախորդ տասնամյակի պոեզիայի վերացականությունն ու առարկայապաշտությունը, իր հերոսին որոնում է կենդանի իրականության մեջ։ Բազմաթիվ բանաստեղծություններում գծագրվե-

ցին հնգամյակի հերոսների — հանքագործների ու շինարարների, կարբիտագործների ու ջուլհակների կերպարները։

Սոցիալիստական կյանքի նվաճումների ու նոր մարդու հոգեբանության արտացոլմանը զուգընթաց սովետահայ պոեզիայում լայն տեղ գրավեցին հայ ժողովրդի պատմական ճակատագրի, հեղափոխության ու ժողովրդի պատմության փոխադարձ կապի թեմաները։ Բանաստեղծները սոցիալիստական նվաճումների բարձունքից իմաստավորեցին հայ ժողովրդի պատմությունը, գաղափարական շեշտը դնելով նրա նոր ճակատագրի փաստի վրա։

Այդ հարցի գեղարվեստական արձագանքն էր Ն. Զարյանի «Վերածնունդը», որտեղ պատմության բոլոր հողմերին դիմացած, հավերժորեն կենդանի ու զարմանալիորեն կենսունակ ծաղկի կերպարով բացահայտվում է ժողովրդի վերածննդության իմաստը։

Ժողովրդի պատմական բախտի թեման գեղարվեստական լայն ընդհանրացումներով արտահայտեց Եղիշե Չարենցի «Գիրք ճանապարհին» (1933)։ Չարենցի նոր ժողովածուն գիրք է ժողովրդի անցած ճանապարհի, նրա պայքարի ու պատմության մասին։ Մի շարք պոեմներում («Պատմության քառուղիներում», «Մահվան տեսիլ»), տուրք տալով գռեհիկ-սոցիոլոգիական տեսակետներին հայ ազգի կազմավորման ուղիների, անցյալի ազատագրական շարժումների գնահատման հարցում, Չարենցը այդ գրքի մյուս պոեմներում («Դեպի լյառն Մասիս», «Զրահապատ Վարդան Զորավար», «Ընորք», «Գովք խաղողի, գինու և գեղեցիկ դպրության»), տաղերում ու խորհուրդներում, գովքերում ու ներբողներում արտահայտում է ճշմարիտ հայացք ժողովրդի պատմության վերաբերյալ.

...Եվ այսպես երկա՜ր սավառնեց
Մեր ոգին հեռու-հեռուները,
Իր ամբողջ վեհությամբ հառնեց
Մոռացած մեր երկրի առուները,—
Առաջին անգամ նա տեսավ
Բորբ աշխարհը իր դեմ, ինչպես ի՛րը,—
Հյուսիսից ճառագած լույսով
Թոթափեց դեմքից հին մոխիրը։—

Եվ այժմ ահա նա կրկին
Դառնում է դեպի հին իր տունը,
Որ հզոր շառաչով երգի
Աշխարհում՝ իր նո՛ր խնդությունը։—
Ո՛չ ախուր է նա հիմա, ո՛չ խեղճ,
Ո՛չ անհուն աշխարհում կորած.
Նա բերել է հուր մի անշեջ
Եվ անահ գոյության երազ[1]։

30-ական թվականների պոեզիան դրսևորեց բանաստեղծների գաղափարական հասունացումն ու գեղարվեստական ինքնատիպության աճումը։ Կոնկրե-

1 Ե. Չարենց, Գիրք ճանապարհի, Երևան, 1933, էջ 130։

տացավ թեման, խորացավ մտահղացումը, լուրջ որոնումներ կատարվեցին բովանդակության ու ձևի ժողովրդայնության հաստատման ուղղությամբ։ Դրսևորվեցին նաև մի շարք էական թերություններ։ Ստալինին նվիրված բազմաթիվ ներբողներում, նամակներում ու բանաստեղծական դիմումներում խլացան բանաստեղծության կենդանի շեշտերը, կոնկրետ պատկերը փոխարինվեց անկենդան ոճերով։

Սոցիալիստական շինարարության պաթոսը գունավորեց նաև արձակագիրների միտքը, զգացմունքը, երևակայությունը։ Համարձակորեն արվեստի «շփման» ոլորտի մեջ մտան բոլորովին նոր, առաջներում անհայտ պրոբլեմներ՝ տնտեսության, աշխատանքային մրցության, տեխնիկական առաջադիմության պրոբլեմներ։

Պատմվածքից ու նովելից բացի, որոնք նախորդ շրջանում արդեն զարգացման հաստատուն ընթացք էին ստացել, 30-ական թվականներին զարգացան վիպակն ու վեպը՝ արդիականության նյութի հիման վրա։

Կտավի խոշորացման տենդենցը արտահայտում էր հերոսների ու իրականության միջև ստեղծված առավել «մարդկային» ու առավել «պատմական» հարաբերությունների լայնացման իրողությունը։

Այս խնդրի լուծման ճանապարհն անցնում էր ժողովրդական ստեղծագործության ու աշխատանքի թեմաների արծարծման, կենսական հարուստ նյութի բարձրացման, ժամանակի զարգացման բուռն ընթացքից նրա ամենաէական, կարևորագույն երևույթները իմաստավորելու համար գեղարվեստական պատշաճ ձևեր որոնելու ուղիներով։

Եղան նաև վիճելի փորձեր, ինչպես Մ. Արազու ռոմանտիկական վիպակը («Լուսնի շողերով»), նոր կենսանյութի հաղթահարման անհաջողություններ (ինչպես Մ. Մանվելյանի «Անապատը կծաղկի», Վ. Ալազանի «Վաթսուներորդ հորիզոնում», Լ. Թարգյուլի «Հնկանների աշխարհում» վեպերը), արձակի շատ էջեր լցվեցին «արտադրական» հաշվետվություններով, տեխնոլոգիական պրոցեսների մանրամասն ու մակերեսային նկարագրություններով, առանձին երկերում (Հմ. Սիրաս. «Ջգրված օրենք», Քր. Թափալճյան. «Վիկտորիա» և այլն) նատուրալիստական բարքագրությունը փոխարիներ նոր աշխարհի հերոսների կերպարների մշակմանը։

Գրականության և նյութի պայքարի դժվարին ընթացքի մեջ անխուսափելի էին «աճման» թուլություններ։ Արձակի դեմքը, սակայն, չի բնորոշվում միայն դրանով։ Նույն այդ երկերի կողքին ձևավորվեցին մարդկանց սոցիալիստական գործունեության մարդկային — հոգեբանական պլանով վերարտադրող սովետահայ վեպի բնորոշ գծերը։ Այս ընթացքի առաջնեկը հանդիսացան Դ. Դեմիրճյանի «Ռաշիդ» (1930) և «Նիգար» (1932) վիպակները՝ կոլեկտիվացման տարիների դրամատիկական սուր իրադարձությունների գեղարվեստական արձագանքները, Մ. Արազու «Ջրվեժի ցոլքում» և Վ. Թոթովենցի «Հրկիզված թղթեր» գրվածքները՝ հին մտավորականության վերափոխման ընթացքի մասին, Ստ. Զորյանի «Սպիտակ քաղաք» վեպը՝ սոցիալիստական քաղաքի մասին առաջին երկը և այլն։

Արդիական վեպի ձևավորման ընթացքի մեջ կարևոր նշանակություն ունեցավ Ն. Զարյանի «Հացավանը»։ Արտացոլելով գյուղի կոլեկտիվացման դրա-

մատիկական հակասություններով լի ժամանակաշրջանը, Ն. Զարյանը «Հացավանում» ժամանակի բարոյական ու սոցիալական պրոբլեմները լուծեց ոչ միայն հոգեբանական-կենցաղային պլանով, այլև մշակեց պատմական լայն հայացք հայ գյուղում կատարվող իրադարձությունների նկատմամբ։

Աշխատանքային պոեզիայի հիմքի վրա նոր մարդու ունհատականության բացահայտման ելակետը բնորոշ էր ոչ միայն լայն կտավներին, այլև 30-ական թվականների ակնարկների ու պատմվածքների մեծամասնությանը։ Այս ուղղությամբ հետաքրքրական փորձեր կատարեցին նաև արձակագիրների նոր սերնդի ներկայացուցիչները՝ Հր. Քոչար, Ս. Պայազատ, Գ. Բես, Գ. Սևունց։

Արդիականության խոր բովանդակությունը փիլիսոփայորեն հայտնագործելու ճանապարհով գնաց Ա. Բակունցը, գրելով «Պրովինցիայի մայրամուտը»՝ իմաստային նրբերանգներով հարուստ մի վիպակ։

Հաստատելով սոցիալիստական իրականության գեղեցկությունը և նոր մարդու վեհությունը, սովետահայ արձակագիրները լայնորեն արձագանքեցին նաև ժողովրդի հեղափոխական ու հայրենասիրական ավանդություններին։ Անցյալ տասնամյակի նիհիլիստական «ձախություններին» հաղթահարման ուղիներով սկզբնավորվեց պատմական թեման։ Այդ սկիզբը նշանավորվեց այնպիսի անզուգական դրական երևույթով, ինչպես Ա. Բակունցի «Խաչատուր Աբովյան» անավարտ վեպն է։ Բակունցը ոչ միայն նոր մեկնաբանություն տվեց հայկական լուսավորական շարժման մեծագույն ռահվիրայի՝ Խ. Աբովյանի պատմական գործին՝ նրա կերպարի վրայից վերցնելով հակագիտական «լուսաբանությունները» թանձր շերտը, այլև գրականություն բերեց անցյալ ժամանակաշրջանի պատմական դեպքերի պատկերման ու պատմական նյութի մշակման ինքնատիպ եղանակ։ Դա պատմությունը ներուստ՝ սոցիալական-հոգեբանական առանձնահատկությունների մեջ գեղարվեստորեն բացելու հայացքն էր, որը հանդիսանում է առհասարակ սովետական պատմավիպասանության անկյունաքարը։

Հայ ժողովրդի պատմության փիլիսոփայությունը նույն մեկնակետով, բայց միանգամայն ինքնատիպ ձևով ու ոճաբանական կիրառություններով արտահայտություն գտավ Դ. Դեմիրճյանի «Դիրք ծաղկանց» պատմվածքում։

Ժողովրդի մոտավոր անցյալին էին նվիրված Մովսես Արազու «Այրվող հորիզոնը», որտեղ ցուցադրվում է հայ ուսանողության մասնակցությունը համառուսական հեղափոխական շարժումներին, Վ. Թոթովենցի «Բաքու» վեպը, Մ. Արմենի «Սկաուտ 89» և «Պատկումներ» գրքերը, որոնցով սկզբնավորվում է պատանեկան վիպակի ժանրը սովետահայ գրականության մեջ։

Որպես գրական երևույթ պետք է նշել արձակագիրների որոնումները գրքվածքների գեղարվեստական ու ազգային ինքնատիպության, ժանրային, ոճական ու թեմատիկական բազմազանության հաստատման, ձևերի միապաղաղության հաղթահարման ուղղությամբ։ Բազմազանացման այս ընթացքը հենվում է սոցիալիստական ռեալիզմի մեթոդի լայն հնարավորությունների վրա և ուղղված է մեթոդի նեղ, դոգմատիկ, աղանդավորական ըմբռնումի դեմ։

Գրականության ձևերի ու ոճերի հարստացումը դիտվում էր ոչ թե դասական ավանդներից կտրված, այլ նրա հետ սերտ կապերի մեջ։ Գեղարվեստական որոնումների այդ ընթացքում ստեղծվեցին այնպիսի երկեր, ինչպես Մ. Ար-

մենի «Հեղնար աղբյուր» վիպակը, Ա. Բակունցի «Կյուրեսը»՝ գավառական կյանքի երգիծական տարեգրությունը, Ստ. Զորյանի «Մի կյանքի պատմություն» երկհատոր վեպը, Վ. Թոթովենցի «Կյանքը հին հռոմեական ճանապարհի վրա», Զապել Եսայանի «Սիլիհտարի պարտեզները» երկերը։

Ժողովրդի պատմության տարբեր հատվածները ներկայացնող այդ ստեղծագործություններում, որոնցով կարելի է բնութագրել ամբողջ ժամանակաշրջաններ՝ նրանց բնորոշ սոցիալական տեղաշարժերով ու հոգեբանությամբ, ակնառու կերպով հայտնաբերվում է գրական ինքնատիպությունը, գեղարվեստական արտահայտման եղանակների ու ոճերի բազմերանգությունը, ինչպես նաև ազգային գեղարվեստական տրադիցիաների նոր ու խորացված զգացողությունը։

Սովետահայ արձակում սոցիալիստական ռեալիզմի մեթոդի հաղթանակը, որ 30-ական թվականների գրական պրոցեսի ամենաէական կողմն է, նրա շարժումը տարավ ժողովրդայնության, խոր գաղափարայնության ու բարձր գեղարվեստականության ճանապարհով։

Հանրապետությունում թատրոնական ցանցի ծավալումը 30-ական թվականներին նախադրյալներ ստեղծեց դրամատուրգիայի արդյունավետ զարգացման համար։ Խնդիր դրվեց ստեղծել հանդիսատեսի գաղափարական ու գեղարվեստական դաստիարակությանը կոչված ժամանակակից թեմատիկայով դրամատուրգիա։ Այդ խնդրի կատարման գործում մեծ նշանակություն ունեցան Մ. Գորկու տեսական ելույթները նոր դրամատուրգիայի կոնֆլիկտի ու հերոսի մասին, մասնավորապես նրա «Պիեսների մասին» (1933) ծրագրային հոդվածը։ Սովետական դրամատուրգիայի առաջնահերթ խնդիրը Գորկին համարում էր «նոր մարդկության մեծ, համարձակ, ուժեղ հերոսի» գեղարվեստական վառ պատկերումը։

Սովետահայ դրամատուրգները, որոնք 20-ական թվականներին գերազանցորեն դիմում էին «արտաքին թշնամու» մերկացման թեմային, նոր տասնամյակում դրամատուրգիայի կոնֆլիկտների հիմքում դրեցին արդիական կյանքի երևույթները, մարդու հոգեկան աշխարհի վերափոխության բարդ ընթացքը։ Ժամանակակից իրականության մի շարք էական գծերն ու հոգեբանական, սոցիալական կոնֆլիկտները արտացոլելու առումով մասնավորապես աչքի ընկան Դ. Դեմիրճյանի պիեսները՝ «Ֆոսֆորային շող» դրաման, «Կապուտան» դրամատիկական հեքիաթը, «Նապոլեոն Կորկոտյան» կատակերգությունը։ Գործարանի, ջրանցքի շինարարության և սովխոզի մարդկանց հարաբերությունների հիմքի վրա Դ. Դեմիրճյանը ասպարեզ բերեց հակադիր սոցիալական ուժերի ներքին բախումները, ցուցադրեց սոցիալիստական գիտակցության հաղթանակը քաղքենիական հոգեբանության դեմ։

Ժամանակակից թեմատիկայից բացի սովետահայ դրամատուրգիան նյութ էր քաղում մոտավոր անցյալի՝ քաղաքացիական պատերազմի հերոսական իրադարձություններից և ժողովրդի հնագույն պատմությունից։

Սովետական իշխանության հաստատման համար ժողովրդական մասսաների պայքարին էին նվիրված Ա. Դուլակյանի «Արշալույսին», «Մեծ բարեկամություն», Գ. Սարյանի «Երեք երգ», Վ. Վաղարշյանի «Օղակում» պիեսները, որոնք բեմադրվելով Հայաստանի թատրոններում, արդեն պատմություն դար-

ձած սյուժեների ու կոնֆլիկտների միջոցով նոր սերնդին պատմում էին արյունով ու հերոսական ջանքերով ստեղծված ճշմարտության մասին։ Դրամատուրգները, անդրադառնալով պատմության սյուժեներին (Մ. Ջանան. «Շահնամե», Լ. Միքայելյան. «Գոշ», Դ. Դեմիրճյան. «Երկիր հայրենի»), ակնհայտորեն ձգտում էին բացահայտել ժողովրդի վճռական դերը պատմության մեջ։

30-ական թվականների գրականության բոլոր ժանրերում լայն արձագանք գտավ սովետական հայրենասիրության մոտիվը։ Արդեն այս շրջանում զարգացավ այնպես ասած «պաշտպանական գրականությունը»՝ հակաֆաշիստական ուղղությամբ։ Գրականությունը, երկրի հետ միասին, նախապատրաստվում էր գալիք ահեղ մարտերին։

մենի «Հեղնար աղբյուր» վիպակը, Ա. Բակունցի «Կյուրեսը»՝ գավառական կյանքի երգիծական տարեգրությունը, Ստ. Զորյանի «Մի կյանքի պատմություն» երկհատոր վեպը, Վ. Թոթովենցի «Կյանքը հին հռոմեական ճանապարհի վրա», Զապել Եսայանի «Սիլիհտարի պարտեզները» երկերը։

Ժողովրդի պատմության տարբեր հատվածները ներկայացնող այդ ստեղծագործություններում, որոնցով կարելի է բնութագրել ամբողջ ժամանակաշրջաններ՝ նրանց բնորոշ սոցիալական տեղաշարժերով ու հոգեբանությամբ, ակնառու կերպով հայտնաբերվում է գրական ինքնատիպությունը, գեղարվեստական արտահայտման եղանակների ու ոճերի բազմերանգությունը, ինչպես նաև ազգային գեղարվեստական տրադիցիաների նոր ու խորացված զգացողությունը։

Սովետահայ արձակում սոցիալիստական ռեալիզմի մեթոդի հաղթանակը, որ 30-ական թվականների գրական պրոցեսի ամենաէական կողմն է, նրա շարժումը տարավ ժողովրդայնության, խոր գաղափարայնության ու բարձր գեղարվեստականության ճանապարհով։

Հանրապետությունում թատրոնական ցանցի ծավալումը 30-ական թվականներին նախադրյալներ ստեղծեց դրամատուրգիայի արդյունավետ զարգացման համար։ Խնդիր դրվեց ստեղծել հանդիսատեսի գաղափարական ու գեղարվեստական դաստիարակությանը կոչված ժամանակակից թեմատիկայով դրամատուրգիա։ Այդ խնդրի կատարման գործում մեծ նշանակություն ունեցան Մ. Գորկու տեսական ելույթները նոր դրամատուրգիայի կոնֆլիկտի ու հերոսի մասին, մասնավորապես նրա «Պիեսների մասին» (1933) ծրագրային հոդվածը։ Սովետական դրամատուրգիայի առաջնահերթ խնդիրը Գորկին համարում էր «նոր մարդկության մեծ, համարձակ, ուժեղ հերոսի» գեղարվեստական վառ պատկերումը։

Սովետահայ դրամատուրգները, որոնք 20-ական թվականներին գերազանցորեն դիմում էին «սրտաքին թշնամու» մերկացման թեմային, նոր տասնամյակում դրամատուրգիայի կոնֆլիկտների հիմքում դրեցին արդիական կյանքի երևույթները, մարդու հոգեկան աշխարհի վերափոխության բարդ ընթացքը։ Ժամանակակից իրականության մի շարք էական գծերն ու հոգեբանական, սոցիալական կոնֆլիկտները արտացոլելու առումով մասնավորապես աչքի ընկան Դ. Դեմիրճյանի պիեսները՝ «Ֆոսֆորային շող» դրաման, «Կապուտան» դրամատիկական հեքիաթը, «Նապոլեոն Կորկոտյան» կատակերգությունը։ Գործարանի, չրանցքի շինարարության և սովխոզի մարդկանց հարաբերությունների հիմքի վրա Դ. Դեմիրճյանը ասպարեզ բերեց հակադիր սոցիալական ուժերի ներքին բախումները, ցուցադրեց սոցիալիստական գիտակցության հաղթանակը քաղքենիական հոգեբանության դեմ։

Ժամանակակից թեմատիկայից բացի սովետահայ դրամատուրգիան նյութ էր քաղում մոտավոր անցյալի՝ քաղաքացիական պատերազմի հերոսական իրադարձություններից և ժողովրդի հնագույն պատմությունից։

Սովետական իշխանության հաստատման համար ժողովրդական մասսաների պայքարին էին նվիրված Ա. Գուլակյանի «Արշալույսին», «Մեծ բարեկամություն», Գ. Սարյանի «Երեք երգ», Վ. Վաղարշյանի «Օղակում» պիեսները, որոնք բեմադրվելով Հայաստանի թատրոններում, արդեն պատմություն դար-

ձած սյուժեների ու կոնֆլիկտների միջոցով նոր ձևերնդին պատմում էին արյունով ու հերոսական ջանքերով ստեղծված ճշմարտության մասին։ Դրամատուրգները, անդրադառնալով պատմության սյուժեներին (Մ. Ջանան. «Շահնամե», Լ. Միքայելյան. «Դոշ», Դ. Դեմիրճյան. «Երկիր հայրենի»), ակնհայտորեն ձգտում էին բացահայտել ժողովրդի վճռական դերը պատմության մեջ։

Ա 30-ական թվականների գրականության բոլոր ժանրերում լայն արձագանք գտավ սովետական հայրենասիրության մոտիվը։ Արդեն այս շրջանում զարգացավ այնպես սւսած «պաշտպանական գրականությունը» հակաֆաշիստական ուղղությամբ։ Գրականությունը, երկրի հետ միասին, նախապատրաստվում էր գալիք ահեղ մարտերին։

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՅՈԹԵՐՈՐԴ

ՍՈՎԵՏԱՀԱՅ ԱՐՎԵՍՏԸ

1. ԹԱՏՐՈՆՆ ՈՒ ԿԻՆՈԱՐՎԵՍՏԸ

Սոցիալիստական նոր իրավակարգը հնարավորություններ ընձեռեց ինչպես բովանդակ ազգային արվեստի, այնպես էլ թատրոնի բուռն զարգացման համար։ Եթե նախասովետական տարիներին հայ թատրոնը չուներ մշտական գործող, ստեղծագործական խումբ, նույնիսկ շենք, ուր հնարավոր լիներ պարբերաբար ներկայացումներ կազմակերպել և բեմական շատ խոշոր գործիչներ հարկադրված էին թափառական կյանք վարել, ապա Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո, հատկապես Հայաստանում սովետական կարգեր հաստատվելու շնորհիվ, թատրոնն արժանացավ պետական հոգատարության։ Անհամեմատ աճեց նրա հասարակական դերը ժողովրդի գաղափարական և գեղարվեստական դաստիարակության գործում։ Տարեցտարի ընդլայնվեց թատրոնների ցանցը, դրամատիկականի կողքին զուգահեռաբար սկսեցին գործել օպերային, երաժշտական կոմեդիայի, պատանի հանդիսատեսի և տիկնիկային թատրոնները։

Դեռևս 1917 թվականին ազգությունների գործերի ժողկոմատին կից հայկական գործերի կոմիսարիատի ծրագրի մեջ էր մտնում նաև ազգային արվեստի օջախներ ստեղծելու խնդիրը։ Վահան Տերյանի գործուն մասնակցությամբ 1918 թվականին Հյուսիսային Կովկասի Պյատիգորսկ քաղաքում կազմակերպվեց թատերական սեկցիա, որը ղեկավարում էր թատերական նշանավոր գործիչ Օլի Սևումյանը։ Շուտով հավաքագրվում է դերասանական մի խումբ, որը, առաջին անգամ հայ իրականության մեջ, կոչվում է հայկական պետական դրամա։ Սովետական և կուսակցական մարմինների աջակցությամբ հետզհետե նման թատերախմբեր կազմակերպվեցին նախ Կրասնոդարում («Կոմունա» անունով), Դոնի Ռոստովում՝ Պետրոս Ադամյանի անվան, Աստրախանում, Ստավրոպոլում, ապա նաև Ուկրաինայի ու Ղրիմի մի շարք հայաբնակ քաղաքներում։ Մենշևիկների և մուսավաթականների լուծը թոթափելուց անմիջապես հետո հայկական թատրոնի գործը պետական հիմքերի վրա դրվեց նաև Թիֆլիսում ու Բաքվում։

Սակայն, որքան բուռն էին հին թատրոնից եկող ուժերի ջանքերը, այնուամենայնիվ սովետահայ բեմարվեստը կարող էր զարգանալ միայն նոր, երիտասարդ կադրերի պատրաստման միջոցով։ Անհրաժեշտ էին նախ և առաջ մաս-

նագիտական կրթություն ստացած դերասաններ։ Ուստի և, հատկապես Անդրկովկասի հայկական թատրոնների ստեղծագործական խմբերը համալրելու նկատառումով, Հայկական գործերի կոմիսարիատի նախաձեռնությամբ, 1919 թվականից Մոսկվայի հայկական կուլտուրայի տանը սկսեց գործել դրամատիկական ստուդիան, որի գեղարվեստականղեկավարը երկար տարիներ նշանավոր ռեժիսյոր Ռուբեն Սիմոնովն էր, իսկ կազմակերպիչը՝ Սուրեն Խաչատրյանը։ Ստուդիան իր շուրջն համախմբեց ժամանակի լավագույն արվեստագետներ, նկարիչներ, դերասաններ, կոմպոզիտորներ։ Ուշագրավ է, որ այդ գործին իր մասնակցությունն է բերել նաև աշխարհահռչակ ռեժիսյոր, ծագումով հայ Եվգենի Վախթանգովը։ Ստուդիան որոշ ընդհատումներով, շուրջ քսան տարի, գործել է և հայ դրամատիկական թատրոնին տվել մասնագիտական կրթություն ստացած բազմաթիվ խոստումնալից ուժեր, դերասաններ և ռեժիսյորներ, որոնք մեծ դեր խաղացին ժամանակակից հայ թատրոնի ստեղծման ու զարգացման պրոցեսում։

Թատերական կյանքը սկսեց աշխուժանալ Հայաստանում սովետական կարգերի հաստատման առաջին իսկ ամիսներից։ Դիլիջանում, Ղարաքիլիսայում, Ալեքսանդրապոլում և Երևանում, քաղլուսավորների աշակցությամբ, մեկը մյուսի ետևից կազմակերպվեցին թատրոններ, որոնց գլուխ էին անցել նախասովետական հայ բեմի ժրաջան գործիչներ Հասմիկ Հակոբյանը, Ամո Խարազյանը, Վարդան Միրզոյանը։ Առանձնապես ուշագրավ է 1922 թվականին Ալեքսանդրապոլում ցուցադրված «Սասունցի Դավիթ» բացօթյա ներկայացումը, որին ներկա էր շուրջ տաս հազար հանդիսական, իսկ դերակատարների թիվը հասնում էր 150-ի։ Իր բնույթով բացառիկ այդ ներկայացման նախաձեռնողը անվանի դերասան և ռեժիսյոր Արմեն Արմենյանն էր։

Հայ ազգային խմբարվեստի իսկական զարթոնքը կապված է Երևանի առաջին պետական թատրոնի կազմակերպման հետ, որի գործունեությունը սկսվեց 1922 թվականի հունվարի 25-ին, Գ. Սունդուկյանի «Պեպո» պիեսի բեմադրությամբ։ Կարճ ժամանակամիջոցում թատրոնը գտավ իր ստեղծագործական դեմքը, դարձավ ժողովրդական լայն զանգվածների գեղարվեստական դաստիարակության լավագույն օջախը։ Դրան նպաստեց այն կարևոր հանգամանքը, որ հենց սկզբից թատրոնի առաջին գլխավոր ռեժիսյոր Լևոն Քալանթարյանի ղեկավարությամբ խմբում գործում էին փորձված ու անվանի մի շարք դերասաններ, այդ թվում Հասմիկը, Միքայել Մանվելյանը, Խահակ Ալիխանյանը, Արուս Ոսկանյանը, Հրաչյա Ներսիսյանը, Վահրամ Փափազյանը, Համբարձում Խաչանյանը, Օլգա Գուլազյանը, Վաղարշ Վաղարշյանը, Ավետ Ավետիսյանը, Մկրտիչ Ջանանը և շատ ուրիշներ։ Նրանց ջանքերով հետզհետե հարստացավ թատրոնի խաղացանկը հայկական, ռուսական և արևմտաեվրոպական ժամանակակից ու դասական հեղինակների երկերով։

Չարենցի «Կապկազ» թամաշա, Դ. Դեմիրճյանի «Քաջ Նազար» և Շիրվանզադեի «Մորգանի խնամին» կատակերգությունները դրամատիկական այն երկերն էին, որոնք դաղափարական նոր լիցք հաղորդեցին հայ բեմի խաղացանկին և դարձան 20-ական թվականների ինքնուրույն ստեղծագործության լավագույն նմուշներ։ Այդ շրջանում, ինչպես վերջին երկու պիեսների, այնպես էլ

«Երևակայական հիվանդ», «Պարտիզպանի շունը», «Օթելլո» և այլ գործերի բեմադրությամբ աչքի ընկավ ռեժիսյոր Արշակ Բուրջալյանը։

1925 թվականին արտասահմանից Սովետական Հայաստանի կառավարության հրավերով հայրենիք վերադարձավ հայ թատրոնի վետերաններից մեկը՝ Հովհաննես Աբելյանը, և շուրջ մեկ տասնամյակ երիտասարդական ավյունով



Հ. Աբելյան



Ա. Ոսկանյան

ստեղծագործեց՝ կատարելով ոչ միայն դասական կերպարների նշանակություն ստացած Բարխուդարի («Նամուս»), Էլիզբարովի («Պատվի համար»), Գիժ Դանիելի («Ջար ոգի») դերերը, այլև ակտիվ մասնակցություն ունեցավ ժամանակակից հեղինակների նոր բեմադրություններին։

1927 թվականից սկսած, թատրոնի խաղացանկ մուտք գործեցին ռուս սովետական դրամատուրգիայի այն երկերը (Կ. Տրենյով «Լյուբով Յարովայա», Բ. Լավրենյով «Բեկում», Վ. Իվանով «Զրահագնացք 14—69» և այլն), որոնց հիմքում ընկած էին սովետական նոր մարդու հոգեբանությունը, Հոկտեմբերյան հեղափոխության առօրյան, հերոսական այն իրադարձությունները, որոնք նշում էին մարդկության գալիքի ուղիները։ Արդիական թեմատիկան միաժամանակ սոցիալիստական ռեալիզմի ոգին ըմբռնելու, նրա մեթոդը յուրացնելու անհրաժեշտություն առաջադրեց։ Եվ թատրոնի գործունեության հիմքը դարձավ ժամանակակից կյանքի պատկերումը։

Պատվաբեր այդ միսիան ստանձնեց նաև Լենինականի նորաստեղծ պետական թատրոնը (հիմնադրվեց 1928 թվականին, հետագայում՝ Ա. Մռավյանի անվան), որը շուտով դարձավ հանրապետության գեղարվեստական կյանքի երկրորդ կենտրոնը։ Ս. Բաղդասարյանի «Մարոկկո», Հ. Պարոնյանի «Մեծապա-

տիվ Մուրացկաններ», Մ. Գորկու «Հատակում», ինչպես նաև ժամանակակից ռուս հեղինակների մի շարք գործերի բարձրարվեստ բեմադրությունները, որոնց հեղինակը երիտասարդ ռեժիսոր Վարդան Աճեմյանն էր, Լենինականի թատրոնը բարձրացրին մի նոր աստիճանի։

Հանրապետության ծայրամասերի աշխատավորությանը սպասարկելու նպատակով 1928 թվականին կազմակերպվեց պետական շրջիկ թատրոն, որի ղեկավարությունը ստանձնեց ժողովրդական թատրոնի անխոնջ մշակ Ամո Խարազյանը։ Պետական թատրոններ բացվեցին նաև Կիրովականում, որը, Հովհ. Աբելյանի մահից հետո, կոչվեց նրա անվամբ, Ղափանում, Սոտեփանավանում, Արտաշատում, Ալավերդում և այլուր։



Հասմիկ

1929 թվականին հիմնադրվեց պատանի հանդիսատեսի թատրոնը, իսկ մի քանի տարի անց, փոքրահասակների համար՝ տիկնիկային թատրոններ Երևանում և Լենինականում։ Հանրապետությունում գործում էին նաև ադրբեջանական և քրդական թատրոններ։

Նույն թվականներին էլ, մեկը մյուսի ետևից բեմ բարձրացան Վ. Վաղարշյանի «Օղակում» պատմա-հեղափոխական դրաման, Մ. Գորկու «Եգոր Բուլըչևը և ուրիշներ», Ա. Օստրովսկու «Ամպրոպը», Բոմարշեի «Խելահեղ օր կամ Ֆիգարոյի ամուսնությունը» և այլ երկեր, որոնք գեղարվեստական մակարդակով, նախորդ տասնամյակում սոտեղծված ներկայացումների համեմատությամբ զգալիորեն բարձր էին։ Դա մասամբ պայմանավորված էր թատրոնի գլխավոր ռեժիսոր Արմեն Գուլակյանի և բեմանկարիչ Մինքայել Արուտչյանի նպատակասլաց աշխատանքով։

1933 թվականին ՌՍՖՍՀ լուսժողկոմատը Վահրամ Փափազյանին գործուղեց արտասահման։ Նա սովետական թատրոնի առաջին հայ պատվիրակն էր, որ իր արվեստը ցուցադրեց բուրժուական մի շարք երկրների հանդիսականին։ Մեծանուն արտիստը ելույթներ ունեցավ Ռիգայի, Վիլնյուսի, Տալլինի թատրոններում, ապա Փարիզի Օդեոն ազգային թատրոնում ֆրանսերեն կատարեց Օթելլոյի և Համլետի դերերը, հիացմունք պատճառելով օտարազգի արվեստասեր հասարակությանը։

1934 թվականին հյուրախաղերով Հայաստան ժամանեց Բաքվի հայ դրամայի պետական թատրոնը. «Հողմերի քաղաք», «Անմեղ մեղավորներ» ու «Սեր և խարդավանք» բեմադրությունները ցույց տվեցին ստեղծագործական այն մեծ աճը, որին հասել էր հայ թատրոնը սովետական տարիներին։ Մի քանի կարևոր դերերի վարպետ կատարմամբ համաժողովրդական ճանաչման արժանացան Ժաման Ենը, Հովսեփ Ոսկանյանը, Լևոն Երամյանը։

Երևանական թվականներին Երևանում գործում էր բեմարվեստի մի այլ օջախ ևս՝ Գորկու անվան բանվորական թատրոնը, իսկ 1937 թվականին հիմնադրվեց նաև ռուսական թատրոնը։ Ընդհանուր առմամբ մինչև Հայրենական մեծ պատերազմը, Հայաստանում գործում էին երեսունվեց թատրոն։

1938 թվականին Ն. Պոգոդինի «Հրացանավոր մարդը» ներկայացման մեջ, առաջին անգամ հայ բեմում պատկերվեց Վլադիմիր Իլյիչ Լենինի կերպարը։ Այդ պատասխանատու դերը պատվով կատարեց Գ. Սունդուկյանի անվան թատրոնի արտիստ Վ. Վաղարշյանը։ Մեծ առաջնորդի և նրա հավատարիմ զինակիցների կերպարները ստեղծագործական բուռն ոգևորության առիթ հանդիսացան նաև Լենինականի թատրոնի արտիստների համար, ուր 1940 թվականին բեմ բարձրացավ Ա. Կապլերի և Տ. Զլատագորովայի «Լենինը 1918 թվականին» պիեսը։

Բովանդակ հայ թատրոնը նախապատերազմյան տարիներին ապրում էր բուռն զարգացման մի շրջան։

Սովետական հայ թատրոնը իր օրավուր ընդարձակվող ցանցով, ներկայացումների գաղափարական հագեցվածությամբ դարձավ ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրայի կառուցման ակտիվ մասնակից։

* * *

Սովետահայ մշակույթի մեջ, որպես նոր և ինքնուրույն բնագավառ, իր կարևոր տեղն է գրավում կինոարվեստը։ Եթե նոր թատրոնը շատ բան ուներ ժառանգելու անցյալից, ապա կինոարվեստի ստեղծումն ու զարգացումը Հայաստանում ամբողջովին պայմանավորվեց սովետական իշխանության գոյությամբ։ Պետք է ասել, որ հայ թատրոնի գործիչներից ոմանք իրենց ուժերը մինչ այդ փորձել էին կինոարվեստի մեջ, նկարահանվելով մի շարք ռուսական ֆիլմերում, սակայն 20-ական թվականներին էր, որ հիմնադրվեց ազգային կինեմատոգրաֆիան և համախմբեց իր շուրջը ոչ միայն դերասանական լավագույն ուժեր, այլև մասնագետ ռեժիսյորներ, օպերատորներ. այդ հանգամանքը նշանակալից եղավ հետագա արդյունավետ աշխատանքի համար։

Հայկական կինոարվեստը կազմավորման բարդ և հետաքրքրական ուղի է անցել։ Նրա գոյության համար շրջանում էր, երբ հանրապետության մեջ նորնոր սկսեց աշխուժանալ կինոֆիկացման գործը։ Մասնավոր հիմունքներով գործող ընդամենը երկու կինո-թատրոն կար նախկին Հայաստանում, իսկ գյուղական վայրերում «մեծ Համրի» մասին, ինչպես կոչում էին կինոն այն ժամանակ, գաղափար անգամ չունեին, երբ 1920 թվականի դեկտեմբերին արդեն Հայաստանի տարբեր շրջաններում, լուսժողկոմատի նախաձեռնությամբ, շարժական ապարատների միջոցով սկսեցին ցուցադրել կինոնկարներ, իսկ մի քանի տարի անց Երևանում, Ալեքսանդրապոլում արդեն գործում էին «Պրոլետար», «Շիրակ», «Նաիրի» կինոթատրոնները։

1923 թվականին Ժողկոմխորհի որոշմամբ, ստեղծվեց պետուսկինո ընկերությունը։ Նյութական խիստ սահմանափակ միջոցներով, Հայաստանի նորաստեղծ կառավարությունը հիմք դրեց կինոարտադրությանը և սկսեց մեծ թափով զարկ տալ արվեստի այդ ամենաժողովրդական ճյուղին։

1924 թվականին էկրան բարձրացավ «Խորհրդային Հայաստան» առաջին կինոամսագիրը, որի բովանդակությունը վերածնված երկրի կերպարանափոխումն էր, ավերված քաղաքների վերակառուցումը, աշխատավոր մարդու առօրյան։

1925 թվականին ցուցադրվեց հայկական գեղարվեստական կինեմատոգրաֆիայի առաջնեկը՝ «Նամուսը», որից հետո, երկու տարվա մեջ էկրան բարձրացան «Զարեն», «Խաս-փուշ» նկարները։ Այս ֆիլմերը նոր կազմակերպված Հայկինոյի համբավը տարածեցին հանրապետության սահմաններից դուրս։ Դրանց բովանդակության հիմքում ընկած էին Արևելքի ժողովուրդների բազմաչարչար կյանքն ու ճակատագիրը։ Վերոհիշյալ կինոնկարների ու նրանց սցենարների, ինչպես նաև «Շոր և Շորշոր» կինոկոմեդիայի հեղինակը հայ ազգային կինոարվեստի երախտավոր գործիչ և սկզբնավորող Համո Բեկնազարյանն էր։ Համագործակցելով գլխավորապես հայ բեմի մի խումբ խոստումնալից ուժերի՝ Հ. Ներսիսյանի, Համմիկի, Ա. Ավետիսյանի, Հ. Խաչանյանի, Ն. Մանուչարյանի և ուրիշ դերասանների հետ, ռեժիսոր-բեմադրողը ստեղծել էր ոչ միայն տպավորիչ, մեծ ուշադրության արժանի նկարներ, այլև գծել այն ուղին, որով պետք է ընթանար հայ կինեմատոգրաֆիայի զարգացումը։ Կինոյի առաջին արտադրանքը ոգևորիչ եղավ, նրա շուրջը սկսեցին համախմբվել նշանավոր գրողներ, կոմպոզիտորներ, նկարիչներ, օպերատորներ. ռեժիսորների և դերասանների ցանկը համալրվեց նոր անուններով։

Հետագա տարիներին հայ կինոարվեստը աչքի ընկավ իր ժանրային բազմազանությամբ։ Կինոգործիչներին գրավեց պատմա-հեղափոխական թեմատիկան։ «Զամալու», «Տունը հրաբխի վրա», «Երկու գիշեր», «Սև թևի տակ» և այլ ֆիլմեր արտացոլում էին հայ ժողովրդի մոտիկ անցյալի առանձին հերոսական դրվագները, թեև բոլոր դեպքերում չէ, որ դրանք գտնում էին գեղարվեստական անհրաժեշտ մարմնավորում։ Քաղաքական երգիծանքի ուշագրավ օրինակ էր «Մ Նքսիկական դիպլոմատներ» կինոնկարը։ Կարևորն այն է, որ հայ կինոարվեստը ձգտում էր բարդ ու պատասխանատու խնդիրների կենսագործման. այդ ֆիլմերը հանդիսատեսին գաղափարապես կազմակերպելու անհերքելի ուժ ունեին։ Ռեժիսորներից աչքի ընկան նոր դեմքեր՝ Պ. Բարխուդարյանը, Ի. Պերեսիանին, Ա. Մարտիրոսյանը, օպերատորներից՝ Գ. Բեկնազարյանը, Հետագայում Դ. Ֆելդմանը։

1934 թվականին «Գիքոր» հուզիչ կինոնկարով Հայկինոն ամփոփեց իր գործունեության համր շրջանը և թևակոխեց ստեղծագործական կյանքի նոր փուլը։ 1935 թվականին ստեղծվեց հայ ազգային կինեմատոգրաֆիայի գլուխգործոցը՝ առաջին հնչուն ֆիլմ «Պեպոն»։ Հայ դասական գրականության լավագույն երկերից մեկը էկրանի վրա հնչեց միանգամայն ուրույն գեղարվեստական ոճով, իր սոցիալական խոր բովանդակությամբ, պատմական ժամանակաշրջանի ռեալիստական և գունեղ վերարտադրությամբ։ Ֆիլմի հեղինակ Հ. Բեկնազարյանի, գլխավոր դերակատարներ Հր. Ներսիսյանի (Պեպո), Ա. Ավետիսյանի (Զիմզիմով), Դ. Մալյանի (Կակուլի) և մյուս բոլոր մասնակիցների, այդ թվում նաև տակավին երիտասարդ կոմպոզիտոր Արամ Խաչատրյանի ստեղծագործական ջանքերը պսակվեցին լիակատար հաջողությամբ։ Բավական է նշել, որ «Պեպոն», շուրջ երկու ամիս, անընդհատ ցուցադրվում էր Մոսկվայի

կինո-թատրոններում։ Ֆիլմը լայն արձագանք գտավ Մերձավոր արևելքի, Եվրոպայի և Ամերիկայի բազմաթիվ երկրներում։ «Պրավդա» թերթը արձանագրել է, որ այդ նկարը արվեստի աշխատողների առջև նոր ռեկորդային բարձունք է սահմանել։

«Պեպոն» յուրովի եզրափակեց անցյալը վերարտադրող, հայ դասական գրականության թեմաներով կյանքի կոչված լավագույն նկարների շարքը։ Դրանից հետո էկրան բարձրացան «Զանգեզուր», «Սևանի ձկնորսները», «Լեռնային արշավ» ֆիլմերը։ Սրանք արդեն ժամանակակից կյանքին նվիրված գործեր էին և պատկերում էին Հայաստանում սովետական կարգերի հաստատման համար հայ ժողովրդի մղած պայքարի պատմության տարբեր էջեր։

Գեղարվեստական կինեմատոգրաֆիային զուգահեռ, նախապատերազմյան տարիներին, բուռն զարգացում ապրեց նաև փաստագրական ու ակնարկային ժանրը, ստեղծվեցին մուլտիպլիկացիոն նկարներ։ Ժապավենի վրա դրոշմվեցին սոցիալիստական շինարարության հետ կապված ուշագրավ երևույթներ, պետական նշանավոր գործիչների, արվեստի և գրականության մեծանուն դեմքերի կյանքն ու առօրյան։

Ընդհանուր առմամբ, մինչև Հայրենական մեծ պատերազմը Հայկինոն թողարկեց գեղարվեստական 40 կինոնկար և շուրջ 70 անուն վավերագրական ակնարկ ու մուլտիպլիկացիոն ֆիլմ։ Աննախընթաց չափերի հասավ բնակչության կինոսպասարկումը։ Հանրապետության բոլոր քաղաքներում ու շրջանային կենտրոններում կառուցվեցին մշտական գործող կինոթատրոնների շենքեր՝ ազգային ճարտարապետության ոճով և տեխնիկական անհրաժեշտ սարքավորմամբ։ Կինոհանդիսատեսների թիվը օրվա մեջ հասնում էր տասնյակ հազարների։ Դա այն մեծ ուշադրության վկայությունն էր, որ հատկացվում էր հայկական կինոարվեստի զարգացմանը և ապացույցը այն մեծ ջանքերի, որ ներդնում էին հայ արվեստագետները՝ անսահմանափակ հեռանկարներ ունեցող այս բնագավառի առաջընթացն ապահովելու համար։

2. ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆ

Նախասովետական Հայաստանը չուներ ժամանակակից հասկացողությամբ կազմակերպված երաժշտական կյանք։ Չկային երաժշտական դպրոցներ, օպերային թատրոն և սիմֆոնիկ նվագախումբ, մշտական երաժշտական-կատարողական կոլեկտիվներ։

Հայաստանում փաստորեն նոր էր ձեռնարկվում երաժշտական կյանքի ստեղծումը։ Այդ գործում ակտիվ կերպով ներգրավվեցին հայ երաժիշտ-էնտուզիաստները, որոնք սովետական իշխանության հաղթանակից անմիջապես հետո տարբեր վայրերից վերադառնում էին Հայաստան։ Ստեղծագործական և կատարողական լավագույն ուժերի միավորման ուղղությամբ Հայաստանի կոմունիստական կուսակցության ծավալած աշխատանքը անհրաժեշտ պայմաններ ստեղծեց երաժշտական կրթության զարգացման և կատարողական նոր կադրերի պատրաստման համար։ Դրա ակնհայտ վկայությունն էր 1921 թվականի դեկտեմբերին երաժշտական ստուդիայի հիմնադրումը։ 1923 թվականին երաժշտական այդ ստուդիայի հիման վրա բացվեց պետական կոնսերվատորիան։ Հայ

ժողովրդի բնդմադարյան կյանքում երաժշտական առաջին բարձրագույն ուսումնական հաստատությունը։ Հանրապետությունում երաժշտական կրթության կազմակերպման գործում իր եռանդուն մասնակցությունը ցուցաբերեց անվանի կոմպոզիտոր և երաժշտական հասարակական ակտիվ գործիչ Ռոմանոս Մելիքյանը։

Կոնսերվատորիան դարձավ այն օջախը, որի շնորհիվ հետագայում աճեցին հանրապետության առաջատար երաժշտական կոլեկտիվները՝ սիմֆոնիկ նվագախումբը, երգչախմբային կապելլան, օպերային թատրոնը։

Հայաստանում սովետական կարգերի հաստատման առաջին իսկ տարիներին լայն թափ ստացավ մասսայական երաժշտական ինքնագործունեությունը։ Պարբերաբար անցկացված ստուգատեսներին և օլիմպիադաներին մասնակցում էին ժողովրդական շատ և շատ կատարողներ։ Մեծ ուշադրություն էր դարձվում ժողովրդական երաժշտական արվեստին։ Կազմակերպվեց ռադիոհաղորդումների կոմիտեի ժողովրդական գործիքների անսամբլը (1926 թվական, ղեկավար Ա. Մերանգուլյան) և ժողովրդական գործիքների նվագախումբը՝ կոմպոզիտոր Բունիի գլխավորությամբ։ Վերջինս ուշագրավ փորձ կատարեց հատուկ վերափոխված ժողովրդական գործիքների օգնությամբ հասնել նվագախմբի հնչերանգային բազմազանության։ Ժողովրդական երգերի հավաքման և ձայնագրման ուղղությամբ լուրջ աշխատանք կատարեց ճանաչված կոմպոզիտոր և երաժշտագետ Սպ. Մելիքյանը։

Իսկական վերածնունդ ապրեց գուսանական արվեստը, այդ թվում նաև նշանավոր գուսան Շերամի ստեղծագործությունը. նա մի շարք երգեր ստեղծեց հայ ժողովրդի նոր կյանքի վերաբերյալ։

1925 թվականին կազմակերպվեց Կոմիտասի անվան կվարտետը, որը շուտով դարձավ Սովետական Միության կամերային լավագույն անսամբլներից մեկը (կվարտետի առաջին կազմում էին՝ Ա. Գաբրիելյանը, Լ. Օհանջանյանը, Մ. Տերյանը և Ս. Ասլամազյանը)։

1920-ական թվականներին Հայաստանում սկսվեց երաժշտական գրականության հրատարակումը, ծավալվեց երաժշտության պրոպագանդան ռադիոյի միջոցով, կազմակերպված բնույթ ընդունեց երաժշտական կյանքը՝ գաստրոլյոր հայտնի կատարողների և տեղական օժտված արտիստների ու երաժշտական կոլեկտիվների ելույթներով հանդերձ։

Այդ շրջանը բնորոշվում է նաև հայ կոմպոզիտորների ստեղծագործական նշանակալից հաջողություններով։ Ստեղծագործական վերելք ապրեց հայ մեծ կոմպոզիտոր Ալեքսանդր Սպենդիարյանը։ 1924 թվականին իրականացավ նրա վաղեմի նպատակը. նա եկավ Հայաստան՝ մշտական բնակության։ Նրա տեղափոխվելը զգալապես նպաստեց հանրապետության երաժշտական կյանքի աշխուժացմանը։

Սովետական իշխանության տարիներին Ալ. Սպենդիարյանի հազվագյուտ տաղանդը ծավալվեց առանձին փայլով և ուժով։ Նա մշակեց հեղափոխական մի շարք հայտնի երգեր, Հայաստանի և Ուկրաինայի ժողովրդական եղանակներ, գրեց երաժշտություն Շեքսպիրի «Օթելլո» ողբերգության համար։ Ալ. Սպենդիարյանի այս շրջանի ստեղծագործության մեջ կենտրոնական տեղ են բռնում երկու գործ՝ «Երևանյան էտյուդներ» սիմֆոնիկ նվագախմբի համար և

«Ալմաստ» օպերան, որոնք առմիշտ մտան հայ ժողովրդի երաժշտական գանձարանը։

«Երևանյան էսյուդները» տարբեր բնույթի բանաստեղծական ժանրային պատկերներ են։ Նրանց հիմքում ընկած են իսկական ժողովրդական եղանակները՝ թե երգային և թե պարային (դրանցից մեկը փոխառնված է Սայաթ-Նովայի «Դուն փն գլխեն» հանրաճանաչ երգից)։ Սիմֆոնիկ մշակումը կատարված է կլասիկ ներդաշնակությամբ և պարզությամբ։ Ամենից առաջ այն ընդգծում է ժողովրդական եղանակների գեղեցկությունը, խորապես բացահայտում դրանց նեիքին էությունը։ Սիմֆոնիկ նվագախմբի արտահայտչական միջոցների և ֆոլկլորային մեղեդիների բնույթի միջև եղած օրգանական համապատասխանությունը, որ գտել է կոմպոզիտորը, վճռական նշանակություն ստացավ հայկական սիմֆոնիզմի ազգային ինքնատիպ ճաի հաստատման համար։



Ալ. Սպենդիարյան

Հայ երաժշտության պատմության մեջ նոր էջ բացեց նաև «Ալմաստ» օպերան՝ կոմպոզիտորի ամենալայնակտավ գործը։ Դիմելով հայ գրականության կլասիկ Հովհ. Թումանյանի «Թմկաբերդի առումը» պոեմի սյուժեին, Սպենդիարյանը ստեղծեց հարազատ ժողովրդի խիզախության և հայրենասիրության մի հոյակապ հուշարձան։

«Ալմաստ» օպերայում էպիկական վեհությունը զուգորդվում է դինամիկ կերպով ծավալվող գործողության լարվածության հետ։ Ժանրի դրամատիկ սկզբունքներին համապատասխան՝ կոմպոզիտորը բախեցնում է երկու հակադիր ուժերի՝ հայ ժողովրդի և պարսիկ նվաճողների երաժշտական կերպարները։ Կիրառելով լեյտմոտիվների զարգացման սիստեմը, նա հասնում է ստեղծագործության հիմնական գաղափարի երաժշտական ընդհանրացման։

Հագեցված ժողովրդական երգայնության բուրմունքով, «Ալմաստի» երաժշտությունը գերում է գողտրիկ կերպով հյուսված մեղեդիների գեղեցկությամբ և գրավում դրամատիկ բարձր պաթոսով, կրքերի բուռն պոռթկմամբ։ Հոգեբանական խորությամբ և ռեալիզմով, երաժշտական լեզվի հարստությամբ և արտահայտչականությամբ, անձերի և կատարյալ վարպետությամբ «Ալմաստը» մինչև այժմ էլ հայ ամբողջ օպերային արվեստի մեջ մնում է չգերազանցված։

Օպերային և սիմֆոնիկ երաժշտության բնագավառում բեղմնավոր աշխատանք կատարեց Անուշավան Տեր-Ղևոնդյանը։ Նա գրեց «Սեդա» օպերան (ըստ Շանթի «Հին աստվածներ» դրամայի) և «Ախթամար» սիմֆոնիկ ծրագրային պոեմը, որը բավականին լայն ճանաչում գտավ։ Տեր-Ղևոնդյանի երաժշտական ոճին հատուկ են ձևերի մոնումենտալությունը, էպիկական լայն շունչը, նվագախմբային գույների ճոխությունը։

Հայ ավագագույն կոմպոզիտոր Նիկողայոս Տիգրանյանը շարունակում էր ստեղծել գործիքային երկեր, որոնց մեջ արտաբեկում էր քաղաքային ժողովրդական երաժշտական կուլտուրայի տրադիցիաները։ Սարգիս Բարխուդարյանի նուրբ և անպաճուճ դաշնամուրային մինիատյուրները հարստացրին ազգային երաժշտության այդ բնագավառը, դառնալով ազգային մանկավարժական ռեպերտուարի հիմքը և կայուն տեղ գրավեցին համերգային էստրադայում։

1928 թվականին լույս տեսավ Ռոմանոս Մելիքյանի «Զմրուխտի» վոկալ շարքը։ Ռ. Մելիքյանը իրավամբ համարվում է հայկական դասական ռոմանսի ստեղծողը։ Ռ. Մելիքյանի «Զմրուխտի» և «Զառ-վառ» շարքերի երգերն ու ռոմանսները ազգային վոկալ լիրիկայի մարգարիտներ են։ Աշխարհի բանաստեղծական ընկալումը, հոգեբանական նրբությունը և խորությունը այդ գործերում զուգակցվում են ազգային վառ ինքնատիպության հետ։ Մելիքյանի շարքերին բնորոշ են նաև զարմանալի պարզությունը և հնչունային ներկապանակի գեղեցկությունը, ներկապանակ, որը մերթ շլացուցիչ փայլատակող է՝ ասես ներծծված արևի ճառագայթներով, մերթ էլ մեղմ է ու քնքուշ՝ կարծես հյուսված նուրբ գունախաղերից և երիններանգներից։ Հնչնաերանգի և ներդաշնակության բնագավառում կոմպոզիտորի ձեռք բերած հաջողություններն ունեին սկզբունքային նշանակություն։ Դրանք նպաստեցին հայ պրոֆեսիոնալ երաժշտության հետագա հարստացմանն ու զարգացմանը, նրա ժամանակակից ազգային ոճի ստեղծմանը։

20-ական թվականներին հայ երաժշտության մեջ մուտք գործեցին նաև թեմաներ, որոնք անմիջականորեն կապված էին սովետական իրականության հետ։ Հեղափոխական երաժշտական նոր արվեստի ոգին Հայաստան ներթափանցեց առաջին պրոլետարական մարտական երգերին զուգընթաց։ Դրանց պրոպագանդումը սկսվել էր տակավին 1905 թվականի հեղափոխության շրջանից։ 1917 թվականին հրատարակվեցին հեղափոխական մի շարք երգերի մշակումները, որ կատարել էր կոմպոզիտոր Ազատ Մանուկյանը։ Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո իսկական ժողովրդայնություն ստացան «Ինտերնացիոնալ», «Անվախ ընկեր», «Վարշավյանկա» և հեղափոխական մի շարք այլ երգեր, դառնալով ժողովրդական մասսայական տոնակատարությունների և հանդեսների անբաժանելի ուղեկիցը։

Հեղափոխական և սովետական երգերի մասսայականացմանը նպաստեց հայերեն լեզվով «Կարմիրբանակային երգեր» և «Պիոներական երգեր» ժողովածուների հրապարակումը։ Ռ. Մելիքյանի մշակմամբ դրանց մեջ զետեղվեցին ռուսական սովետական երգային արվեստի շատ նմուշներ։

Հայ երաժշտության մեջ սովետական թեմատիկան ամենից առաջ զարգանում էր երգի ժանրում։ 20-ական թվականների վերջերին երևան եկան Ռ. Մելիքյանի, Մ. Միրզոյանի, Ա. Տեր-Ղևոնդյանի, Կ. Զաքարյանի մասսայական

առաջին երգերը, որոնցում գովերգվում էին նոր կյանքը, ժողովուրդների բարեկամությունը, ստեղծագործող աշխատանքի բերկրանքը։

30-ական թվականներին Հայաստանի երաժշտական կուլտուրան բուռն վերելք էր ապրում։ Ստեղծվեցին երաժշտական կուլտուրայի նոր օջախներ, որոնց շարքում հատուկ տեղ է գրավում Ալ. Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի պետական թատրոնը, որի բացումը տեղի ունեցավ 1933 թվականի հունվարի 20-ին՝ «Ալմաստ» օպերայի ներկայացմամբ։ Ազգային օպերային ռեպերտուարի ստեղծման գործում կարևոր նշանակություն ունեցավ նաև հայ դասական մյուս օպերայի՝ Ա. Տիգրանյանի «Անուշի» ներկայացումը՝ ընդլայնված ու վերամշակված նոր խմբագրությամբ (1935)։ Հսկայական էր այդ բեմադրության հաջողությունը։ Միայն երկու տարում կայացավ «Անուշի» հարյուր ներկայացում։



Հ. Դանիելյան

Հայկական, ռուսական և արևմտաեվրոպական կոմպոզիտորների օպերաներում անմոռաց կերպարներ էր կերտում նշանավոր երգչուհի Հայկանուշ Դանիելյանը։ Բացառիկ գեղեցիկ ձայնը, երաժշտական և բեմական բարձր կուլտուրան Հայկանուշ Դանիելյանին դասեցին սովետական լավագույն կատարողների շարքը։ Հայ արվեստի գործիչների մեջ Հ. Դանիելյանին առաջինը շնորհվեց Սովետական Միության ժողովրդական արտիստուհու պատվավոր կոչում։

Երևանի օպերային թատրոնի բեմահարթակում ծաղկեց նաև երգիչ Շարա Տալյանի ինքնատիպ տաղանդը։ Նա մանկական տարիներից ի վեր ներկայել էր ազգային երգեցողական արվեստի տրադիցիաները։ Հայկական օպերաների շատ դերակատարումների ականավոր մեկնաբանն էր։ Շ. Տալյանը միաժամանակ լայն ճանաչում ստացավ իբրև ժողովրդական և գուսանական երգերի կատարող։

Օպերային թատրոնի ստեղծման և նրա հաջող գործունեության բնագավառում առանձնահատուկ դեր խաղացին նաև դիրիժորներ Կ. Սարաջևը, Ա. Պիրադովը, Գ. Բուդաղյանը, Ս. Շաֆիբյանը, Մ. Թավրիզյանը, Ս. Զարեբյանը, ռեժիսյորներ Ա. Բուրջալյանը, Լ. Քալանթարը, Ա. Գուլակյանը, արտիստներ Լ. Խեցկի-Հովհաննիսյանը, Ա. Կարատովը (Կարապետյանը), բալետմեյստեր Ի. Արբատովը (Յաղուբյանը)։

Երաժշտական կուլտուրայի խոշոր օջախ դարձավ նաև Հայկական ֆիլհարմոնիան, որը կազմակերպվեց 1932 թվականին։ Երաժշտական կատարողական կոլեկտիվների պրոֆեսիոնալ մակարդակի բարձրացումը հնարավորություն ըն-

ձեռնց կատարելու համաշխարհային երաժշտական կլասիկայի այնպիսի բարդ ստեղծագործություններ, ինչպես համերգների ցիկլը Բեթհովենի սիմֆոնիաներից (դիրիժոր՝ Կ. Սարաջև), Մոցարտի «Ռեկվիեմը» (դիրիժոր՝ Ա. Տեր-Հովհաննիսյան)։ Ֆիլհարմոնիային առընթեր ձևավորվեցին երաժշտական կոլեկտիվներ, որոնք կոչված էին ժողովրդական արվեստը պրոպագանդելու համար։

Դրանց մեջ աչքի էր ընկնում Թաթուլ Ալթունյանի գլխավորած Հայկական ժողովրդական երգի ու պարի անսամբլը։ Իր ստեղծումից (1938) արդեն մի փոքր անց անսամբլը ձեռք բերեց լայն ժողովրդականություն։ Անսամբլը գտել էր ժողովրդական երգերի կատարման թարմ ձևեր։ Սովորաբար երգեցիկ, պարային և գործիքային խմբերը հանդես են գալիս միասին։ Ժողովրդական արվեստում լայն տարածում գտած կատարման այդ ձևը («պարերգը») հետաքրքիր կիրառում գտավ անսամբլում։ Դունեղ ու գեղեցիկ ազգային զգեստի զուգակցությամբ մասսայական երգն ու պարը անսամբլի համերգներին տալիս էին բացառիկ անմիջականություն և տոնականություն։

Ժողովրդական երգի մյուս կոլեկտիվի՝ գուսանական երգի անսամբլի (ղեկավար՝ հանրաճանաչ երգիչ Վաղարշակ Սահակյան) հիմքում ընկած էին հայտնի աշուղներ և գուսաններ Սայաթ-Նովայի, Ջիվանու, Շերամի, Հավասու և այլոց երգերը։ Սկսեց զարգանալ նաև հայ երաժշտության համար բոլորովին մի նոր բնագավառ, երբ ֆիլհարմոնիային կից՝ Ա. Այվազյանի ղեկավարությամբ, կազմակերպվեց Հայաստանի պետական էստրադային նվագախումբը (1938)։

Նշանակալից հաջողություններով պսակվեցին հայ երաժիշտների ելույթները համամիութենական մրցույթներում։ Դափնեկրի պատվավոր կոչմանն արժանացան Կոմիտասի անվան կվարտետը, ջութակահար Ա. Գաբրիելյանը, թավջութակահար Ա. Այվազյանը, դաշնակահար Ա. Թաթուլյանը և ուրիշներ։

Սովետական իշխանության առաջին երկու տասնամյակներում հայ երաժշտության ձեռք բերած մեծ հաջողությունները հանրագումարի բերվեցին Մոսկվայի հայ արվեստի առաջին տասնօրյակի ժամանակ, 1939 թվականին։ Տասնօրյակում ներկայացվեցին Ալ. Սպենդիարյանի «Ալմաստ», Ա. Տիգրանյանի «Անուշ», Հ. Ստեփանյանի «Լուսաբացին» օպերաները և Ա. Խաչատրյանի «Երջանկություն» բալետը։ Լայնորեն ներկայացված էին նաև հանրապետության երաժշտական լավագույն կոլեկտիվներն ու կատարողները։ Հայ արվեստի տասնօրյակը դարձավ հայ ժողովրդի, Սովետական Միության բոլոր ժողովուրդների իսկական տոնը։ Կենտրոնական մամուլը բարձր գնահատական տվեց հայ երաժշտական կուլտուրայի ձեռք բերած նվաճումներին։ «Հիանալի, հնչեղ, մեղեդիական «Ալմաստ» օպերան ապշեցրեց ինձ իր փառահեղությամբ»,— գրում էր ՍՍՀՄ ժողովրդական արտիստուհի Ա. Նեժդանովան։ «Անուշը» իսկական ժողովրդական ստեղծագործություն է, գեղարվեստական իր պարզությամբ, ժողովրդին սրտամոտ ու հասկանալի...»,— նշում էր ադրբեջանական կոմպոզիտոր Ուզեիր Հաջիբեկովը։

Թատերական և երաժշտական կուլտուրայի զարգացման ասպարեզում ձեռք բերած աչքի ընկնող նվաճումների համար Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի թատրոնը պարգևատրվեց Լենինի շքանշանով։ Հայկական ֆիլհարմոնիան պարգևատրվեց Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով։

30-ական թվականները երաժշտական ստեղծագործության զարգացման բնագավառում բոլորովին նոր փուլ էր, որը կապված էր առաջատար ժանրերում սովետական թեմատիկայի, ժամանակակից կերպարների, ժողովրդի ղգացմունքների ու խոհերի հաստատման հետ։ Շատ բանով այն պայմանավորված էր Հայաստանի կոմպոզիտորների միության կազմակերպման հետ (1932)։ Բացի դրանից, հատկապես այդ տարիներին ստեղծագործական ասպարեզ եկավ տաղանդավոր կոմպոզիտորների երիտասարդ սերունդը՝ Ա. Խաչատրյան, Հ. Ստեփանյան, Լ. Խոջա-Էյնաթյան, Կ. Ջաքարյան, Ա. Սաթյան, Վ. Տալյան, Ա. Այվազյան։

Արամ Խաչատրյանի արվեստը դարձավ աչքի ընկնող երևույթ սովետական երաժշտության մեջ։ Խաչատրյանի առաջին խոշոր ստեղծագործությունները, որ երևացին 30-ական թվականներին, հասարակական և գեղարվեստական լայն արձագանք գտան և նրան դարձրին արդի խոշորագույն կոմպոզիտորներից մեկը։ Ստեղծագործական վիթխարի տաղանդի տեր կոմպոզիտորը հայ երաժշտությունը հարստացրեց նոր բովանդակությամբ, ոճական նոր ձևերով, նշանակալից չափով ընդլայնեց նրա ժանրային շրջանակները։ Նա ազգային առաջին բալետի, առաջին գործիքային կոնցերտների, առաջին սիմֆոնիայի հեղինակն էր։

Ա. Խաչատրյանի պատմական ծառայությունը ամենից առաջ այն է, որ նա հայ կոմպոզիտորներից առաջինը գեղարվեստական գերող ուժով երգեց նոր Հայաստանը, երգեց ազատագրության, բերկրանքի ու երջանկության ցնծալի ղգացումը։

Նոր կերպարները պայմանավորում էին ժողովրդական երաժշտական նյութի մշակման նաև նոր մեթոդներ։ Կոմպոզիտորի վերաբերմունքը դեպի ժողովրդական արվեստը համարձակ էր և խորապես ստեղծագործական։ Իր գործերում նա չէր ձգտում անձեռնմխելի կերպով պահպանել ժողովրդական մեղեդիները։ Վերջիններս կոմպոզիտորի համար սոսկ ատաղձ էին՝ նրա ստեղծագործական նպատակների իրականացման, արդիականության հուզող գաղափարների մարմնավորման համար։

Լայնորեն օգտագործելով ժողովրդական ինտոնացիաները, ռիթմերը, Ա. Խաչատրյանը կարծես թե «ազատագրում էր» նրանց ներքին էներգիան։ Երաժշտական լարված զարգացման ազատ և լայն հոսանքում նրանք ձեռք են բերում նոր կյանք ու նոր որակ։ Հենց ժողովրդական երաժշտության տարրերի սիմֆոնիզացիայի շնորհիվ, կոմպոզիտորին հաջողվեց այդպես ճշմարտացիորեն արտահայտել վերածնված հայ ժողովրդի ղգացմունքների լարվածությունն ու խորությունը, նրա ստեղծագործական հզոր թափը։

Առաջին սիմֆոնիան (1934) նշանավորեց Խաչատրյանի ստեղծագործական հասունության գարունը։ Կոմպոզիտորն այն նվիրեց Հայաստանի սովետականացման 15-ամյակին։ Այդ ստեղծագործությունը մտահղացված է իբրև էպիկական մի պատմվածք Հայաստանի, նրա հին կուլտուրայի, ժողովրդի կյանքի և հայրենի բնության գեղեցկության մասին։ Հայ բանահյուսությունը, հայ արվեստին բնորոշ իմպրովիզացիոն զարգացման եղանակները այդ սիմֆոնիայում զուգակցված են համաշխարհային և, մասնավորապես, ռուսական սիմֆոնիզմի փորձի օգտագործման հետ։

Կոմպոզիտորին համաշխարհային ճանաչում բերեց դաշնամուրի համար գրված կոնցերտը։ Հանրաճանաչ այդ ստեղծագործության կերպարները հագեցված են հեղափոխական ռոմանտիզմով, հերոսական պաթոսով։ Ոճով մոնումենտալ այդ կոնցերտի երաժշտությունը գերում է իր տոնական վեհ տրամադրությամբ, փայլատակող գույներով, սրընթաց անզուսպ թափով։ Ոչ պակաս նշանավոր էր ջութակի կոնցերտը, որը համաշխարհային երաժշտական գրականության մեջ իրավամբ դասվում է այդ ժանրի լավագույն նմուշների շարքը։ Այստեղ իր հետագա զարգացումն է ստացել Խաչատրյանի այդ շրջանի ստեղծագործության համար առաջատար ժողովրդի երջանկության թեման։ Ի տարբերություն նախորդ ստեղծագործությունների, ջութակի կոնցերտի մեջ առավել զարգացում է ստացել լիրիկական սկզբունքը, որ օրգանապես միահյուսված է պարայնության տարրերի հետ։ Բացառիկ է կոնցերտի երաժշտության մեղեդիական հարստությունը։

Կոմպոզիտորի 30-ական թվականների ստեղծագործական որոնումներն ավարտվեցին «Գայանե» բալետով (առաջին խմբագրությամբ՝ «Երջանկություն»), որը մինչև օրս էլ համարվում է ժամանակակից թեմայով գրված լավագույն սովետական բալետը։ Ժողովրդական-մասսայական պարերի երաժշտությունն այստեղ աչքի է ընկնում անսպառ երևակայությամբ, բուռն խառնվածքով։ Արտահայտիչ կերպով են բացահայտված բալետում նաև անհատական հերոսների կերպարները, մասնավորապես Գայանեի լիրիկական, զգայուն կերպարը։

Հայ երաժշտական կուլտուրայի պատմության մեջ Ա. Խաչատրյանի ստեղծագործությունը էտապային նշանակություն ունի։ Նա մեծ ազդեցություն ունեցավ ոչ միայն հայկական, այլև եղբայրական մյուս հանրապետությունների երաժշտության հետագա զարգացման վրա։

Երաժշտական թատրոնի ասպարեզում հաջող գործունեություն էր ծավալել կոմպոզիտոր Հարո Ստեփանյանը։ Նրա առաջին օպերային ստեղծագործությունը՝ «Քաջ Նազարը» հետաքրքիր մի փորձ էր ազգային երգիծական օպերայի ստեղծման ուղղությամբ։ «Քաջ Նազարի» դրամատուրգիայում կիրառվեցին ռեչիտատիվային (ասերգային) օպերայի սկզբունքները, որոնք ժամանակակից երաժշտության մեջ բավականին լայն տարածում են ստացել։ Այստեղ համապատասխանաբար մեծ տեղ են զբաղեցնում երաժշտականացված խոսակցական դիալոգները։

Հայ ժողովրդական հանրաճանաչ էպոսի մոտիվներով է գրված Ստեփանյանի «Սասունցի Դավիթ» օպերան։ Այս ստեղծագործությունը մտահղացված է որպես էպիկական լայն կտավ, որ պատմում է ժողովրդի հերոսական անցյալի մասին։ Դարաշրջանի պատմական կոլորիտը երաժշտությամբ վերաստեղծելու համար կոմպոզիտորը դիմել է գուսանական հին երգերի, միջնադարյան տաղերի ու շարականների ինտոնացիաների օգտագործմանը։

Ամենից ավելի ճանաչում ստացավ Հ. Ստեփանյանի «Լուսաբացին» օպերան՝ ժամանակակից թեմայով առաջին հայ օպերան։ Այդ ստեղծագործության մեջ հարություն են առնում սովետական իշխանության հաստատման համար հայ ժողովրդի մղած հերոսական պայքարի պատմության անմոռանալի էջերը։ Կոմպոզիտորը կարողացել է ճշմարտացիորեն հաղորդել հեղափոխական ժա-

մանակաշրջանի հուզող մթնոլորտը։ Հիմնական հերոսների՝ հեղափոխականների երաժշտական բնութագրերը, ժողովրդական մասսայական տեսարանների երաժշտությունը համակված են ռոմանտիկայի ոգով, նրանցում արտահայտված է պայքարի ելած ժողովրդի՝ իր հաղթանակի հանդեպ ունեցած ջերմ հավատը։

«Լուսաբացին» օպերան կարևոր դեր խաղաց հայ երաժշտական թատրոնի զարգացման մեջ։ Բարձր պրոֆեսիոնալությունը, ազգային բնույթն ու ոճի անհատականությունը, այդ ստեղծագործությունը դարձրին նշանակալից մի երևույթ սովետական օպերային արվեստի պատմության մեջ։

Պատմա-հեղափոխական թեմայի դիմեց նաև Կ. Զաքարյանն իր «Մարջան» օպերայում։ Գրված լինելով «Անուշ» օպերայի ժողովրդա-երգային տրադիցիաներով, Կ. Զաքարյանի այդ ստեղծագործությունը ուշագրավ էր երաժշտական լեզվի պարզությամբ և մատչելիությամբ, երգչախմբային մի շարք էպիզոդների հնչեղությամբ։ Ժամանակակից թեմայով էին ստեղծված նաև Լ. Խոջա-Էյնաթյանի «Խռովություն» և «Ընտանիք» օպերաները։ Հայ և ադրբեջանական ժողովուրդների բարեկամության մասին էր պատմում Ա. Մայիլյանի «Սաֆա» օպերան։

Ազգային բալետ ստեղծելու փորձերի թվում էին Ս. Բարխուդարյանի «Նարինեն» և Ա. Տեր-Ղևոնդյանի «Անահիտը», որոնք գրված են հայ ժողովրդական հեքիաթների սյուժետային մոտիվներով։

Նշանակալից աշխուժություն ապրեց երգային-վոկալ ժանրը։ Մասսայական երգը իր հետագա զարգացումն ստացավ հանձին Մ. Միրզոյանի, Կ. Զաքարյանի, Մ. Մաղմանյանի, Ա. Այվազյանի, Վ. Տալյանի, Ա. Սաթյանի ստեղծագործությունների։ Երգեր երգվեցին հայրենիքի, կուսակցության, Լենինի, հեղափոխականների մասին, կոլտնտեսային գյուղի կյանքի ու առօրյայի վերաբերյալ։ Լավագույն մասսայական երգերը աչքի էին ընկնում անկեղծությամբ, անմիջականությամբ, իրենց մոտիկությամբ դեպի ժողովրդա-երգային ակունքները։

Նոր ռոմանսներ ստեղծելու հաջողությունները ամենից առաջ կապված էին Հ. Ստեփանյանի ստեղծագործության հետ։ Ավ. Իսահակյանի բանաստեղծությունների վրա գրած ռոմանսներն աչքի են ընկնում իրենց նուրբ գույներով։ Կոմպոզիտորները մեծ ուշադրություն դարձրին նաև ժողովրդական երգերի խմբերգային մշակումներին (Ա. Քոչարյան, Թ. Ալթունյան, Ք. Քուշնարյան, Մ. Աղայան և ուրիշներ)։

Այդ տարիներին երևան եկան նաև կամերային անսամբլների համար գրված հայկական առաջին ստեղծագործությունները՝ տրիոներ, կվարտետներ։ Դրանց շարքում աչքի էին ընկնում Ս. Ասլամազյանի գեղարվեստականորեն ավարտուն մշակումները կվարտետի համար, Հ. Ստեփանյանի առաջին կվարտետը, Ա. Խաչատրյանի, Վ. Տալյանի տրիոները։

20—30-ական թվականներին հայ երաժշտությունը մեծ վերելք ապրեց։ Զարգացնելով ազգային դասական երաժշտության լավագույն ավանդները՝ հայ կոմպոզիտորները ձեռնամուխ եղան մեծ կտավի սիմֆոնիկ և օպերային գործերի ստեղծմանը, գեղարվեստականորեն արձագանքեցին այդ անկրկնելի ժամանակաշրջանի բուռն իրադարձություններին։

3. ԿԵՐՊԱՐՎԵՍՏԸ

Հայաստանում սովետական իշխանության հաստատվելուց հետո հայ կերպարվեստը թևակոխեց զարգացման նոր և աննախընթաց շրջան։

Սովետական իշխանության առաջին ամիսներին նկարիչներից պահանջվում էր ստեղծել կերպարվեստի մասսայական-ագիտացիոն այնպիսի տեսակներ, որոնք ունենան լայն տարածման հնարավորություն և մասսաների վրա ուժեղ ներգործելու կարողություն։ Նկարչության այդպիսի տեսակներից էին պլակատը և քաղաքական ու կենցաղային ծաղրանկարչությունը, որոնք նոր, սոցիալիստական բովանդակությամբ սկսեցին զարգանալ Հայաստանի հեռագրական գործակալության գեղարվեստական բաժնում ընդգրկված, այն ժամանակ Երևանում ապրող երիտասարդ նկարիչներ Հ. Կոջոյանի, Ս. Առաքելյանի, Հր. Գրիգորյանի, Պ. Սողոմոնյանի, Գ. Բրուտյանի, քանդակագործ Վ. Մելիք-Հակոբյանի ջանքերով։ Նկարիչ ու քանդակագործ, հետագայում անվանի ճարտարապետ Կարո Հալաբյանի գլխավորությամբ Հայաստանի հեռագրական գործակալության գեղարվեստական բաժնի նկարիչները ստեղծեցին պլակատներ, քաղաքական ու կենցաղային բովանդակությամբ ծաղրանկարներ, որոնք կոչված էին կազմակերպելու մասսաներին, զգուշացնում էին չենթարկվել թշնամիների պրովոկացիաներին, կոչ էին անում ամեն կերպ ջախջախել թշնամիների ոտնձգությունները, վերացնել հին կենցաղի մնացուկները։

1921 թվականի հուլիսին Երևանում բացվեց «Հայ կերպարվեստագետների միության» ցուցահանդեսը, որը փաստորեն դարձավ մինչ այդ տարբեր երկրներ ցրված հայ նկարիչներին և քանդակագործներին Սովետական Հայաստանի շուրջը համախմբելու լուրջ փորձ։ Դրանից հետո Հայաստան տեղափոխվեցին մի շարք պրոֆեսիոնալ նկարիչներ և քանդակագործներ, այդ թվում Մ. Սարյանը, Վ. Ախիկյանը, Ս. Աղաջանյանը, Գ. Գյուրջյանը, Վ. Դայֆեճյանը, Տարագրոսը, արվեստաբան Գ. Լևոնյանը, որոնք մինչ այդ Հայաստանում ապրող նկարիչների հետ, ինչպես նաև Թիֆլիսում մշտական բնակություն հաստատած Գ. Բաշինջաղյանի, Ե. Թադևոսյանի, Գ. Շարբաբչյանի, Հ. Հակոբյանի, Ա. Բաշբեուկ-Մելիքյանի և քանդակագործ Մ. Միքայելյանի մասնակցությամբ ձեռնամուխ եղան ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական սովետահայ կերպարվեստի ստեղծմանն ու զարգացմանը։

1922 թվականին Երևանում հիմնադրվեց գեղարվեստական դպրոց՝ նկարչական, քանդակագործական և կիրառական արվեստի բաժիններով, իսկ 1923 թվականին Լենինականում՝ գեղարվեստական ստուդիա, որոնք դարձան ազգային կերպարվեստի նոր կադրերի պատրաստման առաջին դարբնոցները հանրապետությունում։

Միաժամանակ Երևանի կուլտուր-պատմական թանգարանում ստեղծվեց գեղարվեստական բաժին, ուր կենտրոնացվեցին կերպարվեստի ստեղծագործությունները։ Հետագայում՝ 1935 թվականին, այդ բաժնի հիման վրա կազմակերպվեց Հայաստանի կերպարվեստի թանգարանը՝ հայկական, ռուսական և եվրոպական արվեստի բաժիններով։

Կերպարվեստի առաջընթացը անմիջականորեն ղեկավարելու համար 1923 թվականի դեկտեմբերին Երևանում կազմակերպվեց «Հայաստանի կերպարվես-

տի աշխատողների ընկերություն»՝ ճարտարապետության ակադեմիկոս Ալ. Թամանյանի նախագահությամբ (տեղակալ Մ. Սարյան)։ Այդ ընկերությունը կազմակերպչական լայն աշխատանք ծավալեց հայ նկարիչների համախմբման, նրանց ստեղծագործությունների հրապարակային-հասարակական ցուցադրման ներկայացնելու, նկարիչների նյութական-կենցաղային պայմանները բարելավելու ուղղությամբ։ Աշխուժացավ գեղարվեստական կյանքը։ Կազմակերպվեցին ցուցահանդեսներ, ստեղծագործական երեկոներ, դիսպուտներ։ Առանձնապես նշանակալից էին «Առաջին գարնանային ցուցահանդեսները» Երևանում (1924), գեղաշխի կենտրոնության և Հայաստանի կերպարվեստագետների ընկերության պատկերահանդեսը Լենինականում (1926), Երևանի մի խումբ կերպարվեստագետների նկարների ու քանդակների ցուցահանդեսը (1928) և այլն, որոնց մասնակցում էին նաև երիտասարդ նկարիչներն ու քանդակագործները։

1926 թվականին Երևանում կազմակերպվեց «Հեղափոխական Ռուսաստանի նկարիչների ասոցիացիայի» հայկական բաժանմունքը, որի մեջ մտան Գ. Գյուրջյանը, Մ. Արուտչյանը, Վ. Դայֆեճյանը, Ա. Սարգսյանը, հետագայում՝ Փ. Թերլեմեզյանը և ուրիշներ։ Նույն տարիներին ստեղծվեցին նաև «Հայաստանի երիտասարդ հեղափոխական արվեստագետների ընկերություն» և այլ խմբավորումներ, որոնք կազմակերպեցին իրենց առանձին ցուցահանդեսները։

1930 թվականին գեղաշխի կերպարվեստի սեկցիայի նախաձեռնությամբ կազմակերպվեց վերոհիշյալ առանձին խմբավորումների, ընկերությունների և միությունների անդամների աշխատանքների միացյալ ցուցահանդես, ուր ներկայացված էին միայն վերջին տարիների ստեղծագործությունները։ Սակայն իրենց նվաճումներով հանդերձ այդ ընկերությունները, միությունները և միավորումները միմյանց դեմ մղվող պայքարով արգելակում էին սովետական կերպարվեստի արագ զարգացմանը։

Կոմունիստական կուսակցությունը միջոցառումներ ձեռնարկեց արվեստը սոցիալիզմի հրատապ խնդիրներին մերձեցնելու համար։ Համկ(բ)Կ Կենտկոմի 1932 թվականի ապրիլի 23-ին «Գրական-գեղարվեստական կազմակերպությունները վերակառուցելու մասին» որոշումով վերացվեցին վերոհիշյալ տարբեր ընկերություններն ու խմբավորումները և սովետական իշխանության պլատֆորմը պաշտպանող բոլոր նկարիչներն ու քանդակագործները միավորվեցին մեկ միասնական գեղարվեստական միության մեջ։ 1932 թվականին ստեղծվեց «Հայաստանի սովետական կերպարվեստագետների միությունը», որի մեջ մտան սովետահայ բոլոր նկարիչներն ու քանդակագործները։

Կուսակցության Կենտկոմի այդ որոշումը սկիզբ դրեց սովետական կերպարվեստի հետագա զարգացմանը։ Սովետական կերպարվեստի միասնական մեթոդը դարձավ սոցիալիստական ռեալիզմը, ստեղծագործական մի մեթոդը, որը պահանջում է նկարիչների սերտ կապը իրականության հետ, նրանց ակտիվ մասնակցությունը սոցիալիզմի կառուցման համար մղվող պայքարին։ Այդ մեթոդն օգնեց արվեստագետին իրականության մեջ տեսնելու լավագույն ապագայի սաղմերը, ստեղծագործությունը հագեցնել հեղափոխական ռոմանտիկայով, ակտիվ դեր կատարել ժողովրդական մասսաների կոմունիստական

դաստիարակության գործում։ Այդ ուղղությամբ էլ ընթացավ կերպարվեստի զարգացումը Հայաստանում։

* * *

Սովետահայ նկարչության սկզբնավորման ու զարգացման գործում առանձնապես խոշոր է մեր ժամանակի մեծագույն նկարիչ Մ. Սարյանի դերը։ Մարտիրոս Սարյանը (ծնվ. 1880) կերտեց Սովետական Հայաստանի բնության և առաջավոր մարդկանց բարձրարվեստ կերպարներ, որոնցից «Լեռներ», «Հայաստան» (1923), «Դարուն» (1929), «Ալավերդի» (1928), կենսահաս լավատեսությամբ հագեցված բնանկարները և բանաստեղծ Ե. Չարենցի (1923), արտիստուհի Ա. Ոսկանյանի (1924), ճարտարապետ Ալ. Թամանյանի (1934), արտիստ Ռ. Սիմոնովի (1939), բանաստեղծ Ավ. Իսահակյանի (1940) խորապես հոգեբանական ու արտահայտիչ դիմանկարները սկզբնավորեցին սովետահայ նկարչությունը և ուղի հարթեցին ձևով ազգային, բովանդակությամբ սոցիալիստական նկարչության հետագա զարգացման համար։ Պայծառ ու կենսուրախ բովանդակություն ունեն նրա նատյուրմորտները։

Մ. Սարյանն աշխատում էր նաև գրքի գեղարվեստական ձևավորման ու նկարազարդման ասպարեզում։ Նրա ստեղծագործությունների մեջ առանձին տեղ է գրավում թատերական-դեկորացիոն նկարչությունը։ 1939 թվականին Մոսկվայում տեղի ունեցած հայկական արվեստի տասնօրյակի ժամանակ հրապարակային հաջողություն գտան Ալ. Սպենդիարյանի «Ալմաստ» օպերայի ձևավորումները, որոնց համար Մ. Սարյանն արժանացավ պետական մրցանակի։

Ականավոր նկարչի ստեղծագործությունները, որոնք համակված են կյանքի նկատմամբ ունեցած մեծագույն սիրով ու մարդու հանդեպ խորին հավատով, լայն ժողովրդականություն են վայելում ոչ միայն Հայաստանում, այլև Սովետական Միության մեջ և նրա սահմաններից դուրս։

Եղիշե Թադևոսյանը (1870—1936) սովետահայ նկարչության մեջ մտավ որպես արդեն ձևավորված խոշոր կոլորիստ և լիրիկական պեյզաժի ականավոր վարպետ։ Նա օժտված էր մեծ գունազգացողությամբ և նուրբ ճաշակով։ Գերապանցապես երանգային հարաբերությունների վրա կառուցված «Մեր փողոցը էջմիածնում» կենցաղային մոտիվներ պարունակող պեյզաժ-պատկերը (1921) գույների հյութեղությամբ և հնչեղությամբ հմայիչ վերարտադրում է արևելյան հին քաղաքներից մեկի առօրյան։ Զգացողական հսկայական ուժ են պարունակում «Լողը Ալգետկա գետակում» (1930), «Արարատ» (1934) պատկերները և նուրբ ճաշակով կատարված նրա բազմաթիվ էտյուդները, որոնք իրենց ավարտվածությամբ լրիվ բացահայտում են մարդուն շրջապատող աշխարհի գեղեցկությունը։ Նկարչի կոլորիստական տաղանդը նպաստել է նաև դիմանկարներում հասնելու գունանկարչական համոզիչ բնութագրության։ Ե. Թադևոսյանը հաստատեց լիրիզմը սովետահայ նկարչության մեջ։

Այդ գիծն իր որոշակի արտահայտությունը գտավ նաև Սեդրակ Առաքելյանի (1884—1942) խորապես ինքնատիպ, արդիական ու գողտրիկ պեյզաժային ստեղծագործություններում։ Արդյունաբերական, կոլտնտեսային ու կուլտուրլուսավորական թեմաներով նրա պատկերները («Սևանի ձկնորսները», «Կուլ-

տուրան լեռներում») արտացոլելով ժամանակակից կյանքը, միաժամանակ նպաստեցին թեմատիկ սյուժետային նկարչության զարգացմանը։

Սովետահայ ռեալիստական դիմանկարչության ականավոր վարպետներից էր Ստեփան Աղաջանյանը (1863—1940)։ Աղաջանյանը նկարեց հին ու նոր սերնդի մարդկանց տիպական կերպարներ («Գուլպա գործող կինը», 1925, «Վասիլը», 1926, «Սեդրակ բիձա», «Պիոներուհին», «Կոմերիտական աղջիկը», 1928), տալով յուրաքանչյուրի հոգեբանական բնութագիրը։ Իր ինքնանկարներում, հասարակ աշխատավորների ու մշակույթի բնագավառի նշանավոր գործիչների դիմանկարներում (դերասանուհիներ՝ Ժասմեն, Բարոնկինա, երգիչ Ջաֆար, նկարիչ Աղիմզադե և ուրիշներ), Աղաջանյանը սուր դիտողականությամբ և պլաստիկական արտահայտիչ միջոցներով բացահայտեց մարդկանց ստեղծագործական ուժերը, կերպարի մեջ ընդգծելով այն դրականը, որը բնորոշում է պատկերվող անձնավորությանը։


Հայրենի բնության, ժողովրդի կյանքի և սոցիալիստական շինարարության թեմատիկան լայն տեղ գրավեց ժողովրդական նկարիչներ Գ. Գյուջրյանի և Փ. Թերլեմեզյանի գաղափարական հարուստ բովանդակությամբ հագեցված ստեղծագործություններում։

Գաբրիել Գյուրջյանը սկզբնավորեց ինդուստրիալ պեյզաժի ժանրը։ «Շիրակի ջրանցքի կառուցումը» (1924—1926), «Սևանի հիդրոկայանի կառուցումը» (1937) թեմատիկ սյուժետային պատկերները որոշակի ցույց են տալիս մեր երկրում բնությունը վերափոխելու ուղղությամբ նոր, սովետական մարդկանց կողմից կատարվող մեծածավալ ստեղծագործական աշխատանքները։

1928 թվականին Ամերիկայից Սովետական Հայաստան վերադարձած Փանոս Թերլեմեզյանը (1867—1940) հայրենիքի նկատմամբ իր անհուն սերն արտահայտող բազմաթիվ բնանկարների հետ ստեղծեց արդյունաբերական օբյեկտների ու նորակառույցների մի շարք ուշագրավ պատկերներ («Ղափան», «Զորագէսի շինարարությունը», «Զուլարան», «Զորագէս», «Ալավերդի», «Արդյունաբերական Երևանը» և այլն), որոնք բացահայտում են այն նորը, որը հանդես է եկել սովետական իշխանության տարիներին։

Սովետահայ նկարչական արվեստի զարգացմանը զգալիորեն նպաստել են նաև Վ. Ախիկյանը, Վ. Դայֆեճյանը, Ա. Բաժբեուկ-Մելիքյանը և ուրիշներ, ինչպես նաև նկարիչների այն նոր սերունդը, որի ստեղծագործությունը առանձնապես ծավալվեց հետագայում։

Քանդակագործության արագ զարգացման համար լուսժողկոմատը 1922 թվականին հայտարարեց հեղափոխական ականավոր գործիչների և կուլտուրայի նշանավոր ներկայացուցիչների հուշարձանների լավագույն նախագծերի մրցանակաբաշխություն։ Այդ ժամանակ Երևանում գործող քանդակագործներ Վաղարշակ Մելիք-Հակոբյանը (1879—1954) և Կարո Հալաբյանը (1897—1959) ստեղծեցին Կ. Մարքսի և Ֆ. Էնգելսի, Վ. Ի. Լենինի, Ստ. Շահումյանի, Ալ. Մյասնիկյանի կիսանդրիները, որոնք դրվեցին բանվորական ակումբներում, թատրոնների ճեմասրահներում և զբոսայգիների մուտքերի առաջ։ Վ. Մելիք-Հակոբյանի նախագծով 1923 թվականին կանգնեցվեց էջմիածնում զոհված կոմունիստների հիշատակին նվիրված հուշարձան։



Վ. Ի. Լենինի հուշարձանը Երևանում

Քանդակագործ՝ Ս. Մերկուրով

Քանդակագործության մեջ երևան եկած այդ նոր, հեղափոխական տենդենցը հետագա զարգացում գտավ Ս. Մերկուրովի, Ա. Սարգսյանի, Ս. Ստեփանյանի և Ա. Ուրարտուի ստեղծագործություններում։ Հայկական ՍՍՀ ժողովրդական նկարիչ-քանդակագործ Սերգեյ Մերկուրովը (1881—1952) ստեղծեց և Երևանում կանգնեցրեց երկու մեծածավալ ու բարձրարվեստ հուշարձան՝ Ստ. Շահումյանի (1931) և Վ. Ի. Լենինի (1940) հոյակապ մոնումենտները, որոնք խոշոր չափով նպաստեցին մոնումենտալ-հուշարձանային քանդակագործության զարգացմանը Սովետական Հայաստանում։

1925 թվականի կեսերին արտասահմանից ժամանելով Երևան Արա Սարգսյանը (ծնվ. 1902 թ.) ստեղծեց հայ կուլտուրայի և հեղափոխական գործիչների բազմաթիվ դիմաքանդակներ։ Առանձնապես նշանակալից են նրա կերտած Ս. Սպանդարյանի (1927), Ալ. Ջաիարիձեի (1929) հուշարձանները Երևանում, Մայիսյան ապստամբության հերոսների հիշատակին նվիրված հուշարձանը Լենինականում (1931) և կոմպոզիտոր Ն. Տիգրանյանի դիմաքանդակը (փայտ) և ուրիշները։

Գլխավորապես մոնումենտալ-արձանային քանդակագործության բնագավառում է աշխատում Սուրեն Ստեփանյանը (ծնվ. 1895 թվականին), որը կերտեց Մ. Ազիզբեկովի և Ղուկաս Ղուկասյանի (1935) հուշարձանները (Երևան) և Լենինի մեծածավալ հուշարձանը (Գորիս)։ Նա ստեղծեց նաև մի շարք ռեալիստական դիմաքանդակներ և քանդակագործական կոմպոզիցիաներ։

Պորտրետային և ֆիգուրալ-կոմպոզիցիոն քանդակագործության ուղղությամբ ընթացավ քանդակագործուհի Այծեմիկ Ուրարտուի (ծնվ. 1899 թվականին) գործունեությունը։ Նրա կերտած «Հայուհու գլուխ», «Ապարանցի կինը» և «Անուշ» դիմաքանդակները աչքի են ընկնում իրենց տիպականությամբ։ Խորապես արտահայտիչ են «Հանդիստ», «Անապատական», «Հառաջ», «Կժով աղջիկը» արձանային ստեղծագործությունները, որոնցով տաղանդավոր քանդակագործուհին հարստացրեց սովետահայ քանդակագործությունը։

Գրաֆիկական արվեստի բնագավառում առանձնապես խոշոր էին ժողովրդական նկարիչ Հակոբ Կոջոյանի (1883—1959) ծառայությունները։ Հ. Կոջոյանը ստեղծեց գրքի գեղարվեստական ձևավորման և նկարազարդման կլասիկ օրինակներ։ Նշանակալից են «Սասունցի Դավիթ» էպոսի (1922), «Հազարան բլրուլ» հեքիաթի (1925) նկարազարդումները, գրողներ Ե. Չարենցի, Հ. Հակոբյանի, Մ. Գորկու, Ալ. Շիրվանզադեի երկերի ու «Սասնա ծռեր» հայկական էպոսի նրբաճաշակ ու գրավիչ ձևավորումները, ինչպես նաև դազգահային գրաֆիկայի բարդ տեխնիկայով ու վարպետորեն կատարված նրա փորագրական աշխատանքները («Պրոլետարիատի կռիվը», 1923, «Հունձ», 1928, «Զորագյուղ», 1929), որոնցով նա փաստորեն սկզբնավորեց սովետահայ գրաֆիկական արվեստը։ Հ. Կոջոյանի մեծատաղանդ ստեղծագործությունները արժեքավոր ներդրում են Սովետական Միության կերպարվեստի մեջ։

1920—1930-ական թվականներին որոշակիորեն մշակվեցին սովետահայ գրքի գեղարվեստական ձևավորման սկզբունքները։ Այստեղ նշանակալից էին նաև նկարիչ Տաճատ Խաչվանքյանի (1896—1940) արտահայտիչ ստեղծագործությունները։



Ստ. Շահումյանի հուշարձանը Երևանում

Քանդակագործ՝ Ս. Մերկուրով

Նույն ժամանակաշրջանում լայնորեն կիրառվեց փորագրությունը։ Հայտնի են Գևորգ Բրուտյանի (1888—1954) լինոփորագրությունները կենցաղային ու պատմա-հեղափոխական թեմաներով, հին Երևանի բնորոշ անկյունները պատկերող Արարատ Ղարիբյանի (1903—1952) օֆորտներն ու փայտագրություններըւ Ուշագրավ են նաև Տարագրոսի (Ստեփան Տեր-Վարդանյան, 1878—1953) և Ստեփան Ալթունյանի (1893—1945) գրչանկարներն ու մատիտանկարները։



Ղ. Ղուկասյանի հուշարձանը Երևանում
Քանդակագործ՝ Ս. Ստեփանյան

Ծաղրանկարչությունը հանդես եկավ հիմնականում թերթային-ամսագրային նկարչության մեջ։

1930-ական թվականների կեսերին ավագ սերնդի հետ հանդես եկան Երևանի գեղարվեստական ուսումնարանը, Մոսկվայի և Լենինգրադի կերպարվեստի ինստիտուտներն ավարտած մի շարք նոր, երիտասարդ նկարիչներ ու քան-

դակագործներ, որոնք իրենց լավագույն ստեղծագործություններով ճանաչում գտան ոչ միայն հանրապետության մեջ, այլև արտասահմանում։

Այս շրջանում սովետահայ կերպարվեստի արագ զարգացմանը խոշոր չափով նպաստեց նաև նկարիչ Գ. Գյուրջյանի նախաձեռնությամբ ու նրա անմիջական ղեկավարությամբ 1939 թվականին կազմակերպված, առաջինը Սովետական Միության մեջ «Կերպարվեստի շրջիկ արվեստանոց-ցուցահանդեսը»։ Տոգորված կերպարվեստը մասսաներին մոտեցնելու և նկարչությունը կյանքի հետ կապելու մեծ ու աղնիվ մտահոգությամբ, նկարիչների խումբը ամեն տարի ավտոմեքենաներով շրջագայում էր Հայաստանի տարբեր շրջանները և տեղում նկարում բնության, մարդկանց ու աշխատանքային պատկերներ, լավագույն ստեղծագործություններից կազմակերպելով ցուցահանդեսներ կոլտնտեսային և բանվորական վայրերում։ Սովետահայ նկարիչների ստեղծագործական աշխատանքի այդ փորձը գոհունակությամբ ընդունվեց և հետագայում կիրառվեց նաև մյուս հանրապետությունների նկարիչների կողմից։

Այսպիսով, 1920—1930-ական թվականներին սկզբնավորվեցին ու զարգացան սովետահայ կերպարվեստի հիմնական տեսակները, մշակվեցին սովետահայ նկարչության և քանդակագործության որոշակի ավանդներ, որոնք լայն զարգացում գտան հետագայում։

4. ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Սովետական Հայաստանի ճարտարապետության կազմավորումն ու զարգացումը սերտորեն կապված է այն արմատական փոփոխությունների հետ, որ տեղի ունեցան հանրապետությունում տնտեսական ու կուլտուրական ընդհանուր վերելքի և դրա հիման վրա քաղաքների ու բնակավայրերի սոցիալիստական վերակառուցման, բնակարանային ու հասարակական շենքերի շինարարության ծավալման հետևանքով։

Հայաստանում սովետական կարգերի հաստատումից մի քանի տարի անց արդեն, ծայր առավ բնակարանների, հիդրոկայանների և ջրանցքների, գործարանների ու ֆաբրիկանների շինարարությունը։

Արդյունաբերական ձեռնարկություններ էին կառուցվում Երևանում ու Հայաստանի մյուս քաղաքներում, մասնավորապես Լենինականում։

Երևանում հասարակական շենքերի զգալի ֆոնդ էր հարկավոր պետական, վարչական ու այլ հիմնարկությունների, ինչպես և կուսակցական, արհմիութենական և հասարակական կազմակերպությունների տեղավորման համար։

Պահանջվում էր կառուցապատվող տարածությունների ընդլայնում և դրանց հատակագծային կազմակերպում։ Քաղաքաշինարարության և մասսայական շինարարության պրոբլեմի գործնական լուծումը դարձավ Հայաստանի ճարտարապետների առաջնահերթ խնդիրը։

Սովետահայ ճարտարապետության զարգացման մեջ առաջատար տեղ գրավեց մեծանուն ճարտարապետ ակադեմիկոս Ալեքսանդր Թամանյանը։ Երևան քաղաքի նրա հեղինակած գլխավոր հատակագիծը (1924), քսանական թվա-

կանների քաղաքաշինական առավել ուշագրավ գործերից է և հանդիսանում է քաղաքների սոցիալիստական վերակառուցման առաջին փորձերից մեկը։

Ըստ այդ գլխավոր հատակագծի, նախատեսվում էր, որ տասնհինգ տարվա ընթացքում Երևանի բնակչության թիվը կհասնի 150 հազարի՝ հատակագծի հաստատման ժամանակ եղած 60 հազարի դիմաց։ Աճած բնակչությունը հիմնականում պետք է տեղավորվեր կառուցապատման միջին հարկայնությունը բարձրացնելու հաշվին։ Գրեթե ամբողջովին միահարկ քաղաքի տեղում պետք է բարձրանար երկուսից-երեք, տեղ-տեղ էլ քառահարկ շենքերով մի նոր քաղաք։ Երևանն ընդլայնվելու էր գլխավորապես դեպի հարավ, ուր դրվել էր քաղաքի արդյունաբերական շրջանի հիմքը։

Ողջ քաղաքը մասնատվելու էր մի քանի շրջանի, որոնք կապվելու էին Լենինի հրապարակը շրջապատող կենտրոնական վարչական շրջանի հետ։

Մայրաքաղաքի կենտրոնական մասից հետո առավել նշանակալից էին բարձրագույն ուսումնական հաստատությունների և կուլտուր-լուսավորական հիմնարկների թաղամասերը։ Վերջիններում նախատեսվում էին ժողովրդական տունը (օպերայի և բալետի թատրոնի ու Հայֆիլհարմոնիայի մեծ դահլիճի շենքը), գեղարվեստական ուսումնարանը, կոնսերվատորիան և այլն։

Քաղաքը գոտևորվելու էր կանաչ օղակով, որը կապվելու էր կենտրոնի հետ շառավղային զբոսայգիներով։

Երևանի գլխավոր հատակագծի մեջ արտացոլվել էին հին քաղաքի բազմադարյան զարգացման այն տենդենցները, որոնք կապված էին մշտապես գործող իրադրության՝ բնակավայրի դիրքի՝ ռելիեֆի, կլիմայական պայմանների և ազգային կուլտուրական ավանդների հետ։

Էական նշանակություն ուներ և այն հանգամանքը, որ Թամանյանը գլխավոր հատակագծում արդեն հղացել էր քաղաքի հիմնական համակառույցները իրենց ծավալային-տարածական լուծումով։ Նա նախագծել էր կառուցապատման առանձին շեշտված հանգույցների տարածական կապը (վարչական կենտրոն, թատերական հրապարակ, բուհական և գրադարանային թաղամասեր, հյուսիսային կասկադ և այլն)։

Երևանի գլխավոր հատակագծի հղացումների կենսական և առաջադիմական լինելու լավագույն վկայությունն այն է, որ դրանք, հատկապես քաղաքի կենտրոնական մասի հատակագիծը, բռնելով «ժամանակի քննությունը» ընկան մայրաքաղաքի 1939, 1951 և 1965 թվականներին վերակազմված գլխավոր հատակագծերի հիմքում։

Հայաստանի բնակավայրերի կառուցապատման, կանոնավորման հետ միասին, առաջին քայլերը արվեցին մասսայական շինարարության օբյեկտների ճարտարապետական և շինարարական որակը բարելավելու ուղղությամբ։

Այդ ժամանակաշրջանում նշանակալից երևույթներ տեղի ունեցան բովանդակ սովետական ճարտարապետության մեջ։ 1923—1933 թվականները կարող են բնութագրվել իբրև շենքերի նոր, սովետական դարաշրջանում ծնունդ առած տիպերի կազմավորման ժամանակաշրջան։ Դրանցից էին բանվորական և կոլտնտեսային ակումբները, կուլտուրայի պալատները, սովետների տները, ուսումնական, բուժական, սպորտային և այլ հիմնարկների շենքերը։

Մասսայական շենքերի նոր շինարարության առաջին փուլն ընդգրկեց գլխավորապես Երևանը, իսկ 1926 թվականի ավերիչ երկրաշարժից հետո՝ նաև Լենինականը։ Աստիճանաբար քանդվեցին տարբրական հարմարություններից զուրկ կավածեփ տնակները և դրանց փոխարեն բարձրացան բազմաբնակարան ու բազմահարկ հարմարավետ շենքեր։

Հայաստանի ճարտարապետներն ու ինժեներները, օգտագործելով ժողովըրդական բնակելի տան և կապիտալիստական քաղաքի բնակարանի առաջադիմական գծերը, ստեղծեցին սովետական ժողովրդի պահանջներին համապատասխանող բնակելի տան մի ուրույն տիպ, որի լուծման մեջ հաշվի էին առնված նաև հանրապետության բնական, կենցաղային և այլ առանձնահատուկ պայմանները։

Բազմահարկ շենքերի կոմպլեքսներ կառուցվեցին Երևանում, Լենինականում, Ալավերդում և ուրիշ քաղաքներում ու ավաններում։

Բնակելի տների նոր տիպերի ձևավորման և հետագա շինարարության մեջ մեծ դեր խաղացին ավագ սերնդի ճարտարապետներ Ն. Բունիաթյանը, Բ. Աբրահամյանը, ինչպես նաև Ա. Ահարոնյանը, Զ. Բախշինյանը, Մ. Գրիգորյանը, Տ. Երկանյանը, Կ. Հալաբյանը[1], Մ. Մազմանյանը, Հ. Մարգարյանը, Գ. Քոչարը, Ս. Սաֆարյանը և ուրիշներ։ Ճարտարապետ Դ. Ջիսլիևի նախագծով բնակելի տների կոմպլեքս կառուցվեց Լենինականում։

Ճարտարապետներ Ա. Ահարոնյանի և Հ. Մարգարյանի 1930 թվականին մշակած տիպային բնակարանների հատակագծերի հիման վրա նախագծվեցին և կառուցվեցին մի շարք բնակելի տներ։ Նրանցում փորձ էր արված տիպայնացնել Հայաստանի քաղաքային բնակելի տան ուրույն գծերը, ստեղծելով հարմարավետ բնակարան մասսայական շինարարության համար։

Ոճի կազմավորումն ընթանում էր ստեղծագործական հոսանքների միջև այն ժամանակ գոյություն ունեցող գաղափարական պայքարի պայմաններում։ Այդ պայքարը կարևոր նշանակություն ունեցավ սովետահայ ճարտարապետության զարգացման համար։ Ճարտարապետների երիտասարդ սերնդի առաջավոր ներկայացուցիչները, որ մտնում էին «Պրոլետարական ճարտարապետների» խմբավորման մեջ, ծավալեցին գործնական և տեսական ակտիվ գործունեություն։

«Պրոլետարական ճարտարապետների» խմբի էական վաստակը պետք է համարել, մասնավորապես, սոցիալիստական բնակեցման և կոմպլեքսային կառուցապատման գաղափարի պաշտպանությունը։ Իրավամբ մերժելով «փողոց-միջանցքների» ստեղծման պրակտիկան, նրանք ձգտում էին թաղամասի միասնական լուծմանը։

Ճարտարապետության մեջ էկլեկտիկայի, ոճավորման և զարդամոլության դեմ «պրոլետարական ճարտարապետների» մղած պայքարը նպաստեց ճար-

---

1 Սովետական ճարտարապետության ականավոր վարպետ՝ Կ. Հալաբյանի հետագա ստեղծագործությունը, մինչև իր կյանքի վերջը (1959) ընթացավ Մոսկվայում, Ճարտարապետ-նախագծողի իր գործունեությունը նա մշտապես զուգակցեց գիտական-հասարակական լայնածավալ գործունեության հետ ճարտարապետության բնագավառում, երկար տարիներ հանդիսանալով ՍՍՀՄ ճարտարապետների միության պատասխանատու քարտուղարը, «Советская архитектура» ամսագրի խմբագիրը, ՍՍՀՄ ճարտարապետության ակադեմիայի վիցե-պրեզիդենտը և այլն։

տարապետության լեզուն մաքրելու այն նախաշամոլությունից ու կեղծիքից, որոնք իշխում էին նախահեղափոխական շրջանում և սովետական կարգերի հաստատումից անմիջապես հետո ճարտարապետական պրակտիկայում։

Սակայն «Պրոլետարական ճարտարապետության» կողմնակիցների տեսական պլատֆորմը ուներ նաև հակասություններ։ Այստեղ գոյություն ուներ ճարտարապետական ժառանգության նկատմամբ խորապես նիհիլիստական վերաբերմունք, որը, ըստ էության, բացառում էր ճարտարապետության ազգային ինքնատիպությունն արտացոլելու գործնական հնարավորությունը։

Սակայն բանը ոչ միայն ազդային ինքնատիպությունն էր։ Նրանք բոլորովին ժխտում էին տրադիցիոնների ամեն մի փոխանցում։

Ժխտելով փոխազդեցությունը, «Պրոլետարական ճարտարապետները», ըստ էության, ճարտարապետական ստեղծագործությունը դիտում էին որպես շենքերի ֆունկցիոնալ և տեխնիկական հատկանիշների ճիշտ մարմնավորման մեխանիկական արդյունք։

Այն ժամանակ որոշ տարածում գտած ամբողջ արվեստը պրիմիտիվ կերպով «պրոլետարականի» և «բուրժուականի» բաժանող դոգմիկ սոցիոլոգիական հայացքների ազդեցությունը և անցյալի գեղարվեստական ամբողջ փորձի մերժումը որոշ ճարտարապետների հանգեցրին շենքի պատկերավոր արտահայտչության՝ ճարտարապետական ստեղծագործության այդ անհրաժեշտ բաղկացուցիչ մասի, ժխտմանը։

Այս գաղափարները գտան իրենց արտացոլումը Հայաստանում (մասնավորապես Երևանում) այն ժամանակ կառուցված մի շարք շենքերում։ Ներքին տարածության ռացիոնալ օգտագործման, կլիմայական և կենցաղային պայմաններին առավելապես հարմարվելու, ինչպես նաև կոնստրուկտիվ հենքի կատարելագործման ձգտումն այստեղ համադրվեց ճարտարապետական կերպարի պարզունակ մեկնաբանությամբ, ծավալային կոմպոզիցիայի սխեմատիկ լինելու, արտահայտչական լեզվի աղքատության հետ (կառուցողների ակոմբը՝ Ստանիսլավսկու անվան ռուսական թատրոնի այժմյան շենքը, մի շարք բնակելի տներ Երևանում, քաղսովետի գործկոմի և ուրիշ շենքեր Լենինականում)։


Ճարտարապետության միակողմանի զարգացումը հաղթահարվեց Համ(բ)Կ Կենտրոնական կոմիտեի 1931—1932 թվականների հայտնի որոշումների հիման վրա։ Առանձնապես կարևոր նշանակություն ունեցավ Համ(բ)Կ Կենտկոմի գրական-գեղարվեստական կազմակերպությունների վերակառուցման մասին որոշումը (1932), որի հիման վրա ստեղծված ճարտարապետների միասնական ստեղծագործական միությունը, համախմբելով երկրի ճարտարապետական բոլոր ուժերը, վերջ դրեց տարբեր խմբավորումների գոյությանը։

Կուսակցությունը նշեց նաև ինչպես համաշխարհային, այնպես էլ ազգային ճարտարապետության դասական ժառանգության օգտագործման անհրաժեշտությունը։

Սովետահայ ճարտարապետության համար, որ հայ ժողովրդի դասական ճարտարապետական գանձարանի ժառանգորդն էր, կուսակցության այդ ցուցումը կենսական նշանակություն ունեցավ։ Միասնական ծավալի լուծումները, կոմպոզիցիայի հստակությունն ու մոնումենտալությունը, ճարտարապետական լեզվի պարզությունն ու արտահայտչությունը, ժողովրդայնությունը, դե-

կորատիվ հարդարանքի գեղարվեստական բարձր մակարդակը, շինանյութերին վարպետորեն տիրապետելը և բնական բազմապիսի քարի քաջահմուտ օգտագործումը՝ հայկական դասական ճարտարապետության այս լավագույն հատկանիշները, նպաստեցին սովետահայ ճարտարապետության կազմավորմանը։

Ալեքսանդր Թամանյանի տասներեքամյա գործունեությունը, որ ընթացավ յայնորեն ծավալված արդյունաբերական և քաղաքացիական շինարարության պայմաններում, խոր հետք թողեց Հայաստանի ճարտարապետության վրա և մեծ նշանակություն ունեցավ նրա հետագա յախտի համար։



Ալեքսանդր Թամանյան

Հայաստանում իրականացված նրա բազմաթիվ գործերի կողքին (անասնաբուժական, պոլիտեխնիկական, ֆիզիո-թերապևտիկ և ուրիշ ինստիտուտներ, հանրային գրադարանը և այլն), Երևանի հատակագծի հետ միասին, առավել սկզբունքային նշանակություն ունեն երեք նշանավոր ստեղծագործություններ։ Դրանք են Երևանի առաջին հիդրոէլեկտրակայանի, օպերայի և բալետի թատրոնի և Հայկական ՍՍՀ կառավարության տան շենքերը։

Առաջինում պարզ ու մոնումենտալ ձևերով տրված է սովետական ինդուստրիալ կառուցվածքի կերպարը, որը հիանալիորեն ներդաշնակում է Հրազդանի կիրճի խստաշունչ շրջապատի հետ։ Կապը բնության հետ, ֆունկցիոնալ բովանդակության և կոնստրուկտիվ հենքի ճշմարտացի արտահայտությունը, լավ նկարված ձևերի ներդաշնակ փոխհարաբերությունը, ազգային ժառանգության զուսպ օգտագործումը, այս ամենը բնութագրում են այդ շենքի ճարտարապետության խոր ռեալիստականությունը։

Արդիականության և տրադիցիաների օրգանական միահյուսումը Թամանյանի առավել նշանակալից գործերի անքակտելի առանձնահատկությունն է։ Նա միտումնավոր կերպով իր շենքերի օրիգինալ, պատկերավոր արտահայտչականության համար զուգորդություններ շէր որոնում։ Երկդահլիճ հանդիսատեսային շենքի գաղափարը ճարտարապետի մոտ բնականորեն մարմնացավ

կենտրոնական, աստիճանաձև կրճատվող ծավալներով վեհաշուք կոմպոզիցիայում, որ այնքան խոր հարազատություն ունի մեր ազգային ճարտարապետության մեջ և միաժամանակ թարմ է ու աննախադեպ։ Ճարտարապետի հոգատարությունը բարդ տնտեսություն ունեցող ժամանակակից թատերական շենքի ֆունկցիոնալ լավագույն հատկանիշների հանդեպ և գեղարվեստական բարձր տակտը, զուգահեռաբար միմյանց լրացնելով, հանգեցրին օգտագործական նշանակության և գեղարվեստական պատկերավորման այն հավասակշիռ ներդաշնակությանը, որը տեսնում ենք օպերայի թատրոնի շենքում։



Կարո Հալաբյան

Ստեղծելով կառավարական տան և բովանդակությամբ և քաղաքաշինական նշանակությամբ նոր հորինվածքը, Թամանյանն ընթացավ սեփական ճանապարհով։


Նախագծելով նոր տիպի շենքեր, Թամանյանը համարձակորեն գործի դրեց անցյալի ճարտարապետության միջոցների զինանոցը, դրանով իսկ ճարտարապետության ասպարեզում կիրառելով նախընթաց հասարակակարգերի կուլտուրական ժառանգության քննադատական օգտագործման լենինյան սկզբունքը։

Հնգամյակների հաջող իրականացման շնորհիվ բուռն աճ ապրեց Հայաստանի տնտեսությունն ու մշակույթը։ Պայմաններ ստեղծվեցին բնակելի տների և դպրոցների, մանկական ու բուժական հիմնարկների, ակումբների և գրադարանների շինարարության հետագա ծավալման համար։

Շինարարության ծավալի նշանակալից և հարաճուն զարգացումը քաղաքներում, որ կապված էր արդյունաբերության խոշոր ձեռնարկությունների ստեղծման հետ, ինչպես և կոլտնտեսային կարգերի հաղթանակի շնորհիվ գյուղական կյանքի արմատական վերափոխումից բխող մասսայական շինարարության պահանջը, վերստին և ամբողջ սրությամբ առաջ քաշեցին բնակավայրերի ճարտարապետական ճիշտ կազմակերպման պրոբլեմը։

Երեւանական թվականների կեսերին Երևանի առաջին գլխավոր հատակագծի (1924) կանխատեսումները արդեն նշանակալից չափով հնացել էին։ Քաղաքի երկրորդ հատակագիծը կազմվեց քաղաքների հատակագծման ինստիտուտի Լենինգրադի բաժանմունքում, պրոֆեսոր Ի. Ի. Մալոզեմովի ղեկավարությամբ և Երևանի մասնագետների մասնակցությամբ (ճարտարապետ Ն. Զարգարյան և ուրիշներ)։


Երևանի «Հայպետնախագծում» մշակվեցին Լենինական (1940), Կիրովա-



Հայկական ՍՍՀ կառավարության տան շենքը Երևանում
Ճարտարապետ՝ Ալ. Թամանյան

կան (1939), էջմիածին (1939) քաղաքների, Արզնի (1932—1938) և Դիլիջանի (1938) առողջարանների, ինչպես նաև ուրիշ բնակավայրերի հատակագծերը։

Գլխավոր հատակագծերի ձևավորման վրա ազդեցին մի շարք նոր գործոններ, որոնց կոմպլեքսը իր առավել լրիվ արտահայտությունը գտավ Երևան քաղաքի նոր հատակագծի մեջ (հաստատված 1939 թվականին), որը տարբեր մասնագիտության տեր հատակագծողների խոշոր կոլեկտիվի գրեթե եռամյա քրտնաջան աշխատանքի արդյունք էր։ Նրանց աշխատանքը հենվում էր Երևանի բնական (կլիմայական, երկրաբանական և այլն), տնտեսական և մյուս պայմանների գիտական բազմակողմանի ուսումնասիրության վրա։



Օպերայի և բալետի պետական թատրոնի շենքն Երևանում

Ճարտարապետ՝ Ալ. Թամանյան

Հատակագծի մշակման ժամանակ արդեն նշանակալից չափով հաստատվել էին մայրուղիների և հանգույցների այն հիմնական ուղղությունները, որ նախատեսված էին 1924 թվականի հատակագծով։ Այդ հանգամանքը, ինչպես նաև Թամանյանի հատակագծային գաղափարների համոզիչ լինելն ու կենսունակությունը հատակագծողներին հանգեցրին այն միակ ճիշտ լուծմանը, որ պետք է պահպանել նախկին հատակագծի հիմնական սխեման և զարգացնել քաղաքը նախագծի սահմաններից դուրս՝ նրա բնակչության գրեթե եռակի աճին համապատասխան։ Աճող քաղաքն ընդգրկեց Նորք արվարձանը, Քանաքեռի բարձրավանդակն ու Քանաքեռ գյուղը, որոնց տերիտորիաները նպատակահարմար էին բնակելի շինարարության համար։ Քաղաքի հասարակական գլխավոր կենտրոնի (Լենինի հրապարակի և նրան հարող շրջանի) հետ միասին, մայրաքաղաքը ստանում էր շրջանային կենտրոններ, որոնք կապվում էին հին կենտրոնին։ Արդյունաբերությունը տեղաբաշխման նոր շրջան ստացավ՝ Քանաքեռի բարձունքը, ուր հարավային շրջանին զուգընթաց սկսեցին կառուցվել արտադրական նոր ձեռնարկություններ։

Նոր հատակագծում մեծ ուշադրություն դարձվեց քաղաքի շրջակայքի կանաչապատմանը և ջրային մակերեսներ ստեղծելուն։ Նախատեսվեց ավելի բարձր հարկայնություն (4—5 հարկ) քաղաքի կենտրոնական մասի համար և առանձնացվեցին անհատական շինարարության շրջաններ։ Տարանցիկ շարժումը դուրս բերվեց քաղաքի սահմաններից։

Լենինականի գլխավոր հատակագծում, որ 1931—1937 թվականներին մշակել էին ճարտարապետներ Մ. Մազմանյանը (ղեկավար), Փ. Մանուկյանը և Գ. Մուրզան, կատարվեցին լրացումներ և մասնակի փոփոխություններ։ Հաշվի առնվեց քաղաքի ընդարձակումը և հարմար կապի ստեղծումը կայարանի ու քաղաքի հյուսիսային շրջանի միջև, որտեղ գտնվում է Լենինականի հիմնական արդյունաբերական կոմպլեքսն ու քաղաքաստեղծ գործոնը՝ տեքստիլ խոշոր կոմբինատը։ Լենինականը ևս անհատական շինարարության համար տարածությունների կարիք ուներ, որը և նախատեսվել էր հատակագծով։ Վերջինում խոշոր չափով վերամշակվեց քաղաքի նաև հին, կենտրոնական մասը։ Լենինականի սեյսմիկ առանձնահատկության (8—9 սեյսմիկ բալի սահմաններում) կապակցությամբ, հիմնական հարկայնությունն ընդունվեց երեք հարկից ոչ բարձր, մի բան, որ չէր կարող բացասական ազդեցություն չունենալ քաղաքի կառուցապատման տնտեսական կողմի վրա։

Երևանի հատակագծման հարուստ փորձի օգտագործումն նպաստեց նախագծի հետագա մշակողներին (Հ. Դավթյան, Ս. Կարապետյան, Փ. Մանուկյան, Գ. Մուրզա, կոնսուլտանտ՝ պրոֆեսոր Լ. Իլլին) ապահովել Լենինականի հատակագծի որակական պատշաճ մակարդակը, ինչպես ճարտարապետական, նույնպես և տեխնիկական-տնտեսական հիմնավորման առումով։ Նախագիծը (120 հազար բնակչի համար) ավարտվեց և հաստատվեց 1939 թվականին։

Հայաստանի երրորդ քաղաքի՝ Կիրովականի հատակագծումը, սկսած 1929 թվականից, մի քանի փուլ է ունեցել։ Նախասպատերազմյան գլխավոր հատակագիծը, որ 1939 թվականին կազմել են Ն. Զարգարյանը և Ա. Մինասյանը, ճիշտ արտահայտել է քաղաքի արդյունաբերական բնույթը։ Երբեմնի ամառանոցային գյուղաքաղաքը հնգամյակների ընթացքում բուռն աճ էր ապրել քիմիական և այլ ճյուղերի արդյունաբերության զարգացման հետևանքով։ Միաժամանակ հատակագծում հաշվի էր առնվել քաղաքի բնակլիմայական նպաստավոր պայմաններին համապատասխան առողջարանների ցանցի հետագա զարգացումը։

Կազմվեց նաև էջմիածին քաղաքի գլխավոր հատակագիծը (ճարտարապետ Ս. Մանուկյան, կոնսուլտանտ՝ պրոֆեսոր Լ. Իլլին)։ Էջմիածինը, իհարկե, չուներ քաղաքաստեղծ նշանակալից գործոններ, սակայն որպես Արարատյան դաշտավայրի երկրագործական հարուստ շրջանի մի կենտրոն ու վաղ միջնադարի ճարտարապետական ամենաարժեքավոր հուշարձանների (էջմիածնի մայր տաճարը, Հռիփսիմե, Գայանե, Շողակաթ, Զվարթնոց եկեղեցիները) առկայության շնորհիվ կարևոր տեսարժան բնակավայր, կարիք ուներ վերակառուցման ու բարեկարգման։ Քաղաքի հատակագծում նրա այդ առանձնահատկությունները գտել էին իրենց համապատասխան արտացոլումը։

Քաղաքների հետ միասին հատակագծային խոշոր աշխատանք կատարվեց նաև մի շարք գյուղերում և շրջանային այն կենտրոններում, ուր կոլտնտեսա-

կանների նյութական պայմանների բարելավումը և կուլտուրական պահանջների աճը պայմանավորում էին բնակավայրերի կառուցապատման ուղղությունը։

Սակայն, չնայած հատակագծային աշխատանքների նշված աշխուժացմանը, 1937—1940 թվականների ընթացքում Հայաստանի քաղաքների հատակագծման գործը դարձյալ ետ էր մնում մասսայական բնակարանային շինարարությունից։ Դա առավել ցայտունությամբ երևում է Երևանի օրինակով, ուր անհետաձգելի անհրաժեշտության թելադրանքով քաղաքաշինական մեծ աշխատանքներ ծավալվեցին դեռևս նոր գլխավոր հատակագիծը կազմելու ընթացքում և ավելի առաջ, քան կսկսվեր առանձին հանգույցների, փողոցների և հրապարակների կառուցապատման նախագծերի մանրամասն մշակումը։

Երևանի գլխավոր հատակագծի իրականացումը տեղի ունեցավ բարդ պայմաններում, որոնք բխում էին գոյություն ունեցող իրադրությունից։

Երկու առավել էական գործոն իրենց կնիքը դրեցին Երևանի քաղաքաշինական աշխատանքների վրա և շատ բանով պայմանավորեցին նոր շինարարության եղանակները.

ա) Քաղաքի կենտրոնական թաղամասերի ներսում հնից մնացած խիտ կառուցապատումը, որ չէր նախատեսվում ոչնչացնել առաջիկա տարիներին։

բ) Տրանսպորտային անհրաժեշտ մայրուղիների բացակայությունը, որոնք պետք է ապահովեին այդ ժամանակ արդեն նշանակալից զարգացման հասած շարժումը։

Այս պայմանները թելադրում էին ավելացնել մայրուղիների ցանցը և ապա շենքերը կառուցել մայրուղիների կարմիր գծի երկարությամբ, քանի որ դեռևս հնարավոր չէր յուրացնել բակային հին տներով լեցուն տարածությունները՝ թաղամասերի ներսում կառուցապատում անելու, ինչպես և քաղաքը բարեկարգելու և կանաչապատելու համար։ Այդպես ձևավորվեցին Լենինի, Հոկտեմբերյան պողոտաները և այլ փողոցներ։

Կառուցապատման այդպիսի հնացած եղանակը ստեղծում էր մի շարք թերություններ։

Այնուամենայնիվ, պետք է ասել, որ քաղաքաշինական ընդունված սկզբունքների սահմաններում, երրորդ հնգամյակի տարիներին Հայաստանի քաղաքներում կատարվեց վերակառուցման նշանակալից աշխատանք, ստեղծվեցին շենքերի խոշոր կոմպլեքսներ։ Դրանք բարձրացրին շինարարական կուլտուրայի և ճարտարապետների վարպետության մակարդակը։ Կատարելագործվեց բնակելի տան նաև բուն տիպը, բարելավվեց բնակարանի նախագծումը, ավելի պարզ ու ռացիոնալ դարձավ կոնստրուկտիվ լուծումը, բնակելի տունը սկսեց համապատասխանել ժամանակակից քաղաքի շինարարության պահանջներին։

Կառուցապատման մասշտաբի խոշորացումը իր արտացոլումը գտավ մի շարք բնակելի կոմպլեքսներում։ Այսպիսին է, օրինակ, Ն. Բունիաթյանի նախագծով կառուցված բազմահարկ, հարմարավետ բնակարաններ ունեցող տների խոշոր կոմպլեքսը Լենինի պողոտայի վրա, որտեղ շենքերի ճակատները ձգվում են Մարքսի փողոցից մինչև Սվերդլովի փողոցը։

Փողոցի առանձին հատվածի անսամբլային կառուցապատման օրինակ է երքաղսովետի երեք բնակելի տների խումբը, որը կառուցվել է Հոկտեմբերյան

պողոտայում 1938—1939 թվականներին (հեղինակներ Մ. Գրիգորյան և Ս. Սաֆարյան)։

Քաղաքաշինական առումով վերհիշյալ օրինակին է հարում նույն պողոտայում կառուցված քառահարկ շենքերի մեկ ուրիշ խումբ (հեղինակներ՝ Վ. Աբովյան և Գ. Մուշեղյան)։ Ինչպես նախորդ դեպքում, կոմպլեքսը կազմված է երեք շենքից կարմիր գծի վրա գտնվող երկու միատիպ բնակելի տներից և ետ բնկած կենտրոնական դպրոցական շենքից։

Երևանի փողոցները բնակելի շենքերով կառուցապատելու եղանակների զարգացման մեջ վերը հիշատակված պրակտիկան նշանավորեց որակական այն աստիճանը, որի նախադրյալներն էին մի կողմից բնակելի տների մեծ դանգվածներ բարձրացնելու շինարարական-տեխնիկական հնարավորությունները, մյուս կողմից՝ ամեն մի հանդուցյալ տարածական կազմակերպումը պայմանավորող փողոցների և թաղամասերի կառուցապատման նախագծերի բացակայությունը։ Այդպիսի անսամբլային կառուցապատման ձգտող ճարտարապետները հանդում էին մասնակի նվաճումների։

Բերված օրինակներն իրենց հատկանիշներով բնորոշ են նաև Լենինականի, Կիրովականի և մյուս քաղաքների բնակելի կառուցապատմանը։

* * *

Այդ տարիներին կառուցված հասարակական շենքերի ճարտարապետության մեջ զգացվում էր սխեմատիզմի հաղթահարում, օրգանական և ճշմարտացի կոմպոզիցիաները, շենքերի ձևերը արտահայտիչ դարձնելու ձգտում։ Սովետահայ ճարտարապետության վարպետները (Թամանյան, Բունիաթյան և ուրիշներ) լայնորեն գործի դրին Հայաստանի բնական քարերի անսպառ հարստությունը, երևան բերելով և կյանքի կոչելով նրանց պլաստիկական և գեղանկարչական հատկությունները։ Սևեռուն ուշադրությամբ ուսումնասիրելով ժողովրդական ստեղծագործությունը և քարի զարդաքանդակման վարպետությունը, սովետական ճարտարապետները սկսեցին դրանք օգտագործել ճարտարապետության ազգային նոր ձևերի համար։

Մինչև Հայրենական պատերազմը Երևանում կառուցված մի շարք հասարակական խոշոր շենքեր առավել ակներևությամբ են արտացոլում սովետական ճարտարապետության ոճային որոնումները, ազգային ժառանգության ձևերի և մոտիվների օգտագործումը նոր, սովետական մարդկանց մասշտաբի և հարազատ կերպարների ստեղծման համար։ Կենտրոնական ունիվերմագի (ճարտարապետներ՝ Ա. Ահարոնյան, Մ. Մազմանյան, Հ. Սարգսյան և Գ. Քոչար), բժշկական և գյուղատնտեսական ինստիտուտների (ճարտարապետ՝ Ս. Սաֆարյան), գրքի պալատի (ճարտարապետներ՝ Մ. Մազմանյան և Հ. Մարգարյան), «Մոսկվա» կինո-թատրոնի (ճարտարապետներ՝ Տ. Երկանյան, Գ. Քոչար) և մի շարք այլ շենքեր, նոր փուլ նշանավորեցին սոցիալիստական ռեալիզմի մեթոդին տիրապետելու ճանապարհին։ Ու թեև առանձին դեպքերում դեռևս զգացվում են սխեմատիզմի ու պարզունակության չհաղթահարված մնացուկներ, այնուհանդերձ, այս շենքերի կառուցման սովետահայ ճարտարապետությունը նշանավորվեց ստեղծագործական որոշակի նվաճումներով։

Այս առումով նշանակալից դեր խաղաց նաև «Արարատ» տրեստի մասնների կոմպլեքսը (սկզբնական մասը ճարտարապետներ՝ Գ. Քոչար, Ռ. Իսրայելյան, ինժեներ՝ Ա. Մարտիրոսյան) և հանդիսացավ արժեքավոր ավանդ Սովետական Հայաստանի ճարտարապետության մեջ։ Անհրաժեշտ է նշել նաև Հայկական ՍՍՀ տաղավարը 1939 թվականի Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսում (ճարտարապետներ՝ Կ. Հալաբյան և Ս. Սաֆարյան), որտեղ կիրառված են հայկական ճարտարապետության ժառանգության մոտիվներն ու եղանակները՝ լուծված արդիականորեն։

Հայաստանի մյուս քաղաքներում և առողջարաններում էլ, վերակառուցման ու կառուցապատման ընթացքում շարք մտան մի քանի հասարակական շենքեր։ Կարելի է նշել կինոթատրոնների շենքերը՝ Կիրովականում և Դիլիջանում (ճարտարապետ՝ Գ. Քոչար), Կոտայքի և Էջմիածնի շրջսովետի գործկոմի շենքերը (ճարտարապետ՝ Զ. Բաշխինյան) և այլն։

«Դինամո» խոշոր ստադիոնի (հետագայում հանրապետական ստադիոն) տրիբունաների շինարարությունը սկսվեց նախապատերազմյան տարիներին, ըստ ճարտարապետ Հ. Մարգարյանի նախագծի։ Ավարտվեց ստադիոնի կոմպլեքսի մեջ մտնող ջրակայանի տաղավարի (ճարտարապետ Հ. Հակոբյան) շինարարությունը։

Հայկական գյուղի դարերով ձևավորված կառուցվածքը բնորոշվում էր գետնատարած խրճիթների վրա վեր խոյացող եկեղեցիով և անկանոն կառուցապատմամբ։ Նախահեղափոխական հայ գյուղի դասակարգային շերտավորումն իր անմիջական արտացոլումն էր գտել նաև նրա հատակագծային կառուցվածքի և բնակելի տների տիպերի մեջ։

Սովետական կարգերի հաստատման առաջին իսկ տարիներից կառավարության կողմից միջոցներ ձեռնարկվեցին գյուղի կառուցապատումը կարգավորելու, հողօգտագործումը բարելավելու և վճռականորեն հաղթահարելու գյուղի տնտեսական ու կուլտուրական դարավոր հետամնացությունը։ Ոռոգման ջրանցքների շինարարությունը և ճահիճների չորացումը, ցանքատարածությունների, մանավանդ տեխնիկական կուլտուրաների համար ոռոգելի հողեր ստեղծելը անհետաձգելի խնդիրներ էին։

Սակայն Հայաստանի (ինչպես և ամբողջ Սովետական Միության) գյուղերի հատակագծման և կառուցապատման գործի մեջ վճռական բեկում կատարվեց գյուղատնտեսության համատարած կոլեկտիվացումից հետո միայն։

Երեսնական թվականների սկզբից արդեն Հայաստանի ճարտարապետները ակտիվորեն ներգրավվեցին գյուղերի և շրջանային կենտրոնների հատակագծման գործի մեջ։ Հանրապետության ճարտարապետների միությունը արձագանքեց գյուղին օգնության ցույց տալու վերաբերյալ Հայաստանի կոմկուսի Կենտկոմի կոչին և գլխավորեց գյուղական բնակավայրերի գլխավոր հատակագծերը կազմելու ուղղությամբ երիտասարդ ճարտարապետների հայրենասիրական նախաձեռնությունը։

Տասնյակ այդպիսի նախագծեր կազմվեցին մի քանի տարվա ընթացքում։ Դրանց հիման վրա նոր ձևով կազմակերպվեց գյուղի կյանքը։ Հատակագծերի մեջ նկատի էին առնվում բնական պայմանները (ռելիեֆը, իշխող քամիների

ուղղությունը և այլն), նպատակահարմար կապը արտադրական և բնակելի մասերի միջև, կապը տրանզիտային և տեղական ճանապարհների հետ, խմելու մաքուր ջրով ապահովելու և շատ ուրիշ հարցեր։

Երեւանական թվականներին կազմված գյուղական բնակավայրերի հատակագծերից կարելի է հիշատակել, օրինակ՝ Գյոդակլու և Վերին Արտաշատ (հեղինակներ՝ Գ. Քոչար և Տ. Մարության), Ջանտան (հեղինակ՝ Ռ. Գրիգորյան), Արմավիր (հեղինակ՝ Ս. Ասոյան), Փարաքար, Նորագյուղ (հեղինակ՝ Մ. Մազմանյան) և այլ գյուղերի գլխավոր հատակագծերը։

Արմատական բեկում տեղի ունեցավ գյուղական բնակելի տների ճարտարապետության մեջ։ Հայ գեղջուկը, որ դարերով ապրել էր կիսամութ երդիկավոր կացարաններում (այսպես կոչված «գլխատներում» որոնց կենտրոնում երդիկի տակ տեղավորված էր. թոնիրը), առաջին անգամ բոլոր հարմարություններով սովետական մարդուն վայել տուն կառուցելու հնարավորություն ստացավ։

Երեւանական թվականների վերջերին, երբ Հայաստանում միլիոնատեր կոլտնտեսություններն արդեն հազվագյուտ չէին, տասնյակ գյուղեր, հատկապես Արարատյան դաշտավայրում, վերակառուցվեցին ըստ նոր հատակագծերի։ Դրանք բարեկարգ բնակավայրեր են՝ քարաշեն տներով։ Սովետական գյուղի ժողովրդական տան մեջ վերստին վերածնվեցին քարի գեղարվեստական մշակման, ինչպես և լայն պատշգամբների դրվագման վարպետությունը։

Հայաստանի ճարտարապետները մշակեցին գյուղական բնակելի տան մի շարք տիպեր, որոնք կառուցողների շահումներով, հաջողությամբ կիրառություն գտան կոլտնտեսային շինարարության մեջ։ Գյուղական վայրերում դպրոցական և ակումբային շենքերի կառուցումը թեև սկսվել էր արդեն 20-ական թվականներից, սակայն տվյալ ժամանակաշրջանում դեռևս լայն ծավալ չէր ստացել։ Դա մեծ ծախսեր պահանջող գործ էր, սակայն կառուցված սակավաթիվ ակումբներն իսկ երևան հանեցին հասարակական շենքերի մի նոր տիպ, որ աննախադեպ էր նախահեղափոխական հայ գյուղի համար։ Հարյուր, երկու հարյուր, կամ երեք հարյուր տեղանոց հանդիսասրահ, ինքնագործ խմբերի պարապմունքների սենյակներ, գրադարան-ընթերցարան. այս ամենը պայմաններ էին ստեղծում գյուղում կուլտուր-լուսավորական աշխատանքի համար։

* * *

Քսանական թվականներին, երբ հանրապետությունում նոր էր ծավալվում շինարարությունը, որակյալ կադրերի թիվը չափազանց սահմանափակ էր։ Ավագ սերնդին պատկանող մասնագետների փոքր խումբը՝ Ալեքսանդր Թամանյանի գլխավորությամբ, ոչ միայն իր վրա վերցրեց նախագծման ու շինարարությունը ղեկավարելու գործը, այլև մեծ չափով մասնակից դարձավ ճարտարապետական երիտասարդ կադրերի պատրաստմանը։

Սկզբնապես այս գործը կազմակերպվեց Երևանի պետական համալսարանի տեխնիկական ֆակուլտետում, իսկ 1930 թվականից, ավելի մեծ չափերով՝ Երևանի շինարարական, հետագայում Կարլ Մարքսի անվան պոլիտեխնիկական ինստիտուտի (կազմակերպիչ և առաջին դիրեկտոր Մ. Մազմանյան) շինարարական ֆակուլտետում։ Տեխնիկ-շինարարների պատրաստման գործին

զգալի ծառայություն մատուցեցին Երևանի ինդուստրիալ և Լենինականի շինարարական տեխնիկումները։

Բացի ուսումնական հաստատություններից, երիտասարդ ճարտարապետ-նախագծողների պատրաստման համար լուրջ դպրոց հանդիսացան ժողտան (ղեկավար՝ Ա. Թամանյան), Երքաղսովետի (ղեկավար՝ Ն. Բունիաթյան), Դիպրոգորի (ղեկավար՝ Կ. Հալաբյան, հետագայում՝ Գ. Քոչար) նախագծային կազմակերպությունները, ինչպես նաև խոշոր կառույցները։

30-ական թվականների վերջերին զգալիորեն բարելավվեց ճարտարապետական-շինարարական կադրերի պահանջը։ Առաջ եկան մի շարք ընդունակ ու մասնագիտական խոր գիտելիքների տեր ճարտարապետներ (Ա. Ահարոնյան, Զ. Բախշինյան, Մ. Գրիգորյան, Գ. Թամանյան, Ռ. Իսրայելյան, Հ. Մարգարյան, Ս. Սաֆարյան, Կ. Հակոբյան, Ա. Տեր-Ավետիքյան և այլն), որոնք իրենց բարձրարվեստ ստեղծագործությամբ առաջ մղեցին տվյալ ժամանակաշրջանի սովետահայ ճարտարապետությունը։

Նախագծային գործը հիմնականում իրականացվում էր ժողտան շինարարության, Երքաղսովետի գործկոմի և Դիպրոգոր նախագծային կազմակերպություններում։ 1935 թվականին դրանք վերակառուցվելով, ստեղծվեցին կոմունալ տնտեսության ժողկոմատին և Երքաղսովետի գործկոմին ենթակա առանձին նախագծային արվեստանոցներ։ Մի փոքր նախագծային խումբ էլ գործում էր Լենինականի քաղաքային սովետի գործկոմին կից։

Ստեղծագործական կազմակերպությունների վերաբերյալ կուսակցության Կենտրոնական կոմիտեի որոշումից հետո սովետահայ ճարտարապետների տարբեր սերնդի ներկայացուցիչները միավորվեցին 1934 թվականին ստեղծված Հայաստանի ճարտարապետների միության մեջ, որի առաջին համագումարը տեղի ունեցավ 1937 թվականին։

Այդ կազմակերպությունը, որը գլխավորեց Գ. Քոչարը, նախապատերազմյան տարիներին, որոշակի դրական աշխատանք կատարեց սովետահայ ճարտարապետների ստեղծագործական ունակությունները ի մի բերելու և նրանց ջանքերը նպատակասլաց կերպով ի սպաս դնելու հանրապետության աշխատավորության կյանքի բարելավմանը։

Հայաստանի ճարտարապետների միությունը շեֆական օգնություն ցույց տվեց կոլտնտեսական գյուղերին և երկաթուղային կայարաններին, ցուցահանդեսներ և մրցանակաբաշխություններ կազմակերպեց, ստեղծագործական կապեր հաստատեց Անդրկովկասյան հանրապետությունների ճարտարապետների հետ։ 1940 թվականին Թիֆլիսում տեղի ունեցավ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի ճարտարապետների Անդրկովկասյան ստեղծագործական խորհրդակցությունը, որը լայն քննարկման դրեց երեք ժողովուրդների ազգային ճարտարապետության հարուստ ժառանգությունը, նրա ավելի բազմակողմանի խոր ուսումնասիրության, ինչպես և ստեղծագործական վերամշակման հարցերը։

Հայ ժողովրդի պատմական ճարտարապետության հարուստ ժառանգության պահպանության և ուսումնասիրության գործի հիմքերը դրվեցին Հայաստանում սովետական կարգերի հաստատումից անմիջապես հետո։ 1920 թվականին ստեղծվեց մի հանձնաժողով՝ իսկ հետագայում՝ կառավարության 1923 թվականի դեկտեմբերի 18-ի որոշմամբ՝ Հնությունների պահպանության

կոմիտեն, որի կազմի մեջ ընդգրկված հայ մշակույթի անվանի գործիչները՝ Ալ. Թամանյանը (նախագահ), Թ. Թորամանյանը, Գ. Լևոնյանը, Ա. Քալանթարը, Գ. Ասատուրը և ուրիշներ, գնահատելի գործունեություն ծավալեցին հանրապետությունում հուշարձանների հաշվառման, վերանորոգման և ուսումնասիրության ուղղությամբ։

Առանձնապես ակնառու է հայ ճարտարապետության գիտական ուսումնասիրության հիմնադիր ու դեռևս նախասովետական շրջանում հանրահայտ դարձած Թ. Թորամանյանի ներդրումն այս ասպարեզում։ Հնությունների պահպանության կոմիտեում, պատմության թանգարանում (որպես ճարտարապետության բաժնի վարիչ) և գիտության ու արվեստի ինստիտուտում Թ. Թորամանյանը ծավալեց չափազանց բեղմնավոր գործունեություն, առաջինում կազմակերպելով հուշարձանների պետական պահպանության գործն ու գլխավորելով հնագիտության արշավախմբերը, երկրորդում՝ զբաղվելով հայ ճարտարապետության ուսումնասիրության ուղղությամբ իր գիտական արդյունքների ամփոփմամբ՝ մի ընդհանուր մենագրության մեջ, որը լույս տեսավ իր մահից հետո՝ երկու հատորով։ Դրա հետ միասին Թորամանյանն իր հետազոտություններով որոշակի դեր խաղաց Սովետական Հայաստանի ձևով ազգային և բովանդակությամբ սոցիալիստական ճարտարապետության կազմավորման գործում, հանդիսանալով Ալ. Թամանյանի և մյուս ճարտարապետների մշտական խորհրդատուն հայ ճարտարապետության ձևերի հարցերում։ Թ. Թորամանյանի և Ալ. Թամանյանի, հայ ճարտարապետության այդ երկու ակնառու գործիչների ստեղծագործության մեջ արտահայտվեց ճարտարապետական պրակտիկայի ու տեսության սերտ կապերի բարերար աղդեցությունը։

* * *

Այսպիսով, հանրապետության պատմության առաջին քսանամյակի (1920—1940) ընթացքում սովետահայ ճարտարապետությունը կարողացավ հասնել որոշակի նվաճումների։ Նա անցավ զարգացման մի ճանապարհ՝ սկսած քսանական թվականներին մայրաքաղաքում կառուցված միհարկ բազմաբնակարան տներից մինչև այնպիսի մոնումենտալ ու բարձրարվեստ կերտվածքներ, ինչպիսիք են Լենինի անվան հրապարակի ճարտարապետական հոյակապ անսամբլի հիմնաքարը հանդիսացող Հայկական ՍՍՀ կառավարության տունը և մեծ առաջնորդի արձանը, օպերայի և բալետի թատրոնի (ժողտուն) շենքը, Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսի (Մոսկվա) Հայկական ՍՍՀ տաղավարը և մի շարք ուրիշ բնակելի ու հասարակական շենքեր Երևանում, Լենինականում և այլ քաղաքներում ու բնակավայրերում։

Ոչ միայն սովետահայ, այլև ողջ սովետական քաղաքաշինության պատմության մեջ արժեքավոր ու ուշագրավ ներդրում հանդիսացավ Երևան քաղաքի գլխավոր հատակագծի մշակումը, որտեղ մարմնավորվեցին սոցիալիստական քաղաքաշինության այն տարրերի գաղափարներն ու սկզբունքները։

Կուսակցության կոչով հրաժարվելով իրարամերժ հոսանքներից ու կանգնելով մի ընդհանուր՝ սոցիալիստական ռեալիզմի պլատֆորմի վրա, հանրապետության ճարտարապետների դեռևս փոքրաքանակ կոլեկտիվը առավելապես

երեսնական թվականների վերջերին կարողացավ ստեղծել սովետահայ ճարտարապետության ինքնատիպ ոճը՝ ձևով ազգային ու բովանդակությամբ սոցիալիստական։ Սովետահայ ճարտարապետների ողջ սերնդի ստեղծագործության վրա մեծ ազդեցություն ու նշանակություն ունեցան ավագ սերնդի փայլուն վարպետ և սովետահայ ճարտարապետության հիմնադիր Ալեքսանդր Թամանյանի երկերը, որոնց մեջ բազմահմուտ և տնտեսի ճարտարապետը առաջին փորձերն արեց կիրառել ճարտարապետության բնագավառում լենինյան պատգամներն անցյալի մշակութային ժառանգության քննադատական օգտագործման ուղղությամբ։ Իր առավել նշանավոր երկերում սովետահայ ճարտարապետության փորձառու վարպետը հարազատ ու մտերիմ ձևերով ցույց տվեց ժողովրդին շենքերի նոր սոցիալիստական բովանդակությունը մարմնավորելու հաջող օրինակ։

Պայքարելով ճարտարապետական արվեստի ասպարեզում սոցիալիստական ռեալիզմի մեթոդի տիրապետման ու վարպետության հասնելու համար, յուրացնելով ազգային ճարտարապետության լավագույն ավանդները, սովետահայ ճարտարապետները տվյալ ժամանակաշրջանում ձգտում էին ստեղծել գործեր, որոնք առավել չափով արտահայտեին լենինյան գաղափարներով վերածնված հայ ժողովրդի պատմական նոր փուլը՝ սոցիալիստական հասարակության լուսավոր առօրյան ու պայծառ հեռանկարները։ Այդ ազնիվ ձգտումն իր բարերար դրսևորումը գտավ ոչ միայն բնակելի ու հասարակական մի շարք շենքերում, այլ մեր քաղաքների, հատկապես Երևանի առանձին քիչ թե շատ կազմավորված ճարտարապետական անսամբլներում։

Իր ստեղծագործական հաջողություններով սովետահայ ճարտարապետների գործունակ կոլեկտիվը դեռևս նախապատերազմյան տարիներին ողջ սովետական երկրում լայն ճանաչման ու դրվատանքի արժանացավ և համարվեց սովետական ճարտարապետների բազմահազար ջոկատի ստեղծագործական տեսակետից ընդունակ ու բեղմնավոր կոլեկտիվներից մեկը։

Սովետահայ ճարտարապետությունը կազմեց ազատագրված հայ ժողովրդի նյութական և հոգևոր մշակույթի բաղկացուցիչ մասը։

ԲԱԺԻՆ Զ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԸ
1920 - 1940

ԴԼՈՒԽ ՏԱՍՆՈՒԹԵՐՈՐԴ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԻ ՍՏՎԱՐԱՑՈՒՄԸ: ՀԱՅՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ

Հայ ժողովրդի արևմտյան հատվածը, որը հարյուրամյակներ շարունակ հնծում էր օսմանյան Թուրքիայի վայրագ տիրապետության տակ, XIX դարի վերջին տասնամյակներից սկսած ուղղակի ֆիզիկական բնաջնջման էր ենթարկվում։ Թուրքական շովինիստները, հետևողականորեն կենսագործելով պանթուրքական-պանիսլամական որոշակի քաղաքականություն, ծրագրված կարգով, անընդհատ նվազեցնում էին հայության թիվը՝ նրա իսկական պատմական հայրենիքում, մինչև որ 1895—1915 թվականների արյունալից քառամյակում զանգվածային կոտորածներով ու բռնագաղթեցումներով լիովին հայազրկեցին Արևմտյան Հայաստանը։

Թուրքական կառավարող շրջանները, ոչնչացնելով ավելի քան մեկ միլիոն հայերի, համոզված էին, որ մնացածներն էլ իրենց մահը կգտնեն արաբական անապատներում։ Բայց անապատները քշված հարյուր հազարավոր ծերերի, կանանց ու երեխաների որոշ մասին հաջողվեց փրկություն գտնել՝ անցնելով Սիրիայի ու Եգիպտոսի քաղաքներն ու գյուղերը կամ ավելի հեռուն՝ Հունաստան, Բուլղարիա, Ռումինիա, Ֆրանսիա և այլ երկրներ։ Արևմտահայության այդ տարագիր զանգվածները ցրվելով աշխարհով մեկ, բազմապատկեցին նախկին գաղթօջախները և ստեղծեցին՝ ստվարածավալ հայկական Սփյուռքը։

20-ական թվականների սկզբի տվյալներով ամենամարդաշատը Սիրիայի (ներառյալ նաև Լիբանանը) հայկական գաղութն էր։ Այնտեղ ապաստան էր գտել շուրջ 150 հազար հայություն, որից մոտ 90 հազարը՝ Հալեպում և նրա մոտակա շրջաններում, 18 հազարը՝ Բեյրութում, 8 հազարը՝ Դամասկոսում, իսկ մնացածները ցրված էին այլ քաղաքներում ու ավաններում[1]։

Մի կողմից հայության այդ հոծ զանգվածի առկայությունը, իսկ մյուս կողմից՝ տեղի համեմատաբար բարենպաստ պայմանները, Սիրիայի հայկական գաղութը դարձրին Սփյուռքի ամենակարևոր օջախներից մեկը։ Հալեպը դարձավ Մերձավոր արևելքի հայաշատ կենտրոնը։

---

1 Տե՛ս «Հայաստանի կոչնակ» (Նյու-Յորք), 1923, № 25, էջ 794։

Իր մեծությամբ և ազգային-հասարակական ակտիվ գործունեությամբ Սիրիայից հետո աչքի էր ընկնում ԱՄՆ-ի հայկական գաղութը։ Ամերիկայի գաղթօջախներում (ԱՄՆ, Կանադա և Լատինական Ամերիկայի երկրներ) միասին հաշվում էին ավելի քան 128 հազար հայեր։ Դրանից մոտ 125 հազարը ապրում էին Ամերիկայի Միացյալ Նահանգներում ու Կանադայում, իսկ ավելի քան 3 հազարը՝ Լատինական Ամերիկայի մի շարք երկրներում՝ Արգենտինայում, Բրազիլիայում, Ուրուգվայում, Մեքսիկայում, Կուբայում և այլուր[1]։

Կանադայի և Լատինական Ամերիկայի հայկական համայնքները աշխուժացան հատկապես 1922 թվականից հետո, որպես հետևանք Միացյալ Նահանգների կողմից ներգաղթի սահմանափակման մասին ընդունած օրենքի։ Դեպի Լատինական Ամերիկա հայերի հոսանքը ուժեղացավ հատկապես Ֆրանսիայի կողմից Կիլիկիան լքելուց և այն քեմալականների տնօրինությանը հանձնելուց հետո։ Կիլիկիայում քեմալականների կազմակերպած նոր ջարդերից փրկված մարաշցի, հաճնցի, այնթապցի ու զեյթունցի տարագիրները, որոնք ժամանակավոր ապաստան էին գտել Սիրիայի ու Լիբանանի գաղթականական կայաններում, զանգվածներով ձգվեցին դեպի Ամերիկա, որոնք, հաստատվելով Լատինական Ամերիկայի երկրներում, դարձան այդ շրջանի հայկական գաղթօջախների կորիզը։ Գնալով հայության թիվը այստեղ արագորեն աճեց ի հաշիվ Բալկանների, Սիրիայի, Լիբանանի, Իրանի և Թուրքիայի հայության։ Այդ մասին է խոսում այն փաստը, որ արդեն 1925 թվականին Լատինական Ամերիկայում հաստատվել էին ավելի քան 15 հազար հայ, իսկ Բուենոս-Այրեսը դարձել էր գաղութահայ կարևոր կենտրոններից մեկը։

Մերձավոր արևելքի ու Եվրոպայի մի քան երկրներում հայության համար ստեղծված անբարենպաստ պայմանների հետևանքով հեռավոր ամերիկյան մայրցամաք մեկնող գաղթականները երբեք էլ չգտան ավելի նպաստավոր պայմաններ։ Ինչպես մյուս երկրներում, այնպես էլ Լատինական Ամերիկայում, որոշ չափով ունևոր ու ինքնաբավ վիճակի հասած փոքրաթիվ հայ ընտանիքների կողքին հսկայական զանգված էին կազմում ծայրահեղ թշվառության մեջ իրենց գոյությունը հազիվ քարշ տվող հայ տարագիրները։ Չնայած Լատինական Ամերիկայի երկրներում հայերի թվի անընդհատ ավելացմանը, այնուամենայնիվ այդտեղ մեծ չափերի էր հասնում նրանց ապաազգայնացումը։

Քսանական թվականներին, ըստ իրենց մեծության, հայության հոծ համախմբման տեսակետից, երրորդ տեղը գրավում էին Բալկանյան երկրների՝ բուլղարահայ, ռումինահայ և հունահայ գաղութները։ Բուլղարիայում ապրում էին 46 հազար հայ, Ռումինիայում, Տրանսիլվանիայում և Բեսարաբիայում՝ 43 հազար։ Հունաստանում և Կիպրոսում հաշվում էին 79 հազար հայեր[2]։ Առաջին համաշխարհային պատերազմին հաջորդած զինադադարից և հատկապես Զմյուռնիայի կործանումից հետո, Հունաստանը, ուր վաղուց ի վեր հայկական գաղութ կար, դարձավ հյուրընկալ ապաստանը բյուրավոր հայերի։ Սակայն այդ տարիներին խիստ հարափոփոխ ու անկայուն քանակ էր կազմում հայերի թիվը Հունաստանում։

---

1 Տե՛ս «Հայաստանի կոչնակ» (Նյու-Յորք), 1923, № 3, էջ 85—86։

2 Տե՛ս նույն տեղում։

1922 թվականի վերջերին կատարված հաշվումների համաձայն արտասահմանյան մյուս երկրներում գաղութահայությունը տեղաբաշխված էր հետևյալ կերպ. Եգիպտոսում, Սուդանում և Հաբեշստանում՝ 28 հազար, Պարսկաստանում՝ 50 հազար, Հնդկաստանում, Ճավայում և Ավստրալիայում՝ 12 հազար, եվրոպական երկրներում (Ֆրանսիա, Անգլիա, Իտալիա, Հունգարիա, Ավստրիա, Չեխոսլովակիա, Հարավսլավիա, Բելգիա և այլն)՝ 36 հազար[1]։

Գնալով անընդհատ ստվարանում էր եվրոպական երկրների հայությունը։ Օրինակ, արդեն 1925 թվականին հայերի թիվը Ֆրանսիայում հասել էր մոտ 45 հազարի։ Ֆրանսահայ գաղութը, մերձավոր արևելքից և Միացյալ Նահանգներից հետո, ամենահոծ հայկական համախումբը եղավ արտասահմանում։

Բացի վերը թվարկած երկրներից, զգալի քանակությամբ՝ մոտ 10—15 հազար հայեր էլ ապրում էին Պաղեստինում և Միջագետքում։ Եթե այս բոլորին ավելացնենք նաև Թուրքիայում մնացած հայության թիվը, որը հասնում էր 281 հազարի[2] (150 հազարը Կ. Պոլսում, իսկ 131 հազարը՝ փոքրասիական գավառներում), ապա 1920—1922 թվականների տվյալներով գաղութահայության ընդհանուր թիվը կկազմի շուրջ 870 հազար մարդ։

Սակայն բերված այս թվերը միայն մոտավոր գաղափար կարող են տալ գաղութահայության քանակի մասին, քանի որ եղած աղբյուրները, անգամ միևնույն երկրի վերաբերյալ, միանգամայն տարբեր տվյալներ են ներկայացնում։ Դրա գլխավոր պատճառներից մեկն այն է, որ այդ տարիներին չի եղել ճշգրիտ վիճակագրություն։ Անբարենպաստ պայմանների հետևանքով հայությունը շատ երկրներում երկար չէր մնում միևնույն տեղում, այլ վարում էր թափառական կյանք և հնարավոր չէր լինում որոշել նրա իրական քանակը։ Ահա թե ինչու այդ տարիների գաղութահայության քանակի մասին տվյալները զանազան աղբյուրներում տատանվում են 800 հազարից մինչև մեկ միլիոն երկուհարյուր հազարի սահմաններում[3]։

Չնայած գաղութահայությունն իրենից ներկայացնում էր այդքան ստվար մի զանգված, բայց նրա գլխին դամոկլյան սրի պես կախված էր օտարացման վտանգը։ Ապազգայնացման վտանգի դեմ գաղութահայության դիմագրավման համար հսկայական նշանակություն ունեցավ 1920 թվականի նոյեմբերին Հայաստանում հաղթանակած սովետական իշխանությունը։ Սովետական Հայաստանի գոյության փաստը տարագիր հայությանը տվեց պայքարի ուժ, փրկության հույս և ներեր հավատ՝ պայծառ ապագայի նկատմամբ։

2. ՍՈՎԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼԵՐԸ ԳԱՂՈՒԹԱՀԱՅՈՒԹՅԱՆԸ ՕԳՆԵԼՈՒ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

Մինչև Հայաստանում սովետական իշխանության հաստատումը, օտար երկրներում թափառող արևմտահայ տարագիրները որոշ հույսեր էին կապում

1 Տե՛ս «Հայաստանի կոչնակ», 1923, № 3, էջ 85—86։

2 Տե՛ս նույն տեղում։

3 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 43, ց. 1, գ. 41, թ. 13, ֆ. 200, գ. 514, թ. 270 և 274։ Համմ. նաև ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 114, գ. 3, թ. 38—41 և 115։ «Հայաստանի կոչնակ», 1923, № 3, էջ 85—86 և № 25, էջ 794։ Թեոդիկ, Ամենուն տարեցույցը, Վենետիկ, 1926, էջ 577—590։ Ա. Աճեմեանյան, Սփյուռքը և հայրենիքը, 1962, էջ 7։

մեծ տերություններ հետ, քանի որ նրանք ժամանակին «ազատության ու անկախության» վերաբերյալ բազմաթիվ խոստումներ էին տվել հայերին։ Սակայն իզուր էին այդ ակնկալությունները իմպերիալիստական տերություններից, որոնց հետաքրքրում էր միայն իրենց շահը և ոչ թե փոքր ժողովուրդների ազատագրության գործը։

Սովետական Հայաստանի գոյությունը արմատական բեկում մտցրեց հայ ժողովրդի բազմադարյան պատմության մեջ։ Այն ոչ միայն ազատարար նշանակություն ունեցավ ֆիզիկական բնաջնջման անմիջական սպառնալիքից փրկված արևելահայության կյանքում, այլև դաժան ճակատագրի բերումով աշխարհով մեկ սփռված գաղութահայ աշխատավորության համար։ Հայրենաբաղձ սփյուռքահայության հիմնական զանգվածը որոշակի դիմադարձ կատարեց դեպի Սովետական Հայաստան, կանգնեց նրա պաշտպանության դիրքերում և անհողդողդ ցանկություն հայտնեց վերադառնալու իր նոր, ազատագրված սոցիալիստական հայրենիքը։

Սակայն, չնայած սփյուռքահայերի հայրենիք ներգաղթելու բուռն ձգտմանը, սովետական կառավարությունը սկզբնական շրջանում ի վիճակի չէր լայն մասշտաբներով հայրենադարձություն կազմակերպել։

Հայաստանի կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը քաջ գիտակցում էին, որ ներգաղթի հարցը ամենադժվարին լուծելի հարցերից մեկն է։ Միանգամայն պարզ էր, որ առանց երկրում կուտակված հարյուր հազարավոր գաղթականության տեղավորման, բնակարաններով, հողով, գյուղատնտեսական գործիքներով և անհրաժեշտ այլ միջոցներով ապահովելու, մի խոսքով առանց նրան սեփական տնտեսության հետ կապելու, չէին կարող լուծվել մի շարք այլ խնդիրներ։

Դեռևս 1920 թվականի դեկտեմբերից Հեղկոմը ձեռնամուխ եղավ գաղթականների վիճակի արմատական բարելավմանը։ Սակայն, շուտով, 1921 թվականի փետրվարին դաշնակցության խռովությունը զգալի վնաս պատճառեց նաև հանրապետությունում գտնվող արևմտահայ գաղթականության հարցի լուծմանը։ Ավելին. այդ ավանտյուրիստական խռովության ջախջախման օրերին, բնակչության շրջանում դաշնակցականները տարածելով կեղծ լուրեր, հերյուրանքներ ու սպառնալիքներ, մոտ մեկ տասնյակ հազար մարդ իրենց հետ տարան դեպի Պարսկաստան։ Հեղկոմը հարկադրված մի կողմ թողեց շինարար աշխատանքները և ձեռնամուխ եղավ նախ՝ փետրվարյան ավանտյուրայի լիկվիդացմանը, իսկ ապա նաև՝ Երևանից և այլ վայրերից Պարսկաստան անցած փախստականության վերադարձի կազմակերպմանը։

1921 թվականի մայիսին ՀՍԽՀ Ժողկոմխորհը քննարկեց ներքին գործերի ժողովրդական կոմիսար Պողոս Մակինցյանի «Գաղթականների խնդրի մասին» զեկուցումը և մշակեց կոնկրետ միջոցառումներ՝ ամեն կերպ նրանց օգնելու ուղղությամբ[1]։ Երկրում կուտակված գաղթականության, ինչպես նաև ներգաղթողների հետ կատարվող աշխատանքները ավելի կազմակերպված հունով առաջ տանելու նպատակով, 1921 թվականի հուլիսին ՀՍԽՀ Ժողկոմխորհի հատուկ դեկրետով վերացվեց ներքգործժողկոմատի կենտրոնական վերաբնակեց-

1 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 114, գ. 96, թ. 26։

ման բաժինը։ Դրա փոխարեն ստեղծվեց Ժողկոմխորհին առընթեր գաղթականական գործերի գլխավոր վարչություն (Գաղթվար), որին տրվեց ժողովրդական կոմիսարիատներին հավասար իրավունքներ[1]։

Անհրաժեշտ էր արագորեն ու արմատական ձևով լուծել գաղթականներին սեփական տնտեսություններով ապահովելու, նրանց շինարար աշխատանքի ներգրավելու և սովետական իշխանության շուրջը համախմբելու խնդիրները։ Այդ նպատակով Ժողովրդական կոմիսարների խորհուրդը իր սուղ միջոցներից առանձնացրեց 30 միլիոն ռուբլի[2]։ Շուտով հրավիրվեցին արևմտահայ գաղթականների բազմամարդ ժողովներ, կոնֆերանսներ ու համագումարներ, որոնցում արևմտահայերը արտահայտեցին իրենց դրական վերաբերմունքը դեպի սովետական իշխանությունը։ Ստեղծվեց նաև ՀՍԽՀ տերիտորիայում գտնվող գաղթականների հարցերով զբաղվող հատուկ օրգան՝ Արևմտահայ բյուրո, հասարակական ակտիվ գործիչ Գրիգոր Վարդանյանի գլխավորությամբ։

ՀՍԽՀ Ժողկոմխորհի դեկրետի համաձայն, սկսած 1921 թվականի գարնանից, հողագործության ժողովրդական կոմիսարիատը տեղացիների հետ համահավասար հող հատկացրեց գաղթականներին[3]։ Այդ նպատակով կատարվեց երկրում կուտակված գաղթականության հաշվառում, որը մասամբ պարզեց հողազուրկ գաղթականների քանակն ու կարիքները, ջանալով հնարավորության սահմաններում նրանց բավարարել հողով՝ սակավահող շրջաններից տեղափոխելով համեմատաբար հողառատ վայրեր, մի հանգամանք, որը պահանջում էր նյութական ու փոխադրական հսկայական միջոցներ։ Նրկոմ գաղթականական բաժնի 1923 թվականի փետրվարի 1-ի տվյալներով Հայաստանի գյուղական վայրերում (բացի Զանգեզուրից, Մեղրուց և Դարալագյազից) հաշվառման էին ենթարկվել 128.634 գաղթականներ, որոնցից հողով բավարարվել էին շուրջ 49,000 մարդ[4]։

Գաղթականության հարցի արմատական լուծմանը զուգընթաց, սովետական կառավարությունը լուրջ միջոցների ձեռնարկեց նաև նրա առօրյա հոգսերի թեթևացման ուղղությամբ, ընդարձակելով սննդակայանների, որբանոցների և նման այլ հաստատությունների ցանցը։ Գաղթականներին ձրի կամ արտոնյալ պայմաններով սիստեմատիկաբար տրամադրվում էին գյուղատնտեսական գործիքներ, անասուններ, սերմացու, բնակարաններ, շինարարական ու գույքավորման վարկեր և այլն։ Գաղթականների կարիքները հոգալու և նրանց համար պարենի ու սերմացուի կայուն ֆոնդ հիմնելու նպատակով, 1921 թվականի օգոստոսի 24-ին Ժողկոմխորհը որոշում կայացրեց պարենավորման ժողկոմատի միջոցներից պարբերաբար հացահատիկ հատկացնել։ Որոշվեց ստեղծել նաև գաղթականական տնտեսություններին սերմերով ապահովելու հատուկ ֆոնդ[5]։ Ժողկոմխորհի մի այլ դեկրետով (1921 թվականի 22 հոկտեմբերի) հաստատ-

---

1 Տե՛ս ՀՍԽՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 50, թ. 26—27։

2 Տե՛ս նույն տեղում, գ. 25, թ. 38։

3 Տե՛ս նույն տեղում, ֆ. 114, գ. 5, թ. 20։

4 Տե՛ս «Խորհրդային Հայաստան. 1920—1925 թթ.» (ժողովածու), էջ 69։

5 Տե՛ս ՀՍԽՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 114, գ. 5, թ. 59։

վից միանվագ և արտակարգ տուրք՝ գաղթականներին նյութական ծանր կացությունից դուրս բերելու համար[1]։

Գաղթականության նյութական ծանր դրության թեթևացման գործում սովետական կառավարությունն զգալի օգնություն ցույց տվեց Հայաստանի օգնության կոմիտեն (ՀՕԿ), որի գլխավոր վարչությունը գտնվում էր Երևանում, իսկ մասնաճյուղերը տարածվում էին սփյուռքահայ գաղթօջախներում, ինչպես նաև սովետական մյուս հանրապետությունների հայաբնակ վայրերում։

Այդ ուղղությամբ որոշ աշխատանք տարան նաև Մերձավոր արևելքի օգնության ամերիկյան կոմիտեն (Ամերկոմ), անգլիական կոմիտեն (Լոնդոնի քաղաքագլխի ֆոնդ) և բարեգործական այլ կազմակերպություններ ու հիմնարկներ, չնայած նրանց գործունեության մեջ երբեմն դրսևորվում էին նաև թշնամական քայլեր, որոնց դեմ հետևողական պայքար էր տանում սովետական կառավարությունը։

Հանրապետությունում գտնվող արևմտահայ գաղթականության հարցի լուծման ուղղությամբ նորաստեղծ սովետական իշխանության իրականացրած միջոցառումները տնտեսական ու քաղաքական կարևոր նշանակություն ունեցան։ Այդ հանգամանքը զգալի դեր խաղաց նաև սփյուռքահայ աշխատավորությանը դեպի Սովետական Հայաստան տրամադրելու և հայրենադարձության անկասելի հոսանք առաջացնելու գործում։ Եվ երկրի ժողովրդական տնտեսության վերականգնման վիթխարի ջանքեր ու հսկայական զոհողություններ պահանջող աշխատանքների հետ մեկտեղ, հանրապետությունում կուտակված գաղթականությանը բնակեցնելուն, հողով և այլ միջոցներով բավարարելուն զուգընթաց, իր գոյության առաջին իսկ օրերից սովետական կառավարությունը զգալի գործունեություն ծավալեց նաև արտասահմանում դեգերող հայ աշխատավորության առավել դժվարին կացության մեջ գտնվող մասի հայրենադարձությունը կազմակերպելու ուղղությամբ։

3. ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՈՒՄԸ ԴԵՊԻ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Սովետական իշխանության քաղաքականությունը որոշակի բեկում առաջ բերեց տարագիր հայության մեջ։ Անշուշտ սովետական իշխանության գոյությունն ինքնին ձգողական հզոր ուժով դեպի իրեն էր քաշում գաղութահայ աշխատավորներին։ Նրանք սևեռուն հայացքով հետևում էին հարազատ երկրի վերաշինությանը և օրեցօր հուսադրիչ լուրեր ստանալով կատարվող վերափոխությունների մասին, իրենք ևս ցանկանում էին մասնակից դառնալ մայր հայրենիքի վերածննդին։ Սովետական Հայաստանում գտնվող արևմտահայ գաղթականների նկատմամբ ցուցաբերվող հոգատար վերաբերմունքը և դրա հետևանքով կարճ ժամանակամիջոցում նրանց համար ստեղծված համեմատաբար բարվոք վիճակը անկեղծ համակրանքի ալիք առաջ բերեցին սփյուռքահայության շրջանում։ Դրա ակնբախ հաստատումն է Կ. Պոլսում հրատարակվող «Եր-

1 ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 114, գ. 5, թ.60։

կիր» թերթի հետևյալ վկայությունը. «Նախորդ կառավարությունը (խոսքը դաշնակցականների կառավարության մասին է — խմբ.) իր տիրապետության երեք տարիներու ընթացքին արևմտահայ փախստականության վրա խորթ աչքով նայեցավ և բնավ չի մտածեց արևմտահայ գյուղացիության հողը տրամադրելու մասին» մինչդեռ Սովետական Հայաստանի «ղեկավարները սկզբեն ի վեր իրենց գլխավոր մտահոգություններեն մեկն ալ դարձուցին արևմտահայ գյուղացիությունը հողի հետ կապելու խնդիրը»[1]։

Գաղթականության նկատմամբ սովետական կառավարության վերաբերմունքը հույսի ճառագայթներ նետեց սփյուռքահայ աշխատավորների հոգիները և նրանց դիմաշրջեց դեպի վերածնվող հայրենիքը։ Արտահայտելով նրանց տրամադրությունները «Հայաստանի կոչնակը» արձանագրում էր, թե բոլոր «գաղութներու մեջ հետզհետե ավելի կշեշտվի համակրանքը դեպի Հայաստանի ներկա կառավարությունը» դեպի «խորհրդային Հայաստանը, որուն դարձած են հիմա բնազդաբար բոլոր հայոց աչքերը»։ Վերլուծելով գաղութահայության ընդհանուր գոյավիճակը, թերթը միանգամայն ճիշտ կերպով հանգեց այն եզրակացության, որ «քաղաքական արդի դժբախտ պայմաններուն մեջ իրապես ալ հայերը չէին կրնար ուրիշ հենակետի մը վրա հույս դնել, եթե ոչ խորհրդային Հայաստանի Հանրապետության վրա, քանի որ հոն միայն կարելի էր ազգի համար ստեղծել կեդրոն մը, որ միևնույն ատեն շաղկապ մը ըլլար բոլոր ցրված հայերի միջև»[2]։

Գաղութահայության նկատմամբ սովետական կառավարության ու կոմունիստական կուսակցության ճիշտ քաղաքականության մշակման ու իրականացման գործում խոշոր ծառայություն մատուցեցին Ալ. Մյասնիկյանը (Մարտունի), Ս. Սրապիոնյանը (Լուկաշին), Ս. Համբարձումյանը, Ասք. Մռավյանը, Դ. Շահվերդյանը, Պ. Մակինցյանը, Աշ. Հովհաննիսյանը, Արտ. Կարինյանը, Ս. Փիրումյանը, Ս. Տեր-Գաբրիելյանը, Ար. Երզնկյանը, Ա. Եսայանը, Հովհ. Դուրգերյանը, Ն. Տեր-Ղազարյանը, Գր. Վարդանյանը, Աղ. Խանջյանը և պետական ու հասարակական ուրիշ գործիչներ։ Ալ. Մյասնիկյանը գտնում էր, որ գաղութահայ աշխատավորության և Սովետական Հայաստանի միջև պետք է ձգված լինի ամուր կամուրջ, քանի որ «խորհրդային Հայաստանը այն կայանն է, որը ապահովում է հայի ֆիզիկական գոյությունը, հայ աշխատավորի ազատությունը և բարեկեցությունը», որովհետև նա առհավոտյան է գաղութահայ աշխատավորության և առհասարակ տարագիր հայության ազատության ու երջանկության[3]։

Արտասահմանի հայկական շրջաններում լայն արձագանք գտավ և աշխատավորական զանգվածներին դեպի հայրենիք կողմնորոշելու գործում հսկայական նշանակություն ունեցավ Հայաստանի բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների պատգամավորների խորհուրդների առաջին համագումարի (1922 թվականի հունվար-փետրվար) դիմումը՝ ուղղված սփյուռքահայությանը։ Ազատագրված հայ ժողովրդի պետական իշխանության բարձրա-

1 «Երկիր», 1921, № 585։

2 «Հայաստանի կոչնակ», 1923, № 30, էջ 937—938։

3 Տե՛ս Ալ. Մյասնիկյան, Գաղութահայ աշխատավորություն, Նյու-Յորք, 1923, էջ 13—14։

գույն օրգանն այդ դիմումով սրտագին ողջունեց արտասահմանում ցրված հայ տարագիրներին։ Այնտեղ միաժամանակ հույս էր հայտնվում, որ երկրի վերաշինության և նրա լավագույն ապագայի ստեղծման գործում իրենց արժանի ավանդը կներդնեն նաև գաղութահայ աշխատավորները, որովհետև միայն այդ ուղիով, միայն Սովետական Հայաստանի հզորացմամբ ու բարգավաճմամբ կգա նաև նրանց փրկությունը։ Այդ տարիներին գաղութահայ միջավայրում անցյալի վերաքննության, նոր դիրքորոշման և ապա գործունեության շուրջը համառ պայքար էր մղվում տարբեր հոսանքների միջև։ Նման պայմաններում սփյուռքահայ աշխատավորությանը ճիշտ կողմնորոշելու համար կարևոր նշանակություն ուներ Սովետական Հայաստանից նրան ուղղված ամեն մի ճշմարիտ խոսք, առավել ևս հայ ժողովրդի պետական իշխանության բարձրագույն օրգանի դիմումը։ Ուստի բնավ պատահական չէր, որ լքված ու անտեղակ զանգվածների հայացքները աննկրկրայելիորեն ու աննահանջ կերպով աստիճանաբար դառնում էին դեպի Սովետական Հայաստան։

Գաղթաշխարհի տարբեր անկյուններում Սովետական Հայաստանի նկատմամբ համակրանքի առաջացման ու աճման համար մեծ նշանակություն ուներ հայրենիքի մասին ճիշտ ու բազմակողմանի ինֆորմացիայի տարածումը։ Այդ տեսակետից կարևոր դեր էին կատարում գաղութահայ դեմոկրատական մամուլը, ԱՄՆ-ի, Բուլղարիայի, Ֆրանսիայի ու այլ երկրների կոմունիստական կուսակցությունների մեջ ստեղծված հայկական սեկցիաները, ինչպես նաև առաջադիմական ուրիշ կազմակերպություններն ու հաստատություններ։

Մայր հայրենիքի և գաղութահայության միջև որպես կապի կարևոր օղակներ էին ծառայում Սովետական Ռուսաստանի և Հայկական ԽՍՀ, իսկ հետագայում ԽՍՀՄ-ի դիվանագիտական, տնտեսական ու առևտրական ներկայացուցիչները, արտասահման մեկնող առանձին պատվիրակությունները, սովետահայ մամուլը և այլն։

Սովետական Հայաստանի և սփյուռքահայության միջև կամուրջ էր ծառայում նաև Հայաստանի օգնության կոմիտեն։ ՀՕԿ-ի կենտրոնական վարչությունը, նրա բազմաթիվ մասնաճյուղերը, արտասահման մեկնող պատվիրակությունները, այնտեղ ուղարկվող դիագրամաները, պատկերազարդ ալբոմները, կինոնկարները և նույնիսկ առօրյա գրությունները հսկայական նշանակություն էին ունենում սփյուռքահայ աշխատավորներին հայրենիքի հետ կապելու, նրանց բուրժուական-ազգայնական կուսակցությունների ու հոսանքների ազդեցությունից հանելու գործում։

Սկզբնական շրջանում թույլ էր կապը Սովետական Հայաստանի ու գաղութահայության միջև։ Այդ հանգամանքն օգտագործում էին հակասովետական տարրերը, հատկապես դաշնակցականները, քննադատելով սովետական կառավարությանը, թե իբր «բոլշևիկները չեն ուզում կապ պահպանել գաղութների հետ»։ Իսկ երբ կապը ստեղծվեց և գնալով ամրապնդվում էին հարաբերությունները Սփյուռքի ու հայրենիքի միջև, դաշնակցականները սկսեցին սաստիկ անհանգստանալ։ Ուստի դիմելով ամեն տեսակ խարդախումների, նրանք ձգտում էին մոլորության մեջ գցել գաղութահայությանը։

Բացի դաշնակցությունից, այդ տարիներին գաղութահայության կյանքում որոշակի դեր էին խաղում նաև ռամկավարներն ու հնչակյանները, որոնք, սա-

կայն, դեռ այն ժամանակից հիմնականում կողմնակից էին գաղութահայության պրոսովետական օրիենտացիային։

Բայց ամենից ուշագրավն ու ողջունելին այն էր, որ արդեն սաղմնավորվել և օրըստօրե աճում ու հզորանում էին կոմունիստական կազմակերպությունները Ամերիկայի, Ֆրանսիայի, Բալկանների և այլ երկրների հայկական գաղթօջախներում[1]։

Հայաստանում սովետական իշխանության հաստատումից հետո, սփյուռքահայ հասարակական-քաղաքական հոսանքների և ուժերի միջև մղվող պայքարի հիմնական առանցքը դարձել էր վերաբերմունքը դեպի մայր հայրենիքը։

Դեպի Սովետական Հայաստան՝ որպես հայության միակ հայրենիքի, գաղութահայության դիրքորոշման մեջ որոշակի վճռաստացնող նշանակություն ունեցավ Լոզանի կոնֆերանսը, որը վերջնականապես ցրեց արևմտյան պետությունների հետ կապված սփյուռքահայության որոշ շրջանների բոլոր ակնկալությունները։ Լոզանի կոնֆերանսում, Սևրի պայմանագիրը գերեզմանելու հետ մեկտեղ, մոռացության տրվեց նաև հայկական հարցը, որն արդեն փաստորեն հանգում էր աշխարհով մեկ ցրված հայ գաղթականության վիճակը շատ թե քիչ բարվոքելու խնդրին։ Սևրում իրենց «լուծումն» ստացած բոլոր հարցերը, այդ թվում և հայկական հարցը, վերաքննվեցին 1922 թվականի նոյեմբերին Լոզանում հրավիրված կոնֆերանսում։ Բայց, ինչպես միշտ, այնպես էլ այս անգամ, հայկական հարցը առուծախի առարկա դարձավ արևմուտքի իմպերիալիստական դիվանագիտության ու բուրգական կառավարության միջև։ Ավելին, հայկական հարցն այստեղ փոխարինվեց լոկ հայկական օջախի ու գաղթականներին իրենց նախկին բնակավայրերը վերադառնալու թույլտվություն տալու հարցով։

Չնայած Լոզանի կոնֆերանսի մասնակիցները հրապարակորեն հանձնառու եղան չցրվել՝ մինչև մի հարմար ապաստան չապահովեն անպաշտպան մնացած հարյուր հազարավոր հայ տարագիրների համար, այնուամենայնիվ, 1923 թվականի հուլիսի 24-ին Լոզանում ստորագրվեց մի պայմանագիր, ուր խոսք անգամ չկար հայերի մասին։

Արևմտյան տերությունները իրականում ոչ մի վճռական ու լուրջ քայլ չարեցին զանազան երկրներում անասելի թշվառության մեջ գտնվող բազմահազար հայ տարագիրների համար։ Հայ ժողովրդի «բարեկամներ» ձևացնող արևմտյան տերությունները, կարգավորելով իրենց հետաքրքրող խնդիրները, հայ գաղթականության հարցը ձևականորեն, մի որևէ բան արած լինելու համար, կտակեցին տխրահռչակ Ազգերի լիգայի անօրինության։ Ահա թե ինչու Լոզանի կոնֆերանսից հետո, առավել հրամայական դարձավ սփյուռքահայերի հայրենադարձության խնդիրը։

4. ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅԵՐԻ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ 1921—1925 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

Հայրենիքը դեպի իրեն էր գրավում մեծ թվով սփյուռքահայ աշխատավորների ոչ միայն Մերձավոր ու Միջին արևելքի երկրներից, ուր տնտեսական խիստ

1 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 115, ց. 3, գ. 303, թ. 31—37։

անբարենպաստ վիճակ գոյություն ուներ հայ տարագիրների համար, այլև համեմատաբար բարձր կենսամակարդակ ունեցող Եվրոպայից, Ամերիկայից ու հայկական այլ գաղթօջախներից։

Գաղութահայերի մեջ սկիզբ էր առել և արագորեն ծավալվում էր հայրենասիրական շարժումը՝ «դեպի տուն», «դեպի հայրենիք, դեպի Խորհրդային Հայաստան». նրանց պատկերավոր խոսքերով ասած՝ դեպի «ավետյաց երկիր»։

Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտկոմը և սովետական կառավարությունը անընդհատ բազմաթիվ դիմումներ ու նամակներ էին ստանում սիլուքահայ աշխատավորներից, իրենց Հայաստան գալու հնարավորություն ընձեռելու խնդրանքով։ Այդ դիմումների ու նամակների մեջ հատակորեն արտահայտվում էր ցիրուցան տարագիր զանգվածների իսկական կյանքն ու մտայնությունը, հայրենադարձվելու նրանց հաստատ ցանկությունը։ Եվ չնայած գոյություն ունեցող լուրջ դժվարություններին, կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը անտարբեր չմնացին սիլուքահայ աշխատավորների դառն ճակատագրի և դրանից բխող նրանց խնդրանքների նկատմամբ, այլ հոգատարությամբ ունկնդրեցին նրանց ձայնին և հնարավորության սահմաններում ջանացին կատարել նրանց բաղձանքները։

Սկզբնական շրջանում հատկապես շատ դիմումներ էին ստացվում Միջագետք (Իրաք) ապաստանած հայ տարագիրներից, որոնք գտնվում էին միանգամայն դժնդակ պայմաններում։ Դրանք հիմնականում վասպուրականցիներ էին, որոնք թուրքերի հարձակման հետևանքով 1918 թվականի գարնանը զանգվածաբար փորձել էին փախչել Անդրկովկաս, սակայն Վան-Իգդիր ճանապարհը թուրքական բանակի կողմից փակվելուց հետո, անասելի զրկանքներ կրելով ու բազմաթիվ զոհեր տալով, ստիպված երկարատև ճանապարհ էին կտրել դեպի Պարսկաստան, հույս ունենալով այնտեղից անցնել Անդրկովկաս։ Նրանց այդ մտադրությունը ևս չի իրականանում, քանի որ թուրքական զորքերն արդեն մտել էին Պարսկաստան և փակել դեպի Անդրկովկաս տանող ճանապարհը։ Վասպուրականցիները և նրանց միացած Խոյի, Սալմաստի և Ուրմիայի հայերն ու նեստորական ասորիները ստիպված շարժվում են դեպի Հարավային Պարսկաստան։ 1918 թվականի հունիսի վերջերին Պարսկաստանում գտնվող անգլիական զորքերի հրամանատարությունը գաղթականների այդ զանգվածը որոշակի նկատառումներով օգտագործելու համար վերցնում է իր «հովանավորության» տակ։ Նահանջող գաղթականները օգոստոսի սկզբներին հասնում են Համադան, բայց անգլիական իշխանությունները արգելում են նրանց մտնել քաղաք։ Անգլիացիները համոզում են գաղթականներին, թե ստեղծված պայմաններում ամենահարմար ելքն այն է, որ տեղավորվեն Միջագետքում, մի առժամանակ այնտեղ մնան, խոստանալով հետագայում նրանց տեղափոխել Հայաստան[1]։

Միջագետքի սահմանը ոտք կոխելուց հետո անգլիացիք բացի նրանցից, ովքեր համաձայնվում են ընդգրկվել անգլիական զորքերի կազմում, անմիջապես զինաթափում են հայերից ու ասորիներից բաղկացած յոթ հազարի հասնող գաղթականների պաշտպաններին։ Ստեղծվում են մի քանի հայ-ասորական գու-

---

1 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 114, գ. 267, թ. 119—121։

մարտակներ և ուղարկվում Զենջան՝ օգնելու Թուրքերի դեմ կռվող անգլիական զորքերին[1]: Գաղթականությունը կարճ ժամանակամիջոցում համոզվում է, որ անգլիական գաղութարարների իսկական նպատակն է ստեղծել հայերից ու ասորիներից բաղկացած զինված ուժեր և նրանց միջոցով իրենց դիրքերն ամրապնդել արաբական աշխարհում, միաժամանակ անձեռնմխելի դարձնել Հարավային Պարսկաստանի ու Միջագետքի նավթահանքերը: Շուտով հայ գաղթականությունը ծառանում է այդ խաբեության դեմ և անգլիական իշխանություններից պահանջում իրագործել Հայաստան փոխադրելու մասին տրված խոստումները: Անգլիական իշխանությունները, զգալով գաղթականության բուռն ըմբոստացումը, սկսում են ձերբակալել ու պատիժների ենթարկել առավել աչքի ընկնող տարրերին, իսկ հիմնական զանգվածին՝ զինված պահակախմբերի հսկողության տակ, փոխադրում են Բաղդադի շրջանը, որտեղ նրանց տեղավորում են հատուկ ճամբարներում:

Ստույգ վիճակագրական տվյալների բացակայության հետևանքով, դժվար է որոշակիորեն ասել, թե որքան հայեր կային Միջագետքում: Ըստ վկայությունների, 1918 թվականի աշնանը Համադանում, Քիրմանշահում և Բաքուբայում գտնվում էին ավելի քան 16 հազար հայ, որից 15 հազարը միայն Բաքուբայում[2] (այլ աղբյուրների համաձայն 1919 թվականին Բաքուբայում կային 18—19 հազար հայեր): Այսպիսով, Վասպուրականի, Ուրմիայի, Սալմաստի և Խոյի տարագիր հայության մեծ մասը տեղավորված էր Բաղդադից ոչ հեռու գտնվող Բաքուբա ավանում: Այնտեղ տարածված սովն ու համաճարակը օրական տասնյակ զոհեր են տանում: Անգլիական իշխանությունները գաղթականներին տալիս էին չնչին նպաստ, որի դիմաց տղամարդկանց ձրի աշխատեցնում էին այնտեղ կառուցվող երկաթուղու վրա:

Ուղղակի անխուսափելի կորստյան ճիրաններում էր գտնվում միջագետքահայ գաղթականությունը, երբ Հայաստանում սովետական կարգեր հաստատվեցին: Այդ լուրը ցնծությամբ ընդունվեց Միջագետքի հայ տարագիրների կողմից և վերակենդանացավ հայրենիք վերադառնալու նրանց հույսը: Շուտով նրանք կապվեցին Պարսկաստանում ՌՍՖՍՀ լիազոր ներկայացուցչության, ապա նաև Սովետական Հայաստանի հետ: Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտկոմը և սովետական կառավարությունը, ծանոթանալով Միջագետքի հայության ծանր կացության հետ, անմիջապես միջոցներ ձեռնարկեցին նրանց վիճակը բարելավելու, ապա նաև հնարավորության սահմաններում հայրենիք վերադարձնելու ուղղությամբ:

1921 թվականի հուլիսի 2-ին Հայաստանի կոմունիստական կուսակցության Կենտկոմը հատուկ կոչով դիմեց Համադանի, Քիրմանշահի, Մոսուլի և Նահրէլօմարի գաղթականական զանգվածներին: Կոչում նշված էր, որ «ՀԿԿ-ը, ամենամեծ համակրանքով և նույնքան խորունկ վշտով, հետևում էր ձեր դերմարդկային գողգոթային, անասելի տառապանքներին, որ կտանիք ամբողջ երեք երկար տարիներ ի վեր:

Հայաստանի կոմունիստական կուսակցությունը, մինչև այսօր ամբողջա-

---

1 Տե՛ս ՀՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 200, գ. 125, թ. 9 և 16:

2 Տե՛ս նույն տեղում, ֆ. 114, գ. 367, թ. 119—121:

պես կտրված ըլլալով ձեզմե՝ չըսավ և չէր կարող ըսել իր պատմական խոսքը՝ մինչև այն ատեն, երբ տակավին Հայաստանի և հայ աշխատավորության բախտը իրենց ձեռքը բռնած ունեին ազգային-բուրժուական կուսակցությունները։

...Ձեռք առնելով Հայաստանի իշխանությունը,— հայ գյուղացիության և աշխատավոր ժողովրդի կամքով, այժմ մեր առաջին աշխատանքների հետ միասին ձեռնարկում ենք ձեր տառապանքներուն այլևս միանգամայն ընդմիշտ վերջ տալու՝ անխուսափելի և անհրաժեշտ պահանջին»[1]։

Հայաստանի կոմկուսի Կենտկոմը գնահատելով ոչ հեռու անցյալի դեպքերը և հայ ժողովրդին հասած աղետները, ոչ միայն Միջագետքի տարագիրներին, այլև համայն աշխարհով մեկ ցրված հայությանը կոչ արեց վերադառնալ հայրենիք՝ Սովետական Հայաստան և նվիրվել շինարար աշխատանքի։

«Կոչ անելով վերադառնալ դեպի հայրենի երկիրը, ի խնդիր անոր շինարարության, ի խնդիր ձեր աստանդական կյանքին, Հայաստանի կոմունիստական կուսակցությունը և խորհրդային իշխանությունը պիտի գործ դնեն իր բոլոր միջոցները, ապաստան տալու, վերաբնակեցնելու համար ձեզի, գյուղերու թե քաղաքներու մեջ, պիտի տա իր բոլոր կարելի և անկարելի միջոցները, անելով իր լավագույն ճիգը՝ ընդառաջելու համար ձեր կարիքներին, մինչև որ դուք ևս իր հերթին կարողանաք նվիրվել մեր երկրի վերաշինության սրբազան գործին»[2]։

Միջագետքի հայ տարագիրների վիճակը լուրջ մտահոգություն էր պատճառում սովետական կառավարությանը։ 1921 թվականի ամռանը Միջագետքի գաղթականության ներկայացուցիչները բանակցությունների մեջ մտան Թավրիզում գտնվող ՀՍԽՀ գաղթականական գործերի լիազոր Գր. Վարդանյանի, ինչպես նաև Երևան մեկնած իրենց ներկայացուցիչների միջոցով՝ ժողկոմխորհի նախագահ Ալ. Մյասնիկյանի հետ և խնդրեցին շուտափույթ կերպով գաղթականությանը փոխադրել Հայաստան[3]։ 1921 թվականի սեպտեմբերի 4-ին Միջագետքի հայ տարագիրների ներկայացուցիչ Ազատ Սիմոնյանը նկարագրելով իրենց ծանր վիճակը, սովետական կառավարությանը հայտնում էր, որ հուլիսի 20-ից անգլիացիները դադարեցրել են գաղթականությանը տրվող մթերքները, նրան մատնելով աներևակայելի տնտեսական ճգնաժամի։ Ա. Սիմոնյանն այնուհետև գրում էր, որ «բնաջնջումի նախօրյակին այս բազմաչարչար գաղթականությունը կսիրե հուսալ իր փրկությունը միայն իր հարազատ հայրենիքից։ Այժմ լիահույս ենք, որ Խորհրդային Հայաստանի կառավարությունը ոչ մի զոհողության ու դժվարության առաջ կանգ չի առնի, փրկելու համար գաղթականության այդ բեկորները, տեղափոխելով Բասրայից դեպի հարազատ հայրենիք, որտեղ միայն հնարավորություն պիտի ունենան լծվելու խաղաղ և շինարար աշխատանքի»[4]։

Նշելով ստեղծված վիճակից սովետական կառավարությունը ձեռնամուխ եղավ Միջագետքի հայ տարագիրների հայրենադարձության կազմակերպմանը։ 1921 թվականի դեկտեմբերի 13-ին ՀՍԽՀ ժողկոմխորհի նախագահությունը

---

1 ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 114, գ. 89, թ. 38—39։

2 Նույն տեղում։ Տարագիրներին ավելի հասկանալի լինելու նպատակով կոչը գրված է արևմտահայերեն։

3 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 114, գ. 267, թ. 122։

4 Նույն տեղում, ֆ. 114, գ. 5, թ. 61։

քննարկեց Միջագետքից Հայաստան ժամանող 3000 գաղթականներին ընդունելու հարցը և ձեռք առավ շտապ միջոցներ՝ նրանց տեղավորելու, բնակեցնելու, հողով ապահովելու և նյութական աջակցություն ցույց տալու ուղղությամբ[1]։ 1921 թվականի դեկտեմբերի կեսերին Բաթում ժամանեց առաջին շոգենավը՝ մոտ 3000 գաղթականով[2], որոնք հիմնականում տեղավորվեցին Ալեքսանդրապոլի, Բասարգեչարի և Ղամարլուի շրջաններում։

1922 թվականի հունվարի 10-ին Բաթում ժամանեց ներգաղթողների մոտ 3000 մարդուց բաղկացած երկրորդ քարավանը, որին ընդունելու և տեղավորելու համար սովետական կառավարությունը ձեռք առավ արտակարգ միջոցներ։ Այդ խմբում ներգաղթածները ժամանակավորապես տեղավորվեցին Ղամարլուի զորանոցներում, որպեսզի գարնանը տեղափոխվեին Վեդու շրջան։

Հայաստանի այն ժամանակի տնտեսական ծանր վիճակի, բնակարանների ու պարենամթերքի անբավարարության պայմաններում սովետական կառավարության այդ քայլը հոգատարության մի ակտ էր, որը կատարվեց Միջագետքի անապատներում անխուսափելի ոչնչացման դատապարտված ժողովրդի կյանքը փրկելու համար։

Ինչպես ճանապարհին, այնպես էլ երկրում տեղավորվելուց հետո ներգաղթողներին ցույց տրվեց լայն օգնություն։ Նրանք օգտվում էին առանց մաքսի ու տուրքի մեծ չափերի հասնող բեռների փոխադրության իրավունքից, ստանում էին անվճար բժշկական օգնություն և այլն։ Այնտեղ, ուր նրանք հաստատում էին մշտական բնակություն, ստանում էին հող, լծկաններ, գյուղատնտեսական գործիքներ, սերմացու, բնակարաններ, վարկեր, շինանյութ և այլ միջոցներ։

Հաջորդ տարիներին Միջագետքում մնացած հայ գաղթականության մեծ մասը նույնպես վերադարձավ Սովետական Հայաստան։

Այսպիսով, Միջագետք ապաստանած հայ գաղթականության զգալի մասը՝ ավելի քան 9000 մարդ, Հայաստան ներգաղթեց 1921 թվականի վերջերին և 1922 թվականի սկզբներին։ Միջագետքից ժամանած հայրենադարձները տեղավորվեցին հիմնականում Վեդու, Ղամարլուի, Բասարգեչարի և Ալեքսանդրապոլի շրջաններում և հնարավորություն ստացան նոր կյանք կերտելու հայրենի հողի վրա[3]։

* * *

Սրբ Միջագետքի տարագիրների առաջին քարավանների հայրենադարձության լուրը հասավ հայկական մյուս գաղթօջախները. էլ ավելի բուռն դարձավ Սովետական Հայաստան ներգաղթելու սփյուռքահայ աշխատավորների ձգտումը։

Սովետական կառավարության ուղղած նման բովանդակությամբ նամակների ու դիմումների հեղինակները մեծ մասամբ աշխատավոր մարդիկ էին, որոնք նկարագրելով իրենց ծանր վիճակը արտասահմանում, խնդրում էին

---

1 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 25, թ. 56։

2 Տե՛ս նույն տեղում, ֆ. 114, գ. 96, թ. 654։

3 Տե՛ս «Խորհրդային Հայաստան. 1920—1925 թթ.» (ժողովածու), էջ 69։

շուտափույթ կերպով իրենց փրկել կորստյան ճիրաններից և հնարավորություն տալ ներգաղթելու Հայաստան։

Սփյուռքահայերի մի խումբ ՀՍԽՀ ժողկոմխորհին ուղարկած դիմումի մեջ գրում էր. «...Գաղթականի ցուպը ձեռքներին օտար երկրներու տակ հուսաբեկ ու գլխիկոր, գրեթե կյանք մուրացող հայության բեկորներն իրենց աչքերը հառած են պատմական Արարատի ստորոտը հարություն առնող, վերածնվող մայր հայրենիքին, անշուշտ այն խոր հավատքով, որ նրա իմաստուն վարիչները միշտ նկատի կունենան արտասահմանի իրենց տառապող եղբայրների ցավն ու թշվառությունը...

...Մեր միակ հույսը կմնա ներգաղթը, որուն փութով իրականացման համար կխնդրենք ձեր ընկերական հեղինակությունը, ձեր միջամտությունը...»[1]։

Ընդառաջելով այդ ցանկություններին սովետական կառավարությունը 1923 թվականին իրականացրեց մոտ 1000 հոգու ներգաղթը Թուրքիայից, Պարսկաստանից և այլ վայրերից[2]։

Հայ տարագիրները, որպես օտարազգիներ, բազմաթիվ հալածանքների էին ենթարկվում կապիտալիստական երկրներում։ Այսպես, օրինակ, բուլղարական կառավարությունը որոշել էր տեղահանել Ֆիլիպեի և Թաթար-Բազարճիկի շրջաններում հողագործությամբ զբաղվող հայ գաղթականներին՝ այդ վայրերում ծխախոտագործ մակեդոնացի վերաբնակիչներին տեղավորելու համար։

Այդ տարիներին առանձնապես ծանր կացության մեջ էին գտնվում հունահայ տարագիրները։ Հունական կառավարության 1923 թվականի հունվարին հրապարակած օրենքի համաձայն բոլոր օտարահպատակները ազատվում էին պետական ծառայություններից, գործարաններից և այլ աշխատավայրերից՝ հույն գաղթականներին աշխատանքով ապահովելու նպատակով։ Հույն գաղթականներին բարեբեր վայրերում տեղավորելու համար հայերին Թրակիայից տեղափոխում էին Մակեդոնիայի և Պելեպոնեսի անմշակ շրջանները։ Տնտեսական ու քաղաքական անտանելի վիճակի մեջ էին դրվում քիչ թե շատ ինքնաբավ տնտեսություններ ստեղծած հայ գաղթականները։

Տագնապալի վիճակ էր ստեղծվել նաև Թուրքիայում մնացած հայերի համար։ Դ. Շահվերդյանի Կ. Պոլսից ՀՍԽՀ ժողկոմխորհին ուղարկած զեկուցագրի համաձայն, թուրքական իշխանությունների գաղտնի կարգադրությամբ այնպիսի դրություն է ստեղծվում, որպեսզի հայերն այլևս չկարողանան մնալ իրենց նախկին տեղերում։ Նրանք ստիպված հեռանում էին բնակավայրերից, թողնելով իրենց ամբողջ ունեցվածքը, որպեսզի կարողանային ազատվել այն ծանր պայմաններից, որոնց մեջ նրանց դնում էին թուրքական իշխանությունները։ Իրենց բնակավայրերից դուրս գալու ժամանակ հայերի անձնագրերի վրա թուրքական իշխանությունները նշում էին, որ նրանք պարտավոր են հեռանալ Թուրքիայի սահմաններից։ Գավառներից հասնելով Կ. Պոլիս, հայ տարագիրները որոշ ժամանակ մի կերպ գլուխ էին պահում գաղթականներին նպաստավորող ազգային-բարեգործական ու խնամատարական հաստատությունների տված միջոցներով։ Այդ ժամանակաշրջանում տարագիրները դիմում են Սովետական

1 ՀՍՍՀ ՀՀՍՇ ԿԿԱ, ֆ. 178, գ. 975, թ. 19։

2 Տե՛ս նույն տեղում, ֆ. 116, ց. 1, գ. 2352, թ. 23։

Հայաստանի ներկայացուցիչ Դ. Շահվերդյանին, որպեսզի նրանց թույլատրվի մեկնելու հայրենիք։ Նկարագրելով Թուրքահայության այս անմխիթար վիճակը Դ. Շահվերդյանը խնդրում էր հանրապետության Ժողկոմխորհից, ըստ հնարավորին արագացնել նոր հայրենադարձության իրականացումը[1]։

Ինչպես առանձին երկրներում հայ տարագիրների վիճակի մասին բերված վերոհիշյալ տեղեկությունները, այնպես էլ այդ շրջանում նրանցից ստացվող բազմաթիվ դիմումներն ու նամակները, ակնբախորեն վկայում են այն մասին, որ 1923—1924 թվականներին ևս գաղութահայությունը առաջվա նման գրտնվում էր խիստ անորոշ ու դժվարին վիճակում։ Թեև այլևս վերացել էր 1922 թվականի խուճապային փախուստն ու զանգվածային տարագրությունը, բայց դարձյալ շարունակվում էին անհույս դիգբրումները, բռնի կամ կամավոր մակընթացությունները ու տեղաշարժությունները։ Շատ դեպքերում հայ տարագիրները հաճախ էին կարողանում արմատներ գցել իրենց ասպնջական երկրների մեջ և ահա նորից արմատահան էին արվում։

Այսպիսի պայմաններում, չնայած գոյություն ունեցող լուրջ դժվարություններին, սովետական կառավարությունը նպատակահարմար գտավ 1924 թվականին շարունակել սփյուռքահայ աշխատավորների հայրենադարձությունը։

ՀՍԽՀ Ժողկոմխորհի միջնորդությամբ 1924 թվականի մարտի 3-ին Անդրկենտգործկոմի նախագահությունը որոշում կայացրեց 1924—1925 թվականների ընթացքում արտասահմանյան երկրներից, հիմնականում Հունաստանից, Միջագետքից և Թուրքիայից Սովետական Հայաստան ընդունել 10.000 գաղթական։ Այդ նպատակով հատկացվեց 1,7 միլիոն ռուբլի։ 1924 թվականի մայիսից սկսվեց սփյուռքահայերի հայրենադարձությունը՝ Բաթումի և Ջուլֆայի վրայով[2]։

1924 թվականի հոկտեմբերի 15-ին ՀՍԽՀ Ժողկոմխորհը քննարկեց Հայաստան ներգաղթող 10.000 գաղթականների ընդունման, տեղավորման և այլ միջոցառումների իրականացման մասին Ներքգործժողկոմատի զեկուցումը։

Նախապատրաստական այս աշխատանքներից հետո, սկսվեց հայրենադարձությունը։ 1924 թվականի ընթացքում Հունաստանից, Սիրիայից, Թուրքիայից, Ֆրանսիայից և այլ երկրներից Սովետական Հայաստան ընդունվեցին 4167 գաղթական և որբ[3]։

Նկատի ունենալով ներգաղթողների նյութական ծանր վիճակը, ՀՍԽՀ Ժողկոմխորհը հատուկ քննարկեց այդ հարցը։ Գաղթականական հանձնաժողովին հանձնարարվեց մշակել առաջարկներ և կազմել նախահաշիվ՝ գաղթականությանը տեղավորելու, հողի հետ կապելու և նրանց այլ կարգի օգնություն ցույց տալու ծախսերի վերաբերյալ։ Շուտափույթ և անմիջական խնամատարության կարիք ունեցող գաղթականների թիվը հասնում է 9118 մարդու։ Նրանց օգնելու համար հանրապետության կառավարությունը բաց թողեց ավելի քան 636 հազար ռուբլի[4]։

---

1 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 305, թ. 39։
2 Տե՛ս նույն տեղում, գ. 419, թ. 153։
3 Տե՛ս նույն տեղում, գ. 418, թ. 28։
4 Տե՛ս նույն տեղում, գ. 421, թ. 55—56։

* * *

1924 թվականի աշնանից սկսած հայրենադարձությունը ավելի զանգվածային բնույթ ստացավ։ Նկատի ունենալով այդ, 1925 թվականի հունվարին կազմակերպվեց ՀՍԽՀ Ժողկոմխորհին առընթեր գաղթականության հարցով զբաղվող հատուկ հանձնաժողով՝ Ժողկոմխորհի նախագահի տեղակալ Ասքանազ Մռավյանի գլխավորությամբ[1]։ Այդ հանձնաժողովի ծավալած գործունեության շնորհիվ 1925 թվականից սկսած հայրենադարձության իրականացման և հանրապետությունում եղած գաղթականների տեղավորման աշխատանքներն ընթացան ավելի կազմակերպված և պլանավորված կարգով։ Այդ գործն ավելի կենտրոնացնելու և գաղթականական տնտեսությունների դրությունը արագորեն բարելավելու նպատակով, 1925 թվականի սեպտեմբերին վերակառուցվեց գաղթականական հատուկ հանձնաժողովը և հիմնադրվեց Ժողկոմխորհին առընթեր աշխատավորական ներգաղթի հանձնաժողով։ Վերջինիս տրվեցին ավելի մեծ իրավունքներ ու լիազորություններ։

1925 թվականի գարնանը Ժողկոմխորհին առընթեր գաղթականական հատուկ հանձնաժողովը, ի կատարումն ՀԿԿ կենտկոմի և Ժողկոմխորհի որոշումների, քննարկեց Միջագետքից և Հունաստանից հերթական հայրենադարձություն կազմակերպելու խնդիրը։ Որոշվեց 1925 թվականի ընթացքում վերոհիշյալ երկրներից ընդունել 10 հազար տարագիր, այդ թվում Հունաստանից՝ 8000 հոգի։

Հունաստանի և Միջագետքի հայ գաղթականության նկատմամբ սովետական կառավարության այդ նոր մարդասիրական քայլը կատարվեց ելնելով այն դժնդակ պայմաններից, որոնց մեջ շարունակում էին տառապել տարագիրներն այդ երկրներում։ 1924 թվականը ամենացավոտ տարին հանդիսացավ հունահայ գաղթականության կյանքում։ Հունաստանում ասպնջականություն գտած հայությունը ներքին տարուբերումներից հետո հազիվ էր սկսել ինքնուրույնաբար տեղավորվել Արևմտյան Թրակիայի ու Մակեդոնիայի շրջաններում, երբ նորից՝ կառավարության հրամանով, պետք է 15 օրվա ընթացքում լքեր իր տունն ու տեղը, աշխատանքը, իր կատարած ցանքն ու մշակած այգիները և հեռանար դեպի Հին Հունաստանի անբերրի ապառաժները։ Դրանով հունահայ գաղութի ինքնաբավ դարձած մասը փաստորեն վերստին մուրացիկ ու թափառական վիճակի մեջ էր դրվում։

Խիստ ծանր կացության մեջ էին գտնվում նաև Միջագետքում մնացած հայ տարագիրները, որոնք հայրենիք ուղարկած դիմումի մեջ նկարագրելով իրենց վատթար դրությունը, վստահություն էին հայտնում, որ Հայաստանի կառավարությունը, որպես տառապյալ ժողովրդի շահերի պաշտպան, անտարբեր չի գտնվի իրենց ցավերում և աղգականներում հանդեպ» նկատի կունենա բարոյապես ու ֆիզիկապես ոչնչացման դատապարտված միջագետքահայ տարագիրների դժվարին ճակատագիրը և օր առաջ նպաստավոր ու փրկարար կար-

---

1 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 419, թ. 1։

գաղություն մը ընելով, մի անգամ ընդմիշտ կազատե զիրենք իրենց ներկայի հուսահատ կացութենեն»[1]։

Նկատի առնելով այդ ամենը սովետական կառավարությունը 1925 թվականի ապրիլին հատուկ որոշում կայացրեց հունահայ և միջագետքահայ զգալի թվով տարագիրների հայրենադարձությունը շուտափույթ կարգով իրականացնելու վերաբերյալ։

Նախօրոք մշակված պլանի համաձայն, 1925 թվականի ընթացքում Բաթումով և Ջուլֆայով արտասահմանից Հայաստան ներգաղթեցին 5018 հոգի, այդ թվում Հունաստանից՝ 1098 ընտանիք (3651 հոգի), Թուրքիայից՝ 201 ընտանիք (781 հոգի), Միջագետքից՝ 160 ընտանիք (385 հոգի)[2]։

Սիրուքահայ աշխատավորների հայրենադարձության կազմակերպման ուղղությամբ արտասահմանում հսկայական աշխատանք կատարեցին սովետական դեսպանություններն ու Հայաստանի օգնության կոմիտեի մասնաճյուղերը։ Այդ տեսակետից խիստ ուշագրավ է Պարսկաստանում և Հունաստանում ՍՍՀՄ լիազոր-ներկայացուցչությունների ծավալած գործունեությունը։

Չնայած Միջագետքի հայ տարագիրներին սովետական կառավարությունը վաղուց էր թույլատրել Հայաստան ներգաղթել, բայց նրանք երկար ժամանակ չէին կարողանում իրականացնել այդ հնարավորությունը անգլիական իշխանությունների կազմակերպած զանազան գաղտնի արգելքների պատճառով։ Քիչ դժվարություններ չէին հարուցում նաև պարսկական իշխանությունները, որոնք խախտելով իրենց տերիտորիայով Միջագետքից Սովետական Հայաստան ներգաղթողներին դյուրություններ ընձեռելու մասին Թեհրանում ՍՍՀՄ լիազոր-ներկայացուցչության հետ կնքված համաձայնագիրը, հաճախ փակում էին սահմանը հայրենադարձների առաջ։ Հարկ եղավ գործադրել Թեհրանում ՍՍՀՄ լիազոր-ներկայացուցչի ակտիվ միջամտությունը, որպեսզի վերջապես պարսկական կառավարությունը տեղի տար։

Հունահայերի ներգաղթի կազմակերպման վերաբերյալ պահպանված նյութերը ցույց են տալիս, որ Հունաստանում ևս անխոնջ ու լարված աշխատանք է ծավալվել ավելի քան 3000 հայերի հայրենադարձությունը գլուխ բերելու համար։

Իրենց հայրենադավ և քայքայիչ գործունեությամբ հայրենադարձությանը զգալի չափով խոչընդոտում էին տեղի դաշնակցական կազմակերպությունները, որոնց այդ գործում օգնում էր Սալոնիկում Ազգերի լիգայի ներկայացուցիչը։ Սալոնիկում լույս տեսնող իրենց «Ալիք» թերթի էջերում դաշնակցականները մեծ աղմուկ էին բարձրացրել հայրենադարձության դեմ։ Այդպես էին վարվում նրանք նաև մյուս երկրներում։

Չնայած դաշնակցականների դավերին գաղութահայ աշխատավորությունն արդեն լավ էր ճանաչում իր իսկական բարեկամներին ու թշնամիներին և ամեն կերպ ձգտում էր վերադառնալ Սովետական Հայաստան։

1925 թվականի նոյեմբերի 7-ին, հունահայ ներգաղթողների 3016 հոգուց բաղկացած խումբը «Խարալամբոս» նավով Դեդեաղաչից ուղևորվեց դեպի Բաթում և այնտեղից երկաթուղով փոխադրվեց Սովետական Հայաստան։

1 ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 418, թ. 162։

2 Տե՛ս նույն տեղում, գ. 577, թ. 3, գ. 496, թ. 19։

1925 թվականի նոյեմբերի 10-ին ՀՍԽՀ ժողկոմխորհին առընթեր աշխատավորական ներգաղթի հանձնաժողովը քննարկեց Հունաստանից և Միջագետքից ժամանած գաղթականության ընդունման հետ կապված խնդիրները և որոշեց նրանց տեղավորել Արազդայանի շրջանում։ Ստեղծվեց հատուկ հանձնաժողով՝ ժողկոմխորհի նախագահ Ս. Համբարձումյանի գլխավորությամբ և ներքգործժողկոմ Հովհ. Դուրգերյանի, հողժողկոմ Ար. Երզնկյանի ու ջրային տնտեսության վարչության պետ Ս. Շադունցի անդամակցությամբ։

Գաղթականների տեղավորման հետ կապված միջոցառումներն իրականացնելու նպատակով հանձնաժողովին հատկացվեց 50.000 ռուբլի[1]։ Ներգաղթածների շրջանում ընթացիկ աշխատանքներ տանելու համար ստեղծվեց Արազդայանի ներգաղթի հանձնաժողով, որը նախքան հայրենադարձների ժամանումը, նրանց համար նախապատրաստում էր վրաններ, գույք, վառելիք և այլն[2]։

1925 թվականի ներգաղթածների մեծ մասը բնակություն հաստատեց Երևանում, Լենինականում, Արազդայանում և այլ վայրերում։

Հայրենադարձներին պետության կողմից ցույց տրվեց զգալի աջակցություն, որպեսզի կարճ ժամանակամիջոցում նրանք կարողանային ստեղծել իրենց սեփական տնտեսությունները։ Առաջին գարնանը նրանց հողերը հերկվեցին պետական միջոցներով կամ վարկային սկզբունքներով։ Միաժամանակ նրանց տրվեց գյուղատնտեսական գործիքներ, անասուններ, սերմեր և այլն[3]։

Հայրենադարձության կազմակերպման, ներգաղթողների տեղափոխման, նրանց տեղավորման և այդ կապակցությամբ կատարվող մյուս աշխատանքների իրականացման համար պահանջվում էին նյութական հսկայական միջոցներ։ Սովետական կառավարությունն իր բյուջեից միշտ էլ զգալի հատկացումներ էր կատարում այդ նպատակի համար։ Բավական է ասել, որ միայն 1923 թվականի ընթացքում ներգաղթած 953 հոգու համար ՀՍԽՀ ներքգործժողկոմատի գաղթականական բաժնի կողմից ծախսվել է 22 500 ռուբլի ոսկով, կամ 246 միլիարդ 798 միլիոն ռուբլի Անդրֆեդերացիայի դրամանիշներով[4], չհաշված հացահատիկով և այլ պարենամթերքով նրանց ցույց տրված օժանդակությունը։ 1925 թվականին ներգաղթածների կարիքները բավարարելու համար հատկացվել է 418250 ռուբլի[5]։ Այդ գումարն ամբողջությամբ ծախսվել է Արազդայանի գյուղերում տեղավորված ներգաղթածների համար անմիջապես հայթայթելու, հիվանդանոցներ, բաղնիքներ կառուցելու, գույք ձեռք բերելու, կուլտուր-կրթական աշխատանքներ և այլ միջոցառումներ իրականացնելու նպատակով։ Ներգաղթած տնտեսություններին, անհատական բնակարաններ կառուցելու համար, տրվում էին նաև շինարարական վարկեր։

Արտասահմանից ներգաղթողները, համաձայն ՍՍՀՄ Կենտգործկոմի 1925 թվականի հունվարի որոշմանը, առնվազն երեք տարի ազատվում էին ամեն տեսակի հարկերից և օգտվում առանց մաքսի ու վարձի ներգաղթողների

1 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 377, թ. 1։
2 Տե՛ս նույն տեղում, գ. 494, թ. 44։
3 Տե՛ս նույն տեղում, ֆ. 116, ց. 1, գ. 335, թ. 121—127։
4 Տե՛ս նույն տեղում, ֆ. 112, ց. 1, գ. 1490, թ. 21։
5 Տե՛ս նույն տեղում, ֆ. 123, ց. 1, գ. 1576, թ. 13—15։

բեռների, աշխատանքային գործիքների, կենսամթերքների, հագուստեղենի և այլ իրերի փոխադրության վերաբերյալ աշխատանքի և պաշտպանության խորհրդի 1923 թվականի օգոստոսի 16-ի որոշման արտոնություններից[1]։ Սովետական Հայաստան ներգաղթած հողագործները, բանվորները, արհեստավորներն ու այլ մասնագետներ հնարավորություն էին ստանում վայելելու ազատ աշխատանքի պատուղները։ Նրանց տրվում էին համապատասխան դյուրություններ ու արտոնություններ, աշխատանքով ապահովում էին առաջին հերթին, ըստ անում էին վարկեր և այլն։ Անկեղծ մարդասիրության ու տարագիր հայության դժբախտ ճակատագրի հանդեպ ցուցաբերվող ջերմ հոգատարության դրսևորման վառ վկայություն էր ՍՍՀՄ և Անդրֆեդերացիայի կառավարությունների ամենալայն աջակցությամբ Հայաստանի կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության կողմից սփյուռքահայ աշխատավորների հայրենիք վերադառնալու նվիրական իղձերի իրականացումը։ 1921—1925 թվականների ընթացքում Սովետական Հայաստան ներգաղթեց շուրջ 20 հազար մարդ։

Սփյուռքահայ աշխատավորները, Հայաստան տեղափոխվելուց հետո, զգալով սովետական կառավարության ջերմ վերաբերմունքն իրենց նկատմամբ, երախտագիտությամբ լի, անմիջապես ձեռնամուխ եղան շինարար աշխատանքի։ Ներգաղթածները միաժամանակ կոչ էին անում իրենց նախկին բախտակիցներին նույնպես վերադառնալ հայրենիք և լծվել նրա վերաշինության վեհ գործին։

Այդ երախտագիտության վառ արտահայտություններից մեկն էր 1924 թվականի ամռանը Կ. Պոլսից հայրենիք ներգաղթած մի խումբ աշխատավորների նամակը ուղղված արտասահմանի իրենց վտարանդի եղբայրներին։

«...Թող լսեն օտար երկրներում թափառող մեր աստանդական եղբայրները,— ասված էր նամակում,— որ միայն և միայն Խորհրդային Հայաստանում վերջ գտան մեր տառապանքները և մենք տեսանք մարդկային, ընկերական վերաբերմունք, որին մինչև այժմ այնքան ծարավի էինք։ Այստեղ միայն գնահատվեց մեր աշխատանքը և կարելիություն տրվեց լծվելու շինարարության հսկա գործին, որը ղեկավարում է խորհրդային կառավարությունը Հայաստանի աշխատավորության աջակցությամբ»[2]։

Սովետական կառավարությունը, ընդառաջելով սփյուռքահայ աշխատավորների ցանկություններին և կազմակերպելով մեծ թվով տարագիրների հայրենադարձությունը, չէր կարող աչքաթող անել այն հանգամանքը, որ գաղթականական շատ տնտեսություններ դեռևս լիովին ապահովված չէին հողով, հարմար բնակարաններով և այլն։ Հաշվի առնելով այդ, ՀՍԽՀ ԺողկոմխորհԸ, 1926 թվականի հունվարի 21-ին քննարկեց աշխատավորական ներգաղթի հանձնաժողովի նախագահ Ա. Մռավյանի զեկուցումը գաղթականության դրության մասին։ Ժողկոմխորհը, նկատի ունենալով երկրում գոյություն ունեցող սուր սակավահողությունը և 1925 թվականին ընդունած գաղթականների տեղավորման խնդրի հետ կապված դժվարությունները, նյութական խոշոր միջոցների անհրա-

1 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 113, ց. 13, գ. 4, թ. 1—2։

2 «Խորհրդային Հայաստան», 1924, № 229։

ժեշտությունը և այլն, որոշեց ժամանակավորապես դադարեցնել սիյուռքահայերի զանգվածային ներգաղթը[1]։

Չնայած սիյուռքահայերի հայրենադարձությունը ժամանակավորապես դադարեցնելու մասին ՀՍՍՀ Ժողկոմխորհի որոշմանը, սովետական կառավարությունը 1926 թվականին, ինչպես և հետագա տարիներին, դարձյալ երկիր ընդունեց մեծ թվով ներգաղթողների, քանի որ արդեն անհնարին էր կանգնեցնել դեպի հայրենիք սկսված հոսանքը և որովհետև տարաբախտ պանդուխտներն իրենց միակ փրկությունը տեսնում էին Սովետական Հայաստանում, համայն հայության մայր հայրենիքում։ Արտահայտելով գաղութահայ աշխատավորների հայրենակարոտ մտքերն ու խղճերը, Մարսելում հրատարակվող «Հայ սիրտ» թերթը գրում էր. «Մեզ համար ինչ կա ավելի դյութական, ավելի հանկուցիչ՝ քան վերածնվող հայրենիքի մը լուսատու պատկերը։

Հեռու ենք այդ պատկերեն, բայց նա կա, նա մարմնացած հույսն է, որ կուսուցանե մեր կյանքին իմաստը. առանց այդ հայրենիքին, առանց անոր բարգավաճ գոյության՝ ինչ միտք կրնար ունենալ մեր կյանքը. ինչ արժեր ապրիլ առանց սեփական բույնի, առանց ինքն իր կամքին տերը ըլլալու, այսինքն՝ առանց մարդկային արժանապատվության։

Ուրեմն նոր հույսերու այս լուսածագին մեջ իղձերն ու մաղթանքները կուղղվեն միայն և միայն մեր սեփական բույնին, մեր Հայաստանին»[2]։

Այսպիսով, իր գոյության առաջին իսկ օրերից Սովետական Հայաստանը դարձավ համայն հայ աշխատավորների իսկական օրրանը, այն հանգրվանը, որտեղ հետագա տարիներին էլ ավելի մեծ թվով սիյուռքահայեր վերջնականապես գերեզմանեցին գաղթականի իրենց անիծյալ ցուպը և դարձան սոցիալիստական շինարարության ակտիվ մասնակիցներ, Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության լիիրավ քաղաքացիներ։

Քանակով այնքան էլ մեծ չէ երկրի ժողովրդական տնտեսության վերականգնման տարիներին արտասահմանից Սովետական Հայաստան ներգաղթածների թիվը։ Բայց երբ նկատի են առնվում այն պայմանները, որոնց մեջ սկզբնական շրջանում իրականացվում էր ներգաղթը և սկիզբ դրվում ազգահավաքման հայրենասիրական շարժմանը, այդ դեպքում արդեն հասկանալի են դառնում հայրենադարձության հետ կապված դժվարությունները, նրա հսկայական կարևորությունն ու նշանակությունը։

5. ԳԱՂՈՒԹԱՀԱՅ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ՀՈՍԱՆՔՆԵՐԻ ԴԻՐՔԸ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԵՊ

Մինչդեռ սովետական կառավարությունն իր մարդասիրական պարտքն էր կատարում հայ գաղթականության նկատմամբ և ամեն ինչ անում նրա դրությունը բարելավելու ուղղությամբ, գաղութահայ բարեգործական որոշ հաստատություններ ու կազմակերպություններ շոշափելի ոչինչ չէին անում գաղ-

1 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 112, ց. 1, գ. 318։

2 «Հայ սիրտ», 1926, № 36։

Թականությանը հայրենիք տեղափոխելու ուղղությամբ։ Այդ տեսակետից խիստ բնորոշ է Հայոց բարեգործական ընդհանուր միության գործունեությունը, որը, ինչպես նշում է նրա վարչության նախկին անդամ և 20Կ-ի արտասահմանյան լիազոր Սասյի Կարիկյանը «արդեն երկու տարին ի վեր խոշոր ռեքլամներով համբա եւած է դնպի Հայաստան, կքալե ու կքալե և դեռ կեցած տեղն է, քայլ մը առաջ չաներ...»[1]։

Արտասահմանյան բարեգործական շատ հաստատություններ ու անհատներ գաղթականների ու որբերի հարցը փաստորեն դարձրել էին իրենց քաղաքականության հիմնական առանցքն ու եկամտի աղբյուրներից մեկը։ Դաշնակցական վերնախավերը, օրինական ոչ մի իրավունք չունեցող «Հ. Հ. պատվիրակությունը», Պողոս Նուբարի, իսկ հետո Գաբրիել Նորատունկյանի գլխավորած Ազգային պատվիրակությունը. և այլ հաստատություններ փաստորեն իրենց գոյությունը պահպանում էին ծայրահեղ թշվառության մատնված գաղթականների ու որբերի հարցի շահագործման հաշվին։ Ուստի պատահական չէր, որ այդ հաստատությունների վարիչներն իրենց գոյությունը երկարաձգելու նպատակով գաղութահայ աշխատավորությանը մղում էին նորանոր արկածախնդրություններին։ Այդ է վկայում Թնկուզ դաշնակցության առաջ քաշած այսպես կոչված «էքստերիտորիալ հայկական կառավարություն» ստեղծելու գաղափարը[2]։

Սակայն գաղութահայ ժողովրդական զանգվածները վճռականապես երես էին դարձնում այդ կեղծ բարերարներից և մեկընդմիշտ ապավինում Սովետական Հայաստանին, որն իր բոլոր հնարավորությունները, ուժերն ու եռանդը գործադրում էր գաղթականության հարցը արմատապես լուծելու ուղղությամբ։

Գաղութահայ աշխատավորության, սփյուռքահայ առաջադիմական բոլոր ուժերի քաղաքական-դասակարգային հասունության ցայտուն ապացույց հանդիսացավ 1924 թվականի սեպտեմբերի 1-ին Ժնևում բացված հայասիրական միջազգային կոնֆերանսին հայտարարված բոյկոտը. 1924 թվականի հուլիսի 10-ին Հայասերների միջազգային ընկերությունն իր նախագահ Էդվարդ Նավիլի և քարտուղար Քրաֆթ Բոնարի ստորագրությամբ մի կոչ էր հղել բոլոր հայկական գաղութներին, հայանպաստ կազմակերպություններին ու մասնավոր անձանց, նրանց հրավիրելով մասնակցել սեպտեմբերի մեկին Ժնևում բացվող հայասիրական միջազգային կոնֆերանսին։ Կոնֆերանսի գլխավոր զբաղմունքն էր լինելու հայ գաղթականների ու որբերի դրության բարելավման, ինչպես նաև 50 հազար տարագիրների Սովետական Հայաստան տեղափոխելու խնդիրը։ Բայց այդ գործը կազմակերպողները «մոռացել» էին հրավեր ուղարկել նաև սովետական կառավարությանը։ Ոչ ոքի համար գաղտնիք չէր, որ կոնֆերանսի հրավիրման իսկական նախաձեռնողները հանդիսանում էին դաշնակցականները, որոնք փորձում էին նման ճանապարհով իրականացնել համագաղութային համագումար հրավիրելու բազմիցս ձախողված իրենց փորձերը և «հայասեր» նավիլներն ու բոնարները սոսկ կույր գործիքի դեր էին կատարել։ Ժամանակին կռահելով գաղութահայության ղեկավարությունն իրենց ձեռքը գցելու դաշնակցական վնասակար խաղերի իմաստը, սփյուռքահայ առաջա-

1 Ե. Կարիկյան, Կեդրոնաձիգ և կեդրոնախույս, Փարիզ, 1925, էջ 5։

2 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 176, գ. 66, թ. 66—88։

դիմական բոլոր կազմակերպություններն ու հոսանքները վճռական բողոք հայտնեցին այդ կոնֆերանսի հրավիրման դեմ և հրաժարվեցին մասնակցել նրան։ Մեկուսացված դաշնակցականներն ու նրանց «պատվարժան հայասերները» մի քանի օրվա վշտաբեկ զրույցներից հետո, առանց որևէ արդյունքի հասնելու, ստիպված եղան դադարեցնել կոնֆերանսի աշխատանքները[1]։

Սփյուռքահայ առաջադիմական ուժերն իրենց այդ վերաբերմունքով ցույց տվեցին, որ գաղթականության անունից խոսելու իրավունքը պատկանում է միայն ու միայն անկուր տառապանքների մատնված հայ տարագիրներին և նրանց պաշտպան սովետական կառավարությանը։

Որքան ավելի էր ուժեղանում ներգաղթողների հոսանքը դեպի Սովետական Հայաստան, այնքան ավելի կատաղի ու չարանենգ զրպարտություններ էին դիմում արտասահմանի հայկական բուրժուազիայի ձայնափողներն ու դաշնակցական գրչակները։ Նրանք ձգտում էին ամեն կերպ խանգարել ներգաղթի իրականացմանը, վարկաբեկել Սովետական Հայաստանը, ժխտել երկրում ծավալված սոցիալիստական շինարարությունը, մոլորության մեջ գցել գաղութահայ զանգվածներին և այլն։

1924 թվականի մայիսին Պոլսից ՀՍՍՀ ժողկոմխորհին ուղարկած իր զեկուցագրում Դ. Շահվերդյանը հայտնում էր, որ ներգաղթի կազմակերպումը մեծ հետաքրքրություն է առաջացրել ժողովրդական զանգվածների մեջ ինչպես այստեղ, այնպես էլ մյուս գաղութներում։ Բայց գաղութահայ ազգային բարեգործական հաստատությունների ղեկավարները խիստ անհանգստացած են։ Բանն այն է, որ արտասահմանի բարեգործական հաստատությունների մեծ մասն իրենց գոյությունը պահպանում էին գաղթականների և որբերի հարցը շահագործելով և նրանցով արդարացնում իրենց գոյության իմաստը, նրանց շնորհիվ ստանում պաշտոններ ու ապրուստի միջոցներ[2]։

Խոսելով Սովետական Հայաստանի հակառակորդների կողմից ներգաղթի շուրջը ծավալված զրպարտչական կամպանիայի մասին, Դ. Շահվերդյանը նշում էր, որ նրանք այնքան են ատելությամբ լցված դեպի սովետական իշխանությունը, որ առաջարկում են երկրի վերաշինության ու ներգաղթի համար գաղութներում հանգանակված գումարները չուղարկել Հայաստան, այլ օգտագործել միայն արտասահմանում։ Դեռ ավելին, Պոլսում գոյություն ունեցող ազգային կազմակերպությունները 1924 թվականին իրենց գաղտնի ժողովներից մեկում որոշում էին կայացրել գաղթականներին չփոխադրել Հայաստան, այլ տեղավորել Աֆրիկայում կամ Ամերիկայում[3]։

Այնուամենայնիվ, գաղութահայ աշխատավորությունը բուռն կերպով ձգտում էր դեպի Սովետական Հայաստան։ Սովետական կառավարությունը շարունակում էր բազմաթիվ դիմումներ ստանալ բոլոր գաղութների տարագիր երկրագործներից, բանվորներից ու արհեստավորներից, որոնք պատրաստակամություն էին հայտնում իրենց ծախսով մեկնել հայրենիք, այնտեղ կառուցել գյուղեր ու ավաններ, վերաշինել երկիրը։ Շատ դիմումներ էին ստացվում

1 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1924, № 219, 225, 229։
2 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 54, թ. 10—11։
3 Տե՛ս նույն տեղում, գ. 305, թ. 30—40։

նաև զանձաղան մասնագիտությունների տեր մտավորականներից և հատկապես երիտասարդներից՝ համալսարան կամ հայկական այլ դպրոց ընդունվելու ցանկություններով։

Պատասխանելով դաշնակցական պրովոկացիաներին, Հունաստանից Սովետական Հայաստան ներգաղթող մի խումբ աշխատավորներ 1925 թվականի հունվարին գրում էին. «Հայրենակիցներ, զգույշ և միշտ զգույշ մեր տունն ավերող ու մեզ մոխիրներու վրա նստեցնող օտար, կեղծ մարդասերներեն և տարաբախտաբար հայ կոչվող խառնակիչներեն, որոնք խիղճերնին սպանած և ամոթի ու պատասխանատվության զգացումնին կորցրած ըլլալով իսպառ, իրենց աղտոտ ձեռքերով կուզեն խառնել ձեր խիղճին անդորրությունը»[1]։

Եվ այսպես, ամենուրեք գաղութահայ աշխատավորությունը երես էր դարձնում դաշնակցականներից և վստահորեն ընթանում դեպի հայ աշխատավորության միակ հայրենիքը՝ Սովետական Հայաստան։

6. ՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՆ ԱԶԳԵՐԻ ԼԻԳԱՅՈՒՄ ԵՎ ՆԱՆՍԵՆՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Պատերազմը վերջանալուց հետո արևմտյան տերությունները հարկադրված էին դոնե առերևույթ զբաղվելու իրենց քաղաքականության հետևանքով ծայր թշվառության մատնված ժողովուրդների հետագա ճակատագրի հարցով։ Ահա հենց այդ գործն էլ նրանք դրին Ազգերի լիգայի վրա, որը որդեգրեց նաև աշխարհով մեկ սփռված հայ տարագիրների հարցը, իբր թե նրանց վիճակը բարելավելու նպատակով։ Իրապես Ազգերի լիգան հայ և այլազգի գաղթականության հարցով ստիպված էր զբաղվելու սոսկ հասարակական կարծիքի ճընշման տակ։ 1920 թվականի իր առաջին նստաշրջանից սկսած Ազգերի լիգան զբաղվում էր հայ գաղթականության հարցով և հայտարարում, թե անհրաժեշտ է, որ բոլոր տերությունները միջոցներ ձեռնարկեն «ըստ կարելվույն շուտ վերջ տալու հայկական սարսափելի ողբերգությանը» և ապահովեն այդ ժողովրդի ապագան։

Ազգերի լիգայի երկրորդ (1921) և երրորդ (1922) նստաշրջանները նորից միաձայն որոշում կայացրին այն մասին, որ Թուրքիայի հետ խաղաղության բանակցությունների ժամանակ պետք է անպայման նկատի ունենալ հայերի համար ազգային օջախ ստեղծելու անհրաժեշտությունը։ Այդ նպատակն իրագործելու նպատակով լիգայի ընդհանուր ժողովն առաջարկեց Գլխավոր խորհրդին ձեռք առնել անհրաժեշտ բոլոր միջոցները։

Դրան հաջորդեցին խաղաղության բանակցությունները Լոզանում, որտեղ հայ գաղթականության օգտին դրական ոչինչ չարվեց և այդ հարցը դարձյալ ձևականորեն հանձնվեց Ազգերի լիգայի տնօրինությանը։ Լիգայում ապարդյուն ու անվերջանալի մարդասիրական ճառեր էին ասվում հայ տարագիրների հասցեին և ոչ ավելին։

Սակայն Ազգերի լիգայի և իմպերիալիստական դիվանագիտության այլ ամբիոններից տարագիր հայության հասցեին ասվող սփոփանքի խոսքերից նրա-

1 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 114, ց. 3, գ. 496, թ. 46։

վիճակը բնավ չէր բարելավվում։ Հայ գաղթականներից շատերը, հազիվ փրկված լինելով հայկական սպանդից, մեծ մասամբ զուրկ էին անգամ իրենց քաղաքացիությունը հաստատող փաստաթղթերից և նրանց իրավունքները չէին ճանաչվում։ Միջազգային իրավունքի տեսակետից նրանք պարզապես համարվում էին հայրենազուրկ տարագիրներ, չհանդիսանալով որևէ պետության քաղաքացի կամ հպատակ։

Անդրադառնալով այս հարցին Ազգերի լիգան որոշեց, որ Թուրքիայից հեռացած այն հայ տարագիրներին, որոնց թուրքական կառավարությունը իրենց նախկին բնակավայրերը վերադառնալու արտոնություն չի տալիս և որոնցով չեն ուզում զբաղվել թուրքական արտասահմանյան ներկայացուցիչները՝ նրանց այլևս թուրքահպատակներ չճանաչելով, պետք է տալ լիգայի երաշխավորության վայելող մասնավոր անձնագրեր. դեռևս 1922 թվականին Ազգերի լիգան այլ ազգությունների գաղթականների համար նույնպես սահմանել էր միջազգային անձնագրեր, որոնք տրվում էին լիգայի գաղթականական գործերի կոմիսար Ֆրիտյոֆ Նանսենի նախագահությամբ գործող կոմիտեի կողմից և հենց այդտեղից էլ դրանք ստացել էին «նանսենյան» անունը։ Ազգերի լիգայի մեջ մտնող 30-ից ավելի պետություններ ճանաչել էին «նանսենյան անձնագրերի» օրինականությունը և որոշ չափով թեթևացել էր հայրենազուրկ տարագիրների իրավական դրությունը։ Եվ ահա լիգայի խորհուրդը որոշում է հայ գաղթականների անձնագրերի նախապատրաստման գործը ևս հանձնարարել Նանսենյան կոմիտեին։ Նախապատրաստական աշխատանքների վերջանալուց հետո, Ազգերի լիգայի խորհուրդը 1924 թվականի հուլիսի 12-ին քննարկեց գաղթականական գործերի գլխավոր կոմիսար Ֆր. Նանսենի ներկայացրած տեղեկագիրը՝ հայ գաղթականների իրավական դրության մասին և որոշեց հանձնարարել լիգայի անդամ և շահագրգռված մյուս կառավարություններին ընդունել և ճանաչել Նանսենյան կոմիտեի կողմից հայ տարագիրներին տրվող անձնագրերը[1]։

Շուտով Ազգերի լիգայի մեջ մտնող բոլոր պետությունները, ինչպես նաև այլ կառավարություններ, ընդունեցին լիգայի անունից հայ տարագիրներին տրվող ինքնության թղթերի կամ այսպես կոչված Նանսենյան միջազգային անձնագրերի օրինակությունը։ Դրա շնորհիվ մի շարք երկրներում երկար տարիներ կարգավորվեց հազարավոր հայ գաղթականների քաղաքացիական կացությունը և նրանց իրավունքները ճանաչվեցին օրինական։ Նանսենյան անձնագրերը կարևոր նշանակություն ունեցան հատկապես Բուլղարիայի, Ռումինիայի, Հունաստանի և ուրիշ երկրների հայ գաղթականների քաղաքացիական կացության կարգավորման համար։ Այսպիսով, Նանսենյան անձնագրերը դրական նշանակություն ունեցան հայ տարագիրների վիճակը որոշ չափով թեթևացնելու գործում։

* *
*

Հայ գաղթականներին Նանսենյան անձնագիր տալու հարցի քննարկման հետ մեկտեղ, Ազգերի լիգայի նիստերում չորս-հինգ տարի շարունակ, ապարդ-

1 Տե՛ս «Վերջին լուր», 1924, № 3144։

յուն կերպով, հոլովվում էր նաև սփյուռքահայերի համար մի հաստատուն բնակավայր գտնելու հարցը։ Դեռևս 1923 թվականի աշնանը, անդրադառնալով այդ խնդրին, Ազգերի լիգան որոշում էր կայացրել՝ ուսումնասիրել մոտ 50 հազար հայ գաղթականների Անդրկովկասում, մասնավորապես Սովետական Հայաստանում, բնակեցնելու հնարավորությունը[1]։ Սակայն այդ որոշումը երկար ժամանակ մնում էր թղթի վրա, թեև այդ առթիվ սովետական կառավարությունը հայտնել էր իր պատրաստակամությունը։

Ազգերի լիգայի քննարկումների արդյունքների հանրագումարից հետևում է, որ այդ 50 հազար հայ գաղթականներին Հայաստան տեղափոխելու, նրանց սովետական կառավարության կողմից առաջարկված ոռոգելի դարձվելիք Սարդարաբադի դաշտում բնակեցնելու, բնակարաններով, գյուղատնտեսական գործիքներով, անասուններով ապահովելու և այլ միջոցառումներ իրականացնելու համար անհրաժեշտ է մեկ միլիոն ֆունտ ստեռլինգ։ Այդ գումարը ձեռք բերելու համար տարբեր առաջարկներ էին արվում։ Ազգերի լիգայի գաղթականական գործերի կոմիսար Ֆր. Նանսենը խորհուրդ էր տալիս վերոհիշյալ գումարը ձեռք բերել կամ կառավարություններից խնդրելով, կամ մշակվելիք հողամասերից ստացվող եկամուտներով երաշխավորված երկարաժամկետ փոխառության ձևով։ Փոխանակ այդ խնդրի լուծման մի հարմար եղանակ գտնելու, Ազգերի լիգան սահմանափակվում էր միայն ոչ ոքի ոչինչ չպարտավորեցնող բազմաթիվ որոշումներ ընդունելով։

Վերջապես, 1924 թվականի սեպտեմբերի 25-ին, Ազգերի լիգան որոշում է հանձնարարել աշխատանքի միջազգային բյուրոյին՝ Նանսենի ղեկավարությամբ հանձնաժողով կազմել և ուսումնասիրել Սովետական Հայաստանում մեծ թվով հայ գաղթականներ բնակեցնելու հնարավորությունները[2]։ Աշխատավոր հայ գաղթականության տառապանքների շուտափույթ լիկվիդացման նպատակով վերոհիշյալ հանձնաժողովի Սովետական Հայաստան գալուն դրականապես են վերաբերվում Համկ(բ)կ Կենտկոմը և ԽՍՀՄ կառավարությունը, թեև մեծ հույսեր ու սպասելիքներ չունեին իմպերիալիստական դիվանագիտության կամակատար Ազգերի լիգայից[3]։

1925 թվականի հունվարի 17-ին Երևան ժամանեց Նանսենի գլխավորած հանձնաժողովը[4]։ Նույն օրը Նանսենը և նրա միսիայի անդամները այցելեցին ՀՍՍՀ Ժողկոմխորհի նախագահ Ս. Լուկաշինին և Կենտգործկոմի նախագահ Ս. Համբարձումյանին։ Վերջիններս հավաստիացրեցին Նանսենի հանձնաժողովին, որ սովետական կառավարությունը լայն հնարավորություններ կտա նրան հետաքրքրող բոլոր հարցերը մանրամասնորեն ուսումնասիրելու և տեղում ծանոթանալու այն բոլոր հողամասերին, որոնց վրա նախատեսվում է բնակեցնել ներգաղթող սփյուռքահայ աշխատավորներին։ Միաժամանակ հայտնվեց, որ այդ հողամասերի ոռոգման վերաբերյալ կան պատրաստի նախագծեր, որոնք նույնպես կտրամադրվեն հանձնաժողովին։ Այնուհետև Ա. Մռավյանի նախագա-

1 Տե՛ս «Վերջին լուր», 1923, № 2917։
2 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 372, թ. 7։
3 Տե՛ս նույն տեղում, գ. 454, թ. 200։
4 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1925, № 135։

հուլյամբ տեղի ունեցավ ՀՍՍՀ կառավարական հատուկ հանձնաժողովի (ժողկոմխորհին առընթեր աշխատավորական ներգաղթի հանձնաժողով) և Նանսենի հանձնաժողովի համատեղ նիստը։ Նանսենը հաղորդեց, որ իրենց նպատակն է ուսումնասիրել մոտավորապես 50 հազար հայ տարագիրների Հայաստան տեղափոխելու հնարավորությունները, որովհետև վերջին շրջանում Հունաստանում, Թուրքիայում (Կ. Պոլսում), Սիրիայում և այլ երկրներում հայ գաղթականության վիճակը խիստ վատթարացել է։ Նանսենը նշեց, քանի որ գաղութահայ աշխատավորները ձգտում են տեղափոխվել միայն Սովետական Հայաստան, հետևապես պետք է հաշվի առնել նրանց այդ օրինական ցանկությունը և՝ ելնելով այդ դրությունից, նիստում նախնական քննարկման ենթարկվեցին գաղթականությանը Հայաստանում տեղավորելու հետ կապված ծրագրերը, մասնավորապես Սարդարաբադի դաշտի ոռոգման նախագիծը[1]։

Նանսենն ու նրան ուղեկցողները շրջեցին Հայաստանում, ծանոթացան երկրի կյանքին և հուլիսի սկզբներին վերադարձան Եվրոպա։ Մեկնելուց առաջ, բանակցությունների ընթացքում ձեռք բերված համաձայնության հիման վրա, Ֆր. Նանսենը ՀՍՍՀ կառավարությանն էր ներկայացրել իր հանձնաժողովի մշակած հուշագիրը, որտեղ ամփոփված էին մոտ 50 հազար հայ տարագիրների ներգաղթման և նրանց Հայաստանում բնակեցնելու վերաբերյալ հիմնական միջոցառումները, մասնավորապես՝ այդ նպատակի համար անհրաժեշտ 8 միլիոն ռուբլի ձեռք բերելու հնարավորությունները, որոնց իրականացման համար, Նանսենի կարծիքով, գոյություն ուներ երեք ուղի։ Առաջին՝ բարեգործական ընկերությունների միջոցով հանգանականություն անցկացնելը, երկրորդ՝ եվրոպական պետություններից վարկի ձևով կամ որպես նպաստ ստանալը և երրորդ՝ եվրոպական բանկերից փոխառություն վերցնելը։

Նանսենը գտնում էր, որ միակ նպատակահարմար ելքը անհրաժեշտ գումարը փոխառությունների միջոցով ձեռք բերելու ուղին է։ Ուստի նա առաջարկում էր թույլատրել Հայաստանում ունենալ փոխատուների ներկայացուցիչների մի կոմիտե՝ փոխառության գումարների իրացմանը հսկելու համար[2]։ Համաձայնվելով Նանսենի առաջ քաշած գրեթե բոլոր պայմանների հետ, ՀՍՍՀ Ժողկոմխորհի նորընտիր նախագահ Ս. Համբարձումյանը նշեց, որ սովետական կառավարությունը երբեք չի կարող թույլատրել իր երկրում դրսի որևէ քաղաքական վերահսկողություն, ծայրահեղ դեպքում հնարավոր է միայն տնտեսական-տեխնիկական հսկողություն[3]։

Հայաստան կատարած ուղևորություններից Եվրոպա վերադառնալուց հետո, Նանսենը և նրան ուղեկցողներն իրենց ուսումնասիրությունների հիման վրա կազմեցին մի ընդարձակ զեկուցագիր և ներկայացրին Ազգերի լիգայի ընդհանուր ժողովի քննարկմանը։ Այդ զեկուցման մեջ բազմակողմանիորեն հիմնավորված էր սփյուռքահայ տարագիրների համար Հայաստանում բնակավայրերի ստեղծման հնարավորությունն ու նպատակահարմարությունը։ Նանսենի հանձնաժողովն առաջարկում էր սովետական կառավարությանն այդ նպատա-

---

1 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 373, թ. 1—5։

2 Տե՛ս նույն տեղում, թ. 6—7։

3 Տե՛ս նույն տեղում, գ. 494, թ. 13, և ֆ. 113, ց. 13, գ. 4, թ. 1—3։

կով տրամադրել մեկ միլիոն ֆունտ ստեռլինգի փոխառություն, որով հնարավոր կլիներ կարճ ժամանակամիջոցում իրագործել մի քանի տասնյակ հազար գաղթականների տեղափոխությունը Հայաստան։ Սփյուռքահայ գաղթականությանը Սովետական Հայաստանում բնակեցնելու հետ կապված միջոցառումների ամբողջ պլանը հայտնի է «Նանսենյան ծրագիր» անունով։

Ֆր. Նանսենի գլխավորած հանձնաժողովի զեկուցագիրը Ազգերի լիգայի շրջանակներում բազմիցս ենթարկվեց քննարկման։ 1925 թվականի սեպտեմբերի 10-ին այն լսվեց Ալբերտ Թոմայի նախագահությամբ գործող Աշխատանքի միջազգային բյուրոյի գաղթականների բաժնին առընթեր խորհրդակցական կոմիտեում, որին ներկա էին նաև գաղութահայ մի շարք կազմակերպությունների և հայասիրական օտարերկրյա ընկերությունների ներկայացուցիչներ։ Նանսենի զեկուցումն ու ներկայացրած նախագծերը արժանացան ընդհանուր հավանության։ Գաղութահայ հասարակայնության ներկայացուցիչներն իրենց ելույթներում նշեցին, որ լիովին հավանություն են տալիս Նանսենի ծրագրին և խոստանում են կազմակերպել ամեն տեսակի բարոյական ու նյութական աջակցություն։ Նույն ոգով արտահայտվեցին նաև հայասերների լիգայի և օտարերկրյա բարեգործական ընկերությունների ներկայացուցիչները՝ գըտնելով, որ այդ նախագծերի իրականացումը պետք է կատարվի հանուն «տարրական արդարության հայերի հանդեպ, որոնց շատ բան է խոստացվել և ոչինչ չի տրվել»[1]։

1925 թվականի սեպտեմբերի 12-ին հանդես գալով Ազգերի լիգայի 6-րդ նստաշրջանի 9-րդ պլենար նիստում Նանսենը զեկուցեց սփյուռքահայ տարագիրների ծանր դրության և Սովետական Հայաստանում գաղթականության նկատմամբ ցուցաբերվող հոգատարության մասին։

Անդրադառնալով իր գլխավորած հանձնաժողովի հիմնական եզրակացություններին, Նանսենը հայտարարեց. «Մենք քննեցինք բոլոր հնարավորությունները (հայ գաղթականների տեղավորման — խմբ.) և եկանք այն եզրակացության, միաձայն և մեր ճշտության մասին առանց որևէ կասկածի, որ միակ վայրը, ուր այժմ Եվրոպայում թափառող մի մեծ մաս — շեշտում եմ մի մեծ մաս, կարող է տեղավորվել՝ դա Երևանի հայ հանրապետությունն է»[2]։

Նանսենը նշեց նաև, որ ներկայումս ուրիշ ոչ մի երկիր, բացի Սովետական Հայաստանից, չի համաձայնվում ընդունել գաղթականների նորանոր խմբեր, հազարավոր թափառական մարդկանց, կանանց ու երեխաների, որոնք հայրենիք և ապրելու միջոցներ են փնտրում։ Նանսենն ընդգծեց, որ «հայ գաղթականներն իրենք ցանկանում են գնալ Հայաստան և ոչ մի ուրիշ տեղ։ Նրանք ցանկանում են գնալ և կառուցել իրենց ազգային հայրենիքը»[3]։

Ապա Նանսենը պատմում է Հայաստանում իրենց կատարած ուսումնասիրությունների մասին և նշում, որ իրենք այնտեղ են մեկնել խիստ երկյուղով, սակայն այնտեղից վերադարձել են այն խոր համոզմունքով, որ Սովետական

---

1 ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, դ. 453, թ. 10—12։

2 Նույն տեղում, դ. 820, թ. 3—5։

3 Նույն տեղում։

Հայաստանում ծավալված է հույժ կարևոր տնտեսական մի հանդուգն ծրագիր, որը խաղաղ աշխատանքի հիանալի հնարավորություններ կընձեռնի ոչ միայն արդեն Հայաստանի հողի վրա գտնվող հազարավոր գաղթականների, այլև դեռևս աշխարհի զանազան մասերում թափառող մեծ թվով հայ տարագիրների համար։

Այնուհետև Նանսենն ընդգծում է, թե ինքը պետք է ջանա համոզել հանձնաժողովին, որ հայ ժողովուրդը «վերջին երեք տարիների ընթացքում իսկական հրաշքներ է գործել՝ զարգացնելով դեռևս մի քանի տարի առաջ թշվառության մեջ գտնվող երկիրը այն ժամանակ, երբ ամեն օր սայլերը մեռած երեխաներ և չափահասներ էին հավաքում քաղաքների փողոցներից»։

Անժխտելի փաստերով Նանսենը ցույց է տալիս, որ Սովետական Հայաստանում, վերջապես, իրոք գոյություն ունի հայկական օջախ, որպիսին ուրիշ ոչ մի տեղ չի կարող լինել հայության համար։ Նանսենը նշում է, որ եվրոպական տերություններն ուղղակի կամ անուղղակի կերպով պատասխանատվություն են կրում հայ ժողովրդի ապրած ողբերգության հարցում և այժմ անհրաժեշտ է, որ նրանք ձեռք առնեն միջոցներ, անցյալի ավերակների փոխարեն ստեղծելու ավելի պայծառ մի ապագա՝ ոտնահարված իրավունքներով այդ աղդի համար[1]։

Սեպտեմբերի 18-ին Նանսենի զեկուցումը քննարկվեց լիգայի հինգերորդ կոմիտեում։ Վերջինս էլ իր հերթին՝ Նանսենի հանձնաժողովի զեկուցագրի և առաջադրված ծրագրի մանրամասն ուսումնասիրման նպատակով, այն հանձնեց 9 հոգուց բաղկացած հատուկ ենթակոմիտեին։ Այստեղ էլ հենց ծավալվեցին հիմնական ելույթները, որոնք և բացահայտեցին նախագծի նկատմամբ մեծ տերությունների իսկական վերաբերմունքը։ Մեծ Բրիտանիայի պատվիրակը իր կառավարության անունից հայտարարեց, որ նա չի կարող ոչ իրացնել և ոչ էլ երաշխավորել որևէ սովետական հանրապետության բաց թողած փոխառությունը[2]։ Ֆրանսիական պատվիրակը նշեց, թե իր կառավարությունը պատրաստ է երաշխավորել փոխառությունը, բայց այն անառարկելի պայմանով, որ Անգլիան ևս համաձայնվի համատեղ երաշխիքներ տալուն։ Իտալական ներկայացուցիչը հայկական շրջաններին և Նանսենին մասնավոր կերպով հայտնեց, որ ինքն այդ հարցում լիովին բաժանում է ֆրանսիական տեսակետը։ Ենթակոմիտեի մնացած անդամները Նանսենի նախագծին և փոխառության հարցին վերաբերվեցին «կարեկցաբար ու համակրանքով», սակայն գործնական ոչ մի քայլ չկատարեցին։ Փոխառության նկատմամբ անգլիական կառավարության այդպիսի անբարյացակամ դիրքը նոր բարդություններ առաջ բերեց։ Այդ պայմաններում փոխառության կողմնակիցները փորձեցին պարզել, թե Հայաստանի կառավարությունն այն ապահովելու ի՞նչ նոր առաջարկներ կարող է ներկայացնել, որոնք բավարար լինեին առանց անգլիական երաշխիքների իրացնելու համար։ Նրանք ցանկանում էին պարզել, թե արդյոք Հայաստանի կառավարությունը չէր համաձայնի նախատեսվող փոխառությունը երաշխավորել գրե-

1 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 113, ց. 4, գ. 820, թ. 17—18։

2 Տե՛ս նույն տեղում, գ. 454, թ. 206—207։

թե մշտական ընույթ կրող նյութական պարտավորություններով կամ այլ հանձնառություններով, քանի որ մեծ տերությունների երաշխիքների միջոցով փոխառության իրացման ամենապարզ եղանակը վճռականորեն մերժվել է անգլիական կառավարության կողմից։ Այդ նպատակով լիգայի ներկայացուցիչները, նախանձի գլխավորությամբ, տեսակցություն ունեցան Փարիզում ՍՍՀՄ դեսպանության քարտուղար, Սովետական Հայաստանի կառավարության հանձնարարությամբ այդ բանակցությունները վարող Սիմոն Փիրումյանի հետ, որը նրանց որոշակիորեն հայտարարեց, որ սովետական կառավարությունը երբեք չի կարող ընթանալ այդպիսի երաշխիքներ տալու ուղիով։ ՍՍՀՄ կառավարությունը համաձայնություն էր հայտնել ՀՍՍՀ անունից կնքել փոխառություն Մոսկվայի կենտրոնական բանկի երաշխավորությամբ, իսկ այլ կարգի պարտավորություններ, որոնք կարող էին խախտել Սովետական Հայաստանի սուվերենիտետը, սովետական կառավարության համար միանգամայն անընդունելի էին։

Նանսենն այնուհետև առաջարկեց ստեղծել մի ինքնավար կազմակերպություն, որը Հայաստանի կառավարությունից որոշակի պայմանագրային հիմունքներով կստանար նախատեսված հողամասերի ոռոգման և գաղթականների տեղավորման գործը, իսկ մյուս կողմից՝ հարաբերությունների մեջ կմտներ եվրոպական ֆինանսական շրջանների հետ՝ փոխառությունն իրացնելու համար։ Այդ առաջարկի հեղինակները ենթադրում էին, թե ինքնավար կազմակերպությունը կկարողանար ապահովել այն երաշխիքը, որը Անգլիան չհամաձայնվեց տալ անմիջականորեն Սովետական Հայաստանի կառավարության փոխառությանը[1]։

Վերջապես, 1925 թվականի սեպտեմբերի 26-ին Ազգերի լիգայի խորհուրդը որոշեց՝ ընտրել հինգ հոգուց բաղկացած մի հանձնախումբ, որը պետք է վերջնականապես պարզեր Նանսենի ծրագրի տեխնիկական կարելիությունը, կարծիքների փոխանակություն կատարեր Սովետական Հայաստանի և ուրիշ կառավարությունների, ինչպես նաև ընկերությունների ու մասնավոր անհատների հետ փոխառության իրացման և վերահսկիչ օրգանի ստեղծման շուրջը[2]։ Սովետական կառավարությունն ընդառաջեց ու նպաստեց նաև այդ որոշման կատարմանը։ Հայաստան եկավ նոր հանձնաժողով և լիգային ներկայացրեց լիովին հիմնավորված առաջարկներ։

1926 թվականի մարտի 19-ին Փարիզում տեղի ունեցավ Ազգերի լիգայի կողմից ստեղծված հայ գաղթականների տեղավորման հանձնաժողովի նիստը՝ Սովետական Հայաստանի ներկայացուցիչ Ս. Փիրումյանի մասնակցությամբ։ Հանձնաժողովի նիստը նախագահող ֆրանսիական ներկայացուցիչ Ժյուլ Պամսը իր ելույթում հաղորդեց, որ հանձնաժողովը ստացել է Հայաստան մեկնած մասնագետների զեկուցագրերը, որոնք լիովին հաստատում են Նանսենի ծրագրի իրագործելի լինելը։ Այդ հանձնաժողովի առաջարկությամբ լիգայի խորհուրդը որոշում կայացրեց ստեղծել հատուկ կոմիտե, որը պետք է զբաղվեր անհրաժեշտ գումարի ձեռքբերմամբ։ Միաժամանակ որոշեց Նանսենին կամ նրա

1 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 454, թ. 206—207։

2 Տե՛ս նույն տեղում, թ. 161։

ներկայացուցչին վարկ տրամադրել՝ հայ գաղթականության օգտին Եվրոպայում և Ամերիկայում հանգանակություն անցկացնելու հնարավորությունն ուսումնասիրելու նպատակով[1]։

Այսպիսով, Ազգերի լիգան «հայկական հարցը» փոխարինեց գաղթականական հարցով, իսկ գաղթականների հայրենադարձությանը նպաստելու խնդիրը՝ նրանց օգտին ինչ-որ հանգանականություն կազմակերպելու անօգուտ ձեռնարկով։

Ազգերի լիգայում տեղի ունեցած այդ ամբողջ անց ու դարձը, ինչպես և պետք էր սպասել, գործնականում ոչ մի դրական արդյունք չունեցավ հայ գաղթականության օգտին։ Փոխառության հարցի հետ կապված այդ բոլոր խորհրդակցությունները, ելույթներն ու բանաձևերը ցույց տվեցին, որ հայ գաղթականության հարցի լուծմամբ արմատապես մտահոգված միակ կառավարությունը՝ Սովետական Հայաստանի կառավարությունն էր։

Սովետական կառավարությունը անկեղծորեն մտահոգված լինելով բազմաշարչար հայ գաղթականության ճակատագրով, ամեն կերպ ընդառաջում էր տարագիր հայության հարցի լուծմանը, թեկուզ Ազգերի լիգայի միջոցով։ Սակայն, միանգամայն հասկանալի էր, որ սկզբունքային հարցերում նա երբեք չէր կարող զիջումներ անել իմպերիալիստական տերությունների շահերի արտահայտիչ և նրանց հլու կամակատար Ազգերի լիգայի խաբկանքներին։ Գնալով ավելի պարզ ու որոշակի դարձավ, որ ամեն անգամ, երբ հայ գաղթականների հարցը քննարկվում էր Ազգերի լիգայում՝ եվրոպական դիվանագետները «պիղատոսյան արցունքներ» էին թափում «դժբախտ ու չարչարված» հայ ժողովրդի կրած տառապանքների համար և խոսում նրան օգնելու «անհրաժեշտության» մասին, իսկ գործնականում շարունակում էին իրենց իմպերիալիստական քաղաքականությունը։

Մի քանի տարի շարունակ հայ գաղթականության հարցը և Նանսենի ծրագիրը «քննարկելուց» հետո, Ազգերի լիգան այն մոռացության տվեց։ Ուստի բնավ իզուր ու անհիմն չէր, որ սովետական կառավարությունը Նանսենի հանձնաժողովի Հայաստան գալուց առաջ ու առավել ևս դրանից հետո, մեծ սպասելիքներ չուներ Ազգերի լիգայից, հույսեր չէր կապում նրա հետ։

Մեր երկրում Նանսենին, որպես Սովետական Միության և հայ ժողովրդի անկեղծ բարեկամի, որպես հումանիստի, միշտ էլ հարգանքով են վերաբերվել և երբեք չեն կասկածել նրա բարի ցանկություններին ու մտադրություններին։ Սակայն հայ գաղթականության հարցի լուծման նրա հանձնաժողովից շատ բան չեն սպասել, որովհետև նա չէր խնդիրը որոշողը, այլ Ազգերի լիգայում նստած իմպերիալիստական տերությունների ներկայացուցիչները։ Սովետական կառավարությունը, ընդառաջելով Նանսենի հանձնաժողովին, նպատակ ուներ իրոք փորձել թեկուզ Ազգերի լիգայի միջոցով կազմակերպել տարագիր հայության որոշ մասի հայրենադարձությունը։ Հակառակ դեպքում, եթե չհաջողվեր դրական ընթացք տալ այդ հարցին, ապա մեկընդմիշտ կցրվեր սփյուռքահայ աշխատավորության գիտակցության մեջ իշխող այն սին մոլորությունը, թե իբր մեծ տերություններն ու Ազգերի լիգան ցանկանում են լուծել տարագիր հայու-

1 Տե՛ս «Նոր ուղի», 1929, № 1, էջ 342։

թյան հարցը։ Այցելելով մեր երկիրը և տեղում ծանոթանալով նրա աշխատասեր ժողովրդին, նրա դարավոր մշակույթին, Նանսենն իր ստացած անմիջական տպավորությունների և ուսումնասիրությունների հիման վրա հետագայում գրեց «Խաբված ժողովուրդ» գիրքը, որը, ինչպես դիպուկ կերպով ռեկլամել է կերմանական հրատարակիչը «մեղադրական է Անտանտի և Ազգերի լիգայի դեմ»։

Վերջնականապես համոզվելով, որ կապիտալիստական աշխարհը քար անտարբերությամբ է վերաբերվում հայ գաղթականության տառապանքներին, և այլևս չհանդուրժելով, որ Ազգերի լիգան շարունակի խաբել հազարավոր տարագիրների, 1929 թվականի աշնանը լիգայի ընդհանուր ժողովում Նանսենը առաջարկ մտցրեց՝ դադարեցնելու հայ գաղթականների հարցը անօգուտ կերպով հոլովվելը։ 1929 թվականի սեպտեմբերի 21-ին, ընդհանուր ժողովը ստիպված էր ընդունել Նանսենի առաջարկը և տարիներ շարունակ լիգայի շրջանակներում անարդյունք կերպով արծարծված այդ հարցը հանվեց օրակարգից։

7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵՆ ԵՎ ՆՐԱ ԴԵՐԸ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՀԵՏ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՊԵՐԻ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Հայրենիքի հետ սփյուռքահայ աշխատավորների կապերի ստեղծման ու ամրապնդման գործում կարևոր դեր է խաղացել Հայաստանի օգնության կոմիտեն (ՀՕԿ-ը), որը կազմակերպվել էր 1921 թվականի սեպտեմբերին Երևանում։

Այն ժամանակի դժվարին պայմաններում նման մի անկուսակցական հասարակական կազմակերպության միջոցով գաղութահայությանը սոցիալիստական հայրենիքի շուրջը համախմբելու և նրա կենսական ուժերը օգտագործելու խնդիրներն ունեին խիստ կարևոր նշանակություն։

ՀՕԿ-ի հիմնադիր համագումարից անմիջապես հետո ստեղծվեցին նրա տեղական մասնաճյուղերը Սովետական Միության հայաշատ գրեթե բոլոր քաղաքներում։ Սակայն մինչև 1924 թվականի սկիզբները ՀՕԿ-ը արտասահմանում գրեթե մասնաճյուղեր չուներ և իր գործունեությունը հայկական գաղթօջախներում իրականացնում էր հայրենիքի օգնության մարմնի (ՀՕՄ-ի), Հայոց բարեգործական ընդհանուր միության և այլ կազմակերպությունների միջոցով։ Այդ տեսակետից բացառություն էր կազմում միայն Պարսկաստանը, ուր Սովետական Հայաստանի լիազոր ներկայացուցչության ու հյուպատոսությունների և տեղի առաջադիմական ուժերի ջանքերի շնորհիվ մասնաճյուղեր էին ստեղծվել դեռևս 1922 թվականի փետրվարին։ Նման դրությունը, հասկանալի է, ՀՕԿ-ին չէր կարող բավարարել և նրա կենտրոնական վարչությունը վճռական քայլեր կատարեց արտասահմանյան մասնաճյուղեր կազմակերպելու ուղղությամբ։

Սակայն հենց սկզբից, ինչպես և պետք էր սպասել, գաղութահայ ռեակցիոն ուժերը մասամբ անտարբեր, մասամբ էլ բացահայտ թշնամական դիրք բռնեցին Հայաստանին օգնող կազմակերպության մասնաճյուղերի ստեղծման գործում։ Հակառակ դրան, սփյուռքահայ աշխատավորական լայն զանգվածները բուռն հետաքրքրություն և լայն ակտիվություն ցուցաբերեցին հայրենիքին օգնող հաստատություն կազմակերպելու ուղղությամբ։

Այսպես, հունահայ աշխատավորները արտասահմանում առաջիններից մեկը կազմակերպեցին ՀՕԿ-ի տեղական մասնաճյուղեր (1924 թվականի ապրիլ) և, չնայած իրենց քաղաքական ու տնտեսական անբարենպաստ կացությանը, զգալի միջոցներ տրամադրեցին ՀՕԿ-ի կենտրոնական վարչությանը։ Արդեն 1925 թվականի սկզբներին ՀՕԿ-ի մասնաճյուղեր էին կազմակերպվել Ֆրանսիայի, Բալկանների, Մերձավոր արևելքի, ԱՄՆ-ի, Հարավային Ամերիկայի և այլ հայկական գաղթօջախներում։

Գաղթահայությանը դեպի Սովետական Հայաստան տրամադրելու տեսակետից մեծ նշանակություն ունեցավ 1921 թվականի նոյեմբեր-դեկտեմբերին ՀՕԿ-ի առաջին նախագահ՝ Հովհաննես Թումանյանի առաքելությունը դեպի Կ. Պոլիս։ Հովհ. Թումանյանին հաջողվեց Կ. Պոլսում միավորել մոտ հինգ տասնյակի հասնող մշակութային ու բարեգործական ազգային կազմակերպությունների մինչ այդ անջատ-անջատ ծավալված գործունեությունը և այն ուղղել հօգուտ հայրենիքի։

1921 թվականի դեկտեմբերի 1-ին ՀՕԿ-ի և ՀՕՄ-ի ներկայացուցիչների ստորագրություններով մի շրջաբերական ուղարկվեց գաղութահայ բոլոր կարեվոր կենտրոնները։ Շրջաբերականում կոչ էր արվում տեղերում ստեղծել Հայաստանի օգնության կոմիտեի մասնաճյուղեր, կապվել ՀՕԿ-ի կենտրոնական վարչության հետ և ամեն կերպ նպաստել երկրի վերաշինության ու գաղթականության նյութական վիճակը բարելավելու գործին[1]։

Վերոհիշյալ կոչը լայն արձագանք գտավ սիլյուքահայության մեջ և հատկապես Կ. Պոլսում։ Ամենուրեք սկսեցին կազմակերպել հանգանակություններ ու նվիրատվություններ հայրենիքի օգտին։ Ջանցավ մի երկու ամիս և Հայաստան հասավ ալյուր, հագուստեղեն, դեղորայք, դրամ և այլն[2]։ Գնալով ավելի աշխուժացավ ՀՕԿ-ի գործունեությունը. այն դարձավ գաղութահայությունը հայրենիքի հետ կապող ամենաառաջադիմական մասսայական կազմակերպություն։ Արդեն 30-ական թվականների սկզբին ՀՕԿ-ն արտասահմանում ուներ 300-ից ավելի մասնաճյուղեր, որոնցում ընդգրկված էին ավելի քան 10 000 անդամ։

Սակայն հայրենիքին հասցրած նյութական օգնությունից նվազ կարևոր չէր նրա մատուցած բարոյական օգնությունը։

ՀՕԿ-ը կարևոր դեր խաղաց երկրի մասին սիլյուքում ճշմարտացի և բազմակողմանի տեղեկություններ տալու իմաստով։ Այդ նպատակով ՀՕԿ-ի կենտրոնական վարչությունը արտասահմանյան գաղթօջախներն ուղարկեց կինոնկարներ, Հայաստանի տնտեսական ու մշակութային նվաճումները ամփոփող շրջիկ ցուցահանդեսներ, գրքեր, գեղարվեստական պատկերազարդ ալբոմներ, բացիկներ և այլն։ Այդ ուղղությամբ նշանակալից գործ կատարեցին նաև ՀՕԿ-ի կենտրոնական վարչության կողմից պարբերաբար արտասահման մեկնող պատվիրակությունները ու գործիչները։

Այսպես, 1924 թվականի վերջերին արտասահման գործուղվեց ՀՕԿ-ի կենտրոնական վարչության նախագահ, ՀՍՍՀ հողժողկոմ Ար. Երզնկյանը։ Նա եղավ

---

1 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 178, գ. 393, թ. 15։

2 Տե՛ս նույն տեղում, ֆ. 114, գ. 3, թ. 101—102։

Գերմանիայում, Ֆրանսիայում, Բելգիայում և Անգլիայում, ուր բազմաթիվ հանդիպումներ ունեցավ գաղութահայ աշխատավորության հետ։ Նրանց առջև Ար. Երզնկյանը հանդես է գալիս Սովետական Հայաստանի մասին հանգամանալից զեկուցումներով ու ելույթներով, օգնում է հիմնելու ՀՕԿ-ի մասնաճյուղեր և բարեգործական միության ներկայացուցիչների հետ կնքում մի շարք համաձայնագրեր՝ Հայաստանին կտակված որոշ գումարների օգտագործման վերաբերյալ[1]։

Սովետական Հայաստանի և սփյուռքահայության կապերի ամրապնդման, ինչպես նաև արտասահմանում ՀՕԿ-ի գործունեության հետագա զարգացման տեսակետից կարևոր դեր խաղաց ՀՕԿ-ի կենտրոնական վարչության կողմից 1925 թվականի վերջերին հայկական գաղութները մեկնած նոր պատվիրակության կազմի մեջ մտնում էին կենտրոնական վարչության քարտուղար Դր. Վարդանյանը, վարչության անդամ Կ. Միքայելյանը և Հայաստանի կարմիր խաչի նախագահ, բժիշկ Ս. Կամսարականը։ Այդ պատվիրակությունը արտասահմանում մնաց մեկ տարուց ավելի, շրջեց համարյա հայկական բոլոր գաղթօջախները և ծանոթացավ սփյուռքահայության կյանքին։ Պատվիրակության անդամներն ուսումնասիրեցին ՀՕԿ-ի արտասահմանյան գործունեությունը, հիմնադրեցին նոր մասնաճյուղեր և այլն։ Նրանք ամենուրեք հանդես եկան Սովետական Հայաստանի նվաճումների և ՀՕԿ-ի հետագա անելիքների մասին դասախոսություններով ու զեկուցումներով, որոնք դրական մեծ արդյունքներ ունեցան։ Պատվիրակությունը ձեռք բերեց նաև նյութական որոշակի արդյունքներ։ ՀՕԿ-ի Ֆրանսիայի, Անգլիայի և Ամերիկայի մասնաճյուղերը զգալի գումարներ տրամադրեցին ներգաղթողների համար Հայաստանում բնակարաններ կառուցելու ֆոնդին[2]։ Այդ միջոցներով հետագայում Երևանում կառուցվեցին մի քանի շենքեր, որտեղ օթևան գտան տարագրությունից հայրենիք վերադարձած տասնյակ ընտանիքներ։

Այդպիսի դրական գործունեություն ծավալեցին նաև ՀՕԿ-ի կենտրոնական վարչության կողմից հետագայում արտասահման մեկնած պատվիրակությունները և անհատ գործիչները։

Սովետական Հայաստանի մասին սփյուռքահայությանը ճիշտ գաղափար տալու և բուրժուա-ազգայնական կուսակցությունների դեմ պայքար կազմակերպելու տեսակետից կարևոր դեր կատարեցին նաև ՀՕԿ-ի պարբերականներն ու այլ հրատարակություններ։ ՀՕԿ-ի կենտրոնական վարչության առաջին պարբերականը «Հրավիրակ» ամսագիրն էր, որը լույս էր տեսնում 1925—1926 թվականներին։ Ընդառաջելով արտասահմանյան մասնաճյուղերի և սփյուռքահայ աշխատավորների ցանկություններին՝ ՀՕԿ-ի կենտրոնական վարչությունը 1928 թվականին հրատարակեց «ՀՕԿ-ի տեղեկատու» ամսագիրը։

Տարբեր ժամանակներում մի քանի պարբերականներ են լույս ընծայել նաև ՀՕԿ-ի Թիֆլիսի և Մոսկվայի մասնաճյուղերը («Օգնիր Հայաստանին», «Հայրենաշեն», «Լրաբեր» և այլն)։

---

1 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 178, ց. 1, գ. 66, թ. 66—68։

2 Տե՛ս նույն տեղում, գ. 298, թ. 10—14։

Իրենց տպագիր օրգաններն ունեին նաև ՀՕԿ-ի Ամերիկայի կենտրոնական վարչությունը («Շինարար» հանդեսը, որը լույս տեսավ 1927 թվականից սկսած), Եգիպտոսի մասնաճյուղը («ՀՕԿ» ամսագիրը)։ ՀՕԿ-ի Ֆրանսիայի կենտրոնական վարչությունը 1933—1935 թվականներին Փարիզում հրատարակում էր «ՀՕԿ» ամսագիրը, որպես ՀՕԿ-ի արտասահմանյան մասնաճյուղերի օրգան։

Սովետական Հայաստանի վերելքը, սփյուռքահայության կյանքը և ՀՕԿ-ի գործունեությունը մանրամասնորեն լուսաբանում էր նաև 1925—1930 թվականներին Փարիզում լույս տեսնող «Երևան» թերթը։

ՀՕԿ-ի բոլոր օրգանները, ինչպես նաև սփյուռքահայ ամբողջ առաջադիմական մամուլը նպաստում էին հայրենիքի հետ գաղութահայ աշխատավորության կապերի ամրապնդմանը, Սովետական Հայաստանի համակիրների աճին, ՀՕԿ-ի մասնաճյուղերի գործունեության հաջող ծավալմանը և այլն։

1925 թվականի սկզբներին ՀՕԿ-ի կենտրոնական վարչությունը հիմնեց գեղարվեստական հրատարակչության բաժին, որը լույս ընծայեց մեծ թվով հայագիտական ուսումնասիրություններ, գեղարվեստական երկեր, նկարներ, ալբոմներ և այլ գործեր։

Այդ բոլոր հրատարակությունների միջոցով ՀՕԿ-ը նպաստակ ուներ աշխարհով մեկ ցրված հայությանը բազմակողմանի և ճիշտ գաղափար տալ Սովետական Հայաստանի մասին և նրանց մեջ միշտ վառ պահել սերը հայրենի երկրի նկատմամբ։

Հայաստանի օգնության կոմիտեի գործունեությունը առաջ էր բերում գաղութահայ հետադիմական ուժերի և հատկապես դաշնակցության կատաղի թշնամանքը։

Դաշնակցականները ղգում էին, որ գաղութահայ զանգվածների շրջանում Սովետական Հայաստանի նկատմամբ ստեղծվող լայն համակրանքի և ՀՕԿ-երի մասսայականության հետևանքով արագորեն կորցնում են իրենց հենարանը։ Ուստի ձգտում էին ամեն կերպ արգելակել ՀՕԿ-ի մասնաճյուղերի ստեղծմանն ու նրանց գործունեության ծավալմանը, աշխատում էին ժողովրդական զանգվածներին հեռու պահել Սովետական Հայաստանին համակիր ՀՕԿ-ի կազմակերպություններից։ Այսպես, 1924 թվականի հոկտեմբերի 23-ին Բեռլինի «Հայ ուսանողական միությունը» ժողով է հրավիրում ՀՕԿ-ի մասնաճյուղ հիմնելու համար։ Ժողովին մասնակցում են մոտ 70 հոգի։ Ժողով են գալիս նաև հայ գաղութի «թափառական հերոսները» (խոսքը դաշնակցականների մասին է — *խմբ.*), որոնց նպատակն էր խանգարել ՀՕԿ-ի մասնաճյուղի կազմակերպումը։ Ժողովը տևում է մինչև կեսգիշեր, բայց դաշնակցականների պարագլուխ Արշակ Ջամալյանի և նրա համախոհների դիմադրության պատճառով հնարավոր չի լինում դրական արդյունքների հասնել։ Նախաձեռնողները հարկադրված հրաժարվում են երկրորդ ժողովը հրավիրելուց և ՀՕԿ-ի մասնաճյուղ կազմակերպելուց[1]։

Դաշնակցականները մատնությունների միջոցով հասան այն բանին, որ տեղական իշխանությունները արգելեցին ՀՕԿ-ի Բեյրութի, Կահիրեի, Ալեքսանդրիայի և Ալժիրի մասնաճյուղերը։

---

1 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 178, ց. 1, գ. 289, թ. 18։

Պայքարի նույն մեթոդներին էին դիմում նրանք նաև Հունաստանում, Հարավային Ամերիկայի երկրներում և այլուր։

Դաշնակցականների վարքագիծը բնութագրելու համար բնորոշ է հետևյալ փաստը։ Նյու-Յորքում հրատարակվող հայ բողոքականների օրգան «Հայաստանի կոչնակը» Սիրիայում արգելել տալու նպատակով կառավարությանը հավատացնում էին, թե իբր այդ թերթը «...ծառայում է խորհրդային իշխանության պրոպագանդին»։ Բանը նրանումն էր, որ «Կոչնակը» երբեմն լուրեր էր տպագրում Սովետական Հայաստանում ծավալված շինարարական աշխատանքների ու մշակութային նորությունների վերաբերյալ, քաղվածքներ էր կատարում սովետական թերթերից և այլն։ Ջգալով ամեն կերպ խանգարել ՀՕԿ-ի գործունեությունը, դաշնակցականները տեղական իշխանություններին ներկայացնում էին ՀՕԿ-ը որպես «համայնավար» կազմակերպություն, արգելել էին տալիս Սովետական Հայաստանի վերելքի մասին պատմող գրականության ու մամուլի տարածումը, կինոֆիլմերի ցուցադրումը և այլն։

Ջնայած այդ բոլոր դավերին, արտասահմանում անընդհատ աճում էին ՀՕԿ-ի մասնաճյուղերը, իրենց շուրջն էին համախմբում սփյուռքահայ կենսունակ տարրերին և դառնում գաղութահայ կյանքի աշխուժացման ու ազգային գոյատևման կարևոր ազդակներից մեկը։ Գաղութահայ զանգվածների մեջ լայն ժողովրդականություն էին վայելում ՀՕԿ-ի մասնաճյուղերի ստեղծած մշակութային միությունները, գրադարանները, ակումբները, թատերական ու երգի ինքնագործ խմբերը և ազգային մշակույթի այլ օջախները։ Դաշնակցականները տեսնելով, որ դրսից անհնարին է կասեցնել ՀՕԿ-ի գործունեության ծավալումը, փորձեցին թափանցել նրա արտասահմանյան մասնաճյուղերի ղեկավարության մեջ և իրենց համար ցանկալի հունով տանել նրանց աշխատանքը, այսինքն՝ ՀՕԿ-ի կազմակերպությունները հակադրել Սովետական Հայաստանին։ Որոշ տեղերում նրանց հաջողվեց մոլորեցնել մասսաներին և հասնել իրենց նպատակին։

Պայքարելով ՀՕԿ-ի դեմ՝ դաշնակցականները հաճախ էին դիմում տեռորիստական ակտերի՝ նրա ակտիվ անդամների նկատմամբ։ 30-ական թվականներին նրանց այդ գործունեությունը այնպիսի բնույթ էր ընդունել, որ առաջադիմական ուժերը անհրաժեշտ համարեցին տեռորի դեմ պայքարելու համար ստեղծել հատուկ կոմիտե։ 1933 թվականին Փարիզում հիմնվեց «Դաշնակ տեռորի զոհերի պաշտպանության կենտրոն», որը գաղութահայության ուշադրությունը հրավիրեց դաշնակցականների կազմակերպած տեռորիստական ակտերի դեմ ավելի գործոն պայքար մղելու անհրաժեշտության վրա։ «Դաշնակ տեռորի զոհերի պաշտպանության կենտրոնի» գաղութահայությանն ուղղված կոչերից մեկում ասված էր, որ շուրջ 10 տարվա ընթացքում ՀՕԿ-ի շարքերից դաշնակցական տեռորիստների ձեռքով տասնյակ մարդիկ են զոհվել Բելգրադում, Աթենքում, Լիոնում և այլ վայրերում[1]։ 1933 թվականի փետրվարի 26-ին Ֆրանսիայում, Գըրնոբլ քաղաքում դաշնակցականները սպանեցին ՀՕԿ-ի գործիչ Մանուկ Մարուքյանին և վիրավորեցին հինգ հայերի այն բանի համար, որ նրանք ժողովի ժամանակ բացականչել էին՝ «Կեցցե Խորհրդային Հայաստանը»։ «Դաշ-

1 Տե՛ս «ՀՕԿ» (Փարիզ), 1933, № 8, էջ 56—59։

նակ տեռորի զոհերի պաշտպանության կենտկոմը» անդրադառնալով այս փաստերին, իր հրապարակած կոչերից մեկում գրում էր. «Գըրնոբոլի զոհ Մարուքյանից հետո զոհվեց Գըլըճյանը Աթենքում։ Ալեքսանդրիո մեջ կհարվածի տոքթ. Թաշճյան, մինչ Ամերիկա Գուլումճյան հարձակման կենթարկվի եռագույնի (դաշնակցականների միրապետության ժամանակ Հայաստանի դրոշը — խմբ.) դեմ արտահայտված ըլլալու համար»[1]։ Կոչում գաղութահայ աշխատավորներին խորհուրդ էր տրվում ամենուրեք ստեղծել դաշնակցական տեռորի զոհերի պաշտպանության հանձնախմբեր և միասնական պայքար մղել այդ ազգադավ քաղաքականության դեմ, «...որովհետև միայն ժողովրդական ցասումի հսկա ալիքին առջև է, որ վրացյանները և ջամալյանները պիտի մտնեն իրենց որջերը ու պիտի չվրդովեն՝ իրենց քաղաքական արկածախնդիր խաղերով, գաղութահայ հասարակության հանգիստն ու ապագան»[2]։

Գնալով ուժեղանում են հալածանքները ՀՕԿ-ի մասնաճյուղերի ու անդամների դեմ նաև Եվրոպայում, Ամերիկայում և մյուս վայրերում։ Սակայն, չնայած դրան, ՀՕԿ-ի շարքերում համախմբված սփյուռքահայ աշխատավորները դժվարին պայմաններում շարունակում էին իրենց պայքարը։ Եվ, թեպետ «Հայաստանի օգնության կոմիտեի» անունն այլևս համապատասխան չէր այդ կազմակերպության էությանը, այնուամենայնիվ, այն կարևոր դեր էր կատարում հայրենիքի հետ սփյուռքահայության կապերը ամուր պահելու գործում։

Անհատի պաշտամունքի տարիներին գոյություն ունեցած կամայականություններով պետք է բացատրել ՀՕԿ-ի նման կարևոր դեր խաղացող առաջադիմական մի կազմակերպության լիկվիդացիան 1937 թվականի դեկտեմբերին։ Անհիմն կերպով ձերբակալվեցին ՀՕԿ-ի ղեկավար շատ գործիչներ։

Այսպիսով, Հայաստանի օգնության կոմիտեն իր գործունեությամբ նպաստեց սոցիալիստական հայրենիքի հետ սփյուռքահայ աշխատավորության կապերի ամրապնդմանը, նրանց սովետական օրիենտացիայով դաստիարակմանը։

8. ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅԵՐԻ ՀԱՅՐԵՆԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ 1926—1940 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԵՎ ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Սովետական կառավարության և կոմունիստական կուսակցության շրջահայաց քաղաքականությունը գաղութահայության նկատմամբ, Սփյուռքում աստիճանաբար առաջ բերեց մի շատ խրախուսելի հայրենասիրական շարժում։ Դա այնտեղ գոյություն ունեցող հայրենակցական, վերաշինաց, կրթասիրաց և այլ միությունների ու ընկերությունների կողմից ներգաղթողների համար Սովետական Հայաստանում նոր ավաններ, շենքեր ու զանազան ձեռնարկություններ հիմնելու ձգտումն էր։

Հայրենակցական միությունները, որոնք մեծ մասամբ ծնունդ էին առել հայկական օջախներում նախքան առաջին համաշխարհային պատերազմը, իրենց շուրջն էին համախմբել գաղութահայ հոծ զանգվածների և խոշոր գու-

---

1 «ՀՕԿ» (Փարիզ), 1933, № 8, էջ 56—59։

2 Նույն տեղում։

մարներ էին կոտակել։ Հայրենակցական միությունների առաջացման հիմնական շարժառիթն ու նպատակն էր՝ նյութական ու կուլտուրական աջակցություն ցույց տալ Արևմտյան Հայաստանում և ընդհանրապես Թուրքիայում գտնվող իրենց հայրենակիցներին։ Միանգամայն պարզ է, որ առաջին համաշխարհային պատերազմից հետո, երբ Արևմտյան Հայաստանում գրեթե հայություն չէր մնացել, անիմաստ և անիրագործելի էր դարձել հայրենակցական միությունների նախկին նպատակը։

Հայաստանում սովետական իշխանության հաստատումից հետո, հայության համար ստեղծված նոր իրադրությունը հայրենակցական միություններին թելադրում էր մշակել գործունեության նոր ուղեգիծ, ամեն կերպ զորավիգ լինել համայն հայության միակ հանգրվանին՝ Սովետական Հայաստանին և նպաստել նրա տարագիր զավակների զանգվածային ներգաղթին։

Սակայն Սովետական Հայաստանի թշնամիները գործադրում էին ամեն ճիգ ու ջանք, որպեսզի խափանեն հայրենակցական միությունների այդ ճիշտ դիրքորոշումը։ Նրանք խորհուրդ էին տալիս փոշիացնել հայրենակցական միությունների միջոցները, նույնիսկ Աֆրիկայում կամ Ամերիկայում, քան թե Հայաստանում անցկացնել մի ջրանցք կամ կառուցել թեկուզ մի տուն հենց իրենց՝ Սփյուռքից հայրենիք դարձող տարագիրների համար։

Դաշնակցականների նման բանսարկությունների հետևանքով էր, որ Ամերիկայում գտնվող հաճընցիների հայրենակցական միության ղեկավարները 20-ական թվականների կեսերին մտադրվել էին Սիրիայում կառուցել «Նոր Հաճընն» ավանը և այնտեղ հավաքել նախկին բոլոր հաճընցիներին։ Սակայն հաճընցի տարագիրները ճիշտ կռահեցին այդ հայրենադավ մտադրության հետևանքները և ժամանակին հակահարված տվեցին նման որոշման իրականացմանը[1]։ Նրանց միահամուռ բողոքները ցույց տվեցին, որ գաղութահայության հիմնական զանգվածը իր ապագան անվերապահորեն կապել է Սովետական Հայաստանի հետ և ոչ մի խաբեություն չի կարող սասանել նրա հավատը հայրենիքի նկատմամբ։

Ահա այդ ժամանակ էլ հենց սկիզբ առավ հայրենակցական միությունների վճռական շրջադարձը դեպի Սովետական Հայաստան, որտեղ պատմական Հայաստանի մի շարք քաղաքների ու գյուղերի անուններով աստիճանաբար առաջացան նոր ավաններ ու թաղամասեր։

Հայրենակցական միությունների այդ ճիշտ ուղիով ընթանալու հայրենասիրական առաջին օրինակը տվեց Ամերիկայում գտնվող Արաբկիրցիների հայրենակցական միությունը, որը չարդեց գաղութահայության միտքը կաշկանդող շղթաները և ճեղքելով Ատլանտյան օվկիանոսը մուտք գործեց հայ աշխատավորության սոցիալիստական հայրենիքը։

Արաբկիրցիների հայրենակցական միության դիմումը հարգվեց սովետական կառավարության կողմից և նրան թույլատրվեց Երևանի հյուսիս-արևմտյան ծայրամասում կառուցել «Նոր Արաբկիր» ավանը, ուր կկարողանային հավաքվել տարագիր բոլոր նախկին արաբկիրցիները[2]։

---

1 Տե՛ս «ՀՕԿ-ի տեղեկատու» (Երևան), 1927, № 1, էջ 13—14։

2 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 54, թ. 30։

Նոր Արաբկիրը, որի նախագիծը պատրաստել էր ակադեմիկոս Ալ. Թամանյանը, մեծ հանդիսավորությամբ հիմնադրվեց Հայաստանում սովետական կարգերի հաստատման հինգերորդ տարեդարձի օրը՝ 1925 թվականի նոյեմբերի 29-ին[1]։ Սովետական կառավարության ամենօրյա հոգատարության շնորհիվ արագորեն կառուցվում էր Նոր Արաբկիրը։ Այդ է վկայում թեկուզ այն փաստը, որ արդեն 1928 թվականի վերջերին կառուցվել էր 51 տուն և հայրենադարձ բնակիչների թիվը հասնում էր 762-ի։ Ավանն ուներ մանածագործների, պղպեձագործների, դերձակների, կոշկակարների, գուլպագործների արտելներ, դրպրոց, մանկապարտեզ, ակումբ, գրադարան և այլն[2]։

Գրեթե նույն ժամանակաշրջանում Հունաստանից ներգաղթած իզմիրցի, ատաբազարցի, սեբաստացի, բիլեճիկցի գաղթականների և Բյութանիացիների հայրենակցական միության կողմից Երևանի հարավ-արևելյան արվարձանում, Թոխմախան լճի մոտ, հիմնադրվեց «Նոր Բյութանիա» ավանը։ Սկզբում Նոր Բյութանիայում բնակություն հաստատեցին մոտ 60 հայրենադարձ տնտեսություն, որոնք բոլորն էլ զբաղվում էին շերամապահությամբ, ծխախոտագործությամբ և այլ կուլտուրաների մշակությամբ։ Որպես թանկարժեք տեխնիկական կուլտուրաների մշակությամբ զբաղվողներ, նրանք արտոնյալ պայմաններով վարկեր էին ստանում Երևանի գավգործկոմից, գյուղբանկից և ուրիշ հաստատություններից, որոնցով կառուցում են բնակելի տներ, ձեռք բերում գյուղատնտեսական գործիքներ և սերմեր[3]։

ՀՍՍՀ ԺողկոմխորհինԱռընթեր գաղթականական հանձնաժողովը դեռևս 1925 թվականի մարտին ընդառաջել էր նաև Սեբաստիայի վերաշինաց միությանը և թույլատրել Սովետական Հայաստանում հիմնել գորգագործական արհեստանոց և այնտեղ տեղափոխել մոտ 1200 գորգագործ սեբաստացիների ու որբերի։ Հետագայում բավարարվեց նաև սեբաստացիների Սովետական Հայաստանում Նոր Սեբաստիա անունով ավան հիմնադրելու մասին խնդրանքը[4]։

Սովետական Հայաստանում հետագայում այդպիսի հնարավորություններ ստացան նաև Մալաթիայի կրթասիրաց ընկերությունը, Ամերիկայում հիմնադրված Դատեմի լուս-ուսումնասիրաց ընկերությունը, խարբերդցիները, Թոմարզացիները, կեսարացիները, երզնկացիները և Արևմտյան Հայաստանից ու ընդհանրապես Թուրքիայի այլևայլ անկյուններից աշխարհի տարբեր կողմերը ցրված բազմաթիվ ուրիշ հայ տարագիրներ։

Սովետական կառավարության, համապատասխան հայրենակցական միությունների և որոշ նվիրատուների ու կտակների միջոցներով ձեռնարկվեցին Նոր Մալաթիայի (1927), Նոր Սեբաստիայի (1928), Նոր Խարբերդի (1930), Նուբարաշենի (1930), Նոր Թոմարզայի (1931), Նոր Կեսարիայի (1934), Նոր Տիգրանակերտի (1934), Նոր Տարոնի, Նոր Երզնկայի, Նոր Արմաշի, Նոր Յողղատի, Նոր Ամասիայի և այլ ավանների կառուցման աշխատանքները։

ՀՍՍՀ Ժողկոմխորհի հատուկ որոշմամբ հայրենակցական միությունների կողմից Հայաստանում կատարվող շինարարական աշխատանքների ղեկավա-

1 Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 1925, № 273։

2 Տե՛ս «Երևան», 1929, № 468։

3 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍԾ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 418, թ. 19—20 և գ. 518, թ. 7։

4 Տե՛ս նույն տեղում, գ. 493, թ. 44—45։

րությունը հիմնականում դրված էր ՀՕԿ-ի կենտրոնական վարչության վրա։ ՀՕԿ-ը ոչ միայն կազմակերպական տեսակետից, այլև նյութական զգալի օգնություն էր ցույց տալիս հայրենադարձների համար նոր ավանների կառուցման աշխատանքներին։

Սովետական Հայաստանի տնտեսական վիճակի բարելավումը հնարավորություն տվեց հաջորդ տարիներին շարունակելու հայրենադարձությունը։

1926—1929 թվականների ընթացքում Հունաստանից, Թուրքիայից և Ֆրանսիայից ներգաղթածների թիվը, ոչ լրիվ տվյալներով, կազմեց 5863 մարդ[1]։

Սփյուռքահայ աշխատավորների հայրենադարձությունը ավելի մեծ թափ ստացավ ՀՍՍՀ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի «ՀՍԽՀ սահմաններն արտասահմանի աշխատավոր հայերի մասսայական նոր ներգաղթ արտոնելու մասին» 1931 թվականի օգոստոսի 10-ի որոշումից հետո։ ՀՍՍՀ Ժողկոմխորհին առընթեր կազմակերպվեց ներգաղթի հատուկ հանձնաժողով՝ Ժողկոմխորհի նախագահի տեղակալ Ա. Երզնկյանի ղեկավարությամբ։ ՀՍՍՀ Կենտգործկոմի և Ժողկոմխորհի որոշման մեջ ներգաղթի հանձնաժողովին պարտավորվեցվում էր սահմանել ներգաղթողների քանակը, նրանց ընդունման ժամկետները, մատակարարման և ֆինանսավորման հետ կապված բոլոր խնդիրների մշակումն ու լուծումը, հայրենադարձներին ըստ մասնագիտությունների աշխատանքով ապահովելը, հանրապետության սահմաններում բնակեցնելը և այլն։

Ի կատարումն վերոհիշյալ որոշման, 1932—1933 թվականների ընթացքում Հունաստանից, Բուլղարիայից և Ֆրանսիայից ավելի կազմակերպված ձևով Սովետական Հայաստան ներգաղթեցին շուրջ 8007 հոգի։ Ավելի քան 1800 մարդ հայրենիք դարձան Ֆրանսիայի տարբեր քաղաքներից ու գավառներից 1936 թվականին[2]։ Բացի մեծ խմբերով կատարված հայրենադարձությունից, 1926—1936 թվականների ընթացքում անհատական վիզաներով արտասահմանյան տարբեր երկրներից, հատկապես ԱՄՆ-ից Սովետական Հայաստան ներգաղթեցին 6926 մարդ[3]։ Ի մի բերելով 1926—1936 թվականների ներգաղթածների քանակը, կստանանք 22598 թիվը։ Դրան ավելացնելով նաև 1921—1925 թվականների ներգաղթածներին (19 688), մոտավոր ճշտությամբ կարելի է ասել, որ 1921—1936 թվականների ընթացքում օտարությունից հայրենիք էին վերադարձել շուրջ 42286 տարագիր։

1932—1933 և 1936 թվականներին ներգաղթած տնտեսությունները հիմնականում տեղավորվեցին հայրենադարձների համար կառուցված ավաններում, Երևանում, Լենինականում, Կիրովականում, Անի-Պեմզաշում, Իջևանում, Ստեփանավանում, Լամբալուի սովխոզում և այլ վայրերում։

Ջնայած ՀՕԿ-ի, հայրենակցական միությունների և բարեգործական այլ հասարակությունների կողմից ներգաղթողներին ցույց տրվող օգնությանը, առանց սովետական կառավարության բազմակողմանի աջակցության, նրանց կարիքների նկատմամբ ամենօրյա հոգատարության, անհնարին է պատկերաց-

1 Տե՛ս Մ.Ի հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 1, ց. 25, գ. 9, թ. 34—36 և ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 128, ց. 1, գ. 1588։

2 Տե՛ս նույն տեղում։

3 Տե՛ս նույն տեղում։

նել հայրենադարձների դրության բարելավումը։ Սովետական կառավարությունը միլիոնավոր ռուբլիների հասնող գումար տրամադրեց հենց միայն 1932—1933 թվականներին ներգաղթած տնտեսությունների համար բնակարաններ, դպրոցներ, մանկապարտեզներ կառուցելու, աննասուններ և այլ միջոցներ հատկացնելու գործին[1]։

Սակայն հարկ է նշել, որ հայրենադարձների ավանների շինարարությունը, նրանց կոմունալ-կենցաղային կարիքների բավարարումը որոշ տեղերում լավ չէր կազմակերպված, որը երբեմն արդարացի դժգոհությունների տեղիք էր տալիս։ Սակայն, չնայած թերություններին, հայրենադարձների հիմնական զանգվածը ճիշտ էր ըմբռնում եղած պակասությունների ու անհարմարությունների պատճառը և համբերությամբ հաղթահարում էր այդ կարգի դժվարությունները։

1933 թվականի սեպտեմբերի 21-ին ՀԿԿ Կենտկոմի քարտուղարությունը քննարկեց «Ներգաղթածների դրության և նրանց հետ տարվող աշխատանքների մասին» հարցը և ծավալուն որոշում ընդունեց, որը կուսակցական ու սովետական օրգանների ուշադրությունն էր հրավիրում այդ գործը ըստ ամենայնի հաջող իրականացնելու ուղղությամբ։

Կենտկոմի քարտուղարությունը գտնում էր, որ ներգաղթածների դրությունը և նրանց հետ տարվող աշխատանքները միանգամայն անբավարար են մի շարք շրջաններում (Ղուրդուղուլի, Ամասիա, Լենինականի մսի կոմբինատ, 3-րդ սովխոզ և այլն)։ Հատուկ նշվում էր այն հանգամանքը, որ չնայած ներգաղթածների շրջանում տարվելիք աշխատանքի մասին Կենտկոմի բազմաթիվ որոշումներին, մի շարք կենտրոնական օրգաններ, շրջկոմներ և շրջգործկոմներ չեն կենսագործել այդ որոշումները։

Դժվարություն ունեցող թերությունները վերացնելու նպատակով ՀԿԿ Կենտկոմի քարտուղարությունը որոշեց Ժողկոմխորհին առընթեր ստեղծել ներգաղթածների շրջանում աշխատանքի հատուկ կոմիտե, մշտական աշխատողների ապարատով։ Ժողկոմխորհին հանձնարարվեց այդ կոմիտեին հատկացնել դրամական և այլ միջոցների զգալի ֆոնդեր, արագացնել հայրենադարձների բնակարանային շինարարությունը, բարելավել նրանց բժշկական սպասարկումը, օգնել հագուստեղենով ու կոշկեղենով, դպրոցահասակ բոլոր երեխաներին ընդգրկել դպրոցներում և այլն։

ՀԿԿ քաղկոմ-շրջկոմներին հանձնարարվեց ուժեղացնել քաղ-մասսայական և կուլտուրական աշխատանքները ներգաղթածների շրջանում, այդ նպատակով առանձնացնելով հատուկ աշխատակիցների և այլն[2]։

Հայրենադարձների շրջանում տարվող աշխատանքների և նոր ներգաղթի կազմակերպման հարցը 1936 թվականի հուլիսի 21-ին հատուկ քննության ենթարկվեց նաև Համկ(բ)Կ Կենտկոմում և ՍՍՀՄ Ժողկոմխորհում[3]։

Ընդունված որոշման մեջ հատուկ ուշադրություն էր հատկացվում ներգաղթողների տնտեսական կացության բարելավմանը, նրանց կուլտուրական կյանքի

---

1 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 113, ց. 3, գ. 1428, 1431, 1770, 1777 և այլն։

2 Տե՛ս նույն տեղում, գ. 1777, թ. 5։

3 Տե՛ս ՀՍՍՀ ՀՀՍՇ ՊԿԱ, ֆ. 178, ց. 1, գ. 942, թ. 1—3։

նպաստավոր զարգացմանը։ Վերոհիշյալ որոշման մեջ հանձնարարվում էր Հայաստանի կառավարությանը՝ անմիջապես ձեռնարկել և կարճ ժամկետներում, մինչև 1937 թվականի ամառը, իրականացնել շինարարական մի շարք կարևոր աշխատանքներ։ Համկ(բ)Կ կենտկոմի և ՍՍՀՄ Ժողկոմխորհի որոշմամբ հայրենադարձների համար ստեղծված ավաններում կազմակերպված կոլտնտեսություններն ու հայրենադարձ կոլտնտեսականները, ինչպես նաև աշխատավոր մենատնտեսները ստացան մի շարք արտոնություններ ու առանձնաշնորհումներ։

Սկսած 1936 թվականից, հայրենադարձների բոլոր կոլտնտեսություններն ու նրանց անդամները չորս տարի ժամանակով ազատվեցին պետական բոլոր բնաուրքերից, գյուղատնտեսական ու կուլտուրական հարկերից և այլն։

Նախապատրաստական այս աշխատանքների նպատակն էր 1937—1938 թվականներին ավելի մեծ, զանգվածային հայրենադարձություն իրականացնել Մերձավոր արևելքից, Բալկանյան երկրներից, Ֆրանսիայից և այլ գաղթօջախներից։ Սակայն, մի կողմից պատերազմական մոլուցքի ծավալումը միջազգային ասպարեզում, մյուս կողմից՝ անհատի պաշտամունքի հետ կապված երևույթների դրսևորումը երկրի ներսում՝ սոցիալիստական օրինականության խախտումները, արտասահմանյան երկրների, ինչպես նաև սփյուռքահայության հետ կապերի պահպանման գործում ստեղծված դժվարությունները, ՀՕԿ-ի լիկվիդացումը, կուսակցական ու պետական բազմաթիվ անձնվիրաբար աշխատող գործիչների նկատմամբ ռեպրեսիաները և այլն, ուղղակի անհնարին դարձրին նոր հայրենադարձության իրականացումը։

Միայն Հայրենական մեծ պատերազմի հաղթական ավարտից հետո վերըսկըսվեց սփյուռքահայ տարագիրների զանգվածային հայրենադարձությունը, որի շնորհիվ հայրենիք դարձան տասնյակ հազարավոր նոր պանդուխտներ։

Այսպիսով, իր գոյության առաջին իսկ օրերից Սովետական Հայաստանը դարձավ համայն հայության այն միակ հանգրվանը, որն սկսեց աստիճանաբար իր գիրկը հավաքել դաժան ճակատագրի բերումով աշխարհասփյուռ հարյուրամյա զավակներին։

Հայ ժողովուրդը, որը դարեր շարունակ ապրել էր միայն կոտորածների ու բռնագաղթերի սարսափներն ու դառնությունները, սովետական իշխանության շնորհիվ հնարավորություն ստացավ հավաքվելու իր նոր, ազատագրված հայրենիքում։ Դրանում ակնառու կերպով դրսևորվեց սոցիալիստական սիստեմի, նախկինում ամեն կողմից հալածված ու բզկտված հայ ժողովրդի նկատմամբ կոմունիստական կուսակցության լենինյան ազգային քաղաքականության առավելությունը։ Հայրենադարձությունը զգալի չափով խթանեց հայ ժողովրդի ազգային համախմբմանը, սոցիալիստական հայ ազգի ձևավորման ու հետագա զարգացման գործին։

Սովետական Հայաստանը դարձավ այն անսպառ աղբյուրը, որը գոյատևման դաժան կռվում գաղութահայ աշխատավորությանը տվեց պայքարի ուժ, հաղթանակի հույս և պայծառ, աներեր հավատ բազձալի ապագայի նկատմամբ։

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԻՆՆԵՐՈՐԴ

ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԸ

1. ԴՊՐՈՑԸ

Սփյուռքը ուներ իր տնտեսական, քաղաքական և հոգևոր ուրույն կյանքը։ Սփյուռքահայությունը մաքառումներով պահպանում էր իր լեզուն, զարգացնում մշակույթը, սպասելով վերադարձի նպաստավոր ղողանջներին։ Օտար ափերում հայ ժողովրդի զանգվածը կարողացավ պահպանել իր ազգային դեմքը, ստեղծել դպրոցներ, զարկ տալ ազգային գրականությանն ու արվեստին։

Սփյուռքահայ կյանքի բնորոշ երևույթներից մեկը հայրենակցական շարժումն էր։ Ննդավայրի, կորած հայրենիքի կախարդանքը, վերհուշը, այն վերըստին ձեռք բերելու հույսը մոտեցնում էր մարդկանց։ Ստեղծվում են տասնյակ ընկերություններ, միություններ՝ բոլորն էլ կապված բոլի խլված հայրենիքի կամ ծննդավայրի անվան հետ։ Վանեցիները հիմնում են իրենց հայրենակցականը, կեսարացիները, մալաթացիները՝ իրենցը և այլն։ Բնորոշ են անունները՝ «Սեբաստիո վերաշինության միություն», «Այնթապի ուսումնասիրաց միություն», «Տիգրանակերտի հայրենակցական միություն», «Շապին Կարահիսարի հայրենակցական միություն», «Ամերիկահայ արաբկիրցիների միություն», «Երզնկայի վերաշինաց միություն», «Կարնո ուսումնական ընկերություն», «Թոմարզայի աղքատախնամ ընկերություն», «Մանիսայի կարոտելոց օգնող միություն», «Մարաշի հայրենակցական միություն» և այլն։ Մարդիկ ընկերություններ, միություններ էին հիմնում անգամ իրենց գյուղի անունով, համագյուղացիներին օգնելու, կրթություն տալու նպատակով, ինչպես «Հաղթ գյուղի վերաշինաց միությունը», «Փերչենկ գյուղի ուսումնասիրաց ընկերությունը» և այլն[1]*։*

Ընդամենը 2—3 տարվա ընթացքում, այսինքն մինչև քսանական թվականների կեսերը հայրենակցական նման միությունների թիվը մոտենում էր հիսունի։ Հետագայում այդ թիվը ավելի մեծացավ։ Դրանք խոշոր դեր կատարեցին Սփյուռքի պահպանման գործում, օգնեցին կարիքավորներին, խթանեցին մշակույթի տարբեր բնագավառների զարգացմանը։ Նրանց ջանքերով հրատարակվեցին տասնյակ ժողովածուներ, գրքեր, դասագրքեր։

---

1 *Տե՛ս «Ամերիկահայ հանրագիտակ տարեգիրք», 1925, էջ 473—496։*

Թվարկված միությունները, սակայն, չունեին համազգային բնույթ, նրանց հետաքրքրության շրջանակը նեղ էր, ընդգրկում էր մի գավառ կամ շրջանի հայության վիճակը, ինչպես՝ Կարնո, Խարբերդի, Վասպուրականի և այլն։

Գոյություն ուներ մի այլ միություն, որը տարբերվում էր վերոհիշյալներից և ուներ ավելի մեծ դրամագլուխ, բազմահազար անդամներ և իր խիտ ճյուղավորումներով ընդգրկել էր ամբողջ Սփյուռքը։ Դա Հայկական բարեգործական ընդհանուր միությունն էր։

Անկախ այն փաստից, թե այս կամ այն ժամանակամիջոցում նրա ղեկավարներն ովքեր են եղել, Բարեգործականն իր գոյության տարիներին նկատելի աշխատանք է կատարել բազմահազար գաղթականներին նյութական օգնություն ցույց տալու և մանավանդ նրանց լուսավորական-կրթական կյանքին, մշակույթին զարկ տալու գործում։ Նա իր միջոցներով բաց էր արել դպրոցներ, ապահովել է խոստումնալից բազմաթիվ երիտասարդների բարձրագույն կրթությունը եվրոպական համալսարաններում, կոնսերվատորիաներում, և, որ ամենից կարևորն է, օգնել է ներգաղթին։

Տարբեր ընկերությունների, միությունների, քաղաքական խմբավորումների առաջին հոգսերից մեկը, անշուշտ, պիտի լիներ մատաղ սերնդի դաստիարակությունը։

Մերձավոր արևելքի մի շարք երկրներում՝ Իրան, Եգիպտոս, Սիրիա, Լիբանան, Իրաք և այլն, բացվեցին տասնյակ դպրոցներ՝ նախակրթարանից մինչև լրիվ միջնակարգ։ Սակայն Ֆրանսիայում և Ամերիկայում դժվարանում է հայկական դպրոցի ստեղծումը։ Կատարվում են համառ փորձեր. բացվում են նախակրթարաններ, դպրոցներ մասնավորապես Մարսելում, Փարիզում, Ամերիկայի Միացյալ Նահանգների մի քանի քաղաքներում, բայց տարիների ընթացքում բոլորն էլ փակվում են և հայ երիտասարդությունն ստանում է բացառապես օտար դաստիարակություն, տագնապալից արագությամբ տեղի տալով օտարացման, ձուլման վտանգին։

Այդ տարիներին ամենակենսունակ օջախներից մեկը Եգիպտոսն էր։ Կահիրե և Ալեքսանդրիա քաղաքներում գործում էին մի քանի հայկական դպրոցներ։ Դրանցից ամենահինը Գալուստյան ազգային վարժարանն էր, որը հիմնադրվել էր դեռևս 1854 թվականին և խոշոր դեր կատարել մատաղ սերնդի ուսուցման գործում։ Գալուստյան ազգային վարժարանը գործում էր կայուն ծրագրով, ապահովված էր հմուտ մանկավարժներով և նյութա-տեխնիկական հնարավորություններով։

1924 թվականին Կահիրեից ոչ շատ հեռու գտնվող Հելիոպոլիս նորաստեղծ քաղաքում բացվեց Նուպարյան Ազգային վարժարանը, որն ուներ նախակրթարան և մանկապարտեզ։ Այս դպրոցում հայկական դաստիարակություն էին ստանում 200—250 երկսեռ աշակերտներ։

Կահիրե քաղաքում գործում էին նաև մի քանի մասնավոր դպրոցներ, ինչպես Մանիսալյան վարժարանը, որն ուներ երկսեռ մանկապարտեզ և աղջիկների նախակրթարան։ Սովորողների ընդհանուր թիվը հասնում էր 100-ի։ Թաշչյան վարժարանն ուներ նույն բնույթը և իր հարկի տակ դաստիարակում էր մոտ 150 աշակերտ։ Այնուհետև, Կահիրեում գործում էր Հայտնի Պերպերյան վարժարանը՝ իր նախակրթարանով, երկրորդական տասնամյա ծրագրով, որը հիմ-

նադրվել էր անցյալ դարի 80-ական թվականներին Կ. Պոլսում, հայտնի մանկավարժ Ռեթեոս Պերպերյանի նախաձեռնությամբ։ Հետագայում, 1924 թվականին փոխադրվել էր Եգիպտոս և ուներ 100—110 սովորող։

Մեծ ու փոքր մի քանի դպրոց էլ գործում էին Ալեքսանդրիա նավահանգստային քաղաքում։ Դրանք էին Պողոսյան ազգային վարժարանը՝ 350—400 երկսեռ աշակերտով, Մելքոնյան մանկապարտեզը՝ 300 երեխայով, Հայկազյան կրթարանը՝ 200—250 աշակերտով, Պալյան վարժարանը և այլն։ Անգամ Զագազիկ փոքրիկ քաղաքում, որտեղ գտնվում էր Կամսարականների ծխախոտի գործարանը, հայ բանվորների և ծառայողների երեխաների համար հայկական դպրոց էր բացվել։

Արաբական մյուս երկրներում՝ Սիրիայում, Իրաքում և Լիբանանում հայկական դպրոցներն ավելի շատ էին, որովհետև այդ գաղութներն ավելի մեծ էին։ Այսպես, Բեյրութում քսանական թվականների վերջերին գործում էին տասից ավելի հայկական դպրոցներ՝ նախակրթարաններ, լիցեյներ և այլն, ինչպես Եփրեմյան, Մեսրոպյան, Հայկազյան վարժարանները, Սահակյան լիցեյը։ 1930-ական թվականների սկզբներից բացվեցին նոր վարժարաններ, ինչպես Ազգային բարձրագույն վարժարանը Բուրջ Համուդում, Թորգոմյան, Դասարճյան, Կիլիկյան վարժարանները (1930—1932), Արամյան, Ռուբինյան վարժարանները (1934—1935) և այլն։ 1937 թվականին Մխիթարյանները հիմնեցին իրենց միջնակարգ վարժարանը[1]։

Բալկանյան թերակղզում պատկերն այլ էր։ Հունահայ գաղութը գրեթե նոր էր, կրթական գործն էլ նոր պետք է սկսվեր։ Այստեղ երեխաների դաստիարակությունը սկզբում ընթանում էր երկու ուղղությամբ։ Մոտ 12 հազար որբ կենտրոնացված էին ամերիկյան որբանոցներում։ Գրեթե նույնքան երեխաներ էլ ցրված էին 30-ից ավելի գաղթականական կենտրոններում։ Ծանր էր թե առաջինների և թե դրսի երեխաների վիճակը։ 1922—1923 ուսումնական տարում բոլոր որբանոցներում (Խալքիս, Օրոպոս, Սիրիա, Կորինթոս և այլն) կրթական ծրագիրը կազմված էր այնպես, որ հայ որբերը սովորեին հունարեն, անգլերեն և հայերեն։ Պոլսից Հունաստան անցած մտավորականությունը (Լևոն Էսաճանյան, Թեոդիկ, Հովհ. Ասպետ և ուրիշներ) խոշոր դեր կատարեց մայրենի դաստիարակությունը սկսելու գործում։ Սակայն հենց նույն 1923 թվականին Նպաստամատույց ընկերությունը որոշում է վերացնել հայերեն ուսուցումը, որը բողոքի առիթ տվեց։ Դրանից հետո շարունակվեց հայրենասեր ուսուցիչների ու ամերիկացիների պայքարը, մինչև որ աշխատանքից հեռացվեցին մի քանի ուսուցիչներ և մի քանի հազար որբեր էլ դուրս հանվեցին որբանոցներից։ Նրանց որոշ մասը անցավ Ֆրանսիա, Ամերիկա, ավելի մեծ թվով՝ Եգիպտոս, բայց նկատելի քանակությամբ որբեր էլ նետվեցին Աթենքի փողոցները՝ ղուրկ ուսումը շարունակելու ամեն մի հնարավորությունից։

Հունաստանի գաղթական կենտրոններում բացված դպրոցները ևս անմխիթար վիճակում էին։ Տնտեսապես շատ վատ պայմաններում գտնվող ծնողներից գանձված չնչին գումարներով և բարեգործական միության օժանդակու-

---

1 Տե՛ս «Սփյուռքահայ ալբոմ», հատ. Ա, Լիբանան, Վենետիկ, 1965։

Թյամբ գործող այդ դպրոցներում ընդգրկված էին ուսման կարիք ունեցող երեխաների կեսից էլ պակասը։

Դրությունը գրեթե նույնն էր Բուլղարիայում և Ռումինիայում։ Հայերը Բուլղարիայում կենտրոնացված էին Սոֆիա, Ռուսջուկ, Բուրգաս, Ստարայա Զակորա և այլ քաղաքներում։ Ռուսջուկի ազգային վարժարանում սովորում էին երկուհարյուրից ավելի աշակերտ. Պլովդիվի վարժարանում՝ մոտ 800 և այլն[1]։ Իսկ Թուրքիայում և Իրանում գործում էին մեծ թվով հայկական դպրոցներ, սակայն դրանք, մասնավորապես Պոլսում եղած դպրոցները, Սփյուռքի գոյացման հետ չէ, որ առնչվում էին, դրանք հին դպրոցներ էին, որ պաշտպանում էին իրենց գոյությունը տնտեսական և քաղաքական աննպաստ պայմաններում։

Հայկական միջնակարգ դպրոցի մեջ սփյուռքահայ կյանքում նկատելի դեր կատարեց Կիպրոսի Մելքոնյան վարժարանը, որն ապահովված էր հմուտ մանկավարժներով, որոնց թվումն էին պատերազմից հետո Հունաստան անցած մտավորականության շատ ներկայացուցիչներ։ Մելքոնյան երկսեռ վարժարանը, եվրոպական ու ամերիկյան քաղաքների հայկական դպրոցների համեմատությամբ ուներ մի առանձնահատկություն։ Չնայած մեջ չինելով ավելի հզոր մշակութային ազդեցությունների հետ, հնարավորություն ուներ աշակերտությանը տալ խորապես հայկական դաստիարակություն և նրան զերծ պահել օտար ազդեցություններից։ Վարժարանը գիշերօթիկ էր, երեխաներն ստանում էին ձրի կրթություն, անուն։ Բացի կիպրահայ գաղութի երեխաներից, այնտեղ սովորելու էին գալիս նաև հեռավոր վայրերից, հատկապես Սիրիայից։ Այդ կրթարանը մշակութային յուրահատուկ մի կենտրոն էր. ուներ ճոխ գրադարան, թատերական, մարզական և այլ խմբեր, հետագայում նաև պարբերական մամուլ[2]։

1930 թվականին Մխիթարյանները Սևրում (Ֆրանսիա) վերաբացեցին Մուրադյան վարժարանը՝ հայագիտական թեքումով։

Դրությունն այլ էր Ամերիկայում, որտեղ հայ դպրոցը թույլ առկայծում ունեցավ։ Երեխաները մեծ մասամբ սովորում էին ամերիկյան վարժարաններում։ Որոշ ծնողների ջանքերով միայն կիրակնօրյա դասընթացներում էր, որ նրանք հաղորդակից էին դառնում մայրենի լեզվին։ Բայց այն հանգամանքը, որ ընտանիքներում խոսակցական լեզուն դեռ հայերենն էր, այն էլ գերազանցապես բարբառը, ամերիկյան համալսարանի շրջանավարտ, անգլերենին հմուտ այդ երիտասարդները գիտեին իրենց ծնողների լեզուն։

2. Մ Ա Մ Ո Ւ Լ Ը

Դպրոցից հետո սփյուռքահայության մտավոր կյանքի էական ազդակներից մեկը պարբերական մամուլն էր։ Մինչև 1922 թվականը ամբողջ Սփյուռքում լույս էին տեսնում 22 թերթ ու հանդես։ Մեկ հնգամյակ անց դրանց թիվը բարձրացավ 55-ի։

Առաջին բնորոշ երևույթը, որ նկատելի է մամուլի բնագավառում՝ քաղաքական և կրոնական խմբավորումների ուժեղ տարբերակումն է։ Մինչ այդ գա-

1 Տե՛ս «Պուլկարահայ տարեգիրք, Վիեննա-Արարատ», 1935, էջ 96—113։

2 Տե՛ս «Մելքոնյան կրթական հաստատություն» (համառոտ ակնարկ), Նիկոսիա, 1957։

գրքերում տիրապետողը հայ ազգայնական մամուլն էր։ Նկատելի թիվ էին կազմում նաև կրոնական հրատարակությունները։ 20-ական թվականների ընկերվարներից ազգայնական և կրոնական գաղափարախոսության դեմ մի ամբողջ հոսանք սկսվեց։ Ամերիկայում լույս տեսավ «Բանվոր» թերթը, որը հետագայում վերանվանվեց «Նոր աշխարհ», իսկ ավելի ուշ «Վրաբեր»։ Ամերիկայում առաջին անգամ հայկական մի թերթ իր ճակատին կրում էր մուրճ և մանգաղ խորհրդանշանը՝ ազդարարելով գաղափարական մի նոր ուղղության։ «Բանվորի» շուրջը համախմբվեցին ամերիկահայ առաջադիմական շատ գործիչներ՝ Կարապետ Սիտալ, Պատրիկ Սեյլան, Օգսեն Սարյան և ուրիշներ, որոնք կարողացան հայրենիքի ձայնը հնչեցնել հեռավոր այդ ափերում։

Ամերիկայում լույս էր տեսնում նաև «Պրոլետարիատը», որը հաճույքով ընթերցվում էր բոլոր գաղութներում։

Սփյուռքահայ պարբերականների մեջ նշանակալից երևույթ էին 30-ական թվականների սկզբներին Փարիզում լույս տեսնող «Երևանը», «Բանվոր-Գյուղացին» և «Վերելքը»։

Վերոհիշյալ երեք պարբերականներից «Վերելքը» տեսական բնույթ ուներ և սփյուռքահայ ընթերցողներին առաջին անգամ փորձում էր հաղորդակից դարձնել մարքսիզմ-լենինիզմի սկզբունքներին։

Առաջադիմական մամուլը նկատելի աշխուժացում ապրեց Բալկանյան երկրների գաղթօջախներում։ 1920 թվականին Բուլղարիայում լույս տեսավ կոմունիստական «Կարմիր լուրեր» ամսաթերթը, որը հետագայում շարունակվեց «Նոր աշխարհ» անվամբ և լայն տարածում գտավ ոչ միայն Բուլղարահայ գաղութում, այլև Հունաստանում, նպաստելով աշխատավորական զանգվածների համախմբմանը։

1922 թվականին Հունահայ գաղութն էլ ստեղծեց իր պարբերականը. Սալոնիկում լույս տեսավ «Երկունք» հնչակյան թերթը, որը փակվեց հաջորդ տարին։ Նույն Սալոնիկ քաղաքում հակադաշնակցական տրամադրությամբ տոգորված տարրերը, մեծ մասամբ ռամկավարները, 1923 թվականին լույս ընծայեցին «Նոր ալիք» թերթը, որի էջերում լուսաբանվում էր Սովետական Հայաստանի կյանքը։

Հունահայ գաղութում անհամեմատ ավելի լայն ճանաչում ունեցան 1926 թվականից Աթենքում հրատարակվող «Ճաղիանակ» դեմոկրատական թերթը և Սալոնիկում լույս տեսնող «Աշխատանքը»։ Վերջինս հանդիսանում էր Հունաստանի կոմունիստական կուսակցության հայկական հատվածի անդրանիկ օրգանը։

Գրականագետ Սիմոն Հակոբյանը Վիեննայում հրատարակում էր «Արեգ» գրական պարբերականը։ Առաջին անգամ Սփյուռքում այդ ամսագրի էջերում երևացին Եղիշե Չարենցի և այլ սովետական գրողների վերաբերյալ ընդարձակ հոդվածաշարքեր, նրանց ստեղծագործություններից նմուշներ։ Այնտեղ տպագրվեցին Զապել Եսայանի, Կարապետ Սիտալի և այլ գրողների երկերը։

Սովետական իշխանության հաստատման առաջին տարիներից հայ կուսակցություններում ևս ուժեղ դիրքորոշում նկատվեց դեպի հայրենիքը։ Եթե դաշնակցությունը մնալով Սովետական Հայաստանի երդվյալ թշնամին, ամեն կերպ փորձում էր սև գույներով ներկայացնել նոր Հայաստանը, ապա հնչակ-

յան և ամենավար շատ թերթեր չանում էին սերմանել այն միտքը, թե հանձին սովետական իշխանության հայ ժողովուրդը ձեռք է բերել իր պետականությունը, ստեղծել է նոր կյանք։ Նրանք չէին ընդունում մարքսիստական գաղափարախոսությունը, բայց և թշնամական դիրք էլ չէին բռնում Հայաստանի նկատմամբ։

Այդպիսի դիրքորոշում ունեին Եգիպտոսի «Արևը», որի շուրջը համախմբված մտավորականության մեջ էին Ե. Օտյանը, Վ. Թեքեյանը, Փարիզի «Ապագան», որին աշխատակցում էին Ա. Չոպանյանը, Զ. Եսայանը, ամերիկյան ամերիկավարների «Պայքարը» և հնչակյանների «Երիտասարդ Հայաստանը»։

Ռումինիայում լույս էր տեսնում «Նավասարդ» հանդեսը, Հ. Սիրունու խմբագրությամբ։ Այդ հանդեսի էջերում տպագրվում էին արժեքավոր հոդվածաշարքեր հայ գրականության, թատրոնի, մշակույթի այլ հարցերի վերաբերյալ։ Այս առումով նկատի ունենալով, որ «Նավասարդի» խմբագիրը եղել է դաշնակցական, ուշագրավ է նրա դիրքորոշումը դեպի Սովետական Հայաստանը։ Նա գտնում էր, որ «Հայրենի հողի վրա է, որ պիտի կենտրոնանան վերջ ի վերջո մեր բոլոր ճիգերը, մեր հայրենի մշակույթը վերստեղծելու համար։ Դուրսը թափված սերմերը որքան ալ զորավոր ըլլան՝ չեն կրնար փոթորիկներուն դիմանալ»[1]։

Այս բոլորով հանդերձ, հայ պարբերական մամուլի բնագավառում մինչև երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակը ուժեղ էր դաշնակցական ազդեցությունը. այդ կուսակցության ձեռքին էր «Հայրենիք» օրաթերթը։ 1922 թվականի վերջերից սկսեց հրատարակվել «Հայրենիք» ամսագիրը։ Դաշնակցականները Կահիրեում հրատարակում էին «Հուսաբերը», Փարիզում՝ «Հառաջը», Աթենքում՝ «Նոր օրը» և այլն։

Ուշագրավ փոփոխություններ նկատվեցին կրոնական հրատարակությունների բնագավառում։ 1843 թվականից Վենետիկի ս. Ղազար կղզում լույս էր տեսնում «Բազմավեպ» հանդեսը, որը խուսափելով հայ քաղաքական հոսանքների պայքարը բացորոշ արտացոլելուց, ընթանում էր ազգայնական թևին ձայնակցելով, վերապահ դիրք բռնելով դեպի նոր հայրենիքը։ Հայ կաթոլիկների մյուս հրատարակությունը՝ «Հանդես ամսօրյան», ուներ հայագիտական ուղղություն, ամենևին չանդրադառնալով Սփյուռքը հուզող սոցիալ-քաղաքական հարցերին։

Սփյուռքում, գերազանցապես Ամերիկայում լույս էին տեսնում 6—7 կրոնական այլ պարբերականներ («Եկեղեցի», «Ջահակիր», «Ոհանում» և այլն)։ Բնորոշ է, որ արդեն 20-ական թվականների կեսերին սրանց մեծ մասը դադարել էր[2]։

Դարասկզբին Ամերիկայում լույս էր տեսնում «Կոչնակ» շաբաթաթերթը, որը հետագայում վերանվանվեց «Հայաստանի կոչնակ»։ Շաբաթաթերթի բովանդակությունը նկատելիորեն թեքվել էր դեպի իրական կյանքը, որը ապահովեց նրա գոյությունը երկար տասնամյակներ։ Այստեղ տպագրվում էին սփյուռքահայ և սովետահայ գրեթե բոլոր ականավոր գրողների ստեղծագոր-

1 Տե՛ս «Նավասարդ», հատ. Ա, պրակ Ը, 1924, էջ 255։

2 Տե՛ս Գ. Լևոնյան, Հայոց պարբերական մամուլը, Երևան, 1934, էջ 100—130։

ծությունները, արտացոլվում էր ոչ միայն գաղթաշխարհի տնտեսական, մշակութային, այլև Սովետական Հայաստանի կյանքը, չնայած նոր հայրենիքի վարչաձևը և դավանած գաղափարախոսությունն անընդունելի մնաց նրան։

Քանանական թվականների վերջերից, սփյուռքահայ կենտրոններում երևացին նոր պարբերականներ։

1929 թվականից Ա. Չոպանյանը Փարիզում վերսկսեց «Անահիտ» հանդեսի հրատարակությունը, որ նա հիմնադրել էր դեռևս 1898 թվականին և ընդհատել ահմանադրական եռուզեռի տարիներին (1911)։ Այժմ հանդեսն ուներ ավելի մեծ ծավալ ու բազմազան բովանդակություն։ Գրեթե նույն տարիներից Հր. Բալույանը սկսեց հրատարակել «Զվարթնոց» պարբերականը, Մ. Պարսամյանը՝ «Կյանք և արվեստը», որը 1930—1938 թվականներին որպես տարեգիրք հրատարակվելուց հետո դարձավ ամսագիր, Ս. Վրացյանը՝ «Վեմը». բոլորն էլ Փարիզում։ Սրանցից մի քանիսն ունեին շեշտված ազգայնական ուղղություն։ Նույն թվականներին Ա. Սեման հրատարակեց «Մշակույթ» ամսագիրը։

Թվարկված պարբերականների մեջ ամենից ծանրակշիռը, երկարատևը Ա. Չոպանյանի «Անահիտն» էր։ Հրատարակիչ-խմբագրի լայն իրազեկությունը հայ հին և նոր գրականության, միջնադարյան տաղերգության, մշակույթի տարբեր ճյուղերի շատ երևույթներին, նաև համաշխարհային գրականությանն ու արվեստին՝ անտիկ շրջանից մինչև արդի մտավոր կյանքը՝ «Անահիտը» բացառիկ երևույթ դարձավ Սփյուռքում լույս տեսնող գրական-գեղարվեստական հայ պարբերական հրատարակությունների մեջ։

Շատ ուրույն դեմք ուներ Ա. Սեմայի և Պետրոս Զարոյանի խմբագրությամբ հրատարակվող «Մշակույթը», որը կարճ տևեց. լույս տեսավ ընդամենը մեկ տարի՝ 1935 թվականին։ Աշխատակիցները նաև «Անահիտի» ուժերն էին՝ Սեմա, Պ. Զարոյան, Մ. Աբեմաճյան, Որբունի, Բ. Թուխալյան և այլն։

1920—1940 թվականներին Սփյուռքում լույս էին տեսնում տասնյակ տարեգրքեր. Թեոդիկի «Ամենուն տարեցույցը», Մ. Պարսամյանի «Կյանք և արվեստը», Արտավազդ վարդապետի «Տաճիկը», Ե. Թոլայանի «Կավռոշը» և այլն։ Բացի վերոհիշյալ ընդհանուր բնույթ կրող տարեցույցներից, յուրաքանչյուր գաղութ ուներ իր տարեգիրքը, ինչպես «Ֆրանսահայ տարեգիրքը», «Եգիպտահայ տարեցույց», «Ամերիկահայ տարեցույց», «Սիրիահայ տարեցույց», «Պարսկահայ տարեցույց», «Գաղութահայ տարեգիրք» (Ռումինիա), «Ամենուն նոր տարեցույց» (Լիբանան), «Ազգային հիվանդանոցի», «Երջանիկի» տարեցույցները (Կ. Պոլիս) և այլն։ Սրանց ընդհանուր քանակը կարող է հասնել մի քանի հարյուր հատորի, որոնց մեջ բազմակողմանիորեն արտացոլված է Սփյուռքը իր տնտեսական, կրթական, մշակութային կյանքով։ Հիշատակության արժանի են մասնավորապես Թեոդիկի «Ամենուն տարեցույցի» ստվար հատորները, որ լույս են տեսել 1907—1923 թվականներին Կ. Պոլսում, հետագայում՝ Փարիզում, և ընդհատվել 1929 թվականից՝ կազմողի մահվան պատճառով։

3. ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Գաղթականական թոհուբոհի, տնտեսական ու քաղաքական վայրիվերումների, անորոշ զոյավիճակի պայմաններում սկսեց զարգանալ սփյուռքահայ գրականությունը՝ գերազանցապես մամուլի էջերում, հավվադեպ՝ առանձին

հրապարակություններով։ Գաղափարական տարբեր դիրքերում կանգնած, գրական տարբեր ուղղությունների հետևող, տարբեր նախասիրություններ ունեցող գրողներն ըստ էության շարունակեցին ընդհատված արևմտահայ գրականության, կրելով նոր միջավայրի ազդեցությունը։

– Նոր գրականությունը իր ներշնչանքը պետք է ստանար գաղթականական կյանքի տվայտանքներից, արտացոլեր անհաստատ կենցաղի բարքերն ու հոգեբանությունը, որ խանդավառող ոչինչ չուներ։ Մարդկանց վրա ճնշում էր մեծ ոճիրը, գաղթականական կյանքի ողբալի վիճակը, անհեռանկար ապագան։

Այս պայմաններում, հասկանալի է, որ անկումային տրամադրությունները նորից էին թևածելու հայ գրականության, մասնավորապես չափածոյի վրա։ Ավագ սերնդի, այսինքն 80-ական թվականների ռեալիզմի ներկայացուցիչներից ոմանք յուրօրինակ լուծություն էին պահպանում։ «Վարժապետին աղջիկը» վեպի հեղինակ Տ. Կամսարականը գրեց մեկ երկու գրական էջ միայն, «Անահիտում» վերատպեց համիդյան բռնապետական տարիներին գրաքննական աղճատումների ենթարկված «Հարոն» և «Հովկուլը»։ Լևոն Բաշալյանը մամուլում հրատարակեց հուշագրական մի քանի էջ։ Ավելի խոովկան դիրք բռնեց Միք. Կյուրճյանը՝ դարասկզբին ռեալիզմի աչքի ընկնող դեմքերից մեկը։

Ամենից բեղմնավորը Ե. Օտյանն էր։ Հետպատերազմյան տարիներին նա գրեց «Թիվ 17 խաֆիեն», «Կանաչ հովանոցով կինը», «Մեր նոր հարուստները», «Հայ տիասբորան» և այլ վեպեր, որոնք արտացոլում էին նախապատերազմյան և հետպատերազմյան շրջանի արևմտահայ կյանքը։ Օտյանը 1922 թվականին վերահրատարակեց «12 տարի Պոլսեն դուրս» հուշագրությունը, հաջորդ տարին՝ «Առաքելություն մը ի Ծապլվար» գրքի երրորդ մասը՝ «Ընկերը Փանջունի» տարագրության մեջ» վերնագրով։

Գրական խոշոր վաստակ ուներ Զապել Եսայանը։ Օժտված ստեղծագործական տաղանդով ու անհատականությամբ, նա ընկալեց քաղաքական նոր իրադարձությունը և 1922 թվականից կանդնեց ոչ միայն Սովետական Հայաստանը ողջունողների, այլև սոցիալիստական հեղափոխությունը ընդունողների կողքին։ Գրողի հավատամքը իր գեղարվեստական արտահայտությունը գտավ «Նահանջող ուժեր» վեպում (1924), որտեղ փայլուն կերպով պատկերված է հայ ազգայնական կուսակցությունների քաղաքական սնանկությունը։

Վերոհիշյալ ստեղծագործությունները լույս էին տեսնում տարբեր գաղութներում և այդքանով էլ կազմում սիբիրահայ գրականության մասը, սակայն դրանցից քչերն էին արտացոլում Սիբիրը իր բարդ ու հակասական ելևէջներով, հոգեբանական խորությամբ։ Այդ բանն առավել չափով կատարեց գրական նոր սերունդը, որի ստեղծած գրականության ոգին մի կողմից կորած հայրենիքի կարոտն էր, ծննդավայրից հեռու ապրող մարդու վիշտը, մյուս կողմից՝ ապագայի անորոշության սարսափը։ Շրջապատի տապին, խորշակին դիմանալու համար հայ գրողը դիմում էր վերհուշին, որը թթվածնի նման նրան պահեց որոշ ժամանակ։ Նոր, սովետական հայրենիքի գոյության փաստը ոմանց, ինչպես Զ. Եսայանին, Կ. Սիամանթին և ուրիշների, փրկել էր հուսալքումից, բայց կենդանի կապի թուլությունը Հայաստանի հետ, արտասահմանի թափանցող լուրերի հակասականությունը, թշնամական քարոզի ազդեցությունը խանգարում

էին մասնավորապես մանրբուրժուական մտավորականությանը՝ ամբողջությամբ ընկալելու պատմական մեծ իրադարձության իմաստը։

Այսպես, Համաստեղը, Հակոբ Օշականը, որոնց գրական օթևանը դաշնակցական «Հայրենիք» ամսագիրն էր, մնացին նոր Հայաստանի գոյին անտեղյակ, կառչեցին հին գյուղին, ուժ ստացան նրանից, փորձեցին նրանով անել երիտասարդ սերնդին։ Գրական անուրանալի տաղանդը բնորոշ է այս գրողներին։ Մասնավորապես Համաստեղի «Գյուղը» և «Անձրևը» հանդիսանում էին սփյուռքահայության գրական առաջին հունձքը։

Օշականը (Հակոբ Քյուֆեճյան) գրական ասպարեզ էր մտել պատերազմի նախօրյակին, ընկել էր սիմվոլիստական գրականության ոլորտը, ստորագրել «Խորհուրդների մեհյանը», որի մեջ կյանքը պատկերված է թանձր մշուշի մեջ, բայց և հրատարակել էր «Խոնարհները»՝ ի հայտ բերելով պարզ, հասարակ մարդկանց հոգեբանությունը կերտելու կարողություն։ Օշականը գրել է ծավալուն վեպեր, որոնցից երկուսը լույս են տեսել մի ընդհանուր վերնագրով՝ «Մնացորդաց», մյուսները՝ «Ծակ պտուկը» և «Հարյուր մեկ տարվան»։

Այդ տասնամյակների մյուս հայտնի դեմքը Վազգեն Շուշանյանն էր։ Շատ է գրել Շուշանյանը, արտացոլել շատ բնագավառներ. որբանոցային կյանք, գաղթականություն, պատանեկան միջավայր, փարիզյան պատկերներ և վերջապես անխուսափելի բնաշխարհը, ծննդավայրի հուշերը։ Այս բոլորի մեջ հիմնականը ահավոր հիասթափությունն է կապիտալիստական աշխարհից, դարձյալ փախուստը դեպի անդորրը, խաղաղ կյանքը։ Նահապետական գյուղի վերհուշը անցյալի անիմաստ փառաբանում չէր։ Դրա մեջ պետք է տեսնել հիասթափություն տարագրվածների անհեռանկար կյանքից։

Թվարկած գրողներից և ոչ մեկի մոտ ներքին գաղափարական պայքարը այնքան ցցուն չէ, որքան Շուշանյանի։ Դրա արտահայտություններից մեկը պետք է համարել այն, որ արդեն 30-ական թվականների սկզբներից նա վերջնականապես խզեց կապերը դաշնակցության հետ, ցանկացավ կամուրջ գցել դեպի վերածնված հայրենիքը, գալ Հայաստան։ Վերահաս դեպքերը հնարավորություն չտվեցին իրագործելու գրողի ցանկությունը և նա, քայքայված առողջությամբ ապրեց հուսահատ օրեր, մեռավ օտարության մեջ, բայց ընդամենը երկու տասնամյակում ստեղծագործեց արժեք ներկայացնող տասից ավելի երկեր։

Հոգեկան ու գաղափարական նույն տեղաշարժը ապրեց Կոստան Զարյանը։ Պատերազմից հետո նա եկավ Հայաստան։ 1925 թվականին նորից նետվեց Սփյուռք, դարձավ «Հայրենիք» ամսագրի հիմնական աշխատակիցներից մեկը։ Գրեց «Բանկուպը և մամոնտի ոսկորները», ապա «Նավը լեռան վրա» վեպերը, որոնք հեղինակի գաղափարական հակասությունների ամենաբնորոշ արտահայտությունը հանդիսացան։ Այս շրջանի նրա ստեղծագործությունների մեջ մնայուն արժեք ներկայացնողը «Տատրազոմի հարսն» է, սփյուռքահայ գրականության լավագույն նմուշներից մեկը, որտեղ գծված են հայ գյուղի պատկերը, մարդկային փոխհարաբերությունները։

Առաջին տասնամյակում գրական-հրապարակախոսական գործունեության ասպարեզում գործում էին ազգայնական գաղափարախոսության տեր մի քանի գրողներ, այդ թվում նաև Ավետիս Ահարոնյանը և Լևոն Շանթը։ Երկուսն էլ

դաշնակցական, ոչ անհայտ դեմքեր հայ գրականության մեջ, սակայն նրանք իրենց գրական գործունեությունը ավարտել էին նախասովետական տարիներին։

Ընդհանուր առմամբ այդ տարիների գրականության նկատելի մասը հոռետեսական էր։ Մեծ եղեռնը ահավոր ազդեցություն էր թողել ոչ միայն արձակ և չափածո գրականության, այլև պատմագրության և հուշագրության վրա։

Ողբերգությունը մեծ էր, հետևաբար բնական՝ արտացոլվող կյանքի միակողմանիությունը, սակայն այն գրականության ուղի դառնալ չէր կարող։ Այս երևույթը լրջորեն անհանգստացնում էր սփյուռքահայ մտավորականությանը։ Մամուլը երկարորեն զբաղվում էր առհասարակ մշակույթի վիճակով։ Ա. Զոպանյանը, Վ. Թեքեյանը, Զ. Եսայանը, Ն. Օտյանը և տասնյակ այլ գրողներ հայտնում էին իրենց կարծիքը հայ գրականության զարգացման մասին, առաջարկում միջոցներ։ Գրական միօրինակության դեմ պայքարելու, մեռելների, դիակների ահավոր ազդեցությունից ազատվելու կոչեր էին լսվում նոր սերնդի և դասական գրականության ներկայացուցիչների կողմից։ «Նվաստացուցիչ, ամոթալի բան մըն է խորհիլը,— գրում էր Ն. Օտյանը,— թե այսօր մեռելներով ու միմիայն մեռելներով կապրինք ու կը սնանինք մենք։ Ինչ որ ունինք՝ իմացականություն, բանականություն, կրոնք, իմաստասիրություն, ճաշակ, գեղարվեստ ու գրականություն՝ դիակներու ձեռքեն ընդունած ենք։ ...Այսպես մեր ամբողջ ինքնությունը, գործունեությունը, կյանքը դիակներով շաղված, մումիացած բրածոյի վերածված է։ Դիակներու այս ճնշող, անբանացնող տիրապետության դեմ պետք է ընդվզիլ։ Պետք է հեռու վանել այն կմախքները, որոնք իրենց գերեզմաններու մեջեն կը համառին տակավին մեր ամբողջ կյանքն ու ըռիչքը գրելու, ստրկացնելու։ Մաքրագործող ու լափլիզող կրակի մը շեկ բոցերուն մեջ պետք է աճյունացնել, մոխիրի վերածել այդ խափանիչ, չլատիչ անցյալը և զայն ցիրուցան տարտղնել անմատչելի բարձրություններու մեջ գոռացող ամպրոպի մրրկահար հորձանքին չորս հովերուն»[1]։

Ընդվզումը, ցասումնալից այս պոռթկումը, որ լսվում էր միաժամանակ Ամերիկայից մինչև Եգիպտոս, ունեցավ իր դրական ազդեցությունը։ Ասպարեզ եկան նոր գրողներ, որոնք ցանկանում էին կանգնել գրականությունը կյանքին մոտեցնելու ուղու վրա։ Ինչպես 80-ական թվականների կեսերին արևմտահայ ռեալիստական գրականության հիմնադիրները դիմում էին դեպի իրական կյանքը, գրականության նյութ դարձնում սոցիալական հակամարտությունները, այնպես էլ առաջացավ գաղութահայ կյանքը դիտելու, վերլուծելու, պատկերելու ուժեղ մի ձգտում։ Այս շարժման կենտրոնը դարձավ Փարիզը, որտեղ հավաքվել էր սփյուռքահայ երիտասարդ, խոստումնալից գրողների մեծ մասը։ Միմյանց հետևից լույս տեսան Շահան Շահնուրի «Նահանջ առանց երգի», Զ. Որբունու «Փորձը», Հ. Զարդարյանի «Մեր կյանքը» և այլ վեպեր։ Սրանք բոլորն իրենց դիտակի տակ էին առել գաղթական հայի, մասնավորապես հայ երիտասարդի վիճակը և ըստ էության հնչեցնում էին մեր ժողովրդի մի մեծ հատվածի կործանման ահասարսուռ ողբը։ Այս գրականության ընդհանուր ոգին, սակայն, միայն ժխտող էր, բացասող, այն ցույց էր տալիս հուսահատականը, սայթաքումը, առանց դեղատոմսի, առանց հույսի շլթերի։ Մռայլ, գորշ, չղաձգական մի

1 «Հունահայ տարեգիրք», 1930, էջ 200—201։

վիճակ, որի մեջ գտնվող մարդիկ, այսինքն հայերը չէին գտնում թակարդից դուրս գալու որևէ ճանապարհ։

Վերոհիշյալ երեք գրողներով չի սահմանափակվում գրական այս նոր շարժումը։ Սփյուռքահայ գրականության ազգայնական թևին պատկանող մի շարք գրողներ նույն հուսահատ կյանքն են ցուցադրել ավելի անհեռանկար, իսկ ոմանք՝ չկարողանալով շեշտակի նայել շրջապատին, հազար մղոնանոց քայլերով հեռացել են դեպի դարերի խորքը (Շ. Պեշիկթաշլյան)։

Նկատելի աշխուժացում ապրեց չափածոն։ Վազգեն Շուշանյանը, Կոստան Զարյանը, Լևոն Սուրմելյանը, Լևոն Էսաճանյանը, Թորոս Ազատյանը, Կարապետ Սիտալը և ուրիշներ պարբերաբար բանաստեղծություններ էին տպագրում հայ մամուլում։ Ստեղծագործում էին արևմտահայ գրականության ականավոր ներկայացուցիչներ Վահան Թեքեյանը, Արշակ Չոպանյանը, Սիպիլը, Անայիսը, ավելի թույլ առկայծումներով Վահան Մալեզյանը և ուրիշներ։ Հետագա տասնամյակում ասպարեզ իջան նոր անուններ՝ Վահե Վահյան, Միսաք Մանուշյան, Սեմա, Մարի Աբմաճյան, Հակոբ Գուլումճյան, Մուշեղ Իշխան և շատ ուրիշներ։

Ինչպես արձակ գրականության, չափածոյի մեջ էլ առաջին տարիներին տիրապետող մնաց համաժողովրդական ողբերգության հետևանք հուսալքումն ու թախիծը։ Բանաստեղծներից շատերն իրենց զգում էին մենակ, անօգնական, անուժ, անկարող մի կողմից ամոքելու ժողովրդի վիճակը, մյուս կողմից՝ ուղի նշելու իրենց համար։ Միջավայրը, որի մեջ գործում էին, ոչինչ չուներ հուսադրող, ամեն կողմ՝ որբեր, մաքառում, տառապանք հացի համար, մաքառում ոչ միայն ազնիվ ճանապարհով, այլ, երբեմն, ոչ հաճելի միջոցներով՝ թելադրանք անծանոթ երկրի, անծանոթ բարքերին հարմարվելու անհրաժեշտության։ Հայ բանաստեղծը այդ գորշ միջավայրը դիտում էր ոչ թե իր նեղ լուսամուտից, այլ ինքն էլ ապրում էր նույն կյանքով, նույն կիսախեղդամահ և հեղձուցիչ մթնոլորտում։ Բանաստեղծը սարսափում էր նման կյանքը երգելուց, մղվում դեպի բնությունը, դարձյալ դեպի նահապետական գյուղը, երբեմն էլ խոր անցյալը, կամ փիլիսոփայում էր կյանքի ու մահվան մասին։

Թորոս Ազատյանը, որ գրական ասպարեզ էր իջել 1920-ական թվականների սկզբներին, նախնական ստեղծագործությունների մեջ հանդես եկավ որպես նահապետական գյուղի գովերգու, հին օրերի կարոտով տոգորված մի գրող։ Ակնա բնաշխարհը, մանկական հիշատակներ, հայրենիքի կարոտ, ավանդություններ, ահա նրա բնագավառը՝ արտահայտված բանաստեղծական նկատելի տաղանդով։ Լևոն Էսաճանյանը, որ ստեղծագործում էր Հունաստանում, նույնպես չկարողացավ դիտել շրջապատը, եղեռնի սարսափը մեծապես հարվածել էր նրա զգայուն հոգուն, մղել որոշ անհավասարակշռության և ահա՝ թողած փողոցներում կիսամերկ թափառող հայ որբերին, ֆիքսի թիթեղյա կացարաններում տառապող ընտանիքներին, երգում էր Հին Հունաստանը, Ակրոպոլն ու Պարթենոնը, Սոկրատին և այլն։ Ու այսպես՝ ակնարկը հառած դեպի խոր անցյալը, չուզեց տեսնել շրջապատը, սարսափեց այդ շրջապատից և հուսահատ վիճակում, կիսաքաղց, կաթվածահար մահացավ Աթենքում, 1935 թվականին։

Սուրմելյանի, Կոստան Զարյանի բանաստեղծությունները տոգորված էին նույն թախիծով։ Նորերը չէին կարող այլ զգացողությամբ հանդես գալ։ Անգամ այնպիսի քնքուշ մի քնարերգու, ինչպիսին էր Վահե Վահյանը, որ 1930-ական

թվականների սկզբներից երևաց պարբերական մամուլում, սկզբում իր բանաստեղծությունները պարուրեց յուրահատուկ մշուշով։ Նրա բանաստեղծությունների առաջին ժողովածուի՝ «Արև անձրևի վրա», ավելի երևում էր անձրև, մթագնած երկրակամար, քան արև ու ծիածան։ Բարեբախտաբար հետագայում գտավ իր-ուղին և գտավ այն ժամանակ, երբ մոտիկից ճանաչեց նոր Հայաստանը։

Մի քանի բանաստեղծներ այնպես էլ մնացին օտար՝ հայ ժողովրդի առաջընթացին։ Դրանցից էր Արսեն Երկաթը։ Հայ կյանքում շատ բան փոխվեց, փոխվեցին և շատ բանաստեղծներ, բայց Արսեն Երկաթի հոգին միշտ մնաց ցուրտ, նույնիսկ այն հիշարժան իրադարձությունից հետո, երբ այցելեց Հայաստան, տեսավ հայ ժողովրդի տնտեսական ու մտավոր վերելքը։

Բարեբախտաբար այս կարգի գրողները գաղութահայ երիտասարդության վրա չունեցան այն ազդեցությունը, որ ունեցան արևմտահայ դասական գրականության առողջ ավանդներով առաջնորդվող բանաստեղծները։ Դրանց մեջ բացառիկ տեղ ունի Վահան Թեքեյանը՝ կյանքը խոր դիտող, զգացող, բանաստեղծական բազմերանգ միջոցներով այն պատկերող, երևույթները փիլիսոփայական վերլուծության ենթարկող բանաստեղծը։ Նա մինչև 20-ական թվականները անցել էր ստեղծագործական քառորդ դարի ճանապարհ, հրատարակել բանաստեղծությունների մի քանի ժողովածու, որոնց մեջ նշանակալից էին «Հըբաշալի հարություն» (1914) և «Կես գիշերին մինչև արշալույսը» (1919)։ Թեքեյանը դրանից հետո ստեղծագործեց ևս երեք տասնամյակ, ապրելով հիմնականում Եգիպտոսում։ Այդ ժամանակամիջոցում գրեց տարբեր ժանրի մի շարք երկեր («Եթե տերը կամենա» վեպը, մի քանի պատմվածք, դրամատիկական ստեղծագործություններ), բայց մնաց բանաստեղծ, սնունդ տալով սփյուռքահայ առաջավոր մամուլին երկար տարիներ։ 1933 թվականին Փարիզում լույս տեսավ նրա բանաստեղծությունների մի նոր ժողովածուն՝ «Սեր» վերնագրով։ Վերնագիրը բազմախոս է. այն արտահայտում է սեր դեպի մարդը, առաջին հերթին տառապած, որբացած, գաղթական մարդը։ Բազմազան է Թեքեյանի աշխարհը. հարուստ, գունագեղ, նրա ստեղծագործության վրա խայտում է յուրահատուկ մի թախիծ, մորմոք։ Թեքեյանն էլ բավական երկար ժամանակ չկարողացավ ընկալել նոր Հայաստանի գոյությունը իր ամբողջության մեջ։ Հավատքը նրա մոտ ամրապնդվեց դանդաղ, բայց անդառնալիորեն։ Նա առաջին տասնամյակի իր յուրահատուկ «խռովկանությունը» դեպի նոր Հայաստանը դեն դցեց շատ բնորոշ մի զրույցով, գրելով.

Ներե՛, որ քեն ըրի քեզի քիչ մը ատեն
— Մինչև երեկ — ու դեռ տաք չեմ բոլորովին,—
Բայց կխըլե շունչդ ինձմե կայծեր արդեն՝
Ջփայլած հին ու փայլելիք բոցին հաշվին[1]...

Թեքեյանը մնաց հավատարիմ այն գիտակցության, թե հանձին Սովետական Հայաստանի հայ ժողովուրդն ունի իր կայուն, բարգավաճ հայրենիքը, որը վերջ ի վերջո իր շուրջն է հավաքելու աշխարհով մեկ ցրված բոլոր հայերին։

20-ական թվականներից Սփյուռքում սկսեց զարգանալ գրական մի ուրույն հոսանք։ Դա անվերապահորեն Սովետական Հայաստանի դիրքերում կանգ-

1 Վահան Թեքեյան, Երկեր, Երևան, 1958, էջ 319։

նած, նրա հաջողություններով խանդավառվող, հայրենիքի վերաշինմանն օգնելու պատրաստական հոսանքն էր. սկզբում թույլ, բաղկացած գերազանցապես ՀՕԿ-ի կազմակերպության շարքերում ընդգրկված բանվորներից ու մտավորականներից, որը սակայն աստիճանաբար առնականացավ, դարձավ հզոր ուժ, բուռն պայքար ծավալելով ազգայնական գաղափարախոսության դեմ։ Տևական պայքարի այս մթնոլորտում առաջադեմ գրողները ստեղծեցին իրենց գրականությունը։ Մոտիկից կապված Սովետական Հայաստանի հետ, նրանք շեշտակի նայեցին ապագային, տոգորված ժողովրդի վերքերը ամոքելու լավատեսությամբ։ Դրանցից էին Կարապետ Սիտալը, Հակոբ Գույումճյանը, Միսաք Մանուշյանը, Սեման և ուրիշներ։

Նրանցից Սիտալը ամենից վաղ ընկալեց նորը։ 1931 թվականին Ամերիկայում լույս տեսավ նրա բանաստեղծությունների ժողովածուն՝ «Դիշերեն մինչև լուսաբաց» վերնագրով։ Դրանից առաջ, 1919 թվականին Նյու-Յորքում հրատարակել էր «Գուսաններգեր» ժողովածուն, որը ժողովրդական մի քանի ավանդությունների մշակում էր ներկայացնում։ Նոր գրքում Սիտալը գրում էր, թե հայ աշխատավոր ժողովուրդը այս զրկանքներու մեջեն մի նոր կարգի, նոր տնտեսության և արդար հատուցման մեծ ու փառավոր օրին կըսպասե անձկագին։ Եվ այդ օրը, այդ արշալույսը ծագեցավ Հայաստանի մեջ, խորհրդային կարգերի հաստատումով»։

Ժողովածուն ուներ մի քանի ենթաբաժին։ «Երբ դեռ գիշեր էր» բաժնում զետեղված բանաստեղծությունները,— գերազանցապես գրված խորհրդայնացումից առաջ,— պարուրված են յուրահատուկ թախիծով և գրված են ժողովրդական բանահյուսության նկատելի ազդեցությամբ։ «Թերթեր տարագրության մատյանեն» բաժնում դրվագներ են եղեռնից ու աքսորից։ «Լուսաբացին» բաժնում՝ արդեն նոր Հայաստանը փառաբանող ոտանավորներ են, ինչպես «Մայիսի մեկ», «Նոր հորովել», «Նոր Ռուսաստան», «Մյասնիկյան» և այլն։

«Խորհրդային Հայաստան» բանաստեղծության մեջ Սիտալը ողջունում է ազատագրված հայ աշխատավորին.

Ողջո՜ւյն կովիդ փառավոր, ողջո՜ւյն քո մեծ հաղթության,
Ողջո՜ւյն բանվոր քաջերուդ, մշակներուդ քրտնաջան.
Ողջո՜ւյն և կուռ միության երկիրներու հարևան
Արարատեն հյուսիսայդ, արևածագեն—Կարպատյան։

Սիտալի հետ միասին, նրանից մի քիչ ավելի ուշ, հրապարակ իջավ Հակոբ Գույումճյանը, որը վառ լավատեսությամբ երգեց ազատագրված հայրենիքը, արտացոլելով նաև նեգրերի, իրավազուրկների Ամերիկան։

Եթե Ամերիկայում Սիտալը և Հակոբ Գույումճյանն էին հանդես գալիս որպես նոր գաղափարների կրող և իրենց ներշնչման աղբյուրը համարում Սովետական Հայաստանը, ապա 30-ական թվականների կեսերից Ֆրանսիայում նույն այդ գաղափարները արտահայտեցին Միսաք Մանուշյանը, Գեղամ Աթմաճյանը և ուրիշներ։

Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին Մանուշյանն ու Սեման զոհ գնացին ֆաշիստական խոշտանգումներին։ Մանուշյանն ընկավ առասպելական սխրագործություններ կատարելուց հետո, վստահ, որ ֆաշիզմի

ջախջախումը վտանգից ազատելու է նաև իր հայրենիքը՝ Սովետական Հայաստանը։ Գնդակարհարվելուց առաջ նա գրել է. «...Եվ կը մեռնիմ գաղափարիս համար. հաղթանակին քանի մը մատ մնացած։ Երջանկութիւն անոնց, որ պիտի ապրին մեզմե հետո և պիտի վայելեն վաղվա խաղաղութեան և ազատութեան անուշութիւնը»։

Այն մտքերը, որ մի խումբ երիտասարդներ փորձեցին ցանել երեսնական թվականներին, հետպատերազմյան տարիներին տվեցին առատ հունձք, հիմնովին փոխելով սփյուռքահայ գրականության դեմքը։

4. ԹԱՏՐՈՆԸ

Այլ էր պատկերը թատրոնի բնագավառում։ 1920-ական թվականների ըսկզբներին արտասահմանյան տարբեր գաղութներում ապրում էին ավելի մեծ թվով արևելահայ արվեստագետներ, քան արևմտահայ։ Պատերազմի, հետպատերազմյան տարիների քաղաքական բարդ իրադարձությունները, մինչև 1920 թվականը Հայաստանում տիրող անորոշությունն ու կամայականությունները օտար ափեր էին նետել մի քանի տասնյակ հայ դերասան-դերասանուհիներ, երգիչներ, նկարիչներ։ Դրանց մեջ էին Հովհաննես Աբելյանը, Հովհաննես Զարիֆյանը, Սիրանույշը, Սեդրակ և Մաշա Սուրաբյան ամուսինները, Միքայել և Մարգո Կոստանյան ամուսինները, Աննա Բուդաղյանը, Ա. Շահխաթունին և ուրիշներ։

Այսպիսի ականավոր արվեստագետների առկայությունը չէր կարող իր ազդեցությունը չթողնել սփյուռքահայ թատրոնի վրա։ Աբելյանն ու Զարիֆյանը հանդիսացան ամերիկահայ բեմի հիմնական սյուները 20-ական թվականների սկզբներին և Աբելյանի հայրենիք վերադառնալուց հետո էլ նրան աշակերտած երիտասարդ դերասան-դերասանուհիները շարունակեցին մեծ արվեստագետի ավանդները, իսկ Զարիֆյանը խոշոր ծառայություն մատուցեց սփյուռքահայ թատրոնի զարգացմանը, մինչև մահը՝ 1937 թվականը։

Արևմտահայ բեմի շատ ներկայացուցիչներ գերազանցապես կենտրոնացել էին Փարիզում, ինչպես Տրդատ Նշանյանը, Արտաշես Գմբեթյանը, էլիզ Գովանը, Արման Կոթիկյանը, Վահրամ Սվաճյանը և ուրիշներ, որոնք բերել էին իրենց խաղաոճը, բեմական ըմբռնումները, խաղացանկը։ Այդ իսկ պատճառով սփյուռքահայ թատրոնը զարգացման արշալույսին իր մեջ խաչաձևեց բեմական տարբեր ուղղություններ, խաղաոճեր, արևելահայ և արևմտահայ լեզվաճյուղերը։ Հաճախ նույն ներկայացման մեջ միմյանց բախվում էին Աբելյանի խորապես ռեալիստական և մի այլ դերասանի ռոմանտիկական խաղաոճերը։

Սփյուռքահայ թատրոնի երկրորդ հատկանիշը անկայուն վիճակն էր։ Հայ գաղթականական օջախների ցրվածությունը, նյութական դժվարությունները, կենտրոնաձիգ ուժի պակասը հնարավորություն չէին տալիս թատերական մշակույթի գործիչներին ստեղծել մի թատերախումբ, որը գործեր կայուն ծրագրով, ապահովված լիներ նյութապես, սեփական շենքով, խաղացանկով, կարողանար ապահովել դերասան-դերասանուհիների աշխատավարձը։

Երկրից երկիր թափառող հայ խմբերը չունեին որևէ կենտրոն, շրջագայության էին դուրս գալիս ոչ թե կանոնավոր թատերախմբերով, այլ մի քանի հո-

դով, որոնք յուրաքանչյուր գաղութում իրենց շուրջն էին հավաքում տեղական ուժեր, գերազանցապես սիրողներ և ներկայացումներ էին կազմակերպում։

Այստեղից բխում էր սիյուռքահայ թատրոնի երրորդ բնորոշ գիծը՝ սիրողական բնույթը, որը հնարավորություն չէր տալիս ներկայացումներին տալու անսամբլային որակ, որքան էլ կազմակերպողները լինեին տաղանդավոր արվեստագետներ։ Աբելյանի, Զարիֆյանի և այլոց կազմակերպած ներկայացումների մեջ փայլում էին պրոֆեսիոնալ դպրոց անցած մեկ երկու դերասան. մյուսներն օժանդակում էին գլխավոր դերակատարների խաղի ամբողջացմանը։

Մինչև 20-ական թվականները ֆրանսահայ գաղութը տեսել էր միայն պատահական, սիրողական խմբերի կողմից տրված ներկայացումներ։ 1919 թվականի հոկտեմբեր ամսին Փարիզ է հասնում Մկրտիչ Զանանը, կազմակերպում մի խումբ, որի մեջ մտնում էին Վահրամ Սվաճյանը, Լևոն Հարուքը, Արման Կոթիկյանը, հայտնի պարուհի-դերասանուհի Արմեն Օհանյանը և ուրիշներ։ Զանանը բեմադրում է Շիրվանզադեի «Պատվի համարը», «Ջար ոգին», Շանթի «Հին աստվածները» և այլ պիեսներ։ Այս ներկայացումներից բացառիկ հաջողություն են գտնում «Ջար ոգին» և «Հին աստվածները»։ Զանանը վերադառնում է ծննդավայր։ Հաջորդ թատերաշրջանում Պոլսից Փարիզ ժամանած Տ. Նշանյանն է ղեկավարում «Փարիզահայ դրամատիկ թատերախումբը»։

1923 թվականի հունվարի վերջերից բեմադրվում են «Ոճրագործի ընտանիքը», «Օթելլոն», «Պաղտասար Աղբարը», Տ. Կամսարականի «Փրկանքը»։ «Օթելլոն» ուշագրավ է նրանով, որ Վենետիկի մավրի դերը կատարել է Հովհաննես Աբելյանը։

Փարիզ են հասնում Ա. Շահխաթունին և Էլիզ Պինեմեճյանը։ Նրանց մասնակցությամբ տրվում են նոր ներկայացումներ, գերազանցապես երկրորդական հեղինակներից թարգմանված պիեսներ («Սամսոն», «Խամաճիկներ», «Փողոցի աղջիկը», «Անչափահասը» և այլն)։ Մամուլը խստորեն քննադատում է այդ երևույթը։ Առաջանում է լուրջ տարակարծություն խմբի ներսում, որը ջլատում և ի վերջո կազմալուծում է այն։

Ֆրանսահայ թատրոնի երկրորդ շրջանի սկզբնավորումը կապված է փարիզահայ մշակութային կյանքի նշանավոր դեմքերից մեկի՝ Աննա Բուդաղյանի անվան հետ։ Նա կազմակերպում է «Մայրենի բեմ» թատերախումբը։ Ի տարբերություն նախորդ թատերաշրջանի, Բուդաղյանը մի ամբողջ տարի բեմադրում է բացառապես ինքնուրույն պիեսներ, որոնց մեջ Շիրվանզադեի «Նամուսը», «Պատվի համարը», «Կործանվածը», «Ծվզինե», Լ. Շանթի «Հին աստվածները», Օտյանի և Կյուրճյանի «Ջարշըլը Արթին աղան» և այլն։

Դժբախտաբար մի փայլուն թատերաշրջանից հետո այս խումբն էլ է քայքայվում։ Այնուհետև ավելի քան մեկ հնգամյակ որևէ կայուն թատերախումբ չի գործում Փարիզում։ Սկսվում է անհատական ներկայացումների երկարատև մի շրջան։ Մեկը մյուսին են հաջորդում տարբեր վայրերից եկած թատերախմբերն ու դերասան-դերասանուհիները, որոնք ներկայացումներ են կազմակերպում և չվում այլ երկրներ։ Սուրաբյան ամուսինները հանդես են գալիս իրենց օպերետային խաղացանկով («Արշին մալ-ալան», «Ուշ լինի նուշ լինի», «Մայաթ-Նովա», «Անուշ» և այլն)։ Դերասան Անդրանիկի խումբը բեմադրում է մի քանի պիես, որին հաջորդում է Վերժին Մամուլյանը՝ Սոմբատովի «Դավաճա-

նությունը» դրամայի բեմադրությամբ։ Կոստանյան ամուսինները հանդես են գալիս «Օթելլո» և «Անհայտ կին» ներկայացումներով։ Հովհ. Զարիֆյանը՝ «Տայֆունով», Մ. Մարությանը «Բոռով»։ 1927 թվականին Սովետական Հայաստանից Փարիզ են մեկնում Դուրյան-Արմենյանը, Աստղիկ և Լևոն Երամյանները։ Նրանց մասնակցությամբ բեմադրվում են «Անհայտ կինը» և «Աննա Քրիստին»։ Վերջապես 1932 թվականի սկզբներին Փարիզ է հասնում Վահրամ Փափազյանը և հանդես գալիս Օթելլոյի, Համլետի, Կորրադոյի, Ուրիել Ակոստայի, Դոն Ժուանի դերերով, մի քանի պիեսներում խաղընկեր ունենալով Ա. Շահխաթունուն։ Օդեոնի դերասանների հետ նա Ատելիե թատրոնում Օթելլոյի դերը կատարում է ֆրանսերեն՝ արժանանալով փարիզյան մամուլի ջերմ գնահատականին։ Անհատական ներկայացումների շարքը սրանով չի փակվում։ Պոլսից Փարիզ եկած դերասան Գարագաշը ներկայացնում է «Լեբլեբիջի Հոր հոր աղան», Տիկին Սիրանույշ Ալեքսանյանը՝ իր հեղինակած «Կնճռոտ հանգույցը» և այլն։

Նույն 1932 թվականին Ա. Կոթիկյանը մի խումբ ընկերների օժանդակությամբ ստեղծում է «Հայ ժողովրդական թատրոնը»։ Կազմվում են լուրջ ծրագրեր, նպատակ ունենալով գեթ ամեն շաբաթ ներկայացում տալ, թատերախումբը ապահովել սեփական դահլիճով, կահույքով և այլն։ Դարձյալ խաղացանկում հիմնական տեղը հատկացվում է ազգային դրամատուրգիային՝ «Պատվի համար», «Պաղտասար աղբար», «Կայսրը», «Վարդանանք», «Ավերակների վրա», «Ջարշըլը Արթին աղա» և այլն։

Ընդամենը երկու թատերաշրջան բոլորած՝ քայքայվում է նաև «Հայ ժողովրդական թատրոնը»։ Հետագայում ֆրանսահայ բեմը կանգուն պահելու փորձեր են անում Ա. Շահխաթունին, Ա. Գմբեթյանը, Տ. Նշանյանը և ուրիշներ, բայց բոլորն էլ մատնվում են անհաջողության։

Այսպիսով, Փարիզում ընդամենը երկու տասնամյակի ընթացքում ստեղծվում ու քայքայվում են բազմաթիվ թատերախմբեր։

Ամերիկահայ բեմի պատկերը ավելի մխիթարական չէր, քան ֆրանսահայ թատրոնինը, չնայած այնտեղ էին Զարիֆյանը, ապա նաև Աբելյանը։ Այստեղ հենց սկզբից նկատվեց ուշագրավ մի երևույթ։ Դրամատիկական մեծ տաղանդներ Աբելյանն ու Զարիֆյանը չունեցան այն հաջողությունը, որ ունեցան Սուրաբյան ամուսինները իրենց օպերետներով։ Դրամատիկ արվեստից հասկացողների թիվը անհամեմատ փոքր էր. ժողովրդական երգն ու երաժշտությունը, օպերետային ներկայացումների զվարճացնող, թարմացնող բնույթը իրեն էր գրավում բնակչության միջին խավին (բանվորներ, արհեստավորներ, մանր առևտրականներ և այլն), նաև օտարներին։ Զարիֆյանը հարկադրված միանում է Սուրաբյաններին և ստեղծում «Կովկասահայ դրամա-օպերետային խումբը»։ Անունը չէր համապատասխանում բովանդակությանը. փաստորեն նույն օպերետային խաղացանկն էր, որին չէր էլ կարող մասնակցել ականավոր դերասանը։

Զարիֆյանը բաժանվում է խմբից, ստեղծում «Հայ դրամատիկ թատերախումբը» և 1923 թվականի գարնանից Նյու-Յորքում կազմակերպում է մի քանի ներկայացում։ Ամերիկահայ մամուլը խանդավառությամբ է ընդունում Զարիֆյանի գործունեությունը։ Դրանից հետո է, որ Նյու-Յորքի թատերասեր հայերը

Նույն տարում որոշում են նշել Զարիֆյանի բեմական գործունեության 25-ամյակը, որն առաջին հայկական հոբելյանական հանդեսն էր Ամերիկայում։

Նույն թվականի ամռանը Նյու-Յորք է հասնում Հովհաննես Աբելյանը։ Նախքան Ամերիկա գալը, նա եղել էր Եվրոպայի մի շարք վայրերում, Փարիզում, Լոնդոնում, Բեռլինում և ամենուրեք արժանացել օտար մամուլի հիացմունքին, մասնավորապես Օթելլոյի դերակատարմամբ։

Աբելյանը մոտ երկու տարի ելույթներ է ունենում Ամերիկայում, աճեցնում խոստումնալից շատ ուժեր, ստեղծում բեմական դպրոց, որին հետևում են շատերը։ Բայց նա ամուր կապերով կապված էր ժողովրդի, հայրենիքի հետ և սպասում էր հայրենիքի կանչին։ 1925 թվականին Հայաստանի կառավարությունը հրավիրում է նրան Երևան։ Մեծ արվեստագետը խանդավառությամբ ու երախտագիտությամբ է ընդունում հրավերը։ Հրաժեշտի երեկույթում նա հուզված ասել է. «Հայրենիքը հրավեր ուղղած է ինձ ու ես պատրաստ եմ երթալու։ Գիտեմ, որ այստեղ ապրելու պայմանները ավելի նպաստավոր են, մինչ այնտեղ, հայրենիքի մեջ դժվարին. և սակայն ինձ համար հաճույք է չանքերս միացնել այն շուրջ 1.200.000 հայության չանքերին, որոնք այսօր մայր հողին վրա ուղղված են հայրենիքի վերաշինության գործին։ Ես հաջողություն կմաղթեմ ձեզ, հոս մնացողներուդ, թեև բաղձանքս է ձեզ ամենքդ տեսնել Հայաստանի մեջ»[1]։

Աբելյանի վերադարձից հետո նկատելիորեն թուլանում է ամերիկահայ բեմը։ Այնուհետև մի ամբողջ տասնամյակ Զարիֆյանը թատերախմբեր կազմակերպելով ներկայացումներ է տալիս ոչ միայն Ամերիկայի Միացյալ Նահանգների տարբեր քաղաքներում, այլև Բալկաններում, Եգիպտոսում և այլուր՝ միշտ հավատարիմ իր խաղացանկին, որտեղ հիմնական տեղը գրավում էին Շիրվանզադեն ու Շանթը։

1937 թվականին օտարության մեջ մահանում է Զարիֆյանը, որկված իր տաղանդը հարազատ ժողովրդին ի սպաս դնելու հնարավորությունից։

Այնուհետև, ամերիկահայ բեմի հիմնական սյուները մնացին Սուրաբյան ամուսինները և Անդրանիկ թատերախումբը։ Առաջինները հավատարիմ իրենց օպերետային ծրագրին, զարկ տվին երաժշտական ներկայացումներին, իսկ Անդրանիկ թատերախումբը (Անդրանիկ և Ազնիվ ամուսիններ, դուստրերը՝ Պերճուհի և Գոհար) երկար տարիներ հանդես եկան հավասարապես դրամատիկ և կատակերգական դերերում։

Ինչպես արդեն ասվեց, եգիպտահայ գաղութը շատ ավելի հին էր, քան ֆրանսահայը և ամերիկահայը։ Հայ թատերախմբերը, այդ թվում Սիրանույշի և Արմենյանի, ավելի վաղ Պենկլյանի ու Մնակյանի, հաճախ էին այցելել այնտեղ, ներկայացումներ տվել Կահիրե և Ալեքսանդրիա քաղաքներում։ 20-ական թվականների գաղթականական հոսանքը դեպի բուրգերի ստորոտը, անհրաժեշտություն դարձրեց եգիպտահայ մի թատերախմբի ստեղծումը։

Իր դերասանական մկրտությունը Պոլսում ստացած մի պատանի՝ Օննիկ Գալֆայանը (Վոլդեր), հիմնում է «Եգիպտահայ դրամատիկ թատերախումբը»։ Շուտով նրան գործակցում է տաղանդավոր մի դերասանուհի՝ Պեաթրիս

1 «Նավասարդ», 1925, էջ 95։

Եկանյանը, որը ամուսնանալով Գալֆայանի հետ, իր կյանքը ամբողջովին կապում է այդ խմբի հետ, որը հաղթահարելով բազմապիսի դժվարություններ, որոշ ընդմիջումներով գործել է մոտ երկու տասնամյակ, աճեցնելով բազմաթիվ դերասաններ։ Դժբախտաբար, ինչպես սփյուռքահայ այլ թատերախմբեր, «Եգիպտական դրամատիկն» էլ զուրկ էր նյութական հնարավորություններից։ Բացի Օննիկ Գալֆայանից և Պետրոս Եկանյանից, եգիպտահայ բեմն ունեցել է մի քանի տաղանդավոր դերասաններ՝ Խաչիկ Սանտալջյանը, կատակերգակ Արփիար Վարդանյանը և ուրիշներ։ Վերջինս առավել նպաստավոր պայմաններում կարող էր դառնալ հայ բեմի լավագույն կատակերգակներից։ «Եգիպտահայ դրամատիկը» բեմադրում է «Կամելիաազարդ տիկինը» պիեսի նման սիրվող գործեր, որոնք մեծ հաջողություն են ունենում։ Ազգային խաղացանկից ներկայացվում են Պարոնյանի, Երվանդ Օտյանի կատակերգությունները, Տ. Կամսարականի «Վարժապետին աղջիկը», Ս. Պարթևյանի «Զայնը հնչեց» և այլն։

Ինչպես մյուս գաղութներում, եգիպտոսում էլ հաճախ ներկայացումներ էին տալիս Սուրաբյան և Կոստանյան ամուսինները։ Վերջիններս 1927 թվականին բեմադրում են Շանթի «Կայսրը» և «Հին աստվածները»։

Վերջապես հայ բեմի ամենաշողշողուն աստղերից մեկը՝ Սիրանույշը կյանքի վերջին տարիները անցկացրեց Եգիպտոսում՝ Կահիրեում և Ալեքսանդրիայում, հանդես գալով մի քանի դերերով։

Թատերական կյանքը անհամեմատ թույլ բոցկլտում ունեցավ այլ գաղութներում՝ Բալկաններում, Սիրիայում, Իրաքում, Իրանում և այլն։ Վերոհիշյալ գաղթօջախներում տիրապետողը մնաց անհատական նախաձեռնությունը և շրջիկ խմբերի այցը։ Տեղական ուժերը, բացառապես կազմված սիրողներից, չկարողացան մնայուն թատերախմբեր ստեղծել։ Հունաստանում, օրինակ, որտեղ այնքան մեծ թվով հայեր էին հավաքվել, գործում էին միայն սիրողական խմբեր, որոնք Աթենք, Պիրեյ և Սալոնիկ քաղաքներում բեմադրում էին Պարոնյանի, Շիրվանզադեի, Շանթի և այլոց պիեսները։

Հայ թատրոնը, կարծես մի երերուն նավակ, սահում անցնում էր ծովից ծով, երկրից երկիր և օրորվում հայ գաղթականության տարուբերման հետ միասին։ Էականը, սակայն, սփյուռքահայ թատրոնի բնույթը չէր, այլ այն զարմանալի համառությունը, որով ոչ միայն գրագետ մարդիկ, այլև կիսագրագետ բանվորներ, արհեստավորներ դիմում էին դեպի թատրոն։ Թատերական ներկայացումներ էին կազմակերպվում թիֆեղապատ գաղթականական թաղամասերում, Բեյրութի ու Հալեպի խղճուկ կացարաններում, անգամ ամերիկյան նպաստամատույց ընկերության որբանոցներում, որտեղ չափահաս որբերի ջանքերով գերազանցապես զավեշտներ էին ցուցադրվում։ Եթե սրան ավելացնենք նաև այն, որ գաղթականական կենսարաններում, անբարենպաստ պայմաններում կազմակերպված ներկայացումներին մասնակցում էին օրվա ծանր աշխատանքից հոգնաբեկ արհեստավորներ, պարզ կդառնա, թե թատրոնը որքան էր մտել կենցաղի մեջ։

Անհատական նախաձեռնությունները, շրջիկ և այցելու խմբերի ներկայացումները բնորոշ էին նաև իրանահայ գաղութին, որը նույնպես պատերազմից հետո նկատելի չափով մեծացել էր, ուներ իր պարբերականները, մշակութային օջախները։ Թավրիզ, Նոր Ջուղա և այլ վայրերում հայերը վաղուց ունեին թատ-

րոն, որը մերթ աշխուժանալով, մերթ թուլանալով իր գոյությունը քարշ տվեց երկար տարիներ։ Նոր Ջուղայի ազգային թատրոնը, որ գործում էր անցյալ դարի ութսունական թվականներից, առաջին համաշխարհային պատերազմից հետո նկատելի աշխուժացում էր ապրել ռեժիսյոր Բարսեղ Աբովյանի ջանքերի շնորհիվ։ Նա քանակական թվականների սկզբներին ներկայացումներ է կազմակերպել նաև Իրանի հայաշատ այլ քաղաքներում։

Պարսկաստանը հանդիսանալով արտաքսման մեկնողների առաջին հանգրվաններից մեկը, հյուրընկալել է կովկասահայ բոլոր թատերախմբերին։ Ինչպես նախապատերազմյան տարիներին, այնպես էլ հետագայում, այնտեղ ներկայացումներ են տվել Սիրանույշը, Աբելյանը, Զարիֆյանը, Վ. Փափազյանը, Սուրաբյան ու Կոստանյան խմբերը և այլն, հիմնականում մեզ ծանոթ խաղացանկով, որտեղ Ալ. Շիրվանզադեն բռնում էր առաջնակարգ տեղ։ Այցելու այդ խմբերից և ոչ մեկը, սակայն, պարսկահայ կյանքում չի կատարել այն դերը, որ կատարել է Երևանի պետական առաջին թատրոնի կոլեկտիվը 1924 թվականի ամռանը։ Խումբը, որի մեջ էին Վ. Վաղարշյանը, Հ. Ներսիսյանը, Ավ. Ավետիսյանը, Տ. Շամիրխանյանը, Օ. Բունիաթյանը, Ա. Ոսկանյանը, Հ. Խաչանյանը, Հասմիկը և ուրիշներ, Թավրիզ քաղաքում տալիս է մի շարք ներկայացումներ՝ Գոգոլի «Վերաքննիչը», Մոլիերի «Երևակայական հիվանդը», Հաուպտմանի «Ջրասույզ Զանգը», Շիլլերի «Ավազակները», Օսկար Ուայլդի «Սալոմեն», Շեքսպիրի «Կամակոր կնոջ սանձահարումը» և այլն։

Քաղաքական ավելի աննպաստ պայմաններում էր գտնվում պոլսահայ թատրոնը։ Այդ տարիներին Աշ. Մադաթյանը թատերախմբեր է ստեղծում բացառապես հայ դերասան-դերասանուհիներից և պարբերաբար թուրքերեն ներկայացումներ կազմակերպում։ Պոլսահայ թատրոնի անկման այս շրջանը, սակայն, ուշագրավ է մի այլ տեսակետից։ Հայ թատերախմբերը հարկադրի պիջում կատարելով լեզվի հարցում, հավատարիմ են մնում հայկական խաղացանկին։ Թուրքերենի են թարգմանվում հայ դասական դրամատուրգիայի նմուշներից շատերը։ Այսպես, 1930-ական թվականներին առաջին անգամ Պոլսում թուրքերեն ներկայացվում են Ալ. Շիրվանզադեի «Պատվի համարը», «Նամուսը», «Եվգինե», Հ. Պարոնյանի «Պաղտասար աղբարը», Օտյանի և Կյուրճյանի «Ջարշըլը Արթին աղա»։ Հիշատակության արժանի է, մասնավորապես Գ. Սունդուկյանի «Պեպոյի» թուրքերեն ներկայացումը 1936 թվականին։

Այսպիսով, Սփյուռքում թեև տևական գործունեություն ունեցող, նյութական հնարավորություններով ապահովված թատերախմբեր գրեթե չստեղծվեցին, բայց թատրոնը իր դաստիարակչական, կրթական դերը կատարեց աշխարհով մեկ սփռված գաղթական հայերի գեղագիտական դաստիարակության գործում միաժամանակ աճեցրեց տաղանդավոր շատ ուժեր։

5. ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Արվեստի ոչ մի բնագավառ Սփյուռքում չզարգացավ այնքան աննպաստ պայմաններում, որքան երաժշտությունը։ Հայ ժողովուրդը իր հետ գաղթաշխարհ էր բերել դարավոր երաժշտությունը՝ եկեղեցական, կենցաղային-ժողովրդական, ազգային-հայրենասիրական։ Եկեղեցիներում լսում էին շարական-

ներ, երևակայությամբ տեղափոխվում հայրենիք, վերապրում այն ամենը, ինչ կապված էր ծննդավայրի հետ: Դա նրանց հարազատ էր, սիրելի: Միամիտ ու պարզունակ հայրենասիրական երգերը, հաճախ կրում էին հայ քաղաքական կուսակցությունների պոռոտախոսության դրոշմը, բայց բնորոշ էին եղեռնից մազապուրծ ազատված սերնդի համար:

Երգվում էին նաև աքսորի, գաղթականության երգեր: Դրանցից հիշատակենք հայտնի «Դեր-Զորի դեստանը», որը պատմում է աքսորի ճանապարհին կատարված ահավոր նախճիրների մասին:

Երգվում էին և այնպիսի երգեր, որոնք ստեղծվել էին ավելի ուշ, հենց Սփյուռքում: 20—30-ական թվականներին Ամերիկայից մինչև Եգիպտոս, բոլորի շրթներին էր «Ինչու ես եկա Ամերիկա» երգը: Այդ երգը հազարավոր ձայնաբանակներով տարածվել էր ամենուր: Դժվար էր գտնել որևէ տուն, որտեղ գրամաֆոնի վրա դրված դեղնավուն սկավառակը չհնչեցներ Ամերիկա ընկած, նոր պայմաններից դժգոհ գաղթականի հոգու տվայտանքը:

Ինչու եկա ես Ամերիկա
Եկա ու ընկա,
Երանի չգայի:

Երաժշտության այս բնագավառները անմիջապես կապված էին հայ կյանքի հետ: Բայց շրջապատում թևածում էր ավելի հզոր մի երաժշտություն՝ եվրոպական դասական ու ժամանակակից երաժշտությունը, որ աստիճանաբար մուտք էր գործում հայկական շրջանները, մութ կացարանները, լսվում էր հայերի կազմակերպված երեկույթ-ցերեկույթներում, պաշտոնական համերգներում: Չէր կարող այն իր ազդեցությունը չթողնել հայ երիտասարդության վրա, մանավանդ, որ հենց առաջին տարիներից օտար երաժշտանոցներում սկսեցին սովորել հարյուրավոր հայ պատանիներ ու աղջիկներ: Նրանցից շատերը՝ անհաղորդ մայրենի մեղեդիներին, առաջին օրերից տարվեցին օտար երաժշտությամբ: Ավարտելով Բոստոնի, Նյու-Յորքի, Կալիֆորնիայի և այլ վայրերի երաժշտանոցները, նրանք սկսեցին փայլել իրենց երգերով ու նվագով: Առաջ եկան երգչուհիներ (Ալիս Քյուրքչյան, Զապել Արամ), դաշնակահարուհիներ, ջութակահարներ, տավղահարներ: Սրանք արագորեն դուրս եկան հայկական շրջանակներից, լայն ճանաչում գտան Ամերիկայում և Եվրոպայում, օտար մամուլը զբաղեցրին իրենցով: Առաջին այս սերունդը իր ծրագրերում ուներ և հայկական երգեր, գերազանցապես Կոմիտասի, Եկմալյանի, Գրիգոր Սյունու և ուրիշների մշակումները: Բայց դրանք հիմնականը չէին, կարծես նրանց ազգային տուրքն էր ժողովրդին ու ծնողներին: Արմեն Թոքատլյանը, ճիշտ է, կատարեց և հայերեն երգեր, բայց հռչակվեց «Մետրոպոլիտենի» բեմից:

Բայց կար հայ բնաշխարհում ծնված, Կոմիտասի հետ գործակցած, էությամբ ժողովրդի հետ ձուլված մի հզոր երգիչ՝ Արմենակ Շահմուրադյանը: Զայնը մշակել էր Փարիզում, երգել Փարիզի օպերաներում, հռչակ ձեռք բերել ամբողջ Եվրոպայում, բայց այդ բոլորը զարմանալի կերպով չէին կարողացել խլել նրա տոհմիկ անհատականությունից որևէ նշույլ: Մնացել էր նույն մշեցին և՛ կենցաղում և՛ բարոյական ըմբռնումների մեջ և՛ իր հակակրություններն ու համակրություններ ոլորտում: Նա թողել էր օպերան, եվրոպական փարթամ

թատերասրահները, ընկել գաղթականական հոսանքի մեջ, երգում էր նրա համար, մորմոքվում տեսնելով ժողովրդի դժբախտ ճակատագիրը, շրջում էր երկրից երկիր, անցնում օվկիանոսներն ու ցամաքները, երգում բոլոր հայաբնակ վայրերում։ Հաճախ բարձրանում էր հանպատրաստից ստեղծված բեմերը և հեղեղի նման հորդում էր ժողովրդական առույգ երգն ու հուզիչ մեղեդին՝ «Մոկաց Միրզա», «Անտունի», «Կալի երգը», նաև «Կիլիկիա», «Հայաստան», «Մայր Արաքսի»։ Շահմուրադյանի երգացանկում տեղ չէին գտնում եվրոպական օպերաններից արիաներ։ Դա արդյունք էր ունկնդրի հետ ավելի անմիջական հաղորդակցություն ունենալու հոգեկան պահանջի։ Շատ երիտասարդներ հետևում էին նրան, սովորում, հաճախ իրենց ձայնը մարզում նրա մոտ, ղեկավարվում նրա խորհրդով։ Շահմուրադյանը կատարեց ավելին հայ ժողովրդական երգերը տարածելու, նոր երգիչ-երգչուհիներ պատրաստելու գործում, քան կարող էր կատարել մի ամբողջ երգչախումբ։

Անհրաժեշտ էր համախմբել հայ երաժշտական ուժերը, երաժշտության զարգացումը դուրս բերել ինքնահոսից։ Երաժշտագետների ճնշող մեծամասնությունը այդ թվականներին հավաքված էր Ամերիկայում և համախմբման առաջին ձայնն էլ լսվեց Ամերիկայից։ 1923 թվականի վերջերին Գրիգոր Սյունին և Մեհրաբյանը ամերիկահայ մամուլում հրապարակեցին ուշագրավ մի կոչ, որն արտատպվեց տարբեր գաղութների հայ թերթերում։ «Վերջին ժամանակներս,— ասված էր այդ կոչում,— Հայաստանեն և այլ վայրերեն բազմաթիվ հայ արվեստագետներ, նկարիչներ, դերասաններ, երգիչներ և երաժիշտներ կեդրոնացած են Ամերիկայի մեջ՝ ապրելու ամերիկահայության մեջ և աշխատելու նրա համար։ Անհրաժեշտ է, որ հայ արվեստագետները, որոնք ոչ մի իրական առընչություն չունին հայ քաղաքական հոսանքների և կրոնական հարանվանությունների հետ, կարողանան հանդես գալ միացյալ ուժերով, ծառայելու թե արվեստին, թե ամերիկահայ գաղութին և իրենց սեփական անվան ու դիրքին։ Հայ երաժշտությունը, որ հայկական արվեստի կարևոր ճյուղերից մեկն է, զգում է այդպիսի համերաշխ գործունեության պետքը, որի համար երկու երաժիշտներս և մեր տրամադրության տակ գտնված երկու անջատ խմբերը պիտի միացվին ընդհանուր անվան տակ։ Մեր նպատակն է, ա. Քով քովի բերել հայ երաժըշտության սիրահար և համակիր բոլոր տարրերը։ բ. Ուժ տալ հայ երաժշտության տարածման և զարգացման, գ. օրինակ հանդիսանալ ուրիշներուն և ցույց տալ, որ համերաշխ գործակցությամբ կարելի է ավելի իրական և ընդհանուր աշխատանք կատարել։ դ. Միասնաբար հանդես գալ հայ երաժշտությունը տարածելու նաև օտար շրջանակներու մեջ»։

Մեհրաբյանն ու Սյունին կատարում են իրենց ծրագրերը և որոշ հաջողության հասնում։ Նրանց միացյալ խմբի առաջին համերգը տրվում է Նյու-Յորքում։ Ծրագիրը բաղկացած էր հիմնականում Կոմիտասից, Եկմալյանից։ Կատարողների մեջ էին տիկին Սուրաբյանը և երգիչ Քալանթարը։

Մեհրաբյան-Սյունի խումբը իր գործունեության կարճ ժամանակամիջոցում նկատելի դեր կատարեց հայ երգն ու երաժշտությունը մշակելու, մասսայականացնելու, այն օտարներին ծանոթացնելու ուղղությամբ։

Թեև սփյուռքահայ գրականությունը զարգանում էր ներպարփակ, հայ իրականության սահմաններում, գրվում էր հայերի կողմից, այն ընթերցում էին

հայերը և օտարը անհաղորդ էր մնում, թե ինչ կյանք է արտացոլվում այդ ժողովրդի գրականության մեջ, ինչ գաղափարներ են առաջադրվում, ապա տարբեր է երաժշտությունը. որքան էլ թույլ լինեին բոցկլտումները, քիչ լիներ տըրվող համերգների թիվը, բեմահարթակից հայկական մեղեդին շոյում էր ոչ միայն հայի, այլև ամերիկացու, իտալացու, ֆրանսիացու լսելիքը, հուշում մի նոր ոճ, նոր հոգեվիճակ։ Եվ պատահական չէ, որ Մեհրաբյան-Սյունիի, ինչպես և այլ նման խմբերի ազգային համերգներից հետո աշխույժ հետաքրքրություն է ստեղծվում հայ ժողովրդական երաժշտության նկատմամբ։ Եթե դարասկզբին կոմիտասյան համերգները Փարիզում հիացմունք էին պատճառել Ռոմեն Ռոլանին, իսկ Դեբյուսին իր նամակներից մեկում «հայտնություն» էր համարում այդ երաժշտությունը, ապա 20-ական թվականների սկզբներին հայ երաժըշտությունը լսում են ավելի մեծ թվով օտարներ։ Օտար մամուլի էջերում տպագրվում են բազմաթիվ հոդվածներ, երաժշտագետները այդ երաժշտության մեջ ընկալում են խոր անցյալի արձագանքները, տառապած մի ժողովրդի ճիչերը, տեսնում են արիություն, լավատեսություն։ Օրինակ, ամերիկացի մի արվեստագետ՝ Հենրի Գիլբերդը, Բոստոնում տրված հայկական մի համերգի առիթով գրել է. «Իմ արևմտյան ականջների համար այս երգերի մեջ կար ավյուն և հուզիչ մի գեղեցկություն, թեև կար նաև հուսահատության շունչ»։

Հայ երգի տարածման ու մասսայականացման գործում խոշոր դեր են կատարել Կոմիտասի աշակերտները։ Այն օրերին, երբ անմահ երաժշտագետը տառապում էր Փարիզի հոգեբուժական հիվանդանոցներից մեկում, նրա աշակերտները ստեղծում են Կոմիտասյան հանձնաժողովը, որի նպատակներից մեկն էր մեծ ուսուցչի անտիպ գործերի հավաքումն ու հրատարակումը։ Այս գործում վճռական դեր են կատարում երաժշտագետներ Վ. Սարգսյանը, Մարգարիտ Բաբայանը և Թումաճյանը։ Սարգսյանն ապրում էր Բրյուսելում, որտեղ նա ըստեղծում է երգչախումբ և համերգներ տալիս Բելգիայի քաղաքներում՝ Անվերսում, Բրյուսելում և այլն։ Նրա համերգները, որոնց ծրագիրը գերազանցապես կազմված էր Կոմիտասից, անցնում են փայլուն հաջողությամբ և իրենց վրա հրավիրում բելգիական մամուլի ու երաժշտասեր հասարակության ուշադրությունը։ Սարգսյանի երգչախմբում երգել են ոչ միայն հայեր, այլև բելգիացիներ։ Կոմիտասյան հանձնաժողովը, որտեղ խոշոր դեր է կատարել Մարգարիտ Բաբայանը, հավաքել ու հրատարակել է Կոմիտասի ստեղծագործությունների մի քանիսը և տարբեր վայրերից ձեռք բերված կոմիտասյան վավերաթղթերը մաս-մաս ուղարկելով Հայաստան, հիմք դրել Կոմիտասի ճոխ արխիվին։ Մարգարիտ Բաբայանն ունեցել է երաժշտական բեղուն գործունեություն. պարբերական մամուլում տպագրել է հայերեն և ֆրանսերեն հոդվածներ։ 1930-ական թվականներին նա հիմնել է երաժշտական դասընթացներ, որտեղ սովորել են բազմաթիվ հայեր։

6. ԿԵՐՊԱՐՎԵՍՏԸ

Միանգամայն ուրույն զարգացում ունեցավ կերպարվեստը՝ նկարչությունն ու քանդակագործությունը։

Մեծ արտագաղթից հետո արտասահմանյան տարբեր երկրներում թափառող արվեստագետների քանակը բավական մեծ էր։ Սփյուռքում էին Էդգար Շա-

հինը, Փանոս Թերլեմեզյանը, Սարգիս Խաչատրյանը, Հովսեփ Փուշմանը, Վարդան Մախոյանը, Կարապետ Ադամյանը, Արսեն Շապանյանը, Արշակ Ջեփ-վաճյանը, Ռաֆայել Շիշմանյանը, Երվանդ Քոչարը, նոր սերնդից՝ Արա Սարգսյանը, Օննիկ Ավետիսյանը, ծաղրանկարիչ՝ Ալ. Սարուխանը, քանդակագործ Հակոբ Գյուրջյանը և մեկ տասնյակից ավելի երիտասարդներ, որոնք Իտալիայում, Ֆրանսիայում կամ Ամերիկայում ավարտել էին իրենց մասնագիտական կրթությունը և կազմակերպում էին առաջին ցուցահանդեսները։

Այս արվեստագետներին պետք է բաժանել երկու խմբի՝ բնաշխարհում ծնված, ներշնչված նկարիչներ, ինչպես Փանոս Թերլեմեզյանը, Սարգիս Խաչատրյանը և արտաշխարհի տպավորություններով մեծացած ու կրթված նկարիչներ, ինչպես էդգար Շահինը, Կարապետ Ադամյանը և ուրիշներ։

Բավական է մի հարևանցի ակնարկ գցել նրանց ստեղծագործությունների վրա, համոզվելու համար, թե նյութի ընդգրկման, մատուցման եղանակի ինչպիսի տարբերություն կա։ Պատմական Հայաստանի խոշորագույն կենտրոններից մեկում՝ Վանում ծնված, հայ ժողովրդի ավանդություններով, կենցաղով սնված, տոհմիկ դաստիարակություն ստացած, իր ժողովրդի հետ անքակտելի կապերով կապված Փանոս Թերլեմեզյանի պատկերած աշխարհը անշուշտ տարբեր պետք է լիներ Ադամյանից, որքան էլ վերջինս տաղանդավոր նկարիչ լիներ։ Ինչպես Աբեղյանն իր հետ արտասահման էր տանում հայ արվեստագետի նկարագիրը և Բեռլինում, Լոնդոնում նրա Օթելլոն տեսնողներն ընդգծում էին արևելքցու խառնվածքը, տարբերությունը եվրոպացի դերասանների օթելլոներից, այնպես էլ Փանոս Թերլեմեզյանը Ամերիկայում, Ֆրանսիայում և այլուր բաց արած իր ցուցահանդեսներով աշխարհին ներկայացնում էր Հայաստանը, հայ ժողովրդին, հայկական բնաշխարհը՝ գեղեկական ու արհեստավորական կյանքով, հոգեբանությամբ։ «Նյու-Յորք Թայմս» թերթը Թերլեմեզյանի ցուցահանդեսի առիթով գրել է. «Նա մեզ ցույց է տալիս մի երկիր, որը պիտի ուզենք տեսնել, ցույց է տալիս նրա չինչ երկինքը, վառ գույները, տաքուկ արևը, նկարչագեղ գյուղերը»։

Կովկասում մեծացած, ժողովրդի հետ կապված նկարիչ էր Սարգիս Խաչատրյանը։ Ինչպես Թերլեմեզյանի, Խաչատրյանի արվեստում ևս օտարները ամենից առաջ տեսնում և ճանաչում էին Հայաստանն ու հայ ժողովրդին։ Նրա Բրյուսելի ցուցահանդեսի առիթով «Էքսուալ բելժ» պարբերականը գրել է. «Եգիպտոսի և մանավանդ Հայաստանի տեսարաններն իրենց տեղական և պատմական արժեքին միացնում են տաք, փայլուն գույների հմայքը։ Հետաքրքրական էին մասնավորապես «Տոնական օր Սևանում», «Օշական գյուղը», «Երևանի կապույտ մեչիդը», «Զմեռը», Արարատ լեռան տարբեր տեսարանները,— իսկապես որ պատկառելի, և շատ բնորոշ տեսարաններ։— Դժբախտ զոհեր ճողոպրած կոտորածներից...»։

Իր արտացոլած կյանքով ու մոտեցմամբ այդպիսին չէ անշուշտ Շահինը։ Դերազանցապես Փարիզում ապրած, ֆրանսիական գրականությամբ ու արվեստով սնված տաղանդավոր նկարիչը, որը համարվում էր ժամանակի խոշորագույն օֆորտիստներից մեկը, մեծ ռեալիստ արվեստագետ, կապված էր ֆրանսահայ կյանքի հետ։ Հինգ տարի եղել է Փարիզի հայ նկարիչների «Անի» խմբակցության հիմնական դեմքերից մեկը, մասնակցել այդ խմբակցության ցու-

ցահանդեսներին, նաև «Հայ ազատ արվեստագետների միության» ցուցահանդեսներին, նրանց կազմակերպած երեկույթներին։ Չպետք է անտեսել այն փաստը, որ իր ժողովրդի տառապանքն ու չարքաշ կյանքը նպաստել են նրա դեմոկրատական աշխարհայացքի կազմավորմանը, մղել ոչ այնքան դեպի վերնախավը, որքան Փարիզի սալահատակները, որտեղ նա տեսել և պատկերել է «Մուրացիկը», «Մուրացկան ծեր կինը», «Անգործը», «Ծեր որմնադիրը», «Ջորձահավաքուհին», «Խոտկուռ պատրաստող կանայք» և այլն, սակայն, այս բոլորով հանդերձ, Շահինն իր արվեստում սփյուռքահայ, առհասարակ հայ կյանքը գրեթե չի արտացոլել։

Քսանական թվականների սկզբներից եվրոպական կենտրոններում և Ամերիկայի մի շարք քաղաքներում ուշագրավ ցուցահանդեսներ կազմակերպեց Արշակ Ջեբեջյանը, ներկայացնելով գերազանցապես նախապատերազմյան տարիների ստեղծագործությունները՝ «Հայուհին», «Սևանա լիճը և կղզին», «Թուրքական սուրհանդակը», «Արարատը» և այլն։

Արվեստագետի ցուցահանդեսը այցելողների ամենաճնշող մեծամասնությունը օտարներն էին և նկարչի ապրուստի ակնկալանքն էլ այդ օտարներից էր, տարբեր թանգարանների ներկայացուցիչների գնահատումից։ Այնպես մի հռչակված քանդակագործ, ինչպիսին Հակոբ Գյուրջյանն էր, Փարիզ հասնելուց անմիջապես հետո գտնվում էր տնտեսական ամենածանր վիճակում։

Հակառակ այս բոլորի, արտասահմանում ապրող քիչ արվեստագետներ ունենք, որոնք ամբողջովին կտրված լինեին հայ իրականությունից։ Հիշատակված քանդակագործի՝ Գյուրջյանի, լավագույն քանդակների թվին են պատկանում հայ իրականության արտացոլումը հանդիսացող մի շարք կիսանդրիներ՝ Արշակ Ջոպանյան, Գարեգին Հովսեփյան, հնագետ Տիրան Քելեկյան և ուրիշներ։

Բայց կերպարվեստն ուներ մի բնագավառ, որը ամենից առավել էր կապվում շրջապատի հետ, ոչ միայն արտացոլում էր հայ կյանքը, այլև միջամտում էր, ներազդում նրան։ Դա ծաղրանկարչությունն էր, որն ուներ Սարուխանի նման տաղանդավոր մի ներկայացուցիչ։ Նկարչության այդ ճյուղը կապված էր ընթացիկ կյանքի հետ, արտացոլում էր օրվա դեպքերը, լինեին դրանք քաղաքական, ազգային թե կենցաղային։ Սարուխանը ապրում էր Եգիպտոսում։ Այնտեղ էին լցվել հարյուրավոր հայ որբեր ու որբուհիներ, որոնք որոնում էին նոր կյանքի ուղիներ, եկել էին քաղաքական գործիչներ, հայ ժողովրդի ճակատագրի հետ խաղացող բախտախնդիրներ։ Ճառ, շաղակրատանք, հերոս, փըրկիչ ձևանալու մոլուցք, աղետի պատասխանատվությունը միմյանց վրա գցելու ձգտում, աղքատախնամ ընկերություններ, միություններ։ Սփյուռքահայ կյանքի ողբերգական բովանդակության և զավեշտական արտաքինի բախման երկունքում ծնվեց, առնականացավ Սարուխանի արվեստը՝ խորապես ազգային բովանդակությամբ։ 1925 թվականին նա Կահիրեում հիմնեց «Հայկական սինեմա» գունավոր պարբերականը, որի էջերում ծաղրեց օտարամոլներին, կսմթեց, երբեմն արյունոտելու աստիճան խոցեց քաղաքական բախտախնդիրներին։ 1926 թվականին Սարուխանին միացավ Երվանդ Օտյանը։ Երկու հզոր տաղանդների ջանքերով այդ յուրահատուկ սինեմայի (կինոյի) ժապավենի վրա երևաց կյանքը իր բազմազան և բազմապիսի բովանդակությամբ։ 1927 թվականին Կահիրեի Ազգային սրահում բացված ցուցահանդեսում Սարուխանը իր

մի քանի հարյուր ծաղրանկարներով ներկայացնում էր Սփյուռքի մի ամբողջ հատվածի՝ եգիպտահայության պատկերը։ Հումորը, կատակը, ծիծաղը արտաքին հատկանիշներ էին, որոնք չէին կարող թաքցնել գաղթաշխարհի կյանքի դրամատիզմով լի կողմերը։

Սփյուռքահայ արվեստագետների մի մասը ձգտում էր տեղափոխվել Հայաստան, իրենց վրձինը ծառայեցնել սեփական ժողովրդի արվեստի զարգացմանը։ Հայաստան եկան Արա Սարգսյանը, Փանոս Թերլեմեզյանը, Երվանդ Քոչարը, հետագայում Ռ. Շիշմանյանը և ուրիշներ։ Ուշագրավ է Թերլեմեզյանի հրաժեշտի պատգամը իր արվեստագետ ընկերներին։ «Ինչ որ ունիմ այսօր՝ կը պարտիմ հայ աշխատավոր ժողովրդին։ Հայ աշխատավոր ժողովրդին միջոցով միայն հայ միտքը կարող է զարգանալ և ես, որպես արվեստասեր այդ ժողովրդի՝ հայրենիքին մեջ կարող եմ միայն մի ժողովրդի արվեստը ստեղծել։ Ես խորհուրդ կուտամ բոլոր հայ գրագետներուն և գեղարվեստասերներուն, որ երբ անոնք կուզեն հայ արվեստը հարազատորեն ներկայացնել, պարտավոր են ապրել հայ ժողովրդի հայրենիքին մեջ»։

Ճարտարապետությունը միակ բնագավառն է, որը Սփյուռքում չկարողացավ խարխափ գցել, զարգացում ապրեց մայր հայրենիքում։ Մի քանի եկեղեցիների, դպրոցների նախագծումները ճարտարապետ Կարո Պալյանի և այլոց կողմից՝ դրությունը չեն փոխում։

Այսպիսով, հայ մշակույթը արտասահմանում սկիզբ առավ տնտեսական, քաղաքական, իրավական անորոշ ու երերուն վիճակի բարդ ու հակասական պայմաններում։ Գրականությունը, արվեստը հիմնականում զարգացան վերհուշի, ծննդավայրի կարոտի, կորած հայրենիքի մորմոքի, Սփյուռքի մեծ ողբերգության զգացողությամբ առլցված, իրենց վրա կրելով հուսահատության, անհեռանկար ապագայի կնիքը։

Այս երկու տասնամյակներում դեռևս թույլ էր նոր, սովետական երկրի ստեղծագործ կյանքի կենարար ուժի ներգործությունը արտասահմանի հայ մըտավորականների վրա, մի հանգամանք, որը փոխվեց հետպատերազմյան երկու տասնամյակներին, երբ առավել ահավոր դարձավ օտարացման վտանգը, բայց և հզորացավ վերածնված նոր Հայաստանի իրական կախարդանքը, երբ սփյուռքահայ գրականությունն ու արվեստը իրենց սնման համար կենարար աղբյուր ունենալով Հայաստանի տնտեսական և մշակութային կյանքի առաջընթացը, սկսեցին զարգանալ նույն հայրենասիրական ձգտումներով։



ՎԱՐՉԱԿԱՆ–ՏԵՐԻՏՈՐԻԱԼ ԲԱԺԱՆՈՒՄԸ

(ՈՒՆ 1-Ը ՀՈՒԼԻՍԻ 1940Թ)

Հերթական թիվը	Շրջանների անվանումները	Շրջանային կենտրոնները	Շրջանի № քարտեզի վրա
1	Ազիզբեկովի	գ. Ազիզբեկով	34
2	Ալագյազի	գ.Ալագյազ	16
3	Ալավերդու	ք.Ալավերդի	5
4	Ախտայի	գ.Ներքին Ախտա	18
5	Ադինի	գ. Մարալիկ	14
6	Ամասիայի	գ.Ամասիա	1
7	Աշտարակի	գ.Աշտարակ	21
8	Ապարանի	գ.Ապարան	17
9	Արթիկի	քտա. Արթիկ	15
10	Բասարգեչարի	գ.Բասարգեչար	25
11	Գորիսի	ք.Գորիս	36
12	Դիլիջանի	քտա. Դիլիջան	12
13	Դուզքենդի	գ.Դուզքենդ	9
14	Երևանի (գյուղական)	քտա. Նոր Սեբաստիա	28
15	Զանգիբասարի	գ.Զանգիբասար	29
16	Թալինի	գ.Վերին Թալին	20
17	Իջևանի	գ.Իջևան	7
18	Կալինինոյի	գ. Կալինինո	3
19	Կիրովականի	ք.Կիրովական	11
20	Կոտայքի	քտա.Քանաքեռ	22
21	Կրասնոսելսկի	գ.Կրասնոսելսկ	13
22	Հոկտեմբերյանի	քտա. Հոկտեմբերյան	26
23	Ղամարլուի	քտա.Վերին Ղամարլու	30
24	Ղարաքաղլաղի	գ.Չիմանքենդ	31
25	Ղափանի	ք.Ղափան	37
26	Ղուկասյանի	գ. Ղուկասյան	2
27	Մարտունու	գ.Մարտունի	24
28	Մեղրու	գ.Մեղրի	38
29	Միկոյանի	գ.Միկոյան	33
30	Նոյեմբերյանի	գ.Նոյեմբերյան	6
31	Նոր Բայազետի	ք.Նոր Բայազետ	23
32	Ծամշադինի	գ. Բերդ	8
33	Սևանի	քտա.Սևան	19
34	Սիսիանի	ք.Սիսիան	35

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

մի քանի հարյուր ծաղրանկարներով ներկայացնում էր Սփյուռքի մի ամբողջ հատվածի՝ եգիպտահայության պատկերը։ Հումորը, կատակը, ծիծաղը արտաքին հատկանիշներ էին, որոնք չէին կարող թաքցնել գաղթաշխարհի կյանքի դրամատիզմով լի կողմերը։

Սփյուռքահայ արվեստագետների մի մասը ձգտում էր տեղափոխվել Հայաստան, իրենց վրձինը ծառայեցնել սեփական ժողովրդի արվեստի զարգացմանը։ Հայաստան եկան Արա Սարգսյանը, Փանոս Թերլեմեզյանը, Երվանդ Քոչարը, հետագայում Ռ. Շիշմանյանը և ուրիշներ։ Ուշագրավ է Թերլեմեզյանի հրաժեշտի պատգամը իր արվեստագետ ընկերներին։ «Ինչ որ ունիմ այսօր՝ կը պարտիմ հայ աշխատավոր ժողովրդին։ Հայ աշխատավոր ժողովրդին միջոցով միայն հայ միտքը կարող է զարգանալ և ես, որպես արվեստասեր այդ ժողովրդի՝ հայրենիքին մեջ կարող եմ միայն մի ժողովրդի արվեստը ստեղծել։ Ես խորհուրդ կուտամ բոլոր հայ գրագետներուն և գեղարվեստասերներուն, որ երբ անոնք կուզեն հայ արվեստը հարազատորեն ներկայացնել, պարտավոր են ապրել հայ ժողովրդի հայրենիքին մեջ»։

Ճարտարապետությունը միակ բնագավառն է, որը Սփյուռքում չկարողացավ խարիսխ գցել, զարգացում ապրեց մայր հայրենիքում։ Մի քանի եկեղեցիների, դպրոցների նախագծումները ճարտարապետ Կարո Պալյանի և այլոց կողմից՝ դրությունը չեն փոխում։

Այսպիսով, հայ մշակույթը արտասահմանում սկիզբ առավ տնտեսական, քաղաքական, իրավական անորոշ ու երբեմն վիճակի բարդ ու հակասական պայմաններում։ Գրականությունը, արվեստը հիմնականում զարգացան վերհուշի, ծննդավայրի կարոտի, կորած հայրենիքի մորմոքի, Սփյուռքի մեծ ողբերգության զգացողությամբ առլցված, իրենց վրա կրելով հուսահատության, անհեռանկար ապագայի կնիքը։

Այս երկու տասնամյակներում դեռևս թույլ էր նոր, սովետական երկրի ստեղծագործ կյանքի կենարար ուժի ներգործությունը արտասահմանի հայ մըտավորականների վրա, մի հանգամանք, որը փոխվեց հետպատերազմյան երկու տասնամյակներին, երբ առավել ահավոր դարձավ օտարացման վտանգը, բայց և հզորացավ վերածնված նոր Հայաստանի իրական կախարդանքը, երբ սփյուռքահայ գրականությունն ու արվեստը իրենց սնման համար կենարար աղբյուր ունենալով Հայաստանի տնտեսական և մշակութային կյանքի առաջընթացը, սկսեցին զարգանալ նույն հայրենասիրական ձգտումներով։

ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐ

◉	ԵՐԵՎԱՆ	200000	-ից ավելի	բնակիչ
◉	ԼԵՆԻՆԱԿԱՆ	30000	-ից մինչև 100000	բնակիչ
◉	ԿԻՐՈՎԱԿԱՆ	10000	-ից մինչև 30000	բնակիչ
◎	Ղափան	3000	-ից մինչև 10000	բնակիչ
○	Սևան	3000	-ից պակաս	բնակիչ
○	*Բյուրական*	գյուղական բնակավայրեր		

Ծանոթություն. կարմիր գույնով տրված են շրջկենտրոնները, շրջանային ենթակայության քաղաքները ընդգծված են:


ՍԱՀՄԱՆՆԵՐ

- պետական
- միութենական հանրապետությունների
- ԻՍՍՀ և ինքնավար մարզերի
- շրջանների

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԺԱՆԱՊԱՐՀՆԵՐ

- երկաթուղիներ
- Լ-ՁՁ — գլխավոր անելս ճանապարհներ, լեռնանցքներ

Քարտեզի հեղինակ Հ. Ղ. Գրգեարյան


ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

ՎԱՐՉԱ-ՏԵՐԻՏՈՐԻԱԼ ԲԱԺԱՆՈՒՄԸ
(ՄԱՐՏԻ 1-Ը ՀՈՒԼԻՍԻ 1940Թ.)

Թվանշանների կարգը	Շրջանների անվանումները	Շրջանային կենտրոնները	Շրջանների համարների վրա
1	Ազիզբեկովի	գ. Ազիզբեկով	34
2	Ալագյազի	գ.Ալագյազ	16
3	Ալավերդու	ք.Ալավերդի	5
4	Ախտայի	գ.Ներքին Ախտա	18
5	Աղինի	գ. Մարալիկ	14
6	Ամասիայի	գ.Ամասիա	1
7	Աշտարակի	գ.Աշտարակ	21
8	Ապարանի	գ.Ապարան	17
9	Արթիկի	քտա. Արթիկ	15
10	Բասարգեչարի	գ.Բասարգեչար	25
11	Գորիսի	ք.Գորիս	36
12	Դիլիջանի	քտա. Դիլիջան	12
13	Դուզքենդի	գ.Դուզքենդ	9
14	Երևանի (գյուղական)	քտա. Նոր Սեբաստիա	28
15	Ջանգիբասարի	գ.Ջանգիբասար	29
16	Թալինի	գ.Վերին Թալին	20
17	Իջևանի	գ.Իջևան	7
18	Կալինինոյի	գ. Կալինինո	3
19	Կիրովականի	ք.Կիրովական	11
20	Կոտայքի	քտա.Քանաքեռ	22
21	Կրասնոսելսկի	գ.Կրասնոսելսկ	13
22	Հոկտեմբերյանի	քտա. Հոկտեմբերյան	26
23	Ղամարլուի	քտա.Վերին Ղամարլու	30
24	Ղարաքաղլարի	գ.Ջիմանքենդ	31
25	Ղափանի	ք.Ղափան	37
26	Ղուկասյանի	գ. Ղուկասյան	2
27	Մարտունու	գ.Մարտունի	24
28	Մեղրու	գ.Մեղրի	38
29	Միկոյանի	գ.Միկոյան	33
30	Նոյեմբերյանի	գ.Նոյեմբերյան	6
31	Նոր Բայազետի	ք.Նոր Բայազետ	23
32	Ծամշադինի	գ. Բերդ	8
33	Սևանի	քտա.Սևան	19
34	Սիսիանի	գ.Սիսիան	35
35	Սպիտակի	գ.Համամլու	10
36	Ստեփանավանի	ք.Ստեփանավան	4
37	Վաղարշապատի	ք.Վաղարշապատ	27
38	Վեդու	գ.Վեդի	32

Հանրապետական ենթակայության քաղաքներ
1 Երևան
2 Լենինական
Ցուցակում ընդունված կրճատումներ. ք-քաղաք, քտա-քաղաքատիպ ավան, գ-գյուղ

Зак. № 1998 ст.

ԿԱՐԵՎՈՐ ԴԵՊՔԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1917

25 հոկտեմբերի[1] — *Ռուսաստանում հաղթանակում է Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը։*

— *Պետրոգրադում բացվում է Սովետների համառուսաստանյան երկրորդ համագումարը, որը հաստատում է դեկրետներ հաշտության և հողի վերաբերյալ ու կազմում աշխարհում առաջին բանվորա-գյուղացիական կառավարությունը՝ Վ. Ի. Լենինի գլխավորությամբ։*

3—24 նոյեմբերի — *Կարսում, Ղարաքիլիսայում, Ալեքսանդրապոլում, Սարիղամիշում, Ջալալօղլիում, Երևանում և այլ վայրերում տեղի են ունենում զինվորների և աշխատավորների բազմամարդ միտինգներ, որոնք ողջունում են Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակը և որոշումներ ընդունում Անդրկովկասում ևս սովետական իշխանություն հաստատելու մասին։*

15 նոյեմբերի — *Անդրկովկասյան հատուկ կոմիտեի՝ Օզակոմի փոխարեն Թիֆլիսում կազմվում է հակահեղափոխական կառավարության նոր օրգան՝ անդրկովկասյան կոմիսարիատը։*

10 դեկտեմբերի — *Թիֆլիսում բացվում է կովկասյան բանակի երկրային երկրորդ համագումարը, որը որոշում է ընդունում Կովկասում անհապաղ սովետական իշխանություն ստեղծելու մասին։*

16 դեկտեմբերի — *Սովետական Ռուսաստանի Ժողկոմսովետը Վ. Ի. Լենինի նախագահությամբ որոշում է Բաքվի սովետի նախագահ Ստ. Շահումյանին նշանակել Կովկասի գործերի ժամանակավոր արտակարգ կոմիսար։*

29 դեկտեմբերի — *Սովետական Ռուսաստանի Ժողկոմսովետը դեկրետ է ընդունում «Թուրքահայաստանի» մասին։*

Դեկտեմբեր — *Սովետական Ռուսաստանի ազգությունների գործերի ժողովրդական կոմիսարիատին կից Մոսկվայում ստեղծվում է հայկական գործերի կոմիսարիատ, որի կոմիսար է նշանակվում ականավոր պետական գործիչ Վառլամ Ավանեսովը, իսկ տեղակալ՝ կոմունիստ-բանաստեղծ Վահան Տերյանը։*

---

1 *Մինչև 1918 թ. փետրվարը ամսաթվերը տրվում են հին տոմարով։*

1918

2 հունվարի — Կովկասյան բանակի ռազմա-հեղափոխական կոմիտեի նախաձեռնությամբ Սարիղամիշում կազմակերպվում է ռազմա-հեղափոխական կոմիտե։

19 հունվարի — Բաքվում լույս է տեսնում բոլշևիկյան «Բանվորի խոսք» շաբաթաթերթը։

31 հունվարի — Հրապարակվում է Կովկասի գործերի ժամանակավոր արտակարգ կոմիսար Ստ. Շահումյանի դիմումը՝ ուղղված բանվորներին, զինվորներին և գյուղացիների դեպուտատների բոլոր սովետներին, Կովկասի բանվորներին ու գյուղացիներին՝ Կովկասում սովետական իշխանություն ստեղծելու մասին։

10 փետրվարի — Թիֆլիսում բացվում է անդրկովկասյան սեյմը։

27 փետրվարի — Թիֆլիսում լույս է տեսնում բոլշևիկյան «Բանվոր» օրաթերթը։

3 մարտի — Կնքվում է Բրեստի պայմանագիրը։

6 մարտի — Պետրոգրադում բացվում է Ռկ(բ)Կ VII համագումարը։

10 մարտի — Թիֆլիսում լույս է տեսնում բոլշևիկյան «Կարմիր օրեր» թերթը։

12 մարտի — Թուրքական բանակը գրավում է Էրզրումը։

13 ապրիլի — Սովետական Ռուսաստանի կառավարության բողոքի հեռագիրը թուրքական բանակի՝ դեպի Անդրկովկաս առաջ շարժվելու և խաղաղ բնակչությանը բնաջնջելու առթիվ։

14 ապրիլի — Թիֆլիսում լույս է տեսնում «Կարմիր դրոշակ» բոլշևիկյան օրաթերթը։

16 ապրիլի — Բաքվում լույս է տեսնում «Տեղեկատու» օրաթերթը՝ առաջին սովետական թերթը հայերեն։

22 ապրիլի — Անդրկովկասյան սեյմը Անդրկովկասը հայտարարում է անկախ։

25 ապրիլի — Բաքվում կազմվում է ժողովրդական կոմիսարների սովետ Ստ. Շահումյանի գլխավորությամբ։

— Թուրքական բանակը գրավում է Կարսը։

15 մայիսի — Թուրքական բանակը գրավում է Ալեքսանդրապոլը։

22—26 մայիսի — Սարդարապատի հերոսամարտը։

25—28 մայիսի — Ղարաքիլիսայի հերոսամարտը։

26—28 մայիսի — Ցրվում է անդրկովկասյան սեյմը։ Վրաստանը, Ադրբեջանը և Հայաստանը հայտարարվում են անկախ հանրապետություններ։

4 հունիսի — Բաթումում Թուրքիայի և Հայոց ազգային խորհրդի պատվիրակությունների միջև կնքվում է պայմանագիր, որով Թուրքիան զավթում է Հայաստանի տերիտորիայի մեծ մասը։

22 հունիսի — Մոսկվայում լույս է տեսնում հայկական գործերի կոմիսարիատի պաշտոնական օրգան «Կոմունիստ» շաբաթաթերթը։

19 հուլիսի — Վ. Ի. Լենինի ստորագրությամբ հրապարակվում է Սովետական Ռուսաստանի կառավարության որոշումը Ռուսաստանում գոյություն ու-

նեցող հայ բուրժուա-նացիոնալիստական, հակահեղափոխական կազմակերպությունների» ազգային խորհուրդների, կոմիտեների, պաշտպանության խորհրդի և հայկական բուրժուական այլ կազմակերպությունների լիկվիդացման մասին։

31 հուլիսի — *Բաքվում ժամանակավորապես ընկնում է սովետական իշխանությունը։ Ստեղծվում է «Յենտրոկասպիի դիկտատուրան»։*

20 սեպտեմբերի — *Բաքվի 26 կոմունարների գնդակահարությունը անդրկասպյան ավազուտներում։*

22 սեպտեմբերի — *Երևանում լույս է տեսնում բոլշևիկյան «Խոսք» թերթը։*

Հոկտեմբեր — *Գյուղացիական ելույթներ են տեղի ունենում Նոր Բայազետի գավառի Շահրիզ, Ղշլաղ, Ղուալի, Դարալագյազի շրջանի Մարտիրոս, Չալալօղլու շրջանի Գյառգյառ և այլ գյուղերում։*

8 դեկտեմբերի — *Թիֆլիսում լույս է տեսնում «Կոմունա» բոլշևիկյան թերթը հայերեն։*

9—31 դեկտեմբերի — *Դաշնակցականների և մենշևիկների ավանտյուրիստական քաղաքականության հետևանքով տեղի է ունենում հայ-վրացական պինված ընդհարում։*

1919

9 հունվարի — *Թիֆլիսում Անտանտի զինվորական գործիչների ղեկավարությամբ բացվում է դաշնակցական և մենշևիկյան կառավարությունների ներկայացուցիչների կոնֆերանս, որի որոշմամբ Լոռին հայտարարվում է «չեզոք գոտի»։*

18 մարտի — *Մոսկվայում բացվում է ՌԿ(բ)Կ VIII համագումարը։*

8 ապրիլի — *Գործադուլ են հայտարարում Երևանի երկաթուղային բանվոր-ծառայողները։*

20 ապրիլի — *Երևանում ձևավորվում է երիտասարդ կոմունիստների «Սպարտակ» կազմակերպությունը։*

1 մայիսի — *Մոսկվայում լույս է տեսնում բոլշևիկյան «Կարմիր դրոշակ» թերթը։*

1 մայիսի — *Երևանում լույս է տեսնում «Սպարտակ» թերթի առաջին համարը։*

24 հուլիսի — *Սկսվում է Երևանի պետական արհեստանոցների բանվոր-ծառայողների գործադուլը։*

1 օգոստոսի — *Երևանում բացվում է Հայաստանի Պառլամենտը։*

Սեպտեմբեր — *Երևանում տեղի է ունենում Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների ներկայացուցիչների անլեգալ խորհրդակցություն, որն ընտրում է ՌԿ(բ)Կ Հայաստանի կոմիտե՝ Արմենկոմ։*

30 հոկտեմբերի — *Սկսվում է Ալեքսանդրապոլի տպագրատան բանվորների գործադուլը, որը տևում է մոտ մեկ ամիս։*

28 նոյեմբերի — *Տեղի է ունենում Երևանի երկաթգծի բանվոր-ծառայողների գործադուլը։*

14 դեկտեմբերի — *Ուզունլարում բոլշևիկների նախաձեռնությամբ հրավիրվում է Լոռվա «չեզոք գոտու» գյուղացիական դեպուտատների սովետի ա-*

ռաջին նիստը, որը բանաձև է ընդունում կալվածատիրությունը վերացնելու և հողային կոմիտեներ ստեղծելու մասին։

1 9 2 0

6 հունվարի — Ալեքսանդրապոլի երկաթուղային կայարանում տեղի է ունենում խոշոր գործադուլ։

7 հունվարի — Հայ ականավոր բանաստեղծ և պետական գործիչ Վահան Տերյանի մահը Օրենբուրգում։

19—20 հունվարի — Երևանում տեղի է ունենում Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների առաջին անլեգալ կոնֆերանսը։

20 հունվարի — Լույս է տեսնում «Լոռվա գյուղացիության ձայնը» բոլշևիկյան թերթը։

3 մարտի — Նոր Նախիջևանում լույս է տեսնում բոլշևիկյան «Բանվորի կռիվը» թերթը հայերեն։

29 մարտի — Մոսկվայում բացվում է ՌԿ(բ)Կ IX համագումարը։

19 ապրիլի — Երևանում լույս է տեսնում «Գյուղացու ձայն» շաբաթաթերթը։

23 ապրիլի — Ալեքսանդրապոլում տեղի է ունենում աշխատավորության հակակառավարական ցույց։

26 ապրիլի — Հայ գրող Վրթանես Փափազյանի մահը Երևանում։

28 ապրիլի — Սովետական կարգերի հաստատումը Ադրբեջանում։

1 մայիսի — Երևանում, Ալեքսանդրապոլում, Կարսում, Սարիղամիշում, Նոր Բայազետում և Հայաստանի այլ վայրերում կոմունիստների ղեկավարությամբ տեղի են ունենում հզոր ցույցեր՝ ուղղված դաշնակցական կառավարության դեմ։

5 մայիսի — Ընկնում է Խատիսյանի կառավարությունը, կազմվում է արտակարգ լիազորություններով նոր կառավարություն Հ. Օհանջանյանի նախագահությամբ։

7 մայիսի — Ալեքսանդրապոլում տեղի է ունենում Ալեքսանդրապոլի, Կարսի, Սարիղամիշի, Քյավթառուի, Ղազախ-Շամշադինի բոլշևիկյան կազմակերպությունների խորհրդակցությունն՝ Արմենկոմի ներկայացուցիչների մասնակցությամբ։ Խորհրդակցությունը դինված ապստամբությունը ղեկավարելու համար կազմում է Հայաստանի ռազմա-հեղափոխական կոմիտե։

10 մայիսի — Ռազմա-հեղափոխական կոմիտեն, ինչպես Ալեքսանդրապոլում, այնպես էլ ամբողջ Հայաստանում հայտարարում է սովետական իշխանություն։

— Զինված ապստամբություն է բռնկվում Կարսում և Սարիղամիշում։

13 մայիսի — Զինված ապստամբություն է սկսվում Նոր Բայազետի գավառի Ղարանլուղ (այժմ Մարտունի) գյուղում։

14 մայիսի — Զինված ապստամբություն է սկսվում Շամշադինի շրջանում։

15 մայիսի — Զինված ապստամբություն է սկսվում Զանգեզուրի գավառում։

18 մայիսի — Բաքվում լույս է տեսնում «Կոմունիստ» օրաթերթը հայերեն։

20 մայիսի — Զինված ապստամբությունը հաղթանակում է Քարվանսարայում։

21 մայիսի — Դիլիջանում հաստատվում է սովետական իշխանություն։

31 մայիսի — Մոսկվայում սկսվում են դաշնակցության պատվիրակության բանակցությունները Սովետական Ռուսաստանի հետ։

Հունիս — ՌԿ(բ)Կ Հայաստանի կազմակերպությունները ձևավորվում են որպես Հայաստանի կոմունիստական (բոլշևիկների) կուսակցություն։ Ստեղծվում է ՀԿ(բ)Կ Կենտկոմ և նրա արտասահմանյան բյուրո։

10 օգոստոսի — Սևր քաղաքում (Փարիզի մոտ) դաշնակիցների և Թուրքիայի սուլթանական կառավարության միջև կնքվում է դաշնագիր, որի 6-րդ հատվածի 88—91 հոդվածները վերաբերում են Հայաստանին։

10 օգոստոսի — ՌՍՖՍՀ լիազոր-ներկայացուցիչ Բ. Լեգրանը Հայաստանի կառավարության ներկայացուցիչների հետ կնքում է համաձայնագիր։

14 օգոստոսի — Դաշնակցականները սպանում են հեղափոխական գործիչներ Ստ. Ալավերդյանին, Ս. Մուսայելյանին և Բ. Դարիբեջանյանին։

1 սեպտեմբերի — Բաքվում բացվում է Արևելքի ժողովուրդների առաջին համագումարը, որին մասնակցում են նաև Հայաստանի աշխատավորության ներկայացուցիչները։

10 սեպտեմբերի — Բաքվում տեղի է ունենում Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների կոնֆերանսը։

22 սեպտեմբերի — Սկսվում է թուրքական բանակի հարձակումը Արևելյան Հայաստանի վրա։ Թուրքերը սեպտեմբերի 29-ին գրավում են Սարիղամիշը, հոկտեմբերի 30-ին՝ Կարսը, նոյեմբերի 5-ին՝ Ալեքսանդրապոլը։

8 հոկտեմբերի — Հրապարակվում է ՀԿԿ Կենտկոմի կոչը դաշնակցական կառավարությունը տապալելու մասին։

11 հոկտեմբերի — Դաշնակցական կառավարության հետ բանակցություններ վարելու նպատակով Երևան է ժամանում Սովետական Ռուսաստանի պատվիրակությունը Բ. Լեգրանի գլխավորությամբ։

4 նոյեմբերի — Բաքվում տեղի է ունենում ՌԿ(բ)Կ Կենտկոմի Կովկասյան բյուրոյի և Ադրբեջանի Կ(բ)Կ Կենտկոմի միացյալ նիստ, մասնակցությամբ Հայաստանի Կ(բ)Կ Կենտկոմի և նրա արտասահմանյան բյուրոյի անդամների։ Նիստը քննարկում է Հայաստանում ստեղծված դրության հարցը։

7 նոյեմբերի — Հայաստանի երկաթուղայինների գործադուլը։

— Ուլուխանլու կայարանում կուտակված գաղթականությունը կազմակերպում է հակահեղափոխական ցույց։

15—28 նոյեմբերի — Հեղափոխական ելույթներ են տեղի ունենում Շիրակի, Նոր Բայազետի, Դարալագյազի, Ախտալայի, Ապարանի, Էջմիածնի, Իջևանի, Դիլիջանի, Շամշադինի և Հայաստանի այլ շրջաններում։

24 նոյեմբերի — Ընկնում է դաշնակցական հին կառավարությունը և կազմվում է նոր կառավարություն Ս. Վրացյանի նախագահությամբ։

27 նոյեմբերի — ՌԿ(բ)Կ Կենտկոմի քաղբյուրոն Վ. Ի. Լենինի նախագահությամբ քննարկում է Հայաստանի և Վրաստանի նկատմամբ ունենալիք քաղաքականության հարցը։

* * *

29 նոյեմբերի — *Հայաստանում հաստատվում է սովետական իշխանություն։*

30 նոյեմբերի — *ՀՍՍՀ Հեղկոմը Հայաստանի ապստամբ բանվորների և գյուղացիների անունից հեռագիր է ուղարկում Վ. Ի. Լենինին Հայաստանում սովետական կարգեր հաստատվելու առթիվ։*

2 դեկտեմբերի — *Վ. Ի. Լենինը ողջույնի հեռագիր է հղում Հայաստանի Յեղափոխական կոմիտեի նախագահ Ս. Կասյանին Հայաստանում սովետական կարգեր հաստատվելու առթիվ։*

— *Սկսվեց Հայաստանի կարմիր բանակի կազմակերպումը։*

2 դեկտեմբերի — *Դաշնակցական կառավարության պատվիրակությունը Ալեքսանդրապոլում թուրքական զավթիչների հետ կնքում է Հայաստանը անդամահատող և ստրկացնող ապօրինի պայմանագիր։*

4 դեկտեմբերի — *Երևան է ժամանում ՀՍՍՀ Հեղկոմը։*

5 դեկտեմբերի — *ՀՍՍՀ Հեղկոմի առաջին հրամանով ստեղծվում է ՀՍՍՀ Ռազմական գործերի ժողովրդական կոմիսարիատ։*

— *Երևանում լույս է տեսնում ՀԿԿ Կենտկոմի և Հայհեղկոմի օրգան «Կոմունիստ» հայերեն օրաթերթի առաջին համարը (1921 թվականի մայիսից վերանվանվում է «Խորհրդային Հայաստան»)։*

6 դեկտեմբերի — *ՀՍՍՀ Հեղկոմի դեկրետով հանրապետության սահմաններում պետական լեզուն ճանաչվում է հայերենը։*

10 դեկտեմբերի — *ՀՍՍՀ Հեղկոմը դեկրետ է ընդունում բանկերի աղգայնացման մասին։*

13 դեկտեմբերի — *Վ. Ի. Լենինը ընդունում է ՀՍՍՀ Հեղկոմի անդամներ Ա. Մռավյանին և Ս. Տեր-Գաբրիելյանին։*

13 դեկտեմբերի — *Սովետական Ռուսաստանի Ժողկոմսովետը Վ. Ի. Լենինի նախագահությամբ որոշում է Սովետական Հայաստանին բաց թողնել 3 միլիարդ ռուբլի։*

13 դեկտեմբերի — *ՀՍՍՀ Ներքգործժողկոմատի հրամանը հին վարչական հիմնարկները և պաշտոնները վերացնելու մասին։*

15 դեկտեմբերի — *Թիֆլիսում լույս է տեսնում Վրաստանի կոմունիստական կուսակցության Կենտկոմի և 1921 թվականի մարտից նաև Վրաստանի Հեղկոմի օրգան «Կարմիր աստղ» օրաթերթի առաջին համարը (թերթը 1923 թվականին վերանվանվում է «Մարտակոչ», 1927 թվականին՝ «Պրոլետարը», 1929 թվականին՝ «Խորհրդային Վրաստան», իսկ 1940 թվականից՝ «Սովետական Վրաստան»)։*

17 դեկտեմբերի — *ՀՍՍՀ Հեղկոմի դեկրետով Հայաստանի բոլոր կուլտուրական հիմնարկները պետականացվում են։*

— *ՀՍՍՀ լուսավորության ժողովրդական կոմիսարիատի հրամանը Երևանում ժողովրդական համալսարան բացելու մասին։*

18 դեկտեմբերի — *ՀՍՍՀ Արդարադատության ժողովրդական կոմիսարիատի հրամանով լիկվիդացվում են հին դատարանները։*

21 դեկտեմբերի — *ՀՍՍՀ Հեղկոմի դեկրետով Սովետական Հայաստանի սահմաններում վերանում է «Ռուսական կայսրության հավաք օրինաց»-ը այն*

փոփոխություններով, որ մտցրել էին ժամանակավոր կառավարությունը, անդրկովկասյան կոմիսարիատն ու սեյմը, Հայաստանի դաշնակցական կառավարությունը։

25 դեկտեմբերի — Սովետական Հայաստանում կազմակերպվում է առաջին մասսայական շաբաթօրյակը։

— Դաշնակցականները կազմում են այսպես կոչված «Ինքնավար Սյունիքի կառավարություն» (1921 թվականի ապրիլի 26-ին այն վերակազմվում է և անվանվում՝ «Լեռնահայաստանի կառավարություն»)։

28 դեկտեմբերի — ՀՍՍՀ Հեղկոմը ընդունում է դեկրետ հողերի ազգայնացման մասին։

1 9 2 1

10 հունվարի — ՀՍՍՀ Հեղկոմը ընդունում է դեկրետ անտառների ազգայնացման մասին։

11 հունվարի — ՀՍՍՀ Հեղկոմը ընդունում է դեկրետ Հայաստանի բոլոր օգտակար հանածոները, հանքային ջրերը, լճերը ազգայնացնելու մասին։

21 հունվարի — ՀՍՍՀ Հեղկոմը ընդունում է դեկրետ ՀՍՍՀ ժողովրդական տնտեսության խորհուրդ՝ Ժողտնտխորհ կազմակերպելու մասին։

23 հունվարի — Տեղի է ունենում Երևանի ժողովրդական համալսարանի հանդիսավոր բացումը (1923 թվականից՝ պետական համալսարան)։

5 փետրվարի — ՀՍՍՀ Հեղկոմը ընդունում է դեկրետ էջմիածնի մատենադարանի և թանգարանի բազայի վրա Հայաստանի կուլտուր-պատմական գիտական ինստիտուտ հիմնելու մասին։

12 փետրվարի — Սկսվում է Վրաստանի մենշևիկյան կառավարության դեմ Լոռու նախկին «չեզոք գոտու» աշխատավորության ապստամբությունը, որը փետրվարի 16-ին ավարտվում է լիակատար հաղթանակով։

13 փետրվարի — Դաշնակցականների հակահեղափոխական խռովության սկիզբը։

25 փետրվարի — Սովետական կարգերի հաստատումը Վրաստանում։

26 փետրվարի — Դաշնակցականների հակահեղափոխական խռովության դեմ կռվելու նպատակով Դիլիջանում ստեղծվում է Դիլիջանի և Ղարաքիլիսայի շրջանների ռազմա-հեղափոխական կոմիտե Գ. Աթաբեկյանի նախագահությամբ։

8 մարտի — Մոսկվայում բացվում է Ռ Կ(բ)Կ X համագումարը։

16 մարտի — Սովետա-թուրքական պայմանագրի կնքումը Մոսկվայում։

2 ապրիլի — Երևանի ազատագրումը դաշնակցական խռովարարներից։

3 ապրիլի — ՀՍՍՀ Հեղկոմի հրամանը «Հայրենիքի փրկության կոմիտեի» ստեղծման, նրա անդամների ձերբակալման և ամբողջ հանրապետության մեջ սովետական իշխանությունը վերականգնելու մասին։

14 ապրիլի — Վ. Ի. Լենինի պատմական նամակը Ադրբեջանի, Վրաստանի, Հայաստանի, Դաղստանի և Լեռնականների հանրապետության կոմունիստներին։

22 ապրիլի — Ալեքսանդրապոլի ազատագրումը թուրքական զավթիչներից։

28 ապրիլի — *Սովետական Ռուսաստանի կառավարությունը 1,5 միլիոն ռուբլի (ոսկով) վարկ է բաց թողնում Սովետական Հայաստանին։*

21 մայիսի — *ՀՍՍՀ Հեղկոմը վերակազմվում է ՀՍՍՀ Ժողկոմսովետի Ա. Մյասնիկյանի նախագահությամբ։*

24 հունիսի — *ՀՍՍՀ Ժողկոմսովետի դեկրետը պարենմասնատրումը պարենհարկով փոխարինելու մասին։*

26 հունիսի — *Կարմիր բանակի զորամասերը լիովին ազատագրելով Դարալագյազը, մտնում են Ջանգեզուր։*

30 հունիսի — *Կարմիր բանակի զորամասերը ազատագրում են Սիսիանը։*

Հունիս — *Ստեղծվում են առաջին սովխոզները Հայաստանում։*

2 հուլիսի — *Կարմիր բանակի զորամասերը ազատագրում են Գորիսը։*

7 հուլիսի — *Կարմիր բանակի զորամասերը ազատագրում են Ղափանը։*

13 հուլիսի — *Կարմիր բանակի զորամասերը մտնում են Մեղրի։ Ջանգեզուրը միացվում է Սովետական Հայաստանին։*

21 օգոստոսի — *Երևանում բացվում է Հայաստանի կոմերիտմիության առաջին համագումարը (երկրորդը՝ 1922 թ., երրորդը՝ 1923 թ., չորրորդը՝ 1926 թ., հինգերորդը՝ 1928 թ., վեցերորդը՝ 1929 թ., յոթերորդը՝ 1932 թ., ութերորդը՝ 1932 թ., իններորդը՝ 1936 թ., տասներորդը՝ 1937 թ., տասնմեկերորդը՝ 1939 թ., տասներկուերորդը՝ 1940 թվականին)։*

22 օգոստոսի — *Հայաստանի արհեստակցական միությունների առաջին համագումարի բացումը Երևանում (երկրորդ համագումարը տեղի է ունեցել 1922 թ., երրորդը՝ 1924 թ., չորրորդը՝ 1926 թ., հինգերորդը՝ 1928 թ. հունվարին, վեցերորդը՝ 1928 թ. նոյեմբերին, յոթերորդը՝ 1932 թվականին)։*

21 սեպտեմբերի — *ՀՍՍՀ Հեղկոմը ընդունում է դեկրետ Հայաստանում անգրագիտությունը վերացնելու մասին։*

29 սեպտեմբերի — *ՌՍՖՍՀ Կենտգործկոմը դեկրետ է ընդունում նախկին Լազարյան ճեմարանը «Սովետական Հայաստանի կուլտուրայի տուն վերանվանելու և նրա բոլոր նյութական ու կուլտուրական արժեքները Սովետական Հայաստանի կառավարության տրամադրության տակ դնելու մասին»։*

30 սեպտեմբերի — *ՌՍՖՍՀ-ի և Սովետական Հայաստանի միջև կնքվում է ֆինանսա-տնտեսական համաձայնագիր։*

13 հոկտեմբերի — *Մի կողմից Հայաստանի, Ադրբեջանի ու Վրաստանի, իսկ մյուս կողմից Թուրքիայի միջև կնքվում է Կարսի պայմանագիրը։*

1 դեկտեմբերի — *Հայաստանում սկսվում են գյուղական, գավառակային և գավառային սովետների առաջին ընտրությունները։*

— *Երևանում ադրբեջաններեն լույս է տեսնում ՀԿ(բ)Կ Կենտկոմի օրգան «Ռանչպար» թերթի առաջին համարը։ Հետագայում վերանվանվում է «Զանգի», ապա «Կիզիլ Շաֆակ», «Կոմունիստ», «Սովետ էրմենիստանի»։*

Դեկտեմբեր — *Սկսվում է արտասահմանից հայերի հայրենադարձությունը Սովետական Հայաստան։*

1922

1 հունվարի — *Տեղի է ունենում Երևանի քաղսովետի հանդիսավոր բացումը։*

26 հունվարի — Բացվում է ՀԿ(բ)Կ առաջին համագումարը։

26 հունվարի — Երևանում բացվում է առաջին պետական դրամատիկ թատրոնը (1937 թվականից՝ Գ. Սունդուկյանի անվան)։

30 հունվարի — Երևանում բացվում է ՀՍՍՀ բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների պատգամավորական սովետների առաջին համագումարը։

4 հունվարի — ՀՍՍՀ սովետների առաջին համագումարը հաստատում է ՀՍՍՀ առաջին սահմանադրությունը։

19 փետրվարի — Թիֆլիսում բացվում է Անդրկովկասյան կոմունիստական կազմակերպությունների առաջին համագումարը։

4 մարտի — ՀՍՍՀ ժողկոմսովետը ընդունում է դեկրետ ուղղագրության ռեֆորմի մասին։

12 մարտի — Թիֆլիսում տեղի է ունենում Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի կենտգործկոմների լիազոր-կոնֆերենցիան, որը հիմք է ընում Անդրկովկասյան Ֆեդերացիային։

24 մարտի — Բացվում է ՀՍՍՀ պետական բանկը։

27 մարտի — Բացվում է ՌԿ(բ)Կ XI համագումարը։

9 ապրիլի — Երևանում բացվում է Անդրկովկասի արևմտահայ աշխատավորների համագումարը։

2 հունիսի — Երևանում լույս է տեսնում «Մաճկալ» գյուղացիական օրաթերթի առաջին համարը։

13 հուլիսի — Ականավոր հեղափոխական գործիչ Կամոյի (Սիմոն Տեր-Պետրոսյան) ողբերգական մահը Թիֆլիսում։

20 հուլիսի — Թիֆլիսում լույս է տեսնում ՌԿ(բ)Կ Անդրերկրկոմի օրգան «Զարյա Վոստոկա» օրաթերթի առաջին համարը։

28 հոկտեմբերի — ՌՍՖՍՀ Աշխատանքի և պաշտպանության սովետը Վ. Ի. Լենինի նախագահությամբ քննում է Սովետական Հայաստանին ֆինանսական օգնություն ցույց տալու հարցը և որոշում Հայաստանին բաց թողնել 1,5 միլիոն ռուբլի (ոսկով)՝ գյուղատնտեսական գործիքներ, մեքենաներ և անասուններ ձեռք բերելու համար։

7 նոյեմբերի — Երևանի համալսարանի մանկավարժական ֆակուլտետի բազայի վրա բացվում է ՀՍՍՀ լուսժողկոմատի մանկավարժական ինստիտուտը, որը 1924/25 ուստարում կրկին միանում է պետական համալսարանին։

7 նոյեմբերի — Երևանում բացվում է պետական հանրային գրադարանը (1925 թվականից՝ Ալ. Մյասնիկյանի անվան)։

7 նոյեմբերի — Երևանում բացվում է պետական թանգարանը՝ հնագիտական, աղգագրական, պատմական, գեղարվեստական, հեղափոխական և արխիվային բաժիններով։

16 նոյեմբերի — Երևանում բացվում է I գյուղատնտեսական համագումարը։

29 նոյեմբերի — Տեղի է ունենում Էջմիածնի Լենինի անվան ջրանցքի հանդիսավոր բացումը։

29 նոյեմբերի — Երևանում բացվում է ՀՍՍՀ սովետների II համագումարը։

10 դեկտեմբերի — Բաքվում բացվում է Անդրկովկասյան սովետների I հա-

մագումարը, որը որոշում է ԱՍՍՖՀՄ-ն վերակազմել ԱՍՖՍՀ-ի (երկրորդ համագումարը տեղի է ունեցել 1924 թ., երրորդը՝ 1925 թ., չորրորդը՝ 1927 թ., հինգերորդը՝ 1929 թ., վեցերորդը՝ 1931 թ., յոթերորդը՝ 1935 թ.)։

30 դեկտեմբերի — Մոսկվայում բացվում է Սովետների համամիութենական I համագումարը, որը կազմում է Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը՝ ՍՍՀՄ-ը։

1923

29 հունվարի — Տեղի է ունենում Երևանի առաջին բանֆակի հանդիսավոր բացումը։

13 մարտի — Երևանում բացվում է ՀԿ(բ)Կ II համագումարը։

20 մարտի — Թիֆլիսում բացվում է Անդրկովկասյան կոմունիստական կազմակերպությունների II համագումարը։

23 մարտի — Հայ ականավոր գրող Հովհաննես Թումանյանի մահը Մոսկվայում։

16 ապրիլի — ՀՍՍՀ ԺողկոմսովետՈրոշում է Սովետական Հայաստանի պետհինո (հետագայում Հայկհինո) ստեղծելու մասին։

17 ապրիլի — Մոսկվայում բացվում է ՌԿ(բ)Կ XII համագումարը։

5 մայիսի — Լույս է տեսնում ՀԼԿԵՄ Կենտկոմի օրգան «Ավանգարդ» թերթի առաջին համարը։

19 մայիսի — Թիֆլիսում հիմնադրվում է 26 կոմիսարների անվան անդրկովկասյան կոմունիստական համալսարանը։

20 մայիսի — Երևանում բացվում է Շահումյանի անվան չրանցքը։

2 հուլիսի — ՀՍՍՀ Կենտգործկոմը որոշում է ընդունում Աշխատանքի կարմիր դրոշի շքանշան սահմանելու մասին։

Հուլիս — ՀԿ(բ)Կ Կենտկոմին կից ստեղծվում է ՀԿ(բ)Կ պատմության բյուրո՝ Կուսպատը։

9 սեպտեմբերի — Մոսկվայում բացվում է Համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսի հայկական տաղավարը։

20 նոյեմբերի — Երևանում բացվում է նախկին շարքային դաշնակցականների համահայաստանյան ինքնալիկվիդացիոն համագումարը։

1 դեկտեմբերի — Երևանում բացվում է Հայաստանի պետական կոնսերվատորիան։

4 դեկտեմբերի — Երևանում բացվում է ՀՍՍՀ սովետների III համագումարը։

1924

21 հունվարի — Վ. Ի. Լենինի մահը։

26 հունվարի — Մոսկվայում բացվում է ՍՍՀՄ սովետների II համագումարը, որը հունվարի 31-ին հաստատում է ՍՍՀՄ սահմանադրությունը։

27 հունվարի — Երևանի բազմահազար աշխատավորների սգո միտինգում հրապարակվում է ՀՍՍՀ կառավարության որոշումը Երևանի քաղաքային այգու մոտ կառուցվող հրապարակը Լենինի հրապարակ կոչելու մասին։

26 փետրվարի — ՍՍՀՄ կենտգործկոմի որոշմամբ Ալեքսանդրապոլ քաղաքը վերանվանվում է Լենինական։

15 մարտի — Գործարկվում է Երևանի բամբակազտիչ գործարանը։

5 մայիսի — Երևանում բացվում է ՀԿ(բ)Կ III համագումարը։

13 մայիսի — Թիֆլիսում բացվում է Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների III համագումարը։

23 մայիսի — Մոսկվայում բացվում է ՌԿ(բ)Կ XIII համագումարը։

30 օգոստոսի — Կազմակերպվում է Հայաստանի գյուղատնտեսական կոոպերացիան՝ Հայգյուղկոոպը։

22 հոկտեմբերի — Երևան է ժամանում նշանավոր կոմպոզիտոր Ալեքսանդր Սպենդիարյանը։

2 նոյեմբերի — Հրապարակվում է երքաղսովետի որոշումը Ա. Թամանյանի կազմած Երևանի նոր հատակագիծը հաստատելու մասին։

7 նոյեմբերի — Շարք է մտնում Ղափանի պղնձաձուլարանը։

1925

12 մարտի — Երևանում բացվում է ՀՍՍՀ սովետների IV համագումարը։

22 մարտի — Կոմունիստական կուսակցության Անդրերկրկոմի քարտուղար, Անդրժողկոմսովետի նախագահի տեղակալ Ալ. Մյասնիկյանի, Անդրկովկասի արտակարգ հանձնաժողովի (Չեկա) նախագահ Ս. Մոգիլևսկու և ՍՍՀՄ փոստ-հեռագրական ժողկոմի ԱՍՖՍՀ լիազոր Գ. Աթարբեկյանի ողբերգական մահը։

27 ապրիլի — Տեղի է ունենում ՀՍՍՀ գիտության և արվեստի ինստիտուտի բացումը Երևանում։

13 մայիսի — Մոսկվայում բացվում է ՍՍՀՄ սովետների III համագումարը։

18 հունիսի — Երևան է ժամանում Ազգերի լիգային կից Աշխատանքի միջազգային բյուրոյի հանձնաժողովը նշանավոր գիտնական Ֆ. Նանսենի գլխավորությամբ։

21 հունիսի — Տեղի է ունենում Շիրակի ջրանցքի հանդիսավոր բացումը։

4 հոկտեմբերի — Ականավոր նկարիչ Գևորգ Բաշինջաղյանի մահը։

4 նոյեմբերի — Երևանում բացվում է Հայաստանի պրոլետարական գրողների ասոցիացիայի առաջին համագումարը։

30 նոյեմբերի — Երևանում բացվում է ՀԿ(բ)Կ IV համագումարը։

5 դեկտեմբերի — Թիֆլիսում բացվում է Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների IV համագումարը։

18 դեկտեմբերի — Մոսկվայում բացվում է ՀամԿ(բ)Կ XIV համագումարը։

1926

20 ապրիլի — Երևանում բացվում է եզդիների համահայաստանյան համագումարը։

16 մայիսի — Տեղի է ունենում Երևանի առաջին հիդրոէլեկտրակայանի հանդիսավոր բացումը, ուր ճառով հանդես են գալիս Գ. Օրջոնիկիձեն, Աղամալի-Օղլին, Շ. Էլիավան և ուրիշներ։

29 հուլիսի — Կազմակերպվում է Հայտնարկոոպը։

26 օգոստոսի — Բացվում է Արզնի առողջարանը։

9 հոկտեմբերի — Արտասահմանից Երևան է վերադառնում անվանի բանաստեղծ Ավ. Իսահակյանը։

22 հոկտեմբերի — Լենինականում տեղի է ունենում ուժեղ երկրաշարժ։

29 նոյեմբերի — Տեղի է ունենում Երևանի ձեթ-օճառի և փայտամշակման գործարանների հանդիսավոր բացումը։

1927

20 մարտի — Երևանում բացվում է ՀՍՍՀ սովետների V համագումարը։

3 ապրիլի — Շահագործման է հանձնվում Երևանի կարբիդի գործարանը։

15 ապրիլի — Մոսկվայում բացվում է ՍՍՀՄ սովետների IV համագումարը։

29 հունիսի — Հայաստան է ժամանում ՍՍՀՄ Կենտգործկոմի նախագահ Մ. Ի. Կալինինը։

24 հուլիսի — Տեղի է ունենում Զորագէսի հանդիսավոր հիմնադրումը։

20 հոկտեմբերի — Սովետական Հայաստան է ժամանում Ֆրանսիացի նշանավոր գրող Հանրի Բարբյուսը։

13 նոյեմբերի — Բացվում է ՀԿ(բ)Կ V համագումարը։

21 նոյեմբերի — Թիֆլիսում բացվում է Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների V համագումարը։

24 նոյեմբերի — Բանաստեղծուհի Շուշանիկ Կուրղինյանի մահը Երևանում։

2 դեկտեմբերի — Մոսկվայում բացվում է ՀամԿ(բ)Կ XV համագումարը։

1928

7 մայիսի — ՀՍՍՀ ժողովրդական արտիստ, ականավոր կոմպոզիտոր Ալեքսանդր Սպենդիարյանի մահը Երևանում։

25 հուլիսի — Սովետական Հայաստան է ժամանում պրոլետարական մեծ գրող Մաքսիմ Գորկին։

6 հոկտեմբերի — Տեղի է ունենում Երևանի բանվորական համալսարանի հանդիսավոր բացումը։

1 նոյեմբերի — Լենինականում բացվում է Հայաստանի պետական երկրորդ դրամատիկ թատրոնը։

8 նոյեմբերի — Երևանում տեղի է ունենում Անդրկովկասի անասնաբուժական ինստիտուտի հանդիսավոր բացումը։

17 նոյեմբերի — Երևանում բացվում է Հայաստանի կոլտնտեսությունների առաջին համագումարը։

29 նոյեմբերի — Տեղի է ունենում Լենինականի Մայիսյան ապստամբության անվան տեքստիլ գործարանի և հիդրոէլեկտրակայանի հանդիսավոր բացումը։

1 9 2 9

20 հունվարի — Բացվում է ՀԿ(բ)Կ VI համագումարը։

25 մարտի — ՀՍՍՀ լուսավորության ժողովրդական կոմիսարիատը հաստատում է քրդական այբուբենը։

7 ապրիլի — Բացվում է ՀՍՍՀ սովետների VI համագումարը, որտեղ հաստատվում է ՀՍՍՀ ժողովրդական տնտեսության զարգացման առաջին հնգամյա պլանը։

20 մայիսի — Մոսկվայում բացվում է ՍՍՀՄ սովետների V համագումարը, որը հաստատում է ՍՍՀՄ ժողովրդական տնտեսության առաջին հնգամյա պլանը։

15 սեպտեմբերի — Երևանում բացվում է «Կորչի անգրագիտությունը» ընկերության հանրապետական առաջին համագումարը։

29 սեպտեմբերի — Բանաստեղծ Հովհաննես Հովհաննիսյանի մահը Երևանում։

23 հոկտեմբերի — ՀՍՍՀ Ժողկոմսովետի նախագահի տեղակալ և լուսժողկոմ Աբգարյան Մոսեսյանի մահը Երևանում։

29 նոյեմբերի — Բացվում է Երևանի պատանի հանդիսատեսի թատրոնը։

29 նոյեմբերի — Տեղի է ունենում Լենինական-Արթիկ երկաթգծի հանդիսավոր բացումը։

Դեկտեմբեր — Սկսում է գործել Քանաքեռի նոր ռադիոկայանը։

1 9 3 0

1 մարտի — Սկսում է աշխատել Սարդարապատի մեքենատրակտորային կայանը՝ առաջինը Սովետական Հայաստանում։

16 մարտի — Վառլամ Ավանեսովի մահը Դիլիջանում։

2 մայիսի — Տեղի է ունենում Քանաքեռգէսի հանդիսավոր հիմնադրումը։

24 մայիսի — Երևանում բացվում է ՀԿ(բ)Կ VII համագումարը։

5 հունիսի — Թիֆլիսում բացվում է Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների VI համագումարը։

26 հունիսի — Մոսկվայում բացվում է ՀամԿ(բ)Կ XVI համագումարը։

25 հուլիսի — ՀամԿ(բ)Կ Կենտկոմը որոշում է ընդունում ընդհանուր պարտադիր տարրական ուսուցում մտցնելու մասին։

5 օգոստոսի — ՀՍՍՀ Կենտգործկոմը և Ժողկոմսովետը որոշում են ընդունում ՀՍՍՀ գավառները վերացնելու մասին։

25 սեպտեմբերի — Երևանում լույս է տեսնում քրդական «Ռեա թազա» թերթի առաջին համարը։

1 նոյեմբերի — ՀՍՍՀ Ժողկոմսովետը որոշում է ընդունում ՀՍՍՀ գիտության և արվեստի ինստիտուտը վերակառուցելու և այն գիտություններին ինստիտուտ վերանվանելու մասին։

21 նոյեմբերի — Երևանում տեղի է ունենում կուսակցական ակտիվի հանրապետական նիստ, որտեղ Ս. Մ. Կիրովը զեկուցում է ներկուսակցական դրության մասին։

29 նոյեմբերի — Տեղի է ունենում Փոքր Սարդարապատի ջրանցքի բացումը։

29 դեկտեմբերի — Շահագործման են հանձնվում Երևանի պահածոների և մարմարի գործարանները։

1931

8 հունվարի — Երևանում բացվում է աշխարհում միակ քրդական մանկավարժական տեխնիկումը։

14 փետրվարի — Երևանում բացվում է ՀՍՍՀ սովետների VII համագումարը։

24 փետրվարի — Երվանդ Լալայանի մահը Երևանում։

8 մարտի — Մոսկվայում բացվում է ՍՍՀՄ սովետների VI համագումարը։

29 նոյեմբերի — Տեղի է ունենում Մեղրու շրջանի Կարճևանի ջրանցքի հանդիսավոր բացումը։

1932

3 հունվարի — Երևանում տեղի է ունենում Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հանդիսավոր բացումը։

17 հունվարի — Բացվում է ՀԿ(բ)Կ VIII համագումարը։

23 հունվարի — Երևանում տեղի է ունենում Հայաստանի կոմունիստական համալսարանի հանդիսավոր բացումը։

23 փետրվարի — Երևանում լույս է տեսնում Հայաստանի սովետական գրողների ֆեդերացիայի օրգան «Գրական թերթ»-ի առաջին համարը։

9 ապրիլի — Կազմակերպվում են Հայաստանի սովետական գրողների միությունը, Սովետական Հայաստանի երաժիշտների միությունը, սովետական նկարիչների ու կերպարվեստի աշխատողների միությունը և սովետական ճարտարապետների միությունը։

13 ապրիլի — ՀՍՍՀ Կենտգործկոմի որոշմամբ վերակառուցվում է ՀՍՍՀ ժողտնտխորհը, որի բազայի վրա ստեղծվում են ՀՍՍՀ ծանր արդյունաբերության, թեթև արդյունաբերության ժողովրդական կոմիսարիատներ ու ՍՍՀՄ անտառային արդյունաբերության ժողկոմատի Հայաստանի լիազորություն։

10 հունիսի — Հայ տաղանդավոր դերասանուհի Սիրանույշի (Մերուբե Քանթարջյանի) մահը Կահիրեում։

26 հունիսի — Տեղի է ունենում Երևանի Ստալինի անվան ջրանցքի առաջին հերթի հանդիսավոր բացումը։

5 նոյեմբերի — Տեղի է ունենում Երևանի երկրորդ հիդրոկայանի հանդիսավոր բացումը։

7 նոյեմբերի — Տեղի է ունենում Մինջևան-Ղափան երկաթուղու բացումը։
14 նոյեմբերի — Ականավոր պատմաբան Լեոյի (Առաքել Բաբախանյանի) մահը Երևանում։
15 նոյեմբերի — Տեղի է ունենում Զորագէսի հանդիսավոր բացումը։

1933

12 հունվարի — Գործարկվում է Երևանի տրամվայը։
20 հունվարի — Տեղի է ունենում ՀՍՍՀ պետական օպերայի հանդիսավոր բացումը (այժմ՝ Ալ. Սպենդիարյանի անվան Լենինի շքանշանակիր օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոն)։
Հունվար — Շահագործման է հանձնվում Երևանի ծխախոտի նոր ֆաբրիկան։
3 հունիսի — ՀՍՍՀ Կենտգործկոմի նախագահությունը որոշում է ընդունում պետական հուշարձանների պահպանության կոմիտե հիմնելու մասին։
14 հունիսի — Երևանում բացվում է հարվածային կոլտնտեսականների հանրապետական համագումարը։
13 հուլիսի — Հայ նշանավոր գրող Նար-Դոսի (Միքայել Հովհաննիսյանի) մահը Թիֆլիսում։
3 հոկտեմբերի — Երևանում բացվում է բուսաբանության գիտա-հետազոտական ինստիտուտը։
29 նոյեմբերի — Տեղի է ունենում Կիրովականի քիմիական կոմբինատի և Դավալուի ցեմենտի գործարանի բացումը։
30 նոյեմբերի — Լրիվ կարողությամբ շարք է մտնում Զորագէսը։

1934

10 հունվարի — Երևանում բացվում է ՀԿ(բ)Կ IX համագումարը։
15 հունվարի — Թիֆլիսում բացվում է Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների VII համագումարը։
27 հունվարի — Բացվում է ՀամԿ(բ)Կ XVII համագումարը։
1 մարտի — Հայ ճարտարապետության պատմության նշանավոր հետազոտող Թորոս Թորամանյանի մահը Երևանում։
12 հուլիսի — Լույս է տեսնում ՀԿ(բ)Կ Կենտկոմի, Երքաղկոմի և ՀՍՍՀ Կենտգործկոմի օրգան «Коммунист» թերթի առաջին համարը։
1 օգոստոսի — Բացվում է Հայաստանի սովետական գրողների առաջին համագումարը։
6 սեպտեմբերի — Տեղի է ունենում Ղափանի հարստացուցիչ ֆաբրիկայի հանդիսավոր բացումը։
14 սեպտեմբերի — ՀՍՍՀ Կենտգործկոմի նախագահության և Ժողկոմսովետի որոշմամբ կազմակերպվում է ՀՍՍՀ ներքին առևտրի ժողովրդական կոմիսարիատ։
5 նոյեմբերի — Բացվում է Լենինականի մանկավարժական ինստիտուտը։

29 նոյեմբերի — Տեղի է ունենում Երևան-Քանաքեռ երկաթգծի հանդիսավոր բացումը։

1935

10 հունվարի — Երևանում բացվում է ՀՍՍՀ սովետների VIII համագումարը։

28 հունվարի — Մոսկվայում բացվում է ՍՍՀՄ սովետների VII համագումարը։

10 փետրվարի — Տեղի է ունենում Երևանի խրոմպիկի գործարանի հանդիսավոր բացումը։

30 մարտի — Ականավոր երգահան Ռոմանոս Մելիքյանի մահը Թիֆլիսում։

1 ապրիլի — Երևանում բացվում է ռուսական մանկավարժական երկամյա ինստիտուտը։

Մայիս — Էկրան է բարձրանում «Պեպո» առաջին հայկական հնչուն կինոնկարը։

11 հունիսի — Ստեղծվում է ՀՍՍՀ լուսժողկոմատին կից պատմության ու գրականության ինստիտուտը։

19 հունիսի — Երևանում բացվում է ՀՍՍՀ պետական պատմական թանգարանը։

14 հուլիսի — Տեղի է ունենում ՍՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալի (Արմֆանի) հանդիսավոր բացումը։

5 օգոստոսի — Գործարկվում է Լենինականի մսի կոմբինատը։

7 օգոստոսի — Հայ նշանավոր գրող Ալ. Շիրվանզադեի մահը Կիսլովոդսկում։

22 հոկտեմբերի — Փարիզում վախճանվում է հայ ականավոր երգահան Կոմիտասը։

17 նոյեմբերի — Մոսկվայում բացվում է ստախանովականների համամիութենական առաջին համագումարը։

29 նոյեմբերի — Երևան է ժամանում ՍՍՀՄ Կենտգործկոմի նախագահ Մ. Ի. Կալինինը։

1936

21 փետրվարի — Անվանի ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանի մահը Երևանում։

1 հուլիսի — ՀՍՍՀ ժողովրդական արտիստ Հովհաննես Աբելյանի մահը Երևանում։

9 հուլիսի — ՀԿ(բ)Կ կենտկոմի առաջին քարտուղար Աղասի Խանջյանի մահը Թիֆլիսում։

16 հուլիսի — Շահագործման է հանձնվում Երևանի կարբիդի գործարանը։

19 նոյեմբերի — Բացվում է ՀՍՍՀ սովետների IX արտակարգ համագումարը։

5 դեկտեմբերի — ՍՍՀՄ սովետների VIII արտակարգ համագումարը հաստատում է ՍՍՀՄ նոր սահմանադրությունը։ Հայկական ՍՍՀ-ը դառնում է միութենական հանրապետություն։

— Շարք է մտնում Քանաքեռգէսը։

1 9 3 7

23 մարտի — ՀՍՍՀ սովետների IX արտակարգ համագումարը հաստատում է Հայկական ՍՍՀ նոր սահմանադրությունը։

24 ապրիլի — Հրապարակվում է Համկ(բ)Կ կենտկոմի որոշումը Համկ(բ)Կ Անդրերկրկոմը վերացնելու մասին։

26 մայիսի — Բացվում է ՀԿ(բ)Կ X համագումարը։

13 նոյեմբերի — Ժողովրդական բանաստեղծ Հակոբ Հակոբյանի մահը Թիֆլիսում։

15 նոյեմբերի — Տեղի է ունենում Ստանիսլավսկու անվան ռուսական պետական դրամատիկական թատրոնի հանդիսավոր բացումը Երևանում։

12 դեկտեմբերի — Տեղի են ունենում ՍՍՀՄ առաջին գումարման Գերագույն սովետի ընտրությունները։

1 9 3 8

2 հունիսի — Բացվում է ՀԿ(բ)Կ XI համագումարը։

12 հունիսի — Տեղի են ունենում Հայկական ՍՍՀ առաջին գումարման Գերագույն սովետի ընտրությունները։

12 հուլիսի — Բացվում է ՀՍՍՀ առաջին գումարման Գերագույն սովետի առաջին սեսիան։

1 9 3 9

26 փետրվարի — Բացվում է ՀԿ(բ)Կ XII համագումարը։

10 մարտի — Բացվում է Համկ(բ)Կ XVIII համագումարը։

20 հունիսի — Կազմակերպվում են ՀՍՍՀ ավտոմոբիլային տրանսպորտի, մսի և կաթի արդյունաբերության ժողովրդական կոմիսարիատները։

15 սեպտեմբերի — Սկսվեց «Սասունցի Դավիթ» էպոսի 1000-ամյակի տոնակատարությունը։

20 հոկտեմբերի — Մոսկվայում բացվում է հայկական արվեստի տասնօրյակը։

1 9 4 0

11 մարտի — Բացվում է ՀԿ(բ)Կ XIII համագումարը։

Մարտ — Շահագործման է հանձնվում Երևանի Ս. Մ. Կիրովի անվան սինթետիկ կաուչուկի գործարանը։

6 հոկտեմբերի — Բացվում է Երևանի բուսաբանական այգին։

24 նոյեմբերի — Տեղի է ունենում Վ. Ի. Լենինի հուշարձանի հանդիսավոր բացումը Երևանի Լենինի հրապարակում։

24 նոյեմբերի — Հիմնադրվում է Երևանի կենդանաբանական այգին։

1 9 4 1

30 ապրիլի — ՀՍՍՀ ժողովրդական նկարիչ Փանոս Թերլեմեզյանի մահը Երևանում։

10 մայիսի — *Մոսկվայում սկսվում է հայ գրականության տասնօրյակը։*

25 մայիսի — *Տեղի է ունենում Մոսկվայի համամիութենական գյուղատնտեսական ցուցահանդեսի հայկական տաղավարի հանդիսավոր բացումը։*

22 հունիսի — *Սովետական Միության Հայրենական մեծ պատերազմի սկիզբը։*

ՑԱՆԿԵՐ

ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Վ. Ի. ԼԵՆԻՆԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պարտիական կազմակերպություն և պարտիական գրականություն, հատ. 10։

Քննադատական դիտողություններ ազգային հարցի մասին, հատ. 20։

Ազգերի ինքնորոշման իրավունքի մասին, հատ. 20։

Ինքնորոշման վերաբերյալ դիսկուսիայի արդյունքները, հատ. 22։

Մարքսիզմի ծաղրանկարի և «իմպերիալիստական էկոնոմիզմի» մասին, հատ. 23։

Պրոլետարիատի խնդիրների մասին սովյալ ռևոլյուցիայում, հատ. 24։

Պրոլետարիատի խնդիրները մեր ռևոլյուցիայում, հատ. 24։

Բոլշևիկները պետք է վերցնեն իշխանությունը, հատ. 26։

Մարքսիզմը և ապստամբությունը, հատ. 26։

Կպահե՞ն արդյոք բոլշևիկներն իրենց ձեռքում պետական իշխանությունը, հատ. 26։

Ինչպե՞ս կազմակերպել մրցությունը, հատ. 26։

Աշխատավոր ու շահագործվող ժողովրդի իրավունքների դեկլարացիա, հատ. 26։

Բանվորների, զինվորների և գյուղացիների դեպուտատների սովետների համառուսաստանյան երրորդ համագումարը, հատ. 26։

Սովետական իշխանության հերթական խնդիրները, հատ. 27։

Դժբախտ հաշտություն, հատ. 27։

Ձևկուցում արտաքին քաղաքականության մասին համառուսաստանյան կենտգործկոմի և Մոսկվայի սովետի միացյալ նիստում, 1918 թ. մայիսի 14-ին, հատ. 27։

Ճառ ժողովրդական տնտեսության խորհուրդների I համագումարում, 1918 թ. մայիսի 26-ին, հատ. 27։

Նամակ Եվրոպայի և Ամերիկայի բանվորներին, հատ. 28։

Ճառ հողային բաժինների, չքավորության կոմիտեների և կոմունաների համառուսաստանյան I համագումարում, 1918 թ. դեկտեմբերի 11-ին, հատ. 28։

ՌԿ(բ)Պ VIII համագումարը, 18—23 մարտի 1919 թ., հատ. 29։

Մեծ նախաձեռնություն, հատ. 29։

Նամակ Ուկրաինայի բանվորներին և գյուղացիներին Դենիկինի դեմ հաղթանակների առթիվ, հատ. 30։

Ձևկուցում Արևելքի ժողովուրդների կոմունիստական կազմակերպությունների համառուսաստանյան II համագումարում, նոյեմբերի 22-ին 1919 թ., հատ. 30։

Մոսկվա—Կազան երկաթուղու առաջին շաբաթօրյակից դեպի համառուսաստանյան մայիսմեկյան շաբաթօրյակը, հատ. 31։

Մեր արտաքին և ներքին դրությունը և պարտիայի խնդիրները, հատ. 31։

Երիտասարդության միությունների խնդիրները, հատ. 31։

Ազգային և գաղութային հարցերի վերաբերյալ թեզիսների սկզբնական ուրվագիծ, հատ. 31։

Ճառ Մոսկվայի նահանգի գավառական, վոլոստային և գյուղական գործադիր կոմիտեների նախագահների խորհրդակցությունում, 15 հոկտեմբերի 1920 թ., հատ. 31։

Ճառ ժողովրդական կրթության նահանգական և գավառական բաժինների քաղլուսավորների հա—

Մառուսաստանյան խորհրդակցությունում, 3 նոյեմբերի 1920 թ., հատ. 31։
Իտալական սոցիալիստական պարտիայի ներսում մղվող պայքարի մասին, հատ. 31։
Հեռագիր Հայաստանի ռազմական ռևոլյուցիոն կոմիտեի նախագահին, հատ. 31։
Սովետների համառուսաստանյան VIII համագումարը, 22—29 դեկտեմբերի 1920 թ., հատ. 31։
Ճառ բանվորների և գյուղացիների դեպուտատների Մոսկվայի սովետի պլենումի նիստում, 28-ին փետրվարի 1921 թ., հատ. 32։
Աշխատավորուհիների միջազգային օրը, հատ. 32։
Ադրբեջանի, Վրաստանի, Հայաստանի, Դաղստանի, Լեռնականների ռեսպուբլիկայի կոմունիստ ընկերներին, հատ. 32։
ԱՊՆ-ի (Աշխատանքի և պաշտպանության խորհրդի) նակազը տեղական սովետական հիմնարկներին, հատ. 32։
ՌԿ(բ)Պ համառուսաստանյան X կոնֆերենցիան, 26—28 մայիսի 1921 թ., հատ. 32։
Կոմունիստական ինտերնացիոնալի III կոնգրեսը, 1920 թ., հունիսի 22— հուլիսի 12, հատ. 32։
Նոր տնտեսական քաղաքականության մասին, հատ. 33։
Բանգյուղտեսչության խնդիրների, դրանց ըմբռնման և կատարման հարցի շուրջը, հատ. 33։
Անդրկովկասյան ռեսպուբլիկաների ֆեդերացիա կազմելու առաջարկի նախագիծը, հատ. 33։
ՌԿ(բ)Պ XI համագումարը, 27 մարտի —2 ապրիլի 1922 թ., հատ. 33։
Գրություն քաղբյուրոյին մենշևիզմի դեմ պայքարելու մասին, հատ. 33։
Ճառ համառուսաստանյան ԿԴԿ-ի IX գումարման IV սեսիայում, 31 հոկտեմբերի 1922 թ., հատ. 33։
Ռուսաստանի ռևոլյուցիայի հինգ տարին և համաշխարհային ռևոլյուցիայի հեռանկարները, հատ. 33։
Էջեր օրագրից, հատ. 33։
Կոոպերացիայի մասին, հատ. 33։
Մեր ռևոլյուցիայի մասին, հատ. 33։
Ինչպես վերակազմենք բանգյուղտեսչությունը, հատ. 33։
Լավ է քիչ, բայց լավ, հատ. 33։
Նամակ համագումարին, հատ. 36։
Պետպլանին օրենադրական ֆունկցիաներ տալու մասին, հատ. 36։
Ազգությունների կամ «ավտոնոմիզացիայի» հարցի շուրջը, հատ. 36։

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱԴԱՍ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ

Шестой съезд РСДРП (большевиков). Август 1917 г. Протоколы, М., 1958.
Седьмой экстренный съезд РКП(б). Март 1918 г. Стенографический отчет, М., 1962.
Восьмой съезд РКП(б). Март 1919 г. Протоколы, М., 1959.
Девятый съезд РКП(б). Март—апрель 1920 г. Протоколы, М., 1960.
Десятый съезд РКП(б). Март 1921 г. М., 1933.
Одиннадцатый съезд РКП(б). Март—апрель 1922 г. Стенографический отчет, М., 1961.
XII съезд РКП(б). 15—17 апреля 1923 г. Стенографический отчет, М., 1923.
XIII съезд РКП(б). Май 1924 г. Стенографический отчет, М., 1963.
XIV съезд РКП(б). 18—31 декабря 1925 г. Стенографический отчет, М.—Л., 1926.
XV съезд ВКП(б). Декабрь 1927 г. Стенографический отчет, М., 1961.
XVI съезд ВКП(б). 26 июня—3 июля 1930 г. Стенографический отчет, М., 1935.
XVII съезд ВКП(б). 26 января—10 февраля 1934 г. Стенографический отчет, М., 1934.
XVIII съезд ВКП(б). 10—21 марта 1939 г. Стенографический отчет, М., 1939.
Первый съезд большевистских организаций Кавказа. Начало октября 1917 г. Борьба за победу Советской власти в Грузии. Документы и материалы, Тбилиси, 1958.
Первый Закавказский съезд коммунистических организаций. Стенографический отчет, Тифлис, 1922.
Второй съезд коммунистических организаций Закавказья. 19—23 марта 1923 г. Стенографический отчет, Тифлис, 1923.

Третий съезд коммунистических организаций Закавказья». 13—15 мая 1924 г. Стенографический отчет, Тифлис, 1924.

Четвертый съезд коммунистических организаций Закавказья. 5—9 декабря 1925 г. Стенографический отчет, Тифлис, 1926.

Пятый съезд коммунистических организаций Закавказья. Ноябрь 1927 г. Стенографический отчет, Тифлис, 1928.

Шестой съезд коммунистических организаций Закавказья. Июнь 1930 г. Стенографический отчет, Тифлис, 1930.

Седьмой съезд коммунистических организаций Закавказья. Январь 1934 г. Стенографический отчет, Тифлис, 1934.

Հայաստանի կոմունիստական կուսակցության IV համագումարի բանաձևերը, Երևան, 1926։

Հայաստանի Կ(բ)Կ կենտրոնական կոմիտեի պլենում 1928 թ. նոյեմբեր, Երևան, 1929։

ՀԿ(բ)Կ կենտկոմի և ԿՎՀ միացյալ պլենումի բանաձևերը, Երևան, 1931։

Համկ(բ)Կ կենտկոմի 1931 թ. հոկտեմբերի 31-ի որոշումը Համկ(բ)Կ Անդրերկրկոմի, Վրաստանի, Ադրբեջանի, Հայաստանի կենտկոմների դեկուցումների առթիվ, Երևան, 1931։

ՀԿ(բ)Կ V համագումարի բանաձևերը, Երևան, 1928։

ՀԿ(բ)Կ կենտկոմի հաշվետու նյութերը ՀԿ(բ)Կ VI համագումարին, Երևան, 1929։

ՀԿ(բ)Կ VI համագումարի բանաձևերն ու որոշումները, Երևան, 1929։

ՀԿ(բ)Կ VII համագումարի որոշումները, Երևան, 1930։

ՀԿ(բ)Կ VIII համագումարի բանաձևերը, Երևան, 1932։

ՀՍԽՀ բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների խորհուրդների Ա համագումարի արձանագրությունը (1922 թ. հունվարի 30—փետրվարի 4), Երևան, 1922։

ՀՍԽՀ բանվորների, գյուղացիների և կարմիրբանակայինների խորհուրդների Բ համագումարի արձանագրությունը (1922 թ. նոյեմբերի 30— դեկտեմբերի 4), Երևան, 1922։

ՀՍԽՀ խորհուրդների երրորդ համագումարը (1923 թ. դեկտեմբերի 4—8), սղագրական հաշվետվություն, Երևան, 1926։

ՀՍԽՀ խորհուրդների չորրորդ համագումարը (1925 թ. մարտ 12—15), սղագրական հաշվետվություն, Երևան, 1926։

ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու, պր. 1—12, էջմիածին, 1921։

ՀՍԽՀ ժողովրդական տնտեսությունը 1924—1925 և 1925—1926 ԲԲ., Երևան, 1927։

ՀՍԽՀ կառավարության հաշվետվության նյութերը (1926/1927—1927/1928), Երևան, 1929։

ՀՍԽՀ կառավարության հաշվետվության նյութերը (1928/1929—1929/1930), Երևան, 1931։

ՀՍԽՀ կառավարության հաշվետվության նյութերը (1929—1934 ԲԲ.), խորհուրդների VIII համագումարի առթիվ, Երևան, 1935։

ՀՍԽՀ Գերագույն խորհրդի առաջին սեսիան (1938 թ. հուլիսի 12—14), սղագրական հաշվետվություն, Երևան, 1938։

ՀՍԽՀ Գերագույն խորհրդի երկրորդ սեսիան (1939 թ. հունիսի 20—25), սղագրական հաշվետվություն, Երևան, 1939։

ՀՍԽՀ Գերագույն խորհրդի երրորդ սեսիան (1940 թ. սեպտեմբերի 1—2), սղագրական հաշվետվություն, Երևան, 1940։

Հայկական խորհրդային սոցիալիստական հանրապետության սահմանադրությունը (հիմնական օրենք), Երևան, 1937։

ՍՄԿՊ-ն համագումարների, կոնֆերենցիաների և կենտկոմի պլենումների բանաձևերում ու որոշումներում, մաս I, 1954, մաս II, 1955, մաս III, 1955, Երևան։

ՍՄԿՊ Ծրագիր, Երևան, 1961։

ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՎԵՏԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻՉՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Խանջյան Ա., *Հոդվածներ և ճառեր, Երևան, 1963։*

Հարությունյան Գր., *Հայաստանի Կ(բ)Պ կենտրոնական կոմիտեի հաշվետվությունը ՀԿ(բ)Պ XI համագումարին, Երևան, 1938։*

Հարությունյան Գր., Հայաստանի Կ(բ)Պ Կենտրոնական կոմիտեի հաշվետվությունը ՀԿ(բ)Պ XIII համագումարում, Երևան, 1940։
Հովհաննիսյան Աշ., Հայաստանի հեղափոխության հուլիսի ու հոկտեմբերը, Երևան, 1923։
Հովհաննիսյան Աշ., Համազգային կրիզիս, Երևան, 1926։
Մյասնիկյան Ալ., Ընտիր երկեր, Երևան, 1957։
Մոռավյան Ա., Հոդվածներ և ճառեր, Երևան, 1961։
Շահումյան Ստ., Երկեր, հատոր I, 1955, հատ. II, 1957, հատ. III, 1958, Երևան։
Օրջոնիկիձե Գ., Ընտիր հոդվածներ և ճառեր, Երևան, 1950։
Киров С., Избранные статьи и речи (1919—1934), М., 1957.
Куйбышев В., Избранные произведения, М., 1958.
Орахелашвили М., 10 лет Закавказской федерации, Баку, 1932.

ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԵՎ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐ

Առաջին մասսայական հեղափոխական շարժումները Հայաստանում, Երևան, 1932։
Աշխատավորների նամակները Վ. Ի. Լենինին, Երևան, 1961։
Խորհրդային իշխանության 20 տարին, Երևան, 1938։
Խորհրդային Հայաստան, 1920—1925 ԹԹ. (Ժողովածու), Երևան, 1926։
Խորհրդային Հայաստանը թվերով (վիճակագրական տեղեկատու 1923—1927 ԹԹ.), Երևան, 1928։
Խորհրդային Հայաստանի 15 տարին թվերով, Երևան, 1935։
Հայաստանի գյուղատնտեսական կոոպերացիայի (Հայգյուղկոոպ) գործունեության հաշվետվությունը, Երևան, 1928։
Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), Երևան, 1960։
Ղամարլուից Ջանգեզուր (հիշողությունների ժողովածու), Երևան, 1931։
Մայիսյան ապստամբությունը Հայաստանում. հիշողությունների և փաստաթղթերի ժողովածու, Երևան, 1930։
Ռևոլյուցիոն կոչեր և թռուցիկներ, Երևան, 1960։
1926 թվականի համամիութենական մարդահամարը։ Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն, Թիֆլիս, 1934։
Борьба за победу Советской власти в Грузии. Документы и материалы, Тбилиси, 1958.
Великая Октябрьская социалистическая революция и победа Советской власти в Армении (сборник документов), Ереван, 1957.
Великий Октябрь и борьба за Советскую власть в Азербайджане, сборник документов, материалов, статей, Баку, 1958.
Восстановление народного хозяйства Армянской ССР (материалы и документы за 1921—1928 гг.), Ереван, 1958.
Документы и материалы внешней политики Закавказья и Грузии, Тифлис, 1919.
Документы внешней политики СССР, М., 1945.
Культурное строительство Армянской ССР, Ереван, 1962.
Народное хозяйство ССР Армении к концу восстановительного периода, Эривань, 1928.
Народное хозяйство Армянской ССР, Ереван, 1957.
Образование СССР (сборник документов, 1917—1924), М.-Л., 1949.
Сельское хозяйство Армянской ССР, Ереван, 1961.
Социалистическое строительство Армянской ССР. 1920—1940, Ереван, 1940.
Советская Армения за 40 лет, Ереван, 1960.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ալիխանյան Ս., Հայկական գործերի կոմիսարիատի գործունեությունը, Երևան, 1958
Ալիխանյան Ս., Սովետական Ռուսաստանի դերը հայ ժողովրդի ազատագրման գործում, Երևան, 1964

Ակնարկ հայ երաժշտության պատմության, Երևան, 1963
Ակնարկ հայ հարուստապետության պատմության, Երևան, 1964
Աղայան Ս., *Հոկտեմբերյան ռևոլյուցիան և հայ ժողովրդի ազատագրումը, Երևան, 1957*
Ամիրխանյան Շ., *Մայիսյան ապստամբությունը Հայաստանում (1920), Մոսկվա, 1926*
Ավետիսյան Հ., *Հայաստանի կոմկուսի կազմակերպությունը սոցիալիստական ինդուստրացման համար մղվող պայքարում (1926—1932), Երևան, 1959*
Ավետիսյան Վ., *Ստ. Շահումյան. կենսագրական ակնարկ, Երևան, 1953*
Բադալյան Խ., *Անգլո-ամերիկյան դիշատիչ իմպերիալիզմի ագրեսիվ քաղաքականությունը Հայաստանում 1914—1920 թթ., Երևան, 1951*
Բաղդասարյան Ա., *Քաղաքացիական պատերազմը Հայաստանում, Երևան, 1928*
Գալոյան Գ., *Մայիսյան հերոսական ապստամբությունը Հայաստանում, Երևան, 1960*
Գալոյան Գ., *Անդրկովկասում սոցիալիստական ռևոլյուցիայի և կոմունիստական շինարարության պատմության կեղծարարության դեմ, Երևան, 1961*
Գրիգորյանց Ա., *Հայաստանի բանվոր դասակարգը 40 տարում, Երևան, 1960*
Նիգոյան Փ., *Հայաստանի կոմպարտիայի պայքարը ռեսպուբլիկայի ինդուստրացման համար (1926—1941 թթ.), Երևան, 1965*
Էլչիբեկյան Հ., Հակոբյան Ա., *Ուրվագծեր Սովետական Հայաստանի պատմության, առաջին պրակ, Երևան, 1954*
Թովմասյան Ս., *Սովետական Հայաստանը մեծ Հոկտեմբերի ծնունդն է, Երևան, 1957*
Թումանյան Հ., *Հայաստանի սոցիալիստական էկոնոմիկայի զարգացումը, Երևան, 1962*
Լալաբեկյան Բ., *Վ. Ի. Լենինը և սովետական կարգերի հաստատումն ու ամրապնդումը Անդրկովկասում, Երևան, 1961*
Խուրշուդյան Լ., *Ստեփան Շահումյան (պետական և պարտիական գործունեությունը 1917—1918 թվականներին), Երևան, 1959*
Խուրշուդյան Լ., *Հայաստանում սոցիալիստական մրցության պատմությունից, Երևան, 1961*
Կարապետյան Համբ., *Հայաստանի կոմկուսի ծնունդը, Երևան, 1956*
Կարապետյան Համբ., *Մեծ պայքարի մարդիկ, Երևան, 1963*
Կարապետյան Հովհ., *Մայիսյան ապստամբությունը Հայաստանում 1920 թ., Երևան, 1961*
Կարապետյան Ս., *Հռովմ վինված ապստամբությունը 1921 թ., Երևան, 1954*
Կոզմոյան Կ., *Լենինական, Երևան, 1956*
Կոզմոյան Կ., *Կիրովական, Երևան, 1960*
Կոզմոյան Կ., *Ալավերդի, Երևան, 1966*
Հակոբյան Ա., *Քաղաքացիական կռիվները Հայաստանում 1921 թ., Երևան, 1948*
Հակոբյան Ա., *Սովետական Հայաստանը ժողովրդական տնտեսության վերականգնման ժամանակաշրջանում (1921—1925 թթ.), Երևան, 1955*
Հեմբարձումյան Վ., *Հայաստանի գիտությունը 40 տարում, Երևան, 1960*
Հայ ժողովրդի պատմություն, մասն III, Երևան, 1958
Հայաստանի կոմունիստական պարտիայի պատմության ուրվագծեր, Երևան, 1963
Հարությունյան Շ., *Սովետական Հայաստանը 40 տարում, Երևան, 1960*
Հին թուշևիկների հիշողությունները, գիրք I, 1958. գիրք II, 1961, Երևան
Ղազախեցյան Վ., *Սովետական Հայաստանը մեծ բեկման տարում, Երևան, 1962*
Ղազանջյան Վ., *Սովետահայ կուլտուրայի առաջին քայլերը, Երևան, 1964*
Ղարիբջանյան Գ., *Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները սովետական իշխանության համար մղված պայքարում, Երևան, 1955*
Ղարիբջանյան Գ., *Մայիսյան ապստամբությունը Հայաստանում 1920 թվականին, Երևան, 1955*
Ղարիբջանյան Լ., *Երևանի պետական համալսարան, Երևան, 1964*
Մանդալյան Թ., *Մայիսյան ապստամբությունը, Երևան, 1929*
Մելիքսեթյան Վ., Կարապետյան Հ., *Ուրվագծեր Սովետական Հայաստանի պատմության, երկրորդ պրակ, Երևան, 1958*
Մեծ Հոկտեմբերի դրոշի ներքո, Հոդվածների ժողովածու, Երևան, 1957
Միքայելյան Վ., *Հայաստանի գյուղացիությունը սովետական իշխանության համար մղված պայքարի ժամանակաշրջանում (1917—1920), Երևան, 1960*

Մնացականյան Ա., *Ամերիկյան ագրեսորների դեմ հայ ժողովրդի մղած պայքարի պատմությունից, Երևան, 1953*
Մնացականյան Ա., *Հեղյուցիան Անդրկովկասում և Ռուսաստանի պատվիրակները (1917—1921), Երևան, 1961*
Մնացականյան Ա., *Կոմունիստական պարտիան հայ ժողովրդի ազատարարն է, Երևան, 1964*
Մնացականյան Ա., *Վ. Ի. Լենինը և հայ ժողովրդի ազատագրական պայքարը, Երևան, 1963*
Ներսիսյան Մ., *Նոյեմբերյան հեղափոխությունը Հայաստանում, Երևան, 1935*
Ներկարարյան Վ., *Հայաստանի կոմունիստական պարտիան ժողովրդական տնտեսության վերականգնման ժամանակաշրջանում (1921—1925), Երևան, 1956*
Շահինյան Ա., *Վերածնված ժողովրդի կուլտուրան, Երևան, 1959*
Շառոյան Գ., *Հողաշինարարությունը Հայաստանում ազգային փոքրամասնությունների շրջանում, Երևան, 1960*
Շառոյան Գ., *Սոցիալիստական հողօգտագործումը Հայաստանում (1920—1929 ԹԹ.), Երևան, 1962*
Շառոյան Գ., *Գյուղի ներքին հողաբաժանությունը Սովետական Հայաստանում (1921—1929 ԹԹ.), Երևան, 1965*
Շիրմազան Դր., *Դրվագներ Հայաստանի ոռոգման պատմությունից, Երևան, 1962*
Ոսկերչյան Պ., *Սովետական Հայաստանի արդյունաբերությունը, Երևան, 1966*
Պարսամյան Վ., *Նոյեմբերյան հեղափոխությունը Հայաստանում (1920 թ. նոյեմբերի 29), Երևան, 1932*
Պետրոսյան Շ., *Սովետական պետականության կազմակերպումը և զարգացումը Հայաստանում, Երևան, 1961*
Պողոսյան Հ., *Հայաստանի լենինյան կոմերիտմիության պատմությունից (1927—1933 ԹԹ.), Երևան, 1961*
Սաֆրաստյան Ս., *Ռազմա-տնտեսական կոմիտեները Հայաստանում (1917—1922 ԹԹ.), Երևան, 1961*
Սաֆարյան Մ., *Հայաստանի կոմպարտիայի պայքարը ռևոլյուցիայում սոցիալիզմի զարգացման ու ամրապնդման համար, Երևան, 1966*
ՍՄԿՊ պատմություն, Երևան, 1963
Սողոմոնյան Ս., *Քաղաքացիական կռիվները Զանգեզուրում, Երևան, 1958*
Սովետական Հայաստանի տնտեսական զարգացումը, Երևան, 1960
Վարդանյան Հ., *Հայաստանի կոմպարտիայի պայքարը գյուղում սոցիալիզմի հաղթանակի համար, Երևան, 1967*
Ուղումյան Կ., *Սովետական Հայաստանի 40 տարին, Երևան, 1960*
Օգանեզով Գ., *Հերոսական մարտերում, Երևան, 1936*
Օհանջանյան Բ., *Հայաստանի կոմունիստական պարտիան գյուղատնտեսության կոլեկտիվացման տարիներին (1930—1934 ԹԹ.), Երևան, 1955*
Аветисян Г. Комсомол Закавказья в борьбе за победу и упрочение Советской власти. Ереван, 1964.
Агаян Ц. Великий Октябрь и борьба трудящихся Армении за победу Советской власти. Ереван, 1962.
Бегиян А. Образование и упрочение суверенного советского армянского государства. Ереван, 1962.
Вартанян С. Победа Советской власти в Армении. Ереван, 1959.
Галоян Г. Борьба за Советскую власть в Армении. М., 1957.
Галоян Г. Социалистическая революция в Закавказье в освещении буржуазной историографии. Ереван, 1960.
Гарибджанян Г. Коммунистические организации Армении в борьбе за победу Советской власти. Ереван, 1957.
Григорьянц А. Формирование и развитие технической интеллигенции Армении (1920—1965). Ереван, 1966.
История дипломатии, том III, М., 1945.
История СССР, том VII, М., 1967.

Карапетян С. Коммунистическая партия в борьбе за победу Октябрьской революции в Армении. Ереван, 1959.

Мнацаканян А. Посланцы Советской России в Армении. Ереван, 1959.

Меликян М. К вопросу о формировании армянской нации и ее социалистического преобразования. Ереван, 1957.

Народы Кавказа, том II. Этнографические очерки. М., 1962.

Очерки истории Коммунистической партии Азербайджана. Баку, 1962.

Очерки истории Коммунистической партии Армении. Ереван, 1967.

Очерки истории Коммунистической партии Грузии, ч. I. Тбилиси, 1957.

Хармандарян С. Армянская ССР в первый год новой экономической политики. Ереван, 1955.

Хармандарян С., Худавердян К. Съезды советов Армении (1922—1937). Ереван, 1963.

Худавердян К. Культурное строительство в Советской Армении в годы первой пятилетки (1928—1932). Ереван, 1959.

Худавердян К. Культурная революция в Советской Армении (1920—1940). Ереван, 1966.

Шагинян М. Советская Армения. Ереван, 1946.

Эльчибекян А. Установление Советской власти в Армении. Ереван, 1954.

Эльчибекян А. Великая Октябрьская социалистическая революция и победа Советской власти в Армении. Ереван, 1957.

Эльчибекян А. Армения накануне Великого Октября. Ереван, 1964.

Ա Ն Վ Ա Ն Ա Ց Ա Ն Կ

Աբաջյան Գ. 253
Աբելյան Հովհաննես 456, 500, 501, 593—596, 598, 602
Աբեղյան Մանուկ 253, 254, 278, 448, 452, 455
Աբով Գ. 474, 476
Աբովյան Բարսեղ 598
Աբովյան Խ. 465, 495
Աբովյան Վ. 531
Աբրահամյան Արամ 152
Աղամյան Արշակ 390
Աղամյան Կարապետ 602
Աղոկ, տե՛ս Ճուղուրյան Ա.
Ազատյան Թորոս 590
Ազատյան Հայկ 253, 448
Աղիղբեկով Մ. 28, 47, 518
Աղիմզադե 516
Աղնիվ 596
Աթարբեկյան Գ. 139, 146, 148, 153
Աթամճյան Գեղամ 502
Աթամճյան Մարի 586, 590
Աթոյան Հակոբ 147, 152, 373
Ալազան Վ. 372, 474, 482, 490, 491, 494
Ալավերդյան Ստեփան 76, 77, 80, 84, 85, 88, 92
Ալեքսանյան Ա. 386
Ալեքսանյան Տիկին Սիրանույշ 595
Ալեքսեև Վ. 90
Ալթունյան Թաթուլ 509, 512
Ալթունյան Ստեփան 520
Ալիխանյան Ա. Ի. 450
Ալիխանյան Գևորգ 127, 146, 373
Ալիխանյան Թ. 282
Ալիխանյան Իսահակ 499
Ալիխանով Ա. Ի. 450
Ախիկյան Վ. 513, 516
Ահարոնյան Ա. 523, 531, 534
Ահարոնյան Ավետիս 65, 107, 588
Աղաբաբյան Ս. Բ. 12
Աղամալի-Օղլի Ս. 254
Աղայան Ծ. Պ. 12
Աղայան Մ. 512
Աղայան Մուշեղ 81
Աղաջանյան Գ. 412
Աղաջանյան Մ. 403
Աղաջանյան Ստեփան 455, 513, 516
Աղասյան Ա. 431
Աճառյան Հրաչյա 448, 451, 452, 456
Աճեմյան Վարդան 501
Ամիրխանյան Շավարշ 76, 90, 148, 204, 262
Ամիրյան Ա. 47
Ամիրյան Թ. 47
Այվազյան Ա. 509
Այվազյան Արտեմ 509, 510, 512
Այվազյան Կ. 86, 90, 322
Այվազյան Կարապետ 55
Անայիս 590
Անանյան Ա. 322
Անդրանիկ 594, 596
Անդրանիկ (Օզանյան) 38, 46, 47
Անդրեասյան Ա. 541
Անտոնյան Արտեմ 395
Ապոստոլով 90
Առաքելյան Անդրանիկ 397
Առաքելյան Սեդրակ 513, 515
Առուստամյան Գ. 131
Աստուրյան Մ. 403
Աստուր Գ. (Խաչատրյան Ա.) 448, 468, 535
Ասիրյան Լ. 434
Ասլամազյան 505, 512
Ասոյան Ս. 533
Ասպետ Հովհ. 582
Ավագյան Բ. 47
Ավագյան Համբարձում 152
Ավակով 134
Ավանեսով Վ. 30, 32
Ավետիսյան Ա. 403
Ավետիսյան Ավետ 499, 503, 598
Ավետիսյան Օննիկ 602
Ատենյան Ս., տե՛ս Կասյան Սարգիս
Արազի Մուսես 387, 474, 486, 494, 495
Արազյան Բ. 523
Արարատյան 111
Արթքս 474, 486
Արբատով (Յաղուբյան) Ի. 508
Արեշյան Գ. 448

Աբծրունի Վ. 448
Արմեն Մ. 474, 482, 495
Արմենյան Արմեն 499
Արտավազդ 586
Արուտչյան Մխքայել 501, 514
Աֆրիկյան Մկրտիչ 54

Բարախանյան Ա., տե՛ս Լեո
Բարայան Լ. Մ. 12
Բարայան Մարգարիտ 601
Բարայան Ս. 282
Բարլումյան 134
Բարրովա Կլավդիա 434
Բագրիցկի Էդ. 480
Բադալյան Վիրար 147
Բաժբեուկ-Մելիքյան Ա. 513, 516
Բալյան Հ. 157
Բալուլյան Հր. 586
Բախ Ա. Ն. 386
Բախշինյան Զ. 523
Բախտամյան Ա. 283
Բակունց Ակսել 372, 373, 465, 474, 484—487, 489—491, 495, 496
Բակունց Ե. 224
Բահանգդին 145
Բաղդասարյան Արմենակ 147, 152
Բաղդասարյան Ս. 500
Բաղդատյան Ս. 125
Բայբուրդ Գ. 87
Բաշալյան Լևոն 473, 587
Բաշինջաղյան Գ. 513
Բաշխինյան Զ. 532, 534
Բասին Մ. 47
Բատիկյան Բ. 76, 90
Բաբբյուս Հանրի 260
Բարխուդարյան Պ. 503
Բարխուդարյան Սարգիս 507, 512
Բարսղինա 516
Բարսեղյան Կնյազ 398
Բարք 22
Բեզդեդյան Ալեքսանդր 117, 118, 126, 190, 373
Բեզդեդյան Տ. 99, 106
Բեռնի Դ. 480
Բեթհովեն 509
Բեկնազարյան Գ. 503
Բեկնազարյան Համո 503
Բեռ Գ. 495
Բերբերյան Ան. 90
Բերգ Ա. 47
Բերեժանով Դմիտրի 152
Բերիա 371, 372
Բեքիր Սամի բեյ 97, 140
Բժշկյան Հայկ Դմիտրի, տե՛ս Գայ

Բլոկ Ալ. 473, 480
Բոգդանով Ա. 47
Բոգդանով Ս. 47
Բոմարշե 501
Բոնար Քրաֆթ 559
Բորյան Ա. 47
Բրուտյան Գևորգ 513, 520
Բուդաղյան Աննա 593, 594
Բուդաղյան Արմենակ 76, 154, 162
Բուդաղյան Գ. 508
Բուդումյան Աղավնի 148
Բունի 505
Բունիաթյան Մ. 55
Բունիաթյան Ն. 448, 523, 530, 531, 534
Բունիաթյան Օ. 598
Բունյաթ-Զադե 217
Բունյաթյան Հր. 412
Բուրջալյան Արշակ 448, 500, 508

Գաբիշև Ի. 47
Գաբրիելյան Ա. 505, 509
Գալանով Ստեփան 152
Գալոյան Ա. 322
Գալոյան Գ. Ա. 12
Գալոյան Ե. 87
Գալոյան Ս. 87
Գալֆայան Օննիկ (Վոլդեր) 596, 597
Գամազով 87
Գայ (Բժշկյան Հայկ Դիմիտրի) 213, 214
Գայֆեճյան Վ. 513, 514, 516
Գարագաշ 595
Գարբուշկին Դ. 283
Գարդաշյան Վ. 67
Գեդեչկորի Ե. 21, 38, 45, 488
Գեննկին Ե. 203
Գեորգաձե Գ. 39, 104
Գըլըճյան 574
Գիլբերդ Հենրի 601
Գմբեթյան Արտաշես 593, 595
Գյանջումց Նիկոլայ 278
Գյանջումցյան Ռուբեն 387
Գյոդակյան Գ. Շ. 12
Գյուլիքեխյան Հ. 448, 477
Գյուրջյան Գաբրիել 387, 513, 514, 516, 521
Գյուրջյան Հակոբ 602, 603
Գոգոլ 465, 598
Գոգունց Ա. 80, 84, 86
Գոհար 596
Գոլան Էլիզա 593
Գորկի Մ. 460, 496, 501, 518
Գրգեարյան Հ. Ղ. 12
Գրիբոյեդով Ա. Ս. 468
Գրիգորյան Հ. 131

Գրիգորյան Հ. (Քունելագործ) 329
Գրիգորյան Հր. 513
Գրիգորյան Մ. 523, 531, 534
Գրիգորյան Մարիամ 431, 434
Գրիգորյան Ռ. 533
Գրիգորյան Ս. 86
Գուլազյան Օլգա 499
Գուլակյան Արմեն 496, 501, 508
Գուլոյան Ա. 317, 325
Գուլքանյան Վարդան 407
Գույումճյան Հակոբ 574, 590, 592
Գուրգենյան Գ. 259
Գևորգյան Ա. 282

Դալլաքյան Ղ. Մ. 12
Դանիելյան Հայկանուշ 387, 416, 508
Դաշտոյան Ռուբեն 217, 253, 322, 373, 379, 436
Դավթյան Հ. 529
Դավթյան Սերիկ 436
Դարբասյան Մնացական 152
Դարբինյան Մ. 474, 486
Դարբինյան Ս. 162
Դեքյուան 601
Դեմիրճյան Դերենիկ 448, 455, 465, 473, 484—490, 494—497, 499
Դեմուրյան Ս. 403
Դենիկին 63, 65, 70, 71, 219
Դենստերվիլ 23
Դիլանյան Հ. 253, 328
Դոնսկոյ Դ. 21
Դովլաթյան Ի. 113, 117, 118, 124, 217
Դրեպալո Տ. 431
Դրո (Կանանյան Դր.). 91, 121, 138
Դուրգերյան Հովհ. 545, 556
Դուրյան-Արմենյան 595, 596

Եկանյան Պետրիս 596, 597
Եկմալյան 599, 600
Եղիազարյան Արտավազդ 317, 373, 434
Եղիկյան Կ. 329
Ենգոյան Փ. Ի. 12
Ենուկիձե Ա. 217
Երամյան Աստղիկ 595
Երամյան Լևոն 501, 595
Երեմյան Ս. Տ. 12
Երեմյան Վահան 278
Երզնկյան Արամայիս 157, 204, 253, 322, 373, 545, 556, 570, 571, 577
Երզնկյան Ե. 126
Երզնկյան Հ. 329
Երկաթ Արմեն 591

Երկանյան Տ. 523, 531
Երմոլենկո 143, 162
Եսայան Ա. 545
Եսայան Զապել 473, 489, 490, 496, 584, 585, 587, 589
Եսենին Ս. 480

Զավրիև Հ. 40
Զարապով Վ. 259
Զարգարյան Ն. 526, 529
Զարդարյան Հ. 589
Զարիֆյան Հովհաննես 593—596, 598
Զարյան Կոստան 588, 590
Զարյան Ն. 465, 474, 482, 483, 490—495
Զարոյան Պետրոս 586
Զաքարյան Գևորգ 407
Զաքարյան Թեմզա 148
Զաքարյան Կ. 507, 510, 512
Զլատագորովա Տ. 502
Զորյան Ստեփան 278, 416, 436, 465, 474, 484, 486, 490, 494, 496
Զուրարյան Ար. 40
Զուրարյան Մարո 474
Զևին Ե. 28, 47

Էդիգարյան Զալո 147
Էլիավա Շալվա 254, 277
Էլչիբեկյան Հ. Մ. 12
Էնգելս Ֆ. 33, 264, 384, 516
Էնվեր փաշա 35
Էսաճանյան Լևոն 582, 590
Էվոյան Սիմոն 133, 204
Էֆենդիև Բ. 253

Թադևոսյան Սղիշե 513, 515
Թաթուլյան Ա. 509
Թաղիանոսյան Տ. 154
Թամանյան Ալեքսանդր 244, 278, 315, 448, 455, 514, 515, 521, 522, 525, 526—528, 531, 533—536, 576
Թամանյան Գ. 534
Թաշճյան 574
Թավրիզյան Մ. 508
Թարախչյան Վ. 253, 434, 436
Թարգյուլ Լ. 494
Թարխանյան Ս., տե՛ս Կուռո
Թափալցյան Քր. 494
Թևոդիկ 541, 582, 586
Թերլեմեզյան Փանոս 514, 516, 602, 603
Թեքեյան Վահան 473, 585, 589—591
Թեֆվիք փաշա 109
Թոփուզենց Վահան 474, 484, 485, 487, 488, 490, 494—496

Թոլայան Ե. 586
Թոմա Ալբերտ 565
Թոմսոն 73
Թոշյան 43
Թովմասյան Ա. 87
Թովմասյան Գ. (Ղարիբ) 146
Թորքոմանյան Թ. 448, 455, 535
Թորդոմյան Ե. 486
Թորնեզ Մ. 315
Թորոսյան Գ. 379
Թորոսյան Ս. 53
Թոփալյան Բ. 586
Թոփչիբաշև 488
Թոքատլյան Արմեն 599
Թումաճյան 601
Թումանյան Հովհաննես 141, 142, 151, 455, 460, 473, 475, 484, 506, 570
Թումանյան Մարո 148
Թումանյան Մ. Գ. 450

Ժասմեն 501, 516
Ժորդանիա 24, 259

Իբսեն 487
Իբրահիմով Մուխտար 152
Իլլին Լ. 529
Իշխանյան Ժ. 90
Իշխանյան Սուսաննա 148
Իոնեսկու Վ. 128
Իպատով Իվան 278
Իսագուլյանց Վ. Ի. 450
Իսահակյան Ավետիք 316, 380, 456, 465, 473, 475, 512, 515
Իսահակյան Ե. 403
Իսեցկի-Հովհաննիսյան Լ. 508
Իսրաելյան Ռ. 532, 534
Իվանյան Ա. 157
Իվանով Վ. 468, 500

Լազարև Ս. 127
Լազյան Հովսեփ 125, 132, 133
Լալայան Ե. 448
Լանսինգ 23, 67, 68
Լավրենյով Բ. 500
Լավրով Մ. 329
Լեգրան Բ. 98—101, 103—106, 110, 116, 117, 121
Լենին Վլադիմիր Իլյիչ 15—18, 29, 30, 33, 34, 45, 81, 84, 94, 103, 104, 118, 120—122, 134, 153, 171—179, 183, 187, 189, 191, 197, 200, 204—206, 208, 209, 215, 216, 218—220, 223, 226, 227, 231, 232, 241, 251, 254, 257, 264, 265, 269, 281, 283, 284, 289, 290, 293, 294, 296—298, 361, 371, 384, 412, 421, 425, 426, 430, 434, 435, 440, 457—461, 468, 470, 471, 481, 502, 512, 516—518
Լեո (Բարախանյան Ա.) 448, 455
Լեոնով Լ. 468
Լեպիսյեր Լ. 64
Լեռ-Կամսար 485
Լիսին Ս. Մ. 131, 132, 203
Լյուկ 101
Լոշ 67
Լոսով 39—41
Լուկաշին Ս., տե՛ս Սրապիոնյան Սարգիս
Լուկյանով Ի. 329
Լևանդովսկի 20
Լևինսոն-Լեսսինգ Ֆ. Յու. 450, 451
Լևոնյան Գ. 513, 535
Լևոնյան Գարեգին 585

Խալաթյան Լ. Ա. 12
Խալթաղչյան Ս. 403
Խալիլ բեյ 41
Խանաղով 54
Խանզադյան Ե. 448, 477
Խան-Խոյսկի Ֆ. 39
Խանկալամով 116
Խանոյան Ս. 77, 157, 322
Խանջյան Աղասի 76, 113, 275, 310, 322, 325, 345, 346, 372, 373, 379, 545
Խաչանյան Հ. 503
Խաչանյան Համբարձում 499, 598
Խաչատրյան Ա., տե՛ս Աստուր Գ.
Խաչատրյան Արամ 503, 509—512
Խաչատրյան Հ. 162
Խաչատրյան Մարիամ 152
Խաչատրյան Սարգիս 602
Խաչատրյան Սուրեն 499
Խաչատուրով 89
Խաչյան Ա. 157
Խաչվանքյան Տաճատ 518
Խառլամով 22
Խատիսյան Ա. 22, 36, 39, 41, 49, 86, 111, 259
Խարազյան Ամո 499, 501
Խարլամով Իվան 152
Խնկոյան Աթաբեկ 477, 482, 483
Խոճիկ Էդ. 485
Խոմերիկի Ն. 39
Խոջա-Էյնաթյան Լ. 510, 512
Խոջամիրյան Սրվանդ 434
Խուդավերդյան Կ. Ս. 12
Խուշոյան Մանուկ 237

Մառուկյան Ե. 89

Կալենդին 22
Կալինին Մ. Ի. 202, 256, 314, 348, 386
Կալուժնի Գ. 329
Կամարի Հակոբ 76, 91, 93
Կամսարական Ս. 571
Կամսարական Տ. 473, 587, 594, 597
Կամսարականներ 582
Կանանյան Դր., տե՛ս Դրո
Կապլեր Ա. 502
Կասյան Սարգիս (Աւետյան Ս.) 77, 78, 80, 81, 117, 118, 120, 148, 253, 254, 278, 310, 373
Կարաբեքիր փաշա Քազիմ 108, 111, 145, 225
Կարադյոզյան Ս. 157
Կարապետյան 134
Կարապետյան Լևոն 152
Կարապետյան Հ. 259, 448, 451
Կարապետյան Հովհաննես 152
Կարապետյան Հ. Ս. 12
Կարապետյան Ս. 529
Կարավևա Ա. 468
Կարատով (Կարապետյան) Ա. 508
Կարատուով 22
Կարիկյան Եսայի 559
Կարինյան Արտաշես 28, 157, 203, 253, 254, 262, 448, 477, 545
Կարճիկյան Խ. 21, 488
Կելլեր Վ. Ա. 450
Կիասով 18
Կիրով Ս. Մ. 81, 96, 122, 150, 189, 207, 211, 217
Կլեմանսո 70
Կլիչ Նիկոլայ 152
Կյուրճյան Միք. 587, 594, 598
Կոգանով Մ. 47
Կոթիկյան Արման 593—595
Կոլեսնիկով Մ. 329
Կոլեսնիկովա Ն. 28
Կոմարով Վ. Լ. 450
Կոմիտաս 599—601
Կոջոյան Հակոբ 513, 518
Կոստանդյան Ա. 47
Կոստանյան Հայկազ 80, 113, 126, 262, 275, 373
Կոստանյան Մարգո 593, 595, 597
Կոստանյան Միքայել 593, 595, 597
Կորգանով Գ. 25, 26, 28, 47
Կորնիլով 22
Կորնև 329
Կորտ 109
Կրեստովսկի 89
Կուդրին Բ. Ն. 152
Կուզնեցով Պ. 253
Կուխմայակին Պ. 90
Կույբիշև Վ. Վ. 232, 254, 284
Կուռո (Թարխանյան Ս.) 138, 160
Կուրղինյան Ն. 76, 86, 87
Կուրղինյան Շուշանիկ 474
Կուրսել Ն. 253

Հալաբյան Կարո 148, 278, 386, 487, 513, 516, 523, 526, 532, 534
Հախվերդյան Հ. 49
Հակոբյան Ա. 412, 448
Հակոբյան Ա. Մ. 12
Հակոբյան Կ. 534
Հակոբյան Հ. 513
Հակոբյան Ն. 532
Հակոբյան Հակոբ 474, 482, 486, 492, 518
Հակոբյան Հասմիկ 499
Հակոբյան Մակար 407
Հակոբյան Մինաս 395
Հակոբյան Ս. 477, 490
Հակոբյան Սիմոն 584
Հակոբյան Սիրուշ (Դորա) 148
Հակոբջանյան Ս. 90
Համաստեղ 588
Համբարձումյան Սաքո 127, 157, 203, 204, 217, 252—254, 256, 262, 545, 556, 563, 564
Համբարձումյան Վ. Ա. 450
Հայկյան Հ. 350
Հայրապետյան Ա. 329
Հայրապետյան Գրիգոր 417
Հանեսօղլյան Գևորգ 76, 148, 204, 373, 375, 380
Հաջիբեկով Ուզեիր 509
Հաջինսկի Մ. 39
Հասկել 68, 94
Հասմիկ 499, 501, 503, 598
Հավասի 509
Հարբորդ 68, 69, 71—73
Հարուի Լևոն 594
Հարությունյան 134
Հարությունյան Բ. 91, 115
Հարությունյան Գ. Ա. 372, 386, 409
Հարությունյան Հ. 329
Հարությունյան Շ. Ի. 12
Հարությունյան Վ. Մ. 12
Հաուպտման 598
Հովարդ 371
Հովհաննիսյան Ա. 448
Հովհաննիսյան Աշոտ 126, 148, 157, 203, 204, 224, 228, 253, 373, 423, 429, 434, 448, 477, 545
Հովհաննիսյան Եփրեմ 152
Հովհաննիսյան Թամարա 148
Հովհաննիսյան Լ. 83
Հովհաննիսյան Հ. 157

Հովհաննիսյան Հովհաննես 454, 473
Հովհաննիսյան Մ. 328
Հովսեփյան Գարեգին 603
Հովսեփյան Լ. 386
Հովսեփյան Հայկ 203, 217, 262, 373
Հովսեփյան Ս. 47
Հուրյան Թաթուլ 492

Ջնելյան Բորիս 481

Ղազախեցյան Վ. Ն. 12
Ղազանչյան Վ. 87
Ղազարյան Կարո 436
Ղազարյան Պ. 261
Ղազարյան Սամսոն 407
Ղամբարյան Ս. Պ. 259, 448, 450
Ղարագյոզյան Ա. 488
Ղարիբ տե՛ս Թովմասյան Գ.
Ղարիբյան Ա. 162
Ղարիբյան Արարատ 520
Ղարիբյան Հ. 217
Ղարիբջանյան Բ. 76, 89, 92
Ղափանցյան Գրիգոր 448, 451, 455
Ղորղանյան Ս. 59
Ղուկասյան Ղուկաս 76, 77, 80, 86—89, 518, 520

Ճուղուրյան Ա. (Ադոկ) 86, 90

Մադաթյան Աշ. 598
Մադոյան Ա. 282
Մազմանյան Մ. 512
Մազմանյան Մ. Դ. 487, 523, 529, 531, 533
Մալեզյան Վահան 590
Մալիգին Ի. 47
Մալիշիխին Տ. 253
Մալխասյան Ստեփանոս 451, 455
Մալյան Դ. 503
Մալոզեմով Ի. Ի. 526
Մալումյան 134
Մախոյան Վարդան 602
Մակարյան Ս. 90, 162
Մակինցյան Պողոս 157, 373, 477, 490, 542, 545
Մակկորմիկ 72, 73
Մահարի Գ. 372, 474, 481, 482, 487, 490
Մահմուդով Ա. 282
Մահմուդով Նադոյե խդո 407
Մամեդով Ջալալ 152
Մամիկոնյան Վ. 217
Մամուլյան Վերժին 594
Մայակովսկի Վլ. 480
Մայիլյան 55
Մայիլյան Ա. 512
Մանանդյան Հակոբ 412, 441, 442, 448, 450, 451, 455
Մանդալյան Բ. 86
Մանվելյան Մ. 474, 484, 486, 494
Մանվելյան Միքայել 448, 499
Մանուկյան Ազատ 507
Մանուկյան Արամ 49
Մանուկյան Ս. 529
Մանուկյան Փ. 529
Մանուչյան Միսաք 590, 592
Մանուչարյան Արտյոմ 147
Մանուչարյան Ն. 503
Մաշուրյան Մ. 91
Մառ Ն. Ցա. 450
Մատինյան Ա. 134
Մատինյան Ա. (բանվոր) 328
Մատիշկո Պ. 90
Մարգարյան Հ. 523, 531, 532, 534
Մարգարյան Հայկազ 407
Մարգարյան Ս. 403
Մարտել դե 101
Մարտիկյան Սերգո 76, 77, 80, 83, 348, 373, 379
Մարտիրոսյան Ա. (կինոռեժիսյոր) 503
Մարտիրոսյան Ա. (ինժեներ) 532
Մարտիրոսյան Բ. 386
Մարտիրոսյան Գ. 328
Մարտունի Ալ., տե՛ս Մյասնիկյան Ալեքսանդր
Մարուքյան Մ. 595
Մարուքյան Տ. 533
Մարուքյան Մանուկ 573, 574
Մարքս Կ. 33, 84, 264, 384, 516
Մդիվանի Բ. 108, 111
Մելիք-Ադամիրյան Հ. 259
Մելիք-Հակոբյան Վաղարշակ 513, 516
Մելիք-Հայկազյան Ս. 254
Մելիքյան Արշավիր 50, 77, 373
Մելիքյան Դ. 87
Մելիքյան Ռոմանոս 444, 448, 455, 505, 507
Մելիքյան Սպիրիդոն 455, 505
Մելիքյան Վարդուշ 407
Մելիքսեթյան Հ. Ու. 12
Մելիք-Օհանջանյան Կ. 452
Մելիք-Օսիպով 148
Մելնիկով Վ. 157
Մելնիկով Վ. Լ. 152
Մելքոնյան Ա. 86
Մելքոնյան Մ. 328
Մելքոնյան Մանսուր 397
Մեծատունյան Ռ. 431
Մեհրաբյան 600
Մեհրաբյան Գ. 223
Մելն 65

Մետաքս Ի. 47
Մերանգուլյան Ա. 505, 507
Մերկուրով Սերգեյ 412, 517—519
Միկոյան Ա. 81, 152, 203, 386
Մինասյան Ա. 529
Միշնե Ի. 47
Միրաբյան Մ. 282
Միրաքյան Վ. 474
Միրզոյան Մ. 507, 512
Միրզոյան Վարդան 499
Միքայելյան Լ. 497
Միքայելյան Կ. 474, 571
Միքայելյան Մ. 513
Մխիթարյաններ 582, 583
Մխիթարյան Հրանուշ 407
Մխիթարյան Մ. 431
Մխիթարյան Վերգուշ 148
Մխչյան Լիպարիտ 90, 147, 162, 481
Մկրտչյան Ա. 282
Մկրտչյան Պ. 350
Մկրտչյան Ք. 91
Մկրտումյան Ն. 76, 90
Մյասնիկյան Ալեքսանդր (Մարտունի Ալ.) 157, 160—162, 177—179, 186, 187, 192, 196, 199, 203, 204, 207—209, 213, 217, 460, 477, 516, 545, 550, 596
Մոլիեր 598
Մովսիսյան Ա. 87
Մոցարտ 509
Մռավյան Ասքանազ 77, 80, 81, 117, 118, 133, 146, 157, 172, 199, 202—204, 223, 253, 278, 545, 554, 557, 563
Մուշեղ Իշխան 590
Մուշեղյան Գ. 531
Մուսայելյան Սարգիս 84—88, 91, 92
Մուրադխանյան Արամ 55
Մուրզա Գ. 529

Յակուլով 110
Յադուրյան Հովհ 278
Յաղուբյան Ի., տե՛ս Աբրահամով Ի.
Յաղուբյան Հայկ 77, 81, 90, 148
Յանգաբուտով 395
Յանիշևակի 148
Յավարկով Պ. 89
Յուզբաշյան Ս. Բ. 450

Նազարբեկյան 42
Նազարեթյան Հ. 217
Նազարյան Ա. 87
Նալբանդյան Մ. 465
Նանսեն Ֆրիտյոֆ 234, 562—569
Նասիբյան Գ. 282
Նավիլ Էդվարդ 559
Նար-Դոս 455, 473, 484, 486
Նարիմանով Ն. 28, 217
Նեժդանովա Ա. 509
Նեկրասով 465
Նեչաև 91
Ներսիսյան Բ. 253
Ներսիսյան Հրաչյա 499, 503, 598
Ներուչև Ա. 21
Նժդեհ 115, 137, 150, 151, 154, 160, 171
Նիկոլայշվիլի Վ. 47
Նշանյան Տրդատ 593—595
Նովիկովա Զ. 350
Նորատունկյան Գարբիել 559
Նորենց Վ. 372, 474, 481, 490, 491
Նուբար Պողոս 559
Նուրի բեյ 128
Նուրիջանյան Ա. 80, 84, 86, 113, 117, 118, 120, 125, 148

Շադլինսկի Արաս-կուլի 147
Շադունց Ս. 157, 556
Շաֆիրյան Ս. 508
Շահին էդգար 601—603
Շահինյան Մարիետա 254, 485
Շահխաթունի Ա. 593—595
Շահմուրադյան Արմենակ 599, 600
Շահնուր Շահան 589
Շահսուվարյան Ա. 224
Շահվերդյան Ալ. 157
Շահվերդյան Դանուշ 77, 80, 373, 545, 552, 553, 560
Շահվերդյան Սուսաննա 322
Շահումյան Ստեփան 18, 22, 24—29, 31, 34, 39, 42, 46, 47, 50, 84, 474, 481, 516, 518, 519
Շամախյան Արշավիր 81,
Շամախյան Եղիշե 81, 90, 146, 170
Շամիլով Արաբ 278
Շամիրխանյան Տ. 598
Շանթ Հովհ 96, 98—100, 507, 588, 594, 596, 597
Շապանյան Արսեն 602
Շասոյան Մարիամ 407
Շարբաջյան Գ. 513
Շարդինյե 64
Շեվալյե Ա. 136, 259
Շերամ 505, 509
Շեքսպիր 505, 598
Շիլլեր 598
Շիշմանյան Ռաֆայել 602, 603
Շիրազ Հովհաննես 492
Շիրմազանյան Գ. 259, 449

Շիրվանզադե Ալեքսանդր 315, 456, 460, 473, 474, 484, 487—489, 499, 518, 594, 596—598
Շոր 20
Շշեղրին Իոն 278
Շուշանյան Վազգեն 588, 590
Շևչենկո 465

Ոսկանյան Արուս 499, 500, 515, 598
Ոսկանյան Հովսեփ 501
Ոսկանյան Ս. 90
Որբունի Զ. 586, 589

Զախոյան Գուրգեն 152, 162
Զապել Արամ 599
Զարենց Եղիշե 148, 372, 373, 448, 465, 474, 476, 478—481, 483, 485, 487—491, 493, 499, 515, 518, 584
Զարնքյան Ս. 508
Զեխով Ա. 460
Զերչիլ 70, 71
Զիլերին Գ. 97—99, 103, 104, 108, 110, 117, 119
Զիալիև Դ. 523
Զխենիձե 28
Զխենկելի Ա. 21, 39
Զոպանյան Արշակ 473, 585, 586, 589, 590, 603

Պալյան Կարո 603
Պամս Ժյուլ 567
Պայաղատ Ս. 495
Պապաջանյան Մ. 40
Պապյան Մ. 387
Պապյան Մինաս 349, 386
Պապյան Ն. 350
Պարթևյան Ս. 599
Պարոնյան Հ. 500, 597, 598
Պարսամյան Մ. 586
Պարսեղով Միքայել 415
Պաֆենհոլց Կ. 451
Պենկլյան 596
Պեշիկթաշլյան Շ. 590
Պետեն 416
Պետրոսյան Աղասի 152
Պետրոսյան Մ. 90
Պետրոսյան Մադաթ 474
Պետրոսյան Պ. 86
Պետրով Գ. 47
Պերեստիանի Ի. 503
Պերճուհի 596
Պերպերյան Ռեթեոս 582
Պիլիև Կոստի 278
Պիննմեճյան Էլիզա 594
Պիոտրովսկի Բ. Բ. 452
Պիրագով Ա. 508
Պոգոդին Ն. 502
Պոլկ 67
Պոլյանսկի Ա. 146
Պոլուխին Վ. 47
Պողոսյան Հ. 157
Պողոսյան Հայկուշ 434
Պողոսյան Ի. 154, 162
Պողոսյան Վ. 157
Պրժևալսկի 20
Պուշկին Ա. Ս. 460, 465, 467, 468

Ջամալյան Արշակ 572
Ջանան Մկրտիչ 490, 497, 499, 594
Ջափարիձե Ա. 28, 47, 518
Ջաֆար 516
Ջաֆարով Մ. 21
Ջերարդ Ջեյմս 67, 68
Ջիվանի 509
Ջորջ Էլոյդ 70—72, 108, 140
Ջրբաշյան Տ. 448

Ռամիշվիլի Ն. 24, 39, 84, 259
Ռասուլ Զադե 259
Ռատնեկ Կ. 161, 217
Ռաուֆ բեյ 36
Ռոլան Ռոմեն 360, 601
Ռոտինյան Լ. Ա. 259, 448, 450
Ռուբեն 137
Ռուսթավելի Շոթա 468

Սաբախտարաշվիլի 145
Սադիխով Ալեքպեր 152
Սաթյան Ա. 510, 512
Սահակյան Մ. 431
Սահակյան Մարտին 217, 277
Սահակյան Սիմակ 387, 431, 434
Սահակյան Վաղարշակ 509
Սամարչև 282
Սայադյան Բ. 253
Սայաթ-Նովա 506, 509
Սանտալչյան Խաչիկ 597
Սարաջև Կ. 508, 509
Սարգսյան Ա. 514
Սարգսյան Աշոտ 152
Սարգսյան Արա 518, 602, 603
Սարգսյան Գ. 86
Սարգսյան Ն. 329
Սարգսյան Հ. 531
Սարգսյան Մ. Ս. 12
Սարգսյան Պետրոս 395
Սարգսյան Սեդրակ 133
Սարգսյան Վ. 601

Սարմեն 474, 482
Սարյան Գեղամ 465, 474, 482, 483, 490—492, 496
Սարյան Մարտիրոս 278, 448, 455, 513—515
Սարյան Օգսեն 584
Սարուխան Ալ. 602, 603
Սարուխանյան Խ. 431
Սարուխանյան Հ. 76, 89, 90
Սաֆարյան Ս. 523, 531, 532, 534
Սաֆրազբեկյան Ռ. 261
Սելյան Պատրիկ 584
Սեմա Ա. 586, 590, 592
Սեպուհ 90
Սերդոբինցև 329
Սիլին 121
Սիմոնյան Ազատ 550
Սիմոնյան Կարապետ 415
Սիմոնով Ռուբեն 499, 515
Սիտալ Կարապետ 584, 587, 590, 592
Սիրանույշ 593, 596—598
Սիրաս Հմ. 474, 494
Սիրունի Հ. 585
Սմիտ (հյուսպատոս) 20—23
Սմիտ (սենատոր) 71
Սյունի Գրիգոր 599, 600
Սոլնցև Ֆ. 47
Սոկրատ 590
Սողոմոնյան Պ. 513
Սոֆոկլես 487
Սպանդարյան Սուրեն 474, 518
Սպենդիարյան Ալեքսանդր 448, 455, 505, 506, 509, 515
Սվաճյան Վահրամ 593, 594
Ստալին Ի. Վ. 11, 218, 220, 297, 370—372, 494
Ստասովա Ե. 32, 81
Ստեփանյան Արտաշես 134
Ստեփանյան Գ. Խ. 12
Ստեփանյան Լ. 349
Ստեփանյան Հարո 387, 416, 509—512
Ստեփանյան Ներսիկ 372, 373, 434
Ստեփանյան Ստեփան 152
Ստեփանյան Սուրեն 518, 520
Ստիվենս 20
Ստոքս 104, 106, 107, 109, 110
Ստուրուա Վ. 254
Սրապիոնյան Սարգիս (Լուկաշին Ս.) 157, 203, 204, 217, 223, 224, 228, 253, 373, 430, 545, 563
Սուլթանով Խոսրով բեկ 259
Սուխարցև Ի. 28
Սումբատով 594
Սունդուկյան Գ. 460, 465, 499, 598
Սուրաբյան Մաշա 593—597, 600
Սուրաբյան Սեդրակ 593—597
Սուրխաթյան Հ. 477, 490
Սուրմելյան Լևոն 590
Սևյան Ե. 76, 89, 92, 93
Սևումյան Օվի 498
Սևունց Գ. 495

Վալեսյան Լ. Հ. 12
Վախանեվով 282
Վախթանգով Նվգենի 499
Վահյան Վահե 590
Վաղարշյան Վաղարշ 416, 488, 496, 499, 501, 502, 598
Վավիլով Ն. Ի. 450
Վարդանյան Անուշավան 474, 488
Վարդանյան Արփիար 597
Վարդանյան Գրիգոր 543, 545, 550, 571
Վարդանյան Սերգեյ 303
Վարդանյան Ցլորա 278
Վարդապետյան Լ. 157
Վարուժան 482
Վեզիրով Մ. 28, 47
Վելիկանով 161
Վելլեր Ս. 412
Վեհիբ փաշա 35, 41
Վիլհելմ 40
Վիլսոն 67, 68, 73
Վիլսոն Հենրի 70
Վշտունի Ազատ 474, 476, 482, 483
Վոլգեր, տե՛ս Գալֆայան Օննիկ
Վրացյան Ս. 110, 111, 139, 140, 145, 149, 150, 259, 586

Տալյան Շարա 387, 508
Տալյան Վ. 510, 512
Տարագրոս (Տեր-Վարդանյան Ստեփան) 513, 520
Տարոնցի Ս. 474, 481, 491
Տաֆտ 67
Տեր-Աստվածատրյան Հովսեփ Ա. 254, 259, 448, 451
Տեր-Ավետիքյան Ա. 534
Տեր-Գաբրիելյան Սահակ 113, 117, 118, 172, 217, 275—278, 317, 318, 322, 371, 373, 545
Տերեզանով Արշավիր 147
Տեր-Հովհաննիսյան Ա. 509
Տեր-Ղազարյան Արշավիր 77
Տեր-Ղազարյան Ն. 545
Տեր-Ղևոնդյան Անուշավան 507, 512
Տերյան Մ. 505
Տերյան Վահան 31, 32, 475, 498
Տեր-Պողոսյան Ավ. 412

Տեր-Սահակյան Ա. 86
Տեր-Սահակյան Վ. 431
Տեր-Սիմոնյան Դրաստամատ 80, 83, 85, 86, 148, 157, 424, 434, 489
Տեր-Վարդանյան Ստեփան, տե՛ս Տարագրոս
Տերտերյան Արսեն 412, 448, 452, 455, 477
Տիգրանյան Ա. 508, 509
Տիգրանյան Նիկողայոս 455, 507, 518
Տիխոնով Ն. 480
Տիտանյան Հովհաննես 397
Տոդորսկի Ա. 217
Տոլստոյ Ալեքսեյ 468
Տոլստոյ Լ. 460
Տոնոյան Ա. 431
Տրենյով Կ. 500
Տրուշին Ի. 329

Ցերեթելի 71
Ցխակայա Միխա 21, 25, 315, 386

Ուայլդ Օսկար 598
Ուլիբեկյան Լ. 86
Ույոյան Մ. 282
Ուսկեր 64
Ուսրդրոպ 69
Ուրարտու Այծեմիկ 518

Փախչանյան 134
Փանյան Ա. 76, 87, 89, 92
Փափազյան Վահրամ 499, 501, 595, 598
Փափախչյան Մ. 282
Փիրգուլյան Գ. 261
Փիրուզյան Ա. 386, 387, 411
Փիրումյան Ա. 317
Փիրումյան Սիմոն 545, 567
Փիրումով 88
Փուշման Հովսեփ 602

Քալանթար 600
Քալանթար Ա. 448, 535
Քալանթար Լ. 448, 499, 508
Քալանթարյան Պ. 448
Քաջազնունի Հովհ. 36, 39, 49, 64, 158, 225
Քավթարաձե Ս. 217
Քելեկյան Տիրան 603
Քեմալ Մուստաֆա 96, 97, 109, 110, 138
Քեչեդեզյան Վասիլառա 148
Քյուրքչյան Ալիս 599
Քյուֆեճյան Հակոբ, տե՛ս Օշական Հակոբ
Քոչար Գ. 523, 531, 532—534
Քոչար Երվանդ 602, 603
Քոչար Հր. 495
Քոչարյան Ա. 512
Քոչարյան Սուրեն 416
Քուշնարյան Ք. 512

Օգանեզով Գ. 134
Օդաբաշյան Վ. 134
Օլթեցյան Ն. 154, 162
Օհանյան Արմեն 594
Օհանջանյան Լ. 505
Օհանջանյան Հ. 21, 40, 42, 43, 85, 86, 99, 110
Օշական Հակոբ (Քյուֆեճյան Հակոբ) 588
Օստրովսկի Ա. 501
Օտյան Երվանդ 473, 585, 587, 589, 594, 597, 598, 603
Օրախելաշվիլի Մ. 217, 254, 262
Օրբելի Հովսեփ Աբգարի 412, 416, 450, 452, 468
Օրջոնիկիձե Գ. Կ. 9, 81, 101, 110, 119, 133, 134, 137, 149, 151, 153, 162, 188, 203, 207, 208, 211, 212, 216, 217, 233, 253, 254

Ֆադեև Ալեքսանդր 468
Ֆեթվաճյան Արշակ 602, 603
Ֆելման Դ. 503
Ֆելշ 22
Ֆեոդորով Ա. 329
Ֆիշիլևիչ Ա. 162
Ֆիոլետով Ի. 28, 47
Ֆոշ 70, 71, 107

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Աբխազիա —134
Աբովյան (գյուղ), տե՛ս Վերին Աղբաշ
Աբովյանի շրջան, տե՛ս Կոտայքի շրջան
Ագանա —66
Ադրբեջանական Սովետական Սոցիալիստական Հանրապետություն (Ադրբեջան) —7, 8, 40, 42, 44—46, 49, 51, 68, 71, 72, 79, 80, 83, 85, 91, 94, 100, 101, 104, 113, 115, 116, 119—123, 127, 130, 131, 135, 136, 156, 160, 162, 173, 177, 188, 192, 206—213, 216, 225, 233, 252, 256, 283, 294, 352, 363, 377, 378, 405, 437, 438
Ազատան, տե՛ս Փոքր Ղարաքիլիսա
Ազիզբեկովի շրջան —309
Աթան (գյուղ) —130
Աթենք —573, 574, 582, 584, 585, 590, 597
Ալագյազի շրջան —402
Ալավերդի (Մաննա) —131, 134, 167, 229, 230, 244, 255, 258, 277, 282, 283, 286, 301, 302, 327, 329, 343, 348, 349, 395, 397, 408, 501, 523
Ալավերդու շրջան —129, 131, 297, 309
Ալեքսանդրապոլ, տե՛ս Լենինական
Ալեքսանդրապոլի գավառ, տե՛ս Լենինականի գավառ
Ալեքսանդրիա —574, 581, 582, 596, 597
Ալեքսանդրովկա (Չկալովկա, գյուղ) —149
Ախթալա (երկ. կայարան)[1] —131
Ախտա (Հրազդան) —60, 139, 143, 146, 149, 150
Ախտայի շրջան —143, 272, 295
Ախուրյանի (Դուզքենդի) շրջան —291, 293, 306, 401, 402
Ակն —590
Ակունք (գյուղ Աբովյանի շրջանում), տե՛ս Բաշ-գյուղ
Ակունք (գյուղ Թալինի շրջանում), տե՛ս Գյոզլու
Աղբաբայի շրջան —225, 294, 296, 309
Աղինի (Մուլլա Գյոքչայի, Անիի) շրջան —297, 306, 309, 402
Աղջարխ (Արևիկ, գյուղ) —287, 294
Աղստաֆա —87
Ամասիայի շրջան —578
Ամբերդ —452
Ամերիկա —51, 504, 516, 540, 547, 548, 560, 568, 574—576, 581—585, 589, 592, 596, 599, 600, 602, 603
Ամերիկայի Միացյալ Նահանգներ —17, 21—23, 62—69, 72, 73, 94, 95, 102, 135, 136, 190, 259, 341, 413, 540, 541, 570, 577, 581, 596
Այգեձոր, տե՛ս Ղուլալի
Այրում (գյուղ) —56
Այրում (երկ. կայարան) —131
Անդեղակոթ (գյուղ) —154, 160, 161
Անգլիա (Մեծ Բրիտանիա) —17, 22, 51, 62, 63, 65, 67, 68, 71, 73, 99, 101—103, 106, 109, 135, 136, 140, 174, 190, 191, 259, 260, 341, 413, 414, 541, 566, 567, 571
Անդրկովկաս (ԱՍՏՍՀ) —7, 10, 17, 19—29, 31—42, 44—51, 60, 62—73, 75, 76, 79, 81, 83, 84, 89, 92, 96, 101, 103, 104, 107, 136, 140, 142, 146, 151, 157, 158, 160, 162, 175, 177, 178, 188, 189, 194, 197—199, 202, 204, 205—214, 216—218, 220, 221, 223, 224, 233, 246, 247, 253, 257, 259, 275—277, 279, 283, 293, 295, 298, 302, 306, 307, 315, 355, 362, 363, 368, 377, 378, 380, 437, 439, 448, 454, 475, 487, 499, 548, 563
Անի (երկ. կայարան) —256
Անիի շրջան, տե՛ս Աղինի շրջան
Անիպեմզա —349, 350, 355, 577
Անկարա —97
Անվերս —601
Աշխաբադ —47
Աշտարակ —53, 60, 137, 139, 141, 143, 146, 152, 153, 272, 303

[1] Երկ. կայարան—Երկաթուղային կայարան

Աշտարակի շրջան —143, 294, 305, 306, 402
Աշաջուր (գյուղ) —53, 91, 142
Այտառու (գյուղ) —56
Ապարան (Բաշ Աբարան) —43, 146, 149, 150
Ապարանի շրջան —223, 294, 299, 309, 401
Աչարատան —134
Առափի, տե՛ս Օջախղուլի
Առինջ (գյուղ) —43
Ասիա —159
Աստրախան —422, 498
Աստրախանի նահանգ —32
ԱՍՏՍՀ, տե՛ս Անդրկովկաս
Ավան (գյուղ) —43, 285
Ավստրալիա —541
Ավստրիա —315, 413, 541
Ավստրո-Հունգարիա —16
Ատլանտյան օվկիանոս —575
Արագած (լեռ) —42, 138, 139
Արաղդայան (գյուղ) —556
Արարատ (Մասիս, լեռ) —552, 592, 602
Արարատ, տե՛ս Դավալու
Արարատյան դաշտ —7, 43, 44, 151, 168, 245, 287, 294, 311, 533
Արաքս (գետ) —151, 260
Արգենտինա —17, 540
Արգինա (գյուղ) —89
Արգահանի օկրուգ —34, 36, 38
Արթիկ —87, 331, 344, 349, 355, 408
Արթիկի շրջան —255
Արճիս (գյուղ) —131
Արմանիս (գյուղ) —132
Արմավիր (գյուղ) —533
Արմավիր (քաղաք) —422
Արմենի դաշտ —154
Արմթլու (Տանձուտ, գյուղ) —287
Արջուտ (գյուղ) —56
Արջուտ (կիսակայարան) —43
Արտաշատ (Դամարլու) —82, 142, 144—146, 150
Արտաշատի (Դամարլուի) շրջան —146, 147, 149—153, 285, 291, 294, 297, 299, 305, 306, 309, 332, 403, 406, 551
Արփալեռ (գետ) —108, 260
Արևելք —69, 79, 80, 85, 113, 119, 122, 174, 177, 483
Արևիկ (գյուղ Հոկտեմբերյանի շրջանում), տե՛ս Աղջարխ
Արևիկ (գյուղ Ախուրյանի շրջանում), տե՛ս Թափադոլակ
Արևմտյան Բելոռուսիա —414
Արևմտյան Եվրոպա —73, 202
Արևմտյան Թրակիա —554
Արևմտյան Հայաստան (Թուրքահայաստան) —7, 24, 30—32, 35, 36, 95, 96, 102, 105, 539, 575, 576
Արևմտյան Ուկրաինա —414
Արևմուտք —178, 215
Աֆղանստան —174, 260
Աֆրիկա —560, 575

Բաղարշայ (գյուղ) —154
Բազմաղբյուր, տե՛ս Թաքիա
Բաթում —38—42, 44, 45, 59, 64, 68, 102, 103, 184, 551, 553, 555
Բաթումի օկրուգ —34, 38
Բալկանյան թերակղզի (Բալկաններ) —540, 547, 570, 579, 582, 584, 596, 597
Բաղդադ —549
Բայազետ —68
Բայանդուր (գյուղ) —272
Բաշ Աբարան, տե՛ս Ապարան
Բաշ Գյառնի (Գառնի) —138, 139, 141, 153, 154, 171, 196, 223
Բաշգյուղ (Ակունք, գյուղ) —160
Բասարգեչար —237
Բասարգեչարի շրջան —153, 293, 309, 460, 551
Բասրա —550
Բավարիա —17
Բարձրավան, տե՛ս Մազրա
Բաքվի նահանգ —28, 47
Բաքու —8, 17, 18, 22, 24, 26, 28, 29, 40, 42, 46, 47, 68, 103, 113, 114, 119, 140, 149, 150, 172, 184, 210, 211, 216, 263, 282, 302, 363, 500
Բաքուրա —549
Բելգիա —416, 541, 571, 601
Բելոռուսական Սովետական Սոցիալիստական Հանրապետություն (Բելոռուսիա) —216—218
Բեյրութ —539, 573, 582, 597,
Բեռլին —40, 45, 67, 596, 602
Բեսարաբիա —415, 416, 540
Բերդ —90
Բզովդաղ —42
Բզովդաղի լեռնանցք, տե՛ս Պուշկինյան լեռնանցք
Բիթլիսի վիլայեթ —95
Բիչանակի լեռնանցք —161
Բոստոն —599, 601
Բորչալուի գավառ —64, 129, 134, 135
Բրազիլիա —17, 540
Բրեստ-Լիտովսկ —35
Բրյուսել —601
Բուենոս-Այրես —540
Բուլղարիա —17, 539, 540, 562, 577, 583, 584,

Բուխարայի Սովետական Հանրապետություն — 122
Բուկովինա —415
Բուրդազ —583
Բուրջ Համուդ —582

Գառնի, տե՛ս Բաշ Գյառնի
Գելյրլու (Մրգաշատ, գյուղ) —43, 56
Գետաշեն, տե՛ս Ջաֆարաբադ
Գետք, տե՛ս Դահաուլի
Գերմանիա —16, 21, 35, 37—40, 67, 140, 174, 191, 260, 341, 342, 370, 413—416, 418, 571,
Գըրընոթլ —573, 574
Գյանջա (Կիրովաբադ) —94, 263
Գյառգյառ, տե՛ս Պուշկինո
Գյոդաքլու (Մրգավան, գյուղ) —285, 533
Գյոզլու (Ակունք, գյուղ) —144
Գյուլագարակ (գյուղ) —134, 434
Գնդևազ (գյուղ) —154
Գորի —134
Գորիի գավառ —26
Գորիս —115, 161, 408, 431, 445, 518
Գրոզնի —26
Գուրիա —134

Դալար (երկ. կայարան) —24
Դալմայի շրանցք —403
Դալվերզինի շրանցք —283
Դահաուլի (Գետք, գյուղ) —272
Դաղստան —28, 29, 104, 177
Դամասկոս —539
Դանիա —416
Դավալու (Արարատ) —277, 331, 343
Դարալագյազ —57—59, 138, 139, 141, 147, 150—154, 158—161, 170, 181, 196, 225, 237, 267, 294, 299, 309, 426, 543
Դարպաս (գյուղ) —56
Դեբետաշեն, տե՛ս Լամբալու
Դեդեազ —555
Դիարբեքիր —68
Դիլիջան —42, 44, 59, 61, 75, 85, 87, 116, 118, 119, 142, 145, 146, 150, 431, 445, 499, 532
Դիլիջանի գավառ —146, 170, 225, 432
Դիլիջանի շրջան —118, 119, 170
Դոնի Ռոստով —330, 422, 498
Դսեղ (Թումանյան) —133, 299, 344
Դուզքենդի շրջան, տե՛ս Ախուրյանի շրջան
Դուշեթ —134

Եգիպտոս —539, 541, 581, 582, 589, 591, 596, 597, 599, 602, 603
Ելենովկա (Սևան) —142, 143, 149, 150
Ելենովկայի շրջան, տե՛ս Սևանի շրջան
Ելիզավետապոլի նահանգ —26, 37
Ելղովան (գյուղ) —407
Եկատերինոդար, տե՛ս Կրասնոդար
Եղեգնաձոր, տե՛ս Քեշիշքենդ
Եղեգնաձորի շրջան, տե՛ս Քեշիշքենդի շրջան
Եղվարդ (գյուղ) —55
Ենգիջա (գյուղ) —160
Ենոքավան, տե՛ս Քրդևան
Եվրոպա —17, 73, 107, 184, 353, 504, 540, 548, 564, 565, 568, 574, 596, 599
Երանոս (գյուղ) —149
Երզնկա —33, 34
Երևան —18, 42—44, 49, 50, 53, 61, 64, 68, 75, 77, 78, 81, 83—85, 87, 90, 98—100, 104, 106, 110, 111, 116, 120, 121, 125, 137, 139, 141—147, 149—154, 158, 159, 161, 162, 187, 197, 198, 203, 216, 223, 224, 227, 228, 230, 233, 244, 245, 252, 256, 257, 267, 280, 282, 286, 301, 302, 304, 317, 330, 344, 345, 347, 353, 393, 408, 409, 412, 416, 426, 429, 431, 438, 444—446, 452, 460, 463, 468, 499, 501, 502, 513, 514, 516—518, 520—531, 535, 536, 542, 544, 550, 556, 563, 569, 571, 575—577, 596
Երևանի գավառ (օկրուգ) —45, 180, 181, 272, 277, 285, 293—296, 306, 429
Երևանի նահանգ —37, 39, 42, 45, 60, 86

Զագաղիկ —582
Զանգեզուր (Լեռնահայաստան) —60, 75, 82, 83, 85, 91, 101, 115, 123, 137—139, 153—155, 157—162, 181, 225, 255, 267, 277, 286, 294, 295, 304, 430, 543
Զանգիբասար —53, 159, 223, 225, 294, 402, 403
Զենջան —549
Զմյուռնիա —540
Զոդ (գյուղ) —225

Էջմիածին —43, 54, 58, 68, 137, 139, 141, 143, 144, 153, 260, 286, 403, 408, 425, 445, 516, 528, 529
Էջմիածնի գավառ —45, 53, 114, 159, 171, 180, 181, 429
Էջմիածնի (Վաղարշապատի) շրջան —143, 223, 273, 291, 294, 297, 304—306, 309, 403, 405, 406
Էջմիածնի շրանցք —223, 359
Էստոնական Սովետական Սոցիալիստական Հանրապետություն (Էստոնիա) —71, 174, 415
Էրզնջան —68
Էրզրում, տե՛ս Կարին
Էրզրումի վիլայեթ —95

Թաթար-Բազարճիկ —552
Թալինի շրջան —144, 309, 379, 401
Թավրիզ —41, 138, 184, 550, 597, 598
Թափադոլակ (Արևիկ, գյուղ) —56, 272
Թափանլի (գյուղ) —56
Թաքիա (Բազմաղբյուր, գյուղ) —272
Թբիլիսի (Թիֆլիս) —7, 18, 20—23, 25—28, 32, 35, 42, 45, 49, 55, 64, 68, 81, 100, 101, 110, 112, 130, 135—138, 142, 149, 151, 184, 208, 216, 224, 263, 453, 476, 498, 513, 534
Թևհրան —468, 555,
Թեյշերաին —452
Թիֆլիսի նահանգ —26, 39
Թոխմախան լիճ —576
Թովուզ (գյուղ) —90
Թրակիա —552
Թումանյան, տե՛ս Դսեղ
Թուրքիա (Տաճկաստան) —8, 31, 33—36, 38—40, 44, 45, 66, 68, 69, 80, 94—97, 102—106, 108, 111, 112, 120, 129, 140, 145, 146, 172, 174, 177, 188, 225, 260, 378, 539—541, 552, 553, 555, 561, 562, 564, 575—577, 583

Ժդանով, տե՛ս Դշլաղ
Ժնև —559

Իմանշալու (Մխչյան, գյուղ) —285
Իշևան (Քարվանսարա) —54, 75, 120, 141, 142, 145, 150, 254, 299, 577
Իշևանի գավառ —181
Իշևանի (Քարվանսարայի) շրջան —90, 118—120, 297, 306, 309
Իսպանիա —341
Իվանովո-Վոզնեսենսկ (Իվանովո) —186, 282
Իտալիա —17, 68, 95, 140, 174, 341, 413, 541, 602
Իրան (Պարսկաստան) —17, 23, 40, 46, 80, 97, 146, 156, 158, 174, 260, 378, 540—542, 548, 549, 552, 555, 569, 581, 583, 597, 598
Իրաք —548, 581, 582, 597

Լամբալու (Դեբետաշեն, գյուղ) —577
Լատինական Ամերիկա —17, 540
Լատվիական Սովետական Սոցիալիստական Հանրապետություն (Լատվիա) —71, 174, 415
Լեհաստան —71, 174, 259, 414
Լենինական (Ալեքսանդրապոլ) —7, 36, 38, 41, 42, 53, 61, 75—77, 82—91, 93, 105, 106, 108—111, 116, 123, 127, 128, 156, 168, 172, 188, 197, 224, 227, 244, 256, 257, 260, 280, 286, 301, 302, 323, 330, 344, 353, 356, 397, 408, 431, 445, 446, 482, 499, 501, 502, 513, 514, 518, 521, 523, 524, 526, 529, 531, 535, 551, 556, 577
Լենինականի (Ալեքսանդրապոլի) գավառ —45, 87, 127—129, 156, 168, 181, 185, 256, 272, 277, 285, 294—296, 304—306
Լենինգրադ (Պետրոգրադ) —15, 17—19, 259, 415, 450
Լենքորան —94
Լեչխումի գավառ —135
Լեռնահայաստան, տե՛ս Ջանգեզուր
Լեռնականների հանրապետություն —177
Լիբանան —539, 540, 581, 582, 586
Լիոն —573
Լիտվական Սովետական Սոցիալիստական Հանրապետություն (Լիտվա) —260, 415
Լծեն (գյուղ) —154
Լճկաձոր (գյուղ) —56
Լյուքսեմբուրգի շրջան, Վրացական ՍՍՀ —405
Լոռան —547, 561
Լոնդոն —20, 22, 140, 596, 602
Լոռի —26, 42, 54, 56, 123, 129—134, 141, 143, 145, 146, 168, 169, 181, 277, 294, 295, 306
Լոռի-Փամբակ —286, 304
Լոռվա տափաստան —133
Լորուտ (գյուղ) —130
Լուկաշին —272

Խալխին գյուղ —413
Խալթիս —582
Խաղաղ օվկիանոս —414
Խաչաքիլիսա (Փարոս, գյուղ) —82
Խասան լիճ —413
Խարբերդ —581
Խարպուտ —68
Խնձորեսկ (գյուղ) —91, 115
Խոյ —548, 549
Խոր-Վիրապ —147

Ծաղկաձոր —245

Կաբարդինո-Բալկարական Ինքնավար Սովետական Սոցիալիստական Հանրապետություն—377
Կալինին, տե՛ս Տվեր
Կալինինո (Վորոնցովկա, գյուղ) —129, 132—134, 434
Կալինինոյի շրջան —401, 402
Կալիֆորնիա —599
Կահիրե —581, 585, 596, 597, 603
Կաղզվան —103
Կաղզվանի օկրուգ —36
Կամո, տե՛ս Նոր Բայազետ

Կամոյի շրջան, տե՛ս Նոր Բայազետի շրջան
Կանադա —540
Կապս (գյուղ) —482
Կասպից ծով —70
Կարաբաղլարի շրջան —402
Կարա-Կալպակյան Ինքնավար Սովետական Սոցիալիստական Հանրապետություն —378
Կարին (Էրզրում) —34, 38, 68, 128, 129, 581
Կարմիրաղբյուր (գյուղ) —90
Կարմիր բլուր —452
Կարս —7, 18, 38, 64, 68, 75, 82, 83, 85—88, 90, 105—107, 110, 128, 129, 188, 260
Կարսի մարզ, նահանգ, օկրուգ —34, 36—38, 53, 86, 102, 127
Կենտրոնական Ջինաստան —341
Կենտրոնական Ռուսաստան —364
Կիլիկիա —67, 68, 540
Կիպրոս —540
Կիրգիզական Սովետական Սոցիալիստական Հանրապետություն (Կիրգիզիա) —377
Կիրովաբադ, տե՛ս Գյանջա
Կիրովական (Ղարաքիլիսա) —8, 19, 42—44, 61, 75, 83, 85, 87, 129, 131—133, 141—143, 145, 149, 168, 216, 244, 254, 277, 329, 331, 343, 408, 445, 499, 501, 526, 529, 531, 532, 577
Կիրովականի (Ղարաքիլիսայի) շրջան —297, 407
Կոթ (գյուղ) —55, 56
Կոմիի Ինքնավար Սովետական Սոցիալիստական Հանրապետություն —377
Կոնդ —143
Կոստանդնուպոլիս (Պոլիս, Կ. Պոլիս) —67—69, 95, 109, 184, 453, 541, 544, 552, 557, 560, 564, 570, 582, 583, 586, 594—596, 598
Կովկաս —27, 40, 51, 98, 137, 159, 162, 177—179, 206, 259, 260, 293, 294, 602
Կովկասյան երկրամաս —17
Կոտայքի բարձրավանդակ —43
Կոտայքի (Աբովյանի) շրջան —137, 143, 153, 223, 237, 294, 295, 305, 404, 405, 407
Կոտուր-Բուլաղ —132
Կորնթոս —582
Կրասնոդար (Եկատերինոդար) —26, 500
Կրասնոսելսկի շրջան —402
Կուբա —17, 540
Կույբիշև (գյուղ, Ստեփանավանի շրջանում), տե՛ս Պոկրովկա
Կույբիշև (գյուղ Իջևանի շրջանում), տե՛ս Ջարխեչ
Կուշչիբիլակ —101
Կուրթան (գյուղ) —134
Հաճագա —191
Հաբեշստան —341, 541
Հալեպ —68, 541, 597
Հաղպատ —19, 131, 134
Համադան —548, 549
Համամլուի շրջան, տե՛ս Սպիտակի շրջան
Համամլու, տե՛ս Սպիտակ
Հայկական Ջեյվա (Ներքին Ջեյվա, գյուղ) —273
Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետություն (Հայաստան) —7—12, 15, 18, 23, 26, 32, 33, 45, 47, 49—52, 55, 57, 59—61, 63—69, 71—116, 118—127, 129—132, 134—142, 145, 146, 148—150, 153—163, 167—173, 177, 180—182, 185—189, 192—194, 196—198, 200, 202—204, 206—214, 216, 217, 220—223, 225—230, 232—235, 237—242, 244—247, 251—261, 265, 266, 268—273, 275, 277, 278, 280—289, 291, 293—299, 301—303, 305, 311—316, 318, 319, 324, 325, 327, 329—333, 336, 339, 341, 345, 347—350, 352, 354, 356—361, 363, 366—368, 371—373, 377—384, 386—389, 391, 393—402, 404—414, 416, 418, 419, 421—431, 433—441, 443—473, 475—477, 482, 489, 490, 492, 496, 498, 499, 501, 502, 504, 505, 507, 508, 510, 513, 515, 516, 518, 521—526, 529—534, 539, 541—553, 555, 557—561, 563—577, 579, 584—588, 591—593, 595, 596, 600—603
Հաչիղարա (գյուղ) —44, 407
Հասան-Ղալա —38
Հարավային Ամերիկա —570, 573
Հարավային Իրան (Հարավային Պարսկաստան) —41, 548, 549
Հարավային Ռուսաստան —32
Հարավային Օսեթիա —135
Հարավսլավիա —541
Հելիոպոլիս —581
Հեռավոր արևելք —73, 414
Հյուսիսային Բուկովինա —415, 416
Հյուսիսային Կովկաս —20—22, 26, 27, 32, 48, 70, 122, 259, 292, 500
Հյուսիսային Հայաստան —254
Հյուսիսային Ջինաստան —341
Հյուսիսային Օսեթիա —377
Հնդկաստան —17, 541
Հոլանդիա —416
Հոկտեմբեր (Սարդարապատ, գյուղ) —7, 8, 43, 287
Հոկտեմբեր (Սարդարապատ, երկ. կայարան) —43
Հոկտեմբերյան (Սարդարապատ) —379

Հոկտեմբերյանի (Ուրդուղուլու) շրջան —223, 286, 287, 291, 294, 297, 305, 306, 309, 332, 405—407, 578
Հոնոսյան մարզ —341
Հոռմ —219
Հրազդան (գետ) —143, 257, 449, 525
Հրազդանի շրջան —291, 294, 297, 304—306
Հունաստան —103, 140, 539, 540, 553—556, 561, 562, 564, 573, 576, 577, 582—584, 590, 597
Հունգարիա —16, 541

Ղազախ —42, 44, 85, 87
Ղազախական Սովետական Սոցիալիստական Հանրապետություն (Ղազախստան) —377
Ղազախի շրջան —99, 405
Ղազախ-Շամշադին —75, 86, 90
Ղանանչի (Մեղրաշեն, գյուղ) —56
Ղամարլու, տե՛ս Արտաշատ
Ղամարլուի շրջան, տե՛ս Արտաշատի շրջան
Ղամշլու (կխսակալարան) —43
Ղարաղաղ —86, 101, 161
Ղարանլուղ (Մարտունի) —59, 150
Ղարանլուղի շրջան, տե՛ս Մարտունու շրջան
Ղարաքիլիսա, տե՛ս Կիրովական
Ղարաքիլիսայի գավառ —146, 168, 181, 430
Ղարաքիլիսայի շրջան, տե՛ս Կիրովականի շրջան
Ղափան —115, 161, 167, 229, 230, 244, 255, 278, 301, 302, 327, 329, 343, 345, 348, 349, 355, 395, 397, 408, 501
Ղափանի շրջան —309
Ղշլաղ (Ծղանով, գյուղ) —44
Ղրիմ —498
Ղուլալի (Այգեձոր, գյուղ) —90
Ղուլիջան (Սպանդարյան, գյուղ) —76, 87
Ղուկասյանի շրջան —402
Ղուրդուղուլու շրջան, տե՛ս Հոկտեմբերյանի շրջան

Ճապոնիա —73, 140, 341, 342, 413
Ճավա —541
Ճենովա —191
Ճիաթուրի —263
Ճոճկան (գյուղ) —131

Մազրա (Բարձրավան, գյուղ) —161
Մալաթիա —68
Մալիշկա (գյուղ) —160
Մախարաձեի շրջան, Վրացական ՍՍՀ —405
Մակեդոնիա —552, 554
Մամախաթուն —34
Մայխոլան, տե՛ս Օրթաքիլիսա
Մանես, տե՛ս Ալավերդի
Մասիս (լեռ), տե՛ս Արարատ
Մասիս (երկ. կայարան), տե՛ս Ուլուխանլու
Մարիի Ինքնավար Սովետական Սոցիալիստական Հանրապետություն —377
Մարսել —558, 581
Մարտունի, տե՛ս Ղարանլուղ
Մարտունու (Ղարանլուղի) շրջան —153, 294, 299, 309
Մեծ Բրիտանիա, տե՛ս Անգլիա
Մեծ Շահրիար (Նալբանդյան, գյուղ) —287, 294, 405, 406
Մեղրաշեն, տե՛ս Ղազանչի
Մեղրի —160, 161, 254, 267, 543
Մեղրու շրջան —294, 305, 306, 309, 332, 401
Մերձավոր ու Միջին արևելք —22, 63, 65—69, 72, 73, 98, 208, 268, 504, 539—541, 547, 570, 579, 581
Մերձբալթյան երկրներ —415
Մերձվոլգյան շրջաններ —192
Մեքսիկա —17, 540
Միլիի ձորեր —225
Միխայելովկա (գյուղ) —132
Միկինի ձոր —53
Միկոյան, տե՛ս Քեշիշքենդ
Միկոյանի շրջան, տե՛ս Քեշիշքենդի շրջան
Միջագետք —40, 41, 541, 548—551, 553—556
Մխչյան, տե՛ս Իմանշալու
Մղարթ (գյուղ) —131
Մոլդավական Սովետական Սոցիալիստական Հանրապետություն (Մոլդավիա) —416
Մոլլա Գյոքչայի շրջան, տե՛ս Աղինի շրջան
Մոնղոլական Ժողովրդական Հանրապետություն —342, 413
Մոսեսդեղ —90
Մոսկվա —33, 40, 47, 96, 98—100, 105, 140, 173, 177, 188, 190, 217, 218, 222, 259, 274, 282, 284, 330, 345, 347, 376, 391, 405, 450, 453, 454, 468, 476, 490, 503, 509, 523, 535
Մոսուլ —549
Մրգաշատ, տե՛ս Գեչրլու
Մրգավան, տե՛ս Գյոդաքլու

Նաթաևների (գյուղ) —405
Նալբանդ (գյուղ) —406
Նալբանդ (երկ. կայարան) —129
Նալբանդի (Սպիտակի) շրջանցք —402, 403
Նալբանդյան, տե՛ս Մեծ Շահրիար
Նախիջևան —68, 147, 160, 161, 216, 225
Նախիջևանի գավառ —46, 47, 101, 111
Նահրէլօմար —549
Ներքին Զեյվա, տե՛ս Հայկական Զեյվա
Ներքին Վոլգայի (Սարատովի) երկրամաս —437
Նյու-Յորք —573, 592, 595, 596, 599, 600

Նոյեմբերյանի շրջան —402
Նորագյուղ —533
Նորագուղ (գյուղ) —54
Նոր Ամասիա —576
Նորաշեն (գյուղ) —76, 87
Նորաշեն (գյուղ Շամշադինի շրջանում) —90
Նոր Արարկիր —575, 576
Նոր Արմաշ —576
Նոր Բայազետ (Կամո) —54, 59, 60, 75, 82, 86, 90, 116, 138, 139, 141, 146, 149—151, 160, 264, 408, 431
Նոր Բայազետի գավառ —58, 59, 181
Նոր Բայազետի (Կամոյի) շրջան —143, 306, 309, 406
Նոր Բյուքանիա —576
Նոր Երզնկա —576
Նոր Թոմարզա —576
Նոր Խարբերդ —576
Նոր Կեսարիա —576
Նոր Հաճըն —575
Նոր Մալաթիա —576
Նոր Ցուղաա —576
Նոր Ջուղա —597
Նոր Սեբաստիա —576
Նորվեգիա —416
Նոր Տարոն —576
Նոր Տիգրանակերտ —576
Նորք —528
Նուբարաշեն —576

Շահալի (երկ. կայարան) —130—132, 134
Շահթախթ —143
Շահումյան, տե՛ս Շուլավեր
Շաղաթ (գյուղ) —161
Շամլուղ —282, 395
Շամխոր —24
Շամշադինի շրջան —82, 90, 114, 119, 145, 150, 294, 297, 299, 309, 404, 405
Շարուր —111, 225
Շարուր-Դարալագյազի գավառ —45
Շենավան, տե՛ս Քյալագարխ
Շիրակ —53, 185
Շիրակի նահանգ —86
Շիրակի շրանցք —185, 186, 234, 254, 315, 359, 482
Շնող (գյուղ) —131, 133
Շվեյցարիա —64
Շուլավեր, գյուղ (Շահումյան, քաղաք) —135
Շուշի —161

Ողջի (գետ) —327
Որնակ (գյուղ) —131

Չարբախ (գյուղ) —285
Չեխոսլովակիա —342, 415, 541
Չեչենո-Ինգուշեթիա —377
Չիլի —17
Չինաստան —17, 341, 342
Չինարի (գյուղ) —90
Չիչխան (գետ) —403
Չկալովկա, տե՛ս Ալեքսանդրովկա
Չորաքան (գյուղ) —90

Պաղեստին —541
Պարնի (գյուղ) —56, 76, 87
Պարսկաստան, տե՛ս Իրան
Պելեպոնես —552
Պետրոգրադ, տե՛ս Լենինգրադ
Պիրեյ —597
Պյատիգորսկ —498
Պոլիս, տե՛ս Կոստանդնուպոլիս
Պոկրովկա (Կուլբիշև, գյուղ) —132
Պրիվոլնոյե (գյուղ) —131—134
Պուշկինյան (Բզովդաղի) լեռնանցք —467, 468
Պուշկինո (Գյառգյառ, գյուղ) —132, 467, 468

Ջալալօղլի, տե՛ս Ստեփանավան
Ջալալօղլու շրջան, տե՛ս Ստեփանավանի շրջան
Ջալալօղլու սարահարթ, տե՛ս Ստեփանավանի սարահարթ
Ջաջուռ (գյուղ) —42
Ջարխեջ (Կուլբիշև, գյուղ) —141, 299
Ջաֆարաբադ (Գետաշեն, գյուղ) —287
Ջիբրայլտար —414
Ջուլֆա —553, 555

Ռապալո —191
Ռնդամալ (գյուղ) —143
Ռոստովի երկրամաս —172
Ռումինիա —17, 71, 415, 539, 540, 562, 583, 585, 586
Ռուսաստանյան Սովետական Ֆեդերատիվ Սոցիալիստական Հանրապետություն (Ռուսաստան) —7, 15, 16, 18, 20—23, 27, 29—35, 38—40, 45, 46, 48, 50, 51, 55, 56, 63, 69, 71—73, 75, 79, 83—85, 89—92, 94—106, 108—110, 115, 116, 118, 119, 121, 123, 124, 130—133, 135, 139, 140, 142, 152, 156, 159, 162, 167, 171—175, 177, 178, 180, 186—188, 190—193, 202, 205—207, 210, 211, 213—220, 231, 241, 252, 264, 293, 294, 361, 365, 378, 398, 415, 422, 423, 427, 453, 459, 469, 460
Ռուսջուկ —583

Սալմաստ —548, 549
Սալոնիկ —555, 584, 597

Սամաղար (գյուղ) —144
Սանահին (երկ. կայարան) —131
Սան-Ռեմո —95
Սառնաղբյուր, տե՛ս Սոգյուխլու
Սարատով —422
Սարդարապատ (գյուղ), տե՛ս Հոկտեմբեր (գյուղ)
Սարդարապատ (երկ. կայարան), տե՛ս Հոկտեմբեր (երկ. կայարան)
Սարդարապատ, տե՛ս Հոկտեմբերյան
Սարդարապատի դաշտ —260, 563, 564
Սարդարապատի ջրանցք —265, 283, 313
Սարիղամիշ —18, 26, 38, 75, 83, 85—87, 90, 103, 106, 128, 129
Սարուխան (գյուղ) —406
Սելիմի լեռնանցք —160
Սիսիանի շրջան —61, 115, 161, 304
Սիվաս —68
Սիրա —582
Սիրիա —539, 540, 553, 564, 573, 575, 581—583, 597
Սկանդինավյան երկրներ —416
Ս. Ղազար կղզի —585
Սոգյուխլու (Սառնաղբյուր, գյուղ) —43
Սովետական Սոցիալիստական Հանրապետությունների Միություն (Միություն) —9—11, 17, 194, 214, 216—222, 226, 227, 232—234, 242, 246, 247, 251, 254—257, 259—265, 271, 275, 276, 280—282, 284, 285, 287—290, 292, 297—299, 301, 306, 314, 316, 319, 320, 323, 324, 327, 333, 341—345, 347, 348, 351—354, 356, 361—364, 366—371, 374—380, 382—384, 388, 391, 393, 398, 399, 404, 405, 409, 410, 412—416, 418, 430, 433, 434, 450, 465—469, 505, 509, 515, 521, 532, 568, 569
Սոֆիա —583
Սպանդարյան, տե՛ս Դուլիջան
Սպիտակ (Համամլու) —42—44, 146, 150
Սպիտակի (Համամլուի) շրջան —297, 402—404, 406
Սպիտակի ջրանցք, տե՛ս Նալբանդի ջրանցք
Ստալինգրադ, տե՛ս Ցարիցին
Ստավրոպոլ —498
Ստարայա Ջակորա —583
Ստեփանավան (Ջալալօղլի) —18, 130, 132, 133, 431, 445, 501, 577
Ստեփանավանի (Ջալալօղլու) շրջան —306, 309, 401, 434, 460, 467
Ստեփանավանի (Ջալալօղլու) սարահարթ —42
Ստորին և Միջին Վոլգայի շրջաններ —292
Սուդակ —541
Սուդետական մարզ —413
Սուխում —184, 216
Սուրմալու —43
Սուրմալուի գավառ —45
Սևան, տե՛ս Ելենովկա
Սև ծով —37, 70
Սևանա լիճ —54, 111, 344, 449, 451
Սևանի ավազան —44
Սևանի գավառ (օկրուգ) —277, 294, 295, 306
Սևանի (Ելենովկայի) շրջան —146, 402
Սեր —95, 547, 583
Սեքար (գյուղ) —142

Վաղարշապատի շրջան, տե՛ս Էջմիածնի շրջան
Վան —602
Վանի վիլայեթ —95
Վաշինգտոն —71
Վասպուրական —549, 581
Վեդի —143—146, 160, 379
Վեդու շրջան (Վեդիբասար) —146, 147, 149—154, 223, 225, 294, 299, 305, 309, 460, 551
Վերին Աղբաշ (Աբովյան, գյուղ) —150
Վերին Արտաշատ (գյուղ) —533
Վերին Դվին (գյուղ) —406
Վերին Նովոսելցու (գյուղ) —271
Վիեննա —45, 584
Վլադիկավկազ (Օրջոնիկիձե) —122
Վոլգոգրադ, տե՛ս Ցարիցին
Վորոնցովկա, տե՛ս Կալինինո
Վրաց Սովետական Սոցիալիստական Հանրապետություն (Վրաստան) —7, 8, 26, 37, 40, 44, 49, 51, 64, 68, 70—72, 79, 80, 83, 84, 96, 99, 100, 104, 106, 107, 109, 110, 113, 130—132, 134—136, 138, 141, 142, 145, 151, 156, 160, 162, 172, 177, 188, 206—213, 216, 225, 233, 252, 256, 283, 294, 302, 352, 363, 377—379, 405, 437, 469

Տաթև (գյուղ) —154
Տաճկաստան, տե՛ս Թուրքիա
Տանձուտ, տե՛ս Արմթլու
Տվեր (Կալինին) —282
Տրանսիլվանիա —540
Տրապիզոն —35, 36, 39, 64, 106, 107
Տրապիզոնի վիլայեթ —95

Ցարիցին (Ստալինգրադ, Վոլգոգրադ) —422

Ուզբեկական Սովետական Սոցիալիստական Հանրապետություն (Ուզբեկստան) —283, 378
Ուզունլարի շրջան —129, 133
Ուլուխանլու (Մասխ, երկ. կայարան) —150
Ուկրաինական Սովետական Սոցիալիստական

Հանրապետություն (Ուկրաինա) —173, 175, 216—220, 256, 469, 498, 505
Ուրալ —280
Ուրմիա —548, 549
Ուրուգվայ —540
Փամբակ —44
Փանիկ, տե՛ս Քյավթառլու
Փարաքար (գյուղ) —533
Փարիզ —65, 67, 70—72, 158, 259, 316, 416, 567, 572, 573, 581, 584—586, 589, 591, 593—596, 599, 601—603
Փարոս, տե՛ս Խաչաքիլիսա
Փարպի (գյուղ) —286
Փոքր Ղարաքիլիսա (Ագատան, գյուղ) —42
Փոքր Շահրխար (գյուղ) —294

Քաղսի (գյուղ) —150
Քանաքեռ (գյուղ) —43, 143, 152, 405, 528
Քանաքեռի բարձրավանդակ —528
Քարվանսարա (Աթարբեկյան, գյուղ) —143
Քարվանսարա, տե՛ս Իշևան
Քարվանսարայի շրջան, տե՛ս Իշևանի շրջան
Քեշիշքենդ (Մխոյան, Նղնգնաձոր) —154, 160, 426
Քեշիշքենդի (Մխոյանի, Նղնգնաձորի) շրջան —309
Քերմանշահ —549
Քյալագարխ (Շենավան, գյուղ) —287, 294
Քյավթառլու (Փանիկ, գյուղ) —76, 86, 87, 128
Քյորփալու (գյուղ) —56
Քյուշուկ Վեդի (գյուղ) —147
Քոլագերան (երկ. կայարան) —131
Քրդևան (Ենոքավան, գյուղ) —82
Քութայիսի նահանգ —26

Օլքիի օկրուգ —36, 102, 103
Օշախղուլի (Առափի, գյուղ) —272
Օրդուբադ —160
Օրթաքիլիսա (Մայիսյան, գյուղ) —42
Օրոպոս —582
Օրջոնիկիձե, տե՛ս Վլադիկավկաղ

Ֆախրուս (գյուղ) —405
Ֆանտան (գյուղ) —533
Ֆիլիպե —552
Ֆինլանդիա —16, 174
Ֆրանսիա —17, 22, 51, 63—65, 67, 68, 73, 95, 101, 102, 107, 135, 136, 140, 145, 190, 191, 315, 341, 415, 416, 418, 539—541, 547, 553, 570, 571, 573, 577, 579, 581—583, 592, 602

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առաջարան (Աղայան Ս. Պ.) 7

ԲԱԺԻՆ Ա

ՀՈՒՏԵՄԲԵՐՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄԵԾ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՆԱԿՆ ՈՒ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (1917—1921)

Գլուխ առաջին.—Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը: Իրադրությունը Հայաստանում 15

1. Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը, Հայաստանի աշխատավորների պայքարը սովետական իշխանության հաստատման համար (Էլչիբեկյան Հ. Մ.) 15

2. Հակասովետական բլոկի ստեղծումը Անդրկովկասում և իմպերիալիստական պետությունների քաղաքականությունը (Գալոյան Գ. Ա., Էլչիբեկյան Հ. Մ.) 19

3. Հեղափոխական շարժման վերելքը Անդրկովկասում, ՌՍՖՍՀ-ի ժողկոմսովետի դեկրետը «Թուրքահայաստանի» մասին (Գալոյան Գ. Ա., Էլչիբեկյան Հ. Մ.) 24

4. Գերմանա-թուրքական ինտերվենցիան (Էլչիբեկյան Հ. Մ.) . . . 33

Գլուխ երկրորդ.— Հայաստանի թուրժուական ճակատապետության ներքին և արտաքին բռնաբականությունը (Գալոյան Գ. Ա.) 49

1. Դաշնակցականների իշխանությունը Հայաստանում, Երկրի ներքին դրությունը 49

2. Դաշնակցական կառավարության արտաքին քաղաքականությունը . 62

Գլուխ երրորդ.— Մայիսյան ապստամբությունը (Գալոյան Գ. Ա.) 75

1. Դրությունը Հայաստանում ապստամբության նախօրյակին, Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների 1920 թվականի հունվարյան կոնֆերանսը 75

2. Մայիսյան ապստամբությունը 83

Գլուխ չորրորդ.— Սովետական իշխանության հաստատումը Հայաստանում: Հայկական սովետական պետականության ստեղծումը 95

1. Բանակցությունները Սովետական Ռուսաստանի և Հայաստանի միջև 1920 թվականին, Հայ-թուրքական պատերազմը (Գալոյան Գ. Ա., Էլչիբեկյան Հ. Մ.) 95

2. Սովետական իշխանության հաստատումը Հայաստանում (Էլչիբեկյան Հ. Մ.) 112

3. Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետության կազմավորումը, Սոցիալիստական շինարարության առաջին քայլերը (Էլչիբեկյան Հ. Մ.) 123

4. Սովետական իշխանության հաստատումը Լոռվա «չեզոք գոտում» (Հակոբյան Ա. Մ.) 129

Գլուխ հինգերորդ.— Քաղաքացիական կռիվները Հայաստանում 1921 թվականին: Սովետական իշխանության ամրապնդումը (Հակոբյան Ա. Մ.) 136
1. Դաշնակցականների հակահեղափոխական խռովությունը . . . 136
2. Փետրվարյան խռովության ջախջախումը 143
3. Զանգեզուրի ազատագրումը 155

Բ Ա Ժ Ի Ն Բ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ (1921—1925)

Գլուխ վեցերորդ.— Անցում նոր տնտեսական քաղաքականության: Խաղաղ շինարարության առաջին հաջողությունները (Հակոբյան Ա. Մ.) 167
1. Սովետական Հայաստանի դրությունը քաղաքացիական կռիվներից հետո: Խաղաղ շինարարական աշխատանքների սկիզբը . . . 167
2. Անցում նոր տնտեսական քաղաքականության: Վ. Ի. Լենինի 1921 թվականի ապրիլի 14-ի նամակը 173
3. Խաղաղ շինարարության հաջողությունները: Նրա առաջին արդյունքները 180
4. Սովետական Ռուսաստանի օգնությունը Հայաստանին . . . 191

Գլուխ յոթերորդ.— Հայկական ՍՍՀ առաջին սահմանադրության ընդունումը: Անդրկովկասյան Ֆեդերացիայի ստեղծումը: ՍՍՀՄ-ի կազմավորումը (Հակոբյան Ա. Մ.) 194
1. Սովետական շինարարությունը Հայաստանում 194
2. Հայաստանի սովետների առաջին համագումարը: Հայկական ՍՍՀ սահմանադրության ընդունումը 198
3. Անդրկովկասյան Ֆեդերացիայի ստեղծումը 205
4. ՍՍՀՄ կազմավորումը: Անդրֆեդերացիան ՍՍՀՄ իրավահավասար անդամ 214

Գլուխ ութերորդ.— Սովետական Հայաստանի ժողովրդական տնտեսության վերականգնման հիմնական արդյունքները (Հակոբյան Ա. Մ.) 222
1. Սոցիալիստական շինարարության հետագա ընթացքը . . . 222
2. Գյուղատնտեսության վերականգնման հիմնական արդյունքները: Գյուղի սոցիալ-տնտեսական զարգացումը: Դասակարգային պայքարը . 232
3. Արդյունաբերության վերականգնման հիմնական արդյունքները . . 238
4. Աշխատավորների նյութական կենսամակարդակի բարձրացումը . 241

Բ Ա Ժ Ի Ն Գ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՔԻ ՍՏԵՂԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ (1926—1932)

Գլուխ իններորդ.— Սոցիալիստական ինդուստրացման և գյուղատնտեսության կոլեկտիվացման առաջին քայլերը Հայաստանում (Ղազախեցյան Վ. Ն.) . . . 251
1. Ինդուստրացման սկիզբը Հայաստանում 251
2. Կոլեկտիվացման առաջին քայլերը 263
3. Առաջին հնգամյա պլանը: Սոցիալիստական մրցության ծավալումը . 274

Գլուխ տասներորդ.— Մասսայական կոլտնտեսային շարժման սկիզբը Հայաստանում: Արմատական հեղաշրջումը գյուղատնտեսության մեջ (Կարապետյան Հ. Ս.) . 289
1. Համատարած կոլեկտիվացման սկիզբը 289
2. Կոլտնտեսային շինարարությունը և բանվոր դասակարգի ու գյուղացիության դաշինքի հետագա ամրապնդումը 300
3. Պայքար կոլտնտեսային շարժման դժվարությունների հաղթահարման և սխալների վերացման համար 306

Գլուխ տասնմեկերորդ.— Հայաստանի աշխատավորների պայքարը սոցիալիզմի տեխնիկական հիմքի կառուցման համար (Կարապետյան Հ. Ս.) 312
1. Պայքար առաջին հնգամյա պլանի կատարման համար։ Հայաստանի սովետների VII համագումարը 312
2. Առաջին հնգամյա պլանի կատարման արդյունքները։ Սոցիալիզմի տնտեսական հիմքի կառուցման ավարտը 326

ԲԱԺԻՆ Դ

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՎԱՐՏԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԱՄՐԱՊՆԴՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ (1933—1941)

Գլուխ տասներկուերորդ.— Հայկական ՍՍՀ-ը ժողովրդական տնտեսության զարգացման երկրորդ հնգամյակի տարիներին (1933—1937) (Նեգոյան Փ. Ի.) . . . 341
1. Երկրորդ հնգամյա պլանի հիմնական խնդիրները 341
2. Հայաստանի աշխատավորների պայքարը երկրորդ հնգամյակի պլանը ժամկետից շուտ կատարելու համար։ Ստախանովյան շարժման ծավալումը 349
3 Երկրորդ հնգամյակի արդյունքները 353

Գլուխ տասներեքերորդ.— Սոցիալիզմի հաղթանակը։ ՍՍՀՄ նոր սահմանադրությունը։ Սովետական Հայաստանը միութենական հանրապետություն (Աղայան Մ. Պ.) . 361
1. Կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու ժամանակաշրջանի հիմնական հանրագումարը։ Սոցիալիստական հայ ազգի ձևավորումը . . 361
2. ՍՍՀՄ նոր սահմանադրության ընդունումը 374
3. Հայկական ՍՍՀ նոր սահմանադրությունը 378
4. Հայկական ՍՍՀ Գերագույն սովետի ընտրությունները, պետական կառուցվածքն ու սովետների իրավունքները 386

Գլուխ տասներեքերորդ.— Ժողովրդական տնտեսության զարգացման երրորդ հնգամյա պլանը։ Սովետական Հայաստանը Հայրենական մեծ պատերազմի նախօրյակին (Դալլաքյան Ղ. Մ.) 393
1. Երրորդ հնգամյա պլանը և պայքար նրա իրականացման համար . 393
2. Պայքարի ու հաջողությունների 20 տարին 409
3. Հայաստանի աշխատավորների մասնակցությունը խաղաղության համար մղվող պայքարին 412

ԲԱԺԻՆ Ե

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ (1920—1940)

Գլուխ տասնիսկզերորդ.— Կուլտուրական հեղափոխությունը սովետական Հայաստանում (Խուդավերդյան Կ. Ս.) 421
1. Առաջին քայլերը 421
2. Սովետական դպրոցի կազմակերպումն ու զարգացումը . . . 425
3. Մասսայական անգրագիտության վերացումը 434
4. Բարձրագույն դպրոցի ստեղծումը։ Ժողովրդական տնտեսության համար մասնագիտական կադրերի պատրաստումը 441
5. Գիտական մտքի զարգացումը 447
6. Սովետահայ մտավորականության ձևավորումը 453
7. Մասսաների մեջ տարվող կուլտուր-լուսավորական աշխատանքը . . 458

Գլուխ տասնվեցերորդ.— Սովետահայ գրականությունը (Աղաբաբյան Ս. Բ.) . . 472

1. Սովետահայ գրականության ձևավորումը 472
2. Սոցիալիստական ռեալիզմի մեթոդի հաստատումը 488
Գլուխ տասնչորեքերորդ.— Սովետահայ արվեստը 498
1. Թատրոնն ու կինոարվեստը (Խալաթյան Լ. Ա.) 498
2. Երաժշտական կուլտուրան (Գյոդակյան Գ. Շ.) 504
3. Կերպարվեստը (Մարգսյան Մ. Ս.) 513
4. Ճարտարապետությունը (Բաբայան Լ. Մ., Հարությունյան Վ. Մ.) . 521

Բ Ա Ժ Ի Ն Զ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԸ (1920—1940)

Գլուխ տասնութերորդ.— Սովետական հայաստանը և սփյուռահայությունը (Մելիքսեթյան Հ. Ու.) 539
1. Հայկական սփյուռքի ստվարացումը. Հայության վիճակը արտասահմանում 539
2. Սովետական իշխանության առաջին քայլերը գաղութահայությանը օգնելու ուղղությամբ 541
3. Սփյուռքահայության կողմնորոշումը դեպի Սովետական Հայաստան . 544
4. Սփյուռքահայերի հայրենադարձությունը 1921—1925 թվականներին . 547
5. Գաղութահայ կազմակերպությունների ու հոսանքների դիրքը հայրենադարձության հանդեպ 558
6. Հայ գաղթականության հարցն Ազգերի լիգայում և նանսենյան ծրագիրը 561
7. Հայաստանի օգնության կոմիտեն և նրա դերը հայրենիքի հետ սփյուռքահայության կապերի ամրապնդման գործում 569
8. Սփյուռքահայերի հայրենադարձությունը 1926—1940 թվականներին և հայրենակցական միությունների գործունեությունը . . . 574
Գլուխ տասնիններորդ.— Սփյուռահայ մշակույթը (Ստեփանյան Գ. Խ.) . . . 580
1. Դպրոցը 580
2. Մամուլը 583
3. Գրականությունը 586
4. Թատրոնը 593
5. Երաժշտությունը 598
6. Կերպարվեստը 601

Կարևոր դեպքերի ժամանակագրություն 605
Ցանկեր 623
Մատենագրություն 625
Անվանացանկ 632
Տեղանունների ցանկ 642



Հայ ժողովրդի պատմություն

հատոր VII

ՆԿԱՏՎԱԾ ՎՐԻՊԱԿՆԵՐ

Էջ	Տող	Տպագրված է	Պետք է լինի
25	20 ն.	ՌՍԴ(բ)Կ	ՌՍԴԲ(բ)Կ
41	15 վ.	հևտո	հետո
74	3 վ.	վերբայումից	վավերքայումից
81	20 ն.	առհղծվում է	սկսվում է
92	20 վ.	պահում էր	պահում է
94	5 վ.	չկարողացան	կարողացան
233	6 ն.	նոյեմբերի 4-ից դեկտեմբերի 2-ը	նոյեմբերի 30-ից դեկտեմբերի 4-ը
436	12 ն.	սկզբնեբին	կիսեբին

Նկարչ. ձևավորումը՝ Լ. Ա. ՍԱԴՈՅԱՆԻ,
Կ. Կ. ՂԱՖԱԴԱՐՅԱՆԻ
Տեխն. խմբագիր՝ Լ. Ա. ԱԶԻԶԲԵԿՅԱՆ
Սրբագրիչ՝ Փ. Հ. ՄԱՐԱՆՅԱՆ

ՎՖ 06544, հրատ. № 2834, պատվեր 1083, տպաքանակ 107, տպաքանակ 12000

Հանձնված է արտադրության 28/II 1967 թ., ստորագրված է տպագրության 10/IX 1967 թ. տպագր. 41մ մամուլ + 3 ներդիր և 3 քարտեզ, հրատ. 44,8 մամուլ, թուղթ № 1, 70×108 1/16, Գինը 3 ռ. 10 կ.

ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակչության տպարան, Երևան, Բարեկամության 24,

1. Սովետահայ գրականության ձևավորումը 472
2. Սոցիալիստական ռեալիզմի մեթոդի հաստատումը 488
Գլուխ տասնյոթերորդ.— Սովետահայ արվեստը 498
1. Թատրոնն ու կինոարվեստը (Խալաթյան Լ. Ա.) 498
2. Երաժշտական կուլտուրան (Գյոդակյան Գ. Շ.) 504
3. Կերպարվեստը (Սարգսյան Մ. Ս.) 513
4. Ճարտարապետությունը (Բարայան Լ. Մ., Հարությունյան Վ. Մ.) . 521

Բ Ա Ժ Ի Ն Չ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՓՅՈՒՌՔԸ (1920—1940)

Գլուխ
Գլուխ
Կարևո
Ցանկե
Մատե
Անվա
Տեղան



Հայ ժողովրդի պատմություն

հատոր VII

Տպագրվում է ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի
գիտական խորհրդի որոշմամբ

Հրատ. խմբագիր՝ Ա. Գ. ԱՎԱԳՅԱՆ
Նկարչ. ձևավորումը՝ Լ. Ա. ՍԱՂՈՅԱՆԻ,
Կ. Կ. ՂԱՖԱԴԱՐՅԱՆԻ
Տեխն. խմբագիր՝ Լ. Ա. ԱԶԻԶԲԵԿՅԱՆ
Սրբագրիչ՝ Փ. Հ. ՄԱԴԱՆՅԱՆ

ՎՖ 06544, հրատ. № 2834, ՀԱԽ 1083, պատվեր 107, տպաքանակ 12000

Հանձնված է արտադրության 28/II 1967 թ., ստորագրված է տպագրության 10/IX 1967 թ. տպագր. 41մ մամուլ + 3 ներդիր և 3 քարտեզ, հրատ. 44,8 մամուլ, թուղթ № 1, 70×108¹/₁₆. Գինը 3 ռ. 10 կ.

ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի հրատարակչության տպարան, Երևան, Բարեկամության 24։

ՀԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0151095


AM
3334

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՀՈԿՏԵՄԲԵՐՅԱՆ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՄԵԾ ՌԵՎՈԼՅՈՒՑԻԱՅԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԵՎ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՈՒՄ (1917-1921 թթ.)



Քարտեզի հեղինակ՝ Ա.Ս. Երեմյան

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՔԱՐՏԵԶ



Քարտեզի հեղինակ՝ Լ. Հ. Վալեսյան


ՎԱՐՉԱՅԻՆ-ՏԵՐԻՏՈՐԻԱԼ ԲԱԺԱՆՈՒՄԸ
(ՄԻՈՒ 1-Ը ՀՈՒԼԻՍԻ 1940Թ.)
Թվ. ըստ քարտեզի
Շրջանների անվանումները
Շրջանային կենտրոնները
Շրջանների թվաքանակը
1 Ազիզբեկովի գ. Ազիզբեկով 34
2 Ալագյազի գ.Ալագյազ 16
3 Ալավերդու գ.Ալավերդի 5
4 Ախտալի գ.Ներքին Փիտա 18
5 Ապիևի գ. Մարալիկ 14
6 Ամասիայի գ.Ամասիա 1
7 Աշտարակի գ.Աշտարակ 21
8 Ապարանի գ.Ապարան 17
9 Արթիկի քաղ. Արթիկ 15
10 Բասարգեչարի գ.Բասարգեչար 25
11 Գորիսի գ.Գորիս 36
12 Դիլիջանի քաղ. Դիլիջան 12
13 Դուզքենդի գ.Դուզքենդ 9
14 Երևանի (գյուղական) քաղ. Նոր Սեբաստիա 28
15 Ջանգիբասարի գ.Ջանգիբասար 29
16 Թալինի գ.Վերին Թալին 20
17 Իջևանի գ.Իջևան 7
18 Կալինինոյի գ. Կալինինո 3
19 Կիրովականի գ.Կիրովական 11
20 Կոտայքի քաղ.Քանաքեր 22
21 Կրասնոսելսկի գ.Կրասնոսելսկ 13
22 Հոկտեմբերյանի քաղ. Հոկտեմբերյան 26
23 Ղամարլուի քաղ.Վերին Ղամարլու 30
24 Ղարաքաղաղարի գ.Ղիմանքենդ 31
25 Ղափանի գ.Ղափան 37
26 Ղուկասյանի գ. Ղուկասյան 2
27 Մարտունու գ.Մարտունի 24
28 Մեղրու գ.Մեղրի 38
29 Միկոյանի գ.Միկոյան 33
30 Նոյեմբերյանի գ.Նոյեմբերյան 6
31 Նոր Բայազետի գ.Նոր Բայազետ 23
32 Ճամշադինի գ. Բերդ 8
33 Սևանի քաղ.Սևան 19
34 Սիսիանի գ.Սիսիան 35
35 Սպիտակի գ.Համազասպ 10
36 Ստեփանավանի գ.Ստեփանավան 4
37 Վաղարշապատի գ.Վաղարշապատ 27
38 Վեդու գ.Վեդի 32
Հանրապետական ենթակայության քաղաքներ
1 Երևան
2 Լենինական
Ցուցակում ընդունված կրճատումները. գ-քաղաք, քաղ-քաղաքատիպ ավան, գ-գյուղ
ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ
ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐ
ԵՐԵՎԱՆ 200000-ից ավելի բնակիչ
ԼԵՆԻՆԱԿԱՆ 30000-ից մինչև 100000 բնակիչ
ԿԻՐՈՎԱԿԱՆ 10000-ից մինչև 30000 բնակիչ
Ղափան 3000-ից մինչև 10000 բնակիչ
Սևան 3000-ից պակաս բնակիչ
Բուրաթան գյուղական բնակավայրեր
Ծանոթություն. Քարտեզի գույնով տրված են շրջկենտրոնները, շրջանային ենթակայության քաղաքները ընդգծված են
ՍԱՀՄԱՆՆԵՐ
պետական
միութենական հանրապետությունների
ԻՍՍՀ և ինքնավար մարզերի
շրջանների
ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐ
երկաթուղիներ
գլխավոր անցնելու ճանապարհներ, լեռնանցքներ
Քարտեզի հեղինակ Հ. Գ. Գրգեսյան
Տիր. 10 000 էք.